



15/10/1966  
94  
2L 39

ԼԵԻՈՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ  
ԿՌԻՒՆԵՐՈՒ ԳԻԾԸ  
ԱԶԳԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Բ. ՀԱՏՈՐ



ՏՊԱՐԱՆ ՏՕՆԻԿԵԱՆ

ՊԵՅՐՈՒԹ

1966



## ՈՐՊԷՍ ՆԱԽԱԲԱՆ

*Դասակարգային կոնիներու Գիծը Ազգերու Պատմութեան Մէջ* իմ երկասիրութեան Ա. հատորը բնան ամիս ժամանակ առաւ տպագրութեան համար: Անոր առաջին մասը արդէն տպագրուած էր երբ ես վերատեսութեան կ'ենթարկէի երկրորդ հատորի ձեռագիրները: Երկրորդ հատորի բովանդակութիւնը պիտի ըլլար Եգիպտոս, Պարսկաստան, Ասորեստան-Բաբելոն, Հնդկաստան, Յունաստան եւ Հռովմ, մէկ խօսքով հին դարու ժողովուրդներու դասակարգային կոնիներու պատմութիւնը: Բայց իմ կողմացած միջավայրը մէկ կողմէ, ներքական դժուարութիւնները միւս կողմէ կը դժուարացնէին իմ գործիս՝ անունին համապատասխան բովանդակութիւն մը տալու աշխատանքը: Ես դիմեցի Ֆրեզնոյի քաղաքային գրադարանը, բայց անոնցմէ որեւէ մէկուն մէջ չգտայ հարկեղած գիրքերը որոնցմէ կարողանայի ֆազել իմ փնտռած տեղեկութիւնները: Իմ ձեռք ձգած պատմութիւնները կը ներկայացնէին փարաւոններու, շահերու, քագաւորներու եւ իշխաններու կեանքի պատմութիւնները: Ես ուզեցի իմ երկասիրութեան անունը փոխել, բայց արդէն ուշ էր, գրքիս առաջին հատորին տպագրութիւնը արդէն արարտած էր: Շարունակեցի իմ հետազոտութեան աշխատանքը, բայց ի գուր:

Անցնող տարուան վերջին ամսուն ես դիմեցի հմուտ քանասէր Տիար Միքիղատ Թիրեաֆեանին, հայցնելով իր օժանդակութիւնը: Ահաւասիկ իր պատասխանն անակը.

*«Յարգելի բարեկամ Լ. Մարտիրոսեան,*

*«Ստացայ Ձեր Դեկտ. 7 թուակիր նամակը, նաեւ ինձ նուէր զրկուած օրինակը ձեր հեղինակած «Դասակարգային կոնիներու Գիծը Ազգերու Պատմութեան Մէջ» հատորէն, որուն համար կը յայտնեմ ջերմ շնորհակալութիւն:*

*«Այս երկին պատրաստութիւնը անկասկած շատ յոգնութիւն եւ աշխատանք պահանջած է եւ ինչ թերութիւններ ալ ունենայ*



զնահատանքի արժանի է: Պատմա-ընկերային ուսումնասիրութիւններու դաշտը զժուար լուծելի հարցեր կը ներկայացնէ, քանի որ յաճախ ստոյգ տեղեկութիւններ կը պահպին եւ պէտք կ'ըլլայ ապաւինիլ ողջմտութեան եւ առողջ դատողութեան: Ներկայիս դրական կարեւոր աշխատութեան մը յատկացուցած եմ ժամանակիս մեծ մասը, որով պէտք է յետաձգեմ Ձեր դրբին ընթերցումը, մանաւանդ որ վէպ մը կամ սովորական պատմուածք մը չէ: Այժմէն իսկ, սակայն, կը շնորհաւորեմ Ձեզ սոյն աշխատասիրութեան երեւման համար:

«Գալով Ձեր խնդրանքին Ձեր առաջադրած Բ. հատորին առնչութեամբ, պարզ խօսելով չեմ կրնար Ձեզի օգտակար ըլլալ, նախ որ բազմազբաղ վիճակս արդելք կը հանդիսանայ, ու երկրորդ՝ պարսկական աղբիւրներ գոյութիւն չսւնին որոնցմէ կարենայիք ստոյգ տեղեկութիւններ քաղել դասակարգային պայքարներու վերաբերմամբ իրանեան սահմաններուն մէջ: Նախամահմեդական պարսիկ գրականութենէն, բացի երկու փոքրիկ յիշատակարաններէ («Շատկար-ի Ձէրիբան» եւ «Արտաշիր Բարական» 5-600 թ. մ.թ.) պատմական բովանդակութեամբ ուրիշ գործեր մեզի հասած չեն: Անթափանցելի քողով մը ծածկուած են պարսիկ ժողովուրդի սարսուհիներն ու մղած պայքարները բռնակալութիւններու դէմ: Ձեռք կրնար ըսել թէ ատեն ատեն ժողովուրդը չէ ըմբոստացած ազազակող անարգարութեանց դէմ, վկայ Յիրզուսի հոսակաւոր «Շահնամէ»ի մէջ յիշատակուած դրուագները այդ կարգի ազատագրական շարժումներու մասին:

«Տարակոյտ չկայ, սակայն, թէ ստրկական դրութիւն մը գոյութիւն ունեցած էր թէ նախամահմեդական եւ թէ՛ յետ մահմեդական շրջաններուն եւ նոյն այդ դրութիւնը, քիչ մը նուազ չափով, կը շարունակէ մինչեւ այսօր: Ինքս երկար տարիներ Պարսկաստան ապրած ըլլալով մօտէն ճանչցած եմ պարսիկ ժողովուրդը որ դարերու աւանդութիւններով սնած էր եւ կը խոնարհէր բռնակալ վեհապետներու, իշխաններու, մեծաւորներու առջեւ: Դիտած էք բնաւ նորերս քաշուած Լուսանկարները ուր շահին նախարարները (խօսքը չեմ ընել հասարակ ժողովուրդին) բարեւի կեցած են խորին ակնածանքով թագաւորին ներկայութեան: Մարդիկը վարժուած չեն ազատ մարդու կեցուածքին՝ Փիղիքապէս ու մտաւորապէս:

«Արտանց յաջողութիւն կը մաղթեմ Ձեր հրատարակելի նոր ուսումնասիրութեանց:

Ձերմ բարեկեցութիւն ու յարգանքով,  
ՄԻՀՐԳԱՏ ԹԻՐԵԱՔԵԱՆ»

Միերդատ Թիրեաքեանի սոյն նամակը մէկ կողմէ քեքեցուց ուց իմ հետազոտութեանց մէջ անյաջող ըլլալէն յառաջացած տըխրութիւնը, միւս կողմէ աւելի շեշտեց իմ այս երկասիրութեան անուր փոխելու դիտաւորութիւնս, գոր ի մտի ունեցեր էի առաջին հատորին տպագրութեան շրջանին: Այդ անուր ըլլալու էր *Դասակարգերու Դերը Ազգերու Պատմութեան Մէջ*:

Այսօր, սակայն, երբ ձեռագիրս տպարանին յանձնելու եմ, որոշեցի պահել նախկին անուրը, քանի որ գործիս երրորդ հատորը Կամրոզապէս նուիրուած պիտի ըլլայ նոր դարու պատմութեան, այսինքն կազմակերպուած նոր ազգերու դասակարգային կոնկրետ նկարագրութեան:

Հետեւաբար, ներդուրիւն կը խնդրեմ իմ ընթերցողներէն, եթէ անոնք այս երկրորդ հատորի բովանդակութիւնը *ժի քիչ* անյարմար նկատեն կնիեալ անունին:

Լ. Մ.



ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մեր այս Բ. Հատրի պատրաստութեան ատեն հետեւած ենք հետեւեալ հեղինակներու գործերուն:—

- 1) Wilkinson, Ancient Egyptians
- 2) Kenrick, John, Ancient Egypt under Pharaohs
- 3) Osborn, Ward, Ancient Lowly (2 Vols.)
- 4) Irwin J. Tucker, History of Imperialism
- 5) Smith, George, Assyrian Discoveries
- 6) Harper, R. F., History of Assyrians and Babylonians
- 7) Cory, E. R., Ancient Fragments of Assyrians Babylonians and Egyptians
- 8) Malcom, J., History of Pessia (2 Vols.)
- 9) Gaugsdy, J. C., Life of Religions of India
- 10) Volney, F., Researches of Ancient History
- 11) K. Marx, Notes on Indian History
- 12) R. Palme Dutt, The Problem of India
- 13) Buckley, Theodore, The Great Cities of the World in their glory and Desolation
- 14) Taylor, E. B., Ancient History of Greece
- 15) Gibbon, Ed., The History of Decline and Fall of the Roman Empire (6 Vols.)
- 16) M. Beer, The General History of Socialism and Social Struggles (2 Vols.)
- 17) Հեթանոսական եւ Գրիստոնէական կրօնքներու Բազմատականը, Մ. Ֆերահեան:
- 18) The Foundations of Christianity, K. Kaustky
- 19) Joshephus Flavins, a) Antiquities of Jews.
- b) Jewish Wars.
- 20) Giles, Hebrew and Christian Records
- 21) Ginsburg, The Essenes (Their History and doctrines)
- 22) Neander, History of the church
- 23) Thirwell, History of Greece
- 24) De Rossi, Christian Inscriptions

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Մենք մեր ուսումնասիրութեան առաջին բաժինը յատկացուցինք Հայաստանի, Ռուսաստանի եւ Չինաստանի պատմութեան: Այժմ պիտի սկսինք ներկայացնել հին ազգերու գասակարգային կռիւներու պատմութիւնը իր սեղմ շրջանակով:

Բայց այստեղ պէտք է ըսել թէ մեր նիւթէն դուրս կը մնայ ամենահին նախնական հասարակութեան պատկերաւորումը ուրուագծելու գործը, որովհետեւ այդ հասարակութիւնը մտաւորական ու պատմական արժէքով միութիւն մը չէ եղած, եւ յետոյ հոն տակաւին գոնաւորուած չեն գասակարգերը: Երբայցեցիտերը, յոյները, հռոմէացիք ունեցեր են իրենց հնութեան շրջանը, որ եղած է միջին ու առասպելական, թէեւ ընդհանուր առումով կրնանք կոչել «գրախտային»: Այդ հին հասարակութեան անդամները իրարու կապուած են եղեր արեւակցական կամ ցեղային կապով: Անոնք ապրած են հասարակութեան հիման վրայ, չճանչնալով ոչ հողի անհատական սեփականութիւն, ոչ միակիցութիւն, ոչ ալ քաղաքային կեանք: Պատահումն այդ հասարակութեան մասին կը գրէ. «Այդ օրերուն, մարդկութիւնը շատ խեղճ չէր. չկար թշուառութիւն որ մարդոց միջեւ տարբերութիւն յառաջացնէր: Անոնք հարուստ չէին կրնար ըլլալ, քանի որ ոչ ոսկի կ'ունենային, ոչ ալ արծաթ: Այդ ժամանակները այդպէս էին անոնց կեանքին պայմանները: Հասարակութիւնը երբ ոչ թշուառութիւն կը ճանչնար, ոչ ալ հարստութիւն, պարզ էր որ պիտի ունենար ամենազնիւ սկզբունքներ: Այդ հասարակութեան մէջ ոչ անպատուութիւն կամ անարդարութիւն, ոչ ալ ատելութիւն կամ նախանձ կար: Ատոր համար մարդիկ բարի էին ու պարզամիտ: Եթէ բազմաթիւ սերունդներ նոյն կերպով ապրէին, հոգ չէ թէ անոնք աւելի կոշտ ըլլային եւ աւելի անդիտակ մեր օրերու արուեստներուն, բայց իրենց աւելի պարզ եւ աւելի մարդկայնական դիրքով արդեօք մեզմէ աւելի համբերատար ու խոնարհամիտ, մեզմէ աւելի արդար պիտի չըլլային»: Գծուար է հաւատալ որ անոնք պէտք պիտի ունենային օրէնսդիրներու, որովհետեւ անոնք կանխադոյն չըջանին օրէնք չունէին, կ'ապրէին արժատացած սովորութիւններով եւ իրենց նախահայրերու կենցաղային աւանդութիւններով»: (Պատահում, Օրէնքները, Գ. Գիրք, Բ. եւ Գ. գլուխներէն):



Պղատուն իր այս տողերով մեզի կը ներկայացնէ մարդկութեան նահապետական կոմունիզմի շրջանը, ուրիշ անցեր են մեռնող եւ վերապրող բոլոր ազգերու նախահայրերը: Բայց մեր բուրժուայ հնարաններն ու պատմարանները բոլորովին կը մերժեն ընդունիլ այդ իրողութիւնը դասակարգային թափանցիկ դիտաւորութեամբ: Կոմունիստական հասարակութիւն գոյութիւն ունեցած չէ անցեալին մէջ եւ չի կարող գոյութիւն ունենալ ապագային: Ահա այս է այդ մարդոց տրամաբանական տեսութիւնը:

Մենք պէտք չունինք երկար կանգ առնել այս կէտին շուրջ, երբ Մարքս եւ Էնգէլս ջախջախիչ փաստերով հերքած են անոնց տեսութիւնը եւ անհերքելի տուեալներով պարզած են որ նահապետական կոմունիզմի շրջանը իրականութիւն եղած է, իսկ այդ շրջանը վերջացեր է այն ատեն երբ անհատական սեփականատիրութեան վրայ հիմնուած է ընտանիքը, որմէ յառաջացեր է ցեղապետութիւնը, ապա պետութիւնը, գասակարգային ներհակ ուժերու կռիւները դադարեցնելու համար:

Օտորն Վարտ իր Ancient Lowly գրքին Ա. հատորին մէջ մեզի հետեւեալ ձևով կը ներկայացնէ նախապատմական ընտանիքը, այսինքն այն միաւորը որուն վրայ յետոյ հիմնուեցաւ պետութիւնը:

Փակագծի մէջ ըսենք որ այդ անզուգական գրքին հեղինակը իր գործի պատմական արժէքը պակասեցնող շեղումով կը յայտարարէ թէ մարդկային առաջին հասարակութիւնը կազմող տարրերը եղած են տէրերն ու զէրիները: Ան կը ցատկէ նահապետական կոմունիզմի շրջանի վրայէն եւ կը սկսի պատկերացնել արիստոկրատական ընտանիքը:

Մտորեւ կ'ամփոփենք իր նկարագրականը:

Նախապատմական շրջանին, գործող մարդուն դրութեան ամենացած աստիճանի վրայ ըլլալը դիւրին կրնանք երեւակայել, երբ նկատի առնենք արիստոկրատական տանուտիրոջ զիրքը հանդէպ իր իրական կնոջ եւ անոր զաւակներուն եւ հանդէպ միւս կիներուն եւ անոնց զաւակներուն: Անոր միակ ժառանգորդն էր իր իրական կնոջմէ սերած անդրանիկ զաւակը, արու զաւակը: Միւսները կը նկատուէին զերի: Այս հանգամանքն էր որ ծնունդ տուաւ գերեալութեան:

Անդրանիկ որդին, որ կը ժառանգէր իր հօր կալուածն ու հարստութիւնը, պարտաւոր էր իր հայրը թաղել տանը կամ պարտէզին մէջ եւ զայն պաշտել որպէս աստուած: Տանտիրոջ մեռնե-

լէն յետոյ անոր որդին կը թափառէր տանը բոլորտիքը: Եւ ահա մարդիկ եղան որ կրնային յարաբերել այդ ոգիին հետ, սիրաշահել զայն, որպէսզի չարիք չհասցնէր ողջ մնացողներուն: Հրապարակելան կրօնականները եւ կաղժուեցաւ կրօնքը:

Այդ նախնական դարաշրջանին չկար իշխանութիւն մը, ինչպէս ներկայիս գոյութիւն ունի, որ իր զիրքով ու օրէնքներով իրեն ենթարկէր այդ ժառանգորդը, որ դիւրութեամբ կ'ըլլար բացարձակ տէր եւ, միապետ: Ան ալ, իր կարգին, կ'ունենար զաւակներ, մանչեր ու աղջիկներ: Կարող էր պատահիլ որ աղջիկներէն մին կ'ըլլար երիցագոյնը իր որդիներուն: Բայց այդ պարագան սովորական դարձած օրէնքը չէր փոխեր: Ծնած զաւակներուն առաջին մանչ զաւակը կ'ըլլար տիրոջ ժառանգորդը ու իշխանական յաջորդը: Աղջիկները ըլլալով Ֆիդիքայէս անգօր, անընդունակ էին պաշարել, բայց մանչերը երբ կը մեծնային եւ կը գիտակցէին իրենց ապագայ անստոյգ դրութեանը, կը պատրաստուէին կոռուիլ իրենց տիրոջ դէմ: Այդ պարագային տանուտէր միապետին օգնութեան կը հասնէր կրօնական նախապաշարումը: Եղած կարգադրութիւնը աստուծոյ, այսինքն մեռնող մեծ հօր կամքով եղած կարգադրութիւնն էր, եւ աստուածային կամքին դէմ կարելի չէր կոռուիլ:

Այս նոր տանուտէր իշխանը, կոթնած անական օրէնքին, կը դառնար մի տեսակ յափշտակիչ բռնապետ, որ կրնար իր հարազատ քոյրերն ու եղբայրները նետել դուրս եւ նոյնիսկ զանոնք սպաննել իր անդրանկութեան իրաւունքով: Ան ժառանգէր էր ոչ միայն իր հօր կալուածն ու հարստութիւնը, այլեւ ամէն ինչ որ կը պատկանէր տանը, շնչաւոր մարդիկն ու անասունները, տանը իրեղէններն ու գործիքները: Ինք բացարձակ միապետ էր: Իր քոյրերն ու եղբայրները, նոյնիսկ իր զաւակները, բացի անդրանիկ մանչէն որ ըլլալու էր իր յաջորդը, անասունի նման աշխատելու էին իրեն համար եւ ապրելու էին իր շնորհին տակ:

Իր արիստոկրատական կրօնքն ալ այնքան կոշտ էր ու անգութ, որքան իր տնտեսական ու ընկերային քաղաքականութիւնը: Այս միապետին հայրը, որ թաղուած էր տան սրտին մէջ, միմիայն իր աստուածն էր: Միայն ինք պարտաւոր էր պաշտելու զայն: Իր հօր գերեզմանը նուիրական տաճար մըն էր, ուր անմար կրակը միշտ վառ մնալու էր: Եւ այդ գործը կը պատկանէր իր զերիներուն, իր քոյրերուն, եղբայրներուն եւ իր զաւակներուն: Երբ այդ կրակը մարէր, անոնք մահուամբ կը պատժուէին: Ոչ մէկ ներողամտութիւն: Ան կը հաւատար թէ ծնողական աստուածը կենդանի մարդու նման կ'անօթենար ու կը ծարաւնար, հետեւաբար անոր



որուելու էր պէտք եղած կերակուրն ու խմելիքը, հաց, գինի, կարագ, մեղր եւ համազամ ուտելիք: Եւ ո՞վ էր զանանք վայելուղը: Աստուծոյ հետ հաղորդակցող կրօնականը: Եթէ գերիները իրենց պարտաւորութեան մէջ թերանային ու աստուածը անօթի մնար կամ ծարաւ, անոնց պատիժն էր մահը:

Այս տանուտէր իշխանին համար չկար օրէնք մը, որուն ինք պարտաւոր էր հնազանդիլ: Օրէնքը իր կամքն էր, իր քահանայութիւնը: Ինքը ազատ էր իր սեռային սանձարձակութեանց մէջ, բայց իր թագուհին, իր կիներուն զլխաւորը, մնալու էր անմատչելի, որովհետեւ անոր ծնած արու զուակն էր որ պիտի յաջորդէր իրեն: Եւ այդ անդրանիկ զուակը բլլալու էր զտարիւն իր հարազատ զուակը: Եթէ իշխանը փոքրիկ կտակած մը ունենար, նախ կինը կը կանչուէր խոստովանութեան: Եւ կինը գիտէր թէ ուրացումով չէր կրնար իր կեանքը ազատել, որովհետեւ կը հաւատար որ կրօնաւորը ոգիներու հետ սերտ յարաբերութիւն ունէր եւ անկարելի էր ոգիներէն սեւէ ծածուկ բան պահել: Երբ կնոջ խոստովանութիւնը համոզիչ չըլլար տէր իշխանին համար, տանը բոլոր ազամարդիկը կը կանչուէին խոստովանութեան, եւ ոգիներու նախապաշարման ազդեցութեան տակ կը պարզուէր գաղտնիքը: Այն տեսն տէր իշխանը կը սպաննէր թէ կինը, թէ երեխան եւ թէ կնոջ մօտեցող անխոհեմ մարդը: Այդպիսի սարսափելի մթնոլորտի մէջ, ի հարկէ, անհնարին էր որ իշխանուհին անխոհեմութիւն փորձէր եւ կամ՝ տան գերիներէն մէկը խելագար բլլար գիմեղու ստոյգ մահուան:

Գտնուած են մի շարք տանուաէրեր, աւելի գաթան ու նախանձոտ, որոնք իրենց կնոջ իրանդամը կը պահէին կնքուած, եւ ատանկով վստահ էին որ ան կը պատկանէր միայն իրենց:

Այս ինքնընտիր բռնապետը միայն թաղուհի մայրը կը ճանչնար իրեն հաւատար, եւ մէկ մըն ալ իր անդրանիկ արու զուակը: Մնացեալները գերիներ էին, որոնց պարտականութիւնն էր միայն սարկօրէն աշխատիլ: Բայց անոնք նոյն սեղանէն չէին կըրնար ճաշել, եւ նոյն տեսակի սնունդ չէին կրնար ունենալ: Անոնց բաժինն էր փրօջ սեղանին փշրանքները եւ երկրորդական տեսակի ուտելիք:

Երբ տան երեխաները կը բազմանային, տէր իշխանը ժողով կը գումարէր անոնց ծնողաց հետ, եւ կ'որոշուէր մաս մը պահել եւ միւսները սպաննել:

Տէր իշխանին բնակարանը առանձինն էր, եւ ան կը նկատուէր մի տեսակ սրբատեղի, ուր ոչ ոք չէր կրնար մտնել առանց արտօնութեան: Տիրոջ եւ գերիներուն միջեւ միջնորդներ չկային: Տէրը

կը մնար տէր, կեանքի հրամայողը, անմահ ու պաշտելի, թէ՛ կենդանութեան ատեն եւ թէ՛ մեռնելէն յետոյ:

Օտրորն Վարաի ուսումնասիրութեան տուած տեղեկութիւններէն մենք տեսանք թէ բնատնիքի մը մեծը մի տեսակ բացարձակ միապետ էր դարձեր, մի տեսակ կայսր: Այժմ հասկնալի կը լինի թէ ինչպէս բնատնիքներու միացումով կազմուեցաւ ցեղապետութիւնը, ապա ցեղերու միացումով՝ պետութիւնը, որու զլուխը անցնող անհատը, որպէս յաղթական, հզօր գերմարդ, դարձաւ բացարձակ իշխող միապետ բազմահազար մարդոց վրայ, իրեն նեցուկ ունենալով կրօնքը: Ուրիշ խօսքով, ան եղաւ ոչ միայն կայսր, այլեւ կիսաստուած, աստուծոյ կամ աստուածներու ներկայացուցիչը: Ան դուրս եկաւ իր երկրի սահմաններէն, յաղթեց տկար դրացիներուն, իր աւարներուն հետ ներս բերաւ բազմաթիւ գերիներ եւ անոնցմով զազրեցուց երկրի գոյն տարրերու ապստամբութիւնը: Բայց գերետիրութիւնը փութացուց իր իշխանութեան կործանումը: Կործանուող կայսրութեան փլատակներուն վրայ հաստատուեցաւ նոր կայսրութիւն մը, եւ այդպէս յաջորդաբար մինչեւ մեր օրերը:

Այսօրուան Ֆինանս-կապիտալի արքաները շատ չեն տարբերիւր նախապատմական շրջանի տանուտէր իշխաններէն եւ հին դարերու հզօր կայսրերէն:

Այժմ, նախքան հին ու նոր ազգերու դասակարգային կռիւներու ուրուազիծը պատկերացնելը, մեր սոյն ուսումնասիրութեան երկրորդ գիրքը պիտի յատկացնենք իմպերիալիզմի ծագման ու զարգացման պատմութեան իր սեղմ շրջանակով, որպէսզի բնութեցողը լիակատար ծանօթութիւն ունենայ եւ հասկնայ թէ իմպերիալիզմը կապիտալիստական շրջանի երեւոյթ չէ, ան ծագում առած է շատ կանուխէն: Միայն ժամանակի ընթացքին, փոխուող պայմաններուն հետեւանքով, փոխած է իր հազուստները, սահմանադրական, հանրապետական հազուստներով:

Ամենահին ժամանակներէն սկսած, իմպերիալիստական երկիրներ եղած են Եգիպտոս, Ասորեստան, Բաբելոն, Պարսկաստան եւ Հնդկաստան:

Այս Մասին մէջ մենք պիտի ներկայացնենք անոնց պատմութեան ուրուազիծը:



ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԵՔԻՊՏՈՍ, ԱՍՈՐԵՍՏԱՆ \_ ԲԱԲԵԼՈՆ,  
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ, ՀՆԴԿԱՍՏԱՆ, ՅՈՒՆԱՍՏԱՆ,  
ՀՌՈՎՄ



2977

Ե Գ Ի Պ Տ Ո Ս



## ԵԳԻՊՏՈՍԻ ԳԻՐԲԸ

### ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Հին ժամանակներու կայսրութիւնները հիմնուած են հազորդակցութեան միջոցներու տիրապետութեամբ: Ինչպէս Հռոմի պատմութիւնը գրուած է հռոմէական ճամբաներով, այնպէս ալ Յոյներու պատմութիւնը գրուած է ծովի ջրով: Պարսկաստանը կառուցուած էր թագաւորական ճանապարհի երկայնքին եւ իր երկիրները միմեանց կապուած էին թագաւորաց թագաւորին թեւաւոր պատգամատարներով: Ասորեստան եւ Բաբելոն հզօր եղան, որովհետեւ իրենց հսկողութեան տակ առած էին Եփրատի հովիտը եւ աշտակի ջրանցքները: Իսկ Եգիպտոս, որ առաջին կայսրութիւնը հիմնեց եւ ամենականութէն նախապատմական մթութեան մէջէն բարձրացաւ, անոր համար էր որ Հայր Օսիրիսը, Նեղոս գետը, ամենամեծն էր եւ Պողոտաներու ամենազիւրինը: Եւ անդին, Հրնդկաստանը, որ մեծցաւ ծովու եւ ամպամերձ լեռներու շունչով, Քիրբերի անցարանով հրապուրեց աշխարհը եւ իրեն կապեց Արեւմուտքը:

Ենթահիւ իր աշխարհագրական միտմեւ կերպարանքին, Եգիպտոսի երկիրը եղած է կայսրութեան եռանկիւն անկիւնաքարը: Ան կը ներկայացնէ Էվոլիւցիայի դասական հողը, ուր պահուած են հին դարերու նշխարները չոր ու անանձրեւ մթնոլորտի մէջ, մէկ խաւը միւսին վրայ, մեզի ներկայացնելով հին ժամանակներէն սկսեալ մինչեւ վերջին ժամանակներու մարդոց գործերը: Մենք, որպէս թէ հետու մոլորակէ մը, հեռադիտակով կը տեսնենք մեր սեփական արահետները, որոնց վրայ աշխատել են կանխագոյն դարերու մարդիկ, նախապատկերուած փարաւոններով, անասնաբուս աստուածներով, որոնց անընտել ստուերին տակ կը տեսնենք մենք զմեզ եւ մեր ժամանակակիցներու զարգացողական գատորշումը:

Նեղոսի հովիտը կրնանք ըսել թէ կանուխէն յարմարագոյն վայրը եղած է ուր հաստատուած է երկրագործ ցեղ մը, ոչ միայն անոր համար որ ան եղած է մշակութեան համար ամենանպաստաւոր տեղ մը, առատ հունձքով, այլեւ անոր համար որ այդ հովիտը շրջապատուած է ու արտաքին յարձակումներէ պաշտպանուած անանցանելի գահաւանդներով, բացի մի քանի կէտերէ ուր անոնց ծայրերը կտրուած են մի քիչ: Անհաշիւ դարեր առաջ թափառական



վայրենիներ եկեր, հաստատուեր են հոն, շիներ են դիւղեր, մշակեր են Նեղոսի հովտին արդաւանդ հողը եւ կառուցեր են ցեխով շինւած իրենց հիւղակները Նեղոսի ամէն տարի կազմած մրուրի խաւին նայող բարձրաւանդակին վրայ:

Արիտասի մօտ, խարակներու ոտքերուն տակ, աւերակներու մէջ գտնուած է քաղաքակրթական դարաշրջանի սկզբնաւորութիւնը յատկանշող նշխար մը, որ մեղ կը մօտեցնէ Քարէ Դարու երկար շղթայի օղակներէն մէկուն: Կայծքարէ դանակ մը, ձեծուած ոսկիէ պատեանի մը մէջ: Ահա գտնուած ուշադրաւ հնութիւնը:

Ոսկին առաջին մեծադր եղած է զոր մարդը ճանչցեր է կանուխէն, որովհետեւ ան փորձով գտած է որ ոսկին դիւրին կը հալի, անաղօտ մաքրութիւն ունի եւ կը փայլի: Ոսկիէն յետոյ կուգայ պղինձը, որ ոսկիին պէս հաղուադիւտ չէ եւ կը նմանի ոսկիին: Մարդիկ մի քանի ձեռնարկութիւններով պղինձը խառնեցին թիթեղին եւ արտադրեցին անպատկան զարդեր, բրոնզը, որ աւելի զործածելի եղաւ քան քարը: Սկսաւ Բրոնզի Դարը: Անկէ յետոյ մարդկութիւնը գտաւ իր վերելքի ճամբան:

Վերեւ նշուած դանակը կը ցուցնէ այն դիժը որ կը բաժնէ վայրենութիւնը քաղաքակրթութենէն:

Ոսկին Նեղոսի հովտին մէջ չէր գտնուեր: Ան առատ էր Կարմիր Մոլուն եզերքը: Բայց ցորենը առատ էր Նեղոսի հովտին մէջ, իսկ ան սակաւ էր Կարմիր Մոլուն բոլորտիքը: Երկրագործական կայսրութեան առած առաջին քայլը ոսկիի հետապնդման ճամբուն ուղղուած է: Այո՛, վայրենութեան շրջանէն քաղաքակրթութեան շրջանը անցնող մարդը երբ հաստատած է պետութիւնը, առաջին անգամ փնտրած է ոսկին, եւ ան ալ ոչ թէ այդ փայլուն մեծադր բանքաներու մէջ ամբարեւել համար, այլ զարդարելու համար ունայնամիտ ու գոռոզ այն իշխող անձը, որ կ'ուզէր արթնցնել սէր, նախանձ եւ յարգանք զարդադուրի հետեւորդներու մէջ:

Վաճառականական զրդիոնէն աւելի արտիստիկ զրդիոն էր որ խթանեց զարգացումը ձգտումը: Ոսկիի պահանջը զոհարաններու համար բացուեցան ճամբաներ եւ այդ ճամբաները պաշտպանելու համար երեւան եկան կայսրութիւններ:

Թող չկարծուի թէ արուեստը շատ թեթեւ բան մը եղած է, որուն վրայ մարդը կառուցեր է իր վիթխարի քաղաքակրթական շէնքը: Արուեստը ոչ միայն կայսրութեան ծնողը եղած է, այլև օրգանական էվոլյուցիայի զսպանակը, անոր մղիչ ուժը: Այդ յարատեւ տենչանքին մէջ կը գտնենք աշխարհի օրգանական գեղեցկութեան ծնուցիչ աղբ: Մեր կարծիքով ծաղիկներն ու պտուղները մի-

շատներուն եւ թռչուններուն մէջ արթնցած գեղեցկութեան ծարաւի արդիւնքն են: (\*)

Աղօտ եւ անկատար այս հոգեկան աշխուժութիւնը զործած է նախածագ զարաշրջաններու ընթացքին սելուրեան փախկամորթին վրայ, դեւոնեան ձուկին վրայ, միջնակենդանական սողունին վրայ, արտադրելով հազիւ նշանակելի բարեփոխում մը սաղմոսաբանական էվոլյուցիայի ընթացքումին մէջ: Այն դարչելի ձեւերը, որոնք իրենց ոսկորներով ու բրածոներով մեզի կը պարզեն օրգանական գեղեցկութենէ գուրկ աշխարհ մը, կը տեսնենք թէ հեղահեղ անհետացեր են: Ժամանակի այդ անհուն տարածութեան միջոցին, բրոնութիւնը իր աննպատակ վաղքին մէջ պատահութիւն ունեցեր է արտադրելու գեղեցկութեան եւ օգտակարութեան ատակ կերպարներ:

Յուրաչան շրջանի փակման առեւ, երկրագունդի բուսականութիւնը բաղկացած էր այնպիսի տունիկերէ, ինչպէս են մասսուրկերն ու սունկերը: Անոնք գեղեցկութիւն չունէին. իրենց սերմերը ցրուողն էր հօլը: Անոնք չունէին ծաղիկներ, որոնց բեղմնաւորման համար միջնորդէին մեղուններն ու թիթեղնիկները:

Կաւճային շրջանին երեւան եկան տունիկեր իրենց զբաւիչ ծաղիկներով: Նոյն շրջանին, մասնաւորապէս երրորդական շրջանին, երեւան եկան ծաղիկներու սիրահար միջատները, որոնք զարգացուցին ծաղիկներու տեսակները, եւ այդ պէտք է ըսել, անդիտակցարար, այսինքն մեքենականորէն:

Դարեր յետոյ թռչունները սկսան հակազդել բուսական աշխարհին վրայ: Երեւան եկան հատապտուղներ եւ ցորեն, լեցուած անդարար եւ կենսատու բնասպիտով:

Աշխարհը բնակելի դարձաւ մարդուն համար:  
Այս արուեստի զրդիւր միջատներու եւ թռչուններու մէջէն

(\*) Է. Ն. Թրկըր, Իմպերիալիզմի Պատմութիւնը գրքին հեղինակը, բնագիտական գծին վրայ կը կանգնի երբ միջատներուն եւ թռչուններուն մէջ գեղեցկութեան ծարաւ կը գտնուի ու անոր արդիւնքը կը նկատէ ծաղիկներն ու պտուղները: Բոյսերն ու ծառերը ծաղիկներ կ'ունենան ոչ թէ որպէս զարգ, այլ որպէս արգասաւորման օրգան, իսկ միջատներն ու թռչունները ծաղիկներ ու պտուղներ կը փնտրեն, անոնց հիւրով սնանելու համար: Այս երկուքին մէջ գործող ուժը գոյութեան կռիւի բնական ճգնաժամ է եւ ոչ թէ արուեստի զրգիւր:



անցաւ ու ծածկեց բնութեան դէմքը, եւ նոյն գրդիւք, գործելով մարդոց եւ կանանց աւելի բարձր օրդանական ձեւերուն մէջ, արտադրեց քաղաքակրթութիւնը: Այս բանը կրնանք բացատրել սապէս: Օրդանական բնութեան ամենաուժեղ գրդիւք միմիայն ինքնապահպանութիւնը չէ, անոր հետ է նաեւ խումբի գոյապահպանումը: Եթէ բնութեան առաջին օրէնքը եղած ըլլար անհատի ինքնապահպանութիւնը, մարդկային ցեղը միլիոնաւոր տարիներ առաջ արդէն բնաջնջուած կ'ըլլար: Բայց մայրը իր կեանքը վտանգեց իր դստիկն համար, եւ մարդը կուտեցաւ ու մեռաւ իր ցեղին համար: Այդպիսով անոր ցեղը կրցաւ վերապրել: Այս նախնական գրդիւք, բոլոր գրդիւքներու ամէնէն զօրաւորը, որ ծանօթ է սէր կամ համակերպութիւն անունով, իր անհասարկաշտական արտաբարձութիւններով ապահովեց ցեղի գոյութեան յաւերժացումը:

Բնութեան երեւոյթներու հայեցակէտէն, էգը գլխաւոր սեռն է: Կանխադոյն ձեւերուն մէջ էգը անասմանօրէն գերակայ է, իսկ արուն՝ աննշան պարադիտ մը: Էգն է որ կը շարունակէ զարգացողական գլխաւոր գործը: Միայն էգն է որ կը պահէ ցեղը: Բացառութիւն է որ էգը բնականօրէն կը պահանջէ արուի թարմ ուժի օգնութիւնը տարագուցելու տոհմը եւ վերանորոգելու արդասաւորութիւնը:

Ասով բոկէ չենք ուզեր թէ կենդանական աշխարհին մէջ էգի գերակայութիւնը համաշխարհային է: Շատ մը թռչուններու եւ սանաւորներու մէջ ասոր ճիշդ հակառակն է որ կը ներկայացնէ իրականութիւնը:

Գեղազիտական իմացողութիւնը, որ գոյութիւն ունի միջատներու եւ թռչուններու մէջ, ստիպած է որ էգերը արհամարհեն զիրենք հետապնդող տղեղ կամ տկար արունները, եւ ընտրեն այնպիսիներ որոնք գերիվեր են իրենց Ֆիզիքական ուժով, զեղեցկութեամբ, մեծութեամբ եւ ուրիշ գրաւիչ յատկութիւններով: Թռչուններուն, ձուկերուն եւ մեծ մասով ստնաւոր կենդանիներուն մէջ արուն կը ցուցարբէ այդ գրաւիչ յատկութիւնները կամ գեղեցիկ փետուրներով, զեղեցիկ գոյներով, կամ հատաղի կուռղի կարողութեամբ, կամ գերազանց մեծութեամբ եւ կամ բնութեան շնորհած զարդարանքով:

Այժմ, անդրադառնալով մարդուն, անիկա, զրկուած իր անհատական զեղեցկութիւնը աւելցնող միջոցներէն, փորձեց ներկել իր դէմքը, զարդարել իր մազերը, գլխուն վրայ դրաւ արծուի փետուրներով զլխարկ, մանեակ դրաւ իր վզին, զարդօղակ անցուց իր թիւն եւ ամէն բան ըրաւ իր հետապնդած էգին սիրտը զրաւելու:

համար: Ամէնէն վերջը, ան տեսաւ որ իր զարդերուն ամէնէն հաղապարտը, ամէնէն գրաւիչը ոսկին էր:

Ոսկիի հարցը դարձաւ ցեղի մեծաւորին գլխաւոր մտադրագումը, կիներ հրապուրելու համար:

Նոյնիսկ այսօր, վաճառականութեան ու Ֆինանսի փառասէր արքաները, յենուելով տիրող դասակարգի պաշտպանութեան վրայ, իրենց կիներուն ու դուստրերուն հաճոյքի ու պերճասիրութեան յարտաեւ պահանջները գոհացնելու համար նոյն ոսկին է որ կը հետապնդեն ունենալ եւ ամբարել, շահագործելով զրկուած ու ընչազուրկ դասակարգերու աշխատանքը:

ՆԵՂՈՍԻ ԽԱՉԱԶՅԻ ԶԱՄԲԱՆԵՐԸ

Քիչ առաջ մենք նշեցինք որ ոսկիի հետապնդումը, որ մեծ մասով կապուած էր զարգացողութեան հետ, մարդիկը առաջնորդեց ցորեն արտադրող Նեղոսի հովիտէն դէպի Կարմիր Ծովու շուրջը, որ թէեւ մարդկային կարիքներու գոհացում տալու տեսակէտէն ազգատ էր, բայց հարուստ էր ոսկիով:

Աշխարհացոյց քարտէսին վրայ նայեցէք այս հովիտին: Անոր մասնաշտակութիւններէն կախուած էին ոչ միայն առաջին կայսրութիւնը, այլև բոլոր յաջորդող կայսրութիւնները: Եգիպտոս եղաւ ոչ միայն առաջին կայսրութիւնը, այլև բոլոր կայսրութեանց օրրանը: Ասորեստան Նեղոսի աւլթան գրաւելով կրցաւ Նինուէի կայսրութիւնը ապահովել: Պարսիկ Կամպայտէս-ը Եգիպտոսի փառաւորը հպատակեցնելով կրցաւ ինքզինքը անուանել քազաւորաց քազաւոր: Մեծն Աղեքսանդր Եգիպտոս մտաւ որպէսզի մարդիկ զինք որպէս աստուած ճանչնան: Նոյնը ըրաւ Օգոստոս կայսրը, նոյնը՝ Յուլիոս Կեսարը: Երբ Մուհամէտի հետեւորդները Եգիպտոսը գրաւեցին, ասով արդէն Հոսովմը գահազուրկ ըրին: Խաչակիրները արշաւեցին Եգիպտոս, որպէսզի կարողանային գրաւել Սուրբ Քաղաքը, Երուսաղէմը: Նարոյնն Եգիպտոս մտաւ կայսր դառնալու համար: Անգլիան պատմականօրէն կայսրութիւն դարձաւ Սուէզի ջրանցքը բնութրլի տակ առնելով, Եգիպտոսը իրեն զաղթավայր շինելուն համար:

Լուսնի լեռներու ձիւները հարելով ծնունդ տուած են Նեղոսին, որ կը վազէ 1600 մղոն երկարութեամբ եւ 9 մղոն լայնութեամբ հովիտն մէջէն: Այս 9 մղոն լայնութեամբ հովիտը Եգիպտոսն է: Անիկա կ'երկարի ծովու մակերեսէն 1600 ոտք բարձր սարահարթի մը մէջէն եւ ժայռու պարիսպներու քովէն, որոնք Եգիպտոսը կը բաժնեն այն կողմի անապատէն: Այդ անապատը ստենօք ուլկիտ-



նոսի յատակը եղած է, որ աննկարագրելի կառաստորութիւններու հետեւանքով բարձրացեր եւ իր մահահոտ գէմքը ցոյց տուած էր արեւուն, երբ երկրագունդը գեռ եւս երիտասարդ էր:

Սահարայի պէս անապատ չկայ: Նոյնպէս Նեղոսի նման գետ չկայ, որ մահուան ցամաքը կը մկրտտէ եւ բարեքեր հողի բարակ ժապաւէն մը կուտայ բարձր ժայռերու սկոաններուն:

Ամէն տարի գարնան Նեղոսը կը յորդի մինչեւ հովտին ծայրը եւ կը թողու մի հարուստ հողաչերտ իր ամբողջ յատակին: Գետի ողողման ժամանակ կը ջնջուէին մշակելի տեղերու սահմանները: Եզիպտացիք պէտք ունէին ճշդելու դանոնք, եւ ատոր համար Եզիպտացիք զարգացուցին երկրաչափութիւնը:

Նախնական մարդուն համար շատ դիւրին էր մշակել պարտանիւթով հարուստ գետինը: Նոյնպէս չափազանց դիւրին էր պաշտպանուիլ արտաքին յարձակումներէ, որովհետեւ ժայռերը ամէն կողմէ պաշարած էին դայն, բացի մի քանի կէտերէ, ուր ժայռուտ պարիսպը կտրուած էր:

Ահա այդ ճեղքուած կէտերէն սկսաւ քաղաքակրթութիւնը: Ուրբեր որ մտան այս հովիտը, հոն գտան ապրուստի դիւրին պայմաններ: Բայց պէտք է ըսել թէ քաղաքակրթութիւնը հոն անմիջապէս արմատ չկապեց, երբ տակաւին փոխադրական միջոցները կանոնաւորուած ու զարգացած չէին:

Այս հովիտը արդիականութեան օրբան կրնանք կոչել, որովհետեւ բոլոր կայսրութիւնները, բոլոր արուեստները եւ ամէն ինչ որ մեզի ծանօթ է քաղաքակրթութեան ստաղծի հանգամանքով այնտեղէն սկսած է: Հոն Նեղոսը շինած է լայն օղակ մը, որ կ'երկարի գէպի արեւելք, Կարմիր Մովուն մօտ, ուր ընդարձակ կիրճ մը կը ճեղքէ արեւելեան պարիսպը եւ ճամբայ կը բանայ գէպի Կարմիր Մով: Անոր ընդդիմակոծ եզերքին վրայ տղմուտ ճամբայ մը կայ, որ կ'առաջնորդէ արգաստրեր Սարկայի ուխտիսը, հեռաւոր աւազներու գրկին մէջ:

Այստեղէն կը սկսին Նեղոսի խաչածեւ ճամբաները: Հոնտեղէն է որ գետը հովիտին ճիշդ մէջտեղէն կը հոսի, այնպէս որ անոր երկու կողերուն վրայ ալ բնակչութիւն հաստատուած է, փոխանակ միայն մէկ կողին վրայ, ինչպէս ուրիշ տեղեր: Արեւելեան եզերքի կապը արեւմուտքի հետ զարգացած է վեր ու վար երթեւեկութեամբ:

Մերկ ծովեզերքի բնակիչները սորված են որ երբ սովը պաշարած է դուրսի աշխարհը, Եզիպտոս միշտ եզիպտացորեն ունեցեր է: Ատոր համար երբայցի Յակոբի նման մարդիկ գացեր են կամ մարդ զրկեր են Եզիպտոս, անհրաժեշտ աննպեղէնի համար:

Նոյնպէս Եզիպտոս փափաքեր է ուրիշ երկիրներու արտադրութիւնները ունենալ: Եզիպտացիք ներածեր են բոլոր տեսակի մետաղները, մասնաւորապէս ոսկին, եւ այդ աւելի շուտ զարգարանքի քան թէ դրամի համար:

Եզիպտոսի արծաթը կը ներածուէր Արարիայէն, պղինձը կուզար Սինայի թերակղզիի հանքերէն: Եղեւնի փայտը, որ յարդի էր նաւակներ շինելու համար, կը բերուէր Լիբանանէն: Փղոսկրը եւ ընձառիւծի մորթը կուզային հեռաւոր հարաւէն: Համեմներն ու խունկը կուզային Արարիայէն եւ Սոմալիէնտէն: Նուրբ քթանէ կտաւը կուզար Սուրիայէն, եւ մետաղեայ գեղեցիկ անօթները կը ներածուէին Քիֆթու կղզիներէն:

Երկաթը զարմանալի էր որ կը գործածուէր զլիւսուրապէս կրօնական նպատակներու համար եւ կը կոչուէր երկնային մետաղ, որովհետեւ եզիպտացիք կը հաւատային թէ երկաթը եկած էր աստղերէն:

Նշանակելի կէտ մը կայ, զոր պէտք կը զգանք յիշատակել: Այդ այն է որ բացի պղինձէն, բոլոր այդ ներածուած արտադրութիւնները պերճանքի համար կը գործածուէին քան տնտեսութեան անհրաժեշտ պէտքերուն համար: Եւ արդէն իրողութիւն է որ բոլոր երկրախոյզները, որոնք վայրենի երկիրները կը մտնէին, իրենց հետ կը տանէին հիւրաններ, գունաւոր, փայլուն հագուստներ, հայելներ, զարդեր, եւ այլն...:

Այսպէս, գաղութային քաղաքականութիւնը նախապէս սկսած է պերճանքի առարկաներով եւ ոչ թէ կենսամթերքներով: Վերջէն է որ կենսամթերքները պերճանքի առարկաներուն հետ զարձած են կեանքի անհրաժեշտ ապրանքներ, երբ տիրական անհատը միահեծան իշխան եղած է եւ իրեն որպէս նեցուկ ուժեղացուցեր է աշխատաւոր զանուածները շահագործող դասակարգ մը, հողատէր եւ ազնուական դասակարգը, իսկ ներկայ օրերուն՝ կապիտալիստ դասակարգը:

ՓԱՐԱՒՈՆՆԵՐՈՒ ՄԱՔՍԵՐԸ

Նեղոս գետի երկու եզերքներուն վրայ, ուր որ բաւական լայն էր, կային բաժան բաժան բնակչութեանց դօտիներ: Մեզի ծանօթ պատմութեան արշալուսային շրջանին, 22 անջատ տէրութիւններ շարուած էին զմբուխ հովտի երկայնքին: 22 հատ Վերին Եզիպտոսի մէջ, 20 հատ Տելթայի մէջ: Իւրաքանչիւր տէրութիւն ունէր իր մեծաւորը, իր ուրոյն մեհեսնը, իր ուրոյն աստուածը, որուն անունով կը պատերազմէր իր զբացիին հետ, ջուրի իրաւասութեան



եւ սահմանային մաքսերու շուրջ դարձած վէճերու համար: Իւրաքանչիւր ցեղ իր նախահայրերէն ժառանգեր էր կերպարի մը նկարը, ոնգեղջիւր կամ ցուլ, կոկորդիլոս կամ բաղէ: Անոնց ձեւական պատկերը դրուած էր մեհակներին մէջ, իր դրօշակին եւ կամ պատե-րազմական գործիքներուն վրայ:

Այդ նախնական տէրութեանց միջեւ շարունակ տեղի կ'ու-նենար պատերազմ, ի խնդիր ջուրի եւ կամ պետական սահմաննե-րու ճշդումին: Բնակչութեան աճումը մէկ կողմէ, պարբերական պատերազմներու յառաջ բերած ժողովրդական դժգոհութիւնը միւս կողմէ, եւ դուրսէն ներածուելիք ապրանսաց աճող պահանջը երրորդ կողմէ եզան ալն գործօն ուժերը որոնք հարկադրեցին որ այդ ան-ջատ տէրութիւնները միանան միակ թագաւորութեան մը մէջ: Վե-րին Եգիպտոս ունեցաւ մէկ իշխող որ կը կրէր ճերմակ սաղաւարտ, իսկ Տելիթայի 20 տէրութիւնները միացան եւ ունեցան մէկ թագա-ւոր որ կը կրէր կարմիր թագ: Ի վերջոյ ճերմակ սաղաւարտը միա-ցաւ կարմիր թագին, երբ կեանքի պայմանները հարկադրեցին որ երկու կողմի հաղորդակցութիւնը կանոնաւորուի, ջնջուին մաքսա-յին օրէնքները եւ միացեալ ճակատ կազմուի ծովահէններու ոտըն-ձգութիւնները վերջացնելու համար: Երբ անջատ պետութիւնները վերցուեցան, անոնց աստուածներն ալ հետացան մեհակներէն:

Եգիպտոսի առաջին թագաւորները կը կոչուէին Հորաս, որ կը ներկայացնէր արեւը: Արեւն էր որ կը հալեցնէր Ապիսենիայի լեռներու ձիւները եւ կը բերէր գարունը: Այսպիսով Օսիրիսը (Նե-ղոսը) յարութիւն կ'առնէր եւ կը միանար իր սիրականին, Իսիսին հետ: Իսիսը մայր աստուածն էր, Եգիպտոսը:

Որքան ատեն Եգիպտոսի երկու մասերը իրարմէ բաժնուած մնացին եւ յետոյ միացան, չենք գիտեր: Միայն գիտենք որ Վերին Եգիպտոսի մարդիկը արարական ճիւղին աւելի մօտիկ էին, խառ-նուրդ մը նեկրոներուն, իսկ Տելիթայի մարդիկը, աւելի դնդերային եւ ուժեղ, կը ներկայացնէին խառնուրդ մը գաղթականներու, ո-րոնք եկած էին Սուրիայէն եւ Ալպիաններէն:

Առաջին թագաւորական շրջանին, երբ քաղաքական միու-թեամբ եգիպտական այդ երկու երկրամասերու բնակիչները ձուլ-ւեցան իրարու մէջ, աւելի նպաստաւոր պայմաններ ստեղծեցին իրենց համար, դոնէ ժամանակաւորապէս:

Գաշնակցային միութեան առաջին մայրաքաղաքը եղաւ Մեմֆիս:

Թագաւոր Մենեսի օրով հիմնական փոփոխութիւն յառա-ջացաւ եգիպտական արուեստին մէջ: Կոշտ ու անհրապոյր պատ-

կերներու փոխարէն յանկարծ երեւցան բնութագրի, գործունէու-թեան եւ կազմախօսութեան վերաբերեալ աւելի բարձր արուեստի նկարներ:

Երբ հոովմէացի կայսրը Եգիպտոսի հսկողութիւնը ստանձ-նեց, այդ շրջանը մարդիկ կոչեցին «Օդոստափառ դարաշրջան»:

ԱՍՏՈՒԱԾՆԵՐՈՒ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆԸ

Այս խոշոր իրադարձութեանց հետեւեցան ոգեկան յայտնա-գործումներ: Որքան ատեն որ եգիպտական տէրութիւնները անջատ էին, ցեղերու թոթէմները (աստուածակերպները) սիրական էին եւ գերակայ: Բայց երբ միութիւնը իրականացաւ, Նեղոսը եղաւ Հայր Օսիրիս, Եգիպտոսը եղաւ անոր սիրական հարսը, Մայր Ի-սիսը: Բայց որովհետեւ Եգիպտոսի եւ անոր զաւակներուն կեանքը կախուած էր Նեղոսի յորդումէն, եւ Նեղոսը չէր յորդեր եթէ արեւը չհալեցնէր լեռներու ձիւներ, ուրեմն, արեւը կ'ըլլար Եգիպտոսի ա-դատարար աստուածը, Հորասը: Այստեղ արդէն աստուածութիւ-նը կը ներկայանար երեք դէմքով, մի տեսակ երրորդութիւն, հայր աստուած (Նեղոս — Օսիրիս), մայր աստուած (Եգիպտոս — Ի-սիս) եւ հոգեառ աստուած (Արեւ — Հորաս): Ահա այս աստուած-ներու միացումով եգիպտացիք հնարեցին արդասաւորումը խոր-հրդանշող խաչը, առանդամի ձեւով, որ դարեր յետոյ քրիստոնե-կաներու պաշտամունքին առարկայ դարձաւ Յիսուս Քրիստոս ա-նունով առասպելական մեսիայի մը քարոզչութեամբ ու խաչելու-թեամբ(\*): Միւս մեծնող աստուածները անդրշիրիմեան աշխարհին մէջ դատաւոր եղան, հոգիները գտակու համար:

Փարաւոնը կը նկատուէր Հորասի ներկայացուցիչը: Երբ հունձքը առատ կ'ըլլար եւ գետը առատ ձուկ կը մատակարարէր, փարաւոնը կը յարգուէր, իսկ երբ հունձքը պակաս ըլլար եւ սովը ցոյց տար իր դաժան դէմքը, եգիպտացիք փարաւոնը կը սպան-նէին որպէս սղէտի պատասխանատու:

Բայց Եգիպտոսի փարաւոնը այդ վտանգաւոր դրութեան մէջ չմնաց շարունակ: Երբ Հայր Նեղոսը ամբողջ Եգիպտոսի աստ-ւածը դարձաւ, միացեալ երրորդութեան ներկայացուցիչ աստուա-ծը, փարաւոնն ալ դարձաւ միացեալ աստուածութեան գործակա-տարը, մի տեսակ աստուածութիւն: Ժողովուրդը հիմնեց մեհակն-

(\*) Տես իմ ուսումնասիրութիւնը «Համաշխարհային Կրօնք-ներու Մատերիալիստական Հիմունքները», Ա. հատոր:



ներ Նեղոսի համար, փարաւոնն ալ հիմնեց վիթխարի արձաններ իրեն համար: Ան եղաւ իշխող դասակարգի հողերանութեան մարմնացումը: Նեղոսը ոչ միայն իշխող դասակարգին աստուածն էր, այլեւ ժողովուրդին աստուածը, Ֆելլահներու աստուածը:

Եգիպտոսի փարաւոնները երկրի դասակարգային կոխները արգելելու կանխամտածութեամբ ձեռնարկեցին վիթխարի կառուցումներու: Որչափ որ այդ կառուցումներու շարքը կ'երկարէր, նոյն չափով կ'աւելնար թշուառութիւնը այն շարքաշ աշխատաւորներուն, որոնք իրենց մարմնով, իրենց սակորներով այդ կառուցումներուն հիմքը կը դնէին:

Միլիոնաւոր մարդիկ խարազանի տակ աշխատած են կառուցանելու բուրգեր, սֆինքսներ ու յիշատակարան-կոթողներ: Մինչ Եգիպտոսի իշխանապաւն վաճառականները հարստութեան ու պերճանքի մէջ կը լողային, անդին աշխատաւորները ցեխերու մէջ իրենց քրտինքով կ'արտադրէին այդ ճոխութիւնը, որուն վայելքի իրաւունքը տրուած էր միայն տիրող դասակարգին: Նեղոսը, Օսիրիսը, կեանքի հայրն էր, բոլոր եգիպտացիներուն աստուածը, բայց անոր ներկայացուցիչը, թաղաւորը, դարձեր էր կողոպտիչ, բռնակալ մը որ Նեղոսի նուէրները կը բռնադրուէր իր հարկահաւաքներուն ձեռքով: Ուրեմն իշխող դասակարգը մտածեց Օսիրիսի այնպիսի դիրք մը տալ որ ժողովուրդը մնար իր ճակատագրին համակերպելու պարտաւորութեան տակ, ըլլար անորաունջ ու հատարիմ գերի:

Մեհան մը պէտք էր հիմնել Նեղոս գետին ձեւով, Նեղոսի, այսինքն Օսիրիսի համար: Բայց Նեղոսը ձեւ չունէր, ուրեմն խորհրդանիշ մը պէտք էր Նեղոսի կենսատու ուժը ներկայացնելու եւ միեւնոյն ատեն անկէ բխած ստրկացնող ներշնչումով ժողովուրդին հոգին պարուրելու համար: Եւ ի՞նչ էր այդ խորհրդանիշը ներկայացնող բանը: Նեղոսի կուրծքին վրայ կապոյտ հարսնեմատ ծաղիկն էր ան: Եգիպտական լողուար, որ բարակ ցօղունի մը վրայ կը ժպտէր, իր թերթիկները կը բանար երբ արեւը կը ծաղէր, իր թերթիկները կը գոցէր երբ արեւը կը մարէր: Այդ ծաղիկը կը ներկայացնէր Նեղոս գետը եւ արեւը: Եւ ահա լողուար եղաւ անմահութեան խորհրդանշանը: Օսիրիսի, Իսիսի եւ Հորասի տաճարները կառուցուեցան կրանիթեայ սիւներով եւ լողուար ծաղիկի ձեւով: Լողուարի կոկոնները նկարուեցան գերեզմաններու պատերուն վրայ որպէս աղօթք, որպէսզի Հայր Օսիրիսը կեանք տար մեռեալին, ինչպէս կեանք պարգեւած էր Եգիպտոսին:

Եգիպտոսի տանջուող աշխատաւորները իրենց պայքարում-

ներուն մէջ առաջնորդուեցան լողուարի խորհրդաւոր ներշնչումով, այն հաւատքով որ իրենք կ'իյնային բռնութեան տակ, բայց մի օր պիտի վերածնէին անտարակոյս: Իրենց ապրածը կեանքի զիշերն էր, բայց մեռնելէն վերջ պիտի ողջունէին կեանքի առաւօտը:

Լողուարի նկարները տարածուեցան մինչեւ Հնդկաստան, Չինաստան եւ յետոյ ձաբոն, իսկ քրիստոնէութեան երեւան գալէն վերջ, խաչի պատկերով, քաղաքակիրթ երկիրներու մէջ:

ԱՔԵՆԱՏՈՍԻ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻԻՆԸ

Եգիպտոսէն դուրս կը գտնուի արարական անապատը, այն ճակատագրիներու պահեստանոցը, ուրկէ պարբերական միջնադարներով արչաւողներ եկան ու կերտեցին աշխարհի պատմութիւնը: Միացեալ Եգիպտոսը 14 հարստութեանց (տայնեսքի) տան խաղաղ ապրած էր իր նեղ սահմաններուն մէջ եւ կարաւաններ զրկէր էր Միջագետք, երկու գետերու երկիրը, եւ կարաւաններ ներս աւեր էր այդ երկու գետերու երկրէն:

Բայց 2500 թուականին (ն. Ք.) «Հովիւ թագաւոր»ներու անունով ծանօթ պատերազմաւէր Պետսիլիներու ջոկատներ անցան Արաբիայէն, գրաւեցին Եգիպտոսը եւ իրենց մայրաքաղաքը հաստատելով Ալլաբիսի մէջ, երկար դարերով իշխեցին Եգիպտոսի:

Թերէի սահմանամասին մէջ վերջ ի վերջոյ պայթեցաւ ապրտամբուութիւն մը արչաւողներուն դէմ, եւ պետութեան հաւատարիմ եգիպտացիք Թերէի դրօշակին տակ բանակ կազմած քչեցին Հիքսոսները Սինա թերակղզիէն անդին, զանոնք հալածեցին մինչեւ Քանան, եւ յետոյ մինչեւ Եփրատ գետը:

Ահմոսիս Ա. առաջնորդեց այդ մեծ յեղափոխութիւնը եւ թուամոսիս Գ. հետեւեցաւ իրեն: 20 տարի անընկճելի կամքով յառաջ տարաւ նախ զիմադրական, ապա յարձակողական արչաւանքը եւ փարաւոնի իշխանութեան տակ առաւ Սուբիան, Փոքր Ասիոյ մեծ մասը, շատ մը յունական կղզիներ եւ Վերին Եգիպտոսի հովիտը: Թուամոսիսի հրամանատարութեան տակ բոլոր երիտասարդ եգիպտացիները միացան այդ խաչակրութեան:

Թէեւ հազարաւոր վաճառականներ ու նաւաստիներ եկեր անցեր էին Եգիպտոսէն Բաբելոն եւ Բաբելոնէն Եգիպտոս, բայց եգիպտացի երիտասարդներու կողմէ կազմուած խաչակրութիւնը տարբեր արդիւնք տուաւ: Այդ երիտասարդ եգիպտացիները, վերագառնալով Եգիպտոս, իրենց հետ բերին օտար գաղափարները՝ որոնք այն ատենները այնքան խորթ էին եւ անընդունելի, որքան կոմու-



նօստական գաղափարները մեր սպրած ժամանակաշրջանին, կապիտալիստական երկիրներու մէջ:

Եզիպտացիք, զարեբով կղզիացած Նեղոսի հովտին մէջ, կը կարծէին թէ իրենց երկրէն դուրս ուրիշ աշխարհ գոյութիւն չունէր, եւ երկինքի արեւը, լուսինը, աստղերը միայն իրենց համար կը փայլէին: Բայց արշաւանքէն վերադարձող եզիպտացի երիտասարդները եկան ու յայտարարեցին որ Եզիպտոսէն դուրս ուրիշ աշխարհներ ալ կան, որոնց երկինքին վրայ կը փայլին նոյն աստղերը, նոյն լուսինն ու արեւը: Ասկէ զատ, Նեղոսէն զատ ուրիշ գետ մըն ալ կայ, որ բոյսեր կ'աճեցնէ, հունձք կ'արտադրէ եւ մարդիկ կ'ապրեցնէ: Այսպիսի մի յայտարարութիւն եզիպտացիք իրենց հայրենիքին հանդէպ կը նկատէին իբրեւ անհաւատարմութիւն, մասնութիւն եւ հայհոյանք: «Ամէնէն առաջ եւ ամէնէն վեր մեր Եզիպտոսը», ազգակեցին անոնք զայրոյթով:

Կար նաեւ ուրիշ առեղծուած մըն ալ: Բարեկոնի վրայ Թուամոսի յաղթանակէն յետոյ յայտնի եղաւ որ Հայր Օսիրիսը Եզիպտոսի սահմաններէն հեռու, փարաւոնի բանակներուն յաղթանակը չէր կրնար ապահովել, որովհետեւ անոր ուժը ամփոփուած էր միայն Եզիպտոսի մէջ: Ուրեմն, Օսիրիսէն աւելի հուժկու աստուած մըն ալ կար, ուրիշ ուժ մը որ կը դիմադրէր Նեղոսի հովտի զօրքերուն: Բարեկոնի մէջ ալ մարդոց ծանօթ էր նոյն ուժը, ինչ որ ծանօթ էր Եզիպտոսի մէջ, եւ այն էր արեւը:

Թուամոսիս իր արշաւանքէն վերադարձին Եզիպտոսի բոլոր աստուածներու կրօնականները վերակազմեց եւ Թեբէի մէջ անոնց գլուխը նշանակեց Ամօնի բարձր կրօնաւորը, որպէս Եզիպտոսի բարձրագոյն քրմապետը: Անոր թոռը, Ամենատապ Դ., 1370 թուականին (Ն. Ք.) երբ զահ բարձրացաւ, անմիջապէս հրապարակեց իր ցնցող տեսութիւնները (նոր յայտնութիւնները) եւ սկսաւ զանոնք իրականացնել: Ան յայտարարեց որ միայն մէկ աստուած կայ, որուն խորհրդանիշն է արեւը: Արդարութեան ու ճշմարտութեան աստուածն է ան, որուն իշխանութիւնը տիեզերական է: Ուրեմն, ասկէ վերջ բոլոր պաշտամունքները պիտի լծաձայուին այդ աստուծոյն, իսկ միւս աստուածները որպէս ոչնչութիւն անմիտ պիտի թողուին: Այս վարդապետութիւնը գործնականացնելու մտքով, ան ջնջել տուաւ յիշատակարաններու վրայի բոլոր աստուածներու եւ թագաւորներու անունները եւ անոնց տեղը դրաւ Ատոնի խորհրդանշանը, արեւը, որուն ճառագայթները կը տարածուին ամէն տեղ ու ծնունդ կուտան կեանքի:

Որովհետեւ կայրութեան հին մայրաքաղաքները, Թեբէն

եւ Մեմֆիսը, հիմնուած էին հին աստուածներու պաշտամունքի հետեւողութեամբ, ան հիմնեց նոր մայրաքաղաք մը, Ամարնան, հին մայրաքաղաքներու մէջտեղը: Այդ նոր մայրաքաղաքը անուանեց Քիտատոն կամ Ատոնի քաղաքը եւ իր անունն ալ փոխելով կոչեցաւ Աքենատոն կամ Ատոնի ծառան: Ասով Ատոնի կրօնքը կապեց իր անձին հետ, քանի որ ինք եղեր էր անոր բարձրագոյն քուրմն ու երզիչը:

Աքենատոն մասնաւոր օրհներգութիւններ գրեց այդ աստուծոյն համար, որոնց կտորները հասած են մեզի:

Ահաւասիկ անոնցմէ նմոյշներ.

«Որքան հրաշալի է քու արշալոյսը երկինքի հորիզոնին վրայ, Ո՛վ կենդանի Ատոն, սկիզբը կեանքի.

Երբ դուն կը բարձրանաս արեւելի հորիզոնին վրայէն, Աշխարհի համակ կը լեցուի գեղեցկութեամբ:

Գեղեցիկ ես դուն եւ մեծ, բարձրէն փայլելով ամէն երկրի վրայ: Քու նառագայքներով կ'ողողես երկիրը եւ քու բոլոր Ստեղծած էակները, նոյնպէս բոյսերն ու կենդանիները:

Դուն ես Բիւն (ամբողջը) եւ դուն ամէնքը քեզի գերի կը դարձնես: Դուն քէնի հեռուն ես, քու նառագայքները երկրի վրայ են:

Դուն քէնի անհասանելի բարձրութեան վրայ ես, բայց քու ստաց հետքերը մեր ցերեկներն են:

Երբ դուն երկինքի արեւմտեան հորիզոնը կը մտնես, խաւարը կը պատէ երկիրը, որ կ'ըլլայ որպէս մեռեալ:

Մարդիկ կը քնանան իրենց սենեակներուն մէջ. Անոնց աչքերը գոց եւ գլուխը ծածկուած է. մէկը միւսը չի տեսներ: Լուսինն եւ մթութիւնը զիրար են գրկած.

Անոնք բոլորը անձկութեամբ կը սպասեն քու վեհափառ վերերեւումին:

Խաւարը կը դողայ եւ լուսինը քու ծագման կը սպասէ»:

Ուրիշ օրհներգութիւն մը հետեւեալ տողերով.

«Պայծառ է երկիրը, երբ դուն կ'երեւիս հորիզոնին վրայ, երբ դուն ցերեկ ատեն կը փայլիս որպէս Ատոն

եւ կը հալածես խաւարը:

Քու ձայնը ջուրերուն վրայ է, Քու երգը՝ բոցուններու բերնին մէջ,

Քու ձայնը հուժկու է, մեզի կը հասնի որոտումով, Անիկա լեցուն է վեհափառութիւնով:

Քու փառքը կը խօսին ամէնքը,







նող Օսիրիսը անհետացեր էր: Անոր անունով մարդիկ նոյնիսկ եր-  
դուելու չէին համարձակեր: Այժմ տիրական աստուածը Ասոնն էր:

Հացադործները որոնք բլիթներ կը շինէին տաճարներու առ-  
նակատարութեանց համար, զրկուած էին իրենց ապրուստի միջոց-  
ներէն: Վարպետներ որոնք հին աստուածներու յուսոյթները կը  
չինէին ու կը ծախէին տաճարներու դռներուն առջեւ, այժմ մնա-  
ցեր էին անգործ: Արձանագործներ որոնք Օսիրիսի արձաններն էին  
չինէր բազմաձեւ, այդ արձանները թողուցին փոշիներու տակ:  
Հողագործներ որոնք Օսիրիսի կոշա խրատելակը դրած էին իրենց  
արտերուն զլուխը, երաշան ու սոյլը հեռացնելու համար, կը վախ-  
նային այլեւս նոյն հուատքով շարժելու: Այսպէս, ամբողջ Եգիպտոսի  
երկիրն քր ծածկուած էր սպառնալից դժգոհութեան ամպերով,  
բայց երիտասարդ թագաւորը չէր տեսներ ապագայ վտանգը:

«Աքենատոն հին աշխարհի առաջին յեղափոխականն էր»,  
ըսած է Բրիտտա: Սաուզիւ կրնանք ըսել թէ անիկա առաջին մի-  
ջադաշնական մարզն ալ էր: Բայց այս մեծ մարդը ճախողեցաւ,  
որովհետեւ ան չէր գիտեր թէ կրօնական վերնաշէնքը փոխելով կա-  
րելի չէր փոխել երկրի անտեսական ներքնաշէնքը: Յեղափոխու-  
թիւնը պէտք էր սկսեր վարէն, այսինքն ուղղակի ժողովուրդէն, եւ  
սակայն ժողովուրդը հակառակ էր այդ ձեւի յեղափոխութեան:

ԱՄԱՐՆԱՅԻ ՊԱՅԹՈՒՄԸ

Որքան ատեն որ երիտասարդ փարաւոնը կ'ապրէր, ան կըր-  
ցաւ պահել ու շարունակել իր ճամբան, հակառակ զսպուած դժգո-  
հութեան որ իր գլուխը կը ցցէր երբեմն, ապստամբական փորձե-  
րով: Բայց անմիջապէս յեղափոխութիւնը պայթեցաւ, երբ փարա-  
ւոնը մեռաւ: Քիտատոնը, իր սիրած քաղաքը, որուն մարդ չէր  
կրնար մօտենալ, մոխիր դարձաւ:

Քաղաքի աւերակներու պեղումներուն ընթացքին վերջերս  
գտնուած է հաղորդագրութիւն մը որ կը ցուցնէ թէ կայսրութեան  
հպատակ թագաւորներէն երուսապոլիսի թագաւորը, Աբբա-Աքիբա,  
երիտասարդ փարաւոնին դիմած է հետեւեալ սողերը պարունակող  
նամակով մը.

«Իմ աէր թագաւորի ոտքերուն առջեւ, իմ արեւը, իմ կեան-  
քի լոյսը, իմ աէր թագաւորի ոտքերուն առջեւ ես եօթը եւ եօթը  
անգամ ծուծելի կուզամ: Ով թագաւոր, հարիւրները աւերակ դար-  
ձուցին երկիրը: Չօրքեր զրկէ, այլապէս ամէն ինչ պիտի կորսուի:  
Թագաւորի դիւանապետի ուշադրութեան: Կը խնդրեմ, կ'աղաչեմ,

ասիկա թագաւորին ուշադրութեան յանձնէ. բող զօրքեր զրկէ  
շուտով, այլապէս ամէն ինչ պիտի կորսուի»:

Այս Հարիւրի կոչուած ցեղը անպատի թափառաշրջիկ ցե-  
ղերէն մէկն էր որ Անդր-Յորդանանէն արշաւեց Պաղեստինի վրայ  
եւ բարձրաւանդակի բոլոր քաղաքները ենթարկեց իր սուրի իշխա-  
նութեան: Այդ ցեղին հետ էին մեր հին բարեկամները, Խարայէլի  
որդիները, որոնց մուտքը Եհոսիայի խոտապած երկրին մէջ մենք  
կը տեսնենք պատկերազարդ Աստուածաշունչի էջերուն մէջ:

Եթէ Եգիպտոսի անդամալոյժ իշխանութիւնը Փինանասպէս  
եւ զինուորականապէս քայքայուած չըլլար Աքենատոնի միանձնեայ  
յեղափոխութեան հետեւանքով, Հարիւրի ցեղը չէր կրնար մտնել  
Պաղեստին, եւ Յեսուն, Եհուտը, Բարաքը, Դեբորան, Սամուէլն  
ու Դաւիթը չէին կրնար միացնել այդ թափառաշրջիկ ցեղերը, ոչ  
ալ Երբայեցի մարդարէները Աքենատոնէն տասը դար յետոյ կըր-  
նային Քիտատոնի մոխիրներուն մէջէն աշխարհին պարզել ինտեր-  
նացիոնալիզմի հեռանկարը:

Աքենատոնը ասուպի մը լոյսը տուաւ Եգիպտոսին, ու այդ  
լոյսը իրեն հետ անյայտացաւ: Եգիպտոս ինկաւ խաւարի մէջ: Օսի-  
րիս, մեռելին աստուածը, դարձեալ զբաւեց եգիպտացուց մտա-  
ծողութիւնը: Հսկայ բուրդեր կառուցին թագաւորները, ընդար-  
ձակ դերեզմաննոցներ բացուեցան հասարակ ժողովուրդին համար:  
Լճացում եւ մահ եկան օդակել անոնց մտաւորական եւ բարոյական  
աշխարհները: Ամմոնի բարձրագոյն քուրմը ներկայացուց երկրի  
իշխանութիւնը: Միմեանց յաջորդող հարստութիւնները (թագաւո-  
րութիւնները) հսկայական տաճարներ կառուցին անհաշտ առելու-  
թեամբ լեցուած Աքինատոնի աններելի հերետիկոսութեան դէմ:

Տաներորդ հարստութիւնը գեղեցիկ տաճարներու կառու-  
ցումով հռչակաւոր եղաւ: Եւ այս նուաճումները աւելի սրեցին  
կրօնական դասակարգին ախորժակը, մինչեւ որ Ամմոնի բարձրա-  
գոյն քուրմը ինքզինք հռչակեց փարաւոն:

Ասիկ յետոյ սկսաւ անցեալի պաշտամունքի դարաշրջանը:  
Ամէն բան վերադարձաւ իր նախնական պարզութեան: Աւանդու-  
թիւնները վերակենդանացան: Եգիպտոսը ծերացեր էր եւ սակայն  
կուղէր վերադառնալ իր մանկութեան շրջանին: Հինը վերապրեց-  
նելու այդ անխնական աշխատանքին մէջ Եգիպտոսի կրօնքը սկսաւ  
նեխիլ, մինչեւ որ անանդապաշտ ու մեքենական ձեւափոխութեանց  
ու ծէսերու կրօնք մը եղաւ: Անցեալի թոթմները դահլիճից ըրին  
նոր սերունդի արեւ աստուածը եւ դժոռեցին Եգիպտոսի հոգին:



ՄԵՆ ՎԵՐԱՊՐՈՒՄԸ

Սամտիկ Ա.ի օրով անդամ մը եւս, երբ ումբողջ աշխարհի սիրար սկսաւ բարախել խորհողութեան ուժգին հոսանքով մը, Եգիպտոս այդ հոսանքէն հեռու մնացեր էր: Սամտիկի իշխանութեան շրջանին առեւտրական յարաբերութիւններ հաստատուեցան Ասորեստանի, Հնդկաստանի, նոյնիսկ Չինաստանի հետ: Կարաւաններ մետաքս բեռցած Քանաոնի դաշտագետիններէն հասան Նեղոսի հովիտը: Յոյն զինուորներու եւ յոյն ճարտարարուեստի յարձակողական շարժման առաջնորդութեամբ փարաւոններու երթեւեկութիւնը կը տեսնուէր ամէն պողոտաներու վրայ եւ ամէն քաղաքի մէջ, ուր կը վաճառուէին Եգիպտոսի արտադրութիւնները:

Սոյն համաշխարհային ծանօթարկութեան գրգռելն տակ Կոթամա Բուդղան կը քարոզէր Հնդկաստանի մէջ, Կոնֆիլիկոսը՝ Չինաստանի մէջ, Չրադաշտը՝ Պարսկաստանի մէջ, Պիւթագորասը՝ Յունաստանի մէջ, Եսայի մարդարէն Իսրայէլի մէջ, եւ բոլորն ալ նոյն երկունքային շրջանին կը պարզէին այն իրողութիւնը որ հասարակական ապստամբութեան հեռանկարը ցցուած էր հին սովորութեանց լուծին դէմ: Աւժեղ վերադարձում մը որուն նմանը հազարամեակներու ընթացքին միայն երկու անգամ տեսնուած էր, ցնցեր էր մարդոց խորհողութիւնը: Ամէն տեղ ճնշուած դասակարգերը սկսած էին շարժիլ, անհանդարտութեան նշաններ ցոյց տալ: Նոր խորհողութեան վերագարձումը անոնց անհանդիսա շարժումներու հետեւանքն էր: Միայն Եգիպտոսն էր որ անդորր կը մնար, որովհետեւ կրօնաւորները հաշիշով թմրեցուցեր էին ժողովուրդին միտքը: Ամենատապի անէծքը ծանրացեր էր ամէն մէկուն վրայ որ կը համարձակէր նախատել նահապետական հաւատալիքներու դերագատութիւնը: Սամտիկը, սակայն, արհամարհելով տիրական ընդհանուր մտածողութիւնը, իր դուստրը Նիտոկրիսը Ամմոնի ամենաբարձր քրմապետի աթոռին վրայ նստեցուց, իսկ մը որ կը բռնաբարէր հնագոյն նախորդներու օրէնքը, որովհետեւ միայն այդ մարդն էր, մօրուսաւոր քրմապետը, որ թերէի աստուածութեան տաճարին մէջ կրնար խուսկ ծխել:

Սամտիկ, իր ատենի ամենատեւեղ պետական մարդը, ճյմեց երկրին աւաղակարարոյ լորտերն ու տեղական իշխանապետութիւնները եւ յաջորդ 400 տարիներուն համար վերջ տուաւ կէս անիշխանական դրութեան որ երկար ատեն անէծք եղած էր այդ դժբախտ երկրին: Այս փարաւոնը աշխատեցաւ ամէն միջոց գործադրել տընտեսական հաստատուն հիմքերու վրայ զննելու իր երկիրը եւ զայն հասցնել զինուորական դերակշիռ դիրքի մը, հոգ չէր թէ այդ դիրքն

ալ չափով մը կախուած կը մնար օտար զինուորական ուժերէն:

Սամտիկ իր երիտասարդ հասակին Ասորեստան կը դանուէր: Հոն երբ ուսումնասիրեց որ կայսրութեան շնչերակը առուտուրն էր, նոյնը ուղեց զարգացնել իր երկրին մէջ: Ասոր համար ան նորոգեց առեւտրական կապերը Սուրիոյ եւ ուրիշ երկիրներու հետ: Փիւնիկեան ցովանաւորը լեցուեցան Նեղոսի բերանը եւ սեմական ազդերու վաճառականները խմբուեցան տելթային վրայ:

Սամտիկ նախապատուութիւն տուաւ յոյներուն: Յոյներ առաւ իր բանակին մէջ եւ յետոյ յոյն փորձագէտներուն յանձնեց իր վաճառականական ծրագիրներուն գործադրութիւնը:

Սամտիկ առաջին թաղաւորը եղաւ որ քաջալերեց օտար գաղութներու հաստատումը Եգիպտոսի մէջ: Անոնք զօրեղացուցին Եգիպտոսի քանակները, որոնցմով ան կըցաւ իր տիրապետութիւնը տարածել Ասորեստանի եւ Պարսկաստանի վրայ:

Երբ Սամտիկ մեռաւ, Եգիպտոս այնպիսի բարգաւաճ եւ ճոխ դրութեան մը մէջ էր, որուն նմանը գոյութիւն ունէր միայն Ռամսէս Գ.ի օրով, 500 տարի առաջ:

Այդ ատեն խոշոր դէպքեր պատահեցան ուրիշ երկիրներու մէջ: Նոյն պահուն երբ Ամենատապի միանձնեայ դեկալարութեամբ Եգիպտոս յեղափոխութեան մասնուած էր, Միջագետքի հովիտը կը ներկայացնէր կոխներու թատերաբեմ մը հիւսիսի ու հարաւի, Նինուէի եւ Բաբելոնի միջեւ: Պաղեստին այս շրջանին էր որ Դաւիթի եւ Սողոմոնի օրով ունեցաւ մի տեսակ անկախութիւն:

Երբ Բաբելոնի իր փառքի դենիթին հասեր էր, ահա աշխարհի թատերաբեմին վրայ երեւցաւ Պարսկաստանը իր յաղթական Կիւրոսով որու որդին Կամպաշէսը դրուեց Եգիպտոսը եւ վերջ դրաւ ամենահին կայսրութեան:

Երկու դար յետոյ Աղեքսանդր Մակեդոնացին յաղթեց Պարսկաստանի, մտաւ Եգիպտոս ուր ան ընդունուեցաւ որպէս ազատարար, որպէս աստուած: Ամմոնի տաճարին մէջ Եգիպտոսի քուրմերը յայտարարեցին որ Աղեքսանդր Ամմոն աստուծոյ որդին էր:

Նեղոսի բերնին մօտ Աղեքսանդր Մակեդոնացին հիմնեց քաղաք մը որ կոչուեցաւ Աղեքսանդրիա: Մեծն Աղեքսանդրի հիմնած այս քաղաքը յետագային նշանաւոր դարձաւ իր ուսումնարաններով եւ հրաշալի տաճարներով:

ՅՈՐԵՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Յունական գաղութը Եգիպտոսի մէջ ոչ միայն աղբեց եղիպտացիներու ճակատագրին, այլեւ ամբողջ աշխարհի ճակատագրին



վրայ, Աղեքսանդրիա քաղաքին մէջ յու-  
նական արիւնը խառնուեցաւ եգիպտական արեան հետ, յունական  
իմաստութիւնն ու մտաւորական ճկունութիւնը խառնուեցան եգիպ-  
տական միսթիկ մտքին հետ, եւ արտադրուեցաւ մթնոլորտ մը որ  
խաւարի մէջ թողուց Աթէնքը: Աղեքսանդրիա քաղաքը եղաւ աւելի  
յունական քան թէ Աթէնքը:

Աղեքսանդրիան Եգիպտոսի բանալին էր, եւ որպէս այդպի-  
սին անիկա եղաւ նաեւ աշխարհի ցորենի շտեմարանը:

Ահա Յուլիոս Կեսարը որ Եգիպտոսը իւրացնելու ծրագրով  
Կղէոպատրայի հետ սիրային խաղի մէջ ձախողեցաւ: Անոր հետե-  
ւեցաւ Մարկուս Անտոնիոս: Կղէոպատրան կ'ուզէր ամուսնանալ  
Հոովմի կայսրերէն մէկուն հետ, այն նպատակով որ Եգիպտոսի  
ցորենը երբ միանար Հոովմի պողպատին, այն ատեն կարելի էր  
տիրել աշխարհին: Միւս կողմէ, Հոովմի կայսրը կ'ուզէր Եգիպ-  
տոսը, որովհետեւ ան ցորենի ամբարանոցն էր: Հոովմի պաշտօնա-  
տարները որոնք աշխարհը կը կառավարէին, Հոովմի ժողովուրդը  
չէին կրնար կշտացնել կրկէսներով եւ գերիններու սուսերամարտե-  
րով: Իրենց ցորեն պէտք էր: Ով որ Եգիպտոսի հունձքերուն կը  
հակէր, բռնորոշ կ'ենթարկէր Հոովմի ընտրութիւնները, եւ ով որ  
հացի խոստումով ընտրութիւնները կը զեկավարէր, կը տիրանար  
աշխարհի իշխանութեան: Անտոնիոսի ծրագիրն էր ամուսնանալ  
Կղէոպատրայի հետ, ինքզինքը հռչակել Եգիպտոսի թագաւոր եւ  
մայրաքաղաքը Հոովմէն փոխադրել Աղեքսանդրիա: Իր զօրավար-  
ներուն ապստամբութեան հետեւանքով կայսերական քուէն ինկաւ  
Օգտավիանոսին: Անոր աստուածութիւնը յայտարարուեցաւ այն  
ընդարձակածաւալ կայսրութեան վրայ, որուն մեծ անկիւնաքարն  
էր Եգիպտոս:

Բայց պատմութեան անիւր շարժելու մենաշնորհը ոչ Կղէո-  
պատրային տրուած էր, ոչ ալ Հոովմի կայսեր, այլ այն ճնշուած,  
հարստահարուած ու թշուառ ժողովրդական զանգուածներուն ո-  
րոնք իրենց հաւաքական ուժին անդիտակ, եւ անճնատուր ծոյլ ե-  
րազանքին, իրենց յուսահատութեան մէջ կը սպասէին փրկիչի մը  
զալտեան, որ զիրենք պիտի առաջնորդէր դէպի այն երանաւէտ  
կեանքը որ զոյութիւն չունէր երկնից տակ, իրական աշխարհին  
մէջ, այլ երկինքի մէջ, անդրշիրմեան կեանքին մէջ: Մեծ էր տա-  
ռապող ժողովուրդներուն պահանջը եւ անյետաձգելի... Եւ ահա  
այդ ուռճացած պահանջին զոհացում տալու համար երեւան ելան  
ինքնակոչ փրկիչներ: Բայց մարդոց աչքին ինչ որ տեսանելի էր,  
կասկածելի էր: Մարդիկ պաշտեր էին կուռքեր, անխօս ու անշարժ

աստուածներ, որոնք զոհեր պահանջէր ու զոհեր առեր էին, սա-  
կայն ոչինչ էին տուեր: Իսկ այս խօսող ու շարժող «փրկիչները,  
թէեւ ճարտարախօս ու տեսքով հմայիչ, բայց մարդ էին վերջա-  
պէս, իրենց նման մարդ: Առով ձախողեցաւ ամէն փորձ, եւ վերջ ի  
վերջոյ յաջողեցաւ վերջին փորձը: Ի՞նչ էր այդ փորձը:

Շրջաբերութեան հանուեցաւ վիպական անձի մը պատմու-  
թիւնը, որ բերնէ բերան շուտով տարածուեցաւ հրաշքներ սպասող  
ամբոխներու մէջ: Բեթլէհէմի մէջ կոյսէ մը ծնած էր մանուկ մը,  
եւ այդ մանուկը աստուածորդի էր, իջած էր երկինքէն մարդկու-  
թիւնը փրկելու համար: Հերովդէս Բեթլէհէմի բոլոր արու նորա-  
ծինները սպաննել տուած էր, բայց այդ մանուկը ազատուած էր  
հրաշքով: Այդ մանուկը մեծցեր ու քարոզեր էր ժողովուրդին. «Ին-  
ծի եկէք, ով դուք յոյնածններ եւ բեռնաւորուածներ, ես ձեզ կը  
հանգստացնեմ»: Այդ աստուածորդին հրաշքներ գործեց, իր հօր  
անունով մեռելները կենդանացուց, սպա խաչուեցաւ, թաղուե-  
ցաւ, յետոյ դերեզմանէն յարութիւն առաւ, երեւցաւ իր աշակերտ-  
ներուն, անոնց կտակից իր թերաւարտ գործը եւ ինք անոնց ներ-  
կայութեան համբարձաւ երկինք:

Տանջուած մասսաներու երազած մարդն էր ան, երկնային  
փրկիչը: Անո՞նք. Յիսուս Քրիստոս:

Բոլոր կեղծ փրկիչները անհետացան ու յաղթական փրկի-  
չը մնաց: Անոր խաչը եղաւ պաշտամունքի առարկայ, եւ կրօնքը՝  
կրօնքներու ամէնէն բարձրը, քրիստոնէութիւնը:

Եւ հրեշտակներու հրամանատար Քրիստոսը կեցաւ Հոովմի  
կայսեր դէմ:

ԿԱՅՍՐԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՍ

Քրիստոնեայ աւետարանիչներու պատմութեան համաձայն,  
Քրիստոս սպրած է Եգիպտոսի մէջ, բայց չեն ըսած թէ ան որքան  
մնացեր է հոն: Ստոյլ է, սակայն, որ եգիպտական բուրգերը տե-  
սան Քրիստոսի մուտքը եւ թոյլ տուին որ իրենց շուքին տակ հաս-  
տատուի քրիստոնէական եկեղեցին, զպատկան եկեղեցին:

Եգիպտոսի ժողովուրդը, ձանձրացած չին աստուածներէն,  
խուռներամ գիմեց քրիստոնէական եկեղեցիներուն: Ան եղաւ խեղ-  
ճուկ երկրին համար պրոյետարական եկեղեցի:

Պէտք է ըսել թէ քրիստոնէութիւնը առաջին անգամ տարած-  
ւեցաւ խեղճերուն, թշուառներուն եւ զրկեալներուն մէջ:

Տիրող դասակարգը սկզբնական շրջանին վտանգ մը տեսաւ  
այդ նոր կրօնքին մէջ եւ սկսաւ հալածել անոր հետեւողները: Բայց



վերջ ի վերջոյ, երբ կոստանդին կայսեր օրով քրիստոնէութիւնը պետական կրօնք դարձաւ, Քրիստոսն ու կայսրը հաշտուեցան իրարու հետ: Քրիստոս երկնային թագաւորութեան բանային առաւ, իսկ երկրային իշխանութիւնը առաւ կայսեր: Թէեւ Քրիստոս ու կայսրը հաշտուեցան իրարու հետ, բայց քրիստոնեայ եկեղեցիները սկսան պայքարել իրարու դէմ: Մէկ կողմն էր կայսերական եկեղեցին, միւս կողմը՝ պրոլետարական եկեղեցիները: Այդ պայքարին ընթացքին մաս մը ազգեր բարձրացան, ոմանք տապալեցան: Աղեքսանդրիացի Արիոսի եւ Աթանասիոսի վարդապետական վէճը կատարել պայքար յառաջացուց ամբողջ աշխարհի եպիսկոպոսներուն մէջ: Աթանասիոս շահեցաւ: Կ. Պոլսոյ եկեղեցին, հարուստ եւ պերճասէր եկեղեցական քաղաքադէսներու այդ տունը որ կայսեր ու պեկան ոստիկանի պաշտօնն էր ստանձներ, երբ որդեգրեց Թանասեան վարդապետութիւնը իրեն դէմ հանեց հպատակ դաւաճներու եկեղեցիները: Պայքարը միաբանականներու եւ մեկթիտեաններու, նեստորականներու եւ օրթոտոքներու միջեւ հաւատարեքի պայքար չէր, այլ պատերազմ մըն էր որ կը մղուէր աղապիսի դիտակցութեան եւ կայսերական միաձեւութեան միջեւ:

Աղեքսանդրիա քրիստոնէական կրօնքի միատիկական թարգմանութեան դպրոցներու կեդրոնատեղին եղած էր: Անոր գլխաւոր հակառակորդն էր Անտիոքը ուր կը տիրապետէին աւելի գործնական թէորիաներ:

Աղեքսանդրիա կը պահէր մտաւորական գերազանցութիւնը: Անիկա կուլտուրայի կեդրոնն էր դարձեր ամբողջ աշխարհի մէջ: Անոր զբաղաբանները ամէնէն աւելի հարուստ էին, որոնց նմանը ոչ մի տեղ կարելի չէր գտնել: Իր հանրային պարտէզները, հասարակաց բաղնիքները, իր հիասքանչ տաճարները անգերազանցելի էին: Անիկա մութին մէջ կը թողուր Հռովմը իր անհամեմատ բարձր մշակութային մակարդակով:

Բայց Եզրիպոսը մնաց եզրիպոսական՝ Գահիրէի դռներէն անդին ինչպէս որ Քրիստոսը մնաց նոյն Քրիստոսը կայսեր դիմաց:

**ԳՈՒՐԱՆԸ ԵՒ ԽԱՉԱԿԻՐՆԵՐԸ**

Նոր իրադարձութիւն մը այնուհետեւ: Քրիստոնէական թրւագրութեան է. դարուն, Եզրիպոսի մօտիկ մեծ անապատէն նոր ուժ մը ծնունդ առաւ, նոր արշաւանք մը որ կրճանեց Աղեքսանդրիոյ մէջ բարձրացած մտաւորական աշտարակը: Օմար Խալիֆան, Մուհամէտի յաջորդը, իր ամենակարող ռազմիկը, Ամրուն դրկեց յոյներու կոթողները քանդելու համար: Աղեքսանդրիա ծանր

հարուած ընդունեց արշաւողներու ձեռքէն: Մեկթիտեան եկեղեցին կը կռուէր զպսի եկեղեցիին դէմ, յունական իմպերիալիզմը՝ եզրիպոսական ազգային ոգիին դէմ: Արշաւողները ուժեղ դիմադրութիւն չտեսան: Աղեքսանդրիա ինկաւ: Քաղաքին գրադարանը, ուր ամբարուած էին մարդկային սեռի գիտութեան բաղամթիւ գանձերը, հասարակաց բաղնիքներու ջուրերը տաքցուց իր վերքերով:

«Եթէ այդ վերքերը ճշմարիտ բաներ կ'ըսեն», ըսեր էր Օմարը, արդէն բոլորն ալ մեր Գուրանին մէջ են, եւ եթէ ճշմարիտ չեն ուրեմն Սատանային ձեռքով դրուած են. այրեցէք բոլորն ալ»:

Ահա այդ էր Մուհամէտի յաջորդին հրամանը: Ամբողջ երկու տարի այդ թանկագին ձեռագիրները, որոնք պտուղներն էին աշխարհի մեծագոյն ուսումնականներուն, քսան հազար բաղնիքներու ջուրը տաքցուցին:

Հինգ դար յետոյ, իսլամի հրեհհոմներուն առաջքը առնելու համար սկսաւ կռիւը: Ասորիկա խաչակիրներու արշաւանքն էր որ Եւրոպայի հիմքերը փորեց եւ անոր քարերը շարտեց անապատի պողպատակիր ռազմիկներու ճակատին: 1096-էն 1291, մօտաւորապէս երկու հարիւր տարի տեւող խաչակիրներու կռիւները փաստեցին որ առանց Եզրիպոսի քննարկին, կարելի չէր քննարկի տակ առնել Պաղեստինը: Ահա թէ ինչու սարակիստոսները անպարտելի մնացին:

**ՄԵՍ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՆՈՒՆԴԸ**

Փրանսա Լուի ԺԴ-ի օրով փորձեց գրաւել Եզրիպոսը եւ ձախողեցաւ: Նարոլէոն, ուզելով տապալել Անգլիան, իր բանակներով մտաւ Եզրիպոս: Ան կը յուսար որ գրաւելով Եզրիպոսը Փրանսայի կուտար Հնդկաստանի գերիշխանութիւնը: «Փրանսացի զինուորներ», ըսաւ ան ցոյց տալով բուրգերը, «քառասուն դարերէ ի վեր այս բուրգերը ձեղի կը նայէին»: Բայց Նեղոսի ճակատամարտին անգլիական նաւատորմիցը, Նելսընի հրամանատարութեան տակ, բնաջինջ ըրաւ Փրանսական նաւարածինը, եւ Նեղոսը, Օսիրիսի դետը, հաճոյքով տեսաւ որ իմպերիալիստական ուրիշ երազ մըն ալ կը ցնդէր յօդս:

Փրանսա, Նարոլէոն Ա-ի պարտութենէն վերջ, դարձեալ հետապնդեց իրականացնել Փրանսական բուրժուազիայի ծրագիրը Նարոլէոն Գ-ի ձեռքով: 1852 Դեկտ. 2-ին, Փրանսա միաձայն բռնէր կայսերական տիրոջ սուլաւ Նարոլէոնի որ 1856-ին Եզրիպոսի արար մահամետական փաշայէն խոտորակ միջոցներով ձեռք ձգեց Սուէզի ջրանցքի կառուցման մենաշնորհը:



Ֆրանսական ինժեներն էր Տր Լեոսեպո :

Ֆրանսա Սուէզի ջրանցքով կը սպառնար Հնդկաստանի մէջ անդլիական կայսրութեան: Անդլիա տեսաւ վտանգը: 1875-ին Բեն-եամին Տիդրայէլի յաջողեցաւ Իսմայէլ փաշայէն զազմնի համաձայնութեամբ 4 միլիոն սթերլինով զնել ջրանցքի հսկողութիւնը, եւ 1877-ին Անդլիոյ թագուհին յայտարարուեցաւ Հնդկաստանի կայսրուհի:

Անդլիա իր առած այս քայլով թշնամական դերքի վրայ դրաւ Ֆրանսան եւ մրցադաշտի վրայ հանեց կայսերական Գերմանիան: Այս վերջինը Պերլին-Պազտաա երկաթուղազծով սկսաւ ըստպառնալ թէ՛ Անդլիոյ, թէ՛ Ֆրանսայի եւ թէ՛ ցարակաթն Ռուսաստանի:

Փարաւոններու կայսրութեան դերեզմանին վրայ իմպերիալիստական պետութիւնները սկսան իրարու կողորդ պատուել:

Համաշխարհային Ա. պատերազմէն յետոյ յարուցուեցաւ Եգիպտոսի անկախութեան խնդիրը: Անդլիա բուն կերպով հակառակեցաւ: Ասոր վրայ, որպէս բողոք, Եգիպտոսի վարչապետը հրաժարեցաւ իր պաշտօնէն: Անոր այդ քայլին հետեւեցան դործագույններ, ապստամբութիւն, խռովութիւն: Ազդայնական առաջնորդները աքսորուեցան Մալթա: 1922-ին Անդլիա հարկադրուեցաւ յայտարարել Եգիպտոսը որպէս վեհապետական երկիր, ան ալ որոշ վերապահումներով, այսինքն այն պայմանաւ որ Անդլիա հոն կը մնար ի պաշտպանութիւն Սուլտանի, ի պաշտպանութիւն օտար քաղաքացիներու, ընդդէմ օտար միջամտութեանց: Բայց Եգիպտոսի ազգայնականները այդ ձեւն ալ չընդունեցին, մինչեւ որ 1936-ի Օգոստոսին Անդլիա յօժարեցաւ իր զօրքերը քաշել Եգիպտոսէն եւ իրեն պահել միայն ջրանցք գոնը:

Եգիպտոս, միւս արաբական երկիրներուն նման, անտեսական յետամնացութեան անմխիթարական պատկեր մը կը ներկայացնէր: Նախայեղափոխական շրջանին, թագաւոր Ֆարուք 243.000 էլֆըր հող ունէր, մինչդեռ երկու միլիոն մանր հողատէրեր միասին վեր առած զրաւած էին 788.604 էլֆըր հող: Միւս կողմէ, 103 հողատէրեր կային որոնք ունէին 1000-1500 էլֆըր հող, 32 հողատէրեր՝ 2 հազարէն 3 հազար էլֆըր հող, 57 մեծ հողատէրեր որոնց իւրաքանչիւրը ունէր 3-5 հազար էլֆըր հող: Անդին կը մնային երկու միլիոն երկրագործական բանուորներ, որոնք մէկ մատնաչափ հող չունէին եւ կ'աշխատէին ուրիշներու հողերուն վրայ, սոսկ իրենց գոյութիւնը քաշքշելու գնով:

Հակառակ անոր որ Եգիպտոս բնական հարստութեանց ա-

ռատաբուխ աղբիւրներ ունէր, ժողովուրդին մեծամասնութիւնը թաղուած էր թշուառութեան մէջ, որովհետեւ օտար թէ բնիկ շահագործողները կը ծծէին երկիրն կենսատու ստինքները եւ ամէն կերպ կ'աշխատէին երկիրը հեռու պահել ճարտարարուեստականացման ճամբէն:

Երկրարաններ դաժմ են որ իւղի հարուստ հանքեր կան Եգիպտոսի մէջ, բայց Անդլիա զանոնք պահած էր որպէս պահեստի շտեմարաններ:

Սուէզի ջրանցքը, միւս կողմէ, երբ հսկայական շահ կ'ապահովէր Անդլիոյ, երբեք չէր օժանդակեր երկրի անտեսութեան դարգացման: Այդ ջրանցքը, որու կառուցման համար 120.000 Եգիպտացիներ մեռան եւ անկէ Եգիպտական պաշտօնէութիւնը որոշ չափով Ֆինանսապէս կ'օգտուէր, ամէն տարի երկրի կրծքէն հարիւր միլիոն տոլար կը քամէր ու դուրս կը հանէր, առանց մազաչափ օգնելու Եգիպտոսի ժողովուրդին:

1952-ին Եգիպտոսի ներածած ապրանքներու ընդհանուր դումարն էր 668 միլիոն տոլար, 70 միլիոն արժէքով Ֆրանսայէն, 55 միլիոն՝ Գերմանիայէն, 41 միլիոն՝ Իտալիայէն, 142 միլիոն՝ Միացեալ Թագաւորութենէն (Անդլիայէն), 240 միլիոն՝ Մ. Նահանգներէն, 35 միլիոն՝ Խ. Միութենէն, 85 միլիոն՝ ուրիշ երկիրներէ:

Նոյն տարին Եգիպտոսի արտածած ապրանքներու ընդհանուր արժէքը եղած էր 455 միլիոն տոլար, հետեւեալ համեմատութեամբ: 83 միլիոն՝ Ֆրանսա, 53 միլիոն՝ Իտալիա, 35 միլիոն՝ Գերմանիա, 65 միլիոն՝ Միացեալ Թագաւորութեան երկիրներ, 48 միլիոն՝ Մ. Նահանգներ, 65 միլիոն՝ խորհրդային երկիրները, 106 միլիոն՝ զանազան երկիրներ:

Արագօրէն աճող բնակչութիւնը ծանրապէս կը դժուարացնէր ապրուստի պայմանները: Հոն, ինչպէս Միջին Արեւելքի մաս մը երկիրներու մէջ, եկամուտի անհասարկութիւնը շատ աւելի մեծ էր քան աշխարհի ուրիշ մասերուն մէջ: Ժողովուրդին բացարձակ մեծամասնութիւնը, ծայրայեղօրէն թշուառ, իսկ փոքրամասնութիւնը ծայրայեղօրէն ճոխ կացութեան մէջ կը գտնուէր: Զիար միջին դասակարգ մը որ կամրջէր հարուստ եւ ազքատ դասակարգերը, ինչպէս որ էր Եւրոպայի կամ Հիւսիսային Ամերիկայի մէջ: Եթէ տեղ տեղ միջին դասակարգ գոյութիւն ունէր, այդ դասակարգն ալ աւելի մօտ էր ազքատ դասակարգին քան թէ հարուստին:

Եգիպտոսի ժողովուրդը կրկնակ լուծի տակ էր: Իր գլխուն վրայ կեցեր էր բնաշխարհիկ շահագործող եւ իշխող դասակարգը,



խակ այս վերջնոյն թեւ ու թիկունք կեցեր էր օտար իմպերիալիզմի դործակալութիւնը: Տիրող այդ դուրսեան տակ Եղիպտոսի կառավարութիւնը ժողովրդանուէր եւ ուղղամիտ պաշտօնեաներ չէր կրնար ունենալ: Եղածները բարոյապէս ինկած ու ապակամուած քաղաքագէտներ էին, որոնք իրենց շահերուն հետապնդումով ժողովրդական դանդուածները կը պահէին կարօտութեան մէջ, եւ անոնց ըմբոստութեան սպառնալիքով սակարկութեան կը մտնէին օտար իմպերիալիստներու հետ:

1952-ի յեղափոխութեան նախորդող տարիներուն Եղիպտոսի մէջ 17 կառավարութիւն կար: 1945-ին Վարչապետ Նահըրի սպաննուեցաւ եւ անոր յաջորդեց Նոբրաշի փաշան, որ նոյնպէս սպաննուեցաւ 1949-ին:

Կային քաղաքական կուսակցութիւններ, բայց անոնցմէ իւրաքանչիւրը, խումբի մը ծոցէն դուրս եկած, նոյն խումբին շահերը կը պաշտպանէր, տիրող դասակարգին շահերը, ըլլան անոնք մեծ հողատէրեր, ինտուստրիալիստներ, ցեղերու շէյխեր կամ փրոֆեսիոնալ մարդիկ: Միայն մի քանի անկեկալ կուսակցութիւններ կային որ կը մտածէին ժողովուրդին մասին:

Այս պայմաններուն տակ ծնունդ առաւ Եղիպտոսի մէջ յեղափոխութիւնը, որ իր բնոյթով բուրժուայ դեմոկրատական յեղափոխութիւն էր: Նասրը իր հայրենասէր զինուորական ընկերներուն հետ երկու նպատակ ունէր: Մէկը, վերջ դնել օտար իմպերիալիստներու շահագործումին, միւսը՝ վերցնել երկրին ներքին ապահովութիւնը բարեկարգութեան ծրագրով:

Եղիպտոսի պատմութեան մէջ առաջին անգամն էր որ կը հաստատուէր կառավարութիւն մը որուն նպատակին մէկ մասը կը կազմէր եղիպտական ժողովուրդին բարօրութիւնը: Չարմանալի չէր, ուրեմն, որ ժողովուրդը իր հաւաքական ուժով կեցած էր ազգայնական Նասրի թիկունքին:

Եղիպտոսի յեղափոխութեան գատորշիչ բնութագրերը պարզուեցաւ այն ատեն երբ յեղափոխական խորհուրդը, ոչ թէ անհատ զիկատտորը, անցաւ իշխանութեան գլուխ: Առաջին անգամ վրձնական յարձակում գործուեցաւ խոշոր հողատէրերու իրաւանց վրայ: Օրէնք անցաւ որ սեւէ մէկը 200 էյքըրէն աւելի հող չէր կրնար ունենալ: Չանազան տեղեր հողերը բաժնուեցան մանր զիւղացիներու եւ հողագուրկ մշակներու միջեւ: Երկրի տնտեսական զարգացման համար մշակուեցան իրապաշտ ծրագրերն որոնցմէ առաջինն էր Ասիան ջրամբարի կառուցումը: Սուէզի ջրանցքը ազգայնացաւ եւ Անգլիա ներքին ու արտաքին ուժերու ճնշման տակ

քաշուեցաւ ջրանցքի գունէն, այն յոյսով որ Եղիպտոս, յետամնաց երկիր մը, իր սեփական ուժերով պիտի չկրնար ջրանցքի գործերը կանոնաւորել: Նասրը չյուսահատեցաւ եւ յաղթեց սկզբնական զժուարութեանց: Իոյր այս քայլերուն հետեւ կեցեր էր ժողովրդական մասսան:

1952 Յուլիս 23-ին Եղիպտոսի այս անարիւն յեղափոխութիւնը արձագանգեց բոլոր արաբական երկիրներուն մէջ: Արաբ ժողովուրդին զիսակցութիւնը խորհրդային Միութեան լուսարձակի լոյսով արթնցեր էր: Յառաջացեր էր անուսպ պահանջ մը լուսազօյն կեանքի համար, օտար իշխանութեանց լուծէն ազատուելու համար, աւելի արդար հասարակարգ մը հիմնելու համար, եւ այդ պահանջը դարձեր էր բնականուր արաբ ժողովուրդի պահանջը:

ՀԱԿԱՆՑ ԵՂԱՓՈՒՅԹԵԱՆ ԴԵՐՆ

Եղիպտոսի առած յաղթական քայլը պատճառ եղաւ որ արաբական աշխարհը իր բաժան-բաժան վիճակէն դուրս գայ ու կառչի միութեան գաղափարին:

Արաբական աշխարհի յետպատերազմեան շրջանի պատմութիւնը անկախութեան ու միութեան համար մղուած կռիւներու պատմութիւնն է: Արաբ ժողովուրդին վրայ ծանրացած հնադարեան օտար տիրապետութիւնը կարելի եղած էր երբ տիրող պետութիւնները մշակոյթով, ցեղային կապով եւ լեզուով միատեսակ արաբական մասսան բաժներ էին իրարու թշնամի միաւորներու:

Օսմանեան կայսրութիւնը ժէ. դարուն երբ սկսաւ քայքայւիլ ու տկարանալ, այդ ատենուան իմպերիալիստական պետութիւնները, Անգլիա եւ Ֆրանսա, ուղեցին օսմանեան տիրապետութեան շրջանակին մէջ մի շարք պետութիւններ ստեղծել եւ յետոյ զանոնք բաժնել իրենց միջեւ: Այսպէս կոչուած Մերձաւոր Արեւելեան Հարցը իր վերջին վերլուծումով երբեմնի օսմանեան այդ հզօր պետութեան մասերը իրենց ազդեցութեան ու շահագործման դեմին դարձնելու հարց եղեր էր: Այդ կը նշանակէր որ նոյն իսկ այդ ատեն «Այդրհնաուրդի վարդապետութեան» նման վարդապետութիւն մը ի գօրու էր եւ ան կը հետապնդուէր Անգլիոյ եւ Ֆրանսայի կողմէ: Այդ վարդապետութեան վերջնական ձեւ տուողը եղաւ ամերիկեան նորադոյն իմպերիալիզմը, որ ներկայիս կը փորձէ լեցնել Արեւմտեան Ասիոյ «գատարկութիւնը»:

Համաշխարհային Բ. պատերազմի շրջանին, ինքն ըստ ինքեան ազգայնական շարժումը ծաւալելով արաբական եւ այլ երկիրներու մէջ, անոնց կարեւորութիւնը աւելի եւ աւելի շեշտուե-



ցաւ, երբ տեսնուեցաւ որ անոնք բոլորն ալ իւրի հարուստ հանքեր ունէին:

Արեւմտեան Ասիոյ շուրջ դարձած քաղաքականութեան զբոսաւոր պատկերը, միջպատերազմեան շրջանին, Բրիտանիոյ աջն փորձն էր որուն զօրաւոր կեցաւ Ամերիկան: Անիկա կ'ուզէր զօրացնել զինոնխտական շարժումը, որ «հինգերորդ զօրաբանակի» զերը կատարելու էր արարական աշխարհին մէջ, աւարացնելու համար արարական ուժը: Յետ պատերազմեան շրջանին, արեւմուտքի պետութեանց առաջին դաւադրութիւնը եղաւ արարական աշխարհը մշտապէս բաժնուած պահելու եւ այդ երկրամասն առաջապահ ռազմազինական զիրքը իրենց ձեռքը առնելու համար ստեղծել այսպէս կոչուած Իսրայէլի պետութիւնը: Բայց ստով իմպերիալիստներու հաշիւը սխալ գուրս եկաւ, որովհետեւ անոնց այդ քայլը աւելի հրահրեց ազգայնական ոգին եւ միացեալ ճակատի վերայ տարաւ արարները, որոնք իրաւունք ունէին պահանջել իրենց ազատութիւնն ու ապահովութիւնը:

Երբ Արարական Լիկան կազմուեցաւ, Անգլիա կը յուսար որ կարելի էր Ֆէոտալ փաշաներով եւ արեւմուտքի թագաւորներով բրիտանական կայսրութեան հետ համագործակցական միջոցով մը կազմել: Բայց երբ ազգայնական հոսանքը սպառնալից հանդամանք առաւ, արեւմուտքը սկսաւ մտածել որ այդ շրջանին մէջ անհրաժեշտ էր ունենալ զինուորական կայան մը:

1950-ին երեք մեծ պետութիւնները, Անգլա, Ֆրանսա եւ Մ. Նահանգներ յայտարարեցին որ կոմունիստական հաւանական յարձակողականի նկատառումով իրենք մասնաւոր շահագրգռութիւն ունէին պաշտպանելու այդ շրջանը: 1951-ի Հոկտեմբերին այդ երեք պետութիւնները, Թուրքիան ալ հետերնին, ստորագրուած յայտարարութեամբ տարածել ուղեցին Մերձաւոր Արեւելքի պաշտպանութեան նուիրուած միացեալ կազմակերպութեան դադափարը, յուսալով որ կոմունիզմի սպառնալիքով կարելի էր տիրապետել արարական աշխարհին: Այս ծրագրին մէջ կը տեսնուէր զինուորական համագործակցութիւնը եւ քաղաքական որոշ նպատակներու շուրջ մեքենականօրէն կազմուած միասնականութիւնը:

Արարները արձագանգ չտուին հրապարակուած յայտարարութեան: Իսկ Եգիպտոս, Սուէզի եւ Սուտանի շուրջ անգլո-եգիպտական հին համաձայնութիւնը շեղեալ յայտարարելով հրամայեց որ անգլիական զօրքերը քաշուին քաղաքի զոնէն առանց յաղաղման:

Նոյն ատեն Մուսատեղ, Իրանի մէջ յանդուսէն քայքայ անյաջող, շնախատեսուած փորձ մը բրաւ ազգայնացնելու բրիտանական

սեփականութիւն եղող իւրի հանքերը: Եւ սակայն Մուսատեղ իր ճարտղանքին մէջ յաղթանակեց, որովհետեւ ան ցոյց տուաւ աշխարհի զիտակեց մարդկութեան արեւմուտքի իմպերիալիզմի տիրապետութեան ծրագրերը:

1953-ին Ամերիկա հաստատուեցաւ Իրանի մէջ ոչ միայն տնտեսական, այլեւ քաղաքական ուժով: Ամերիկա նպատակ ունէր նաեւ Անգլիոյ հեռանալէն յետոյ հաստատուել Եգիպտոսի մէջ: Եթէ հեռատես Նասրի քաղաքականութիւնը չըլլար, Եգիպտոս Զօր. Նեկիլի առաջնորդութեամբ ամերիկեան թակարդին մէջ պիտի իյնար: Այդ գործին համար Ամերիկա բնաւ պիտի չներէ Նասրին: Յամենայն դէպս, այս բոլոր իրադարձութեանց ընթացքին ամերիկեան իմպերիալիզմը Արեւմտեան Ասիոյ եւ Մերձաւոր Արեւելքի երկիրներուն մէջ մինչեւ այսօր կրցաւ պահել իր գերիշխող հեղինակութիւնը եւ իմպերիալիստական պետութեանց յառաջապահի եւ հրամանատարի զիրքը:

Իմպերիալիստական կախողան մը պատրաստելու գործը, ուրեմն, յանձնուած էր Ամերիկայի եւ ոչ թէ Անգլիոյ:

Ճան Ֆոստըր Դըլէս, Մերձաւոր Արեւելքի շրջանները այցելելէ վերջ, այն համոզման եկաւ որ արարական երկիրները երբ արթնցեր են, վտանգաւոր է անոնց հետ խաղ խաղալը: Անոր ռազմազինական զիժը շատ պարզ էր: Պահ մը թողուլ արարական աշխարհը առանձին եւ կազմակերպել ոչ-արար երկիրները, այն յոյսով որ ժամանակի ընթացքին կզլիտացած արարները ինքնարբարար պիտի դան արեւմտեան բանակատեղին: Այս ռազմազինութեան անդրամիկ զաւակը եղաւ Պաղտատի Դաշինքը, որուն միացան Անգլիա, Թուրքիա, Իրաք, Իրան եւ Փաքիստան:

Այսու կը տեսնենք թէ մէկ կողմէ Իսրայէլի պետութիւնը, միւս կողմէ Պաղտատի Դաշինքը ամերիկեան իմպերիալիզմի տնտեսական եւ քաղաքական նուաճման լծակներն էին, որոնց նպատակն էր ոչ միայն արարական երկիրները իրարմէ բաժնել, այլեւ զինուորական կայաններ հաստատել ռազմազինական վայրերու մէջ կոմունիզմի վտանգէն պաշտպանուելու պիտակին տակ, ապազային անխոհեմ ապստամբներու գլուխը ջախջախելու համար:

Բնաւ դարձանալի չէ, ուրեմն, որ «Նիւ Եորք Հերալտ Թրիպիւն»ի ամերիկեան թղթակիցը, Արչ Փարսոն, երբ հարց տուած է Նասրին թէ ի՞նչ է Եգիպտոսի քաղաքականութեան զիտաւոր նպատակը, Նասրը պատասխանած է, «Մեր նպատակն է նախ անկախութիւն, կատարեալ անկախութիւն: Երկրորդ, մենք կ'ուզենք կազմել արաբական միացեալ ճակատ: Ասիկա թերեւս տարօրինակ



և անխմաստ երեւնայ Սմերթիայի Մ. Նահանգներուն համար, բայց մեզի համար արամաքանական է եւ անհրաժեշտ: Ամերթիան, որպէս մեծ պետութիւն, իր շահերը կը հետապնդէ ամբողջ աշխարհի մէջ: Մենք ալ մեր շահերը կը հետապնդենք մեր հայրենիքին մէջ: Մենք աւաղակի թեւեր չունինք որ երկարենք մեր երկրէն դուրս, յափշտակելու ուրիշներուն իրաւունքները»:

Արաք ժողովուրդը մեծամասնութեամբ հասկցիր է Պաղտատի Գաշինքին նշանակութիւնը, որ ան, ըստ երեւոյթին, թէեւ ուղղուած է «սովետական յարձակողականին», բայց ըստ էութեան անոր նպատակն է պաշտպանել արեւմուտքի շահերը, ճնշելու ազգայնական շարժումը եւ յաւերժացնելու իմպերիալիզմի նոր ստակի գաղութարարութիւնը: Արարները շատ լաւ գիտեն որ սովետներէն վտանգ չկայ, սովետները գաղութարար քաղաքականութիւն չունին: Ընդհակառակը, անոնք ամէն կերպով կ'ուզեն օգնել յետամնաց երկիրներու անտեսական դարգացման:

ՄԱԿ-ի ժողովին, երբ Կիպրոսի հարցը սեղանի վրայ էր եւ անդլիացի պատուիրակը յայտնեց որ Կիպրոսը կարելոք է արարական աշխարհի պաշտպանութեան համար, սուրիացի պատուիրակը պատասխանեց. «Արարական աշխարհը պաշտպանը՝ բայց որո՞ւ դէմ: Արարներու ամէնէն կնճռոտ հարցը արեւմուտքի հետ է: Վերջին 150 տարիներուն արարական աշխարհի բոլոր մտահոգութիւնները արեւմուտքէն եկած են, ոչ թէ արեւելքէն: Արարական աշխարհի ապահովութիւնը միմիայն արարական աշխարհի անկախութեան մէջ է:

Եգիպտոս արարական երկիրներու ազատագրական պայքարին յառաջագահը եղաւ: Ըիշդէ է որ անիկա տակաւին չէ յաջողած կազմել միասնական անքակտելի ճակատ, բայց այդ չի նշանակեր թէ արարներու ազատագրական շարժումը պիտի դիմէ նահանջի ճամբան: Այդ շարժումը, ինչպէս շատ մը ուրիշ գաղութային երկիրներու ազատագրական շարժումները բուրժուական են իրենց բնոյթով սկզբնական շրջանին, բայց վաղը պրոլետարական դառնալու գաղափարով են անոնք, որովհետեւ աշխատաւոր մասսաները օտարներու լուծը փշրելէ վերջ դժուարութիւն պիտի չքաշեն փշրելու իրենց բնաշխարհի բուրժուապիայի լուծը, երբ տեսնեն թէ ինչպէս կը յառաջդիմեն Խ. Միութեան եւ Ժողովրդական Չինաստանի քաղամիլիոն աշխատաւորները:

Եգիպտոսի բուրգերը որոնք լռին հանդիսատեսները եղած են շատ մը կայսրութեանց բարձրացումին ու անկումին, մի օր պի-

տի տեսնեն յաղթական բարձրացումը տառապող աշխատաւորութեան, որու իշխանութեան անկում պիտի չըլլայ այլեւս:

ՅԵՏԱԴԱՐՁ ԹՌՈՒՑԻԿ ԱԿՆԱՐԿ ՄԸ  
ՀԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԲԱՆՈՒՈՐՆԵՐԸ

Երբ մենք շատ սեղմ առգերու մէջ պատկերացուցինք Եգիպտոսի պատմութիւնը հին դարերէն մինչեւ մեր օրերը, գիտենք թէ հոն խոշոր բաց մը մնաց. բաց մը զոր որեւէ կերպով չկրցինք դուրս գրել. այն է Եգիպտոսի տանջուող աշխատաւոր դասակարգի պատմութեան վրայ մենք չկրցինք հարկ եղած լրջաբար սփռել: Այս կէտին մէջ յանցանքը մեր անկարողութեան կապուած չէ միայն. դերատիրական շրջանին ո՞վ պիտի շահադրուէր արհամարհուած այդ դասակարգի կեանքով, ո՞վ պիտի արձանագրէր անոր պատմութիւնը եւ ի՞նչ բանի վրայ. ահա կնճռոտ հարցը: Եգիպտոսի փարաւոնները իրենց յաղթանակներն ու զործերը կրնային փորագրել տալ պատկերներով կամ մեհնարգրերով իրենց դամբաններուն, կամ մեհնարներու պատերուն վրայ, բայց գերիներու դործերը արձանագրողը ո՞վ պիտի ըլլար: Անրանական է, սակայն, ենթադրել որ բանութեան ու տանջանքի տակ աշխատող դասակարգը շարունակ անտրտունջ գործեր է եւ կեանքի ու մահուան կռիւ չէ մղած: Այս գծով երբայեցիններու ելից գերբը մի քիչ ծանօթութիւն կուտայ Եգիպտոսի բանուորական դրութեան շուրջ: Կարգալով այդ գերբը կը տեսնենք թէ Եգիպտոսի թագաւորը ինչպիսի աներեւակայելի անդթութեամբ կը վարուի եղեր երբայեցիններու հետ, որոնք բերուած էին Եգիպտոս եւ հոն կ'ապրէին որպէս գերի:

Եգիպտոսի փարաւոնը, տեսնելով որ երբայեցինները շատ կը բազմանան ու կը զօրանան եւ ասով վտանգ կը սպառնան երկրին, հրաման կ'ընէ որ անոնց նորածին արու մանչերը անխտիր սպաննուին:

Եւ պատմութիւնը կը շարունակուի սապէս. «Ղեւիի տունէն մէկը գնաց ու Ղեւիի մէկ աղջիկը կին առաւ: Եւ կինը յղացաւ ու որդի մը ծնաւ եւ անոր գեղեցիկ ըլլալը տեսնելով երեք ամիս պահեց զանիկա: Եւ երբ ալ չէր կրնար պահել զանիկա, պատուելէն տապանակ մը առաւ անոր համար, եւ կարող ու ձիւթով ծեփեց եւ աղան մէջը դրաւ, ու գետին եզրերը եղած շամբին մէջ ձգեց: Եւ անոր քոյրը հոռու կայնեցաւ որպէսզի տեսնէ թէ ինչ պիտի պատահի անոր: Եւ փարաւոնի աղջիկը գետը իջաւ լուացուելու, եւ անոր ազախիւնները գետին եզրերը կը պտտէին. եւ երբ անիկա շամբին



մէջտեղը տապանակը տեսաւ, իր աղախինը զրկեց որ բերաւ դանիկա: Եւ երբ բացաւ, տղան տեսաւ, եւ ահա տղան կուլար, եւ խղճաց անոր վրայ եւ ըսաւ. «Ասիկա երբայեցուց տղաքներէն է» (Գիբք Ելից, զԼ. Բ. 1-6): Փարաւոնի աղջիկը տղուն մայրը զտնել կուտայ, անոր ... տղան կը սնուցանէ, զայն որդեղքելով կը մեծցընէ եւ անոր անունը կը դնէ Մովսէս: Ահա այս Մովսէսն է որ իր եղբայր Ահարոնի հետ կը զառնայ յեղափոխական առաջնորդ եւ օրէնսդիր. ան է որ Իսրայէլի ժողովուրդը Եգիպտոսէն կը հանէ ու կը տանի կաթ ու մեղր բղխող Բանանու երկիրը:

Գիբք Ելիցը մեզի կուտայ աստուածային պանագան հրաշազործութեանց պատմութիւնը, թէ ինչպէս Եգիպտոսի փարաւոնը երբայեցիներու Եհովա Աստուծակէն վախճալով թայլ կուտայ որ անոնք իր երկրէն հեռանան, որովհետեւ Եհովայի հրամանով եւ Մովսէսի հրաշազործ գաւազանի ուժով Եգիպտոսի զետեքը արեան կը փոխուին, երկիրը զորաներով կը լեցուի, հօտերը՝ արջառններն ու ոչխարները կը մեռնին, մարտիները կուգան ու բերքերը կը փճացնեն, մահը կը բաղխէ բոլոր եգիպտացիներու դռները եւ իրեն հետ կը տանի բոլորին առջինեկ զաւակները: Բայց այս առասպելական պատմութիւնը կարելի է մեկնարանել ուրիշ կերպով, որովհետեւ անոր տակ ծածկուած իրականութիւնը ենթադրարար հետեւեալը ըլլալու է: Երբայեցիները Եգիպտոսի մէջ ստրկական աշխարհի անհանդուրժելի կացութեան մտտնուած էին որ անոնց նոյնիսկ թոյլատրուած չէր պաշտամունք մատուցանել իրենց պաշտած Եհովային: Անմարդկային անդթութիւնը մէկ կողմէ, կրօնական ճնշումը միւս կողմէ երբայեցիները միացեալ ճակատով տարին ապստամբութեան գիրկը: Երբ երիտասարդ Մովսէս իր երբայեցի եղբայրը եգիպտացիի մը ձեռքէն ազատելու համար եգիպտացին կը սպաննէ եւ զայն աւազին մէջ կը թաղէ, զա ցոյց կուտայ թէ երբայեցիք Եգիպտոսի մէջ կը ներկայացնէին յեղափոխական, խռովարար մասսան, որ կրնար հրգեհել արդէն իսկ վառուելու պատրաստ տարբերը, այսինքն այն բաղմահազար եգիպտացի սարուկ բանուորները որոնք թէեւ մասամբ կաղձակերպուած բայց զարձեալ կը տրորուէին բռնակալ ռեժիմի կրօնկներուն տակ: Երբայեցիները երբ երկրէն կը վտարուէին, ընդհանուր ազատամբութեան վտանգը կը հեռանար: Ահա թէ ինչու Եգիպտոսի փարաւոնը թոյլ տուաւ որ Իսրայէլի ըմբոսա ժողովուրդը զուրս ելլէ երկրէն: Բայց այստեղ պէտք չէ մոռնալ նշելու որ Եգիպտոսի տիրող դասակարգին մէջ ուրիշ հոսանք մը կար որ հակառակ էր երբայեցիներու վտարումին, որովհետեւ երբայեցիները բնիկ եգիպտացիներու ա-

տելութեան ու նողկանքին առարկայ ըլլալով եգիպտացի բանուորներուն մէջ վառ կը պահէին ազգայնական աններող ոգին: Գերի բանուորը մի տեսակ իշխողի դեր կ'առնէր, կը թմբէր անոր դասակարգային զիտակցութիւնը, իսկ երբ երբայեցիները հեռանային, Եգիպտոսի տանջուող բանուորները ճակատ առ ճակատ պիտի մնային տիրող դասակարգին դէմ եւ պիտի պայթէր խռովութիւնը: Ատոր համար երբ երբայեցիները հեռացան, այդ հոսանքը պարտազրեց որ փարաւոն իր կառքերով անոնց ետեւէն իյնայ եւ զանոնք վերադարձնէ Եգիպտոս: Ելից գիրքը մեզի կը պարզէ թէ փարաւոնի ջանքերը ի դերեւ ելան: Երբայեցիները կը յաղթեն եգիպտացիներուն, կ'անցնին Կարմիր Ծովը ու կը դիմեն Սինայի անապատը: Գրուածը հետաքրքրական վէպ է, անգերազանցելի դիցաբանութիւն մը: Աստուծոյ հրեշտակը որ Իսրայէլի բանակին առջեւէն կ'երթայ եղբր, ամպի սիւն մը կը կեցնէ եգիպտացուց առջեւ, եգիպտացիները կը մնան խաւարի մէջ, երբայեցիները՝ լոյսի մէջ: Մովսէս իր գաւազանը կ'երկարէ ծովուն վրայ, ծովը կը ճեղքուի եւ երբայեցիները ապահով կ'անցնին անոր մէջէն ու կ'ելլեն ցամաք: Եգիպտացիները երբ անոնց ետեւէն հասնիլ կ'ուզեն, ծովուն ջուրերը կը միանան ու զանոնք կը խեղդեն:

Ով որ հաւատք ունի, թող հաւատայ:

Մովսէս կը ճանչնար իր ժողովուրդի անհանդարտ ոգին, ատոր համար Սինայի լեռնէն վար կը բերէ Եհովայի պատգամները եւ զանոնք օրէնքի կը վերածէ: Այդ պատգամները կը պաշտպանէին անհատական սեփականատիրութիւնը ու զերեւտիրութիւնը. միայն թէ զերեւտիրութեան համար որոշ ժամանակ յատկացուց ան: «Եթէ երբայեցի ծառայ մը ծախու առնելու ըլլաս, անիկա վեց տարի միայն պիտի ծառայէ եւ եօթներորդ տարին ազատ պիտի ըլլայ» (Գիբք Ելից, զԼուս ԻԱ. 1-4):

Բայց մենք քանի որ երբայեցիներու մասին պիտի խօսինք առանձին բաժինով, այժմ մաննք Եգիպտոս:

Մասպերօ, յայտնի եգիպտագէտ հետախոյզը որ Եգիպտոսի պատկերագրերն ու մեհհեազրերը ուսումնասիրած է, կը զրէ որ երբայեցիները Եգիպտոսէն հեռանալէն երկու ամիս յետոյ տաճարի կառուցողները թողուցին իրենց զօրքը, նստեցան մաստուին ետեւը եւ բացազանչեցին. «Մենք անթի ենք եւ անթի ստամբսով չենք կրնար զօրծել. տակաւին տասնելութը օր կայ որ մենք աշխատավարձ ընդունինք»: Որմնադիրները մերժեցին զօրծի սկսիլ մինչեւ որ թաղաւորը համաձայնեցաւ լսել իրենց պանդատները եւ գոհացում տուաւ անոնց: Տասնելեցերորդ օրը անոնք դարձեալ



գործադուլ յայտարարեցին: Տասնեւիներորդ օրը ամբոխը գրոհ սուաւ փարաւոնի պալատին առջեւ: «Հաց կամ մահ», այս էր անօթի ամբոխին գոռացող աղաղակը: Փարաւոնը, անճրկած, բանալ սուաւ ամբարանոցները եւ ուտելիք բաժնեց:

Մասպերօ մի քանի խոշոր գործադուլներ յիշատակելէ վերջ կը փաստէ որ մեր թուագրութենէն երեք հազար տարի առաջ Եգիպտոսի մէջ կազմակերպուած բանուորութիւն կար: Ամենաուժեղ բանուորական կազմակերպութիւնը որմնադիրներու Միութիւնն էր: Այս օրերու Ազատ Որմնադիրներու (Ֆրի Մէյսըն) նախահայրերը Եգիպտոսէն ծնունդ առած են, թէեւ ոմանք կը պնդեն թէ Սողոմոնի տաճարին կառուցողներն են եղած անոնք: Յամենայն դէպս, իրողութիւն է որ այդ կազմակերպութիւնը ոչ միայն Եգիպտոսի, այլեւ Ասորեստանի, Բաբելոնի, Փոքր Ասիոյ եւ Պարսկաստանի մէջ ունեցեր է իր ճիւղերը: Անշուշտ հասկնալի է որ այդ շրջանին երբ հեռագիր, հեռախօս եւ տպագրութիւն չկար, գաղտփարները կը ճամբորդէին վաճառականներու կարաւաններով, արշաւանքներով եւ կամ գաղթականութեամբ: Այդպիսի հանգամանքներու տակ գործաւորական կազմակերպութիւնները թէեւ իրարմէ հեռու եւ անջատուած էին եւ չէին կարող իրարու հետ անմիջական յարաբերութեան մէջ մանկէլ, բայց անոնք նոյն գերեախրական պայմաններու նոյնաման օգակերով, նոյնատեսակ կանոններով նոյն վիճակը ունէին: Միայն մէկ բան ստոյգ է որ անոնց մէջ գասակարգային գիտակցութիւնը հասած չէր այն աստիճանին որ անոնք քաղաքական իշխանութեան տիրանալու ճգտումը յայտնաբերէին: Անոնց կռիւի միակ զէնքը գործադուլն էր, իսկ նպատակը՝ առօրեայ պահանջի բաւարարումը: Բայց այն ինչ որ մնայուն էր ու քարացած անոնց հողիին խորը անմեռ ատելութիւնն էր, մի տեսակ վրէժխնդրութիւն հանդէպ տիրող գասակարգին: Իսկ այդ ատելութիւնն ու վրէժխնդրութիւնը կը յայտնաբերուէին պատերազմի եւ կամ օտարներու արշաւանքներու ատեն: Գերիները կը մտածէին թէ նոր եկուորները աւելի ազնիւ կը լինին քան իրենց հին տէրերը: Ահա թէ ինչու հին դարերու կայսրութիւնները շուտով կը բարձրանային եւ շուտով կը կործանուէին: Իսկ անոնք որ կը գիմանային ժամանակի յարձակումներուն, անոնք ալ ենթակայ կ'ըլլային ներքին պարբերական խռովութեանց: Այսպէս էր Եգիպտոսը, որ մերթ բարձրացաւ, մերթ ինկաւ, որովհետեւ իր քաղաքական շէնքը հաստատուած էր գերեախրութեան վրայ:

Տեսնե՞ք թէ Եսայի մարգարէն ի՞նչ կ'ըսէ Եգիպտոսի համար:


«Ահա Տէրը թեթեւընթաց ամպի վրայ հեծեր է,  
Ու Եգիպտոս պիտի մտնէ.  
Եւ անոր երեսէն Եգիպտոսի կուռքերը պիտի շարժին,  
Ու Եգիպտոսի սիրտը իր ներսիդին պիտի հալի:  
Եւ Եգիպտացիները պիտի զրգռեմ եգիպտացիներուն վրայ,  
Ու ամէն մէկը իր եղբոր հետ եւ ամէն մէկը իր ընկերին հետ,  
Քաղաք քաղաքի հետ ու թաղաւորութիւն թաղաւորութեան հետ,  
Պատերազմ պիտի ընէ:  
Եւ դետերուն ջուրերը պիտի քաշուին,  
Ու պարսպաւոր քաղաքներուն դետերը պիտի պարսպուին ու չորնան,  
Եղէզն ու պրատուն պիտի թառամին:  
Իրաւ որ Տայանիսի իշխանները յիմարներ են.  
Փարաւոնի իմաստուն խորհրդականներուն խորհուրդը անասնական է.  
Տայանիսի իշխանները յիմարացան.  
Մեմփիսի իշխանները խաբուեցան.  
Ու Եգիպտոսը իր ցեղերուն գլխաւորները մոլորեցուցին:  
Ու Եգիպտոսի մէջ գործ պիտի չըլլայ,  
Որ գլուխ կամ պոչ եղողը  
Արմաւենիի ոտ կամ կնիւն հիւսէ»:

(Մարգարէութիւն Եսայեայ, գլ. ԺԹ. 1-16)

Այնպէս կը թուի թէ այս Եսայի մարգարէն հրէից Եգիպտոսէն ելբէն վերջ ապրած է եւ զրած իր մարգարէական տողերը, եթէ իրապէս ինք եղած է անոնց հեղինակը:  
Բայց այսօրուայ Եգիպտոսը հին դարու Եգիպտոսը չէ, իսկ վաղուայ Եգիպտոսը պիտի չնմանի այսօրուայ Եգիպտոսին:  
Սոցիալիստական Եգիպտոսը:



ԲԱԲԵԼՍՏԱՆ \_ ԱՍՈՐԵՍՏԱՆ



ԲԱԲԵԼՈՆ ԵՒ ՆԻՆՈՒԷ





# ԲԱՐԵԼԱՍՏԱՆ-ԱՍՈՐԵՍՏԱՆ

## Ե Դ Ե Մ Ի Պ Ա Ր Տ Է Զ Ը

Երբ կ'ըսենք սուրբ քաղաք, ըսել կ'ուզենք Երուսաղէմ: Երբ կ'ըսենք յաւիտեանական քաղաք, ըսել կ'ուզենք Հոովմ: Բայց Բարելոն սուրբ քաղաք էր 4 հազար տարի առաջ, այսինքն նախ քան Դաւիթի ծնունդը, որովհետեւ Ասիայ ճակատագիրը կ'որոշուէր ամբողջ 30 դարերու ընթացքին Բել-Մարտուքի կրօնաւորներու վճռով, Բարելոնի սկիւայ գմբէթ մատուռին մէջ, երբ Մովսէս իր ժողովուրդը տակաւին Եգիպտոսէն գուրս չէր հանած:

Քաղղէաստան բազմաթիւ քաղաքներու երկիր էր, երկիր մը բարդ ու ծաղկեալ քաղաքակրթութեան որ գոյութիւն ունէր յիսուն դարերէ ի վեր:

Էրիտու քաղաքը նախնական ամենահին նաւահանգիստն էր քաղղէական ոլորահող դաշտավայրին, որ իր արտակարգ արդաստարութիւնը կը պարտէր Նփրատ եւ Տիգրիս գետերուն: Հերոդոտոս, երբ Յունաստանի ժայռուա մասերէն ճամբորդեր եւ հասեր էր Միջագետք, զարմանքով արձանագրած է այդ տեղերու բերքատուութիւնը: Յանուած ցորենը, երեւակայեցէք, երկու հարիւր, երբեմն երեք հարիւր բերք կուտայ եղեր սերմնացանին: Փլինի, հոովմէական ժամանակներուն, կ'ըսէ որ տարին երկու անգամ հունձք կ'ըլլար եւ տակաւին ոչխարներու համար ճարակելու առատ խոտ կը մնար:

Երբ արարական անապատէն պետեփի ցեղերը իրենց լերկ, աւազուտ վայրերէն կարաւաններով կուգային այս հրաշալի, արդասարեր դաշտագետինները, վերագարձին արտակարգ հիացումով կը պատմէին իրենց քարեկամներուն որ Աստուած Եղեմի դըրախտը հիմներ էր արեւելքի մէջ:

Բարելոն թէ ծովային նաւահանգիստ էր եւ թէ անապատային նաւահանգիստ: Դուռ մըն էր ան ուրիշ մարդիկ աշխարհի ամէն կողմերէն կը մտնէին այդ բարերեր երկիրը: Միջագետքի երկու գետերու արդասարեր դաշտերէն մինչեւ Նեղոս գետի հովիտը, ամենակարճ ճամբան կ'անցնէր Բարելոնէն, ուղիղ արարական անապատէն մինչեւ Կարմիր Մով ու անկէ դէպի Եգիպտոս:

Անապատի նաւահանգիստները կը կազմուէին ճիշդ ծովային նաւահանգիստներու պէս: Ուր որ ջուրի հոսանք մը կը մտնէր



անապատին մէջ, հոն բարերեր դաշտապետնի առեւտրականները իրենց սպրանքները կը բերէին ուղտերու կարաւաններով, զրկելու աւազուտքէն անդին, ուր վաչկատուն ցեղերէն դաս ուրիշներ չէին կրնար անցնել:

Հայաստանի լեռներէն այդ երկու գետերը, Եփրատն ու Տիգրիսը, վար կը բերէին մեծ քանակութեամբ տիղմ, տեսակ մը աւելի կոշտ տիղմ քան Նեղոսի բերած տիղմը, որովհետեւ բարձրաբերձ լեռանց կուրծքէն անոնց յորձանքը աւելի արագ էր: Բայց երբ այդ պարարտանիւթը կը հասնէր տափարակ երկրամասը, ինքնին հարստութեան շտեմարան կը դառնար: Կոշտ տիղմի գիծը որոշ սահմանի մը վրայ կը բաժնուէր բարակ տիղմէն: Միջադեպը կոչուած ամբողջ երկրամասը կը բազկանար երկու բաժանումներէ, վերին եւ ստորին: Այդ բաժանումները անջատող գիծը կը խաչաձեւէ ու կ'անցնի Հիթէն Եփրատի վրայ, ու կ'երթայ մինչեւ Սամարան, Տիգրիսի վրայ: Այս գծէն վերեւի մասի երկիրը լերկ է, այլեքտ հարթավայր մը ոչ այնքան բարերեր, եւ նշանակելի աստիճանով ծովէն բարձր: Արեւմուտքէն եկող ճամբորդը երբ կը հասնի Հիթ եւ անկէ կը նայի դէպի հարաւ, աշխարհի ամէնէն գեղեցիկ տեսարանը կը պարզուի իր աչքերուն առջեւ տափարակ երկրամասին վերեւ, Սինարի դաշտապետինը, եղեմական պարտէզը:

Միջագետքի վարի մասը բոլորովին տափարակ է: Անիկա հագիւ թէ քիչ մը աւելի բարձր է քան Պարսից Մոցը: Հին Քաղդէաստանը կը գտնուէր Ստորին Միջագետքի մէջ, որ Ռոմեոսները քածին համաձայն աւելի մեծ չէր քան այսօրուայ Դանիմարքան: Միօրինակ հարթավայր մըն է ան, որ տարուան որոշ եղանակին դանազան, զրաւիչ գոյներու ընդարձակ թատերաբեմի մը կը վերածուի: Ճամբորդը, նոյնիսկ այսօր, կը տեսնէ անուշահոտ եւ գոյնզգոյն ծաղիկներով հիւսուած գորգ մը, որ փռուած է այդ հրաշալի հովանի մէջ որ կոչուած է եղեմական պարտէզ:

ՄԱՐՏՈՒՔԻ ԱՌՈՒՏՈՒՐԸ

Բայց այս գեղեցիկութիւնը ունի նաեւ իր սոսկատեսիլ կողմը: Եփրատի ու Տիգրիսի ողողումները աւելի անկանոն են եւ աւելի սաստիկ քան Նեղոսինը: Անոնք կը բարձրանան աներեւակայնի արագութեամբ եւ տեղատուութեան ատեն իրենց ետեւ կը թողուն ժանտախտ: Իսկ հովերը այդ երկրամասին մէջ նոյնպէս սոսկալի են:

Այդպիսի մի գոյալիճակ աշխարհի այդ մասին մէջ, սկիզբէն իսկ հարկադրեց որ մարդիկ իրենց գոյութիւնը պահպանելու

համար յարատեւ եւ ծանր աշխատանք թափեն, հեղեղներէն պաշտպանելու իրենց լնակարաններն ու ընտանիքները: Մէկ կողմէ այդ երկրամասի բարերեր հանդամանքը, միւս կողմէ կլիմայի պարբերական սպանալիքը նոստանցին ճարտարարուեստի, զարգացման անոր բնակչութեան որ ժամանակ առ ժամանակ կ'աւերնար դադարակնութեամբ ու յաղթանակներով:

Այն հողը որ այսօր այնքան գեղեցիկ ծաղկանց կոկոններ կը հասցնէ, անցած է սերունդէ սերունդ անթիւ մարդոց ու կանանց մարմիններու մէջէն, սպրեցուցեր է ժողովուրդ մը որ Բաբելոնի ուժով տիրած է աշխարհին: Ասորեստանի յաղթական թագաւորներու արձանադրած յաղթութեանց ցանկերն ու այն աւերակները որոնցմով ծածկուած է այդ երկիրը կը վկայեն որ անախըջանալի գիւղեր ու քաղաքներ գոյութիւն ունեցեր են հոն եւ անոնց բնակիչները, բնիկ թէ գերի, տարած են բռնադատեալ աշխատանք:

Արդարեւ, շատ կանուխէն բարդ ու խառնակ քաղաքակրթութիւն մը ծաղկած է այս բարերեր ու բերքառատ երկրամասին վրայ: Քաղդէաստան կ'արտադրէր միայն բանջարեղէն եւ կենդանիներու հարստութիւն: Մետաղ չկար հոն, նոյնիսկ քար չկար: Երանանիթերն էին աղիւս եւ արմաւի ծառ: Ճարտարապետները ուրիշ ատաղձ չունէին: Ատաղձները կը բերուէին հեռուէն, էլամի անտառներէն, որոնք կ'եղերէին հովաի արեւելեան կողմի լեռանց շարքին վրայ: Ոսկին, բրոնզը, երկաթը, արծաթը, որոնք կը ներածուէին Արաբիայէն ու Սինայէն, անդին պերճանքի նիւթեր էին որոնք յատուկ էին հարուստին ու իշխանին:

Այսպիսով Քաղդէաստանը իր սննդեղէնի եւ ընտանի կենդանիներու յաւելեալ ահագին արտադրութիւններով ստեղծեր էր հարկ եղած պարթանները բարձր աստիճանի առուստրի համար: Եւ հէնց այդ պատճառով Քաղդէաստանը դարձաւ վաճառականներու եւ վաճառական աստուածներու երկիրը:

Այստեղ սկսաւ առուստրը, ինչպէս սկսած էր Եգիպտոսի մէջ, եւ այդ առուստրը կամբջեց երկիրը ուրիշ երկիրներու հետ: Բայց Միջագետքի եւ Եգիպտոսի միջեւ կ'երկարէր անապատ մը ուր կ'սպրէին տեղափոխուող ցեղեր: Բաբելոնի վաճառականները պէտք էր պարզապէս հսկողութեան տակ առնէին պողոտաները իրենց սպրանաց սպահովութեան համար: Այո, կարելի էր հսկողութեան տակ առնել իշխանութեան տակ գտնուող երկիրներու ճամբաները, բայց անկարելի էր բնաւորաբար կենթարկել անապատի ճամբան, որ կը կապէր Բաբելոնը Եգիպտոսի հետ: Կարաւաններու հետ զորքեր զրկելը խոշոր ծախքերու դուռ կը բանար: Մէկ



միջոց կը մնար, այն էր դաշնակցիլ անապատի ցեղերուն հետ: Իսկ այդ դաշնակցութիւնն ալ տեւտկանութիւն չէր խոստանար, որովհետեւ այդ ցեղերը մնայուն բնաշխարհի մը կուպուած չէին: Անոնց հետ դաշնակցիլ կը նշանակէր դաշնակցիլ տեղափոխուող աւազներուն հետ:

Բայց ծովային ճամբու երկայնքին որ կը կապէր Եփրատի հովիտը Գամասկոսին եւ անկէ Տիրոսի ու Սիդոնի նաւահանգիստներով կը տանէր դէպի Եգիպտոսի Առուն, կար պաշտարանուած քաղաքներու շղթայ մը, որով կարաւանները ազատ կ'ըլլային շարժելու առանց վտանգի եւ մաքսային վճարումի, միայն թէ այդ պարագային տեղական թաղաւորներու ձեռքէն աննելու էր «աղատ առեւտուրի» շահու իրաւունքը:

Ասկէ սկսաւ բարելոնական իմպերիալիզմը որ այդ թագաւորները ուզեց իրեն հպատակեցնել, ապահովելու համար կարաւաններու ճամբան եղեմական դրախտին եւ նեղոսի հովտին միջեւ:

Աստուածային այս պարտէզին մէջ էր որ առաջին անգամ ցեղերու խոսնուրդը տեղի ունեցաւ մի քանի կրկնումներով: Միջագետքի մեծ հովիտը կ'իջնար վաչկատուն ցեղերէ բնակուած երկու անապատներու միջեւ: Մին արարական անապատն էր արեւմուտքէն, միւսը՝ կեդրոնական Ասիոյ սարահարթը հիւսիսային եւ արեւելեան կողմերէն: Սոյն վաչկատուն ցեղերը կ'ապրէին իրենց երամներու եւ հօտերու կունակէն, եւ անոնք որպէս պարագիտ կը սնանէին անոնց մսովն ու կաթովը: Անոնք կը տարբերէին շուներու լուերէն իրենց մեծութեամբ ու կազմուածքով եւ տեղէ տեղ կը փոխադրուէին ի ինդիր ջուրի եւ արօտատեղիի:

Այդ մեծ սարահարթերը մարդկային պահեստատներ էին, որոնցմէ երաշտի ու սովի մղումով դուրս եկած են ցեղային ալիքներ, ինչպէս հիքսոսներն ու երբայեցիները, որոնք քշուելով եկան Եգիպտոս: Այսպիսով, փոխն ի փոխ մարդկային ալիքները հիւսիսէն թէ հարաւէն ողողեցին այն վայրերը ուր քաղաքակրթութիւնը հաստատուեր ու ծաղկեր էր: Հիւսիսային արեւմուտքէն առաջին անգամ եկան թուրքերու, հոպտեացիներու, մոնկոլներու, թաթարներու, կոթացիներու, դերմաններու ալիքները: Յետոյ հարաւէն եկան սեմական ցեղերը, հիքսոսները, արարները, փիւնիկեցիները, կարկեղոնացիներն ու երբայեցիները: Պատմութիւնը մեծ մասով այս մարդկային ալիքներու մակընթացութեան ու տեղատուութեան ընթացքին փրփուրով է գրուած:

Միջագետքի մէջ քաղաքակրթութիւնը սկսած է սոսմերեաններու միջոցով, որոնք հիւսիսային անապատի շարակից լեզուն կը

խօսէին եւ մի տեսակ արեւակցական կապ ունէին թուրքերու, հոտեացոց, թաթարներու եւ ճարոնցիներու հետ: Սոյն սոսմերեան քաղաքակրթութեան մէջ եկան սեմական վաչկատուն ցեղերու ալիքները արեւմուտքի արարական մեծ անապատէն: Նիփոսուրը դարերով հիւսիսի սրբազան կեդրոնական քաղաքն էր, Սուամրիան՝ օրէնքի սրբատեղին, էն-Լիլ՝ լեռնաստուծոյն պաշտամունքի հայրենիքը: Այդ աստուածը կ'իշխէր վերելի երկինքներուն, եւ ոգիներու աշխարհին: Մարդկութեան առած գլխաւոր բնձաներն էին դիւթանքներն ու կախարդանքները որոնց պէտք էր հնազանդէին բարի եւ չար ոգիները:

Բայց Իան, էրիտուրի սեմական նաւահանգիստի աստուածը, դարգացած ու ճամբորդող աստուածութիւն էր: Ստեղծագործութեան պատմութիւնը կը խօսուէր անոր տաճարներուն մէջ, թէ ինչպէս անոր հօգին ջուրերուն վրայ կը շարժէր տանն մը, եւ թէ ինչպէս այդ հօգին ջուրերը ցամաքէն զատեց, լոյսը խաւարէն, եւ երկրի վրայ աճեցուց բուսականութիւնը, կենդանիները եւ ամէնէն վերջ ստեղծեց մարդը:

Իան հրահանգեց որ մարդիկ նուիրուին արուեստներու եւ գիտութեան: Որպէս լոյսի ու բարութեան աստուած, ան իր իմաստութիւնը գործածեց բժշկելու հիւանդը եւ յարութիւն տուաւ մեռեալին:

Բարելոնական մտածողութիւնը հնուց ի վեր խմորուած էր այս երկու աստուածներու պաշտամունքով, մէկը էն-Լիլ աստուածը, երկինքի եւ ոգիներու աստուածը որուն համար մարդիկ նախապաշարեալ ակնածանք ցոյց կուտային ոգիներուն եւ նուիրուածութիւն կախարդական ձեւերու եւ այսահարութեանց, միւսը Իա աստուածը, բարեկիրթ ջանադրութեան եւ գիտական ծանօթութեանց աղբիւրը եղող աստուածը, որուն մարդիկ պարտական էին իրենց կեանքը: Այս երկու աստուածներուն կապուած հաւատքն էր որ ցեղերու մէջէն տարբերական դժերը հետզհետէ անհետացուց եւ այդ ցեղերու խոսնուրդէն դուրս եկաւ բարելոնական կայսրութիւնը:

Բարելոն քաղաքը մեծցաւ սրբատեղիի հանդամանքով: Անոր իշխանը թէ քրմապետ էր, թէ ցեղային նահապետական աստուած: Երբ քաղաքը իր իշխանութեան սահմանը ընդարձակեց, քրմապետ իշխանը եղաւ թագաւոր: Իսկ երբ Բարելոն զօրաւոր կապերով միացաւ վաճառականական շահերու հետ եւ դարձաւ կեդրոնական միակ քաղաքը, այն ատեն թագաւոր քրմապետը եղաւ ակնածելի աստուած եւ որպէս այդպիսին անիկա պաշտուեցաւ նոյնիսկ իր կենդանութեան ատեն:



Վաճառականներուն կամ գերիներուն մաքին մէջ սուր դա-  
նադանութիւն մը չկար պետութեան, եկեղեցիին եւ մեծ պիղծէսին  
մէջ: Ամէն մէկ կարաւան որ դուրս կուզար քաղաքէն, իր հետ կը  
սանէր աստուածային օրհնութիւնը: Եթէ կարաւանը ապահով վե-  
րադառնար շահով, աստուծոյ տրուելու էր ստացուած շահուն մէկ  
մասը որպէս իր պաշտպանութեան փոխարինութիւն: Իսկ եթէ ձեռ-  
նարկը ձախող էր, այն ատեն անցեալի բարեխաղով ձեռնարկներէն  
կուտակուած նուէրներու պահեստէն տրուելու էր աստուծոյ կամ  
տաճարին մէջ անոր ներկայացուցիչներուն, բայց պահեստի կո-  
րուստը վճարելու էին աստուծոյ հաւատարիմ պաշտողները: Գան-  
ձարանը դատարկ մնալու չէր:

Ասոր համար էր որ քաղաք մը երբ վաճառականութեան  
ճամբուն մէջ գերակշռող դիրք կը ստանար, դա ապացոյց էր որ  
այդ քաղաքին աստուածը իր բացառիկ ուժով մասնաւոր պաշտ-  
պանողական զօրութիւն ունէր: Ուստի շրջակայ քաղաքներու վա-  
ճառականները տաճարներ կը շինէին անոր անուն, ինչպէս իր  
ան միշտ պաշտպանէ իրենց ձեռնարկներն ու պատերազմները:

Այսպիսով քաղաքական իմպերիալիզմը հիմնուեցաւ վաճա-  
ռականութեան վրայ աստուածութեանց հովանաւորութեամբ:

**ԱՍՏՈՒԱԾՆԵՐՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ**

Պէտք է ըսել թէ Բաբելոն միակ քաղաքը չէր որ ունէր իր  
զօրաւոր, պաշտպան աստուածը: Ամէն մի քաղաք ունէր իր սեփա-  
կան աստուածը, որուն տաճարը մի տեսակ վաճառականական  
գրասենեակ էր: Ինչպէս վաճառականները իրենց շահերուն հետա-  
պնդումով կը կռուէին իրարու դէմ, աստուածներն ալ իրենց  
կապուած վաճառականներուն շահերը պաշտպանելու համար կը  
կռուէին իրարու հետ: Վաճառականներու կռիւը այնքան հին է  
որքան աստուածներու կռիւը: Քրիստոսի թուականէն 40 դար ա-  
ռաջ վաճառականներու կամ աստուածներու կռիւը իր սաստիկու-  
թեան ծայր ստաիճանին հասաւ: Լուզալ-Չակկիլի, Կիդ-Ուլի  
բարձր կրօնապետը (Կիդ-Ուլի քաղաք մըն էր որ գրացի էր հռչա-  
կաւոր Լակաշ քաղաքին) առաջինը եղած է որ արձանագրուած է  
պատմութեան մէջ որպէս կայսր, որովհետեւ ան յարձակեցաւ Լա-  
կաշի վրայ, զրաւեց դայն ու իր մայրաքաղաքը ըրաւ Երեբովը:  
Այս նորելուկ կայսրը բոլոր քարէ թաղարներուն վրայ արձանա-  
գրել տուաւ իր յաղթութիւնները որ իր թագաւորութիւնը կը տա-  
րածուէր Պարսից Ծոցէն մինչեւ Միջերկրական Ծովը: Եւ արդէն ի-  
րօղութիւն է որ Քրիստոսի թուականէն 40 եւ աւելի դարեր առաջ

վաճառական իշխանները իրենց զինուորներով ու գերիներով կըր-  
ւեցան միակ հարցի մը շուրջ, այն էր թէ ո՞վ քննարկ պիտի ընէր  
Պարսից Ծոցի եւ Միջերկրականի առեւտրական ճանապարհը:

Բայց այս կանխագոյն կայսրերու հռչակը կորսուեցաւ բո-  
լորովին, երբ պատմութեան թատերաբեմին վրայ երեւցաւ Աքքա-  
տի Սարգոնը, որուն թուականն է 3800 Ն. Ք.: Սարգոնի անունը  
յետագային հաղարամեակներու ընթացքին տիրական անուն դար-  
ձաւ երկու գետերու ցամաքամասին վրայ: Ան էր որ Բաբելոնը  
մայրաքաղաք չինեց: Ան էր որ հիմնեց Անուի եւ Իսլի սքանչելի  
սրբաբանները: Ան էր որ Բաբելոնի տաճարներուն յատկացուց իր  
յաղթական արշաւանքներուն պտուղները, որոնցմով անոնք հա-  
րըստացան եւ դարձան տիրական արեւմուտքին եւ հիւսիսին:

Սարգոն առաջին համաշխարհային կայսրն էր իր ժամանա-  
կին, թէեւ այդ աշխարհը բազմաամս մեր այժմեան աշխարհին  
չատ փոքր էր: Բայց բաւական մեծ էր յաջորդող սերունդներուն  
վրայ ազդելու տեսակէտէն:

Սարգոն Իտտի-Բեւ աստուծոյ որդին էր: Աւանդովէպը կ'ը-  
սէ որ վրէժ-ինդիւր ու նախանձոտ աստուծոյ մը հետապնդումին  
համար Սարգոնի ծնունդը զաղանի պահուած էր, եւ նորածին երե-  
խան պրտու ծառի փայտով շինուած տապանակի մը մէջ յանձնուած  
էր Եփրատի հոսանքին: Մշակ մը պատահամբ գետէն կը հանէ  
տապանակը ու կ'ազատէ երեխան: Ի վերջոյ երբ երեխային ինք-  
նութիւնը կը ճշդուի, Բաբելոնի թագաւորական թագը կը դնեն  
անոր գլուխը:

Սարգոն իր երիտասարդ տարիքին կը սկսի իր յաղթական  
արշաւանքները: Կ'արշաւէ Սուրիա, Պաղեստին, եւ երեք տարուան  
մէջ զրաւելով շրջապատող երկիրները, զանոնք կը միացնէ իր  
կայսրութեան:

Սարգոն իր արձանը կանգնեցուց Միջերկրականի եզերքը  
որպէս նշան իր յաղթութեանց եւ դրաւած երկիրներուն աւարով  
կառոյց պալատներ:

Նարամ-Սին, իր որդին, հայրը գերազանցեց: Ան իր կայս-  
րութեան միացուց Սինայի թերակղզին որ ծանօթ էր Մականի եր-  
կիր անունով: Հռչակաւոր էր այդ երկիրը իր մետաղի հանքերով:  
Անոր այդ քայլը բաբելոնացիներուն տուաւ մեծ առեւելութիւն,  
որովհետեւ մետաղի պակասութեան հետեւանքով անոնք մեծ զին  
կը վճարէին իրենց պիտանի առարկաներ ներածող վաճառական-  
ներուն:

Կայսրութեան երկիրները իրարու կապուած էին թղթատա-



բական գործառնութիւններով: Որովհետեւ տակաւին թուղթը հընարուած չէր, թրծուած կղմինորներու վրայ կը նշանակուէին թագաւորի պատգամատարներու պատուէրները: Որպէս նամակագրոջմ կը գործածուէր կաւաչէն կնիք մը որուն վրայ զբաշմուած էին Սարգոնի եւ Նարամ-Սինի անունները: Դա արդէն բաւական էր որ ստորագաս պաշտօնեաները անմիջապէս կատարէին տրուած հըրամանը:

Սարգոն իր օրով հաստատեց նաեւ կայսերական գրադարան մը, ուր շարուած էին աղիւտի վրայ գրուած բազմաթիւ «գրքեր»: Իր աստղագէտները հաւաքեւ էին աստղերու ներշնչած գուշակութիւններն ու երկրաբանական նշանները, որոնք սկիզբը գրին բաբելոնական համայնագիտարանին:

Սարգոնէն հաղար սարի վերջ, Սիւտի, Թելլոյի բարձր կրօնապետը որ այդ հին քաղաքին մէջ իր կայսրութիւնը հաստատեց, հռչակաւոր եղաւ իր գործերով: Եղևինի փայտեր բերաւ Ամանուտի լեռներէն, փայլուն քարեր՝ Լիբանանէն, պղինձ՝ Հիւտիսային Աբարիայէն, ոսկի եւ թանկագին քարեր՝ Պաղեստինէն ու Եգիպտոսէն, խաբաքար՝ Մականէն եւ սուստ տախտակ՝ Պարսից Ծոցէն: Իր արձանները իր յաղթութեանց արձանադրութիւններով կանդնեցուց այն տեղերու վրայ որոնք ենթարկուած էին իր իշխանութեան:

ՀԱՄՈՒՐԱՊԻՒ ՕՐԻՆԱԳԻՐՔԸ

Արեւելքէն եկան օտարականներ: Բարի ծառերու եւ լեռներու երկրի, Էլամի ռազմիկներն էին անոնք, որոնք տապալեցին Իւրի հին հարստութիւնը եւ ամբողջ գաշտալայրի բնակչութիւնը դարձուցին հարկատու: Բայց այդ ատեն մեծ թագաւոր մը ասպարէզ իջաւ: Անիկա Ամրաֆէլն էր կամ Համուրային: Չայրացած Բաբելոնի եւ Բել-Մարտուքի տաճարի կործանումէն, Համուրայի իր ուժերով յարձակեցաւ Քոստուր-Լահամարի վրայ, որ Աստուածաշունչի մէջ յիշուած է Քետոր-Լամէր անունով, եւ իր թագաւորութեան 13-րդ տարին (2340 Ն. Ք.), մեծական ճակատամարտի մը մէջ Էլամի բանակներուն յաղթեց եւ զանոնք քշեց երկու գետերէն անդին, արեւելեան լեռներուն մէջ:

Համուրայի, օտարական արշաւողները երկրէն վճռուէին յետոյ, ձեռնարկեց հսկայ գործի մը որ պատմութեան մէջ մեծ գարաշրջան մը բացաւ: Անիկա կանոնադրեց եւ քարէ տախտակներու վրայ փորագրել տալով հրատարակեց Բաբելոնի օրէնքները եւ զանոնք դրաւ իր կայսրութեան ղլխաւոր քաղաքներուն մէջ: Այդ

պատուիրանքները կը բաղկանային 282 օրէնքներէ: Թագաւորը յայտարարեց որ ինք աստուծոյ հրամանով այդ օրէնքները գրեւ ու հրապարակեւ էր, որպէսզի իր հպատակները կարողանան հասկընալ իրենց իրաւունքներն ու պարտաւորութիւնները, եւ կտաւ վարուին անոնցմով: Այդ օրէնքները բարձրօրէն գարգացած դրութիւն մը կը պարզէին, ղլխաւորապէս շօշափելով պիզնէտային գործերու կանոնաւորութիւնը:

Սոյն օրէնքները եթէ բազմատենք Գիրք Ելից եւ Ղեւտացուց ղլուխներուն մէջ յիշատակուած օրէնքներուն հետ որոնք ղլրուած են 15 դար յետոյ, մենք կը գտնենք տարօրինակ նմանութեան եղբեր: Մէկ կողմն է բարձր քաղաքակրթութեան հասած կայսրութեան մը օրէնքները, միւս կողմը՝ միջին անցեալով յետամնաց ցեղի մը օրէնքները: Տեղ մը, Իսրայէլի ցեղը, որու գրականութեան եւ օրէնքներու մեծ մասը կը ցոլացնէ պատմական մեծ կայսրութեան մը, բաբելոնական կայսրութեան լոյսը: Եւ սակայն տարօրինակ կէտը այն է որ Իսրայէլ կ'ազրի այսօր, մինչդեռ երբեմնի հզօր Բաբելոնը ծածկուած կը մնայ գարերու կուտակած թանձր փոշիներուն տակ:

Եւ ի՞նչ էր ատոր պատճառը: Ատոր պատճառը այն էր որ Բաբելոնի կայսրութիւնը հիմնուած էր գերետիրութեան վրայ, յափշտակութեան ու աւարտութեան վրայ: Արհամարհուած գերիներն էին որ փութացուցին կայսրութեան անկումը, ու այդ ոչ թէ յեղափոխութեամբ, այլ տարերային ուժերու օգնութեամբ: Ծայրայեղօրէն իրարու հակառակ տարբերու վրայ հաստատուած դրութիւն մը անբնական էր որ կարողանար պահել իր յուրեմական գոյութիւնը: Դասակարգէրը կը յառաջացնէ փոտխա, եւ հասարակական դրութիւն մը փոտխտով չի կրնար յուրեմանալ:

Համուրայի, իր ժամանակի ամէնէն խելացի թագաւորը, տեսաւ իր կայսրութեան սպաննացող վտանգը եւ ուզեց իր օրէնքներով գասակարգային խրամատները վերցնել:

Քարաչէն սիւնի մը ծայրը քանդակուած է Համուրայի պատկերը, այն ձեւով որ ան իբր թէ աստուծմէ կ'ընդունի օրինաց ղլրքը: Եւ Համուրայի այսպէս գրած է վերջաբանը.

«Որպէսզի այրի կիներն ու որբերը պաշտպանուին, դորաւորը պէտք չէ ճնշէ ակարը: Որպէսզի մարդիկ անարգարութիւն չընեն, ես այս թանկագին բառերը կ'անձանադրեմ Բաբելոնի մէջ, այն քաղաքին մէջ ուր Անուի եւ Բելի ղլուխները վեհապանձ ղլրքով կը պահուին Ի-Սաղիլայի տաճարին մէջ, այն տաճարին որուն հիմքերը հաստատուն կը մնան ինչպէս երկինքն ու երկիրը: Որ-



պէսզի երկիրը արգարութիւնը խօսի, բոլոր վէճերը դադարին եւ բոլոր վնասուածներն ու վիրաւորեալները բժշկուին, եւ այս թանկարժէք բառերը կը զրեմ իմ յուշարձանն քարին վրայ, իմ պատկերիս առջեւ, եւ՝ արդարակորով թագաւորս:

Ես քաղաքներու թագաւորներուն մէջ ամէնէն դերակայ եւ իշխող թագաւորն եմ: Իմ բառերը լաւ հասկցուելու են որովհետեւ ինձմէ զատ ուրիշ իմաստուն չկայ: Սամասի, երկինքի ու երկրի մեծ դատաւոր արեւ Աստուծոյ հրամանով թող արդարապատուութիւնը իշխէ մեր երկրին մէջ: Իմ տէր աստուծոյ, Մարտաքի հրամանով իմ յուշարձանին թող չմօտենայ կործանումը: Ի-Մաղիւլայի տաճարը իմ շինած տաճարն է, իմ սիրած տաճարը: Այդ տաճարին մէջ թող յիշուի իմ անունս հիմա եւ յաւիտեանս: Այն ճշուած եւ իրաւագուրկ մարդը որ օրէնքի դատ մը ունի, թող զայ իմ պատկերիս առջեւ: Ես արգարակորով թագաւորն եմ. թող ան կարգայ իմ ձգած արձանադրութիւնը եւ հասկնայ իմ բառերուս իմաստը. նա պիտի համոզուի թէ ինչ է ճշմարիտը եւ իր սիրտը պիտի ուրախանայ եւ ինք պիտի բռնէ. «Համուրապի իշխան մըն է. գորովագուրթ հայր մըն է ան իր հպատակներուն համար»:

. . . . .

Համուրապիի օրով բարեւական կայսրութեան մէջ գոյութիւն ունէր օրինական դատարանական սխառէմ: Ամէն ոք կրնար իր դատը տանել մինչեւ իսկ դատաւորին որ բարեսիրտ միապետ էր բոլոր իր հպատակներուն համար, պատրաստ պաշտպանելու տկարը զօրաւորին դէմ, անիրաււածը՝ անիրաւին դէմ:

«Բարեւոյնի ողջոյնը» ասիկա կը բաւէր որ անհատ մը առանց վախի ճամբորդէր Բարեւոյնէն մինչեւ Պարսից Մոց, մինչեւ Միջերկրականի եզերքը կամ մինչեւ Եգիպտոս:

Երկիրը անուած էր կանոնաւորապէս ոստիկանական դրութեան տակ: Ոստիկաններ ամէն տեղ կը հսկէին, երկրին անդորրութիւնը պահպանելու համար: Կիները սարուկ չէին նկատուէր: Կինը որպէս մայր մեծարանքի առարկայ էր: Համուրապիի օրինադրքով Բարեւոյնը հիմնապէս կը տարբերէր Եգիպտոսէն: Եգիպտոս օրինադիրք չունէր:

Բարեւոյնի վաճառականները դարերով սորված էին իրենց պայմանադրութիւնները վաւերացնել տալ դատաւորներու որոշումով: Ամէն մէկ քաղաքի տաճար պահեստանոց էր վաճառականական արխաններու, կալուածագրերու, մուրհակներու: Պայմանագրութիւնները կը պատրաստուէին տաճարին օրինական դատարա-

նին մէջ դիւանադպիրի վաւերացումով, եւ կը հաստատուէին երբ երկու կողմերը կ'երդուէին «աստուծոյ եւ թագաւորին անունով»:

Բարեւոյնի օրէնքով տաճարը քաղաքի կեանքին կեդրոնն էր: Բոլոր հողերը կապուած էին աստուծոյ անունին: Հողատէրերը կանոնաւոր տասանորդ կը վճարէին տաճարին: Տաճարը հաւաքուած հիմնադրամէն առանց տոկոսի փոխատուութիւն կ'ընէր աղքատ փարմըրին, որպէսզի ան սերմ զնէր, իր պէտքերը հոգար: Հունձքէն յետոյ անեկա երբ իր արտադրածները ծախէր, կը վճարէր իր պարտքը անարտունջ:

Նոյնպէս, երբ աղքատ քաղաքացին թշնամիին ձեռքը զերի իյնար, անոր փրկագինը կը վճարէր տաճարը եւ ստով կ'ազատագրուէր զերին:

Քաղաքին թագաւորը կամ հարուստ վաճառականը նոյնպէս փոխառութիւն կ'ընէին տաճարէն, բայց անոնք պարտաւոր էին տոկոս վճարել: Տաճարը այսպիսով թէ արխաններու պահեստանոց էր, թէ դատարան էր, թէ գրադարան եւ նոյն ատեն ազգային գրամատուն:

Կշռադատուած էին Բարեւոյնի օրինադրքին պատիժները, նայած կատարուած ոճիրին: Զուակ մը երբ իր հօրը զարնէր, կամ մէկը երբ ուրիշի մը աւանդը զողնար, անոր ձեռքը պէտք է կրտուէր: Այն զայնակը որ իրեն վատահուած նորածին երեխան կը փոխէր ուրիշի մը հետ, անոր ստինքները կը հանուէին: Այն լեզուն որ կ'ուրանար իր ծնողքը, արմատէն կը պոկուէր ու դուրս կը հանուէր: Այն աչքը որ արգելուած դադոնի բան մը զտնել կ'ուզէր, կը փորուէր ու կը նետուէր մէկ կողմ: Եթէ վիրաբոյժ մը անյաջող գործողութեամբ իրեն յանձնուած հիւանդը կը դժբախտացնէր, անոր երկու ձեռքը կը կտրուէր: Եթէ ճարտարապետ մը տուն մը կառուցանէր, բայց այդ տունը փլչելով անոր մէջ մէկը մեռնէր, ճարտարապետը մահուան կը դատապարտուէր: Եթէ պահանջատէր մը իրեն պարտական անձին զուակը ապահովութեան համար պատանդ պահէր, անոր զուակը կը սղաննէին: Եթէ մէկը ուրիշի մը մահուան պատճառ ըլլար, առանց այլեւայլի մահուան կը դատապարտուէր:

Բայց բոլոր այս օրէնքները դատակարգերու գոյութիւնը չէին ժխտեր: Գոյութիւն ունէր արքունական դասակարգ, պաշտօնեաներու դասակարգ, հողատէրերու եւ գրամատէրերու դասակարգ, կրօնաւորներու դասակարգ, արհեստաւորներու դասակարգ, աղքատ զիւղացիներու դասակարգ, մշակներ եւ զերթներ: Գերիները պատերազմի կամ արշաւանքի ատեն բռնուած օտարականներ



էին որոնք կը ծառայէին արքունիքին, կառավարական պաշտօնեաներուն, հողատէրերուն ու դրամատէրերուն: Համուրայի օրէնքով դերի մը կ'աղաատարուէր երբ ան իր տիրոջ հաստարիմ ծառայութիւն կը մատուցանէր ամբողջ հինգ տարի:

Տիրոջ գասակարդի ամէնէն զօրաւոր յենարանը կրօնքն էր, կռապաշտութիւնը: Կրօնքն էր որ գասակարգային հակամարտութիւնները կը հանդարտեցնէր ու կը պահէր ընդհանուր ներդաշնակութիւն մը պետական ուժով:

Համուրայի օրինադրքին հօր ազդեցութեան տակ երկու գետերու երկրամասը զօրաւոր միութիւն մը եղաւ որ իր գոյութիւնը շարունակեց դարերով: Այդ օրէնքով սկսաւ Բաբելոնի մեծութիւնը, որ իր ծայրագոյն կէտին հասաւ Նաբուգոտոնոսորի օրով, մինչեւ Մոնկոլներու արշաւանքը:

ՄԱՐՏՈՒՔ ԱՄԵՆԱԿԱՐՈՂԸ

Բաբելոնի զարգացուցած կրօնական մտածողութիւնն ու կրօնական պատմութիւնը աւելի երկար ազդեցութիւն թողուցեր է յաջորդող դարերուն վրայ քան ինչ որ ըրած է քրիստոնէութիւնը քան դարերու ընթացքին: Բաբելոնի հիմնարկութեան թուականէն մինչեւ իր անկումը, եթէ հաշուենք, 3700 տարի կ'ընէ, իսկ իր անկման թուականէն մինչեւ մեր օրերը կրնանք հաշուել 2200 տարի: Այս կը նշանակէ թէ Բաբելոնի տարածած ազդեցութեան շրջանը 35 դարով աւելի է քան քրիստոնէութեան տարածած ազդեցութեան շրջանը: Ու եթէ նկատի ունենանք այն կէտը որ քրիստոնէական կրօնքի հնաւանդ ատաղձներուն մէջ խառնուած են բաբելոնական կրօնքի ատաղձները, այն ստեն կրնանք բսել թէ արձանագրուած պատմական ժամանակաշրջանին մեծագոյն մասին մէջ Բաբելոնը աշխարհի քաղաքական եւ կրօնական հորիզոնին վրայ տիրապետող դիրք ունեցեր է, եւ այդ անոր համար որ այդ ստենւած ծանօթ աշխարհին վաճառականական խողովակները կապուած էին տիրակա՞ն Բաբելոնին:

Բաբելոն բռնարդ կ'ընէր Եգիպտոսի պարտէզէն մինչեւ Նեղոս գետը երկարող ամենամօտ անապատային ճամբան: Իր աշտարակներու տեսողութեան դժէն կը սկսէր անապատը: Ընդարձակ տափաստանի ցեղերն էին միայն որ կրնային մօտենալ իրենց ուղտերով իր քարափներուն: Բաբելոն նոյնպէս կը հսկէր երկու գետերէն մէկուն վերջաւորութեան կէտէն սկսող պողոտային, որ թէեւ երկար էր բայց նոյն ստեն ապահով էր Հայաստանի ձորերուն մէ-

ջէն: Զրանցքներու շարքով Բաբելոնի քարափները սկսան ընդունիլ նաւեր ուղղակի համեմներու ծովեղբքէն:

Այսպիսով Բաբելոնը հարստացաւ:

Համաձայն իրենց կրօնական հաւատքին, հարստութեան այս անումը բաբելոնացիք կ'ընդունին թէ իրենք պարտական են Մարտուք աստուծոյն, անոր հոգատարութեանը: Որքան Բաբելոն մեծցաւ, նոյնքան ուժեղացաւ այն փաստը որ Մարտուքը միւս աստուածներէն զերակայ էր: Երբ Բաբելոնի նաւերը կ'երթեւեկէին ապահով Պարսից Վոցի ալիքներուն վրայ, ատիկա կը ցուցնէր որ Մարտուքը յաղթեր է ծովերու մէջ բնակող մեծ դեւին:

Բել-Մարտուքի սրբարանին մէջ ուրիշ քաղաքներու փոքր աստուածները բերուեցան եւ անոնց մասնաւոր բնակարան յատկացուցաւ մեծ տաճարին բոլորտիքը: Անոնք խորհրդականներ դարձան Բել-Մարտուքին: Ասանկով Բաբելոնը իրեն կապեց շրջապատող քաղաքներու բնակչութիւնը: Եւ ահա հիւսուեցաւ այն դիցարանութիւնը որ կը հաւաստիացնէր թէ միւս աստուածները աւելի ծեր էին քան Մարտուքը եւ անոնք խոստովանած էին թէ ամենամեծ զօրութիւնը Մարտուքի մէջ էր կեդրոնացեր, որովհետեւ ան էր որ յաղթեր էր Տիամաստին, Քասսին ու Մովու վիշապին: Այս բաներուն շուրջ մեծ դիւցազնեղբորութիւններ հիւսուած են որոնց մէջ արձանագրուած են Մարտուքի դիւցազնական կռիւները:

Մատերիալիստական վերլուծումով մենք կը տեսնենք թէ Բաբելոնի կրօնական-բնագանցական հաւատալիքը առանձին զծով չէ ընթացեր, այլ հետեւեր է երկրային իրադարձութեանց: Համուրայի մեծ թագաւորը երբ իր ուժեղ բազուկով ու խելքով իրեն հպատակեցուց շրջապատող քաղաքներու թագաւորները, անոնց աստուածներն ալ կամաց կամաց հպատակեցան մեծ աստուծոյն, Մարտուքին:

Արդեօք սխալ նմանողութիւն մը ըրած կ'ըլլա՞նք երբ ներկայ քաղաքակիրթ մէկ երկիրը նմանցնենք Բաբելոնի: Նախադահը կամ թագաւորը նստած է մայրաքաղաքին մէջ, նախարարները բոլորած են զինք: Անդին կայ պարլամենտը, ուր հաւաքուած են նահանգներու աստուածներուն, այսինքն տիրող գասակարգերու ներկայացուցիչները որոնց թիկունքին կեցեր են կրօնական յարանուանութեանց եկեղեցիները:

Տգե՞ղ է այս նմանութիւնը: Ուրեմն անցնինք:

Բայց բաբելոնական հրաշալիքները փոփոխուած ձեւերով կը տեսնենք քրիստոնէաներու Սբ. Գրքին մէջ: Մոնոպոլի գրքէն մինչեւ



Յովհաննու Յայտնութեան զիրքը բոլորն ալ Բարեւոյնի զիցալէպե-  
րու կնիքը ունին: Մարմոսներն ու մարդարէնները արձագանգը կու-  
տան Մարտուքի կոիւններուն: Եսայիայ Բ. ի մեծ գիւտը, այսինքն  
այն որ միայն մէկ Աստուած կայ, ան ալ Իսրայէլի Աստուածն է,  
հիմնուած է Բարեւոյնի կործանման վրայ: Նոր Կտակարանը զբող-  
ները ուրիշ Բարեւոյն մը տեսան Հոովմի մէջ:

Այս միանուագ յայտնութեանց ծնունդը կապուած է հին  
ժամանակներու հաւատալիքներու միացման, երբ մարդիկ չէին  
սորված զանազանել մարմնական իրերուն եւ ոգեկան բաներուն մի-  
ջեւ եղած սարբերութիւնը: Բարեւոյն իշխեց աշխարհին, որովհե-  
տեւ իր վաճառականական մեծութիւնը կապուած էր իր թագաւոր-  
ներու մեծութեան, իսկ թագաւորներու մեծութիւնը՝ Մարտուք  
աստուծոյ մեծութեան:

ՆԻՆՈՒԷԻ ՀԱՆՃԱՐԸ

Բարեւոյն երբ կը մեծնար, նոյն ատեն Ասորեստանի հիւսի-  
սային իշխանութիւնը սկսեք էր հաւաքել իր ուժերը: Ասորեստանի  
այդ մասին մայրաքաղաքն էր Նինուէն, Չակրոսի լեռներուն մօտ,  
Տիգրիսի վրայ: Այդ լեռնային մասին մէջ հողը աւելի կարծր էր  
ու անբերրի, եւ այդ պատճառով ասորեստանցիք այնքան առատ  
բերք չէին ունենար որքան բարեւոյնացիք: Բայց ասորեստանցիք  
զարգացուցին զինուորական անպութ իշխանութիւն մը որ շունչը  
հարաւի քաղաքաւարութիւնն ու նրբութիւնը:

Ասորեստանը ճամբաներու երկրի կեդրոնին աւելի մօտ էր  
եւ իր մայրաքաղաքը ռազմադիտական արժէք ունէր, բայց իրեն  
կը պակսէր սուրբ քաղաքին, Բարեւոյնի նուիրականութիւնը: Ասոր  
համար Ասորեստանի թագաւորները Բարեւոյն կ'երթային կրօնա-  
կան արարողութեամբ թագադրուելու համար:

1900 թուականին (Ն. Ք.) Ասորեստան անկախ միապետու-  
թիւն եղաւ: Գրեթէ 600 տարի, Քէսայթներու թագաւորները իշ-  
խեցին Բարեւոյնի: Բայց անոնք որպէս աստուած չէին նկատուեր:  
Աստուած ախտոսը միայն բարեւոյնացի թագաւորներուն յատուկ  
էր որոնք նոյնպէս բարձր կրօնապետներ էին: Առաջին անգամ  
(1780 Ն. Ք.) թագաւոր Կանդիսն էր որ գրաւեց Բարեւոյնը եւ իշ-  
խեց հոն, բայց ան աստուծոյ ախտոսը չստացաւ, որովհետեւ Բա-  
րեւոյնը Մարտուք աստուծոյ հեղինակութեամբ տակաւին կը մնար  
այդ ատենուան աշխարհին զերիշխող տէրը:

Բուրնա-Բարխաի մահէն յետոյ ասորեստանցիները մէկ  
կողմ գրին Բարեւոյնի հպատակութեան ձեւակերպութիւնը եւ Սաղ-

մածասար Ա. ինքզինը հռչակեց միահեծան կայսր: Սաղմանասարի  
որդին Բարեւոյնը ամբողջապէս գրաւեց, անոր թագաւորը մահուան  
դատապարտեց եւ ասով Ասորեստանը Բարեւոյնի տեղը անցաւ եւ  
եղաւ հին աշխարհի տիրուհին:

Անկէ յետոյ, զրեթէ տասը դար, Բարեւոյնի եւ Նինուէի մի-  
ջեւ թշնամութիւններն ու պատերազմները շարունակուեցաւ ի խըն-  
դիւր բացարձակ դերիշխանութեան:

Թիկլատ-Բալասար, Սաղմանասար, Իսար-Հատոն, հիւսիսի  
այս երեք մեծ միապետները, իրենց ռազմադիտական ուղեգծով  
հաստատեցին զինուորական հզօր կայսրութիւն մը հիւսիսի մէջ որ  
անհաշտ թշնամի էր հարաւի իշխանութեան:

Բարեւոյն ծովային իշխանութիւնն էր, իսկ Ասորեստան զուտ  
զինուորական միապետութիւնն էր: Ասորեստան պատմութեան մէջ  
կը ներմուծէր քաղաքական ուժի դիտական կեդրոնացման դադա-  
փարը: Իր գրաւած գաւառները կազմակերպուած էին բիւրոկրա-  
տիզմի բացարձակ հսկողութեան տակ: Իւրաքանչիւր գաւառ որոշ-  
եալ տարբ մը վճարելու էր կեդրոնական կառավարութեան. նոյն-  
պէս արամադրելու էր որոշ թիւով զինուորներ: Ասորեստան ասան-  
կով մնայուն բանակ մը կազմեց եւ զինուորական մարզանքով ու  
ամենախիտ կարգապահութեամբ այդ բանակը վերածեց անարար-  
տելի կռուող մեքենայի մը: Ասորեստան, ապաւինած իր բանակին,  
ամբողջապէս նուիրուեցաւ քաղաքակիրթ աշխարհը միակ կայս-  
րութեան մը մէջ ձուլելու նպատակին: Եթէ ան կարողանար իրա-  
կանացին այդ նպատակը, աշխարհի տուտուրնն ու հարստութիւ-  
նը մեքենականօրէն կ'իյնային Ասորեստանի ձեռքերուն մէջ:

Սոյն ծրագրով, Թիկլատ-Բալասար Հայաստանն ու մեզիա-  
ցիներու երկիրը վայրենարար ահաբեկչութեան մատնելէ վերջ,  
հիթիթներու իշխանութիւնը կործանելով կրցաւ տիրանալ վաճա-  
ռականական բոլոր ծանօթ ճամբաներուն եւ զանոնք կապելով Մի-  
ջերկրականի, տիրացաւ նաեւ փրինիկեան նաւահանգիստներուն:  
Նոյնպէս, անիկա բացարձակ տէրը դարձաւ Բարեւոյնի: 729 թուա-  
կանին (Ն. Ք.), ան արդէն հասած ըլլալով իր փառքի ծայրագոյն  
սանդխամատին, Մարտուք աստուծոյն բարձրագոյն կրօնապետի  
պատմուճանը առաւ իր ուսերուն վրայ:

Այս թագաւորն էր որ Յուդայի երկրին մօտեցալով Իսրայէ-  
լի համար ստեղծեց մի ճգնաժամ որուն հետեւանքը Եհովայի ներ-  
շնչութեամբ զուշակեցին հրեայ մարդարէնները: Սենեքրիմի յառա-  
ջացումը Երուսաղէմի պարիսպներուն մօտ, անոր արհամարհանքը  
նետուած Եհովայի երեսին, ապա Երուսաղէմի կործանումը, ման-



բամանորէն զբուսած են Սր. Գրոց մէջ: Եւ տակաւին լոյս մը տարբեր զոյնով կրնանք տեսնել որ նետուած է այդ իրադարձութեանց վրայ, երբ նկատի առնենք սուրբ քաղաք Բարեւոյնի ազդեցութիւնը Երուսաղէմ սուրբ քաղաքի զէպքերուն վրայ:

Սենեքերիմ Ասորեստանի Սարգոնի որդին էր որ գահ բարձրացաւ երբ իր աէրը, Սաղմանասար Գ., յանկարծ մեռաւ Սամարիայի պաշարման տակ: Սաղմանասար Գ. Պաղեստինի տիրապետութեան իրաւունքը ապահոված էր որպէս Բարեւոյնի Մարտուք աստուծոյ ներկայացուցիչը: Բայց ամբարտաւան Սենեքերիմը իր բանակին վտահայտաւ աւելի քան թէ Բարեւոյնի աստուծոյն: Ան սկսաւ հալածել Մարտուքի կրօնականները, որուն հետեւանքը եղաւ բարեւոյնացիներու ապստամբութիւնը: Սենեքերիմ զայրացած այդ հոտած նախապաշարուէն, քաղեց Բարեւոյնի վրայ, գետնին հաւասարեցուց անոր պարիսպները, կործանեց անոր տաճարները եւ փոշիները նետել տուաւ գետին մէջ:

Անոր այս ամբարիշտ արարքը սոսկումով շղթայեց երկու գետերու ժողովուրդը: Սուրբ քաղաքը բոլորովին կործանեցաւ: Սենեքերիմ ժողովուրդին համար սորսափելի հրէշ մըն էր որ աստուածները անարգելով տիրացեր էր թագաւորական գահին: Սենեքերիմ, հաւասարապէս արհամարհելով բոլոր աստուածները, քաղեց Երուսաղէմի վրայ, ուր Եղեկիա թագաւորը տաճարին մէջ Տապանակ Ուխտին առջեւ զբաժ էր Եհովայի ուղղած նամակը:

Քաղզաստան ապստամբեցաւ Մարտուք աստուծոյն ուղղուած անարգանքին համար, իսրայէլացիք վրէժով լեցուեցան Եհովայի պաշտպանութեան համար, եւ երբ Սենեքերիմ սպաննուեցաւ իր զաւակներուն ձեռքով, բարեւոյնացիները այդ գործին մէջ տեսան Մարտուքի բարկութիւնը եւ Իսրայէլացիները համոզուեցան թէ Եհովան էր որ լուծեւ էր իր վրէժը:

Կրօնական հաւատքի լոյսն էր ան որ տարածուած էր երկու երկիրներու ժողովուրդներուն մէջ:

Սենեքերիմի յաջորդը, Իսաբ-Հատան, որ աւելի խոհեմ էր, աւելի քաղաքագէտ, անապարեց վերակառուցանել Բարեւոյնի տաճարները եւ իր բնակութիւնը հաստատեց հոն: Եւ ահա զարձակ Բարեւոյնը եղաւ միացեալ կայսրութեան մայրաքաղաքը:

Իսաբ-Հատան մեծ ծրագիրներ որոճացող միտպետ մըն էր որ կրցաւ իր ծրագրածը իրագործել: Անիկա արշաւեց Եգիպտոս, իրեն հպատակեցուց հիւսիսային Արարիոյ անհանդարտ ցեղերը, զբաւեց Սինայի թերակղզին, Մականի երկիրը, բայց Պաղեստինը թողուց սոսկ հպատակութեան մէջ: Իրեն յաջորդը, Ասուրբանիբալ,

նախ կորսնցուց Եգիպտոսը, բայց յետոյ Պաղեստինի հարկատուութեան օգնութեամբ կործանեց Եգիպտոսի Տիրհաքա փարաւոնին գահը, զբաւեց Թիպէն, ապա Տիրոսը, եւ մեծ գետին բոլոր երկիրները վերածեց վասալ պետութեանց:

### ԱՇՈՒՐԻ ԱՆԿՈՒՄԸ

Բայց Ասորեստանի կայսրութիւնը այնքան ընդարձակուած էր որ այդ դարաշրջանին մարդկային ձեռքը անկարող էր այդպիսի հսկայ կայսրութեան մը նուաճած երկիրները միացեալ հպատակութեան տակ պահել: Եւ ահա իրարու ետեւ ապստամբեցան Եգիպտոս, Արարիա, Պաղեստին, Էլամ, Բարեւոյն եւ Փոքր Ասիա: Բայց Ասուրբանիբալ այդ բոլոր ապստամբութիւնները դուպեց աներեւակայելի, վայրենի անգթութեամբ: Բռնուած գերիներուն աչքերը հանել տուաւ եւ այրեց անոնց մարմինները: Սարսափը տարածուեւր էր ամէն կողմ:

Բայց առաջին անգամ Եգիպտոս վերստացաւ իր ուժը եւ փարաւոն Սամտիկ յաջողեցաւ նահանջի մասնել թշնամին, զայն հալածելով մինչեւ ծով: Յետոյ հիւսիսի անապատներէն դուրս եկան սկիւթացիները որոնք աւելցին թէ Ասորեստանը եւ թէ Եգիպտոսը, մինչեւ որ փարաւոնը զանոնք կաշտոնց ու հետացուց երկրին սահմաններէն:

Ասորեստան սկսեւ էր տկարանալ: Գիւղացիութիւնը, որ զինուորապետուած էր բանակին, իրեն ետեւ թողած էր անձալի հողեր: Երկրին բնակչութիւնը կարելի չէր կերակրել աւարառութեամբ: Ասորեստանի կայսրերը ոչ միայն անտեսանելի աստուածները կ'արհամարհէին, այլեւ կ'արհամարհէին իրենց առջեւ ապրող աեսանելի աստուածութիւնը, աշխատաւոր ժողովուրդը: Եւ այդ ժողովուրդը, հպատակ երկիրներու աւելի շատ ճնշուած ժողովուրդներուն հետ, անհամբեր առեւութեամբ կը սպասէր որ Ասորեստան կործանուէր ու անոր անունը վերցուէր աշխարհէն:

Գրեթէ երկու դար նինուէ Արեւմտեան Ասիոյ տիրուհի զիրքը բռնեց: Բոլոր սեմական ազգերու նորաձեւութիւնները, արւեստները եւ որոշ շափով կրօնքը մի տեսակ միաձեւութեան զծին վրայ զբաւ: Իր զինուորական ուժով իրեն կապեց այդ ատենուան աշխարհին առուտուրը: Մեծ պողոտաները, Եգիպտոսէն, Պարսկաստանէն, Հնդկաստանէն, Եգէական Մովէն, բոլորն ալ կապուած էին իրեն, մինչեւ որ կայսերական Հոսովի նման նինուէն եղաւ միջազգային քաղաք, ուր հաւաքուած էին զանազան ազգերու մեծ ու պղտիկ աստուածները:



Ասուրբանիբայի օրով զարգացաւ ազգերու միջեւ երթեւեկը, եւ անոր հետ՝ հետախուզութիւնը: Նինուէ քաղաքը, շնորհիւ իր առասպելական խոշոր զբաղարաններուն, աշխարհի իմաստութեան կեդրոնը կը համարուէր: Իր մեծութեամբ, իր փառքով, իր աշատրակներով, իր լայն ու գեղեցիկ փողոցներով, իր պալատներով ու փառաւոր տաճարներով, Նինուէն աշխարհի զիցուհին էր դարձեր, անմահ զիցուհին:

Բայց այն ժողովուրդները որոնք իրենց արիւնով ու ոսկորներով հիմներ էին այդ մեծ քաղաքը եւ տակաւին կը տանջուէին անոր կրօնականներուն տակ, խոր ատելութեամբ լեցուած կրեաղէին անոր անկումը:

Բայց Աշուրի առիւծը թէեւ ծերացեր էր, սակայն դեռ սոսկալի էր: Քայքայութեամբ, մեղիացիներու թաղաւորը եւ Բաբելոնի Նարոպոզասարը հիւսիսէն եւ հարաւէն անհամբեր կը սպասէին որ յարձակէին ծեր առիւծին վրայ, երբ ներկայանար յարմար առիթը: Եւ այդ առիթը չուշացաւ, երբ Եգիպտոսի Նեփօ փարաւոնը 608 թուականին (Ն. Ք.) պարզեց ապստամբութեան զրօշակը: Երկրին թշնամիները միացան եգիպտացիներուն: Նինուէն կործանեցաւ եւ անոր երկիրները բաժնուեցան Բաբելոնի եւ Միդիայի միջեւ:

Նարուզոտոնոսոր, վաճառական իշխաններու ամենամեծը, բարձրացաւ Բաբելոնի դահուսն վրայ որպէս ժառանգորդը հին փառքի շրջանին: Անիկա, ըլլալով ճամբաներու եւ ջրանցքներու կառուցողը, ուղեց աշխարհի առևտուրը զարգացնել արեւելքէն Ձիւնաստանի եւ Հնդկաստանի հետ, արեւմուտքէն՝ Սուրիայի եւ Եգիպտոսի հետ, եւ որոշ չափով յաջողեցաւ: Իր օրով, Բաբելոն աշխարհի կեդրոնական շուկան դարձաւ ուր աշխարհի բոլոր անկիւններէն սկսաւ հոսիլ հարստութիւն եւ ճոխութիւն: Իր սկսած ձեռնարկութեանց շարունակութիւնն ու ամբողջացումը ապահովելու համար Նարուզոտոնոսոր արքան իր նուաճած երկիրներէն բազմաթիւ գերիներ բերաւ եւ դանոնք լծեց աշխատանքի ճամբաներու եւ ջրանցքներու վրայ: Այդ գերիներուն մէջ կային հրեաներ որոնք իրենց սուրբ քաղաք Երուսաղէմէն եւ Յուդայի սարերէն հեռացած, եկեր էին գերիի պէս դործել այն երկրին մէջ ուր իրենց Եհովամի էր բնակեր:

Նարոնիտոս, Նարուզոտոնոսորի յաջորդը, ուղեց վերահաստատել իր քաղաքին գերիշխող դիրքը, Բաբելոնի ժողովուրդին ամբողջ կրօնական պաշտամունքը կեդրոնացնելով Մարտուքի տաճարին մէջ: Ան յայտարարեց որ Մարտուքը միակ աստուածն էր որ պիտի պաշտուէր. միւս աստուածները ոչինչ էին: Նոյնը յայտա-

ւարած էր Ամինատայ փարաւոնը Ասու աստուծոյն համար: Նարոնիտոսի այս քայլը պատճառ եղաւ որ տեղական քաղաքներու կրօնաւորները լարուին իրեն դէմ, ինչպէս Եգիպտոսի քուրմերը լարուեցան Ամինատայի դէմ:

Եւ Նարոնիտոս ձախողեցաւ, ինչպէս ձախողեցաւ Եգիպտոսի փարաւոնը, Ամինատայ:

Իր որդին, Բերսազար, Սիփերայի բանակատելիին հրամանատարն էր: Մեղիացի Կիւրոսը անոր դէմ շարժեց իր բանակը որուն օգնեցին իրենց աստուածներուն կորուստը ողբացող կրօնաւորները, իրենց մոլեռանդ ու կոյր հաւատաւորներով: Կիւրոսի զօրքերը Միդիայան զբաւելէ վերջ մասն Բաբելոնի սուրբ քաղաքը, որուն թաղաւորութիւնը վերջ գտաւ իր փառքի բարձրութեան վրայ:

Բաբելոն քաղաքի ընդարձակութեան մասին հին զրոյնները իրարու հետ կը մրցին իրենց չափադանցեալ նկարագրութիւններով: Քթեոսի համաձայն, Բաբելոնի պարիսպներուն մէջ քաղաքը զբաւած էր 200 մղոն տարածութիւն: Հերոդոտոս կ'ըսէ որ Բաբելոնի պարիսպը 335 ոտք բարձր էր եւ 85 ոտք լայն: Նոյնիակ Քսենոֆոնի ժամանակ, երբ Նինուէն աւերակ էր (Նինուէն աւելի փոքր էր քան Բաբելոնը) անոր պարիսպները այնքան լայն էին որ չորս ձիերով լծուած կառք մը կրնար դառնալ անոր վրայէն: Բաբելոնի արտաքին պարիսպը 100 գուռ ունէր, բոլորն ալ շինուած բրոնզէ, բրոնզէ բարաւորներով ու նիզերով:

Բաբելոն ունէր երկու պարիսպ: Դուրսի պարիսպ, որ կը կոչուէր Իմիուր-Բեւ, եւ ներսի պարիսպ, որ կը կոչուէր Նիմիթի-Բեւ: Արտաքին պարիսպէն ներս մտնողը պիտի անցնէր ուրիշ դռնէ մը մտնելու համար քաղաքին մէջ: Այս երկու պարիսպները Բաբելոնի աստուծոյ խորհրդանշաններն էին: Այդ աստուածն էր որ կը պաշտպանէր Բաբելոնը:

Ընթերցողը կրնայ երեւակայել թէ այդ վիթխարի պարիսպները շինելու համար անշուշտ հարիւր հազարաւոր ցերիներ աշխատեցին եւ ինչ շարչարանքներով ու զրկանքներով, որպէսզի կանգուն պահեն ամենակարող Մարտուքի ներկայացուցիչ թաղաւորի գահը:

Բայց այդ գահը կանգուն չմնաց:

ԻՍՐԱԵԼԻ ՄԱՐԳԱՐԷՆԵՐԸ  
ՆԻՆՈՒԷԻ ԵՒ ԲԱԲԵԼՈՆԻ ՄԱՍԻՆ

Մեր քրիստոնեայ նախահայրերը, հնարաղէա մարդիկ, երբայեցիներու ազգային անանդութիւնները հաւաքեւ եւ դանոնք յար-



մարցնելով քրիստոնէական կրօնքին, կազմեր են Հին Կտակարանը եւ անով նուիրակամացուցեր են Նոր Կտակարանի առասպելներն ու ուսուցման քննքը, որոնք ծառայեր են նախ կրօնական գասակարգին եւ ապա տիրող գասակարգի տիրապետական շէնքի ամբապնդումին:

Հին Կտակարանի վերջին մասին մէջ մենք կը գտնենք հրեայ մարդարէներու աստուածային շունչով գրուած գրքերը:

Թէ ինչո՞ւ այդ գրքերը գետեղուած են հոն: Այս հարցման պատասխանը շատ պարզ է:

Մարդարէներէն մէկը գուշակեր է Երուսաղէմի կործանումը, ուրիշ մը գուշակեր է Բաբելոնի կործանումը, երրորդ մը Նինւէի կործանումը: Եւ այդ մարդարէներուն գուշակութիւնը կատարուած է: Այդ պատմական իրողութեանց մասին ոչ ոք կրնայ տարակուսանք յայտնել: Բայց քրիստոնեայ նախահայրերը մեզի չեն ըսած թէ այդ մարդարէները ո՞ր ծնած են, ե՞րբ ապրած են եւ ո՞ր են անոնց ձեռագիրները, միայն թէ ընդօրինակեր են անոնց գրածները, եւ ի յաւելումն բոլորին, յայտարարած են որ ուրիշ մարդարէ մըն ալ, Ուսիա մարդարէն, գուշակեր էր Քրիստոսի մը գալուստը: Ուրե՞մն: Ուրե՞մն Քրիստոս ալ իրական անհատականութիւն մըն է, աստուածային կարգադրութեան մէկ յայտնագործումը:

Սոյն պողպատէ փաստին դէմ ըսելիք չմնար:

Բայց մենք, քանի որ խօսեցանք Բաբելոնի եւ Նինուէի մասին, այժմ տեսնենք թէ ի՞նչ գրած են մեր մարդարէները այդ երկու մեծ քաղաքներուն շուրջ: Մեզ հետաքրքրող կէտը անոնց մարդարէութիւնը չէ, այլ այն որ տիրող գասակարգը ի՞նչպէս վերաբերուած է հպատակ ժողովուրդին հետ: Ժամանակագրական եւ ուրիշ հակասութիւնները երկրորդական տեղ կը գրաւեն:

Նախ ատենք Նոայի մարդարէին ողբերգութիւնը:

«Ինչպէս դադարեցաւ բռնութիւն ընողը, ինչպէս դադարեցաւ հարկապահանջ փողաբը:

Տէրը ամբարիշտներուն գաւազանը

Ու իշխողներուն ցուպը կոտրեց:

Սրտմտութեամբ եւ անդադար հարուածով ազգերը զարնողը

Եւ բարկութեամբ ժողովուրդներուն վրայ իշխողը

Հիմա կը հալածուի ու արգիլող մը չկայ:

Բոլոր երկիրը հանգստացաւ ու հանդարտեցաւ,

Եւ ցնծութեան ձայներ կը հանեն:

Նաեւ մայրերը ու Լիբանանի եղբիւնները

Քեզի համար կ'ուրախանան ու կ'ըսեն,

Քանի որ դուն պառկեր ես,  
Մեր վրայ փայտ կոտրող չելաւ:  
Դժոխքը վարէն քեզի համար դրողեցաւ,  
Որպէսզի քու գալուստը դիմաւորէ:  
Քեզի համար արքնցող մեռելները,  
Երկրի բոլոր իշխանները,  
Բոլոր ազգերուն քաղաւորները  
Իրենց աքռոներէն վերցուց:

Անոնք ամէնը պատասխան կուտան ու քեզի կ'ըսեն,  
Միքէ դո՞ւն ալ մեզի պէս տկարացար  
Ու մեզի նմանեցար:

Քու փառք ու տախտներուդ ձայնը գերեզմանը իջան,  
Քու տակը գեոուններ տարածուեցան,  
Ու որդերը քեզ կը ծածկեն:

Ո՛վ առտուանց ծագող Արուսեակ,

Ի՞նչպէս երկիւնէն ինկար

Ու մինչեւ գետին կործանեցար,

Դուն որ ազգերը նկուն կ'ընէիր:

Դուն սրտիդ մէջ ըսած էիր,

Երկիւնք ելլեմ՝

Ու իմ աքռոս Աստուծոյ աստղերէն վեր բարձրացնեմ,  
Եւ ժողովի լեռը, հիւսիսի ֆովերը բնակիմ:

Ամպերու բարձրութեան վրայ ելլեմ  
Բարձրելոյն նմանիմ:

Բայց ահա դժոխքը կ'իջնես, գուրին խորունկ տեղերը:

Քեզ տեսնողները քու վրայ պիտի զարմանան,

Ու քեզի նայելով պիտի ըսեն,

Աս այն մարդն է որ երկիրը կը սարսէր,

Թագաւորութիւնները կը դողացնէր,

Աշխարհս անպատ կը դարձնէր,

Եւ անոր փղափները աւերակ կ'ընէր,

Ու իր գերիները տուներնին չէր զրկէր:

Դուն գարշելի ընծիւղի մը պէս,

Գուրի փարերուն մէջ իջնող

Սրով խոցուած մեռելներուն հանդերձին պէս,

Ոտքի տակ կոխուած դիակի պէս

Քու գերեզմանէդ դուրս նետուեցար:

Դուն քաղումով պատուաւոր քաղաւորներուն չես միանար,

Քանզի քու երկիրը աւերեցիր



Ու ժողովուրդդ սպաննեցիր,  
 Չարերուն սերունդը յախտեան պիտի չյիշուի:  
 Սպանութիւն պատրաստեցէ՛ք անոնց տղոցը,  
 Իրենց հայրերուն անօրէնութեանը համար,  
 Որպէսզի չելեն ու երկիրը չժառանգեն,  
 Եւ աշխարհի երեսը բշտամիներով չլեցնեն:  
 Քանզի գօրաց Տէրը կ'ըսէ որ  
 Անոնց վրայ պիտի ելլեմ,  
 Եւ Բաբելոնի անունը ու մնացորդը  
 Եւ գաւազը ու սերունդը պիտի կտրեմ, կ'ըսէ Տէրը,  
 Եւ զանիկա ոգնիներուն ժառանգութիւն  
 Ու ջուրի լնակներ պիտի ընեմ.  
 Եւ կորստեան աւելով պիտի աւլեմ զանիկա,  
 Կ'ըսէ գօրաց Տէրը:  
 Զօրաց Տէրը երդում ըրաւ ու ըսաւ,  
 Ինչպէս խորհեցայ, անշուշտ այնպէս պիտի ըլլայ,  
 Ու ինչ որ որոշեցի, այն պիտի կատարուի  
 Որ Աստրեստանցին իմ երկրիս մէջ պիտի կտորեմ,  
 Ու զանիկա լեռներուս վրայ պիտի կոխկոտեմ.  
 Եւ անոնց լուծը անոնց վրայէն պիտի վերնայ,  
 Ու անոնց բեռը անոնց ուսէն պիտի վերնայ:  
 Ով փոշտացուց երկիր,  
 Քեզ զարնողին զաւագանը կտորելուն համար մի ուրախանար  
 Քանզի օձին արմատէն քար պիտի ելլէ,  
 Ու անոր պտուղը կիզող քունաւորը օձ պիտի ըլլայ:  
 Եւ աղփաներուն անդրանիկները պիտի կերակրուին,  
 Ու չփառները ապահովութեամբ պիտի պառկին,  
 Եւ քու արմատդ սովով պիտի կորսնցնեմ,  
 Ու անիկա քու մնացորդդ պիտի մեռցնէ»:

Աւելի խիստ են նսայի մարգարէին հետեւեալ տողերը (Մարգարէութիւն Նսայիայ, գլուխ ԺԳ., համար 14-22):

«Եւ Բաբելոնի բնակիչները հալածուած այծեամի պէս  
 պիտի ըլլան,  
 Ու մոլորուած ոչխարներու պէս, որ զանոնք ժողովուրդ  
 մը չկայ.  
 Անոնց ամէն մէկը իր ժողովուրդին պիտի դառնայ,  
 Եւ ամէն մարդ իր երկիրը պիտի փախչի:  
 Ով որ գտնուի, պիտի խոցուի,  
 Ով որ բռնուի, սքով պիտի իյնայ:

Եւ անոնց տղաքը աչեքնուն առջեւ գետինը պիտի զարնուին,  
 Անոնց տուները պիտի կողոպտուին,  
 Եւ անոնց կիները պիտի պղծուին:  
 Ահա անոնց վրայ մարաց ազգը պիտի յարուցանեմ,  
 Որոնք արծաքը բանի տեղ չեն դներ,  
 Ու ոսկիէն չեն ախորժիր:  
 Անոնց աղեղները երիտասարդները պիտի խոցեն,  
 Ու անոնք որովայնի պտուղին գրութիւն պիտի չընեն,  
 Ու անոնց աչքը պիտի չխնայէ տղաքներուն:  
 Ու քաղաւորութիւններուն փառքը  
 Եւ քաղաքացուց փառաւորութեանը պարծանքը եղող  
 Բաբելոնը  
 Տակն ու վրայ պիտի ըլլայ,  
 Ինչպէս Աստուած Սողոմը ու Գոմորը կործանեց:  
 Հոն յախտեան բնակչութիւն պիտի չըլլայ,  
 Եւ ազգէ ազգ մարդ պիտի չբնակի,  
 Ու հոն արաքացիք վրան պիտի չկանգնեն,  
 Եւ հովիւները իրենց հօտը հոն պիտի չպառկեցնեն.  
 Հապա հոն վայրենի անասուններ պիտի պառկին,  
 Ու անոնց տուները ոռնացող անասուններով պիտի լեցուին  
 Եւ հոն ջայլամներ պիտի բնակին,  
 Ու հոն այծամարդեր պիտի կախուեն:  
 Եւ անոր պալատներուն մէջ բորենիներ  
 Ու գրօսանաց տուններուն մէջ նագարներ պիտի  
 կանչուրուեն»:

Այժմ բանանք Մարգարէութիւն Նաւուսայ գիրքը, եւ տեսնենք թէ ան ի՞նչ կը յայտնէ Նիւուէի մասին:

«Նիւուէի պատգամը. ելկեսացի Նաւուսին տեսիլքի գիրքը:  
 Եհովա նախանձոտ ու վրէժխնդիր Աստուածն է.  
 Եհովան վրէժ առնող ու բարկութեան տէր է.  
 Եհովան իր հակառակորդներէն վրէժ կ'առնէ.  
 Եհովան յանցաւորը անպարտ չքողար,  
 Եհովայի նամբան մրրիկի ու փոքորիկի մէջ է,  
 Ու ամպերը անոր ոտքերուն փոշին են:  
 Լեռները անկէ կը դողան ու բլուրները կը հալին:  
 Անոր սրտմտութիւնը կրակի պէս կը թափի,  
 Ու ապառաժները անկէ կը խորտակուին:

Ով Նիւուէ, ահա ես քեզի դէմ եմ, կ'ըսէ գօրաց Տէրը,



Ես քու կառքերը պիտի այրեմ ու ծուխի պէս պիտի դարձնեմ :  
 Եւ քու առոյց առիւծներդ սուրբ պիտի ուտէ ,  
 Ու քու որսդ երկրի վրայէն պիտի ջնջեմ ,  
 Եւ քու դեպքաններուդ ձայնը մէյ մըն ալ պիտի չլսուի :  
 Ու քու երեսիդ դէմ քու քղանցքը պիտի բանամ ,  
 Եւ քու մերկութիւնդ ազգերուն ,  
 Ու քու անարգանքդ քաղաւորութիւններուն պիտի ցուցնեմ ,  
 Եւ քու վրագ պղծութիւններ պիտի նետեմ ,  
 Եւ քեզ խայտառակ պիտի բնեմ ,  
 Եւ քեզ օրինակ պիտի դնեմ :  
 Ու պիտի ըլլայ որ ամէն քեզ տեսնողը  
 Քեզմէ պիտի փախչի ու պիտի ըսէ ,  
 Նիւնուէն աւերակ եղաւ ,  
 Անոր վրայ ո՞վ պիտի ողբայ :  
 Քու բոլոր բերդերդ պիտի կործանին :  
 Քու դռները քշնամիներուդ առջեւ պիտի բացուին :  
 Կրակը պիտի ուտէ քու նիւրերդ :  
 Քու հովիւներդ կը քնանան , ո՞վ Ասորեստանի քաղաւոր .  
 Քու ազնուականներդ կը պառկին ,  
 Քու ժողովուրդդ լեռներուն վրայ ցրուեցամ ,  
 Ու մէկը չկայ որ զանոնք ժողովէ :  
 Քու վանառականներդ երկինքի աստղերէն աւելի  
 շատցուցիր .  
 Քու քակակիրներդ մարախի պէս ,  
 Ու գորավարներդ անբիւ մարախներու պէս .  
 Հիմա անոնց ուր ըլլալը չի գիտցուիր» :

Ետա հետաքրքրական է Յովնան մարգարէին գիրքը :  
 «Եւ Տէրօջը խօսքը Ամաթիի որդւոյն Յովնանի եղաւ ըսե-  
 լով . Ելի՛ր , Նինուէ մեծ քաղաքը գնա , ու անոր դէմ քարոզութիւն  
 ըրէ , քանզի անոնց չարութիւնը իմ առջեւ ելաւ : Բայց Յովնան ե-  
 լաւ որ Տէրօջը երեսէն թարսիս փախչի , եւ Յոպպէ իջաւ ու նաւ  
 մը գտաւ որ թարսիս կ'երթար , եւ անոր վարձքը տուաւ ու անոր  
 մէջ մտաւ . . . » :

Եւ Յովնան մարգարէին գիրքը Ա. , Բ. , Գ. գլուխներուն մէջ  
 մեզի կուտայ Յովնանի պատմութիւնը , հաւատանք անոր պատմա-  
 կան իրականութեան կամ ոչ , այդ չէ կարելորդ :

Յովնանի առած նաւը սաստիկ արեւոմտութեան կը բռնուի :  
 Նաւատարները կը վախնան , նաւուն կարասիները ծով կը նետեն ,  
 իրենց աստուածներուն կ'աղօթեն : Բան մըն ալ օգուտ չընէր : Չա-

ըրբի արմատը , Յովնանը պառկեր , խորունկ կը քնանայ : Նաւատար-  
 արները զայն կ'արթնցնեն , յետոյ վիճակ կը ձգեն ու վիճակը կ'իյ-  
 նայ Յովնանին՝ Մարդիկը Յովնանը կը նետեն ծով : Մեծ ձուկ մը  
 Աստուծոյ հրամանով , կը կլլէ Յովնանը եւ զայն կը հանէ ցամաք :  
 Տէրը նորէն կը հրամայէ Յովնանի որ Նինուէ երթայ ու քարոզու-  
 թիւն ընէ , որպէսզի այդ մեծ քաղաքը կործանուի ազատի :

Յովնան կը մտնէ Նինուէ քաղաքը ու կը սկսի քարոզել : Եւ  
 ի՛նչ մեծ հրաշք : «Նինուէի մարդիկը Աստուծոյ հաւատալով ծոմա-  
 պահութիւն քարոզեցին , եւ անոնց մեծէն մինչեւ պզտիկը քուրձ  
 հագան : Եւ այս խօսքը Նինուէի թագաւորին հասաւ , ու անիկա իր  
 աթոռէն ելաւ եւ վրայէն պատմուծանը հանեց եւ քուրձ հագաւ ու  
 մոխրի վրայ նստաւ : Եւ Նինուէի մէջ մոռնետիկ կանչել տուաւ ,  
 ու թագաւորին ու իր մեծամեծներուն հրամանովը պատուիրեց ը-  
 սելով . Մարդ ու անասուն , արջաւ ու ոչխար բան մը չուտեն , չա-  
 բաժին ու ջուր չխմեն , եւ մարդիկ ու անասուններ քուրձ հագնին  
 ու բոլոր ուժով Աստուծոյ աղաղակեն , եւ ամէն մարդ իր շար ճամ-  
 բայէն ու անիրաւութենէն ետ դառնայ» :

Երբ Նինուէի 120 հազար մարդիկը յանկարծ բարի ու աստ-  
 ւածավախ կը դառնան , Աստուած այլեւս իր վճիռը կը բեկանէ եւ  
 այդ մեծ քաղաքը կ'ազատուի ահաւոր կործանումէն :

Յովնան մարգարէն , որ կ'երեւի թէ Նինուէի կործանման  
 հանդիսատես ըլլալու հաճոյքը կ'ուզէր վայելել , կ'ուզէ մեռնիլ երբ  
 կը տեսնէ որ Նինուէն չի կործանիր : Դուրս կ'ելլէ քաղաքէն ու իրեն  
 համար տաղաւար մը կը շինէ եւ Աստուած ալ անոր գլխին վերեւ  
 դրմենի մը կը բուսցնէ որպէսզի անոր հովանիին տակ մարգարէն  
 հանգստանայ : Հետեւեալ աւտուն , սակայն , Աստուած կը չորցնէ  
 դրմենին եւ Յովնան կիզիչ արեւուն տակ կը մարի եւ կ'երազէ իր  
 մահը :

«Մեռնիլս ապրելէս աղէկ է» կ'ըսէ ան :  
 Բայց Աստուած խստիւ կը յանդիմանէ Յովնանը . «Դուն  
 դրմենին խնայեցիր» , կ'ըսէ անոր , «որուն համար աշխատութիւն  
 չբաշխեցիր , ու զանիկա չմեծցուցիր , որ մէկ զիշերուան մէջ բու-  
 սաւ եւ մէկ զիշերուան մէջ կորսուեցաւ : Հապա ես ինչո՞ւ պիտի  
 չխնայէի Նինուէի , այն մեծ քաղաքին , որուն մէջ հարիւր քսան  
 հազար մարդիկ կան որոնք աջ ու ձախ ձեռքին տարբերութիւնը չեն  
 գիտեր» :

Ընթերցողը , անշուշտ , ուրիշ ամէն բանէ առաջ կը տեսնէ  
 ցցուն հակասութիւնը : Աստուած Յովնան մարգարէին կը յայտնէ



որ նինուէն պիտի չկործանէ, մինչդեռ նաւում մարգարէն նինուէն աւերակ կը դարձնէ :

Այս երկու մարգարէներէն ո՛րն է իրական մարգարէն, ո՛րն է սուտ մարգարէն, դժուար է որոշել : Միայն մէկ բան յայտնի է, որ Բարեկոնն ու նինուէն մարգարէներու գուշակութեան հետեւանքով չկործանեցան, այլ կործանեցան անոր համար որ անոնց երկուքին ալ փառքը հաստատուած էր զերեւոյթութեան ու բանութեան վրայ, ու աստուածները չէին կրնար ճշուտաւ բազմամիլիոն ժողովուրդը պահել մշտնջենական համակերպութեան շղթաներուն տակ :

ԿԱՅՄՐՈՒԹԵԱՆՅ ԱՏՈՒԵՐԸ ԴԵՌ ԿԸ ՄՆԱՅ

Այժմ հարց է թէ ի՞նչպէս եղաւ որ «թագաւորութեանց տիրուհին» այնքան դիւրութեամբ անձնատուր եղաւ օտարին : Այս հարցման պատասխանելու տան ճիշդ է որ նախ վեր պիտի առնենք այն գժգոճ կրօնականները որոնց աստուածները զերի դարձեր էին Մարտուքին : Բայց ասով ամէն ինչ չի բացատրուիր : Կիրոս բարեկոնացի եւ ասորեստանցի անգութ թագաւորներէն տարբեր ժխպեա մըն էր : Ան թէեւ արեւելքէն կուգար, բայց արեւմտեան քաղաքակրթութեան ջահով կը յառաջանար արեւելեան կատաղութեան դէմ : Այն զերիները որոնք կը տքային քաղզէացիներու վայրենի իշխանութեան ճնշման տակ, լսած էին Ահուրա-Մազդայի քարոզչութիւնները : Ահաւասիկ թագաւոր մը որ լաւ տրամազրուած էր ազգատին ու զերիին հանդէպ : Ան «ճգմուած եղէզը պիտի չկոտրէր եւ միացող պատրոյզը պիտի չմարէր» : Արիական ցեղի թագաւորն էր ան, զեմսկրաս մը, որուն յառած էին Միջագետքի կայսրութեան հպատակ պարզամիտ միլիոնաւոր մարզիկ որոնք ուրախութեամբ գիմաւորեցին Կիրոսը : Ահա թէ ինչու Կիրոս այնքան դիւրին յաղթանակ տարաւ :

Բարեկոնի շքեղութենէն ու փառքէն շատ քիչ բան մնացեր է, որով մենք կրնանք դատարոշել անոր ժողովուրդին հոգեբանական կազմախօսութիւնը : Գլխաւոր բաները որոնք մեզի կը թելադրեն խորհրդածել, նարուպոպոնոսորի առիւծներն են : Աւերակներէն մնացած այդ արձաններն են որոնք ցոյց կուտան թէ շատ խոր տարբերութիւն մը կայ Բարեկոնի արուեստին եւ Եգիպտոսի արուեստին միջեւ :

Եգիպտոսի մէջ ամէն ինչ մեծամարմին է, բուրակ, յըլ-կուտ, կարճեա շինուած մշտնջենական մասխոհութեան համար : Անոնց արասյայտութիւնը միշտ հանդարտ է եւ յուրջ : Շատ քիչ

անգամ անոնք մկանային ուժ կը ցուցնեն : Եգիպտոսի արուեստը պատկառազու անդորութեան մը տպաւորութիւնը կուտայ դիտողին : Բայց քաղզէական արուեստին մէջ կատաղութիւն եւ սարսափելի ուժ կայ, մկանային լարուածութիւն եւ բզբաւուր ցանկութիւն : Կը աեսնես առիւծ մը որ կը մեռնի օրհասական դալարումով, կամ ահռաները բացած պատրաստ յարձակելու եւ յօշոտելու իր որսը : Քաղզէացիները իրենց արուեստը այս ձևով կ'արտայայտէին : Ասով բնէ չենք ուզեր թէ եգիպտացիք աւելի փիլիսոփայական հակում ունէին եւ աւելի հանդարտաբարոյ էին, մինչ քաղզէացիք աւելի դաժան ու անգութ :

Յամենայն դէպս տարբերութիւն մը կար այդ երկու ազգերու խառնուածքին ու հակումներուն միջեւ :

Եւ ինչո՞ւ այդ տարբերութիւնը :

Փոքրիկ անդրադարձում մը պիտի ցուցնէ այդ տարբերականութեան ծնունդ տուող պատճառը : Եգիպտոս պաշտպանուած էր անանցանելի ժայռերով եւ արշաւանքէ վախ չունէր : Բայց Քաղզէաստան, ընդհակառակը, շորս կողմէ բաց էր եւ ենթակայ արշաւանքի : Ատոր համար ան պիտի լարէր իր մկանները, պիտի սրէր իր ահռաները, պիտի երկարէր իր ճիրանները, պաշտպանելու Եգեմի պարտէզի հարստութիւնը աւարառու թշնամիներէն :

Եւ պէտք է բնէ թէ թշնամիները շատ էին եւ անոնք Կիրոսէն յետոյ իրարու ետեւէ եկան, կարծես ճակատագրական կարգով : Եկաւ մակեդոնացի Աղեքսանդրը, յետոյ եկան սելեւկեանները, ապա պարթեանները եւ հովիտացիները : Անկէ վերջ եկան Մուհամէտի որդիները : Այդ շրջանին պարտէզը ծաղկեցաւ դարձեալ Պաղտատի ազնուաշունչ ազգեցութեան տակ : Անոնցմէ յետոյ արեւելքէն եւ հիւսիսէն եկաւ աւերող ալիք մը, այն կայսրութիւնը որ ամբողջ աշխարհի հիացումն էր գրաւեր, կոխկոտուեցաւ մոնկոլական վայրենիներու կրօնիկներուն տակ : Ետայի մարգարէութիւնը իրականացաւ քսան դար յետոյ, Լենկիթիւուրի հորդաններուն արշաւանքով :

Բայց Ետայի մարգարէութիւնը մասալք իրականացաւ, ոչ թէ ամբողջապէս : Բարեկոնի մէջ բորենիներ ու ճայլամներ չբնակեցան : Բարեկոն տակաւին իր գրաւիչ դիրքին վրայ է այսօր, որովհետեւ հոն կը գեղերի հին փառաւոր կայսրութեան ուղին, անոր ստուերը : Արեւմտեան պետութեանց վերջին մեծ պատերազմները մղուեցան Մարտուք աստուծոյ աթոռը գրաւելու համար :

Ա. Պատերազմին Գերմանիա Ասորեստան եղաւ եւ Անգլիա՝ Բարեկոն : Անգլիա շահեցաւ : Այսօր, սակայն, ուրիշ աւելի հզոր



կայսրութիւն մը իր թաթը երկարած է Միջագետքի վրայ, ամբարիկեան իմպերիալիզմը: Բայց նոր աւետարանի մը լոյսը արդէն սկսած է իր ճառագայթները սփռել բոլոր մթին խորշերը ուր կը նիրհեն անհամար զոհերու ոգիները: Ասորեստանեան եւ բաբելոնեան կայսրութեանց հողերուն վրայ ապրող ժողովուրդները սկսեցին ցոյց տալ ցնցող զարթնումի նշաններ: Անոնք անարարակոյս պիտի առաջնորդուին նոր աւետարանի, կոմունիզմի լոյսով, եւ հետո՛ւ չէ՛ այն օրը որ անոնք պիտի կառուցանեն նորագոյն եւ յանձնարարական եղեմական պարտէզը, որուն բնակիչները այլեւս վախ պիտի չունենան, ո՛չ «նախանձառ ու վրէժխնդիր» Աստուծո՛ւմէ, ո՛չ ալ իմպերիալիստական աւարատու պետութիւններէն, որովհետեւ վերջրուած պիտի ըլլայ առաջինին գահը եւ պիտի գերեզմանուի վերջիններուն իշխանութիւնը:

**ՎԵՐՋԱՌԱՆ**

Բաբելոնի եւ Նինուէի կայսրութեանց շրջանին, դասակարգային կռիւներու մասին պատմական ստույգ տեղեկութիւններ չկան: Օսրոն Վարտ իր ուսումնասիրութեանց մէջ կը յիշատակէ միայն երկու դէպք: Նինուէի մէջ հացագործներու գործադուլը որ վերջացեր է յաջողութեամբ (յաջողութիւն ըսելով պիտի հասկնանք որ հացագործները իրենց պատրաստած հացէն իրենց համար ուտելու բաժին ստացեր են: Ասկէ կը հետեւցնենք թէ գերի աշխատաւորները ինչպիսի գոխային բռնութեան ենթարկուած են եղեր), իսկ Բաբելոնի մէջ Բաբելոնի աշտարակի շինութեան տօնն որմնադիրներու գործադուլը որ վերջացեր է ձախողութեամբ: Կայսրը գործադուլաւորները սուրէ անցուցեր է, իսկ փախչողները ցրուած են աշխարհի շորս կողմերը: Այս բոլոր իրողութիւններէն կը պարզուի որ այդ երկու կայսրութեանց կեդրոնական մասերուն մէջ նոյնիսկ գործաւորական միութիւններ կային, բայց Վարտի հաստիացումով այդ միութիւններէն իւրաքանչիւրը իր աստուածը ունի եղեր եւ անոնք կապուած էին այդ աստուածներուն: Բայց որովհետեւ թագաւորին աստուածը ամէնէն զօրաւորն էր, փոքր աստուածները ենթարկուած էին ամէնէն մեծ աստուծոյն, որ պարզան աներկայացածին պէս խտուր կը պատէր իրեն անհնազանդ եղող աստուածները: Այսու կը տեսնենք թէ գերետիրական հին շրջանը աստուածներու տիրապետութեան շրջանն էր որ վերջացաւ այն տօնն երբ հին աստուածները մեռան եւ քրիստոնեաներու Աստուածը յայտարարեցաւ որպէս ամենակարող ու գերագոյն Աստուած: Այսպէս, ուրեմն, մէկ կողմէ աստուածներու տեսակաւոր

բազմութիւնը, միւս կողմէ տիրող դասակարգի իշխանութեան անպատմելի անդթութիւնները թոյլ չէին տար որ աշխատաւորներու կրաւորական բնոյթ կրող կազմակերպութիւնները համախմբուէին միացեալ ճակատի վրայ հասարակաց թշնամիին դէմ: Մէկ բան միայն պարզ է, սակայն, որ Բաբելոնն ու Նինուէն կրօնական դժով մեծ դեր ունեցած են ազդելու թէ իրենց գերի դարձուցած ազդերուն եւ թէ մերձաւոր կամ հետո երկիրներու ժողովուրդներու հոգեբանութեան վրայ:

**Փրօֆ.** Գոլտահայրը կ'ըսէ. «Ատեղծագործութեան պատմութիւնը, Աստուծոյ արարիչ ըլլալու զազախարը, եղեմի պարտէզի պատմութիւնը Բաբելոնի գերութեան մէջ գոնուող հրեայ մարդաբէները Բաբելոնի աւանդութիւններէն փոխ առած եւ ներմուծած են հրէից աւանդութեանց մէջ»:

**Փրօֆ.** Փրկչուն գիտութեան ծառի եւ օձի մասին խօսելով կ'ըսէ. «Ծննդոց դրբին առաջին գլուխներուն աւելի հին աւանդութիւններէ հաւաքուած ըլլալը մասնագէտներու կողմէ հաստատուած իրողութիւն է: Այդ աւանդութիւնները աւելի Միջագետքի կը պատկանին քան թէ հրէական ազգիւրներու»:

Ասորեստանցիները եօթը հրէշտակապետներ կը ճանչնային, եւ ասոր համար շարաթը բաժնած էին եօթը օրերու: Եօթներորդ օրը մեծ հրէշտակապետին օրն էր եւ յատկացուած էր հանդիսի: Գերի աշխատաւորները այդ օրը չէին գործեր: Անոնց կենաց ծառը նոյնպէս եօթը ճիւղ ունէր:

Բաբելոնի արձանագրութեանց մէջ սեւ քարերու վրայ օձը քանդակուած է բարերար աստուածներու կարգին որպէս դիտութեանց եւ ուսմանց ակն ու աղբիւրը: Հրեայ մատենագիրները, սակայն, օձը վերածեր են խորամանկ ու խաբերայ ոգիի մը որ դիտութեան ծառին պտուղովը հրապուրած է նախ Եւան, ապա Աղամբ եւ պատճառ եղած է որ անոնք վռնտուին եղեմական դրախտէն:

Ջրհեղեղի պատմութեան հեղինակը Բաբելոնի գերութենէն վերագարձող հրեայ դրող մը եղած է եւ այդ պատմութիւնը քաղդէացուց պատմութենէն փոխ առած է: Քաղդէացի պատմաբան Բերոսոս Քաղդէայի Ջրհեղեղը հետեւեալ կը երկրորդ կը պատմէ: «Արդատէսի մահէն վերջ (ասիկա քաղդէացուց իններորդ թաղաւորն էր) անոր որդին Քսիուսթրաս թաղաւորեց: Անոր ժամանակ մեծ հեղեղ մը տեղի ունեցաւ որուն պատմութիւնը այսպէս կը նրկարագրուի: Կրօնոս աստուածը թաղաւորին երեւցաւ երազին մէջ եւ զայն զգուշացուց ըսելով որ Դեսիոս ամսուն 15-րդ օրը Ջրհեղեղ մը պիտի ըլլայ որ մարդկային ցեղը պիտի բնաջնջէ: Աստուած թա-



դաւորին հրամայեց իրերու սկիզբին, ընթացքին ու հետեւանքին պատմութիւնը գրել եւ Սիւրպարայի Արեւ քաղաքին մէջ թաղել: Նոյն ատեն պատուիրեց նաւ մը շինել, անոր մէջ առնել իր բարեկամները ու աղբականները, ասորուտի համար բոլոր պէտք եղածը, նաեւ բոլոր տարբեր կենդանիներէն, չորքոտանիներէն, թռչուններէն նաւուն մէջ առնել զոյգ զոյգ առանց երկիրդի: Թագաւորը աստուծոյ կը հարցնէ թէ՛ գէպի ո՞ւր պիտի նաւարկէ: Աստուած կը պատասխանէ. Դէպի աստուածները: Ասոր վրայ թագաւորը մարդկային ցեղի օգուախն համար աղօթք մը բրբաւ: Այն ատեն թագաւորը աստուծոյ հրամանին անսաց, նաւ մը շինեց, հինգ ստաղիա երկայն եւ երկու ստաղիա լայն: Նաւուն մէջ դրաւ ինչ որ պատրաստած էր: Ամէնէն վերջ նաւուն մէջ առաւ իր կինը, գաւակներն ու բարեկամները: Ջուրերը երկիրը ծածկելէն վերջ քաշուեցան: Թագաւորը նաէն թռչուններ գրկեց դուրս: Անոնք ոչ կեր գտան, ոչ ալ իրենց սաքերը վրան դնելու չսի ցամաք եւ նաւ վերադարձան: Օրեր վերջ դանոնք դարձեալ դուրս գրկեց. այս անգամ անոնք իրենց սաքերը ցեխոտած վերադարձան: Նա երրորդ փորձ մը եւս բրբաւ: Թռչունները այլեւս չվերադարձան: Այն ատեն թագաւորը գիտցաւ որ ջուրերը երկրի երեսէն քաշուած են: Հետեւաբար անիկա նաէն ծակ մը բացաւ եւ տեսաւ որ նաւը լերան մը կողքին վրայ կանգնած է եւ ինք իր ընտանիքով ու մարդոցմով դուրս եկաւ: Այն ատեն թագաւորը իր պաշտամունքը տուաւ, խորան մը կանգնեցուց եւ դոհեր մատոյց աստուածներուն»:

Այժմ անցնինք Բարեւոնի աշտարակին շուրջ:

Նարուզողանոսորի գլանիկաձեւ աղիւսի տրձանագրութիւններէն առնուած է հետեւեալը: «Եօթը երկրագունդի տեսարաններ կոչուած շէնքը, որ Բօրսիպայի (Բարեւ) աշտարակն էր, նախկին թագաւորի մը կողմէ շինուած էր: Անիկա 40 կանդուն էր բայց գլուխը չէր վերջացած: Ժամանակի տեւողութեան աւերակ դարձած էր: Անոնք ջուրերու անցքին հոյ տարած չէին, որով անձրեւը եւ խոնաւութիւնը աղիւսներուն վրայ ազդած էին: Պատուհաններու կողքի եփած աղիւսները ճեղքած եւ սրաշղամի հում աղիւսները վար թափած էին: Իմ մեծ իշխան Մերոբաք հրամայեց ինձի որ զայն նորոգեմ: Անոր տեղը չփոխեցի, ոչ ալ անոր հիմերը քանդեցի: Բախտաւոր ամիս մը, բարեգուշակ օր մը սկսեցի շէնքի նորոգութեան: Աշտարակի շինութիւնը աւարտելու մօտ էր երբ չար ողիները մտան զորձաւորներուն մէջ եւ խանդարեցին անոնց լեզուները, որով անոնք ոչ իրարու ըսածը կը հասկնային, ոչ ալ արուած հրամանները: Ես հրաման բրբ որ չար ողիներու հետեւողները բո-

լորն ալ ջարդեն եւ ողջ մնացողները երկրէն հեռացնեն»(\*):  
 Ինչպէս կը տեսնենք, հին դարերուն բոլոր մեծ գործերը, նոյնպէս եւ պատերազմները աստուածներու հրամանով կատարուած են եւ այդ աստուածները միշտ տիրող դասակարգի մեծաւորներուն բերնով տուած են իրենց հրամանները, բայց չարունակ մտոցեր են իրենց փառքը կերտող աշխատաւորութիւնը:  
 Ահա թէ ինչո՞ւ այդ աշխատաւորութիւնը իր պատմութիւնը չէ ունեցեր:


(\*) Պէճ Սմիդ, Քաղղէացիներու Ծննդոց Գիրքը, Ա. հատր, էջ 42-44:



Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն

Ե Ի

Պ Ա Ր Ս Ի Կ Ն Ե Ր Ը





# Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն

## ՄՇՈՒՇԱՊԱՏ ԱՆՑԵԱԼԸ

Եզրպատասի եւ Միջազեաքի կայսրութիւնները շատ դանդաղ ընթացքով իրենց ուժի բարձրութեան հասան, բայց Պարսկաստան յանկարծ որոտալի ամպի նման երեւցաւ, եւ իր կայծակներով լուսաւորեց հիւսիսէն արեւելք երկարող լեռները, այնպիսի արագ յաղթութեամբ որուն նմանը պատմութիւնը չէ արձանագրեր:

Պարսկաստանի հետ արիական ցեղը իջաւ պատմութեան թատերաբեմին վրայ, ուր Կիւրոս առաջին անգամ ըլլալով կը կանդնի որպէս կայսերական ներկայացուցիչը հնդկերու պահանջ ժողովուրդներուն, որոնք անկէ յետոյ իրենց վերապահեցին իշխանութեան գլխաւոր աթոռները:

Այդ առեւնները պարսկական յաղթանակը վարչական փոփոխութենէ մը աւելի բան չէր նշանակեր: Կիւրոս ինքզինք յայտարարեց որպէս «Բեկի գաւազը», թագաւոր պսակուեցաւ Բարեւոյնի մէջ եւ այդ փառաւոր հանդիսութենէն յետոյ, համաձայն Միջազեաքի հովտի աւանդական սովորութեան, կոչուեցաւ թագաւորաց թագաւոր:

Եւ ահա մեծ տարբերութիւն մը: Բարեւոյնէն եւ Ասորեստանէն անցնելով Պարսկաստան, մենք այնպէս կը տպաւորուինք թէ մեզի ծանօթ մեր հայրենակիցներու տունն է ան: Վերջապէս մենք կը մտնենք տեղ մը ուր ազրոզ մարդիկը կը ճանչնանք, գանձեր կը հասկնանք: Եզրպատական սովորութիւններն ու հաւատալիքները հետաքրքրական են, բայց անհաւատալի: Գժուարաւ մենք զանոնք լրջօրէն կրնանք վեր առնել: Ասորեստանցիները վանողական են, անոնց մօտենալ գժուար է, իսկ քաղցէացիները Ասորեստանցիներէն պակաս չեն մնար: Բայց պարսիկներուն երբ կը մօտենանք, անմիջապէս կը զգանք թէ անոնք օտարականներ չեն: Անոնց հետ մենք կը զտոնանք ընկերական: Ասիկա մասամբ իրողութիւն է, որովհետեւ մենք սնած ենք յունական պատմութեամբ եւ յունական պատմութեան հեռանկարը եղած է միշտ մեծ թագաւորին կայսրութիւնը: Բայց աւելի մեծ շափով իրողութիւն է նաեւ այն որ ժամանակակից մարդոց գաղափարներու շտեմարանը իր պաշարը առած է Պարսկաստանէն, որպէս իմացական զարգացման



մեկնակէտ: «Արդիական մտածողութիւնը» սկսած է Ջրագաւազէն, պարսիկներու մարզարէէն:

Երկար դարերով Հիւսիսային Հարթավայրերէն վաշկատուն ցեղեր պարբերական արշաւանք կատարեցին Միջագետք: Անոնց անունները արձանագրուած են Ասորեստանի եւ Եգիպտոսի յիշատակարաններուն վրայ: Բայց երբ նոր բարելոնական կայսրութեան եւ տկարացած Ասորեստանի միջեւ կռիւր սկսաւ, Նարոպոզաստար այս Հիւսիսի մարդոց օգնութեան դիմեց եւ դաշնակցեցաւ մեղիացիներու թագաւորին հետ: Նարոպոզաստարի որդին, աշխարհահռչակ վաճառական իշխան Նարոպոտոնոսոր, ամուսնացաւ մեղիացի իշխանուհիին հետ եւ անոր համար շինեց Բարելոնի կախարանաւոր պարտէզները, որպէսզի նա իր բնաշխարհի սարերուն ծարաւը յագեցնէ:

Սայաքսարէս, մեղիացի թագաւորը, Նինուէի պարիսպները խորտակելէ վերջ մեղիացիներու հսկողութեան լանձնեց Տաւրոսէն Փոքր Ասիա տանող ստեւորական ճամբաները: Բայց ան Միջագետքի հարաւային մասին ուշադրութիւն չտուաւ, մինչեւ որ Կիւրոս հրապարակ իշաւ 553 թուականին (Ն. Ք.): Կիւրոս մեղիացիներն ու պարսիկները միացնելով արագ յաղթութիւններով զբրաւեց Միջագետքը, Եգիպտոսը եւ այլ երկիրներ: Նախ քան 553 թուականը պարսիկներու անունը ծանօթ չէր աշխարհին: 539 թուականին պարսիկները աշխարհի տէրը դարձան:

Բայց ուրիշ՞ եկան «Իելի այս որդիները»:

Այս հարցման պատասխանը կը գտնենք դիցաբանական եւ պատմական աղբիւրներու մէջ:

Նախ անենք դիցաբանական աղբիւրը, որուն պատկերը հրաշալիորէն կը ներկայացնէ անմահն Փերդուսին իր Եախնամէով (\*):

«Թէեւ անկարելի է ազգային-պատմա-վիպական քերթուածի մը մէջ ժամանակի եւ թուականի ճշդութիւն փնտել, այնուամենայնիւ կ'ենթադրուի որ Եախնամէն իր պատմութեան սկզբնաւորութենէն մինչեւ ստասնեան պետութեան անկումը որով կը վերջանայ, մօտաւորապէս 4000 տարուան ահագին ժամանակամիջոց մը կ'ընդգրկէ: Սա կը բաժնուի յիսունի չափ տարբեր թագաւորութիւններու, որոնցմէ ոմանք միայն ութը, տասը, ուրիշներ հինգ կամ եօթհարիւր տարի տեւողութիւն ունեցած են:

«Դիցաբանական ժամանակները կը սկսին իրանեան ցեղի նախահայր Քայուսերես թագաւորէն: Մա եւ իր անմիջական յաջորդները մարդկային քաղաքակրթութեան սահմանները կը հանդիսանան: Ասոնց շտապիղէն է Ջամշիդ տաշին աշխարհաշէն մեծ արքան որ ի միջի այլոց սահմանեց պարսից նորուզը, այսինքն ամանորը, որ մինչեւ այսօր պարսկական ամենամեծ տօնն է: Ապա խորխտանալով, Ջամշիդ պահանջեց որ զինք իբրեւ աստուած պաշտեն եւ ի պատիժ այդ ամբարտաւանութեան նախախնամութեան կողմէ կը զրկուի ծագումով արար, շարագործ Չոհակը որ կը տիրանայ Իրանի գահին եւ կ'իշխէ հազար տարի: Ահրիմանի համբոյրին հետեւանքով Չոհակի (Աժգահակի) ուսերէն կը բուսնին երկու օձեր, որոնք պէտք է կերակրուէին մարդկային ուղեղով: Դարբին Քալէն, որուն 16 զուակները այդ կերպով զոհուած էին, կ'ապստամբի Չոհակին դէմ իր առջեւ կապած զոյնոցը ազատութեան դրօշակ բնելով որ յետոյ կը դառնայ Իրանը խորհրդանշող պատուոյ դրօշը: Քալէին օգնութեամբ արքայազարմ Փերէյդուն կը տապալէ Չոհակը, կը բռնէ եւ շղթայած կը տանի բունակալը Դեմաւենդ լեռը եւ կը գամէ գայն ժայռերուն մէջ: Այնուհետեւ Փերէյդուն գահ բարձրանալով կը բաժնէ երկիրը իր երեք որդւոց մէջ, տալով Ռուժը (կայսրութեան արեւմտեան մասը) Սելմին, Թուրանը (Թուրքիստանը) Թուրին եւ Իրանը՝ Իրէլին: Եղբայրները, նախանձելով Իրէլին, կը սպաննեն գայն: Ատկէ կը ծագին Իրանի եւ Թուրանի միջեւ թշնամութիւններն ու պատերազմները որոնք հազարաւոր տարիներ կը տեւեն անընդհատ: Իրէլի որդին Մենուշէհը, յաջորդելով հօրը, կը լուծէ անոր մահուան վրէժը: Մենուշէհը իշխանութեան ժամանակ կը յայտնուին կտրիճ Սամը, անոր որդին Չալը որ կ'ամուսնանայ գեղաղէմ իշխանուհի Ռուզարէի հետ: Ասոնց միութենէն կը ծնի Ռոստոմ, Իրանի ամէնէն սիրելի եւ հռչակաւոր հերոսը, քաջ ու յաղթանդամ փեհլեւանը որ իր արտակարգ ուժին զօրութեամբ կը խորտակէ իր թագաւորին ու հայրենիքին թշնամիները, ամէն անգամ որ օգնութեան կը դիմուի իրեն:

«Մենուշէհը յաջորդը, Նովարը գերի կ'իյնայ Թուրանի Աֆրասիար արքային ձեռքը եւ կը սպաննուի, որուն հետեւանքով Թուրանի դէմ պահ մը դադրած կռիւները կը վերսկսին եւ կը շարունակուին յաջորդ հինգ փեհլեւաններու ժամանակաշրջանին, մօտ երեք հարիւր տարի:

«Քայանեան նշանաւոր հարստութեան գահակալներն են Քէյ Դորադ, Քէյ Քաուս եւ Քէյ Խոսրով, որոնց իշխանութեանց միջո-

(\*) Այս հատուածը կ'արտագրենք Միհրդատ Թիրեաբեանի «Շահնամէ» հատուածներու քարգմանութեան յառաջաբանէն:



ցին կը ծաւալին Ռոստոմի սիրազործութիւնները ընդդէմ դեւերու եւ թուրանցիներու: Տեղի կ'ունենայ նաև Ռոստոմի եւ իր հարս-  
 դաս զաւկին Սոհրաբի ողբերգական մենամարտը, մէկը Ֆերդուախի  
 դիցարգնալէպին ամէնէն յուզիչ եւ ընտիր դրուագներէն, որ թարգ-  
 մանուած եւ մշակուած է արեւմտեան հեղինակներու կողմէ: Քէյ  
 Քաուտի որդին, Սիւաուշ, երթալով Աֆրասիարի քով, դաւադրու-  
 թեամբ կը սպաննուի անոր հրամանով եւ ահա պատերազմը դարձ-  
 եալ կը բռնկի թուրանի դէմ «Սիւաուշի վրէժը» կարգախօսով:  
 Քէյ Սոսրով հուսկ ուրեմն պարտութեան կը մատնէ թուրանի բա-  
 նակները եւ Աֆրասիար կ'իյնայ փախուստի միջոցին:

«Ապա կը յայտնուի Զրադաշտ, Իրանի մարդարէն, որուն  
 քարոզած նոր կրօնը առաջին անգամ կ'ընդունի Գոշտասպ (Վըշ-  
 տասպ) արքան: Սա իր որդին քաջամարտիկն Իսֆենդիարը կ'ա-  
 ռաքէ երկրին չորս կողմը ժողովուրդը զրադաշտութեան դարձնե-  
 լու: Թուրանցիք կը հակառակին այս նոր կրօնի տարածման ու հին  
 պայքարը կը վերսկսի երկու անհաշտ ցեղերու միջեւ: Իր հօրը  
 սաղբանքով Իսֆենդիար կ'երթայ Ռոստոմին հետ մարտնչելու եւ  
 անոր արձակած մէկ նետովը ի վերջոյ կը սպաննուի: Ծուռով Ռոս-  
 տոմ եւս կը գտնէ իր մահը իրեն համար լարուած թակարդի մը մէջ  
 իյնալով:

«Այստեղ իրապէս կը վերջանայ Իրանի հերոսական-վիպա-  
 կան շրջանի պատմութիւնը, որմէ յետոյ կուգայ շարքը պատմա-  
 կան ծանօթ մեծ դէմքերու, սկսած Գարեհէն, որուն հետ յիշատակ-  
 ւած է լի առասպելական զրոյցներով Աղեքսանդր Մակեդոնացին»:

Պարսկական դիցարանութեան այս մասը հարկ եղած լոյսը  
 չի սփռեր պարսիկներու ծագման, անոնց հասարակական կեանքի  
 գանազան փուլերուն վրայ: Այժմ դիմենք ուրիշ աղբիւրներու:

Արիական ցեղը, համաձայն հնարան Միլսի, ծագում ա-  
 ռած է Սիպերիոյ մէջ, երբ այդ երկրամասը անյիշատակ դարեր  
 առաջ տաք կլիմայ ունէր: Ծննդոց զբքի եղեմական դրախտը ա-  
 ռաջին անգամ Սիպերիոյ մէջ հիմնուած է, ուրկէ մարդիկ վաճար-  
 ւած են ոչ թէ Աստուծոյ հրամանով, ինչպէս երբայիցեաց զիբքը կը  
 պատմէ, ոչ թէ սուրով, ինչպէս ուրիշներ կ'ենթադրեն, այլ եղա-  
 նակի փոփոխութեամբ:

«Տասը ամիս ձմեռ, երկու ամիս ամառ.  
 Յուրտ գետնի վրայ, ցուրտ ջուրիմ վրայ.  
 Յուրտ՝ բոյսերուն վրայ, ցուրտ՝ ամէն բանի վրայ.  
 Զմեռ դեւն էր շիներ գաւնոմ»:

Այսպէս կ'երգէ զրադաշտական բանաստեղծութիւնը մշու-  
 շապատ անցեալի այդ իրողութեան շուրջ:

Արջային ձմեռը երբ եկաւ ծածկել Սիպերիայի տաք հար-  
 թաւայրերը, անկէ սկսաւ արիական ցեղի դազթը:

Մենք դիտենք որ այն երկրամասը որ այսօր սառով ծած-  
 կուած է, ատենօք սարսափելի տաք կլիմայ ունեցեր է եւ հոն ա-  
 ճեր է բամբուն, մէկ ոտք հաստ բունով եւ տասը կանգուն բարձր  
 հասակով: Փիղերը, որոնց բրածոները գտնուած են այսօր, յայտ-  
 նի է որ անյիշատակ ժամանակներ առաջ թափառած են տաք Սի-  
 պերիայի խիտ անտառներուն մէջ: Նախապատմական դարերուն,  
 սերունդներ սերունդներու ետեւ պէտք է զգացած ըլլան որ սա-  
 ուցեալ զօտին աստիճանաբար կը մօտենար իրենց եւ Ալեասայի  
 դիցարանութիւնը հիւստոյները անպատճառ այդ սերունդներու վեր-  
 ջին օղակին մէջէն դուրս եկած են:

«Մէկ հունձքը միւսին ետեւ դարձեր էր սնրաւարար», կը  
 գրէ Միլս, «խոտերը, պատուները, արմախքը կը կծկուէին, չէին  
 աճեր եւ աճողներն ալ կորսնցուցած էին իրենց համը, ցուրտին  
 ակուններուն տակ: Աշխատաւոր արիականները, հետզհետէ զգա-  
 լով կեանքի դաժանութիւնը, ստիպուած էին դառնալ զէպի հա-  
 բաւ, փնտռելու ամառնային գեփիւրը: Եւ անոնք, հեռանալով հիւ-  
 սիսէն, իջան աւելի վար եւ հասան երկիր մը որ անկէ յետոյ կոչ-  
 ւեցաւ Իրան: Անոր հովիտներն ու դաշտալայրերը կ'երկարէին հե-  
 ոուն եւ աւելի լայն հորիզոնով դէպի հարաւ, զէպի կասպից Ծով:  
 Գաղթող արիականներէն ոմանք հաստատուեցան այն երկրամասը  
 որ այսօր Պարսկաստան կը կոչուի, իսկ անոնց մեծ մասը անջատ-  
 ւելով անցաւ Ալդանիստանի կիրճերէն զէպի հարաւ, մինչեւ որ  
 հասաւ Փունճասպի հինգ ջուրերուն եւ ասոնք կոչուեցան Սինաուս  
 կամ Հնդուս (հնդիկներ), որ կը նշանակէ «գետի մարդ»:

Հնդիկներու մասին կը խօսինք յետոյ: Այժմ հետեւինք մի-  
 այն Իրան հաստատուող արիական ցեղերուն, որոնք յետոյ կոչուե-  
 ցան պարսիկներ եւ իրենց երկիրն ալ՝ Պարսկաստան:

Արիական ցեղերը, իրենց պանդխտութեան ճամբուն վրայ  
 երբ հասան Իրանի ժայռերուն, իրենց ետեւ թողած էին ցուրտը,  
 բայց այս անգամ ճակատեցան կիզիչ տաքութեան եւ երաշտի: Ա-  
 նոնց գլխաւոր պայքարի սուարկան ջուրն էր: Ինչո՞ւ գետերը զէպի  
 ցած կ'ընթանային եւ անձրեւը կը զազրէր: Ուժ մը կար որ հեռու  
 տեղերէն գետերը զէպի վար կը քշէր ու երկինքներէն անձրեւը վար  
 կը բերէր: Էսկ մը կար երկինքի մէջ որ այդ գործերը կը կատարէր  
 իր ուզած ատեն: Օձապտոյտ կայծակը վերաւոր գեւի նման ամպե-



րէն վար կ'իյնար ու իր հետ կը բերէր անձրևը որ կ'ածեցնէր խտեբերը կովերուն, ոչխարներուն համար: Երբ ամպերը իրենց անձրեաներով կը հոգատարէին կովերը, ուրեմն կովը երկինքի այդ էակին սիրելի կենդանին էր: Եւ քանի որ կովին կաթը անունդ էր մարդուն, հետեւաբար կովը մի տեսակ նուիրականութիւն կը հագնէր: Այս կէտը կը նկատենք թէ պարսկական եւ թէ հնդկի աստուածաբանութեան մէջ: Բայց տեղի ունեցաւ տարօրինակ կերպարանափոխութիւն մը: Անձրեւաբեր ամպերը հնդկական եւ պարսիկ հրաշափէպերու մէջ բարի եւ շար աստուածներու միջեւ մղուած պատերազմներու տարականոցը դարձան: Վեղաներու աստուածներու անունները Ալեհասայի մէջ գեւերու անուններ եղան, իսկ Վեղաներու հերոսները Ալեհասայի ճորտերը դարձան: Ամէն բան փոխուեցաւ իր հակառակ կողմին:

Այս հակաշրջումը Պարսկաստանի եւ Հնդկաստանի բնակիչներուն միջեւ ստեղծեց պայքարի գիծ մը:

Պայքարի այդ գիծը յառաջացնողը եղաւ Զրադաշտի վարդապետութիւնը որուն ազդեցութիւնը շատ խորունկ էր: Ան երբեմնի պաշտուած աստուածներուն տիտղոսները փոխեց աւելի ազնիւ եւ բարձր տարրերու ներմուծումով:

Այս երևույթը յատուկ չէ միայն զրադաշտական բարեկարգութեան համար: Լուսերական բարեկարգութիւնը նոյն թաւալը գլոր անկումին հետեւանքն էր: Հռոմի Պապը, սրբութեան խորհրդանշչը մոլեռանդ կաթոլիկին համար, հաւասարազէս դիւային պաշտամունք նկատուեցաւ լուսերական քրիստոնեային համար: Կաթոլիկը հնութեան կառչած մնաց, լուսերականը՝ նորութեան:

Պարսիկներու մէջ անոնք որ գեւի պաշտամունքին նուիրած էին եւ տակաւին իրենց գլուխը կը խոնարհեցնէին հին աստուածութեանց առջեւ, մաքուր զրադաշտականը զանոնք երեսէ ձգեց եւ անոնք կազմեցին դերի դասակարգ մը: Անոնք դարձան ոչ միայն փայտահատներ եւ ջրկիրներ, այլեւ փորձառական կենդանահատութեան ենթակայ արարածներ: Նոր Ալեհասան յայտարարեց որ երկտասարդ վերաբոյժ մը նախ պէտք է երեք դիւապաշտներու վրայ յաջող գործողութիւն կատարէ եւ անոնցմէ ստացած փորձառութեամբ մօտենայ ճշմարիտ հաւատաւոր զրադաշտականին, կտրելու անոր միտք: Եթէ այդ վերաբոյժը դիւապաշտ հիւանդին վրայ երեք անգամ գործողութիւն կատարէր ու հիւանդը մեռնէր, իր դանակը յաւիտեանս անդործածելի կը դառնար: Իսկ եթէ այդ հիւանդը երեք անգամ գործողութեան ենթարկուելէ վերջ վերապրէր, այն ատեն էր որ վերաբոյժը կը կտրէր ուղղափառին միտք:

Որպէսզի իրանցիները կարողանային ապաստմբիլ իրենց քաղաքական բռնակալներուն դէմ, առաջին անգամ անհրաժեշտ էր փշրել կրօնական թուլամորթութեան շղթաները: Միմիայն դիւապաշտութիւնը արմատախիլ ընելով էր որ ժողովուրդը կրնար ապրաստմբիլ ճնշողներու դէմ, որովհետեւ դիւապաշտ ժողովուրդներն էին որ կը հպատակէին օտար բռնապետներուն որոնց աստուածներն էին գեւերը: Կարելի չէր կուրել բռնակալին դէմ երբ տակաւին իրենց աստուածային զիրքին վրայ էին գեւերը, որոնք ժողովուրդը մատնած էին անդամալուծութեան:

Ասիկա ճշմարտութիւն է նոյնիսկ մեր ներկայ օրերուն համար: Երբ աստուածաբանները կը հաւաստիացնեն թէ ներկայ դոյութիւն ունեցող հասարակակարգը իր բոլոր անորակելի կոշտութիւններով, իր զայրացուցիչ անարդարութիւններով եւ անասելի սարսափներով արդիւնքն է Աստուծոյ կամքին, ուրեմն անոնք որ համաշխարհային իրական արդարութեան մը տիրապետութեան համար կը կուրին անհրաժեշտ է որ նախ կուրին կրօնքին դէմ, Աստուծոյ գազափարին դէմ, որովհետեւ շատ իրաւամբ Բաքունին ըսած է. «Որքան ատեն որ յաւիտեանական միտպետ մը կայ երկինքի մէջ, մարդիկ սարուկ կը մնան երկրի վրայ»:

ԶՐԱԳԱՇՏԻ ԿՐՕՆԻԸ

Հերոզոտոս կը պատմէ որ պարսիկներու կրթութիւնը երեք մասերէ կը բաղկանար.

- ա) Զի հեծնել,
- բ) Անտալ նեա արձակել,
- գ) Ծշմարխար խօսիլ:

Այս երեք բաներով անոնք կը տարբերէին ուրիշներէն: Եւ պէտք է ըսել թէ կրթութեան այդ երեք ճիւղերն էին որ պարսիկները ըրին անդիմադրելի:

Պարսիկներու երևուածով առաջին անգամ ըլլալով կը տեսնենք թէ արիական ցեղին պատկանող դաշտարնակ մարդիկ ասպարէզ իջան իրենց ամէնէն մեծ եւ ամէնէն յատկանշական ուժի ներկայացուցիչին, ձիուն հետ: Եղիպտոսի փասաւոններն ու Բարելոնի կայսրերը ուղտերու եւ աւանակներու վրայ նստած կը ճամբորդէին: Զին անոնց համար այն էր ինչ որ էր օթոն հարիւր տարի առաջ ազրոդ մեր պապերուն համար: Զին քաղաքակրթութեան արագ թափ տուաւ:

Հեծելագորաց օգնութեամբ Կիւրոս կրցաւ պաշարել եւ շուտ-



րեցնել իր դանդաղաշարժ թշնամիին բանակները: Կիւրոսի հեծե-  
լադորքը իր արագալուստ ձիերով եւ նետերու փոթորկաբեր յար-  
ձակումով սպառազէն զինուորները խուճապահար փախուստի կը  
մատնէր: Իրենց կրթական երկու սկզբունքները, ձի հեծնել եւ ան-  
սխալ նետ արձակել, Կիւրոսի բանակին տուին նիւթական յաղթու-  
թիւն: Անոնց ռազմական գործողութիւնները նոր էին, ձիերը՝ սար-  
սափելի, նետերը՝ մահացու:

Բայց անոնց կրթութեան երրորդ սկզբունքը, այսինքն խօ-  
սել ճշմարտութիւնը, անոնց համար սպահնակեց բարոյական յաղ-  
թանակ: Որովհետեւ Զրադաշտի կրօնքը Ահուրա-Մազդայի, լոյսի  
ու ճշմարտութեան միակ բարի աստուծոյ պաշտամունքն էր՝ որ  
պարսիկներուն տուած էր այն վստահութիւնը թէ իրենք աշխարհի  
պայքարին մէջ պիտի շահէին յաղթանակը եւ իմաստութեամբ պի-  
տի գործադրէին յաղթութեան նպատակը: Պարսիկները ոչ միայն  
ձի հեծնելի զիտէին, այլև զիտէին որ իրենք Ահուրա-Մազդայի  
ընտրած ձիւորներն էին:

Եզրիպոսի եւ Քաղզէաստանի մէջ կայսերական մտածողու-  
թեան եւ վաճառականութեան դանդաղ էվոլյուցիայի որպէս ար-  
դիւնք, պահանջը կը շեշտէր միաստուածութեան: Բայց Պարսկաս-  
տանի մէջ էր որ կրօնքը ստեղծեց կայսրութիւն մը որ ցրուած ցե-  
ղերը միաձուլեց, անոնցմով կազմեց հզօր իշխանութիւն մը, եւ  
«յայտնագործուած կրօնքի» շունչով այդ կայսրութիւնը տարաւ  
նոր ճամբաներու վրայ:

Բացուած էր նոր դարաշրջան մը: Հին ազգայնական գաղա-  
փարները տեղի տուած էին նոր փորձառութեանց հեղեղին առջեւ:  
Կոնֆիկիոս, Բուզդա, Զրադաշտ, Պիւթագորաս, Եսայի խօսած  
էին իրենց տարբեր լեզուներով եւ ազգեր էին ամբողջ աշխարհին:  
Բայց անոնց մէջ Զրադաշտի ձայնը ամէնէն ուժեղն էր, անոր խօս-  
քը՝ ամէնէն ազդուն:

Պարսիկները այդ ատենները իրենց մէջ խորունկ արմատ  
բռնած տիրող գասակարգ մը չունէին որ Զրադաշտի կրօնքին յաղ-  
թութեամբ վախճային կորսնցնելի իրենց դիրքն ու շահու ազդեւր-  
ները: Անոնք ինկած էին Բաբելոնի եւ Հնդկաստանի միջեւ, Միջա-  
կեաքի անպոթ թագաւորներուն եւ հնդկական գաշտավայրերու  
բրահմիններուն միջեւ: Մէկ կողմն էր մարմինները ճնշողը, միւս  
կողմն էր հոգիները սարականողը: Անոնք խոր ճշմարտութիւն մը ու-  
նէին, եւ այդ ճշմարտութեան կառչելով պիտի կորսնցնէին իրենց  
չլիթաները միայն ու պիտի գրաւէին աշխարհը:

Բարելոնական աստուածներու վաճառականական քաղաքա-

կանութեանց խառնաշփոթ թափառումներէն յետոյ, Զրադաշտի կը-  
րօնքը եկաւ ցուրտ ու մաքուր լեռներէն հոսած գուլալ ջրի պէս զո-  
վայցնելու տաքէն պապական բերանները ծարաւ մարդերու:

Զրադաշտի կրօնքը համարեայ թէ անյայտացման մտանուած  
կրօնք մըն է: Ներկայիս հազիւ թէ մէկ քանի հարիւր հազար հետե-  
ւորդներ ունի որոնք ցրուած են Պարսկաստանի, մասնաւորաբար  
Պոմպէյի մէջ: Միայն թէ տեղին է ըսել որ Զրադաշտի կրօնքը մեծ  
ազդեցութիւն ունեցաւ մովսիսականութեան, քրիստոնէութեան եւ  
մահմեդականութեան վրայ:

Զրադաշտի համար կը պատմուի թէ երբ ան լերան վրայ կ'ա-  
ղօթէր որոտումներու եւ փայլակներու մէջ, Տէրը անձամբ անոր  
երեւցաւ եւ անոր յանձնեց Օրինաց Գիրքը: Թագաւորը եւ ժողո-  
վուրդը, վարը հաւաքուած, իրեն կը սպասէին: Զրադաշտ լեռնէն  
վար իջաւ եւ Օրինաց Գիրքը զոր Որմիտը տուած էր իրեն, հետը  
բերաւ: Այդ գիրքը Ավեստա կը կոչէին որ կը նշանակէ կեցնդանի  
խօսք:

Պղատոն կը հաւատարացնէ թէ Զրադաշտ պարսից դերբնական  
աստուած Որմիտը որդին էր, աստուածորդի մը:

Զրադաշտի հետեւորդներուն խորհրդաւոր արարողութիւնն  
էր մկրտութիւնը, որ ջուրի սրբութիւն կ'անուանէին: Անոնք ջուրին  
մէջ մխրճուելով կը հաւատային թէ հոգին կը մաքրուէր ու մարդը  
կը վերածնէր:

Օր մը Զրադաշտ ատուն կանուխ, արշալոյսին, Դայտի գե-  
տին եղբրքը կ'երթայ, եւ երբ սուրբ ջուրէն ատնելով իր վրայ կը  
լեցնէ, յանկարծ կը տեսնէ որ մէկը իրեն կը մօտենայ ձեռքին բռնած  
լուսեղէն գաւազան մը: Հրեշտակապետ Վոհու Մանան էր ան որ  
Զրադաշտը իր թեւերուն վրայ ատնելով տարաւ մեծ Ահուրա-Մազ-  
դայի ընդունելութեան սենեակը:

Յիսուսի երեսուն տարեկան եղած ատեն մկրտուիլը Զրա-  
դաշտի հրաշովէպին կրկնութիւնն է: Զրադաշտ երեսուն տարեկան  
էր երբ մկրտուեցաւ, եւ նոյն ատեն երկինքէն բարի հոգին իջաւ եւ  
լուսաւորեց զայն:

Չար ոգին Զրադաշտը տարաւ լերան գլուխը եւ անոր ցոյց  
տալով աշխարհը խոտացաւ իրեն տալ աշխարհի թագաւորութիւ-  
նը, եթէ ան ուրանար իր աստուածը, բայց Զրադաշտ մերժեց:

Զրադաշտ կաղերք, կոյրերք, անդամաւորյծները կը բժշկէր,  
եւ նոյնիսկ մօր մը մէկ հատիկ սիրասուն զաւակը որ մեռած էր, իր  
ձեռքը անոր ճակատին վրայ դնելով վերակենդանացուց:

Զրադաշտի ծնած ատեն իր մարմնէն լոյս կը ճառագայթէր:



Ասոր համար ամբողջ սենեակը լուսաւորուած էր: Ան իր ծնունդէն անմիջապէս յետոյ ժպտեցաւ իր մօր երեսին: Այդ սրահառով պարսիկները գոյն կը կոչէին դիտութեան ծառէն կախուած փառաւոր լոյս:

Զրազաշտ սոյնորական ծնունդ չէ ունեցեր: Ան ծնած է կոյսէն, սուրբ հոգիի միջնորդութեամբ: Անոր հետեւորդները գոյն կը կոչեն Յաւիտենական Էսկի Անդրանիկ Որդի: Անոր կուտան նաև ուրիշ անուններ, օրինակ Անմահ Զրազաշտ, Կենդանի Աստղ:

Զրազաշտի հետեւորդները կը հաւատան որ ան նորէն աշխարհ պիտի գայ, պիտի յաղթէ չար ոգիին եւ աշխարհը պիտի վերածէ զրախտի: Մարդիկ այլեւս պիտի չմեռնին, հիւանդութիւն, ցաւ, տառապանք աշխարհէն պիտի հեռանան:

Զրազաշտի մարմինը գերեզման զրուելէ վերջ, անոր թշնամի թուրանեանները զիշերանց ուղեցին անոր զիտկը գողնալ եւ աքրել, որպէսզի ան այլեւս երկիր չվերադառնայ, բայց տեսան որ զազազը պարապ էր: Զրազաշտ իր մարմնով համբարձեր էր երկինք: Բայց ան երկրի վրայ թողեր էր իր նոր կրօնքը որ կը սորվեցնէր թէ աշխարհը ստեղծուած է եւ կը կառավարուի երկու ուժերով: Մէկը, Ահուրա-Մազդա, աստուածը այն բոլոր բաներուն որ բարի են, միւսը, Անհրա-Մենիու, աստուածը այն բոլոր բաներուն որ չար են:

Ահուրա-Մազդա որ երբեմն կը թարգմանուի աստուածային իմաստութիւն, նիւթական աշխարհի մէջ կը թարգմանուի, աւելի ճիշդ է բնէ կը խորհրդանշուի երեք տարրերով, կրակը, ջուրը եւ հողը: Ատիկա երրորդութիւնն է: Կրակը ամենատուրբ սիմպոլն է, հայր աստուածը:

Զրազաշտի կրօնը շատեր կը ներկայացնեն որպէս երկուսպաշտական կրօնք: Բայց այդ երկուսպաշտութիւնը ենթադրական է աւելի քան իրական, քանի որ Զրազաշտ կը սորվեցնէ թէ որոշ ժամանակէ մը վերջ Ահուրա-Մազդան պիտի յաղթէ Անհրա-Մենիուի եւ աշխարհը վերջնականապէս պիտի ազատուի մահուան ու չարի իշխանութենէն:

Զրազաշտ կրօնքի հիմնադիրներու մէջ միակը եղած է որ իր շուրջը չէ հաւաքեր հաւատաւորներ: Ան չէ եղած սոսկական քարոզիչ մը, այլ մտած է մասններուն մէջ, ապրած է թշուառներուն ու հիւանդներուն հետ, օգներ է անոնց, սորվեցուցեր է անոնց կեանքը ուղիղ ապրելու եղանակը: Դեռ աւելին կայ: Ան իր հայրենի անկախութեան համար աշխատեր է եւ նոյն ստեն հակա-

ռակ եղած է որ այդ հայրենիքը ուրիշ երկիրներ առնէ իր տիրապետութեան տակ:

Զրազաշտի վարդապետութիւնը իր մէջ յեղափոխական բնութագիր ունի, ինչ որ չեն ունեցեր միւս կրօնքները: Երբ ան կը սորվեցնէր թէ Ահուրա-Մազդան կը կուռէր Անհրա-Մենիու-ի դէմ եւ կը նախատեսէր առաջին յաղթութիւնը, ասով ան կը թելադրէր իր հետեւորդներուն կուռիլ չարին դէմ, վատութեան դէմ, բռնութեան ու սճիրին դէմ, միշտ հաւաք ներշնչելով մարդոց որ բարիին ու արդարին վիճակուած է վերջնական յաղթանակը:

Զրազաշտի կրօնքը չկրցաւ յաւերժանալ, որովհետեւ հետադճեակ կեանքի բարդ պայմանները երեւան բերին արշաւանքի, կողոպուտի, աւարառութեան դաշտին վրայ իրարու կոկորդը պատող բռնապետներ, որոնց համար այդ կրօնքը դարձաւ վտանգաւոր: Եւ զրազաշտականութիւնը, զիդուած ապականութեանց մէջ կարենալ ապրելու համար, ինքն ալ ապականուելու էր:

Բայց ի՞նչ կը սորվեցնէր Զրազաշտը:

Բոլոր պարսիկները ճշմարտութեան ու արդարութեան քաղաքացիներն ու զինուորներն են: Անոնք պէտք է ապրին, պէտք է կուռին ու մեռնին ճշմարտութեան ու արդարութեան յաղթանակին համար:

Ո՞վ ստեղծեց զիս: Որո՞ւ համար ծնած եմ:

Ինչութիւնը, կողոպուտը, անիրաւութիւնը կը ճնշեն զիս. զիս կատաղութեան զիրկը կը սանին:

Ուրիշ հովիւ չունիմ ես: Դուն ես իմ հովիւը, ով Ահուրա-Մազդա, ուրեմն պարգեւէ ինձի քու արօտախայրի օրհնութիւնը:

Ով մահկանացուներ, եթէ դուք հետեւիք Ահուրա-Մազդայի պատուիրանքներուն, օրհնութիւն եւ երջանկութիւն արդարացի մարդուն, եւ ցաւ ու պատիժ ստախօսներուն, այն ատեն կ'ընդունիք անդեղէն կեանքը:

Զրազաշտ հարցուց. «Ով իմ նիւթական աշխարհի արարիչը, ո՞ր է այն տեղը ուր երկիրը ամէնէն աւելի երջանիկ կը զգայ»: Եւ Ահուրա-Մազդա պատասխանեց. «Այն տեղն է ուր հաւատաւոր մարդը իր զլիւին վերեւ խարազան բռնող մը չունի եւ իր քայլերը ապաստիւն չէ պիտ առաջ կը նետէ»:

«Ո՞վ իմ նիւթական աշխարհի արարիչը, ո՞րն է այն երկրորդ տեղը ուր երկիրը ամէնէն աւելի երջանիկ կը զգայ»:

«Այն տեղն է ուր հաւատաւոր մարդը տուն մը կը չինէ, ուր կը պահէ իր քահանան, իր արջառը, իր կինը, իր դաւակները, ուր արջառները կը բազմանան, առաքինութիւնը կը ծաղկի, ճարակը



կը շատնայ, շունը կ'ուրախանայ, կինը կը հրճուի, գաւակները կը մեծնան ցնծութեամբ, կրակը չի մարիր ու կեանքի օրհնութիւնը կը ժպտի միշտ»:

«Ով նիւթական աշխարհի արարիչը, ո՞րն է այն երբորդ տեղը ուր երկիրը ամէնէն աւելի երջանիկ կը զգայ»:

«Այն տեղն է ուր հաւատաւորը ամէնէն շատ եղիպտացորեն կ'աճեցնէ, խոտը կը չորցնէ կենդանիներուն համար, պտուղ ու արմտիք կը հասցնէ ընտանիքին համար, տեղ մը ուր չոր գետինները սուստ ջուրով կը թրջուին եւ թաց գետիները որոշեալ ատենին կը ցամքին»:

«Ով նիւթական աշխարհի արարիչը, ո՞րն է այն չորբորդ տեղը ուր երկիրը ամէնէն աւելի երջանիկ կը զգայ»:

«Այն տեղն է ուր սշխարներն ու արջառները սուսնց հովիւի կ'արածին ու վայրի կենդանիներէն վախ չունին»:

«Ով նիւթական աշխարհի արարիչը, ո՞րն է այն առաջին երկիրը որ ամէնէն մեծ ցաւով կը ստուապի»:

«Այն տեղն է ուր դժոխքի դռներէն դուրս արագօրէն դուրս կը խոյանան եւ մարդիկ զանոնք ազատ կը թողուն»:

«Ով նիւթական աշխարհի արարիչը, ո՞րն է այն երկրորդ երկիրը որ ամէնէն մեծ ցաւով կը ստուապի»:

«Այն տեղն է, ուր հաւատաւորի կինն ու գաւակները կը քշուին գերութեան ճամբան որ չոր է ու փոշոտ, եւ հոնկէ կը բարձրանան անոնց ողբալի ձայները»:

«Ահա ձեր թագաւորը, որմէ վախնալով մարդիկ չեն կրնար անոր ըսել. «Դուն անարգար ես»:

«Ահա ձեր հարուստները որոնք թիկնապահներով շրջապատւած մարդիկ չեն կրնար անոնց մօտենալ ու ըսել. «Դուք աղակաւում էք»:

Ո՛հ Մաղդա, քուկը է թագաւորութիւնը, որովհետեւ դուն ես որ քու բարձրագոյն օրհնութիւնները կը շնորհես արդարակոբով չքաւորին»:

ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Երբ Նարոնխոսի թշնամիները, Բարելոնի նախանձոտ կրօնականները որոնք կը հսկէին շուրի ճամբաներուն, բացին Բարելոնի դռները յաղթական Կիւրոսի բանակներուն առջեւ եւ թոյլատրեցին որ թագաւորութեանց տիրուհին իյնայ անոր ձեռքերուն մէջ, անոնք մէկ միաստուածութիւնը փոխեցին միւսին հետ: Ստոյգ է որ Կիւրոս Բարելոնի կրօնաւորներուն մեծ շնորհ ըրաւ: Ան իր

յաղթանակը յայտարարելէն յետոյ յայտարարեց նաեւ որ ինք Բել-Մարտուքի ընտրեալ որդին էր, որ ինք կը ստանձնէր Բարելոնի թագաւորի տիտղոսը, բոլոր երկիրներու թագաւորի տիտղոսը:

Բայց ի՞նչպէս այս բանը կարելի էր հաշտեցնել Զրադաշտի խոտապահանջ միաստուածութեան հետ: Կիւրոս գժուարութիւն չքաշեց ճանշնալու միւս աստուածները, որովհետեւ անոնք իրեն համար ստորակարգեալ աստուածներ էին, Ահուրա-Մազդայի ծառաները, անոր օգնականները: Բայց միւս ազգային կամ քաղաքացիական աստուածները, որոնք զրկուած էին իրենց պետական կապերէն, հարկադրուած էին դիմել անհատներուն: Անոնց գործն էր խոտանալ ոչ քաղաքական յաջողութիւն, ոչ ալ հասարակութեան բարօրութիւն, այլ միայն անհատներու բարգաւաճութիւն: Այսպիսով ժողովրդական աստուածութիւնները սկսան աճել զարձեւալ Ահուրա-Մազդայի շքեղ կամարին տակ:

Կայսերական կազմակերպութեան հիմնական ստաղծները պատրաստելու գործը պէտք է ըսել թէ կը պատկանի ուղղակի Կիւրոսին: Անոր յաջորդները ամբողջացուցին իմպերիալիզմի շէնքը: Այս կազմակերպութիւնը ծրագրուած էր զրուելու խոշոր, ազատ զինեցու վրայ, ուր չկար անարդ կամ երկչոտ բան մը: Պարսիկներուն համար ինքնաշարժ ճշմարտութիւն էր որ Ահուրա-Մազդա մեծ աստուածը միւս աստուածներուն իշխանութիւն տուած էր կառավարելու միւս երկիրները իրենց յատուկ լեզուով: Եւ այդ աստուածները, իրենց կարգին, երդուած էին կատարել Ահուրա-Մազդայի օրհնքները, իրենց յանձնուած երկիրները պահելով խաղաղութեան, արդարութեան ու բարօրութեան մէջ:

Պարսիկները հպատակ ցեղերու հետ իրենց վարուեցողութիւնը յարմարեցրեցին Ահուրա-Մազդայի պատուիրանքներուն, այն մեծ ու բարի աստուծոյն որ լաւ կը վերաբերուէր ստորակարգեալ աստուածութեանց հետ: Որպէս հակապատկեր իրենցմէ առաջ եկող աշխարհակալ ստորեւտանցիներուն եւ իրենցմէ վերջ եկող հոովմէացիներուն, պարսիկները իրենց պատերազմները կը մղէին ասպետական ուղիով: Պարտեալ թագաւորները կը յարգէին, կը պատուէին, իսկ թշնամի քաղաքները կը խնայէին, չէին հրդեհեր, չէին աւերեր, բացի այն պարագայէն երբ անոնք կը դիմէին սպասամբութեան: Պարտուած ազգութիւնները մեծ թագաւորին ծառայութեան կը կանչուէին եւ անոնց հոգեբը չէին զբաւուեր: Ամբողջ կայսրութեան բնակչութիւնը նոյն ձեւով կապուած էր գինուորական ծառայութեան: Եղիպտացիներու, լուսիացիներու, հրեաներու եւ յոյներու զօրքերը կողք կողքի կը կենային բնիկ



պարսիկներու հետ: Յեղային զանազանութիւնը սկսաւ տակաւ անհետանալ եւ գետին պատրաստուեցաւ բոլոր իրանցիներով մէկ ազգութիւն կազմելու ծրագրի իրագործումին, թէև այլ ազգութեան մէջ առանձնաշնորհում վայելողը կ'ըլլար բնիկ պարսիկը, մասնաւորապէս Կիւրոսի սերունդը:

Կամպոյտիս, Կիւրոսի յաջորդը, Եղիպատսի մէջ իր վրայ առաւ փարաւոնի տիրադոսը, եղիպոացիները դրութեան հետ հաշտեցնելու համար: Եղիպատական հին պետութիւնը անաղարտ պահած ըլլալու դիտումով, Գարեհ աւելի առաջ գնաց, ամէն կերպով քաջաբերեց եղիպատական կրօնականները, շինեց տաճարներ եւ նոր օրէնքներ դրաւ հին կարգուտարբեր վերակենդանացնելու եւ թարմացնելու համար: Բայց այդ քաղաքականութեամբ ան իր նպատակին չհասաւ, որովհետև 486 թուին Եղիպատս ապստամբեցաւ եւ ինք այդ ապստամբութիւնը չկրցաւ զսպել: Քառասուն տարի յետոյ Քսերքսէս եկաւ եւ հանդարտեցուց եղիպոացիները:

Այդ յեղափոխութենէն անմիջապէս յետոյ պարսիկ թագաւորը բարեկական թագաւորի տիրոջոսէն ալ հրաժարեցաւ եւ Բաբելոնէն տեղափոխեց Բել-Մարտուքի արձանը, մտածելով որ այդպիսով կրնար կանխարգելել բաբելոնացիներու հաւանական ապստամբութիւնը: Բայց անոր այդ փորձը ձախողեցաւ: Թագաւորը վերջ ի վերջոյ համոզուեցաւ որ ինք Ահուրա-Մազդայի հաւատաւոր մը ըլլալով չէր կրնար սիրաշահիլ միւս երկիրներու աստուածները, ուստի խոհեմութիւն սկսեց պարսիկներու աստուածոյն մեծութիւնն ու վեհափառութիւնը պահել միայն Պարսկաստանի մէջ:

Գարեհի օրով, առաջին անգամ ըլլալով մասնաւոր ծրագրով ձեռնարկուեցաւ հանրային գործերու շինութեան կայսերական բոլոր երկիրներուն մէջ: Գարեհ իր պատերազմները կը մղէր միմիայն իր կայսրութեան սահմանները պաշտպանելու համար: Գաւառներու կազմակերպութիւնը յանձնած էր աղջմիտ պաշտօնեաներու, որոնք գիտէին ժողովուրդին հետ լաւ վերաբերուիլ: Ան հրապարակ հանեց դարեհեան ոսկեղրամը եւ եռանդագին աշխատեցաւ կայսրութեան վաճառականութիւնը զարգացնելու:

Երկրախուզական խումբեր զրկեց Քիպէրի կիրճէն Հնդկաստանի մէջ, մինչև Ինդոս գետը ու անկէ մինչև Հնդկաց ովկիանոս: Զրանցք մը փորուեցաւ Նեղոս գետէն մինչև Սուէզ: Վիճակը թուրքները ցոյց կուտան որ Գարեհի նաւերը Նեղոսէն կ'անցնէին մինչև Կարմիր Ծովը եւ անկէ Պարսկաստան, մինչ Ինդոս գետէն վար նաւախումբերը Հնդկաստանի ձեռագործական արտադրութիւնները կը բերէին մեծ թագաւորին շուկաները: Դեսպաններ փոխա-

նակուեցան Կարեհոնի առեւտրական մեծ ազդին հետ որ կը հսկէր Միջերկրականի առուտորին: Երկրախուզական աշխատանք կատարուեցաւ նոյնիսկ դէպի Սիկիլիոյ եւ Իտալիայի ծովերը:

Սիկիլիայէն մինչև Ինդոս մեծ թագաւորին իշխանութիւնը զգալի եղած էր: Այդ ընդարձակածաւալ երկրամասին մէջ գլուխ հանուեցան նոյնպէս էմթիմէրական գործեր: Հերատի մէջ Գարեհ հաստատեց հսկայ ջրամբար մը ոռոգելու եւ մշակելու մեծ անապատի եղերքի տափաստանը:

Այսպիսի մարդոցմով արիական ցեղը սկսաւ իր կայսերական արշաւը: Գարեհ կայսրութիւնը բաժնեց քսան սատրապութեանց, որոնց իւրաքանչիւրին գլուխը կեցած էր սատրապ մը, երկրի պահապան մը: Անոր գործն էր սուրբեր հաւաքել եւ հսկել օրինական գործողութեանց: Ան պատասխանատու էր ճամբաներու եւ սեփականատիրութեան պահպանումին եւ վերահսկիչն էր ստորակարգեալ պաշտօնէութեան:

Գարեհ հաստատեց եւ լաւապէս կազմակերպեց սուրհանդակի զրութիւնը որ կայսրութեան երկիրները կոպեց իրարու հետ:

Հերոզոտոս հետեւեալ բառերով կը նկարագրէ Գարեհի թողթատարական սխալները. «Թագաւորական կայսրաններ հաստատած էին ճամբաներու երկայնքին. կային նաեւ սքանչելի պանդոկներ, նոյնիսկ անմարդարնակ վայրերու մէջ, ուր մարդիկ կրնային կենալ ու հանդչիլ իրենց ճամբորդութեան ատեն: Ոչ մէկ վտանգ կը սպառնար ճամբորդին: Ոչ մէկ մահկանացու կրնար այնքան արագ ճամբորդել որքան պարսիկ սուրհանդակները: Կազմակերպուած սխալմը ամբողջապէս պարսիկ հնարագիտութեան արդիւնքն էր: Բոյր ճամբաներու երկայնքին որոշ կայսրաններ հաստատուած էին ուր մարդիկ իրենց ձիերով կը սպասէին: Սուրհանդակը իր ձիով մէկ օրուան մէջ հասնելու էր միւս կայսրանը: Անկէ նոր սուրհանդակ մը իր ձիով անմիջապէս ճամբայ կ'ելլէր, հող չէր թէ ձիւն էր կամ անձրեւ, ցուրտ էր օդը կամ տաք, գիշեր էր կամ ցերեկ: Ան ճամբորդելու էր եւ յանձնարարութիւնը հասցնելու էր միւս կայսրանը, եւ այդպէս յաջորդաբար: Պարսիկները այս ձիովարելու կայսրանները կը կոչէին «անկարուս»:

ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Պարսկական կայսրութեան երկիրներու ընդարձակութեան մէջ յազթական լեռնականներու նախնական սարդ կենցաղը տակաւ սկսաւ փոխուիլ: Փոխուեցան նաեւ անոնց գովելի սովորութիւնները:



բը: Երբ անոնք առաջին անգամ արեւելեան լեռներէն վար իջան, Հերոզոտոս անոնց մասին կը գրէ. «Պերսիս մարդիկը (պարսիկները) կաշիէ հագուստ կը հագնէին: Անոնք կ'ուտէին ոչ թէ այն ինչ որ կը սիրէին, այլ այն ինչ որ կը գտնէին իրենց կոշտ երկրէն: Անոնք զինի տեղ ջուր կը խմէին, եւ նոյնիսկ ազանդերի համար թուզ կամ ուրիշ քաղցր բան չէին գտներ»:

Այս առթիւ Հերոզոտոս հետեւեալ մանրամասնութիւնները կը պատմէ. «Երբ սպարապետները ազդարարեցին Կիւրոսի գէշ չափաբերութիւն եւ չճշել աստիական յոյները, Կիւրոս հարցուց իր մօտ կեցող յոյներուն թէ ովքե՞ր էին այդ լակեղեմոնացիները եւ ի՞նչ է անոնց թիւը որ կը համարձակին իրեն այգուխի ազդարարութիւն ընել: Երբ իրեն պատասխան տրուեցաւ, ինք դառնալով սպարապետներուն ըսաւ. «Ես բնաւ չեմ վախճար այս մարդոցմէն որոնք իրենց քաղաքին մէջ տեղ մը շինեալ են շուկայ անուամբ ուր կը հաւաքուին ու դիրար կը խաբեն, եւ խարելու այդ գործը զլուխ հանելու համար սուտ երգում կ'ընեն: Եթէ ես ապրիմ, սպարապետները շատ նեղութեան պիտի ենթարկուին իրենց խօսքերուն հետեւանքով»: Կիւրոս այդ սուր նկատողութիւնը ըրած է եւ յայտնած իր զգուշացումը հանդէպ յոյներուն, պարզ անոր համար որ յոյները առեւտուրի շուկաներ ունէին ուր կ'ընէին իրենց վաճառումներն ու գնումները, մինչդեռ պարսիկներուն համար այդ բանը անձանօթ էր: Պարսիկները իրենց ամբողջ երկրին մէջ մէկ հատ առուծախի շուկայ չունէին»:

Բայց երբ Հնդկաստանէն Լիւտիա եւ Եգիպտոսէն Բաբելոն հարուստ եւ ազատ առեւտրական յարաբերութիւնները կանոնաւոր ընթացք առին, երբ գրամական ընդհանուր շրջաբերութեան սխառտէմ մը հաստատուեցաւ, երբ կայսերական արքունիքը շրջապատեցաւ հարստութեամբ ու պերճանքով, եւ երբ ամբողջ կայսրութիւնը երկու հարիւր տարուայ ընթացքին կրցաւ ապահովել առատութեան ու բարգաւաճման ապագայ մը, այդ ստեն ժողովուրդին խառնուածքն ալ փոխուեցաւ: Տարուած յազթանակներն ու աւարաութիւնները յառաջացուցին տիրող դասակարգ մը որուն միակ նպատակն էր ոչ թէ Զրադաշտի ճշմարտութիւնն ու արդարութիւնը, այլ շահագործումը, հարստութեան կուտակումը, կեանքի վայելքը: Քաղաքակրթութեան ապականող ազդեցութիւնը եւ աշխարհին տիրապետելու ցանկութիւնը հիմնապէս ազդեցին իշխող ցեղի նկարագրին վրայ: Շահն շահը, թագաւորաց թագաւորը, բարերոնական մեկուսացման մէջ փարաւոնական աստուածութիւնը հազած, ստեղծեց արեւելեան կայսերական ընտանիք մը: Շահը ու-

նեցաւ իր կանանոցը եւ հոն գրաւ իր ներքինիները: Փարթամութեան, պերճանքի սէրը եկաւ աւելցնել պետական ծախսերը: Արքունիքի շքեղութիւնները որքան աւելցան, նոյնքան դանդաղեցաւ յառաջգիժութիւնը: Անկեղծ ու եռանդուն մարդիկ, անձնատուր իշխանական տենջանքի, մտոցան իրենց հայրենասիրութիւնն ու թագաւորին հանդէպ ունեցած իրենց պարտաւորութիւնը: Սատրապները հետեւեցան ոճրագործութեան: Դաւաղրութիւն արքունիքին մէջ, արքունիքէն դուրս: Ամէն ոք որ կ'ուզէր բարձր պաշտօնի հասնել, կը ծրագրէր սպաննել իր մեծաւորը: Ճարպիկը կը յաճոգէր, անձարակը կախաղան կը բարձրանար: Վատասկուումը ամբողջապէս արմատացեր է թագաւորական պալատին մէջ: Բարեսիրտ վհահասակները ինկած էին փառասէր եւ արիւնածարաւ կիներու եւ ներքինիներու հսկողութեան տակ:

Կիւրոսէն յետոյ, հարիւր յիսուն տարուայ շրջանին, պարսկական կայսրութիւնը տակաւ այնքան տկարացաւ որ Քսենոֆոնի օրով Փոքր Ասիոյ մէջ տասը հազար յոյներ ապստամբեցան թագաւորին դէմ եւ շահը շատ մեծ դժուարութեամբ կրցաւ զսպել ապստամբութիւնը: Պարսկաստանի արեւմտեան մասին մէջ յոնիական յոյները հիմնած էին մի քանի քաղաքներ որոնց վիտաւոր մէկ քաղաքն էր Մայլոտուր: Այդ կողմի յոյները ապստամբեցան շահին դէմ: Աթէնք ուղեց օդնել յոյներուն: Վճռական ճակատամարտը տեղի ունեցաւ Մայլոտուի մօտ: Յոյները անտարակոյս կը յաղթէին եթէ մատնութիւնն ու դաւաճանութիւնը չօգնէին պարսիկներուն: Չորս տարուայ պաշարումէ վերջ պարսիկները գրաւեցին Մայլոտու քաղաքը, աւերեցին ամէն ինչ ու բնակիչները գերի տարին: Այդ քաղաքին սնկումը աթենացիներուն սիրտը լեցուց ցաւով ու սարսափով: Ֆրինկոս Աթենացին ողբերգութիւն մը պատրաստեց «Մայլոտուի Անկումը» անունով: Պիէսը երբ ներկայացուեցաւ, հանդիսականները սկսան արտասուել: Աթէնացիք այդ բանաստեղծը հազար արախմա տուլանքի դատապարտեցին եւ որոշեցին որ ապագային այդ ողբերգութիւնը ունէ ատեն չբեմադրուի:

ՄԱՐԱԹՈՆ

Այդ եզերական դէպքէն տասնեւհինգ տարի վերջ, քառասուն վեց ազգեր որոնք կազմեր էին պարսկական կայսրութիւնը, իրենց զինուորական ուժերը միացուցին Յունաստանի: Բարբարոսներու սոսկական պայքարը չէր որ յոյները կը տանէին իրենց ազատութեան ու պաշտպանութեան համար: Պարսիկներու քաղաքակր-



թուփիւնը հիմնապէս կը տարբերէր յոյներու քաղաքակրթութենէն: Յոյներու կեանքը կապուած էր անհատական ազատութեան հետ, ըլլար ան քաղաքական, ընկերային կամ կրօնական ազատութիւն: Մինչդեռ ասիական ազգերու, ի մասնաւորի պարսիկներու կեանքը կախուած էր իշխանութեան բացարձակ հնազանդութենէն: Յոյները աւելի քաջ չէին քան պարսիկները, բայց անոնց ազատութեան սէրը անոնց կուտար անսահման կորով, եւ անոնց իմացական կարողութիւնը անոնց կը հայթայթէր գերադանց դէնքեր, ռազմադիմադրութիւն եւ կազմակերպուածութիւն: Եւ սակայն այդ քառասուն եւ վեց ազգերը որոնք ստուերի պէս կը հետեւէին մեծ թագաւորին, առանձին առանձին եւ կամ բոլորը միասին սիրա չէին ընել ճակատի պարսկական բանակին, մինչեւ Մարաթոնի օրը: Հիւսիսային հնգիկները, ասորեստանցիները, սուրիացիները, բաբելոնացիները, քաղկէացիները, բապտրիացիները, փիւնիկեցիները, Պաղեստինի ազգերը, հայերը, լիւդիացիները, փիւրիկիացիները, պատիանցիները, մեդիացիները բոլորը կը հնազանդէին պարսիկ թագաւորին: Եզդպատս եւ Կիրենա պարսկական նահանգներ էին զարձեր: Փոքր Ասիոյ յոյն գաղութները եւ Եգէական կղզիները Դարեհի հպատակ երկիրներ էին: Ասոնցմէ ունէ մէկը եթէ պարսկական լուծը փշրելու փորձ ընէր, այդ լուծը աւելի կը ծանրանար: Թրակիա եւ Մակեդոնիա նոյնպէս կը պատկանէին մեծ թագաւորին, միայն թէ այս վերջինները յարմար առիթ կը փնտռէին իրենց զօրքերով պարզել, յանուն ազատութեան, ազատամբութեան գրօշակը:

Միլտիատէս յոյներու հրամանատարը Սեպտեմբերի մէջ օր մը (490 Ն. Ք.) անցաւ յարձակողականի: Հերոդոտոս կ'ըսէ որ «երբ պարսիկները տեսան որ մի խումբ յոյներ իրենց վրայ կը յարձակին, անոնք խորհեցան թէ խելագարներ էին որ կը դիմէին ստոյգ մահուան: Բայց այդ խելագարները ջախջախիչ հարուած մը տուին պարսկական բանակին, որուն նմանը տեսնուած չէր»:

Մարաթոնի այդ ճակատամարտին մէջ ամօթալի պարտութեան մասնուեցաւ անպարտելի պարսիկը:

Մեծ թագաւորին կատաղութիւնը չափ ու սահման չուէր: Ամբողջ տասը տարի ան պատրաստուեցաւ նոր յարձակողականի մը իր վրէժը առնելու համար: Հերոդոտոս Քսերքսեսի բանակին թիւը կը հաշուէ մէկ միլիոն: Անշուշտ ասիկա չափազանցեալ թիւ կարելի է նկատել, որովհետեւ ԲոցՓորտ պատմական փաստերով կը հաստատէ որ Քսերքսեսի բանակը կը բաղկանար 300 հազար զինուորներէ: Նոյն ատեն ան ծովային յարձակման համար պատրաստ

էր հազար երկու հարիւր պատերազմական նաւեր որոնց նաւաստիներն էին յոյներ, փիւնիկեցիներ եւ կարթագիթացիներ, վարձկաններու մի բանակ:

Քսերքսես 480 թուի (Ն. Ք.) դարնան իր հսկայ բանակով քաղեց կեղերոնական Յունաստանի վրայ: Լէոնիտաս թագաւորը երեք հարիւր զինուած սպարապետներով եւ մի քանի հազար դաշնակիցներով պաշտպանեց Թերմոպիլէի կիրճը: Պարսիկ զինուորները արհամարհելով իրենց դէմ կեցող սակաւաթիւ կուռղները անցան յարձակողականի: Լէոնիտաս եւ իր մարդիկը ճակատած էին ստոյգ մահուան: Սպարտայի օրէնքը կ'արգիլէր որ զինուորը նահանջէր թշնամիին առջև:

Պարսից բանակը մասնուեցաւ խուճապի: Միւս կողմէ Սպարտիս ծոցին մէջ Քսերքսեսի հսկայ նաւաբաժինը ջախջախիչ հարուած կրեց:

Քսերքսես ամօթահար նահանջեց: Մարաթոն, Թերմոպիլէ, Սալամիս: Այս երեք անունները արձագանգեցին դարերով մարդոց յիշողութեան մէջ: Աշխարհի ծանրութեան կեղերոնը մէկ անգամէն փոխադրուած էր գետերու հովիտէն ծովու կրճքին վրայ: Քսերքսեսի պարտութիւնը պարսկական կայսրութեան անկունադարձը եղաւ ուրիշ սկսաւ Եւրոպայի պատմութիւնը:

Յունական գերակայութիւնը յայտարարուած էր այնքան ուժգին թմբկահարութեամբ որ պարսիկները այլեւս երկար տանն վրիժառութեան փորձ չըրին:

Բայց Պարսկաստան բոլորովին անդամալոյժ չէր եղած: Սալամիսի պարտութենէն իննսուն տարի յետոյ դարձեալ մեծ թագաւորին կամքը տիրապետող եղաւ Յունաստանի վրայ, եւ այդ ոչ թէ անոր համար որ պարսիկները ուժեղացեր էին, այլ անոր համար որ Յունաստանի մէջ դատակարգային հակամարտութիւնները քայքայել էին յոյներու բարոյական ուժը: Յունաստանի գերիները, զրկուածները, իրաւագուրիներն ու շահագործուող մասսաները զիտէին որ իրենք որպէս ընչազուրկ պարտաւոր չէին արեան գնով պաշտպանելու երկիր մը որ իրենց չէր պատկաներ:

Բայց Պարսկաստանի մէջ դատակարգ չկա՞ր միթէ: Անշուշտ կար: Նեխածութիւնը այնպէս եւս բոյն գրած ու տարածուած էր: Միակ տարբերութիւնը այն էր որ պարսիկները, իրենց հին փառքը վերստանալու երազովը զինուղյամ, իրենց աչքերը չէին ուղղեր ներքին թշնամույն դէմ:

Պարսկաստան այնքան խեղճուկ էր որ սախլուած էր դիմել



յոյն զէնքերուն, յոյն դանկերուն եւ յոյն քաղաքականութեան, իր կայսերական շահերը պաշտպանելու համար: Եւ յոյները, պարսիկներու դէմ առելութիւն սնուցանելով հանդերձ, յօժարակամ անոնց նուիրեցին իրենց ծառայութիւնը:

Յունաստան պէտք ունէր միութեան մը որպէսզի միանգամընդամիշտ պատուէր պարսկական իշխանութենէն եւ ստանձնէր առաջնորդողի դերը:

Եւ ահա հրապարակ իջաւ Աղեքսանդր Մակեդոնացին: Բայց Աղեքսանդր Մակեդոնացին ալ այդ միութիւնը չկրցաւ իրականացնել: Ան շատ երկիրներ գրաւեց, յաղթեց Պարսկաստանի, սակայն իր յաղթութեան մէջ պարտուեցաւ: Ան ինքզինքը ստատուած յայտարարեց եւ եղաւ Յունաստանի բոլոր քաղաքներուն աստուածը: Տասնեւհինգ հազար յոյն եւ մակեդոնացի զինուորներ հրովարտակով ամուսնացան պարսիկ կիներու հետ: Յոյն զեմօկրասին եղաւ պարսկական կայսրութիւն: Աստուածային թագաւորութեան թէքորիան որ ծագում առած էր Բաբելոնի եւ Եգիպտոսի մէջ Աղեքսանդրի ձեռքով տեղափոխուեցաւ Եւրոպա:

Պարսկաստան յաղթեց ու պարտուեցաւ, պարտուեցաւ ու յաղթեց: Իր կեանքը եղաւ մակընթացութեանց ու տեղատուութեանց շրջանառութիւն մը:

Եւ ահա արարական արշաւանքը:  
Զրադաշտը մեռաւ ու անոր յաջորդեց Մուհամէտը:

ՎԵՐԱԶԱՐԹՆՈՒՄ ԹԷ ՎԱՏԱՍԵՐՈՒՄ

Խալիֆայ Օմարի հրամանով Արարիոյ անապատներէն խուժող հրոսակները Ղազխիէի տաջիւ խորատակեցին պարսկական ուժերը եւ յառաջանալով տիրացան Տիգրոն մայրաքաղաքին (637 Յ. Ք.)<sup>(\*)</sup>: Սա առաջին հուժկու հարուածն էր նորածագ իսլամի կողմէ որ հիմնադէս ցնցեց սասանեան կայսրութիւնը: Քանի մը տարի յետոյ Նեհափենդի վճռական ահեղ ճակատամարտին (642) Յազկերտ Գ.ի բանակները չարաչար պարտուեցան եւ արքայից արքան փախուստ տուաւ իր երկրի արեւելեան սահմանները, ուր սպա Մերվի մօտ ինկաւ մարդասպանի մը ձեռքով (651): Իր անփառունակ մահով վերջ կը գտնէր Արտաշէր Ստահրացիի հիմնած հարբսութիւնը աւելի քան 400 տարուան փառաւոր շրջանէ մը ետք:

(\*) Միիրգատ Թիքեաբեանի «Շահնամէ»ի յառաջաբանէն արտագրուած:

յաղթական արարները կարճ ժամանակուան մէջ նուաճեցին ամբողջ Պարսկաստանը առանց լուրջ դիմադրութեան հանդիպելու: Անոնք զրադաշտականութիւնը խափանելու մասնաւոր ջանքեր չըրին թէեւ, սակայն կրօնական ազատութեան փոխարէն մազդէականութեան հետեւորդները պարտաւոր էին գլխահարկ վճարել իրենց նոր տէրերուն: Ժողովուրդին մեծ մասը հարկահաւաքներու անտանելի կեղեքումներէն ճողոպրելու համար տակաւ ընդունեց մահմեականութիւնը: Մաս մըն ալ յօժարակամ փարեցաւ իսլամին, գերազատելով զայն Զրադաշտի կրօնէն:

Զարմանալի չէ, ուրեմն, որ Մուհամէտի կրօնը այսպէս կամ այնպէս արագօրէն տարածուեցաւ Պարսկաստանի ամէն կողմը, մանաւանդ արեւմտեան նահանգներուն մէջ, աւելի մօտ ըլլալով բնիկ արարական հողամասերուն: Պարսկաստան, կորսնցնելով իր դարաւոր քաղաքական անկախութիւնը, ենթարկուեցաւ խալիֆայական իշխանութեան որուն կեդրոնն էր Մեզինէ քաղաքը չորս ուղղափառ կոչուած խալիֆաներու օրով, որոնք են Աբու Բեքիր, Օմար, Օսման եւ Ալի (632-661):

Ասոնց յաջորդեցին օմայեան խալիֆաները որոնք կը նրստէին Դամասկոս: Արարական կայսերականութեան շրջանն է այս որուն միջոցին խալիֆաներու ազդեցութիւնը կ'ընդարձակուի եւ կը զօրանայ ամիրապետութեան ամբողջ տարածութեան վրայ: Դամասկոսի խալիֆաներու շրջանը տեւած է 661-էն 750 թուականը:

Խալիֆայութեան երրորդ ու վերջին շրջանն է Աբբասեանը (750-1258) որ կը յաջորդէ նախորդին, մայրաքաղաք ունենալով Նորակերտ Պաղատաւը: Ասոր անկումով ձէնկիկ Խանի թոռան մոնկոլ Հուլազու-Խանի դազանաբարոյ հորդաներուն անինայ հարուածներուն տակ, խալիֆաներու տիրապետութիւնը ի սպառ կը զաղրի 600 տարիներու տեւողութենէ վերջ:

Աբբասեաններուն իշխանութեան հասնելուն հզօրապէս ստարեցին Խորասանի պարսիկները Աբու Մոսլիմի առաջնորդութեամբ, որոնց սուրին շնորհիւ տարուեցաւ յաղթութիւնը օմայեան բանակներուն վրայ: Իրր հետեւանք պարսկական օժանդակութեան, պարսից զիւրքն ու ազդեցութիւնը զգալի կերպով բարձրացաւ արբասեաններու արքունիքին մէջ: Իբանեան բնատուր ձիրքերը կը փայլէին ամէն մարդի մէջ, ըլլայ վարչական, ըլլայ զրահան եւ կամ գիտական, ու ինչ որ արարական մշակոյթ կը կոչուի սովորաբար որ իր կատարելութեան հասաւ Հարուն-էլ-Ռաշիդի եւ իր որդւոյն Ալ-Մամունի օրով (786-833), մեծ չափով պարսկական



էր իրապէս: Ըստ այսմ, թէև քաղաքականապէս Պարսկաստան զարձեւ էր հպատակ երկիր մը Պաղտաստի գերիշխանութեան ներքեւ, սակայն բնիկ ժողովուրդին մտաւոր գերազանցութիւնը շուտով տիրապետող հանդիսացաւ ամենուրեք:

Արաբական նուաճումով Պարսկաստան զաղբեցաւ քաղաքական ամբողջութիւն մը կազմելէ: Երկրին գանազան բաժիններուն վրայ կեդրոնէն կը նշանակուէին կառավարիչներ, որոնց պաշտօնն էր գլխաւորաբար սուրբերը գանձել եւ ի հարկին ապստամբութիւնները զսպել, իսկ ներքին խնդիրներուն կարգադրութիւնը ձգուած էր տեղական իշխանութեանց:

Թ. զարու վերջերը խալիֆայութիւնը սկսած էր տկարանալ ու կեդրոնական կառավարութիւնը անկարող կը գտնար իր հեղինակութիւնը յարգել տալու պետութեան հետաւոր վայրերը, մանաւանդ արեւելեան նահանգներուն մէջ: Պարսիկ ժողովուրդը, թէև գրեթէ բոլորովին խլամացած, արարներուն կը նայէր որպէս օտար բռնակալներու որոնց լուծին տակ կը հեծէր: Ազդային անկախութեան ոչին հետզհետէ կ'արթնար եւ արդէն իսկ տեղ տեղ կորովի անձնաւորութիւններ գլուխ կը բարձրացնէին ընդդէմ ամիրայական իշխանութեան: Այսպէս, 872 թուին Սիստանի մէջ ապստամբութեան զրօշը կը սարգէր Եաղուբ Բին-Էէյս անունով յանդուզն պղնձագործ մը (սաֆֆար), որ իր զօրութիւնը Պարսկաստանի մեծ մասին վրայ տարածելէ յետոյ հասաւ մինչև Պաղտաստի պատերուն տակ ուր քախեցաւ խալիֆային ուժերուն (875): Եաղուբին հիմնած տունը որ «Սաֆֆարի» կոչումով անցած է պատմութեան, առաջին պարսիկ կիսանկախ իշխանութիւնն է յետ մահմետական շրջանի, եթէ չհաշուենք Թահերիները որոնք Խորասանի մէջ մասնաւոր ազդեցութիւն ձեռք բերած էին 820-872 թուականներուն, շնորհիւ Ալ-Մամունի մինչև սաֆֆարիներուն երևումը:

Նոյն տեսները Մաման, իսլամացած պարսիկ ազնուական մը որ սասանեան արքայական տոհմէն սիրած կը համարուէր, սամանեան նշանաւոր հարստութեան հիմը կը դնէր Բոխարայի մէջ որ 125 տարի գոյութիւն ունեցաւ (874-999): Այդ գուտ պարսիկ իշխանական տան յաջորդները քանի մը տարի ետք յարձակեցան սաֆֆարիներուն վրայ եւ խլեցին անոնց հաստատած ընդարձակ պետութիւնը որուն ամէնէն կարեւոր մասը կը կազմէր Խորասանը: Մամանեանք իրենց ազդային նկարագրով ու ձգտումներով մեծ դեր ունեցան Պարսկաստանի ազատագրութեան պայքարին մէջ: Ի վերջոյ, սակայն, անոնք ալ իրենց կարգին պիտի տապալուէին

զազնեմիներու զօրութեան առջև ու զաղբէին իշխանութենէ:

Այդ նոր պետութեան հիմնադիրն էր Ալիտիլին անուն սամանեաններուն պատկանող թուրք զերի մը, որ 962-ին Աֆղանիստանի լեռներուն խորը ինկած Ղազնէ քաղաքին մէջ զօրութիւն ձեռք բերաւ: Տասնեւչորս տարի յետոյ միայն ապստամբական այդ շարժումը քաղաքական կարեւորութիւն ստացաւ յիշեալին ստրուկին, Սոփոկտիլինի իշխանութեան գլուխ անցնելովը: Ասոր որդին եւ յաջորդն էր Սուլթան Մահմուդը (998) որուն արքունիքին լուսաշող աստղը հանդիսացաւ Ֆերղուսին:

Շնորհիւ իր զինուորական անվիճելի տաղանդին եւ վարչական կարողութեան, Մահմուդ հետզհետէ ընդարձակեց իր պետութեան նեղ սահմանները եւ պարտութեան մատնելով սամանեան իրոխտ տունը նուաճեց ամբողջ Խորասանը, Բոխարան, Սիստանը, Աֆղանիստանը, Տարարիստանը, ապա արչաւելով Հնդկաստան, գրաւեց այդ երկրին հիւսիս-արեւմտեան մեծագոյն մասը (1001-1024): Խալիֆայի վեհապետութիւնը լուծ անուանապէս ճանչնալով, Սուլթան Մահմուդ հզօր ինքնակալ էր իր կայսրութեան սահմաններուն մէջ:

Անոյն հարաւային եւ արեւմտեան Պարսկաստանի վրայ կ'իշխէր 945-էն ի վեր ուրիշ նշանաւոր պարսիկ գերդաստան մը, բուվայհիները, որոնց ազդեցութիւնը զղալի դարձած էր նոյնիսկ Պաղտաստի մէջ ուր ձեռք անցուցած էին պետական բարձրագոյն պաշտօնները:

Տասնեւէկերորդ զարուն սկիզբը, ուրեմն, Պարսկաստանը բաժնուած կը տեսնենք գլխաւորաբար երկու զօրաւոր իշխանական տուներու մէջ: Մէկ կողմը Ղազնեմի, միւս կողմը Բուվայհի, որոնց տիրապետութիւնն ալ սակայն շուտով վերջ պիտի դնէր Թուրքիստանի տախտամներէն խուժող Սելջուկեան Թուրքերուն յարձակումով 1037-ին:

Արչաւանքի ալիքներ շատ անգամ եկան ու անցան Պարսկաստանի վրայէն, բայց արաբական արչաւանքը բոլորովին տարբեր ազդեցութիւն եւ հետեւանք ունեցաւ: Միւս արչաւանքները յանկարծակի յորդած գետերու նման իրենց եզերքներու դաշտերն ու գիւղերը աւերեցին ու յետոյ քաշուեցան: Արաբական արչաւանքը, սակայն, իրեն հետ բերաւ երկրին բուսականութիւնը ոչընչացնող խիճեր ու քարեր, բայց նոյն տեսն տիղմ որ ծածկեց ամբողջ երկիրը, փոխեց այդ երկրին հողը եւ անոր տուաւ նոր տե-



սակի բոյսերու պարարտանիւթ: Այդ տիպը մահմետականութիւնըն էր:

Սխալ է կարծել թէ մահմետականութիւնը Պարսկաստանի մէջ բնութեան ուժով էր որ տարածուեցաւ ու արմատ բռնեց: Ճիշդ է որ բնութիւնը (գլխահարկ վճարելու սխալքը) որոշ դեր խաղաց այդ նոր կրօնի տարածման գործին մէջ, բայց ասիկէ աւելի զօրաւոր ազդակ մըն ալ կար որ նպաստեց մահմետականութեան տարածման: Մագդէական կրօնքը ծերացեր էր, ան այլեւս փոխւած պայմաններու հետեւանքով նորելուկ տիրող դասակարգի պահանջին գոհացում չէր տար: Երկրին մէջ երեւան եկած էին դասակարգեր: Հողատէր ազնուական դասակարգը որպէս իշխող դասակարգ իր գէժ ունէր ընչազուրկներու անհամար բազմութիւն մը: Զրագաշտի կրօնքը որ հիմնուած էր ճշմարտութեան ու արդարութեան վրայ, այդ իշխանական դասակարգին հակառակ էր իր յեղափոխական բնոյթով: Այդ դասակարգը պէտք ունէր կրօնի մը որ ժողովուրդին սորվեցնէր թէ աստուած ստեղծեր է հարուստը հարուստ, աղքատը աղքատ: Մէկը որ պէտք էր հրամայէր, միւսը՝ համակերպէր: Մէկը որ պէտք էր վայելէր, միւսը՝ դրուկուէր: Այդպէս եղած էր աստուածային կարգադրութիւնը: Իշխանը ընտրուած էր աստուծմէ: Ան կը ներկայացնէր աստուծոյ կամքը: Հպատակը, որպէս ստրուկ, պէտք էր կատարէր իշխանին հրամանները, պէտք էր պաշտպանէր իշխանին կեանքը, ինչքը, պատիւը, անոր երկիրն ու օրէնքները: Աստուած գործերու բաժանում բրած էր, զիբերու բաժանում, եւ ամէն ոք իր գործը պիտի ընէր անտարուծով: Դժգոհութիւնը աստուածային կարգադրութեանց գէժ մեղանշում էր ու յանցանք: Եւ ասա արարները բերին այդ կրօնքը, մահմետականութիւնը, որուն հիմնական վարդապետութիւնն էր ճակատագրականութիւնը: Աստուած իւրաքանչիւր մարդու ճակատին վրայ իր ծնած օրը գրած էր թէ ան ինչ պիտի ըլլար եւ ինչպէս պիտի ապրէր:

Երբ իշխող դասակարգին համար հաճելի էր այդ ճակատագրի վարդապետութիւնը, ապէս ժողովուրդին համար ալ անիկա անպիճելի էր: Ո՛ւր մնացեր էր յաղթական Կիրոսի Պարսկաստանը, ո՛ւր մնացեր էին Զրագաշտի նահապետական օրերը: Ամէն բան փոխուած, տակն ու վրայ եղած էր: Զրագաշտ բեր էր որ վերջնական յաղթութիւնը բարի աստուծոյն, Ահուրա-Մազդայի կը պատկանի: Բայց երկար դարերու ընթացքին կեանքը ապացուցեր էր որ այդպիսի աստուած մը գոյութիւն չունէր. եթէ այդ աստուածը պարսիկ թագաւորին միջոցով պիտի գործէր, ուրեմն թա-

գաւորը բարի ըլլալու էր, մինչդեռ այդ թագաւորը իր ժողովուրդին մասին չէր մտածեր: Ան հիմներ էր իր շքեղ պալատը, ունէր իր կանանոցը, կ'ապրէր անպատմելի ճոխութեան ու վայելքի մէջ: Անիկա պատերազմի առեն թշնամիին գէժ չէր ճակատեր: Ժողովուրդն էր որ կը կուռէր եւ ժողովուրդն էր որ արիւն կը թափէր: Եւ յետոյ, ուլքե՞ր էին որ կուզային կ'աւերէին Պարսկաստանը: Եւ յետոյ, ուլքե՞ր էին այս արարները որոնց առջեւ ծունկի եկած էին իրենց թագաւորը եւ անոր հետ բոլոր ազգերը: Ուրեմն, այդ արարներուն աստուածը իրական աստուածն էր: Զրագաշտի կրօնքը սուտ կրօնք էր, անոր աստուածը՝ երեւակայական: Եւ պարսիկ ժողովուրդը հեղահեղ իւրացուց ոչ թիւայն խոյսի կրօնը, այլեւ արարերէն լեզուն: Այնպէս որ արարական տիրապետութենէն երկու դար վերջ, Պարսկաստանի լեզուն, մասնաւորապէս գրական լեզուն, գրեթէ արարերէն էր:

Պարսկաստանի վրայ արարական տիրապետութիւնը իր բացասական կողմերէն զատ ունեցաւ նաեւ իր դրական կողմը: Դա պարսկական գրականութեան վերածնունդն էր որուն նպաստեցին ազգային անկախութեան ձգտող շարժումները որոնք յանդեցան երկրին զանազան կողմերը հիմնուած պարսիկ տեղական հարստութիւններու: Ասոնց արքունիքներուն իւրաքանչիւրը ժամադրաւայրը եղած էր պարսիկ հռչակաւոր բանաստեղծներու, գրողէաներու եւ գիտնականներու, որոնք վեհապետին հովանաւորութեան ներքեւ կը մրցէին իրարու հետ, արքայական շնորհներուն արժանանալու սենչով:

850-ական թուականներուն է որ առաջին անգամ կը հանդիպինք նոր պարսկերէնով գրուած ռամանաւորներու: Սամանեաններու իշխանութեան միջոցին է որ պարսիկ գրականութիւնը կ'առնէ իր առաջին ուժեղ թռիչքը եւ բանաստեղծական արուեստը կը ծաղկի աննախընթաց կենսունակութեամբ:

Այդ ժամանակուան ամէնէն հռչակաւոր բանաստեղծն է Ռուգաբի (880-954) որ իր քնարին գեղեցկութեամբը ընդհանրապէս նկատուած է մահմետական Պարսկաստանի առաջին իրական մեծ քերթողը: Ուրիշ նշանաւոր բանաստեղծ մը, որ նոյն դարուն կ'ապրէր վայելելով Նուհ-իբն-Մանսուր սամանեան արքային (976-997) պաշտպանութիւնը, Դաղեղին է որ արտադրած է քնարերգական տաղեր: Դաղեղիի համբաւը, սակայն, հիմնուած է առաւելապէս այն իրողութեան վրայ որ իր վեհապետին առաջարկով ինքը եղաւ առաջինը որ ձեռնարկեց պարսից աւանդական պատմութիւնը տաղաչափեալ ձևով գրի առնելու գործը, հետեւելով Խոդայ-Նամէի



պարսկերէն արձակ թարգմանութեան: Բայց հազիւ թէ հազար հինգ հարիւր տուն գրած էր նիւթ ունենալով Զրադաշտի երեւումը եւ Վշտասպի թաղաւորութիւնը, իր գերիին ձեռքով կը սպաննուի երիտասարդ տարիքին:

Դադեղիին կիսաա թողած գործը ամբողջացնելու սահմանում էր քառորդ գար վերջ Իրանի մեծագոյն բանաստեղծը, աննման Ֆերդուսին, որ փառաւորապէս ի կատար անեց զայն իր հանձարին բովանդակ զօրութեամբը, օժտելով աշխարհը հոյակապ դիւցադներգութեամբ մը որ պարծանքն է պարսիկ ցեղին ու գրականութեան, Շահնամէն:

Իսլամը Պարսկաստան մտաւ յաղթական, մեռցուց անոր քաղաքական կեանքը բայց բոլորովին չկրցաւ մեռցնել անոր ժողովուրդին հազարամեայ կուլտուրան: Այդ կուլտուրան ազատութեան տենչանքով աւելի զարգացաւ արարական արդիցութեան տակ, բայց շատ չանցած այդ կուլտուրան դադար առաւ երբ արարները քաջուեցան եւ Պարսկաստան մահմեդականութիւնը պարսկացուց: Շահ Իսմայիլներ եկան ու պարսկական հին փառքը վերակենդանացնել ուղեցին, բայց ձախողեցան: Անոնց առջեւ կեցեր էր ճակատագրապաշտութեան ժայռը: Ինչ որ Պարսկաստանի կը պակսէր անտեսական, կուլտուրական զարգացումն էր, իսկ Պարսկաստան կը մնար խտացած ազգային առանձնացման պաշտամունքով: Իր աւատական, ազնուապետական իրականութիւնը կը մնար նոյնը, անփոփոխ ու լճացած:

\*\*\*

Պարսկաստանը, նախ քան ստաջին համաշխարհային պատերազմը, որսորդութեան երկիր էր եւրոպական դիւանդէաներուն առջեւ: Ֆարսիան Ռուսաստանի որսորդները կուպային հիւսիսէն, անդլիացի որսորդները՝ Պարսից Ծոցէն: Երկուքն ալ կ'ուզէին որոշ իլի իրարու ձեռքէն: Ահա իւրի առատարուի հանքերը: Վաչինկատանի Ամերիկան թէեւ մի քիչ ուշ մնացեր էր, ան ալ անապարանքով, որսորդի զէնքը ուսին, վազեց ու մտաւ հոն:

Շահի հովանիին տակ արեւմտեան պարլամենտական ձեւի իրաւութիւն կառավարութիւն մը հաստատուած էր Պարսկաստանի մէջ, բայց իրապէս Ֆէոդալ իշխաններն էին որ կը կառավարէին երկիրը: Ռուսերը կողակներու ջոկատ մը դրեր էին հոն ուսական շահերը պաշտպանելու համար: Անդլիացիները ժանդարմաներու խորմ-

րեր դրած էին անդլիական շահերը պաշտպանելու համար, եւ յաճախ այս երկուքին միջեւ տեղի կ'ունենար կռիւ եւ ոճիր:

Պատերազմէն յետոյ Անդլիոյ ազդեցութիւնը մասամբ նուազեցաւ Պարսկաստանի մէջ, որովհետեւ բոլշեւիկեան յեղափոխութեան ստուերը կը սաւառնէր Պարսկաստանի հորիզոնին վրայ: 1921-ին հրապարակ իջաւ Ռիզա Սանը որ շահի հեղինակութիւնը ստանձնեց, բոլշեւիկ Ռուսաստանի հետ դաշնագրութիւն կնքեց եւ երկիրը անկախ դիրքի վրայ դրաւ: Բայց այդ անկախութիւնն ալ սոսկ երեւութական էր, եւ ատոր համար շատ կարճ կեանք ունեցաւ: Պարսկաստանի մէջ չկար զօրաւոր ու ինքնարաւ բուրժուազիայ որ եւրոպացիներու ձեռքը սար իրենց պայուսակները եւ զանոնք վճարէր երկրէն դուրս: Մուսաթէքը կորովի փորձ մը բրաւ իւրի հանքերը ազգայնացնելու: Եւրոպական իմպերիալիզմի կաշառուած գործակալները հրահրեցին ամբոխը որ հայրենասէր Մուսաթէքը խաչը հանեց:

Պարսից շահը բառին բովանդակ իմաստով եւրոպական, ի մասնաւորի անդլիական, ապա ամերիկեան իմպերիալիզմի կամակատարը ըլլալը դործնական գծով չուշացաւ հաստատել:

Շահը կը հաւատար թէ Աստուած իր ճակատագիրը այդպէս էր դրեր, ու ան կը հետեւէր իր ճակատագրին:

Այսու կը տեսնենք թէ Պարսկաստան արարական արշաւանքի ու տիրապետութեան տակ թէեւ մի քանի դարով վերադարձնումի շրջան մը ունեցաւ, բայց յետոյ ենթակայ եղաւ վատասերումի, որ դեռեւս կը շարունակուի:

Այժմ տեսնենք թէ ինչ պատկեր կը ներկայացնէ այս օրերու Պարսկաստանը, երբ խաւարակուռ Աֆրիկէի մէջ իսկ յեղափոխական հրաբուխները իրենց լափան կը ժայթքեցնեն եւրոպական հօգը պետութեանց երեսին: Այլ չլիչենք Վիեթնամի «վայրենիները» որոնք իրենց դիւցապնական պայքարով սողալի կայսրութիւնը մասններ են մտահոգութեան: Նոյնպէս չենք յիշեր նաեւ Ալճերիան որ ամբողջ եօթը տարի իր ազատութեան համար հերոսական կռիւ մղելով Նարոլէոնի Ֆրանսան մղեց նահանջի ճամբուն:

Հողային հարցը այժմեան Պարսկաստանի սահնէն հրատապ հարցերէն մինն է: Համաձայն պաշտօնական վիճակագրութեան, 164 միլիոն հեքտար հողամասին 50 միլիոն հեքտարը մշակելի հող է, 18 միլիոնը՝ անտառապատ, 10 միլիոնը՝ արօտատեղի, մնացածը՝ անապատ ու լեռնային մաս է: 1957-ի վիճակագրութիւնը, սակայն, ցոյց կուտայ որ միայն 5.715.000 հեքտար բերքատու հող



եղած է. մնացածը պառկած է խոպան, իսկ բերքատու հողամասին միայն մէկ ու կէս միլիոն հեքտարը եղած է ջրարբի:

Կենդանի սպրանքը (ձի, ոչխար, եւ այլն) Իրանի անտեսութեան մէջ կարելու տեղ կը գրաւէ: Հաշուըուած է որ անտեսութեան այս ճիւղը երկրագործական արտադրութեան գրեթէ կէսը կը ներկայացնէ իր արժէքով: Իւզէն յետոյ կենդանի սպրանաց արտադրութիւնները արտածման ամէնէն մեծ բաժինը կը կազմեն:

Իրանի հողագործութեան մարզին վրայ տիրական են Ֆէոդալական յարաբերութիւնները: Թէեւ կապիտալիստական արտադրութեան ձեւը մտած է երկրագործութեան մէջ, բայց անոր զարգացումը եղած է միակողմանի, նայած ստեւարական շրջանակի պահանջին:

Հողի եւ ջուրի սեփականութեան հիմնական ձեւը խոշոր հողատիրութիւնն է: Վարձահողագործութիւնը կը կազմէ հողատիրոջ եւ դիւղացու միջեւ գոյութիւն ունեցող տիրական յարաբերութեան եզանակը: Մեծ հողատէրը հողը, ջուրը, երբեմն սերմացուն եւ կենդանի սպրանքը վարձու կուտայ դիւղացի աշխատուորին, եւ արտադրութիւնը կը բաժնուի իրենց միջեւ, համաձայն հաստատուած կանոններուն: Ամէնէն կտտարեալ վիճակագրութիւնը ցոյց կուտայ որ Պարսկաստանի դիւղացիներուն 60 տոկոսը հողագործի է, 23 տոկոսը միայն մէկ հեքտար հող ունի, 10 տոկոսը՝ մէկէն երեք հեքտար, եւ միայն 7 տոկոսը՝ աւելի քան 3 հեքտար:

Համաձայն 1955-ի Միացեալ Ազգաց վիճակագրութեան, Իրանի մշակելի հողամասին 14 տոկոսը կը պատկանի դիւղացիներուն, 85 տոկոսը՝ մեծ հողատէրերուն, պետութեան եւ կրօնական մարմիններուն, եւ միայն մէկ տոկոսը՝ կոմունական դիւղացիութեան:

Այս դրութիւնը լուրջ արգելք մըն է երկրի անտեսութեան բոլոր միւս ճիւղերու զարգացումին: Յայտնի է որ իրանեան երկրագործութեան մէջ տիրական յարաբերութեանց փոփոխման հրամայական պահանջը հեղաշեռէ կ'աճի հասարակութեան լայն խւանքուն մէջ:

Խեղճուկ դիւղացիները, ինչպէս նաեւ այն դիւղացիները որոնք բնաւ հող չունին եւ հազիւ թէ քարչ կուտան իրենց գոյութիւնը գրկանքով ու սարապարհակ աշխատանքով, կը պահանջեն հող եւ գործիքներ, կը պահանջեն նաեւ որ իրենց ուսերէն վար սանուի սպարաքի բեռը եւ իրենք դառնան ազատ ու անկախ Փարմբներ: Իրանի բնակչութեան այս հոծ զանգուածը, որ յեղափոխութեան

ամէնէն մեծ կարողական ուժը կը ներկայացնէ, մէկ կողմէ ճակատագրի պաշտամունքը, միւս կողմէ տիրող աննպաստ պայմանները կը դժուարացնեն անոր յեղափոխական ճակատի վրայ կազմակերպուելու հրամայական գործը:

Միջակ դիւղացիութիւնն ալ կ'ուզէ վերջ դնել հողատիրական սխտէմին, որովհետեւ անոնք ալ խոշոր հողատիրութեան ճնշման տակ են: Անոնց ուզածն ալ դեմոկրատական յեղափոխութիւն է Ֆէոդալիզմը կործանելու համար, բայց անոնք կը վախճան որ դեմոկրատական յեղափոխութիւնը անապասելիօրէն կրնայ փոփոխի ընկերային յեղափոխութեան, եւ ատոր համար անոնք կը մնան ձեռնպահ:

Հարուստ Փարմբները, միւս կողմէ, կ'ուզեն որ դիւղական բնակչութեան աւելի աղքատ մասը մնայ հողագործի: Իրենց պէտք են Փարմային աշխատուորներ: Երբ հողագործի դիւղացիները իրենց սեփական հողը ունենան, հարուստ Փարմբները կը գրկուին աժան աշխատուոր ձեռքերէ: Բայց պէտք է բռել թէ այս հարուստ Փարմբներն ալ գժոճ են Ֆէոդալական տիրապետող սխտէմէն, որովհետեւ ան կը սահմանափակէ իրենց շահու պատահութիւնները: Անոնց այդ գժոճութիւնը, սակայն, այնքան խոր չէ որ դիւղենք մղէ Ֆէոդալիզմի գէմ յեղափոխութեան ճակատը: Յեղափոխութեան անունն իսկ սոսկում կ'ազդէ անոնց: Ուստի հասկնալի է որ հարուստ Փարմբը եւս կը մնայ չկոք, սպասողական դիրքով:

Ֆէոդալիզմի գէմ մղուող պայքարը վարելու գործը, ուրեմն, կը մնայ պարսկական բուրժուազիային: Բայց այդ բուրժուազիան, անջիղ ու տկար, մէկ կողմէ անխցելի կապով կապուած է երկրին մէջ գործող օտար կապիտալիստ ընկերութեանց հետ, միւս կողմէ՝ բնաշխարհի խոշոր հողատիրութեան եւ հարուստ Փարմբներու հետ: Ասոր հետ միասին նկատի պիտի ունենաք որ այդ բուրժուազիան միաձոյլ ճակատի վրայ կեցած չէ: Ան բաժնուած է երկու թևերու: Յեղափոխական թեւը որ արժատական բարեկարգութեան կողմնակից է, փոքրամասնութիւն մը կը ներկայացնէ: Մեծամասնութիւն կազմողը աջ թեւն է որ սահմանափակ բարեկարգութեան կողմնակից է:

Նշանակելի կէտ մըն ալ կայ, այդ ալ այն է որ նոյնիսկ երկրին տիրող շրջանակները իրենք եւս կ'ընդունին հողային բարեկարգութեան հրամայական կարիքը: Ծահը եւ իր շրջանակը յաճախ կը խօսին եւ յանձնարարելի կը գտնեն որ հողատիրութիւնը պէտք է որոշ սահմանափակման օրէնքի ենթարկուի եւ խոշոր հողերէն մաս մը աժան գնով ծախուի դիւղացիներուն: Ծահը ուրիշներու օրինակ



հանդիսանալու համար ինքը արդէն սկսած է իր հողերուն մէկ մասը ծախել եւ նոյնիսկ ձրի տալ հողազուրկ զիւղացիներուն:

Բարեգլխութեան արդիւնք է արդեօք շահին առած այս քայլը: Միամտութիւն պիտի ըլլար հաստատական պատասխանի տալ այս հարցումին: Շահին առած քայլին ետեւը կեցողներն են իմպերիալիստները, մասնաւորապէս ամերիկացիները:

Ինչո՞ւ:

Յետամնաց երկիրներու մէջ միլիոնաւոր զիւղացիներու կողմէ հողի համար մղուած կռիւր յեղափոխական շարժման զարգացման համար վճռական կարեւորութիւն ունի: Իմպերիալիստները շատ լաւ համոզուած են որ բռնութիւնը, ոստիկանական տեսուրը եւ զիկատաւորան Ֆէնոպիլիզմը վերապրեցնելու միջոցներէն ծնած հակասութիւնները չեն կրնար լուծել, եւ հաւանական է որ այդ երկիրներուն մէջ Ֆէնոպիլիզմի դէմ սկսած յեղափոխութիւնը վերածուի ընկերային յեղափոխութեան, ինչպէս նոյնը պատահեցաւ մի քանի երկիրներու մէջ, ինչպէս Քուպա:

Իմպերիալիստներու համար քաղաքական նպատակներէ զատ կան նաեւ տնտեսական պատճառներ: Անոնք պէտք ունին մեծ քանակութեամբ հողազործական յարաճուն արտադրութեանց, որպէսզի անոնցմով ապահովեն իրենց գործարանային ապրանապ սպառման շուկաները որոնք տարուէ տարի կը կծկուին, կը փոքրանան: Այդ պարագան կը հարկազրէ որ անոնք իրենց ազդեցութեան ենթակայ երկիրներէն վերստանան ուրիշ տեղերու կորուստները: Ատոր համար իմպերիալիստները հողային բարեկարգութեան կողմնակից են կարգ մը երկիրներու մէջ, որոնցմէ մին է Իրանը:

Այժմ երբ անցնինք Պարսկաստանի բանուոր զատակարգին, պիտի տեսնենք որ ճարտարարուեստական զարդացած երկրի յատուկ պրոլետարիատի հոծ զանգուած գոյութիւն չունի հոն: Գոյութիւն ունեցող բանուոր զատակարգն ալ իր ցան ու ցրիւ ճիւղերով բաժան բաժան եղած է: Իւրի արդիւնաբերութեան կապուած բանուորութիւնը լաւ վճարուած մասն է բանուորութեան, մի տեսակ բանուորական արխտոկրիատիա որ բնաւ չի հետաքրքրուիր լուսպլեի պրոլետարիատին կեանքով: Անդլիական եւ ամերիկեան կապիտալիստները պիտեն բանուորները բաժան բաժան պահելով զանոնք յեղափոխական շարժումէն հեռացնելու եղանակը:

Յուսահասակա՞ն է գրութիւնը:

Երբեք:

Կապիտալիստական սխառէմը ինքնին բազմադիմի հակա-

սութիւններ յառաջացնող սխառէմ է: Կապիտալիզմի յաւերժական հաստատութեան տեսութիւնը նոր չէ որ կորսնցուցեր է իր տրամաբանական հիմքը:

Վաշինկտոնի Ամերիկան, կապիտալիզմի այս օրերու դասական երկիրը, ինչք իր մէջ այնպիսի հսկայ հակասութիւններ ունի որ անոնց վերջ տալու սեւէ հնարաւորութիւն չկայ: Միակ եւջի ճամբան գտած է պաղ պատերազմը, սպառազինման արշաւը: Բայց այդ պատերազմը ո՛րքան ատեն պիտի տեւէ: Ամերիկան այսօր պատերազմով կ'ապրի ու պատերազմով կ'ապրեցնէ ժողովուրդը: Ատե՛նօք հոռոմէական կայսրութիւնն ալ պատերազմով կ'ապրէր ու պատերազմով կ'ապրեցնէր ժողովուրդը, բայց կործանեցաւ շատա՜մամբ: Նոյն ճակատագիրը վիճակուած է տալարի կայսրութեան: Իր բարեկամները տալարով կապուած են իրեն: Տոլարի այդ շտեմարանը վաղը կը դատարկուի եւ սնանկութիւնը հեռու չէ: Ամերիկայի սնանկութիւնը պիտի դայ աւետել կապիտալիստական իմպերիալիզմի մահը: Գաղութային եւ կիսագաղութային երկիրները պիտի չուշանան յայտարարել իրենց անտեսական ազատութիւնն ու անկախութիւնը: Ու Պարսկաստանը այդ ազատագրուած երկիրներուն մէջ առաջինը պիտի ըլլայ: Եւ Զրազաշտի գերեզմանին վրայ նոր Զրազաշտի դրօշը պիտի ծածանի, կոմունիզմի դրօշը:

### Ե Չ Ր Ա Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

Հին Իրանը, գրեթէ իր սկզբնաւորութեան օրէն չիման մէջ էր հայերու հետ, ատոր հետեւանքով հայկական կեանքն ալ ենթարկուած էր անոր ազդեցութեան: Միայն սասանեան տահմի տիրապետութենէն յետոյ է որ Հայաստանը քրիստոնէութեան միջոցով բոլորովին տարբեր կուլտուրական միջավայր կը փոխադրուի եւ հարազատ մնալով իր նոր գիրքին, հակամարտութիւն առաջ կը բերէ Իրանի դէմ մտաւորական ասպարէզի մէջ: Այս ազատագրական կռիւր, սակայն, հետո էր հայերը պարսկական արքեպիսկոպիան շրջանակէն դուրս բերելու կարելիութենէն, որովհետեւ Հայաստանի մէկ խոշոր հատուածին վրայ տարածուած էր սասանեան տիրապետութիւնը: Ատոր համար քրիստոնէական հակամարտութեան ժամանակն ալ հայկական կեանքի հասարակական-ընկերային պատկերը ընդհանրապէս մնացեր է նոյնը, ինչ որ էր առաջ երբ հեթանոսական գրեթէ միատեսակ պաշտամունքը եղբայրացուցեր էր զայն պարսկականին հետ: Եւ այդ շատ հասկնալի է: Կրօնական տարբերութիւնը հասարակական կազմի տարբերութիւններ չյառաջացուց երկու երկիրներու մէջ: Սասանեան Իրանը կը պահպանէր



այն պետական-հասարակական կազմը որ ստացեր էր նախկին ժամանակներէն, այն է աւատական դրութիւնը ազնուականութեան (աշխարհիկ եւ հոգեւորական) բացարձակ տիրապետութեամբ: Միեւնոյն հիմքերուն վրայ հնուց ի վեր հաստատուած էր նաեւ հայկական կեանքը, վերջնելով եւ խորապէս արդայնացնելով շատ ձեւեր պարսկական, կեանքէն: Կրօնական խտրութիւնները թէեւ խոր եւ անջատիչ, բայց այնքան ուժեղ չհանդիսացան որ նմանութիւն չմնար երկու դրացի երկիրներու միջեւ: Եւ հայ կեանքը քրիստոնէութեան ժամանակ ալ պարսկականին գերազանցօրէն հարազատ դժեր շատ պահպանեց, այնպէս որ օրինակ պարթեւական Պարսկաստանի պետական-հասարակական կեանքի մանրամասնութիւնները ճշդելու համար այսօրուայ գիտութիւնը կը դիմէ մեր Գ. քրիստոնէական դարու իրականութեան, զայն համարելով մի հայելի որուն մէջ կը ցոյանար պարթեւական հասարակարգը: Այսպիսի մի դուղաղչիւ հայկական կեանքին պարսկականի հետ կը շարունակէր պահպանել նաեւ սասանեաններու օրով երբ Պարսկաստանը զարձեւալ պարթեւներու ժամանակի աւատական-ազնուապետական իրականութիւնը կը ներկայացնէր աւելի խոտցած արդային առանձնացման պաշտամունքով: Թագաւորը զարձեւալ հինն է, ամենակարող իր էութեամբ բայց աւատական իշխողներու եւ հոգեւորականներու խիստ ազդեցութեան ենթարկուած: Հասարակ ժողովուրդը երբեք նշանակութիւն չունէր: Անոր բաժին ինկածը միայն նիւթական բարիքներ արտադրել էր: Երկրին մտաւոր եւ կուլտուրական շահերու ներկայացուցիչներն էին նոյն աւատական իշխողներն ու հոգեւորականութիւնը: Իրերու այդ դրութեան մէջ երբ նկատի ունենանք որ պարբերական պատերազմները որոնք կրօնական բնութիւն ունէին եւ ժողովուրդի հոգեբանութեան մէջ կ'ուժեղացնէին իրենց իսկ ապահովութեան սիրոյն իշխող դասակարգի պաշտպանութեան պարտականութիւնը, դասակարգային կռիւներու գիծը պարսիկ պատմութեան մէջ կը մնայ աննշարեւելի:

Բայց արդային առանձնայատկութիւններու ամուր պատանդանի վրայ յենուիլը սասանեան իրանի համար չէր նշանակել կատարեալ ճահճացում ընդհանուր քաղաքակրթական տեսակէտէն: Կուլտուրական աշխարհի մէջ սասանեաններու ժամանակը դուրի չէ մեծագործութիւններէ, այնպէս որ կրնանք ըսել թէ անիկա կատարած է մեծ պետութեան մը դերը ոչ միայն Ասիայի, այլեւ նոյն-իսկ համաշխարհային զարգացման գործին մէջ: Սասանեաններու շինարարական մեծ յուշարձաններն են Տիգրանի պալատները, մասնաւորապէս կամուրջները, որոնցմէ շատ նշանաւոր են մանուսանդ

երկուքը, Դիզբուլի կամուրջը եւ Շուսիքի կամուրջը Քարուն գետին վրայ: Վերջինս ունի 516 մեթր երկարութիւն եւ հաստատուած է 41 կամարի վրայ:

Սասանեան արուեստի վերին աստիճան ուշադրաւ ճիւղն էր քանդակագործութիւնը որ զարգացաւ նախ Բարեյոնի արուեստագէտներու ներշնչումով, ապա յունականին հետեւողութեամբ: Հասկնալի է, ուրեմն, որ այսպիսի բարձր քաղաքակրթութեան աստիճանի վրայ գտնուող երկրի մը մէջ չէին կարող արհամարհուած անկիւն մը մնալ գիտութիւնն ու գրականութիւնը:

Աչքի առաջ ունենալով Պարսկաստանի մեծագործութիւնները հին զարեքէն սկսեալ, շատ բնական է ենթադրել որ աշխատաւոր դասակարգը, զերի կամ կէս-ազատ, մեծ դեր կատարած է անոնց մէջ. իսկ ամէնէն յատկանշական կէտը այն է որ այնտեղի աշխատաւորները համեմատաբար աւելի տանելի պայմաններու տակ ապրած են քան Եգիպտոսի փարաւոններու կամ Բաբելոնի ու Նինւէի կայսրութեանց իշխանութեան ներքեւ գտնուող աշխատաւորները:

Պարսկական գիցարանութեան մէջ երբ կը կարդանք թէ զարբին Քավէն ինչպէս սպասարար է Ջոհակին դէմ իր առջեւ կազմ կաշիէ զօգնոցը ազատութեան դրօշակ ընելով, ասկէ կը հասկնանք թէ պարսիկ ազատասէր ժողովուրդը երբեմն պարգած է ազատութեան դրօշը, տապալել է բռնապետը եւ այնուհետեւ տարած է շինարարական աշխատանք:

Պարսիկ ժողովուրդը եղած է անտրտունջ, համակերպող մի ժողովուրդ, բայց երբ դանակը ոսկորին հասեր է, զայրացած ոտքի է կանգնել ու իր ուժեղ բունցքով կարգի է բերել բռնակալը:

Անտարակոյս Պարսկաստանի մէջ գոյութիւն ունեցել են դասակարգեր, բայց երկրի իշխանութիւնը դասակարգային հակամարտութիւնը կրցել է հաշտեցնել կա'մ կրօնական հաշիչով, կա'մ հայրենասիրական շունչով եւ կամ որոշ գիջումներով: Ինկաւ Եգիպտոսը, ինկաւ Բաբելոնը, ինկաւ Նինուէն, բայց Պարսկաստանը հակառակ բազմատիպի վերիվայրումներու պահեց իր դիրքը, իր անունը ու իշխանութեան գաւազանը:

Պարսիկները շատ բաներ փոխ առին Հնդկաստանէն, Եգիպտոսէն, Բաբելոնաստանէն, Յունաստանէն ու Հռոմէն, բայց իրենց ընդօրինակած բաները զարգացուցին անոնց տալով պարսկական հրապուրիչ գոյն մը որ ամբողջ աշխարհի ուշադրութիւնը գրաւելու էր կոչուած:

Պարսիկներէն կրօնական գծով մաս մը ատաղձներ ընդօրինա-



կեցին հրեաները, անոնցմէ ալ՝ քրիստոնեաները:

Պարսիկներու հին սրբազան պատմութիւնը որ Քրիստոսի թուականէն 6500 տարի առաջ կ'երթայ, այսինքն Հին կտակարանէն 2500 տարի առաջ, կ'ըսէ թէ գերբնական էակ Ահուրա-Մազդան (Որմիզդը) աիեղերքը եւ մարդը վեց յաջորդական ժամանակամիջոցի մէջ ստեղծեց հետեւեալ կերպով. առաջին շրջանին՝ երկինքը, երկրորդ շրջանին՝ ջուրերը, երրորդ շրջանին՝ երկիրը, չորրորդ շրջանին՝ ծառերն ու տունկերը, հինգերորդ շրջանին՝ անասունները, վեցերորդ շրջանին՝ ստեղծեց մարդը: Ան իր դործը յրացնելէ վերջ հանդրստացաւ: Բովանդակ աիեղերագործութեան նուիրուած Bunde hesh անուն գիրքը կ'ըսէ թէ Ահուրա-Մազդան առաջին մարդ ու կինը իրարու կոնակ կպած ձեռով ստեղծեց: Վերջը զանոնք իրարմէ բաժնեց եւ իւրաքանչիւրին առանձնօրէն շարժելու ու գործելու ուժը տուաւ: Արարիչը յաւիտենական երջանկութիւն խոստացած էր անոնց եթէ անոնք իրենց առաքինութիւնը պահէին: Սակայն սատանաներու իշխան Ահրիմանի կողմէ չար սատանայ մը սքանչելի ծառի մը պառլէն տուաւ անոնց որուն ձաշակումով անմահութեան շրնօրէն զրկուեցան: Անոնց սրտին մէջ չարի հակումը մուտք դտաւ ու անոնց բոլոր բարոյական յատկութիւնները անհետացան: Անոնց տեղ անցան նախանձն ու ատելութիւնը, եսասիրութիւնն ու ընչաքաղցութիւնը, վէճն ու ապստամբութիւնը, եւ այս չար յատկութիւնները ապագայ սերունդներու սրտերուն մէջ զարգացան եւ դուռ բացին պատերազմներու, աւարատութեան ու գերեախրութեան: Այդպէսով աշխարհը ինկաւ ապականութեան մէջ եւ երեւան եկան դահիճներ ու զոհեր, շահագործողներ ու շահագործուողներ, հարուստներ եւ աղքատներ:

Պարսիկները հնագոյն դարերէն սկսեալ շինարարութեան, արուեստի ու գեղարուեստի մարզերուն մէջ ըլլայ ընդօրինակումներով, ըլլայ ինքնուրոյն ստեղծագործութիւններով աշխարհի մարդկութեան շատ բան տուած են, բայց ներկայ օրերուն երեւութապէս մխրճուած կը թուին ըլլալ լճացումի մէջ: Այս լճացումը, սակայն, մակերեսային է, անոր մէջ կը խմորուի մօտաւոր ընկերային յեղափոխութիւնը, որովհետեւ Պարսկաստանի մէկ կողմ կեցած է Սորհրդային Միութիւնը, միւս կողմը՝ Ժողովրդական Չինաստանը: Պարսիկ շահը իր խարուսիկ բարենորոգումներու ձայնով պիտի չկրնայ լռեցնել այդ երկու հսկաներուն հնչեցուցած զարթօնքի փողի ձայնը:

Կը կրկնենք, Պարսկաստանը եւս պիտի գտնայ սոցիալիստական երկիր:

# Հ Ն Դ Կ Ա Ս Տ Ա Ն

Ե Ի

# Հ Ն Դ Ի Կ Ժ Ո Ղ Ո Վ Ո Ի Բ Դ Ը





# Հ Ն Դ Կ Ա Ս Տ Ա Ն

## Հ Ն Դ Կ Ա Ս Տ Ա Ն՝ Զ Ր Ա Պ Ո Ւ Ր Ի Չ Ե Ր Կ Ի Ր

Եղիպտացի փարաւոններէն մինչեւ գերմանացի քայլերը, Ըսել կ'ուզենք ամէն մէկ համաշխարհային տիրապետութեան ձգտող կայսրութիւն, իր երազի առարկան ըրած է Հնդկաստանը: Նարուզոգոնոսոր արքան մեծ եղաւ սրովհետեւ իր հսկողութեան տակ առաւ Եղիպտոսի եւ Հնդկաստանի հաղորդակցութեան ճամբաները: Ռամսէս եւ Ամենատապ փարաւոնները իրենց նաւերն ու զինուորները զրկեցին տիրանալու Հնդկաստան տանող ծովի ճամբուն ու օվկիանոսի անցքերուն: Այլ քանզոր Մակեդոնացին իր յաղթանակներուն փառապսակը ամբողջացնելու համար ուզեց ապահովել Հնդկաստանի հսկողութիւնը: Եռչակիրները իրենց կրօնական մոլեռանդութիւնը հրահրող վաճառական դասակարգին համար կռուեցան սրպէտլի Քրիստոսի գերեզմանին վրայէն անցնող Հնդկաստանի ճամբուն տիրանան: Քոլոմպոսը, Վասկո ար Կաման, Լուի ԺԴ-ն, Նարոլէոնը, Բենիամին Տիգրայէլին բոլորը Հնդկաստանի ճամբան ապահովել ուզեցին առեւտրական կապիտալի շահագործման համար: Եւ ասոնցմէ վերջ կոխը եւրոպական պետութեանց միջեւ շարունակուեցաւ Կ. Պոլսոյ, Քուրքիոյ եւ Միջագետքի վերայ, Հնդկաստանը ցամաքային ու ծովային ճամբով գաղթաւայր դարձնելու համար:

Հնդկաստան աշխարհը հրապուրող գեղուհի մը եղած է: Արեւմուտքը դարերով արիւնալի կոխներ մղած է այդ գեղուհիին տէր դառնալու համար: Ատոր գլխաւոր պատճառը եղած է Հնդկաստանի սերնդա-զատային (ֆէւտ-ի) դրութիւնը: Բայց այդ սխալմին նշանակութիւնը միշտ ալ անյուսալիօրէն մութ մնացեր է համաշխարհային պատերազմներու տակդժուածը լուծելու տեսակէտէն:

Հնդկաստանի ֆէւտ-երը ժառանգական դժով շարունակուող արհեստներու եւ ձեռագործական արտադրութեանց պիւստներ են: Հազարամեակներու բնութայքին սերունդէ սերունդ փոխանցուած վարպետութիւնը աճեցաւ, զարգացաւ եւ այդպիսով Հնդկաստանի ձեռագործական արտադրութիւնները գերազանցեցին միւս բոլորին ու նոր երկիրներու, Եղիպտոսի, Բաբելոնի, Հոովմի, Պրանսայի եւ Անգլիոյ կիներուն ձեռագործները, մինչեւ որ Լենկէյարի



եւ Եորքչայրի մեքենական հիւսուածքները գերազանցութիւնը շահեցան, կործանեցին ձեռագործական հին սիւստէմը եւ աշխարհի զեղեցիութեանց շտեմարանը ճոխացուցին, մոռցնել տալով հինը:

Այժմ կարգը եկաւ որ ներկայացնենք աշխարհի պատմութեան թատերաբեմին վրայ սոյն կեդրոնական արաման: Աշխարհագրութիւնը, ինչպէս ամէն ազգի, նոյնպէս եւ հնգիկ ժողովուրդի գոյութիւնն ու կենցաղը կը բացատրէ իր երկրին ձեռքով գրուած պատմութեան իմաստով:

Բարեբեր ու ընդարձակ հարթավայր մը որ եռանկիւնի ձևով կ'երկարի Հնդկաց Ուլկիանոսին մէջ, հիւսիսէն կտրուած հիմալայեան կորսուր լեռներով, աշխարհի ամենարարձը լեռը որ կը կանդնի հիւսիսի եզերքը շեղիի ձեւով որուն մէկ ծայրը կը դառնայ Քիպէրի կիրճէն մինչեւ Քարաքորումի կիրճը, դէպի արեւելք: Այս երկու կիրճերէն լեռները կ'ուղղուին դէպի ծովը եւ Հնդկաստանը արեւելեան կողմէն պարխազով մը կը բաժնեն Չինաստանէն եւ արեւմտեան կողմէն Պարսկաստանէն:

Հիմալայայէն անդին կ'իյնայ Կեդրոնական Ասիոյ բարձրաւանդակը, հովուական ցեղերու անուցիչ մայրը ուրիշ կարգաւ եկած են արիական զանազան ցեղեր:

ԱՐՇԱԻԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՔԷՍՏ-ԵՐԸ

Հազարամեակներ առաջ Քիպէրի կիրճէն անցան դէպի գետերու երկիրը Հնդկաստանի արիականներու նախահայրերը: Անոնք ինքզինքնին կ'անուանէին սինտաուս, հինդուս (գետի մարդիկ) եւ ասով կը դանազանուէին պարսկական բլուրներու վրայ հաստատուած իրենց եղբայրներէն:

Այս Քիպէր կիրճը աշխարհի մեծ դռանցքներէն մէկն է: Անկէ յաջորդաբար անցած են արիական ցեղերը, պարսկական կարաւանները, Մակեդոնացի Աղեքսանդրը եւ յոյն զօրքերը, մահմետականները, թաթարները, մոնկոլները, սփիդանները, եւ այլն: Քիպէր կիրճը տարօրինակ անցք մըն է որուն մէջէն կ'անցնի Քապուլ գետը որ չըջան մը կ'ընէ զայն չըջապատող լեռանց շղթային եւ կը միանայ Ինդոս գետի պահպանելի հոսանքին:

Այս կիրճէն յաջորդական ալիքներով եկած են արիական ցեղերը որոնք սեփականազրկեր են թխամորթ գրավիտեանները եւ յետոյ իրենք ալ սեփականազրկուած են վերջէն արշաւողներու ձեռքով: Քէստ-ի համար գործածուած բառը «վարունա» բառն է որ կը նշանակէ զոյն: Այդ գոյնը կ'որոշէ մարդոց տարբեր դասաւորումը:

րումը: Բայց պէտք է ըսել թէ այս դասաւորուած բաժանման հիմքը ոչ ցեղային է, ոչ ալ Ֆիզիքական, այլ պարզապէս անտեսական, որովհետեւ բրահմին, խշաարիա, վեյսայա, սուարա անունները ցոյց կուտան զբազումի բաժանումներ: Կրօնաւորները, կոուուղներն ու թագաւորացիները, արհեստաւորներն ու առևտրականները եւ հողագործները, այս չորսը կը կազմեն գլխաւոր Էէստ-երը:

1500 թուականին (Ն.Ք.) Մանուի Օրինադիրքը կարճուեցաւ որ յաւերժացուց մինչեւ այդ ատեն գոյութիւն ունեցող զիւղական կոմունանները: Մանուի Օրինադիրքին է. գլխուն մէջ գրուած են հին Հնդկաստանի ընկերային եւ կրօնական հիմնարկութեանց պատկերները որոնք շատ թեթեւ արդիականացմամբ տակաւին իրենց գոյութիւնը կը պահեն: Ամէն զիւղական հասարակուրդ փոքրիկ հանրապետութիւն մըն է եւ կը կառավարէ իր սեփական գործերը, որքան որ թոյլատրելի է: Կեդրոնական կառավարութեան հետ իր յարաբերութիւնը պահուի է զիւղացիներու կողմէ ընտրուած մեծաւորը: Անգամ մը որ այդ մեծաւորը ընտրուի, անոր պաշտօնը կը դառնայ ժառանգական: Այդ մեծաւորները ժառանգական պաշտօնեաներ են որոնք կեդրոնական կառավարութեան ներքին գործերը կը վարեն:

Այս գրութիւնը որ հակադիր պատկեր մը կը ներկայացնէ Ֆէոդալ հասարակութեան հետ բազմաթիւ, ուրուագծուած է Մահարաթտայի եւ Ռամայանայի մէջ ուր «Հայրենասիրութեան» եւ ազգային մեծ «առաջնորդներու» հանդէպ լոյսաւորութեան բոլոր հետքերը ջնջուած են: Կուուղ Էէստ-էն զատ ուրիշներ կուրի չես երթար: Կուուղու գործը միմիայն կուուղ Էէստ-ի պիզնէսն է: Տարբեր են ընտանիքի, զիւղի եւ բաժնուած Էէստ-երու շահերը որոնք առանձին առանձին կը ճանչցուին: Ասով զիւղացիները մըլտապէս իրենց հողին աէր կը նկատուին: Թագաւորներն ու ժողովուրդը աստուածային օրէնքի անբաժան մասերը կը կազմեն այն աստուածային օրէնքին որուն խնամակալներն են բրահմինները:

Հնդկական բնատիպ զիւղը բացառապէս կազմուած է Փարմըրներէ: Բայց քանի որ հողագործութիւնն ու մանուֆակտուրան չեն կրնար իրարմէ անջատ ապրիլ, զիւղը իր մէջ կ'ընդունի եւ կը հողատարէ մաս մը արհեստաւորներ, որոյն իր զիւղի կառավարութեան ժառանգական անգամները: Կաւազործը, սափրիչը, պըղընձագործը, հիւնը, կօշկակարը եւ այսպիսի պիտանի արհեստաւորներ զիւղերը պահած են իրենց մշտական ծառայութեան պայմանագրութեամբ: Դրամի շատ քիչ կարիք կայ: Արհեստաւորները



կը հողատարեն Փարմըրները, Փարմըրները կը հողատարեն արհեստաւորները:

Ամէն ինչ բնաշխարհիկ պէտքերու համար կը շինուի ձեռքով եւ աշպէսով արտադրուածը կ'աննէ արուեստի գոյն: Նոյնիսկ ամէնէն հասարակ խաղաղիքը կամ հողամանը կը շինուի գեղազիտական կանոններով, որովհետեւ անոնք անցած են նոյն արհեստին հետեւող հազարաւոր սերունդներու ձեռքէն: Ամէն մէկ հնդկական դիւզի մէջ աւանդական կարգով ձեռագործական արհեստաւորները իրենց հրաշագործ տաղանդով ներկայիս ալ դեռեւս կը տեսնուին փարած իրենց գործերուն: Հնդկաստանի այս Բէստ-երը (սերնդադասային արհեստաւորները) աւանդական արուեստներու ամբողջները եղած են:

Յարատեւօրէն, անշուշտ, արհեստաւորները երբ գիւղի պէտք ունեցածէն աւելի թուական աճում ունեցեր են, անոնց զուակները հեռացեր ու կարմիր են նոր գիւղեր եւ կամ հաւաքուած են քաղաքներու մէջ: Աշպէսով կազմուած են բազմարուեստանոց քաղաքներ ուր իւրաքանչիւր արհեստի հետեւողները միասնաբար կազմեր են իրենց միութիւնները որոնք Բէստ-ի օրէնքով եղած են անլուծելի:

Իւրաքանչիւր Բէստ կը կառավարուի հինգ հողինոց յանձնախումբով: Քաղաքներու մէջ բոլոր արհեստաւորական ակումբներու գլխաւորը որ նախար-սէքի կը կոչուի, քաղաքին ամենաբարձր անձնաւորութիւնն է եւ կառավարութիւնը զոյն կը ճամբնայ որպէս ամբողջ քաղաքին ներկայացուցիչը:

Բէստ-երը կը հողատարեն իրենց հիւանդները, նոյնպէս իրենց դժբախտ անդամները: Կը հայթայթեն օժիտ ամուսնացող ազջիկներուն, նոյնպէս կը հողան մեռնողին թաղման ծախսերը:

Արհեստաւորներու միութեան կամ Բէստ-երու, անդամակցութիւնը ժառանգական է, բայց նորեկներ ալ կ'ընդունուին մուտքի կանխավճարով: Մէկը որ պահանջուած ճարտարութիւնն ու հմտութիւնը չունի ներս չառնուիր եւ կամ ներս առնուելէն վերջ ահումբին մէջ չի կրնար մնալ: Բէստ-ի անդամները իրենց հօրմէն սորված են ձեռագործական արհեստը եւ զարձեր են ժառանգական ազատ մարդեր:

ՀՆԳՎԱՍՏԱՆԻ ԱՐՈՒԵՍՏՆԵՐԸ

Այս դրութեան ներքեւ Հնդկաստանի արուեստները հասեր էին այնպիսի գերագոնց բարձրութեան որ հին աշխարհի արեւմտեան ազգերը զիմած են հոն, այդ երկրին արտադրութեանց փոխա-

նակութեան համար: Ուրիշ ոչ մէկ երկիր ունեցած է արհեստներու զարգացման ու կատարելագործման տանող այս սխալմը, եւ այդ իսկ պատճառով Բարեյոնի եւ Հոսովի օրերէն սկսած կայսերական երկիրներու կիները Հնդկաստանի ձեռագործները փնտռած են եւ այդ երկրի ճամբուն վրայ դիակներ փոռած են զանոնք ստանալու համար:

Առնենք, օրինակ, մետաքսը: Մետաքսը Եւրոպայի մէջ ծանօթ էր Աղեքսանդրի օրերէն: Բայց Յուլիոս Կեսար առաջինը եղաւ որ մետաքսի հազուստով երեւցաւ սուսերամարտի ցուցահանդէսին ժողովուրդին սքանչացումը գրուելու համար: Մետաքսը նախապէս կը գործածէին ամէնէն փարթամ ու արիստոկրատիկ ընտանիքներու կիները: Տիրերիոս կայսրը օրէնք անցուց որ երկրին մէջ ոչ մէկ մարդ մետաքս պիտի գործածէ: Այս օրէնքին նպատակն էր արգիլել հոսովմէական ոսկիին հոսումը գէպի Հնդկաստան ու Չինաստան: Մետաքսը զարձեր էր ոսկի: Մէկ փառնառ ոսկի արուելու էր մէկ փառնառ մետաքս արուելու համար:

Բայց ի՞նչ ըսել որ մետաքսեայ իրերու պահանջը, հակառակ դրուած արգելքներուն, այնքան արագօրէն կ'աճէր որ մարդիկ անարժէք կը նկատէին ոսկին եւ ամէն կերպով կը փափաքէին ունենալ մետաքս: Հոսովմէն գէպի արեւելք արծաթի եւ ոսկիի հոսումը այնքան մեծ էր Յուստինիոս կայսրը որոշեց շերամաբուծութիւնը զարգացնել Եւրոպայի մէջ որպէսզի ոսկին ու արծաթը երկրէն դուրս չելլին: Բայց հարցը մետաքսին մէջ չէր: Եւրոպան մետաքս ունեցաւ, մետաքսեղէն արտադրեց, եւ սակայն հնդկական նրբահիւս ձեռագործական արտադրութեանց չկրցաւ հասնել: Հնդկաստանն ոչ միայն անպերազանցելի արուեստի աստիճանին հասցուցեր էր մետաքսեղէն արտադրութիւնները, այլեւ նշանաւոր էր պողպատի եւ գոհարեղէնի գործերու մէջ: Ոսկերչութիւնը զարգացած էր Մահարարաստայի եւ Ռամայանայի օրերէն, եւ աշխարհի ոչ մէկ տեղ ոսկերիչները այնքան հրաշալի նուրբ գործեր կրնային արտադրել որքան հնդիկ ոսկերիչները:

ՄԵՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Երբ Աղեքսանդր Մակեդոնացին Քապուլ գետի կիրճէն անցաւ եւ Հինդու Քուշի լեռներէն իջաւ Հնդկաստանի բարեբեր դաշտավայրերը, պատմութիւնը պահ մը կանգ առաւ կլիմայի փոփոխութեան համար: Պահ մը այնպէս թուեցաւ որ արեւմուտքն ու արեւելքը պիտի միանային: Բայց յազթական Աղեքսանդրի փառա-



սիրութիւնը յառաջացուց բաժանում մը որուն վէրքը դարերը չկըր-  
ցին բուժել:

Յուզթելով հնդիկ թագաւոր Պորուսի, Աղեքսանդր իր աչ-  
քերը ուղղեց զէպի արեւելք, զէպի Գանդէսի անձանթ աշխարհը  
ու անոր բարդաւած ժողովուրդը: Այդ ատեն իր զէմ էլաւ հնդիկ  
իշխան մը զոր արհամարհեց եւ զայն մղեց թշնամական ճակատի  
վրայ: Այդ հնդիկ իշխանն էր Կանտրագուզթա, Մագատհայի թա-  
գաւորի որդին:

Այս իշխանը ուղեց որպէս աքսորական Աղեքսանդրի օգնու-  
թեամբ գահընկեց ընել հակաժողովրդական այս միապետը որ յա-  
փըշտակեր էր Մագատհայի գահը եւ զինքը մատներ էր աքսորի:  
Մակեդոնացի աշխարհակալը չախորժեցաւ իշխանին այդ զիմու-  
մէն զոր վերագրեց վախկոտութեան եւ զայն վռնտեց բարկու-  
թեամբ: Այսպէսով սկսաւ թշնամութիւնը հնդիկներու եւ յոյնե-  
րու միջեւ, եւ յառաջացուց բաժանում մը մարդկային սեռին միջեւ:

Կանտրագուզաթա զիմեց հիւսիս-արեւմտեան բլուրներու ցե-  
ղերուն եւ հայրենասէր ռազմիկներով կազմեց բանակ մը: Աղեք-  
սանդրի մահէն յետոյ յարձակեցաւ Փունճապի մէջ յոյն զորանոց-  
ներու վրայ եւ գրաւեց ամբողջ երկրամասը: Անկէ յետոյ յարձակե-  
ցաւ Մագատհայի թագաւորութեան վրայ, սպաննեց թագաւորը ու  
անոր ընտանիքին բոլոր անդամները, եւ ինքզինքը հռչակեց թագա-  
ւոր: Իր նախորդին բանակը միացուց իր բանակին, որով ունեցաւ  
30 հազար ձիաւոր զինուոր, 9000 փիղ եւ 600,000 հետեւակ զօրք:  
Այս հսկայ ուժով ան տիրացաւ հիւսիսային Հնդկաստանի եւ իր  
կայսրութիւնը հաստատեց, Արարական Մովէն մինչեւ Բենկալի ծո-  
փածոցը:

Սելեւկոս ժառանգած էր Աղեքսանդրի կայսրութեան արե-  
ւելեան բաժանմունքը: 303 թուականին (Ն.Ք.) մեծ ճակատամարտ  
մը տեղի ունեցաւ Սելեւկոսի եւ Կանտրագուզաթայի ուժերուն մի-  
ջեւ: Յոյները չարաչար պարտուեցան: Հնդիկ կայսրը այս յաղ-  
թութեամբ ստացաւ Փունճապը եւ Քապուլի հովիտը: Սելեւկոս  
այնուհետեւ զենսպան մը զրկեց կայսերական արքունիքին: Այդ  
զենսպանն էր Մակաստենոս, որ մնդի տուած է սլաւական տեղե-  
կութիւններ այն ժողովուրդին մասին որ կրցաւ կեցնել մակեդո-  
նական կայսրութեան արշաւանքը եւ զայն մատնել անգործութեան:

Նախ քան այս զէպքերը, Հնդկաստան որպէս աշխարհի ա-  
մենալաւ ձեռագործական արտադրութեանց հայրենիք, շատ թեթե-  
ւակիօրէն ճանչցուած էր: Կանխագոյն չըջանին անուղղակի առու-  
տուր կար Հնդկաստանի եւ Էեփանտի միջեւ: Հոմերոս կը յիշէ թի-

թեղի եւ ուրիշ հնդկական ձեռագործ առարկաներ սանակրիտ ա-  
նուններով: Հնդկաստանի արտադրութեանց երկար ցուցակը արձա-  
նագրուած է նաեւ Աստուածաշունչին մէջ: Դարեհի կայսրութիւնը  
Ինդոսի հովիտը սատրապութեան վերածեր էր: Պարսկաստանի մե-  
ծութիւնը կը կայանար այն բանին մէջ որ թագաւորական ճամբան  
Փոքր Ասիան կապած էր մէկ կողմէ իր հարուստ մայրաքաղաքին,  
Սարգիսին, միւս կողմէ՝ Հնդկաստանին:

Առաջին յոյն պատմաբանը որ յատկօրէն կը խօսի Հնդկաս-  
տանի մասին Հերոդոտոսն է, 549 Ն.Ք.: Հերոդոտոսի տուած ծա-  
նօթութիւնը կը վերջանայ Ինդոսով:

Բայց Մակաստենոսը որ որպէս զենսպան տարիներով մնա-  
ցած ըլլալով հիւսիսային Հնդկաստանի կայսեր արքունիքին մօտ,  
առաջին անգամ պարզօրէն գրած է հնդիկ ժողովուրդին մասին եւ  
տուած է հետաքրքրական տեղեկութիւններ: Ան հնդիկները կը բաժ-  
նէ եօթը Բէստ-երու (սերնդական դասերու), փիլիսոփաներ, հոգա-  
գործներ, հովիւներ, արհեստաւորներ, զինուորներ, քննիչներ եւ  
թագաւորի խորհրդականներ: Մակաստենոս հիացմամբ կը պարզէ  
այն իրողութիւնը որ Հնդկաստանի մէջ գերետիրութիւն գոյութիւն  
չունէր (յոյն քաղաքակրթութիւնը իր գերազանց յատկանիշներով  
հիմնուած էր գերետիրութեան վրայ): Ան սքանչացումով կը խօսի  
նաեւ հնդիկ կիներու ողջախոհութեան եւ այր մարդոց քաջութեան  
մասին: Ան կ'ըսէ որ հնդիկները արիութեան մէջ կը գերազանցէին  
միւս բոլոր ասիական ժողովուրդները: Անոնց տուներու դռներուն  
վրայ կը պանք չկար: Հնդիկները գողութեան նշանակութիւնն իսկ  
չէին գիտեր: Անոնց անձանթ էր նաեւ ստախօսութիւնն ու դաւադ-  
րութիւնը: Լուրջ ու ճարտարագէտ մարդիկ, լաւ Փարմըրներ եւ  
վարպետ արհեստաւորներ, անոնք շատ քիչ անգամ իրարու զէմ  
գատ-դատաստանի կը զիմէին: Մշտապէս կ'ապրէին խաղաղու-  
թեամբ, իրենց բնիկ պետերուն հովանաւորութեան տակ:

Մակաստենոս կը նկարագրէ նաեւ զիւլական սիսակամը: Ան  
կ'ըսէ որ իւրաքանչիւր փոքրիկ զիւլ ինք իր մէջ անկախ մի հանրա-  
պետութիւն էր: Ան կը նշէ նաեւ այն իրողութիւնը որ արհեստա-  
ւորներն ու Փարմըրները զինուորական ծառայութեանէ ազատ էին:  
Իրահմիկները որոնք առանձին գասակարգ մը կը կազմէին ոչ միայն  
կրօնական ծէսեր կը կատարէին, այլեւ օղի եղանակի մասին զու-  
շակութիւններ կ'ընէին. փոթորիկ պայթելու է, հեղեղանման անձ-  
րեւ գալու է, եւայլն: Եթէ բրահմինի մը գուշակութիւնը սխալ  
զուրս գար, ան իր ամբողջ կեանքին մէջ կը դատապարտուէր լը-  
ռութեան:



Բինաուարա, Կանդրազուպայի որդին ու անոր յաջորդը, իր կայսերական արքայազնութեան սահմանները ընդարձակեց մինչև Մադրաս: Անոր յաջորդեց Ասոքա, Հնդիկ վեհապետներու ամէնէն մեծը, որու գործերուն գրոշմը մինչև այսօր ալ տակաւին կը մնայ ասիական ցամաքամասին վրայ որպէս պատմական պատկերի դէմք:

ԱՐԵՒԵԼՔԻ ՀՈԳԻՆ

Ասոքա չափ քան սորվեցաւ պարսկական կայսրութենէն եւ յետոյ յոյներէն: Ամբողջ Հելլասային Հինդուստանի մէջ լայն ճամբաներ շինել տուաւ Պատալիպուտայէն մինչև Փունճապ եւ դէպի Հարաւ, մինչև Ամբասի, Քիցնայի վրայ, եւ յետոյ մինչև Քալան, արեւմտեան Հնդկաստանի նաւահանգիստը որ Հին աստեմեծ նաւահանգիստ էր: Այս ճամբաներուն վրայ խաացաւ վաճառականական կարուաններու երթեւեկութիւնը, ան ալ ոչ միայն Ասոքայի կայսրութեան քաղաքներուն միջեւ, այլ նաեւ աշխարհի ամենահեռաւոր նաւահանգիստներուն միջեւ: Առեւտրական դաշնակցութիւններ հաստատեց Մեծն Անտիոքոսի եւ ուրիշ իշխանութեանց հետ: Վաճառականական կապերով կապուեցաւ Սուրիայի եւ Եգիպտոսի հետ, թէ ցամաքով եւ թէ ծովով:

Ասոքայի օրով կայսրութեան հիմքերը հաստատուեցան ամուր պատուանդաններու վրայ: Կայսրը ճամբաներու շինութենէն դատ քայլ մը եւս ստալ անցաւ եւ ուղեց որ իր կայսրութիւնը Փիլիքական միութիւն մը կազմելով հանդերձ կազմէ նաեւ մտածողութեան միութիւն մը: Բուդդայականութիւնը յայտարարուեցաւ որպէս պետական կրօնք եւ ութսունը վեց հազար քարէ սիւներ կառուցուեցան կայսրութեան ամէն կողմերը եւ անոնց վրայ նշանակուեցան բուդդայական սկզբունքներն ու թագաւորին զբաժ օրէնքները:

Հնդկաստան իր 350 միլիոն բնակչութեամբ արտասովոր բազմազանութիւն մը կը ներկայացնէ: Բազմաթիւ ցեղապետներ ու իշխաններ կային հոն: Կային նաեւ երեք միլիոն աստուածներ: Ընդհանուր ամամբ խօսելով, բրահմինականութիւնն էր Հնդկաստանի գլխաւոր կրօնքը որ ունեցաւ իր պատմական զարգացման շրջանները հետեւեալ ձեւով.—

- ա. վեդայական հինդուիզմը
- բ. Բրահմինական հինդուիզմը
- գ. ֆիլիսոփայական հինդուիզմը

- դ. Չոհաբերական հինդուիզմը
- ե. Բարեկարգուած հինդուիզմը

Սկիզբէն Հնդիկները կը հաւատային թէ եղած է Բրահմանը որ կը նշանակէ Աշխարհի Հոգին: Այդ Աշխարհի Հոգին Հնդկաստանի բնիկները կ'ըմբռնէին երբորդութեան հանդամանքով, երեքը մէկ աստուծոյ մէջ:

- 1. Բրահմա — արարիչ
- 2. Վիշնու — պահպանիչ
- 3. Սիվա — կործանիչ

Բրահման ստեղծած է առաջին կալը, առաջին աստուածը, Մանուն: Մանունն յառաջ եկած է մարդկութիւնը: Աշխարհի բոլոր ժողովուրդները թէեւ Մանունէն սերած են, բայց հաւասար չեն: Մանունի գլուխէն դուրս եկան Հնդկաստանի ամենալաւ եւ ամենասուրբ մարդիկը: Անոնք էին կրօնականները, որոնք բրահմիններ կը կոչուին: Մանունի ձեռքերէն դուրս եկան յաջորդ ամենալաւ ու մեծարելի մարդիկը: Անոնք էին թագաւորներն ու ռազմիկները: Մանունի ազդրերէն դուրս եկան աշխարհի արհեստաւորները: Մանունի ոտքերէն դուրս եկաւ ժողովուրդին մնացած մասը, մշակները, ծառաները, հողագործները:

Ասոքա կայսրը որոշակի կը տեսնէր որ բրահմինական կրօնքը դարերու ընթացքին շէր կրցած Հնդկաստանի հասարակութիւնը համաձուլել միացեալ ամբողջութեան մը մէջ: Ան միութեան հեռանկարը տեսաւ Բուդդայի վարդապետութեան մէջ, ուր մանր ու խոշոր բոլոր աստուածները կ'անհետանային, ծիսակատարութիւնն ու կուսակալութիւնը կը վերնար, դասակարգային անանցանելի խրամանները կը զոցուէին ու կը մնային Բուդդայի ութը կանոնները:

- 1. ձշմարիտ հաւատքը
- 2. ձշմարիտ որոշումը
- 3. ձշմարիտ խօսքը
- 4. ձշմարիտ վերաբերմունքը
- 5. ձշմարիտ գրագումը
- 6. ձշմարիտ ջանադրութիւնը
- 7. ձշմարիտ ներհայեցողութիւնը
- 8. ձշմարիտ մտային կեդրոնացումը

Ասոքա յաճախ կոչուած է բուդդայականութեան Կոնսպանգիւնը: Իր առած քայլերը զրեթէ նոյնն էին ինչ որ էին Հոսովի վերջին կայսրերու քայլերը: Ան հինգ կարեւոր միջոցներ գործադրեց



բուղղայական կրօնը տարածելու համար: Նախ տիեզերական ժողով դումարեց հաւատքը միաձեւութեան վերածելու համար, ապա հրովարտակներով ծանոյց նոր կրօնի սկզբունքները, պետական մասնաւոր ապարատ մը հաստատեց կրօնի մաքրութեան հսկելու համար, միսիոնարներ դրեց նոր կրօնի վազապետութիւնները սուսուցանելու եւ տարածելու համար, սուրբ գրքեր հաւաքելով հաստատեց սուրբ գրոց կանոնագիրքը:

Ասոքայի բուղղայականութիւնը խորունկ արմատ ձգեց միսիոնարներու ձեռքով որոնց հրահանգ տրուած էր մտնել ամէն տեղ, այցելել բոլորին, ըլլան անոնք բարբարոսներ, անհաստաներ, բրբահմիներ, մուրացիկներ: Անոնք երթալու էին նոյնիսկ օտար երկիրներ, սորվեցնելու Բուղղայի լաւագոյն սկզբունքները: Ուեէ պարագայի տակ արգիլուած էր բռնութիւն բանեցնել նորահաւատ դարձնելու համար անհատ մը երբ ան կը տատամսէր հետեւիլ նոր կրօնքին:

Բուղղայականութիւնը հրապարակ իջաւ որպէս յեղափոխական շարժում: Ան կը ձգտէր փոխել հին հասարակարգը: Ան կը մերժէր ընդունիլ բրահմանական աստուածներու գոյութիւնը: Նոյնպէս ան չէր ընդունէր որ Բրահման աստուածներու գլխաւորն է: Ան կը դատապարտէր բրահմին կրօնականները որոնք որպէս պարագիտ դասակարգ կ'ապրէին ժողովուրդին նուէրներով: Ասոր համար երբ Բուղղա եկաւ յայտարարել թէ աստուածներ չկան, որ հրաշագործ ոգի մը չկայ որ կոչուած է հրամայել մարդոց ճակատագրին, որ ոչ մէկ մարդ անխղիչ կապով կապուած մնալու է իր Բէաւ-ին, սերնդական դասակարգին, անոր այս յայտարարութիւնը հիմքէն ցնցեց հին հասարակութեան դարաւոր շէնքը: Բայց պէտք է ըսել թէ Բուղղայի սկզբնական, ինքնատիպ աւետարանը փոխուեցաւ եւ յարմարցուեցաւ թագաւորական նպատակներուն: Հինայանա, կամ նախկին հաւատքը զոր Բուղղան քարոզեց, ամբողջապէս փոխուեցաւ Մահայանայի կամ «զարգացած հաւատքի», զոր Ասվակոչան սկսաւ սորվեցնել:

Բայց Ասոքայի հաստատած բուղղայականութիւնը յառաջացուց մի ուժղին հակահոսանք: Բրահմիները սկսան կատաղի կռիւ մը անոր դէմ, մինչեւ որ թագաւոր Վիքրամատիթեա որ ծանօթ է բրահմիներու Շարլմայն անունով, բրահմիներու առանձնաշնորհումները վերահաստատեց եւ բուղղայականները բնաջնջեց սոսկալի հարածանքներով: Տասնեւերկու դարերու ընթացքին բուղղայական կրօնքը արմատախիլ եղաւ իր ծննդեան վայրին՝ մէջ: Միայն

բուղղայականներու մէկ աղանդը, ձէյն աղանդը, մնաց, որովհետեւ անոնք ընդունեցին Բէաւ-ը եւ բրահմիները:

Բայց բրահմիներու այս յաղթանակը երկար կեանք չունեցաւ: Նախ եկան արարները, ապա աֆղաններն ու մոնղոլները: Բուղղայական կրօնքի հազար տարուայ գերակայութիւնը ջնջուելէ վերջ, եկան մահմեական բռնակալները որոնց տիրապետութիւնը շարունակուեցաւ դարերով: Միայն հարաւի մէջ բրահմիները մի քանի տարուան համար կրցին ապահովութիւն գտնել, երբ սարսափով փախուստի ճամբան ձեռք առին տեսնելով մահմեականներու վայրենի եւ անդուծ վերաբերմունքը:

1398-ին եկաւ թաթարներու թիմուրլենկը որ սկսաւ մասնայական կոտորածն ու սեւրումը: Հազարաւոր հնդիկներ ինկան թաթարներու սուրերուն տակ: Անոր թոռը, Բարեր, 1525-ին անցաւ Քիպչի կիրճը եւ մոնղոլները տեւականօրէն հաստատուեցան հոն: Բարերի թոռ Աքբար հիմնեց մեծ մոնղոլական հարստութիւնը որ իշխեց մինչեւ անդլիացիներու մուտքը:

Աքբար արուեստներու եւ ձեռագործներու սիրահար էր: Ան իր արքունիքին մէջ հաւաքեց հնդիկ լաւագոյն եւ հմուտ արհեստաւորները եւ դանոնք վարձատրեց պատիւով եւ մեծ նուէրներով: Իր թոռ, Շահ ձիհան, իր շնորհալի կնոջ Մահայի համար հազուագիւտ գոհարներով պալատ մը շինեց, Թաճ Մահայը, որուն նմանը աշխարհի մէջ ոչ մի տեղ կարելի չէ գտնել: Շահ ձիհան հիմնեց Դեհլի քաղաքը որ միացեալ Հնդկաստանի մայրաքաղաքը ըլլալու էր: Անոր որդին Օրունկզէր գահ բարձրացաւ երբ Շահ ձիհանը Մահայի մահուն հետեւանքով մեռաւ իր վշտէն:

Բոլոր այս յաղթական արշաւողները, ըլլան անոնք երկրէն հեռացողներ թէ հոն հաստատուողներ, Հնդկաստանի պարզեւները Հնդկաստանի մէջ թողուցին եւ իրենց ձեռքով իրենց հետ բան չտարին դուրս:

Անկէ յետոյ եկան արեւմուտքի քաղաքակիրթ աւազակները:

ԱՐԵՒՄՈՒՏՔԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԵՁ

1492-ին Քրիստափոր Գոլոմպոս Սպանիոյ Փալոս նաւահանգիստէն իր նաւով ճամբայ ելաւ, հետը ունենալով նամակ մը զոր Սպանիոյ թագաւորը ուղղած էր թաթարներու մեծ խանին: Բայց Գոլոմպոս այդ նամակը տեղը չկրցաւ հասցնել: Չբաղեցաւ Բահամ կղզիներով եւ պէտք չունեցաւ ձեռք առնել արեւելեան կայսրութեանց դոնները: Բայց հինգ տարի յետոյ Փորթուկալի Վասկօ տը կաման



Անրիկի հարաւային ծայրէն նաւարկելով 1498-ի Մայիս 20-ին Մալբարարի ծովեզրքին վրայ կալիկուտ նաւահանգիստին առջև խարխոխ նեւեց: Վեց ամիս Հնդկաստան մնալէ յետոյ վերադարձաւ Մալբարարի ուսահանգիստը Փորթուկալի թագաւորին՝ ուղղուած նամակով մը: Այդ նամակը հետեւեալ տողերը կը պարունակէր.

«Վասիօ տը կամա, ձեր տան մէկ աղնուակներ, այցելեց իմ թագաւորական երկիրը եւ ինձ տուաւ մեծ հաճոյք: Իմ թագաւորութեան մէջ առատօրէն կան կիճմման, մեխակ, կոճապղպեղ, պղպեղ եւ թանկագին քարեր: Ինչ որ մենք կը փնտռենք ձեր երկրէն ոսկին է, արծաթ, բուստ եւ ծիրանի»:

Կամայի վերադարձը տօնուեցաւ մեծ հանդիսութեամբ եւ ուրբախութեամբ: Բուռն վէճ մը սկսաւ Սպանիոյ թագաւորին եւ Փորթուկալի թագաւորին միջեւ: Այդ վէճին առարկայ էր անոնց գրաւած երկրամասերու սահմաններու հարցը որ վերջացաւ Քորդեխոսի գաշնադրութեամբ, որ Ալեքսանդր Զ. Պապը նոր աշխարհը բաժնեց Փորթուկալի եւ Սպանիոյ միջեւ:

1502-ին Պապը Փորթուկալի թագաւորը պապական կանգակով մը յայտարարեց որպէս «Եթովպիայի, Արարիայի, Պարսկաստանի եւ Հնդկաստանի նաւարկութեան, յաղթանակի եւ առեւտուրի տէրը»: 1530 թուին փորթուկալցիք գրաւեցին Կոստան որ Հնդկաստանի մէջ անոնց տիրապետութեան մայրաքաղաքը եղաւ: Անկէ յետոյ հարիւր տարի Փորթուկալ արեւելեան առեւտուրը ըրաւ իրեն բացարձակ մենաշնորհը: Բոլոր միւս ազգերը զրազուած ըլլալով պատերազմներով եւ դանաղան տեղերու հետախուզութեամբ, զինքը թողեր էին ազատ: Բայց ԺԷ. դարու սկզբնական շրջանին Հոլանտա, Անգլիա եւ Ֆրանսա աչքերնին բացին եւ ուղեցին իրենց բաժինը: Կամաց կամաց Փորթուկալ Հնդկաստանէն քշուեցաւ եւ հազիւ կրցաւ իրեն պահել Կոստան:

Երբ Չարլզ Բ. Անգլիոյ թագաւորը ամուսնացաւ փորթուկալցի իշխանուհի Լիզաբէթի հետ, իշխանուհին թագաւորին օժիտ տուաւ Բոմբէյի նաւահանգիստը: Թագաւորը այդ նաւահանգիստը իրեն համար չէր կրնար գործածել, ուստի զայն նուիրեց Բրիտանական Արեւելեան Հնդկաստանի Ընկերութեան: Ընկերութիւնը Բոմբէյն իր գործառնութեանց կեդրոն դարձնելով սկսաւ տարածել իր ազդեցութեան շրջանակը:

Անգլիա եւ Հոլանտա հնդկական առեւտուրի մէջ ծոյլային գերակայութիւն չահելու համար սկսան կռուել, մինչեւ որ Անգլիա իր նաւային ուժով չէզոքացուց Հոլանտան: Այս անգամ, 1745-ին, կռիւր սկսաւ Ֆրանսայի եւ Անգլիոյ միջեւ: Այդ կռիւր փոխն ի փոխ

յաջողութիւններով երկար տեւեց, բայց վերջապէս 1761-ին Ֆրանսան զէջ կերպով պարտուեցաւ եւ Բրիտանական Արեւելեան Ընկերութիւնը Հնդկաստանի տէր դարձաւ:

Անգլիացիք Հնդկաստանի իշխանութիւնը իրենց ձեռքը չառին: Անոնք հնդիկ իշխանները իրենց պահուն վրայ բազմեցուցին եւ ատոր փոխարէն վճարում ստացան:

Օրինակի համար, Միր ճաֆար Բենկալի դահին վրայ բազմեցաւ: Բրիտանական ընկերութիւնը պահանջեց իշխանէն 12 միլիոն ռուփիս(\*) թագաւորական տիրոջին համար: Այդ գումարին 8 միլիոնը կ'երթար բրիտանացի, հայ եւ ուրիշ քաղաքացիներու որոնք կ'ապրէին Նուրջիտապատի մէջ: Զիւարններու զորագունդը եւ բանակը կը ստանար երկուք ու կէս միլիոն ռուփիս, իսկ ընկերութեան խորհուրդի վեց անդամները կը ստանային մէկ ու կէս միլիոն ռուփիս: Բրիտանական ընկերութիւնը, տեսնելով որ թագաւորական օժուժը այնքան շահակտ է, երկու թագաւոր եւս օժեց եւ իւրաքանչիւրէն պահանջեց եւ գանձեց որոշ գումարներ: Հասկնալի է, ի հարկէ, որ պարտամուրհակով ընտրուած ուսման պահանջուած այդ հսկայ գումարը իր դրպանէն պիտի չկրնար տալ, այլ պիտի քամէր ժողովուրդին արիւնն ու քրտինքը: Այսպէս, ուրեմն, բնաւ զարմանալի չէ որ տասը տարուան մէջ Բենկալի ժողովուրդը 38 միլիոն ռուփիս վճարելու էր իր ուսերուն վրայ նստող թագաւորներու ծախսերուն համար:

Քլայվ անգլիացի զորավարը որ Ֆրանսացիներուն յաղթեր էր կը պարծենար որ ինք հաստատեր էր Հնդկաստանի մէջ այնպիսի դրութիւն մը որով կարելի էր անհաշիւ դրամ ձեռք բերել ընդհանրէն, պարզապէս անգլիական սարսափի միջոցով: Այսու կը տեսնենք թէ Բրիտանական Արեւելեան Ընկերութիւնը ինչպիսի քաղաքակրթութեան օրհնութիւններ բերած էր այդ խաւարամած երկիրն:

Ռոմիլ Դըա իր Հնդկաստանի Տնտեսական Պատմութիւնը գրքին մէջ կը գրէ.

«Հիւսուած կերպասին զինը ընկերութեան գործակալները կ'որոշէին 40 տոկոսով պակաս քան ինչ զնով որ կը ծրարէր բաց շուկային վրայ: Եթէ հիւսողները մերժէին ըստուհիլ առաջարկուած գինը, զրամի փոխարէն, ըստուհիլ խարազանում: Հիւսողները եթէ պատուէր ըստուած կերպասը ճիշդ ժամանակին չյանձնէին, անոնք ըստուհիլ վաճառքի կը հանուէին: Մետաք-

(\*) Րուփիս հնդկական դրամ է որ կ'արժէ մօտաւորապէս 33 սէնթ:



սի մանարաններու բանուոր-բանուորուհիները այնպիսի անարդար ու դաժան վարմունքի կ'ենթարկուէին որ իրենք իրենց բթամասները կը կտրէին որպէսզի ազատուէին ընկերութեան համար բռնադատեալ ստրկային աշխատանքէն» :

Այսպիսով Բրիտանական Արեւելեան Հնդ. Ընկերութիւնը հակայ քանակութեամբ բամպակի եւ մետաքսի ապրանքներ կուտակեց :

Այստեղէն ծնաւ, կապիտալիզմի ծոցէն, հակասութիւնը :

Մինչ Անգլիոյ մէջ Հնդկաստանի ծաղկեալ բամպակեղէն ապրանքները արագօրէն կ'ընդհանրանային եւ բրիտանական ընկերութեան պահեստանոցները կը լեցուէին բամպակեղէն եւ մետաքսեղէն ապրանքներով, բրիտանական բուրդի մանուֆակտուրաները կ'ենթարկուէին ծանր կորուստի : Ո՞վ կարեւորութիւն կուտար բրդեղէն ապրանքներուն, երբ սնդին հնդկական ապրանքները աւելի գեղեցիկ էին եւ աւելի աժան : Այսպէսով երկու անգլիական տուներ, մին Անգլիոյ, միւսը Հնդկաստանի մէջ, կեցեր էին իրարու հակառակ շահերու գեանին վրայ : 1721-ին օրէնք անցաւ որ կ'արգելէր ծաղկեալ ապրանքայ վաճառումն ու գործածութիւնը : Այս օրէնքը որ Անգլիոյ մանուֆակտուրաներու շահերուն կը ծառայէր, անարդիւնք մնաց : Անգլիացի կիներ ծաղրեցին դրուած օրէնքը որ սանձել կ'ուզէր իրենց նորածնութեան սէրը, եւ կայսրութիւնը իր գլուխը խոնարհեցուց անոնց առջեւ :

Բայց Արքիբալտի մեքենայի գիւտէն յետոյ, 1769-ին, Մանչեստրի եւ Լեյկաշայրի ապրանքայ արտադրութիւնը դարգացաւ այնքան արագօրէն որ դերերը փոխուեցան : Հնդկաստանի ձեռագործական արտադրութիւնները դատապարտուեցան ծայրայեղ կղզիացման, մանաւանդ երբ սկսան նարդէնական պատերազմները :

1813-ի նարդէնական բլոքէյտի ատեն բրիտանացի վաճառականները կորսնցուցին իրենց եւրոպական շուկաները : Ատոր համար անոնք լաճանջեցին որ ջնջուի Արեւելեան Հնդկաստանի Ընկերութեան մենատիրացու արամերթ իրաւունքը : Եւ 1833-ին անոր առեւտրական մենաշնորհը բոլորովն ջնջուեցաւ : Ասով Հընդկաստանի վարչութիւնը իր շահարժիները քաւուէր անգլիական կայսրութեան եկամուտներէն :

Եւ ի՞նչ էր ըլլալու ատոր արդիւնքը :

ՁԵՌԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԳՐՈՒԹԵԱՆՑ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Անգլիան սկզբնական շրջանին կ'ուզէր կրկնապատկել ու եռապատկել Հնդկաստանի ընդհանուր արտադրութիւնը, յետոյ, երբ պայմանները փոխուեցան, հակառակ ուղի բռնեց : Ձեռագործական արտադրութեանց հայրենիքը եղող Հնդկաստանը վերածուեցաւ անգլիական մեքենական արտադրութեանց սպառողական շուկայի : Հնդկաստանի խոշոր առեւտրական արտածումը Մանչեստրի յարուցած մրցումէն առաջ արդէն զգալի չափով ինկած էր : Այս մարդիկը որոնք հագարաւոր տարիներու ընթացքին, սերունդէ սերունդ հմտութիւն եւ ճարտարութիւն էին ձեռք բերեր իրենց ձեռագործական արտադրութեանց մէջ, խումբերով քուլեցան Բոմբէյի ու Կալկաթայի գործարանները, եւ իրենց ճակատայիբը յանձնեցին մեքենաներուն, շատ աննշան աշխատավարձով մը որ հազիւ կը բաւէր թշուառ գոյութիւն մը քաշքշու նպատակին :

Մոնթիլմորի Մարթին, անգլիական պարլամենտի մէկ անդամը, 1837-ին գրած է հետեւեալը .

«1815-ի Տր. Բուչանանի տուած պաշտօնական տեղեկատուութենէն ի վեր քայլեր առնուած են արդեօք բարելաւելու համար Հնդկաստանի մէջ մեր ընչաքաղցութեան ու եսասիրութեան երեսէն տառապողներու վիճակը : Ոչ մէկ քայլ : Ընդհակառակը, մենք ամէն ինչ բրած ենք եւ ամէն կարելին կ'ընենք աւելի թշուառացնելու այն եղիկի կակները որոնք ենթարկուած են անգլիական վաճառականութեան անպիտան խտրականութեան : Քննութեան առնուած շրջաններուն մէջ բազմաթիւ մարդիկ կան որոնց ապրուստի միակ միջոցն է հիւսելը : Սերունդէ սերունդ իրենց սեփական գործը եղած է այդ : Ազատ առուստուրի պիտակին տակ Անգլիան կը հարկազրէ որ հնդիկները ընդունին Կլասկոյի, Եորքայրի, Լէյկաշայրի շոգեշարժ մեքենաներու հիւսած ապրանքները որոնք Հնդկաստան կը մտնեն սոսկ անուանական մաքսով, մինչդեռ Բենկալի եւ Բենարի ձեռագործական հիւսուածքները որոնք անդերազանցելի են իրենց գեղեցկութեան ու գիմացկունութեան տեսակէտէն, Անգլիոյ մէջ կը ներածուին շատ ծանր եւ գրեթէ անոնց ներածումը բացարձակապէս արգիլող մաքսերով» :

1824-էն յետոյ Հնդկաստանի արդիւնաբերութիւնը փճացած էր գրեթէ : Դադրած էր արտածումը, իսկ ներածուած ապրանքներն էին զինուորական ու քաղաքական նպատակներու ծառայող զէնքեր ու գործիքներ : Այն երկիրը որ աշխարհը կը հարստացնէր



իր գեղեցիկ արտադրութիւններով, դարձեր էր բրիտանական գործարաններու շուկայ:

Յաճախ առարկողներ կան որ կ'ըսեն թէ Անգլիան բաժան բաժան եղած եւ կռիւներու թատերաբեմի վերածուած այդ երկրին մէջ բերած էր խաղաղութիւն եւ բարգաւաճում: Իրողութիւնը, սակայն, ասոր ճիշդ հակառակն է: Անգլիական տիրապետութեան ներքեւ խաղաղութեան յաջորդեց անկարգութիւնը, բարգաւաճումին՝ թշուառութիւնը: Նախկին շրջանին վայրենի արշաւողները չտարածեցին այն աւերումը ինչ որ բրին քաղաքակիրթ անգլիացիները: Ամբողջ հարիւր տարուան ընթացքին բրիտանական կայսրութեան գլխաւոր նպատակը եղած էր Հնդկաստանի մէջ քանդել ու վերջացնել բնաշխարհի ձեռագործական արտադրողականութիւնը: Այդ էր պատճառը որ յառաջ բերաւ 1857-ի Սիպոյի ապստամբութիւնը: Անկէ յետոյ սկսաւ Հնդկաստանի մէջ ինքնավար կառավարութեան ձգտող շարժումը որուն դէմ կատաղի կռիւ յայտարարեց բրիտանական կայսրութիւնը: Բայց այդ շարժումը կը տարածուէր ու կը խորանար: Անկէ վերջ սկսաւ մեծ պատերազմը:

Եւ ինչո՞ւ այդ պատերազմը:

Որովհետեւ Գերմանիա իր Համբուրկ-Պաղտա երկաթուղիի գծով կ'ուզէր ասից կայան պատրաստել ու անկէ մտնել Հընդկաստան:

Անգլիա ունէ՞ր զինուորական ուժ Գերմանիոյ դէմ կոռելու համար: Երբեք: Հնդկաստան պատերազմէն առաջ 200,000 մարդըւած պահեստի զինուոր ունէր կայսրութեան ծառայելու համար: Լորտ Հարաինկ, Հնդկաստանի փոխարքան, պատերազմի յայտարարութենէն երկու շաբաթ յետոյ յայտարարեց. «Առանց չափազանցութեան կրնանք ըսել թէ հնդկական բանակը ամբողջացուց այն ուղղական պակասը զոր ունէ կերպով կարելի չէր լրացնել: Այդ բանակէն հազիւ մի քանի վերապրողներ եղան, բայց անո՞վ մենք պատեցանք անխուսափելի վտանգէն»:

Բայց միայն այդ երկու հարիւր հազարնոց բանակը չէր Հնդկաստանի նուէրը անգլիական կայսրութեան: 1916-ի վերջերը Հնդկաստան Անգլիոյ տուաւ մէկ միլիոն 100 հազար զինուոր, 70 միլիոն շարք սպանամթերք, 60 հազար հրացան, մէկ միլիոն թոն ցորեն եւ ուտեստեղէն, 2.500.000 փառուտ բուրդ եւ վերմակ, 1500 մզոնի երկաթուղային կազմածք եւ 250 շոգեշարժ մեքենայ: Եւ զեռասունք ալ բաւական չէին: Հնդկաստան կայսրութեան տուաւ 500 միլիոն լիրա ստերլինկ: Եւ պէտք է ըսել որ Հնդկաստանի կառա-

վարութիւնը տուաւ Անգլիոյ՝ սոսանց հնդիկ ժողովուրդին կամ անոր Օրէնսդիր ժողովին գիտակցութեան, այդ բոլոր նուէրները որպէս քաղաքակիրթութեան փրկագին:

Զինադադարէն վերջ երբ Հնդկաստանի ժողովը խոշոր դամարներ կը քուէարկէր անգլիական յաղթանակի փառաւոր հանդիսութեանց համար, Բումբէյ Բրոնիքլը 1919-ի Յունիս 29-ի թուին մէջ կը գրէր.

«Մինչ չափերը կը մտածեն խաղաղութիւնը սօնել մեծագոյն ցնծութեամբ, ամբողջ երկիրը բռնուած է սովի ճիրաններուն մէջ: Այգբատ դատակարգելէն միլիոնաւորներ ենթարկուած են կորստեան վտանգի: Մեր երկրին մէջ տասը միլիոն մարդիկ կ'ապրին կիսաքաղց վիճակով»:

1918-ի վերջին երեք ամիսներուն վեց միլիոն մարդիկ մեռան տենդախառն հարբուխէն (ինֆլուանզա): Հնդկաստանի հողը մէկ անգամէն այդքան թիւով զիւղներ չէր ծածկեր:

Եւ ինչո՞ւ այս համաճարակը: Այս հարցման պատասխանը մենք կը գտնենք 1919-ին հրատարակուած հնդկական պիւտճէին համար յատկացումներու թուական ցանկին մէջ: Երկրին եկամուտին 75 տոկոսը յատկացուած էր բրիտանական բանակին ու երկաթուղիներուն զիւրացնելու համար անգլիական առուտուրը, իսկ 25 տոկոսը միայն թողուած էր կրթութեան, ոռոգման, երկրագործութեան եւ գիտութեան, ներառեալ առողջապահական եւ բժշկական գործը:

Ասով պարզ կը տեսնուի որ երկրին ընդհանուր եկամուտին երեք-չորրորդը բացարձակապէս յատկացուած էր Հնդկաստանի մէջ բրիտանական շահագործողներու բազուկները զօրեղացնելու եւ զանոնք երկարելու համար:

Բայց մեզի կ'ըսեն. «Հնդկաստանի մէջ երկաթուղիներու ցանցի ընդարձակումով բնիկ հնդիկներն ալ կ'օգտուին»: Այո՛, կ'օգտուին, եւ ի՞նչ հրաշագործ մարդասիրութեամբ: Երկու հարիւր քանեւհինգ միլիոն լիրա ստերլինկ ծախսուած է երկաթուղիներու վրայ եւ այդ գումարը ելած է հնդիկ ժողովուրդին քսակէն, մինչդեռ քանեւհինգ միլիոն լիրա ստերլինկ միայն յատկացուած է ոռոգման համար: Որով հնդիկ ժողովուրդը անբաւարար ջուրի հետեւանքով տարեկան կը կորսնցնէ յիսուն միլիոն լիրա ստերլինկ:

Բրիտանական իշխանութիւնը հաստատուն պահելու համար, Հնդկաստան պարտաւոր էր անգլիական կայսրութեան վճարել տա-



րին հինգ հարիւր միլիոն տոլար որպէսզի երեսի վրայ թողուէին երկրին անողջապահական, կրթական, տնտեսական եւ յառաջդիմութեան ամէն տեսակի գործերը:

Թուուցիկ ակնարկով մեր տուած ծանօթութիւնները Հնդկաստանի անցեալին եւ ժամանակակից շրջանին շուրջ չենք կարծեր թէ բաւարար են բնթերցողին համար, եւ այդ իսկ պատճառով մի քիչ աւելի հանդամանօրէն պիտի անդրադառնանք այդ երկրի ժողովուրդին հետ կապ ունեցող կարեւոր պրոպլէմներուն:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ  
ԵՒ  
ՀԱՐԱՏՈՒԹԻՒՆԸ

Հնդկաստան հսկայ երկիր մըն է, շատ հին քաղաքակրթութիւն ունեցող երկիր մը, որուն տարածութիւնն է 1.808.679 քառակուսի մղոն: Անիկա քսան անդամ աւելի մեծ է քան Մեծն Բրիտանիան: Հնդկաստանի բնակչութիւնը 1914-ի մարդահամարով հաշուած են 389 միլիոն: Այժմ կարելի է հաշուել մօտաւորապէս 400 միլիոն:

Հնդկաստան ոչ միայն իմպերիալիզմի ուղղակի զաղութային տիրապետութեան մեծագոյն երկիրը եղած է, այլեւ ամենահին շահագործման դաշար իմպերիալիստներուն համար:

Հնդկաստանի նուաճումով արեւմտեան քաղաքակրթութիւնը կառուցիր է Եւրոպայի մէջ կապիտալիստական զարգացման գլխաւոր սիւները, եւ ցոյց տուած է անով բրիտանական աշխարհի գերակայութիւնը եւ յետոյ արդիական իմպերիալիզմի ամբողջական յօրինումը:

Երկու հարիւր տարուայ իմպերիալիստական տիրապետութենէն յետոյ, Հնդկաստան այսօր կը ներկայացնէ ժողովրդական հոծ զանդուածներու ողորմելիութեան եւ աննկարագրելի թշուառութեան անհորիզոն տեսարան մը:

Այս հանդամանքը չենք կրնար կապել երկրին բնական աղքատութեան կամ հարստութեան աղբիւրներու անբաւականութեան հետ: Հնդիկ ժողովուրդին դրաւած երկրամասերը լեցուն են բնական հարստութեամբ եւ հարստութեան առատարուի աղբիւրներով: Եւ ասիկա ճշմարիտ է ոչ միայն հողի արդաստարեութեան եւ երկրագործական արտադրութեան կարողականութեան համար որ կրնայ երկրին այժմու բնակչութեան կրկին թիւով բնակչութիւն ապրեցնել, այլեւ ճշմարիտ է բարձրօրէն զարգացած ճարտարար-

ւեստի արտադրութեան համար: Հնդկաստան ունի ածուխ, երկաթ, իւղ եւ ջուրի ուժ որ կրնայ փոխուիլ ելեկտրականութեան: Ասոնց հետ նկատի առնելու ենք նաեւ ժողովուրդին իմացական զարգացման բնութեան թիւեր որ վար չի մնար միւս ազգերու ունեցած բնութեան թիւերէն:

Եւ սակայն այս հարստութեան եւ ուժերու օգտագործման կարելիութիւնները կը մնան անկոխ վիճակով: Եթէ մենք ուզենք կապիտալիզմը պատկերացնել արտադրութեան լիառատ կարողականութիւնները օգտագործելու տալն մսխումի ու յարարեակն ձախողանքի ձեւերուն մէջ, Հնդկաստան մեզի կուտայ ամենացոյն օրինակը: Կապիտալիստները Հնդկաստանի մէջ զբաղեցան միմիայն կողոպուտով, ժողովուրդին քրտինքը քամելով, ոչ թէ երկիրը զարգացնելու գործով: Երկրի զարգացում մեզի համար կը նշանակէ ժողովուրդին անլուծելի բարեկեցութիւն:

Հնդկաստանի հիմնական հարցը, ուրեմն, 400 միլիոն մարդկային էակներու կենցաղային հարցն է: Մարդիկ որոնք կ'ապրին ծայրայեղ թշուառութեան եւ կիսաքաղց վիճակի մէջ եւ կը պայքարին լուսագոյն կեանքի պայմաններու համար:

Հնդկաստան աղքատ ժողովուրդի երկիր է, բայց ան աղքատ երկիր մը չէ: Հնդկաստանի հարստութեանց աղբիւրները ամենաբարձր աստիճանի առատութիւն կը խոտանան երկրի բնակչութեան, հողագործութեան եւ ճարտարարուեստի զարգացումով: Այս բանին ազդեցոյցն է այն որ Հնդկաստան բրիտանական տիրապետութենէն առաջ անտեսական զարգացման ճամբուն մէջ առաջին դէին վրայ կեցեր էր:

Հնդիկ արդիւնարեւրական յանձնախումբը 1916-18-ի իր տեղեկատուութեան մէջ յայտարարեց հետեւեալը.

«Այն ատեն երբ Արեւմտեան Եւրոպան, արդիական ճարտարութեան զրութեան ճննդաւայրը, ծածկուած էր անքաղաքակիրթ ցեղերով, Հնդկաստան հարուստ էր իր իշխաններուն փառքով եւ իր արհեստարներու արուեստի հմտութեամբ: Եւ նոյնիսկ արեւմուտքի բախտախնդիրները վերջէն երբ Հնդկաստան մտան, այս երկրին ճարտարարուեստի զարգացման աստիճանը աւելի բարձր էր քան ինչ որ էր Եւրոպայի ամէնէն յառաջադէմ երկրին զարգացումը»:

Սըր Թամըս Հոլանտ, յանձնախումբին նախագահը որ նոյն ատեն Հնդկաստանի հանքային աղբիւրներու հետախուզութեան մէջ յայտնի հեղինակութիւն էր, 1908-ին յայտարարեց.

«Հնդկաստանի որակաւոր կրկաթն ու պողպատը, ինչպէս



ևս եւ սղիմնձի եւ արոյրի գեղարուեստական արտադրութիւնները մետաղադորձական աշխարհի մէջ Հնդկաստանի համար անտարակոյս որ ապահոված են առաջնահարգ գիրք» :

Վեր առնենք բաղդատական եզրերը ջուրի ուժին մի շարք երկիրներու եւ Հնդկաստանի ունեցածին :

Եթէ Մ. Նահանգաց ջուրի ուժի կարողական շափը հաշուենք 35 միլիոն ձիու ուժ , ան զարգացուցեր է 33 տոկոսը :

Ֆրանսան ունի 6 միլիոն կարողական ձիու ուժ եւ զարգացուցեր է 37 տոկոսը :

Գերմանիոյն ունի 2 միլիոն կարողական ձիու ուժ եւ զարգացուցեր է անոր 55 տոկոսը :

Չուիցերիան ունի 3 միլիոն ձիու ուժ եւ զարգացուցեր է անոր 72 տոկոսը :

Հնդկաստանի ջուրի կարողական ուժն է 27 միլիոն ձիու ուժ , բայց անոր միայն 3 տոկոսն է որ զարգացման ճամբուն մէջ գրւած է :

Սրբ Ալֆրէտ Վասարն Թայմզի մէջ 1933-ին կը գրէր .

«Հնդկաստան ճարտարարուեստի զարգացման համար անսահման կարելիութեանց երկիր մըն է , բայց այդ պատեհութիւնները թաղուած կը մնան , եւ ասոր գլխաւոր պատասխանատուութիւնը կը ծանրանայ Բրիտանիայի վրայ : Հնդկաստան ճարտարարուեստական առաջնահարգ երկիր մը ըլլալու բոլոր պայմանները ունենալով հանդերձ , այսօր անտեսադէս աշխարհի յետամնաց երկիրներէն մէկն է : Մենք բնաւ լրջօրէն գրադոժ չենք Հնդկաստանը ճարտարարուեստական գետնի վրայ զարգացնելու գործով : Յանցանք մըն է այս որուն պատիժը մի օր պիտի կրենք անտարակոյս» :

Բայց այդ «յանցանքը» անդիտակցարար գործուած չէ , ոչ ալ կրնանք նկատել անհոգութեան արդիւնք : Հնդկաստան Անգլիոյ համար կրան կոլ մըն է : Երբ Հնդկաստանի ճարտարարուեստական արդիւնարեութիւնը զարգանայ , ան կը գտնայ առիւծ մը եւ կը բզբոճ անգլիական հզօր իմպերիալիզմը : Ահա թէ ուր է մեծ վըտանդը :

Փրոֆէսոր Բուչանան , ամերիկացի դիտարկու մը , Հնդկաստանի անտեսական եւ ճարտարարուեստական գրուութիւնը տեղւոյն վրայ քննելէ վերջ 1934-ին կը գրէր .

«Ահաւասիկ երկիր մը որ ճարտարարուեստի արդիական զարգացման համար բոլոր անհրաժեշտ նիւթերը ունի , բայց մեծ բանակութեամբ գործարանական արտադրութեանց ապրանքներ կը

ներածէ , իսկ զարգացուցեր է միմիայն մի քանի պարզ արդիւնաբերական ճիւղեր որոնց մեքենաներն ալ պատրաստուած են ուրիշ երկիրներու մէջ : Հնդկաստան ունի առատ հում բամբակ , հնդկականեփ , դիւրութեամբ շահագործուելիք ածուխի ու երկաթի հանքեր , ամբարուած սուի ու արծաթ : Ունի նաեւ յորգառատ աշխատութով բնակչութիւն , որուն մեծ մասը մտանդուած է սովի . բայց շատ ախուր է պարզուած իրականութիւնը : Անգործութիւն ու թշուառութիւն ամէն տեղ : Անգլիան յայտնապէս չ'ուզեր որ Հնդկաստանը գտնայ ճարտարարուեստական երկիր : Անոր ժողովուրդը ապրելու է լրբաբու սեղանի փշրանքներով» :

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆԸ

1929-ին կառավարութիւնը թաղաւորական յանձնախումբ մը նշանակեց Հնդկաստանի բանուորութեան գրութիւնը «քննելու» համար : Այդ յանձնախումբին տեղեկատուութենէն կը քաղենք հետեւեալը .

«Ճարտարարուեստի կեդրոններուն մէջ ընտանիքներ ու անհատներ մեծ մասով պարտքի տակ են եւ այդ պարտքը վճարելու համար պէտք է աշխատին կրճատուած աշխատավարձով : Ամէնէն մեծ աշխատավարձը ստացողներն են Բոմբէյի հիւսուածեղէնի բանուորները որոնք ամսական կը ստանան 56 շիլինկ (\*), իսկ կիները՝ 26 շիլինկ : Ածխահանքի բանուորները կը ստանան ամսական 30 շիլինկ : Սեղոնային գործարաններու բանուորները կը ստանան օրական մէկ շիլինկ : Վեց կամ 8 տարեկան երեխաները օրական 10 կամ 12 ժամ աշխատելով շարաթական կը ստանան 3 շիլինկ :

«Բնակարանային գրութիւնը աւելի սոսկալի է : Բանուորին ընտանիքը նոյնիսկ բախտաւոր չէ ունենալ մէկ սենեակ . իրեն հետ առած է ուրիշ ընտանիք մը : Գալով առողջապահական տարրական պայմաններուն , այդպիսի բաներու մասին բնաւ մտածուած չէ : Դիզուած կեղտաութիւնը , լոյսի եւ մաքուր օդի պակասը , հիւանդութեանց մանրէները կը բաղմապատկեն» :

Հնդիկ կին բժիշկ մը որ Բոմբէյի կառավարութեան կողմէ նշանակուած էր քննութիւն կատարելու , 1922-ի Մեպտեմբերին Բոմբէյի Աշխատանքի կադէրին մէջ կը գրէր .

«Պարխլած շէնքի մը երկրորդ յարկին մէկ սենեակը , որուն երկայնութիւնն էր 15 սոք եւ լայնութիւնը՝ 12 սոք , ես տեսայ որ

(\* ) Շիլինկը ամերիկեան դրամի հաշուով 22 սենթ է :



ընկալարան գործեր էր վեց ընտանիքներու: Երբ ևս անոնց մասին հարցազնուած ըրի, ինձ ըսին որ այդ սենեակին մէջ աղբոջներու թիւն էր 30 հոգի, մեծ ու պղտիկ բոլորը հաշուած: Ինձի սխալ տեղեկութիւն տրուած չէր: Ես նկատեցի արդէն որ նոյն սենեակին մէջ վեց հատ առանձին օջախ կար կերակուր պատրաստելու համար: Այդ վեց ընտանիքներուն մէջէն երեք կիներ կային որոնք մայրութեան խնամքի պէտք ունէին, որովհետեւ օրէ օր կը սպասուէր անոնց ծննդաբերութիւնը: Գիշեր ատեն այդ խճողուած սենեակը կը լցուէր ծուխով ու զարշելի հոտերով: Ոչ ոք կրնայ երեւակայել այդպիսի դժոխային ընտանիքայր մը եթէ բաց աչքերով տեսած չէ: Եւ այդ սարսափելի տեղւոյն մէջ մայրութիւն... Պէտք է ըսեմ որ ատիկա միակը չէր իմ տեսած դժոխքներէն: Ատոր նման ևս տեսայ մէկ օրուան մէջ երեսուն տեղեր: Այլևս սենեակայ էի ոտքի վրայ մնալ ու ևս հիւանդացայ: Այդ տուններուն ներքնայարկերը ևս չեմ կրնար նկարագրել: Յերեկուան լոյսը դժուարաւ կը թափանցէ հսն, իսկ արեւու լոյսը՝ երբեք»:

Այս պայմաններուն տակ կրնանք երեւակայել ժողովուրդին ստողջական վիճակը:

Կեանքի տեսողութիւնը Հնդկաստանի մէջ աւելի կարճ է քան արեւմտեան երկիրներու մէջ: Նախ քան իմպերիալիստներու տիրապետութիւնը, հնդիկներու կեանքի տեսողութիւնը միջին հաշուով իննսուն տարի է: Այդ տիրապետութենէն յետոյ կեանքի շրջանը իջաւ մինչեւ քառասունհինգ տարիի: Բայց այդ շրջանին յառաջացաւ մի տարօրինակ երեւոյթ, բարձրագոյնութիւնը: Մինչ Անգլիոյ մէջ մեռնողներու թիւին հետ համեմատած ծնածններու թիւը հազարին 57 յաւելում կը ցուցնէր, Հնդկաստանի մէջ պատկերը տարբեր էր: Հազարին 239 յաւելում կարկաթայի մէջ, 248 յաւելում Բոմբէյի մէջ, և 227 յաւելում Մադրասի մէջ: Ամէնէն տարօրինակը այն էր որ մէկ սենեակի մէջ խճողուած բարձրութեան սերընդագործութիւնը հազարին 577 թուով աւելի էր, քան որ երբ նոյն բարձրութիւնը տեղաւորուած էր երկու սենեակներու մէջ: Այս վերջնոյն մէջ ծնածններուն թիւը կը հասնէր հազարին 254-ի: Իսկ համեմատաբար բարեկեցիկ ընտանիքներու մայրերը որոնք հիւանդանոցներու մէջ կը ծնէին իրենց զաւակները, անոնց ցոյց տուած թիւն էր հազարին 107 յաւելում: Այս օրէնքը կարծես ամէն տեղ նոյնն է. սղէտ ու խեղճ ընտանիքները աւելի շատ երեխայ կ'ունենան:

Հնդկաստանի մէջ մահացումներու մեծ մասը, ինչպէս պաշտօնական վիճակագրութիւնները ցոյց կուտան, հետեւանք են թըլուաութեան և ստողջապահիկ պայմաններու պակասին: 1926-ին

հարիւր հազարաւոր մահեր տեղի ունեցան ժամտախտէն, բժաւոր տիֆէն և թանջախտէն:

Այս էր գրութիւնը Հնդկաստանի ժողովուրդին 180 տարի իմպերիալիստական տիրապետութենէ յետոյ:

Այստեղ կարելոր է նշել որ թշուառութեան այս գրութիւնը կայուն չէ: Ան գորութեան և ևս զարգացողական: Գրութեան այս վաթսրացումը կապուած է ակրաբեան ճգնաժամի աճման հետ, որը իմպերիալիստական իշխանութեան ուղղակի կամ անուղղակի աղղկեցութեան տակ ամէնէն զօրաւոր մղիչ ուժն է, երկիրը տանելու ընկերային ու քաղաքական փոփոխութեան դիրկը:

Այժմ ըսենք թէ հնդիկ ժողովուրդին այս սարսափելի թըլուաութեան ետեւ ի՞նչ պատճառներ կան ծածկուած:

Նախ քան այդ իրական պատճառները պարզելը, անհրաժեշտ է ներկայացնել մի շարք ընթացիկ բացատրութիւններ որոնք պատճառներու տարբեր աղբիւրներ ցոյց կուտան:

Հնդկական թշուառութեան շուրջ այս բացատրութիւնները կը կեդրոնանան առ հասարակ ժողովրդական մասսաներու ընկերային յետադիմութեան, տղիաութեան և նախապաշարման վրայ (տեխնիկայի մէջ պահպանողականութիւն, սերնդական արհեստներու, Էլտո-երու պարսպաւորում, կովի պաշտամունք, ստողջապահական կանոններու անհողութիւն, կանանց ստորագասութիւն, եւ այլն): Տարակոյս չկայ որ վերեւ նշուած գործօնները որոշ դեր կը խաղան հնդիկ ժողովուրդի թշուառութեան աճման գործին մէջ, և գանձեք յազմահարելու հարցը, որպէս վերակառուցման հարց, պէտք է գրուի հնդիկ ժողովուրդին առջեւ: Բայց երբ այդ բացատրութիւնները սուտիները կը յայտարարեն թէ հնդիկ ժողովուրդի թշուառութիւնը կապուած է բացառապէս այդ աղբիւրներուն, այն ատեն անոնք կը նմանին այն մարդուն որ իր բեռնակառքը տեղափոխելու համար զայն ձիուն առջեւ կը դնէ փոխանակ զայն կապելու անոր ետեւ: Ընկերային ու մշակութային յետադիմութիւնը հետեւանքն է անտեսական ու քաղաքական աննպաստ պայմաններու: Անդրապիտութեան հարցին մէջ մենք կրնանք դատապարտել կառավարութիւնը որ չ'ուզեր կրթութիւնը տարածել ժողովուրդին մէջ, ժողովուրդը տղիաութեան մէջ պահելու համար, տարուած այն քաղաքականութեամբ որ տղիաութիւնը աւելի կը պարարտացնէ ու կը յաւերժացնէ շահագործման ու անարտունջ համակերպութեան գետինը: Մեր դատապարտութիւնը չենք կրնար ուղղել ժողովուրդին, այն սխալ արամարանութեամբ որ ան չ'ուզեր սորվիլ, չ'ուզեր դարգանալ: Հարցին արմատը կապուած է անտեսական-քաղա-



քահանայ խորհուրդին, եւ մշակութային խնդիրն ալ կատարած է այդ խորհուրդին: Ընկերային ու մշակութային յետադիմութիւնը կարելի է յաղթահարել քարոզչութեամբ ու դասախօսութիւններով: Այդ յաղթահարումը դիւրութեամբ կը կատարուի միայն այն ատեն երբ կը փոխուի հասարակութեան անտեսական ներքնաշէնը: Այս անառարկելի ճշմարտութեան ստացոյցը մեզի կուտայ Սորձրդային Միութիւնը: Յարական կառավարութեան շրջանին, Ռուսաստանը յետամնաց երկիր էր, բայց երբ բանուորներու եւ զիւզացիութեան միացեալ ջանքերով փշրուեցաւ շահագործող դատակարգի դրած լուծը ժողովուրդի վրին, սկսաւ յառաջդիմութիւնը այնպիսի ստատմներով որուն հետ չեն կրնար մրցիլ այսօր ամէնէն յառաջագէտ երկիրները: Նոյնը պիտի ըլլայ Հնդկաստանի մէջ, երբ փոխուին երկրի անտեսական-դատակարգային հիմքերը:

Հնդկաստանի ժողովուրդին թշուառութեան շուրջ ուրիշ մէկ բացատրութիւն ալ որ ընթացիկ է եւ աւելի ընկերային-փիլիսոփայական գոյն ունի «բաղամարդութիւնն է», բնակչութեան գերաճումը:

Սուտի եւ խեղաթիւրման ամէնէն դիւրնաս հացատրութիւնն է այս որ կը հանդստացնէ անդուծ շահագործողներու խիղճը, եթէ ընդունինք որ անոնք խիղճ ունին...: Բնակչութեան գերաճումը թշուառութեան պատճառ նկատող այս վարդապետութիւնը ամէնէն անհեթեթ վարդապետութիւնն է, որուն տիրահռչակ հեղինակը եղած է Մալթուսը, որուն այդ տեսութիւնը որպէս քաղաքական դէմք գործածուեցաւ Ֆրանսական յեղափոխութեան դէմ, եւ յետոյ անգլիական բազմիշխանութիւնը զայն հրճուանքով որդեգրեց փճացնելու համար մարդկային զարգացման հետեւող տենչանքները: Գիտնականներն ու անտեսագէտները անհասարակ կը խնդան այս փիլիսոփայութեան վրայ, բայց ան դեռ եւս կը սրահ է իր ստաջնորդողի դերը ռէակցիոն շրջանակներու մէջ: ԺԹ. դարու փարձատրութիւնը հիմնովին հերքեց այդ վարդապետութիւնը, երբ հարստութեան գերաճումը գերազանցեց բնակչութեան գերաճումը եւ ատով պարզեց այն իրողութիւնը որ թշուառութեան պատճառը ուրիշ տեղ փնտռելու է: Ի. դարուն, մասնաւորապէս սոաջին պատերազմէն յետոյ, համաշխարհային անտեսական ճգնաժամի շրջանին, փորձեր եղան վերապրեցնելու Մալթուսի տեսութիւնը: Բայց միջազգային վիճակագրութիւնները եկան սպաննել զայն: Հակառակ պատերազմին յառաջացուցած աւերներուն ու մարդկային կորուստներուն, ուստեսեղէններու, հում նիւթերու եւ ճարտարարւեստական ապրանքներու գերարտադրութիւնը շարունակեց գերա-

զանցել աշխարհի բնակչութեան աճումը, որով մարդիկ հարկադրուեցան իրենց թշուառութեան պատճառը փնտռել ընկերային սիստէմին մէջ: Այժմ իշխող դատակարգը սկսած է հարստութեան գերարտադրութիւնը սահմանափակելու մասին մտածել, որուն համար անիկա կ'որոճայ մի քանի նմաքներ: Գալով բնակչութեան հարցին, անոր դանգառը այն է որ եւրոպայի եւ Ամերիկայի ժողովուրդները պէտք եղած թիւով զուակներ չեն արտադրեր թնդանօթի միս դառնալու համար: Նուազ հարստութիւն եւ աւելի թիւով մարդկային էակներ: Ահա այդ է պահանջը ներկայ տիրող դատակարգին որ զլիսիւայր կը շրջէ Մալթուսի հռչակաւոր վարդապետութիւնը:

Բայց զարմանալի է որ եւրոպայէն ու Ամերիկայէն դուրս քուած այդ հնացած ու յետադիմական թէորիան այժմ իր վերջին հանդրուանը հաստատել կը փորձէ Ասիոյ մէջ: Հնդկաստանի թըլառութիւնը ընկերային սիստէմի արդիւնք է, այլ արդիւնքն է «բնակչութեան գերաճման»:

Բայց ի՞նչ են փաստերը:

Մարդիկը ամէն կերպով մեղ կ'ուզեն համոզել թէ Հնդկաստան, բազդատմամբ միւս երկիրներուն, անբնական կերպով բնակչութեան գերաճում ունեցած է անգլիական իշխանութեան շրջանին եւ այդ է եղած ժողովուրդին թշուառութեան միակ պատճառը: Բայց Հնդկաստանի պատմութիւնը ստոր ճիշդ հակառակը կ'ապացուցանէ: Բրիտանական իշխանութեան ներքեւ Հնդկաստանի բնակչութեան աճումը աւելի պակաս եղած է բազդատմամբ ուրիշ երկիրներու աճող բնակչութեան: Հնդկաստան ԺԶ. դարու վերջերը, համաձայն Մորլէնտի տուած տեղեկութեան, 100 միլիոն բնակչութիւն ունեցեր է: Այսօր այդ թիւը բարձրացեր է 400 միլիոնի: Դա կը նշանակէ երեք դարերու ընթացքին չորս անգամ աճում: Առնենք Անգլիան: Անգլիոյ բնակչութիւնը 1700 թուականին եղած է հինգ միլիոն հարիւր հարար: Այսօր այդ թիւը բարձրացեր է 41 միլիոնի: Դա կը նշանակէ աւելի քան ութը անգամ բնակչութեան աճում:

Բայց ամէնէն կարեւորը ներկայ շրջանն է: Այժմ առնենք բնակչութեանց աճման թիւերը եւ Հնդկաստանի աճող բնակչութիւնը բազդատմաբ եւրոպական ստաջնակարգ երկիրներու աճող բնակչութեան հետ, 1870-1910 տարիներու շրջանին, առ հարիւր հաշիւով:

Հնդկաստան 19 տոկոս  
Անգլիա եւ Ռուս 58 տոկոս



Գերմանիա 59 տոկոս

Պելճիդա 48 տոկոս

Հոլանտա 62 տոկոս

Ռուսիա 73 տոկոս

Եւրոպա (միջին հաշիւով) 45 տոկոս

Բացառելով Ֆրանսան, Հնդկաստանի բնակչութեան աճու-  
մը աւելի նուազ եղած է քան Եւրոպական ունէ կրկրի բնակչու-  
թեան աճումը: Ճիշդ է որ Հնդկաստանի բնակչութեան աճումը  
1921-1931 տարի տա հարիւր աւելցեր է, բայց Հնդկաստանի ժողո-  
վուրդին թշուառութիւնը 1921-ին չսկսիր:

Փրոֆէսոր Թամրս երեք տասնեակ տարիներու, 1900-1930-ի  
վերատեսութիւնը բնելով կը գրէ.

«Հնդկաստանի բնակչութիւնը 1900-ի եւ 1930-ի միջեւ ա-  
ճած է 19 տոկոսով, բայց ուստեսեղէնի եւ հում նիւթերու ար-  
տադրութիւնը՝ 30 տոկոսով, իսկ ճարտարարուեստական ար-  
տադրութիւնը՝ 180 տոկոսով:

«Այս իրողութիւնը կը փաստէ որ Հնդկաստանի բնակչու-  
թեան աճման մասին հրապարակուած ահազանդը վիճակագրու-  
թեանց ծոցէն դուրս չի գար: Մարդիկ փոխանակ Հնդկաստանի մէջ  
ծնած նորածիններուն ուշադրութիւն դարձնելու, թող ուշադրու-  
թիւն դարձնեն մեռնողներու թիւին, ազգային եկամուտի անարդար  
բաշխումին, բնակչութեան աշխարհադրական բաժանումին, դասա-  
կարգերու խրամատին եւ ուրիշ յարակից խնդիրներու»:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԻՇԵԱՆՈՒԹԻՒՆԸ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԵՋ

Անգլիական կառավարութիւնը սկիզբէն ի վեր անթափան-  
ցելի թանձր վարակոչը մը կախած է Հնդկաստանի առջեւ, որպէս-  
զի դուրսի աշխարհը չգիտնայ թէ իր տիրապետութեան շրջանին  
ինչեր տեղի ունեցած են այդ երկրէն ներս:

Պատերազմի տանն գրաքննութիւնը աւելի սաստկացաւ  
Հնդկաստանի մէջ, ուր գծուար էր գտնել քաջակորով անգլիացի  
մը որ ամէն վասնոյ յանձն առնելով բողոքէր անորակելի անդթու-  
թեանց ու շարաշահութեանց գէժ:

Սիստ յատկանշական են ժ.ժ. գարու անգլիական պահպա-  
նողականութեան ներկայացուցիչ Տիգրայէլիի գրած հետեւեալ տո-  
ղերը անգլիական պատմութեան մասին.

«Եթէ Անգլիոյ պատմութիւնը գրած է մէկը որ սնեցեր է  
հարկ եղած ծանօթութիւնն ու քաջութիւնը որով կրցեր է պատկե-

բացնել հարկ եղած իրողութիւնները իրենց հարազատութեամբ ու  
մերկութեամբ, մարդ ամօթով պիտի կարգայ այդ պատմութիւնը:  
Ընդհանուր առմամբ խօսելով կրնանք ըսել թէ բոլոր մեծ դէպքերը  
խեղաթիւրուած են, այդ դէպքերու ծնուցիչ պատճառները թաղ-  
նուած են, պատմութեան շարժիչ ուժը, անոր գլխաւոր կերպար-  
ները բնաւ երեւան հանուած չեն, եւ բոլոր ներկայացուածներն ալ  
սխալ հասկցուած ու սխալ ներկայացուած են, որուն արդիւնքը ե-  
ղած է կատարեալ անթափանցելի խորհրդաւորութիւն»:

Եթէ այս ճշմարիտ է անգլիական պատմութեան համար,  
հապա ուրեմն որքան ճշմարիտ է պատմութեան համար այն երկ-  
րին որ ինկած է անգլիական իմպերիալիզմի ճանկերուն մէջ, եւ ա-  
նոր պատմութիւնն ալ գրուած է նոյն իմպերիալիզմի դործակալ  
պատմաբանի մը ձեռքով: Մանաւանդ երբ նկատի ունենաք այն  
խիստ գրաքննութիւնը որ հաստատուեցաւ 1932-ին Հնդկաստանի  
ներքին կեանքը արտաքին աշխարհէն ծածուկ պահելու համար, այն  
ստան կը հասկնանք թէ ինչ է եղեր Անգլիոյ նպատակը:

Մինչ գրաքննութիւնը խափու կ'արգիլէր Հնդկաստանի ներ-  
քին, իրական կեանքին պատկերացումը, նոյն ստան իմպերիալի-  
ստական պրոպագանդան յառաջ կը տարուէր գունաղեղ նկարագրու-  
թիւններով:

Իրիտանական իշխանութիւնը Հնդկաստանի մէջ կը ներկա-  
յացուէր որպէս քաղաքակրթութեան օւսման իրաւի մը առաքելու-  
թիւնը: Ռահմիլլայ մը որ հոն մտեր էր խաղաղութիւն հաստատե-  
լու, Հնդկաստանի նման յետամնաց երկիր մը լուսաւորելու, ար-  
մատախիլ բնելով կրօնական նախապաշարումներն ու ցեղային կը-  
սիւնները:

Լիպերալիզմի եւ դեմոկրատիի բրիտանական խաղաղները  
արմատ պիտի բռնէին այդ ապերախտ երկրին մէջ ուր աստիճանա-  
բար հաստատուելու էին սահմանադրական բարեկարգութիւն եւ  
լիակատար դեմոկրատական հիմնարկութիւններ:

Անգլիան ահա այդ անչահախնդիք ու զուտ մարդասիրական  
նպատակով մտեր էր Հնդկաստան եւ այդ նպատակով ալ յառաջ կը  
տանէր իր դործը մեծ եռանդով ու գերազոյն զոհողութիւններով:

Հնդկաստանի մասսայական գժգոհութեան ու ապստամբու-  
թեան երեւոյթները մասի վրայ համրուած մի քանի խռովարարնե-  
րու դործերը եղած են: Առանց անգլիական հողածու հսկողութեան  
հնդիկները անմիջապէս իրարու կոկորդը պիտի պատռէին որով-  
հետեւ անոնք տակաւին շատ հեռու են Եւրոպական քաղաքակրթու-  
թեան ջափանիչէն: Անոնք այդ բանին ապացոյցը տուն իրենց



ցոյցերով 1914-ին: Հնդկաստան պիտի ըլլար արեան ծով մը, անիշ-  
խանական երկիր մը, եւ իսկոյն որսը պիտի դառնար օտար արչա-  
ւոյի մը:

Աւելորդ է շարունակել այս դիցաբանական պատկերացումը  
որուն մէջ ցորենի հատիկի մը չափ իսկ ճշմարտութիւն չկայ:

Անոնք որ ծանօթ են իմպերիալիզմի ընդհանուր գործու-  
նէութեան, գիտեն թէ կապիտալիստական արչաւանքներու մղիչ  
ուժը տնտեսապէս յետամնաց երկիրներու ժողովուրդները հրով ու  
սրով ստրկացնել է, ապահովելու համար կապիտալիզմի բացառիկ  
չահու աղբիւրները: Ծիշոյ է որ անոնք որոշ չափով յեղափոխական  
գործ կը կատարեն հին կարգերը քանդելու եւ ընկերային յարաբե-  
րութիւնները փոխելու տեսակէտէն, բայց միեւնոյն ատեն կը ստեղ-  
ծեն այնպիսի վատթարագոյն պայմաններ որոնք կ'արդիւնեն հպա-  
տակ ժողովուրդի յառաջդիմութիւնն ու զարգացումը:

Անդլիական իմպերիալիզմը նոյն բանը ըրաւ Հնդկաստանի  
մէջ: Երկաթուղիներ կառուց, ելեկարական լոյսով լուսաւորեց երկ-  
րին մութ անկիւնները, հաստատեց հեռադրաթելերու ցանցեր, շի-  
նեց կանոնաւոր նաւահանուիստներ ու մի շարք գործարաններ,  
բայց այս բոլորը Հնդկաստանի ժողովուրդի զարգացման ու բարե-  
կեցութեան չնպաստեցին: Ընդհակառակը, աւելի վատթարացու-  
ցին անոր դրութիւնը որովհետեւ յառաջացուցին այնպիսի դրու-  
թիւն մը որ կը ծառայէր միմիայն անդլիական վաճառականութեան  
ու Ֆինանս-կապիտալի շահերուն: Բրիտանական իմպերիալիզմը  
ամէն միջոց գործածեց դիւրացնելու համար իր ծայրայեղ շահա-  
գործման գործը որուն արդիւնքը եղաւ հնդիկ դիւրացիութեան  
թշուառացումը: Անդլիական իմպերիալիզմը, իր իշխանութիւնը ա-  
ւելի հիմնաւորելու եւ յանրաժողովուրդի համար, դաշնակցեցաւ երկ-  
րին ամէնէն յետադիմական տարրերուն, Փէոդալ լորտերուն հետ,  
որոնք, եթէ բրիտանական պաշտպանութիւնը չըլլար, վաղուց պի-  
տի անհետանային: Ասով արտասովոր դրութիւն ստեղծուեցաւ  
Հնդկաստանի մէջ: Ֆէոտալիական շահագործումը վարէն, Ֆինանս-  
կապիտալիզմի շահագործումը վերէն, երկու տեսակի ծանր լուծեր  
Հնդկաստանի ժողովրդական մասսաներու վրին վրայ:

Ինչին շատ իրաւամբ բնած է. «Այն ինչ որ բրիտանական իշ-  
խանութիւն կը կոչուի Հնդկաստանի մէջ ուրիշ բան չէ այլ միայն  
բռնութեան ու կողոպուտի իշխանութիւնը որուն չափ ու սահման  
չկայ»:

Եւ արդէն ամերիկեան, անկախութեան կռիւներու շրջանին  
Անդլիոյ վարչապետը խիստ յատկանշական յայտարարութիւն մը

ըրաւ. «Թողուցէք որ Ամերիկան ազատ ըլլայ. մեզի համար Հընդ-  
կաստանը կը բաւէ»: Մարդը գիտեր թէ Ամերիկան չէնցնող գա-  
ղութները, բոլորն ալ եւրոպացիներ, ազատասէր մարդիկ, երբ  
գորացուցեր էին նոր աշխարհի բուրժուազիան, այլեւս պիտի չյօ-  
ժարէին կրել անդլիական լուծը եւ զուր տեղ էր ուժ սպառել,  
Հնդկաստան, ազէտ ու նախապաշարեալ ժողովուրդի այդ կոյս  
երկիրը, կը բաւէր Անդլիոյ տիրող դասակարգը կշտացնելու հա-  
մար: Եւ վարչապետը սխալած չէր:

Անդլիական մարդասիրութեան պատմութիւնը Հնդկաստանի  
մէջ միայն սովորական շահագործման պատմութիւն մը չէ, այլեւ  
պատմութիւնն է անտրակելի ոճիրներու, կողոպուտներու, անխիղճ  
հարստահարութեանց, մասսայական թշուառ երեսյթներու: Պատ-  
մութիւն մը որուն համար ստուար հատորներ կարելի է լեցնել երբ  
կարելի ըլլայ հոս ու հոն ցրուած բազմաթիւ արխիւները հաւաքել  
եւ զանոնք կցել պաշտօնական տեղեկատուութեանց:

Հնդկաստանի մէջ անդլիական իմպերիալիզմի պատմութիւ-  
նը երեք շրջան կը ներկայացնէ մեզի: Առաջինը առեւտրական կա-  
պիտալի շրջանն է որուն ներկայացուցիչն է Արեւելեան Հնդկաս-  
տանի Ընկերութիւնը: Անոր հաստատած սխալմը տեւեց մինչեւ  
ԺԸ. զարու վերջը: Երկրորդը արդիւնազործական կապիտալի շր-  
ջանն է որ նոր տեսակի շահագործման հիմք հաստատեց Հնդկաս-  
տանի մէջ ԺԹ. զարուն: Երրորդը Ֆինանս-կապիտալի շրջանն է  
որ ԺԹ. զարու փակման թուականէն սկսաւ եւ հին աստղծներուն  
վրայ հաստատեց արդիական շահագործման սխալմը:

Առաջին շրջանին ծաղկեցաւ առեւտրական կապիտալը, որմէ  
յետոյ Հնդկաստանի մէջ բրիտանական քաղաքականութիւնը փոխ-  
ւեցաւ: Արեւելեան Հնդկաստանի Ընկերութիւնը հրապարակէն հե-  
ռացաւ: Բրիտանական կառավարութիւնը ստանձնեց Հնդկաստանի  
վարչական գործը որպէս ներկայացուցիչ կապիտալիստ դասակար-  
գին: Անկէ վերջ արդիւնաբերական կապիտալը մուտք գործեց Հընդ-  
կաստանի մէջ: Բայց Հնդկաստան իր եկամուտով պէտք է հաւա-  
սարակչոէր Անդլիայէն արտածուած կապիտալը: Ուրիշ խօսքով,  
այս անգամ Հնդկաստանէն կապիտալը պէտք էր արտածուէր դէպի  
Անդլիա: Այսպէս, ուրեմն, այն բրիտանական կապիտալը որ շա-  
հագործման գրուած էր Հնդկաստանի մէջ հնդիկ ժողովուրդին  
վրայ կատարուած կողոպուտին պտուղն էր: Հնդկաստանի ժողո-  
վուրդը Անդլիոյ համար կապիտալ հայթայթելով հանդերձ պար-  
տաւոր էր տալ այդ կապիտալի տոկոսն ու շահարժինը:



Հնդկաստանի մէջ բրիտանական կապիտալի շահարկութեանց միջուկն էր հանրային պարտքը:

Բրիտանական կառավարութեան ձեռքին մէջ հանրային պարտքը 18 տարուան մէջ 70 միլիոն լիբա ստերլինկէն բարձրացաւ 140 միլիոնի: 1900-ին ան եղաւ 224 միլիոն, 1913-ին՝ 274 միլիոն, իսկ 1936-ին՝ 719 միլիոն: Երեք քառորդ դարու ընթացքին Հնդկաստանի պարտքը Անգլիոյ տասը անգամ աւելցած էր: Բրիտանական Փինանս-կապիտալը ինչ ձեռնարկութիւն ու ծախս որ կ'ընէր Հնդկաստանի մէջ, հնդկ ժողովուրդը պէտք էր վճարէր բոլոր ծախսերը, իսկ անգլիացի կապիտալիստը պէտք էր գանձէր շահը: Ասկէ աւելի մարդասիրութիւն:

Հնդկաստանէն արտածուած հում նիւթերը անհուսառալի կերպով աճեցան, մասնաւորապէս 1833-էն յետոյ: Հում բամբակի արտածումը 1813-ին 9 միլիոն փաունտ էր, 1833-ին եղաւ 32 միլիոն փաունտ, իսկ 1844-ին՝ 88 միլիոն փաունտ: Ոչխարի բուրդի արտածումը 37 հազար փաունտ էր 1833-ին, 3 միլիոն փաունտի հասաւ 1844-ին: Կտաւահատի արտածումը 1833-ին 2 հազար գրիւ էր, 1844-ին բարձրացաւ 237 000 գրիւի:

Նոյնիսկ ուտեստեղէնի արտածումը տասնապատիկ աւելցաւ սովահար Հնդկաստանէն: Հացահատիկներէն գլխաւորապէս բրինձն ու ցորենը 1849-ին հսկայ քանակութեամբ արտածուեցան, մինչ հնդկ ժողովուրդը կը տառապէր սովէն: 1849-ին արտածուած բլրբինձի ու ցորենի արժէքն էր 858 000 լիբա ստերլինկ: 1858-ին անոնց արտածման արժէքը եղաւ 4 միլիոն ստերլինկ, 1877-ին՝ 9 միլիոն ստերլինկ, 1901-ին՝ 11 միլիոն ստերլինկ, 1914-ին՝ 19 միլիոն ստերլինկ:

Վ. Սի Լիլի իր Հնդկաստան եւ իր Պրոքլեմները անուն ուսումնասիրութեան մէջ մեզի կուտայ հետեւեալ պատկերը Հնդկաստանի սովահար ժողովուրդի դրութեան.

Տարիներ	Սովէն մեռնողներու քիւր
1800-25	1.000.000
1825-50	400.000
1850-75	5.000.000
1875-1900	15.000.000

Մարդիկ ճանձներու պէս կը մեռնէին, մինչ անդին անգլիացի կապիտալիստը հսկայ գումարներ կը կուտակէր իր գանձարանին մէջ, թողլով որ իր մանկլաւիկները «քաղաքակրթութեան ռահ-վիրայի» գովքը հիւսնն հանուր աշխարհի սողնու:

ՀՈՂԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Հնդկաստանի մէջ իմպերիալիստական իշխանութիւնն ու ընկերային եւ քաղաքական ամբողջ սիտակ՝ կառուցուած է հնդիկ գիւղացիութեան շահագործման վրայ, իսկ այդ գիւղացիութիւնը, պէտք է ըսել, Հնդկաստանի բնակչութեան երեք քառորդ մասը կը կազմէ որ կը նշանակէ երկրի բնակչութեան մեծամասնութիւնը:

Ոմանք այս հանդամանքը կը վերագրեն, որպէս բնական երեւոյթ, հնդիկ ժողովուրդի յետամնացութեան որուն համար Հնդկաստանի մէջ ընկերային-քաղաքական փոփոխութեան հնարաւորութիւն չեն տեսներ:

Այդօրինակ յայտարարութիւն մը բրա Պ. Մոնթակոն 1918ին երբ գեկոյց կուտար Հնդկաստանի ներքին կեանքի պայմաններուն շուրջ անգլիական պարլամենտին մէջ:

Ահաւասիկ անոր արտայայտած դասական չքնադ միտքը. «Հողագործութիւնը հնդիկ ժողովուրդի ամենամեծ զբաղումն է: Նորմալ աստիճանը Անգլիոյ նման բարձր աստիճանի ճարտարարւեստի զարգացման հասած երկիր մը ամէն հարիւր մարդերէն 58-ը կուտայ արդիւնաբերութեան եւ միմիայն եօթը հողագործութեան: Բայց Հնդկաստանի մէջ ամէն հարիւր մարդոցմէ 81 մարդիկ կը զբաղին հողագործութեամբ եւ միայն եօթը՝ ճարտարարւեստով: Հնդկաստանի ժողովուրդին բացարձակ մեծամասնութեան ապրուստի եւ զբաղումի միակ աղբիւրն է հողագործութիւնը: Հնդիկը հողէն չի բաժնուիր: Ան բնաւ հող չընէր թէ իր մշակած հողը իրենն է թէ կը պատկանի ուրիշի մը»:

Իմպերիալիզմի այս փաստարանին յայտարարութեան մէջ ինչ որ կը պակսի մտապայման է այն իրողութեան որ Հնդկաստանի այդ դրութիւնը զարերու ժառանգութիւնը չէ եղած, այլ հետեւանքը իմպերիալիստական իշխանութեան: Բրիտանական իշխանութեան չըջանին էր որ Հնդկաստանի հին ձեւի արդիւնաբերութիւնը փճացաւ եւ ժողովրդական մասսաները ջուրեցան հողագործութեան կողմը: Եւ հնդիկ ժողովուրդի թշուառութիւնը սկսաւ հէնց այդ ուժերու անհամեմատական տեղափոխութենէն:

Տեսէք թէ ի՞նչ կը զրէ Սըր Թամըս Հոլբրոքն իր Հնդկաստանի ժողովուրդին Պրոքլեմները գրքին մէջ, 1911 թուին.

«Հնդկաստանի բնակչութիւնը ոմանք հաշուեր են 315 միլիոն: Այդ բնակչութեան երեք չորրորդը կ'ապրի հողագործութեամբ: Մշակուած հողերու տարածութիւնը սակաւին ճշուած չէ, բայց սխալած չենք ըլլար երբ ենթադրենք որ հողագործութեամբ



Հնդկաստանի մէջ բրիտանական կապիտալի շահարկութեանց միջուկն էր հանրային պարտքը:

Բրիտանական կառավարութեան ձեռքին մէջ հանրային պարտքը 18 տարուան մէջ 70 միլիոն լիբա ստերլինկէն բարձրացաւ 140 միլիոնի: 1900-ին ան եղաւ 224 միլիոն, 1913-ին՝ 274 միլիոն, իսկ 1936-ին՝ 719 միլիոն: Երեք քառորդ դարու ընթացքին Հնդկաստանի պարտքը Անգլիոյ տասը անգամ աւելցած էր: Բրիտանական Փինանս-կապիտալը ինչ ձեռնարկութիւն ու ծախս որ կ'ընէր Հնդկաստանի մէջ, հնդկ ժողովուրդը պէտք էր վճարէր բոլոր ծախսերը, իսկ անգլիացի կապիտալիստը պէտք էր դանձէր շահը: Ասկէ աւելի մարդատիրութիւն:

Հնդկաստանէն արտածուած հում նիւթերը անհատապի կերպով աճեցան, մասնաւորապէս 1833-էն յետոյ: Հում բամբակի արտածումը 1813-ին 9 միլիոն փաունտ էր, 1833-ին եղաւ 32 միլիոն փաունտ, իսկ 1844-ին՝ 88 միլիոն փաունտ: Ոչխարի բուրդի արտածումը 37 հազար փաունտ էր 1833-ին, 3 միլիոն փաունտի հասաւ 1844-ին: Կտուհաստի արտածումը 1833-ին 2 հազար գրիւ էր, 1844-ին բարձրացաւ 237.000 գրիւի:

Նոյնիսկ ուտեստեղէնի արտածումը տասնապատիկ աւելցաւ սովահար Հնդկաստանէն: Հացահատիկներէն գլխաւորապէս բրինձն ու ցորենը 1849-ին հսկայ քանակութեամբ արտածուեցան, մինչ հնդկ ժողովուրդը կը տառապէր սովէն: 1849-ին արտածուած բրինձի ու ցորենի արժէքն էր 858.000 լիբա ստերլինկ: 1858-ին անոնց արտածման արժէքը եղաւ 4 միլիոն ստերլինկ, 1877-ին՝ 9 միլիոն ստերլինկ, 1901-ին՝ 11 միլիոն ստերլինկ, 1914-ին՝ 19 միլիոն ստերլինկ:

Վ. Սի Լիլի իր Հնդկաստանն եւ իր Պրոբլէմները անուն ուսումնասիրութեան մէջ մեղի կուտայ հետեւեալ պատկերը Հնդկաստանի սովահար ժողովուրդի դրութեան.

Տարիներ	Սովէն մեռնողներու քիւր
1800-25	1.000.000
1825-50	400.000
1850-75	5.000.000
1875-1900	15.000.000

Մարդիկ ճանճերու պէս կը մեռնէին, մինչ անդին անդլիացի կապիտալիստը հսկայ գումարներ կը կուտակէր իր դանձարանին մէջ, թողլով որ իր մանկլաւիկները «քաղաքակրթութեան ռահ-փրայի» գովքը հիւսն հանուր աշխարհի սոջեւ:

ՀՈՂԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՐԸ

Հնդկաստանի մէջ իմպերիալիստական իշխանութիւնն ու ընկերային եւ քաղաքական ամբողջ սխալմբ կառուցուած է հնդիկ զիւղացիութեան շահագործման վրայ, իսկ այդ զիւղացիութիւնը, պէտք է ըսել, Հնդկաստանի բնակչութեան երեք քառորդ մասը կը կազմէ որ կը նշանակէ երկրի բնակչութեան մեծամասնութիւնը:

Ոմանք այս հանդամանքը կը վերագրեն, որպէս բնական երեւոյթ, հնդիկ ժողովուրդի յետամնացութեան որուն համար Հնդկաստանի մէջ ընկերային-քաղաքական փոփոխութեան հնարաւորութիւն չեն տեսներ:

Այդօրինակ յայտարարութիւն մը ըրաւ Պ. Մոնթակոն 1918ին երբ զեկոյց կուտար Հնդկաստանի ներքին կեանքի պայմաններուն շուրջ անգլիական պարլամենտին մէջ:

Ահաւասիկ անոր արտայայտած դասական չքնադ միտքը. «Հողագործութիւնը հնդիկ ժողովուրդի ամենամեծ զբաղումն է: Նորմալ ստանները Անգլիոյ նման բարձր աստիճանի ճարտարարւեստի զարգացման հասած երկիր մը ամէն հարիւր մարդերէն 58-ը կուտայ արդիւնաբերութեան եւ միմիայն եօթը հողագործութեան: Բայց Հնդկաստանի մէջ ամէն հարիւր մարդոցմէ 81 մարդիկ կը զբաղին հողագործութեամբ եւ միայն եօթը՝ ճարտարարուեստով: Հնդկաստանի ժողովուրդին բացարձակ մեծամասնութեան ապրուստի եւ զբաղումի միակ աղբիւրն է հողագործութիւնը: Հնդիկը հողէն չի բաժնուիր: Ան բնաւ հող չընէր թէ իր մշակած հողը իրենն է թէ կը պատկանի ուրիշի մը»:

Իմպերիալիզմի այս փաստարանին յայտարարութեան մէջ ինչ որ կը պահսի մտապումն է այն իրողութեան որ Հնդկաստանի այդ դրութիւնը զարեբու ժառանգութիւնը չէ եղած, այլ հետեւանքը իմպերիալիստական իշխանութեան: Բրիտանական իշխանութեան շրջանին էր որ Հնդկաստանի հին ձեւի արդիւնաբերութիւնը փճացաւ եւ ժողովրդական մասսաները քուեցան հողագործութեան կողմը: Եւ հնդիկ ժողովուրդի թշուառութիւնը սկսաւ հէնց այդ ուժերու անհամեմատական տեղափոխութենէն:

Տեսէք թէ ի՞նչ կը գրէ Սըր Թամըս Հորթընէս իր Հնդկաստանի ժողովուրդին Պրոբլէմները գրքին մէջ, 1911 թուին.

«Հնդկաստանի բնակչութիւնը ոմանք հաշուեր են 315 միլիոն: Այդ բնակչութեան երեք չորրորդը կ'ապրի հողագործութեամբ: Մշակուած հողերու տարածութիւնը տակաւին ճշգուտ չէ, բայց սխալած չենք ըլլար երբ ենթադրենք որ հողագործութեամբ



ապրող բնակչութեան ամէն մէկ անդամին բաժին ինկած հողամասը մէկ էյֆըրէն պակաս է:

«Հնդկաստանի հողը ոչ միայն երկրի հսկայ բնակչութեան ապրուստը կը հասփայտէ, այլև հողային արտադրութեան մեծ մասը կը յատկացուի արտածման: Եւ պէտք չէ մոռնալ նշելու նաև որ Հնդկաստանի հողագործութիւնն է որ կը վճարէ ներածուած ապրանքներու գինը: Այժմ երբ մենք օտար շուկաները գոհացնող հողային տարածութեան դուժարը հանենք մշակուած հողամասի դուժարէն, մնացած հողամասը բաժնելով հնդիկ բնակչութեան, իւրաքանչիւր անձի կ'իյնայ երկու երրորդ էյֆըր հող: Եւ երեւակայեցէք որ այդ փոքրիկ հողաշերտի արտադրութեամբ այդ մարդը պիտի ապրի, պիտի գնէ իրեն համար հագուստ, կոշիկ, եւ յետոյ կառավարութեան պիտի տայ իրմէ պահանջուած տուրքը»:

Հարցին ամենավատ կողմը այն է որ թողունք անմշակ մնացած խոսքան վայրերու ահազին տարածութիւնը, մշակելի հողերը չունին արդիական տեխնիկա, չունին հարկ եղած ոռոգման միջոցները: Երբ խեղճուկ գիւղացիներէն կը խլուի անոնց յաւելեալ արտադրութիւնը եւ մնացածովը հողիւ թէ անոնք կը քաշքշեն իրենց դուրսութիւնը, այլևս անկարելի կը դառնայ որ անոնք մտածեն հողագործութիւնը զարգացնելու մասին: Այս գործը գլուխ հանողը պիտի ըլլար կառավարութիւնը, բայց կառավարութիւնը բնաւ նրկատի առած չէ այդ պատասխանատուութիւնը: Եւ ահա հողագործութիւնը մնացեր է յետամնաց վիճակի մէջ ու հողային ճգնաժամը յառաջացեր է այդ վիճակէն:

Այժմ ըսենք թէ ի՞նչ էր Հնդկաստանի հողային սիւտէմը:

Նախ քան բրիտանական իշխանութեան հաստատումը, Հընդկաստանի հողային սիւտէմը հին, աւանդական ձևով կ'ընթանար: Հողը կը պատկանէր գիւղացիութեան, գիւղական համայնքին: Ան թագաւորին սեփականութիւնը չէր նկատուեր: Կառավարութիւնը կը ստանար հողային արտադրութեան մէկ բաժինը, մէկ վեցերորդէն մինչև մէկ տասներորդի բաժինը, եւ երբեմն միայն այդ բաժինը կը բարձրանար մէկ չորրորդի, ան ալ պատերազմի պարագային:

Բրիտանական տիրապետութիւնը երբ հաստատուեցաւ Հընդկաստանի մէջ, ատեն մը հողային աւանդական սիւտէմը պահուեցաւ, բայց յետոյ ամէն ինչ հիմնապէս փոխուեցաւ: Հողատէր գիւղացիները պարտքի տակ իյնալով նախ իրենց պարտքը վճարելու համար աշխատեցան, ապա, չկարենալով ազատուիլ գիւղուած պարտքերէն, կորսնցուցին իրենց հողերը, որով կազմուեցաւ նոր

դասակարգ մը, երկրագործական պրոլետարիատը որ ներկայիս կը ներկայացնէ հողագործ բնակչութեան գրեթէ կէս մասը:

Անդլիական իշխանութիւնը Հնդկաստանի մէջ ստեղծեց խոշոր հողատիրութեան սիստէմը: Այդ խոշոր հողատէրերը եղան բընիկ ցեղապետները, որոնք դարձան բրիտանական իմպերիալիզմի հաւատարիմ գործակալները: Անոնց գործն էր մէկ կողմէ գիւղացիութիւնը կեղեքելով անդլիացի լորտերու կեանքը վայելել, միւս կողմէ կրօնական հաշիշով թունաւորուած ժողովուրդը պահել անարտունջ հպատակութեան մէջ:

Լորտ Վիլիյամ Բենտիկ որ Հնդկաստանի բնօրինակը կառավարիչ եղած է 1828-1835 իր պաշտօնական հազորդապետութեան մէջ գրած է հետեւեալը.

«Եթէ յեղափոխութեան դէմ սպահով պատուար մը կանգնեցնելը անհրաժեշտ է, ես պիտի ըսեմ որ խոշոր հողատիրութեան սիստէմը թէև մի քանի կէտերու մէջ ձախողած է, բայց անոր աւելի ամրապնդումն ու շարունակումը բացարձակապէս անհրաժեշտ է բրիտանական տիրապետութեան յաւերժացման համար: Մենք հնդկական ուժով միայն կրնանք Հնդկաստանի ժողովուրդը պահել հաւատարիմ հպատակութեան լուծին տակ»:

Հնդկաստանի մէջ հողային յարաբերութեանց պատկերը 1921-ի եւ 1931-ի վիճակագրական թիւերով մեզի կը ներկայացնէ հնդիկ երկրագործութեան մէջ դասակարգերու բաժանումները հետեւեալ ձևով.

Մշակմամբ չզբաղող հողատէրեր,	1921-ին 3·700·000
	1931-ին 4·100·000
Մշակողներ (հողատէրեր կամ վարձուոր ֆարմըրներ).	
	1921-ին 74·600·000
	1931-ին 65·500·000
Հողագործական բանուորներ.	1921-ին, 21·700·000
	1931-ին, 34·500·000

Մշակմամբ չզբաղող հողատէրերու թուական աճումը անդրադարձումն է հողատէր եւ մշակող գիւղացիութեան սեփականազրկման: Փոքրիկ հողատէրերը երբ կորսնցուցին իրենց հողերը, օգտուեցան ուրիշներ եւ դարձան մեծ հողատէրեր:

Ասոնցմէ զատ ուրիշ դասակարգ մըն ալ կայ որուն անունը յիշուած չէ պաշտօնական վիճակագրութեանց մէջ: Այդ դասակարգը բոլորովին արհամարհուած դասակարգ մըն է որուն պատկանողները կ'աշխատին առանց աշխատավարձի, միայն փոր մը



հացի համար: Համարեա թէ գերիներ են անոնք, միայն այն տարբերութեամբ որ անոնք գերիներու նման հրապարակի վրայ չեն ծախուիր, ոչ ալ ենթակայ են ըստ հաճոյս մահացման: Ասոնք Հնդկաստանի նախնական ցեղերուն կը պատկանին որոնք ցրուած են երկրին բոլոր կողմերը:

Այժմ ըսենք թէ փոքր հողատէր գիւղացիները ի՞նչպէս զբրկուեցան իրենց հողերէն եւ դարձան վարձու աշխատաւորներ:

Այս հարցման պատասխանը կը գտնենք բրիտանական իշխանութեան ասեն գրուած օրէնքներուն մէջ:

Կառավարութիւնը իր ծախքերը գոցելու համար երբ տուրքերու յաւելման միջոցին կը դիմէր, այդ տուրքերը ամէնէն շատ կը ճնշէին աղքատ գիւղացիութիւնը: Փոքր հողատէր գիւղացիներ ստիպուած կ'ըլլար դիմել փոխառութեան: Երբ ան իր պարտքը չէր կրնար վճարել ճիշդ ատենին, պարտապահանջը կը դրաւէր տնոր հողը: Խեղճ գիւղացին փախուստի ճամբայ չունէր:

Դրամական փոխառութիւնը նոր երեւոյթ մը չէր Հնդկաստանի մէջ: Բայց դրամական փոխառութիւնը նոր նշանակութիւն ստացաւ կապիտալիստական շահագործման սխաւմին տակ, մասնաւորապէս անգլիական իմպերիալիզմի տիրապետութեան շրջանին: Նախ քան անգլիական իշխանութեան հաստատումը Հնդկաստանի մէջ, գիւղացին կրնար դրամ փոխ առնել իր անձնական խոստումով: Դրամ փոխ տուողը մի տեսակ բախտախաղ էր որ կը փորձէր, եւ պէտք է ըսել թէ շատ քիչ անգամ կորուստ կ'ունենար ան, որովհետեւ պարկեշտ գիւղացին ծանրաբեռնուած չէր անհարկի ծախքերով: Նախ որ իր փոխ առած դրամին տոկոսը չորս առ հարիւր էր եւ յետոյ կառավարութեան դրամ տուրքն ալ այնքան ծանր չէր: Բրիտանական տիրապետութեան շրջանին ամէն ինչ փոխուեցաւ: Դրամ փոխ տուողները վաշխառուներ դարձան: Փոխ տրուած դրամին տոկոսը հարիւրին չորսէն բարձրացաւ հարիւրին քառասունի: Եռասպակուեցաւ նաեւ կառավարութեան պահանջած տուրքը: Գիւղական համայնքի դատարանը այլեւս հեղինակութիւն չունէր պաշտպանելու խեղճուկ գիւղացիին դատը: Անգլիական օրէնքի դատարանն էր միջոց արձակողը եւ այդ դատարանը խեղճ գիւղացիներուն իրաւունքը պաշտպանելու համար հաստատուած չէր:

Ահա թէ ինչպէս փոքր հողատէր գիւղացիները, պարտքի բռնան տակ կորաքամակ, դարձան պրոլետարներ:

Իրերու ընդհանուր վերլուծմամբ հողային ճգնաժամի աճման գլխաւոր կէտերը կարելի է նշանակել հետեւեալ կարգով:

Առաջին կէտը Հնդկաստանի գաղութային վիճակին հետե-

ւանքով հողագործական գեանի վրայ բաղմութեան խտացումն էր: Այդ գրութիւնը ազդեց միւս գործօններուն վրայ եւ դանոնք ուժեղացուց:

Երկրորդ կէտը հողագործութեան կայունացումն ու վաւթարացումն էր: Նուազ բերքատուութիւն, աշխատանքի վատնում, մշակելի շրջանները մշակելու ձախողանք եւ նոյնիսկ բերքերու վաւթարացում ու մշակելի հողերու նուազում:

Երրորդը, գիւղացիութեան հողի ծարաւը մէկ կողմէ, միւս կողմէ վարձակալութեան յարածուն նուազումը եւ հողերու ստորաբաժանումը այնպիսի եղանակով որ կոտորակուած հողերը այլեւս եկամուտ չէին բերեր:

Չորրորդ կէտը հողատիրութեան ընդարձակումն էր: Հողատէրերը կը բազմանային այնպիսի արագութեամբ որ անոնցմէ շատերը այդ հողերը չէին կրնար լրիւ օգտագործել:

Հինգերորդը մշակողներու պարտքերուն բարձրացումն էր, որուն կը հետեւէր անոնց հողազրկումն ու թշուառացումը:

Վեցերորդ կէտը պարտքերու անվճար մնալու հետեւանքով հողատէրերու բաղմացումը եւ հողագուրկ պրոլետարներու աճումն էր, որով այս վերջինը հող կը պատրաստէր ակրարային յեղափոխութեան համար:

Եօթներորդը համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետեւանքով (1930-35) երկրագործական արտադրութեանց գիներու անկումն էր:

Վասթարացման, սեփականադրկման եւ դասակարգերու զատորոշման պրոցէսին հետ, տնտեսական անխուսափելի ճգնաժամերը Հնդկաստանի մէջ յեղափոխութիւն պիտի յառաջացնէին անտարակոյս:

ՀՆԴԻԿ ԱԶԳԸ

Իմպերիալիզմի վաստարանները կը հարցնեն. «Հնդիկ ազգ գոյութիւն ունի՞: Կարելի՞ է սորը կոչել տարբեր ցեղերու եւ կրօնքներու հետեւոյ մարդոց խառնուրդը, մարդիկ որոնք իրարմէ անջատուած են լեզուներով, ընկերային եւ մշակութային խրամատներով: Արդեօք սխալ չէ՞ որ մենք երկրի անունով ազգ անուանենք բազմացեղ ու բազմալեզու այն ժողովուրդները որոնք բրիտանական իշխանութեան տակ միայն աշխարհին ներկայացան որպէս միացեալ հասարակութիւն»:

Սըր ձառն Սիլի 1888-ին որոշակի յայտարարեց.



«Այն ռամիկ գաղափարը որ շատերու մտքին մէջ բոյն դրած է թէ Հնդկաստանի մէջ ազդուութիւն մը կայ, քաղաքական գիտութիւնը այդպիսի գաղափար մը հիմնովին կը հերքէ: Հնդկաստան քաղաքական անուն մը չէ, այլ աշխարհագրական բացատրութիւն մը, ինչպէս Եւրոպա կամ Ափրիկէ: Ան ազդի մը անունը չէ, միասնակ լեզու ունեցող ժողովուրդի մը անունը չէ, այլ բազմաթիւ ազգերու եւ լեզուներու աշխարհագրական անունը»:

Բայց թէ ի՞նչ է բոլոր այդ հարցումներուն եւ փաստարկութեանց բուն նպատակը: Շատ պարզ բան մը: Մարդիկը կ'ուզեն փաստել որ Հնդկաստանի մէջ քանի որ բազմաթիւ ցեղեր ու ազգութիւններ կան, քանի որ այդ երկրին մէջ 222 տեսակ լեզու կը խօսուի, քաղաքակիրթ Անդլիոյ իշխանութիւնն է որ պիտի կրնայ այդ երկիրը կառավարել իր միաձեւ օրէնքներով եւ հոն բնակող այլազան ժողովուրդները զատարակիւ եւրոպական քաղաքակրթութեամբ: Վերցուցէք բրիտանական իշխանութիւնը Հնդկաստանի վրայէն եւ կը տեսնէք որ երկիրը կը դառնայ ցեղային կռիւններու կրկէս:

Ինչ խեղճ արամբանութիւն որ նկատի չ'առնել պատմական անհերքելի իրողութիւնները: Հնդկաստանի այլազան ցեղերն ու ազգերը այդ երկրի թնիկներն էին, եւ բրիտանական իշխանութեան հաստատումէն առաջ անոնք կ'ապրէին խաղաղ ու բարուաճ կեանք մը: Ծիշոյ է որ ցեղային կռիւններ տեղի ունեցած են, բայց ոչ այնքան տեսական ու աւերիչ: Հնդկաստանի ամէնէն շատ վնաս տուին արտաքին արշաւանքները, նախ արաբական, ապա մոնղոլներու արշաւանքները: Սուլթան Մահմուտ 1001 թուականին սկսաւ իր արշաւանքը դէպի Հնդկաստան: Մինչեւ 1024 թուականը տասնեւերկու անգամ արշաւանք կատարեց Հնդկաստանի վրայ եւ իր դէմ գտաւ Հնդիկ բազմացեղ ժողովուրդի հերոսական դիմադրութիւնը:

Եւ ի՞նչ հարկ պրպտել Հնդկաստանի անցեալ պատմութիւնը երբ մենք ունինք Ամերիկան: Ամերիկայի մէջ կան բազմաթիւ ցեղեր, բազմաթիւ ազգեր զանազան կրօնական դաւանանքներով, բայց անոնք միասնաբար կազմել են ամերիկեան ազգը: 1770 թուականին եթէ մէկը ծորձ Վաշինկտոնի երեսն ի վեր զինքը «ամերիկացի» կոչէր, ան այդ կոչումը մեծագոյն նախատինքը պիտի համարէր իրեն համար: Բայց երբ անկախութեան հռչակումէն յետոյ աստղագրութիւնը զրօշակը ծածանեցաւ պետական շէնքերուն վրայ, երեսն եկաւ ամերիկեան ազգը: Ո՞ր գացին կլիմայական տարբերութիւնները, աշխարհագրական վայրերը, տարբեր ցեղերն ու ազգերը, տարբեր լեզուներն ու կրօնքները, տարբեր կուլտուրաներն

ու սովորութիւնները: Բորնարի որ Հիւսիսային Ամերիկայի գաղութները ճամբորդել էր 1759-ին դրած է:

«Կրակն ու ջուրը այնքան այլաձին չեն որքան Հիւսիս Ամերիկայի գաղութները: Տարբեր գաղութներու միջեւ այնքան խորունկ է տարբերութիւնը նկարագրի, վարուեցողութեան, կրօնքի, անտեսական շահերու, որ ես կը մտածեմ թէ ամբողջապէս ազէս ըլլալու եմ մարդկային բնութեան մասին, եթէ լսեմ որ երբ այդ գաղութները ազատ թողուին անոնք երկիրը պիտի զարգացնեն աւելի լաւ քան թէ անկլիսական վերհակիչ իշխանութեան ներքեւ: Ընդհակառակը, իրերը ցոյց կուտան որ անմիջապէս երբ բրիտանական իշխանութիւնը վերնայ Հիւսիս Ամերիկայի գաղութներուն վրայէն, երկրի մէկ ծայրէն միւսը պիտի սկսի քաղաքացիական պատերազմ»:

Անկլիսական իմպերիալիզմի ջատագով այս մարդարէին գուշակութիւնը կատարուեցա՞ւ երբ 1776 թուականին յայտարարուեցաւ ամերիկեան անկախութիւնը: Ընդհակառակը, այդ գաղութները ազատութեան հովանիին տակ այնքան արագօրէն զարգացան որ աշխարհի չորս ծայրերէն բազմաթիւ գաղթականներ լեցուեցան նոր աշխարհի դռներէն ներս, որոնելու իրենց բախտը: Անոնք հետզհետէ մոռցան իրենց լեզուն ու ազգութիւնը եւ կոչուեցան ամերիկացի: Իբրաւ է թէ անկախութեան հրատարակութենէն 84 տարի յետոյ սկսաւ քաղաքացիական պատերազմ մը, բայց այդ պատերազմը տարբեր ցեղերու կամ ազգութեանց պատերազմ չէր, այլ անտեսական ներհակ ուժերու, նոր ու հին ուժերու պատերազմը: Հիւսիսային նահանգներու ճարտարարուեստական կապիտալիզմի զարգացումը, իր յոռաշղիմութեան ճամբուն վրայ, մեծագոյն արդիւք կը նկատէր հարաւային նահանգներու Ֆէոդալական մնացորդները: Կոիւր, ուրեմն, կապիտալիզմի եւ Ֆէոդալական յամառ մնացորդներու միջեւ էր: Տարակոյս չկար որ հիւսիսը պիտի յաղթէր եւ յաղթեց:

Նոյն ճակատագրին կը հետեւի Հնդկաստան: Հնդկաստանի ժողովուրդը իր կաշին վրայ տակաւին կը տեսնէ անկլիսական իշխանութեան խարազանի հարուածներուն բացած վէրքերը եւ նոր փորձառութեանց պէտք չունի համոզուելու որ միայն ազատութեամբ կրնայ ազանովել իր բարեկեցութիւնն ու յոռաշղիմութեան ճամբուն մէջ իր ստեղծագործ աշխատանքը: Հնդկաստանի ժողովուրդին յոռաշղիմական առաջնորդները ազատութեան հովանիին տակ է որ պատահութիւն պիտի ունենան ձեռք առնել եւ լուծել այն խնդիրները որոնք կապ ունին ժողովուրդը տանելու գեմոկրատա-



կան եւ ընկերային յառաջդիմութեան ճանապարհին վրայ: Վերջին կէս դարու փորձառութիւնը մասնաւորապէս ցոյց տուած է որ այժմեան անդլիական իմպերիալիզմի քայքայման շրջանին անհրաժեշտ է յարձակողական սկսիլ հասարակական շարքիքներուն դէմ, որպիսիք են ճնշուած դասակարգերու գոյութիւնը, համայնքային բաժանումները, սերնդական արհեստաւորներու արդեաւհումը, խոչոր հողատէրերու սանձարձակ շահագործումը, անդրադիտութիւնը եւ նման շարքիքները:

Բրիտանական կառավարութիւնը ոչ միայն այդ շարքիքներուն չէ մօտեցեր, այլ ընդհակառակը դանոնք աւելի մեծցուցեր ու ընդհանրացուցեր է: Բայց մի բան ակներեւ է: Այդ այն է որ այդ շարքիքները Հնդկաստանի ժողովուրդներուն մէջ, չնայած ցեղային, լեզուական ու կրօնական տարբերակներուն, յառաջացուցեր են զգացման եւ մտածողութեան միատեսակութիւնը:

Եւ ասով արդէն սկիզբը կը դրուէր անգլային շարժումին: Իսկ այդ անգլային շարժումին մեծագոյն առաջնորդը եղաւ այն անձնուրաց մեծ մարդը որուն անունը ծանօթ է աշխարհին, Մահադէւ Կանտի:

### ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐՃՈՒՄԸ

Որ ներկայիս հնդիկ ազգի մը գոյութիւնը իրականութիւն է, այդ բանը այլեւ կարելի չէ հերքել, թէեւ հին, մաշած փաստերը կրկնող թուժակներ կան տակաւին: Միայն թէ հիմա ալ տարբեր ձեւի մեկնարանութիւններ կը արուին: Օրինակի համար, Մոնտակուն կը գրէ.

«Հնդկաստանի ժողովուրդին այն մասը որ քաղաքական մտքի հասունացման աստիճանին հասած է կը հաստատէ մեր տարած մտաւորական դաստիարակութեան աշխատանքի արդիւնքը: Անոնք մեր զպրոցի աշակերտներն են որոնք իւրացուցեր են մեր դաստիարակները: Այդ առթիւ մենք անոնց վարկ կուտանք: Հնդկաստանի մէջ այժմու մտաւորական եւ բարոյական յառաջդիմութեան հոսանքը մենք կ'ընդունինք ոչ թէ որպէս յառաջդիմութիւն, այլ որպէս զնահատութիւն մեր կատարած գործին»:

Ճի՞շդ է արդեօք: Իրա՞ւ է թէ հնդկական անգլային շարժումը յառաջացիր է Հնդկաստանի կրթուած դասակարգէն որոնք իրենց դասատուներէն սորված են կարգալ Բըրքի, Միլի եւ Մակոլէի գործերը եւ լուսաւորուած են Կլատտոնի եւ Բրայտի պարլամենտական քարոզներէն: Մեզի հրամցուածը հրաշալէպ է, բայց մենք այնքան միամիտ չենք որ հաւատանք հրաշալէպերու իրականու-

թեան եւ ըսենք թէ Նարոլէսնի մը կամքէն ծնաւ այժմու Ֆրանսան եւ կամ բողոքականութիւնը երեւան եկաւ Լուտերի անձնական ինքնախտուկ հանճարէն: Ոչ երբեք: Մենք կ'ըսենք թէ Հնդկաստանի անգլային շարժումը յառաջացաւ ընկերային պայմաններէն, իմպերիալիզմի ստեղծած տնտեսական պայմաններէն եւ անոր շահագործման սխալէմէն: Իմպերիալիզմի յառաջ տարած շահագործման այդ սխալէմին ներքեւ հնդիկ հասարակութեան մէջ երեւան եկան ընկերային եւ տնտեսական ուժեր, հրապարակ ելաւ հնդկական բուրժուազիան որուն մրցումը բրիտանական բուրժուազիայի հետ բնական էր ու անխուսափելի, հող չէր թէ ի՞նչ գծով առաջ կը տարւէր կրթական գործը: Հնդկական բուրժուազիան անդլիական դաստիարակութեան պէտք չունէր, ան սանկրիտ Վեդաներէն ալ կըրնար սորվիլ իր պայքարի սկզբունքներն ու նշանաբանները:

Երբ Մակոլէյը ի հաշիւ անդլիական իմպերիալիզմին անդլիականացած դաստիարակութիւնը պատուաստեց Հնդկաստանի եւ պարտութեան մատնեց արեւելեանը, անոր նպատակը չէր ստեղծել հնդկական անգլային գիտակցութիւն, այլ բոլորովին արմատախիլ ընել զայն: Իր նպատակն էր մարդել անդլիական կամքին ծառայող հլու գործակատարներու խումբեր որոնք կապուած ըլլալու չէին ժողովուրդին: Իր մտածումներուն մէջ դեմոկրատի սերմեր ցանելու նպատակ չկար բնաւ: Այդ հարցին շուրջ իր տեսակէտը շատ որոշ էր, որովհետեւ նոյն Մակոլէյն էր որ յայտարարեց. «Մենք գիտենք որ Հնդկաստան անգլա կառավարութիւն չի կրնար ունենալ: Բայց նա կրնայ ունենալ յաջորդ ամենալաւ բանը, հաստատուն եւ անկողմնակալ բացարձակապետութիւն մը»:

Անշուշտ հասկնալի է որ մենք բոլորովին չենք ժխտեր Հնդկաստանի մէջ բրիտանական իշխանութեան կատարած դերը, լաւ կամ դէժ տեսանկիւնէ գիտուած: Հնդկաստանի շահագործման գործին վրայ բրիտանական յաղթանակի ամէնէն մեծ գործը եղած է բացասական, աւելի որոշ բառով, քանդումի գործը: Ան անխնայ կերպով քանդեց Հնդկաստանի հասարակութեան հին կարգերը որով ճամբայ բացուեցաւ նոր յառաջդիմութեան: Ասով ըսել չենք ուզեր թէ առանց բրիտանական իշխանութեան հին կարգերու քանդումը անկարելի էր: Ընդհակառակը, հնդկական աւանդական, հնացած հասարակութիւնը արդէն սկսեր էր վատասերիլ եւ ուժերը պատրաստուած էին նոր շրջան մը թեւակոխելու համար, երբ այդ խառնակ դրութենէն օգտուեցաւ անդլիական իմպերիալիզմը եւ առանց գիմադրութեան հանդիպելու մտաւ երկրէն ներս:

Երկրորդ գործը, թէեւ ոչ ամբողջապէս գլուխ հանուած, նոր



կարգերու նիւթական հիմքերու պատրաստութիւնն էր: Ասով երկիրը կը ներկայացնէր քաղաքական միացում մը եւ Հնդկաստանը կը կապէր համաշխարհային շուկային, կը սկսէր արդիական ճարտարարուեստն ու արդիւնաբերութիւնը, որուն կ'ընկերանար զիտական որակաւոր անձնակազմի պատրաստութեան անհրաժեշտութիւնը:

Այս, բրիտանական իշխանութիւնը այս գործերուն ձեռնարկեց, անոնց թափ տուաւ իր շահերուն համապատասխանելու շափով, բայց անոնք չէին որ Հնդկաստանի ազատագրման ճամբան բացին կամ ոեւէ կերպով օժանդակեցին հնդիկ ժողովուրդի վիճակի բարելաւման: Այդ գործերը միայն Հնդկաստանի ազատագրման եւ հնդիկ ժողովուրդի վիճակի բարելաւման աշխատանքի համար նիւթական հիմքեր պատրաստեցին:

Բրիտանական իշխանութեան կանխագոյն շրջանին, այսինքն ժԹ. դարու առաջին կիսուն, անգլիացի իշխողները երկրի արդիւնաբերական աւերման եւ թշուառացման միջոցին յառաջդիմական դեր կը կատարէին շատ մը տեղերու մէջ, կոտեյլ: Հնդկաստանի Ֆէոդալական ուժերուն եւ պահպանողականներուն դէմ:

1857-էն յետոյ բրիտանական քաղաքականութիւնը կերպարանափոխուեցաւ: Փոխուեցաւ նաեւ բրիտանական իշխանութեան բնոյթը: Բրիտանական քաղաքականութիւնը ամբողջապէս հակեցաւ Հնդկաստանի ամէնէն յետադիմական տարրերուն կողմը, ընդդէմ ժողովրդական մտտաներու, իսկ յառաջդիմական տարրերը որոնք կը ներկայացնէին հնդկական բուրժուազիան դարձան կասկածելի, վնասակար տարրեր: Նախապէս Հնդկաստանը նահանգային պետութեանց բաժնուած էր, մէկ անդամէն եղաւ բրիտանական Հնդկաստան: Ընկերային բարեկարգութեան ծրագիրը թուղթի ծաւրերուն մէջ մնաց. աւելի եւ աւելի եռանդազին պաշտպանութիւն տրուեցաւ կրօնական յետադիմութեան եւ թաղուելու պատրաստ մզլոտած սովորութիւններու:

Մինչ Հնդկաստանի մէջ բրիտանական իշխանութեան յառաջդիմական ծրագիրը ժԹ. դարու վերջին տասնամեակին իր վերջին էջը կը փակէր, հնդկական հասարակութեան մէջ երեւան եկան նոր ուժեր: ԺԹ. դարու երկրորդ կիսուն, հնդիկ բուրժուազիան կուգար ճակատային դիրքի վրայ: 1853-ին առաջին յաջողակ բամպակի մանարանը սկսաւ գործել Բոմբէյի մէջ: 1880-ին 156 մանարաններ կային որոնց մէջ կ'աշխատէին 44 հազար գործաւորներ: 1900-ին մանարաններու թիւը բարձրացաւ 193-ի որոնց մէջ կը գործէին 161 հազար գործաւորներ: Այս մանարանները Ֆինանսաւոր

րոզն ու կառավարողներն էին հնդիկները որոնք յաղթահարեցին էին շատ մը զժուարութիւններ: Նոյն տեսն երեւան եկած էր կըթուած միջակորեալ դասակարգ մը, արեւմտեան դաստիարակութեամբ, որ հրապարակ հանած էր փաստաբաններ, բժիշկներ, ուսուցիչներ, վարչապետներ, որոնք տարուած էին ժԹ. դարու դեմոկրատական սկզբունքներով: Ասոնք թէեւ թուական գերակշռութիւն չունէին, բայց որպէս հնդկական ազգային պահանջներու ներկայացուցիչներ կոչուած էին կատարել յեղափոխական դեր:

Հնդիկ բուրժուազիայի եւ բրիտանական բուրժուազիայի միջեւ տնտեսական կոիւր արդէն սկսած էր այն տեսն երբ 1882-ին, անգլիական մանարաններու պահանջին վրայ, կառավարութիւնը Հնդկաստան ներածուած բամպակեայ սպրանքներու մաքսերը վերցուցեր էր: Երեք տարի յետոյ կազմուեցաւ հնդկական ազգային քննիչէսը:

Ի վերջոյ դիւզացիութեան թշուառացումն ու յուսահատութիւնը բրիտանական կապիտալիզմի ճնշման տակ այնպիսի շափերու հասաւ որ ժԹ. դարու վերջին տասնամեակներուն սկսան մասսայական շարժումներ որոնք կը ցուցնէին հնդկական ազգային շարժման ծագումը:

Այժմ պարզեք թէ ինչպէս հիմնուեցաւ Հնդկաստանի ազգային քննիչէսը 1885 թուականին: Բարեկարգութեան շարժումը որ կ'արտայայտուէր Բրահմօ Սամաճի կազմակերպութեան միջոցով, հաստատուած էր 1828-ին: 1843-ին կազմուեցաւ Բենկալի մէջ բրիտանական Հնդկաստանի ընկերութիւնը որուն նպատակն էր «բոլոր դասակարգերու բարեկեցութիւնը ապահովել եւ պաշտպանել քաղաքացի հպատակներու արդար իրաւունքները»: 1851-ին ասիկա միացաւ բրիտանական Հնդկաստանի ընկերակցութեան որ յաջորդ տարին բրիտանական պարլամենտին ներկայացուց հանրազրութիւն մը որ կը յայտարարէր թէ «ստորադրեալներս, ի՛նքն Բրիտանիոյ հետ ունեցած մեր կապակցութենէն չենք ունեցած այն շահն ու բարիքը ինչ որ իրաւունք ունինք սպասելու»: Հանրազրութիւնը ստորազրողները կը դանդատէին եկամտային սիստէմին համար, կը դանդատէին նաեւ անոր համար որ տեղական գործարանային արդիւնաբերութիւնը հարկ եղած քաջալերանքը չէր ստանար եւ յետոյ կըթական հարցին կարեւորութիւն չէր տրուեր: Բայց հանրազրութեան ամէնէն կարեւոր խնդրանքը այն էր որ հնդիկները ընդունուէին վարչական բարձր ծառայութեանց մէջ եւ օրէնսդիր ժողովը ժողովուրդին զպացումները ներկայացնելու տեսակէտէն ստանար ժողովրդական բնոյթ:



Կանխադոյն շրջանի այս ընկերակցութիւնները տակաւին կապուած էին զօրաւոր կապով հողատէրերու շահերուն հետ: Ասոր համար երբ Բենեկալի բրիտանական ընկերութիւնը միացաւ բրիտանական Հնդկաստանի ընկերակցութեան հետ, Բենեկալի հողատէրերու ընկերութիւնը անմիջապէս միացաւ անոր: 1875-ին Սուրենտրա Նաթ Բենարճիի ձեռքով կազմուեցաւ Հնդկական ընկերակցութիւնը, առաջին կազմակերպութիւնը որ կը ներկայացնէր կրթութեամբ միջակորեալ գասակարգը ընդդէմ խոշոր հողատէրերու տիրապետութեան: Յետադիմական բրիտանական Հնդկաստանի ընկերակցութեան եւ յառաջդիմական Հնդկական ընկերակցութեան մասնաճիւղերը տարածուած էին Հնդկաստանի դանդաւան մասերուն մէջ: 1883-ին Կալկաթայի Հնդկական ընկերակցութիւնը առաջին անգամ ըլլալով հրաւիրեց համահնդկական ազգային քոնֆէրանս որուն մասնակցեցան Բենեկալի, Մադրասի, Բոմբէյի եւ Միացեալ Գաւառներու ներկայացուցիչները: 1883-ի ընդհանուր քոնֆէրանսը զուամարուեցաւ Անանտա Մոհան Բոսի նախադասութեամբ, որ ի վերջոյ ազգային քոնկրէսի նախագահը եղաւ 1898-ին: Նախագահը իր ուղերձով նոյն քոնֆէրանսին մէջ յայտարարեց որ այդ համադումարը առաջին քայլն էր զոր կ'առնէր երկիրը տանելու ազգային պարլամենտի կազմութեան: Այսպէսով Հնդկաստանի ազգային քոնկրէսի գաղափարը արդէն որոշապէս ձեւաւորուած էր երբ կառավարութիւնը մէջ մտաւ, շարժումը իր ցանկացած գծին վրայ առնելու նպատակով:

Այդային քոնկրէսի պաշտօնական հիմնադիրը եղաւ անգլիացի վարչազէտ մը, Ա. Օ. Հիւմ, որ կառավարութեան ծառայութեան մէջ էր մինչեւ 1882 թուականը որմէ յետոյ հանգստեան կոչուած էր: Հիւմ զաղտնի ոստիկանապետի իր պաշտօնավարութեան ատեն երեւան հանած էր ժողովրդական դժգոհութեան ուռճացումն ու ընդյատակեայ դաւադրական կազմակերպութեան մը տարածումը: Եօթնաստուանական թուականներուն տարսափելի սովն ու տարածւած թշուառութիւնը ծնունդ տուած էին Դեկանի գիւղացիական ապստամբութեան: 1877-ի սովի ատենն էր որ վիկտորիա թագուհին հռչակուեցաւ Հնդկաստանի թագուհի, երբ նոյն ատեն կը սկսէր երկրորդ աֆղանական պատերազմը: Ժողովրդական ըմբոստութեան փորձը ճղմուեցաւ շուտով: 1878-ին բոլորովին ջնջուեցաւ մամուլի ազատութիւնը: Յաջորդ տարին զէնքերու օրինազօնով կառավարութիւնը արգիլեց որ զիւղացիները նոյնիսկ վայրի կենդանիներէն պաշտպանուելու համար զէնք պահեն իրենց տուներուն մէջ: Ար-

գիլուեցան նոյնպէս ոեւէ նպատակի համար ժողովրդական հաւաքոյթները:

Իրերու դրութիւնը մտահոյիչ էր: Հիւմ Հնդկաստանի փոխարքայ Լորա Դուֆէրինի հետ խորհրդակցելով 1885-ի Մարտին, միասնաբար ծրարեցին կազմել հնդկական ազգային քոնկրէսը: Անոնց նպատակն էր մարեցնել յեղափոխական տրամադրութիւնները եւ քոնկրէսը ծառայեցնել որպէս նեցուկ կառավարութեան: Քոնկրէսը, մէկ խօսքով, մի խրատելիակ ըլլալու էր ժողովուրդը խաբելու համար: Անով կարելի էր բաժնել «հաւատարիմները» «ծայրայեղներէն» եւ բարեկարգութեան Ֆրայներով դրութիւնը պահել հանդարտութեան մէջ:

Հնդկաստանի ազգային քոնկրէսը, ուրեմն, իր կազմութեան սկիզբի օրէն իսկ երկճղուած ճամբու վրայ դրուած էր: Մէկ ճամբան կը տանէր իմպերիալիզմի հետ համադործակցութեան, միւսը՝ մասսաներու ազգային պայքարի առաջնորդող դերին:

Ամբողջ քսան տարի ազգային քոնկրէսը ընթացաւ իր հիմնադիրներուն ուղիով: Այդ շրջանին ոչ մէկ պահանջ դրուեցաւ Հնդկաստանի ինքնավարութեան համար: Միայն տրուած որոշումներուն մէջ աչքի կը զարնէր բրիտանական իշխանութեան դրութեան մէջ հնդիկ ներկայացուցիչներու ներառման պահանջը: Ամէնէն մեծ պահանջն էր ներկայացուցչական հիմնարկութեանց հաստատումը որ տակաւին ինքնավար կառավարութեան դոյն չունէր:

Այդ օրերուն քոնկրէսը բացառապէս բուրժուազիտայի վերի խաւի ներկայացուցչութիւնն էր: Անոր մէջ էին մասնաւորապէս այդ բուրժուազիտայի գաղափարախօսութեան ներկայացուցիչները: Կառավարութիւնը այնպէս մը կարգադրեց էր որ քոնկրէսը սահմանափակ թիւով ներկայացուցիչներ ունենար եւ արմատական տարրեր չմտնէին հոն: Այդ ատենները Հնդկաստանի բուրժուազիտան շատ լաւ համոզուած էր որ բրիտանական իշխանութեան դէմ կուռելու ոյժ չունէր: Ընդհակառակը, այդ իշխանութեան կը նայէր որպէս մի դաշնակցի: Անոնց համար զլիսուոր թշնամին բրիտանական իշխանութիւնը չէր, այլ ժողովրդի յետամնաց դրութիւնը, երկրի արդիական յառաջդիմութեան պակասը, սոցիալութեան ու խաւարի ուժերու ներկայութիւնը: Այդ շարքներուն դէմ կուռելու համար անոնք յոյսով կապուած էին բրիտանական իշխողներու համադործակցութեան գաղափարին:

Անտարակոյս սխալ է ենթադրել թէ քոնկրէսի առաջին շրջանի առաջնորդները օտար իշխանութեան ծառայեալ էին, իրապէս յետադիմական եւ հակա-ազգային: Ընդհակառակը, անոնք կը ներ-



կայացնէին այդ ատենուան Հնդկաստանի հասարակութեան ամէնէն յառաջդիմական ուժը: Որքան ատեն որ Հնդկաստանի նորածին գործաւոր դասակարգը տակաւին որպէս ուրոյն դասակարգ հրապարակ չէր ելեր ու չէր կազմակերպուեր, եւ գիւղացիութիւնը դեռեւս կը մնար նոյն համը միլիոններու զանդուածը, հնդիկ բուրժուազիան ամէնէն յառաջդիմական եւ իրապէս յեղափոխական միակ ուժն էր Հնդկաստանի մէջ: Անոնք էին որ կը սանկէին դորժը ընկերային բարեկարգութեան, լուսաւորութեան ու կրթութեան, Հնդկաստանը դուրս հանելու համար թանձրացած խաւարին մէջէն: Անոնք կեցած էին նաեւ ճարտարարուեստական եւ տեխնիկական անտեսական զարգացման պահանջին վրայ:

Բայց այս գործին մէջ բրիտանական իմպերիալիզմին կապած իրենց յոյսն ու հաւատքը դատապարտուած էր ցնդելու յօլս: Բրիտանական իմպերիալիզմը որոշակի հասկցեր էր որ քոնկրէսը իր յառաջդիմական գերով անխուսափելիօրէն կը ստեղծէր հակամարտութիւն, վտանգելով իմպերիալիստական իշխանութիւնն ու շահագործումը: Ատոր համար քոնկրէսը հետզհետէ դարձաւ կասկածելի, եւ անոր գիրքը՝ թշնամական: Անոր կազմութենէն երեք տարի յետոյ Լորտ Քըրզըն Պետական Քարտուղարին գրած իր մէկ նամակին մէջ կը գրէր. «Հնդկաստանի քոնկրէսը սկսած է անկման նշաններ ցոյց տալ: Քանի որ ես Հնդկաստանի մէջ եմ, իմ մեծ գործը պիտի ըլլայ օգնել անոր անկումին որքան կարելի է խաղաղ եղանակով»:

Երբ հին քաղաքականութեան ձախողմանը յայտնի եղաւ, անխուսափելի էր որ նոր դպրոց մը երեւան դար, քննադատելով «հին պահակը» պահանջէր աւելի գրական ծրագիր եւ աւելի գործնական քաղաքականութիւն որ խզէր իմպերիալիզմի հետ հիւսուած կապերը: Այս նոր դպրոցը, ընկերանայով մասնաւորապէս Բ. Թիւրքի առաջնորդութեան ժ.թ. դարու վերջին տասնամեակին հրապարակ իջաւ, բայց չկրցաւ վճռական գեր խաղալ մինչեւ որ յաջորդող տարիներուն գրութիւնը հասունցաւ:

Այս նոր դպրոցի առաջնորդները, զուրկ սեւէ գիտական ընկերային եւ քաղաքական թէորիայէ, քննադատելով հին դպրոցի առաջնորդներուն իմպերիալիզմի հետ հաշտուողական քաղաքականութիւնը աշխատեցան ազգային շարժումը հիմնել ընկերային պահպանողականութեան տակաւին ուժեղ մասսայական ուժերուն վրայ, աւելի որոշ անունով օրթոտոքս պրահմինականութեան հիմքին վրայ: Անոնց համոզումը այն էր որ հին հնդկական կամ «արիական» քաղաքակրթութիւնը անհամեմատ աւելի գերազանց է քան

արդիական «արեւմտեան» քաղաքակրթութիւնը: Անոնք ուզեցին հիմնել ազգային շարժում մը, ամէնէն յառաջադէմ շարժումը Հնդկաստանի մէջ հնացած կրօնքին եւ կրօնական նախապաշարումներու վրայ: Այս շրջանէն կը սկսի Հնդկաստանի մէջ քաղաքական արժատականութեան եւ ընկերային յետադիմականութեան միախառնումը որ շարաշուք ազդեցութիւն գործեց ազգային շարժման ապագայ դէպքերուն վրայ:

Հին դպրոցին հակառակող առաջնորդներուն ամէնէն նշանակալից կէտը այն էր որ անոնք իմպերիալիզմի հետ հաշտուողական քաղաքականութիւնը հիմնովին կը ժխտէին եւ կ'ուզէին անհաշտ պայքար շարունակել իմպերիալիզմի դէմ: Այս կէտին վրայ անոնք կը ներկայացնէին յառաջդիմական ուժ մը: Անոնց կոչը գիւրաւ հասաւ դժգոհ դասակարգերու եւ գրագէտ երիտասարդութեան սրտին, մասնաւորապէս ազքատ մտաւորականներուն, որոնց գրութիւնը հետզհետէ աւելի յուսահատական կը դառնար Ի դարու բացման շրջանին, երբ պարզ եղաւ այն իրողութիւնը որ իմպերիալիստական պայմաններու ներքեւ երբեք հնարաւորութիւն չկայ յառաջդիմութեան ու բարեկեցութեան: Անոնք շատ քիչ կը համակրէին այն վարդապետութեան որ կը քարոզէր համբերատար սպասողութիւն այն աստիճանական յառաջդիմութեան զաւտեան որ գոհացում պիտի տար ժողովուրդի բոլոր դասակարգերու պահանջներուն:

Օրթոտոքս ազգայնականները որ գործնական պայքարը դընել կ'ուզէին կրօնական հիմքի վրայ, գործունէութեան ծրագիր կամ որոշ զէնք մը չէին կրնար յամծնարարել, բացի այն զէնքէն որ յատուկ է մասսաներէն մեկուսացած մանր բուրժուական տարրերուն, անհաստական տեռորը: Բայց այդ զէնքի գործածութիւնն ալ յաջողութիւն չէր խոստանար, որովհետեւ գրութիւնը մէկ կամ մէկ քանի անհատներու ուսերուն վրայ հաստատուած չէր: 1905-ին երբ ընդհանուր կացութիւնը հասունցած էր նոր պայքարի համար, ամէնէն վիսաւոր զէնքը որ կապ չունէր նախկին կրօնական եւ բնականացական հայեցողութեանց հետ եւ որ իր էութեամբ արդիական էր եւ ազդու, անտեսական պոչքոթի զէնքն էր: Եւ ահա 1905-ի Օգոստոս 7-ին յայտարարուեցաւ պոչքոթ օտար ապրանքներու դէմ Բենկալի մէջ:

Այդ յայտարարութեան հետեւեցաւ ազգային շարժման արագավազ եւ ուժեղ հոսանք մը: Քոնկրէսը 1905-ի նիստին միայն պայմանական հաւանութիւն տուած էր պոչքոթին: Բայց կալիթայի քոնկրէսը 1906-ին ծայրայեղներու ազդեցութեան տակ որդեգրեց



բաղադրվին նոր ծրագիր մը: Այս ծրագրով յայտարարուեցան չորս գլխաւոր նպատակադրեալ կէտեր: Առաջին, սուլարան կամ ինքնավար կառավարութիւն (ինքնավար կառավարութիւն մը կայսրութեան մէջ). երկրորդ, օտար ապրանքներու դէմ պոլսթոթ. երրորդ, սուլառիշի կամ բնաշխարհիկ ճարտարարուեստներու խթանում առանց արտաքին արդելակներու. չորրորդ, ազգային կրթութիւն:

Կառավարութեան ճնշող ձեռքը բարձրացաւ այս նորագործ շարժումին դէմ: 1907-ին հրատարակուեցաւ դաւազրտական հաւաքոյթներու օրէնքը, 1910-ին՝ մամուլի օրէնքը: Առաջինը վճռակա՛նօրէն կ'արգելէր ժողովրդական հաւաքոյթները, ազատ խօսքը, եւ երկրորդը կ'արգելէր մամուլի ազատութիւնը: Թիւրք, այն մարդը որմէ կառավարութիւնը այնքան շատ կը վախնար, ձերբակալուեցաւ եւ դատապարտուեցաւ վեց տարուան բանտարկութեան, որովհետեւ իր թերթին մէջ զրգուիչ յօդուած մը հրատարակել էր: Թիւրքի ձերբակալութեան հետեւեցաւ Բոմբէյի հիւսուածեղէնի բանուորներու ընդհանուր դործադուլը: Դա առաջին քաղաքական գործունէութիւնն էր զոր ցոյց կուտար հնդիկ պոլստարիտար: Զերբակալուեցան նաև յայտնի առաջնորդներէն շատերը: Ոմանք դատապարտուեցան բանտարկութեան, ոմանք՝ աքսորի: 1906-1919 միայն Բենդալի մէջ 550 քաղաքական դատավարութիւններ տեղի ունեցան: Ոստիկանութիւնը աշխուժութեամբ գործի վրայ էր: Ուեհ հաւաքոյթ անմիջապէս կը ցրուէին ատրճանակի սպառնալիքով: Փունճապի մէջ զիւզացիական ապստամբութիւնները ճնշուեցան անգլիօրէն: Դպրոցական երեխաները նոյնիսկ կը ձերբակալուէին պարզ անոր համար որ անոնք կը յանդուէին երգել ազգային երգեր:

Պայքարի այն հոսանքը որ սկսաւ եւ զարգացաւ 1906-1911 տարիներուն չկրցաւ իր ուժգնութիւնը աւելցնել, այլ միայն ազգային ազատագրութեան սերմերը ցանկեց եւ ստեղծեց քաղաքական շարժում մը որուն վիճակուած էր ժողովրդական մասսաները առաջնորդելու գործը:

Առաջին համաշխարհային պատերազմը ցնցեց իմպերիալիզմի շէնքը իր հիմքերէն եւ մասնաւորապէս 1917-էն յետոյ ծնունդ տուաւ յեղափոխական բնկումներու: Հնդկաստանի մէջ այդ բռնկումները յառաջացուցին մասսայական յեղափոխական շարժումներ որոնք ուժգնօրէն ցնցեցին բրիտանական կայսրութեան շէնքը:

Բրիտանական կառավարութիւնը լուրջ ու հաստատուն միջոցներու դիմեց զրութիւնը իր ձեռքին մէջ պահելու համար: Յայ-

տարարուեցաւ Հնդկաստանի պաշտպանութեան օրէնքը որուն ուժով բանտարկեց անհաշտ մարտիկներն ու յեղափոխական խումբի անդամները: Պատերազմի սկզբնական շրջանին կառավարութեան այդ գործերուն օժանդակեցին քաղաքական շարժման վերին խաւերը: Քոնկրէտը չափաւորական առաջնորդներու ազդեցութեան տակ յայտարարեց իր հաւատարմութիւնը եւ ընդունեց պատերազմի առթիւ արուած որոշումները եւ նոյնիսկ Դելիի նիստին, 1918ին, որոշում անցաւ որ Հնդկաստանի ժողովուրդին կողմէ շնորհաւորութիւններ ուղղուին Անգլիոյ թագաւորին, «պատերազմի յաջող վերջաւորութեան» համար:

Չափաւորական առաջնորդներու կողմէ «հաւատարմութեան» այս ցոյցերը անդլիական պաշտօնէութեան կարծիքով նկատուեցան որպէս երախտագիտութեան ու սիրոյ արտայայտութիւն բրիտանական օրհնեալ իշխանութեան համար: Բայց իրականութիւնը այն էր որ այդ առաջնորդները մեծ յոյս ունէին թէ իրենց այդ ծառայութեան փոխարէն Հնդկաստանի ինքնավար կառավարութեան գուռը կը բացուէր: Ատոր համար Կանտին 1922-ի իր դատավարութեան ընթացքին յայտարարեց.

«Հնդկաստանի մատուցած ծառայութեան այս ամբողջ փառանքութեան մէջ ես տարուած էի հաճատալու որ այդպիսի ծառայութիւնները պիտի կրնային շահիլ իմ հայրենիքի մարդոց կատարեալ հաւատարմութեան իրաւունքը»:

Վերջը, սակայն, Կանտին եւ չափաւորական առաջնորդները արտայայտեցին իրենց յուսախարութիւնը:

Վերին խաւի քաղաքական առաջնորդներու հլութիւնը չկրցաւ արգելել մասսայական անհանդարտութեան աճումը որ յառաջացեր էր պատերազմի հետեւանքով: Մէկ կողմէ պատերազմը Ֆինանտաւորելու համար Հնդկաստանի թշուառութեան մասնուած ժողովուրդին վզին դրուած ծանր տուրքը, միւս կողմէ ապրանաջ գիներու բարձրացումը, երրորդ կողմէ համաճարակը որ պատերազմի վերջաւորութեան ատեն հնձեց 14 միլիոն կեանքեր, ստեղծեցին այնպիսի սարսափելի դրութիւն մը որուն արձագանգը եղան Փունճապի խռովութիւնը եւ բանակի մէջ ապստամբութեան փորձերը: Կառավարութիւնը ճիշդ է որ յաջողեցաւ ճիշդ ատենին ճշգրտել դանձնք, բայց այդ յաջողութիւնը տեւական խաղաղութիւն չկրցաւ ապահովել:

Աճող անհանդարտութիւնը իր անդրադարձումը ունեցաւ քաղաքական շարժման վրայ: 1916-ին երբ Թիւրք բանտէն դուրս



եկաւ Հիմնեց Հնդկաստանի ինքնավարութեան լիկան: Թայրայեղա-  
կաններն ու չափաւորականները միացան Լուքնատուի քոնկրէսին մէջ:  
Իսկ ամէնէն կարեւոր իրազարձութիւնը այդ քոնկրէսին եւ իսլամ  
լիկային դաշնակցութիւնն էր որուն համար փորձ մը եղած էր  
1913-ին եւ սակայն անցեր էր ատարդիւն:

Այսպէս էր կացութիւնը երբ 1917-ի սուսական յեղափոխու-  
թիւնը եկաւ խորապէս ազդել Անգլիոյ եւ Հնդկաստանի յարաբե-  
րութեանց վրայ: Յարիզմի տապալումէն հինգ ամիս յետոյ բրիտա-  
նական կառավարութիւնը աճապարեց յայտարարել որ «բրիտանա-  
կան իշխանութիւնը Հնդկաստանի մէջ աստիճանաբար կը զարգացնէ  
ինքնավար կառավարութիւն մը որպէս պատասխանատու կայսրու-  
թեան եւ կարելի եղածին չափ շուտ անհրաժեշտ քայլեր պիտի առ-  
նուին յառաջիմական բարեկարգութեանց համար, որպէսզի Հնդկ-  
կաստանի ժողովուրդը վայելէ այն բոլոր բարիքները, ինչ որ կը  
վայելէ Անգլիոյ ժողովուրդը»: Բայց այդ «բարեկարգութեանց» նը-  
շանը չտեսնուեցաւ յաջորդող երկու տարիներուն ընթացքին: Հա-  
կառակ անոր որ քոնկրէսը տակաւին կը շարունակէր իր համադր-  
ժակցութիւնը, 1919-ի տարին Հնդկաստան ականատես եղաւ ան-  
հանդարտութեան ալիքներու բարձրացումին: 1918-ի Դեկտեմբե-  
րին սկսաւ գործադուլային շարժում մը որ 1919-ի Յունիսարին իր  
մէջ առաւ աւելի քան 125.000 բանուորներ: Նոյն տարուան Մարտ  
ամսուն նոր օրինազիծ մը հրատարակուեցաւ, Ռոլաթի օրինազի-  
ծը, պատերազմի չըջանին տարապայմանօրէն ճնշող մեթոտներու  
շարունակութեան օրինազիծը որ կը հրամայէր ոստիկաններուն բա-  
րեկարգութեան թաւշեայ ձեռնոցներով ձերբակալել ու առանց դա-  
տական ձեւակերպութեան բանտարկել այն անձերը որոնք կը յան-  
դըզնէին զլուսի վերցնել խմպերիալիզմի պողպատէ բազուկին դէմ:  
Կանտի, օգտագործելով հարաւային ամբիկեան իր փորձառութիւ-  
նը, աշխատեցաւ կազմակերպել կրաւորական դիմադրութեան շար-  
ժում մը Ռոլաթ օրինազիծին դէմ եւ կազմեց Սաթալալիւրահա լիկան:  
Ընդհանուր պիզնիսային գործառնութեանց դադարման օր նշանակ-  
ւեցաւ Ապրիլ 6-ը: Կանտիի կոչը իր արձագանդը գտաւ ժողովրդա-  
կան մասսաներուն մէջ: Մարտ եւ Ապրիլ ամիսներուն տեղի ունե-  
ցան մասսայական ցոյցեր, գործադուլներ, տեղ տեղ նոյնիսկ ա-  
պրտամարական շարժումներ եւ քաջարի դիմադրական փորձեր,  
կառավարութեան յարձակողական ուժերուն դէմ: Կառավարութիւ-  
նը իր պաշտօնական տեղեկատուութեամբ զարմանք կը յայտնէր որ

ընդհանուր շարժման մէջ վերցուած էր հնդիկ-մահաճետական տար-  
բերու հակամարտութիւնը.

«Ընդհանուր գրգռութեան մէջ ամէնէն նշանակելի կէտը այն  
էր որ յառաջացեր էր բոլորովին աննախընթաց երեւոյթ մը, հըն-  
դիկներու եւ մահաճետականներու եղբայրութիւնը: Անոնց միութիւ-  
նը հիմնուած էր ազդայնական ծրագրի վրայ: Ոչ միայն պրահմի-  
նական եւ մահաճետական առաջնորդները եղբայրացեր էին իրարու  
հետ, այլեւ հասարակ ժողովուրդը, ստորին դասակարգերը, բո-  
լորն ալ մոռցած էին իրենց կրօնական դաւանանքի տարբերութիւն-  
ները: Եղբայրացման տարապայման տեսարաններ կը պարզուին:  
Պրահմինական հնդիկները հրապարակաւ շուր կը խմէին մահաճետա-  
կան հնդիկներու ձեռքէն, նոյնը՝ հակադարձաբար: Պրահմինա-  
մահաճետական «միութիւնը» կարգախօսն էր բոլոր շքերթներուն  
որոնք կը բարձրացնէին նոյն կոչերը, նոյն դրօշակները: Պրահմինա-  
կան քարոզիչներուն թոյլատրուած էր որ քարոզեն մզկիթի մը ամ-  
բիտնէն»:

Ժողովրդական այս յուզումնալից շարժումներուն հետեւե-  
ցան անսովոր ու արտակարգ ճնշիչ միջոցներ: Այդ ստեղծ էր որ  
տեղի ունեցաւ Ամբիցարի սարսափելի խժովութիւնը, երբ Զօրա-  
վար Դայըր 1600 շարք պատրոն կրակեց փակ տեղ մը հաւաքուած  
անդէն բազմութեան մը վրայ որ փախուստի ճամբայ չունէր: Այդ  
վայրենիութեան ընթացքին սպաննուեցան 479 հոգի եւ վիրաւոր-  
ւեցան 1200 մարդիկ ու կանայք, որոնք թողուեցան վիրաւոր վի-  
ճակի մէջ, առանց փոքր ինչ չափով ուշադրութեան առարկայ դա-  
նալու: Բրիտանական իմպերիալիզմի բուն նպատակն էր սարսափի  
օղակի մէջ առնել Հնդկաստանի ամբողջ բնակչութիւնը: Այս գա-  
ղանային արարքին շուրջ ոչ մէկ պաշտօնական զեկուցում տրուեցաւ  
անգլիական պարլամենտին մէջ, եւ անգլիացի հասարակ ժողովուր-  
դը բնաւ լուր չունեցաւ անցուդարձէն: Միայն Հնդկաստանի քոն-  
կրէսին պահանջով դիւանադիտական ձեւակերպութեան մը սիրոյն  
յանձնախուժ մը կազմուեցաւ Հնդկաստանի կառավարութեան կող-  
մէ, քննելու կատարուած բարբարոսութիւնը եւ սրստեւելու պատաս-  
խանատուները:

Ի՞նչ եղաւ այդ ձեւականութեան արդիւնքը:

Զօրավար Դայըր վարձատրուեցաւ 20.000 լիրա ստերլինկի  
նուէրով: Լորտերու Տունը այդպէսով գնահատեր էր անոր քաջա-  
գործութիւնը:

Նոյն դէպքէն յետոյ պատերազմական վիճակ յայտարար-



ւեցաւ մասնաւորապէս փունճապի մէջ եւ շարունակուեցան դնդա-  
կահարութիւնները, կախազանները, օղային ուժրածղումները: Ան-  
սովոր, սարսափելի դրութիւն մը որուն նմանը արձանագրուած չէր  
Հնդկաստանի պատմութեան մէջ:

Կանտի, ահարեկ՝ կատարուած այդ սարսափելի իրադար-  
ձութիւններէն, ժօտեցեր էր խելադարութեան աստիճանին: Փողո-  
վրդական մասսաները բռնի ուժի դիմեր էին իրենց իշխողներուն  
դէմ: Կալիաթայի, Բոմբէյի, Ահմէտապատի եւ այլ տեղերու մէջ  
տեղի ունեցած էին արիւնահեղ ընդհարումներ: «Հիմալայա լեռան  
պէս հսկայ մի սիալիս հեռեւեմքով զէչ տրամադրուած մարդիկ  
որոնք չհասկցան կրաւորակաճ ընդդիմադրութեան ճշմարիտ իմաս-  
տը, պատճառ եղան որ յառաջանան այս արիւնալի պատահարնե-  
րը»: Այսպէս յայտարարեց Կանտի, նախ դատապարտելով ինք-  
զինք, ապա՝ իրենց իրաւունքին համար կռուող մասսաները:

«Ձդիմել զէմֆի, չդիմել բռնի միջոցներու»:

Եւ նոյն ատեն՝

«Երբեք չհամագործակցիլ անգլիական իմպերիալիզմի հետ»:

Ահա թէ ինչ էր Կանտիի ուղեդիմը:

Այժմ ընթերցողին ծանօթացնենք Կանտին: Ո՞վ էր այս մար-  
դը, ի՞նչ պայմաններու եւ միջավայրի ծնունդ էր ան:

ՄԱՀԱԹՄԱ ԿԱՆՏԻ

Կանտին ծնած է Փորբհտարի մէջ Հոկտեմբեր 2, 1869-ին: Իր  
ընտանիքը կը պատկանէր առեւտրական Բէստին: Իր հայրը,  
Քարա Կանտի, չորս անգամ ամուսնացած էր, եւ վերջին ամուս-  
նութեան պտուղն էր Մոհանդաս Քարամշատ Կանտին: Հայրը ուս-  
եալ մէկը չէր, բայց չափազանց ճշմարտասէր, քաջ ու բարի մարդ  
մըն էր: Մայրը, կրօնի սկզբունքներուն ծառայող կին մը, տար-  
ւոյն չորս ամիսները պահեցողութեան կը յատկացնէր երկիւղա-  
ձուլեամբ:

Փոքրիկ Կանտին երբ եօթը տարեկան էր իր ծնողքը փո-  
խադրուեցաւ Փորբհտարէն Ռահքոտ ուր ան յաճախեց առաջին ան-  
գամ նախնական, ապա բարձր դպրոց մը (դասաւանդութիւնը,  
հասկնալի է, անգլերէն էր): Երկշոտ տղայ մըն էր ան, կը վախնար  
ուշադրութիւն դրաւելէ, կը վախնար ընկերակցութենէ: Դպրոցէն  
տուն վերադարձին սովոր էր վաղել փոխանակ քալելու, վախնալով  
որ դուցէ մէկը կրնար բռնել զինքը եւ խօսիլ հետը: Իր դպրոցական  
չըջանին հնդիկ դիւցալներգութիւններէն մի քանիսը, մասնաւորա-

պէս Հարիշխանտրան, Մահարաքաւտայի մէկ պատմութիւնը, շատ  
մեծ ազդեցութիւն թողած է իր երեւակայութեան վրայ: Իր հատու-  
նացած տարիքին յաճախ կը կրկնէր. «Ինչո՞ւ ամէն ինչ պիտի չըլ-  
լայ այնպէս ճշմարիտ ինչպէս որ է Հարիշխանտրան: Կանտի կը  
հաւատար թէ այդ պատմութիւնները պատմական իրողութիւններ  
եղած են:

Մանուկ Կանտի տասնեւերեք տարեկան հասակին ամուսնա-  
ցաւ իրեն տարեկից աղջկայ մը հետ որ անդրադէտ էր: Շատ դժ-  
ւարութեամբ ան կըրցաւ յետոյ անոր սորվեցնել մի քիչ գրել ու  
կարդալ:

Կանտիի երիտասարդ տարիքին դործած մեղքերը եղած են  
միս ուտել եւ ծխել: Այդ երկու մոլութիւնները ան ստացաւ իր մէկ  
բարեկամէն որ կ'ուղէր զինքը «բարեկարգել», արդիական մարդ  
չինել: «Մենք տկար ժողովուրդ եղած ենք որովհետեւ միս չենք  
ուտեր», ըսեր էր իրեն իր բարեկամը: «Անդլիացիք մեր վրայ կ'իշ-  
խեն որովհետեւ մասկեր են»: Կանտի համոզուեցաւ այդ փաստար-  
կութեանց առջեւ, բայց բան մը կար որ կը տանջէր իր միտքը:  
Ինք միս պիտի ուտէր իր ծնողքէն դադանի կերպով: Ուրեմն ինք  
միս ուտելու համար սուտ պիտի խօսէր եւ ի պահանջել հարկին գո-  
ղութիւն պիտի ընէր: Կանտի որոշեց միս չուտել ու անկէ վերջ ան  
մնաց բանջարակեր:

Իր չարամիտ բարեկամը որ չէր յուսահատեր զինքը մոլո-  
րեցնելու ջանքերուն մէջ, օր մը Կանտին տարաւ պոռնիկանոցը եւ  
ինք վճարեց պէտք եղած ծախքը: Կանտի պոռնիկ կնոջ անկողնոյն  
վրայ նստաւ եւ մնաց արձանի նման անշարժ, հակառակ կնոջ դոր-  
ծադրած հրապուրիչ փորձերուն: Կինը բարկանալով զինք դուրս  
բրաւ նախատակաճ բառերով ու ծաղրանքով:

Նոյն ատենները Կանտի սոսկ թելադրանքի հետեւելով անձ-  
նատուր եղեր էր ծխելու ընդհանրացած սովորութեան: Ան տեսեր  
էր որ իր մեծ եղբայրն ալ կը ծխէր: Ինք չէր հաշտուեր իր եղբոր  
ծխախոտը բաժնելու դադափարին հետ, նոյն պարագային դրամ  
ալ չունէր որ ծխախոտ գնէր: Մի օր տունէն ոսկի բաղալան մը գող-  
ցաւ եւ գայն ծախելով ունեցաւ առատ ծխախոտ ուրիշ բաժին հա-  
նեց նաեւ իր եղբորը: Կանտի իր ըրած այդ գողութիւնը թէեւ խոս-  
տովանեցաւ իր հիւանդ հօրը որ արտասուելով ներեց իրեն, բայց  
երկար ատեն տանջուեցաւ իր խղճով: Այդ առթիւ իր ինքնակեն-  
սագրութեան մէջ կը գրէ. «Ես արդէն վախկոտ էի. անկէ յետոյ ա-  
ւելի վախկոտ դարձայ, մասնաւոր՝ մոլութիւն մէջ: Ինձ այնպէս կը



ւեցաւ մասնաւորապէս Փունճապի մէջ եւ շարունակուեցան դնդա-  
կահարութիւնները, կախաղանները, օղային ուժրածղութեանը: Ան-  
սովոր, սարսափելի զրութիւն մը որուն նմանը արձանագրուած չէր  
Հնդկաստանի պատմութեան մէջ:

Կանտի, ահարեկ՝ կատարուած այդ սարսափելի իրադար-  
ձութիւններէն, մօտեցեր էր խնայարութեան աստիճանին: Ժողո-  
վրդական մասսաները բռնի ուժի զիմեր էին իրենց իշխողներուն  
դէմ: Կարկաթայի, Բոմբէյի, Ահմէտապատի եւ այլ տեղերու մէջ  
տեղի ունեցած էին արիւնահեղ ընդհարումներ: «Հիմարայա լեբան  
պէս հսկայ մի սխալիս հետեւանքով զէշ տրամադրուած մարդիկ  
որոնք չհասկցան կրաւորակա՞ն ընդդիմադրութեան ճշմարիտ խնա-  
տը, պատճառ եղան որ յառաջանան այս արիւնալի պատահարնե-  
րը»: Այսպէս յայտարարեց Կանտի, նախ զատապարտելով ինք-  
զինք, ապա՝ իրենց իրաւունքին համար կոռուղ մասսաները:

«Չդիմել զէմֆի, չդիմել բռնի միջոցներու»:

Եւ նոյն տան՝

«Երբեք չհամագործակցիլ անգլիական իմպերիալիզմի հետ»:

Ահա թէ ինչ էր Կանտիի ուղեղիծը:

Այժմ ընթերցողին ծանօթացնենք Կանտին: Ո՞վ էր այս մար-  
դը, ի՞նչ պայմաններու եւ միջավայրի ծնունդ էր ան:

ՄԱՀԱԹՄԱ ԿԱՆՏԻ

Կանտին ծնած է Փորբրտարի մէջ Հոկտեմբեր 2, 1869-ին:  
Իր ընտանիքը կը պատկանէր առեւտրական Բէլտին: Իր հայրը,  
Քարա Կանտի, չորս անգամ ամուսնացած էր, եւ վերջին ամուս-  
նութեան պտուղն էր Մոհանդաս Քարամշատ Կանտին: Հայրը ուս-  
եալ մէկը չէր, բայց չափազանց ճշմարտասէր, քաջ ու բարի մարդ  
մըն էր: Մայրը, կրօնի սկզբունքներուն ծառայող կին մը, տար-  
ւոյն չորս ամիսները պահեցողութեան կը յատկացնէր երկիւղա-  
ծութեամբ:

Փոքրիկ Կանտին երբ եօթը տարեկան էր իր ծնողքը փո-  
խադրուեցաւ Փորբրտարէն Ռաճքոտ ուր ան յաճախեց առաջին ան-  
գամ նախնական, ապա բարձր դպրոց մը (դասաւանդութիւնը,  
հասկնալի է, անգլերէն էր): Երկչոտ տղայ մըն էր ան, կը վախնար  
ուշադրութիւն զրաւելէ, կը վախնար ընկերակցութենէ: Դպրոցէն  
տուն վերադարձին սովոր էր վաղել փոխանակ քալելու, վախնալով  
որ գուցէ մէկը կրնար բռնել զինքը եւ խօսիլ հետը: Իր դպրոցական  
չըջանին հնդիկ զիւցաղներգութիւններէն մի քանիսը, մասնաւորա-

պէս Հարիշխանորան, Մահարարատայի մէկ պատմութիւնը, շատ  
մեծ ազդեցութիւն թողած է իր երեւակայութեան վրայ: Իր հասու-  
նացած տարիքին յաճախ կը կրկնէր. «Ինչո՞ւ ամէն ինչ պիտի չըլ-  
լայ այնպէս ճշմարիտ ինչպէս որ է Հարիշխանորան: Կանտի կը  
հաւատար թէ այդ պատմութիւնները պատմական իրողութիւններ  
եղած են:

Մանուկ Կանտի տասնեւերեք տարեկան հասակին ամուսնա-  
ցաւ իրեն տարեկից աղջկայ մը հետ որ անդրադէտ էր: Շատ դժ-  
ւարութեամբ ան կըրցաւ յետոյ անոր սորվեցնել մի քիչ դրել ու  
կարգալ:

Կանտիի երիտասարդ տարիքին գործած մեղքերը եղած են  
միս ուտել եւ ծխել: Այդ երկու մոլութիւնները ան ստացաւ իր մէկ  
բարեկամէն որ կ'ուղէր զինքը «բարեկարգել», արդիական մարդ  
չինել: «Մենք տկար ժողովուրդ եղած ենք որովհետեւ միս չենք  
ուտեր», ըսեր էր իրեն իր բարեկամը: «Անդլիացիք մեր վրայ կ'իշ-  
խեն որովհետեւ մսակեր ենք»: Կանտի համոզուեցաւ այդ փաստար-  
կութեանց առջեւ, բայց բան մը կար որ կը տանջէր իր միտքը:  
Ինք միս պիտի ուտէր իր ծնողքէն զաղտնի կերպով: Ուրեմն ինք  
միս ուտելու համար սուտ պիտի խօսէր եւ ի պահանջել հարկին գո-  
ղութիւն պիտի ընէր: Կանտի որոշեց միս չուտել ու անկէ վերջ ան  
մնաց բանջարակեր:

Իր չարամիտ բարեկամը որ չէր յուսահատեր զինքը մոլո-  
րեցնելու ջանքերուն մէջ, օր մը Կանտին տարաւ պոռնիկանոցը եւ  
ինք վճարեց պէտք եղած ծախքը: Կանտի պոռնիկ կնոջ անկողնոյն  
վրայ նստաւ եւ մնաց արձանի նման անշարժ, հակառակ կնոջ գոր-  
ծադրած հրապուրիչ փորձերուն: Կինը բարկանալով զինք դուրս  
բրաւ նախատակա՞ն բռուերով ու ծաղրանքով:

Նոյն տեսները Կանտի սոսկ թեւադրանքի հետեւելով անձ-  
նատուր եղեր էր ծխելու ընդհանրացած սովորութեան: Ան տեսեր  
էր որ իր մեծ եղբայրն ալ կը ծխէր: Ինք չէր հաշտուեր իր եղբոր  
ծխախոտը բաժնելու զազաւարին հետ, նոյն պարագային զրամ  
ալ չունէր որ ծխախոտ գնէր: Մի օր տունէն ոսկի բազպան մը գող-  
ցաւ եւ զայն ծախելով ունեցաւ առատ ծխախոտ ուրիշ բաժին հա-  
նեց նաեւ իր եղբորը: Կանտի իր ըրած այդ գողութիւնը թէեւ խոս-  
տովանեցաւ իր հիւանդ հօրը որ արասուելով ներքեց իրեն, բայց  
երկար ատեն տանջուեցաւ իր խղճով: Այդ առթիւ իր ինքնակեն-  
սագրութեան մէջ կը գրէ. «Ես արդէն վախկոտ էի. անկէ յետոյ ա-  
ւելի վախկոտ դարձայ, մասնաւոր՝ մութին մէջ: Ինձ այնպէս կը



թուէր թէ մէկ կողմէ վրաս կը յարձակէին ուրուականները, միւս կողմէ՝ զողերը, ուրիշ կողմէ՝ սարսափելի օձերը: Ես անոնցմէ ազատուեցայ այն ատեն երբ վերջնականապէս կրցի յաղթել ծիւղու վտանգաւոր մոլութեանը:

Կանտի երբ 18 տարեկան էր Ահմէտապատի զոլէճը մտաւ ուր մնաց միայն մէկ տարի: Գոլէճի ուսմունքը զինքը չէր հետաքրքրէր, եւ ահա յեղափոխական հեռանկարի նայող ճամբայ մը բացուեցաւ իր առջեւ: Ընտանիքի բարեկամ բրահմին մը թելադրեց իրեն երթալ Անգլիա, ուսանիլ փաստաբանութիւն եւ վերադառնալ իրեն երեւակայութիւնը յանկարծ բռնկեցաւ նոր Լոսանդով մը: Ինք իր ժողովուրդին ծառայել կ'ուզէր, եւ ահա իրեն կը ներկայանար պատեհութիւնը: Բայց մեծ դժուարութիւն մը կար իր առջեւ: Ինք իր ծնողաց հետ կը պատկանէր Մոզ Բանիա Բէստ-ին որուն կրօնական դաւանանքը կ'արգիլէր իր անդամներուն եւրոպացիներուն հետ ապրիլ, անոնց հետ ուսել ու ջուր խմել: Երիտասարդ Կանտի Բէստ-ի ժողովին մէջ մերժեց հպատակիլ դրուած կանոնին եւ վրձնտուեցաւ Բէստ-էն: 1887-ի Սեպտեմբեր 4-ին իր եղբոր դրամական օգնութեամբ զնաց Լոնտոն ուր յաղթելով աս ու ան դժուարութեանց անօթի մնալու պնտով պահեց իր անխախտ սովորութիւնը, միւս շուտել եւ սնանիլ բանջարեղէնով: Ան շատ ուրախացաւ երբ Լոնտոնի մէջ գտաւ բուսակերական ընկերութիւնը որուն միանալով եւ նոյն ուղղութեամբ հրատարակուած զրգերու ուսումնասիրութեամբ խորապէս համոզուեցաւ որ իր մօր կրօնական հաւատքը առողջապահական տեսակետով դիտական հիմք ալ ունէր: Իսկ իր ապրած գործնական կեանքը իրեն ցոյց տուաւ որ բուսակերութեան ունեցած դիտական հիմքէն զատ կար նաեւ տնտեսութեան կէտ մը: Ինք օրական մէկ շիլինկով կրնար ապրիլ, մինչդեռ մսեղէն կերակուրով օրական մէկ փաունտ(\*) հազիւ պիտի բաւէր:

Կանտի Լոնտոնի մէջ իր ուսանողութեան շրջանին հանդիպեցաւ ու բարեկամացաւ բարեպաշտ քրիստոնեայի մը հետ որմէ նոր Կտակարան մը առնելով սկսաւ ուսումնասիրել քրիստոնէական վարդապետութիւնը: Ամէնէն շատ ազդուեցաւ լերան քարոզէն:

1891-ին Կանտի աւարտեց իր փաստաբանական ուսման շրջանը եւ Յունիս 12 վերադարձաւ Հնդկաստան: Իր ծննդավայրին

(\*) Փաունտը անգլիական ոսկի դրամ է որ ամերիկեան դրամի հաշուով կ'ընէ 4 տոլար 86 սէնթ:

մէջ իր դէմ ելան նոր դժուարութիւններ: Ինք Լոնտոնի մէջ ուսաներ էր անլիական օրէնքները, անձանթ էր Հնդկաստանի օրէնքներուն: Վերցուց դատը մահմետական հնդիկի մը որուն հողը դըրաւուած էր: Չկրցաւ շահիլ պաշտպանեալին դատը: Այդ անյաջողութեան վրայ Կանտի շատ տխրեցաւ: Տխրեցաւ ոչ թէ անոր համար որ ձախողած էր, այլ անոր համար որ մահմետական հնդիկը իրաւադրուած վիճակի մէջ թողուցեր էր եւ ինք զայն չէր կրցած ազատել այդ վիճակէն: Կանտի կը տեսնէր իր երկրի ժողովուրդին թշուառութիւնը, ճնշուածներու եւ անիրաւուածներու բազմութիւնը, կը տեսնէր նաեւ որ շարիքի արմատը կապուած էր բրիտանական իշխանութեան երկդիմի օրէնքներուն հետ: Ինք իր հօրմէն ժամանկեր էր ճշմարտասիրութիւն, քաջութիւն եւ բարութիւն, իսկ մօրմէն ժառանգեր էր (մայրը մեռած էր Հնդկաստան վերադարձած ատեն եւ իրեն լուր տրուած չէր) կրօնական սրբաւանդ զգացում: Ասոնց վրայ երբ աւելցեր էր նոր Կտակարանէն սորված լերան քարոզը, ատով դարձեր էր թշուառ ժողովուրդին ծառայելու կոչուած անձնուրաց առաքեալ մը: Բայց գործելու համար պէտք էր ապրիլ, իսկ ապրելու համար դրամ պէտք էր: Միջավայրի պայմանները կը ճնշէին զինք: Ուսումնասիրելով տեղական օրէնքները փաստաբանական դժով կրցաւ ատեն մը գոցել իր ծախքերը, բայց խնդրին դէշ կողմը այն էր որ ինք շարունակ երգուած էր անիրաւուած թշուառին դատը վերցնել ու այդ թշուառը իրեն բաւարար վճարում չէր կրնար ընել: Դրութիւնը ամէն կողմերով աննպաստ էր իրեն համար երբ Փորթնտարի մէկ վաճառատունը, Գաղա Ապտուլլահ եւ Ընկերութիւնը, իրեն առաջարկեց գործ մը Հարաւային Ափրիկէի մէջ: Այդ ընկերութիւնը 40.000 փաունտ ստերլինկի դատ մը ունէր նատալի ուրիշ մահմետական վաճառատան մը հետ: Ընկերութիւնը առաջին կարգի տոմսակով երթ ու դարձի ծախսերը հողալէ գատ իրեն պիտի վճարէր տարեկան 10% փաունտ ստերլինկ: Կանտի սիրով ընդունեց առաջարկութիւնը որովհետեւ իրեն համար կարեւոր էր ուսումնասիրել Հարաւային Ափրիկէի հնդիկ դաղթականներուն վիճակը: Բոմբէյէն Կաւ առաւ 1893-ի Ապրիլին եւ նատալ հասաւ Մայիսի վերջը:

Ան շուտով հասկցաւ որ հնդիկները Հարաւային Ափրիկէի մէջ չըջապատուած էին թշնամական տրամադրութիւններով, ամէնէն արհամարհուած տարրերն էին եւ որոնք կը կոչուէին քուլիներ:

Նատալ հասնելէն շարաթ մը յետոյ զրկուեցաւ Փրետորիա, ներկայացնելու իր պաշտպանեալին, Ապտուլլահ Շէտի դատը ընդդէմ Թայէր Շէտի որ Ապտուլլահի մօտիկ ազգական էր: Ծամբոր-



դուժեան ատեն եւրոպացի ճամբորդ մը տեսնելով զինք հրամայեց զուրս ելլել: «Քուլիները շողեկառքի առաջին կարգի վաղուհով չեն կրնար ճամբորդել»: Այդ էր օրէնքը: Կանտի մերժեց տեղէն շարժիլ ըսելով որ իր սոմսակը առաջին կարգի սոմսակ էր եւ միայն սոտիկանը կրնայ զինք զուրս հանել: Ոստիկանը չուշացաւ: Մեր ճամբորդը վաղուհէն զուրս հանուեցաւ: Ամբողջ զիշերը սպասեց Մարիցբուրկի կայարանը: Յաջորդ առտուն ուղեկառքով երթալու էր ձանրսպուրկ: Բայց հոն ալ նոյն խտրական օրէնքն էր որ կը ցցուէր իրեն դէմ: Քուլիները եւրոպացիներուն հետ չէին կրնար ճամբորդել: Կանտի ստիպուեցաւ մեքենավարին քովի աթոռը գրաւել: Ուղեկառքի «առաջնորդը», ճերմակ մարդ մը որ ճամբորդներուն հսկելու պաշտօնը ունէր եւ նստեր էր ճերմակներու հետ, ծիւղ ուղեց: Ճամբորդներու յարկարաժնին մէջ ծխելը արգելուած էր: Ան ուղեց մեքենավարին քովի աթոռը գրաւել եւ ասոր համար հրամայեց որ Կանտի կծկուած նստի մեքենավարին ոտքերուն տակ: Կանտի մերժեց համակերպիլ տրուած հրամանին: Ասոր վրայ «առաջնորդը» սկսաւ կռուիի հարուածներ իջեցնել Կանտիի դիտուն: Անորակելի էր անոր անմարդկային այդ վերաբերմունքը: Ճամբորդներու միջամտութեամբ մարդը դադրեցուց իր ծեծը եւ գրաւեց հոթենթոտի մը պարսպ թողուցած աթոռը:

Ուղեկառքը Սաննորբուրն հասնելու պէս Կանտին դանդաւտեցաւ ուղեկառքի ընկերութեան որ զինքը փոխադրեց ուրիշ կառքի մը որ երթալու էր ձանրսպուրկ: Հասնելով ձանրսպուրկ Կանտի դարձեալ անել զրուժեան մէջ էր: ձանրսպուրկէն Փրետորիա, 37 մղոն, երկաթուղիով ճամբորդելու էր, եւ ինք զիշերը մնալու էր այդ քաղաքին մէջ: Մնալու էր, այժ, բայց ո՞ւր: Քուլի մը ունէ պանդոկի մէջ սենեակ չէր կրնար վարձել, հոգ չէր թէ ճերմակ ճամբորդէն աւելի վճարէր: Կանտի ամբողջ զիշերը անցուց կայարանին մէջ, նստած չոր տախտակին վրայ: Յաջորդ առտու կայարանի անօրէնէն գնեց շողեկառքի առաջին կարգի սոմսակ մը: Բարերախտութիւն էր որ անօրէնը, հօլանտացի մը, ցեղային նախապաշարման անձնատուր մէկը չէր: Բայց ատով ամէն ինչ չէր վերջանար: Վաղուհին մէջ շողեկառքի հսկիչը զինք ապատակելով տանիլ ուղեց երրորդ կարգի ճամբորդներուն յարկարաժնը: Անդլիացի ճամբորդ մը բողոքեց այդ անիրաւութեան դէմ: Հսկիչը զիջեցաւ: Այսպէսով Կանտի առաջին կարգի սոմսակով յաղթական մտաւ Փրետորիա:

Այս միջադէպերը Կանտիի հոգեբանութեան վրայ շատ խոր ազդեցութիւն գործեցին: Ինք որ փաստարան էր, լաւ անդլիախօս

էր, հազած էր եւրոպական հաղուատ երբ կ'ենթարկուէր այդպիսի վայրենի վերաբերմունքի, հասա ի՞նչ սարսափելի դրուժեան մտանուած ըլլալու էին իր հայրենիքի դժբախտ դաւակները, որոնք հեռացած իրենց ծննդավայրէն ինկած էին անձանօթ երկրի մը մէջ ուր իրենց բաժին ինկած էր գրկանք, ստրկային աշխատանք եւ անտանելի արհամարհանք: Տարուած այս տխուր մտածումներով ան բաւական երկար սպասեց քաղաքի կայարանին մէջ մինչեւ որ պատահականօրէն հանդիպեցաւ ամերիկացի նեկրոյի մը որ զինքը առաջնորդեց քուլիներ ընդունող պանդոկ մը, որուն կից ճաշարանին մէջ թոյլատրուեցաւ իրեն ճաշել զուտ բանջարեղէն ուտելիք:

Յաջորդ օրը ծանօթացաւ Ապտուլլահի մէկ փաստարանին, Ա. Բէյքըրին, ջերմեռանդ քրիստոնեայ մը որ նշանակելի դեր խաղցաւ իր կեանքին մէջ: Բէյքըր ամէն բանէ առաջ ուղեց հասկնալ Կանտիի կրօնական տեսութիւնները եւ փափաքեցաւ որ ան իրեն ընկերանար նոյն օրը, ժամը մէկին, քրիստոնեայ եկեղեցւոյ աղօթքի հաւաքոյթին: Կանտի չէր գիտեր մերժել թէ ընդունիլ եղած առաջարկը: Մերժելով կը վշտացնէր, գուցէ թշնամացնէր ալ մէկը որ կրնար օգտակար ըլլալ իրեն: Ընդունելով ինքն իր խղճին առջեւ կը կրնար օգտակար ըլլալ իրեն: Ընդունելով ինքն իր խղճին առջեւ կը նուազանար, քանի որ ինք քրիստոնեայ չէր եւ գիտէր թէ լերան քարոզը մտիկ ընող քրիստոնեայ եւրոպացիք ինչպէս կը վերաբերուէին իր հայրենակիցներուն հետ: Բէյքըրին պատասխանեց հետեւեալ բառերով.

«Ես ծնունդով հնդիկ եմ: Տակաւին շատ բան չեմ գիտեր բրահմինական կրօնի մասին. ուրիշ կրօնքներու մասին ալ շատ քիչ ծանօթութիւն ունիմ: Իրողութիւնը այն է որ ես այժմ չեմ գիտեր թէ ո՞ւր կը գտնուիմ եւ ի՞նչ ըլլալու է իմ հաւատքը: Ես նպատակ ունիմ նախ ուշադիր կերպով ուսումնասիրել իմ ազգի կրօնքը, յետոյ, նոյնքան հոգածու կերպով, միւս կրօնքները»:

Բէյքըր հասկցաւ որ զիմացինը պատեհապաշտ հասարակ մահկանացու մը չէր, այլ խոր ու անկախ մտածող մը որուն իւրաքանչիւր արտասանած քառը կը շեշտէր անոր որդեգրած անխախտելի սկզբունքը: Ասոր համար անոր հետ կապուած մնաց յարգալիք սիրով:

Այդ օրէն Կանտի պահեց կրօնական օրադիր մը, հոն արձանագրեց իր մտածումներն ու քննական ակնարկները: Իրեն հետ բարեկամացաւ նաեւ Պ. Կոտէսը, քուէյքըր մը որ քրիստոնէական կրօնքի շուրջ շատ մը գրքեր տրամադրեց իրեն:

Կանտի չափազանց ընթերցասէր մարդ էր: Գիշերները ան







կապեց իրարու հետ: Այս երկու յաջողութիւններով Կանախ գործնական հողի վրայ համոզուեցաւ որ առանց բռնի միջոցներու կարելի է թշնամական տրամադրութիւնները վերցնել եւ հաստատել խաղաղ համակեցութիւն մը ոչ միայն անհատներու, այլեւ ցեղերու եւ դասակարգերու միջեւ: Եւ Կանախ մինչեւ վերջ մնաց իր ուրոյն փիլիսոփայութեան ուղեգծին վրայ:

1896-ին Կանախ Նատալի հնդկական քոնկրէտէն խնդրեց հաւանութիւն 6 ամսուան բացակայութեան համար, սրպէսզի վերադառնար Հնդկաստան, կարգադրէր իր ընտանեկան գործերը եւ իր կնոջ ու երկու զաւակներուն հետ զար ու վերջնականապէս հաստատուէր Նատալի մէջ: Ամբողջ հնդիկ զաղութը մատնուած էր անձկութեան: Կանախ իրօք պիտի վերադառնա՞ր իրենց մօտ:

Կանախ պահեց իր խոստումը: 1896-ի Դեկտեմբերին վերադարձաւ Նատալ ուր իրեն կը սպասէր սորոսափելի պատահար մը: Իր կինն ու զաւակները նաւահանդիստէն առաջնորդուեցան հնդկական քոնկրէտի նախադահին տունը: Կանախ զինք զիմաւորող անգլիացի փաստաբան Պ. Լոտընի հետ պահ մը կեցած խօսելու պահուն, նաւամատոյցին վրայ հաւաքուած մի քանի պատանիներ ճանչցան զինք եւ սկսան սրտազակել. «Կանախն, Կանախն...»: Ասոր վրայ հաւաքուեցաւ բազմութիւն մը: Պ. Լոտըն խորհելով որ դրութիւնը վտանգաւոր է, ոստիկան մը կանչեց պաշտպանութեան համար: Կանախ շուղեց ոստիկանին պաշտպանութիւնը եւ զայն հեռացուց: Պ. Լոտըն Կանախի ընկերացաւ նաւամատոյցէն դուրս եւ մէկ փողոց անցնելէն յետոյ բաժնուեցաւ անկէ եւ ուղղուեցաւ իր պաշտօնատեղին: Իր կարծիքով, վտանգ չկար այլեւս: Կանախ հազիւ փողոցին ծայրը հասած էր, ահա բազմութիւնը շրջապատեց զինք: Մարդիկ սկսան նետել քարեր, աղիւսի կտորներ, հոտած հուկիթներ: Կանախ շուարած մնացեր էր: Ամբոխին մէջէն աւելի կատաղած մարդիկ յարձակեցան Կանախի վրայ, զլխէն առին ապարօշք, պատուեցին ու նետեցին եւ սկսան տեղալ կռուի ու փայտի հարուածներ: Կանախ նուազած ինկաւ դետին: Քիչ վերջ երբ ուշքի եկաւ եւ փորձեց օտքի կանգնել, ամբոխը դարձեալ փորձեց յարձակել երբ Տիկին Աղեքսանդր, ոստիկանութեան տնօրէնին կինը վրայ հասաւ, կեցաւ անոր առջեւ եւ ճակատեցաւ ամբոխին: Ամբոխը անշարժ մնաց: Մարդիկ չէին կրնար յառաջանալ առանց վրնասելու տիկինին: Նոյն պահուն հասան ոստիկանները որոնք ցրուեցին ամբոխը, որով Կանախ առաջնորդուեցաւ իր բարեկամ Ռեցոմաճիի տունը:

Բայց վտանգը հեռացած չէր: Գիշեր ատեն ամբոխը դարձ-

եալ հաւաքուեցաւ Ռեցոմաճիի տան առջեւ: Կատաղութիւնը ամբոխին հասած էր իր ծայրագոյն աստիճանին: Ամբոխը վճռած էր Կանախին լինչ ընել (ծառէ մը կախել): Ոստիկանական տնօրէնը տեսաւ որ իր ունեցած ուժով անկարելի էր զսպել ամբոխը որ հեարզհատէ աւելի կը մեծնար: Կանախն յօժար էր անձնատուր ըլլալ. «Թողէք որ զիս կախեն, միայն թէ թող հանդարտին», ըսեր էր ան: Ոստիկաններու տնօրէնը այս տարօրինակ եւ յամառ մարդուն որոշումը փոխեց միայն այն ատեն երբ զայն համոզեց որ իր մահով ամէն ինչ չէր վերջանար, իր սրտճառով ամբոխը պիտի հրդեհէր Ռեցոմաճիի տունը եւ պիտի սպաննէր տան բնակիչները: Կանախ ծպտուած հեռացաւ տունէն: Ոստիկանութեան տնօրէնը ճակատելով բազմութեան յայտարարեց որ զուր տեղ է իրենց հետապնդումը որովհետեւ Կանախ երբեք հոն մտած չէ: Ամբոխէն մի քանի հողի կը մտնեն շէնքէն ներս ուր կը գտնեն կիներ եւ երեխաներ միայն, բայց ոչ Կանախն:

Կանախ ոստիկանատուն մնաց երեք օր, մինչեւ որ ճերմակներու զրգուութիւնը հանդարտեցաւ: Բայց այս խոտուութեան արձագանգը տարածուեցաւ Հնդկաստանի եւ Անգլիոյ մէջ: Ճողճ Չէմբրըլէյն, անգլիական զաղութներու քարտուղարը հեռագրով հրաման ըրաւ անմիջապէս որ Նատալի վարչութիւնը տեղւոյն վրայ քննութիւն կատարէ եւ ձերբակալէ լինչլինկի փորձ ընող խոտուարները: Կառավարութեան մարդիկը ներկայացան Կանախի եւ ուղեցին որ ան պաշտօնապէս ստորագրէ իր պանդատը, որմէ յետոյ պիտի սկսուէին ձերբակալութիւնները: Կանախ յայտարարեց որ ինք զանգատ չունէր: «Մարդիկը տարածուած սուտ լուրերու հետեւանքով սխալ ուղի բռնած էին»: Կանախ իր ստորագրութեամբ դրութիւն մը յանձնեց կառավարական պաշտօնեաներուն որ ինք ընաւ զանգատ չունէր: Անոր դրութիւնը հեռագրուեցաւ Ճողճ Չէմբրըլէյնի: Կանախի բռնած այդ վեհանձն զիրքը խոր աղղեցութիւն թողուց թշնամական տրամադրութեամբ լեցուած ճերմակներու վրայ որոնք սկսան ակնածանքով վերաբերուիլ այդ «սուրբ» մարդուն հետ:

Կանախն այդ վտանգաւոր կռիւն մէջ պարտուեր էր սկզբնական շրջանին, բայց ապահովեր էր վերջնական յաղթանակը:

Անկէ յետոյ անիկա աւելի մեծ կորույծով փարեցաւ իր փիլիսոփայութեան: Ո՛չ մէկ պարագայի տակ բռնի ուժ գործածել թըշնամուտն զէմ եւ ոչ մէկ պարագայի տակ համադրածակցիլ թշնամիին հետ: Ինքնատիպ փիլիսոփայական տեսութիւն մը որուն հետեւեցաւ ան իր ամբողջ կեանքին մէջ: Ան կը հաւատար թէ ընկերային յե-



դափոխութիւնը կրնար յաղթանակել անարիւն ճանապարհով, առանց կռիւի, առանց զոհերու, բայց իր ստեղծած սիրոյ եւ խաղաղութեան շարժումը շատ զոհեր խլեց եւ ինք վերջապէս մէկը եղաւ այդ զոհերէն երբ Փանատիկ հնդիկի մը ատրճանակի հարուածներուն տակ ականջեց իր հոգին 1948-ի Յունուար 30-ին:

Քրիստոս մէկ անգամ խաչուեցաւ եւ իր առաքելութիւնը իր աշակերտներուն յանձնելով վերջ գրաւ իր գործին: Կանտի նախադասեցաւ, քանիցս բանտարկուեցաւ, բայց աներկիւղ ու աննկուն մնաց պատնէշին վրայ: Ժողովուրդը զինքը Մահաբ-մա կանտի կոչեց (մահա կը նշանակէ մեծ, աք-ման կը նշանակէ հողի) մեծ-հոգի կանտի, եւ ինք պատմական անհատականութիւն դարձաւ, բայց իր յառաջացուցած գործը պատմական դարազրուի ստեղծելէ հետո մնաց:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՒՈՐԱԿԱՆ

ԵՒ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄԸ

Հնդկաստանի մէջ արդիւնաբերական բանուոր դասակարգը, այժմեան առումով, բազմաամբ երկրի բնակչութեան խոշոր թիւ մը չի ներկայացներ, բայց իրողութիւն է որ ան կեզրոնացեր է որոշ շրջաններու մէջ եւ կը կազմէ ամէնէն գիտակից ու պատմականորէն ամէնէն յեղափոխական մասը Հնդկաստանի բնակչութեան:

Բանուոր դասակարգի թիւին մասին վիճակագրական ծանոթութիւններ չունինք սկզբնական շրջանէն մինչեւ ներկայ օրերը, բայց 1931-ին բրիտանական Հնդկաստանի խոշոր գործարաններուն մէջ աշխատող բանուորներուն թիւը, համաձայն այսչափական արձանագրութեանց, եղած է 1.553.169, իսկ տասը տարի յետոյ առանց թիւը բարձրացեր է 30 տոկոսով, այսինքն եղած է 3.500.000: Բայց Հնդկաստանի մէջ ընդհանուր, աւելի լայն շրջանակով վարձու բանուորներու թիւը եղած է 60 միլիոն:

Երկրագործական աշխատուորներու թիւը 1921-ին եղած է 22 միլիոն, իսկ 1931-ին եղած է 32 միլիոն:

Հնդկաստանի արդիւնաբերական պրոլետարիատը խոշոր հաստատութեանց մէջ 1931-ին հեռեւեալ պատկերը կը ներկայացնէր:

Գործարանային բանուորներ (գործարաններ որոնց մէջ կ'աշխատէին հարիւրէն աւելի բանուորներ)	1.855.000
Հանքագործներ	371.000
Երկաթուղային բանուորներ	636.000
Նաւաստիներ, նաւամատոյցի բանուորներ	361.000
Գումար	3.223.000

Այս երեք ու երեք քառորդ միլիոն բանուորութիւնը կը ներկայացնէ արդիւնական իմաստով Հնդկաստանի խոշոր արդիւնաբերական պրոլետարիատի միջուկը: Անոր մաս չեն կազմեր բոլոր մանր արդիւնաբերութեան ծառայող բանուորները, ինչպէս եւ անոնք որոնք կ'աշխատին մեքենական ուժ չգործածող խոշոր հաստատութեանց մէջ: Ասոնց վրայ պէտք է աւելցնել տնկարկութեան գծով աշխատուորները որոնց թիւը կը հասնի մէկ միլիոնի:

Արդիւնաբերական բանուորներու դրութիւնը կրնանք հասկընալ երբ նկատի առնենք անոնց ստացած աշխատավարձը: Բենկալի մէջ, ուր ամենամեծ թիւը կը կազմեն արդիւնաբերական բանուորները, անոնց 60 տոկոսը կ'ընդունի օրական մէկ շիլինկ աշխատավարձը: Այս ամենաբարձր զինն է իւրաքանչիւր բանուորի աշխատանքի վարձատրութեան համար: Իսկ կիներու եւ երեխաներու տրուածը աներեւակայելիորէն աննշան է: Կիները կը ստանան ամիսը 20 շիլինկ, իսկ երեխաները՝ ամիսը 12 շիլինկ:

Բանուորներու բնակարանները այցելող մը կը սոսկայ պարզուած երեւոյթներէն: Ահաւասիկ տուններու «շաբք» մը որոնց տէրը իւրաքանչիւր վարձուրէն կը գանձէ ամիսը 4 շիլինկ, միայն մէկ սենեակի համար, ուր կը բնակին երկու ընտանիք: Տուներու մօտ բակի մը մէջ դրուած են աղբընդունարաններ, մկներու եւ որդերու բոյները: Տուներէն ներս եւ տուներէն դուրս դարչահաստութիւնը ծայր աստիճանի հասած, զրուանք կ'ազդէ այցելուին: Ֆիզիքական առողջապահութեան եւ մանուկներու դաստիարակութեան մասին պաշտօնական մարմինները բնաւ չեն մտահոգուիր:

Տնկարկութեան մարդին վրայ գործող բանուորներու դրութիւնը աւելի վատթար է: Ասամ Հովտի թէյի պարտէզներուն մէջ աշխատող բանուորները կը ստանան ամիսը 13 շիլինկ, իսկ կիներն ու երեխաները՝ 7 շիլինկ: Իսկ երբ նկատի առնենք բնակարանային, բժշկական եւ ուրիշ կենսական խնդիրները, անոնց կացութիւնը յար եւ նման է գերիներու անտանկի կացութեան:

Այժմ երբ նկատի առնենք շահագործուող դասակարգերու շէժ տիրող դասակարգի անհաշիւ շահը մասնաւորապէս առաջին



պատերազմէն յետոյ, այն ատեն կը տեսնենք շահագործման հսկայական արդիւնքը:

Վեր առնենք Հնդկականեփի արդիւնաբերութիւնը, համաձայն հրապարակուած տեղեկատուութեան:

Հնդկականեփի ընկերութեան բաժնետէրերը տասը տարուայ ընթացքին (1915-1925) 300 միլիոն ստերլինկի շահ ապահոված են: Դա կը նշանակէ թէ զրուած կապիտալը 90 տոկոս շահ բերած է: Այդ ճիւղի արդիւնաբերութեան մէջ 300.000-էն 327.000 բանուորներ աշխատեց ինչ տարեկան 12 ստերլինկ աշխատավարձով: Երբ 300 միլիոն շահ ապահոված են տասը տարուան մէջ 300.000 բանուորներու աշխատանքով, այդ կը նշանակէ թէ իւրաքանչիւր բանուորի աշխատանքէն տասը տարուայ ընթացքին շահած են հազար ստերլինկ: Ուրիշ խօսքով, 100 ստերլինկ մէկ տարուան մէջ: Ուրեմն, երբ գիտենք թէ բանուորի մը աշխատավարձը 12 ստերլինկ է ամբողջ տարին, պարզ կը տեսնուի անխիղճ շահագործման չափը: Մէկ կաթիլ քրտինք չթափող պարոնը տարուան մէջ կը ստանայ ութը անգամ աւելի վարձատրութիւն քան աշխատող բանուորը: Մէկը տասը տարուան մէջ կը գրպանէ հազար ստերլինկ, միւսը տասը տարուան չարաչար աշխատանքէն ու զրկանքէն յետոյ կը ստանայ միայն 120 ստերլինկ:

Բամպակի արդիւնաբերութեան շուրջ մաքսային հարցաքննելի մարմնի տեղեկատուութիւնը 1927-ին յայտարարած է հետեւեալը.

«Բամբէյի մանաբաններու հաշուեկշիռը ցոյց կուտայ որ 1920-ին 35 ընկերութիւններ որոնք 42 մանաբաններ սւնէին, 40 առհարիւր շահ ունեցեր են: Տասը ընկերութիւններ որոնք 14 մանաբաններ ունէին, շահած են 100 տոկոս եւ աւելի, իսկ երկու մանաբաններ՝ 200 տոկոս եւ աւելի շահ»:

1921-ին մանաբաններ եղած են որոնք կրցած են 365 տոկոսով շահ ապահովել:

Բայց ինչ ըսել որ աշխարհի սեւէ առաջաւոր երկրի մէջ հարուստի վրին վրայ զրուած տուրքը այնքան թեթեւ չէ որքան Հընդկաստանի մէջ. տուրքի ամբողջ ծանրութիւնը զրուած է ամենախեղճ ժողովուրդի ուսերուն վրայ: Խեղճ գիւղացիները վճարելու են հողային տուրք, մինչդեռ հողատէրերը ազատ են այդ տուրքէն, ազատ են նաեւ եկամտային տուրքէն: Գործաւորները ենթարկուած են անուղղակի ճնշիչ տուրքերու, մինչդեռ հարուստներու եկամբտային տուրքը պահուած է շատ աննշան չափով: Անուղղակի տուր-

քերու գումարը ութը անգամ աւելի է քան ուղղակի տուրքերու գումարը:

Աշխատանքի ապահովութեան համար զրուած օրէնքները կը մնան թուղթի վրայ: Օրէնքը կ'արդիւնէ որ 6 տարեկան երեխայ մը մտնէ զործարան ու լծուի աշխատանքի: Օրէնքը կ'արդիւնէ նաեւ որ օրական աշխատատեղը 11 ժամէն աւելի ըլլայ: Բայց գործարաններուն մէջ խոնուած են վեց տարեկանէն մինչեւ 10 տարեկան երեխաներ, իսկ օրական աշխատանքի ժամերը կապուած են քմահաճոյքի: Գործարաններ կան որոնց մէջ բանուորները կ'աշխատին օրական 14 կամ 16 ժամ:

Ընկերային ապահովութեան օրէնքները ամբողջապէս անտեսուած են: Չկայ կեանքի ապահովագրութիւն, չկայ բժշկական խնամք, չկայ ընկերային օրէնք մը որ պաշտպանէ հիւանդը, ծերը եւ անգործը: Չկայ օրէնք մը որ պարտադիր դարձնէ կրթութիւնը նոր սերունդին համար:

Այսպէս էր զրութիւնը տասնեակ միլիոնաւոր այն մարդկային էակներուն որոնց համար սոցիալիզմը եւ բանուորական միութենականութիւնը առաջին անգամ ըլլալով եկան յոյս ու վստահութիւն ներշնչել բանուորներուն եւ գիւղացիներուն որոնք միասնական ճակատի վրայ կանգնած պիտի կրնային վերջ տալ իրենց թշուառութեան:

Եւ ահա սկսաւ աշխատաւորական շարժումը:

Հնդկաստանի մէջ բանուորական շարժումը սկսած է մօտաւորապէս կէս դարէ ի վեր, բայց անոր իրական պատմութիւնը կը սկսի առաջին պատերազմէն յետոյ:

1880-1908 բանուորական միութիւններ չկային Հնդկաստանի մէջ: 1908-էն յետոյ բանուորները թէեւ յատուկ կազմակերպութիւն չունէին, բայց անոնց մէջ սկսեր էր խմորուիլ միութեամբ պայքարելու հասկացողութիւնը:

Ուել մնայուն կազմակերպութեան համար հող պատրաստուած չէր տակաւին: Բայց ատիկա արդիւնքը չէր բանուորներու ծայրայեղ թշուառութեան ու անգրագիտութեան, որքան մարտական ոգիի պակասին: Առաջին համաշխարհային պատերազմէն վերջ էր որ երբ ուսական յեղափոխութեան յաղթանակը արձագանգեց ամբողջ աշխարհի մէջ, Հնդկաստանի բանուոր դասակարգը երկրի անտեսական ու քաղաքական պայմաններուն խթանումով բացաւ իր աչքերը եւ սկսաւ նայիլ իր բոլորտիքը: Պատերազմի ատեն կենսամթերքներու գիները կրկնապատկուած էին, մինչ աշխատավարձերը կը մնային նոյնը: Քաղաքական գետնի վրայ առկայձ էին նոր



պահանջներ: Քոնկրէտ-Միւսլիմ Լիկան սկսեր էր զործել անմիջա-  
կան ինքնավար կառավարութիւն մը հաստատելու ծրարում: Ռու-  
սաստանի յեղափոխական ազդեցութեան առաջին ակիբներն էին որ  
հասեր էին Հնդկաստան:

Գործադուլային շարժումները որոնք սկսան 1918-ին տա-  
րածուեցան ամբողջ երկրին մէջ, եւ 1919-ին ու 1920-ի առաջին կէ-  
սին տեղի ունեցան 200 գործադուլներ որոնց մասնակցեցան մէկ ու  
կէս միլիոն բանուորներ: Բայց այդ գործադուլները սոցիալիզմի  
հիմունքով քաղաքական գոյն չունէին, ոչ ալ հակած էին դասա-  
կարգային կռիւի հասկացողութեան կողմը: Առաջնորդող տարբե-  
րուն մէջ կային մարդասէրներ, արկածախնդիրներ, ազգային-քա-  
ղաքական պայքարի նուիրուողներ, բայց զժրատութիւն հոն էր որ  
անոնք լրջօրէն կ'արդիւնէին որ հնդիկ բանուորները անցնէին մար-  
տական կռիւի ճակատը: Կանտիի փիլիսոփայութիւնն էր անոնց  
ուղեգիծը:

Այս շրջանին էր որ հիմնուեցաւ հնդկական արհեստակցա-  
կան միութեան քոնկրէտը որուն բացման հանդիսութիւնը կատար-  
ուեցաւ Բոմբէյի մէջ 1920-ի Հոկտեմբերին:

Կառավարութիւնը հետախուզող աչքերով կը հետեւէր ար-  
հեստակցական միութեանց գործունէութեան: Անոնք յետ պատե-  
րազմեան շրջանին ուղեցին գտնել «ապահով» ճամբայ մը կառա-  
վարական ճնշիչ հետադիմումներէ հեռու մտաւ համար: Բայց  
դժուար էր գտնել այդպիսի ճամբայ մը վաղթային երկրի մը մէջ  
ուր իմպերիալիզմը իր ձեռքին մէջ առած էր հարստութեան ազ-  
բիւրները: Կառավարութիւնը արդէն 1926-ի բանուորական միու-  
թեանց օրինագիծ մը հրատարակած էր որով կ'արդիւնէր անոնց քա-  
ղաքական գործունէութիւնը:

Այսու հանդերձ, այդ բոլոր աննպաստ պայմանները, բոլոր  
արդեւքները չէին կրնար կասեցնել իրերու բնական ընթացքը: Յետ-  
պատերազմեան շրջանին Հնդկաստանի բանուոր գասակարգը սկսեր  
էր ցոյց տալ քաղաքական դիտակցութեան նշաններ: Սոցիալիստա-  
կան եւ կոմունիստական գաղափարներ մտեր էին Հնդկաստան եւ  
կամաց կամաց սկսեր էին տարածուիլ: Հողը պարարտ էր ու պատ-  
րաստ էր այդ գաղափարներուն համար: Առաջին թերթը որ հրա-  
տարակուիլ սկսաւ 1926-ին Սոցիալիստ թերթն էր Բոմբէյի մէջ:  
Անոր խմբագիրն էր Ս. Ա. Դանճէ: Այս թերթը լսյ տեսնելուն պէս  
կառավարութիւնը գործի անցաւ: Նոյն տարին ձերբակալուեցան  
չորս կոմունիստ առաջնորդներ, Ս. Ա. Դանճէ, Ծոքատ Ուսմանի,  
Մուզաֆար Ահմէտ եւ Դաս Կուխտա: Անոնց դատավարութիւնը

ծանօթ է կառույցորի դատավարութիւն անունով: Այս չորս կոմու-  
նիստները դատապարտուեցան հինգ տարուայ բանտարկութեան: Ա-  
սով Հնդկաստանի մէջ բանուոր գասակարգի քաղաքական շարժու-  
մը ստացաւ իր առաջին մկրտութիւնը:

Բայց այդ ճնշումը չէր կրնար արդիւնել յառաջացող զարթ-  
նումը: Ընդհակառակը, սոցիալիստական գաղափարները սկսան ա-  
ւելի լայն չափերով տարածուիլ: Բենկալի մէջ 1927-ին կազմուեցաւ  
բանուորներու եւ գիւղացիներու կուսակցութիւնը: Նոյն ձեւի կու-  
սակցութիւններ երեւան եկան Բոմբէյի, Միացեալ Գաւառներու եւ  
Փոնճապի մէջ: Այս կուսակցութիւնները միացան 1928-ին եւ կազ-  
մեցին համա-Հնդկաստանի բանուորներու եւ գիւղացիներու կու-  
սակցութիւնը որ իր առաջին քոնկրէտը գումարեց 1928-ի Դեկտեմ-  
բերին: 1929-ին Բոմբէյի մէջ մեծ հանդիսութեամբ տօնուեցաւ Մա-  
յիս Մէկը: Դա այն ազդարար նշանն էր որով Հնդկաստանի աշխա-  
տաւորական շարժումը կը մտնէր միջազգային աշխատաւորական  
շարժման մէջ: Մայիս Մէկի ցոյցին մասնակցող քաղաքային գոր-  
ծաւորները վճռուեցան իրենց գործէն: Սկսաւ հսկայ գործադուլ  
մը: Կառավարութիւնը հարկադրուեցաւ իր հեռացուցած գործա-  
ւորները ետ կանչել:

Արհեստակցական միութիւնները սկսան ծաղկիլ ու բազմա-  
նալ: Բոմբէյի մէջ արհեստակցական միութեան անդամներուն թի-  
ւը 1923-26-ին, 48.669 էր: 1927-ին բարձրացաւ 75.602-ի, 1928-ի  
Մարտին՝ 95.321-ի, իսկ 1929-ի Մարտին միութեան անդամներուն  
թիւը եղաւ 200.325: Ամէնէն յառաջդիմական-արմատական միու-  
թիւնն էր Բոմբէյի մանարաններու մէկ միութիւնը, Կիրնի Քամկար  
(Կարմիր Դրօշ) միութիւնը որուն անդամներուն թիւը առաջին օրը  
324 էր: 1928-ի Դեկտեմբերին այդ թիւը բարձրացաւ 54.000-ի,  
իսկ 1929-ին եղաւ 65.000: Հնդկաստանի փոխարքան, Լորա Իր-  
մին, 1929-ի Յունուարին օրէնսդրական ժողովին մէջ յայտարարեց.

«Կոմունիստական վարդապետութեան տարածումը Հնդկաս-  
տանի մէջ մեծազոյն վտանգը կը սպառնայ բրիտանական կայսրու-  
թեան: Կառավարութիւնը եթէ վճռական քայլեր չառնէ արդիւնելու  
կոմունիստներու գործունէութիւնը, հետեւանքը մեր երեւակայա-  
ծէն աւելի սոսկալի պիտի ըլլայ»:

1929-ի Մարտին կառավարութիւնը իջեցուց առաջին լախտի  
հարուածը: Հնդկաստանի բանուորական շարժման բոլոր գործուն-  
եայ առաջնորդները անխտիր ձերբակալուեցան եւ անոնց դատաւար-  
ութիւնը տեղի ունեցաւ ներքսմաքային փոքրիկ քաղաքի մը, Մի-  
րութի մէջ որ շատ հեռու էր ճարտարարուեստական ոեւէ մէկ կեղ-



բոնէ: Չերբակալուեցան նոյնպէս արհեստակցական միութեանց քոնկրէտի նախագահն ու քարտուղարը, ինչպէս նաեւ քանուորներու եւ դիւղացիներու կուսակցութեան առաջնորդները:

Չերբակալուածները դատաւարութեան ընթացքին իրենց յախուռն արտայայտութիւններով պաշտպանելով Հնդկաստանի շահագործուող դատակարգերու դատը, փաստեցին այն իրողութիւնը որ Հնդկաստանի բանուորական շարժումը մօտեցեր էր իր պատմական դերը կատարելու սահմանին:

Կառավարութիւնը այդ դատաւարութիւնը շարունակեց երեք ու կէս տարի, այնպէս որ լաւագոյն առաջնորդները հեռացուց հրապարակէն:

Բանուորական միութիւնները կորսնցնելով իրենց կարող ուզիտակից մարտական առաջնորդները ատեն մը մասնուեցան դժուարութեանց, բայց 1934-էն յետոյ շարժումը նոր թափ ստացաւ, այնպէս որ 1940-ին Հնդկական արհեստակցական միութեան քոնկրէտը իր անդամներուն թիւը կը ներկայացնէր 600.000 անդամ: 1934-ին, երբ Կոմունիստ կուսակցութիւնը յայտարարուեցաւ ապօրինի, արդ քոնկրէտը ոմբողջ չորս տարի աշխատեցաւ չէզոքացնել տրուած որոշումը եւ 1942-ին վերջապէս յաջողեցաւ վերահաստատել Կոմունիստ կուսակցութեան դիրքը: Կոմունիստ կուսակցութիւնը դարձաւ օրինաւոր կուսակցութիւն: Ասիկա ապացոյց էր մասսաներու ազդեցութեան ուժեղացումին եւ Հնդկաստանի բանուորական շարժման քաղաքական դործունէութեան հետեւելու դիտակցութեանը դարձութօնքին: Հնդկաստանը հին շրջանէն հեռացեր ու մտեր էր պատմական գործօնները ուժեղացնող նոր շրջանը:

Հնդիկ բուրժուազիան հասակ էր նետեր:

Հնդկաստանի անկախութիւնը դարձեր էր մի տեսակ պատմականօրէն հասունցած անհրաժեշտութիւն, մանաւանդ երբ Նախագահ Ռուդրէյթ 1942 Փետրուար 22-ին յայտարարեց որ «Ատլանդիկ Չարտրը» ոչ միայն Ատլանտեանը եզերող աշխարհի մասերուն համար է, այլեւ ամբողջ աշխարհի համար»:

Ռուդրէյթի այս յայտարարութիւնը ժխտումն էր վարչապետ Չրչիլի այն յայտարարութեան որ ան ըրած էր 1941-ի Սեպտեմբեր 9-ին.

«Ատլանտեանի մեր հանդիպումին մէջ մենք ի մտի ունէինք նացիական լուծի տակ մնացող Եւրոպայի ազդերու եւ պետութեանց վեհապետական, ինքնավարական եւ բնական կեանքի իրաւանց վերահաստատութիւնը»:

Չրչիլ իր այս յայտարարութեամբ բոլորովին մոռացութեան

կուտար Հնդկաստանի անկախութեան հարցը, եւ երբ այդ հարցը պատերազմի տաք շրջանին պաշտօնապէս սեղանի վրայ կը դրուէր, Չրչիլ 1942 Սեպտեմբերին հերքելով Ռուդրէյթի յայտարարութիւնը կ'ուզէր փաստել որ Հնդկաստանի անկախութեան դադափարը բացարձակապէս անգործնական է: Ահաւասիկ անոր ուղերձը անդլիական պարլամենտին մէջ Սեպտ. 10-ին երբ Հնդկաստանի քոնկրէտի կուսակցութիւնը Հնդկաստանի անկախութեան պահանջն էր ներկայացուցեր Անգլիոյ պարլամենտին:

«Քոնկրէտ կուսակցութիւնը ամբողջ Հնդկաստանը չի ներկայացներ: Ան Հնդկաստանի ժողովուրդին մեծամասնութիւնն ալ չի ներկայացներ: Այդ կուսակցութենէն դուրս եւ հիմնական սկզբունքով անոր հակառակ կան 90 միլիոն մահմադականներ որոնք ինքնարատա յայտութեան իրաւունք ունին: Կան նաեւ 50 միլիոն ճնշուած դատակարգեր որոնք չեն հաշտուիր քոնկրէտ կուսակցութեան ծրագրին հետ: Նոյնպէս կան զանազան իշխաններու հալասակ 95 միլիոն բնակչութիւն, եւ չմոռանք որ մենք այդ իշխաններուն հետ կապուած ենք յատուկ դաշնագրութեամբ: Ուրեմն, Հնդկաստանի 390 միլիոն բնակչութեան 235 միլիոնը կապուած է մեր հովանաւորութեան: Եթէ բրիտանական իշխանութիւնը Հնդկաստանը թողուիր բախտին, ատով կը վտանգուի ամբողջ Հնդկաստանի բնակչութիւնը: Այդ երկիրը պիտի թողուի առանց կառավարութեան: Հոն այլեւս պիտի չըլլայ ոչ ընտրական օրէնք, ոչ ընտրեալ վարչութիւն, ոչ արդարադատ դատարան եւ ոչ ալ ոստիկանութիւն, այլ պիտի ըլլայ իրապէս անիշխանական երկիր մը որ պիտի դրդուէ ձաբոնի տիրապետութեան խորժակը»:

Բայց Հնդկաստանի մէջ արդէն սկսեր էին քաղաքացիական կռիւներու նախանշանները: Կանտին կեցեր էր իր խաղաղասիրական քաղաքականութեան գծին վրայ (բունի ուժ չգործածել անդլիական իշխանութեան դէմ եւ չհամադործակցիլ անդլիական իշխանութեան հետ): Նհհրու կողմնակից էր համադործակցութեան գծին, եթէ Անգլիան ընդունէր Հնդկաստանի անկախութեան պահանջը: Միւս կողմէ, Չանկ-Կայ-Շէքը որ նեղ դրութեան մասնուած էր ճարտարական յարձակումին առջեւ, կ'ուզէր ապահովել Հնդկաստանի անմիջական օգնութիւնը: Կանտի անոր պատասխաններ էր հետեւեալ կերպով. «Մենք աճապարանոտ քայլ պիտի չառնենք, եւ ինչ դործ որ ընենք պիտի հետեւինք այն քաղաքականութեան որ չլինասէ Չինաստանի կամ քաջալերէ ձաբոնի յարձակումը Չինաստանի կամ Հնդկաստանի վրայ: Ես ամէն կերպով պիտի աշխատիմ ընդհարում չունենալ բրիտանական իշխանութեան հետ»:



Ազգային քոնկրէսը որոշեր էր զիմել փոխարքային խորհրդակցութեան համար, նախ քան սեւէ քայլ առնելը: Այդ որոշումը կայացաւ Օգոստոս 8-ին: Օգոստոս 9-ին քոնկրէսի բոլոր առաջնորդները ձերբակալուեցան: Ձերբակալուեցան նոյնպէս Կանտի, Նեհրու եւ Ալաա, Փատէլ, Քրիփոնալի, Փրասաա եւ ուրիշներ, եւ քոնկրէսը յայտարարուեցաւ ապօրինի կազմակերպութիւն: Ձերբակալութեանց հետեւեցան արիւնալի ընդհարումներ:

Ազգային շարժման բանուոր դասակարգի հակաֆաշիստ հատուածը Հնդկաստանի կոմունիստ կուսակցութեան առաջնորդութեամբ գործնական ծրագրով զիմեց ընդհանուր ժողովուրդին, քառասյին զրութեան վերջ տալու համար առաջարկելով հետեւեալ անյետաձգելի գործերը.

1) Հնդկաստանի մէջ հիմնել միացեալ ազգային ճակատ որուն կապուելու են քոնկրէսը, խոյամակաւ լիկան եւ բոլոր քաղաքական հատուածները, որդեգրելով հասարակաց նպատակ մը որ է զիմազրել Ֆաշիզմին:

2) Պահանջել ազգային կառավարութեան մը հաստատումը, Հնդկաստանի անկախութիւնը:

3) Անխախտ մնալով քաղաքական պահանջին վրայ սրտովին նուիրուիլ պատերազմը յաջող վերջաւորութեան տանելու նպատակին:

Հնդկաստանի կոմունիստ կուսակցութիւնը լայն ժողովրդականութիւն վաստկեր էր մասսայական զանդուածներուն մէջ:

Իրիտանական կառավարութիւնը անել զրութեան առջեւ էր: Մէկ կողմէ ճարտնական բանակները մտեր էին Չինաստան եւ կը յառաջանային անարգել ու կը սպառնային Հնդկաստանի, միւս կողմէ նացիական յաղթանակները սարսափի մատնած էին Եւրոպան, իսկ Հնդկաստան մօտեցեր էր քաղաքացիական պատերազմի եզրին ուր կոմունիստ կուսակցութիւնը անպայմանօրէն ստանձնելու էր առաջնորդողի դերը: Իրերու այդ զրութեան մէջ բրիտանական կառավարութիւնը հարկադրուած էր զիմել զիջումի քաղաքականութեան որ հաճելի էր նաեւ անդլիացի ժողովուրդին, որովհետեւ այդ ժողովուրդը շահ չունէր Հնդկաստանի տիրապետութեան մէջ:

Պատմութեան վճիռն էր որ Հնդկաստան անկախ ըլլար, եւ հրապարակուեցաւ անկախութեան «խոստումը»:

ՀՆԴԿԱՍՏԱՆ «ԱՆԿԱՍ»

Հնդկաստանի «անկախութեան» հռչակման օրէն հնդիկ բուրժուազիան անցաւ իշխանութեան գլուխը, եւ իր առաջին գործը ը-

րաւ լուծել հողային բարեկարգութեան հարցը: Որպէս իշխող դասակարգ այդ բուրժուազիան առաջին ակնարկով իբրեւ արժատական, յառաջդիմական կուսակցութիւն գործի դրաւ հնդկական ազգային քոնկրէսը: Անոր հողային ծրագիրն էր ջնջել միջնորդներու դերը, կրճատել վարձքերը, ազահոյել վարձուոր Ֆարմըրներու վիճակը, իրաւունք տալ վարձուոր Ֆարմըրներուն հողեր գնել հողատէրերէն, նուազագոյն զին նշանակել վաճառուելիք հողերուն, յաւելեալ հողերը բաժնել ընչազուրկ զիւղացիներուն, պակսեցնել պարտատէրերու տոկոսները, բարելաւել երկրագործական աշխատաւորներու զրութիւնը, կօ-օպերատիվներ կազմել օգնելու զիւղացիներուն որպէսզի անոնք կարենան աժան գնով գնել սերմացու, պարարտանիւթ եւ գործիքներ: Նոյնպէս ստեղծել պայմաններ որպէսզի անոնք իրենց արտադրոյթները կարող ըլլան ծախել նպատաւոր գնով, եւ յետոյ զիւղական շրջաններու մէջ կազմակերպել փենչայացներ(\*) եւ ուրիշ տեղական կազմակերպութիւններ:

Այս ծրագիրը եթէ կէտ առ կէտ գործադրութեան զրուէր, անիկա ծանր հարուած մըն էր զոր կ'ընկնէր երկրի Ֆէոդալական տարբերուն գլխին, որովհետեւ ան ոչ միայն պիտի շղթայէր Ֆէոդալ հողատէրերու հին իրաւունքները, այլեւ պիտի արգիլէր որ երեսն զային կապիտալիստական նոր տիպի հողատէրեր որոնք ադատօրէն կրնային հարստանալ, շահագործելով հասարակ ժողովուրդը: Դեռ աւելին: Այդ ծրագիրը պիտի օգնէր որ հասարակ ժողովուրդը սկսէր նոր կեանք մը հիմնել ղեմնկրատական ուղեգծով:

Բուրժուազիան, սակայն, այդ ծրագրին գործնականացման ճամբուն չմօտեցաւ, եւ բոլորովին անտեսեց տրուած որոշումը: Քիրալայի մէջ ուր կոմունիստ կուսակցութիւնը առաջնորդող ուժ կը ներկայացնէր, հաստատուեցաւ կառավարութիւն մը որ ուղղակի հետեւողական գծին վրայ կեցաւ ազգային քոնկրէսի ծրագրին: Յայտնի էր որ այդ ծրագրին իրականացումը անկարելի չէր: Անյաղթելի դժուարութիւններ չկային անոր առջեւ: Ասոր փաստն էր Քիրալայի մէջ կոմունիստ կուսակցութեան առաջնորդութեամբ հրապարակուած յաջողութիւնը: Բայց ամէնէն տարօրինակը այն էր որ այդպիսի մի ծրագիր պատրաստող եւ վաւերացնող ազգային քոնկրէսը, անանկով կոմունիստ կուսակցութեան կատարած դերը, մէկ անգամէն անցաւ հողատէր լորտերուն կողմը եւ հակառակ դիրք

(\*) Փենչայացը կոմունիստական գիւղի մէջ գիւղացիներու բուէով ընտրուած խորհուրդն է որուն գործն է սահմանեալ գծով վարել գիւղի տնտեսութիւնը:



բունց, այսպէս որ անդիտական կառավարութիւնը այդ ծրագիրը վերադարձուց օրէնսդիր մարմնոյն որ հարկ եղած փոփոխութիւններով զայն ընդունելի դարձնէ ամբողջ ժողովուրդին: Եւ յանձնարարուած փոփոխութիւնները պարզ էր որ յետադիմական բնոյթ պիտի ունենային:

Կոմունիստ կուսակցութիւնը ոչ միայն մերկացուց կատարուած խաղի տակ թագնուած նպատակը, այլեւ ժողովուրդին հասկընալի լեզուով պարզեց դրութեան տէր բուրժուազիայի քաղաքականութիւնը որ կը ձգտէր երկրի հոգային ֆէոդալական յարաբերութեանց ձեւը փոխել կապիտալիստական ձեւի: Օրինակի համար, 1958-ի Դեկտեմբեր 31-ին հոգային բարենորոգման օրէնսդիր մարմինը որոշած էր սկսիլ հասարակուրդի զարգացման շարժում մը որուն նպատակն էր բարձրացնել երկրագործական արդիւնաբերութիւնը, զարգացնել անոր տեխնիկան իր բոլոր ճիւղերով, կադմակերպել կօօպերատիւներ, կազմել երիտասարդներու, կիներու, երէիսներու եւ կուլտուրական բանուորներու կազմակերպութիւններ: Երկիրը բաժնելու էր երեք հազար հասարակուրդի զարգացման շրջաններու: Իւրաքանչիւր շրջանի տրամադրուելու էր որոշ թուով տեխնիկական անձնակազմ սրպէսպի օգնեն ժողովուրդին զարգացնելու երկրագործութիւնը, ձկնորսութիւնը, գիւղի ճարտարութեամբ, գիւղացիներու առողջութիւնը, կրթութիւնը եւ համագործակցութիւնը: Իւրաքանչիւր շրջան բաժնուելու էր փինչայացներու, իրենց քուէով ընտրուած ներկայացուցչական խորհուրդներով: Այս էր այն ծրագիրը որ Հնդկաստանը պիտի առաջնորդէր գէպի «սոցիալիստական հասարակարգի», առանց «բունութեան եւ դիկտատուրայի»:

Բայց հասարակուրդի զարգացման շարժումը չեղեցաւ իր նպատակակէտէն: 1961-ի Յուլիոսին հասարակուրդի զարգացման նախարարութիւնը յայտարարեց որ «շարժման համաձայն բաժնուած շրջաններուն մէջ նշանակելի սեւէ յառաջդիմութիւն կատարուած չէ»:

Հնդկաստանի Կոմունիստ կուսակցութիւնը որ սկզբնական շրջանին համակիր էր սկսուած շարժման, տեսնելով տխուր իրադարձութիւնը ուղեց բանալ ժողովուրդին աչքերը: Թուլցիկներով ան ժողովուրդին բացատրեց որ «ծրագրուած շարժումը քշուած է չարաշահութեան ճամբուն վրայ: Հասարակուրդի զարգացման համար տրամադրուած գումարները կը հոսին մեծ հողատէրերու եւ հարուստ գիւղացիներու գրպաններուն մէջ: Որպէս փոխասուութիւն խոշոր գումարներ կը տրամադրուին անոնց որոնք կրնան գնել տրակտորներ, շոգեմեքենաներ եւ այլ երկրագործական պիտոյք-

ներ: Անոնք են որ առիւծի բաժինը կը յափշտակեն, կը սաանան որակեալ պարարտանիւթ, եւ որ ամէնէն կարեւորն է անոնց համար կառավարութեան միջոցով սպահովուած են սպառման շուկաները: Անոնց շատ մօտիկ ընկերային կապը քաղաքական պաշտօնէութեան հետ կ'արդիլէ խեղճ գիւղացիութեան բարեկեցութեան համար թափած ջանքերու արդիւնաւորումը»:

Հնդկաստանի բանուոր դասակարգի դրութիւնը աւելի նախանձելի չեղաւ «անկախութեան» յայտարարութենէն յետոյ: Ինը տարիներու ընթացքին Հնդկաստանի բանուորութիւնը տեսաւ որ փոխուած էին իր տէրերը, բայց շահագործման ու զրկանքի լուծը նոյնն էր: Եւ պէտք է ըսել որ իր նոր տէրերը, նոյն բնաշխարհի զաւակները, աւելի հնարաղէտ էին, աւելի անխիղճ, աւելի ամբարտաւան քան անդլիական իմբերիալիզմի հետախուզական զործակալները:

Հնդկաստանի կազմակերպուած բանուորներու աշխատածածերը ճիշդ է որ կրճատուեցան: 14 ժամու աշխատօրի սովորութիւնը հոչակուեցաւ սպօրինի եւ որդեգրուեցաւ 10 ժամու աշխատօրի օրէնքը: Շատ աննշան չափով բարձրացաւ նաեւ բանուորներու աշխատավարձը, թէեւ այդ յաւելումը չէր համապատասխաներ կենսամթերքներու գիններուն կրկնապատիկ բարձրացման աստիճանին: Բայց ասոնց հետ արտադրողութեան մէջ ներմուծուեցաւ նոր սխտէմ մը, արագ արտադրութեան սխտէմը:

Այժմ եթէ հարցնենք թէ Հնդկաստանի անկախութիւնը ի՞նչ բարիք բերաւ հնդիկ բանուորութեան ու գիւղացիութեան, այս հարցման պատասխանը պիտի ըլլայ հետեւեալը: Եթէ «բարիք» ըմբռնումը բարեկեցութեան իմաստով վեր պիտի առնենք, մեր պատասխանը պիտի ըլլայ բացասական, իսկ եթէ «բարիքը» պիտի հասկնանք հնացած կարգերը քանդելու շրջանառութեան իմաստով, այն աստի կարելի է հաստատական պատասխան տալ: Հնդկաստանի անկախութիւնը այդ երկրի ընկերային յեղափոխութեան ընթացքը զանդալեցուց եւ ուժեղացուց ազգայնական հոսանքը: Անդլիական իմպերիալիզմը Չինաստանի մօտաւոր անցեալի պատկերը ի մտի ունենալով յեղափոխութեան հեռանկարէն սարսափած Հնդկաստանի շնորհեց «անկախութիւն» մը որուն քաղաքական շարժիկը երբ պատենք կը մնայ նոյն տնտեսական կախուածութիւնը, ինչ որ էր երէկ: Երէկուան եւ այսօրուան մէջ եղած տարբերութիւնը այն է որ երէկ անդլիացի կապիտալիստը Հնդկաստանի մէջ օտար թշնամիի հանդամանք ունէր, զտարիւն բրիտանացի էր ու կապուած իր հայրենիքի իշխանութեան, թէեւ անոր ճնշիչ օրէնքներէն յա-



ճախ կը մատնուէր տազնապի: Այժմ ան եղեր է Հնդկաստանցի, ընկերակցեր է իրեն կատապի մրցակից Հնդիկ բուրժուազիայի հետ. այն բուրժուազիային՝ որ հիմա յօժար է ընդունիլ իր ցուցմունքները եւ ինքն ալ իր կարգին իր գոյութիւնը յաւերժացնելու համար կրնայ անոր պարտազրել՝ ընդունելու երկրի խոշոր հողատէր դասակարգի գաշնակցութիւնը ապահովելու ուղեգիծը:

Ներկայիս Հնդկաստանի պրոբլէմը մեծագոյն պրոբլէմն է, համաշխարհային պրոբլէմ մը:

Հնդկաստան պիտի մնա՞յ ներկայ դրութեան մէջ: Իր ապագան բուրժուա-յառաջդիմական սիստէմի՞ն պիտի կապուի թէ պիտի նետուի ընկերային յեղափոխութեան հրդեհին մէջ:

Ահա կարեւոր հարցը:

Եթէ Հնդկաստան մշտապէս պիտի մնայ ներկայ դրութեան մէջ, կամ անոր ապագան պիտի ըլլայ բուրժուական գծով վարդապատ սիստէմ մը, ուրեմն հիմնաւոր կը գառնայ կապիտալիզմի հաստատունակութեան եւ յաւերժական գոյատեւման տեսութիւնը, ինչ որ հակադիտական է:

Ի՞նչ կը նշանակէ այս:

Այդ կը նշանակէ թէ Հնդկաստանը համաշխարհային շարժման մէջ կշռաւոր դեր ունի:

Հնդկաստանը ուչ կամ կանուխ սոցիալիստական երկիր պիտի դառնայ: Իրերու ընթացքը երկիրը կ'առաջնորդէ դէպի ընկերային յեղափոխութիւն, դէպի սոցիալիզմ:

Հնդկաստանի անկախութեամբ փոխուեցան երկրի տնտեսական եւ ընկերային յարաբերութիւնները: Բազմազգի ժողովուրդներու միջեւ ցեղային ու կրօնական խրամատները գոցուեցան եւ անոնց յաջորդեցին դասակարգային տարբեր ճակատներու դիրքաւորումները: Այն ինչ որ պիտի վճռէ Հնդկաստանի ժողովուրդի ապագան դասակարգային կռիւն է: Երէկ Հնդկաստանը թատերաբեմն էր ցեղային կռիւներու, իմպերիալիզմի եւ նացիոնալիզմի պայքարումներու, վաղը այդ երկիրը պիտի ըլլայ թատերաբեմը դասակարգային կռիւներու: Եւ դասակարգային կռիւներու ընթացքին վերջնական յաղթութիւնը պիտի իյնայ բանուորներուն եւ զիւղացիներուն կողմը: Իսկ սոցիալիստական աշխատանքի կառուցման գործին մէջ Հնդկաստանի ժողովուրդը առանձին պիտի չմնայ, անոր պիտի օգնէ ժողովրդական Չինաստանը: Հնդկաստան երբ միանայ Չինաստանի, եւրոպական եւ ի մասնաւորի ամերիկեան իմպերիալիզմը պիտի հեռանայ ասիական ցամաքամասէն եւ Չանկ-կայ-Շէքը, այդ համաշխարհային հռչակ հանած տւազակը, անոր

պիտի չկրնայ հրամցնել համազամ խորտիկներ, իսկ զետնառիւծ իմպերիալիզմը Ափրիկէի մէջ արդէն սկսած է փորել իր դերեզմանը:

Ամերիկեան իմպերիալիզմը, անդլիական կապիտալն ու իշխանութիւնը կամաց կամաց հեռացնելով Հնդկաստանէն իր քայլերը ուղղած է հոն եւ կ'աշխատի Հնդկաստանի եւ Չինաստանի մջջ սակզեւ յարուածութիւն, բայց հնդիկ ժողովուրդը երբ բացեր է իր դիտակցութեան աչքերը ժողովրդական Չինաստանի հետ պիտի չբախի: Նա համոզուած է որ իր ճակատագրի պատմական ուղին հորիզոնական գծով կ'ընթանայ նոյն հանդուանին հասնելու, ինչ որ չինացի ժողովուրդը արդէն մտեր է այդ ուղին եւ յաղթական քայլերով կը զիմէ իր նպատակին:

Մարզարէական դուշակութիւն չէ այս, այլ պատմութեան անխախտ վճիռը:






ՅՈՒՆԱՍՏԱՆ

ԵՒ

ՅՈՅՆԵՐԸ





## Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա Ն

Դորիացի, յոնիական եւ եւոզեան ցեղերը որոնք հիւսիսէն եկան ու տեղաւորուեցան Պալքանեան թերակղզիին հարաւային մասին վրայ եւ պատմութեան մէջ հռչակուեցան որպէս հելլէն կամ յոյն, կազմակերպուած էին արեւակցական կապերով եւ ունէին ազնուականներ, տոհմեր ու զարմեր:

Սոյն ցեղերէն դորիացիները զբաւեցին Լալոնիան (Սպարտա), իսկ յոնիացիները զբաւեցին Աթիկան (Աթէնքի երկրամասը): Այս ցեղերը իրարմէ կը զանազանուէին մասնաւորապէս իրենց զինւորական գործերով, բնկերային հիմնարկութիւններով, կամ փիլիսոփայական, արուեստագիտական եւ քաղաքական ուրոյն հասկացողութիւններով: Եւ այս երկու ցեղերը յատկանշականօրէն տարբեր զեր կատարեցին պատմութեան թատերաբեմին վրայ:

Սպարտացիներն ու դորիացիները բնդհանրապէս փորձարկութեան զրին կոմունիզմը, մինչ յոնիական ցեղերը աւելի ուժ տուին տեսարաններու եւ անոնց համար փիլիսոփայական գետին պատրաստեցին:

Սկզբնական շրջանին հելլէնները զբողեցան արջաուարուծութեամբ եւ հողագործութեամբ: Անոնք անհատական սեփականատիրութիւն չէին ճանչնար եւ քաղաքներ ալ չունէին: Որոշակի յայտնի չէ թէ այդ զրութիւնը ո՞րքան երկար տեւեց եւ ե՞րբ վերջացաւ. միայն գիտենք որ Թ. դարու (Ն. Ք.) վերջի կիսուն երբ Հոմերոս իր Իլիականն ու Ոդիսականը գրեց, արդէն հին հասարակութիւնը քայքայուած էր եւ յառաջացիր էր գասակարգերու բաժանումը: Յունաստան մասն չէր իր միջին դարը: Պղատոն Օրէնքներու վրայ իր գրքին մէջ Հոմերոսի բանաստեղծութիւններէն կը հետեւցնէ թէ այդ ժամանակներուն հիմնուած էին քաղաքներ, երեւան եկած էին ապստամբութիւններ տիրող գասակարգին դէմ եւ կը սարքուէին սճիրներ ու մահապատիժներ:

Յունաստանի նախնական զրութիւնը անհետացեր էր եւ անոր յաջորդեր էր պատերազմներու, առուաւորի եւ ծովային հազորակցութեանց շրջանը: Պատերազմը դարձեր էր բնթացիկ զրազում, ինչպէս որսորդութիւնն ու ձկնորսութիւնը, այնպէս որ յոյն մեծագոյն փիլիսոփաները, Պղատոն եւ Արիստոտէլ չէին կրնար բարունել յաւիտենական խաղաղութեան իմաստը:

Ահա կը սկսի գաղութարարութիւնը առուստերով ու ծովային արշաւանքներով: Դորիացիք գաղութներ կը հիմնեն կրեաէի,



Հուողոսի եւ Քիոսի մէջ ու Փոքր Ասիոյ հարաւային եւ արեւմտեան ծովեզերքներուն վրայ: 750-600 թուականներուն (Ն. Ք.) հելլէնները իրենց գաղութային նուաճումները յառաջ կը տանին եւ կը դառնան փիւնիկեցիներու յաջորդը:

Յոնիական գաղութները ցրուած էին Սեւ Մովու եզերքները, Սիկիլիոյ մէջ, վարէն Իտալիոյ եւ հիւսիսային Ափրիկէի մէջ: Գաղթային այս գործունէութեան հետ առուսուրը մեծ դարկ ստացաւ եւ շուտով ուժեղացաւ ճարտարարուեստական աշխուժութիւնը: Յոնիացիք կը պատրաստէին կաւեղէն անօթներ, զարդարանքի առարկաներ, դինի, քթան, հիւսուածեղէններ ու զէնքեր: Իրերու այս ընթացառումին մէջ բնական տնտեսութեան եւ տեղական ապրանքային փոխանակութեան սիստէմին յաջորդեց գրամական տընտեսութիւնը:

Հոմերական շրջանին արջառը կը ծառայէր որպէս սպրանքային փոխանակութեան միջոց. յետոյ երեւան եկան պղինձէ ու երկաթէ գրամները, իսկ Բ. դարուն հրապարակ ելան արծաթ ու ոսկի գրամները:

Ընչաքաղցութեան անյազ ծարաւը որ նոյնիսկ Հոմերոսի շրջանին կ'երեւնայ (Ողիսեւսը իր թափառումներուն ատեն կը հաւաքէր սպրանքներ), կը դառնայ սեփականատէր դասակարգի անդուստի կիրքը: Այս դրութեան հետեւանքով ամէնէն առաջ վնասուողները կ'ըլլան գիւղացիները որոնք որպէս դերի ծախուեցան եւ կամ սեփականազուրկ մշակներ դարձան: Իլիականի եւ Ողիսականի երեւումէն զրեթէ մէկ դար յետոյ մենք կը հանդիպինք անհատ բանաստեղծի մը, գիւղացի բանաստեղծի մը, Հեսիոսին, որ կը նկարագրէ հարուստներու անարգարութիւններն ու անգթութիւնները եւ կ'ողբայ ոսկեղարու անյայտացումը: Ան կը գրէ. «Այժմ դժուար է նոյնիսկ հաւատալ թէ մենք ոսկեղար ունեցեր ենք, եղբայրական դար մը հաւասար աշխատանքի եւ հաւասար վայելքի սկզբունքի վրայ: Հիմա հարուստը զոհ չէ իր զիջած հարստութենէն եւ կ'ուզէ աւելին եւ զեռ աւելին. ան սրբան կուտակէ իր հարստութիւնը, այնքան չքաւոր կը զգայ ինքզինքը ու բնաւ չի մտածեր այն թշուառներուն վրայ որոնք իրեն համար կ'աշխատին եւ զրկուած կը մնան նոյնիսկ աստուածներու շնորհէն: Ճշմարտութիւնը կախուած է երկաթի ծայրէն եւ իրաւունքը արուած է ուժին: Հայրը այլեւս իր զաւակը չի սիրեր, եւ զաւակը կ'ատէ իր ծնողքը: Եղբայրը իր եղբոր կը նայի որպէս թշնամիի: Վստահելի մարդուն շնորհ չի արուիր, ոչ ալ բարի մարդուն՝ արդարութիւն: Պատուաւոր է այն մարդը որ

չարիք կը գործէ եւ կը խնդայ իր կրօնկներուն տակ կոխկոտուող զոհին վրայ»:

Բայց պէտք է ըսել թէ Հեսիոս ապստամբ չէր եւ իր ժողովուրդը ապստամբութեան չէր հրաւիրեր. ան բարոյագէտ էր եւ կը քարոզէր համբերութիւն եւ պարկեշտ աշխատանք, որովհետեւ ան կը հաւատար թէ այդպիսով կարելի էր հասնիլ բարօրութեան: «Գործելը ամօթ չէ», կը գրէ ան, «ծուլութիւնն է ամօթը: Եթէ դուն պիտի գործես, գործէ գոհունակ սրտով եւ համբերութեամբ, եւ վստահ եղիւր որ հարուստը դժգոհ է իր կեանքէն եւ կը նախանձի քեզի, իսկ դուն վերջ ի վերջոյ պիտի վարձատրուիս յարգանքով ու փառքով»:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Բայց Հեսիոսի նման բարոյագէտ քարոզիչները չէին կրնար կասեցնել հասարակութեան վատասերումը: Դրամական սիստէմը, առուսուրն ու արգիւնարբերութիւնը հելլէն հասարակութիւնը բաժնած էին երկու մասի: Մէկ կողմն էր հարուստ փոքրամասնութիւնը, միւս կողմը՝ ազքատ մեծամասնութիւնը: Փոքր հողատէրը ինկաւ պարտքի տակ: Տոկոսը բարձր էր, վաշխառուն՝ անպութ, եւ օրէնսդիր մարմինը՝ իրաւազուրկին սխերիմ, որովհետեւ այդ մարմինը կ'ապրէր ու կը գործէր սեփականատէր դասակարգերու շահերը պաշտպանելու համար: Եւ արդէն երեւոյթը նոյնը չէ՞ դասակարգերու վրայ հաստատուած ամէն մէկ պետութեան մէջ:

Պլատոն իր Օրէնքները գրքին մէջ հետեւեալ յատկանշական վերլուծումը կ'ընէ օրէնքի եւ սահմանադրութեան հարցին շուրջ. «Օրէնքի եւ սահմանադրութեան առաջին կարգի խնդիրներն են փնտռել եւ գտնել արդարութեան ու անարդարութեան շափանիչը: Մարդիկ կ'ըսեն որ օրէնքը նկատի առնելու չէ զինուորական առաքինութիւնը, կամ ռեւէ առաքինութիւն, իր ընդհանուր շրջանակով, այլ նկատի առնելու է հաստատուած կառավարութեան իշխանութիւնն ու անոր շահերուն պահպանութիւնը: Ասիկա մտածողութիւնն էր անոնց որոնք արդարութեան բնական սահմանաւորումը կ'ուզեն ընկ իրենց մակերեսային դատումով: Իսկ զուք չէ՞ք ենթադրեր թէ բռնապետութիւնը կամ ռամկավարութիւնը, կամ ուրիշ ռեւէ պետութիւնն նոյն սկզբունքով ձեւաւորած է իր օրէնքները. այսինքն նկատի առած է հաստատուած իշխանութեան չէնքին եւ անոր շահերու պաշտպանութիւնը, եւ ով որ այդ օրէնքները կ'ոտնակոխէ կը պատժուի գործադիր մարմնոյ կողմէ որպէս չարագործ»:



Համաձայն մեր տեսակետին, օրէնքները արդարացի չեն երբ անոնք դրուած են ամբողջ պետութեան շահերու պաշտպանութեան համար, որովհետեւ երբ հարցնենք թէ պետութիւնը ո՞ր դասակարգին ներկայացուցիչն է, հարուստ դասակարգի՞ն թէ աղքատին, մեղի որոշ պատասխան չի տրուիր»:

Պղատոնի դրած այս տողերուն մէջ մենք արդէն կը տեսնենք կազմակերպուած յունական պետութեան ու դասակարգային յարաբերութեանց պատկերը:

Յունաստանի երկաթէ դարաշրջանին երբ դատակարգային կառավարութիւնն էր տիրողը, խոնարհ մարդիկը ինկան թշուառութեան մէջ: Պարաքի բեռան տակ հեծեծող եղիկիները, չկարենալով զճարել իրենց պարտքը, իրենց ընտանիքներուն հետ դարձան ստրուկներ: Չուային աշխատանք տանող արհեստաւորները կորսընցուցին իրենց անկախութիւնը, ինչպէս նաեւ պղտիկ հողատէրերը: Պոչոր հողատէրերու կողքին բարձրացաւ հարուստ բուրժուազիան, որ միջամուսնութեան կապով միանալով հողատէր ազնուականութեան հետ, կազմեց միազանցուած տիրող դասակարգ մը: Չ. դարու վերջերք, ՅԱԾ թուին (Ն. Ք.), մոլեզնած խուժանք Մեկարայի մէջ յարձակեցաւ խոչոր հողատէրերու հողերուն վրայ եւ անխնայ կոտորեց զանոնք:

Եօթներորդ դարուն ընկերային ուժերու խմորումը աւելի զօրուոր էր եւ ընդհանուր: Ռամիկ ժողովուրդը որ բազկացած էր դերիացած դիւղացիներէ, արհեստաւորներէ, փոքր առեւտրականներէ եւ նաւաստիներէ որոնք չէին մոռցած հին օրերու հաւատարմութիւնն ու բանաստեղծներու ներքոյցած սուկեղարը, յեղափոխուեցան հողատէր եւ գրամատէր լորտերու դէմ եւ պայթեցաւ դասակարգային կռիւլ որ գրազեցուց պետական մարդիկն ու յոնիացի եւ դորիացի մտախոհ անհատները: Մինչ Աթէնքի մէջ նախապտտրաստական վիճարանութիւններ եւ փիլիսոփայական տեսութիւններ կը հրապարակուէին եւ պայմաններու բերումով ուժ կը տրուէր չափաւոր բարեկարգութեանց, սպարտացիները կանուխէն սկսան գործի եւ զլուխ հանեցին կոմունիստական ձեւի յեղափոխութիւն մը:

1. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԹԷՈՐԻԱՆԵՐ ՍՊԱՐՏԱՅԻ ՄԷՋ

ԼՈՒԿՈՒՐԿՈՍԵԱՆ ՕՐԷՆՍԳՐՈՒԹԻՒՆ

Նահապետական հաւատարմութեան դադափարը աւելի խոր արմատ ձգած էր եւ աւելի տեւականօրէն կը շարունակուէր դորիացիներու քան յոնիական ցեղերու մէջ: Այս տարբերութեան պատ-

ճառը պիտի փնտենք այդ երկու ցեղերու տարբեր անտեսական յարաբերութեանց մէջ: Գորիացիներու գաղութները աւելի հողագործական ճիւղին նուիրուած էին եւ անտեսած առուտուն ու ծովային ճամբաներու տիրացումով իրենց ազդեցութեան սահմանները ընդարձակելու քաղաքականութիւնը: Ասոր համար էր որ անոնք պահեցին իրենց նահապետական կեանքն ու ըկերային հիմնարկութիւնները:

Առաջին օրէնսդիրը որուն կը վերադրուի կոմունիստական յեղափոխութեան գործը եղած է Լուկուրկոս:

Լուկուրկոս վիպային դէմք մըն է յոյներու մօտ, ինչպէս Մովսէսը՝ երբայցիներու մօտ:

Պղուտաբոս, ծնած 50 թուականին (Ն. Ք.), քաջածանօթ ըլլալով յունական եւ հռոմէական հին պատմութեան, կը գրէ հետեւեալը. «Ընդհանուր առմամբ խօսելով, որոշ բան մը կարելի չէ ըսել օրէնսդիր Լուկուրկոսի մասին, երբ պատմաբաններու տեսութիւնները կը տարբերին անոր ծննդեան, կատարած ճամբորդութեանց ու անոր մահուան շուրջ: Սպարտացիները Լուկուրկոսը կը յիշեն որպէս խելացի, ազնիւ եւ անկրակ օրէնսդիր որ իր ատենին անտեսական ամբողջ հասարակարգը փոխեց քաղաքական բարեկարգութեամբ եւ հաստատեց կոմունիզմը: Լուկուրկոսի երկրորդ եւ ամէնէն յանդուզն գործը այն եղաւ որ ան հողերու նոր տեսակի բաժանումներ բրաւ, որովհետեւ կային հողագուրկ մշակներ որոնք ծանրաբեռնուած էին ծանր աշխատանքով ու սուրբերով, մինչ անդին կային փոքրաթիւ մարդիկ որոնք վաշխառութեամբ տիրացեր էին խոչոր հողաշերտերու: Այդ դրութեան մէջ էր ընկերային շարիքի արմատը: Ասոր համար Լուկուրկոս որոշեց ամբարտաւանութեան, նախանձի, ազահութեան ու պերճասիրութեան չարիքը արմատախիլ ընել եւ հաստատել անդասակարգ հասարակութիւն մը ուր բոլոր քաղաքացիները օպրելու էին անտեսական հաւատարմականարդակի վրայ: Իսկ եթէ քաղաքացիները իրարմէ անպայման զանազանուիլ կ'ուղէին, այդ զանազանութիւնը պիտի յառաջանար առաքինութեան, քաջասրտութեան եւ գովեստներ խելու մրցակցութեան մէջ: Եւ Լուկուրկոս կրցաւ իրականացնել իր ծրագիրը իր անյողողող կամքով»:

Հաւանական չէ, սակայն, որ խոչոր հողատէրերը Լուկուրկոսի խորհուրդները յօժարակամ ընդունած ու առանց դիմադրութեան անձնատուր եղած են անոր կամքին: Իրողութիւնը այն է որ երբ հարստութիւնը կուտակուած էր մի քանիներու ձեռքը եւ ժողովուրդին մեծամասնութիւնը ընչազուրկ էր, իսկ այդ ընչազուրկ



մասան բաղկացած ըլլալով զէնք գործածելու վարժ սպարտացի-  
ներէ, հարուստները բնականաբար իրենց վախէն հարկադրուած պի-  
տի ըլլային ընդունել կոմունիզմը:

Լուկուրկոս Սպարտայի 9000 հողաշերտերը հաւասարապէս  
բաժնեց քաղաքացիներուն միջեւ եւ 30.000 հողաշերտերը՝ Լակո-  
նիայի բնակիչներուն միջեւ: Անկէ յետոյ ան նոյն ձևով բաժնեց  
արտատեղիները, այնպէս որ զրկեալ մէկը չմնաց: Բայց ստով ա-  
մէն բան չէր վերջանար: Քանի որ ոսկի եւ արծաթ դրամ կար,  
մարդիկ կրնային իրենց արտադրածը դրամով ծախել եւ հարստու-  
թիւն կուտակել: Ատոր համար Լուկուրկոս բոլորովին վերցնել  
սուաւ ոսկի ու արծաթ դրամները եւ անոնց տեղը շրջաբերութեան  
հանեց երկաթ դրամներ որոնք զրկեց անարժէք էին: Սոչոր քանա-  
կութեամբ երկաթ դրամներ շատ ոչինչ արժէք կը ներկայացնէին:  
Օրինակ, 30 տուար արծոյ երկաթ դրամները եզան սայլով միայն  
կարելի էր փոխադրել տեղէ տեղ: Լուկուրկոս այդպիսով դրամա-  
սիրութիւնը չքացուցեր էր: Ո՞վ պիտի գողնար բան մը զոր չէր  
կրնար ծախել: Ո՞վ կաշառք պիտի վերցնէր երբ դրամը արժէք չու-  
նէր: Լուկուրկոս այնուհետեւ վերցուց անօգուտ ու աւելորդ ար-  
ւեստները որոնք ժողովուրդին չէին ծառայեր: Նկարչութիւն, քան-  
դակագործութիւն ի՞նչ օգուտ կը բերէին ժողովուրդին: Առևտու-  
րը, նաւորութիւնը եւ արտածութիւնը դադրեցան: Սպարտան  
սպարտացիներուն համար:

Սպարտացիներու ուտելիքը պարզ էր ու հասարակաց: Սեւ  
արգանակ, հաց, պանիր, ձիթապտուղ, գինի, թուզ եւ բանջարե-  
ղէն, եւ երբեմն այծի կամ ոչխարի միս: Բոլոր քաղաքացիները կը  
ճաշէին հասարակաց սեղանին շուրջ. անոնց կը մասնակցէին երե-  
խաները:

Երիտասարդներու կրթութեան համար մասնաւոր պարտա-  
դիր կանոնադրութիւն կար: Ան հրաման բրած էր որ նոյնիսկ ման-  
կամարդ օրիորդները Փիդիքական մարզանք կատարեն շարունակ.  
վազել, ցատկել, գօտեմարտիլ, ձի հեծնել, նետ արձակել ամենօր-  
եայ մարզանքներ էին: Օրիորդները որոշ հանդիսութեանց ատեն  
բոլորովին մերկ կը պարէին երիտասարդ մերկ ազամարդոց հետ.  
ոչ մէկ անխորժութիւն, ոչ մէկ ազեղ շարժում ու արարք:

Կին մը երբ իր ամուսինէն քաջառողջ երեխայ չէր ունենար,  
կրնար ուրիշ մը հետ կենակցիլ եւ ունենալ հասարակաց երեխա-  
ներ: Քաջառողջ երեխաները մասնաւոր հոգածութեամբ կը մեծ-  
նային ու կը կրթուէին, իսկ հիւանդոտ ու հաշմանդամ երեխաները  
կ'անհետացուէին: Դաստիարակութեան ու կրթութեան միակ նպա-

տակն էր պետութեան հասցնել ուժեղ, գործունեայ եւ անխա-  
կոտուղներ: Լուկուրկոս իր քաղաքացիները այնպէս կրցեր էր կըր-  
թել որ անոնք չէին դիտեր թէ ի՞նչ է անխախ, անհատական կեան-  
քը: Անոնք մեղուներու նման միասին ու միանուազ կը գործէին  
պետութեան համար, հասարակութեան համար, համախորհուած ի-  
րենց առաջնորդին շուրջ: Անոնք, արկածախնդրութեան, փառքի ու  
պատիւի սիրահար, մոռցեր էին կեանքի անձնական հաճոյքները.  
միայն մէկ բան զիտէին, ծառայել իրենց երկրին ու արժանանալ  
պատիւի: Սպարտացի մայրը պատերազմի ճակատը մեկնող իր զա-  
կին երբ վաճանը կը յանձնէր, անոր կ'ըսէր. «Զուաւիս, կամ տա-  
կը, կամ՝ վրան»: Դա կը նշանակէր. «Կամ՝ այս վաճանին տակ յաղ-  
թական վերադարձիր եւ կամ այս վաճանին վրայ դիակղ թող բերեն  
ինձի»:

Կոմունիստական եւ գինուորական այս օրէնսդրութիւնը սպար-  
տացիները հասցուց Պեղոպոնէսի մէջ ղերակայութեան դիրքին,  
այնպէս որ անոնք նոյնիսկ աթենացիներուն յաղթեցին: Սոկրատի  
մէկ աշակերտը, Անթիստինէս, չկարենալով իր հիացումը զսպել,  
օր մը ըսաւ. «Սպարտան բոլոր պետութիւններէն բարձր կը մնայ.  
անոր տղամարդիկը անբաղդատելիօրէն զերկիր են ներքնասենեակ-  
ներու մէջ կիներու հետ շաղկիւրատող աթենացի երիտասարդներէն»:

Լուկուրկոսի սահմանադրութիւնը չին աշխարհի մէջ հեղինակ  
քաղաքակրթութիւնը պատկերացնելու տեսակէտէն հռչակաւոր էր:  
Անիկա շատ մը մտածողներու իտէալը դարձաւ. նոյնիսկ հռոմէա-  
կան կայսրութեան մէջ ղերիներու յեղափոխութեանց առաջնորդ-  
ները հետեւեցան այդ իտէալին:

Բայց պէտք է գիտնալ որ Լուկուրկոսի հիմնած պետութիւ-  
նը միակողմանի էր. ան արխտոկրատական էր եւ ռազմական. ան  
կառուցուած էր ղերիներու արտադրողական աշխատանքի վրայ.  
ղերիներ որոնք ամբողջ պետութեան հասարակական սեփականու-  
թիւնը կը նկատուէին: Այս գետնին վրայ սպարտացիները անտեսեր  
էին մարդկային յառաջդիմութեան ամէնէն արդիւնաբեր աղբիւրը,  
արտադրողական ուժերու աղբիւրը: Անոնց կոմունիզմը միմիայն  
ղերիներու արտադրած ապրանքները համայնական եզանակով սպա-  
ռելու մէջ էր, բայց ոչ թէ կոմունիստական արտադրողութեան  
մէջ: Մէկ խնդրով, ան մշակութային ուժ մը չէր ներկայացներ, այլ  
կոտուղ մարտիկներու եւ իշխողներու կողմէ զրուած կարգապա-  
հութիւն մը: Գոյութիւն չունէր ղեմակրատի մը որ կարենար չա-  
փով մը սանձել իշխողները: Նոյնպէս հետաքրքրութիւն չկար փի-  
լիսոփայութեան, գրականութեան ու արուեստի համար, ինչ որ



կրնար բարձրացնել սպարտացիներու մտաւորական մակարդակը: Եղածը Ֆրիգիքական ու գինուորական մարզանք էր որ սպարտացիներուն կուտար յարձակելու, յայթելու ռազմական գրգիռը: Որպէսզի ինքզինքնին պաշտպանեն ճշուած գասակարգերու ապստամբական փորձերուն դէմ, ինչպէս այդ տեղի ունեցաւ 464 թուականին (Ն. Ք.), սպարտացիները մասսայական ջարդեր կազմակերպեցին յաճախակի, նպատակ ունենալով բնաջնջել քաջարի եւ կարող այն տարրերը դրոնք չէին ուզեր գործածել որովհետեւ անոնք ստրուկ էին: Լուկուրիոսի հաստատած բարոյագիտական օրէնքները միմիայն քաղաքացիներու համար էին, տեղական, գուտ պետական օրէնքներ որոնք կապ չունէին հողեկան եւ մարդատիրական օրէնքներու հետ: Յամենայն դէպս այդ ձեւի օրէնսդրութեան տակ զարգացող պայմանները կոչուած էին ստեղծել պոզպատեայ մարդոց եւ կիներու ցեղ մը որու մտքի զարգացման հորիզոնը ցոյց կուտար միմիայն Ֆրիգիքական բիրտ ուժի զարգացումը: Երբորդ դարուն (Ն. Ք.), սակայն, մի շարք սպարտացի ազնուականներ ինկան յունիական փիլիսոփայութեան եւ ստոյլիկեան ընկերային բարոյագիտութեան ազդեցութեան տակ եւ ստով բացուեցաւ նոր տեսակի հերոսութեան ուղի մը: Այդ նոր ուղիին հերոսը եղաւ Ակիս, կոմունիզմի առաջին մարտիրոսը:

**ԱԿԻՍ, ԿՈՄՈՒՆԻՉՄԻ ԱՆՈՅԵԱՆԸ**

Մի քանի տարիներու ընթացքին իրարու յաջորդող պատերազմներն ու շահատակութիւնները սպարտական կոմունիզմը վատասեման առաջնորդեցին: 494-479 թուականներուն (Ն. Ք.) սպարտացիները օգնեցին յոնիացիներուն որոնք պարսիկներուն հետ կը պատերազմէին իրենց երկիրը ազատելու համար: Քառասուն տարի յետոյ սկսան պեղոպոնէսեան պատերազմները (431-404 Ն. Ք.), իսկ անոնց յաջորդեցին ուրիշ պատերազմներ մինչեւ 371 թուականը: Սպարտացիները բոլոր այս պատերազմներուն մէջ տարին փառաւոր յաղթանակներ որոնք Սպարտայի մէջ կուտակեցին սակի եւ արծաթ: Այդ մոզական մետաղները ապականեցին Լուկուրիոսի հիմնարկութիւնները:

Պուլտարքոս կը գրէ. «Ապականութեան առաջին նշանները երեւցան իսկոյն այն ատեն երբ սպարտացիները կործանեցին աթենացիներու իշխանութիւնը եւ Լակեդիմոնիան լեցուցին սակիով ու արծաթով: Երբ դրամատիրութիւնը մտաւ Սպարտա եւ իրեն հետ բերաւ մէկ կողմէ ազահութիւնն ու ցածոգիութիւնը, միւս կողմէ՝

չուայութիւնը, հեշտատիրութիւնն ու պերճասիրութիւնը, պետութիւնը թողուց իր ընտանիք առաքինութիւնը եւ ընկզմեցաւ վատասեմումի անդունդը մինչեւ Ակիսի եւ Լէոնիտասի զահակալութիւնը: Հարուստ մարդիկ իրենց հողային կալուածները ընդարձակեցին առանց սահման ճանչնալու եւ ռանակոխեցին պետական ու ժառանգական օրէնքները: Հարստութեան հետ կալուածները կեղրոնացան մի քանիներու ձեռքին մէջ. ժողովուրդը մատնուեցաւ թըլլատութեան: Թիւով 700 հին սպարտական ընտանիքներէն մնացեր էին միայն 100 ընտանիք որոնք գերիշխող հողատէր էին դարձեր: Քաղաքի ընակչութեան մեծամասնութիւնը, ընչպէսզէն ու անպատիւ, ոչ սիրա ունէր, ոչ ալ հոգի՝ պաշտպանելու ինքզինք. միայն կ'երազէր յեղափոխութիւն մը որ գալու էր նոր Լուկուրիոսի մը ձեռքով որպէսզի հաստատուէր հին դրութիւնը»:

Եւ ահա նոր Լուկուրիոսը երեւան եկաւ:

Այդ նոր Լուկուրիոսին անունն էր Ակիս:

Ակիս արքայական տունէն էր եւ կը պատկանէր Մպարտայի ամենահին ընտանիքներէն մէկուն: Անիկա ծանօթ էր ստոյլիկեան փիլիսոփայութեան եւ հռչակ հանած էր իր մտաւորական կարողութեամբ եւ լայնախոհութեամբ: Այդ ատեն ան 20 տարեկան էր: Թէեւ մեծցած պերճանքի ու փարթամութեան մէջ իր մօր Ակիստրատայի կողքին եւ մեծ մօր՝ Արքիզամիայի շունչին տակ, Ակիս կամովին հրաժարեցաւ թագաւորական վայելքներէն եւ որոշեց վերադառնալ հին սպարտական պարզութեան, կամ, ինչպէս ստոյլիկները կ'ըսէին, բնութեան գիրկը: Ակիս բացէն ի բաց յայտարարեց որ թագաւորական արժանապատուութիւնը իրեն համար արհամարհելի էր եթէ իրեն չէր թոյլատրուեր վերահաստատել նախնական հիմնարկութիւններն ու հին օրէնքները: Երիտասարդները ողջունեցին իր զաղափարները, բայց տարեցները հակառակեցան իրեն: Նոյնիսկ իր ընտանիքը հակառակ էր բարենորոգումներու, բայց ինք համոզեց զանոնք որ իր ծրագիրը գործնական էր ու կը նպաստէր պետութեան: «Ես թագաւորներու հետ փարթամութեան գծով անկարելի է որ մրցիմ», բաւ ան, «բայց կրնամ մրցիլ պարզութեամբ, մտքի մեծութեամբ եւ բարձր զաղափարականով: Ըսել կ'ուզեմ իմ թագաւորական զահը արհամարհելի է ինձ համար երբ Սպարտայի քաղաքացիներուն մէջ սեփականութեան հաւասարութիւն չկայ: Ես մեծ թագաւոր մը կ'ըլլամ այն ատեն երբ կը հաստատուին հին օրէնքները, երբ Սպարտայի քաղաքացիները կը վերադառնան իրենց համայնական կենցաղին»:

Իր մայրն ու մեծ մայրը հաւանեցան իր ծրագրին եւ Ակիս



սկսաւ գործնականացնել զայն: Սպարտայի սահմանադրութեան համաձայն երկու թագաւորներ կեցեր էին իշխանութեան զլուխը որոնք կը ղեկավարուէին 5 էփորներու (վերատեսուչ պաշտօնեաներ ընտրուած ամենաբարձր աղնուական ընտանիքներէ) հսկողութեան տակ: Ուէկ օրինագիծ որ կը զբուէր ծերակոյտին առջեւ, անոր վաւերացման համար կը յանձնուէր ժողովրդական խորհուրդին: Ակիս իր օրէնսդրական առաջարկները դրաւ ծերակոյտին առջեւ: Անոր գլխաւոր գիծերը հետեւեալներն էին: Չեղեալ համարել պարտականներու պարտքերը, ընել հողերու նոր բաժանում 19-500 հաւասար բաժիններով, 4500 բաժինները տալ ընիկ սպարտացիներուն եւ 15-000 բաժինները տալ փերիոքեաններուն (նախագործիացի բընակիչներու սերունդներուն), ինչպէս նաեւ այն օտարականներուն որոնք իրենց Փիդիքական եւ մատերական կարողութեամբ կը յարմարին սպարտացիներուն: Ժողովուրդը բաժնուելու է խումբերու հասարակական ճաշասեղանի համար եւ պիտի հաստատուի հին սպարտական կենցաղը:

Ծերակոյտը այդ առաջարկները չէր կրնար ընդունիլ: Ասոր համար էփորներէն մին որ Ակիսի համակիր էր հարցը տարաւ ժողովրդական խորհուրդին եւ հակառակ արտայայտուեցաւ ծերակոյտի բռնած ընթացքին դէմ: Վիճարանութեան ընթացքին Ակիս ժողովուրդին ներկայացուցիչներուն յայտնեց որ ինք իր բոլոր կալուածները կը նուիրէր համայնքին եւ, ի յաւելումն, կուտար 600 տաղանդ դրամ, իսկ իր մայրն ու մեծ մայրը եւ իր բոլոր ազգականները որոնք Սպարտայի ամենահարուստ դասը կը կազմէին, կը հետեւէին իր օրինակին:

Ժողովուրդին ներկայացուցիչները շափազանց ուրախացան Ակիսի վեհանձն նուիրուածութեան վրայ, բայց իր ընկեր թագաւորը, Լէոնիտաս, հակառակ կեցաւ ներկայացուած ծրագրին, մասնաւորապէս պարտքերու ջնջումին եւ օտարականներու տրուելիք չնորհին: Ակիս ջարջախիչ փաստերով պատասխանեց անոր, իսկ ժողովուրդին ներկայացուցիչները պահանջեցին որ Ակիսի առաջարկները օրէնքի կարգ անցնին: Էփորներու եւ ծերակոյտի անդամներու մեծ մասը ընդդիմացաւ. Լէոնիտաս անցաւ ընդդիմադիր հոսանքին զլուխը: Ակիս գուշակելով սպաննացող վտանգը ապաստանեցաւ Նեպտոնի տաճարը (Նեպտոնը ծովերու աստուածն էր): Լէոնիտաս տաճարը չէր կրնար մտնել, բայց երբ Ակիս տաճարէն դուրս եկաւ բաղնիք առնելու համար Լէոնիտաս զայն զինաթափ բրաւ, ձերբակալեց ու բանտարկեց: Էփորներ եւ մաս մը ծերակոյտ-

տականներ բանտին մէջ դատական ատեան մը կազմեցին եւ պահանջեցին որ Ակիս հրաժարի իր ծրագրերէն եթէ կ'ուզէր փրկել իր կեանքը: Ակիս անդրդուելի մնաց: Ասոր վրայ ատեանը որոշեց զայն կախաղան բարձրացնել: Ակիսի մայրն ու մեծ մայրը յանուն արդարութեան պահանջեցին որ Ակիս դատուի ժողովրդական ատեանի առջեւ, յայց մերժուեցաւ անոնց առաջարկը որովհետեւ Ակիս լայն ժողովրդականութիւն կը վայելէր: Ակիս կեղծ փաստերով յայտարարուեցաւ դաւաճան, դաւաճանը Սպարտայի պետութեան, եւ իր հակառակորդները աճապարեցին զործագրել մահալծիւրը:

Ակիս զէպի կախաղան առաջնորդուած ատեն տեսաւ որ իր ծառաներէն մին կ'արտասուէր. «Մի լար», ըսաւ անոր, «ես աւելի երջանիկ ու հպարտ եմ քան թէ զիս դատապարտողները, որովհետեւ ես կը մեռնիմ օրէնքի եւ արդարութեան համար, իսկ զիս դատապարտողները ողջ-ողջ մեռած են արդէն, որովհետեւ անոնք պիտի ապրին խղճի խայթով ու ամօթալի կեանքով»: Այս ըսելով ան ուրախութեամբ բարձրացաւ կախաղան: Անկէ յետոյ նոյն օրը կախուեցան իր մայրն ու մեծ մայրը:

Այս զէպքը տեղի ունեցաւ 240 թուին (Ն. Ք.): Ակիսի կախաղան բարձրանալէն 5 տարի վերջ Լէոնիտասի որդին Կղէոմանէս եղաւ Սպարտայի թագաւորը (235-222 Ն. Ք.): Ան ամուսնացեր էր Ակիսի որբուայրի կնոջ հետ եւ ի մտի ունէր այն ծրագիրը որ ունէր Ակիս: Սպարտա կոմունիստ Սպարտա պիտի ըլլար: Բայց այս մարզը Ակիսէն տարբեր քաղաքականութեան կը հետեւէր: Ան համոզուած էր որ խօսքը, քարոզչութիւնը, վիճարանութիւնը երբեք չէին օգնէր իրազործելու իր ծրագիրը: Ան զիտէր որ Ակիս ձախողեցաւ, որովհետեւ իր թշնամիներուն խօսելու եւ հակաճառելու պատեհութիւն տուաւ: Ան կը հաւատար որ յաղթական ու անազգու զօրավար մը միայն կրնար իր բանակի ուժով հրապարակէն հեռացնել հակակոմունիստները, Էփորները, յետադիմական ծերակուտականներն ու հարուստ կալուածատէրերը: Որպէս հարազատ ու յանդուգն սպարտացի ան իր բանակի ուժով տարաւ առաջին յաղթանակը. իրենց պաշտօնէն հեռացուց Էփորները, ուխտուն մարդիկ, յայտնի հարուստներ ու պաշտօնեաներ որոնք կոմունիզմի հակառակ էին, ժողովրդական դատարանի վճիռով կախաղան բարձրացուց, ջնջեց պարտատէրերու պարտքերը, հողերը բաժանեց համահաւասար բաժիններով եւ օտարականները առաւ քաղաքացիներու շարքին մէջ: «Մենք քաջերու պէտք ունինք Սպարտայի պատիւը բարձր պահելու համար», յայտարարեց ան: «Ես Լակեղիմոնիայէն պիտի հեռացնեմ հիւանդութիւնը, ոճիւրը, խարդախու-



թիւնը, ընչաքաղցութիւնը եւ հարուստներուն հետ թշուառութիւնը: Սպարտան ազատ, երջանիկ եւ պատուաւոր քաջերու պետութիւնը պիտի ըլլայ եւ ես պիտի ըլլամ թագաւորներու մէջ ամէնէն հը պարտը, ամէնէն բախտաւորը»:

Եւ իրապէս Կղէոմանէս սկզբնական շրջանին իրականութիւն դարձուց իր բոլոր ծրագրած երազները: Եթէ ան իր արտաքին քաղաքականութիւնը խաղաղութեան ուղեգծով շարունակէր, անտարակոյս Սպարտան տիրար եւ օրինակելի պետութիւն մը կը դառնար եւ հելլէն միւս պետութիւնները պիտի հետեւէին իրեն: Բայց ան հետեւեցաւ ուսրմական քաղաքականութեան, որով իր զրացիները թշնամացան իրեն հետ: Սպարտա փոխանակ սիրոյ սարսափ սկսաւ տարածել: Սպարտա յարձակեցաւ զրացի պետութեանց վըրայ, անոնք ալ դիմեցին մակեդոնացիներուն: Կղէոմանէս քաջաբար կռուեցաւ թշնամիներուն միացեալ բանակին դէմ եւ վերջապէս պարտուեցաւ Սելաւիայի մէջ 222 թուին (Ն. Ք.): Պատերազմի դաշտին վրայ ծանրապէս փրաւորուած, իր վերջին շունչը տուած ատեն ըսաւ. «Ես կը մեռնիմ, բայց դուք բարձր պահեցէք Սպարտայի կոմունիստական դրօշակը»: Բայց աւաղ որ Կղէոմանէսի գործը շարունակող չեղաւ: Սպարտա բացաւ իր դռները մակեդոնացի թագաւոր Անթիոնոսի առջեւ: Այս թագաւորը քաղաքին տիրանալով մարդկայնօրէն վերաբերուեցաւ սպարտացիներուն հետ, հետու կեցաւ արիւնասեղութենէ. միայն հոն հաստատեց ոչ-կոմունիստական օրէնքներ: Ասով իշխող հին դասակարգը նորէն դարձաւ դրութեան տէրը:

Սպարտացիներու կոմունիզմը երկար կեանք չունեցաւ եւ տասարեցաւ ոչ միայն անոր համար որ պայմանները զեռ հասունցած չէին նման հասարակարգ մը կանգուն պահելու համար, այլեւ անոր համար որ անոնց հաստատածը ոչ նահապետական կոմունիզմին կը նմանէր, ոչ ալ արդիական ըմբռնումով մեր այժմեան հասկցած կոմունիզմին: Անիկա զուտ քաղաքացիներու կոմունիզմն էր որ հետու էր երկրի արդիւնաբերութիւնը արդիւնաբերող աշխատաւորներուն յատկացնելու եւ դասակարգային խրամատները դոցելու նպատակէն: Երկրի արդիւնաբերութիւնը տրուած էր գերիներուն ու վայելքի իրաւունքը՝ սպարտացի քաղաքացիներուն: Ուրեմն, հասկնալի է որ քաղաքացիները կազմեր էին շահագործող դասակարգը, իսկ գերիները եղած էին շահագործուող դասակարգը, պայմանաւ որ շահագործող դասակարգը ինք իր մէջ կը պահէր դասակարգային խոր շերտաւորման անդուստ ձգտումներ որոնք ան-

խուսափելիօրէն պիտի փութացնէին քաղաքացիներու վզին բռնօրէն պատուատուած կոմունիզմի անկումը:

### 2. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԹԷՈՐԻԱՆԵՐ ԱՅԷՆՔԻ ՄԷՋ

Երբ Սպարտա կոմունիստական պետութիւն էր, աղնուականներն էին որ կ'իշխէին Աթիկայի մէջ, որոնք վաշխառութեան գծով գիւղացիները սեփականազրկեցին եւ զանոնք մատնեցին ստրկութեան: Կրօնականներն ու դատաւորները իշխող աղնուականութեան շարքերէն դուրս կուզային: Արտազրոյ դասակարգը, ուրեմն, պիտի ըլլար դժգոհ դասակարգ: Տնտեսական, քաղաքական եւ օրէնստի ըլլար դժգոհ դասակարգ: Տնտեսական, քաղաքական եւ օրէնստի դրական անհասարութիւնները ծնունդ տուին ապստամբութեանց որոնք ճնշուեցան արիւնասեղութեամբ: Ի պատասխան ժողովուրդի դրսուոր օրինազրքի մը պահանջին, աղնուականները այդ գործը յանձնեցին օրէնսդէս Դրակոյի որուն կազմած օրինազրքը իր դաժանութեամբ առակի կարգ անցաւ: Ան չկրցաւ ապահովել երազուած խաղաղութիւնը: Ժողովուրդը անհամբեր էր եւ կ'ուզէր ազատուիլ պարտքերու բեռէն եւ նոր ձեւով բաժնել հողը քաղաքացիներու միջեւ: 2. դարու սկիզբին երբ Աթիկան ժողովրդական ընդհանուր ապստամբութեան վտանգին առջեւ էր 594 թուին (Ն. Ք.) աղնուականները հրապարակ հանեցին Սողոնը (638-558 Ն. Ք.) որ ճանչցուած էր իբրեւ «ժողովուրդի բարեկամ», որպէսզի խաղաղութիւն հաստատէ աղնուականներու եւ ժողովուրդին միջեւ: Եւ Սողոն ձեռնարկեց անտեսական եւ քաղաքական բարեկարգութեան: Հողի վըրայ դրուած պարտաճուրհակները ջնջուեցան եւ արդիւնեցաւ պարտքի գծով ստրկացումը: Այս բարեկարգութիւնը ծանօթ է աշխատակալտա անունով (պարտքի դրութեան ջնջում): Սողոնի հաստատած սահմանազրութիւնը պատուաւորութիւն էր որ քաղաքացիները կը բաժնէր 4 դասակարգերու, նայած իրենց հողային սեփականութեան. 1) խոշոր հողատէրեր, 2) ասպետներ, 3) գիւղացիներ, 4) օրական աշխատաւորներ: Առաջին դասակարգի անդամները իրաւունք ունէին ամէնէն բարձր պաշտօնները առնելու, երկրորդ եւ երրորդ դասակարգի անդամները թեկնածու էին պետական ստորակարգ պաշտօններու, իսկ չորրորդ դասակարգի անդամները կրնային մասնակցել ժողովրդական դատարանին եւ մասնակցել դատաւորներու խումբին մէջ: Ասոնք ազատ էին պետական հարկերէն:

Սողոնի սահմանազրութիւնը գոհ չէր թողուր ոչ աղնուա-



կանները, ոչ ալ ժողովուրդը: Առաջինները զայն կը նկատէին խիստ յեղափոխական, վերջինները՝ սահմանափակ ու անհամաչափ: Ներքին եւ արտաքին խառնաշփոթ շրջանէ մը յետոյ Քլայստենէս 509 թուականին (Ն. Ք.) հիմնեց այն ինչ որ կը կոչուի քաղաքական հաւասարութիւն կամ «դեմոկրատի»: Բայց այդ դրութիւնն ալ ունէր իր թերի կողմը, որովհետեւ հաստատուած էր զերեւորութեան վրայ: Ոչ ոք կը մտածէր իրական դեմոկրատի մասին ուր բոլոր մարդիկ ունենայու էին հաւասար իրաւունքներ ընտրելու կամ ընտրուելու:

Երբ Աթէնք պարսիկներու հետ պատերազմի մտաւ (500-431 Ն. Ք.) եւ շնորհիւ սպարտացիներու օգնութեան յաղթեց պարսիկներուն, աթենական փոքր պետութիւնը մեծցաւ, մեծցուց իր նաւային ուժը, զարգացուց իր վաճառականութիւնը, յառաջդիմեց կուլտուրական մարդին մէջ եւ ծագկեցան իր արուեստի, գրականութեան եւ փիլիսոփայութեան ճիւղերը:

**ՎԱՊԻՏԱԼԻԶՄԸ ԵՒ ՎԱՏԱՍԵՐՈՒՄԸ**

Աթենական կայսրութիւնը իր ծովային ուժով, օտար երկիրներու հետ իր առուտուրով եւ իր ճարտարարուեստի յաջող ձեռնարկներով դարձեր էր բոլորովին տարբեր փոքրիկ պետութիւն մը որուն համար Սողոն զծած էր բարեկարգութեան օրէնքներ: Երկրագործութիւնը որ նոյնիսկ Զ. դարու սիլիզները բաւարարութիւն չէր տար բնակչութեան կարիքներուն, կերպարանափոխուած էր վաճառականական պահանջներու համաձայն: Ընդարձակ հողամասեր յատկացուած էին ձիթապտուղի մշակման, որովհետեւ ձիթախլը արտածման շահաւէտ ապրանք էր դարձեր: Երկրի բնակչութիւնը կախուած էր օտար եզրպտացորենէն որ կը ներածուէր Սեւ Ծովու հիւսիսային եզերքներէն: Այդ երկրամասերէն կը ներածուէին նաեւ ձուկ, փայտ, փուշ եւ աղ: Չեռային արհեստաւորները կորսնցուցին իրենց անկախութիւնը եւ մտան գործարանները արտածման ապրանքներ արտադրելու համար: Այս կերպով անոնք կախուած մընացին առեւտրական կապիտալէն: Արխատոկրատները դարձան արտածող վաճառականներ, խոշոր հողատէրերը եղան կապիտալիստ որոնք կ'ապրէին իրենց վարձակալներու ստրկական աշխատանքով: Իրերու այս դրութեան հետեւանքով սղատ գործաւորները կը պայքարէին մէկ կողմէ կապիտալի իշխանութեան դէմ, միւս կողմէ՝ ստրկական աշխատանքի ճնշիչ օրէնքներուն դէմ: Միջակ դասակարգը եւս ենթարկուեցաւ շահագործուողի հպատակութեան, կոր-

սընցնելով իր անկախութիւնը: Ռամիկները սկսան քուռն պայքար մղել հարուստներուն դէմ, պայքարներ որոնց միջոցին Աթիկայի կեանքը ցնցուեցաւ իր հիմքէն եւ պետական մարդիկը սկսան սարսափով դիտել իրենց երկրի ապականեալ դրութիւնը: Ընկերային եւ բարոյական անկման ճգնաժամը աւելի սաստկացաւ պեղոպոնէսեան պատերազմի շրջանին: Այդ պատերազմը պայթեցաւ 431 թուականին (Ն. Ք.) մասամբ որպէս հետեւանք Աթէնքի եւ Կորնթոսի միջեւ գոյութիւն ունեցող ծովային մրցակցութեան եւ մասամբ Աթիկայի եւ Սպարտայի միջեւ շարունակուող՝ ամբողջ Յունաստանի իշխելու զերազանցութիւնը շահելու պայքարին: Բայց այդ պատերազմը վերջացաւ Աթէնքի պարտութեամբ 404 թուականին (Ն. Ք.):

**ՊՂԱՏՈՆ (429-348 Ն. Ք.)**

Պղատոն նկատի առած էր երկրի պայմանները երբ թէորիկական հիմքերով կը ձեւաւորէր արդար պետութեան մը ծրագրերը: Պղատոն ծնած էր պեղոպոնէսեան պատերազմը սկսելէն 3 տարի առաջ: Ան զաւակն էր Աթէնքի ամէնէն հարուստ մէկ ընտանիքին: Սողոն իր նախահայրերէն մին էր: Ատեն մը Սոկրատի աշակերտելէ յետոյ զնաց Եգիպտոս, ճամբորդեց զանազան տեղեր շարունակելու իր ուսումնասիրութիւնը: Ան մտադիր էր նուիրուիլ հասարակական գործերու: Բայց Պղատոնի նման հանճար մը տափակ զետնի վրայ չէր կրնար մնալ: Պղատոն նուիրուեցաւ փիլիսոփայութեան եւ դարձաւ հելլենական աշխարհի հռչակաւոր ուսուցիչը եւ բոլոր դարերու ամէնէն մեծ մտածողը:

Պղատոն լայն դեմոկրատի ջատագով չէր: Որպէս տարամերժօրէն մտաւորական արխատկրատ անոր համար անմիտ բազմութիւնը, անբոխաւարներու որսը, այնքան զգուելի էր որքան փաթթամութիւնն ու բռնի ուժի վրայ հաստատուած իշխանութիւնը: Ընկերաբանութեան ճիւղին անոր ամէնէն կարևոր գործերն են Հանրապետութիւնը եւ Օրէնքները: Առաջինը իր առաջադրութեանց մէջ աւելի խէչալիստական է, բայց ան այնքան լաւ կառուցուած չէ որքան իր Օրէնքները: Այս վերջինը շատ մը կէտերով աւելի հետաքրքրական է քան Հանրապետութիւնը:

Այդ երկու գործերը գրուած են փիճաբանական ձևով:

**«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ»**

Պղատոնի Հանրապետութիւնը իւրոպիայի մը նկարագրութիւնը չէ: Ան չի պարունակեր ապագայ երազային պետութեան մը պատկերը, ոչ ալ կուտայ սոցիալիստ հասարակութեան մը անտեսական կառուցուածքի ուրուագիծը: Ան աւելի ջանադրութեամբ



կանները, ոչ ալ ժողովուրդը: Առաջինները զայն կը նկատէին խիստ յեղափոխական, վերջինները՝ սահմանափակ ու անհամաչափ: Ներքին եւ արտաքին խառնաշփոթ շրջանէ մը յետոյ Քրայստենէս 509 թուականին (Ն. Ք.) հիմնեց այն ինչ որ կը կոչուի քաղաքական հաւասարութիւն կամ «դեմոկրատի»: Բայց այդ դրութիւնն ալ ունէր իր թերի կողմը, որովհետեւ հաստատուած էր զերեւորութեան վրայ: Ոչ ոք կը մտածէր իրական դեմոկրատի մասին ուր բոլոր մարդիկ ունենայու էին հաւասար իրաւունքներ ընտրելու կամ ընտրուելու:

Երբ Աթէնք պարսիկներու հետ պատերազմի մտաւ (500-431 Ն. Ք.) եւ չնորհի սպարտացիներու օգնութեան յաղթեց պարսիկներուն, աթենական փոքր պետութիւնը մեծցաւ, մեծցուց իր նաւային ուժը, զարգացուց իր վաճառականութիւնը, յառաջդիմեց կուլտուրական մարզին մէջ եւ ծաղկեցան իր արուեստի, գրականութեան եւ փիլիսոփայութեան ճիւղերը:

**ԿԱՊԻՏԱԼԻՉՄԸ ԵՒ ՎԱՏԱՍԵՐՈՒՄԸ**

Աթենական կայսրութիւնը իր ծովային ուժով, օտար երկիրներու հետ իր առուտուրով եւ իր ճարտարարուեստի յաջող ձեռնարկներով դարձեր էր բոլորովին տարբեր փոքրիկ պետութիւն մը որուն համար Սողոն գծած էր բարեկարգութեան օրէնքներ: Երկրագործութիւնը որ նոյնիսկ Զ. դարու սկիզբները բուսարարութիւն չէր տար բնակչութեան կարիքներուն, կերպարանափոխուած էր վաճառականական պահանջներու համաձայն: Ընդարձակ հողամասեր յատկացուած էին ձիթապտուղի մշակման, որովհետեւ ձիթախլը արտածման շահաւէտ ապրանք էր դարձեր: Երկրի բնակչութիւնը կախուած էր օտար եզրկառնացորենէն որ կը ներածուէր Սեւ Ծովու հիւսիսային եզրքներէն: Այդ երկրամասերէն կը ներածուէին նաեւ ձուկ, փայտ, փուշ եւ աղ: Չեռային արհեստաւորները կորսնցուցին իրենց անկախութիւնը եւ մտան գործարանները արտածման ապրանքներ արտադրելու համար: Այս կերպով անոնք կախուած մընացին առևտրական կապիտալէն: Արխատոկրատները դարձան արտածող վաճառականներ, խոշոր հողատէրերը եղան կապիտալիստ որոնք կ'ապրէին իրենց վարձակալներու ստրկական աշխատանքով: Իրերու այս դրութեան հետեւանքով ազատ գործաւորները կը պայքարէին մէկ կողմէ կապիտալի իշխանութեան դէմ, միւս կողմէ՝ ստրկական աշխատանքի ճնշիչ օրէնքներուն դէմ: Միջակ դասակարգը եւս ենթարկուեցաւ շահագործուողի հպատակութեան, կոր-

սընցնելով իր անկախութիւնը: Ռամիկները սկսան բուռն պայքար մղել հարուստներուն դէմ, պայքարներ որոնց միջոցին Աթիկայի կեանքը ցնցուեցաւ իր հիմքէն եւ պետական մարդիկը սկսան սարսափով զիտել իրենց երկրի ազականնալ գրութիւնը: Ընկերային եւ բարոյական անկման ճգնաժամը աւելի սաստկացաւ պեղոպոնէսեան պատերազմի շրջանին: Այդ պատերազմը պայթեցաւ 431 թուականին (Ն. Ք.) մասամբ որպէս հետեւանք Աթէնքի եւ Կորնթոսի միջեւ գոյութիւն ունեցող ծովային մրցակցութեան եւ մասամբ Աթիկայի եւ Սպարտայի միջեւ շարունակուող՝ ամբողջ Յունաստանի իշխելու գերազանցութիւնը շահելու պայքարին: Բայց այդ պատերազմը վերջացաւ Աթէնքի պարտութեամբ 404 թուականին (Ն. Ք.):

**ՊՂԱՏՈՆ (429-348 Ն. Ք.)**

Պղատոն նկատի առած էր երկրի պայմանները երբ թէորիկական հիմքերով կը ձեւաւորէր արդար պետութեան մը ծրագիրը: Պղատոն ծնած էր պեղոպոնէսեան պատերազմը սկսելէն 3 տարի առաջ: Ան զաւակն էր Աթէնքի ամէնէն հարուստ մէկ ընտանիքին: Սողոն իր նախահայրերէն մին էր: Ատեն մը Սոկրատի աշակերտելէ յետոյ զնաց Եզրպոսոս, ճամբորդեց զանազան տեղեր շարունակելու իր ուսումնասիրութիւնը: Ան մտադիր էր նուիրուիլ հասարակական գործերու: Բայց Պղատոնի նման հանճար մը տափակ զեռնի վրայ չէր կրնար մնալ: Պղատոն նուիրուեցաւ փիլիսոփայութեան եւ դարձաւ հելլենական աշխարհի հռչակաւոր ուսուցիչը եւ բոլոր զարեբու ամէնէն մեծ մտածողը:

Պղատոն լայն դեմոկրատի ջատագով չէր: Որպէս տարածերժօրէն մտաւորական արխատոկրատ անոր համար անմիտ բաղմութիւնը, ամբոխափարներու որսը, այնքան զգուելի էր որքան փարթամութիւնն ու բռնի ուժի վրայ հաստատուած իշխանութիւնը: Ընկերաբանութեան ճիւղին անոր ամէնէն կարեւոր գործերն են Հանրապետութիւնը եւ Օրէնգները: Առաջինը իր առաջադրութեանց մէջ աւելի խոտալիստական է, բայց ան այնքան լաւ կառուցուած չէ որքան իր Օրէնգները: Այս վերջինը շատ մը կէտերով աւելի հետաքրքրական է քան Հանրապետութիւնը:

Այդ երկու գործերը գրուած են վիճարանական ձեւով:

**«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ»**

Պղատոնի Հանրապետութիւնը իւրօպիայի մը նկարագրութիւնը չէ: Ան չի պարունակեր ազազայ երազային պետութեան մը պատկերը, ոչ ալ կուտայ սոցիալիստ հասարակութեան մը տնտեսական կառուցուածքի ուրուագիծը: Ան աւելի ջանադրութեամբ



կ'ուսումնասիրէ արդարութիւնը եւ պատմութեան ծանօթ սահմանադրութեանց թերի կողմերը, եւ նոյն ասան ցոյց կուտայ ախտաւորուած քաղաքական հաստատութեան մը կարեւոր դարձանները: Պղատոնի իրաւասիրութեան բմբուսը բնաւ չի նոյնանար հրեայ մարդարէներու գաղափարին հետ: Հելլէնը ամէն բանէ առաջ պետական մարդ է, պաղարիւն եւ զգուշաւոր, յստակատես հայրենասէր մը: Ան չի սիրեր իր հայրենակիցները առաջնորդել զէպի դասակարգային կոխ եւ արդարութիւն ձեռք բերել ժառանգազուրկ եւ թշուառ մարդոց համար: Պղատոն յեղափոխութեան ճամբով զանոնք բարձրացնելու եւ հարուստները տապալելու խօսք չըներ: Ան չի ցուցարեբեր մարդարէական զծի ուժղնութիւնը, ոչ ալ ուեէ հակում զէպի միջնորդայնականութիւնը: Ան աւելի անձկութեամբ կը փորձէ դարձանել իր հայրենիքի վէրքերը եւ հիմնել պետութիւն մը ուր տիրելու էր ընկերային խաղաղութիւնն ու ներդաշնակութիւնը, այնպէս որ բոլոր քաղաքացիները իրենց զործերով պարսպելու են առանց խառնուելու իրենց զբացի երկիրներու զործերուն:

Պղատոն իր տեսութիւնները կը մեկնարանէ այն համոզումով որ խոչալական պետութիւնը զոյութիւն ունեցեր է սկզբնական շրջանին առանց բոլի ուժի միջնորդութեան: Ան Հանրապետութիւնը գրքին մէջ գտնի չի նկարագրեր, բայց միայն Հեսիոտէն կը բերէ հարկ եղած վկայութիւնը:

Սորհրդաւոր կերպով ան կը փաստէ որ մարդկութիւնը սերունդէ սերունդ աստիճանաբար շեղեր է իր բնական ճամբայէն, գացեր է զէպի ապականութիւն եւ ինկած է զժգոհութեանց անզուճոյն մէջ: Մարդիկ իրարու հետ կուտիլ սկսան երբ ուզեցին տէր դառնալ հողի, ոսկի եւ արծաթ դրամի: Պատերազմ՝ բոլորը բոլորին զէմ. վերջապէս կուուղները համաձայնեցան բաժնել հողերն ու տուները իրենց միջեւ: Ներմուծուեցաւ անհաստական սեփականատիրութիւնը եւ բնակչութիւնը բաժնուեցաւ երկու մասի: Մէկ կողմը կեցան իշխողները, միւս կողմը՝ ծառայականները: Ուրիշ տեղ մը Պղատոն վեր կ'առնէ հոգեբանական զիծ մը եւ կը փորձէ բացատրել պետութեան ծագումը: Կղզիացած մարդ անհաստը առանձին չէր կրնար ապրիլ: Ան իր կարիքները գոհացնելու համար պէտք կը զգար ուրիշներու օգնութեան: Ահա այդ զբղումով ան սկսաւ համազործակցիլ իր նմաններուն հետ: Այս ընկերային համազործակցութեամբ կազմուեցաւ պետութիւնը: Ամէն քաղաքացի ունէր իր զբաղումը. շատեր կը զործէին հողի վրայ, միւսները արհեստաւոր էին եւ անոնք իրենց արտադրութիւնները կը փոխա-

նակէին իրարու հետ: Այսպիսով առուտունն ու զբամբ երեւան եկան: Ընկերային այս յարաբերութեանց զարգացման ընթացքին մարդիկ շուտով սկսան իրենց կարիքները գոհացնել գատ ձգտիլ պերճասիրութեան, ուզեցին ունենալ թանկագին զարդեր, հագուստներ եւ պալատներ: Հանդէս եկաւ ցուցամոլութիւնն ու շուայտութիւնը եւ այդ ուղին առաջնորդեց մարդը ազահութեան եւ պատերազմներու: Ասանկով ստեղծուեցաւ զինուորական իշխանութիւնը: Պետութիւնը եղաւ բարդ հիմնարկութիւն մը: Հարստութիւն եւ աղքատութիւն ծնունդ առին: Ներքին ներդաշնակութիւնը անհետացաւ եւ պետութիւնը բաժնուեցաւ իրարու թշնամի երկու խումբերու: Նոյնիսկ ամէնէն փոքր քաղաքը բաժնուեցաւ երկու մասի, մէկ մասը աղքատ, միւսը հարուստ, եւ այդ երկու խումբերը սկսան կուտիլ իրարու հետ: Երբ հարստութիւնն ու աղքատութիւնը խոր խրամատով իրարմէ անջատուեցան պետութիւնը մասնուեցաւ ամլութեան: Հարուստը անտեսեց իր պարտականութիւնները եւ աղքատը լծուեցաւ ստորնացուցիչ զործի: Երբ հարուստները իրենց զբամի ուժով զիրքի ու պատուոյ արժանացան, քաղաքացիները մոռցան իրենց առաքինութիւնները եւ վաղեցին հարստութեան ետեւէն: Հարուստը եղաւ անառակ, աղքատը՝ ստրուկ եւ ապստամբ: Պետութիւնը անտեսուեցաւ բոլորին կողմէ: Պետութիւնը զնաց ոտքի տակ: Վերջապէս իրերը հասան այնպիսի զրուժեան մը ուր բնակչութեան փոքրամասնութիւնը կ'ապրէր վայելքի, միւս կէտը՝ զրկանքի մէջ: Չարիքի այս աղբիւրները կը զտնուէին պատուաւարութեան մէջ (Սողոնի 4 դասակարգերու սահմանադրութիւնը), սակաւապետութեան մէջ (սակաւաթիւ սեփականատէր դասակարգի իշխանութիւնը), ինչպէս նաեւ դեմոկրատի եւ բոնապետութեան մէջ, որովհետեւ այդ բոլոր սահմանադրութիւնները հիմնուած էին անհաստական սեփականատիրութեան վրայ:

Պղատոն այս յիշուած բոլոր պետական ձեւերուն հակառակ է: Անոր երազած պետութիւնը այն է ուր փիլիսոփաները կ'անցնին պետութեան զլուխը: Ան կ'ըսէ որ այն պետութեան մէջ որուն նպատակն է կատարելութիւն, կիները եւ երեխաները ըլլալու են հասարակաց: Նոյնպէս հասարակաց խնդիր ըլլալու է պատերազմի ու խաղաղութեան հարցը, ինչպէս նաեւ կրթութեան հարցը: Այն քաղաքացիները ըլլալու են թաղաւոր որոնք ապացոյցը տուած են որ իրենք լաւագոյն փիլիսոփաներն ու կուուղներն են: Ասիկա Պղատոնի կոմունիզմն է որ պետութեան մէջ վերջ կը դնէ զժգոհութիւններուն: Մէկը մինչեւ իր յիսուն տարեկան հասակը պէտք է նուիրուի մարմնամարզութեան, երաժշտութեան ու ապա փիլիսոփայու-



թեան, եւ անկէ վերջ է որ մտնելու է քաղաքական գործունէութեան ասպարէզ: Այն ատեն է որ անոր աչքերը կը բացուին եւ կը դիտակցի թէ ինչ բանով օգտակար կ'ըլլայ իր համայնքին: Չեռական աշխատաւորներու զաւակներն ու բանուորները ընդունակ չեն հասնելու մտաւորական գերազանց բարձրութեան: Անոնց վայելած հաճոյքը կապուած է իրենց զգայարանքներուն եւ ոչ թէ իրենց մտքին:

ՊՂԱՏՈՆԻ «ՕՐԷՆՔՆԵՐ»Ը

Պղատոնի գրած Օրէնքներ իրերք իտէալական չէ ինչպէս է իր Հանրապետութիւնը: Հոն սեփականատիրական յարաբերութեանց քննադատութիւնը չեղտուած է՝ աւելի ուժեղ կերպով: Հանրապետութիւնը աւելի յեղափոխական բնութագիր ունի, իսկ Օրէնքները իրերք բարենորոգչական է: Պղատոն կ'ըսէ. «Պետութեան, կառավարութեան եւ օրէնքի առաջին ու բարձրագոյն ձեւը այն է որ քաղաքացիներու մէջ կը տիրէ հին առածը թէ բարեկամները ամէն ինչ կ'ունենան համայնական ձևով: Հոյր հաւատար կերպով բաժնուելու է քաղաքացիներու միջեւ եւ արտագրութիւններն ալ բաժնուելու են հաւասարապէս: Ոչ ոք ոսկի եւ արծաթ պիտի ունենայ: Հրապարակ ելած զրամները միմիայն առօրեայ փոխանակութեան ծառայելու են: Ամուսնութեան պարագային օժիտ տալն ու ընդունելը արգիւրուած է: Պետական մարդը բնաւ կարելորութիւն տալու չէ ամբոխի քաղաքական զազափարներուն: Ամբոխը կը պահանջէ որ պետութիւնը ուժեղ ըլլայ եւ հարուստ, ունենայ առատ ոսկի ու արծաթ, եւ տիրական դառնայ ցամաքի ու ծովու վրայ: Ամբոխը զուցէ պահանջէ նոյնպէս որ պետութիւնը ըլլայ առաքինի եւ երջանիկ: Հարստութիւն եւ առաքինութիւն իրարու հետ չեն համաձայնիր»:

Պղատոնի օրէնագրութիւնն ու առաջարկները բացառապէս հեղին ազգին կը պատկանին: Հելլէն ազգը հաստատուն հիմքերու վրայ միացեալ ազգ մը ըլլալու է: Մտաւորական բարձր մշակոյթի տիրացած մարդիկ պէտք է իշխեն, առաջնորդեն եւ օրէնքներ ձեւակերպեն: Գիւղացիներն ու ձեռագործող արհեստաւորները իրենց պարտաւորութեանց զծէն դուրս ելլելու չեն: Հելլէնները ծանր աշխատանքի լծուելու չեն: Սարկական գործերը թողելու է օտարականներուն եւ գերիներուն: Պղատոնի համար հեղին պետութիւնները հեղին ազգի բազկացուցիչ մասերն էին: Իր կարծիքով պետականներուն պատերազմը քաղաքացիական պատերազմ էր: Պղատոնի համոզումով անոնք որ հեղին չէին բարբարոս էին, մարդկութեան ստորին սեռի անդամները որոնց իշխողը ըլլալու էր հեղին ազգը:

ԱՐԻՍՏՈՏԷԼ (384-322 Ն. Ք.)

Արիստոտէլ հակակոմունիստ էր եւ թշնամի բնական իրաւունքներու տեսութեան: Իր Քաղաքականութիւններ գործը կշռադատ, խոհուն մտածող պահպանողականի մը գործն է, մարդ մը որ պետական գործերու տեղեակ էր, մարդ մը որ հակառակ էր բոլոր տեսակի յեղափոխական շարժումներու, ամէն տեսակի բարենորոգումներու, եւ նոյնիսկ կուսակցական ուժգին պայքարներու: Արիստոտէլ պետութեան մէջ իշխանութեան ներդաշնակ հաւասարակշռութեան հաստատումն ու պահպանումը՝ պետական մարդոց զլխաւոր պարտականութիւնը կը նկատէր: Պետութեան մէջ քաղաքացիները ոչ այնքան հարուստ ու ազդեցիկ ըլլալու են, ոչ ալ շատ ազքատ ու տկար, որովհետեւ պետութիւնը կը վտանգուի հարստութեան եւ աղքատութեան անհամաչափութենէն: Ոչ ոք անհաւասարութիւնը պատճառ կ'ըլլայ որ տառապողները ընդվզին եւ աշխատին փոխել կառավարութիւնը, միւս կողմէ ան պատեհութիւն կուտայ որ ամբոխավարներ երեսան վան, շահագործեն զժողոճ մասսաներու յեղափոխական ուղին իրենց իրերք բարձրացնելու համար: Օրէնադէտները, ատոր համար, պէտք է արգիլեն հարստութեան չափազանցեալ կուտակումը մի քանի անհատներու ձեռքին մէջ: Արիստոտէլ չի հաւատար թէ ստրկատիրութիւնը անբնական բան է, կամ թէ կառավարութիւնը մարդկային բնութեան ապականուցութեան հետեւանքը եղած է: Ան հակառակ է Պղատոնի իտէալիզմին: Իր կարծիքով կոմունիզմը մարդկային բնութեան չի համաձայնիր, ան կ'արդելակէ հարստութեան արտագրութիւնը, որովհետեւ իւրաքանչիւր մարդ միայն իր մասին կը մտածէ, ոչ թէ ուրիշներու մասին. կը մտածէ հարստանալու մասին: Հարստանալու ձգտումը խթանիչ ազդակն է ստեղծագործ աշխատանքի: Ոչ ոք կարելորութիւն կուտայ այն բանին որ հասարակութեան կը պատկանի: Վերջապէս, չարիքի արմատը անհատական սեփականատիրութիւնը չէ, այլ մարդկային բնութեան գերակայութեան ու ստորադասութեան զատորոշուած հանդամանքը: Արդարեւ, աւելի շատ կռիւներ կը պատահին այն մարդոց միջեւ որոնք ամէն ինչ հասարակաց սեփականութեան վերածեք են, քան այն մարդոց միջեւ որոնք անհատական սեփականատիրութեան բնական օրէնքով կ'ապրին: Սեփականութիւնը ըլլալու է անհատական. ատով ամէն մարդ բնականօրէն կը ձգտի յառաջդիմութեան: Բայց սեփականութեան գործածութիւնը որոշ պարագաներու տակ ըլլալու է հասարակական: Մէկը ունի գերիներ, ձիեր ու շուներ. անիկա զանոնք կրնայ տալ ուրիշի մը գործածութեան համար: Արիստոտէլ ասով զիջում չընէր կո-



մունիքովին, այլ պարզապէս կ'ուղչ սանձել ծայրայեղ ու բացարձակ եսասիրութիւնը: Արիստոտէլ կ'ըսէ թէ ոմանք կը կարծեն որ ոճիւրները կը յառաջանան շքաւորութեան կապուած կարիքի պահանջներէն: Բայց ոճիւրներու միակ դրդապատճառը կարիքի պահանջը չէ: Մարդիկ կը փափաքին զոհանքները իրենց կիրքերը որոնց դերի դարձեր են եւ կամ անոնք կ'ուզեն վայելել այն հաճոյքները որոնց ընկերացած չէ ցաւը: Այդ մարդիկը երբ իրենց կիրքերը զոհանքներու ճամբուն վրայ արգելք մը կը տեսնեն, կ'ուզեն վերցնել այդ արգելքը, եւ ահա ատոր համար անոնք ոճիւր կը դործեն: Արդ, ի՞նչ է դարմանը այդ անկանոնութեանց:

Արիստոտէլ այս հարցման կը պատասխանէ հետեւեալ կերպով: Առաջին պայմանն է համեստ ըլլալ սեփականատիրութեան եւ առուտուրի մէջ. երկրորդ՝ համբերատարութեան վարժուել. երրորդ՝ հոգեկան զոհանքի վրայ փնտրել փիլիսոփայութեան մէջ: Մեծագոյն ոճիւրները կը ծնին չափազանցութիւններէ եւ ոչ թէ կարիքներու դրդումէ: Մարդ մը բռնապետ ըլլալը ցուրտէն շտառապելու համար, այլ ուրիշներու ունեցածը բռնազրաւելու համար, ուստի մեծ պատիւ կ'ընծայուի ոչ թէ անոր որ զող մը կը սպաննէ, այլ անոր որ բռնապետը կը սպաննէ: Բարեկարգութեան սկզբունքը մարդոց սեփականութիւնները հաւասարեցնել չէ, այլ մարդիկը վարժեցնել որ աւելին չցանկան, իսկ ստորին դասակարգի մարդոց արդիւնը որ աւելին չստանան, այսինքն անոնք պէտք է պահուին ցած աստիճանի վրայ, միայն թէ անոնց հետ պէտք չէ գէշ վարուիլ:

**ԶԵՆՕ. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ**

Կոմունիստական գաղափարը կամ ըսենք հաւատարմութեան գաղափարը շատ տարածուած ըլլալու էր Յունաստանի մէջ, որուն հետեւանքով միջին դասակարգի կարող ուժերէն մէկը, Արիստոտէլ, կոմունիզմի իր անհաշտ ստեղծութիւնը յայտնելով հանդերձ չափով մը հարկադրուեցաւ զիջումներ ընել այդ գաղափարին: Յետոյ եկաւ ստոյիկեան դպրոցը որ սկսաւ անիշխանական կոմունիզմի եւ միջազգային եղբայրութեան սկզբունքներու պրօպագանդը: Այս դպրոցին հիմնադիրը եղաւ Զենօ:

Զենօ ծնած է Կիպրոսի մէջ: Իր ծննդեան թուականը յայտնի չէ: Իր հայրը վաճառական էր, ինք ալ զբաղեցաւ վաճառականութեամբ մինչեւ որ իր հայրը Աթէնքէն վերադարձին ուսումնասէր որդւոյն համար բերաւ Սոկրատի փիլիսոփայութեան վերաբերեալ գրքեր: Զենօ անզուսպ հետաքրքրութեամբ ուսումնասիրեց զանոնք եւ որոշեց հետեւիլ փիլիսոփայութեան:

Զենօ երեսուն տարեկան էր երբ զնաց Աթէնք որ այդ ատեն առեւտուրի եւ փիլիսոփայութեան կեդրոն էր: Մովեղերքին մօտ իր բռնած նաւը խորտակուեցաւ եւ ինք կորսնցուց իր բոլոր արժէքաւոր սպրանքները, միայն իր կեանքը ազատեց: Այդ կորուստին հետեւանքով ինկաւ թշուառութեան մէջ, որով հետեւեցաւ սինիք կամ շնական(\*) փիլիսոփաներու վարդապետութեան: Բայց ան երկար ատեն չմնաց այդ դպրոցին հետեւողներու շարքին մէջ: Ուղեց գտնել ուրիշ ուսուցիչ մը: Այդ ուսուցիչը եղաւ Ստիլտոն որմէ սորվեցաւ վիճաբանութեան արուեստը: Բայց իր նոր վարպետը ուրիշ բան չէր կրնար սորվեցնել իրեն: Հետեւեցաւ Պլատոնի փիլիսոփայութեան, ուրիշ նոյնպէս զոհանքով շտապաւ: Քսան տարի զանազան դպրոցներու աշակերտելէ վերջ Ստոյա քաղաքին մէջ հիմնեց իր դպրոցը որ կոչուեցաւ ստոյիկեան դպրոց:

Ի՞նչ էր, սակայն, այս դպրոցի բարոյական վարդապետութիւնը:

Ինութեան մէջ երկու տարբեր կան, առաջինը նախատարր նիւթն է, կրաւորական, անզորձ տարբը ուրիշ կը կազմուին միւս

(\*) Սինիք կամ շնական կը կոչուի Անտիստենէտի հիմնած դպրոցի փիլիսոփայութիւնը: Սինիք անունը առնուած է այդ դպրոցի հետեւողներու հաւաքոյթի վայրէն որ Աթէնքի մէջ կը կոչուէր Սինոսարկոս, իսկ շնական անունը տուած են ուրիշներ որոնց համար այդ փիլիսոփայութիւնը հայեոյութիւն մըն էր կեանքի գեղեցկութեան դէմ, հայեոյութիւն մը մարդկային արժանապատուութեան դէմ: Փոզոցային շան մը կեանքին հետեւիլ մարդուս իտեալը չի կրնար ըլլալ: Գիոզինէս (414-324 Ն. Ք.) որ դժուարաւ ընդունուեցաւ այս դպրոցին մէջ սինիք փիլիսոփայութեան կարկանդակ մեքէլայացուցիչն էր: Գիոզինէս կ'ապրէր տաշտի մը մէջ. իր բնական պէտքերը կը հոգար հրապարակաւ, առանց ամչնալու: Կեղտոտ վերարկու մը ծածկեր էր իր մարմինը. մախաղ մը ունէր եւ հուժկու ցուպ մը: Կուտէր հում միս եւ բանջարեղէն: Իր փիլիսոփայութիւնն էր զգայական ցանկութիւնները հպատակեցնել կամփին: Միտքը պէտք է պատերազմի մարմնոյն հետ ու յաղթէ անոր: Մարդը այն ատեն կը դառնայ առաքինի: Ամէն ապականութիւն, ամէն տեսակի ստորնացուցիչ բաներ ծնունդ կ'առնեն մարմնէն: Մարդուս միտքը պէտք է ատէ մարմնոյ մաս կազմող արտադրութիւնները: Այսպիսի փիլիսոփայութեան հետեւող մը ունենալու էր արտասովոր կամփի ուժ: Ատոր համար սինիքները կը յարգուէին:



բաները: Երկրորդը դործօն տարրն է որ անգործ նիւթէն ուղուած բաները կը ձեւակերպէ. ան բանականութիւնն է, ճակատագիրն է, աստուածն է: Աստուածային բանականութիւնը կը դործէ նիւթին վրայ, անոր վրայ կը դնէ օրէնքներ որոնք կը կառավարեն զայն: Այդ օրէնքները կը կոչուին արտադրողական պատճառներ: Աստուած աշխարհի բանականութիւնն է:

Ամբողջ տիեզերքը ենթակայ է ընդհանուր օրէնքի մը: Մարդ արարածը ըլլալով մէկ մասը տիեզերքին, պէտք է ենթակայ ըլլայ այդ օրէնքին: Եզրակացութիւնը պարզ է. բարոյական միայն մէկ սկզբունք կայ, որ մարդ ներդաշնակ ապրելու է բնութեան հետ, բնութեան մէջ, բնական կեանքը:

Այս վարդապետութիւնը լաւ ըմբռնելու համար պէտք չէ սխալիլ: Ամէն ինչ աստրակարգելու է բանականութեան որ ինչպէս զերիշխող է ստեղծագործութեան մէջ, նոյնպէս զերիշխող ըլլալու է մարդուն մէջ: Այս զազափարը պատմական հասկացողութեան մէկ գիծն է: Անով արամարանութիւնը կ'ըլլայ կեանքի կանոնը: Ասկէ կը հետեւի թէ ամէն ինչ որ միջամուխ կ'ըլլայ կամ կը հակառակի մտքի հրամայականին, պէտք է ջնջուի որպէս վտանգաւոր բան: Մարմնական հաճոյքներն ու ցաւերը բանականութեան չեն պատկանիր, անոր հակառակ են, ուրեմն պէտք է արհամարհուին: Մարդս միմիայն պէտք է զբաղի մտաւորական հաճոյքներով ու ցաւերով: Մարդուս կիրքերն են որ մարդը կը դարձնեն ստրուկ, անոր բանականութիւնն է որ զինք կը դարձնէ ազատ: Մարդուս զգայարանքները կրաւորական են, իր միտքն է որ դործօն է: Անոր համար մարդուս պարտաւորութիւնն է արհամարհել իր կիրքերն ու զգայարանքներու պահանջները որպէսզի ինք ըլլայ ազատ, գործունեայ, մարդասէր եւ առաքինի:

Ստոյիկեան փիլիսոփայութեան համար յարմարագոյն հող ունէր Հռոմը: Հռոմ վերնուորներու երկիր էր. անոր վերնուորները պէտք էր արհամարհէին տափակութիւններու կեանքը եւ այդ կեանքին հետ՝ մահը: Որ հռոմէացիները որքան քիչ արժէք կուտային մարդկային կեանքին, այդ բանը ցոյց կուտայ իրենց պատմութիւնը: Հռոմէացիները, ուրեմն, ստոյիկեան փիլիսոփայութեան այն մասը որդեգրեցին ինչ որ իրենց կ'օժանդակէր: Անոնք մտաւորական զարգացումին ու բարձրացումին ուժ չտուին, այլ իրենց միտքը վարժեցուցին կեանքն ու մահը արհամարհելու:

Արդէն պարզ է որ ամէն ատեն երկրի մը տիրող դասակարգը վարդապետութեան մը կը յարի այն ատեն երբ զայն կրնայ օգտագործել իր դասակարգային շահերուն:

Չենոյի գրութիւնները կորսուած են. միայն մի քանի բնկորներ կան որոնցմէ կը հետեւցնենք թէ ան կ'ընդունէր որ բնական օրէնքը ըլլալու է կեանքի առաջնորդող սկզբունքը: Այսինքն ըլլալու չեն քաղաքական կառավարութիւն, ոչ արդարութեան դատարաններ, ոչ մարդու քահանայքով շինուած օրէնքներ, ոչ ստախանութիւն, ոչ զինուորականութիւն: Արտադրուած իրերը պատկանելու են հանրութեան: Սեռերու հաւասարութիւն եւ մարդկային սեռի եզրայութիւն:

Քաղաքական-աշխարհայրական երկու գէպեր նպաստեցին ստոյիկներու ձեռքով սղատմանական զազափարներու տարածման: Առաջինը Մեծն Ալեքսանդրի արշաւանքն էր զէպի Ասիա եւ Հնդկաստան (334-323 Ն. Ք.), արշաւանք մը որ թէեւ չկրցաւ համաշխարհային կայսրութիւն մը հաստատել, բայց ճամբայ բացաւ յունական լեզուի ու մշակոյթի տարածման Ատրիական Մովէն մինչեւ Հինդոս, Դանուբէն մինչեւ Նեղոս: Երկրորդը հռոմէական կայսրութեան երեւումն էր որ իր աշխարհակալութեամբ նպաստեց մտաւորական ձգտումներու համաշխարհային ու միաձեւ աճումին: Հռոմէական պետութեան մէջ մտաւորական առաջնորդող ուժը հելլէնիզմն էր, ուր տիրական էին Պլատոնի փիլիսոփայութիւնը եւ ստոյիկեան ընկերային բարոյագիտութիւնը: Սեփականութիւնը հասարակաց նկատելը մեծագոյն առաքինութիւնը կը համարուէր: Օրէնսդէսներու եւ թագաւորներու հաճոյքն էր ուրուագծել ընկերային բարեկարգութիւններ: Անոնց կողքին կային կոմունիստ մտածողներ ու զազութներ: Այս ձգտումները կը տեսնենք Ֆելոյի եւ Ճոզէֆուսի մօտ, նոյնպէս Պուլտարքոսի մօտ որ կը յարգէր Սպարտայի օրէնսդիրները: Որոշ նպատակ մը կը նկատուէր նոյնիսկ նկարագրելու անձանօթ ու երազային կոմունիստ զազութներ: Թէոտորոս (համարեա Ն. Ք. առաջին դարու կիսուն) այս գծով մի քանի յիշատակութիւններ կ'ընէ իր Պատմական Գրադարանին մէջ: Հոն կը կարդանք հետեւեալ հետաքրքրական նկարագրութիւնը կոմունիստ զազութի մը զոր Եամպուլոս եւ իր բարեկամը համեմտներու երկիրը ճամբորդած ատեն հանդիպած են Հնդկաց Ովկիանոսին մէջ: Կրկի մըն է ան որուն բնակիչները Ֆիլիքթական հիանալի յապկութիւններով օժտուած կ'ապրին իրենց առձմերով ու ցեղերով: Իւրաքանչիւր համայնք բաղկացած է 400 հոգիներէ. ոչ աւելի: Անոնք կ'ապրին մարդադէտրիններու եւ արօտատեղիներու վրայ, որովհետեւ իրենց երկիրը կը հալթայիլէ առատօրէն ամէն ինչ որ պիտանի է իրենց ապրուստին համար: Կրկին հողը սքանչելի է եւ բերքառատ, իսկ օդը՝ կենսատու: Արմաթիքի տունկերը կ'աճին ի-



րենք իրենց եւ առատ բերք կուտան, շատ աւելի քան ինչ որ մարդիկ կը պահանջեն: Կան նաեւ կենսապարզ եւ աղբիւրներ, ոմանք տաք լողանքի համար, ոմանք սառնորակ եւ անուշ՝ բժշկելու յատկութեամբ օժտուած: Ամուսնութիւնը անձանօթ է հոն: Մնած երեխաները յանձնուած են հասարակաց խնամքին: Մասնաւոր հիւանդապահուհիներ կան որոնք փոխն ի փոխ կը հոգատարեն ու կը խնամեն նորածին երեխաները մինչեւ որ անոնք մեծնան: Մայրերը իրենց երեխաները չեն ճանչնար, երեխաներն ալ իրենց մայրերը չեն ճանչնար: Անոնք բոլորն ալ կամուսայի, այդ մեծ ընտանիքի զաւակներն են, բոլորին կողմէ սիրուած զաւակներ: Այդ կողի բընակիչները չունին իմ-ի եւ քու-ի դազափարը, չունին նաեւ յանցազործի դազափարը, եւ ատոր համար չունին կառավարութիւն, չունին դատարաններ, որովհետեւ չկան զրկողներ ու զրկեալներ, չկան դժգոհներ: Անոնց բնական սկզբունքն է մէկը՝ ամէնքին համար, ամէնքը՝ մէկին համար: Անոնց կերակուրը հասարակաց սեղանին վրայ շատ պարզ է. հագուստները՝ միտակեակ: Աշխատանքը համայնքին համար այնքան բնական պարտաւորութիւն ու բնական պահանջ է դարձեր, որքան սպրեւու ցանկութիւնը իւրաքանչիւր անհատի մէջ:

Ատիկա երազային, խոչալական կամուսնից մի պատկերն է:

Թէոտորոս ուրիշ կողի մը կը նկարագրէ որ կը գտնուէր Եգիպտոսի հարաւային ծովեզերքին մօտ: Ան կը նկարագրէ այդ կըզգիին հիմնարկութիւնները որոնք կը մօտենային եգիպտական պետական սոցիալիզմի խոչալին: Այսպէս է անոր նկարագրութիւնը:

Երկրի հողը բաժնուած է բնակիչներուն միջեւ. լուսազոյն բաժինը տրուած է թագաւորին: Կողի բնակիչները կը կոչուին փանփխաններ: Քաղաքացիները բաժնուած են 3 դասակարգի: Առաջին դասակարգին մէջ են հոգեւորականները որոնց խառնուած են ձեռագործ արհեստաւորները: Երկրորդ դասակարգին կը պատկանին հողի աշխատաւորները: Երրորդ դասակարգին կը պատկանին կուտողներն ու հովիւները: Հոգեւորականները ընդհանուր վերահսկիչի ու մատակարարի պաշտօն ունին: Գիւղացիները կը մշակեն հողը եւ արտադրութիւնը կը հասցնեն հասարակաց ամբարանոցը: Նոյնպէս հովիւները իրենց հոգատարած անասուններն ու հաւաքած պտուղները կը բերեն հասարակաց շտեմարանը: Հոգեւորականները անոնցմէ հաւատար բաժին կը հանեն ամէն մէկ մարդու: Ոչ ոք դժգոհ կը մնայ, որովհետեւ ոչ ոք իր կարիքէն աւելի կամ պակաս կը ստանայ: Ընդհանուր օրէնք է որ ամէն մարդ միայն մէկ տուն եւ մէկ պարտէզ ունենայ: Այդ կողի բնակիչները զերի չեն

պահեր: Ամէն ոք կ'աշխատի համայնքին համար եւ պատրաստ է մեռնելու համայնքին համար եթէ զուրտէն յարձակուժ տեղի ունենայ: Պատերազմի տակն զերի բռնուողները հաւասար իրաւունքով քաղաքացիներ կը դառնան:

Փանքեաններու մասին այն նկարագրութիւնը կը թուի թէ հելլէն վարչութեան ներքեւ Եգիպտոսի խոչալականացած մէկ դրութեան պատկերը ցոյց կուտայ, այսինքն այն որ յոյները Եգիպտոսի մէջ կ'երազեն եզեր ստեղծել մի այդպիսի դրութիւն:

Մեծն Ալեքսանդր դրուեց Եգիպտոսը եւ Ալեքսանդրիան եղաւ յունական մշակոյթի կեդրոնը: Իր մահէն յետոյ (323 Ն. Ք.) իր մակեդոնական կայսրութիւնը լուծուեցաւ եւ վերածուեցաւ բազմաթիւ մանր իշխանութեանց ու երեք մեծ պետութեանց: Այս վերջին պետութիւններն էին Մակեդոնիա (Յունաստան), Սուրիա (Ասիոյ ներք) եւ Եգիպտոս ուր Ալեքսանդրի զօրավարները հիմնեցին տայնիստիներ, հարստութիւններ:

Եգիպտոսի մէջ Պտղոմեանները իշխեցին հին փարաւոններու տեղը: Պտղոմեաններու շրջանին սեփականութեան յարաբերութիւնները հետեւեալ ձևով էին դասաւորուած: Թագաւորը կամ պետութիւնը միակ սեփականատէրն էր ամբողջ ցամաքին ու ծովուն: Տուները, պարտէզներն ու այգիները անհատական սեփականութիւն էին: Պետական սեփականութիւն էին նաեւ եգիպտացորենի արտերը որոնք վարձու կը տրուէին գիւղացիներուն ժառանգական իրաւունքով: Պտղոմեանները դրուեցին կալուածները կրօնաւորներուն եւ աւատապետներուն որոնք մասն վարձակալներու շարքին մէջ: Գիւղացիներու իրաւական զիրքը լաւ էր ու գոհացուցիչ, բայց պայմաններու փոփոխութեան հետեւանքով պետութիւնն ալ սկսաւ անդթօրէն վերաբերուիլ հողագործ մասսաներուն հետ, մինչեւ որ անոնք կորսնցուցին իրենց օրինական իրաւունքները, արհամարհուեցան ու լծուեցան սարկական աշխատանքի:

### ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՆԿՈՒՄԸ

Պեղոպոնէսեան պատերազմները եւ տարբեր պետութեանց (Սպարտայի, Աթէնքի եւ Թէպէի) միջեւ գերիշխանութեան համար մղուած կռիւները (404-362 Ն. Ք.) պատճառ եղան որ կործանի բանաստեղծներու եւ փիլիսոփաներու այս երկիրը, որուն վարիչները, իրարու թշնամի, կ'երազէին հիմնել հելլէնական միազանդուած կայսրութիւն մը: Ան ինկաւ մակեդոնացիներու իշխանու-



թեան տակ, իսկ երկրորդ դարու կիսուն՝ հռոմէակացիներու իշխանութեան տակ

Բոլոր այս արտաքին ու ներքին պատերազմներու ընթացքին դասակարգային ուժգին կռիւներ յառաջացան ունեւորներու եւ չունեւորներու միջեւ, դեմոկրատներու եւ սակաւապետական բիրտկրատներու միջեւ: Իրարու յաջորդեցին հողի վերաբաժանման փորձեր, պարտաւէրերու պարաքերու թեթեւացման ջանքեր, անյայտացումներ ու յաճախակի ջարդեր այդ ճղնաժամային շրջաններուն: Երկու դասակարգերու միջեւ արմատացած թշնամական աւատապետականներուն մասին խօսած ատեն գրած է. «Գերագոյն պաշտօններու հասնողները իրենց պաշտօնատեղին մտնելէ առաջ հետեւեալ երգումը կ'ընէին. «Եւ թշնամի պիտի բլլամ ժողովուրդին եւ պիտի աշխատիմ այնքան շարիք հասցնել անոնց որքան կարելի է» (Բովիքիս 5-9-11): Իսկրատէս կը վկայէ որ հարուստներու զգացումը այնքան թշնամական էր որ անոնք կը նախընտրէին իրենց ունեցածները ծովը նետել քան թէ աղքատներուն տալ: Պատանի նման փիլիսոփաներու գաղափարները ծիլեր արձակել էին իրենց ժամանակի անտեսական ու քաղաքական պայմաններու հողէն, այնպէս որ դասակարգային կռիւր որոշ շրջանի մէջ ստացաւ իր գունաւորումը բնակչութեան սեփականագործ մասին դանդաղներու եւ պայքարումներու բռնկումով:

Յունաստան ինկաւ որովհետեւ գերիներ կը պահէր, որովհետեւ դասակարգային հակամարտութիւնները թոյլ չէին տար որ բնակչութիւնը ապրէր խաղաղութեան եւ ստեղծագործ աշխատանքի կեանքը: Ընչազուրկներն ու գերիները ճիշդ է որ ազատութիւն ու պատահութիւն տուին մտաւորականներու վերելքին: Երեւան եկան նշանաւոր փիլիսոփաներ, բանաստեղծներ ու երգիծարաններ, բայց անոնք չկրցին յոյն ազգը հասցնել երազուած բարձրութեան: Հանճարները հաշկաւոր եղան բայց յոյն ժողովուրդը մնաց ցած մակարդակի վրայ: Վերջապէս կործանեցաւ յունական պետութեան յարիսուլ չէնքը եւ անոր փլատակներուն տակ անհետացան իսպառ յոյն հանճարները:

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԱԻԱԳ ԻՇԽԱՆՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Նախ քան յոյն ժողովուրդի յատկացուած բաժինը փակելը, տեղին է որ մի քիչ աւելի մօտէն ընթերցողին ծանօթացնենք հին Յունաստանի բնակչութեան ներքին կեանքը:

Մենք սոյն հատորի երրորդ մասը յատկացուցեր ենք գերետիրական շրջանի վիսաւոր գործազուլներուն եւ անոնց անձնուրաց առաջնորդներու գործերուն: Ընթերցողը պիտի տեսնէ որ այդ գործազուլները չեն նմանիր մեր օրերու գործազուլներուն: Անոնք քաթեր են այս կամ այն անհատի փառասիրութեան գրգռումով: Անոնք պարզապէս գոյութեան կռիւի յայտնաբերած ապստամբական ցոյցեր եղած են: Գործաւորները, ճնշուած ծանր լուծի տակ, մտային ու ֆիզիքական ջղաձգումներու ներքեւ, լեցուած սասելութեան ու վրէժխնդրութեան ողիով, փորձեր են փշրել իրենց արիւնլուայ լուծը եւ այդ նպատակով ալ պարզեր են ապստամբութեան գրոշակը տիրող դասակարգին դէմ: Այս իմաստով է որ մենք հակիրճ տողերով կ'ուզենք ներկայացնել Նեպիսի տարօրինակ եւ զարմանալի պատմութիւնը. պատմութիւնը այն մարդուն որ մահուան ու աւերումի սարսուղեցիկ յուշարձան մը թողուց իր ետեւ որուն համար իշխող դասակարգի ներքողականը ընել սիրող պատմաբանները չեն ուզած յիշատակել անոր անունը, իսկ յիշատակողներն ալ չեն մոռցած անարդանքի տողերով վերջացնել իրենց նկարագրականը:

Բայց այս Նեպիսի պատմութիւնը ընելէ առաջ նախ ծանօթացնենք մի ուրիշ մարդ, հրէշ մը բառին լայն առումով:

Գէպի ետ, շատ հին, անթուակիր հնութեան շրջանին, այսինքն այն շրջանին երբ Լուիւրիոս տակաւին կ'ապրէր, Յունաստանի մէջ կ'ապրէր արտակարգ կերպար մը, մէկը յոյն եօթը խլացի մարդոցմէն որուն անունն էր Քելան: Այս մարդը մի տեսակ պատգամախօս էր, ապրող համայնագէտ մը: Ներկայիս մի շարք վճռարանական ասացուածքներ անոր կը վերագրուին: Այս Քելանն է որ առաջին անգամ ըսած է. «Ո՛վ մարդ, ծանիր գեեգ»: Եւ նոյն այս մարդն էր որ ուրախութենէն կաթուածահար եղաւ ու մեռաւ երբ իմացաւ որ իր որդին ողիմպիական խաղերուն մէջ յաղթական դուրս եկեր էր: Բայց բարեսիրտ ընթերցողը իր հիացման հետ պիտի սարսափի երբ տեղեկանայ Քելանի գործերուն: Այս մարդն էր որ հնարեց գերիները չարչարելու անբեւեակայելի միջոցները եւ գանոնք ժառանգ թողուց սպարտական իշխաններուն որոնք չարուսակեցին իրենց անասելի բռնակալ ռեժիմը, մասնաւորապէս հարաւային Յունաստանի մէջ, աւելի քան 400 տարի, մինչեւ որ 207 թուականին (Ն. Ք.) հրապարակ իջաւ հսկայ մը, Նեպիսը, որու անունը Սպարտակուսի եւ Գլաւիոսի անուններուն նման անիծեալ անուններու կարգն անցած է զարկերով. որովհետեւ նա էր որ ցցուե-



ցաւ տիրող դասակարգին դէմ եւ ուղեց այդ դասակարգը այս աշխարհի երեսէն ի սպառ անհետացնել վերջ գնելով անողոք կեղեքումներուն ու անմարդկային անգթութիւններուն:

Արդի պատմարանները Նեպոսի անունը չեն յիշեր, նոյնիսկ Բրիտանիա Համայնագիտարանին մէջ անոր անունը նշուած չէ: Մենք ինչ որ գիտենք Պոլիպոսի եւ Լիլիի նման անքննադատելի պատմարաններու գրածներէն առնուած տեղեկութիւններ են:

Նեպոսի կեանքի պատմութիւնը անսովոր մի պատմութիւն է որ նմանութիւն ունի Իւնուսի կեանքի պատմութեան հետ. անոր պէս Նեպոսն ալ Սուրբայէն էր, սեմական ցեղէն. քրտնոս անունը կրող գործաւորական կազմակերպութեան անդամ: Պատերազմի ընթացքին շղթաներու մէջ որպէս զերի բերուած է Պեղոպոնէս, մօտաւորապէս 200 թուականին (Ն. Ք.): Գերութեան օրերուն շատ տանջուած է, ապա իր մէջ բռնկած է ըմբոստութեան ուղին. եղած է սարսափ տարածող մի ապստամբ այն իշխանին օրով որ Լուկուրկոսի կոմունիզմի ամենայնաին մնացորդներն անգամ անհետացուցեր էր: Շատ կարճատեւ եղաւ սակայն իր յաղթանակի շրջանը: Եղբրական մահուամբ մեռաւ հռոմէական պատերազմի միջոցին:

Այս ժամանակաշրջանին տիրող դասակարգի գործադրած զազանութիւններու մասին Պղուտարքոս կուտայ մաս մը տեղեկութիւններ: Ան կը պատմէ թէ ինչպէս յոյն իշխանը սրտեմատիկ մեթոտով մարզած ու պատրաստած է երիտասարդական խումբեր որոնք զարանակալ կը սպասէին այն ճամբաներուն եղբրք ուրկէ գործի կ'երթային կամ գործէն կը վերադառնային գործաւորները: Եւ ահա յանկարծ անոնք վազրի նման կը յարձակէին անդէն ու անպաշտպան մարդոց ու կիներուն վրայ, կը մխէին իրենց դաշոյնները անոնց կրծքին ու կը հրճուէին գիտելով արեան ճապաղիքներու մէջ տապալակող անմեղ զոհերը որոնց միակ յանցանքն էր թշուառութիւնն ու գերութիւնը:

Գուցէ դանուին մարդիկ որ արդարացինն այս վայրագութիւնները այն տրամաբանութեամբ որ գերեմտիական շրջանին տիրող դասակարգի իշխաններու սովորական հաճոյքի աղբիւրներէն մին եղած է այդ: Բայց մենք գիտենք որ գերիներն ալ մարդկային էակներ էին, ունէին ցաւի զգացում եւ արժանապատուութեան գիտակցութիւն: Եւ Նեպոսի պատմութիւնը բաւականին լայն կը սփռէ այն իրողութեան վրայ որ այդ խեղճուկ գերիները գիտէին ազատութեան իմաստը եւ անոնք աւելի ազնիւ էին քան իրենց արիւնարբու զահիճները:

Այսպէս ըլլալով հանդերձ մարդկութեան համակրութիւնը

չուզեր հակիլ Նեպոսի եւ իր կողմակերպած լեզններուն կողմը այն վշտալից արգարացումով որ անոնք իրաւունք չունէին կտրելու հարուստներու կողորդը:

Նախ քան մի քիչ մանրամասնութեան դիմելը, կարեւոր է Նեպոսի գործերուն ամփոփումը տալ, որքան որ ծանօթութիւն հաւաքուած է որոշ հեղինակաւոր աղբիւրներէ որոնց ամէնէն վստահելին նկատուած է Պոլիպոս որ ծնած է նոյն քաղաքին մէջ ուր ծնած է Նեպոս եւ ապրած է նոյն ժամանակաշրջանին: Լիլի նոյնպէս մաս մը ծանօթութիւններ տուած է Նեպոսի մասին, հաստատելով նոյն իրողութիւնը, այսինքն այն որ իշխող դասակարգը, մղուած դիւրազրգուծենէ ու վաւաչստութենէ այդ հին օրերուն, ի՞նչպիսի գազանական անկուշտ կատաղութեամբ կը վարուին եղբր խեղճերուն ու գերիներուն հետ որոնց անտանելի գրութիւնը բարւոքելու մասին շատ քիչ մարդիկ կային մտածող եւ անոնք ալ հարածուած են:

Նեպոս ծնած է Սուրբոյ մէջ 225 թուին (Ն. Ք.): Սերած է հրեայ ընտանիքէ: Պատերազմի պահուն Իւնուսի նման գժբախտութիւնը ունեցեր է գերի բռնուելու, շղթաներով տարուած է Մեկալտոլիս, հոն ծախուած է Մեքանիտաս անունով հարուստ քաղաքացիի մը 212 թուականին (Ն. Ք.): Իր տէրը ազնիւ մէկը եղած է եւ ինք իր գերի եղբայրներուն հետ գործեր է տանելի պայմաններու տակ: Բայց այս պատանին վշտահար սրտով դիտած է Պեղոպոնէսի ուրիշ գերիներու կրած սարսափելի տանջանքները եւ անսահման առելութիւն հաւաքած է իր հոգւոյն մէջ: Մեքանիտասի մեռնելէն յետոյ բախտի ամեկնելի բերումով հազիւ 25 տարեկան այդ երիտասարդը կը յաջողի Մպարտայի բռնակալը դառնալ սպանել տալով մեռնող թաղաւորին յաջորդող զաւակը: Նեպոս, անմիջապէս որ զահ կը բարձրանայ, կը կողոպտէ հարուստները, կը սպաննէ անոնցմէ շատերը եւ կը գործադրէ շարձարանքի այն մեթոտները ինչ որ կը գործածէին տիրող դասակարգի իշխանները գործաւորներուն ու գերիներուն համար: Իր կիներ, Ապեկա, իրմէ աւելի առելութեամբ լեցուած էր հարուստներուն դէմ: Նա կ'ընտրէր նախ իր զոհը, կանացի բոլոր հրապոյրներով սէր կը կեղծէր, կը գրկէր զայն իր բազուկներով, ապա սուր դաշոյնը կը մխէր անոր կուրծքին երբ արդէն կողոպտած էր անոր բոլոր գրամները:

Նեպոս իր այս կողոպտումներով կրցաւ կազմել պրոլետարներու բանակը: Բայց պէտք է ըսել թէ ան թաղաւորի յատուկ ճոխ կեանքը չապրեցաւ. ան կը յիշէր իր ստրուկի օրերը եւ կ'ապրէր համեստ գործաւորի կեանքը: Ինչ որ հարուստներէն կը կողոպտէր



կուսար ազգատներուն: Ան նպատակ ունէր վերահաստատելու Ղուկուերիոսի շմոռցուած կոմունիզմը բնաջնջելով ատելի իշխանները: Ֆիլոսոֆէն, մեկարդողընցի զորավարը իր բանակով յարձակեցաւ Նեպիսի վրայ, բայց մատնուեցաւ նահանջի: Այն ատենն էր որ Հռոմով միջամտեց եւ փութաց օգնել Ֆիլոսոֆէնի: Յունական եւ հռոմէական բանակները միացած յարձակեցան, տապալեցին Նեպիսի իշխանութիւնը եւ դինք ալ չարաչար սանջւնքներով սպաննեցին: Այսպէսով վերջացաւ Նեպիսի ապստամբութեան ու բռնակալութեան պէժմը որ տեւեց միայն տասնեւեկեց տարի:

Այստեղ կը տեսնենք իրական, բարձր հանճարի տէր մարդ մը որ տարուած համամարդկային խռովում, հրապարակ նետուեցաւ փշրելու դերիններու շղթաները եւ իշխանութիւնը աալու պրոլետարիատին: Այդ թուականներուն ունէ մէկը տակաւին չէր երազեր պրոլետարական դիկտատուրա կամ Ֆրանսական յեղափոխութեան նման մի յեղափոխութիւն: Նեպիս ահա այդ նպատակը որդեգրեց եւ ասոր համար ձեռք առաւ ամէնէն անպիտան վճռական միջոցառումները: Հռոմէական յաղթանակները կը շարունակուէին եւ այդ կայսրութիւնը իր երիտասարդական շրջանին սկսաւ ցաւատանջ հրամայութեան մը նշանները ցոյց տալ Նեպիսի յանդուզն դործներուն յաջողութեան հետեւանքով: 197 թուին (Ն. Ք.) Նեպիս կրցաւ հռոմէացի հիւպատոս Գուինիտիոս Ֆրիմիուսը ծունկի բերել: Բայց ցաւալի է ըսել որ իր շինել ուղամ շէնքը փխրուն տաղձներով էր եւ անոր հիմքերը հաստատուած էին աւալի վրայ: Իրեն գէժ կեցեր էր ժամանակը, իրեն գէժ էին ներքին ու արտաքին աննպատ ապամանները եւ անտա մը առանձին անոնց բոլորին ճակատիլ չէր կրնար եւ եթէ ճակատէր ալ, ինչպէս յանդգնութիւնը ունեցաւ ճակատելու, անկարելի էր որ կարենար յաղթել բոլորին:

Ճիշդ է որ Նեպիս արժատական միջոցներ բնարած էր իր նըպատակին հասնելու համար: Ան ջնջեր էր անհատական սեփակաւնափրութիւնը, հաստատած էր հասարակաց ճաշարան, հասարակաց շտեմարան: Ան գիտէր թէ հասարակ ժողովուրդին հարիւրէն մէկը հազիւ կարելի էր հաշուել որպէս ուսեալ եւ գիտակից մարդ. ժողովուրդը պէտք էր դաստիարակել, կրթել: Դպրոցներ բացաւ թէ երեխաներու եւ թէ հասակաւորներու համար: Օրէնքով յայտարարեց որ միայն աշխատաւորներն ու մարդկային պիտոյքներ արտադրողները իրաւունք ունին ապրելու: Օրին մէկը իրեն ըսին թէ սեփականազրկուած հարուաններէն մին կը մերժէր աշխատիլ: Նեպիս խեղճն հրամայեց. «Կտրեցէք այդ անզգամին գլուխը»:

Նոյն թուականներուն Փոքր Ասիայէն Յունաստան անցեր

էին դերասանական միութեան մը անդամները, թիւով 14 հոգի: Անոնք իրենց այցելած քաղաքներուն մէջ կը ներկայացնէին խնամքով պատրաստուած պիէս մը, կեանքը այն առասպելական մարգարէին, Քրիստոսին, որ հրաշքներ էր գործեր, որ սէր ու ներողամտութիւն քարոզեր էր, ապա խաչուած էր երկու աւազակներու հետ: Դերասանական այդ խումբը երբ Սպարտա այցելեց, Նեպիս ներկայացուած տուամայի մասին իր հիացումը յայտնելով հանդերձ յարեց. «Սքանչելի էր. բայց ինչ որ անհաճելի էր ինձ համար տամի ոգին էր. սիրելի էւ ներելի. կարելի չէ սիրել քշիամիմ ինչպէս որ կարելի չէ ներել անոր»: Բայց այս տարապայման խոստուածք ու աններող հոգի ունեցող մարդը որ ատեն մը պաշտուեցաւ իր հետեւորդ ամբոխներէն, ոչ մէկ պատեհութիւն ունէր ընդարձակելու իր իշխանութեան շրջանակը: Անոր գէժ կեցեր էին բազմապիսեան թշնամիներ որոնց կ'օգնէին քաղաքական իշխանութիւնները, անոնց մարդած բանակները եւ յետոյ ամենակարող աստուածը՝ գրամը: Եւ արդէն ինք, Նեպիսը, տաքարին ու անշրջահայեաց մարդ էր. հանճար մը իր խորհուրդութեամբ ու ծրագրով, բայց կարճատես քաղաքագէտ մը: Ան իր ամբողջ բանակը ճակատեցուց յունական եւ հռոմէական բանակներուն գէժ. չունէր պահեստի բանակ, չունէր թիկունքային ուժ: Բացի այդ իր բանակի զինուորները, մեծ մասով գերիներ ու զինուորական մարզանքէ անտեղեակ խեղճուկ գործաւորներ, չէին կրնար կուռիլ մարդուած զինուորներու գէժ: Եւ դեռ աւելին կար: Ինք Նեպիս երբ կոխի առաջաւոր գիրքերուն ճակատար անցաւ, չունէր արժանաւոր մէկը որ իր մահուանէն անմիջապէս յետոյ անցնէր բանակին գլուխը: Ահա թէ ինչու երբ Նեպիս գերի ինկաւ ու սպաննուեցաւ, իր բանակի քաջորի զինուորները խուճապի մատնուեցան: Նեպիսը բանակին ողևորութիւն ներշնչող ոգին էր, անոր գրոշակը. ինկաւ գրոշակը, քայքայուեցաւ բանակը: Նեպիս պատրաստուած ոսղմագէտ մարդ չունէր. նոյնիսկ իր հիմնած պետութիւնը իր որդեգրած սկզբունքներով կանգուն պահելու կարող հաստատութիւններ ալ չունէր: Իր հիմնած «պրոլետարական դիկտատուրա»ն սոսկ անհատի մը կամքով կարելի չէր հաստատուն պահել որովհետեւ պրոլետարիատը տակաւին պատրաստուած չէր իշխանութեան գլուխը անցնելու:

Այսպէս, ուրեմն, Նեպիս որպէս մի շանթ փայտատակեց, շանթահարեց աջ ու ձախ, ու անյայտացաւ: Ան յաջորդող դարերու սերունդներուն փորձառական մի կտակ թողուց. այն է անհատի մը խռովումը հոգ չէ թէ այդ անհատի ապրած ժամանակի ընկե-



բային պայմաններէն ծնած է, ուժի կը փոխուի միայն այն ատեն երբ ան կը տարածուի մասսաներուն մէջ:

ՆԱԽԱՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐ

Նեպիւնէն դարեր առաջ Յունաստանի մէջ գործաւորական միութիւններ կային որոնք կը կոչուէին ըրանոս: Անոնք գաղանի կազմակերպութիւններ էին ու ենթակայ՝ հալածանքի: Աթենացիները այս կազմակերպութեանց պրոպականդիստները կը պատժէին մահուամբ:

Մահապատիժ. սոսկատեսիլ մահապատիժ:

Եւ պէտք է բնել թէ այս մահապատիժի զոհերն էին կիները, հին դարերու մարտիրոսուհիները:

Աթենացիները անմեղ կիներ կը մերկացնէին ու զայն կը տանէին Բարատրոն կոչուած ամպամերձ լեռան գագաթը որու ոտքերուն տակ պառկած էր անդնդախոր ճորրը. այնտեղէն դատապարտեալ կիներ դիտելոյս կը զլորէին: Ընթերցողը կրնայ երեւակայել այդ տեսարանը, թէ ինչպէս խեղճ կնոջ մերկ մարմինը դարնուելով ժայռուա լեռան ցցուած ժանիքներուն զանոնք արեամբ կը ներկէր մինչեւ որ անկենդան վիճակով հասնէր անդունդին յատակը:

Եւ ինչ որ տխուր իրականութիւն է այն է որ Դեմոսթենէս եղած է այն դատախազը որ իր հռետորական հանճարը գործածեք է անմեղ զոհերու մահապատիժը արագացնելու համար:

Այս գծով առաջին անգամ պէտք է յիշել խեղճ աղջկայ մը, Նինոսի անունը, տասնեւեօթը տարեկան աղջիկ մը որուն սճիբն էր զիտնէսեան նոր միութիւն մը կազմակերպելը:

Նինոս, որ աղքատ բնտանիքէ սերած էր եւ հաշակած թշուառութեան դառն բաժակէն, մօտէն տեսած էր տուայտող աղքատներու վիճակը, ձեռնարկեց կազմակերպել փոխադարձ օգնութեան ընկերութիւն մը Աթէնքի մէջ որուն անդամները, որպէս անկեղծ սիրոյ հաւատաւորներ, մէկ սիրտ մէկ հոգի պիտի ըլլային, զերար պիտի սիրէին, զիրար պիտի պաշտպանէին, հասարակաց սեղանէն պիտի ճաշէին եւ կեանքի դասնութիւնն ու վայելքը պիտի բաժնէին իրենց միջեւ: Հակիոս, իւսեպիս, ակատոս (սքրութիւն, անկեղծութիւն, նուիրուածութիւն): Ասոնք էին ընկերութեան սկզբունքները: Դեմոսթենէս (384-322 Ն. Ք.) այս աղջիկը ամբաստանեց փաստելով որ նա Աթէնքի երիտասարդութիւնը անբարոյականութեան կ'առաջնորդէր անոնց խմցնելով տուփաջուր: Դիտումնաւոր կերպով հիւսուած արատոց մի ամբաստանութիւն որուն նմանը կը տես-

նենք ներկայիս ալ երբ կապիտալիստ դասակարգի վարձկան խընկարկուները այս կամ այն ամբոխապարական յերկրանքներով կ'ամբաստանեն ու կը դատապարտեն իրենց պաշտած սխտէմին հակառակող կոմունիստները:

Պատմութիւնը մեզի ցոյց կուտայ որ ամէն դարու մէջ տիրող դասակարգը շատ դիւրաւ կրցեր է ճարել իր թշնամիներու մահապատիժը փութացնող դատախազներ, որոնք օգտագործեր են ամբոխի ապտուցիւնն ու դիւրահաւանութիւնը: Եւ Դեմոսթենէս այդ դատախազներէն էր. հարուստ դասակարգի փաստարանը, այդ դասակարգի թշնամիներուն դատախազը: Եւ Նինոս ահա այդ դատախազի ճիրաններուն մէջ ինկեր էր եւ ազատութեան յոյս չունէր: Դեմոսթենէս Նինոսը մերկացնել տուաւ եւ Բարատրոնի լեռան գագաթէն վար զլորեց անդունդը: Եւ այս մարդը չզոհացաւ մէկ զոհով: Ուրիշ աղջիկ մը, Տէօրինի քրմուհի մը որ գերիներու անտանելի վիճակը տեսնելով իր ամբողջ ուժն ու ազդեցութիւնը կ'ուզէր ի սպաս դնել աստուածներու օժանդակութեամբ այդ գերիները ազատելու համար, Դեմոսթենէսի ձեռքով ունեցաւ նոյն եղերական վախճանը: Բարատրոնի ժայռերու ասամները ներկուեցան անոր արիւնով ու վայրի անասուններն ու անգղերը ճաշակեցին անոր մարմինը:

Ուրիշ քրմուհի մըն էր Սոֆիա քրմուհին որուն ապրած ժամանակաշրջանին Դեմոսթենէս տակաւին ծնած չէր: Սոֆիա, թափառական քրմուհի մը որ զիտնէսեան արտիստներու միութիւնը աւելի լայն շրջանակով ու մարտական կազմակերպութեան բնոյթով շարկապելու նպատակով հրապարակ իջած էր, դատապարտուեցաւ մահուան ու նետուեցաւ Բարատրոնի լեռնէն վար: Աթենացիները սովորական անտարբերութեամբ չզիտեցին այդ քրմուհիին նահատակումը. մի տեսակ սոսկում համակեր էր բոլորին սիրտը: Աւանդութիւնը կ'ըսէ որ Սիպիլ աստուածուհին այնքան զայրացաւ աթենացիներու այդ անդթութեան վրայ որ իր խեղճուկ աղախինին վրէժը լուծելու համար ժանախտով հարուածեց աթենացիները, որոնք, ահարեկած, աստուածներու սիրտը ամոքելու նպատակով քանդակագործ Պիտիասի (490-432 Ն. Ք.) ձեռքով հիանալի արձան մը շինեցին զոհուած քրմուհիին համար եւ թոյլ տուին որ անոր կազմակերպել ուզած արտիստներու միութիւնը իր ճիւղերը ազատորէն տարածէ Յունաստանի մէջ:

Դեմոսթենէս իր ատենին բոլորովին չէր յիշեր այս դէպքը: Նա յամառօրէն շարունակեց իր անդուծ դատախազի գործը:

Ուրիշ մարտիրոսուհի մը եղաւ Կլոդոտի, Աթէնքի գործա-



ւորական միութեան (ըրանոսի) մէկ կազմակերպիչը, մայրը պե-  
տական այն մեծ մարդուն, ճարտասան Խաչինէսի (380-314 Ն. Ք.)  
որ վէճի մը մէջ պարտուելով Դեմոսթենէսէն հետացաւ Աթէնքէն  
ու իր մայրը թողուց սխալալ Դեմոսթենէսի հետապնդումներուն  
առջեւ:

Այդ դէպքը տեղի ունեցեր է հետեւեալ պարագաներու ներ-  
քեւ:

Մակեդոնիոյ թագաւորը Փիլիպ Բ. (382-336 Ն. Ք.) ոտըն-  
ձգութիւններ կը փորձէ աթենացիներու սահմաններուն վրայ: Հաշ-  
տարարութեան համար որոշուած պատուիրակութեան մէջ էին Խա-  
չինէս եւ Դեմոսթենէս: Այս երկուքին միջեւ ծագեցաւ սուր անհա-  
մաձայնութիւն մը որ գուռ բացաւ հանրային դատավարութեան  
մը ուր Դեմոսթենէս իր «Վասն Պսակաւորաց» ճառով(\*) պարտու-  
թեան մասնեց իր հակառակորդը: Անիկա այդ ճառով յայտարարեց  
որ ինք սերած էր բարձր արխասոկրատական սերունդէն, իսկ իր  
հակառակորդը Խաչինէս կը պատկանէր ստորին դասակարգին, քանի  
որ անոր մայրը աթենացի երիտասարդութիւնը կ'ուզէր կապել գիտ-  
նէսեան անբարոյսական խորհրդաւորութիւններուն: Խաչինէս հրա-  
պարակային դատավարութեան պահուն պարտուելով այլեւս Աթէն-  
քի մէջ չմնաց, անցաւ Հոռոս ուր յառաջ տարաւ գործաւորական  
միութիւններ կազմակերպելու գործը: Բայց ասով Դեմոսթենէսի  
սխալալութիւնը չյազեցաւ, այս անգամ ան բռնեց Խաչինէսի մօր  
Կլոդոսի օձիքը, զայն ձերբակալել տուաւ եւ որպէս ըրանոսեան  
միութիւններու կազմակերպիչ եւ երիտասարդութիւնը անբարոյս-  
կանութեան առաջնորդող կին դատապարտեց մահապատիժի: Տի-  
կին Կլոդոսան եւս զնաց Նինոսի եւ Թէոքրիսի ետեւէն. նա նոյնպէս  
մերկացուած զլորուեցաւ Բարատրոնի լեռնէն վար, անդուձգին մէջ:

Այժմ բռնեք թէ ո՞վ էր այս Դեմոսթենէսը:

Դեմոսթենէս գերետէր մըն էր. ունէր մի քանի գործարան-  
ներ որոնք կ'արտադրէին դաշոյն, սուր, նիզակ եւ մահճակալներ:  
Իր տարեկան եկամուտը ամերիկեան տորսի հաշուով երեք հարար  
տոլար հաշոււրուած է, բան մը որ հսկայական եկամուտ կարելի է  
նկատել այդ ժամանակներու համար:

(\*) Այս գառը գոյէմներու եւ համալսարաններու մէջ որպէս  
հոնետարական արուեստի ուսուցման օրինակ կը ծառայէ, առանց  
նկատի առնելու որ անոր հեղինակը ինչպիսի հրէշային կերպար մը  
եղած է:

Նախ քան Խաչինէսի հետ թշնամանալը, Դեմոսթենէսի գերի-  
ները անհանդուրժելի պայմաններու հետեւանքով ապստամբեցան  
եւ սպաննեցին գործարանի վերատեսուչը: Դեմոսթենէս այնքան  
զայրացաւ որ կոտորել տուաւ այդ գործարանի գերիներէն շատերը  
եւ ամէնէն վերջ բռնեց Կլոդոսին որպէս ապստամբութեան կազ-  
մակերպիչ:

Եւ Կլոդոսին դատապարտուեցաւ մահուան:

Արիւնարբու Դեմոսթենէս որ չէր գոհացեր սակաւին իր զո-  
հերու արիւնով, ուրիշ զոհ մըն ալ տուաւ ժայռերուն: Այդ զոհն էր  
Նիարան, մանկամարդ կին մը որ դատապարտուեցաւ գերիներու ա-  
զատագրութեան համար աշխատողի ոճրապարտ յանցանքը քուե-  
լու համար: Բարատրոն լեռան ոտքերուն տակ բացուող անդունդը  
այս կնոջ փետեկառուած մարմինն ալ առաւ իր ծոցը, խնձոյթի հրա-  
ւիրելով վայրի անասուններն ու անզղերը:

Բայց այս հրէշատիպ Դեմոսթենէսը բազմաթիւ զոհերու  
արեամբ իր ձեռքերը լուալէ վերջ երջանիկ վախճան չունեցաւ: Իր  
վերջին զոհը ըլլալու էր Աթէնքի մէկ գեղուհին, Յիրինի, որ թէեւ  
ազատեցաւ Բարատրոնի գահալիժումէն, բայց անցաւ Հերոսուհի-  
ներու կարգը:

Հետեւեալն է անոր պատմութիւնը:

Յիրինի, հռչակ հանած աթենացի գեղանի կինը, պոռնիկ  
մը չէր, ինչպէս սեւ ձեռքեր ունեցող պատմաբաններէն ոմանք զայն  
կը ներկայացնեն: Որ մարդիկ կը խենթեանային այդ կնոջ մէկ ժպի-  
տին արժանի ըլլալու համար եւ պատարաստ էին նուիրել անոր ա-  
մէն բան որ կրնային, այդ պարագան ազացոյց մը չէ կարելի հա-  
մարել անոր պոռնկութեան: Որպէս գեղեցիկութեան անմրցելի կեր-  
պար, որպէս մոտէլ նա արամազրուած էր քանդակագործ Գնտիոն  
Վենուսի որ պատրաստելու էր անոր արձանը:

Յիրինին ստորնացած կին մը կրնա՞նք նկատել երբ նա ժա-  
մերով կը նստէր անշարժ, արձանագործին զիմաց: Ոչ երբեք: Բայց  
այս աննման գեղուհին Սոկրատի նման ունեցաւ իր մատնիչը: Ա-  
նոր անունն էր Իւտիոս, Աթէնքի մեծահարուստներէն մէկը որ ու-  
ղեց Յիրինին անձնատուր բնել իր անասնական կիրքերուն ու երբ  
խտտօրէն մերժուեցաւ, այն ասեւ Դեմոսթենէսի զիմեց եւ զայն  
հռչակել տուաւ որպէս ըրանոս-քէաոս բանուորական միութեանց  
կազմակերպիչ, որպէս նոր աստուածներու առաքեալ եւ երիտա-  
սարգութիւնը անբարոյսականութեան առաջնորդող վհուկ:

Ճիշդ էր որ Յիրինի իրապէս գործաւորական կազմակեր-  
պութեան մը անգամ էր, բայց անոր վերագրուած թիւս յանցանք-  
ները ոեւէ հիմք չունէին: Բայց Դեմոսթենէս ուղեց որ այս կինն ալ



մերկ վիճակով գորուէր անդունդը: Ֆիրինի ձերբակալուեցաւ. իր դատաւարութիւնը տեղի ունենալու էր հրապարակաւ: Դեմոսթենէս իր ամբողջ հոկտորական կարողութիւնը ի գործ դրաւ Ֆիրինի մահապատիժի վճիռը ժողովուրդին կամքով հաստատելու եւ գործադրելու համար: Ան պահ մը կարծեց թէ արդէն յաջողած էր, որովհետեւ դատաւարութեան ունկնդիր ամենացինները ոչ մէկ համակրութեան նշան ցոյց կուտային Ֆիրինի կեանքը խնայելու ի նպաստ: Ահա այդ ճգնաժամային վայրկեանին ըմբ ելաւ ճարտասան մարզ մը, Հայպրիտէսը, որ յանդգնութեամբ ստանձնեց էր զոհուելու պատրաստուող գեղանի կնոջ պաշտպանութեան դատը:

Դեմոսթենէս արհամարհանքով կը նայէր իր հակառակորդին որ արտասանելու էր իր պաշտպանողական եղբայրակման ճառը: Հայպրիտէս որ գիտեր թէ ամենացիններու քուէն Դեմոսթենէսի կողմը ըլլալու էր, ի գործ դրաւ իր հոկտորական ամբողջ կարողութիւնը, փաստեց Ֆիրինի անմեղութիւնը եւ երբ տեսաւ թէ իր խօսքերը սեւէ ազդեցութիւն չէին ըներ նախապաշարուած ամբոխին վրայ, զիմեց յուսահատական միջոցի մը. խոյացաւ արդէն իսկ սարսափի մասնուած ազդկան մօտ, պատուեց անոր հագուստները եւ ապշահար հանդիսատեսներուն առջեւ պարզեց անոր մերկ հրաշայի գեղեցկութիւնը եւ որոտալի ձայնով իր խօսքերը ուղղելով ամբոխին գոչեց. «Տեսէք այս աննման գեղուհին, փառքը Աթէնքի. անոր աչքերը աւելի սիրուն են քան երկնից աստղերը. ո՞վ է որ անոնց մէջ չար ոչի ի մը ստուերը կը նշմարէ: Դիտեցէք անոր շրթունքները. ո՞վ է որ կրնար վկայել թէ անոնցմէ չար խօսք մը կամ հայհոյութիւն մը դուրս եկած է: Դիտեցէք անոր ստինքները. ո՞վ է որ կրնայ հաստատել թէ չար ոչին կրցած է մօտենալ անոնց: Կուզէ՞ք որ մեր աստուածները գարձեալ վայրանան եւ ժանտախտով հարուածեն ամենացինները: Այդ աստուածները այժմ անձկութեամբ կը գիտեն ձեզ. եթէ ձեր շրթունքներէն այս անարատ ու անմեղ ազջկան մահաւճիռի որոշումը դուրս գայ, այն ատեն պիտի տեսնէք որ ամբողջ աշխարհ պիտի սարսի աստուածներու բարկութենէն եւ ամենացիններուն առջեւ պիտի բացուի գժոխային դարաշրջանի մը գուռը»:

Հայպրիտէսի այդ ժեստին ու հիփոսոսացնող խօսքերուն հետեւանքով ամենացինները մէկ մարդու պէս միաձայն աղաղակեցին. «Ազատ, ազատ արձակեցէք Աթէնքի գեղուհին»:

Ֆիրինին ազատուած էր:

Դեմոսթենէս խայտառակուեցաւ եւ ջշուեցաւ Աթէնքէն 322 թուականին: Ան ուրիշ ապաստանարան չունէր, դնաց փոքր կղզի

մը ուր կտուցուած էր նեպաունի տաճարը, եւ ուր կ'ապաստանէին միայն գերիները: Նեպաուն իր դռները փակեց անոր առջեւ որովհետեւ ան գերի չէր, այլ գերիներու զահիճը: Դեմոսթենէսի վրէժխնդիր թշնամիները շրջապատեցին զինքը. անոնց մէջ էին Նիսոսի, Թէոքրինի, Կլոպոտի, Նիարայի եւ ուրիշ զոհերու ուրուականները: Այդ քարտիրա դատախազին համար ուրեմն ազատութեան ուրիշ ելքի ճամբայ չկար. միակ մէկ կտրուկ միջոց էր մնացեր, անձնասպանութիւնը: Եւ Դեմոսթենէս իր պահած թոյնը կուլ տուաւ ու մեռաւ իրեն հետ տանելով իր զոհերուն անէճքները:

Այստեղ պէտք է յիշել յոյն մարտիրոսներէն ամէնէն մեծը, ամէնէն նշանաւորը, այն մարդը որ իր խորհուրդներով, իր հանձարով ու գործունէութեամբ որպէս փայլուն աստղ ասանձնապէս կը փայլի տառապող մարդկութեան պատմութեան մէջ. մարդ մը որ ամենախոնարհ դասակարգի ծոցէն ծնաւ, մեծցաւ ու իր ձերբութեան օրերուն իսկ քարոզեց ու գործեց այդ անիրաւուած դասակարգին համար եւ վարձատրուեցաւ եղբրական մահով: Այդ մարդը Սոկրատես էր (469-399 Ն. Ք.):

Սոկրատի որպէս նախաքրիստոնեայ շրջանի քրիստոնեայ եւ քրիստոնեաներու Քրիստոսի միջեւ կարելի է գտնել նմանութեան եղբեր. երկուքն ալ եղած են շրջուն քարոզիչներ, քարոզեր ու սորվեցուցեր են ճշմարտութեան ու արդարութեան սկզբունքները. երկուքն ալ ունեցան իրենց աշակերտներն ու առաքեալները որոնք շարունակեցին տարածել իրենց վարպետին սկզբունքները, երկուքն ալ իրենց ետեւ գրաւոր յուշարարներ չձեռնարեցին եւ երկուքն ալ իրենց բնական մահով չմեկնեցան այս աշխարհէն. Սոկրատ մեռաւ բանտին մէջ թոյնով, իսկ Քրիստոս համաձայն քրիստոնեայ նախահայրերու վաւերագրերուն, մեռաւ խաչին վրայ:

Բայց պէտք է ըսել թէ այս երկու ուսուցիչներու քարոզչութիւնները տարբեր արդիւնք յառաջացուցին, որովհետեւ Սոկրատ երկրին կը նայէր, Քրիստոս՝ երկինքին: Սոկրատի ուսուցմունքը կրօնքի չվերածուեցաւ. դարեր եկան, դարեր անցան, բայց ամէն դարերու տիրող դասակարգերը շնուիրագործեցին Սոկրատի սկզբունքները որովհետեւ անոնք կապուած էին արհամարհուած դասակարգին, աշխատաւորութեան բարորութեան, իրաւունքի սրբութեան գիտակցութեան պահանջին հետ, մինչ Քրիստոսի ուսուցմունքը փոխուեցաւ կրօնի ու այդ կրօնը այսօր տիրող դասակարգի նուիրական միջնաբերդը եղած է. ով որ կը մօտենայ այդ միջնաբերդին զայն քանդելու նպատակով, կը դատապարտուի բանաարկութեան կամ մահուան:



Կ'արժէ որ այստեղ տանք Սոկրատի հակիրճ կենսագրականը :

Սոկրատ գերի չէր . աղքատ մտրդ մըն էր . արհեստով՝ քարհատ : Իր հայրը, հասարակ արձանագործ մը, ուղեց որ իր զաւակը հետեւի իրեն, բայց Սոկրատի մեծ եւ ուղղանկիւն դըւոյսը, իր կոպիտ Ֆիդիքական կազմը անյարմար էին քարերը ձեւի բերելու լուսկեաց գործին : Այդ կիւղ հասակով եւ կոշտ կազմուածքով մարդուն մէջ արտակարգ իմացական ուժի մի անտարտ ամբարանոց կար որուն վիճակուած էր ոչ միայն իր ապրած ժամանակաշրջանին, այլեւ յաջորդող դարերուն աշխարհի խաւարը լուսաւորելու գերը :

Այժմ տեսնենք թէ Ալլիպիատէս, Սոկրատի մէկ աշակերտը, ինչպէս կը նկարագրէ իր վարպետը :

«Ես պիտի սիրեմ գովել Սոկրատը զայն բողոքաւելով աստուածութիւն մը ներկայացնող արձանի մը հետ : Եթէ ես չվախնամ դիմով նկատուելէ, ձեզ երգմամբ կը վստահեցնեմ թէ ամէն անգամ երբ կը լսէի իր բառերը, կը տառապէի անոնցմով եւ իմ տառապանքը կը տեւէր երկար, որովհետեւ երբ անիկա կը խօսէր, իմ սիրտը կը թնդար, ինչպէս ուրիշներու սիրտը կը թնդար բանալալուչական խորհրդաւորութեանց հանդիսութեան տեսն : Աչքերէս արցունք կը հոսէր ստանց իմ գիտակցութեան ու կամքին . նոյն վիճակին մէջ կը տեսնէի ուրիշներ ալ : Ես լսած եմ Պերիկլէսը եւ ուրիշ հանճարեղ հետորներ, բայց ես այդօրինակ տառապանքի ենթակայ չեմ եղած, ոչ ալ իմ հոգին խոտոված ու լեցուած է սարկային խոնարհամտութեամբ եւ ինքնուրացումով : Այդպէս էր Սոկրատի ազդեցութիւնը իմ վրայ : Երբ ան կը խօսէր ու ես մտիկ կ'ընէի, ինձ այնպէս կը թուէր թէ ես ոչնչութիւն մըն էի եւ պէտք էր ափսոսայի իմ ծնած ըլլալու համար : Ես չէի կրնար ընդունիլ անոր բոլոր ըսածները որպէս ճշմարտութիւն, բայց նոյն ատեն չէի կրնար հերքել զանոնք, ոչ ալ կրնայի մերժել ընելու այն ինչ որ ան կը թելադրէր ընել : Յաճախ կը փորձէի փախչիլ իրմէ, այլեւս չտեսնել զինք, բայց կը զգայի թէ բան մը կը պահուէր ինձմէ . անդիմադրելի ուժ մը կը ստիպէր որ փնտռելի զինք, լսէի իր խօսքերը : Իմ նուաստացումիս մէջ փառքի մը տիրացած ըլլալու պատրանքը կ'ունենայի : Ես չեմ կրնար նկարագրել այն անմեկնելի զօրութիւնը որ կը ճառագայթէր իրմէն : Բարեկամներս, Սոկրատի իրական կերպարը ներկայացնելը հասարակ բան մը չէ : Անոր արտաքին կերպարանքը եւ ներածին մագնիսական ուժը հակադիր պատկերներ են : Եթէ կարելի ըլլար բանալ անոր հոգին, հոն պիտի տեսնուէր զմայլելի համբերութիւն եւ անսպաս իմաստութիւն . որովհետեւ անիկա բնաւ հոգ չընէր սոսկական գեղեցկութեան համար եւ ոեւէ բանէ տեսլի կ'ար-

համարձէ ամէն մէկ արտաքին տիրացում, ըլլայ ան գեղեցկութիւն, հարստութիւն, փառք կամ ոեւէ ուրիշ բան որոնցմով մարդիկ սովոր են պարծենալ, որովհետեւ ինք ունի անոնցմէ գերազոյնը, բան մը որ միայն աստուածներու յատուկ է :

«Բարեկամներս, ասոնք են այն բաները, որոնցմով կը գովեմ Սոկրատը» :

Սոկրատի ծնողքը աղքատ էր, բայց կերպով մը կրցաւ ստանալ սովորական կրթութիւն մը : Ասին մը հետեւեցաւ իր հօր արւեստին, արձանագործութեան, բայց անոր մէջ չկրցաւ յառաջդիմել : Գրիտօ անունով հարուստ աթենացի մը, խորապէս հրապուրած Սոկրատի խօսելու ձեւերէն ու շարժումներէն, զայն հանեց արձանագործի խանութէն եւ անոր առաւ բարձր կրթութիւն, ապա ինք եղաւ այդ հանճարեղ մարդուն աշակերտը : Ոմանք կը հաւատան թէ Սոկրատ ուսանած է Արքիլոսի եւ Անաքսակորասի մօտ, իր հետտրական արուեստը ընդօրինակած է Պրոտիկոսէն, բայց իրականութիւն է որ Սոկրատ եղած է ինքնատիպ իր փիլիսոփայական տեսութեանց մէջ :

Նախ քան իր պատմական կոչման նուիրուիլը, Սոկրատ ամուսնացաւ եւ ունեցաւ երեք զուակներ : Իր կինը, Քսանտիպի, զիւրազրդիտ եւ անհանդարտ խառնուածք ունեցող կին մըն էր : Այդպիսի կին մը ընտրած ըլլալուն համար Սոկրատ զուարճալի խօսք մը ըսած է . «Անոնք որ վարպետ ձեռնարկ ըլլալ կ'ուզեն, աստուածաբան կ'ընտրեն իսկեթ ձիերը . երբ անոնք կրնան սանձել զանոնք, այն ատեն վստահ կ'ըլլան թէ կրնան սանձել մարդերն ալ : Այժմ ես կ'ուզեմ ապրիլ մարդոց մէջ եւ չփուլիլ մարդոց հետ : Ես ամուսնացայ այս կնոջ հետ հաստատապէս համոզուած որ երբ ես կրնամ համբերել անոր ըրածներուն, կրնամ համբերել նաեւ ուրիշներու ըրածներուն ալ» :

Սոկրատ մտաւ նախ զինուորական ծառայութեան մէջ . մասնակցեցաւ երեք ճակատամարտերու : Իր քաջութեան համար երբ իրեն վարձատրութիւն արուելու էր, նա այդ պատիւը փոխանցեց Ալլիպիատէսի : Զինուորական կեանքի մէջ Սոկրատ ոչ միայն իր քաջութեամբ հռչակ ստացաւ, այլեւ իր անհաւատալի երկաթեայ սովորութեան համար : Հակառակ սաստիկաշունչ ձմրան երբ ստան ու ձիւնը ծածկեր էին զետիւնը, Սոկրատ բոկոտն ու համարեա կիսամերկ քսան ժամ կեցաւ եւ ինքզինք տուաւ յափշտակեալ մտախառնումի :

Սոկրատ զինուորութեան մէջ իր քաջութիւնը ցոյց տալէ վերջ նոյն քաջութիւնը ցոյց տուաւ նաեւ ծերակոյտին մէջ, ծերա-



կոյտին ու ամբոխին առջև, երբ ծերակոյտի անդամ ընտրուած էր:

Աթէնքի ծերակոյտը ունէր 500 անդամներ որոնք ընտրուած էին 10 ցեղերէ: Երեսունեւեւեց օրը մէկ անգամ իւրաքանչիւր ցեղի անդամները, յիսուն հոգի, նախադահութեան կը կանչուէին. ա- սոնք կը կոչուէին պրիտանէս: Այդ յիսուն հոգիներէն տասը հոգի- ներ մէկ շարքի միայն կը վարէին իրական նախադահութեան պաշ- տօնը, ապա անոնց կը յաջորդէին միւս տասը հոգիները: Իսկ մէկ շարքիուան նախադահութեան պաշտօնակալներէն մէկը կ'ըլլար գե- րագոյն նախադահ ու կը կոչուէր էպիտանէս:

Սոկրատ էպիտանէս եղաւ այն օրը երբ անարդար վճիռ մը արձակուած էր այն ծովակալներուն դէմ որոնք Արկինէսի ճակա- տամարտէն վերջ մեռած զինուորներու մարմինները թաղելու սրբա- զան պարտականութիւնը չէին կատարած: Յոյները այնպէս կը հա- ւատային որ սպաննուած զինուորներու դիակները երբ անթաղ մը- նացր են, անոնց հոգիները հարիւր տարի թափառելու էին ասպին անդին: Մերակոյտը մահապատիժի վճիռ արձակած էր ծովակալ- ներուն դէմ, բայց այդ վճիռը օրինական չէր համարուեր եթէ մէկ ծերակուտական հակառակ քուէ տար տրուած վճիռը բեկանելու համար: Եւ Սոկրատ իր տասը պրիտանէս ընկերներուն հետ հակա- ռակ քուէ տուաւ: Իր համոզումով ծովակալները յանցաւոր չէին որովհետեւ սոսկալի փոթորիկի հետեւանքով անոնք հաղիւ թէ կըցեր էին ինքզինքնին ազատել: Ժողովուրդը, կատղած, կը պա- հանջէր որ հակառակող ծերակուտականները եւս դատի կանչուէին եւ դատապարտուէին մահուան: Սոկրատի ընկերները, ահաբեկած, համակերպեցան. Սոկրատ մնաց միս-մինակ ու առանձին անվախօ- րէն պայքարեցաւ մինչեւ վերջ: Սոկրատ անարդարութեան չէր կրնար հանդուրժել: Ասոր վրայ ծերակոյտը սախակց օր ինք հրա- ժարի: Սոկրատ հրաժարեցաւ: Յաջորդ օրը իր տեղը ընտրեցին ու- րիշ ծերակուտական մը եւ ժողովը միաձայնութեամբ մահուան դատապարտեց ծովակալները: Սոկրատ բոլոր աթենացիներուն հա- մար դարձաւ ուշադրութեան առարկայ մարդ մը: Ան ուր որ երթար մարդիկ անզուսպ հետաքրքրութեամբ կը հաւաքուէին իր բոլոր- տիքը, մանաւանդ շուկայի հրապարակին վրայ: Եւ Սոկրատ կը խօ- սէր, կը պարզէր իր սկզբունքները: Կիրք ու բարկութիւն չկար իր խօսքերուն մէջ: Ան կ'ուզէր որ հարցումներ ուղղէին իրեն. համ- բերութեամբ կը լսէր արուած հարցումները հոգ չէ թէ ինչքան տարօրինակ եւ անպատշաճ էին անոնք. կը պատասխանէր բոլորին, իսկ երբ անկարող ըլլար պատասխանելու բնաւ չէր քաշուեր յայ- տարարելու որ ինք տակաւին տղէտ էր այդ խնդրին շուրջ:

Այս անձնուրաց մարդը հանդիստի ու հաճոյքի մասին չէր մտածեր, միայն լսելու յօժար ականջներ կը փնտռէր. իսկ երբ ունկնդիր չէր ունենար, մտքով կը վերանար ու կը յանձնուէր հո- գեկան յափշտակութեան. ի՞նչ նոր բան կրնար հնարել խօսելու որ ժողովուրդը հետաքրքրուէր ու հասկնար. հասկնար ու ատով փո- խէր իր միտքը, իր կեանքը:

Բայց Սոկրատի թշնամիները զինք ազատ չթողուցին իր ճամ- բուն վրայ որ փշոտ էր ու դժուարին: Այդ թշնամիներուն ամէնէն կատաղիներն էին սոփեստները որոնք թէ հարուստ էին եւ թէ ազ- դեցիկ: Անհիմն ու երերուն տեսութիւններ վաճառող այս անգոյն փրիլիսոփաները չէին հաւատար ճշմարտութեան եւ կը ժխտէին ա- նոր հասնելու միջոցները: Սոկրատ կը հաւատար ճշմարտութեան եւ կ'ընդունէր թէ կարելի է հասնիլ անոր:

Սոփեստները նախ կը դատապարտէին Սոկրատը որ ատենօք, քարհատութեամբ զբաղած տարիներուն, պատկաներ էր քրաճոս- քէասօս գործաւորական միութեան, յետոյ զայն կ'ամբաստանէին անով որ նա ծերակուտականի պաշտօնին վրայ գտնուած ատեն պաշտպանած էր քրէական յանցանք գործած ծովակալները. իսկ անոր քարոզչութիւնները արդէն կը փաստէին որ նա աթենացիներու աստուածներուն չէր հաւատար եւ երիտասարդութիւնը կ'ա- ռաջնորդէր անբարոյականութեան:

Ահա թէ ինչպէս Սոկրատ իր ծերութեան սահմանին վրայ (նա այն ատեն եօթանասուն տարեկան էր), ենթարկուեցաւ ծանր ամբաստանութեան, կանչուեցաւ նախապաշարեալ դատաւորներու առջև, անվախօրէն պատասխանեց արուած հարցումներուն եւ յանցաւոր հռչակուելով՝ դատապարտուեցաւ մահուան:

Աթենացիներու օրէնքով զերի մը երբ մահուան կը դատա- պարտուէր, զայն կը մերկացնէին ու կը նետէին Բարատրոնի լե- բան գագաթէն վար, անդունդին մէջ: Բայց Սոկրատ զերի չէր. նա պատուաւոր մահով մեռնելու էր, թոյնով: Բանտին մէջ անոր մատուցուեցաւ թունալից բաժակը եւ նա անխորով հանդարտու- թեամբ առաւ իրեն երկարած բաժակը եւ կուլ տուաւ անոր պա- րունակած թոյնը, ու առանց ցաւատանջ վալարումներ ցոյց տալու մնաք բարով, ազնիւ բարեկամներ ըսաւ իր վերջին վայրկեանին իր մօտ եղող եւ արտասուող աշակերտներուն եւ այլեւս չկրնալով մնալ իր սառած ոտքերուն վրայ, զլորուեցաւ գետին:

Այսպէս վերջացաւ իր ժամանակին ճշմարտութեան ու ար- դարութեան այդ անզուգական առաքեալին կեանքը:



ՍՈՒՐԱՏԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

Յունական փիլիսոփայութիւնը, մինչև Սոկրատի ապրած ժամանակաշրջանը, անցած է երեք դարաշրջաններէ :

Առաջին դարաշրջան: Այս շրջանին փիլիսոփայութիւնը կը բաժնուի աստուածաբանութենէն եւ կը փորձէ բանավարական բացատրութիւններ տալ տիեզերական երեւոյթներուն: Այդ շրջանի գլխաւոր փիլիսոփաներն են Թալէս, Պիտագորաս, Պերմանիտէս, եւ այլն:

Երկրորդ դարաշրջան: Փիլիսոփայութեան ֆանքերը կը ձախողին տիեզերական երեւոյթներու իրենց մտահայեցողութեանց մէջ եւ կը հակին գիտութեան ծագումն ու սահմանները ճշգոյ հոգեբանական հարցերու կողմը: Այս շրջանի գլխաւոր փիլիսոփաներն են Հերակլիտոս, Անաքսակորաս, Դեմոկրիտոս, եւ այլն:

Երրորդ դարաշրջան: Ասիկա յունական փիլիսոփայութեան ճգնաժամային շրջանն է ուր փիլիսոփայութիւնը, չկրնալով լուծել գոյառութեան առեղծուածը, այս անգամ ամէն ինչ կը յանձնէ անստուգութեան: Սոյն փիլիսոփայութեան հետեւորդները կոչուեցան սոփեստներ: Ասոնց գլխաւոր ներկայացուցիչն է Պրոտակորաս: Ան կը մերժէր ընդունիլ վերացական ճշմարտութիւնն ու վերացական արդարութիւնը:

Սոկրատ իր ամբողջ հանձարեղ մտածողութիւնը տիեզերական երեւոյթներէն, նիւթէն ու գոյառութեան պրոբլեմներէն անջատելով Վեդրոնացուց մէկ կէտի վրայ, մարդը եւ մարդկային հասարակութիւնը: Եւ այդ այն ատեն էր երբ տանջուող դասակարգը սկսեւ էր անհանդատութեան նշաններ ցոյց տալ: Սոկրատ իր փիլիսոփայութեան առանցքը բրաւ բարոյագիտութիւնը: Ասով ան նոր դարաշրջան մը բացաւ ոչ միայն յունական փիլիսոփայութեան մէջ, այլեւ մարդկային խորհողութեան պատմութեան մէջ: Պղատոն որ արիստոկրատ դասակարգին կը պատկանէր, Սոկրատի փիլիսոփայութիւնը բարեխառնեց իր դասակարգի ազատախոս մասի զազափարարանութեամբ, բայց գտարին սոկրատիզմ մնաց իր առաջնորդողի, ուղեցոյց տուողի գերին մէջ:

Մարդը ոչ ստրուկ ըլլալու է, ոչ ալ իշխող ու կեղեքող: Մարդը պէտք է ըլլայ ազատ, գոհունակ եւ երջանիկ. իսկ այդպէս ըլլալու համար պէտք է ճանչնայ ինքզինք, իր գերը, իր կոչումը, իր պարտաւորութիւնը հասարակութեան հանդէպ եւ իր իրաւունքը՝ այդ հասարակութենէն: Ան կը հաւատար թէ մարդուս բանականութիւնը յղի է ճշմարտութիւններով, միայն թէ ան պէտք ունի մանկարարձի մը: Սոկրատ նոր սխառտ մը չհնարեց, անոր հնա-

բաժը նոր մեքոսն էր, ճշմարտութիւնը հետախուզելու մեթոտը: Սոկրատ ինքզինք կը նկատէր որպէս մի մանկարարձ որ դաւակներ չէր ծներ, այլ կ'օգնէր յղի կիներուն որ անոնք առանց ցաւի ու կորստեան վտանդի ծնէին իրենց գաւակները: Ան կը հաւատար որ ամէն մարդու մէջ իմաստութեան սերմ մը կայ եւ կարեւորը այդ սերմին պէտք եղած սնունդը տալ, զայն աճեցնել եւ բերքատուութեան հասցնելն է: Ան կը հաւատար որ կարելի չէ գիտութիւն սորվեցնել. միայն կարելի է գիտութեան սաղմը զարդացնել եւ դուրս բերել: Ուրիշի մը զազափարները փոխ առնելը սորվիլ չի նշանակեր: Երբ մէկը ուրիշի մը դատումներուն կը հետեւի, կոչը է: Ամէն մարդ ճշմարտութեան տիրանալու է ինք իրեն, իր անձնական ֆանքերով ու պայքարումներով. այն ատեն է որ ան այդ ճշմարտութիւնը կը պաշտպանէ իր կեանքի գնով: Եւ ինք Սոկրատ կոչուած էր օգնելու այդպիսի մարդոց իրենց աշխատանքներուն մէջ. ան ատկէ աւելին չէր ընէր: Այս ըլլալով Սոկրատի մեթոտը, այլեւս դիւրին է հասկնալ իմաստը անոր կարուկ թելադրանքին, ծանիր գփեց:

Սոկրատ կ'ընդունէր թէ բարոյական սկզբունքները կապուած են գիտութեան հետ: Առաքինութիւն եւ գիտութիւն գրեթէ նոյնացած են: Միայն իմաստուն մարդը կրնայ ըլլալ քաջ, արդարակորով եւ համբերատար: Ամէն տեսակի անառակութիւն տղտութենէ կը ծնի: Մէկը երբ վախկոտ է, պարզ անոր համար է որ նա չի գնահատեր կեանքի ու մահուան արժէքը: Իմաստուն մարդը գիտէ որ մահը խորշիլի բան մը չէ եւ ինք կրնայ ազրիլ յաւիտեան եթէ իր ետեւ թողուցեր է բարի գործերու յուշարձան մը: Եթէ մարդ մը անհանդարտ է, պատճառը այն է որ նա անկարող է հաշուի առնել ներկայ հաճոյքի եւ ապագայ ցաւի յարաբերական արժէքը: Տղէտ մարդը եսապաշտ կ'ըլլայ ու եսապաշտ մարդն է որ ուրիշները հպատակեցնել կ'ուզէ իր կամքին: Ամէնէն մեծ եսապաշտները բունակալներն են:

Սոկրատ իր ժամանակի յեղափոխական ուղեգծին հետեւած է եւ հենց ատոր համար տիրող դասակարգը թոյլ չտուաւ որ ան մեռնէր իր բնական մահով:

Բայց Սոկրատ չմեռաւ. նա ապրեցաւ իմաստալից կեանքը, կ'ապրի ներկայիս ալ եւ պիտի ապրի որքան ատեն որ մարդկութիւն մը կ'ապրի երկիր կոչուած մեր այս հակադրութեանց թատերարեմ մոլորակին վրայ:



Հ Ռ Ո Վ Մ

Ե Ի

Հ Ռ Ո Վ Մ Է Ա Յ Ի Ն Ե Ր Ը





## 6. ՀՌՈՎՄ

Հոովմէական պատմութիւնը մինչև 360 թուականը (Ն.Ք.) մեծ մասով առասպելական է եւ հիմնուած բերանացի աւանդութեանց վրայ: Հոովմի արխիւները անհետացուած են 390 թուականին (Ն. Ք.) կեղտական ցեղերու արշաւանքին ատեն: Երկրորդ դարուն է որ հոովմէացի տարեգրողներ երեւան եկան յունական գրականութեան ազդեցութեան տակ: Մէկ դար յետոյ հրատարակ իջան հոովմէացի պատմաբաններ, որոնք իրենց երկրի պատմութիւնը գրեցին, բայց միշտ պահեցին հայրենասիրական եւ պահպանողական ուղեգիծը: Նոյնիսկ յոյն գրողները, ինչպէս Պոլիպիոս(1), Պրուտարքոս(2), Ապպիան(3) որոնք հոովմէական պատմութիւնը գրեցին իրենց մայրենի լեզուով, ինկան հոովմէական ազդեցութեան տակ: Հոովմէացի պատմաբանները, ինչպէս Սալուստ(4) Լիվի(5) եւ Տակիտոս(6), հազիւ թէ մօտեցան բարեկարգ իշխերուն: Անոնք պարզապէս թշնամի էին ապստամբական-յեղափոխական շարժումներուն, որոնց առաջնորդները կը համարէին որպէս ոճբազորք: Ազգային խնդիրներու մէջ, հոովմէացիները յեղափոխականներուն եւ արտաքին թշնամիներուն հանդէպ անդուծ հասպաշտներ ու ինքնընտիր իրաւատէրեր էին եւ զանոնք կը նկատէին խաբախ, մատնիչ եւ խտվարար: Այդպէս էին նաեւ լատին պատմաբանները: Իսկ յոյն գրողներ, թէև նուազ տրամադրուած էին զստապարտելու Հոովմի թշնամիները, բայց անոնք ալ, որովհետեւ լատիններուն

1) Պոլիպիոս գրած է երկրորդ դարու վերջերը (Ն.Ք.):

2) Պրուտարքոս (49-120 Յ. Ք.) գրած է յոյն եւ հռովմէացի նշանաւոր մարդոց բազմաթիւ կենսագրութիւնը: Իր գործերը իրապէս արժէքաւոր են:

3) Ապպիան պրուտարքոսի ժամանակակից էր: Արտագրած է նշանակելի գործեր, մասնաւորապէս հռովմէական քաղաքացիական պատերազմներու շուրջ:

4) Սալուստ Յուլիոս Կեսարի ժամանակակիցն էր ու անոր աշակերտը: Ծնած է 86 թուականին եւ մեռած 35 թուին (Ն. Ք.):

5) Լիվի ծնած է 59 թուին եւ մեռած 17 թուին (Ն. Ք.):

6) Տակիտոս ծնած է 55 թուականին եւ մեռած 120 թուին (Յ. Ք.):



համար կը գրէին, ազատ չէին շողորթութենէ եւ հոգմէական նախապաշարումներէ :

Ուրիշ յատկանշական կէտ մըն ալ այն է որ հոգմէացիները աւելի նիւթական շահերու հետամուտ էին քան թէ մտաւորական հարցերու, եւ ասոր համար անոնք Պզատոններ, Արխատֆանէսներ ու Սոփոկլէսներ չունեցան: Նոյնպէս, երբայցիներու մարդարէններն ալ անոնց համար անբարոնելի մնացին: Այդ իսկ պատճառով Հոգմի յեղափոխական պատմութիւնը ունեցեր է մթին անկիւններ:

ՊԱՏՐԻԿԵԱՆՆԵՐԸ (ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԸ)

ԵՒ

ՊԼԵՊԵԱՆՆԵՐԸ (ՌԱՄԻԿՆԵՐԸ)

Հոգմէացիներու աւանդութիւնները կը պարզեն թէ անոնք սկզբնական շրջանին կազմակերպուած եղեր են ցեղային, համայնական դեռնի վրայ եւ չեն ճանչցած անհատական սեփականութիւն: Այդ համայնքը, որ ամփոփուած էր Հոգմի մէջ, ունէր իր թագաւորը որ թէ զօրապետ էր, թէ կրօնապետ եւ թէ դատաւոր: Համաձայն աւանդական պատմութեան, Հոգմի հիմնադիրը եղած է Հոգմուլոս, կայէնի նման եղբայրասպան մը:

Կանխագոյն շրջանին, հոգմէացիները ունէին երկու դասակարգ, պատրիկները (ազնուականները) եւ պլեպեանները (ոսմիկները), որոնք իրարու հետ միշտ կռիւի մէջ էին:

Ազնուականները խոշոր հոգատէր գիւղացիներ էին, որոնք տիրացեր էին տիրապետող դիրքի: Ռամիկները մանր հողատէր գիւղացիներ էին, որոնք թէեւ ազատ բայց զրկուած էին քաղաքական իշխանութենէ: Այս երկու դասակարգերուն միջեւ գոյութիւն ունեցող հակառակութիւնը դասակարգային կռիւի գոյն չունէր, որովհետեւ երկուքին ալ նպատակը ուրիշ ցեղեր ստրկացնելով դանոնք շահագործել էր: Ռամիկները ազնուականներէն կը պահանջէին հաւասար իրաւունք եւ պատեհութիւն տնտեսական ու քաղաքական իշխանութեան համար: Ազնուականները, կոթեւած իրենց քաղաքական ուժին, սեփականացուցին պետական կալուածները, իսկ ոսմիկները, իյնալով դաժան պարտքերու տակ, աստիճանաբար զլորուեցան ստրկական ծառայութեան մէջ:

Ազնուականները սկիզբէն հասարակաց սեփականութեանց ժառանգորդներն էին. ի վերջոյ զրաւուած երկրամասերն ալ վերածուեցան հասարակաց հողերու, եւ այդ հողամասերուն ալ ժառանգորդները դարձան:

2. դարու սկիզբին (Ն. Ք.) հին ցեղական պայմանները այլափոխուեցան: Ազնուականները ջնջեցին «թագաւորական դիժը» եւ հաստատեցին ազնուականներու հանրապետութիւնը, ուր մեծահամբաւ պատրիկները իրենց տունին թագաւորներու իշխանութիւնը: Հանրապետութեան զլուխը կանդնած էին երկու հիւպատոսներ, որոնք կ'ընարէին արտակարգ պաշտօնեաներ Ֆինանսական եւ արձանագրութեանց գործերու համար: Հարկադիր պարագաներու տակ եւ վտանգի ատեն հիւպատոսներէն մին կ'որոշուէր որպէս ղեկաւոր միայն վեց ամսուան համար:

Հոգմէական այս երկու դասակարգերուն միջեւ շահերու հակառակութիւնը, որ թեթեւ էր «թագաւորական» շրջանին, խիստ ուժեղացաւ երբ Հոգմ իր դրացի երկիրները գրաւեց եւ զրաւուած երկրամասերը անցան ազնուականներու (պատրիկներու) ձեռքը: 494 թուականին (Ն. Ք.) ոսմիկները (պլեպեանները) այնքան վատ դրութեան ենթարկուեցան որ լքեցին իրենց բնիկ քաղաքը եւ քաշուեցան սուրբ լեռը, իրենց ազատ ու սեփական համայնքը հիմնելու համար: Ազնուականները, որոնք պատերազմի ատեն զինուորի պէտք ունէին, հարկադրուած զիջումներ ըրին ոսմիկներուն, թոյլատրելով որ անոնք ալ իրենց կողմէ նշանակեն երկու տրիբուններ (տաննակալներ), որոնց զործը պիտի ըլլար հանրաքուէով որոշումներ անցնել տալ ասանց օրինական իրաւասութեան: Բայց պատրիկեանները երբ իրենց արտաքին քաղաքականութեան մէջ յաղթանակներ ապահովեցին, աւելի բարեհաճ դարձան երկրի պլեպեաններուն հանդէպ, որոնք Գ. դարուն քաղաքական եւ տնտեսական կարեւոր նուաճումներ ունեցան: 367 թուականին (Ն. Ք.) Լիսինիուսի օրէնսդրութեամբ անոնք ազատուեցան իրենց պարտքերէն եւ իրաւունք ստացան զրաւուած երկրամասերէն իրենց համար բաժին վերցնել եւ մէկ պլեպեան հիւպատոս նշանակել: Այդօրինակ զիջումներ յաջորդեցին իրարու միջեւ որ 287 թուականին (Ն. Ք.) պլեպեանները պատրիկեաններու հետ հաւասար իրաւասէր դարձան տնտեսական եւ քաղաքական գործերու մէջ, որովհետեւ այդ շրջանին պատրիկեանները խտրական բոլոր ցեղերը ասին հպատակութեան տակ եւ Հոգմը դարձաւ Իսալիոյ տէրը:

Այսպէսով Հոգմ գլուխ հանեց ամբակուտ պետութիւն մը հաստատելու գործը, բան մը զոր յոյները չկրցին իրականացնել իրենց փիլիսոփաներով ու բանաստեղծներով:

Դասակարգերու այս միացումէն յետոյ երեւան եկաւ նոր ազնուականութիւն մը, որուն նպատակը եղաւ դուրս գալ ազգային սահմաններէն եւ զիմել աշխարհակալութեան:



ՀԱՄԱՇԵԱՐ ՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՈՒԾԱՐՔ

264—133 թուականներուն (Ն. Ք.) Հոովմ եղած էր աշխարհի ամենամեծ պետութիւնը: Այս կերպարանափոխութեան նպատակ էր անոր տնտեսական զարգացումը: Դրամը եւ շահարկութեան ընդհանուր ձգտումը փոխած էին մինչեւ այդ ատեն գոյութիւն ունեցող զիւղական տնտեսութիւնը: Պայթեցաւ ստալին փրենիկեան պատերազմը: Այդ ատենները Կարկեղոն Միջերկրաւանի վրայ ամենամեծ վաճառաշահ պետութիւնն էր, որ կ'ընէր հիւսիսային Արիւիկէի, հարաւային Ապանիոյ, Սարդինիայի եւ արեւմտեան Սիկիլիայի վրայ: Այդ պատերազմը, որ տեւեց 264—241 թուականներուն (Ն. Ք.), Հոովմի տուաւ Սիկիլիան եւ Սարտինիան, որով Հոովմէացիները լրջօրէն գնահատեցին ծովային ուժի կարեւորութիւնը: Անոնք շինեցին նաւատորմից մը որ մէկ կողմէ կը ծառայէր պատերազմի, միւս կողմէ՝ վաճառականութեան ընդարձակման: Կառուցուեցան խոշոր նաւաշինարաններ եւ երեւան եկան առեւտրական ընկերութիւններ:

Երկրորդ փրենիկեան պատերազմը (218—201 Ն. Ք.) կեանքի ու մահուան պատերազմ էր Հոովմի համար, որովհետեւ այս անգամ իր դէմ կեցեր էր Աննիբալի նման զինուորական մեծագոյն հանձարը, որ անսարակոյս կրնար վերջ դնել Հոովմի յաղթանակներուն, եթէ Կարկեղոնի ձերականոյր անշնորհ չվերաբերուէր այդ մեծ զինուորականին հետ:

Կարկեղոն անվերականգնելիօրէն կործանեցաւ երրորդ փրենիկեան պատերազմին (149—146 Ն. Ք.), որմէ յետոյ Հոովմէացիները տիրացան Յունաստանի, Փոքր Ասիոյ եւ Սպանիոյ: Ոսկի, արծաթ, թանկագին քարեր ու գերիներ լեցուեցան Հոովմի մէջ, եւ Հոովմ այդպիսով կորսնցուց իր հին զիւղացիական կենսունակ պետութեան Ֆիզիքական կազմը եւ ինկաւ բարոյական անկման վայրէջքին վրայ: Անոր քայքայումը դանդաղ էր, բայց անխուսափելի:

Պատերազմը նպաստեց կապիտալիստ վաճառականներու եւ առեւտրական ընկերութեանց աճման: Անոնք փոխառուութեամբ պետութիւնը ձգեցին հսկայ պարտքերու տակ: Փոխ տուին դրամ, պատերազմական պիտոյքներ եւ մատակարարեցին նաւեր: Այս փոխառուութեան փոխարէն անոնք զբաւի տակ առին պետական կալուածները եւ պարտուած երկիրներու հարստութեանց աղբիւրները, ու սկսան հարկեր հաւաքել եւ հողագործութեան համար զերիներ բազմացնել: Բայց Հոովմի կապիտալիստները այժմու եւրո-

պական կապիտալիստներու հետ պէտք չէ նոյնացնել: Անոնք աւելի աւազակային եւ վաշխառուական գործերով կը զբաղէին քան ճարտարարուեստի արտադրողականութեան զարգացման միջոցներով: Հոովմէական ռազմագաշտերուն վրայ թափառող բորենիներ էին անոնք, որ Հոովմի լէզէոններու գրաւած երկիրները կողոպտելով կ'ուզէին հարստանալ: Մերակուտականներն ու բարձրաստիճան պաշտօնեաները կողոպուտով կը պարսպէին: Պետական պաշտօնեաները, ամենաբարձրն սկսած մինչեւ ամենացածր, ինկան անասելի ապականութեանց մէջ: Մերակոյր նոյնիսկ կաշառքի սաարկայ դարձաւ: Հարուստները կաշառքով ձերակոյրին մէջ կը մըտնէին: Գիւղացիութիւնը, որ քայքայուած էր երկարատեւ պատերազմներու հետեւանքով, կամաց կամաց անհետացաւ մասամբ նուաճուած երկիրներէն ներմուծուած աման եղիպացորենի մըրցման չղիմանալուն պատճառով, մասամբ ալ նոր տեսակի հարուստներու երեւումով: Հարուստներ, որոնք մեծ հողատէրերու նմանիլ կ'ուզէին, զբաւելով փոքր հողատէրերու կալուածները: Հին ձեւի զիւղական աղարակները չքացան եւ անոնց տեղ անցան խոշոր տեսակի երկրագործական ձեռնարկութիւններ (լատիֆունտացներ), աւելի շատ արօտատեղիներ ու այգիներ:

Արտադրողական աշխատանքը աւելի եւ աւելի յանձնուած էր գերիներուն, մինչ անդին զիւղական եւ քաղաքային ազատ գործաւորները ինկան անկործութեան զիրկը եւ լեցուեցան Հոովմի մէջ: Կառավարութիւնը զանոնք կը կերակրէր հասարակաց եղիպացորենով եւ կը զուարճացնէր հասարակական խաղերով: Անոնք դարձեր էին բուհարկոյ արջաւներ:

Երկրի հարստութիւնը կեղրոնացած էր մի քանի մարդոց ձեռքին մէջ: 104 թուականին (Ն. Ք.) Հոովմէացի տրիբուն մը կը փաստէր որ ամբողջ պետութեան մէջ միայն երկու հազար հարուստներ գոյութիւն ունին: Այս դրութեան հետեւանքով ընկերային խոռվութիւններ ծնունդ առին, որոնք յայտնագործուեցան երկու անջատ գիծերով: Առաջին, զիւղացիներու վերահաստատման նպատակին ուղղուած բարեկարգութեան շարժումներ: Երկրորդ գերիներու ապստամբութիւններ:

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐՆԵՐ ԿՐԱՐՈՒՄ, ԿԱՏԱԼԻՆԱ ԵՒ ԿԻԿԵՐՈՆ

Գիւղացիական դրութիւնը բարեկարգելու գործը ստանձնեցին երկու եղբայրներու Հոովմէական հին ազնուականութենէն սերած, Տիրերիոս եւ Կայուս Կրաքուս: Տիրերիոս ժողովուրդի տրի-



բուն էր 134 թուականին (Ն. Ք.), որ աղքատ քաղաքացիներէն ընտրուած էր ժողովուրդին վիճակը բարւոքելու համար: Տարի մը վերջ ան արժատական բարեկարգութեան առաջարկ բերաւ ծերակոյտին: Պետական կալուածներէն եւ խոշոր հողատէքերու հողերէն պէտք էր բաժիններ հանել չքաւոր քաղաքացիներուն եւ պետութիւնը պէտք էր օգնէր անոնց հարկ եզած կենդանիները պահելու համար: Ազնուականները չէին կրնար համաձայնիլ իրենց շահերուն ջանջախիչ հարուած տուող այդ առաջարկին: Անոնք զայրացած բոլորովին մերժեցին նկատի առնել իրենց սեղանին բերած առաջարկը: Տիրերիոս ասոր վրայ ոտքի կանգնեցաւ եւ սկսաւ խօսիլ. «Խտալիոյ վայրի անասունները իրենց որջերը ունին հանգրստանալու, բայց այն քաջերը որոնք իրենց արիւնը կը թափեն իրենց հայրենիքին համար, օղէն ու արեւուն լոյսէն զատ ոչինչ ունին: Առանց տան, առանց հանդիստի, անոնք կը թափառին հոս ու հոն իրենց կիներուն ու երեխաներուն հետ, իսկ այն զօրապետները որ զանոնք կ'սիւն ճակատը տարած էին կուռելու, ծաղրանքով կը վերաբերուին անոնց հետ, որովհետեւ բանակի զինուորներուն մէջ մէկ հատ հռովմէացի չկայ որ ունենայ տաճար մը իր նախահայրերուն պատկանող, կամ գերեզման մը ուր թաղուած ըլլան անոնց աճիւնները: Անհատ զինուորները կը կուռին ու կը մեռնին մեծերուն հարստութիւնն ու պերճանքը բազմապատկելու համար, մինչդեռ իրենք կտոր մը հող չունին որուն վրայ կանգնին ազատ ու հպարտ մարդու պէս»: Անկէ յետոյ Տիրերիոս, իր առաջարկները քուէարկութեան դրուելու ատեն, երկար ճառ մը խօսելէ վերջ հարց դրաւ. «Եթէ հասարակութիւնը իր աստուածները ունենալու եւ զանոնք պաշտելու ազատութիւնը պիտի չունենայ, եթէ Հռովմի քաղաքացիները աւելի բարեկեցիկ պիտի չըլլան քան զերինները, եթէ քաջարի կուռողները իրենց արիւնը թափելէ զատ մարդկային իրաւունք պիտի չունենան, հապա ո՞ւր է ձեր արդարութիւնը եւ զուք ի՞նչ ուժով պիտի կրնաք պահել ձեր պետութիւնը»:

Տիրերիոսի ճառը այնպիսի խոր տպաւորութիւն թողուց ժողովականներուն վրայ որ ծերակոյտը հարկադրուած ընդունեց ներկայացուած առաջադրութիւնները: Բայց յետոյ մեծ դժուարութիւն յարուցուեցաւ զանոնք գործադրելու ճամբուն մէջ, որովհետեւ ազնուականները պիտի զրկուէին իրենց կալուածներէն նշանակելի չափով, եւ ինչ որ աւելի պէշ էր, անոնք պիտի կորսնցնէին իրենց բացարձակ եւ միահեծան իշխանութիւնը:

Տիրերիոս 132 թուին (Ն. Ք.) երբ նորէն արիքուն ընտրուե-

ցաւ եւ ուզեց իր ծրագիրը գործադրութեան դնել, ծերակոյտի կուսակցութեան անդամները, զինուած կացիներով ու մահակներով, սպաննեցին Տիրերիոսն ու անոր համախոհներէն շատերը: Այսուհանդերձ հողային բարեկարգութեան օրէնքը բոլորովին անգործադրելի չմնաց: 80 հազար գիւղացիներ ունեցան իրենց հողերը:

Տիրերիոսի գործը անախօրէն շարունակեց իր եղբայրը Կայուսը 123 թուականին (Ն. Ք.), երբ ան ընտրուեցաւ ժողովըրդական արիքուն: Ան օրէնք անցուց որ ամէն ամիս որոշ քանակութեամբ եղիպտացորեն յատկացուի ժողովուրդին պետութեան ծախսով: Ան նոյնպէս բարեկարգութիւններ ներմուծեց գատական գործերու մէջ: Անմիջապէս ձեռնարկեց երկար ճամբաներու շինութեան անգործներուն գործ հայթայթելու համար, եւ ջնջեց իշխող դասակարգի առանձնաշնորհումները: Բայց Կայուս ալ իր գործը զլուսի չկրցաւ հանել: Ան հազիւ թէ գործը զլանի վրայ հանած էր, երբ սպաննուեցաւ 121 թուին:

Հռովմէական կեղծաւորութիւնը իր ցայտուն ապացոյցը տուաւ երբ Տիրերիոսի եւ Կայուսի սպաննուած տեղին վրայ հռովմէացիները հիմնեցին համաձայնութեան տաճարը:

Հակառակ, սակայն, այդ համաձայնութեան, զերիններու արիւնահեղ ապստամբութիւններ երեւան եկան եւ շուտով անոնց յաջորդեցին քաղաքացիական պատերազմներ: 100 թուականին (Ն. Ք.) այսպէս կոչուած դեմոկրատ Մարիուսը, գործիք զառնալով սպաննեց 50 ծերակուտականներ եւ հազար ասպետներ: Իր հակառակորդը, Սիլղա 82 թուին (Ն. Ք.) սպաննեց 50 ծերակուտականներ եւ 1600 ասպետներ: Անոնց բոլորին կալուածները բռնագրաւուեցան: Սիլղայի կալուածներուն արժէքն էր 4 միլիոն լիբրա ստերլին:

73 թուականին (Ն. Ք.) պայթեցաւ Մպարտակուսի ապրտամբութիւնը (Մպարտակուսի մասին կը խօսինք այս հատորի Գ. Մասին մէջ առանձին բաժինով):

Այս խառնակ պայմանները պատրաստեցին այն վառելանիւթերը որոնցմէ յառաջացաւ Կատալիւնայի ապստամբութիւնը 63 թուականին (Ն. Ք.): Հռովմէացի պատմարան Մալուստ, որ իրերը պատկերացուցած է պահպանողական տեսանկիւնով, այնպէս կը կարծէր թէ Հռովմի ժողովուրդը այդ առեւնները ենթարկուած էր ողբալի մտայնութեան: Ան կը գրէ. «Հռովմ իր բազուկները երկարած էր ամէն տեղ եւ իրեն հպատակեցուցեր էր ամէն երկրամաս: Հոն զիլղուած էր հարստութիւն: Կար երեւութական հանդարտութիւն մը, բայց քաղաքացիներ կային որոնք լծուած էին իրենց հայ-



րենիքի կործանումը փութացնելու գործին: Մերուկոյտը երկու հրովարտականեր հրապարակած էր, որոնցմով հսկայ վարձատրութիւններ կը խոստանար անոնց որոնք դաւադիրները կը մատնէին արդարութեան ձեռքը: Ինչ ըսել սակայն որ ոչ մէկ մարդ կատալինայի բանակատեղին չլքեց, ոչ մէկը դաւադիրները մատնելու փորձ չըրաւ: Դաւադրութիւնը որպէս համաձայնակ ախտ գրաւած էր բազմաթիւ քաղաքացիներու հոգին: Եւ այդ ապականութիւնը սահմանափակուած չէր միմիայն դաւադիրներու շրջանակին մէջ, այլ ամբողջ ժողովուրդին մէջ, որոնք կը սպասէին յեղափոխութեան եւ համակիր էին Կատալինայի դաւադրական գործունէութեան»:

Այսպէս ուրեմն, կրնանք ըսել թէ այդ ատենները մասսաներու արամազրութիւնները յեղափոխական էին: Բայց պատմաբանները Կատալինան, յեղափոխական շարժման առաջնորդը կը ներկայացնեն որպէս աշխարհի պատմութեան ամէնէն սարսափելի հրէշը:

Պոլտարքոս իր Թէսէոսի կենսագրութեան մէջ ուրիշ կերպով կ'արտայայտուի: Ան կը գրէ. «Իրապէս վտանգաւոր էր մէկու մը համար ատելի ըլլալ երկրի մը մէջ, ուր ծագկած էր հռետորութիւնն ու բանաստեղծութիւնը: Կատալինայի դժբախտութիւնը այն էր որ իր ղէմ կեցած էր իր քաղաքական տեսութեանց ու անձնականութեան թշնամի Կիկերոնը, բոլոր դարերու մեծագոյն հռետորը: Իրարու հակադիր երկու կերպարներ, որոնք նոյն միջավայրին մէջ քով քովի չէին կրնար ապրիլ: Կատալինան Հռովմի ամենաբարձր անուակախութենէն սերած էր, իսկ Կիկերոնը ստորին խաւերէն բարձրացեր էր վեր: Առաջինը պաշտօնեայ մըն էր որ անօրինակ քաջութեամբ կը ներկայացնէր պետութեան ճնշուած դասակարգի դատը, երկրորդը փաստաբան մըն էր որ կը ներկայացնէր միջին դասակարգը եւ կ'ուզէր պահպանել իր ընդարձակելու աստի սեփականատիրութիւնը: Այս երկուքը իրարու ճակատեր էին 63 թուականին (Ն. Ք ) որպէս հիւպատոսութեան թեկնածուներ, Կիկերոն՝ որպէս ներկայացուցիչ սեփականատէր դասակարգին, իսկ Կատալինա՝ որպէս բարեկարգիչ եւ առաջնորդ իրաւազուրկ դասակարգին, առաջնորդ մը որ կ'ուզէր հողերը բաժնել հողատիրներու միջեւ, պարտքով ծանրաբեռնուածները ազատել իրենց պարտքի բեռէն, պետութեան ֆինանսին վրայ հաստատել վերահսկող, կշռադատ մարմին մը, ժողովրդական զանուածներուն բարօրութեան նպաստող միջոցներ ստեղծել եւ զանոնք խթանել ու Հռովմի հպատակեցուցած երկիրներու ժողո-

վուրդներուն աղատութիւն տալ դարգանալու եւ յառաջդիմելու համար:

«Բայց Կիկերոն ի՞նչ կը մտածէր այդպիսի հարցերու շուրջ: Այս հարցման պատասխանը կը գտնենք իր Պարտաւորութիւններ անուն գրքին մէջ, ուր ան կը գրէ. «Անոնք որ կը փախաբին ժողովրդական մարդ դառնալ եւ ասոր համար ալ կը փորձեն հողային բարեկարգութիւններ ընել, անոնք կը հետամտին իրականացնել արտառոց ծրագիր մը, որ կուզայ հողատէրերը սեփականագրել եւ պարտատէրերու պարտքերը ջնջել: Անոնք այդպիսով սահմանադրութեան հիմքերը կը քանդեն, որովհետեւ այդ սահմանադրութեան օրէնքներուն վրայ է որ կանգուն կեցած է մեր պետութիւնը ու անոր զեկալար քաղաքը՝ Հռովմը: Այժմ, ինչպիսի արդարութիւն է որ դարերէ ի վեր իրենց արեամբ զնած հողերը հողատէրերու ձեռքէն զրաւենք ու բաժնենք աշխարհներուն որոնք ոչ մէկ իրաւունք ունին այդ հողերուն վրայ: Անոնք կրնան վարձակալ ըլլալ եւ աշխատիլ ու վայելիլ իրենց աշխատանքի բաժինը, բայց զանոնք հողատէր դարձնել ամբողջապէս կը խախտէ պետութեան խարխիւր կազմող ներդաշնակութիւնը: Լակեղիմօնացիները հետեւեցան այդ կործանարար սկզբունքին եւ ի՞նչ եղաւ անոնց հաստատած դրութեան հետեւանքը. կործանում: Ո՞ր արդարութիւնն է որ կը հրամայէ առանց ծախսի, առանց վճարումի, բնակիլ ուրիշի մը կառուցած տան մէջ: Ես տան մը ատաղձները պիտի գնեմ, տուն պիտի շինեմ, նորոգութիւններ պիտի ընեմ եւ դուք զիս բռնի դուրս պիտի հանէք եւ ատենս պիտի տաք մէկու մը որ նոյնիսկ չի զիտեր թէ ես որքան աշխատեմ, որքան յոգնեմ եւ ինչքան եմ ծախսեր այդ տան համար: Ի՞նչ է ասոր իմաստը: Պետութեան մէջ դժգոհներ կան, բայց ովքե՞ր են այդ դժգոհները: Մոյլիք ու երազատեաներ որոնք առանց իրաւունքի եւ առանց սահմանադրական օրէնքի իրաւատէր դառնալ կ'ուզեն: Այժմ բարեկարգիչները այդ դժգոհները հաճոյացնել կ'ուզեն եւ օրինական իրաւատէրերը կը դարձնեն դժգոհներ: Ասո՞վ պիտի պահպանուի ընկերային ներդաշնակութիւնը: Ի՞նչ է իմաստը երբ դուք պարտքերը կը ջնջէք եւ իմ դրամով կալուած մը կը գնէք եւ ինձի կ'ըսէք որ ես իմ դրամը վերստանալու իրաւունք չունիմ»:

Այս գաղափարները արտայայտելով Կիկերոն երբ հիւպատոս ընտրուեցու, անմիջապէս, ի հիճուէս Կատալինայի, սկսաւ կռուիլ օրէնքի, կանոնի եւ սեփականատիրութեան պաշտպանութեան համար: Այդ գծով ան գործածեց իր լուազոյն ղէնքերը, հռետորութիւնը եւ ամբոխավարական Ֆրաղները: Ան չքաշուեցաւ նոյնիսկ



իր հակառակորդները որակել որպէս բարոյադուրի, անպարկեշտ եւ անպատիւ արարածներ: Կատալինայի կերպարը ներկայացնող Կիկերոնի գծած ծագրանկարը փոխանցուեցաւ սերունդէ սերունդ: Հռոմէացի պատմաբան Սալուստ, պահպանողական հայրենասէր մը որ երկու ասանեակ տարիներ յետոյ սկսաւ գրել, հետեւեցաւ Կիկերոնի: Նոյնիսկ Պլուտարքոս եւ Ապպլեան, որոնք յունարէն կը գրէին, երբեք փորձ չըրին արդարացնելու Կատալինան: Այսուհանդերձ այսօր ստույգ է որ Կատալինան եղած է զրկուած ու ճշուած մաստաներու քաջարի եւ անզիջող սուսնորդը: Կատալինականներու ոգին կը պարզուի այն նոսմակով զոր անոնց զինուորական հրամանատար Մենդիտորը զրկած է հռոմէական զօրավար Մարկիոսի, ուր ան գրած է հետեւեալ տողերը. «Մենք չենք պահանջեր հարստութիւն, մենք չենք ուզեր տիրակալութիւն որ ազգիւրն է աշխարհի բոլոր կոխներուն ու պատերազմներուն: Մենք կ'ուզենք ճշուածներու ազատութիւնն ու անոնց իրաւանց հաւասարութիւնը»:

Կատալինա երկու անգամ հիւպատոսութեան իր թեկնածութիւնը դրաւ, որպէսզի օրինական իշխանութիւն ունենայ քաշելու գիշատիչ ակռաները մի քանի պաշտօնակարներու որոնք պետութեան սեփականատէրերը զարձեւ էին, եւ անկէ յետոյ ան պիտի վերահաստատէր ժողովուրդի ազատութիւնն ու իրաւունքները: Ընտրութեան առեւ կարգ-կանոնի կուսակցութիւնը յաղթեց, եւ Կատալինա պարտուեցաւ: Երբ օրինական դոնորը փակուեցան, Կատալինա ստիպուեցաւ գիմել ապստամբութեան եւ սկսաւ պատրաստել դժգոհներու բանակը: Կիկերոն, Կատալինայի անհաշտ ու յաղթական թշնամին, ամէն տեղ լրտեսներ ունէր եւ գիտէր որ ան մեկներ էր գիւղական շրջանները ներդրուելու հռոմէական բանակի զինուորները:

63 թուականին (Ն. Ք.), Դեկտեմբեր 5-ին ապստամբութեան պատրաստութիւնները երեւան հանուեցան Հռոմի մէջ, եւ առաջնորդները դատապարտուեցան մահուան: Կատալինա իր զօրքերուն հետ պարտուեցաւ 62 թուականին, Ֆլորէնտէն քիչ հեռու: Հռոմէական զօրքերը գերակշիռ էին թէ թիւով եւ թէ ուղղամիտքով: Կատալինա եւ Մենդիտոս սպաննուեցան այդ պատերազմին մէջ:

Ապականուած սակաւապետական հանրապետութիւնը արագօրէն կը գիմէր իր անկումին: Կատալինայի մահէն երկու տարի յետոյ Հռոմ ողջունեց Պոմպէոսի, Կրասոսի եւ Յուլիոս Կեսարի զինուորական եռապետութիւնը: Զինուորական միապետութիւնը սկսած էր բաղխել հռոմէական աշխարհածաւայ կայսրութեան դռները:

ԳԵՐԻՆԵՐՈՒ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երկրորդ փրենիկեան պատերազմէն (201 Ն. Ք.) եւ մակեդոնացիներու եւ սուրիացիներու դէմ մղուած յաղթական պատերազմներէն յետոյ խոշոր հողաշերտերու վրայ մշակութեան գործը աւելի ընդարձակուեցաւ գերիներու բազմացումով: Եւ որովհետեւ ազգային անտեսութիւնը յոռաջ կը տարուէր կապիտալիստական դժով եւ հռոմէացիները, որպէս աշխարհի տիրակալներ կ'արհամարհէին աշխատանքն ու սեփականագուրկ դասակարգը, անազատ գործաւորի վիճակը աւելի եւ աւելի տաժանելի դարձաւ: Գրեթէ բոլոր արդիւնաբերական եւ տնական աշխատաւորները գերիներ էին: Անազատ գործաւորներ, թիւով անհամար, կը ծառայէին չքեղ պալատներ ու զգեսակներ կառուցանելու գործերուն մէջ: Ազնուականներու խարազաններուն տակ լեռները դաշտերու կը վերածուէին եւ ճահիճները՝ հաճոյալի լիճերու:

Մեզի ծանօթ հին աշխարհի բոլոր մասերուն մէջ շարունակական պատերազմները հարիւր հազարաւոր գերիներ կը նետէին հրապարակը, բայց նոյն առեւ այդ գերիները չէին կրնար դոհացնել հռոմէական տէրերու բազմազան կարիքները: Ատոր հետեւանքով կազմակերպուեցաւ մարդորսութիւնը: Առեւանգումներ եւ բռնի ստրկացումներ յաճախակի դարձան գերետիրական շուկայի պահանջը դոհացնելու համար: Հռոմ զարձեւ էր աշխարհի երեք չորրորդ մասի բռնակալը:

Գերիներու հանդէպ անմարդկային վերաբերմունքը հետզհետէ սոսկալի կը դառնար: Ատոր համար գերիները սկսան անհանգստութեան նշաններ ցոյց տալ եւ պատահութիւնը ներկայացած պահուն՝ կուռիլ: Գերետէրերը որպէսզի տրոյնէին գերիներու փախուստը, զանոնք հրաշէկ երկաթով կը տաղէին եւ շղթաներով կը կապէին իրարու: Փախչող գերին երբ բռնուէր, իսկոյն խաչը կը հանուէր: Որոշ շնորհներու կ'արժանանային այն գերիները որոնք կը զանազանուէին իրենց Ֆրիգիական ուժով: Հռոմէացիները ասոնք ալ կը վարձեցնէին սուտերամարտութեան, որպէսզի անոնք կրկններու մէջ զլրար խողխողեն, հռոմէական սմբոխը, ազնուականներն ու ոսմիկները զուարճացնելու համար:

Կրթուած պատերազմական գերիներն ու պատանդները, սովորաբար յոյներ եւ սուրիացիներ որոնք զբաղէր կամ առուստերի վարժ մարզիկ էին, կ'առնուէին ազնուականներու անական ծառայութեան եւ անոնց կը յանձնուէր ուսուցիչի կամ գործակատարի պաշտօն, որով օր մըն ալ կը դառնային ազատագրուած մարզիկ եւ կը խառնուէին Հռոմի հաճոյասէր ամբոխին հետ:



Մէկ կողմէ գերիններու այս կեդրոնացումն ու բազմացումը, միւս կողմէ այն մասնաները որոնք ենթարկուած էին ամենատուր ատելութեան ու տանջանքի, շատ բնական էր որ իրերը պիտի տանէին ապստամբութեան ճամբան:

Այստեղ պէտք է ըսել որ Հոովմի աղետականութիւնն ու պաշտօնատարութիւնը կ'արհամարհէին յոյները եւ զուր տեղը կ'աշխատէին չէզոքացնել անոնց ազդեցութիւնը հոովմէական քաղաքակրթութեան վրայ: Անշուշտ բացառութիւններ կային, բայց անհասարակ Հոովմի տիրող դասակարգը կ'ատէր հելլէնիզմը, որովհետեւ մէկ քանի ապստամբութեանց առաջնորդներն էին յոյները: Իտալական գերիններու առաջին ապստամբութիւնը պայթեթեցաւ Ապուլիայի մէջ 187 թուականին (Ն. Ք.), որ շուտով զբուսեցաւ: Եօթը հարար գերիններ խաչը հանուեցան:

Անհամեմատօրէն աւելի արինահանգ ապստամբութիւններ ծագեցան Սիկիլիոյ մէջ 134-132 եւ 104-101 թուականներուն (Ն. Ք.): Այս բերքառատ կղզին սորկական աշխատանքի բնդարձակ դաշտ մը կը ներկայացնէր: Հոնտեղի պետական կալուածները վերածուած էին շահագործուելիք վարձու մշակութեան: Վարձակալները անխղճօրէն կը շահագործէին գերիններու աշխատանքը: Հոն կային եղիպտացորենի բնդարձակ արտեր, ձիթենիի տնկարկութիւններ եւ անհամար ոչխարներու հօտեր: Գերինները խարաղանի հարուածներու տակ կը մշակէին հողը, հող կը տանէին ծառերուն եւ կը պահէին ոչխարներու հօտերը, անօթի, կիսամերկ ու կմախացած, եւ այդպիսով Սիկիլեան գարձուցած էին Հոովմի շտեմարանը: 134 թուին (Ն. Ք.) հոն պայթած ապստամբութիւնը վերածուեցաւ երկարատեւ պատերազմի: Ապստամբներու առաջնորդներն էին սուրբացի Էնուսը եւ մակեդոնացի Քլէոնը, որոնք կրցին կազմակերպել 70.000 կռուողներ եւ զրեթէ ամբողջ կղզին առին իրենց իշխանութեան ներքեւ: Մի քանի տարի անոնք մնացին անառիկ իրենց զիրքերուն վրայ: Բայց վերջի վերջոյ տեղի աուին, որովհետեւ հոովմէացիք պաշարած էին կղզին եւ անդադար կը հարուածէին ապստամբներու զիրքերը: Այս գէպը տեղի կ'ունենար այն ատեն, երբ Կրաքոսը նուիրուած էր զրդօիչ պրօպականդի Հոովմի մէջ:

Միւս սիկիլեան ապստամբութիւնը նոյնպէս տեղի ունեցաւ 104 թուին, սուրբացիի մը առաջնորդութեամբ, որուն անունն էր Սալվիուս: Անոր ընկերակիցն էր մակեդոնացի Աթինիան: Հոովմէացիները դարձեալ յաղթական դուրս եկան եւ ճնշեցին ապստամբութիւնները երբ երեք տարի վերջ կռիւի ընթացքին սպաննուեցան անոնց ղեկավար առաջնորդները:

Կրաքոսան գործունէութեան շրջանին պայթեցան ուրիշ ապստամբութիւններ: Նոյնիսկ Փոքր Ասիոյ մէջ, թէ սեփականատէր դասակարգերը եւ թէ գերինները միասնաբար ապստամբեցան հոովմէական տիրապետութեան դէմ: 133 թուականին (Ն. Ք.) Ատալոս Գ. թագաւորը մեռաւ Պըրկամոսի մէջ, տկարամիտ եւ վաշտուէր միապետ մը որ ինկած էր հոովմէական ազդեցութեան տակ:

Բոնի ուժով եւ կամ խարդախութեամբ հոովմէացիները այս թագաւորէն առին կտակ մը, որով անիկա Հոովմի կը թողուր իր կալուածներն ու ամբողջ երկիրը: Ատալոսի մահէն յետոյ Պըրկամոսը փոխուեցաւ կատարեալ դեմոկրատական երկրի մը: Բոլոր բնակիչները, բնիկ թէ օտարական, սեփականատէր թէ ընչազուրկ, ստացան իրենց առանձնաշնորհումներն ու իրաւունքները եւ իրենց պետութիւնը եզաւ անկախ ու բարդաւած: Հոովմէացիները, սակայն, երբ մտան հոն, հիմնապէս փոխեցին զրութիւնը եւ սկսաւ անիղճ շահագործումը: Ասով երկրին մէջ պայթեցաւ ապստամբութիւն մը, առաջնորդութեամբ Ատալոսի խորթ եղբոր Արիստոնիքոսի, որ կ'ապրէր Լուքայի, Իզմիրի մօտ փոքրիկ նաւահանգիստ քաղաքի մը մէջ: Մի շարք քաղաքներ միացան ապստամբներուն: Միայն Եփեսոսն էր որ անցաւ հոովմէացիներու կողմը: Մայր տըւաւ պատերազմը, որու առաջին շրջանին Արիստոնիքոս պարտուեցաւ: Բայց շուտով ան նորէն հրապարակ ելաւ որպէս գերիններու ազատարարը եւ զօրակոչէր հրաւեր կարգաց բոլոր գերիններուն եւ անազաա գործաւորներուն կռիւի ելլել հոովմէացիներուն դէմ: Բազմաթիւ գերիններ ու բանուորներ հաւաքուեցան իր շուրջը եւ ինք անոնցմով հիմնեց արեւի քաղաք մը, կամ արեւի պետութիւն մը (Հելենպոլիս): Ի՞նչ էր անոր հիմնական սկզբունքը, այնքան պարզ չէ: Պատմական արձանագրութիւնները որոշ բան մը չեն ըսեր: Միայն այսքանը որոշ է որ անիկա տեսակ մը կոմունիստական հասարակութիւն էր, ուր արեւ պետութեան քաղաքացիները այլեւս գերիններ չէին պահեր: Անոնք ազատ քաղաքացիներ էին եւ միասնական ճակատով յաղթական կռիւներ կը մղէին հոովմէական պետութեան դէմ: Հոովմէացիները, վիրաւորուած արժանապատուութեամբ կը վախճային որ պիտի կորսնցնէին հարուստ ժառանգութիւն մը: 131 թուին (Ն. Ք.) Հոովմ իր վարժ լէզէոններով հիւպատոսի մը հրամանատարութեան տակ պաշարեց երկիրը չորս կողմէն եւ սկսաւ հարուածել: Պատերազմը տեւեց երկու տարի: Արեւ պետութեան քաղաքացիները ճակատեր էին աշխարհի մեծագոյն պետութեան բանակներուն եւ կը կռուէին հերոսաբար: Յաղթութեան յոյս չկար, սակայն: Արիստոնիքոս պարտուեցաւ չար-



չար եւ 129 թուին հոովմէացիները բոնեցիի գինքը, տարին Հոովմ, ուր ան գլխատուեցաւ առանց ժողովրդական դատաստանի:

Այսպիսով վերջացաւ Հոովմը սարսափեցնող ապստամբութիւնը:

ԸՆԶԱԶՈՒՐԿՆԵՐՈՒ ՈՂԲԵՐԳՈՒՆԵՐԸ

Ընկերային ուժերու դարգացումը աւելի շեշտուեցաւ Հոովմի հանրապետական շրջանի վերջաւորութեան մօտերը: Հոովմէական լէզոններու մղած կռիւներէն ու պաակերազմներէն օգտուեցան մեծ հողատէրն ու մեծ կապիտալիստը, որոնք կախնած զինուորական ուժին, դուրս եկան որպէս իրական յաղթականներ Հոնոսէն մինչեւ Եփրատ, Դանուբէն մինչեւ Սահարայի անապատները: Յուլիոս Կեսար, ասեռօք Կատալինայի գաղանի բարեկամը որ վերջը յաղթական զօրավար դարձաւ, ներշնչուած ընկերային միապետութեան դափնին խելու երազով, փորձեց Հոովմի եւ Իտալիոյ մասսաները բարձրացնել, վերակազմել զաւառները եւ բժշկել այն վերքերը որոնք յառաջացեր էին խոշոր հողատիրութենէն եւ մեծցած կապիտալէն: Բայց իր բոլոր բարեկարգութեան փորձերը զիկտատուրական բնոյթ ունէին: 44 թուի (Ն. Ք.) Մարտ 15-ին ան սպաննուեցաւ: 13 տարի յետոյ հոովմէական աշխարհը եղաւ միապետութիւն: Օգոստոս հռչակուեցաւ առաջին հոովմէական կայսր (31-14 Ն. Ք.):

Քաղաքական վերելքի այդ տարիները կը ներկայացնեն քաղաքակրթութեան բարձր շրջանի այն աստիճանը, որ յատուկ էր հոովմէացիներու անտեսական-ընկերային կեցութեան արդիւնք կարողականութեան: Այս շրջանին նշանաւոր բանաստեղծները եղան Վերգիլիոս (70-19 Ն. Ք.), Օվիոս (43 Ն. Ք. — 9 Յ. Ք.) եւ Հորաս (65-8 Ն. Ք.): Մարուստ եւ Լիվի պատմարաններն ալ սոյն շրջանին կը պատկանին: Ասոնք ցոյց կուտան լատին քաղաքակրթութեան ծայրակէտը: Ասիկա նոյնպէս այն շրջանն է ուր աշխարհի նոր կրօնքին, քրիստոնէութեան տարրերը հաւաքուած էին ժողովուրդի ստորին խաւերուն մէջ Պաղեստինի եւ Ադեքսանդրիայի ուսումնականներու պրօպագանտով:

Բայց պէտք է ըսել թէ ընկերային-անտեսական տեսակէտէն ոչինչ փոխուած էր հոովմէական աշխարհին մէջ: Իտալիան ունէր ընդարձակածաւալ վարձու հողեր, որոնց վրայ կ'աշխատէին գերիները: Գաւառները, ինչպէս նաեւ Ասիոյ եւ Աֆրիկէի մէջ զբրկուած էին հարկատու ֆարմըրներ, որոնք լայն հողեր ստանալով անդթօրէն կը շահագործէին հողի իրական աշխատւորները: Բը-

նակչութիւնը կը նուազէր, ընդհանուր պարտաւորիչ ծառայութիւնը յառաջ կը տարուէր բանակներու հրամայողականութեամբ: Եւ երբ մեծ պատերազմները դադրեցան, գերիներու թիւն ալ նուազեցաւ: Քայքայուած էր Հոովմի զիւղացիութիւնը: Քաղաքային պրօլետարիատի գրութիւնը նոյնպէս վատ էր: Հոովմ իր սահմանները ընդարձակելով անբուժելի վնասներ հասցուց ոչ միայն հոովմէացի եւ իտալացի գործաւորներուն, այլեւ իրեն հպատակեցուցած երկիրներու բնակչութեանց: Հոովմի սեփականազուրկ զիւղացիները կը թափառէին քաղաքէ քաղաք եւ իրենց գէմ կը դանչէին գերիներու մրցակցութիւնը: Ամէնէն մեծ հակազրութիւնը այն էր որ պարտուած երկիրներէն շատերը աւելի բարձր քաղաքակրթութեան հասեր էին քան Հոովմը: Փոքր Ասիան եւ Եգիպտոսը աէր դարձեր էին ճարտարարուեստի եւ արտադրողական ճիւղերուն, մինչդեռ ազատ հոովմէացիները շատ հեռու էին անոնցմէ եւ անկարող՝ ստեղծագործ աշխատանքի: Ինչպէս որ յոյները իրենց գերազանց մշակոյթով պարտութեան մասնեցին իրենց յաղթական տէրերը, այնպէս ալ Փոքր Ասիան եւ Եգիպտոսը փաստեցին որ իրենք աւելի զերիվեր են որպէս արտադրող քան հոովմէացիները: Հոովմ պարագիտ պետութիւն էր, սպառող էր, արտադրող չէր: Հոովմ ստեղծեց Ֆէոդալական պայմաններ, որով փոքր հողատէրերը անցան խոշոր հողատէրերու լուծին տակ: Ասով գերիներուն վրայ աւելցան ընչազուրկ թշուառները, բոլորն ալ լեցուած դժգոհութեան ու ապստամբութեան արամազրութիւններով: Բայց ինչ որ կը պակսէր անոնց՝ կշտազատ ծրագրով զանոնք առաջնորդող կուսակցութիւն մըն էր, որ մասսաները կազմակերպելով զանոնք տանելու էր յեղափոխութեան ճակատը: Իսկ Հոովմի ստեղծած դժոխային պայմանները չէին նպաստեր որ այդպիսի կուսակցութիւն մը հրապարակ իջնէր: Ասոր համար հոովմէացի զբողներու արտայայտութիւնները, միմիայն քննադատական գծով երազանքի մը ուղղուած, հեռու էին յեղափոխական բնութագրէն:

Ինչպէս Յունաստանի մէջ ընկերային բաժանումներու եւ պրօլետարական շարժումներու սուր շրջանին Պլատոններ եւ Արիստոֆանէսներ երեւան եկան, այնպէս ալ Հոովմի մէջ երեւան եկան լատին բանաստեղծներ ու մտածողներ, որոնք իրենց աչքերը ուղղեցին անցեալին, նահապետական կոմունիզմին, երբ մարդիկ կ'ապրէին պարզութեան, սպասութեան ու ներդաշնակ կեանքով: Այս բանաստեղծները կ'երազէին որ սակեղէն դարը մի օր պիտի վերադառնար եւ պիտի գատապարտուէր անհատական սեփականատիրութիւնը, շահադէտ առուտուրը, բանութիւնը եւ պատերազմը,



որով պիտի վերնար անհաւասարութիւնը, աղբիւրը թշուառութեան ու զրկանքի:

Սալուստ հառաչանք մը կ'արձակէ իր կառուցիմա զբքին մէջ, երբ կը յիշատակէ այն դարաշրջանը երբ մարդիկ արծաթին ու ոսկիին չէին երկրպագեր ու կ'ապրէին գոհունակ կեանք մը եղբայրական շրջանակի մէջ: Վերդիլիոս իր Գեորգի զբքին մէջ կը փառարանէ այն ժամանակաշրջանը, ուր ասկաւին կ'իշխէր Սատուրնոսը, ոչ թէ Ջեւսը, երկաթէ դարու աստուածը, որ մարդկութեան բերաւ խռովութիւն եւ վիշտ: Հոն Վերդիլիոս կը յայտնէ այն գաղափարը որ նահապետական կոմունիզմի ատեն երկրի հողը աւելի յուսթի էր եւ կը հայթայթէր մարդոց ինչ որ պէտք էր, եւ այդ ատանց աշխատանքի: Ասիկա մեզի կը յիշեցնէ դրախտի գաղափարը: Մարդիկ երբ սատանայէն խարուեցան ու ազահութեան զրգումով սկսան կուռիլ իրարու հետ, Սատուրնոսը բարկացաւ: Անկէ յետոյ երկրի մէջ բուսաւ փուշ ու աստասկ եւ աստուած հրամայեց որ մարդը ապրի իր քրտինքով ու շարաշար աշխատանքով: Վերդիլիոս կը յուսար որ այդ ոսկեղէն դարը նորէն պիտի գար եւ Սատուրնոսի թագաւորութիւնը պիտի հաստատուէր: Ահա թէ ինչու ան դրած է հետեւեալ հետաքրքրական տողերը. «Երկնային տիրերու վեհափառ զիծը անա կը սկսի իր նոր շրջադարձը: Հիմա ալլեւս Աստրա(1) ալսիւնը կը վերադառնայ. կը վերադառնայ նաեւ Սատուրնոսի թագաւորութիւնը: Այժմ մարդոց մէկ նոր սեւունդը վար կ'իջնէ երկինքի բարձունքներէն: Բայց անկէ առաջ Սատուրնոսի ոգիով կոյսը գաւակ մը պիտի ծնի, հրաշագործ գաւակ մը, որուն սաքերուն տակ երկաթը պիտի փոշիանայ եւ ոսկեղէն ցեղ մը պիտի երեւնայ ամբողջ աշխարհի մէջ»(2):

(1) Ադախին Աստրա (Աստղիկ) իրաւունքի աստուածուիին էր: Համաձայն հռովմէական դիցաբանութեան նա երկիրը քաղուց ու համբարձաւ երկինք, երբ սկսաւ երկաթէ դարը, սուրի դարը: Երբ այդ աստուածուիին վերադառնայ, պիտի սկսի իրաւատիրութեան ու արդարութեան նոր դարը, կամ ըսեմք՝ ոսկեղարը: Վերդիլիոս կը գուշակէր որ նա երկիր վերադառնալու է անպայման:

(2) Վերդիլիոս այս «գաւակը» նշելով ըսել կ'ուզէ իր պաշտպան եւ բարեբար փոլիոյի տղան, որ հռովմէացի հիւպատոս էր: Վերդիլիոս այս բանաստեղծութիւնը գրած է 42 թուականին (Ն.Ք.) ի պատիւ փոլիոյի, որուն յղի կինը մօտեցեր էր ծննդաբերութեան: Կաթոլիկ աստուածաբանները այս հովաներգութեան մէջ կը նշմա-

Հորասը նոյնպէս կ'երգէ «բարբարոսներու» պարզունակ կեանքը ու անոնց կոմունիզմը եւ կը դատապարտէ հարուստները: «Դաշտավայրերու սկիւթագիները աւելի երջանիկ են իրենց թափառող սայլերու բնակարաններուն մէջ եւ աւելի օրհնուած է յաղթանդամ զնշուն որ նշաններով դատորոշուած հողի վրայ չ'աշխատիր, այլ իր սնունդը կ'առնէ ազատ ծառերէն եւ ինքնաբոյս ցորենի հասկերէն: Անոր մեհեանին մէջ ամենամօտ ուլկիանոսէն կը հոսին գոհարներ, աղամանդ եւ ոսկի շարոցներ: Եւ ան չի ճանչնար ոչ սնունդի պահասութիւն, ոչ ալ անպատմելի թշուառութիւն»:

Շատեր կը կարծեն թէ Քրիստոս էր միայն որ եկաւ քարոզել սէր, եղբայրութիւն եւ ողորմասիրութիւն: Մենք Քրիստոսը եթէ պատմական եւ իրական անձնաւորութիւն դաւանինք իսկ, իր քարոզչութեանց մէջ նոր սկզբունքի մը նշանը չենք կրնար գտնել: Անոր բերանը զրուած խօսքերը խօսուած ու գրուած են իր ենթադրական ծնունդի թուականէն տարիներ առաջ, երբ հռովմէական կայսրութեան դաւաճներուն մէջ բարձրագոյն մարգարէներ կային, որոնք յուսահատ պայթող ու արեան մէջ խեղդուող ապստամբութիւններէն, կ'երազէին փրկելի մը գալուստը, ան ալ ոչ թէ տեսանելի երկրէն, այլ երազային երկինքէն:

Վեր առնենք, օրինակ, Սենեկան (4 Ն. Ք. — 65 Յ. Ք.), որ Հռովմի արտադրած մեծագոյն մտածողներէն մին եղած է: Ան կը փառարանէ մահուան օրը որպէս յաւիտենական կեանքի ծննդեան օրը որ կը տանի անդրշիրիմեան երանաւէտ կեանքի օրհնութեան: Ան ատոր համար եռանդազին կը յանձնարարէ բարեւարտութիւն, գթութիւն հանդէպ գերիներուն եւ նոյնիսկ սէր՝ հանդէպ թշնամիներուն: Այս տեսակէտով անոր մտային ուղեգիծը շատ մը կողմերով կը մօտենայ քրիստոնէութեան: Զարմանալի է, ուրեմն, որ կարգ մը եկեղեցական հայրեր կ'ենթադրեն թէ Սենեկան բարեկամ եղած է Պօղոս Առաքեալին: Այս ենթադրութիւնը, սակայն, բոլորովին անհիմն է: Սենեկան պարզապէս ցոյց կուտայ թէ ստոյիկեան բարոյական սկզբունքները կը հակէին այն ուղղութեան որուն կը հետեւէին հրեաներու սկզբունքները Պաղեստինի մէջ եւ յուճօհրէական քարոզչութիւնները՝ Աղեքսանդրիոյ մէջ: Միասնակա-

րեն մարգարէութիւն մը, որ կը վերաբերի Մարիամի եւ Յիսուսի: Յամենայն դէպս Վերդիլիոսի գրած այդ տողերը կը ցուցնեն քէ որոշ ծանօթութիւններ ունէր ան երրայեցիներու մեսիական գաղափարներուն:



նորէն անոնք հռովմէական կայսրութեան ընկերային, քաղաքական, անտեսական եւ մտաւորական դարգացման արդիւնք էին հանրապետական շրջանի վերջին դարուն եւ կայսերական շրջանի առաջին դարուն:

Ընկերային, անձնական ազատ կարգ ու սարքի, ներգաշնակ, բնական ու խաղաղ կեանքի ըզմանքը հորիզոնական գծով կ'ընթանար բարոյագիտական եւ կրօնական գաղափարներով հիւսուած այն բարձր հանդուանին հետ, որուն հասնիլ կ'ուզէր խորհող մարդոց իմացական հետախուզութիւնը:

Ձուտ հաւատքի կապուած մտրդկութիւն մը, երբ կ'երազէ ազնիւ, մարդկային եւ մաքուր բարոյականութեան վրայ հաստատուած գոյափիճակ մը, արդիւնքը կ'ըլլայ հրատարակուած վարդապետութեան հոգեպաշտութիւնը եւ աստուծոյ մը նուիրուած հաւատքը: Այս երեւոյթը մենք կը տեսնենք հրեայ մարգարէներու մօտ:

Անիճապէս երբ բարոյական լուսագոյն աշխարհի մը երազանքը ընդհանրացաւ հրեաներուն մէջ, իրենց նհովա Աստուածը կորսնցուց իր ազգային, տեղական ու Փիլիքեական բնոյթը եւ բարձրացաւ արդարութեան եւ իրաւունքի բաշխման համաշխարհային դիրքին: Ասով նհովայի ըմբռնումն եղաւ աւելի վերացական: Եւ այս երեւոյթը կրկնուեցաւ հռովմէական կայսրութեան ստեղծած հասկնալի գրութեան մէջ: Հին աստուածները կորսնցուցին իրենց վնհութիւնը: Մշակուած ուղեղի տէր մարդիկ ու կանայք դարձան ստոյիկեան բարոյական փիլիսոփայութեան ինչպէս նաեւ արեւելեան պաշտամունքներու կողմը: Եզրպտական եւ ասիական անթափանցելի խորհրդաւորութիւնները մեծ ազդեցութիւն գործեցին երեւակայութեամբ հարուստ հռովմէացիներու մտքին վրայ եւ հրեաներէն շատ համակիրներ հետեւեցան անոնց: Երեւոյթը նոյնն էր հելլէն շրջանակներու մէջ: Մովսէսի հինգ զիւրքերը յունարէնի թարգմանուեցան երրորդ դարուն (Ն. Ք.) եւ ծանօթ դարձան Հըմգալմառեան անունով: Յունօ-հռովմէական լայն տիրապետութեանց եղերական վերելքի շրջանին, երբ տեղի ունեցան Պոմպէոսի եւ Կեսարի հրահրած պատերազմները, ինչպէս նաեւ հռովմէական կայսրութեան մէջ ընկերային բոնկումներն ու ներքին կոխիւնները, ասոնք պատճառ եղան որ աւելի ազնիւ հոգիներ զիւրաւ սրգեզրեն նոր գաղափարներ եւ զգացումներ, որոնք արդիւնք էին մէկ մասով ժողովրդական մասսաներու գրգռութեանց, մասամբ ալ յունական եւ արեւելեան մտածողութեան ազդեցութեան:

Մարդկութիւնը այդպէսով կ'ընդառաջէր մտաւորական յեղաշրջման նոր դարաշրջանի մը բացումին, ըսել կ'ուզենք քրիստո-

նէական դարաշրջանի բացումին:

Բայց հոս տեղին է որ հարեւանցի ահնարի մը եւս նետենք հռովմէական կայսերական շրջանի ներքին կեանքին վրայ, որպէսզի ընթերցողը կարողանայ հասկնալ թէ յաջորդող պատմական դէպքերը ինչպէս օղակուած են իրարու հետ պատճառականութեան օրէնքով:

### ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔԻՆ ՈՒՐՈՒԱԳԻԾԸ

Հռովմի կայսերական շրջանին, ընկերային բոլոր հին կազմակերպութիւնները լուծուած, չբացած էին: Ամէն մարդ միմիայն ինք իր մասին կը մտածէր: Ընտանեկան, ինչպէս նաեւ քաղաքական կապերը փտած ու նեխած էին: Ձոհողութիւն ազգականի, համայնքի կամ պետութեան համար՝ հրաշքի կարգ անցնելու աստիճան բացառիկ երեւոյթ էր դարձեր: Որբացած փոքրիկները մասնաւորապէս ամէնէն շատ կը տառապէին յառաջացող այդ վատթար պայմաններէն: Առանց ծնողքի, անոնք բացարձակապէս թողուած էին իրենց բախտին ու մէկը չկար որ անոնց հոգատարութեան մասին մտածէր: Անպաշտպան երեխաներու թիւը ընդհանրացած չբաւորութեան հետեւանքով հետզհետէ կ'աւելնար: Մարդիկ ընտանիքը բեռ կը համարէին իրենց համար ու քայքայելով իրենց ընտանեկան յարկը կ'ազատուէին այդ բեռէն: Ծատ քիչեր կ'ամուսնանային: Պոռնկութիւնը հասարակական գործ էր դարձեր: Ծաղկեր էր նաեւ արուններու պոռնկացումը: Անոնք որ կ'ամուսնանային կը զգուշանային զաւակ ունենալէ: Այս բոլոր հանգամանքները բնականաբար կը նուազեցնէին աշխատաւորներու եւ երկրի բնակչութեան թիւը, եւ ատով ընդհանուր թշուառութիւնը կը խորացնէին աւելի եւ աւելի: Անոնք որ զաւակներ ունէին, առանց խղճահարութեան կը լքէին զանոնք: Երբ դրութիւնը զէչէն յոռեգոյնին գնաց, եղան մարդիկ որ սկսան հետաքրքրուիլ այդ ամէնէն հրատապ հարցերով, այսինքն ի՞նչ ընելու էր անսպաստան երեխաներուն համար, ի՞նչ ընելու էր ազբատ ծնողաց զաւակներուն համար: Տիրող դասակարգը կը տեսնէր վտանգը. երկիրը պէտք ունէր աշխատաւորներու, պէտք ունէր զինուորներու: Բնակչութեան նուազումով, կը նուազէր աշխատաւորներու եւ զինուորներու թիւը, ան ալ սոսկալի համեմատութեամբ:



ձիշղ է որ այդ ատենները քրիստոնեայ խմբաւորումներ սկսեր էին գաղանխ կազմակերպուիլ, բայց անոնք հոգեկան կապերով իրարու միացած, ոչինչ կրնային ընել ընկերային հրատապ հարցերու շուրջ, որովհետեւ անոնք, ընչադուրկ եւ հալածական մարդիկ, հետու էին յեղափոխական ուղեգծէն:

Տրայանոս կայսրը (52-117) որբերու հոգատարութեան համար մասնաւոր հիմնարկութիւններ հաստատեց: Իր յաջորդները աւելի խոշոր չափով հետեւեցան իր օրինակին: Միայն Հռովմի կայսրերը չէին որ կը մտածէին որբերու եւ կարօտ երեխաներու մասին: Մեծահարուստները եւս այդ ուղղութեամբ սկսեր էին մըտածել եւ գործնական քայլեր առնել: Հարուստ աիկին մը, Տիկին Մաքրինան, օրինակի համար, իր մէկ գաւիին մահէն վերջ մէկ միլիոն սխարէս (աւելի քան 50.000 տղար) նուիրեց պետական հաստատութեան մը որբերու հոգատարութեան համար: Եւ այստեղ պէտք չէ մոռնալ նշելու որ ասոնք քրիստոնեաներ չէին:

Այդ բոլոր հիմնարկութիւնները, սակայն, չէին կրնար կասեցնել կայսրութեան երկիրներու ընակչութեան նուազեցման ընթացքը, որ կապուած էր քայքայուող անտեսական պայմաններու հետ: Ընդհանուր թշուառացումը ոչ միայն որբերու հոգատարութեան նուիրուած հաստատութիւնները կը սնանկացնէր, այլեւ կը սնանկացնէր պետութիւնը:

Գերածող թշուառութիւնը որբտնտամ հաստատութեանց գանձը կը դատարկէր շուտով եւ զանոնք կը մատնէր անլործութեան, բայց ողորմասիրութեան ու զթութեան գաղափարը չէր կրնար մեռցնել: Այդ գաղափարը աւելի կ'ընդհանրանար երբ կը բազմանային թշուառներու սերունդները: Ողորմելու եւ զթալու գաղափարը, ուրեմն, քրիստոնէական գերագանց բարոյագիտութեան ծնունդը չէ եղած: Քրիստոնէութիւնը այդ գաղափարը իւրացուց եւ զայն դարձուց իր սկզբունքը, պետական կրօն դառնալէ յետոյ:

Շատեր կը փորձեն հաստատել որ ինչպէս ողորմասիրութիւնը, նոյնպէս եւ գերիներու հանդէպ մարդափարի վերաբերմունքի ջատագովութիւնը առաջին անգամ քրիստոնէութիւնն էր որ որպէս սկզբունք հրապարակեց եւ նպաստեց գերիներու ազատագրման: Սոյն հաւաստիացումը ընողները, կրօնի փաստաբաններ, չեն սիրեր ընդունիլ այն ճշմարտութիւնը որ քրիստոնէութիւնը պետական կրօնի դարձաւ պարզապէս իր ստրկացուցիչ բնոյթով: Քրիստոնէութիւնը սեւէ ատեն, սեւէ կերպով ընաւ ձգտում չէ ունեցեր պայքարելու գերետիրութեան դէմ: Պօղոս Առաքեալ ինք էր

որ յայտարարեց. «Ամէն իշխանութիւն կը բղխի երկինքէն», եւ յետոյ յորդորեց. «Ծառաներ, հնազանդ եղէք ձեր տէրերուն»: «Ծառաներ» անունին տակ պիտի հասկնանք գերիները: Եթէ քրիստոնէութեան տարածման ժամանակաշրջանին գերիներու շահագործումը զաղբեցաւ, ատոր պատճառը կապուած չէ քրիստոնէական կրօնքին հետ: Հռովմէական բանակները սկսեր էին հիւծիլ, քայքայուիլ, զինուորացուներ ճարելը հետզհետէ կը դժուարանար, պետութիւնը ատոր համար գերիները ազատագրեց որպէսզի անոնցմով ուժեղացնէր իր բանակները: Եւ եղաւ ատեն մը երբ պետութեան ամբողջ մեխանիզմը անցաւ գերիներուն ձեռքը:

Հռովմի կայսեր պալատականները գերիներ էին, որոնք այնքան մեծ աղղեցութիւն ունէին կայսեր վրայ որքան մայրաքաղաքի ազնուականութեան վրայ: Գերիները ասանկով ոչ միայն պետական հեղինակութիւն ստացան, այլեւ օրէնք եւ սովորութիւն դարձած չարաշահութեամբ եւ կողոպուտի միջոցներով հսկայական հարստութեան տիրացան: Բայց զիրքի ու հարստութեան տիրացած այս իշխան գերիները իրենց նախապէս պատկանած գերիներու դատակարգը բոլորովին շմոռցան: Ամէն կերպով աշխատեցան եւ զանոնք ազատագրեցին իրենց քաղաքական զիրքը ապահովելու համար: Այսպիսով, Հռովմի քաղաքացիները, որոնք ատեն մը աշխարհի տէրերն էին, խոնարհեցան գերիներուն առջեւ եւ կամովին թոյլ տուին որ գերիները կառավարութեան ղեկը առնեն իրենց ձեռքին մէջ:

Հռովմէական կայսրութիւնը ծագում առաւ խոշոր ստրկատէր արեւմտեցիկներու դէմ գեմոկրատի անուան մղուած պայքարէն, իսկ այդ գեմոկրատին իր մէջ առած էր մեծ մասով նախկին գերիները, որոնք օգնեցին կեսարներուն տիրանալու պետական գերագոյն իշխանութեան:

Բոլոր այս նպաստաւոր հանգամանքները աւելի կամ նուազ չափով բարեկամական զգացումներ ստեղծեցին Հանդէպ գերիներուն ոչ միայն Հռովմի պրօլետարիատին մէջ, այլեւ կայսերական արքունիքին մէջ. զգացումներ որոնց արձագանդը տուին պալատական փրկիտոսիաները, ինչպէս նաեւ փողոցի քարոզիչները:

Այս առթիւ մենք կրնանք երկար մէջբերումներ ընել, բայց կը բաւէ յիշել միայն Ներոնի անունը, անունը այն բռնակալին որ վրպական զթասրտութիւն ցոյց տուած է հանդէպ գերիներուն եւ ռամիկներուն: Ներոնի օրով (37-68), ծերակոյտը բաղկացած ըլլալով արիստոկրատներէ, անհաշտ թշնամական զիրք ունէր հանդէպ գերիներուն եւ ընդհանրապէս ազատագրուած մարդոց: 56



թուականին (Յ. Ք.), Հռոմի ծերակոյտը ուղեց օրէնք անցնել որ ազատագրուած գերիները վերադարձուին իրենց նախկին տէրերուն, մէկ խօսքով՝ խաբառ ջնջել գերիները ազատագրելու կամայականութիւնը: Ներոն բուն կերպով հակառակեցաւ այդ նախագծին, փաստելով որ ազատագրուած գերիներու մէջէն շատ ասպետներ դուրս են եկեր, նոյնիսկ ծերակուտականներ, եւ կոչ քրաւ որ պահպանուի հռոմէական հին սկզբունքը, որուն համաձայն մարդիկ ինչ դատաւարդի ալ որ պատկանած ըլլան, ազատութիւնը անոնց բոլորին իրաւունքը պէտք է նկատել: Ներոն այս ուղերձէն յետոյ առաջարկեց բանաձեւ մը, որ կ'արդիւնէր ազատագրուած մարդոց իրաւունքներուն զպչիլ: Ծերակոյտը իր վախէն տեղի տրուաւ եւ Ներոն քաղցուց իր կամքը:

Յ1 Թուականին, գրութիւնը աւելի վատթար հանգամանք ստացաւ: Պիտանիոս Աէքինտոս, քաղաքին նահանգապետը, սպաննուեցաւ իր գերիներէն մէկուն ձեռքով: Համաձայն արխատոկրատական հին օրէնքին, այդ ոճիրին պատիժը պիտի կրէին նահանգապետին ծառայող բոլոր գերիները. պէտք էր սպաննել ոչ միայն ոճրագործը, այլև Աէքինտոսի պալատին 400 գերիները, որոնց մէջ կային կիներ ու երեխաներ: Ժողովուրդին համակրութիւնը գերիներու կողմէն էր, բայց ծերակոյտը, առանց կարեւորութիւն տալու կողմնակի համակրական արտայայտութեանց, որոշում անցուց «մարդկութեան կեղտը մաքրել սուրի ծայրով»: Ներոն փորձեց արդիւն ալ չպիտի անդուլ ու անմարդկային որոշման մը դործադրութիւնը, բայց չյաջողեցաւ: Անիկա խոհեմութիւն համարեց տեղի տալ, որովհետեւ ծերակուտականները իրենց գլուխը կորսնցնելու չափ կատարած էին: Նահանգապետի պալատին բոլոր գերիները ոչխարի նման մորթուեցան:

Արխատոկրատները, քաջալերուած այս յաղթանակէն, ուղեցին ուրիշ օրէնք մըն ալ անցնել, որ էր Խտայիայէն արտաքսել բոլոր ազատագրուած գերիները: Ներոն բարկութեամբ ելաւ իր աթոռէն եւ յայտարարեց. «Թէեւ ներողամտութեամբ թոյլատրելի է հին օրէնքը ոտնակոխ րնել, բայց նոյն ատեն թոյլատրելի չէ որ այդ նոյն օրէնքը քմահաճօրէն չափազանցութեան տարուի»: Եւ Ներոն ջուրը ձգեց ծերակոյտի օրինադիժը:

Ներոն ստով ալ չբուսականացաւ եւ աւելի հեռուն գնաց: Ան մասնաւոր դատական ատեն մը հաստատեց գերետէրերու անգթութիւնները սանձելու համար: Նոյն այս կայսրը աշխատեցաւ վերջ տալ մահապատիժներուն: Ան կը պնդէր որ «ոճրագործը

պէտք է պատժել, բայց պէտք չէ սպաննել: Գործուած ոճիր մը ուրիշ ոճիրով մաքրել կարելի չէ»:

Այս մարդը, Ներոն, որ իր մայրն ու կինը սպաննեց, զարմանալի հոգեբանութեամբ աշխատեցաւ գերիներու վիճակը բարելաւել ու ոճրագործները մահապատիժէն ազատել: «Անօթիներուն ուտելիք տուէք», կ'ըսէր ան, «ծարաւին՝ ջուր, մերկին՝ հագուստ»: Ներոն ստահալ մըն էր թէ լաւ մարդ մը, դժուար է ըսել: Միայն պարզ էր որ ան իր բմբունած ձեւի մարդկային առաքիներութիւնը գործադրել կ'ուզէր:

Մենք նմանօրինակ տեղեկութիւններ ունինք նաեւ Տիրերիոս կայսրը մասին (Ն. Ք. 42 — Յ. Ք. 37): Աւելորդ է ըսել որ ոչ Ներոն, ոչ ալ Տիրերիոս կայսրը քրիստոնեայ չէին մկրտուած ու քրիստոնէութեան ազդեցութեան ենթարկուած չէին:

Բոյր այս իրողութիւնները ցոյց կուտան որ մարդասիրութեան, ողորմասիրութեան ու դժարատութեան մայրը քրիստոնէութիւնը չէ եղած: Վատթարացած տնտեսական պայմանները, պետական մեխանիզմի ազդեցութիւնը եւ ընկերային հաստատութեանց քայքայուածութիւնը, այս երեքին դուժարն էր որ յառաջացուց այնպիսի դոյալիճակ մը, ուր գերիները դաղբեցան աժամ ապրանք նկատուելի եւ մարդիկ սկսան ատել զինուորականութիւնը, ատել արիւնահեղութիւնը, որով հոգ պատրաստուեցաւ միջազգայնականութեան գաղափարի տարածման: Այստեղ դարձեալ պէտք է նշել որ այդ գաղափարը ծնողները քրիստոնեաները չեն եղած, այլ ստոյլիկեան փիլիսոփաները, իսկ Հռոմ իրացուց զայն ու գործնականացուց իր սեփական տնտեսական-քաղաքական ուղեգծով:

Երկու խօսքով բացատրենք եղածը:

Հռոմէական կայսերական շրջանին զարգացած էին հազորակցութեան միջոցները: Սքանչելի ճամբաներու սխառնով Հռոմ մը իրեն միացուցեր էր գաւառները եւ դաւառներն ալ միացուցեր էր իրարու հետ: Ծնորհիւ այս ճամբաներուն, Հռոմ իր գերիշխանութիւնը ամուր կը պահէր նուաճուած երկիրներու վրայ: Նոյնպէս շնորհիւ այս ճամբաներուն, վաճառականական հազորակցութիւնները զիրարնալով վաճառականութիւնն ալ զարգացած էր խոչոր չափերով: Ասկէ դատ, Հռոմ, չափերը, կշիռքներն ու գրամները միատեսակ դարձնելով կայսրութեան զանազան մասերու տնտեսական յարաբերութիւնները բերած էր միատեսակ զժի վրայ: Այսպիսով, Միջերկրականի եզերքը բնակող ժողովուրդները հարզհեաճ մօտիկցեր էին իրարու եւ տեղական մասնայատուկ յատ-



կանխնները գրեթէ կորսնցուցեր էին իրենց գատորուչի բնութա-  
 գիրը: Բայց պէտք է բնել թէ հռովմէական կայսրութիւնը չկրցաւ  
 ժողովրդական զանգուածները միաձուլել մէկ կաղապարի մէջ:  
 Այդ կայսրութեան սահմաններուն մէջ միշտ ալ նկատելի էին եր-  
 կու անջատուած կէսեր, մին արեւմտեանը՝ որ կը խօսէր լատինե-  
 րէն լեզուն եւ ունէր հռովմէականացնող ազդեցութիւն, միւսը ա-  
 րեւելեանը՝ որ կը խօսէր յունարէն եւ ունէր հելլէնականացնող ազ-  
 դեցութիւն: Եւ երբ Հռովմի աշխարհահեծան իշխանութիւնը ինկաւ  
 եւ Հռովմ կայսրութեան մայրաքաղաք ըլլալէ դադրեցաւ, այդ եր-  
 կու կէսերը բաժնուեցան թէ քաղաքական եւ թէ կրօնական դժերով:

Կայսերական շրջանի սկզբնական օրերուն, երբ կայսրութեան  
 միութիւնը երկիւղալի յարձակման ենթարկուելու հաւանականու-  
 թիւն չունէր, հպատակեցուած ազգերու եւ իշխող քաղաքին՝ Հը-  
 ոովմի միջեւ գոյութիւն ունեցող տարբերականութիւնները ջնջե-  
 լու հարցը հրատապ հարց էր դարձեր: Բայց երբ Հռովմի բնակ-  
 չութիւնը իր առնականութիւնը կորսնցուց, կեսարները ինքզինքնին  
 յանուն Հռովմի կայսրութեան իշխողները չէին նկատեր այլեւս:  
 Հռովմ, որ գաւառներու քրտինքովը կը սնանէր, անկարող էր իր  
 սեփական սպիւրներով հայթայթել բաւականաչափ զինուորներ ու  
 պաշտօնեաներ գաւառները լուրջ հսկողութեան տակ պահելու հա-  
 մար: Հռովմ կեսարներու կայսրութեան մէջ ուժի եւ իշխանութեան  
 կեդրոն ըլլալէ դադրած էր, եղած էր փտած տախտակ մը որուն  
 կարելի չէր կոթնիլ: Ինչ որ Հռովմը գաւառներէն կ'ստանէր, կե-  
 սարներուն չէր երթար, այդ իսկ պատճառով անոնք իրենց շահուն  
 համար ստիպուեցան ջնջել կայսրութեան մէջ Հռովմի առանձնա-  
 շնորհեալ դիրքը: Ահա այդ ատենն էր որ հռովմէական քաղաքա-  
 ցիութեան իրաւունքը վեհանձնօրէն բաշխուեցաւ գաւառներու բը-  
 նակիչներուն, որոնք հեղահեղ մտան ծերակոյտին մէջ եւ գրա-  
 լեցին բարձր պաշտօններ: Պարզ է, ուրեմն, որ կեսարները եղած  
 են առաջին անգամ գործնականացնողները այն սկզբունքին, որուն  
 համաձայն բոլոր մարդիկ հաւասար նկատուելու էին առանց ցեղի  
 ու ազգի խտրութեան, որովհետեւ բոլորն ալ հաւասարապէս հպա-  
 տակ էին իրենց եւ անոնց արժէք կը արուէր համաձայն իւրաքան-  
 չիւրին մատուցած օգտակար ծառայութեան, հոգ չէր թէ ան ծե-  
 րակուտական էր թէ գերի, Հռովմէացի էր թէ սուրիացի:

Երրորդ դարու առաջին քառսրդին ցեղերու հրազոդումը  
 այնքան տարածուած ու կատարելութեան մօտեցած էր որ Կալի-  
 գուլա կայսրը (Ն. Ք. 12 — Յ. Ք. 41) հռովմէական քաղաքացիու-  
 թիւն շնորհեց գաւառներու բոլոր բնակիչներուն անխտիր, եւ ա-

սանկով ջնջեց իշխողներու եւ հպատակներու միջեւ եղած նախկին  
 տարբերութիւնները: Եւ այս մարդը Հռովմի երրորդ կայսրն էր  
 որ իր շրջանին հրապարակաւ արտայայտեց սկզբունքը միջազգայ-  
 նականութեան, զոր սմանք կը վերագրեն քրիստոնէութեան:

Բայց հարց է թէ Կալիգուլա ի՞նչու այդ քայլը առաւ:

Այս հարցման պատասխանը պիտի փնտռենք այդ ատենուան  
 Ֆինանսական սոսկալի տաղնապին մէջ:

Հանրապետութեան ատեն, Հռովմի քաղաքացիները տուրք  
 չէին վճարեր, որովհետեւ զբաւուած գաւառներու կողոպուտով  
 պետական ծախսերը կը գոցուէին: Բայց երբ Օղոստոս կայսեր  
 օրով սկսաւ Ֆինանսական տաղնապը, քաղաքացիները կամաց կա-  
 մաց անցան հարկատուութեան լուծին տակ: Կալիգուլա կայսրը իր  
 «բարեկարգութեամբ» հռովմէական քաղաքացիները գաւառացիներ-  
 րու հետ նոյն ատիճանին վրայ դրաւ: Ամէն մի քաղաքացի սար-  
 տաւոր էր տուրք վճարել առանց խտրութեան, որովհետեւ կողոպ-  
 տելիք երկիր չէր մնացեր: Բացի այդ, անիկա աւելցուցեր էր բա-  
 նակի պիւտճէն մինչեւ 15 միլիոն տոլարի:

Ընդհանուր քայքայուածութիւնը ուրիշ ձեւի խթանիչ ազ-  
 դակ մըն էր տարածելու միջազգայնականութեան գաղափարները եւ  
 ջնջելու ազգային նախապաշարումները:

Հռովմի բնակչութեան նուազումն ու անպատմելի ապակա-  
 նութիւնը այնքան խորացած էին որ բանակին համար զինուոր չէր  
 կարելի ճարել, ոչ ալ յարմար զինուորական պաշտօնեաներ: Նոյն-  
 իսկ եղաւ ատեն մը որ հռովմէական կայսրերու արխատկրատական  
 ճիւղը գրեթէ ջնջուեցաւ: Նախապէս Հռովմի կայսրերը արխատկ-  
 րատ ընտանիքէ էին, յետոյ ռամիկները անցան անոնց տեղ եւ վեր-  
 ջէն՝ բարբարոս ցեղապետները: Այսպիսով կռապաշտական դարե-  
 րու ցեղային եւ զասակարգային տարբերութիւնները անհետացան  
 եւ մարդոց հաւասարութեան գաղափարը ինքնաբերաբար ծաւալե-  
 ցաւ հռովմէական կայսրութեան բոլոր անկիւնները: Այս առթիւ  
 կ'արժէ նշել Կիկերոնի (106-42 Ն. Ք.) հետեւեալ յայտարարու-  
 թիւնը. «Ով որ կը պնդէ թէ մենք միայն մեր ընկեր քաղաքացիներ-  
 րուն կարեւորութիւն պէտք է տանք, անիկա մարդկային սեռին  
 համաշխարհային կապերը կը խզէ եւ այդպիսով հիմնականապէս  
 կը ջնջէ ողորմասիրութիւնը, զթութիւնը, վեհանձնութիւնը, բա-  
 րութիւնն ու արդարութիւնը»:

Բայց Հռովմի կայսրերը ինչ ալ որ ընէին, չէին կրնար փըր-  
 կել հռովմէական կայսրութիւնը, որովհետեւ իր ծոցէն ծնած էին  
 իր գոյութիւնը ժխտող տարբերը: Հռովմէական կայսրութիւնը



պիտի իյնար եւ ինկաւ, եւ անոր յաջորդեց պատական վեհապետութիւնը, այսինքն հողիներու բանապետութիւնը, որ սկսաւ Աստուծոյ կոմունիստական թաղաւորութիւնը հաստատելու նշանաբանով:

ԱՍՏՈՒԾՈՅ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Քրիստոնէական շրջանի առաջին երեք դարերուն, քրիստոնեաներու ընդհանուր հաւատքը այն էր որ Քրիստոս շուտով պիտի վերադառնար եւ պիտի հաստատէր Աստուծոյ թաղաւորութիւնը եւ ինք պիտի իշխէր որպէս թաղաւոր: Ասիկա պիտի ըլլար նահապետական կոմունիզմի վերադարձը, այն ոսկեղարը, ուր պիտի տիրէր կատարեալ հաւատարութիւն, մէկ խօսքով՝ մի հոս եւ մի հովիւ, ուր բնութիւնը ազատուելով Զեւսի իշխանութենէն, դարձեալ իր շնորհները պիտի բաշխէր ամէնուն առատօրէն, առանց ցաւի ու տանջանքի: Հրեայ մարդարէները արդէն մարդարէացած էին որ հրեաները տառապանքներէ ու հալածանքներէ ազատուելով Եւսոփայի հովանաւորութեամբ պիտի տիրեն աշխարհի եւ այդ տիրապետութիւնը պիտի ըլլայ ընկերային արդարութեան, հաւասարութեան եւ յաւիտենական խաղաղութեան ու համայն մարդկութեան երջանկութեան հիմունքներուն վրայ: Յովհաննու-Յայտնութեան մէջ այդ հաւատքը արդէն որոշ կերպով ձեւաւորուած է, երբ կը կարդանք զլուս Ի., համար 1-6. «Եւ հրեշտակ մը տեսայ որ երկինքէն կ'իջնէր եւ անդունդին բանալին եւ մեծ շղթայ մը ունէր իր ձեռքը ու բռնեց վիշապը, այսինքն առաջին օձը, որ բանասարկուն եւ սատանան է եւ կապեց զանիկա հազար տարի եւ անդունդը ձգեց զանիկա, եւ զոցեց վրայէն եւ կնքեց, որ ալ չմտորեցնէ ազգերը մինչեւ հազար տարին լմնայ, եւ անկէ ետքը պէտք է որ արձակուի անիկա քիչ մը ժամանակ: Եւ աթոռներ տեսայ, ու նստան անոնց վրայ եւ անոնց դատաւորութիւն մը արուեսցաւ, նաեւ Յիսուսի վիպութեան համար ու Աստուծոյ համար գլխատուածներու հողիները տեսայ, եւ զանոնք՝ որ երկրապարտութիւն չըլին դադանին, ոչ ալ անոր պատկերին, ու անոր զրոջմը իրենց ճակատներուն վրայ եւ ձեռքերուն վրայ չընդունեցին եւ ազրեցան ու Քրիստոսի հետ թաղաւորեցին հազար տարի»:

Այս սողերը դրուած են, ներսն կայսեր հրամանով քրիստոնեաները մահուան դատապարտելէն շատ տարիներ յետոյ: Աստուծոյ թաղաւորութիւնը ատոր համար կոչուած է հազար տարիներու թաղաւորութիւն, այսինքն Հազարամեակը, իսկ այդ հաւատքը կոչուած է քրիլիզմ (քրիլիզմի յունարէն կը նշանակէ հազար):

Յոյն եւ հռովմէացի քրիստոնեաները քրիլիզմը կը նոյնացնեն ոսկեղարու վերադարձին հետ: Եւ այդ ոսկեղարը լմբուած էր որպէս կոմունիստական պետութիւն, որուն մէջ քրիստոնեաները պիտի վարձատրուէին իրենց բոլոր տանջանքներուն որպէս փոխարինութիւն: Մասաները այս հաւատքին կառչած էին անխախտ համոզմամբ ու վառ երեւակայութեամբ: Աստիճանաբար, սակայն, քրիլիզմի այդ հաւատքը տկարացաւ, որովհետեւ աստուածաբանները կոմունիստական ուղեգծով անկարող էին թարգմանել Աւետարաններու եւ Գործք Առաքելոցի ոգին: Երրորդ դարուն երբ Հռովմի կայսրերը տակաւին ճանչցած չէին քրիստոնէութեան փիլիսոփայութիւնը եւ անոր կը վերագրէին մի տեսակ ընկերային յեղափոխական բնոյթ, շարունակեցին հալածանքն ու մահապատիժները քրիստոնեաներուն, բայց շուտով լքեցին այդ քաղաքականութիւնը եւ հաշտուեցան քրիստոնէութեան հետ, երբ համոզուեցան թէ նոր կրօնքին երազած թաղաւորութիւնը կապուած էր երկինքին, ոչ թէ երկրին հետ: Չորրորդ դարու վերջերը քրիստոնէութիւնը եղաւ պետական կրօնք: Ան յաղթանակեց, որովհետեւ որդեգրեց մասնաւոր սեփականատիրութեան վրայ հաստատուած հիմնարկութեանց սկզբունքները եւ տիրող կառավարութեան քաղաքականութիւնը: Ան այլեւս կոմունիստական գաղափարներու ջմօտեցաւ. բնազանցական հաւատքի թափծու գոգմաներով զրազեցաւ, իսկ կոմունիզմի գաղափարը մնաց խոռվարարներու եւ հերետիկոսներու մօտ: Տղէտ մասսաները ոչխարի հետեւողութեան ճամբուն մէջ մնացին եւ քրիստոնեայ աստուածաբանները իշխող դասակարգի աստուածահաճոյ փաստաբանները դարձան:

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՓԼՈՒԶՈՒՄԸ

Հռովմէական կայսրութեան կազմալուծումը հասունցած պայմաններու հետեւանքով անխուսափելի դարձաւ: Սոչոր հողատիրութեան ստեղծած Ֆէոդալականութիւնը, մանր վարձակաշնորու հողին կապուած ըլլալու հանգամանքը, քաղաքային բանուորներու կարմակերպութիւնը, գերիներու ազատամբական շարժումները մասամբ պատճառ էին, մասամբ ալ արդիւնք Հռովմի տնտեսական անդամալուծութեան:

Քաղաքային պրօլետարիատը երբ կը տեսնէր հողագործ բընակչութեան ճնշուած, թշուառ վիճակը, բնականաբար չէր ուղեր հեռանալ քաղաքէն ու կապուիլ հողին: Միւս կողմէ, զիւղացիները իրենց անտանելի դրութենէն ազատուելու համար, ուրիշ միջոց չունէին, բայց միայն գաղթել քաղաքները, ուր շատ քիչեր կրնա-



յին գործ ճարել, քանի որ իրենց դէմ կանգնած էր գերիներու բազմութիւնը:

Արտադրութեան շղթայաւորումը եւ սպորուտի միջոցներու նուազումը աւելի եւ աւելի կը շեշտուէր, երբ մէկ կողմէ սերնդագործութիւնը կը նահանջէր, միւս կողմէ աշխատուածք կը պակսէր հետզհետէ: Եւ այս բանը տեղի կ'ունենար այնպիսի ատեն մը, երբ գերման ցեղերը, կոթացիք, վանդալները, բուրիոնգիաններն ու Փրանկները սկսած էին ուժգին կերպով յարձակիլ կայսրութեան սահմաններէն ներս: Կայսրութիւնը զինուորներու պէտք ունէր, մեծ հողատէրը՝ գործաւորներու, իսկ երկուքն ալ պահանջուած ուժերը չէին կրնար ճարել, որովհետեւ ինչպէս բսինք, բնակչութիւնը կը նուազէր, փոխանակ աճելու: Խոշոր հողատիրութիւնը տրուած պայմաններու տակ մասամբ յաղթական դուրս եկաւ: Ան գործաւորները կապեց հողին, բայց կայսրութեան պաշտպանութեան համար հարկ եղած ուժը կը պակսէր, այնպէս որ գերմանները, հունիացիք, Փրանկները եւ ուրիշ բարբարոս ցեղեր արշաւեցին եւ սարսափի մատնեցին Հռոմը: Դիոկղետիանոս կայսրը 245-313) փորձեց վերակազմել պետութիւնը զինուորական բացարձակապետութեան հիմքի վրայ եւ ամբողջ բնակչութիւնը լծեց պետական պաշտպանութեան գործին: Ան նոյնիսկ գերիները առաւ զինուորական ծառայութեան մէջ: Բայց անողուտ: Կայսրութիւնը բնկերային, անտեսական եւ քաղաքական անբուժելի հիւանդութեամբ կը տառապէր եւ չէր կրնար ոտքի կանգնիլ: Այդ ատեն քրիստոնէայ եկեղեցին բարձրացեր էր իշխանական դիրքի, իսկ անոր առջեւ Հռոմէական կայսրութիւնը աղերսարկու կեցուածքով մահու եւ կենաց կոխը կը մղէր: Չորրորդ դարու վերջերը ան բաժնուեցաւ երկու մասի, արեւմտեան կայսրութիւնը եւ արեւելեան կայսրութիւնը: Առաջինը անձնատուր եղաւ գերմաններուն, վերջինը՝ յունական կուլտուրայով պահեց իր գոյութիւնը որպէս բիւզանդական կայսրութիւն:

ԼԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՓԼՈՒԶՈՒՄԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Մենք խօսեցանք Հռոմի կայսրութեան անբուժելի հիւանդութեան մասին, բայց չբսինք թէ ի՞նչ էր իրական պատճառը որ այդպիսի մեծազօր կայսրութիւն մը մէկ անդամէն ինկաւ, առանց կարենալ պաշտպանելու իր գոյութիւնը: Բարբարոս ցեղերը ոչ թիւով, ոչ ալ զինուորական կողմակերպութեամբ հռոմէացիներէն գերակայ էին: Ի՞նչ էր, ուրեմն, բուն պատճառը Հռոմի եւ հին աշխարհի անփառունակ ու յանկարծակի անկումին:

Այս հարցման պատասխանը դանելու համար մի քիչ մօտէն պիտի նայինք Հռոմի անտեսական կեանքի ներքին փոփոխումը:

Հռոմի հիւանդութիւնը իր արտադրողական ուժերը զարգացնելու անփութութեան մէջ էր: Այդ հսկայ կայսրութեան նիւթական կարիքները չկարենալ գոհացնելու անճարակութեան մէջ: Եթէ Հռոմ մնար որպէս երկրագործական կայսրութիւն եւ յենուէր հոծաթիւ եւ անկախ զիւղացիութեան վրայ, կամ, եթէ ան հողագործական անտեսութեան հետ զարգացնէր ճարտարարուեստի դիրքը տեխնիկական յառաջդիմութեամբ, այն ատեն բնակչութեան համար կրնար հայթայթել սպորուտի անհրաժեշտ միջոցներ լիառատ կերպով: Ասոր արդիւնքը պիտի ըլլար ազդարնակչութեան արագ աճումը, որով գծուարութիւն պիտի չունենար պահելու իրենց հայրենիքը անձնուիրարար պաշտպանելու պատրաստ զօրութեան կերպը:

Բայց Հռոմ մէկ կողմէ մնաց արտադրութեան համեմատաբար նախնական միջոցներու գծին վրայ եւ այդ միջոցները յանձնեց գերիներուն, միւս կողմէ ուժ տալով խոշոր հողատիրական անտեսութեան, վերջ դբաւ ազատ զիւղացիութեան գոյւթեանը: Ասոր հետեւանքը այն եղաւ որ սպորուտի պատեհութիւններու չըջանակը հետզհետէ սկսաւ կծկուիլ, պղտիկնալ եւ ասոր համար ալ ժողովուրդի թուական աճումը մնաց լճացած վիճակի մէջ եւ սպորոջ բնակչութիւնը չունեցաւ այն ուժը որ կրնար ապրեցնել իր ուսերուն վրայ նստած հսկայ պետութիւնը: Դիոկղիտիանոսի բացարձակապետութիւնը, պետութիւնն ու զինուորականութիւնը կանոնաւորելու իր ջանադրութիւնը փոխանակ պետական հիւանդութիւնը դարձանելու, աւելի գծուարացուցին սպորոջ սերունդին կեանքը:

Բայց ինչո՞ւ Հռոմը կառչած մնաց արտադրութեան նախնական ձեւերուն: Այս հարցման պատասխանը ընթերցողը գիտէ արդէն, այսինքն այն որ արտադրութիւնը կապուած էր ստրկական աշխատանքին: Հռոմի անտեսական յետամնացութիւնը այդ դրութեան հետեւանքն էր: Արտադրողական աշխատանքին վրայ դրոշմուած էր ստրկութեան, կախուածութեան եւ անպատուութեան կնիքը: Ծնորճքով օժտուած արուեստագէտներն ու մտաւորական մարդիկը արտադրողական ամօթալի աշխատանքէն կը խորչէին: Իրերու այդ գրութեան մէջ տեխնիկական յառաջդիմութիւն անհնարին էր: Չնայած որ ժողովուրդի ազրուտի միջոցները անբաւարար էին, հռոմէացիները բնաւ հող չէին ընել արտադրանքի նոր մեթոտներու մասին, պահեցին նահապետական գործիքներ առանց զանոնք զարգացնել փորձելու, իսկ միւս կողմէ նուիրուեցան բունի



ուժին, պատերազմին, ու պատերազմական կողոպուտին: Անոնց պէտք էր աշխատանքի բարձր արտադրողականութիւնը, դա բոլորովին անկարելի ու աննկատելի հարց էր: Անոնց պէտք եղածը նուաճուած երկիրներու կողոպուտն էր: Երբ Հոովմ յաղթական արշաւանքներով դրաւ եր մօտիկ ու հեռաւոր երկիրները եւ թաւանեց իրեն ծանօթ քաղաքակիրթ աշխարհը ու շոյաբէն մասնեց իր հաւաքած հարստութիւնները, կայսրութեան նիւթական հիմքերը սկսան քայքայուիլ, այնպէս որ երբ երկրին անտեսական շնչերակը դործելէ դադարած էր, այլեւս պետութեան վերնաշէնքը կանդուն էր կրնար մնալ:

Գեռ աւելին կայ: Հոովմ ինք իր ձեռքով պատրաստեց իր գերեզմանափորները: Հոովմի բռնակալներու շունչին տակ ոչ մի այն գերիններն ու սամիկները, այլեւ ազնուականները ազատ ու ապահով կեանք չունէին: Անոնք իրարու հանդէպ նախանձով լեցւած, բռնակալին անտանձ կիրքն ու քմահաճոյքը իրր զէնք կը դործածէին իրենց հակառակորդը չքացնելու համար: Եւ նուազ էր Հոովմէն փախչող ազնուականներու թիւը: Եւ դիտէ՞ք ուր կ'ապաստանէին այդ փախչող ազնուականները... Անոնք կ'ապաստանէին Եւրոպայի հիւսիսային կողմերը բնակող բարբարոս ցեղապետներու մօտ, անոնց կը նկարագրէին Հոովմի դիպած հարստութիւնները, փառաւոր շքեղութիւնները, հոովմէացիներու զեղխ կեանքը, աներեւակայելի հաճոյքները: Այդ պատմութիւնները լսելով կը բոցավառուէր բարբարոս ցեղապետներու երեւակայութիւնը: Անոնք դուցէ զեռեւս մնային իրենց կողմացած դրութեան մէջ, եթէ չգիտնային որ հրաշալի հարուստ քաղաք մը կար զոր պէտք էր գրաւել ու թալանել: Ահա թէ ինչու բարբարոս ցեղերը, անհամբեր, մէկը միւսին ետեւ յարձակեցան Հոովմի վրայ եւ կործանեցին հին աշխարհի ամէնէն հզօր կայսրութիւնը որ մահամբձ էր արդէն եւ անկարող պաշտպանելու ինքզինք:

ԱՇԽԱՏԱԻՈՐՆԵՐՆ ՈՒ ԳԵՐԻՆԵՐԸ  
ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՕՐԵՐՈՒՆ

Մենք հոովմէական պետութեան սահմաններուն մէջ տիրող դասակարգի դերի մասին հարեւանցի ծանօթութիւններ տուինք եւ թուցիկ ակնարկներ միայն նետեցինք աշխատաւորներու եւ գերիններու դրութեան շուրջ: Այժմ տեղին է որ մի քիչ հանդամանօրէն ծանրանանք այդ աստեղուան իրաւագրկուած դասակարգի վիճակն ու դործունէութիւնը պատկերացնելու դժին, քանի որ ան կը կազմէ մեր ուսումնասիրութեան ամէնէն կարեւոր մասը:

Տիրող դասակարգի ինկարկու հեղինակներու քաղաքական անտեսողիտութեան պատմութեանց մէջ հին դարերու բանուորական կազմակերպութեանց շուրջ նոր տեղեկութիւններ չկան: Ասոր պատճառը հասկնալի է, որովհետեւ այդ հեղինակները չեն ուզած զբաղիլ արհամարհուած դասակարգի գործերով, չնայած որ պատմութիւնը առանց այդ դասակարգի գործերու յիշատակումին կը կորսնցնէ իր իմաստը: Եւ ի՞նչ կը տեսնենք այսօր: Գուէճներու եւ համալսարաններու դասադրքերու մէջ նման տեղեկութիւններ չկան եւ փոքր ի շատէ եղածներն ալ ջնջուած են: Անհատապաշտներու համար ասոր մէջ դրամ չկայ: Անոնք բնաւ չեն մտածեր թէ այդպիսի ուսումնասիրութիւն մը ազամանդներ դուրս կը հանէ ազապայ գիտութիւնը հարստացնելու համար, որովհետեւ անոր մէջ է պահուած մարդկային կեանքի ցարդ անծանօթ մնացած զաղտնիքը:

Շատեր կը կարծեն թէ բանուորական միութիւնները կապիտալիստական դարաշրջանին է որ երեւան եկած են: Հիմնապէս սրտալ է այդ կարծիքը: Աշխատաւորական կազմակերպութիւններ գոյութիւն ունեցեր են հին դարերուն եւ անոնք աւելի ուժեղ եղած են նախապատմական շրջանին: Մենք շատ քիչ բան գիտենք կանխապէս շրջանին անոնց ունեցած գիրքին ու գործունէութեան մասին: Միայն գիտենք թէ Սողոմի (638-558 Ն. Ք.) օրէնքները դրուեցան աշխատաւորական կազմակերպութեանց յառաջացուցած խռովութիւններն ու ապստամբութիւնները օրինական եղանակով վերջացնելու համար: Նոյնը կրնանք ըսել Հոովմի թագաւոր եւ օրէնսդիր Նուամ Պոմպիլիոսի համար: Եւ արդէն Պոլուտարքոս երբ կը հաւաստիացնէ թէ այս երկու մարդիկը, Սողոմն ու Նուամնոյն ժամանակաշրջանի մարդեր եղած են եւ իրարու ծանօթ, ատիկա կը հաստատէ որ դրութիւնը նոյնը եղած է հոովմէական իշխանութեան մէջ ինչ որ էր Յունաստանի մէջ:

Այս հետազոտութեանց ամէնէն կարեւոր յայտնութիւնը երեւան կուզայ այն իրողութեամբ որ մենք կը տեսնենք թէ քրիստոնէութիւնը երեք անջատ շրջաններէ անցեր է եւ ունեցեր երեք անջատ պատմութիւններ: Առաջինը նախաքրիստոնէական քրիստոնէութիւնն է: Երկրորդը՝ առաքելական քրիստոնէութիւնը, այսինքն առաքելներու անկարկած քրիստոնէութիւնը որ կը պարզէ ապշեցուցիչ տարբերութիւն մը քրիստոնէութեան իրական պատմութեան եւ քրիստոնէայ եկեղեցւոյ պատմութեան միջեւ: Երրորդը այն քրիստոնէութիւնն է որ վեր կ'անէ միայն քրիստոնէայ եկեղեցին երբ ան արդէն ջախջախեր է տիրող դասակարգի ձեռքով սողոնական միութիւնները:



Քրիստոնէութիւնը ծնող ուժը ուրիշ բան չէ եղած, այլ միայն կազմակերպուած աշխատաւորական միութիւններու ուժը որ ատաղձը եղած է հին աշխարհի քաղաքակրթութեան: Պատմաբաններ զայն անտեսած են, բայց այդ ուժն է որ պատմութեան անիւները շարժման մէջ դրած է հին դարերէն մինչեւ մեր օրերը:

Շատ քիչ կամ երբեք տարբերութիւն չկար հին դարերու աշխատաւորական կազմակերպութեանց նպատակին ու գործելու եղանակին մէջ, հոգ չէր թէ անոնք ինչ լեզու կը խօսէին եւ որ երկրին մէջ կ'ապրէին: Նոյնաման էր աշխատաւորներու լուծը, հետեւաբար նոյնն էր անոնց լեզուն, կեանքի լեզուն, արւարութեան ու եղբայրութեան լեզուն:

Հին պետութիւնները բոլորն ալ կրօնական բնոյթ ունէին, աշխատաւորական կազմակերպութիւններն ալ նախաքրիստոնէական շրջանին ունէին իրենց յատուկ աստուածները որոնք որպէս աշխատաւորներու խնամակալներ կը պաշտուէին եւ տարբեր էին հարուստներու աստուածներէն: Հարուստներու աստուածները սէք եւ գութ չէին ճանչնար:

Աշխատաւորական միութիւնները որոնք իրենց անդամներով իրենց արդուտը ապահովելու եւ ճնշող կապանքներէն ձերբազատելու կը ձգտէին, կարելի է ըսել մի տեսակ քաղաքական հանդամանք ալ ունէին եւ Սողոմի դրած օրէնքներու համաձայն ունէին քուէարկելու իրաւունք:

Ազատասէր ու յառաջդիմական ներկայ հանրապետութեանց մէջ շատ քիչեր զիտեն թէ իրենց քուէարկելու օրէնքները եկած են հին դարերու Սողոմի նախատիպ օրէնքներէն:

Յունաստանի, Փոքր Ասիոյ եւ կղզիներու մէջ ուր տիրապետող էր յունարէն լեզուն, աշխատաւորական այս կազմակերպութիւնները կը կոչուէին բրանոս, քիատոս, հիտերա, քոնիա: Հռովմի եւ լատիններէն խօսող երկիրներու մէջ անոնք կը կոչուէին կոլլիկիա, ստալիսիա, կոնկիկիա, եւ այլն: Բայց բոլորին կազմութեան ձեւը, գործունէութիւնն ու նպատակը նոյնն էր, զիրար սիրել, իրարու օգնել եւ մէկը միւսին համար գոհուիլ:

Եղիպտոսի եւ սեմական երկիրներու մէջ այս միութիւններու անունները քիչ ծանօթ են. միակ ծանօթ անունը որ մնացեր է տէրէպէնտէ անունն է:

Վերել նշուած երկիրներու մէջ ուր աշխատաւորները մշտապէս ենթարկուած են եղեր զրկանքի ու շարժարանքի, ամէնէն սոսկատեսիլ պատկերները կը դաննէր կայսերական Հռովմի մէջ:

Երբ Հռովմ իր մեծ յաղթանակները աւարտեր էր եւ իրեն

ենթարկեր հին ծանօթ աշխարհը բրիտանական կղզիներէն մինչեւ Հնդկաստան, երբ կողոպտեր էր հազարաւոր քաղաքներ եւ միլիոնաւորներ դերի էր դարձուցեր, նոյն ատեն ներքին ապականութիւնը եւս հասեր էր անգերազանցելի աստիճանի: Կիրեբու, աղջիկներու եւ պատանիներու պոռնիկացումը, անասնձ զգայապաշտութիւնն ու հաճոյամոլութիւնը, գինովութիւնն ու գեղխութիւնը սովորական երեւոյթ էին դարձեր: Մինչ անսահման հարստութիւն կուտակելու էր այդ մեծ քաղաքին մէջ, անդին դերիացած երկիրներու ժողովուրդները մխրճուած էին թշուառութեան մէջ: Հռովմի զօրավարներն ու ազնուականները, կորսնցուցած բլլալով բարոյական ամէն տեսակի ըմբռնում, անձնատուր եղեր էին անասնական սոխիի, արեան անյազ ծարաւի եւ անրնական սեռային ցանկութեանց:

Շատ մը հռովմէացի զօրավարներ որոնք զրսի աշխարհը կողոպտեր եւ իրենց կողոպուտներով Հռովմ կը վերադառնային յաղթական, կը պահանջէին որ փառքով ընդունուէին ներս: Բայց կը պատահէր որ այդպիսի զօրավարի մը ճամբուն վրայ կը ցցուէր ուրիշ մը եւ կը փակէր անոր փառքի ճամբան: Եւ ահա կը սկսէր կռիւր աւազակապետներու միջեւ: Վայ պարտուողին եւ անոր հետեւորդներուն:

Այդպիսի զօրավարներէն մին էր յաղթական Սիղզան:

Մենք արդէն ըսինք թէ գործաւորները կազմակերպուած էին Հռովմի մէջ ալ: Տիրող դասակարգի յաղթական զօրավարներու նպատակն էր ջախջախել գործաւորական այդ միութիւնները: Բայց անոնց բոլոր փորձերը ձախողեր էին որովհետեւ այդ միութիւնները տակաւին զօրաւոր էին Սիղզայի ատեն եւ իրենց արիւրունները կրնային ընտրել ու անոնց միջոցով պաշտպանել իրենց դերքն ու շահերը ծերակոյտին մէջ:

Սիղզան, ինչպէս Ապոլիոս Գլոտիոս, հռչակաւոր ազնուական ընտանիքէ սերած հպարտ, շարամիտ ու անդութ մարդ էր: Ան կը պարծենար թէ իր կոչումն էր գործաւորական միութեանց մի այնպիսի հարուած տալ որ անոնք գլորուին անարգ դերիներու վիճակին: Բաւական յանդուգն ծրարիւր էր զոր ի կատար ածելու էր այս մարդը, որովհետեւ բազմաթիւ արհեստաւորներ կը գործէին պետութեան համար, կը պատրաստէին գէնքեր բանակին համար եւ կը ստանային կանոնաւոր աշխատավարձ որպէս կառավարութեան գործաւորներ:

Սիղզա գործաւորներու պաշտպան Մարիուսի հետ Հռովմի պարիսպներուն մէջ կատաղի ճակատամարտ մը մղելէ վերջ երբ յաղթական դուրս եկաւ 82 թուին (Ն. Ք.), իր առաջին գործը



եղաւ կազմակերպուած գործաւորները որպէս անհաշտելի թշնամիներ անխնայ ջարդել: Սալուստ սպաննուածներու թիւը կը ներկայացնէ չորս հազար, իսկ Լիվի կը հաւաստեացնէ թէ սպաննուածներու թիւը կը հասնէր ութը հազարի: Մեր, երիտասարդ, կին երեխայ անխնայ կոտորուեցան: Մահամերձներու ազազակները կը հասնէին մինչեւ Պելոնայի տաճարը ուր Սիդդա նոյն ատեն ծերակոյտի ժողովը կը գումարէր:

Սոյն անմարդկային անգթութիւնը ան աւելի սաստկօրէն ընդհանրացուց Պրանտէսի բնակիչներուն վրայ: Այս վայրը 198 թուականներուն (Ն. Ք.) ապստամբութեան թատերարեմ եղած էր: Մարդիկը հերոսական կուրէի մղեցին Հռոմի իշխողներուն եւ հարուստներուն անողոք կեղեքումներուն դէմ: Քաջարի եւ ազատասէր Պրանտէսի բնակիչները, Հռոմի լաւագոյն մեքենագէտներ դարերու ընթացքին, փշրեցին իրենց սարկութեան շղթաները եւ դարձեւ ազատ քաղաքացիներ: Ասոնք իրենց հազարաւոր անդամներով հիմնալի կերպով կազմակերպուած Նուսայի շտրհարաչի օրէնքներով որոշ գիրք էին ապահոված Հռոմի ծերակոյտին մէջ: Բռնակալ Սիդդա գործաւորական այդ բերդը որպէս երկրին թըշնամի կ'ուզէր հիմնադասակ քանդել, չնայած որ ան Հռոմէական հասարակութեան ամէնէն կարեւոր մասը կը կազմէր: Այդ մարդիկը օրինապահ եւ օգտակար քաղաքացիներ էին, անոնց միակ յանցանքը այն էր որ անոնք անտանելի լուծի տակ չէին հանդուրժած սպրիլ: Հակառակ իշխող դասակարգի բազմապիսի գաւազրական փորձերուն այդտեղի գործաւորները իրենց միացեալ ճակատով կրցեցին պահել իրենց քաղաքական գիրքը: Անոնք նոյնիսկ Հռոմի ազնուական դասակարգի մէջէն ունէին իրենց համակիրները: Այդ համակիրներէն մին էր Մարկուս Լիվիուս Գրոտուս: Բայց այս մարդը ազնուականները սպաննեցին, ինչպէս նախապէս սպաննած էին ուրիշ ազնուական մը, Կրաքոսը: Սիդդա բռնակալը իր ամբողջ զինուորական ուժը կեղրոնացուց իրեն սխերիմ թշնամի կարծած պրանտէսիներուն դէմ եւ երեք օրուան մէջ 50 հազար պրանտէսիներ կոտորեց անգթօրէն: Բայց տարի մը յետոյ՝ այդ հրէշը մեռաւ Պութէոլի մէջ:

Հռոմի ազնուականներու ուրիշ մէկ պատմութիւնը կ'ընէ մեզի Տակիտոս պատմագիրը. 394 ամեկ մարդոց ողջակիզումի սարսափազդու պատմութիւնն է ան: Չարչարուող եւ յուսահատ ամբոխներու գերազդրուած երեւակայութիւնը նոր ծնունդ աւրած էր աստուածորդի Քրիստոսի մը որ իբր թէ խաչուած էր Գող-

գոթայի լերան վրայ: Ահա այդ ատենն էր որ տեղի ունեցած է այդ սարսափելի դէպքը զոր կը պատմէ Տակիտոս:

Տակիտոս որ հոգիովը կ'ատէր քրիստոնեաներն ու հրեաները եւ կ'ընդունէր թէ անոնք արժանի էին պատիժի, ախուր գոյներով կը պատկերացնէ պատիժի այն ձեւը որ գործադրուեցաւ անմեղ կիներու, ծերերու, երիտասարդներու եւ երեխաներու վրայ: Երեք հարիւր իննսուն չորս մարդկային էակներ, շղթաներով իրարու կապուած բոլորովին մերկ. եւ երեւակայեցէք որ անոնց մարմինը ծեփուած է մէկ մատնաչափ կուպրով: Եւ ահա կը սկսին վառել այդ եզկելի էակները որոնք ժամերով կը վերածուին բոցաչունջ ջահերու: Եւ ինչ որ դիւային է, այդ բոցերուն մէջէն արձակուող մարդկային ազազակները վերադոյն հրճուանք կը պատճառեն դիտող ամբոխին, մասնաւորապէս հաճոյամու ազնուականներուն: Ներոն գուցէ այդ տեսարանէն յափշտակուած գաղափարը կ'ունենայ հրդեհելու Հռոմը, զմայլելի բանաստեղծութիւն մը յորինելու խելագար երազին անձնատուր:

Տակիտոս մեզի ուրիշ պատմութիւն մըն ալ կուտայ դէպքի մը որ տեղի ունեցած է 10 թուականին (Յ. Ք.): Պետոնիոս անունով ազնուական մը որ 400 դերիներ ունէր, մի օր կը սպաննուի իր մէկ գերինն ձեռքով: Հռոմէական օրէնքով երբ գերի մը իր տէրը կը սպաննէր ազնուականին պահած գերինները իրենց ընտանիքներով մահուան կը դատապարտուէին:

Պետոնիոսի բոլոր գերինները, աղջիկներ, երիտասարդներ, կիներ, ծերեր, նոյնիսկ նորածին երեխաներ պէտք էր խաչուէին:

Հռոմի պրեպեանները (ոսմիկ քաղաքացիները) զիտէին այդ պատիժին սոսկատեսիլ ահաւորութիւնը եւ ուղեցին միջամտել: Հռոմ քաղաքացիական կուրի եզրին էր հասեր. մեծ էր վրտանդը: Մերակոյտը իսկոյն ժողով գումարեց տեսնելու թէ արդեօք կարելի՞ էր սիլենեան օրէնքը վերատեսութեան ենթարկել եւ փոխել պատիժը: Ահա այդ ատենն էր որ ծերակուտական մը, Քասիոս, մէջտեղ նետուեցաւ եւ ըսաւ. «Այս օրերու գերինները աւելի վտանգաւոր են քան նախորդները: Անոնք Հռոմի յաղթանակներու աւարներն են, եկած են Սուրբայէն, Կարկեղոսէն, Փիւնիկէն: Կատաղի սկիւթացիները, կուուազան յոյներն ու սեմականները վայրի գազաններ են: Միայն սարսափն է որ զանոնք պիտի կրնայ պահել սարկութեան լուծին տակ: Ներողամտութիւն ցոյց տալ անոնց կը նշանակէ թէ մենք կը վախճանք անոնցմէ»: Այս հետտորական ելոյթին առջեւ ծերակոյտը հաւանութիւն տուաւ որ 400 գերինները անմիջապէս խաչուին:



Հոռվմի ռամիկները ոչինչ կրցին ընել, միայն լուռիսամբ դիտեցին խեղճուկ գոհերու մահացումը Գողջաթաղի լեքան վրայ:

Հնարան Բ. Լայտֆուտ մեզ կը հաւատարացնէ թէ նախ քան քրիստոնէական դարաշրջանը, մի ոմն Գլոտրոս Իսխարոս հակառակ որ քաղաքացիական պատերազմին մէջ մեծ կորուստներու ենթարկուած էր, չորս հազար գերիներ ունէր: Իսկ ազնուականներ կային որոնք աւելի քան քսան հազար գերիներ կը պահէին: Ընթերցողը այժմ կրնայ երեւակայել այդ եղիկի էակներուն վիճակը երբ անոնք ոչ մէկ պաշտպանութիւն ունէին հասլմէական օրէնքին առջեւ: Էտրոսգան անունով ազնուականի մը գերեզմանին տապանաքարին վրայ արձանագրութիւնով նկար մը կայ որ կը ցուցնէ թէ անոր գերիներէն լաւագոյն կռուողները սուսերամարտով զիրար սպաննած են իր յուշարկաւորութեան ատեն որպէսզի ինք՝ Էտրոսգան անդիի աշխարհին մէջ իր թիկնապահները ունենայ:

Ատեն մը եղաւ որ Հոռվմի յաղթանակները դադար առին: Ազնուականները այս անգամ խորամանկ միջոցներու ղլմեցին գործաւորական միութիւնները վերջացնելու համար: Գործաւորական կազմակերպութեանց առաջաւոր տարրերը ներս առին, անոնց սուին զինուորական պաշտօն եւ կեղեքելու պատենութիւն: Բայց այդ միջոցառումն ալ բաղձացուած արդիւնքը չտուաւ: Միութիւնները պահեցին իրենց զոյրութիւնը սարսափի օղակներուն եւ լրտեսական ցանցերուն մէջ եւ ալ աւելի տարածեցին իրենց ճիւղերը:

Քրիստոնէական շրջանէն դարեր առաջ գերիներուն եւ ազատագրուած գերիներէն յառաջացած սերունդներուն համար օրինակական ամուսնութեան սովորութիւն չկար: Այդ դարերուն աղքատներու գաւակները ապօրինի կը նկատուէին: Հին օրէնքներուն մէջ չկար մի այնպիսի տրամադրութիւն որ ընտանիքը նկատէր որպէս պետութեան միաւորը: Աղքատ մարդն ու կինը ընտանիք չէին կրնար կազմել, անոնք իրենք արդէն ընկեցիկ կը նկատուէին: Նոյնիսկ Եսայի մարգարէին օրով նոյնն էր գրութիւնը:

Բ. Լայտֆուտ կ'ըսէ. «Եւ այս թշուառ մարդկային գանգուածները հոռվմէական օրէնքի ամենագոյն պաշտպանութիւնն իսկ չէին վայելեր: Գերին իրաւունք չունէր ընտանիք կազմելու: Ան իր տիրոջ հրամանով ու հաճութեամբ էր որ կրնար յարաբերիլ կնոջ մը հետ, բայց արտօնուած չէր ամուսնանալու: Ան իր կեանքով, զգացումով ամբողջապէս ենթակայ էր իր տիրոջ քահանայութեան: Փոքրիկ անհնազանդութիւն մը կը պատժուէր մահուամբ: Եւ գերեզմանը յաճախ մասնաւոր հաճոյք կը զգար մահուան դատապարտելու իր գերին որպէսզի դիտէր անոր գալարումները»:

Սենեկա որ ի վերջոյ նահատակուեցաւ, մարդ մը որուն անուան շուրջ տարբեր կարծիքներ արտայայտեր են մի շարք պատմագիրներ պարզ անոր համար որ ան ներոն կայսեր խորհրդատուն էր եղեր, մեզի կուտայ կարգ մը հետաքրքրական տեղեկութիւններ որոնք բաւական լոյս կը սփռեն այդ ատենուան իրազարձութեանց վրայ: Ուրիշ շատ մը իրողութեանց նկարագրութեան հետ ան կը պատկերացնէ նաեւ այն տանջանքի մեթոտները որոնք կը գործադրուէին գերիներու վերաբերմամբ: Ան կ'ըսէ որ մասնաւոր փշապատ պարաններ պատրաստուած էին կիները խեղդելու համար: Եւ ատիկա ամէնէն թեթեւ տեսակի մահապատիժն էր: Կար նաեւ ուրիշ ձեւի մահապատիժ. գերիները խմբովին կը մերկացնէին եւ զանոնք շղթայով իրարու կապած հրաշէկ երկաթով տանջելէ վերջ կը տանէին ու կը գլորէին ժայռերէն վար դէպի անդունդը եւ կամ կը նետէին գետին մէջ: Պահուած գերիներու ճակատը կը խարանէին անջնջելի կնիքով. գերին այլեւ չէր կրնար փախչիլ. ուր որ երթար իր գերիի ճակատադէրը կը մատնէր զինք: Հարուստները իրենց ներքնայարկին մէջ կը պահէին վարպետ արհեստաւոր գերիներ որոնց գործն էր ներկել, նորոգել եւ կամ ձեռքով պատրաստել իրենց տիրոջ պալատի կահ կարասիքները: Կատարեալ արուեստի արտադրութիւններ ըլլալու էին անոնք: Եթէ պատահէր որ անոնցմէ մէկը անուշադրութեամբ կամ զիպուածով իր շինած կամ նորոգել ուզած սեւէ մէկ կարասիքին վրայ ներկի աւատ մը թողուր կամ չնչին վնաս մը պատճառէր, դահիճը պատրաստ էր կտրելու այդ ոճրագործին գլուխը: Արդարացման ոչ մի փորձ կրնար ներման արժանանալ:

Հոռվմ իր տարած յաղթանակներու շրջանին որքան աւարտութեամբ կը զտոյէր նոյնքան կը կրկնապատկուէր ազնուականներու եւ զօրավարներու անյազ ընչաքաղցութիւնն ու զեղխութեան ցանկութիւնը եւ գերիներու հանդէպ ցոյց արուած անգթութիւնը: Իսկ երբ այդ յաղթանակները վերջ գտան իշխող դատակարգը սկսաւ գերիացած ժողովուրդներու արիւնը ծծել զիրնալու համար:

Փլինի կ'ըսէ որ Ափրիկէի հարուստ գաւառներու կէսը վեց մարդոց կը պատկանէր որոնք մարդկութեան օգտակար բոլոր արտադրութիւնները կը կողոպտէին անկուշտ կերպով:

Մարտիրոսութիւնը քրիստոնէական շրջանին յատուկ չէ. նախաքրիստոնէական շրջանին ալ եղած են նշանակելի թիւով մարտիրոսներ որոնք աշխատեր, կռուեր ու զոհուեր են գերիներու ազատութեան համար: Մենք անոնց հուշակաւորներուն յատուկ բա-



ժին մը յատկացուցեր ենք մեր երկատիրութեան Գ. մասին մէջ, վեր առնելով հերոսները առանձին առանձին:

Այստեղ պիտի յիշենք միայն երկու պատմական դէպքեր համառօտ կերպով: Մին Մազարայեցիներու ժամանակ հրեաներու յաղթական շրջանն էր 175-էն 140 թուականներուն (Ն. Ք.): Միւսը հրեաներու մասսայական ջարդն է որ տեղի ունեցաւ 70 թուակա- նին (Յ. Ք.) Տրտոսի ձեռքով:

175 թուականին (Ն. Ք.) երբ Հոովմ իր յաղթանակներու փառքը կ'ապրէր, դարձեալ ստիպուած էր կաշառել իր գործակալ- ները Անտիոքի, Պերկամիսի, Երուսաղէմի, Եփեսոսի եւ շատ մը Արեւմտեան Ասիոյ քաղաքներուն մէջ եւ կ'աշխատէր ամէն հնարա- ւոր էնտրիկներով ապահովել իր իշխանութիւնն ու հսկողութիւնը: Եւ առանց պատերազմի նա յաջողած էր այդ ընել: Նրա ուշադրու- թիւնը մասնաւորապէս Անտիոքի վրայ էր: Քաղաքին թագաւորը, Անտիոկոս Եպիպանէս, տնտեսելով որ իր քաղաքին մէջ հրեաները բազմանալով տնտեսական աղբիւրները առած էին իրենց ձեռքը, սկսաւ ուժգին հալածանք մը հրեաներուն դէմ:

Երուսաղէմ 300 մղոն հեռու էր Անտիոքէն: Հոն Մատաթիա անունով մէկը կար որ մեծ ժողովրդականութիւն շահեր էր. ան ունէր երեք զաւակներ որոնք իրենց հօր մահուան վրայ երդումը բաժնէին երբայեցիներու ազգը բնաւ չենթարկել հոովմէական իշ- խանութեան: Ժողովուրդը մէկի մարդու պէս միացաւ անոնց դի- մադրելու սուրիական յարձակումներուն: Անտիոկոս երբ այդ պատ- րաստութիւններու լուրը իմացաւ իր Լիսիոս հրամանատարը վաթ- սուն հազար զօրքով զբեկեց Յուդայի երկիրը: Մազարայեցիները, դարանակալ, յանկարծակի դրոհ տալով բանակը խուճապի մատ- նեցին եւ սպաննեցին չորս հազար զինուորներ:

Յաջորդ տարին, Անտիոկոս նորէն իր զօրավարը զբեկեց, այս անգամ վաթսուներեւինց հազար զինուորներով որոնց հինգ հազարը բնաբանի հեծելազօրք էին: Սուրիացի զօրավարը դարձեալ պար- տուեցաւ թողլով որ հրեաները բացարձակ տէրը դառնան իրենց երկրին ու հիմնարկութիւններուն: Ի վերջոյ Յովնաթան, Մատա- տիայի միւս որդին, իր յաղթութիւնը տարաւ մինչեւ Անտիոք: Ա- սիկա Յուդայի երկրին ազատութեան ու փառքի շրջանն էր որ դըժ- բախտաբար երկար շտեկեց որովհետեւ Հոովմ չէր քնացեր: Վես- պասիանոս կայսեր օրով (9-79 Յ. Ք.) Տրտոս պաշարեց Երուսա- ղէմը եւ զայն զրաւելով ջարդեց հրեաները: Ճողճֆուս սպաննուած- ներու թիւը կը ներկայացնէ մէկ միլիոն, իսկ Տակիտոս՝ վեց հա- բիւր հազար: Ասիկա հրէից պատմութեան ամէնէն ողբերգական

էջը կը կազմէ:

Այժմ տեղին է ըսել թէ ինչո՞ւ տիրող դասակարգը իր հա- լածանքն ու ջարդարարութիւնը կը շարունակէր նախաքրիստոնէա- կան շրջանին գործաւորական միութեանց ու հրեաներուն դէմ, իսկ քրիստոնէական շրջանին հալածեալներուն վրայ աւելցուց քրիստոն- եայ նորակազմ բջիջները որպէս վտանգաւոր տարրեր:

Հոս պէտք է ըսել թէ քրիստոնէական շրջանի սկզբնական տարիներուն այդ երեք իմբանորումները, գործաւորական միու- թիւնները, հրեաներն ու քրիստոնեաները ընդյատակեայ միացեր եւ կազմեր էին եղբայրական սրբազան երրորդութիւն մը: Անոնք ունէին իրենց դազանի ժողովատեղիները ուր կը հաւաքուէին որ- պէս եղբայրներ եւ ահ ու դողով կը խորհրդակցէին իրենց փրկու- թեան միջոցներուն վրայ:

Հոովմէական պետութեան ինչպէս եւ տիրող դասակարգին անհաշտ ատելութեան ու վրիժառութեան ողին կապուած չէր մի- միայն տիրող դասակարգի ապստամբութեան վախին հետ. կա- յին նաեւ ուրիշ աւելի խոր պատճառներ:

Գործաւորական միութիւնները, հրեաները եւ յետոյ քրիս- տոնեաները նոյն նպատակով կազմակերպուած էին. այսինքն եղ- բայրաբար ապրել, իրարու օգնել եւ աշխատիլ իրագործելու բոլո- բին ազատութիւնն ու բարօրութիւնը: Անոնց մէջ հրեաները ամէ- նէն օրինակելի խելացիներն էին. անոնք մասսայական ձեռով կազ- մակերպուած էին: Ամէն մի անգամ տարուան իր վաստակածէն որոշ գումար մը տալու էր համայնական հիմնադրամին: Այդ դրամը կը յանձնուէր հաւատարիմ գանձապահի մը: Անոնք հասարակաց ճաշարան ունէին իրենց յատուկ խոհարարով: Հանրային հիմնա- դրամով կ'օգնէին կարօտեալներուն, իսկ բացառիկ պայմաններու տակ՝ հանրային պաշտպանութեան: Այս ձեւի կազմակերպութիւն- ները ի հարկէ տիրող դասակարգին հաճելի չէին կրնար ըլլալ: Հա- սարակաց սեղանը թշնամի էր դրամի իշխանութեան: Անկէ կը նեղուէր շահարկութեան շուկան որովհետեւ անոնք մի տեսակ տըն- տեսական սոցիալիզմ հաստատեր էին իրենք իրենց միջեւ:

Գրամական իշխանութեան դէմ գործուած ուրիշ մէկ թշնա- մանքն ալ կրօնական դժով եկամուտներու նուազումն էր, որմէ կը տառապէր պետութիւնը: Կրօնական հաւատալիքը խառնուած էր քաղաքական ու տնտեսական նկատումներու հետ: Եւ իրապէս գոր- ծաւորական միութեանց, հրեաներուն եւ քրիստոնեաներուն դէմ մղուած հալածանքին բուն պատճառը աւելի տնտեսական էր քան թէ կրօնական: Աստուածներու դոհեր կը մատուցուէր. այդ ողջա-



կէզներն էին հորթեր, այծեր, ոչխարներ, եղներ, գառնուկներ: Կոսպաշտական կրօնի քուրմերը պետական պաշտօնեաներ էին: Այդ կենդանիները առհասարակ կը ստացուէին որպէս նուէր: Զոհաբերութեան օրերուն ժողովուրդին ներկայութիւնը պարտաւորիչ էր: Տօնակատարութեան ատեն ամէն ոք տօնական օրուայ աստուծոյն դրամ տալու էր. այսպէսով մեծ դուժարներ կը հանդանակուէին եւ այդ դրամները կ'երթային պետական դանձարանը: Այդ տօնակատարութեանց չմասնակցողները հերետիկոսներ էին որոնք կը նկատուէին որպէս պետութեան թշնամի, հետեւաբար որպէս ոճրագործ: Հրեաները իրենց կրօնքը ունէին, ինչպէս գործաւորական միութիւնները ունէին իրենց ուրոյն աստուածները որոնք զոհ եւ դրամ չէին պարտադրեր, այլ սէր ու եղբայրութիւն: Նոյնպէս քրիստոնեաները հակառակ էին զոհաբերութեան ու դրամի: Ահա թէ ինչու Հոովմի արիստոկրատ դասակարգը Կրոսոսը դուրս կը հանէր մեհեանէն, կը բանար Յանոսի դռները եւ պատերազմի դեւը կ'արձակէր ազատ ջախջախելու աշխարհի խաղաղասէր ու աշխատաւոր մարդերը:

Եւ ընթերցողը կրնայ երեւակայել որ այդ հալածանքի ու չարչարանքի շղթաներուն մէջ այդ անարդուած գործաւորները մարդկային քաղաքակրթութիւնը կերտելու աշխատանքը շարունակեցին առանց դադար առնելու: Պարզեմբ եզածը:

Կոշտ պողպատը կուգար Հնդկաստանէն: Տակաւին արդի դիւնականները չեն կրցած դիտնալ թէ այդ պողպատը ինչպէս կ'արտադրուէր հին ատեն: Դեռ աւելին կայ: Հին դարերու գործաւորները ներկայի կատարելագործեալ մեքենաները չունէին, բայց թէ ինչպէս կը շինէին նուրբ արուեստի ձեռագործներ, դեղեցիկ դանակներ, դաշոյններ, ծաղկազարդ սուրեր եւ այլ վալլուս դարձեր: Շինուած զարդերուն այնպիսի հրաշալի եւ անեղծանելի դոյն կը տրուէր որ նոյնիսկ արդի մեքենադէտները կը զարմանան: Եւ այդ դիւտին գաղտնիքը մինչեւ հիմա պտնուած չէ:

Եզիպտոսի քիմիագէտ արհեստաւորները զմոսելու գիւտը հրեանարած էին եւ անոր շնորհիւ դարերով պահուեցան փարաւոններու մարմինները: Դարձեալ, վարպետ գործաւորները տիրացեր էին մեղան շինելու գաղտնիքին, մեղան մը որ դարեր անցնելէ վերջ իր դոյնը չի փոխեր եւ կ'երեւնայ այնպէս ինչպէս նոր դրուած ըլլար: Ամէնչն նուրբ ու դեղեցիկ ներկերու տեսակները հնարած էին այդ գործաւորները որոնք կը ներկէին աղտուականներու եւ անոնց կիներու հագուստները: Այդ ներկերը անշուշտ ներկայիս ալ կան ու կը գործածուին, բայց անոնք չունին դարերու յարձակումը ար-

համարհող դիմադրական ուժը: Անիշխելի աղիւսներ եւ շէնքեր կառուցանող դիմացկուն նիւթերու շինութեան գաղտնիքները նոյնպէս կորսուած են ուրիշ անմեկնելի գաղտնիքներու հետ:

Մենք կրնանք թուամն մասանցը ընել նաեւ բազմաթիւ ուրիշ ճիւղերու, ինչպէս փորագրութեան, քանդակագործութեան, արձանագործութեան եւ այլ արուեստներու մէջ, բայց մեր թուածները կը բաւեն հաստատելու որ լուծի տակ չարչարուող գործաւորները եղած են մարդկային պատմութիւնը, գիտութիւնն ու քաղաքակրթութիւնը կերտողները: Իսկ այս ճշմարտութիւնը ոչ միայն յատուկ է գերետիբական դարաշրջանին, այլև անոր յաջորդող դարաշրջաններուն, նաեւ մեր ժամանակակից կապիտալիստական դարաշրջանին: Գործաւոր դասակարգը եղած է ստեղծագործող, շինարար աստուածը եւ մարդկային պատմութիւնը այդ ստեղծագործող, շինարար եւ սակայն տանջուող աստուծոյն պատմութիւնն է, պատմութիւն մը որուն սեւ էջերը կը կազմեն տիրող պարագիտ դասակարգի գործերը, ոճրապարտ ու դիւային:

Իրողութեան ցաւատիթ կողմը, սակայն, այն է որ տիրող դասակարգը վերեւ նշուած ճշմարտութիւնը չուզեր ընդունիլ. դրա պատճառը հասկնալի է: Բայց ինչ ըսել որ գործաւոր դասակարգն ալ իր կոյր համակերպութեան մէջ տակաւին հեռու կը մնայ այդ ճշմարտութիւնը ըմբռնելէ. աղիտութիւն մը որ սիւնը կը կազմէ տիրող դասակարգի տեսական իշխանութեան:

ՈՒՐԻՇ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ  
ԳՈՐԾԱԻՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՑ ՇՈՒՐՁ

Մենք ըսինք որ գործաւորական միութիւններ գոյութիւն ունեցեր են հին դարերուն, Սողոնէն ու Նումայէն դարեր առաջ, եւ ամէն միութիւն ունէր իր աստուածը կամ աստուածուհին: Դիւնա աստուածուհին Աքամազդի դուստրն էր, աշխատաւորներու խնամակալը, բարեկամը՝ մարդկութեան արտադրող դասակարգին որ կը կոչուէր նաեւ փրկիչ: Նա լուսին աստուածուհին էր որ կը պաշտպանէր որսորդները, հողագործները, արուեստագէտները եւ աշխատաւորները: Անհաստալի չէ, ուրեմն, երբ ըսենք թէ Պղատոն իր Համրապետութիւնը գրած է գործաւորական կազմակերպութիւններէն ստացած ներշնչումով:

Քրիստոսէ վեց հարիւր տարի առաջ խեղճ լուսցարար կիները եւս ունէին իրենց միութիւնը որ կը կոչուէր ըրաֆոս: Հոմերոս այս կարգի միութեանց ըրաֆոս անունը վեր առնելով այդ մասին կը խօսի տարբեր իմաստով: Նա ըրաֆոս անունին կուսայ հան-



բային դանձին վճարուած թոշակի իմաստ, որովհետեւ այդ գումարը կը յատկացուէր կարօտեալներու որոնք հասարակաց սեղանէն կը ճաշէին: Հոմերոս կ'ըսէ որ այդ դրութիւնը յատուկ էր յունարէն խօսող ժողովուրդներուն եւ նուիրականացած էր աստուծոյ մը կամ աստուածուհի մը հաւանութեամբ:

Հին դարերու գործաւորական միութիւնները մեր ներկայ օրերու բանուորական-արհեստակցական միութեանց չեն նմանիր: Մենք գիտենք թէ այս վերջիններէն ոմանք անուանապէս անկախ բայց իրապէս ենթարկուած են կապիտալիստական ընկերութեանց, իսկ միւսները՝ կղզիացած պարսպապատ միութիւններ են որոնք միմիայն իրենց անդամներուն կեանքով կը հետաքրքրուին, ուրիշներու մասին կամ քաղաքական պայքարի մասին չեն մտահոգուիր: Հին դարերու գործաւորական միութիւնները ոչ միայն հասարակաց սեղանով կապուած էին իրարու, այլեւ սրտով ու հոգիով: Անոնց համար կրնանք ըսել թէ անոնք տուեալ պայմաններու տակ քաղաքական կուսակցութիւններ էին որոնք կ'ուզէին իրենց ներկայացուցիչները ընտրել հասարակական գործերու վերահսկողութեան մէջ: Այս իմաստով՝ անոնք սոցիալիստական արհեստակցական միութեան հանգամանք ունէին եւ թոյլ չէին տար որ իրենց առաջնորդները հակին տիրող դատակարգին կողմէ եւ փորձեն դաւաճանել հանրային շահուն: Անոնց մէջ եղբայրական սէրը խոր էր, մաքուր եւ անխարդախ, եւ այդ սէրը չէր ապրեր միայն կենդանութեան ատեն, այլ կը շարունակուէր գերեզմանէն ալ անդին: Միութեան անդամները երբ մեռնէին անոնց մարմինները կ'աւրէին եւ մոխիրները կը խաւնէին իրարու որպէսզի անոնք եղբայրաբար նոյն սիրով կապուած մնային նաեւ յաւիտենականութեան մէջ:

Ուեկ միութեան մէջ մտնել ուղող թեկնածու մը ամենախորքնութենէ անցնելու էր: Առաջին անգամ նկատի կ'առնուէր անոր ձիրքը, ընդունակութիւնը. ամէնէն աւելի կարեւորութիւն կը տրուէր դերիններուն: Ամէն անգամ պարտաւոր էր գործքով ապացուցանել որ ինք հաւատարիմ, մաքուր, անկեղծ եւ սուրբ մարդ է: Փողբառ երբ կը խօսի այս միութեանց շուրջ կ'ըսէ որ էկնաւ կը նշանակէ սրբութիւն, մաքրութիւն, ժուժկալութիւն, անեսականութիւն, իր ընկերներուն համար զոհուելու պատրաստակամութիւն եւ կ'աւելցնէ. «Անոնց այդ ըմբռնումն էր որ զարեւ յետոյ ծնունդ տուաւ Գառն Աստուծոյ կերպարին»:

Այդ օրերուն մարդկայնութեան գաղափարին շուրջ ալ տարբեր ըմբռնում կար: Գերին մարդ չէր, այլ աննշան, շարժող արարած մը, ոչնչութիւն մը որ ոչ մի բան յուսալու իրաւունք ունէր:

Օրէնքը միշտ սեւ զիծ մը քաշած էր անոր առջեւ: Պղատոն որ որպէս արիստոկրատ գործաւորը կը ճանչնար միայն աշխատողի, արտադրողի ճակատագրական պարտականութեամբ, կը կարծէր թէ մարդկայնութիւնը ազնուականութեան շրջանակին մէջ ըմբռնելի էր: Պղատոնի կարծիքով մարդկայնութիւնը չորս արժանիքներով կը յայտնագործուէ: Առաջին՝ մարդը ծնունդով արիստոկրատ ըլլալու է. երկրորդ՝ իր արիստոկրատութիւնը վաւերացնելու է զինւորական աչքատու գործերով. երրորդ՝ մրցախաղերու մէջ յաղթական ըլլալու է. չորրորդ՝ հանճարի յատուկ իմացական ուժ ունենալու է: Ոչ միայն յոյները, այլեւ Հռովմի քաղաքացիներն ալ նոյն համոզումը ունէին: Բայց աւող, գերին այդ արժանիքներէն ուեկ մէկը չունէր ու չէր կրնար ունենալ: Անոր բաժին ինկածը ստրկական աշխատանք էր, ուրիշ ոչինչ: Գերին միայն հասարակաց սեղանին շուրջ ճաշած ատեն եւ իր գործաւորական միութեան հաւաքոյթին մէջ իր մարդկայնութեան գիտակցութիւնը կ'ունենար, գիտէր թէ ինք մարդ էր, բայց գերի:

Իրենց ոլորմելի դրութեան որպէս բնական հետեւանք երբ ամէն բան կ'արտադրէին եւ իրենք կը մնային զրկուած, այս եղկելի էակները միայն մէկ երազ ունէին, փրկելի մը դալատեան երազը: Եւ այդ փրկիչը զարեւ անցնելէ վերջ եկաւ: Այո, եկաւ, բայց նա բանուորութիւնը իր ստրկական դրութենէն չկրցաւ ազատել, այլ ստեղծեց նոր կրօնք մը որ ի վերջոյ տիրող դասակարգի ձեռքին մի ստեղծելի գործիք եղաւ եւ բանուորութիւնը մնաց նոյն ողբալի դրութեան մէջ, ինչ որ էին իր նախահայրերը:

Հին դարերու ազնուականները հաճոյք կը զգային տեսնելով գերիններու սանձանքները, լսելով անոնց սրտակեղէք ողբերը: Անոնք կը հրճուէին երբ գերինները կը մօթոտուէին իրենց իսկ շինած դանակներով, կը խեղդուէին իրենց իսկ շինած պարաններով: Արդեօք նոյնը չե՞ն այս օրերու կապիտալիստները որոնք իրենց հաշիշ մատակարարող Քրիստոսի եկեղեցիներուն առատ նուէրներ կուտան, մինչ միւս կողմէ դիւային գէնքեր կը հնարեն միլիոնաւոր մարդիկ կոտորելով իրենց կապիտալի կուտակումը արագացնելու համար: Այսօրուան մեր կրօնքը, մեր հաւատալիքները, մեր եկեղեցական ծէսերը ինչ զարեւու նախատիպ օրգաններու ժառանգութիւններն են, անոնց դիմափոխութիւնները: Հռովմի մէջ փոքրիկներու կաճառը կար, կամուրջ շինողներու միութիւնը: Այդ միութիւնը ունէր իր տեսուչը որ կը կոչուէր պապ (pope): Այս մարդը նոյնիսկ ցուպ մը չունէր ինքզինք պաշտպանելու համար, ոչ ալ տաքուկ հագուստ մը իր կիսամերկ մարմինը ծածկելու համար:



Բայց այսօր մօտեցէք Հոռովի փոնքիփին, Պապին եւ տեսէք թէ ինչպէս աղամանդակուս թագ մը դրած է իր գլխին եւ ոսկեճամուկ հագուստ իր մարմնին: Փշէ պսակ կրող Քրիստոսի ծառան...:

Բայց չհեռանանք մեր նիւթէն. անդրադառնանք դարձեալ գործաւորական միութեանց:

Յունարէն խօսող աշխարհին մէջ ըրանոս գործաւորական միութիւնը ոչ միայն միութեան անդամներուն անտեսական բարօրութեանը կ'օժանդակէր, ոչ միայն հասարակական դործեր կը կատարէր, այլև փոխառու ընկերութեան գերք ունէր եւ շատ յաճախ գերիններու ազատութեան համար փրկադին կը վճարէր եւ անոնց ազատութիւնը կը զնէր: Ի հարկէ հասկնալի է, ազատագրուած գերին յետոյ աշխատանքով կը վճարէր իր պարտքը:

Ասիկա ցոյց կուտայ թէ այդ դարերուն գործաւորական միութիւնները ինչպիսի համամտողային գազափարներով տարուած, պարսպաւորուած չէին այլամերժ կղզիացումով:

Հրեաները, հարածուած ըլլալով բոնակալ թագաւորներէն (այդ հալածանքին պատճառը անտեսական խնդիրը ըլլալը նշեցինք արդէն), հաստատուած էին այն տեղերը ուր մովսիսական օրէնքներէն աւելի սոցոնական օրէնքները կ'իշխէին: Օրինակ Կիպրոս, Չմիւռնիա, Նիկիա եւ Փոքր Ասիոյ զանազան քաղաքները որոնց մէջ կազմեր էին ըրանոսեան ընկերութիւններ: Անոնց մասին որոշ արձանագրութիւններ, որպէս պատմական վկայութիւններ, երևան բերուած են հնադէտներու կողմէ: Նոյնանման արձանագրութիւններ գտնուած են նաեւ Եգիպտոսի մէջ ուր Անուբիս նշանակուած է որպէս խնամակալ աստուածութիւն: Անիկա ողջախոհութեան ալ աստուածն էր: Վարին Եգիպտոսի մէջ տապանաքարերու վրայ գրուած է անոր անունը: Ան ունէր գայլաշունի գլուխ եւ պահապանն էր գերեզմաններու, որովհետև այդ տեղերու հրեաները կը հաւատային թէ մարդուն մեռնելէն վերջ անոր հոգին կը թափառի իր գերեզմանին բոլորաբը, անկէ յետոյ եթէ ան առաքինի եղած է, ընկերասէր ու բարի մարդ, այդ հոգին կ'երթայ արքայութիւն, իսկ եթէ եղած է չար, ինքնասէր եւ գող անոր հոգին կ'երթայ դըժոխք ուր նա կը տանջուի յախտենական կրակներու մէջ: Այդպիսի կազմակերպութիւններ կային նաև Քիոսի եւ Եգէական Ծովու բոլոր կղզիներուն մէջ:

Եգիպտոս հնուց ի վեր միշտ արդաւանդ հոգ ունեցեր է այդպիսի ընկերակցութեանց առջև: Պատմական իրողութիւնները կը հաստատեն որ սոցոնական կազմակերպութիւնները ամէնէն աւելի ծագկած են Աղեքսանդրիոյ մէջ: Յայտնի հեղինակ Օրհլերի

հաւաստիացումին համաձայն այդ օրերու գործաւորական ընկերակցութեանց միջև շարունակ պահպանուած է եղբայրական սէր իրերօզնութեան սկզբունքով: Այդ ընկերութիւնները թէև ունեցեր են զանազան անուաներ, ինչպէս ըրանոս, քէասոս, էսէնէս, նագարի, կոլլեկիա, եւայլն, բայց բոլորն ալ ունէին նոյն բնօրէնը, նոյն նպատակը:

Փոքր Ասիոյ մէկ բաժնին, Գարիայի մէջ որմնաղիւրներու միութիւնները շատ ուժեղ էին: Անոնք շինած են թատրոններ:

Գալիլիա Ծովուն եզերքը տապանաքարեր գտնուած են որոնց վրայի արձանագրութիւններէն կը հասկնուի որ նաւաշինութեամբ պարապող գործաւորներն ալ ունեցեր են իրենց միութիւնը, նոյնպէս ձկնորսները:

Այս բոլոր գործաւորական միութեանց կարգին պէտք է յիշատակել նաև բանաստեղծներու միութիւնը: Ասոնք ալ մտքի աշխատաւորներ եղած են, ինչպէս ձեռքի աշխատաւորները: Ասոնց ալ նպատակը եղած է ասլրել, սիրով ասլրել, իրարու օգնելով, եւ սպասել փրկիչի մը գալստեան:

Ամէնէն նշանակալից իրողութիւնը զոր կ'ուզենք նշել հոս այն է որ մասնաւորապէս Աղեքսանդրիոյ մէջ գործաւորական միութիւնները հաստատել են զպրոցներ, գարմանատուն եւ գրադարան: Ասոնք մտաւորական մարդին վրայ աւելի զարգացած էին. կրօնը անոնց համար մի տեսակ վարագոյր էր որուն հետև ծածկուած էր անտեսական նպատակը. անհատական սեփականատիրութեան վերացում, հաւասարութիւն եւ եղբայրութիւն: Բայց իրենց մէջ արմատացեր էր վերածնունդի հաւատքը: Քրիստոսէ զարեր առաջ անոնք կը հաւատային թէ փրկիչ մը պիտի գայ աստուածային հրամանով, նա պիտի ծնի կոյտէ մը, աշխարհի մարդկութիւնը պիտի փրկէ եւ պիտի հաստատէ արդարութեան թագաւորութիւնը: Այն ատեն մեռնող արդար հոգիները յարութիւն պիտի ստաննն եւ այլևս մահ պիտի չըլլայ: Անոնք այս հաւատքով ալ իրենց հաւաքոյթներուն մէջ ունէին նոյն երազային փրկիչի անունով մկրտութեան եւ օժման ծէսեր: Այս հաւատարիքներէն զուրս անոնց բոլոր գործերը անտեսական ուղեգծին վրայ էին:

Այսպէս, ուրեմն, կը տեսնենք թէ գործաւորական այս կազմակերպութիւնները առանց իրենց ուղեւուն կամաց կամաց նոր դարաշրջանի մը համար հոգ կը պատրաստէին աննկատելի կերպով:

Այդ դարաշրջանն էր քրիստոնէական դարաշրջանը:

Որպէսզի հասկնալի ըլլայ Քրիստոսի մը ասպարէզ լինելը,



մենք մի քիչ եւս պիտի զբաղինք գործաւորական կազմակերպութեանց հարցով:

ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ ՀԻՆ ԴԱՐԵՐՈՒՆ

Միջազգայնականի գաղափարը կապիտալիստական դարաշրջանի ծնունդը է: Այդ գաղափարը ունեցեր են մարդիկ գերետիրական շրջանին ալ, մասնաւորապէս հռովմէական կայսերական շրջանին: Հռովմ հին աշխարհը իր տիրապետութեան տակ աւնելէն յետոյ հպատակ ազգերու մէջ տարածեց համաշխարհաքաղաքացիութեան գաղափարը. Հռովմի կայսրը միջազգային կայսր էր, իսկ Հռովմի քաղաքացիները՝ համաշխարհային քաղաքացիներ: Ասիկա Հռովմի կայսերապաշտական միջազգայնութիւնն էր: Անոր հետ ծագում առաւ գործաւորներու միութեանց միջազգայնակութիւնը: Մենք այժմ առաջինով պիտի չզբաղինք, այլ երկրորդով:

Մենք տեսանք թէ ամէն երկրի մէջ Սոցիոնի օրէնքներու թոյլտուութեամբ կազմուած էին զանազան ճիւղերու կապուած գործաւորական միութիւններ մեծ մասով յունարէն լեզուն գործածող երկիրներու, ինչպէս նաեւ ամերիկեան գարգացած քաղաքներու, ի մասնաւորի Ալեքսանդրիոյ մէջ:

Այսօր սխալած չենք ըլլար երբ ըսենք թէ շատ քիչեր գիտեն որ հին դարերուն գոյութիւն ունեցեր է միջազգային մեծ ընկերութիւն մը, արուեստագէտներու ընկերութիւնը: Ներկայիս այդ իրողութիւնը արդէն փաստուած է շնորհիւ Պերլինի Գիտութեան Ակադեմիայի տեսուչ Տր. Օզուստ Բախի: Փողարտ, Մորի եւ ուրիշներ ալ առանձին ուսումնասիրութիւններով ապացուցեր են որ նման կազմակերպութիւններ գոյութիւն ունեցեր են Քրիստոսէ տասնեակ դարեր առաջ: Անոնք իրենց ծանօթութիւնները քաղած են քարետախտակներու արձանագրութիւններէն եւ Լուսինանի, Աթանիոսի եւ Արիստոտէլի գործերու մէջ եղած թուուցիկ ակնարկութիւններէն: Արիստոտէլ, օրինակի համար, կ'ըսէ որ դերասանները բանաստեղծներէն աւելի մեծ ժողովրդականութիւն կը վայելէին:

Հին դարերուն խեղճուկ ընկերակցութեանց մէջ դիոնիսեան կամ բազոսական արուեստագէտները մեծապէս գնահատուած են հին աշխարհի ակնասուր մարդոցմէն: Անոնք վայելեր են միապետներու խնամակալութիւնը, ինչպէս Մեծն Ալեքսանդր, Ներոն, Ատրիանոս եւ ուրիշներ: Անոնք եղած են դելֆեան օրհներգութեանց երգահաններ. անոնց կը վերադրուին նաեւ շատ մը գրաւոր երաժշտական երգեր որոնք վեր կը հանեն հետաքրքրական գրականութեան մը արժէքաւոր նշխարները:

Դիոնիսեան արտիստներու եզրայրական միութեան անդամ կրնային ըլլալ միայն անոնք որոնք մկրտութեամբ մաքրամաքուր հողի մը կ'ունենային: Եւ այդ մկրտութեան արարողութիւնը տեղի կ'ունենար Դիոնի տաճարին մէջ. իսկ այդ ատենները Քրիստոս տակաւին ծնած չէր:

Այս կազմակերպութիւնները պէտք է ըսել թէ հին քաղաքակրթութեան ամէնէն կարկառուն ուսուցիչները եղած են: Ասոնք ամէնէն ուսեալ, ամէնէն հանճարեղ եւ յառաջդիմական արհեստակցական միութիւններն էին:

Մոյն ժամանակաշրջանին մարդկութեան սէրը դէպի թատերական ներկայացումները եւ անոնցմով հաճոյացումը իր ծայր աստիճանին հասած էր: Հռովմ աշխարհին յաղթեր էր: Օգոստոս եւ Թիպերիոս կայսրերը իրարու ետեւ գրազած էին կայսրութեան կտրուած մասերը իրարու միացնելու գործով: Անբարոյականութիւնը մէկ կողմէ, զինուորական սարկութիւնը միւս կողմէ բացեր էին մի այնպիսի անդունդ զոր լեցնելու կոչուած էին արտիստներու այդ կազմակերպութիւնները: Անոնք, հաւատարիմ սոցոնական օրէնքներուն, կառչեր էին փոխադարձ սէրը իրենց միջեւ անեղծ պահելու, հասարակաց սեղանի սրբութիւնը պահպանելու եւ հասարակական գործերու մէջ իրենց ներկայացուցիչները ընտրելու սկզբունքին:

Դիոնիսեան արտիստները, երգողներ, պարողներ, դերասաններ եւ ուսուցիչներ, իրենց կազմակերպութիւնները կը պահէին խիստ կարգապահութեան օրէնքներու մէջ: Ունէին իրենց զպրօցները ուր կը սորվեցնէին արուեստի նրբութիւնները: Անոնք չափազանց սէր եւ յարգանք ունէին իրենց կիներուն հանդէպ որոնք գործունեայ էին իրենց կազմած գաղտնի լիկաներուն մէջ: Անոնց մօտ ոչ մէկ ատեն այր մարդու դերիշխանութիւնը նկատելի էր:

Ի՞նչ է ասոնց կրօնական դիժը:

Դիոնիսեան արտիստներուն աստուածը Դիոնիսիոսն էր. ճիշդ նոյնը ինչ որ էր հռովմէացիներուն համար Բազոսը: Իսկ կիներուն համար կեցեր էր Արաեմիսը՝ յոյներուն եւ Գիանան՝ հռովմէացի աղքատ կիներու աստուածուհին:

Դիոնիսեան արտիստները իրապէս միջազգային կազմակերպութիւն ունէին. անոնք երկրէ երկիր կը ճամբորդէին, կ'ուսումնասիրէին իւրաքանչիւր երկրի աւանդութիւնները, կրօնական հաւատալիքներն ու դիցաբանական պատմութիւնները եւ անոնցմով կը պատրաստէին թատերախաղեր: Պէտք է ըսել, սակայն, որքան ալ



որ մեծ ժողովրդականութիւն կը վայելէին անոնք, նոյնքան ալ զրկեալ եւ չքաւոր էին, այնպէս որ իրենք եւս իրենց երազի աչքերը յառած էին փրկիչի մը դալատեան: Այո, փրկիչ մը գալու էր ազատելու մարդկութիւնը տիրող արականութենէն, որպէսզի մարդիկ սարկէին փոխադարձ սիրով ու եղբայրարար:

Անոնց ներկայացուցած թատերախաղերը որոնցմով կը պատկերացնէին տիրող դասակարգի անմարդկային անդթութիւնները, արտակարգ խանդավառութեամբ կ'ընդունուէին նոյնիսկ Հռովմի մէջ: Ազնուականները գերազոյն հրճուանքով կը դիտէին իրենց վայրենի գործերը: Անոնք չէին անդբազանաբ այն իրողութեան որ դիտնէսեան արտիստները տիրող դասակարգի գերեզմանը կը փորէին, որովհետեւ անոնց թատերախաղերը տառապող ժողովուրդի հոգեբանութիւնը կը պատրաստէին արդար ու նոր դարաշրջան մը ողջունելու համար:

Դիտնէսեան արտիստները որոնք տիրացեք էին յուշարէն եւ լատիներէն լեզուներուն ունէին մեծ թիւով գործակալներ որոնք երկրէ երկիր կը ճամբորդէին եւ իրենց կազմակերպութեան համար կանխաւ սակարկութիւն կ'ընէին եւ անոնց համար հող կը պատրաստէին: Անոնք կազմակերպութեան ընտրանի մարդիկն էին, ամէնէն զարգացած ու ճարտասան մարդիկը: Աթենասոս գանոնք կը կոչէ ուսեպլներու փաղանգ, իսկ Արիստոտէլ գանոնք կ'անուանէ գրական դատաւորներ:

Սուրբոյ թագաւոր Մեծն Անտիոքոսի (237-187 Ն. Ք.) օրով արտիստ գերասաններու խումբ մը որ մեծ հռչակ հանած էր թատերախաղով մը որու առաջձը առնուած էր Հեղհաստանէն, եկած էր Սուրիա: Թագաւորը իր վերջին տարին երբ ներկայ եղաւ այդ թատերախաղին այնքան հիացաւ որ գերասանները վարձատրեց նուէրներով:

Սոյն գերասանական խումբը յետոյ անցաւ ուրիշ երկիրներ եւ ամէնէն վերջը մտաւ Հռովմ: Հռովմի ազնուականներն ու ռամիկները որոնք սովոր էին գուարճանալ ողբերգական տեսարաններով, մեծ հաճոյքով ըմբռնեցին արտիստներու այս պիէսը, առանց դոյրն իսկ չափով թափանցելու անոր վտանգաւոր, յեղափոխական բնոյթին:

Ի՞նչ էր այդ պիէսին կմախքը:

Քրիստի անունով մարգարէ փրկիչը որ աստուածային շունչով կոյսէ մը ծնած էր, կուզայ քարոզել նոր վարդապետութիւն մը, սիրոյ վարդապետութիւնը, գերիներու, աղքատներու եւ զրբ-

կուածներու վարդապետութիւնը<sup>(\*)</sup>: Ան կը գործէ հրաշքներ, մեռած մարդոց յարութիւն առնել կուտայ, կաղերք, կոյրերք, անդամալոյծները կը բժշկէ, ապա կը ձերբակալուի, կը բանտարկուի ու կը խաչուի երկու աւագակներու հետ: Յետոյ գերեզման կը դբուի, գերեզմանէն յարութիւն կ'առնէ ու կը բարձրանայ երկինք:

Այս պիէսը չափուած ձևուած էր հնդիկներու Քրիշնա աստուծոյն կեանքին ու գործերուն վրայ: Քրիշնա (Վիշնու) Որդի Աստուծոյ Մարգեղեալ Աստուածը երբ բաղդատենք քրիստոնեաներու պաշտած Քրիստոսին հետ պիտի տեսնենք նոյնանման եզրեր: Այս երկուքին, Քրիշնայի եւ Քրիստոսի հետ կուզայ նաեւ Բուզգան: Քրիստոսի վերադրուած շատ մը բաներ դարեր առաջ վերադրուած են Բուզգայի: Բուզգայականները պրահմիականներէն փոխ առին շատ բաներ, քրիստոնեաներն ալ այս երկուքէն փոխ առին շատ բաներ եւ անոնցմով հագուեցուցին Քրիստոսը: Եւ քրիստոնէութիւնը եղաւ միջազգայնական վարդապետութիւն որուն աստաղծները պատրաստողները եղան արտիստներու գերասանական միութիւնները: Անոնց պատրաստած պիէսը տեսնողները (մասնաւորապէս ճնշուածներն ու զրկեալները) մտածեցին թէ անպայման այդպիսի փրկիչ մը ծներ ու սպրեք էր, քարոզեք, հրաշքներ գործեր ապա խաչին վրայ մեռեր էր: Եւ ահա Յիսուս Քրիստոս մը: Եւ քրիստոնեայ նախահայրերը որոշեցին այդ փրկիչին ծննդեան տեղը, օրը, խաչելութեան ու յարութեան օրերը եւ կազմեցին չորս աւետարանները:

Ասով իրականացաւ միջազգայնականի գաղափարը, որպէս հակադրութիւն Հռովմի կայսերապաշտական միջազգայնականին:

Այստեղ կ'արժէ որ մէջբերենք մի քանի օրինակներ որոնք ցոյց կուտան քրիստոնէական միջազգայնականի հաւատքի ազբիւրները:

ՔՐԻՇՆԱ

ԲՈՒԴԴԱ

Քրիշնա Դեւյատ անունով անարատ կոյսէ մը ծնած էր: Նա մաքուր ու անարատ էր եւ Տէրը անոր համար ուզեց որ Քրիշնան անոր արգանդէն գուրս դայ աչխարհ: Երբ Քրիշնա ծնաւ հրեշ-

Բուզգա ծնած է Մայեա կոյսէն: Մարիամ եւ Մայեա նոյն անուններն են: Երկինքէն Սուրբ Հոգիի զօանոր արգանդէն գուրս դայ աչխարհ: Մայիսի վրայ իջած է եւ նա Բուզգան յղացեր է:

(\*) ORIGIN OF CROSS, հեղինակ Sha Rocco: Տպագրուած Լոնտոն, 1904 թուականին:



տակներու խումբ մը փառաւորնց երգելով. «Այս շնորհընկալ կոյսէն ծնած մանուկը Բարձրելոյն որդին պիտի կոչուի եւ աշխարհիս խաղաղութիւն պիտի պատճառէ:

(Maurice's History of Hinduism. Vol. 1, page 93).

(Bunsen's Angel Messiah, page 35).

Բուդդայի ծնունդը երկնից վրայ աստղով մը յայտարարւեցաւ:

(Bunsen's, page 42).

ՔՐԻՍՏՈՍ

Ու Հրեշտակը անոր զաւրով ըսաւ. «Ողջոյն քեզ, ով շնորհընկալ կոյս: Տէրը քու հետդ է. դուն կանանց մէջ օրհնեալ ես, որդի մը պիտի ծնիս: Նա Բարձրելոյն որդին պիտի ըսուի եւ անոր անունը Յիսուս պիտի դնես: (Ղուկ. Աւետ., Ա. 28-31-33):

Երկնքի վրայ երեւցած աստղ մը Յիսուսի ծնունդը յայտարարեց: (Մատթ. Բ. 2):

ՔՐԻՇՆԱ

Քրիշնայի ծննդեան ասուածունն հորիզոնին մէկ մասը լուսաւորուած էր, կարծես բովանդակ աշխարհը լուսնի լոյսով ցօղուած էր: Երկնից ողիները եւ յաւերժահարսները կ'երգէին ու կը պարէին եւ ամպերը մեղմ ու հաճելի ձայներ կը հանէին:

(Vishnu Purana, p. 102).

Քրիշնա թէեւ արքայական սերունդէ էր, սակայն ամենախոնարհ կերպով քարայրի մը մէջ ծնաւ:

(Maurice's History of Hinduism. Vol. I. page 98).

ԲՈՒԴԻԱ

Բուդդայի ծննդեան վայրկեանին Երեւելի Կանգիտութիւն եղած է: Հրեշտակները երկնից մէջ եւ երկրի վրայ երզած են եւ օրհնեալի ծնունդը փառաբանած են ըսելով. «Այսօր երկրի վրայ փրկիչ մը ծնաւ մարդոց խաղաղութիւն տալու, Հրեշտակները ուրախացնելու եւ երկրի մութ տեղերը լուսաւորելու համար»:

(Bunsen's Angel Messiah, page 39).

Բուդդա թագաւորական սերունդէ էր, բայց մտերի մը մէջ ծնաւ:

(Bunsen's Angel Messiah, page 42).

ՔՐԻՍՏՈՍ

Քրիստոսի ծննդեան ասուածունն երկնային զօր-

քերու բազմութիւն մը հրեշտակի ընկերակցութեամբ երգեցին, փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հաճութիւն (Ղուկ. Բ. 13-15):

Յիսուս Դաւիթի արքայական սերունդէն էր եւ ամենախոնարհ կերպով մտերի մէջ ծնաւ: (Ղուկ. Ա. 32):

ՔՐԻՇՆԱ

Քրիշնայի ծնած պահուն ամբողջ քարայրը հրաշալիօրէն լուսաւորուած էր. անոր մօր դէմքին վրայ փառաց լոյսը կը շար:

(Maurice's History of Hinduism. Vol. I. page 99).

ԲՈՒԴԻԱ

Բուդդայի ծնունդը կ'ենթադրուի թէ եղած է Դեկտ. 24-ին:

(Bunsen's Angel Messiah, page 52).

ՔՐԻՍՏՈՍ

Յիսուսի ծննդեան պահուն քարայրին մէջ այնպիսի պայծառ լոյս մը ծագեցաւ որ Յովսէփին եւ մանկաբարձ կնոջ աչքերը չէին կրնար տեսնել: (Յակոբոսի Աւետարան, անլուեր(\*) ԺԲ. էջ 23):

(\*) Քրիստոնէութեան սկզբնական շրջանին, միևնույն Գ. դարու վերջերը, բազմատեսակ աղանդներ ու աւետարաններ կային որոնց քիւր կը հասներ 102-ի. Աւետարան Մանկութեան, Աւետարան Թաղէոսի, Աւետարան Բարդղղամէոսի, Աւետարան Պետրոսի, Աւետարան Յակոբոսի եւայլն: Ինչպէս տեսնուի Յակոբոսի Աւետարանը Մարիամ կայր կը տանի քարայր եւ Յիսուս հոն կը ծնի:

Եկեղեցական նախահայր երանիոս 200 բուականին բոլոր աղանդները ուզեց միացնել եւ կազմել մէկ հոովմէական եկեղեցի, եւ բոլոր աւետարաններէն կազմել միայն չորս աւետարան, այն տրամաբանութեամբ որ աշխարհը չորս կողմ ունի եւ կենդանիները չորստանի են: Ան չյաջողեցաւ իր փորձին մէջ, բայց իր ծրագիրը երկու հարիւր տարի յետոյ իրագործուեցաւ... հրաշքով:

Նոր Կտակարանը կանոնացնելու համար 451 բուականին գումարուեցաւ Քաղկեդոնի եկեղեցական ժողովը: Եպիսկոպոսները համաձայն չէին իրարու հետ: Իւրաքանչիւրը իր համաձայն աւետարանը կ'ուզէր սրբացնել: Ժողովականները բոլոր աւետարանները



ՔՐԻՇՆԱ

Կովարածները երկնային ծընունդ Քրիշնան փառաբանեցին եւ անոր առջեւ ծնրագիր երկըրպագութիւն ըրին:

(Maurice's History of Hinduism. Vol. I. page 122).

Քրիշնայի ծնունդը երկնային փառքով ընդունուեցաւ: Անոր ճանդան եւ անուշահոտ իւղի ընծաներ մատուցին: (Նոյն հատոր, էջ 125):

Քրիշնայի ծնունդէն անմիջապէս յետոյ Հնդկաստանի սուրբ մարդարէ Նարիդ աստղերը կը քննէ եւ անոնց առաջնորդութեամբ Քրիշնայի կ'այցելէ եւ զայն երկնային ծնունդ կը յայտարարէ: (Նոյն հատոր, էջ 124):

ՔՐԻՍՏՈՍ

Յիսուսի ծննդեան պահուն Տէրօջը փառքը Հովիւներու բողոքով ծագեցաւ եւ անոնք փառաբանեցին եւ օրհնեցին զԱստուած մանկան ծննդեան համար: (Ղուկ. Բ. 8-12):

Յիսուսի ծնունդը երկնային փառքով ընդունուեցաւ: Անոր ոսկի, կնդրուկ եւ զմուսի ընծաներ մատուցին, (Մատթ. Բ. 11):

Երբ Յիսուս ծնաւ, արեւելքէն մոգեր եկան եւ

կը հաւաքեն, սեղանին տակ կը դնեն որպէսզի Աստուած իր հարազատ գիրքերը անոնց մէջէն գատէ ու իրենց տայ: Յանկարծ հրաշքով մը չորս աւետարանները, Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի եւ Յովհաննու աւետարանները ոտքի կ'ելլեն սեղանին տակէն ու կուգան կը շարուին սեղանին վրայ: Ասով անհամաձայնութիւնը վերջ կը գտնէ եւ չորս աւետարանները կը մնան որպէս Աստուծմէ ընտրուած աւետարանները: (Համաշխ. Կրօնքները, հատոր Ա. էջ 175):

ԲՈՒԳԻԱ

Հովիւները Բուդդայի ծնունդը փառաբանեցին ու անոր առջեւ երկրպագութիւն ըրին:

(Hardy's Buddhism, page 145).

Մանուկ Բուդդային սուղ դռնակներ եւ թանկագին առարկաներ նուիրեցին: (Նոյն գիրք, էջ 147): Բուդդայի ծննդեան այցելութիւն տուին մոգերը, մանկան վրայ երկնային նշաններ տեսան եւ տակաւին մանկան աչքերը չբացուած զայն աստուածներու աստուածք հռչակեցին (նոյն գիրք, էջ 149):

ըրին. հրեաներուն թագաւորը ո՞ր ծնաւ, որովհետեւ արեւելքի մէջ անոր աստղը տեսնեք ու անոր երկրպագելու եկանք: (Մատթ. Բ. 1-3):

ՔՐԻՇՆԱ

Քրիշնայի ծնած օրը անոր որդեգիր հայրը Նանդա ներկայ չէր. թագաւորին պատկան սուրբը վճարելու համար քաղաք զացեր էր:

(Maurice's History of Hinduism. Vol. I, page 127).

ՔՐԻՇՆԱ

Երկնային ձայն մը Քրիշնայի հօր ըսաւ որ մանուկը առնելով Եւումա զեախն միւս կողմը Գալուլ փախչի, որովհետեւ երկրի իշխանը զայն կը փնտռէ սպաննելու համար: (Նոյն հատոր էջ 149):

Երբ Քրիշնա չափահաս եղաւ իր առաջին հրաշքը կ'ըլլայ բոստ մը բժշկել: (Նոյն, էջ 175):

ՔՐԻՍՏՈՍ

Յիսուս երբ ծնաւ անոր որդեգիր հայրը Յովսէփ իր սուրբը վճարելու համար քաղաք զացած էր: (Ղուկ. Բ. 17):

Յիսուսի հայրը Յովսէփ երազին մէջ հրեշտակէն հրաման ստացաւ մանուկը եւ անոր մայրը առնել եւ Եգիպտոս փախչել, որովհետեւ Հերովդէս մանուկը կը փնտռէր սպաննելու համար: (Մատթ. Բ. 13):

Յիսուս երբ չափահաս եղաւ անոր առաջին հրաշքը եղաւ բորոտ մը բժշկել (Մատթ. Ը. 2):

ՔՐԻՇՆԱ

Խեղճ աղքատ կին մը անուշա-

ԲՈՒԳԻԱ

Բուդդա վասնդաւոր մանուկ մըն էր: Մոկատա նահանգին թագաւորը Բեմբասարի, վախնալով որ նորածին մանուկը մեծնալէն յետոյ զինք զահրնկեց պիտի ընէ, կ'ուզէր զայն սպաննել:

(Beal's Buddhism. p. 103)

Երբ Բուդդա 13 տարեկան եղաւ զայն աստուած տարին ուր ան քահանայապետները զարմացուց իր զխուրթեամբ: (Նոյն, էջ 157):

ԲՈՒԳԻԱ

Բուդդա երբ մեռաւ, արեւը



հոս իւղ, ճանդան, քրքում եւ խաւարեցաւ եւ երկնքի աստղե- մուշկ կը բերէ եւ Քրիշնայի բը վար թափեցան:

գլխուն վրայ կը թափէ: (Maurice's History of Hinduism. Vol. II, p. 114).

Քրիշնա խաչուած է երկու ա- ւազակներու հետ եւ անոր թե- ւերը խաչին վրայ տարածուած կը ներկայացուին:

(Moor's Hindu Pantheon, page 128).

Քրիշնայի մահուան ատեն շատ աղէտներ եւ չար նշաններ պատահեցան: Սեւ շրջանակ մը պատեց լուսինը. արեւը խաւս- րեցաւ միջօրեային, երկինքէն կրակ ու մոխիր տեղացին: Գե- րեզմաններէն չար ոգիներ դուրս եկան: Ամէն կողմ ոգիներ կ'ե- րեւէին:

(Moor's H. P. page 145).

ՔՐԻՍՏՈՍ

Երբ Յիսուս Բեթանիա բորոտ Սիմոնն տունն էր, կին մը ծանրադին իւղի շիշ մը կը բերէ եւ Յի- սուսի գլխուն վրայ կը թափէ: (Մատթ. ԻԶ. 6):

Յիսուս խաչուեցաւ, անոր թեւերը խաչին վրայ տարածուած կը ներկայացուին:

Յիսուսի մահուան պահուն տաճարին վարագոյրը վերէն վար երկուքի ճեղքուեցաւ, երկիրը շարժեցաւ, քարերը պատռեցան, երեք ժամ երկիրը մութը պա- տեց, արեւը խաւարեցաւ, գերեզմանները բացուեցան, շատ մը ննջեցեալներու մարմիններ յարութիւն առին, սուրբ քաղաքը մտան ու շատերուն երեւցան: (Մատթ. ԻԷ. 51-53 եւ Ղուկ. ԻԳ. 44-45):

ՔՐԻՇՆԱ

Քրիշնա երբ խաչին վրայ էր անոր կողք նետով ծակեցին:

ԲՈՒԴԴԱ

Երբ Բուդդա մեռաւ ու թաղ- ւեցաւ, մարմինը փաթթող լա-

(Moor's Hindu Pantheon, page 160).

Քրիշնա յարութիւն առաւ եւ մարմնով երկինք բարձրացաւ եւ շատ մարդիկ անոր համբարձման ականատես եղան: (Նոյնը, էջ 181):

Քրիշնա երկրորդ անգամ պի- տի երեւնայ ճերմակ ձիւլ վրայ նստած որպէս պատերազմիկ: Երբ նա երեւնայ արեւն ու լու- սինը պիտի խաւարին, երկիրը պիտի սարսուի եւ աստղերը եր- կինքէն վար պիտի թափին: (Նոյն գիրքը, էջ 263):

թերը քակուեցան եւ զերբնական զօրութիւն մը անոր զազաղին կափարիչը բացաւ:

(Beal's Budd. p. 270).

Բուդդա երկրորդ անգամ աչ- խարհ պիտի դայ իր աշակերտ- ներուն հետ եւ այն ատեն աչ- խարհի վրայ մահ պիտի չըլլայ: (Նոյն գիրքը, էջ 281):

ՔՐԻՍՏՈՍ

Յիսուսի կողք խաչին վրայ նիզակով ծակեցին (Յովհ. ԺԹ. 34): Յիսուս մեռելներէն յարութիւն ա- ռաւ (չորս ակետարաններու վկայութիւնը): Յիսուս իր յարութենէն վերջ մարմնով երկինք համբարձաւ եւ մարդիկ անոր համբարձման ականատես եղան (Գործք Առ. Ա. 9-11):

Վերջին օրերը Յիսուս երկրորդ անգամ պիտի գայ ճերմակ ձիւլ մը վրայ նստած իր պատերազմիկ: Այն ատեն արեւն ու լուսինը պիտի խաւարին, երկիրը պիտի սարսուայ եւ աստղերը երկինքէն վար պիտի թա- փին: (Յայտ. Զ. 2-15):

ՔՐԻՇՆԱ

Քրիշնա վերջին դատաստանին օրը պիտի դատէ մեռելները:

(Maurice's History of Hinduism. Vol. II, p. 304).

Քրիշնա ալֆան եւ օմեղան է. բոլոր բաներու սկիզբը եւ վախ- ճանը:

(Bhagavat Gueta).

Երբ Քրիշնա աշխարհի վրայ

ԲՈՒԴԴԱ

Բուդդա ալֆա եւ օմեղա է, առանց սկիզբի ու վախճանի:

Գերբնական էակ, յաւիտենական էութիւն:

Բուդդա 40 օր ծոմ պահեց ա- նապատին մէջ: Չար ոգին ա-

նոր խոստացաւ աշխարհի կայս- րութիւնը, եթէ նա հետեւէր ի-



էր, նա չար ոգիին դէմ միշտ կռիւի մէջ էր եւ անոր կը յաղթէր: Ուր որ երթար հրաշքներ կը գործէր: Մեռելները կը յարուցանէր, հիւանդները կը բժշկէր, անդամալոյծները, կոյրերը, կաղերը, խուլերն ու համբերը կ'առողջացնէր: Ամէն տեղ տկարը գորեղին դէմ, ճնշուածը ճնշողին դէմ կը պաշտպանէր: Ժողովուրդը անոր ճամբուն վրայ կը սպասէր եւ դայն իբր աստուածորդի կը պաշտէր:

(Maurice's History of Hinduism. Vol. II, p. 340).

բնն: Բուդդա ըսաւ անոր. «Ինձմէ հեռացի՛ր, չար աստանայ»: (Beal's Budd. p. 320).

ՔՐԻՍՏՈՍ

Որ (Յիսուս) գալոց է նովին մարմնով ի դատել զկենդանիս եւ զմեռեալս: (Հաւատոյ հանդանակ):

Ես եմ (Յիսուս) ալֆան ու օմեղան, առաջինն ու վերջինը, սկիզբն ու վախճանը: (Յայտ. ԻԲ. 13):

Երբ Յիսուս աշխարհի վրայ էր 40 օր աստանայէն փորձուեցաւ: Նա ուր որ երթար հրաշքներ կը գործէր: Հիւանդները կը բժշկէր, անդամալոյծները, կաղերը, կոյրերը կ'առողջացնէր: Մեռելներուն յարուսթիւն կուտար: Ժողովուրդը իր ետեւէն կ'երթար: Որդի Աստուծոյ կը կոչէին դայն: (Չորս աւետարաններն ալ նոյն իմաստով կ'արտայայտուին):

ՔՐԻՇՆԱ

Քրիշնա ամենասիրելի աշակերտ մը ունէր Ար-Չուան անունով: Քրիշնա իր աշակերտ Ար-Չուանի ներկայութեան այլալիկ պեղծեցաւ: Յանկարծ նա հազար արեւներու փայլովը շրջուցիչ երեւցաւ: Սմբողջ տիեզերքի փառքը մէկ անձի, աստուածներու աստուծոյն վրայ էր կեդ-

ԲՈՒԴԴԱ

Բուդդայի աշակերտներէն մին իր մէկ աչքը կը հանէ ու կը նեւախ, որովհետեւ ան զինք զայթակղեցուցեր էր: Բուդդա զայն կը զոյլէ եւ կ'ըսէ որ ամէն մարդ աղպէս ընելու է:

(Beal's Buddhism. page 330).

Անոնք որ Բուդդայի աշակեր-

րոնացած: Ար-Չուան այս տեսիլքին առջեւ շուարած խոնարհեցաւ եւ ի յարզանս իր ձեռքերը ծալած ըսաւ. «Ով Տէր Տէրանց. վախէս կը դողդղամ: Անգամ մը եւս ցոյց տուր քու մարդկային կերպարանքդ»:

(Maurice's History of Hinduism. Vol. II, p. 355).

Քրիշնա խոնարհ ու հեղ էր: Նա աղնուարար եւ վսեմ ոգիով կը քարոզէր: Նա մաքուր ու անարատ էր եւ իբր խոնարհութեան նշան նա բրահմիններու ոտքերը լուաց: (Նոյն հատոր. էջ 361):

տիլ կ'ուզէին, Բուդդա անոնց կ'ըսէր. «Ով որ իմ ետեւէս կուգայ, պէտք է աշխարհի ցանկութիւններէն հրաժարի, ուրանայ իր եսը, մաքրէ իր հոգին ու այնպէս հետեւի ինձի»: (Beal's - page 370).

ՔՐԻՍՏՈՍ

Եւ վեց օրէն ետեւ Յիսուս իր հետը առաւ Պետրոսը, Յակոբոսը եւ Յովհաննէսը ու զանոնք բարձր լիւ մը հանեց եւ անոնց առջեւ այլակերպեցաւ, ու իր երեսը փայլեցաւ արեգակի պէս, ու իր հանդերձները ձերմկցան լուսոյ պէս: Լուսաւոր ամպ մը անոնց վրայ հովանի եղաւ: Ահա ամպէն ձայն մը եկաւ ըսելով. Ատիկա իմ սիրելի որդիս է: Աշակերտները երբ լսեցին երեսուն վրայ ինկան եւ շատ վախցան: (Մատթ. ԺԷ. 1-8):

Յիսուս խոնարհ ու հեղ էր. նա մաքուր ու անարատ էր: Ի նշան խոնարհութեան նա իր աշակերտներուն ոտքերը լուաց: (Յովհ. ԺԳ. 2-11):

ՔՐԻՇՆԱ

Քրիշնա պրահմինական կրօնի աստուածներու երրորդութեան (Պրահմա, Վիշնու եւ Սիվայի) երրորդ զէմքն է, Վիշնուի մարմնացումը:

(Vishnu Purana p. 492).

Քրիշնայի որդեգիր հայրը ար-

ԲՈՒԴԴԱ

Բուդդա ըսած է. «Աշխարհիս վրայ գործուած բոլոր մեղքերը թող իմ վրայ լինան, որպէսզի աշխարհը փրկուի»:

(Hardy's Buddhist Legends page 22).

Բուդդա ոչ թէ օրէնքը լուծե-



հետևով հիւան էր:

(William's Hinduism. p. 217).

Քրիչնա 12 աշակերտներ ունէր. անոնց տուած էր մեղքերու թողութիւն տալու իշխանութիւնը: Ան կը քարոզէր երկրորդ ծնունդի հաւատքը (նոյն գիրք, էջ 251-54):

Քրիչնա ըսած է. «Ես եմ արեւին եւ լուսնոյ լոյսը: Ես եմ փայլը ուր որ կը փայլի, լոյսերուն լոյսը: (նոյն գիրք, էջ 272):

Քրիչնա ըսած է. «Ան որ կըրնայ իր անդամները իրեն հնազանդեցնել, բայց իր սրտին մէջ սուփական խորհուրդներ կ'ունենայ, այդպիսին հոգիով շնութիւն կ'ընէ: (նոյն գիրք, էջ 280):

Քրիչնա ըսած է. «Ես եմ բարութեան բարիքը: Ես եմ սկիզբը, մէջտեղը եւ վախճանը, յաւիտենական ժամանակը, բոլոր ծնունդը եւ մահը: (նոյն գիրք, էջ 286):

լու, այլ զայն լրացնելու համար եկաւ:

(Muller's Science of Religion page 28).

Բուդդա ըսաւ. «Մաւարի մէջ նստող ժողովուրդին լոյս պիտի տամ եւ մարդոց առջեւ անմահութեան դուռը պիտի բանամ»:

(Hardy's B. L., page 181).

Բուդդա ըսաւ. «Կրնայ երկինք երկրի վրայ իյնալ, կըրնայ մեր երկիրը կլանուիլ ու կորսուիլ, կրնայ Սումերա լեռը մասնիկներու վերածուիլ. կրնայ ուղիւնստը ցամքիլ, բայց ճշմարիտ կ'ըսեմ, Բուդդայի խօսքը պիտի մնայ»:

(Beal's, page 201).

ՔՐԻՍՏՈՍ

Քրիստոնէական կրօնը աստուածութիւնը երեք կերպարով կ'ընդունի, Հայր Աստուած, Որդին Աստուած եւ Հոգին Սուրբ Աստուած: Քրիստոս Որդի Աստուածն է:

Յովսէփ, Քրիստոսի որդեգիր հայրը, հիւան էր: (Աւետարանները):

Քրիստոս 12 աշակերտներ ունէր: Անոնք մեղքերու թողութիւն տալու իշխանութիւն ունէին: Քրիստոս ալ երկրորդ ծնունդ կը քարոզէր: (Աւետարաններու վկայութիւնը):

Յիսուս ըսած է. «Ես եմ աշխարհի լոյսը, ով որ իմ ետեւէս կուգայ, խաւարի մէջ պիտի չքալէ, հապա կենաց լոյսը պիտի ունենայ»: (Յովհ. Ը. 12):

Յիսուս ըսած է. «Ով որ կին մարդու կը նայի անոր ցանկանալու համար, ալ անիկա իր սրտին մէջ շնութիւն բրաւ անոր հետ»: (Մատթ. Ե. 28):

Յիսուս ըսած է. «Ես եմ առաջինը ու վերջինը: Ես կենդանի եմ: Ես ան եմ որ մեռայ, եւ անա կենդանի եմ յաւիտենա յաւիտենից: Ես ունիմ մահուան ու դժոխքին բանալիները»: Յայտ. Ա. 18):

Այստեղ կը վերջացնենք հին դարու գործաւորական միութեանց շուրջ զանազան հեղինակներու դործերէն քաղուածաբար մեր ներկայացուցած ծանօթագրութիւնները: Մենք տակաւին պիտի անդրադառնանք անոնց, քանզի քրիստոնէական դարաշրջանի բացման ու տարածման շրջանին անոնք բոլորովին չանհետացան: Միայն տեղին է նշելու յայտարարութիւնները երկու հեղինակաւոր քրիստոնեայ նախահայրերու, որոնցմէ մին է Ս. Օգոստինոս (354-430), միւսը՝ Եւսոբիոս (263-340):

Ս. Օգոստինոս ըսած է. «Մեր օրերու քրիստոնէութիւնը ոչ թէ հին ժամանակներուն անծանօթ էր, այլ նա այժմ նոր անուն ստացեր է»: Իսկ Եւսոբիոս ըսած է. «Յիսուս Քրիստոսի կրօնքը ոչ նոր է, ոչ ալ օտար»:

(Ancient Ecclesiastical History of Eusobios).

Չարմանալի չէ որ այժմու մաքրամաքուր քրիստոնեաները այս ճշմարտութիւնը չեն ընդունիր: Անոնք տակաւին շատ ճշմարտութիւններ կան որ չեն ընդունիր, որովհետեւ իշխող դասակարգի այդ ծառաները իրենց խոփոսագէմ տիրոջ շրթունքին ու մատի շարժումին կը նային:





Մ Ա Ս  
Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Հ Ր Է Ա Ս Տ Ա Ն

Ե Ի

Հ Ր Ե Ա Յ Ժ Ո Ղ Ո Վ Ո Ի Ր Դ Ը





Սոյն մասը քարգմանութիւնն է Կարլ Կաուցկիի *Քրիստոս-նկութեան Հիմքերը* հատորի Բ. մասին ուր նա կր խօսի Իսրայէլի ժողովուրդին մասին. լաւագոյն ուսումնասիրութիւն մը որուն նըմանը ես չէի կրնար գտնել :

Կ. Կաուցկի իր այդ երկասիրութիւնը գրած է 1908-ին, այսինքն այն ատեն երբ ան ուղղադաւան մարքսիզմի ամէնէն յառաջադէմ տեսարանն էր, Բ. Ինտերնացիոնալի դրօշակակիրը :

Առաջին իմպերիալիստական պատերազմին Կաուցկին *«Են-արալիստներուն կողմը քե՛նուեցաւ եւ պաշտպանեց հայրենիքի պաշտպանութեան տեսութիւնը*. Իսկ 1917-ին, չուզելով հասկնալ հոկտեմբերեան յեղափոխութեան բնոյթը, քննադատական դիրք բռնեց անոր նկատմամբ : Լենին ատոր համար իրաւամբ զինք կոչեց *«Ենեկաւ Կաուցկի»* : Եւ դա նիշդ էր. յեղափոխական Կաուցկին իր կաշիի վախճն եղեր էր յետադիմական Կաուցկի :

Կաուցկի բոլշեիկեան յեղափոխութիւնը անբնական ուսում մը նկատեց որ դատապարտուած էր ձախողանքի : Իր համոզումով ընկերային յեղափոխութիւնը կապիտալիստական զարգացած երկրի մը մէջ միայն հնարաւոր էր. իսկ Ռուսաստանը ուր փէոզալական կարգերը դեռ եւս տիրող էին, նախ անցնելու էր բուրժուական յեղափոխութեան նամբէն, ապա մտնելու էր ընկերային յեղափոխութեան ուղին : Նա բնաւ չէր ընդուներ թէ կապիտալիզմը վաղուց մտեր էր Ռուսաստան եւ 1917-ի գարնան յեղափոխութիւնը իր էութեամբ բուրժուական էր. միայն թէ պատերազմի հետեւանքով իրերու շրջանառումը կատարուեցաւ շատ արագ, այնպէս որ ոռւս բուրժուագիւն հազիւ թէ Քերենսկիի ձեռքին տուած էր յաղթութեան դրօշակը, բոլշեիկները Լենինի առաջնորդութեամբ եւ ոռւս պրոլետարիատի եւ գիւղացիութեան ուժով խլեցին այդ դրօշակը եւ յայտարարեցին սովետական սոցիալիստական հանրապետութիւն :

Այժմ մեր քարգմանած գործը *«Ենեկաւ Կաուցկիի գործը»* չէ, այլ մարքսիստ-յեղափոխական Կաուցկիի գործը :



# ԻՍՐԱՅԷԼԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

## Ա) ՍԵՄԱԿԱՆ ՑԵՂԱՅԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Իսրայէլի պատմութեան ծագումը աւելի խոր մթութեան մէջ է ծածկուած քան յունական եւ հռոմէական պատմութեան ծագումը, որովհետեւ անոր նախնական շրջաններու տեղեկութիւնները դարերու ընթացքին փոխանցուած են բերնէ բերան: Դեռ աւելին անոնք չին հրաշալիակերով սկսած են եւ երբ ի մի հաւաքուած եւ արձանագրուած են, այդ ստեղծման ամենազէջ տեսակի պրոպագանդի համար չարաչար կերպով խեղաթիւրուած են անոնք: Բացարձակապէս սխալ է ենթադրել որ աւետարանական պատմութիւնը իրական դէպքերու արձանագրութիւն մըն է: Աստուածաշունչի պատմութիւնները կրնան ըլլալ որ պատմական կորիզներ պարունակեն, բայց չափազանց դժուար է այդ կորիզները ճշդորոշել:

Ե. դարուն Ն. Ք. բարեկրօնական աքսորումի վերադարձէն վերջ է որ հրեաներու սրբազան մատենագրքերը ստացեր են ներկայիս մեր տեսած իրենց ձեւաւորումն ու բովանդակութիւնը: Այդ դարուն թուր չին աւանդութիւնները մեծ յանդիմութեամբ խորհարուած եւ անոնց վրայ աւելցուած են զանազան մտայածին պատմութիւններ, բարձրանալու ձգտող կղերական դասակարգի պահանջներուն գոհացում տալու համար: Այսպէս, կրնանք ըսել թէ հրեաներու չին պատմութիւնը իր ամբողջութեամբ խառնափնթոր պատմութիւն մըն է: Ասիկա մասնաւորապէս ճշմարիտ է նաեւ աքսորանքէն առաջ Իսրայէլի ունեցած կրօնքի մասին մեզի հասած պատմութեան համար:

Երբ հրեաները Երուսաղէմի եւ շրջակայ երկրամասին մէջ իրենց ուրոյն հասարակուրդը հիմնեցին, արձանագրութիւնները ցոյց կուտան որ անոնք չուտով իրենց մասնաշատուկ նկարագիրը դրոշմեցին միւս ցեղերուն վրայ, բայց աքսորանքէն առաջ անոնց կենցաղին ու գործերուն շուրջ սրեւէ արձանագրութիւն պահուած չէ: Բարեկացուց կողմէ Երուսաղէմի կործանումէն առաջ իսրայէլացիք կը նկատուէին միւս ազգերու նման ազգ մը որ մասնաւոր տարբերագիծ մը չունէր միւսներէն: Ատոր համար տրամաբանական հիմունք կայ ենթադրելու որ հրեաները գործնականապէս բացառիկ յատկանիշներ չէին ներկայացներ սկիզբէն:

Մեզի հասած անհաւատալի եւ ցանցառ պատմութիւնները վեր առնելով անկարելի է որ մենք կարողանանք չին Իսրայէլի ճշգրիտ պատկերը դնել: Աստուածաշունչի բողոքական քննադատութիւնը որուն փորձարկութիւնը ըրած են մի շարք աստուածաբաններ արդէն հաստատած է որ սուրբ գրոց պատմութիւնները մեծ մասով խարդախուած ու յերիւրածոյ պատմութիւններ են, բայց մինչեւ հիմա անոնք ընդունուած են որպէս սրբազան արժէք, որովհետեւ տակաւին անոնց խարդախուած կմախքը իր մերկութեամբ հրապարակուած չէ:

Իսրայէլի հասարակութեան զարգացման պատմական գիծը պարզելու մեր փորձին մէջ բացի ենթադրութիւնէ ուրիշ որեւէ գործնական միջոց չունինք: Հին կտակարանի տեղեկութիւններն են որ մեզի կը մատուցանեն օգտակար ծառայութիւն մը երբ մենք զանոնք կը բաղդատենք նոյն կացութեան մէջ զսնուող ուրիշ ժողովուրդներու մասին մեր ունեցած տեղեկութեանց հետ:

Հրեաներու պատմական գոյութիւնը սկիզբ կ'առնէ այն ստեղծերէն անոնք կը մտնեն քանանացուց երկիրը: Անոնց հովուական շրջանի պատմութիւնները կամ չին ցեղային աւանդալիպեր են պրոպագանդայի զարդերով, կամ ոգիներու առասպելներ եւ կամ վերջերը հիւսուած շինծու հեքիաթներ: Հրեաները առաջին անգամ կ'երեւին պատմութեան մէջ որպէս մասնակցորդներ սեմական ազգերու մեծ զաղթականութեան:

Ազգերու զաղթականութիւնները չին աշխարհի մէջ կատարած են այն դերը ինչ դեր որ կը կատարեն յեղափոխութիւնները ներկայ օրերու: Մենք նախապէս արդէն նշեցինք որ հռոմէական կայսրութեան կործանումը յառաջացաւ տեստոնեան բարբարոսներու հեղեղումով որ կրնաք կոչել «ազգերու զաղթականութիւն»: Ասիկա աննախընթաց երեւոյթ մը պէտք չէ նկատել: Հին արեւելքը արդէն նոյնանման երեւոյթներու ականատես եղած է աւելի կամ նուազ չափով, յար եւ նման պատճառով ու արդիւնքով:

Մենք կը տեսնենք որ մարդկային կանխագոյն քաղաքակրթութիւնը սկսած է արեւելեան խոշոր գետերու շտապեր կուրծքերուն վրայ ուր գոյութիւն առած է երկրագործութիւնը: Ժողովուրդներ ապրեր ու բազմացեր են նոյն այդ տեղերը ուրիշ ստացեր են իրենց ապրուստը: Երկրագործութեան հետ համընթաց զարգացեր են արհեստները, արուեստները, ձեռագործներն ու գիտութիւնը որոնք իրենց կարգին ծնունդ տուեր են ու զարգացուցեր արիստոկրատ դասակարգ մը որ պատահութիւնը ունեցեր է իր ժամանակը բացառապէս յատկացնել պատերազմի արուեստին: Իսկ



այլ դասակարգի գոյութիւնը պատմական անհրաժեշտութիւն էր, որովհետեւ նա էր որ իր կեանքը ապահովող բարեբեր երկրամասին հարստութիւնը պիտի պաշտպանէր զրացի պատերազմանէր խաշնարած ցեղերէն որոնք հրապուրուած իր գեղած հարստութեանէն բնականաբար պիտի փորձէին աւարառուական ասպատակութիւններ: Գիւղացիութիւնը որ կ'ուզէր խաղաղ կերպով աշխատել իր արտերուն մէջ պէտք ունէր արխատկրատ գտնակարգի պաշտպանութեան, որուն համար ինք բան մը վճարելու էր անոր: Բայց անմիջապէս երբ արխատկրատ դասակարգը ուժեղացաւ, նա անձնատուր եղաւ իր պատերազմական զօրութիւնը կապել իր գեղած հարստութիւնը կրկնապատկելու եւ տասնապատկելու նպատակին, մանաւանդ երբ արուեստներն ու ձեռագործները զարգացուցեր էին իր մէջ ամէն տեսակի պերճասիրութիւններ որոնց գոհացում աբելոզն էր միմիայն կուտակուած հարստութիւնը: Գիւղացիները ենթարկուեցան ճնշման ու հարստահարութեան, արխատկրատները սկսան իրենց տնտեսութիւն արշաւը պատերազմական գործողութիւնները ընդարձակելու: Պատերազմը դարձաւ հարստանալու միջոց. արշաւանքները սկսան զրացի ժողովուրդներուն դէմ, անոնցմէ աննելով աւարներ ու գերիներ: Բռնադատեալ աշխատանքը դարձաւ օրէնք: Ատանկով հասարակութիւնը քշուեցաւ նոյն անել փողոցը ուր որ մտեր էր հոյսմէական կայսրութիւնը իր վատասերման շրջանին: Ազատ գիւղացիութիւնը չբացաւ, անոր տեղ անցաւ ստրկատիրական աշխատաւորութիւնը: Նոյն ատեն խորտակուեցաւ նաեւ կայսրութեան ռազմավարական զօրութիւնը: Արխատկրատ դասակարգը, չնայած որ գէնքերու գերազանցութեան տէր էր, կորսնցուց իր պատերազմական քաջութիւնը եւ անձնատուր եղաւ գեղխութեան ու պերճասիրութեան: Նա այլեւս չէր կարող կատարել իր ընկերային դիրքի յատուկ պարտաւորութիւնները, չէր կրնար այլեւս պաշտպանել իր ձեռքին տակ գտնուած հասարակութիւնը աւարառու զրացիներու արշաւանքին դէմ: Այդ զրացիները որոնք ատեն մը կողոպուտուած էին, գիտակ կայսրութեան մէջ դիպուած հարստութեան, կամաց կամաց սկսան մօտենալ անոր սահմաններուն եւ ապա արշաւել ներս իրենց ետեւէն բերելով նոր աւարառուներ, նոր յափշտակիչներ: Այս շարժումը տեւեց ատեն մը: Արշաւող ցեղերէն ոմանք տիրանալով հողերուն ստեղծեցին նոր, ազատ գիւղացիութիւն մը: Ուրիշներ, ըլլալով աւելի ուժեղ, հաստատեցին ռազմասէր նոր արխատկրատ մը, մինչ հին արխատկրատները, ըլլալով ներկայացուցիչները հին քաղաքակրթութեան արուեստին ու գիտութեան, աշխատելով նորեկ յաղթականներուն

վրայ գերիշխող դիրք գրաւել, ռազմիկի դերէն անցան կրօնաւորներու դերին:

Երբ զաղթային շարժումը դադրեցաւ, Էվալիւցիայի շրջանը նորից սկսաւ անցնել նոյն ընթացաուժէն, ինչ որ մենք կը տեսնենք կապիտալիստական հասարակարգի տակ, երբ առատութեան եւ տնտեսական տագնապի շրջանները փոխնիփոխ կը յաջորդեն իրարու: Բայց հին ձեռի շրջանառութիւնը սոսկական վերակրկնումի շրջանառութիւն մը չէր, այլ այնպիսին որ տեւելու էր դարերով, շրջանառութիւն մը որ չդադրեցաւ մինչև որ կապիտալիստական արտադրութեան ձեւը մէջտեղ եկաւ:

Ասիոյ եւ Հիւսիս. Արիւիկէի զանազան երկրամասերուն մէջ Էվալիւցիայի այս ընթացքը շարունակուեցաւ հազարաւոր տարիներով: Ան աւելի նշմարելի էր այն վայրերուն մէջ ուր բայն եւ արգասաբեր գետի հովիտները կ'արտադրէին անհաշիւ հարստութիւն որ ժողովուրդը կ'առաջնորդէր ապականութեան ու մեղկութեան: Նուազ նպաստաւոր երկրամասերը կը պատրաստէին ազքատ բայց ռազմասէր ցեղեր, որոնք պատրաստ էին միշտ փոխել իրենց բնակութիւնը երբ արշաւանքն ու կողոպուտը անհրաժեշտութիւն կը դառնային իրենց համար: Անոնք պատեհութիւն գտածնուն պէս անհամար թիւերով կը յարձակէին մէկ կէտի վրայ, կ'անցնէին հարուստ երկրի սահմաններէն ներս եւ կը սկսէին աւարառութեան ու քանդումի գործին: Հոնկ-հոյի եւ Եանկիցէ-Քեանքի հովիտները ուր չինացիները զարգացան այս դրութեան պատկերը կը ներկայացնեն: Նոյնպէս Գանդէսի հովիտը ուր գիղուած էր հրապուրիչ հարստութիւն մը: Նոյնպէս Եփրատի եւ Տիգրիսի հովիտները ուր ծաղկեցան Բաբելոնի եւ Ասորեստանի կայսրութիւնները: Վերջապէս՝ Նեղոսի հովիտը ուր ծաղկեցաւ Եգիպտոսը:

Այժմ վեր աննենք Կեդրոնական Ասիան մի կողմից, իսկ Արաբիան միւս կողմից: Այս երկու երկիրներուն մէջ կային անհատնում պահեստի խումբեր ռազմասէր վրանաբնակ ցեղերու որոնք մշտական սպառնալիք էին իրենց զրացիներուն որոնց տկարութեանէն օգտուելով կը սկսէին ծաւալապաշտ գաղթականութեան: Կեդրոնական Ասիայէն երեւան եկան մոնկոլներ, հնդո-դերմաններ որոնք կոշուած էին քանդել քաղաքակրթութեան կառուցած արդիւլի կապանքները: Արաբիայէն երեւան եկան սեմական ցեղերը որոնց նպատակն էր արշաւել Բաբելոն, Ասորեստան, Եգիպտոս եւ Միջերկրականի եզերքները:

Քրիստոսէ աւելի քան հազար տարի առաջ սեմական ցեղերու ուժեղ գաղթային հոսանք մը սկսաւ դէպի Միջագետք, Սուրիա



եւ Եղիպտոս: Այդ ցեղերուն մէջ որոնք յաղթեցին իրենց զբացի զարգացած երկիրներուն, կային երբայեցիներ: Երբայեցիք իրենց պետեվիաձեւ թափառումներուն մէջ հանդիպեցան եղիպտական սահմաններուն եւ Սինա լեւան, բայց ի վերջոյ երբ հաստատուեցան Պաղեստինի մէջ այն ատենն էր որ որոշակի առին ազդուութեան մը ձեւը, իրենց ետեւ թողելով վրանարնակ ցեղի անկախունութեան շրջանը ուր բնաւ հնարաւոր չէր մեծ ազդի մը կազմաւորումը:

### Բ) ՊԱՂԵՍՏԻՆ

Հասնելով այս կէտին անշուշտ սխալ է ըսել թէ իորայէլացուց պատմութիւնն ու նկարագիրը որոշողը եղած են իրենց պետեվիական շրջանէն ստացած ժառանգութիւնները, որոնք պէտք է նշել բաւական ատեն պահպանուեցան. որովհետեւ Պաղեստինը իրենց նոր հայրենիքը եղաւ եւ ան՝ իր նորագոյն պայմաններով իրենց նկարագիրը խմորեց եւ իրենց պատմութեան ստաղծը պատրաստեց:

Բայց այս արտայայտութեամբ մենք զուշանալու ենք զերազնահատելէ պատմութեան մէջ երկրի մը աշխարհագրական զիրքի ազդեցութիւնը: Շիտակ է որ պատմական ժամանակներու մէջ երկրի մը աշխարհագրական զիրքը որոշ ազդեցութիւն ունի այդ երկրի ժողովուրդին պատմութեան վրայ, բայց այդ զիրքին ազդեցութիւնը կախուած է այն մակարդակէն որուն հասած են նոյն երկրի ժողովուրդի տեխնիկական զարգացումն ու ընկերային պայմանները:

Վեր առնենք, օրինակ, Անդլիան: Անդլիան անտարակոյս չէր կրնար հասնիլ ԺԸ. եւ ԺԹ. դարերու իր տիրապետողի դերքին, եթէ չզտնուէր իր յատկանշական երկրամասին մէջ, եթէ չունենար իր անուխի ու երկաթի հանքերը եւ իր կղզիական զիրքը: Բայց անոր ունեցած անուխն ու երկաթը իրենց ճարտարարուեստական զարգացման խոշոր դերը կատարեցին այն ատեն երբ յայտնագործուեցաւ շոգիի ուժը, առանց որուն անոր բնական դանձերը զրեթէ անարժէք մնացեր էին դարերով: Նախ քան Ամերիկայի եւ Հնդկաստանի ծովային ճամբայի գիւտը, նախ քան Սպանիոյ, Ֆրանսայի եւ Գերմանիոյ քաղաքակիրթ երկիրներ դառնալը, երբ բարբարոս ցեղեր կը բնակէին այդ երկիրներու մէջ, իսկ եւրոպական առեւտուրը կեղրոնացեր էր Միջերկրականի բոլորտիքը ուր

վաճառականական նաւերը առաջաստով կամ թիակներով կը քերէին ծովերքները, Անդլիոյ կղզիական զիրքը զինք մեկուսացուցեր էր եւրոպական քաղաքակրթութենէն եւ զայն զրեր էր բարբարոսական եւ տկար վիճակի մէջ:

Մեկնելով այս տեսակէտէն կը տեսնենք որ երկրի մը նոյն մասնայատկութիւնները ընկերային տարբեր պայմաններու տակ կը յառաջացնեն տարբեր արդիւնքներ: Նոյնիսկ հոն ուր երկրի մը բնութիւնը զեռ եւս ենթարկուած չէ արտադրութեան ձեւի փոփոխման հետեւանք կերպարանափոխութեան, անոր աշխարհագրական զիրքի ազդեցութիւնը անհրաժեշտօրէն նոյնը չի մնար: Այստեղ մենք կրկին ու կրկին կը ճակատինք այն ճշմարտութեան որ երկրի մը մէջ ապրող ժողովուրդի մը նկարագիրը փոխող ազդակը անտեսական պայմաններու հաւաքական դումարն է:

Իսրայէլի պատմութիւնը, ուրեմն, իր նկարագիրը չէ ձեւաւորած միմիայն Պաղեստինի աշխարհագրական զիրքէն ու բնութենէն, այլ հոն ապրող ժողովուրդի անտեսական-ընկերային պայմաններէն որոնք այդ երկրի աշխարհագրական զիրքի ազդեցութեան հետ միատեղ կազմեր են Իսրայէլի պատմութեան հասկնալի ստաղծները:

Պաղեստինի մասնայատուկ զիրքը այն էր որ ան սահմանը կը կազմէր այն երկրամասին ուր իրարու թշնամի տարրերը յաճախակի բախումներ կ'ունենային իրարու հետ: Անոր մէկ կողմն էր Արարիոյ անապատը, միւս կողմը՝ սուրիական մշակուած երկրը, իսկ այդ երկու մեծ կայսրութիւնները երբ յաճախակի իրարու հետ բախման մէջ կ'ըլլային, անոնց այդ բախումները որոշ ազդեցութիւն կը գործէին Պաղեստինի իսրայէլացիներուն վրայ: Ասոր հետ երբ նկատի ունենանք թէ Նեղոսի հովտին մէջ արդէն սկսեր էր ծագիլի կղիպտական քաղաքակրթութիւնը, Միջագետքի մէջ Ասորեստանի քաղաքակրթութիւնը, այն ատեն պարզ կ'ըլլայ ներգործող ազդակներու ընդհանուր պատկերը:

Այստեղ կ'արժէ նշել նաեւ որ Պաղեստինէն կ'անցնէին վաճառականական յոյժ կարեւոր ճամբաները: Նա կ'իշխէր մէկ կողմէ Եղիպտոսի, միւս կողմէ Սուրիոյ եւ Միջագետքի միջեւ տեղի ունեցող երթեւեկութեանց, ինչպէս նաեւ Արարիոյ հետ փիւնիկեցիներու ունեցած առուտուրին:

Նախ վեր առնենք Պաղեստինի բնական հարստութեանց կատարած դերը իսրայէլացուց պատմութեան մէջ: Պաղեստին պըտզաբեր երկիր էր: Իր պտուղներու առատութիւնը անշուշտ բացառիկ երեւոյթ մը չէր, բայց երբ քաղաքատենք զայն իր զբացի ամա-



յացած, քարքարուտ ու աւազուտ երկրամասերուն, կրնանք իրաւամբ ըսել թէ ան կաթ ու մեղր բոլորեցնող երկիր մըն էր:

Երբայցեցիները հոն եկան որպէս վրանարնակ արջառարոյծ ցեղեր որոնք շարունակ կուռելով Պաղեստինի հին բնակիչներուն, քանանացիներուն հետ, իրարու ետեւէ գրաւեցին անոնց քաղաքները եւ իրենց իշխանութեան ենթարկեցին զանոնք: Այս երբայցեցի ցեղերը ասանկով մնայուն բնակիչները դարձան երկրին, թողուցին իրենց վրանները եւ շինեցին հաստատուն տուներ: Բայց ինչ որ անոնք կուռնէին շահած էին, ստիպուած էին կուռնել սաշապանել, որովհետեւ իրենց ետեւէն կուգային պողատու հողամասեր գրաւելու ջանադիր ուրիշ վրանարնակ ցեղեր որպիսիք էին եզովմացիները, մովարացիները, ամմոնացիները, եւայլն:

Իրենց յաղթած երկրամասին մէջ երբայցեցիները երկար ատեն մնացին հովիւներ, թէեւ ունեցան իրենց որոշ տուները: Բայց հետզհետէ հին բնակիչներէն սորվեցան երկրագործութիւն, սկսան հասցնել ցորեն, գարի, խաղող, ձիթապտուղ, թուզ, եւ միեւնոյն ատեն միջամուսնական կապերով խառնուեցան հին բնիկներուն: միեւնոյն ատեն պահեցին իրենց վրանարնակ պետելի կեանքի յատկանշական գիծը:

Անպատի վրանարնակներու արջառարուծութիւնը ինքնին աննպատ է տեխնիկական յառաջդիմութեան եւ բնկերային զարգացման: Ներկայիս Արարիոյ պետելիներու կեանքի պատկերը մեզի կը յիշեցնէ հին Իսրայէլի աւանդավէպերը, Արրահամի, Իսահակի եւ Յակոբի հեքիաթները: Նոյն գործառնութեանց ու փորձութեանց մշտական վերակրկնումը, նոյն կարիքներն ու դադափարները հազարաւոր տարիներով ու սերունդէ սերունդ շարունակուել են եւ ատնք բոլորը կազապարեր են մի տոկուն պահպանողականութիւն որ աւելի խոր արմատ ձգած է վրանարնակ հովիւին, քան թէ հողագործին մէջ եւ որը խիստ նպաստաւոր ազդակ մը դարձեր է պահպանելու հին սովորութիւններն ու բարոյական հիմնարկութիւնները, նոյնիսկ խոշոր փոխակերպումներէ յետոյ: Հայրենական օճախը, օրինակ, իսրայէլացի գիւղացիին համար կրօնական նշանակութիւն չունի, մինչ հնդկերոսպական ցեղերու համար ան մի անակ ընտանեկան տաճար է. երբայցեցիք օճախի տեղ ունին յաւիտենական կանթեղ մը, ճիշդ այնպէս ինչպէս արարները ունին: Անոնք աւելի շատ յարաբերած են յոյներու հետ, բայց այդ կէտին մէջ արարներու հետ իրենց խնամութիւնը պահած են:

Պետելիական շրջանէն իսրայէլացիներու պահպանած սովորութիւններուն մէջ ապրանայ առուտուրի համար իրենց հա-

կումն ու նախասիրութիւնը գուցէ ամէնէն կարեւորը կրնանք նկատել:

Հոսովնական բնկերութեան ուսումնասիրութեան ատեն մենք արդէն տեսանք թէ առուտուրը չէ զարգացեր անհատներու միջոցով որքան ժողովուրդներու միջոցով: Առաջին անգամ վրանարնակ հովիւները եղած են որ ձեռնարկեր են առեւտրական գործը: Այդ հովիւները չունենալով հաստատուն բնակարան իրենց ապրուստը ճարելու համար ստիպուած են եղեր միշտ թափառիլ մէկ արօտատեղիէն միւր: Իրենց երկրի ապրուստի սակաւաթիւ աղբիւրները մղած են դիրենք մօտենալ աւելի հարուստ ու բախտաւոր ժողովուրդներու որոնց հետ սկսած են առուտուրը. իրենց ունեցած արջառները փոխանակել են անոնց ցորենին, իւղին, արմախն, փայտէ, քարէ եւ երկաթէ գործիքներուն հետ: Այսպէսով անոնց շարժականութիւնը նպաստել է որ անոնք ձեռք բերեն ապրանքներ ոչ միայն իրենց գործածութեան, այլեւ ուրիշներու փոխանակութեան համար: Ասանկով անոնք եղած են առաջին վաճառականները: Որքան ատեն որ կանոնաւոր ճամբաներ չկային եւ նաւարկութիւնը շատ քիչ զարգացած էր, հարստութիւն կուտակելու տեսակէտէն գրութիւնը նպաստաւոր էր մեր այս վաճառականներուն համար: Բայց երբ մնայուն ու գործածելի ճամբաներ շինուեցան, երբ նաւային վաճառականութիւնը իր ընթացքը առաւ, վրանարնակ ցեղերու վաճառականութիւնը սկսաւ պակսիլ եւ անոնք ենթարկուեցան իրենց նախկին թշուառութեան: Նուազագոյն չափով այս հանգամանքին պիտի վերադրել հին ասիական քաղաքակրթութեան անկումը երբ Հնդկաստանի ծովային ճամբան գտնուեցաւ: Արարիան արդէն աղքատացաւ նոյն պատճառով, իր վրանարնակ մարդիկը շարունակելու էին իրենց խիստ շահարեք առուտուրը փրկելիկան քաղաքներուն հետ որոնք ամէնէն ծաղկեալներն էին: Անոնք հայթայթեցին փրկելիկան ուստայանիներուն համար իրենց ազնիւ ոչխարի բուրդը որը տարազագործուելով կ'արտահանուէր դէպի արեւմուտք. նոյնպէս անոնց բերին պողաբեր եւ հարուստ երջանիկ Արարիոյ արտադրութիւնները, խունի, համեմներ, սկիւ, թանկազին քարեր, ինչպէս նաեւ Եթովպիայէն փղոսկր եւ եփնոս: Հնդկաստանի հետ առուտուրի ճամբաները կ'անցնէին Արարիայէն որուն ծովեղերքները կը նայէին Պարսից Մոցին եւ Հնդկաց Ովկիանոսին: Վաճառականական ապրանքները կը բերուէին նաւերով Մալապարէն ու Սէլլանէն, եւ ատոր համար անցնելու էին անպատի մէջէն դէպի Պաղեստին եւ Փրկելիկ:

Այն ցեղերը որոնց երկիրներէն կ'անցնէր այս առեւտրական



ճամբան կը հարստանային, որովհետեւ իրենք ալ տեսակ մը վաճառականներ էին եւ յետոյ իրենց հողէն անցած ապրանքներուն վրայ մաքս կը դնէին եւ կը դանձէին այդ մաքսերը՝ ապրանքով:

Արարական ցեղերուն մէջ որպէս վրանարնակ ու շրջուն վաճառականներ ամէնէն աւելի հարստացան մաղխանացիները որոնք կը ճամբորդէին Արարիոյ հիւսիսային եզերքները, Փիւնիկէի մօտերը: Մաղխանացի վաճառականներու կարաւանն էր որ բնօնաւորուած համեմներով, բարտանով եւ զմիւսով Արարիայէն երբ Եգիպտոս կ'երթային Յովսէփը քսան կտոր արծաթով ծախու առին իր եղբայրներէն (տես Ծննդոց, 1է. 27-28-29) եւ տարին Եգիպտոս: Թէ ինչքան հարուստ էին մաղխանացիք այդ մասին որոշ պաղափար կը կազմենք երբ կարդանք Գատաւորաց զիբք, գլուխ Ը.: Գէզէոն մաղխանացիները երբ ետ մղեց Քանանու երկրէն, անոնցմէ անհաշիւ քանակութեամբ ոսկի աւար առաւ: Անոնք այնքան շատ ոսկի ունէին որ անոնցմով ոչ միայն զարդեր շինած էին իրենց համար, այլեւ վզնոցներ իրենց կենդանիներուն համար: «Եւ Գէզէոն ելաւ եւ սպաննեց Ձէպէէն ու Սաղմանան եւ առաւ անոնց կենդանիներուն վրայի բոլոր զարդերը... Եւ Գէզէոն ըսաւ անոնց. Ամէն մարդ իր օղերը պէտք է ինծի տայ (որովհետեւ անոնք խմայէլացի ըլլալով օղեր ունէին)... Եւ անոր պահանջած ոսկի օղերը բոլորը միասին կը կշռէին 1700 սիքէղ(\*): Օղերէն զատ Գէզէոն զրաւեց զարդերը, վզնոցները եւ բոլոր ոսկի շղթաները»:

Դէտտորոս յոյն պատմագիրը շատ հիանալի կերպով կը նկարագրէ նարատեան արարներու, այս վրանաբնակ թափառաշրջիկ ցեղերուն կեանքը եւ չի մոռնար յիշել որ անոնց առեւտրական կարաւանը կապուած եղեր է Եմէնի հետ: Անոնցմէ ոմանք երջանիկ Արարիայէն կ'անէին խունի, կնդրուկ, զմուսս եւ թանկագին համեմներ եւ կը տանէին ծախել Միջերկրականի եզերքները գտնուող երկիրներուն:

Մենք պէտք է նկատի ունենանք որ խրայէլացիները իրենց վրանարնակ շրջանին մէջ շատ կը նմանէին դրացի մաղխանացիներուն: Նոյնիսկ Արարահամ, համաձայն Ս. Գրոց տեղեկութեան, շատ հարուստ է եղեր ոչ միայն արջառներով այլեւ արծաթով ու ոսկիով: Եւ մենք գիտենք որ վրանարնակ հովիտները միմիայն առեւտուրով կրնային հարստանալ: Բայց ասով պէտք չէ ենթադրել

(\*) Սիփէղ 16.8 կրամ է. դա կը նշանակէ 276 փոկկրամ ոսկի, 27 հազար 700 տոյար արծոզուքեամբ:

որ Քանանու երկրին մէջ արդէն իսկ հարստացած խրայէլացիները հեղհեղ կորսնցնելու էին իրենց վրանարնակ կեանքէն ժառանգած վաճառականական ոգին. որովհետեւ երկրի զերթը կը թոյլատրէր որ անոնք շարունակէին իրենց առուտուրը Եգիպտոսի եւ Բաբելոնի հետ եւ օգտուէին այդ առուտուրէն մասամբ զարգացնելով զայն, երբեմն ալ ընդհատելով երբ պարագաները կը նպաստէին իրենց որ կողոպտէին իրենց երկրէն անցնող առեւտրական կարաւանները: Մենք պէտք չէ մոռնանք որ առուտուրն ու աւազակութիւնը իրարու սերտօրէն կապուած զբաղումներ էին այդ ատենները:

Խրայէլացիները Քանանու երկիր հաստատուելէն առաջ իսկ այդ երկրի առուտուրը շատ զարգացած էր: Քրիստոսէ առաջ ԺԵ. դարուն կարաւանները կը ճամբորդէին այս երկրէն զինուած պաշտպանութեան տակ: Բայց մենք պատմական արձանագրութիւն ունինք որ կը փաստէ թէ նոյնիսկ Ն. Ք. երկու հազար տարի Պաղեստինը վաճառականական յարաբերութիւն ունեցեր է Եգիպտոսի, ինչպէս նաեւ Եփրատի երկիրներուն հետ: Պետելի ցեղերը որոնք կը բնակէին Պաղեստինի մէջ մտերմական կապով կապուած էին Եգիպտոսի հետ: Իրենց շէյխերը յաճախակի կ'այցելէին փարաւաններու պալատը եւ տեղեկութիւն կը ստանային Եգիպտոսի կացութեան մասին: Պատգամաւորներ կը ճամբորդէին հոս-հոն զրաւոր պատգամներով եփրատեան երկրամասին ու Եգիպտոսի մէջ: Ասիական այս պետելիները բարբարոսներ չէին. կային բարբարոս ցեղեր որոնք կը կռուէին Եգիպտոսի թագաւորին դէմ, բայց մեր նշած պետելի ցեղերը իրենց շէյխերուն առաջնորդութեամբ կը միանային Եգիպտոսի թագաւորին ու կը կռուէին այդ բարբարոսներուն դէմ:

Հարգֆէլտ Նրեաներու վաճառականական շին Պատմութիւնը գրքին մէջ մանրամասնօրէն կը նկարագրէ կարաւանային ճամբաները որ կ'անցնէին Պաղեստինի մէջէն կամ շրջականերէն: Սոյն հաղորդակցութիւնները, կ'ըսէ ան, հին ատեն դուրս աւելի մեծ վաճառականական նշանակութիւն ունէին քան ինչ որ են ներկայիս մեր երկաթուղային գիծերը:

Հարաւարեւմտեան Արարիայէն սկսուած ճամբան հորիզոնական դժով կարմիր Ծովուն ծովեղերէն եւ իր էլատեան Ծոցի ճամբուն հետ կը տանէր երջանիկ Արարիա, ինչպէս նաեւ Եթովպիոյ ներքին քաղաքներէն Փիթրայէն Եթանասուն թրլոմեթր դէպի հարաւ Մեռեալ Ծովը: Ուրիշ կարաւանային ճամբայ մը որ կը սկսէր Պարսից Ծոցէն կ'անցնէր Արարիոյ մէջէն ու կ'երթար նոյնպէս դէ-



պի Փիթրա, ուր կը թափէր բարեւոնեան եւ հնդկական արտազրուութիւնները: Փիթրայէն կը սկսէին երեք ճամբաներ, մէկ ճամբան կ'երթար դէպի Եգիպտոս եւ ունէր ճիւղեր որոնք կ'երթային ձախ կողմէն դէպի արարական նաւահանգիստները Միջերկրականի կըրայ: Երկրորդ ճամբան կ'երթար Գազա որ դէպի հիւսիս տանող կարեւոր կեդրոնն էր. երրորդ ճամբան Մեռեալ Ծովու եւ Յորդանանի արեւելեան եզերքները քերելով կ'երթար Գամատկոս: Էլլատ, որ Էլլատեան Ծոցի գլուխը կը զանուէր, արդէն կեդրոնական էր զարձեր դէպի հարաւ երկարող երկիրներու ապրանքներուն եւ նոյնպէս կարճ ճամբայով մը միացած էր Փիթրայի հետ: Այն ճամբան որ Գազայէն կը սկսէր կ'երթար հիւսիս կ'անցնէր Յուզայի եւ Սամարիայի տափաստաններէն եւ կը վերջանար ձեղորձի մէջ, ուրիշ ուրիշ ճամբայ մը կը սկսէր միանալով արեւելքէն ուրիշ ճամբու մը հետ եւ կ'երթար դէպի Էքբէ: Սոյն բաղձածիւղ ճամբաներով կուտակուող ապրանքներէն անոնք որ Փիւնիկէ պիտի զրկուէին արարական նաւահանգիստներուն մէջ նաւերով կը փոխադրուէին մասամբ, որովհետեւ մասնաւորապէս Էքբէէն դէպի Տիւրոս եւ Սիւսն ճամբան շատ լեռնային էր ու ժայռուա եւ ցամաքային հաղորդակցութիւնը շատ դժուարին, մինչեւ որ վերջերը այդ դժուարութիւնը եւս հարթուեցաւ: Ամէնէն բանուկ կարաւանային ճամբան արեւելքէն էր որ կ'երթար Բարեւոնէն մինչեւ Եփրատի միջին հովիտը, անկէ արարական-սուրբական անապատը ուրիշ վերին Յորդանանի արեւելեան եզերքի կարճ ճամբայով կը կտրէր գետը եւ ձեղորձի տափաստաններուն մէջէն կը հասնէր ծով: Այս ճամբան նախ քան մօտենալը Յորդանանի կը մտնէր վերեւ յիշուած ճամբան որ կը յառաջանար Քիլիսիոն, եւ կը միանար Գազայէն ձեղորձ տանող ճամբուն որը ենթադրաբար կրնանք ըսել թէ Պաղեստինէն դէպի Եգիպտոս տանող ճամբան էր համաձայն Ծննդոց գրքին: Մենք չենք կրնար ապացուցանել թէ այս վաճառականական ճամբաները երկար ատեն ազդեցութիւն ունեցեր են իւրայէլացիներուն վրայ, բայց յայտնի է որ անոնց ունեցած թեթեւ ազդեցութիւնը որոշ չափով նշմարելի է որոշ ժամանակի մը համար:

Իսրայէլացիներու մէջ աւելի առուտուրը ծաղկեցաւ քան թէ արուեստը կամ պերճանքի եւ արտահանուելիք ճարտարարւեստի արտադրութիւնները, որովհետեւ իսրայէլացիները վրանաբնակ ցեղ ըլլալէ զազրեցան այն ատեն երբ իրենց զբայցիները ձեռարուեստի մէջ արդէն բարձրագոյն աստիճանի հասեր էին: Առուտուրով ստացուած պերճանքի առարկաները աւելի լաւ էին քան թէ տնական արհեստաւորներու շինածները որոնք շատ պարզ բա-

ներ էին: Նոյնիսկ փիւնիկեցիք որոնք կանխագոյն տարիներուն մը չակութային ազգ մը կը հաշուուէին, բնաւ չկրցին ճարտարարւեստի յառաջդիմութեան մէջ մրցիլ եգիպտացիներու եւ բարեկացւոց հետ: Հերոդոտոս հաւանական է որ շատ ճիշդ է երբ կ'ըսէ որ առաջին փիւնիկեցիք որոնք յունական ծովեզերք երան իրենց ծախել առաջարկած ապրանքները իրենց հայրենի արտադրութիւնները չէին, այլ Եգիպտոսի եւ Ասորեստանի արտադրութիւնները: Փիւնիկեան խոշոր քաղաքները ճարտարարուեստական առաջնորդ քաղաքներ դարձան այն ատեն երբ կորսնցուցին իրենց քաղաքական անկախութիւնն ու իրենց վաճառականական յարաբերութեանց խոշորագոյն բաժինը:

Հաւանական է որ ձեռարուեստի զարգացման արդելք էր նաեւ մշտատեւ պատերազմական վիճակը: Յամենայն դէպս, ստոյգ է որ ձեռարուեստը այնքան չկրցաւ զարգանալ: Եզեկիէլ մարդարէն Տիւրոսի մասին իր ողբասացութեան մէջ ճշգրտապէս կը նկարագրէ Տիւրոսի առուտուրը Իսրայէլի հետ: Իսրայէլացիներու արտահանած ապրանքները բացառապէս երկրադորձական արտադրութիւններ էին: «Յուզա եւ Իսրայէլի երկիրը քու վաճառականներըդ էին, անոնք քեզի Մեննիթի ցորենի, խմորեղէնի, մեղրի, իւղի առուտուր կ'ընէին»: (Մարգարէութիւն Եզեկիէլի, Իէ. 1):

Երբ Գաւթի Նրուսալէմը իրեն մայրաքաղաք ըրաւ, Տիւրոսի Քիրամ թագաւորը եղեւնափայտեր, հիւսնէր, որմնադիրներ եւ վարպետ արհեստաւորներ տրամադրեց, եւ անոնք հիմնեցին Գաւթի տունը (Բ. Թագ. Ե. 11): Նոյն բանը տեղի ունեցաւ Սոզոմոնի ատեն երբ ան կը շինէր իր համբաւուր տաճարը:

Առանց բարձրորակ պերճանքի առարկաներու, ուրիշ խօսքով առանց ձեռագործ արուեստի ոչ մէկ ձեւընկալ կամ նկարագրական արուեստ կրնայ զարգանալ: Այդօրինակ արուեստ մը կրնայ հիմնուիլ միմիայն առուտուրի բարձր մակարդակի մը վրայ ուր արւեստադէտին կը տրամադրուին շատ մը յատկութիւններով բազմազան նիւթեր որոնք զինք կը մղեն ընտրելու իր նպատակին ամէնէն աւելի յարմարագոյնները: Դեռ աւելին: Որպէսզի արուեստագէտը կարողանայ սերունդէ սերունդ զիջուած փորձառութիւնները զարգացնել եւ զանոնք բարձրորակ մասնադիտութեան վերածել, իր գործածած զանազան նիւթերուն հետ պիտի ունենայ նաեւ իր գործը գերազանցապէս գնահատողներ ալ, որոնք արուեստագէտին առանձնախառուկ զիրք մը կուտան եւ զայն հեռացնելով չոր աշխատանքի մը կապուած մնալու պարտքէն անոր կ'ապահովեն հաճոյք, ուրախութիւն եւ եռանդ:



Սոյն բոլոր տարրերը մենք կը գտնենք միացած միմիայն մեծ վաճառաչահ քաղաքներու մէջ, ինչպէս Թեփէի, Մեմփիսի եւ Աթէնքի մէջ, իսկ Միջին Դարու սկիզբները Փլորանսի, Անփերսի եւ Ամսթերտամի մէջ, ուր նկարագրական արուեստները իրենց բարձրագոյն զարգացման կէտին հասան գնահատուող արուեստագէտներու յայտնաբերած ջանադրութեան շնորհիւ: Այս բանը իտրայէլացիներուն մէջ շատ թոյլ եղած է եւ այդ թուութիւնը իր ազդեցութիւնը գործեր է անոնց կրօնքին վրայ:

### Գ) ՀԻՆ ԻՍՐԱՅԷԼԻ ՄԷՋ ԱՍՏՈՒԾՈՅ ԳԱՂԱՓԱՐԸ

Բնա-նախնական ժողովուրդներու մէջ աստուածութեան ըմբռնումները չափազանց շփոթ ու դատարկ եղած են եւ որեւէ կերպով որոշ ձեւաորութեամբ չեն ներկայանար ինչպէս մենք վերջերը կը գտնենք ուսումնականներու հիւսած զիցարանութեանց մէջ, ուր աստուածութիւնները արդէն կը ներկայանան որոշ կերպարանաւորումով: Նախնական ժողովուրդներու աստուածութիւնները չէ կարելի ըմբռնել որոշ գծով եւ անոնք իրարմէ սուր գանազանութիւններ ալ չունին: Անոնք անձանօթ խորհրդաւոր անձնաւորութիւններ են որոնք կ'ազդեն բնութեան ու մարդուն վրայ, կ'երջանկացնեն մէկը, կը դժբախտացնեն ուրիշ մը, բայց իրապէս աւելի ազօտ են ու անորոշ քան երազներու տեսիլքը: Անոնց միջեւ եղած զանազանութիւնները միջավայրային են: Ամէն մի միջավայր ինչ մասնայատուկ ձեւով որ խթանած է նախնական մարդուն երեւակայութիւնը, նոյն տեղի աստուածութիւնը նոյն տեսակի մասնաւոր աթոռ մը գրաւած է անոր մտքին մէջ: Բարձր լեռներ, անջատուած հսկայ ժայռեր, մասնաւոր դիրքերու մէջ գտնուող պուրակներ, երբեմն նոյնիսկ հին ծառ մը, քարանձաւներ, ասոնցմէ մէկը կամ միւսը այդ կամ այն նախնական մարդուն համար աստուածներու բնակարաններ կը հաշուուէին: Նոյնիսկ մասնաւոր ձեւով քար մը կամ փայտի կտոր մը կը նկատուէր տնական աստուածութիւն մը, նուիրական առարկայ մը որուն տէր եղողը կը կարծէր թէ աստուած մը ապաստանած է իր տան մէջ: Ամէն մի ցեղ կ'աշխատէր այդպիսի նուիրական առարկայ մը ունենալ որպէս կուռք: Ասիկա ճշմարիտ է նաեւ երբայցիներուն համար որոնց ունեցած Աստուծոյ զաղափարը մեր նկարագրած աստիճանին վրայ էր եւ շատախղը կը կազմէր միաստուածութեան: Իտրայէլացիներու նուիրական նշխարները առաջին անգամ կ'երեւի թէ ուրիշ բա-

ներ չեն եղած թէ ոչ կուռքի կտորներ որոնք ի վերջոյ միանալով կազմեցին Տապանակ Ուխտին, որուն մէջ կը բնակէր Եհովան որ կը շնորհէր յաղթութիւն, անձրեւ եւ հարստութիւն անոր որ իրաւունք ունէր պահելու Տապանակ Ուխտին: Փիւնիկեցիներու եւ իտրայէլացիներու կողմէ պաշտուած նուիրական քարերը կը կոչուէին «Բեթել» կամ Աստուծոյ տունը:

Սոյն շրջանին զանազան տեղերու աստուածութիւնները ու կուռքերը տակաւին որոշակի անձնաւորութեանց կերպարանք չեն ստացեր, շատ անգամ անոնց անուններն ալ տարբեր չեն: Օրինակի համար իտրայէլացիներու եւ փիւնիկեցիներու շատ մը աստուածները կը կոչուէին էլ, մինչ միւսները կը կոչուէին Բաալ (տէր): Բոլոր այս Բաալները հակառակ անոր որ նոյն անունը ունէին իրենց ծագումով բացարձակապէս կը նկատուէին անջատ անջատ էակներ: Անոնք միմիայն իրարմէ կը զանազանուէին իրենց պաշտամունքի տեղին անուններով:

Ժողովուրդներու զիտակցութեան մէջ զանազան աստուածութեանց միջեւ աւելի որոշ տարբերականութիւնը կ'երեւի այն տաները ձեւերնկալ եւ նկարչական արուեստները զարգացան, որով աստուածութիւնները իտէլալականացած մարդկային ձեւեր առին. ոմանք պճնուեցան հրապոյրով, ոմանք պատկառանք ազդող վեհափառութեամբ, ոմանք մեծութեամբ, ոմանք ահազդեցիկ կերպարանքով, բայց ամէնքն ալ հասարակ մարդոցմէ զերազանց ձեւերով: Այսպէսով բազմաստուածութեան տրուեցաւ նիւթական հիմունք, անտեսանելին դարձաւ տեսանելի, հետեւաբար կարող ներկայանալու բոլորի մտքին մէջ միեւնոյն ձեւով. ասանկով զանազան տեսակի աստուածները մշտապէս իրարմէ տարբերուեցան: Անոնց միջեւ եղած շփոթութիւնը անհետացաւ եւ նախնական մարդու երեւակայութեան մէջ խտացած մշուշը փարատեցաւ եւ աստուածները ստացան առանձին կերպարանք, առանձին հանդերձանք:

Եզիպտոսի մէջ մենք որոշակի կրնանք տեսնել հետքերը մասնաւոր աստուածներու թուական աճումին երբ ձեւերնկալ եւ նկարչական արուեստները սկսան զարգանալ: Դիպուածաւ չէ որ Յունաստանի մէջ եւս մենք կը տեսնենք նոյն երեւոյթը. յոյներն ալ երբ զարգացուցին իրենց նկարագրական արուեստները մարդկային ձեւին տուին աստուածային բարձրորակ անձնաւորականութիւն բազմազան եւ ուրոյն կերպարանաւորումով:

Իտրայէլացիները իրենց ճարտարարուեստի ու արուեստի մարդերուն վրայ ըլլալով յետամնաց, չունեցան այն յառաջըլիմութիւնը ինչ որ ունեցան ճարտարարուեստի ու արուեստի մէջ զար-



զացած ազգերը, որոնք կոապաշտութեան տեղ բնակութիւն մը տունն աստուծոյ մը պատկերին կամ անոր ուղիին: Այդ դժուր իսրայէլացիներու մտային զարգացումը պետելիի մասձողութեան մտկարդակին վրայ կեցաւ եւ անկէ անդին շանցաւ երկար ատեն. այնպէս որ անոնք չկրցին իրենց սեփական աստուածներու պատկերը շինել եւ զանոնք ներկայացնել: Անոնք վերջերն էր որ ճանչցան օտար ցեղերու աստուածներու պատկերները զորոնք ներս առին, անոնց նմանութիւնները շինեցին: Ասկէ սկսու հայրենասէրներու ատելութիւնը ներածուած օտար աստուածներու պատկերներուն դէմ: Ասիկա զարգացման դանդաղեցումի արդիւնքն էր որ նոյն ատեն դիւրացուց որ իսրայէլացիները ազատագրուին բազմաստուածութենէ եւ ծանօթանան փիլիսոփայական եւ բարոյագիտական միաստուածութեան որ հին քաղաքակրթութեան անկումին հետ զուգընթաց հեղհեղ սկսեց էր ծաղկել խոշոր քաղաքներու մէջ: Փողովուրդի երեւակայութեան մէջ երբ հաստատուն արմատ ձգեց էր աստուծոյ պատկերը, շատ բնական էր որ բազմաստուածութիւնը ունենար իր հողը որը այնքան զիւրութեամբ չէր ոչնչանար: Միւս կողմէ աստուածութեան պատկերի անսրբութիւնը, ինչպէս նաեւ զանազան տեղերու աստուածութեանց անուններու նոյնութիւնը ճամբայ բացին առանձին, միակ աստուծոյ մը գաղտփարի ժողովրդականացման. աստուած մը որուն հետ բազմատելով բոլոր միւս անտեսանելի ուղիները, զանոնք պէտք է նկատել որպէս ստորագաս էակներ: Յամենայն դէպս, երբեք պատահական չէ որ ազգային միաստուածեան կրօնները ծագում առած են այն ազգերէն որ վրանաբնակ մասձողութեան աստիճանին վրայ մնացեց են եւ չեն զարգացուցեր ճարտարարուեստի եւ արուեստի կարեւոր ճիւղերը: Հրեաներէն զատ պարսիկները եւ յետոյ իսլամ արարներն էին որ քաղաքային աւելի բարձր մշակոյթի հետ յարաբերուելով ընդունեցին միաստուածութիւնը: Ոչ միայն իսլամականը, այլեւ Չինգա Վէստայի կրօնն ալ պէտք է հաշուել որպէս միաստուածեան կրօն: Այս վերջինն ալ կը ճանչնար միայն մէկ տէր եւ արարիչ, Ահուրա-Մազդան, իսկ Ահրիմանը՝ որպէս սատանայ:

Այն իրողութիւնը որ ցոյց կուտայ թէ յետամնաց վիճակի մէջ զանուող ազգերը աւելի զիւրութեամբ կ'ընդունին նորութիւններ եւ կը զարգացնեն յառաջգիմութիւնը քան անոնք որոնք արդէն յառաջգիմած են, թերեւ տարօրինակ երեւի, բայց իրականութիւն է այդ որ կը պարզուի նոյնիսկ ֆիզիքական օրգանիզմներու զարգացողական ընթացքին մէջ: Բարձրօրէն զարգացած կեն-

դանինքը աւելի յաճախ նուազ չափանիշով կը յարմարին իրենց նոր միջավայրին եւ զիւրութեամբ կը կորսուին քան ցած օրգանիզմ ունեցողները, որոնք աւելի շուտով կը յարմարին փոխուող պայմաններուն եւ աւելի լաւ գիրք կը դրան զարգացման ընթացառութեան մէջ:

Բայց հոս նկատի պէտք է ունենալ որ մարդու գործիքներու զարգացումը անգիտակցական չէ. մարդս իր մարմնական օրգաններուն վրայ զիտակցաբար կրնար զարգացնել արհեստական օրգաններ որոնց շինութիւնը կրնայ սորվել ուրիշներէն: Վեր առնելով այդ արհեստական ձեւի օրգանները, անհասներ ու խումբեր զարգացողական աստիճաններու վրայէն կրնան ոստումներ կատարել, երբ ուրիշներ իրենցմէ առաջ արդէն հասեր են աւելի բարձր աստիճանի մը եւ ատով իրենց առջեւ կը բանան բարձրացման ճամբան: Հասարակ տեղիք ճշմարտութիւն է որ, օրինակ, ելեկտրական լոյսը աւելի շուտ գործածութեան կը դրուի զիւրական շրջաններու մէջ քան թէ խոշոր քաղաքներու մէջ ուր արդէն խոշոր դրամազուխ յատկացուած է օգային կազմով լուսավտուութեան համար: Գիւղական շրջանը քարիւղի լամբարէն կրնայ ցատկիլ ելեկտրական լոյսին անտեսելով օգային կազմի լուսավտուութիւնը, բայց ի մտի ունենալու է որ այդ ոստումը կարելի է միայն այն ատեն երբ քաղաքը տեխնիկական յառաջգիմութեամբ արդէն կրցեր է արտադրել ելեկտրականութիւն: Գիւղական շրջանը առանձնապէս իրեն համար ելեկտրականութիւն արտադրելու ոչ ծանօթութիւնը, ոչ ալ հնարաւորութիւնը պիտի կրնար ունենալ: Այդպէս ալ միաստուածութիւնը աւելի զիւրութեամբ ընդունուեցաւ հրեաներու եւ պարսիկներու կողմէ քան թէ եգիպտացիներէն, բարեկացիներէն եւ յոյներէն, բայց պէտք է դիտնալ որ միաստուածութեան զաղտփարը պէտք էր սաղմնաւորուէր ու ձեւաւորուէր յառաջագէմ ու կուտուրապէս զարգացած ազգերու փիլիսոփաներէն:

Բայց ներկայիս, երբ մենք վեր առած ենք հրեաներու աքսորանքի շրջանը, տակաւին ան միաստուածեան շրջան պէտք է նկատել: Դեռ մենք բազմաթիւ աստուածներ ունեցող նախնական աշխարհի մէջ ենք: Հետեւաբար մեր ուսումնասիրութիւնը այդ դժով պիտի շարունակենք:

**Դ) ԱՌՈՒՏՈՒՐ ԵՒ ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ**

Առուստուրը կը զարգացնէ բոլորովին տարբեր մտային կարողութիւններ քան ինչ որ կ'ընեն ձեռագործական աշխատանքն ու



արուեստը: Կ. Մարքս շատ որոշակի ցոյց կուտայ ապրանքներու մէջ ներկայացուած աշխատանքի կրկնակ բնութեամբը: Ամէն մի ապրանք ունի թէ սպառողական բնոյթ եւ թէ փոխանակութեան բնոյթ: Ատոր համար անոր մէջ ներփակուած աշխատանքն ալ կըրնանք նկատել երկձալ դիմագծով. մին մասնաշատուկ աշխատանք, ինչպէս հիւսել, կաւազործել, դարբնել, միւսը ընդհանուր կերպով վեր առնուած մարդկային աշխատանք, աշխատանքի վերացական լմբոնումը որ իր մէջ կ'առնէ ամէն ձեւի աշխատանքի ճիւղերը:

Մասնաշատուկ արտադրողական գործողութիւնը որ կ'արտադրէ սպառման մասնաւոր առարկաներ, յատկապէս կը շահագրգռէ սպառողը որուն համար սպառման մասնաշատուկ հանդամանքն է որ արժէք ունի: Եթէ անիկա հազուատի պէտք ունի, անկաւ կը հետաքրքրուի միմիայն հազուատ արտադրող մասնաշատուկ աշխատանքով: Իսկ ապրանք արտադրողներն ալ (զանոնք վեր առնենք ոչ թէ որպէս վարձու աշխատաւորներ այլ այդ սկզբնական շրջանի յատուկ անկախ գիւղացիներ, արհեստաւորներ, արուեստագէտներ եւ անոնց գերիները) աշխատանքը կը նկատեն միմիայն որպէս անհրաժեշտութիւն մասնաշատուկ գործունէութեան համար, որով արտադրողը կարող կը լինի արտադրել մասնաւոր արտադրոյթներ:

Բայց տարրեր է վաճառականին զիրքը: Իր գործն է աժան գնել եւ սուղ ծախել: Անոր համար տարրերութիւն չընէր թէ ինչ տեսակ ապրանք է որ կը գնէ ու կը ծախէ, բաւական է որ նա գնորդ մը գտնէ: Վաճառականը կը հետաքրքրուի իր գնման եւ վաճառման համար անհրաժեշտ աշխատանքի քանակով, ինչպէս նաեւ գնման եւ վաճառման համար արամադրած ժամանակով. որովհետեւ անոնք են որ կ'որոշեն իր ծախելիք ապրանքներու գները: Ան չի հետաքրքրուիր կոնկրետ աշխատանքով զոր աշխատաւորը ի գործ դրած է իր ծախելիք ապրանքները արտադրելու համար: Վաճառականը բնաւ երկար մտածելու պէտք չունի ընդհանուր մարդկային աշխատանքի գնորդման յատկութիւնը երեւան հանելու մասին: Ապրանք մը արտադրուած է, այո, այդ արտադրութեան համար արտադրողը որքան ծանր աշխատեր է կամ ինչքան ժամանակ յատկացուցեր է, դա իրեն հոգը չէ: Ինք կ'ուզէ միայն աժան գնել եւ սուղ ծախել: Իրողութիւն է որ Կ. Մարքսի հանճարն էր որ ապրանքներու բարձրորէն գարգացած արտադրողական շրջանին կըրցաւ ամբողջապէս վերլուծման ենթարկել այս գոյալիճակը: Բայց նոյնիսկ հազարաւոր տարիներ առաջ վերացական ընդհանուր

մարդկային աշխատանքը(\*) որպէս հակադիր եղբ կոնկրետ ձեւի աշխատանքին, իր շօշափելի արտայայտութիւնը կը գնէր դրամի մէջ(\*\*) հոգ չէր թէ այդպիսի վերացականութեան մը ամենանուազ չափը որոշելու անհրաժեշտութիւնը այնքան ալ պղպլի չէր: Դրամը ամէն մի ապրանքի մէջ ծրարուած ընդհանուր մարդկային աշխատանքի ներկայացուցիչն է: Ան կը ներկայացնէ ոչ թէ մասնաշատուկ աշխատանքի տեսակ մը, ոչ թէ հիւսողին, կաւազործին կամ դարբինին աշխատանքը, այլ որեւէ աշխատանք, ամէն ձեւի աշխատանք. այսօր մէկ տեսակ, վաղը ուրիշ տեսակ: Բայց վաճառականը կը հետաքրքրուի միմիայն ապրանքին մէջ իր ներկայութիւնը ցոյց տուած դրամով, այսինքն ոչ թէ ապրանքին մասնաշատուկ օգտակարութեան համար, այլ ուղղակի անոր գինին եւ այդ գինին հետ կապուած շահուն համար:

Արտադրողը ըլլայ գիւղացի, արհեստաւոր կամ արտիստ, կը հետաքրքրուէր իր գործի մասնաշատուկ բնոյթով, իր գործածած նիւթեղէնի առանձնաշատկութիւնով եւ կ'աշխատէր աւելցնել իր աշխատանքի արտադրողականութիւնը այնքան որքան ինք մասնադէտ կը դառնար իր գործին: Այսպէսով իր գործի մասնաւոր սահմանափակումը կը յառաջացնէր համապատասխան մտային սահմանափակում մը: Պարապ տեղը չէր որ Սոկրատ Ն. Ք., Ե. դարուն կ'ըսէր հետեւեալը. «Դարբինները, հիւսները, կօշկակարները

(\*) Վերացական աշխատանք ըսելով պիտի հասկնայ վաճառականին գնման եւ ծախելու աշխատանքը, միացած իր տրամադրած ժամանակին հետ. կոնկրետ աշխատանք ըսելով պիտի հասկընանք արտադրողի աշխատանքը:

(\*\*) Դրամը որպէս արժէքի չափանիշ աւելի կանուխ երեւան եկած է քան թէ որպէս շրջաբերութեան միջոց: Ան նոյնիսկ գործածուած է ապրանքային փոխանակութեան (պարթըր) շրջանին: Եգիպտական պատմութեան մէջ մենք կը կարդանք որ պղինձի ձողեր իւրաքանչիւրը 91 կրամ ծանրութեամբ կը գործածուէին որպէս գործնական դրամ ապրանքային փոխանակութեան համար: Այդ պղինձէ ձողերը կը կոչուէին ըթէս: Այսպէս, եգ մը որ կ'արժէր 119 ըթէս, կը ծախուէր պղնձեայ եռանկիւն գաւազանով մը որ կ'արժէր 25 ըթէս, ուրիշ մը՝ 12 ըթէս: Տասնութէկ սափոր մեղրը կ'արժէր 11 ըթէս: Վերջէն է որ պտղովեան պղինձէ դրամներ երեւան եկան որպէս իրական դրամի հիմք ծառայող արժէքներ:



թէ եւ որոշ չափով խելացի մասնագէտներ են, բայց անոնցմէ չատերը ստրկացած հոգիներ են որոնք չեն գիտեր թէ ի՞նչ է գեղեցիկը, բարին եւ արդարացին»։ Հրեայ Յիսուս Սիրաք Ն․ Գ․ 200 թուին նոյն միտքը կ'արտայայտէր երբ կ'ըսէր․ «Ձեռագործ արհեստները օգտակար են, բայց արհեստաւորը բոլորովին անպէտ մարդ մըն է քաղաքականութեան, օրէնսդրութեան եւ բարոյական մշակոյթի տարածման գործին մէջ»։

Շատ վերջերն էր որ կապիտալիստական արտադրողական զրուիքեան հաստատումով մեքենաները պիտի գային ջնջել արտադրողներու մտային սահմանափակման գոյափոխակը, ինչպէս որ նոյն մեքենաները պիտի ջնջեն ապագային կապիտալիստական արտադրողական զրուիքիւնը եւ պիտի ազատագրեն բանուորութիւնը։

Բայց անցինք մեր նիւթին։

Մենք ըսինք թէ արհեստաւորի գործը արհեստաւորը կը տանէր մտային սահմանափակման։ Անցնելով վաճառականին անոր գործառնութիւնները բոլորովին տարբեր ազդեցութեամբ տարբեր ուղղութեան կ'առաջնորդէն անոր միտքը։ Ան չի կրնար բաւարարուիլ արտադրութեան մասնաւոր ճիւղի մը, մասնաւոր սահմանադժի մը ծանօթութեամբ, որովհետեւ իր շահերը չեն ամփոփուած որոշ ապրանքի մը եւ որոշ երկրի մը մէջ․ անոնք տարածուած են․ որչափ ընդարձակուին, նոյնքան կ'ընդարձակուին նոր ապրանքներու եւ նոր երկրամասերու հասնելու իր աշխատանքները, որով նա կ'ուսումնասիրէ այդ ապրանաց արտադրութեան մասնաշառուկ պայմանները, այդ երկիրներու ինքնաշատուկ պահանջները, եւ ասանկով նա կարող կ'ըլլայ ընտրել այն ապրանքները որոնց վաճառումը աւելի շահաւէտ է, եւ ընտրել այն շուկաները ուր աւելի դիրին է եւ շահաւոր իր ապրանաց վաճառումը։ Բայց հակառակ շուկաներու եւ արտադրութեան մեծ արժէքին տուած իր նկատաւորմին, վաճառականը կը հետաքրքրուի մեծապէս գիներու պայմաններով, ուրիշ խօսքով՝ վերացական մարդկային աշխատանքի զանազան յատկութեանց նախադրեալներով։ Աւելի պարզ բառով՝ վերացական աշխատանքի թուական յարաբերութիւններով որոնք հետըզհետէ աւելի կը բարդանան եւ կը փոխուին երբ առուստուրը կը փոխադրուի տեղէ տեղ, երբ իր ճամբուն վրայ կուգան զբամական փոխուող պայմանները, երբ կը փոխուի դնումի ու վաճառման ժամանակներու անհամաձայնութիւնը, եւ յետոյ կուգայ վարկային սիստէմի եւ տոկոսի վճարման ձեւերու անհրաժեշտ օրղեգրումը։ Ահա թէ ինչպէս առուստուրը խթանիչ ազդակը կը դառնայ մատենատիկական մտածողութեան եւ նոյն ատեն վերացական մտածո-

ղութեան։ Բայց նոյն ատեն առուստուրը երբ կ'ընդարձակէ վաճառականին գործի հորիզոնը եւ անոր կուտայ ծանօթութիւն փոխուող կլիմաներու եւ հողերու շուրջ, ինչպէս նաեւ քաղաքակրթութեան զանազան դասիներու եւ արտադրողական ձեւերու շուրջ, ան կը մղէ զայն բաղադատականի կարողութեան, որով նա կրնայ զրանել մասնաւոր մանրամասնութեանց հանրագումարին մէջ ընդհանուր տարրը, դիպուածներու հանրագումարին մէջի անհրաժեշտ տարրը, ինչպէս եւ վերակրկնուող տարրը որ որոշ պայմաններու տակ նոյն արդիւնքը կուտայ։ Ասանկով կը զարգանայ վաճառականին մէջ վերացական մտածողութեան կարողութիւնը, ինչպէս նաեւ մատենատիկական մտածողութիւնը, մինչդեռ ձեռագործի արհեստաւորը նուիրուած է միայն իր կոնկրետ աշխատանքին, իր մտածողութիւնը կը դեզերի իրերու մակերեսը եւ չեթար անոնց խորը։ Արտադրողական գործառնութիւնները չեն, ըլլան անոնք երկրագործական կամ ձեռագործական, որ մղում կուտան գիտական հետազօտութեան, այլ ոչ արտադրողական առուստուրը, որ կը զարգացնէ մտային ուժերը։

Բայց ասիկա չի նշանակեր թէ առուստուրը ինքնին գիտական հետախուզութեանց ծնունդ կուտայ։ Անշահախնդիր մտածողութիւնը, ճշմարտութեան փնտռուքը, հեռու անձնական շահադիտական նկատումներէ, յատկապէս կը պակսին վաճառականին մօտ։ Անգին գիւղացին ինչպէս եւ արհեստաւոր վարպետ յիշեց ձեռքի աշխատանքով կ'ապրին միայն․ անոնց հարստութիւնը որոշ սահման մը ունի ուրիշ անդին չանցնի։ Անոնք շատ բախտաւոր կը հաշուրւին եթէ պատերազմ չըլլայ եւ բնական աղէտներ չպատահին, բայց նոյնիսկ այդ պայմաններուն տակ անոնք խթանիչ ազդակ մը չունին որ ձգտին բարձրագոյն ներշնչումներու որոնց ահերը կը ցամքին վաշխառուական կապիտալի ճնշման սպառնալիքին տակ։

Առուստուրը ընդհանուր մարդկային աշխատանքի ձեռնարկութեանց հետ առաջ կ'երթայ բաւական տարբեր ուղղութեամբ քան ձեռագործ արհեստը իր կոնկրետ, օգտակար աշխատանքով։ Արհեստաւորի յաջողութիւնը անհատի կարողութեան սահմանին մէջ կը մնայ․ առուստուրի յաջողութիւնը սահման չունի։ Առուստուրի շահը միայն կապիտալի, զրամի քանակին մէջ է, իսկ այդ քանակութիւնը անհաշիւ կրնայ ընդարձակուիլ։ Միւս կողմէ առուստուրը ենթակայ է աւելի մեծ դիւրափոխութեան ու վտանգներու քան ապրանաց արտադրութեան պարզ ձեւին նուիրուած գիւղացու կամ արհեստաւորին միօրինակ ու շարունակական աշխատանքը։ Վաճառականը շարունակ կը տատանի երկու ծայրայեղութեանց



միջեւ. մին զիգուած հարստութիւնը, միւսը՝ բացարձակ սնանկու-  
թիւնը: Այդ հանդամանքը դաշն կը մղէ անյաղ ազահութեան, ինչ-  
պէս նաեւ դազանային անդթութեան՝ հանդէպ իր մրցակիցներուն  
եւ շահագործման ենթակայ մարդկային էակներուն: Ներկայիս սոյն  
դրութիւնը կը տեսնենք այն վայրերուն մէջ ուր մարդիկ կ'ապրին  
իրենց քրտինքով եւ ուր կապիտալի շահագործող ձգտումը չի հան-  
դիպիր ուժեղ զիմազրութեան, օրինակ՝ գաղթաւայրերու մէջ:

Յայտնի է որ այսպիսի հանդամանքներու տակ մարդկային  
մտածողութիւնը քաջայերիչ ազդակ մը չունենար զինքը մղելու  
անանձնական, գիտական ուսումնասիրութեան: Առուտուրը ճիշդ է  
որ կը զարգացնէ մարդու որոշ մէկ կարողութիւնը ուսումնասի-  
րութեան մը համար, բայց անոր կոչումը յատկացուած չէ գիտա-  
կան նպատակներու: Ընդհակառակը, դեր որ առուտուրը ուսումի  
մղում կուտայ, անոր նպատակը այդ ուսումը իր շահերուն ծառա-  
յեցնելու համար է միայն: Այս ճշմարտութեան ազազակող ապա-  
ցոյցները կը տեսնենք այսօր ներկայ բուրժուական հասարակա-  
կարգի տակ:

Գիտական մտածողութիւնը կրնար զարգանալ այն դասա-  
կարգին մօտ որ օժտուած էր առեւտուրի հետ կապուած ծանօթու-  
թիւններով, փորձառութիւններով ու ձիրքերով, բայց միեւնոյն  
ատեն ձերբազատուած էր ապրուստի մտահոգութենէն: Այն ատեն  
նա կրնար ունենալ անհրաժեշտ պատեհութիւնն ու հաճոյքը նուիր-  
ւելու անշահախնդիր հետախուզութեանց եւ լուծելու այն հարցերը  
որոնք անմիջական եւ գործնական կապ չունէին իր անհատականու-  
թեան հետ: Փիլիսոփայութիւնը զարգացած էր միայն վաճառաշահ  
կեդրոններու մէջ եւ միայն այն կեդրոններու մէջ ուր առուտուրէն  
զատ ուրիշ տարրեր ալ կային որոնց հարստութիւնը կամ ընկերա-  
յին զիրքը իրենց հաճոյք եւ ազատութիւն կուտար պարապելու փի-  
լիսոփայական հարցերով: Յունաստանի վաճառաշահ մի շարք քա-  
ղաքներու մէջ այդ տարրերը կը ներկայացնէին մեծ հողատէրերը  
որոնց ձեռքի տակ գտնուող գերիները կ'աշխատէին իրենց համար,  
իսկ իրենք, այդ հողատէր ազնուականները, գիւղական շրջաններու  
մէջ չէին ապրեր, այլ կ'ապրէին քաղաքներու մէջ ուր չկար գիւ-  
ղական շրջանի զինակիրներու Ֆիզիքական կոշտ զօրութեան մը  
ազդեցութիւնը:

Սոչոր հողատէրերու այս դասակարգը որ կ'ապրէր քաղաք-  
ներու մէջ եւ փիլիսոփայութեամբ կը զբաղէր, կ'երեւի թէ միայն  
ծովային քաղաքներու մէջ երեւան եկաւ, քաղաքներ որոնց ան-  
գրաշխարհը այնքան մեծ չէր որ կրնար արտադրել գիւղական ազ-

նուականութիւն մը, ոչ ալ այնքան մեծ որ այդ ազնուականութիւ-  
նը անջատէր քաղաքէն եւ անոր ուշադրութիւնը դարձնէր իր հողե-  
րը ընդորձակելու եւ նորեր դրաւելու նպատակին: Այս պայմաննե-  
րը յատուկ էին մասնաւորապէս յունական ծովեզերեայ քաղաքնե-  
րուն, մինչդեռ փրնիկեան ծովեզերեայ քաղաքներու անդրաշ-  
խարհը շատ աննշան էր արտադրելու խոշոր հողատէրեր: Անոնց  
հասարակուրդներուն մէջ ամէն ոք կ'ապրէր առուտուրով:

Միւս կողմէ սոյն քաղաքներուն մէջ որոնք չըջապատուած  
էին խոշոր հողամասերով, մեծ հողատէրերը կը թուի թէ աւելի  
շատ ենթարկուած էին գիւղական կեանքի ազդեցութեան եւ զար-  
գացուցիչ էին գիւղական զինակիրի մտածողութեան եղանակը:

Այժմ անցնելով կեդրոնական Ասիայի վաճառաշահ կեդրոն-  
ներուն, հոն կը գտնենք տարրեր երեւոյթ մը: Այդ վայրերուն մէջ  
կրօնականներն են որ ամենամեծ չափով ազատ մտացեր են աշխա-  
տանքէ նուիրուելով կրօնական գործին: Բայց կրօնական գործի  
վայրերուն մէջ շատ քիչեր եղան որ կրցին իրենց կրօնականները  
բարձր պահել: Ինչ գործ որ վիճակուեցաւ Յունաստանի ծովային  
քաղաքներու արիստոկրատներուն, նոյնը վիճակուեցաւ արեւելեան  
երկիրներու վաճառաշահ կեդրոններու կրօնական սրբաւայրերու  
կրօնաւորներուն, մասնաւորապէս Եգիպտոսի եւ Բաբելոնի կրօնա-  
ւորներուն որոնք նուիրուեցան փիլիսոփայութեան եւ գիտական  
մտածողութեան զարգացման: Բայց այս երկիրներու պայմանները  
որոշ սահմանափակման մը մէջ առին արեւելեան մտածողութիւնը,  
այն է կրօնական պաշտամունքի սահմանափակումը որմէ ազատ էր  
յունական մտածողութիւնը: Արեւելեան կեդրոններու մէջ փիլիսո-  
փայութիւնը կորսնցուց, կրօնը շահեցաւ, այսինքն կրօնականները  
շահեցան: Յունաստանի մէջ ալ կրօնաւորներ կային, բայց անոնց  
գործն էր կրօնական արարողութիւններ կատարել, պաշտամունքի  
վայրերուն հսկել եւ հոգատարել, բայց արեւելքի վաճառաշահ  
կեդրոններու կրօնաւորները դարձան ընկերային եւ գիտական ծա-  
նօթութեանց ներկայացուցիչներ: Անոնք կրցածնուն չափ զարգա-  
ցուցին մատեմատիկան, աստղագիտութիւնը, բժշկութիւնը, պատ-  
մութիւնն ու օրէնսգիտութիւնը: Ասանկով աճեցաւ անոնց ազդե-  
ցութիւնը պետութեան եւ հասարակութեան վրայ: Բայց այս երկ-  
րամասերուն մէջ կրօնը ինքնին ուժգին մղումը տուաւ ուժերու  
խտացման այնպիսի աստիճանով որուն չէր կրցած հասնիլ յունա-  
կան զիցարանութիւնը: Իսկ հելլէն փիլիսոփայութիւնը շուտով  
մերժեց գիցարանութիւնը եւ բնաւ չփորձեց զրոյմել անոր պար-



զունակ ըմբռնումները աւելի խոր ծանօթութեամբ, ոչ ալ փորձեց հաշտեցնել երկուքը իրարու հետ:

Հին յունական կրօնը հաւանական է որ իր զգայական ուժեղ եւ բերկրալի արուեստագիտական նկարադիրը ստացած է այն ատեն երբ վերարտադրողական արուեստները հասան իրենց որոշ բարձրութեան եւ իր փիլիսոփայութիւնը իր ճամբան ոնջատեց կրօնաւորներու ճամբայէն: Միւս կողմէ, այն կրօնը որ կապուած է միջազգային ուժեղ առեւտուրին հետ բայց չունի վերարտադրողական արուեստներ, չունի մասնաւոր արիստոկրատի մը իր մտաւորական հակումներով ու կարիքներով, այլ կը ներկայացնէ առանձնապէս զարգացած կրօնականութիւն մը, կրօն մը որ իր կանխագոյն շքրջանին չէ զարգացուցեր բազմաստուածութիւնը աստուածային սուր անձնականութիւններով գունաւորուած: Այդ կրօնը շատ զիւրութեամբ կը ստանայ վերացական եւ հոգեկան բնոյթ, մինչդեռ աստուածութիւն մը շատ հեշտիւ կը փոխուի անձնականութենէ զազափարի մը կամ մտային ըմբռնումի մը:

### Ե) ԱՌԵՒՏՈՒՐ ԵՒ ԱԶԳՈՒԹԻՒՆ

Առուտուրը մարդկային մտածողութեան վրայ բացի փելիսոփայականէն ու կրօնական ազդեցութենէն, ուրիշ առեւտուր ազդեցութիւն մըն ալ ունի: Անիկա արտակարգ խթանիչ ազդակ մըն է նաեւ ազգային զգացումի: Մենք արդէն նշեցինք զիւրացիութեան եւ բուրժուական հորիզոնի սահմանը որպէս հակադրութիւն վաճառականի ընդարձակ հորիզոնին: Վաճառականը չի կրնար սահմանափակուիլ իր ծնած տեղին հորիզոնովը: Անիկա բնական միջուկով կը ձգտի ընդարձակել իր հորիզոնը: Այս իրողութիւնը պարզապէս յայտնի կ'ըլլայ երբ մենք վեր կ'առնենք ծովեզրի ազգերը, օրինակ հին ատենները փրենիկեցիներն ու յոյները: Առաջինները անցան Միջերկրականէն անդին մինչեւ Ատլանտան Ովկիանոսը, վերջինները բացին իրենց ճամբան մինչեւ Սեւ Մովը: Յամաքային առուտուրը բնաւ թոյլ չէր տար նման տարածուն խուզարկու արշաւանքներ կատարել: Մովային առուտուրը նախ եւ առաջ կը պահանջէ մշակուած խելք մասնաւորապէս նաւաշինութեան համար: Յետոյ նա կը նախնիթաղթէ առուտուր մը գերազանց եւ ստորադաս ազդերու միջեւ: Այս վերջինները հասկնալի է որ շատ զիւրութեամբ պիտի ենթարկուին վաճառականական ժողովուրդը-

ներուն եւ կազմեն անոնց համար զազութային հիմնարկութիւններ: Կանխագոյն ժամանակներուն ցամաքային առուտուրը առաջ կը տարուէր վրանարնակ ցեղերու կողմէ որոնք կ'այցելէին իրենցմէ աւելի զարգացած ցեղերուն որոնց մօտ կը գտնէին ճարտարարուեստի եւ երկրադործութեան յաւելեալ արտադրոյթներ: Այդ պարզային հնարաւոր չէր որ կղզիացած ու բացաւիկ արշաւանքներով անոնք կարողանային հաստատել զազթափայլեր: Պատահաբար մաս մը վրանարնակ ցեղեր միանալով յաղթած են հարուստ եւ յառաջադէմ երկրի մը եւ կողոպտած անոր հարստութիւնը, բայց նոյն ատեն անոնք որպէս բարձրագոյն մշակոյթի դրօշակակիրներ չեն կրցած հիմնել զազթային արիստոկրատիան մը: Վրանարնակ ցեղերու այս պատահական միացումը շատ քիչ անգամ հաստատուն հիմք ունեցած է: Անոնք նորից բաժնուած ու ցրուած են հոս հոն, պահելով իրենց արջառարուծական կղզիացեալ զիրքն ու զբազումը: Այդ ցեղերուն պատկանող առեւտրականները մտած են հարուստ եւ ուժեղ հասարակութեան մը մէջ որպէս համբերատար աղերսարկուններ, ոչ թէ որպէս բարձր կուլտուրայի առաջնորդներ:

Ասիկա ճշմարիտ է նաեւ փոքր ցեղերու պատկանող առեւտրականներուն որոնք արշաւեր բայց հաստատուելու են Եգիպտոսի եւ Սուրիոյ միջեւ գտնուող ազգերու մէջ: Ինչպէս փրենիկեցիք եւ յոյները որոնք հաստատուեցան Բարելոնէն Եգիպտոս երկարող երկիրներու մէջ որպէս առեւտրական ցեղեր, անոնք բառին ճշգրիտ իմաստով զազթագործողներ չէին: Անոնք չկրցին հիմնել իշխող քաղաքներ, չկրցին ձեռք բերել շահագործման եւ հսկողութեան այն գործիքները ինչ որ քաղաքակրթուած ազգ մը կ'ունենար բարբարոսները շահագործելու համար: Անոնք եղան սկար ու աղերսարկու հասարակուրդներ՝ չըջապատուած ուժեղ եւ քաղաքակիրթ կեդրոններով: Անոնց համար բնական անհրաժեշտութիւն զարձաւ սերտօրէն կապուիլ իրարու հետ, օտարականներու մէջ իրենց ազդի արժանապատուութիւնը բարձր պահելով ուժեղացնել իրենց զիրքը եւ ատանկով յառաջ տանիլ իրենց վաճառականական գործառնութիւնները:

Ամենուրեք, նոյնիսկ ԺԹ. դարուն, վաճառական դասակարգը եղած է միեւնոյն ատեն ամէնէն միջազգայնական եւ ամէնէն ազգային հաստուածը տրուած հասարակութեան մէջ: Բայց երբ վեր ատենք փոքրիկ ցեղերու պատկանող վաճառականները որոնք առանց պաշտպանութեան ենթարկուած են օտար երկրի մը ժողովրդի ոչ-բարեկամական վերաբերմունքին, անոնք ուժեղ կերպով փափա-



քեր են աղղային յարակցութեան, պաշտարաներ են աղղային ար-  
ժանապատուութիւնը եւ նոյն ատեն սնուցեր են ուժեղ ատելութիւն  
օտարականներու դէմ:

Դրութիւնը նոյնն էր Իսրայէլի առեւտրականներուն համար:  
Իսրայէլացիները հաւանական է որ Եդիպոսս գացեր են աւելի կա-  
նուխ քան ինչ որ ցոյց կուտայ իրենց պատմութիւնը: Գուցէ այն  
ատեն թէ անոնք թափառող արջառարոյժներ էին միայն եւ զեռ  
Քանանու երկրի մշտական բնակիչները չէին դարձեր: Մենք ապա-  
ցոյցներ ունինք որ կը հաստատեն թէ քանանացի դադթականներ  
Եդիպոսս գացեր են շատ կանուխէն, կրնանք բսել Քրիստոսէ հա-  
զարամեակ մը առաջ:

Տեսնենք թէ ի՞նչ կ'ըսէ Էտվար Մէյրը այս խնդրին շուրջ.  
«Բենիհասանի մէջ Ամհոնաթապի գերեզմանին վրայ հռչակաւոր  
նկար մը կայ որ մեղի կը ցուցնէ պետելիներու 30 հոգիէ բաղկա-  
ցած բնասանիք մը որուն առաջնորդն է իրենց պետը քաշա անուանով:  
Ասոնք ճամբորդներ եղեր են դէպի Եդիպոսս Իւսուրաիսէն Գ.ի(\*)  
թագաւորութեան Զ.տարին: Անոնք կը կոչուէին ամուներ որ կը նշա-  
նակէ քանանացիներ: Անոնց ղեմադիժը ցոյց կուտայ որ անոնք ե-  
զած են սեմական ցեղէն: Անոնք հազած են բաղձաղոյն հազուա-  
ներ որոնք սովորական են Ասիոյ մէջ հին ատենները, զինուած են  
աղեղով ու նետով, իրենց հետ ունենալով էշեր եւ այծեր: Անոնց-  
մէ մին քնար կը նուագէ: Անոնք իրենց հետ բերած են թանկագին  
մեղիմուտը, թարթիչներ ներկելու համար: Անոնք եկած են խնդրել  
որ իրենց թոյլ արուի մնալ Եդիպոսսի մէջ: Թագաւորական քար-  
տուղարը զանոնք կը ներկայացնէ միապետին եւ կը պատրաստուի  
տեղեկացնել ուրիշ նոր եկուորներու մասին: Անտարակոյս նման  
նկարներ շատ կան որոնք կը ցուցնեն թէ քանանացի առեւտրական-  
ներ եւ արհեստաւորներ մեծ թիւերով կանուխէն հաստատուեր են  
Նեղոսի տելլայի արեւելեան քաղաքներուն մէջ եւ ատոր հակառակ  
եդիպոսացի առեւտրականներ անցեր են սուրբական քաղաքները  
նոյնիսկ մինչեւ Բաբելոն»:

Այդ ատենէն մի քանի դար յետոյ, համարեա 1800 թուա-  
կանին (Ն. Ք.) երբ Եդիպոսսի հասարակութիւնը սկսեր էր քաջ-  
քայուիլ, Հիւսիսային Եդիպոսս արշաւեցին հիբոսները: Անտարա-  
կոյս այդ շրջանին է որ Քանանու թափառաչրջիկ ցեղերը, հրա-

(\*) Իւսուրաիսէն միապետ մը եղած է որ ապրած է Ն. Ք.  
2100 թուին, եդիպոսական ժԲ. թագաւորական շրջանին:

պուրուելով Եդիպոսսի դիզած հարստութենէն եւ օգտուելով ե-  
դիպոսական կառավարութեան տկարութենէն, արշաւեցին Նեղոսի  
հարուստ հովիտը ուր հաստատուցան աւելի քան երկու հարիւր  
տարի: Աշխարհի պատմութեան մէջ հիբոսներու իշխանութեան  
կարեւորութիւնը այն բանին մէջ է որ անոնք Եդիպոսսի եւ սու-  
րբական գաւառներու միջեւ հաստատեցին գործնական կապեր,  
որոնք անխզելի դարձան այնուհետեւ: Քանանացի վաճառական-  
ներ եւ արհեստաւորներ լեցուցան Եդիպոսս: Քանանացեոց ա-  
նունները եւ անոնց կրօնական պաշտամունքի ձևերը տարածուե-  
ցան նոր կայսրութեան մէջ: Քանանացեոց բառերը մասն կը իսպ-  
տացեոց լեզուին մէջ:

Երբեք պատճառ մը չկայ ենթադրելու որ ամու կոչուող սե-  
մական պետելիները եւ Եդիպոսսի արեւելեան եւ հիւսիս-արեւել-  
եան քաղաքարեւակները իրենց հետ չեն ունեցեր երբայեցիները,  
թէեւ անոնց անունը որոշակի չէ յիշուած: Միւս կողմէ, այսօր  
դժուար է որոշել թէ որպէս պատմական կորիզ ինչպէս վեր առ-  
նելու է Յովսէփի աւանդավէպերը, Եդիպոսսի մէջ երբայեցիներ-  
ու բնակութիւնը եւ Մովսէսի առաջնորդութեամբ անոնց այդ  
երկրէն մեկնումը: Ենթադրել որ զանոնք նոյնացնելու է հիբոսս-  
ներու հետ, ինչպէս ձոզէֆուս պատմադիրը կը փորձէ ընել, այն-  
քան ալ հաւանական չէ: Բայց այսքանը ստույգ է որ եթէ ոչ ամբողջ  
Իսրայէլի ժողովուրդը, այլ երբայեցիներու որոշ բնասանիքներն ու  
կարաւանները շատ կանուխէն եկած են Եդիպոսս ուր նայած երկրի  
փոխուող պայմաններուն աւելի կամ նուազ չափով լաւ ընդունե-  
լութիւն գտած են ու յետոյ հալածուած ու թշուած են երկրէն որ-  
պէս «անբաղձալի» օտարականներ:

Այսպէս եղած է ճակատագիրը օտար առեւտրականներուն  
որոնք հաստատուած են ուժեղ կայսրութեանց երկիրներուն մէջ  
եւ որովհետեւ անոնք սերած են տկար ցեղերէ, չեն ունեցեր զիրենք  
պաշտպանող զորաւոր ձեռքեր:

Հրեաներու համապիւս շարժումը աշխարհի մէջ, հով-  
մէացիներու ձեռքով երուսաղէմի կործանումէն վերջ չէ սկսած,  
ոչ ալ բաբելոնական աքսորանքէն յետոյ, այլ աւելի կանուխէն:  
Անիկա եղած է առեւտուրի բնական հետեւանքը, երեսոյթ մը զոր  
հրեաները պարզեր են մի շարք վաճառականական ժողովուրդներու  
հետ: Բայց պէտք չէ մտնալ որ երկրադործութիւնը, ինչպէս շատ  
մը ցեղերու մօտ, նոյնպէս եւ հրեաներու մօտ եղած է ապրուստի  
զխաւոր աղբիւրը մինչեւ աքսորանքի շրջանը: Նախապէս առե-  
տուրը միայն վրանարեւակ արջառարոյժներու զբաղումն էր: Յե-



տոյ երբ անոնք հաստատուն բնակարաններ ունեցան, աշխատանքի բաժանումը ներմուծուեցաւ իրենց գործերուն մէջ եւ ճամբորդող վաճառականը տարբեր դիրք ունեցաւ հողին կապուած գիւղացիէն: Վաճառականներու թիւը համեմատաբար նուազեցաւ եւ գիւղացին եղաւ ժողովրդի նկարագիրը բնորոշողը: Եւ ատոր համար երկրէն դուրս հետու ապրող խորայէլացիները թիւով աւելի սակաւ էին քան իրենց տան մէջ մնացողները: Այս կէտին մէջ երբայեցիք տարբեր չէին ուրիշ ժողովուրդներէ:

Բայց վաճառականները ապրելով այնպիսի պայմաններու տակ ուր անոնք ենթակայ կ'ըլլային օտարականներու հանդէպ սընուցուած ատելութեան, անոնց մէջ կ'ուժեղանար ազգային զգացումը, նոյնիսկ ազգային դրայնտութիւնը որ բնականօրէն կը փոխանցուէր իրենց պատկանած ժողովուրդին:

**2) ՔԱՆԱՆՈՒ ԵՐԿԻՐԸ,**  
ԱԶԳԵՐՈՒ ՄԷՋԷՆ ԿՏՐՈՂ ՃԱՄԲԱՆ

Մենք տեսանք թէ որքան մեծ կարեւորութիւն ունէր Պաղեստինը Եզիպտոսի, Բաբելոնի եւ Սուրիոյ միջեւ առեւտրական տեսակէտէն: Անյիշատակ ժամանակներէ ի վեր այդ երեք պետութիւնները աշխատեալ են տիրանալ այդ երկրին:

Հիքսոսներու դէմ իրենց պայքարի ընթացքին, ինչպէս յիշեցինք (1800 Ն. Ք.), Եզիպտոսի մէջ զարգացաւ ռազմասէր ուղին, բայց հիքսոսներն իրենք արդէն ծագիկեցուցին առեւտուրը Եզիպտոսի եւ Սուրիոյ միջեւ: Ատոր համար երբ հիքսոսները քրշուեցան երկրէն, ռազմասիրական բնդարձակման ցանկութիւնը աւելի ուժեղացաւ Եզիպտացիներու մէջ Բաբելոնի վաճառականական ճամբուն հսկողութիւնը ազատուելու համար: Անոնք յառաջացան մինչեւ Եփրատ եւ գրաւեցին Պաղեստինն ու Սուրիան: Բայց Սուրիայէն անոնք քրշուեցան դուրս. միայն կրցին պահել Պաղեստինը ժե. գարէն մինչեւ ժ. գարը Ն. Ք.: Անոնք հոն ունեցան զօրաւոր կայաններ, ի միջի այլոց Երուսաղէմը: Բայց ի վերջոյ Եզիպտոսի ռազմական ուժը տկարացաւ, որով նա չկրցաւ պահել Պաղեստինը, մինչդեռ նոյն տակն սուրիական քիտասներն ալ տկարանալով ժ. գարուն տեղի տուին նորածաղ սասրեստանցիներու արշաւին: Ասով Եզիպտոսը չկրցաւ յառաջանալ դէպի հարաւ:

Ատեն մը օտար իշխանութիւնը վերցուեցաւ Պաղեստինի վը-

րայէն, որով պետեմի ցեղերու խումբ մը, խորայէլացիներէ բաղկացած, արշաւեց Պաղեստինի վրայ եւ գրաւեց զայն: Տակաւին անոնք հազիւ թէ վերջացուցեր էին իրենց յաղթանակը երբ նորէն սկսաւ կռիւր մէկ կողմէ երկրի նախկին բնակիչներուն, միւս կողմէ այն նոր թշնամիներուն եւ ուրիշ պետեմի ցեղերու միջեւ որոնք իրենց քայլերուն հետեւեր էին գալու «խոստացուած երկիրը»: Անոնք ճակատեալ էին թշնամիի մը որ կը բնակէր այն դաշտավայրերուն մէջ որոնք խորայէլացիներու գրաւած լեռնային երկրամասը կը բաժնէին ծովէն: Այդ թշնամիներն էին փղշապցիները որոնք լուրջ վտանգ մը կը տեսնէին խորայէլացիներու նման յարձակողական ժողովուրդի մը յառաջխաղացքին մէջ: Խորայէլացիներու աչքը ուղղուած էր ծովեզերքի դաշտավայրին վրայ, որովհետեւ անկէ կ'անցնէր այն գլխաւոր ճամբան որ Եզիպտոսը կը միացնէր հիւսիսի հետ: Ով որ տիրանար այս ճամբուն անմիջապէս կը տիրանար Եզիպտոսի հիւսիսի եւ արեւելքի հետ ունեցած ամբողջ օտար առևտուրին: Այդ առեւտուրը Միջերկրական Մովուն վրայ Եզիպտոսի ծովային վաճառականութիւնը խիստ անարժէք էր: Բայց եթէ բլուրներու բնակիչները չըջապատէին այդ դաշտավայրը եւ դառնային կռուող եւ աւարառու ժողովուրդ, անոնք մշտատեւ սպառնալիք կը դառնային Եզիպտոսի առևտուրին եւ անով հարստացող հարուստ դասակարգին: Եւ իրաւ ալ այդ ժողովուրդը կռուազան էր ու աւարառու: Հին կտակարանին մէջ արդէն կը հանդիպինք այն նկարագրութեանց որոնք կը պարզեն թէ խորայէլացիք շատ անգամ ասպատակային խումբեր կազմեր եւ կողոպտեալ են դրացի երկիրները: Գիրք Դատաւորաց Գ. գլխուն մէջ կը կարդանք որ Աւովը, խորայէլացի մը, տեօորիստի դեր կատարած է եւ սպաննած Մովարի էզդու թագաւորը: Աւազակային արշաւանքներու նկարագրութիւններ կ'երեւին նաեւ շատ մը տեղեր Աստուածաշունչին մէջ: Վեր անոնք Սամսոնի պատմութիւնը. «Ու Տէրօջը Հողին անոր վրայ եկաւ ու անիկա Աստաղոն իջաւ ու անոնցմէ երեսուն մարդ մեռցուց եւ անոնց հանդերձները առաւ ու հանելուկը բացատրողներուն տուաւ»: Այս կը նշանակէ թէ Սամսոն մարդիկը մեռցուց, կողոպտեց զանոնք իր պարտքը վճարելու համար: Դաւիթ նոյնպէս ներկայացուած է որպէս աւազակապետ. «Եւ ամէն մարդ որ յուսահատ էր, որ պարտք ունէր, դժգոհ էր հաւաքուեցաւ անոր քով եւ ան եղաւ անոնց զօրազուխը. եւ անոր հետ չորս հարիւր մարդ եղան»: (Թագաւորաց ԻԲ. 2):

Այս պայմաններուն տակ բնաւ զարմանալի չէ որ փղշապցիներու եւ խորայէլացիներու միջեւ շարունակ թշնամութիւն եղած



է, որովհետեւ առաջինները շարունակ աշխատեցին և ընկճել իրենց խռովարար գրացիները: Այսպէսով խորայէլացիները մէկ կողմէ պետեմիներէն, միւս կողմէ փղշտացիներէն ինկամ էին կախեալ եւ յուսահատ գրութեան մէջ: Փղշտացիները գրաւած ըլլալով զաշտաւայրերը շատ դիւրութեամբ կրնային զանազան ցեղերու հետ միացեալ ուժով իրենց պատերազմը մղել, մինչ խորայէլացիները գրաւած ըլլալով լեռնային մասերը ցրուած ուժեր եւ բաժանուած առհմեր կը ներկայացնէին, եւ ատոր համար չկրցին անմիջապէս փղշտացիները ընկճել: Վերջէն էր որ Դաւիթ զինուորական զօրաւոր թաղաւորութիւն մը հաստատելով կրցաւ մէկ միաւորի մէջ ձուլել Իսրայէլի զանազան ցեղերը, որմէ յետոյ Իսրայէլի ժողովուրդը իր ճնշուածի դերէն անցաւ ճնշողի դերին:

Այժմ փղշտացիները կործանեցան, անոնց բերդաքաղաքները իրարու ետեւէ անձնատուր եղան խորայէլացիներուն, իսկ ամէնէն յամառ զիմադրութիւնը ցոյց տուողը որ Երուսաղէմն էր որ կը հսկէր Պաղեստինէն հարաւ տանող ճամբաներուն վերջ ի վերջոյ նոյնպէս անձնատուր եղաւ խորայէլացիներուն եւ զարձաւ թաղաւորութեան մայրաքաղաքը եւ զաշտակցային ֆետիշի նստասեղին, Տապանակ Ուխտիէ բոյնը, որուն մէջ կը բնակէր պատերազմի աստուածը, Եհովան:

Դաւիթ ասանկով վասակեցաւ Եդիպտոսի եւ հիւսիսի միջեւ անցնող առեւտրական ճամբաներու հսկողութեան իրաւունքը, եւ այդ առուտուրը իրեն տուաւ հարուստ աւար, որով նա կրցաւ իր ռազմական բազիլերակներն աւելցնել եւ ընդարձակել իր պետութեան սահմանները զէպի հիւսիս եւ զէպի հարաւ: Նա հպատակեցուց պետեմի ցեղերը մինչեւ Կարմիր Ծով, ապահովուց ծովային վաճառականութեան ճամբաները եւ փրկեցիկեցիներու օգնութեամբ (որովհետեւ խորայէլացիները նաւարկութեան ծանօթութիւն չունէին) սկսան առաջ տանիլ Կարմիր Ծովու առուտուրը, որուն ճամբան նախապէս Հարաւ. Արարիայէն կ'անցնէր եւ կ'երթար զէպի հիւսիս: Ասիկա Իսրայէլի օսկեղարն էր որովհետեւ ան այդ շրջանին վաճառականական ամէնէն կարեւոր ճամբաներէն մէկուն արապետութեան զիրքին հասեր էր եւ կարող էր արապարդ ուժ եւ հարստութիւն կուտակել:

Բայց ինչ ըսել որ անոր այս նպատաւոր զիրքը ոչ միայն երկար չտեւեց, այլեւ անոր կործանման պատճառ զարձաւ, որովհետեւ խորայէլացիներու գրաւած տնտեսական կարեւոր զիրքը զբացի մեծ պետութեանց համար գաղտնիք մը չէր: Դաւիթի եւ Սողոմոնի օրով երկիրը որքան որ ծաղկեցաւ, այնքան մեծցաւ զը-

բացիներու ընչաքաղցութիւնը, մասնաւորապէս Եդիպտոսինը, որուն ռազմական ուժը նոր զարգացման ուղին մտած էր, որովհետեւ զիւղական միլիթիայի տեղը անցած էին շահագէտ վարձու զինուորական զուեղերը, որոնք ամէն ատեն պատրաստ էին յարձակողական պատերազմներու աւարտութեան համար: Անտարակոյս Եդիպտոսը առանձին վեր առած այնքան ուժեղ չէր որ Պաղեստինը գրաւէր եւ հոն հաստատուէր տեւականապէս, բայց այս պարագան աւելի վատ էր խորայէլի համար: Իսրայէլը եթէ մեծ ազդի մը կապուած մնար եւ անոր ուժով պահպանէր իր խաղաղութիւնն ու արտաքին թշնամիներու դէմ իր ապահովութիւնը, դա իրեն համար աւելի նպաստաւոր էր: Բայց եկուր տես որ Պաղեստինը իրարու հետ մրցող եդիպտացիներու, սուրիացիներու եւ աւորեստանցիներու միջեւ խաղաղեղակ մը եղաւ, պատերազմի թատերաբեմ զարձաւ իրարու թշնամի պետութեանց միջեւ: Իսրայէլացիները աւելիչ պատերազմներ պիտի մղէին իրենց սահմաններու պաշտպանութեան համար: Այդ ալ բաւարար չէր, անոնք հանդիսատեսը պիտի ըլլային իրենց երկրի արապետութեան համար իրարու դէմ պատերազմող խոշոր բանակներու աւերածութեանց որոնց առաջըր առնելու ոչ մէկ հնարաւորութիւն ունէին: Գէշը այն էր որ Պաղեստինի մէջ մղուած պատերազմները չէին վերջանար մէկ կամ միւս կողմի մտայուն յաղթանակով: Օր մը մին կը յաղթէր, օր մը միւսը, եւ ամէն անգամ յաղթական կողմը կ'աշխատէր կարելի եղած չափով կողոպտել բնակչութիւնը, որովհետեւ վստահ չէր թէ ինք հոն երկար կրնար մնալ: Այսպէսով Պաղեստինը միշտ իր տէրերը կը փոխէր, նայած մղուած պատերազմի բախտորոշումներուն: Պաղեստինը այդ ասանները ունէր այս զիրքը, ինչ զիրք որ ունէր Ահաբանը ժԸ. զարուն կամ Իտալիան, մասնաւորապէս Հիւսիս. Իտալիան Միջին Դարէն մինչեւ ժԹ. դարը: Պաղեստինի զանազան մասերը ենթարկուեցան զբացի ցեղերու զանազան ազդեցութեանց: Երկրի հիւսիսային մասը զօր խորայէլացիները գրաւած էին, ենթարկուեցաւ սուրիացիներու եւ յետոյ ասորեստանցիներու իշխանութեան, իսկ հարաւային մասը ուր կ'իշխէր Յուդայի ցեղը, ենթարկուեցաւ Եդիպտոսի: Ատոր համար խորայէլացիք տարբեր արտաքին քաղաքականութիւն ունեցան քան Յուդայի ցեղը: Այս արտաքին քաղաքականութեան տարբերութիւնը Իսրայէլը երկու կայսրութեանց բաժնեց, որպէս հակադրութիւն 12 ցեղերու կազմած այն միասնականութեան որ սպառնացող ճակատ պարզեր էր փղշտացիներու դէմ եւ ատով ալ յաղթեր էր անոնց:



Բայց պէտք է մտնալ որ իրերու այս դրութիւնը ուրիշ արդիւնք մըն ալ յատաճացուց: Անիկա ուժեղացուց ազգայնական շովինիզմը, ազգային զգայնատութիւնը եւ խոր ատելութիւնը օտարականներու դէմ: Իսկ այդ շովինիզմը երկրի անտանելի դրութեան շարունակութեան հետ աւելի հրահրեց աւազակային տըշաւանքները դրացի մեծ պետութեանց:

Արեւելքի մէջ կրօնը դարձեր էր կարեւոր. շովինիզմը անհրաժեշտօրէն նոյնիսկ կրօնի մէջ մտնելով պարզեց իր ժանիքները: Իսրայէլացիները իրենց զրացիներուն հետ առեւտրական յարաբերութեանց ընթացքին ընդօրինակեցին ուրիշներու կրօնական տեսակէտները, պաշտամունքի ձեւերը եւ աստուածային նկարները, բայց երբ շովինիզմը ուժեղացաւ անոնց ատելութիւնը ուղղուեցաւ նաեւ անոնց աստուածներուն դէմ ոչ թէ անոր համար որ անոնց գոյութիւնը տարակուսելի էր դարձեր, այլ անոր համար որ անոնք այդ աստուածները կը նկատէին որպէս թշնամիի օգնական ուժեր:

Երբայցիք այս կէտին մէջ արեւելեան ժողովուրդներէն էին զանազանուեր: Եզրիպտոսի մէջ հիքսոսներու նահապետական աստուածը Սուտէքն էր: Երբ հիքսոսները զուրս քչուեցան անոնց աստուածն ալ պաշտօնանկ եղաւ: Եզրիպտացիք զայն բնորոշեցին որպէս խաւարի աստուած որմէ կը պժղային:

Իսրայէլի հայրենասէրներն ու անոնց առաջնորդները, մարդարէներն ու կրօնականները այնքան կատրամ էին օտար աստուածներու դէմ որքան նարոլէոնի օրերուն գերմանացիները կատրամ էին գերմանական լեզուին մէջ Ֆրանսական բառերուն եւ Ֆրանսական նորաձեւութեանց դէմ:

**Է) ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐՈՒ ՄԷՋ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՒՒԸ**

Հայրենասէրները, սակայն, օտարականները ատելով էին զոհանար: Անոնք նոյնպէս կ'ուզէին իրենց պետութիւնը երիտասարդացնել, անոր ներարկել նոր դրութիւն, նոր արիւն:

Երբ ճնշումը սաստկացաւ Իսրայէլի հասարակուրդին մէջ, ճնշման հետ աճեցաւ նաեւ ընկերային զանազանութիւնը: Դաւիթի օրերուն առեւտուրի զարգացումը երկիրը հարստացուց: Բայց ինչպէս ամէն տեղ նոյնպէս եւ Պաղեստինի մէջ երկրագործութիւնը մնալով հասարակութեան հիմնաքարը, հողատիրութիւնը ամէնէն ապահով ու պատուաւոր ընկերային զիրքը դարձաւ: Պաղեստինի մէջ անոնք որ հարստացան հողեր զնեցին եւ սկսան իրենց հողերը ընդարձակել: Ասանկով կազմուեցաւ խոշոր հողատիրութիւնը որուն հետ

զուգընթաց քայքայուեցաւ զիւղացիութիւնը: Նախապէս իսրայէլացիներու մէջ զիւղական միլիցիան տուներէն էր հեռանար, բայց երբ մեծ պետութեանց հետ կռիւր սկսաւ, զինուորական ծառայութիւնը սմբողջապէս տկարացուց զիւղացիութիւնը եւ զայն զրաւ կախուածութեան մէջ, կախուածութիւն այն ուժեղ արեւակից զըրացիներէն որոնք զրամ ունէին եւ կրնային զինքը զուրս հանել իր հողէն եւ կամ թոյլատրել որ ինք մնար այդ հողին վրայ որպէս պարտական գերի. գերի մը որ զործելու էր իր պարտքը վճարելու համար: Հաւանական է որ վերջին միջոցը աւելի նախընտրելի էր շատերուն: Եւ արդէն Պաղեստինի պատմութեան մէջ շատ քիչ անգամ կը կարգանք որ ուրիշ ցեղերու պատկանող գերիներ եղած են: Իսրայէլացի հոգատէրերը իրենք արդէն բազմաթիւ գերիներ չունէին շահարկեր արտադրութեան զարկ տալու եւ շարունակական յաջող պատերազմներ մղելու համար: Իսրայէլացիները մեծ մասով կը պատկանէին այն դժբախտ ցեղերուն որոնք գերիներ կ'արտադրէին եւ ոչ թէ գերիներ կը զործածէին: Մեծ հոգատէրերը որոնք պէտք ունէին աժան ու կախում ունեցող վարձու աշխատատերերու կը նախընտրէին ունենալ իրենց հայրենակիցներէն պարտքով աշխատող ճորտեր քան թէ ամբողջապէս հողիով ու մարմնով ծախուած օտար գերիներ:

Երբ իրերու ընթացատուժը այսպէս զարգացաւ, Իսրայէլի զինուորական ուժը պակսեցաւ, որովհետեւ ազատ զիւղացիութիւնը նուազեցաւ եւ ատով ան չկրցաւ զիմադրել արտաքին թշնամիներուն:

Ատոր համար հայրենասէրները ու ընկերային բարենորոգչականները, անոնց կարգին եւ մարգարէները, միացան կասեցնելու իրերու քայքայիչ ու կորստաբեր ընթացքը: Անոնք կոչ ըրին ժողովուրդին եւ թագաւորութեան որպէսզի երկուքն ալ կռուին օտար աստուածներու եւ ազքատացող զիւղացիութեան թշնամիներուն դէմ եւ մարգարէացան որ պիտի կործանուէր պետութիւնը եթէ վերջ չտրուէր զիւղացիութիւնը թշուառութեան առաջնորդող ճնշումին ու հարստահարութեան:

Եսայի մարգարէն կ'աղաղակէր. «Վայ անոնց որ մէկ տունը միւս տան կը կցեն. ազարակ ազարակի վրայ կ'աւելցնեն մինչև որ տեղ մը չմնայ ու զուք մինակ բնակիք երկրին մէջ: Զօրաց Տէրը իմ ակնջիւս խօսեցաւ բերով. Յիրաւի շատ տուներ աւերակ պիտի դառնան, մեծ ու պզտիկ տուներ, եւ անոնց մէջ ընակող պիտի չզանուի»: (Եսայիայ Ե. 8-9):

Եւ Ամուլս մարգարէն յայտարարեց. «Լսեցէ՛ք այս խօսքը, ով



Սամարիայի լեռանը վրայ բնակող կովեր որ աղքատներուն գրկանք կ'ընէք, որ տնանկները ոտքի աակ կ'աանէք, որ ձեր տէրերուն՝ «բերէք որ խմենք» կ'ըսէք: Ձեր Տէր Աստուածը իր սրբութիւնովը երգում ըրաւ որ ահա ձեր վրայ օրեր պիտի դան որ ձեզ կարթերով պիտի վերցնէ եւ ձեր սերունդը՝ ձուկի կարթերով»: (Ամոխայ, Գ. 1-2):

«Ասիկա մտիկ ըրէք, դուք որ տնանկը կ'ըլլելու ու երկրին աղքատները կորսնցնելու կը ցանկաք ու կ'ըսէք. Սմապուխը ե՞րբ պիտի անցնի որ ընդկողէն ծախենք եւ շարաթը՝ որ ցորենը ծախու հանենք, արդուն (չափ, լիտր) պղտիկցնենք եւ սեկզը (դրամ) մեծցընենք եւ նենդութեամբ խարդախ կշիռքներ դործածենք, որպէսզի աղքատները ստակով ու տնանկները զոյգ մը կօշիկով ծախու առնենք ու ցորենի խտանը ծախենք: Տէրը Յակոբի վայելչութեանը վրայ երգում ըրաւ ըսելով. Անոնց բոլոր դործերը յաւիտեան պիտի չձոռնամ: Չէ՞ որ այս բանին համար երկիրը պիտի դողայ եւ անոր մէջ բնակողը սուղ պիտի բռնէ. ու բոլոր երկիրը դետի պէս վեր պիտի ելլէ ու պիտի քչուի ու պիտի ընկղմի որպէս թէ Եգիպտոսի գետով»: (Ամոխայ, Ը. 4-8):

Այն իրողութիւնը որ մեծահարուստներն ու իշխողները կառավարական ապարատը կը դործածէին նուիրականացնելու հարկահաւաքի նոր կարգադրութիւնները, յայտնապէս երեւան կուղայ մարդարէններու ողբասացութիւններէն որոնք ուղղուած են հրատարակուած օրէնքներու դէմ: «Վայ անոնց», կ'աղաղակէ Եսայի մարդարէն, «վայ անոնց որ անօրէնութեան կանոններ կը սահմանեն եւ այն դպիրներուն սրտնք անիրաւութիւն կը գրեն, որպէսզի աղքատներուն դատաստանը խտորեն ու իմ ժողովուրդիս տնանկներուն իրաւունքը յափշտակեն, որպէսզի որբեւայրիները իրենց աւար ըլլան ու որբերը կողոպտեն»: (Եսայիայ, Ժ. 1): Եւ նոյն մարդարէն Տէրջը անունով կը պատգամէ հետեւեալ կերպով. «Եւ իմ ձեռքս քու վրայ պիտի դարձնեմ եւ քու կղկղանքդ իբր թէ խորակով պիտի մաքրեմ... Անկէ ետեւ դուն պիտի կոչուիս արդարութեան քաղաք եւ հաւատարիմ աւան: Սիւնը դատաստանով պիտի փրկուի եւ հոն դարձողները՝ արդարութեամբ»: (Եսայիայ, Ա. 25-27): «Ի՞նչպէս կ'ըսէք թէ մենք իմաստուն ենք ու Տէրջը օրէնքը մեր քովն է. իրաւցնէ ահա դպիրներուն սուտ գրիչը ստութիւն կը դործէ»: (Երեմեայ, Ը. 8): «Միթէ ձիերը ապառաժներուն վրայ կը վազե՞ն, կամ ապառաժները եզներով կը հերկուի՞ն. քանզի դուք իրաւունքը դառնութեան եւ արդարութեան պատուը օշինդրի դարձուցիք: (Ամոխայ, Զ. 12):

Բայց այս մարդարէնները որքան ալ որ կեանքի կարիքներու բերնով կը խօսէին ու կը դործէին, հասարակութեան մէջ որեւէ յաջողութիւն չէին գտներ. միայն երբեմն չափով մը օրէնսդրական մարմիններուն կը հարկադրէին մարդոց յուսահատ դրութիւնը թեթեւցնել եւ ընկերային ցցուն հակադրութիւնները հարթել: Անոնց դործը անկէ անդին չէր անցներ:

Գիւղացիութեան կործանումը եւ պետութեան հետ հասարակութեան կործանումը անդիմադրելի վաղբով կ'ընթանար այնպէս ինչպէս որ իրերը իրենց բնթացքը առին Հոսովի մէջ: Միայն թէ այդ կործանումը եւ լուծումը այնքան դանդաղ ընթացք չունեցաւ ինչպէս Հոսովէական համաշխարհային կայսրութեան կործանումը: Իսրայէլացուց հակառակորդները, զօրութեամբ գերազանց, մէկ անդամէն կործանեցին անոնց հասաստութիւնները առանց թողելու որ անոնք իրենց բնական բարձրութեան հասնին ու անկէ յետոյ սկսուէր վայրէջքը: Այդ հակառակորդներն էին ասորեստանցիներն ու բարբոսացիները:

### Ը) ԻՍՐԱՅԷԼԻ ԱՆԿՈՒՍԸ

Ասորեստանցիներու իմպերիալիստական քաղաքականութիւնը կը սկսի մասնաւորապէս Թիկլատ-Փալասար Ա.ի (1115-1050 Ն.Ք.) ժամանակ եւ հակառակ ժամանակաւոր ընդմիջումներուն, Ասորեստան իր բանակները հեռոջեալ մօտեցուց Քանանու երկրին: Բայց այս ուժեղ յաղթողները իրենց հետ բերին երկրին պարտաւաններու հանդէպ նոր մեթոտի վարուեցողութիւն մը որ աղտաբեր աղղեցութիւն ունեցաւ իսրայէլացիներուն վրայ: Վրանաբնակ շրջանին Ասորեստանի ժողովուրդը բնականաբար կը շահադրդուէր դիտարական արշաւանքով, որովհետեւ անով էր որ կը կողոպտէին իրենց տկար գրացիները եւ բերքառատ երկիրներու մէջ կը հաստատուէին որպէս յաղթողներ եւ որպէս արիստոկրատ շահադործողներ կը շահագործէին երկրի բնիկները: Վրանաբնակ շրջանին երբ յաջողեց հաստատուած երկրադործական շրջանը, բնակչութեան մեծամասնութիւնը, գիւղացիներ թէ արհեստաւորներ, այլեւս պատերազմական յաղթութեամբ չէին շահադրդուէր, բայց կը շահադրդուէին սրաշտպանողական յաջող պատերազմով, որովհետեւ եթէ այդպիսի պատերազմ մը կորսնցնէին կը կորսնցնէին իրենց ազատութիւնն ու հողերը: Մեծ վաճառականները սակայն կը ձրգտէին ուժով երկիրը ընդարձակելու եւ վաճառականական ճամբաներու տիրապետելու քաղաքականութեան, որուն համար անհրա-



ժեշտ էր զինուորական զբաւումներու տակ առնել օտար երկրամասերը: Խոշոր հողատէր պնուականութիւնն ալ սրաւերագրական մեթոտով երկիրը ընդարձակելու կողմնակից էր, որովհետեւ ան ալ կ'ուզէր աւելի հողեր եւ նոր գերիներ: Հաւասարապէս ռազմասէր էին նաեւ թագաւորները որոնք կ'ուզէին իրենց տուրքի եկամուտները աւելցնել: Բայց այդ առեւտուան անտեսական զբաւումն մէջ երբ զինուորական մնայուն բանակ չկար, չկար զինուորական պիւրովրասի որ ուզած տեղը եւ ուզած տանը իր բանակը շարժման մէջ դնէր եւ կամ զբաւած վայրերու ժողովուրդները սեւական հպատակութեան մէջ պահէր, յաղթողները կը ճակատէին խոշոր զժուարութեանց: Ասոր համար անոնք կը բուականանային կողպուտով եւ ընկճուած ժողովուրդի հարկատուական խոտտումովը ու կը թողէին որ բնիկ տիրող դասակարգը իր ընկերային դիրքին վրայ մնար եւ իրենց օգնէր կերպով մը: Անոնք իրենց յաղթած երկիրներուն քաղաքական հիմնարկութիւնները փոխելու փորձ չէին ընել որ չըրին սկզբնական շրջանին: Բայց այս զբաւումն աննպաստ կողմը այն էր պարտուողը պատահութիւն գտածին պէս կը փորձէր փշրել իր վզին զբաւած լուծը որով նոր զինուորական արշաւի մը կարիքը կը շեշտուէր ապստամբութիւնը զսպելու համար: Ասորեստանցիները այս փորձառութիւններէն դաս առնելով նոր մեթոտ մը որդեգրեցին, այն էր իրենց յաղթած երկրի տիրող դասակարգը, հարուստները, խելացիները, առաջնորդները, ռազմասէր պաշտօնեաները, մասնաւորապէս մայրաքաղաքի մէջի ընտրանին աքտրել հետու տեղեր ուր անոնք չունենալով յենարան եւ իրենց սնունդ տուող ուժ, բնականաբար պիտի ըլլային բոլորովին անկարող ու անճարակ արարածներ: Իսկ մնացեալները ըլլալով դիւղացիներ ու արհեստաւորներ, անզուխ եւ առանց առաջնորդի արդէն չէին կըրնար փորձել որեւէ զիմադրութիւն յաղթողներուն դէմ:

Սագմանասար Բ. (859-825 Ն. Ք.) Ասորեստանի առաջին թագաւորն էր որ մտաւ Մուրիա, զբաւեց Հայկազը, Համասը, Դամասկոսը եւ յետոյ առաջինը եղած է որ մեղի սեպածեւ արձանագրութիւններով տեղեկութիւն կուտայ Իսրայէլի մասին, թէ ինչպէս Յեսու իրեն եկած է տուրք վճարելու: Այստեղ պէտք է նշել որ նոյնիսկ Ասորեստանի մէջ ապստամբներ եղած են որոնց ճակատագիրը եղած է նոյնը, բնաջնջում: Այսպէս, ուրեմն, երբ անպարտելի ասորեստանցիներու յառաջխաղացքը սկսաւ այլեւս ժամանակի խնդիր էր Իսրայէլի թագաւորութեան կործանումը: Ուրեմն մարդարէները արտակարգ հանճար մը չունէին երբ կը գուշակէին որ Իսրայէլի կործանումը մօտ էր:

Պաղեստինի հիւսիսային մասը որ անկախ էր, ուր էլլայի որդին Ուսէն կը թագաւորէր, մերժեց Ասորեստանի տուրք տալ, յուսալով թէ եղիպտոսէն իրեն օգնութիւն պիտի դար: Սագմանասար Դ. քաղեց Իսրայէլի վրայ (722 Ն. Ք.), զբաւեց անոր մայրաքաղաք Սամարիան եւ Ուսէ թագաւորը գերի բռնելով բանտարկեց: Բնակչութեան ծագկամասը, 27-290 հողի փոխադրեց հոս հոն ու ցրուեց զանոնք: «Եւ Ասորեստանի թագաւորը Բարելունէն, Քուլթայէն, Եմաթէն, Սիփարուսիէն մարդիկ բերաւ ու Սամարիայի քաղաքներուն մէջ Իսրայէլի որդիներուն տեղը բնակեցուց եւ անոնք Սամարիան ժառանգեցին ու անոր քաղաքներուն մէջ բնակեցան»: (Դ. Թագաւորաց, Ժէ. 24): Հիւսիսային Իսրայէլի ամբողջ բնակչութիւնը չէր որ փոխադրուեցաւ, այլ քաղաքներու մէջի ընտրեալները որոնց տեղը անցան օտարները: Իսկ այդ բաւական էր Իսրայէլի 10 ցեղերու ազգային զգացումը տկարացնելու, որովհետեւ դիւղացիութիւնը առանձնապէս չէր կրնար իւրաքանչիւր հասարակուրդային կեանք կազմել: Իսրայէլացի ընտրանիներն ու արիստոկրատները որոնք տեղափոխուեցան Ասորեստան կամ այլուր սերունդներ յետոյ բոլորովին կորսուեցան եւ ձուլուեցան իրենց նոր միջավայրին մէջ:

**Թ) ԵՐՈՒՍԱԼԷՄԻ Ա. ԿՈՐԾԱՆՈՒՄԸ**

Այնուհետեւ Իսրայէլի ժողովուրդին համար միայն մնաց Երուսաղէմը իր Յուզայի երկրամասով: Այնպէս կը թուէր որ այս փոքրիկ մնացորդն ալ պիտի ենթարկուէր նոյն ճակատագրին եւ Իսրայէլի անունը պիտի ջնջուէր աշխարհէն: Բայց ասորեստանցիներուն չէր վիճակուած Երուսաղէմը զբաւելն ու զայն կործանելը, որովհետեւ Բարելոնի մէջ ապստամբութիւնը սկսել էր եւ Ասորեստանի բանակը ստիպուած էր քաշուիլ:

Սենեքերիմի ժամանակէն սկսած (701 Ն. Ք.) ասորեստանցիներու ուշադրութիւնը զարձաւ գէպի հիւսիս, որովհետեւ վրանարնակ պատերազմասէր ցեղեր որպիսիք էին կիմօները, միդացիներն ու սկիւթիացիները, շարունակ կը յառաջանային, որոնց համար աւելի զինուորական ուժ պէտք էր զանոնք ետ մղելու համար: Սկիւթիացիները մտան Արեւմտեան Ասիա 625 Ն. Ք., կողոպտեցին ու աւերեցին իրենց ճամբու վրայի երկիրները եւ եկան միջնեւ եղիպտոսի սահմանները, բայց ցրուեցան եւ չկրցին իրենց յատուկ կայսրութիւնը հիմնել: Բայց անոնք շանհատացան առանց հետք մը թողելու իրենց ետեւ: Անոնք ցնցեցին ու խախտեցին Ասորեստանի կայսրութիւնը իր հիմունքներէն եւ ճամբայ բացին մի-



դացիներու յաջող արշաւանքներուն: Բարեւոն ատեն մը քաշուեցաւ եւ ազատ եղաւ մինչ եզիպտացիք զրուծիւնը օգտագործեցին ու շահեցան Պաղեստինի հսկողութիւնը: Յուդայի թագաւորը Յովսիա պարտուեցաւ եւ սպաննուեցաւ եզիպտացիներէն, ատոր վերայ Նեհօ եզիպտոսի թագաւորը Յովակիմը նշանակեց որպէս թագաւոր վասալ դարձած Երուսաղէմի մէջ: Վերջապէս 606 Ն. Ք. Նինուէն կործանեցաւ բարեւոյցիներու եւ միզացիներու ձեռքով ու Ասորեստանի կայսրութիւնը վերջացաւ:

Բայց այս դէպքը չազատեց Յուդան: Բարեւոն հետեւեցաւ Ասուրի քայլերուն եւ անմիջապէս փորձեց դէպի եզիպտոս տանող ճամբաներու հսկողութիւնը ստանձնելու գործը: Բարեւոյցուց դէմ կեցեր է Նեհոն որ յառաջացեր էր մինչեւ Հիւսիս. Սուբիա: Եզիպտացիք պարտուեցան Քարքէմիշի ճակատամարտին մէջ (605 Ն. Ք.) եւ Յուդայի երկիրը դարձաւ վասալ բարեւոյցիներուն եւ մէկէ աւելի անգամներ ձեռքէ ձեռք անցաւ եւ կորսնցուց իր անկախութիւնը: Հրահանգուած Եզիպտոսէն 597 Ն. Ք. Յուդայի երկիրը մերժեց տուրք տալ բարեւոյցիներուն, բայց ապստամբութիւնը զրուցուեցաւ առանց կռիւի. Երուսաղէմը պաշարուեցաւ Նաբուզոսոնոսընէն եւ անձնատուր եղաւ առանց պայմանի:

«Եւ Նաբուզոսոնոսը Բարեւոնի թագաւորը քաղաքին վրայ եկաւ երբ անոր ծառաները քաղաքը պաշարեր էին: Ու Յուդայի թագաւորը Յովակիմը իր մօրը ու իր ծառաներուն ու իշխաններուն եւ ներքինիներուն հետ Բարեւոնի թագաւորին ելաւ ու Բարեւոնի թագաւորը իր թագաւորութեանը 8-րդ տարին զանիկա բռնեց: Եւ անկէ Տէրոջը տանը բոլոր զանձները ու թագաւորին տանը զանձները հանեց ու կտորեց այն ամէն ոսկեղէն անօթիները զորոնք Խաբայէի Սողոմոն թագաւորը Տէրոջը տաճարին համար շիներ էր Տէրոջը ըսածին համեմատ: Եւ ամբողջ Երուսաղէմը ու բոլոր իշխաններն ու զօրաւոր մարդիկը 10.000 զերի ու բոլոր հիւսններն ու դարբինները քշեց տարաւ. երկրի ժողովուրդներուն ազգատներէն զատ մարդ չմնաց: Եւ Յովակիմը Բարեւոն փոխադրեց ու թագաւորին մայրը ու թագաւորին կիները ու անոր ներքինիները ու երկրին զօրաւորները Երուսաղէմէն Բարեւոն գերի տարաւ: Եւ բոլոր զօրաւոր մարդիկը 7000 մարդ ու հազար հիւսն եւ զարբին որոնց ամէնքըն ալ պատերազմոյ կարիճներ էին, Բարեւոնի թագաւորը զանոնք Բարեւոն գերի տարաւ: Եւ Բարեւոնի թագաւորը անոր ակն անոր հօրեղբայրը Մաթանիան թագաւոր դրաւ ու անոր անունը Սեղեկիայի փոխեց»: (Դ. Թագ. ԻԴ. 11-18):

Բարեւոնը կը հետեւէր ասորեստանցիներու մեթոսին: Թա-

զաւորական ընտանիքը, արիստոկրատները, կռուոյ մարդիկը, արհեստաւորներն ու հարուստները քշեց տարաւ երկրէն ու թողուց միայն աղքատները, մաս մըն ալ իշխող դասու մարդիկ որոնք իրեն կրնային օգտակար ըլլալ ժողովուրդը հպատակութեան տակ պահելու մէջ: Յուդայի երկիրը, ինչպէս տեսնոք, դեռ ամբողջապէս կործանուած չէր: Նոր թագաւոր մը որոշուած էր հոն: Սիդեկիա որ հետեւելով եզիպտացիներու խորհուրդին ապստամբեցաւ Բարեւոնի դէմ: Ասոր վրայ Նաբուզոսոնոսը նորէն պաշարեց Երուսաղէմը: Այս անգամ յայթիկով ամայացուց այդ քաղաքը որ անուղղայ էր եւ խռովարար, որովհետեւ տիրապետող զիբք մը ունէր Բարեւոնէն Եզիպտոս տանող ճամբաներուն վրայ (586 Ն. Ք.):

«Եւ Բարեւոնի թագաւորին, Նափուզոսոնոսը թագաւորին 15-րդ տարին, 5-րդ ամսուն, ամսուն 7-րդ օրը Բարեւոնի թագաւորին ծառան Նաբուզարդան զահճապետը Երուսաղէմ եկաւ ու Տէրոջը տունը եւ թագաւորին տունը այրեց ու Երուսաղէմի բոլոր տունները եւ ամէն մեծ տունները կրակով այրեց: Եւ քաղղէացուց բոլոր զօրքերը որ զահճապետի հետ էին Երուսաղէմի պարիսպները փլցուցին: Ու քաղաքին մէջ մնացած ժողովուրդին մնացորդը ու Բարեւոնի թագաւորին իշխող փախստականները ու մնացած բազմութիւնը Նաբուզարդան զահճապետը գերի տարաւ: Եւ զահճապետը երկրին աղքատները թողուց այլեզործներ եւ երկրազործներ ըլլալու համար»: (Դ. Թագ. ԻԵ.):

Նոյնպէս մարգարէութիւն Երեմ. ԼԹ. զլիսուն համար 8-12ին մէջ կը կարգանք հետեւեալը. «Եւ քաղղէացիք կրակով այրեցին թագաւորին տունը եւ ժողովուրդին տունները եւ Երուսաղէմի պարիսպները փլցուցին: Եւ Նափուզարդան զահճապետը քաղաքին մէջ մնացած ժողովուրդին մնացորդը ու իրեն ինկած փախստականները եւ ժողովուրդին ուրիշ մնացորդները Բարեւոն գերի տարաւ: Ու Նափուզարդան զահճապետը Յուդայի երկրին մէջ թողուց ժողովուրդին աղքատներէն որոնք բան մը չունէին եւ նոյն օրը անոնց արտեր ու այգիներ տուաւ»:

Հասկնալի է որ բարեւոյցի շատ յիմար պիտի ըլլային եթէ ամբողջ երկիրը ամայացնէին: Ասոր համար անոնք վտանգաւոր տարրերը միայն երկրէն հեռացուցին եւ թողուցին այնպիսիներ ինչպէս զիւզացիները որոնք առանց առաջնորդի բարեւոյցուց իշխանութեան դէմ ապստամբելու հնարաւորութիւն չունէին:

Երեմիայի տուած տեղեկութիւններէն կը հասկնանք որ Յուդայի երկրին մէջ ալ խոշոր հողատէրեր կային: Բարեւոյցիք եկան վերջնել այդ խոշոր հողատիրութիւնը եւ ազատագրեցին զիւզացի-



ները որոնք թէև հարկատու էին բայց տէրն էին իրենց հոգերուն:

Ասորեստանցիներու աուած տեղեկութեանց համաձայն Յուդայի երկիրը Աննքերիմի օրով 200.000 բնակչութիւն ունի եղեր չհաշուելով Երուսաղէմի բնակչութիւնը որ կը հաշուուէր 25.000: Երկրի խոշոր հողատէրերուն թիւը կը հասնէր 15.000-ի: Անոնցմէ նարուզոտոնոսոր 7000-ը գերի տարաւ Երուսաղէմի վրայ տարած առաջին յաղթութեան առնն: Ասոր համար ան իր ետև թողուց 8000 հողատէրեր: Բայց Բ. Գիրք Թագաւորացի ԻԴ. գլուխի 14 համարին մէջ կը կարդանք որ երկրին մէջ մնացին միայն չքաւորները: Ուրեմն, մնացած 8000 հողատէրերը երկրէն քշուեցան երկրորդ կործանումէն յետոյ: Անոնց այգիներն ու արտերն էին որ արուեցան ազգատ ժողովուրդին:

Շատ հաւանական է որ այդ երկրորդ անգամին ալ երկրի ամբողջ բնակչութիւնը տեղահան չեղաւ. միայն Երուսաղէմ քաղաքը դատարկուեցաւ ամբողջապէս: Հասկնալի է, ուրեմն, որ դիւղական բնակչութիւնը գերի չտարուեցաւ, մնաց իր տեղին վրայ: Բայց մնացած բնակչութիւնը այլևս հրէական մասնայատուկ հասարակուրդ մը կազմելու ներոյժ նկարագիրը չկրցաւ պահել: Հրեաներու ամբողջ ազգային կեանքը, ուրեմն, կեղբոնացեր էր աքսորի մէջ եղող քաղաքարնակ հրեաներու մէջ:

Այդ ազգային կեանքը այժմ մասնաւոր դրոշմ ստացաւ քաղաքային հրեաներու ազրած մասնայատուկ գրութեան հետևանքով: Մինչև այդ առնն խորայնացիք տարրերութիւն չէին ընէր զիրենք շրջապատող միւս ցեղերէն, ասոր համար այդ ցեղերու մասնաւոր ուշադրութիւնը չէր կեղբոնանար իրենց վրայ: Վերջէն էր որ անոնք բոլորովին տարրեր գունաւորումով ազգային դիժ մը կազմեցին որ չէր նմաներ ուրիշներու եւ շարունակեցին այդ դիժը: Հոովմէացիներու կողմէ Երուսաղէմի կործանումէն վերջ չէր այլ աւելի կանուխ, նարուզոտոնոսորի կողմէ Երուսաղէմի կործանումէն վերջն էր որ հրեաներու համար ստեղծուեցաւ անբնական կացութիւն մը որ անոնց տուաւ պատմութեան մէջ առանձնակի եւ միազոյն երևոյթ մը ներկայացուող ազգի մը հանդամանքը:

### ՀՐԵԱՆԵՐԸ ԱՔՍՈՐԱՆՔԷՆ ՅԵՏՈՅ

#### Ա) ԱՆՉԵՏԱՅՈՒՄ

Յայտնի է որ Յուդայի երկիրը Երուսաղէմի կործանումէն յետոյ նոյն բախտը ունեցաւ ինչ որ ունեցան Իսրայէլի ցեղերը Սամարիայի կործանումէն յետոյ, բայց այն տարբերութեամբ որ

մինչ Իսրայէլը պատմութեան էջերէն ջնջուեցաւ, Յուդայի ցեղը ամբողջ աշխարհի պատմութեան մէջ արտակարգ դործօն ուժ դարձաւ շնորհիւ այն հանգամանքին որ երկիրը Ասորեստանէն բաւական հեռու էր եւ Երուսաղէմն ալ օժտուած էր բնական ամբողջութիւններով: Այսպէսով հիւսիսային վրանարնակ ցեղերու արշաւանքը ոչ սկսաւ եւ Երուսաղէմի կործանումը Սամարիայի կործանումէն 150 տարի վերջ տեղի ունեցաւ: Այդ 150 տարիներու ընթացքին հրեաներուն մէջ աւելի եւ աւելի խորացաւ ազգային մոլեռանդութիւնը: Ասոր համար երբ անոնք աքսորուեցան, անոնց ազգային զգացումը աւելի դարգացած եւ ուժեղ էր քան հիւսիսի իրենց եղբայրներունը: Բայց այստեղ նկատի ստնելու է նաև ուրիշ դործօն մը. այն է հրեայ հասարակութիւնը ամփոփուած էր խոշոր քաղաքի մը եւ շրջակայքի երկրամասով, մինչդեռ հիւսիսի թագաւորութիւնը բաժնուած էր 10 ցեղերու որոնք սերտօրէն իրարու կապուած չէին. Յուդայի որդիները, ուրեմն, աւելի միասնական ճակատ կը ներկայացնէին քան Իսրայէլի ցեղերը:

Անտարկոյս Յուդայի ցեղն ալ իր ազգայնութիւնը պիտի կորսնցնէր աքսորի մէջ եթէ հոն մնար երկար առնն, ինչպէս մնացին Խորայնացիները: Նոր միջավայրի մը մէջ ուր աքսորականներու վրայ ճնշում չկայ, խտրականութիւն չկայ, անոնք սերունդէ սերունդ իրենց ազգայնութիւնը չեն կրնար պահել: Այդպէս էին հրեաները Ասորեստանի եւ Բաբելոնացի մէջ: Բայց Երուսաղէմի կործանումէն վերջ Բաբելոնի կայսրութիւնը սկսաւ երբեք, որովհետև սպաննալից նոր ցեղեր երևան եկան, որոնք հիւսիսէն արշաւեցին Միջագետք, կործանեցին Ասորեստանը եւ սկսան սարսափ տարածել ամէն կողմ: Այդ ցեղերուն ամէնէն զօրաւորը պարսիկներու վրանարնակ ցեղն էր որ կործանելով Ասորեստանը կործանեց նաև Բաբելոնը եւ հաստատեց ասորա-բաբելոնական կայսրութիւն մը: Այս կայսրութիւնը իր սահմաններուն մէջ առաւ Եգիպտոսը, Փոքր Ասիան եւ առաջին անգամ ըլլալով ստեղծեց համաշխարհային կայսրութեան մը հիմունքը սպահովող զինուորապետական գրութիւն մը որ ոչ միայն պարտուող ազգերը կը պահէր հլու հպատակութեան մէջ, այլև անոնց կուտար առնին տեւական խաղաղութիւն:

Բաբելոնի նոր տէրերը պէտք չունէին պահելու աքսորականներ: Կիրոս պարսից թագաւորը հրովարտակ մը հանեց որով իրենց հայրենիքը վերադանալ ուզողները ազատ էին այլևս: Այսպէսով հրեաներու աքսորը հազիւ թէ կէս դար տևեց:

Բայց հրէական կարճատև աքսորի շրջանին հրեաներուն



մէջ շատ մը փոփոխութիւններ յտաջացան եւ ուժեղացան մի շարք ձգտումներ որոնց զարգացման այնքան ալ չէր նպատակը իրենց հայրենի երկիրը: Հրեաները աքսորանքի ընթացքին ապրեցան որպէս ազգ մը առանց զիւղացիութեան, ազգ մը որ կը բաղկանար բացառապէս քաղաքային բնակիչներէ: Բարեկացիք հրեաներէն զինուոր չէին առներ, կառավարական պաշտօն չէին տար, անոնց համար միայն բաց կը մնար մէկ ասպարէզ, առեւտրական ասպարէզը: Հրեաները այդ ասպարէզին անձանօթ չէին: Առեւտուրը Պաղեստինի մէջ կանուխէն ելած էր իրենց կարելուք մէկ զործանութիւնը, բայց աքսորանքէն յետոյ ասիկա դարձաւ իրենց գլխաւոր գրառումը: Այդ գլխաւոր գրառումին ընկերացաւ հրեաներու իմացական զարգացումը: Անոնք զարգացուցին մատենատիրիւ, զարգացուցին իրենց իրապաշտական եւ վերացական մտածողութեան կարողութիւնը: Անոնք անձնական շահերէն զատ նկատի առին նաեւ աւելի ազնիւ նպատակներու հետ կապուած ինդիւիդուալ իրենց հայրենի հողին վրայ անոնք մրցման գծով իրարու թշնամի էին. օտար հորիզոնի տակ անոնք սերտօրէն կապուեցան իրարու հետ: Նախապէս խորթ արամադրութիւններ ունէին օտարներու հանդէպ. աքսորանքի ընթացքին ապրելով օտարներու հետ համոզւեցան որ այդ հակահրութիւնը իրենց նպատակաւոր չէր: Ատով անոնց մէջ զարգացաւ ընկերային զգացումը, բարոյագիտական մտածողութիւնը եւ այդ այն աստիճան որ հրեաները սկսան մտածել թէ իրենց ազգային զժբարխտութիւնը կապուած է օտարներու հանդէպ տածուած ատելութեան ու անհաշտելիութեան հետ:

Հրէական մտածողութիւնը պէտք է ըսել թէ մեծ թուիչք առաւ Բարեւոյնէն որովհետեւ ան կեդրոն էր աշխարհի առուարիին, հին քաղաքակրթութեան, գիտութեան եւ փիլիսոփայութեան:

Այստեղ տեղին է նշել որ ներքսմաքային վաճառականական կեդրոններու մէջ, ինչպէս Բարեւոյն, գիտութիւնը կապուած էր կրօնի հետ: Ասոր համար ամէն տեսակի ուժեղ ազդեցութիւններ իրենց արտայայտութիւնները կ'ունենային հրեաներուն մէջ կրօնական խողովակով եւ իրապէս կրօնը նոյն ատեն հրեաներուն համար զարձաւ ամէնէն տիրական ուժը, որովհետեւ անոնք կորսնցուցեր էին իրենց անկախութիւնը եւ իրենց ազգային միութեան կապ պահպանող միակ ազգակը մնացեր էր կրօնը: Հետեւաբար կրօնական գասակարգը ամբողջ հրեայ ժողովուրդին համար միակ հեղինակաւոր կազմակերպութիւնը եղաւ, մէկ խօսքով՝ անոնց առաջնորդը:

Հրեայ կղերականութիւնը բարեւոյնական կղերականութեանէն փոխ առաւ ոչ միայն մի շարք ամբարտաւան ինքնատիպութիւններ,

ինչպէս շատ մը պաշտամունքի զաղափարներ ու ձևեր, այլեւ մի քանի աւանդավէպեր: Օրինակի համար շարք մը Ս. Գրոց աւանդավէպերը բարեւոյնական ծագում ունին: Աշխարհի ստեղծումը, դրախտի պատմութիւնը, Ադամ-Եւայի շնորհագործի բլլայը, Բարեւոյնի աշտարակաշինութիւնը, ջրհեղեղը, եւ այլն: Շարք օրը սուրբ նկատելը բարեւոյնական հաւատք է եւ ոչ թէ հրէական: Հրեաները աքսորանքէն առաջ շարք մը հանդիսաւ կամ սուրբ օր չէին նկատեր: Եղեկիէլ մարգարէն շարք մը սուրբ օր կը կոչէ, բայց իր մէջ առաջ եկող մարգարէները նման յայտարարութիւն մը չեն բերած: Իսկ Երեմիա մարգարէի յայտարարութիւնը թէ. զլիստն մէջ բնազիրի հանգամանք չունի: Նոյնիսկ աքսորանքէն վերադարձին շատ զժուար էր հրեաներուն շարք օրը որպէս սուրբ օր ընդունիլ տալ, որովհետեւ դա հիմնովին հակառակ էր իրենց հին դաւանանքին:

Բայց մենք կրնանք ենթադրել թէ հրեայ կրօնաւորները ոչ միայն բարեւոյնական կրօնաւորներէն ընդօրինակեցին աւանդավէպեր ու սովորութիւններ, այլեւ աստուածութեան մասին հոգեբեւութարանական ըմբռնումներ:

Իսրայէլացիներու մէջ աստուածութեան ըմբռնումը երկար ատեն մնացեր էր բաւական կոշտ: Հին պատմութեանց կողմնակիցներն ու խմբագիրները թէեւ վերջէն աշխատեցան հետքերը ջնջել, բայց կարգ մը ասացուածքներ ու պատմութիւններ մնացին ու հասան մեզի: Օրինակի համար, Յակոբի պատմութիւնները: Յակոբի աստուածը ոչ միայն ամէն տեսակի հարցական զործանութեանց մէջ օգնէր է անոր, այլեւ այնքան խոնարհէր է որ անոր հետ գօտեմարտեր է. գօտեմարտութիւն մը ուր Աստուած պարտուած է Յակոբէն. «Եւ Յակոբ մինակ մնաց ու մարդ մը կը գօտեմարտէր անոր հետ մինչեւ արշալոյս: Եւ երբ տեսաւ որ իր ուժը անոր չհասաւ, անոր զտին ամոլջիլին դպաւ եւ անոր հետ գօտեմարտած ատենը Յակոբին զտին ամոլջիլը խախտեցաւ: Եւ մարդը ըսաւ.— Հիմա թող տուր զիս քանդի արշալոյսը երեւցաւ: Եւ Յակոբ ըսաւ անոր.— Չեմ թողուր մինչեւ որ զիս չօրհնես: Եւ անիկա ըսաւ անոր.— Ի՞նչ է անունդ. ան ալ ըսաւ.— Յակոբ է: Եւ անիկա ըսաւ.— Այ մէյ մըն ալ անունդ Յակոբ չըսուի, հապա Իսրայէլ. վասնզի Աստուծոյ հետ եւ մարդոց հետ մարտնչեցար եւ յաղթեցիր: Եւ Յակոբ հարցուց ու ըսաւ.— Ծնոր՞ք բրէ, անունդ բռէ ինձի. եւ անիկա ըսաւ.— Ինչո՞ւ իմ անունս կը հարցնես, եւ հոն օրհնեց զանիկա: Եւ Յակոբ այն տեղին անունը Փանուէլ դրաւ, քանզի ըսաւ — Դէմ առ դէմ տեսայ զԱստուած ու իմ անձս ողջ մնաց»: (Ծննդոց, ԼԲ. 24-30):



Մեծ անձանոթը որուն հետ Յակոբ դօտեմարտեցաւ յաղթութեամբ եւ անկէ բռնի ուժով շնորհք ստացաւ աստուած մըն էր որ ենթարկուեցաւ մարդուն: Ասիկա մեղի կը յիշեցնէ Իլիաստի մէջ յիշատակուած մարդոց եւ աստուածներու մէջի կռիւր: Բայց երբ Դիոմիդէս յաջողեցաւ վիրաւորել Արէսը, Պարաս Աթենայի օգնութեամբն էր, մինչդեռ Յակոբ երբ աստուծոյ հետ դօտեմարտեցաւ եւ յաղթեց, ուրիշ աստուած մը չօգնեց իրեն:

Մինչդեռ խորայէլացիներու մէջ աստուծոյ զաղափարը շատ անորոշ էր, զանոնք շրջապատող քաղաքակիրթ ազգերը ունէին իրենց զարգացած կրօնաւորներու դասը որ յառաջացած էր մինչեւ միաստուածութիւն, զանէ իրենց զազանի ուսուցմունքներուն մէջ: Այս պարագան պարզուած է եզրագծայիններու մէջ:

Մենք դեռ չենք կրնար ժամանակագրական կարգով մանրամասնօրէն պարզել եզրագծայիններու մտածողութեան պատմութիւնը իր փոխանցման շրջաններով, բայց կրնանք որոշակի ըսել որ եզրագծային կրօնաւորներու զազանի ուսուցմունքներուն մէջ կար յոյժ կարեւոր բան մը: Անոնք կը սորվեցնէին թէ Հորաս եւ Բի երկու աստուածներ էին, երկուքն ալ նոյնացած, մին հայրը, միւսը անոր որդին, եւ աստուածը ծնած էր իր մօրմէն, աստուածուհի երկինքէն: Իսկ այդ աստուածուհին ինքը արդիւնքն էր, ստեղծագործութիւնը յաւիտենական միակ աստուծոյ մը: Այս վարդապետութիւնը բացատրուած չէ այնքան յատկօրէն մինչեւ հիւստոններու վտարումը Եզրիպտոսէն ժե. զարուն (Ն. Ք.), բայց ան սկսած էր ձեւաւորուիլ արդէն 2500 Ն. Ք. թուին, եւ այդ զաղափարները վերջացէս մարմին առին միջին կայսրութեան օրերուն, համարեա 2000 Ն. Ք.:

Նոր վարդապետութիւնը ծնունդ առաւ Էնուի մէջ, արեւի քաղաքին մէջ (Heliopolis):

Վաստահօրէն կրնանք ըսել թէ այս վարդապետութիւնը մընաց որպէս զազանի վարդապետութիւն, բայց ան մէկ առիթով էր որ դրուեցաւ գործնական կիրառման գծին վրայ: Այդ տեղի ունեցաւ երբայցիներու Քանանու երկիրը մանեյլէն առաջ, Ամինադապ Դ-ի օրով, ՅԴ զարուն Ն. Ք.: Այնպէս կը թուի թէ թագաւորը պայքարի մէջ էր մտեր կզերականութեան հետ որուն զիգած հարստութիւնն ու վայելած իշխանութիւնը ստուերի մէջ կը ձգէին զինք: Ան կղերականութեան գէմ ուրիշ կերպ չէր կրնար պայքարիլ: Միայն մէկ կերպ կար, վեր առնել անոնց զազանի վարդապետութիւնը, միաստուածութիւնը, եւ հրամայել որ միայն մէկ աստուած պաշտուի, իսկ դատապարտուելու էին միւս բոլոր աստուածները:

Այսպէսով էր որ Եզրիպտոսի թագաւորը կրնար եւ կրցաւ դրաւել այդ գանալան աստուածներու անուան յատկացուած հակադէմոս հարստութիւնները:

Կրօնաւորներու եւ թագաւորին միջեւ մզուած կոխներու մանրամասնութեանց ծանօթ չենք: Միայն զիտենք որ Ամինադապ Դ-էն հարիւր տարի վերջ կրօնաւորները յաղթեցին եւ վերահաստատեցին հին աստուածներու պաշտամունքը:

Սոյն պատմութիւնը ցոյց կուտայ թէ միաստուածեան զաղափարը որոշ չափով զարգացած էր եզրագծային կրօնաւորներու մէջ որպէս զազանի վարդապետութիւն: Այսու հանդերձ տարակոյս չկայ որ բարելացիք նոյնպէս եզրագծայիններէն ետ չէին մնար ինչպէս արուեստի ու գիտութեան, նոյնպէս եւ կրօնական մարդին մէջ: Բարելացի կրօնաւորները նոյնպէս կը հաստատեն երկինքն ու երկիրը ստեղծող աստուած մը որուն առջեւ միւս աստուածները ոչխարի հօտեր էին: Անոնք ունէին նաեւ ուրիշ աստուածներ, 'Նինիր' ուժի աստուածը, 'Ներզալ' պատերազմի աստուածը, Բէլ' կառավարութեան աստուածը, 'Նարոս' առեւտուրի աստուածը, Սին' զիշերը լուսաւորող աստուածը, Սամաս' օրէնքի աստուածը, Ատտու' անձրեւի աստուածը:

Հրեաներու աքսորանքին ժամանակ երբ մի տեսակ միաստուածութիւն եւս ծագում առած էր պարսիկներու մօտ որոնք բարելացուց հետ շիման մէջ էին, մենք ապացոյցներ ունինք որ Բարելոնի մէջ եւս ուժեղ ձգտում կար գէպի միաստուածութիւն, ինչպէս Ամենադապ Գ-ի օրով: Բարելոնի անկումէն առաջ արձանագրութիւնները ցոյց կուտան որ Բարելոն լուսին աստուածը կը պաշտէր, ինչպէս Եզրիպտոս՝ արեւ աստուածը:

Բայց մինչդեռ Բարելոնի քուրմերը Եզրիպտոսի քուրմերուն պէս իրենց միաստուածութեան տեսութիւնները ժողովուրդէն կը պահէին որովհետեւ բազմաստուածեան տեսութեան վրայ հիմնուած էր իրենց շահը, պարագան տարբեր էր երուսազէմի մէջ կոապաշտ քուրմերուն մօտ:

Նոյնիսկ երուսազէմի կործանումէն առաջ կոապաշտութիւնը կարեւոր տեղ բռնած էր երուսազէմի մէջ, որովհետեւ Սամարիան կործանած էր եւ Իորայէլի հիւսիսային կայսրութիւնն ալ անոր հետ ինկեր էր: Երուսազէմ այժմ Իորայէլի ազդութեան միակ մեծ քաղաքն էր, իսկ զիւղացիական հողամասը որ իրմէ կախուած էր այնքան ալ կարեւոր չէր: Դանաւիցային կոապաշտութեան պատիւր որ մեծ էր Իորայէլի, մասնաւորապէս Յուդայի ցեղին մէջ, Դաւիթի ժամանակներէն շատ առաջ սկսաւ ստուերի մէջ թողուլ



ժողովուրդի միւս բոլոր նուիրականութիւնները, քանի որ Երուսաղէմը Յուդայի ցեղի միւս քաղաքներէն ամէնէն փայլունն էր: Նոյնպէս, Երուսաղէմի կրօնաւորները որոնք այդ կոսպաշտութեան փարած էին ստացան տիրապետող դիրք գիւղական շրջանի կրօնաւորներուն վրայ: Ասկէ սկսաւ պայքար բնագաւառի կրօնաւորութեան եւ մայրաքաղաքի կրօնաւորութեան միջեւ, պայքար մը որ վերջացաւ Երուսաղէմի կրօնականներու յաղթանակով: Այդ կը տեսնենք «Վարդապետութեան գիրքի» հեքիաթին մէջ, երբ քուրմերէն մին որպէս թէ տաճարին մէջ կը գտնէ Օրինաց Գիրքը որ կը հրամայէ քանդել Երուսաղէմէն դուրս պաշտամունքի բոլոր վայրերը եւ Յովսիա թագաւորը հաւատարմօրէն կը կատարէ զրքին հրամանները: «Ու թագաւորը Քեղկիա քահանայապետին ու երկրորդ աստիճանի քահանաներուն եւ դրան պահապաններուն հրամայեց որ Բահազի համար ու Աստարովթի համար ու երկինքի բոլոր գորութիւններուն համար շինուած գործիքներուն ամէնը Տէրօջը տաճարէն դուրս հանեն ու զանոնք Երուսաղէմէն դուրս կեղբոնի դաշտավայրին մէջ այրեց, ու անոնց մոխիրը Բեթել տարաւ: Եւ Յուդայի թագաւորներուն Յուդայի քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի բոլորտիքը բարձր տեղերու վրայ դրած խունի ծխող քուրմերը, եւ Բահազի ու արեղակին ու լուսնին եւ 12 կենդանակերպչներուն ու երկինքի բոլոր գորութիւններուն խունի ծխողները վերցուց: Եւ Աստարովթի կուռքը Տէրօջը տունէն Երուսաղէմի Կեղբոն հեղեղատը հանեց ու զանիկա Կեղբոն հեղեղատին մէջ այրեց, ու ձեծեց փոշի ըրաւ ու փոշին ժողովուրդի որդւոցը գերեզմաններուն վրայ ցանեց, եւ Տէրօջը ասնր մէջ գտնուող սոգոմական մեղք գործողներուն աւանները փլցուց ուր կիները Աստարովթի վարագոյր կը գործէին: Ու Յուդայի բոլոր քաղաքներէն քահանաները Երուսաղէմ բերաւ ու Գահեայէ մինչեւ Քիրսախէ պղծեց բոլոր այն տեղերը որոնց մէջ քահանաները խունի կը ծխէին... Ու Բեթէլի սեղանն ալ եւ Իսրայէլի մեղանչել տուող նախատեան Յերոբոամի շինած բարձր տեղը փլցուց եւ բարձր տեղը այրեց ու փոշի դարձուց ու Աստարովթի կուռքը այրեց»: (Գ. Թագ. ԻԳ. 5, 8-15):

Ոչ միայն օտար աստուածներու պաշտամունքի տեղերը այրուեցան ու կործանուեցան, այլեւ Եհովայի սրբազան տեղերը, անոր ամենահին տաճարները:

Հաւանական է որ աս ու ասոնց նման Ս. Գրոց պատմուածքները նախաքարտական շրջանի յերիւրանքներ են, արդարացնելու աքսորանքէն վերջ կատարուած դէպքերը, զանոնք ներկայացնելով որպէս կրկնութիւններ կանխագոյն շրջանի դէպքերուն: Անոնց հա-

մար նախընթացներ յորիներ են եւ այդ նախընթացները ուսեցուցեր ու չտփազանցեր են: Յամենայն դէպս, մենք կրնանք ենթադրել նոյնիսկ աքսորէն առաջ մայրաքաղաքի եւ գաւառներու կրօնաւորներուն միջեւ գոյութիւն ունեցեր է նախանձոտութիւն մը որու հետեւանքով զոցուած էին մի շարք սրբավայրեր որոնք մըրցման անյարմար էին: Աքսորանքի շրջանին, որովհետեւ հրեաները մեծ մասով Երուսաղէմ էին, անոնց համար դժուար էր Երուսաղէմի տաճարին գերիշխանութեան իրաւունքը ճանչնալն ու ճանչցնելը: Մէկ կողմէ բարեկրօնական փիլիսոփայութեան ազդեցութիւնը, միւս կողմէ հրեաներու ազգային զժրախտութիւնը (հաւանաբար նաեւ պարսից կրօնքը որ հրէական կրօնին հետ նոյն դժով զարգացեր էր եւ երկուքն ալ փոխի ի փոխ իրարու վրայ ազդեր էին), ասոնք բոլորը պատճառ եղան որ հրեաները նոր քայլ մը առնեն: Երուսաղէմէն իրենց հետ բերած փառասիրութիւնը կը պարտադրեր որ անոնք իրենց կոսպաշտական կրօնին մենատիրական դիրք մը տային: Ահա թէ ինչու հրեայ կրօնաւորները տիրող պայմաններու ազդեցութեան տակ հարկադրուեցան նոր քայլ մը առնել, ձգտելով դէպի բարոյազիտական միաստուածութիւն ուր Եհովան միմիայն Իսրայէլի հայրենական աստուածը չէր, այլ ամբողջ աշխարհի աստուածը, բարիին անձնաւորումը, ամէն բարոյականութեան մարմնաւորումը: Յետոյ, սակայն, երբ հրեաները աքսորէն վերադարձան Երուսաղէմ, իրենց կրօնքը արդէն զարգացեր եւ դարձեր էր հոգեւորականացած կրօնք մը որուն առջեւ յետամնաց հրեայ գիւղացիներու պաշտամունքի ձեւերն ու լմբանումները այլեւս կ'երեւնային կոշտ ու կոսպաշտական: Եթէ այս քայլը աւելի կանուխ առնուէր Երուսաղէմի կրօնաւորներն ու տէրերը շատ զիւրաւ պիտի կրնային ջնջել գաւառային պաշտամունքի հին ձեւերը որով Երուսաղէմի կրօնաւորներու մենատիրութիւնը կը հաստատուէր ամուր հիմքերու վրայ: Ահա այս էր սկզբնաւորութիւնը հրէական միաստուածութեան որ իր բնութագրով բարոյազիտական էր ինչպէս Պղատնի փիլիսոփայութեան միաստուածութիւնը, միայն սա տարբերութեամբ որ յոյներու միաստուածութիւնը կրօնականներէն ու կրօնի շրջանակէն ծագում չառաւ, մինչ հրէականը կրօնաւորներէն ծագում առաւ: Այսպէս, այս նոր աստուածը հին աշխարհի աստուածներէն վեր չէր մնար, այլ կը ներկայացնէր անոնց միացումը մէկին մէջ. աստուած մը որ Երուսաղէմի բնակիչներուն աւելի մօտ էր, որ ռազմասէր նախահայրերու Եհովան էր եւ որ վերջապէս բարոյազիտութեան ներկայացուցիչն ալ էր:

Իրերու այս ընթացքը հրէական կրօնքին մէջ շատ լուրջ հա-



կատուութիւններ մտցուց: Որպէս բարոյագիտութեան աստուած Եհովան ամբողջ մարդկութեան աստուածն էր որովհետեւ բարին եւ չարը բացարձակ ըմբռնումներ են որոնք կը վերաբերին ամէն մարդու հաւասարապէս: Եւ այդ աստուածը որ բարոյական իտէալի մարմնացումն է, որ ամենուրեք է, ուրեմն բոլոր մարդոց աստուածն է: Բայց կրօնը, ուրիշ խօսքով Եհովայի պաշտամունքը, նոյնպէս Բաբելոնի հրեաներուն համար ազդային միացման ամէնէն զօրաւոր կապն էր որուն միացած էր Երուսաղէմի վերահաստատմամբ ազդային անկախութեան հաստատման հաւանականութիւնը: Երուսաղէմի տաճարի կառուցումն ու անոր պահպանումը դարձաւ նշանաբան մը որուն կը յարէր հրեայ ազգը: Այդ տաճարին քահանայութիւնը հրեաներու բարձրագոյն հեղինակութիւնն էր: Գասակարգ մը որ դերազանցապէս կը շահագրգռուէր տաճարի պաշտամունքային մենատիրութեամբ: Այսպէս, ուրեմն, փիլիսոփայական վերացականութիւնը ամենուրեքեան միակ աստուծոյ մը որ մաքուր սիրտ մը եւ անմեղանչ ձեւի կեանք մը կ'ուզէ, որ զոհեր չի պահանջեր, պէտք էր միանար հին, նախնական կոսպաշտութեան հետ, այն աստուծոյն հետ որ մասնաւոր տեղ մը կ'ուզէ իրեն համար, որ ամէն անսակի մատուցումներ կը պահանջէր: Հրեաները այդ աստուածը, Եհովան պահել ուղեցին Երուսաղէմի տաճարին մէջ որուն ուղղեցին իրենց մտածումներն ու բողոքները:

Ոչ նուազ յատկանշական չէր նաեւ ուրիշ հակասութիւն մը: Աստուած երբ բարոյական պահանջներու մարմնացումն էր, ուրեմն նա հաւասարապէս բոլոր մարդոց աստուածն էր եւ սակայն նա մնալու էր հրեաներու հայրենական աստուածը: Անոնք փորձեցին այս հակասութիւնը հաշտեցնել այն յայտարարութեամբ որ աստուած արդարեւ բոլոր մարդոց աստուածն է զոր պէտք է պաշտել եւ սիրել, բայց նա այս աստուածն է որ հրեայ ժողովուրդը ընտրած է որպէս իր սիրոյն ու պատւոյն արժանի ժողովուրդ, անտեսելով կոսպաշտները: Հրեաներու ազգային գերակայութեան այս մտածողութիւնը ամէնէն աւելի խորացաւ աքսորանքի շրջանին երբ անոնք հասան նուաստացման եւ յուսահատութեան ամենացած աստիճանին: Նախապէս Իսրայէլը տարբեր չէր միւս ժողովուրդներէն եւ Եհովան ալ կը նմանէր միւս աստուածներուն, զուցէ աւելի զօրաւոր անոնցմէ, ինչպէս որ ամէն ոք կը կարծէ թէ իր պատկանած ազգը աւելի զօրաւոր է քան միւսներունը: Իսրայէլի աստուածը ամենակարող չէր, այլ միւս աստուածներուն բազմամամբ աւելի զօրաւոր էր: Ան նոյն աստիճանին վրայ կը զրտուէր անոնց հետ եւ կը կուէր անոնց դէմ: Քամոսն ու Տափոնն ու

Հագազը նոյնպէս աստուածներ էին, նուազ ուժեղ բայց նոյնքան իրական ինչպէս Եհովան: Յեփթան իր դրացի ժողովուրդներուն պատգամ զրկեց բեկով. «Ինչ որ ձեր Գամոս աստուածը յաղթութեամբ ձեզի տուած է կը պատկանի ձեզի եւ ինչ որ մեր Եհովա աստուածը յաղթութեամբ տուած է կը պատկանի մեզի»: Այս պատգամը նա տուաւ այն ժողովուրդներուն որոնք կը սպասնային Իսրայէլի սահմաններուն: Ասով հասկնալի է որ ամէն մէկ աստուած իր ուրոյն երկիրն ու ժողովուրդը ունէր եւ մէկը միւսին սահմանէն ներս չէր կրնար անցնիլ եւ ուրիշներէն պաշտուիլ: Բայց այժմ պայմանները փոխուած էին: Երեմիա մարգարէի հեղինակը սկսեալով 10. գլուխէն որ զրուած է աքսորանքէն վերջ, Եհովայի բերնով կը յայտարարէ «Ես Եհովա Աստուածն եմ. իմ անունն այս է, ու իմ փառքը ուրիշի չեմ տար, ոչ ալ իմ պատիւս՝ կուտքերուն: Առաջուան բաները ահա եղան ու նորերը ես կը յայտնեմ. անոնք դեռ չեղած ձեզի կ'իմացնեմ: Նոր երգ երգեցէք Տէրոջը, ու անոր զօրութիւնը՝ երկրի ծայրերէն, ով ծովը իջնողներ ու զանրկա լեցնողներ, կղզիներ եւ անոնց բնակիչները: Անապատը ու անոր քաղաքները, կեղարու բնակած տեղերը ձայն վերցնեն, Վէմի բնակիչները յաղթական երգով լեռներու գլխէն ձայն տան. Տէրոջը փառք տան եւ անոր զօրութիւնը կղզիներու մէջ պատմեն: Տէրը հզօրի պէս պիտի ելլէ, պատերազմող մարդու պէս իր նախանձր պիտի արթնցնէ, պիտի ազաղակէ ու բարձրաձայն գոչէ. եւ իր թշնամիներուն վրայ յաղթող պիտի ըլլայ»: (Երեմիա 10. 8-14):

Կը տեսնենք որ հոս Աստուծոյ սահմանաւոր հեղինակութիւնը որ միայն Պաղեստինի յատուկ է բնաւ չէ յիշուած թէ անոր հեղինակութիւնը տարածուած է ամէն տեղ. բայց նոյն հեղինակը դարձեալ Եհովայի բերնով կ'ըսէ. «Բայց դուն, ով իմ ծառաս Իսրայէլ, իմ ընտրեալս Յակոբ, իմ սիրելիս Աբրահամի սերունդը զոր երկրի ծայրերէն առի ու քեզ անոր եղերքներէն կանչեցի, եւ քեզի ըսի. Դուն իմ ծառաս եւ. քեզ ընտրեցի ու քեզ չմերժեցի. մի վախար, քանզի ես քեզի հետ եմ, մի դարհուրիւր, քանզի ես քու Աստուածն եմ. քեզ պիտի զօրացնեմ եւ քեզի օյնութիւն պիտի ընեմ, ու իմ արդարութեանս աջովը քեզ պիտի բռնեմ: ... Քեզի հետ կուտղ մարդիկը պիտի փնտռես ու պիտի ջլտնես. քեզի հետ պատերազմող մարդիկը չեղածի պէս ու ոչինչի պէս պիտի ըլլան... Առաջ ես ըսի Սիոնի, ահա, ահա անոնք. ու Երուսաղէմի աւետիս բերող տուի»: (Եսայեայ, 10. 8-27):

Այս մասնայատուկ հակասութիւնները կապուած են հրեաներու գործնական կեանքին հետ, Բաբելոնի մէջ հրեաներու անկա-



նոն զբուժեան հետ, որովհետեւ անոնք փոխադրուած էին նոր քաղաքակրթութեան մը մէջ որուն ուժեղ ազդեցութիւնը կը յեղափոխէր իրենց մտածողութիւնը, մինչ միւս կողմէ իրենց կեանքի պայմանները կը հարկադրէին որ անոնք պահպանեն իրենց աւանդութիւնները, քանի որ դա էր միակ միջոցը պահպանելու իրենց ազգային գոյութիւնը որը աւելի կարեւոր էր իրենց համար քան ուրիշ որեւէ ցեղի համար. որովհետեւ դարեր տեւող իրենց ցաւատանջ կեանքը զարգացուցեր էր իրենց ազգային գոյատուտութիւնը շատ խոր եւ յատկանշական ձեւով:

Հրեայ մտածողներն ու տեսարանները, ուրեմն, նոր բարոյազդեցութիւնը պիտի միացնէին հին փերիշիփի հետ, ուրիշ խօսքով անոնք պիտի հաշտեցնէին բարեխոնական քաղաքակրթութեան փիլիսոփայութիւնը (որմէ ազդուած են բազմաթիւ ցեղեր) լեռնական փոքր ցեղի մը նեղմտութեան հետ. այն ցեղը որ առեն մը կ'ատէր օտարականները կամ լաւ աչքով չէր նայեր անոնց: Եւ անհրաժեշտ էր որ այս հաշտեցումը կատարուէր կրօնի հիմունքով, ուրիշ խօսքով աւանդական հաւատքով: Ուրեմն այդ մեծ մտածողներու պարտքն էր փաստել որ նորը նոր չէր, այլ հինն էր, որ այդ անձանքներու ճշմարտութիւնը ոչ նոր էր ոչ ալ անձանքի, այլ իրապէս հրեական սեփականութիւն: Ասով հրեաները բարեխոնական հնոցին մէջ չէին կորսնցներ իրենց ազդեցութիւնը, այլ զայն աւելի կը զօրացնէին ու կը բերեղացնէին: Անոնց այդ կ'ազգայնացող գործը շատ բնականօրէն պիտի ուժեղացնէր հրեաներու միտքը, պիտի զարգացնէր մաղ բաժնող մեկնարանութեան արուեստը, որուն մէջ հրեաները պէտք է բոկ մասնաշատուկ զիրք գրուած են, յատկապէս պատմարանական գրականութեան մէջ:

Եւ այժմ կը սկսի իրերու այն շրջանառութիւնը որ յաճախ տեղի ունեցեր է, մի բան գոր Մարքսը ԺԲ. դարուն ապրող մարդուն բնական վիճակին հետեւող տեսութիւնները վերլուծման ենթարկելու է իր Քաղաքական Տնտեսագիտութեան Քննադատութիւնը անունով զրքին մէջ: Հրեաներու այդ շրջանի պայմանները եւ անոնց պատմական-տնտեսական գործօն ուժերու ազդեցութիւնը լաւ հասկնալու համար կ'արժէ մէջբերում ընել Մարքսի խորհրդածութենէն ու մէկ վերլուծումէն:

«Առանձնացած անհատ որսորդն ու ձկնորսը որոնցմով սկսած են Սմիթն ու Ռիչարտն իրենց վերլուծողական մեկնակէտը, կը պատկանին ԺԲ. դարու ստափակ մասապատկերներուն: Անոնք Ռոբէնտոնաաներ են որոնք ինչպէս կ'երեւակայեն կուլտուրայի պատմաւորները, չեն ներկայացնէր հակադրում մը ընդդէմ շտապանց

ներակեցութեան եւ վերագարձ մը դէպի սխալ հասկցուած բնական կեանքի մը: Անոնք զրեթէ շինուած են Ռուսոյի contract social բնագաղափարի պատկերով ուր բնութենէն անկախ անհատներ զաշինքով իրարու կը մօտենան եւ զաշինքով փոխ-յարաբերութիւն կը պահեն: Անոնք կը ներկայացնեն վէպը, մեծ ու պղտարիկ Ռոբէնտոնաաներու գեղազիւտական վէպը: Դա աւելի շուտ կանխատեսումն է «բուրժուական հասարակութեան» որ ԺՁ. դարուն ծնունդ էր առեր, իսկ ԺԲ. դարուն սոք էր կոխեր իր հասունութեան շրջանը: Ազատ մրցման այդ հասարակութեան մէջ առանձին անհատը ազատագրուած կ'երեւի բոլոր բնական կամ այլ կապերէն որոնք պատմական նախկին շրջաններու մէջ զայն կը դարձնէին որոշ, սահմանափակ մարդկային համակուտակման բազկացուցիչ մասնիկը: ԺԲ. դարու մարդարկներուն համար, որոնց ուներուն վրայ կեցեր են Սմիթն ու Ռիչարտն, ԺԲ. դարու այդ անհատը որը մէկ կողմէն Ֆէոդալական ձեւերու քայքայման, իսկ միւս կողմէն ԺՁ. դարէն սկսած նոր զարգացող արտադրողական ուժերու արդիւնքն է, կը պատկերանայ որպէս իտէալ որու գոյութիւնը կը պատկանի անցեալին. ոչ թէ որպէս պատմութեան հետեւանք, այլ որպէս պատմութեան մեկնակէտ: Որովհետեւ այդ անհատը կ'երեւար բնական յատկութիւններով օժտուած եւ անոր մասին ունեցած մտապատկերը կը համապատասխանէր մարդկային բնութեան, ապա ուրեմն ան կը նկատուէր ոչ թէ պատմութեան արտադրութիւն այլ բնութեան արտադրութիւնը եղող մի էակ: Այս ձեւի մտային մոլորութիւնը յատուկ է բոլոր նոր զարաշրջաններուն»: (Մարքս, Քաղաքային Տնտեսագիտութեան Քննադատութիւնը, ներածութիւն, էջ 21-22):

Ահա այսպիսի մոլորանքի մէջ ինչպէս հրեայ մտածողները որոնք զարգացուցին միաստուածութեան գաղափարը եւ պայմանները ստեղծեցին կրօնաւորներու տիրականութեան հրեաներու մէջ թէ աբսորի ընթացքին եւ թէ անկէ յետոյ: Անոնք կը խորհէին թէ իրենց այդ մտածումը պատմական զարգացման արդիւնքը չէ, այլ մեկնակէտի համար տուեալ պայման մը. ոչ թէ որպէս «պատմական արտադրութիւն» այլ որպէս «պատմութեան սկզբնակէտ»: Պատմութիւնը ինքնին կը հասկցուէր նոյն իմաստով եւ աւելի դիւրութեամբ յարմարեցուէր էր նոր պայմաններուն, քանի որ ան ստաւելապէս բերանացի աւանդութիւն մըն էր սոսկ եւ մեծ մասով չէր հիմնուած փաստական տուեալներու վրայ: Միակ Աստուծոյ մը հաւատքը եւ Եհովայի քահանաներու կողմէ իսրայէլի վրայ տարածուած իշխանութիւնը այժմ եղած էին իսրայէլի պատմութեան մեկնա-



կէտը: Բագմաստուածութիւնն ու կոսպաշտութիւնը Իսրայէլի հայրերու հաւատքէն վերջնութեւր շեղում մը կը ներկայացնէին, ոչ թէ իրապէս անոնց նախնական հաւատքը: Եւ այս ըմբռնումը զիրենք գերազանցապէս կը մխիթարէր, որովհետեւ Իսրայէլի ցեղը իրեն իրաւունք տուած էր յայտարարել որ իր ցեղը Աստուծոյ ընտրեալ ժողովուրդն էր: Իսկ Եհովան երբ Իսրայէլի նահապետական Աստուածն էր, ուրեմն Իսրայէլի ժողովուրդի պարտութիւնները պէտք էր վերադրել ուրիշ աստուածներու հետ իրենց Աստուծոյն պարտութեան: Ասոր համար այդ Եհովան եւ անոր քահանաները կ'ընտանին կասկածանքի տակ: Բայց հանդամանքները փոխուեցան մէկ անդամէն երբ Իսրայէլ ընդունեց թէ Եհովայէն զատ ուրիշ աստուած չկար եւ իսրայէլացիք այդ Աստուծոյ ընտրեալներն էին, բայց իրենք իսրայէլացիները այդ Աստուածը կը վարձատրէին ապերախտութեամբ ու մեղանշումով: Իսրայէլի եւ Յուդայի դժբախտութիւնը, ուրեմն, անոնք սկսան վերադրել իրենց գործած մեղքերուն, ոչ թէ Աստուծոյ տկարութեանը, այլ անոր բարկութեանը: Բայց այդ դադարարին կ'ընկերանար ուրիշ գաղափար մը, այն էր թէ Աստուած պիտի ներէր իր ընտրած ժողովուրդին, պիտի օգնէր անոր, պիտի ազատէր զայն երբ այդ ժողովուրդը վերահաստատէր իր հաւատքը իր Աստուծոյն, անոր քահանաներուն ու մարդարէներուն վրայ: Եթէ աղային կեանքը վերջանալու չէր, ուրեմն այդպիսի հաւատք մը անհրաժեշտ պիտի դառնար Իսրայէլի նման փոքր հասարակութեան մը համար որ անյոյս մնացեր էր իրմէ աւելի գերազանց եւ սակայն իրեն թշնամի սրբերու մէջ: Եւ ասոր համար զուր տեղը չէ որ Եսայի մարդարէն կ'ըսէ. «Ո՛րք Յակոբի որդիք, մի վախճար, ոյ Իսրայէլի մահկանացուները, քեզի պիտի օգնեմ, կ'ըսէ Տէրը ու Իսրայէլի սուրբը, քու փրկիչդ»: (Եսայի, ԽԱ. 14):

Միայն գերբնական, գերմարդկային, աստուածային ուժ մը, ազատարար մը, մեսիա մը Աստուծոյն զրկուած կրնար ազատել Յուդայի ժողովուրդը եւ զայն բարձրացնելով աէր դարձնել զիրենք շարժարող սրբերուն: Մեսիայի հաւատքը միաստուածութեան հետ երեւան եկաւ եւ ներքնապէս կապուեցաւ անոր հետ: Հենց աստոր համար ալ մեսիան որպէս Աստուած չէր պատկերանար, այլ մարդկային կերպարանք մը որ զրկուած էր Աստուծոյն: Անոր գործըն էր երկրային թաղաւորութիւն մը հաստատել ոչ թէ Աստուծոյ թաղաւորութիւնը, որովհետեւ հրէական մտածողութիւնը զեռ եւս չէր հասեր բարձր վերացականութեան աստիճանին, այլ կապուած էր հրեաներու թաղաւորութեան գաղափարին: Իրապէս ալ, Կիւրոս

երբ հրեաները Բաբելոնէն ազատեց ու զանոնք ետ զրկեց դէպի Երուսաղէմ, հրեաները զայն ողջունեցին որպէս Եհովայի առաքեալը, որպէս մեսիա, որպէս Քրիստոս: «Այսպէս կ'ըսէ Տէրը իր օծեալ Կիւրոսին, որուն աջ ձեռքը բռնեցի որպէսզի ազգերը անոր առջեւ հնազանդեցնեմ»: (Եսայի, ԽԵ. 1):

Հրէական մտածողութեան այս կերպարանափոխութիւնը, որ իր ուժգին մղումը ստացաւ աքսորի շրջանին բայց նոյն շրջանին չհասաւ իր վերջնական ձեւին, ի հարկէ չէր կրնար կատարուել վայրկեանի մը մէջ կամ խաղաղ միջոցով: Մենք պէտք է մոռնանք որ այս ձեւափոխումը արտայայտուած է մարդարէներու ուժեղ հակաճառութիւններով, խոր կասկածներով ու մտմտութեամբ որոնք կ'երեւին Յորի գրքին մէջ:

Ասիկա տեսակ մը յեղափոխական շրջան էր:

Աքսորանքէն շատ վերջն էր որ այս յեղափոխական շրջանը կանց առաւ: Վարդապետական, եկեղեցական, օրինական եւ պատմական որոշ տեսակէտներ յաղթական զուրս եկան եւ քահանայութիւնը զանոնք ընդունեց որպէս ճշմարտութիւն, քանի որ նա արդէն ժողովուրդի միջոցով տիրացեր էր ժողովուրդի հակողութեան գիրքին: Այն գրուածները որոնք համաձայն էին յաղթող տեսութեանց հետ յայտարարուեցան հին եւ նուիրական որ փոխանցուելու էր սերունդէ սերունդ: Բայց անհրաժեշտ էր այդ գրականութեան զանազան բաղկացուցիչ մասերուն մէջ մտցնել տեսակ մը ներգաշնակ միացում, չնայած որ այդ ալ ունէր իր հակասութիւնները, որովհետեւ հինն ու նորը միացած էին իրարու երկններանց ձեւով, ոմանք ճշգրտորէն հասկցուած, ոմանք բնու չհասկցուած, ոմանք իրական, ոմանք յերիւրածոյ: Միացման այս փորձը կատարուած է սպառիչ խմբազրութիւններով, յապաւումներով եւ միջյաւելումներով: Հակառակ սակայն ի դորձ գրուած խմբազրական գործերուն, բարեբախտաբար մենք ունինք այսօր Հին Կտակարանը որ մեզի կ'օգնէ գտնելու ոչ միայն փայլուն եւ շուսյլ կեղծարարութիւնները, այլեւ նախաքսորական շրջանի երբայեցի ժողովուրդին նկարագիրը, այն երբայեցի ժողովուրդը որուն շարունակութիւնը չէ կարելի նկատել այսօրուայ հրեաները, այլ կատարելապէս անոր հակապատկերը:

Բ) ՀՐԷԱԿԱՆ ՀԱՄԱՍՓՈՒԻՈՒՐ

Ն. Ք. 538 թուին Կիւրոս Բաբելոնի հրեաներուն ազատութիւն տուաւ որ վերադառնան Երուսաղէմ, բայց բոլորը չվերադարձան: Երուսաղէմ աւերուած էր: Պէտք էր զայն բնակելի դարձ-



նել, ամբացնել, Եհովայի տաճարը վերաշինել: Բայց նոյնիսկ այդ ատեն պատեհութիւն չկար որ բոլոր հրեաներն իրենց ապրուստը ճարէին: Հաւանական է որ այդ պահուն գիւղացին նախասիրութիւն պիտի ունենար գէպի քաղաք երթալու քան թէ քաղաքացին՝ գէպի գիւղական համայնքը:

Հրեաները Բաբելոնի մէջ երկար ատեն չմտնուն հետեւանքով ճարտարարուեստի ճիւղին մէջ հմտութիւն չկրցին վասակել: Յուդայի երկիրը անկախ չեղաւ. կախուած մնաց օտար յաղթականներէն: Առաջին անգամ պարսիկներէն, յետոյ եկաւ Մեծն Աղեքսանդր, վերջապէս կործանեւ անկախութենէ մը եւ կործանարար յեղափոխութիւններէ յետոյ ինկաւ Հռովմի իշխանութեան տակ: Իրենց համար ռազմասէր ուժեղ միապետական գրութիւն մը պէտք էր որ հրեաներու գոյութիւնը պահպանէր եւ տկար ազգերը հպատակեցնելով զանոնք կողոպտէր. իսկ այդօրինակ իշխանութիւն մը կը պահէր անոնց մօտ:

Երբ երկրագործութիւնը, ճարտարարուեստը եւ գինուորական ծառայութիւնը աքսորէն յետոյ հրեաներուն ասպարէզ չէին տար, անոնց ապրուստի միակ միջոցը մնաց առևտուրը, որուն կապուած էին Բաբելոնի մէջ եղած առեւնին ալ: Գորերով իրենց միտքը արդէն այդ ուղղութեամբ սնուած էր եւ անոնք կապուած մնացին առևտուրին:

Բայց բաբելոնական գերութեան շրջանէն սկսեալ խոշոր փոփոխութիւններ տեղի ունեցան որոնք աւերիչ ազդեցութիւն գործեցին Պաղեստինի վաճառականական գոյութիւններէն վրայ: Գիւղական երկրագործութիւնն ու ձեռարուեստները ծայրայեղ պահպանողական գրաւումներ են: Ծառ քիչ անգամ կը յառաջդիմեն անոնք. մրցման խթանիչ ուժը կը պակսի անոնց մէջ. յառաջդիմութեամբ չեն հետաքրքրուիր. միայն թէ համաճարակ չըլլայ, սով չըլլայ, անոնք զոհ կը մնան իրենց գործով եւ ապրուստի միջոցներով: Անոնք կը վախճան նոր եւ չփորձուած բաներէն որոնք կրնան փութացնել իրենց ձախողանքը եւ կորուստը: Ատոր համար գիւղական երկրագործութեան եւ ձեռարուեստի մէջ տեխնիկական յառաջդիմութիւնը սովորաբար կախուած կ'ըլլայ առևտուրէն որ հեռուէն կը բերէ նոր արտադրութիւններ եւ նոր աշխատանքի ձեւեր, որոնք կը ստիպեն որ մարդիկ շահաբեր նոր ձեւի մշակութեան եւ աշխատանքի նոր ձեւերու նուիրուին:

Առևտուրը նուազ պահպանողական է. անիկա իր սկզբնական քայլին մէջ իսկ կապուած չըզար տեղական պայմանադրականութեանց հետ, իր բնոյթով քննադատի գիրք ունի հայրենի աւան-

դութեանց հանդէպ, որովհետեւ նա կարող է բազմաթիւ զանոնք ուրիշ երկիրներու շահանքներուն հետ: Անկէ զատ վաճառականը աւելի շուտ կ'ենթարկուի մրցման ճնշումին քան գիւղացին կամ արհեստաւորը: Ատոր համար նա աշաւորջ կ'ըլլայ եւ կը փնտռէ միշտ նորը, մասնաւորապէս երթեւեկի միջոցներու զարգացումին կը նայի, ինչպէս նաեւ իր վաճառականական շրջանակի բնդարձակման: Այսպէս, ուրեմն, երկրագործութիւնն ու արհեստ-ճարտարարուեստը, որքան ատեն որ չեն կապուած կապիտալի գործածութեան հետ եւ չեն կենար գիտական հիմքերու վրայ, առևտուրը անտեսութեան մէջ միակ յեղափոխական ճիւղը կը մնայ. ծովային առևտուրը յատկապէս զօրաւոր ազդեցութիւն ունի այս դժով: Ծովային նաւարկութեամբ մարդիկ աւելի հեռուները կ'երթան եւ աւելի տարբեր ժողովուրդներու հետ կը շփուին քան թէ ցամաքային ճամբու առևտուրով: Որովհետեւ ովկիանոսը ցեղերը իրարմէ հեռու կը պահէ քան թէ ցամաքային երկրամասը, ասով հասկնալի է իւրաքանչիւր ժողովուրդ իրեն համար անկախ ու մասնաշատուկ զարգացման բնթացաուժ մը կ'ունենայ. իսկ երբ ծովային նաւարկութեան զարգացումով մարդիկ առևտրական գործով այդ երկիրները կը մանեն, անուղղակի կերպով իրարմէ տարբեր տարբեր կը մօտենան իրարու: Այդ բանը ցամաքային առևտուրը չի կրնար ընել: Բայց նաւարկութիւնը ինքնին տեխնիկական հանճար պահանջող գործ է, ատոր համար պէտք է ըսել ծովային վաճառականութիւնը աւելի ուշ ծաղկած է քան ցամաքային առևտուրը, որովհետեւ աւելի գիւրին էր ուղտ մը կամ աւանակ մը վարժեցնելը քան թէ ծովու եւ բնութեան ուժերուն գիմարող տոկուն նաւ մը կառուցելը: Սակայն ստոյգ է որ երբ ծովային առևտուրը աւելի շահաւէտ է, ուրեմն նաւաշինութեան զարգացումը անհրաժեշտութիւն կը դառնայ ինքնին: Ատոր համար կրնանք ըսել թէ հին առեւնները տեխնիկական զարգացումը աւելի շուտ սկսած էր նաւաշինութեամբ քան թէ ուրիշ ճարտարարուեստի ճիւղի զարգացումով:

Ծովային առևտուրը ցամաքային առևտուրին արդեւ չէ, ընդհակառակը անոր խթանիչն է: Նաւահանդիսա քաղաքի մը ծագումը կը պահանջէ միջցամաքային ապրանքներու կուտակում, որպէսզի անոնք բեռցուին նաւուն եւ տարուին ուրիշ տեղեր ծախուելու: Նոյնպէս ուրիշ տեղերէ կըր նաւը ապրանքներ կը բերէ, անոնք ծախուելու են միջցամաքային քաղաքներուն մէջ: Ատոր համար կրնանք ըսել թէ ծովային առևտուրը աւելի կախուած է ցամաքային առևտուրէն որուն կ'իյնայ հսկայական գեր կատարելու



իրաւունքը: Եթէ ծովային առեւտրական ճամբաները փոխուին, ցամաքային առեւտուրի ճամբաներն ալ պէտք է փոխուին: Փրենկէն որ Նեղոսի վրայ հին քաղաքակրթութեան կեդրոնին եւ Եփրատի միջեւ կեցեր էր, իր վաճառականութեամբ առաջին նաւարկուներ մէջտեղ հանց որոնք Միջերկրականի մէջ երկար ճամբորդութիւններ կ'ընէին: Եզրիպտացիներն ալ Միջերկրականի վրայ ելքի դուռ ունէին, բայց անոնց զլխաւոր գրասլումն էր երկրագործութիւնը-անոնք հողին կապուեցան եւ ոչ թէ նաւարկութեան: Եզրիպտոս նաւաշինութեան համար փայտի պէտք ունէր, բայց չունէր այնքան պիտանի ու հաստատուն փայտ եւ յետոյ եզրիպտացիները չունէին այն խթանիչ ու մղիչ ուժը որով նուիրուէին բաց ծովուն վրտանդներն արհամարհելու յանդիմութեան: Անոնց նաւերը միայն Նեղոսի վրայ կը բանէին ու շատ շատ ծովու եզրքներ կը քերէին շատ կարճ ճամբայով: Անոնք զարգացուցին երկրագործութիւնն ու ճարտարարուեստը, մասնաւորապէս հիւսուածեղէնի ճարտարարուեստը, բայց անոնք հեռուները չճամբորդեցին որպէս առեւտրականներ: Անոնք կը սպասէին որ օտարները սպրանք բերէին իրենց եւ իրենց աւելորդ սպրանքները ծախէին անոնց: Անոնց աչքը վախցեր էր անսպասէն ու ծովէն:

Փրենկեցիները, միւս կողմէ, կը բնակէին լեռանց շղթաներով եզերուած ծովեզերեայ ցամաքամասի մը վրայ, ուր երկրագործութիւնը չէր կարելի ծաղկեցնել: Ծովը իրենց կը հայթայթէր ձուկ, իսկ լեռնային անտառները՝ առատ փայտ նաւաշինութեան համար: Եւ որովհետեւ իրենք չըջապատուած էին բարձրորէն զարգացած ճարտարարուեստական երկրամասերով, իրենց ձկնորսութիւնը փոխուեցաւ ծովային առեւտուրի: Անոնք սկսան Հնդկաստանէն, Արարիայէն, Բարբելոնէն եւ Եզրիպտոսէն սպրանքներ տանիլ դէպի արեւմուտք, ուսկից կը բերէին ուրիշ տեսակի արտադրութիւններ, մասնաւորապէս մետաղներ:

Բայց ժամանակի ընթացքին փրենկեցիք իրենց դէմ մրցակից ունեցան յոյները, ծովեզերքի եւ կղզիի բնակիչները, որոնց երկիրը լերկ էր եւ ստիպուած էին ձեռնարկել ձկնորսութեան ու նաւարկութեան: Անոնք հետզհետէ վտանգաւոր դարձան փրենկեցիներուն: Նախապէս յոյները ուղեցին չհանդիպիլ փրենկեցիներուն եւ փնտուցին դէպի արեւելք տանող նոր ճամբաներ: Անոնք զայն Սեւ Մով, որուն նաւահանգիստներէն իրենց առեւտուրը հաստատեցին Հնդկաստանի հետ կեդր. Ասիոյ ճամբով: Նոյն ատեն փորձեցին յարարելի Եզրիպտոսի հետ եւ բանալ այդ երկիրը իրենց ծովային վաճառականութեան առջեւ: Հրէից բարբելոնական

դերութեան շրջանէն առաջ այնեաններն ու քարիանները յաջողեցան իրենց փորձերուն մէջ Եզրիպտոսի մէջ հաստատելով կուսան մը ուր լեցուեցան իրենց վաճառականները: Ամասիոսի օրով (569—525 Ն. Ք.) Նեղոսի արեւմտեան բազուկի երկայնքին անոնց տըրւած էր որոշ երկրամաս մը որ կը կոչուէր Նոքրատիս: Ասիկա ծառայելու էր որպէս միակ կեդրոնատեղին Յունաստանի առեւտուրին համար: Անկէ վերջ Եզրիպտոսը Բարբելոնէն յետոյ անձնատուր եղաւ պարսիկներուն (525 Ն. Ք.) բայց այս հանգամանքը Եզրիպտոսի մէջ յոյներուն գրաւած դիրքը չփոխեց, որովհետեւ պարսիկները պարտեալ երկիրներու ժողովուրդները բոլորովին չէին ստրկացնէր: Եւ երբ Եզրիպտոս լիակատար ազատութիւն տըրւած էր օտարականներուն առուտուր ընելու, այդ դերութեանէն ամէնէն աւելի օգտուեցան յոյները: Բայց անմիջապէս որ պարսկական պետութիւնը տկարացաւ, Եզրիպտոսը ապստամբեցան եւ ժամանակի մը համար յաջողեցան իրենց անկախութիւնը վերստանալ (404—342): Անոնք անապահոյս պիտի չյաջողէին իրենց այդ փորձին մէջ Եթէ իրենց չօղնէին յոյները, որոնք ոչ միայն պարսիկները ետ մղեցին թէ ծովէն եւ թէ ցամաքէն, այլեւ ետ քեցին անոնց հպատակ փրենկեցիները: Աղեքսանդր Մակեդոնացիի օրով (334 Ն. Ք.) յոյն ժողովուրդը սկսաւ իր յարձակողականը պարսկական կայսրութեան դէմ, գրաւեց Պարսկաստանը եւ վերջացուց փրենկեան քաղաքներու փառքը որ արդէն սկսեր էր քայքայուիլ:

Պաղեստինի առեւտուրը աւելի արագ անկում ունեցաւ քան թէ փրենկեանը: Պաղեստինի ճամբաները ամայացան: Ոչ միայն Հնդկաստանի արտահանութիւնները, այլեւ Բարբելոնի, Արարիոյ, Եթովպիայի եւ Եզրիպտոսի արտահանութիւնները Պաղեստինէն չէին անցնիր: Պաղեստինը Եզրիպտոսի եւ Սուրիոյ միջեւ արգելակ մը ըլլալով դարձեր էր թաաերաբեմը Եզրիպտոսի եւ Սուրիոյ տէրերուն միջեւ տեղի ունեցող պատերազմներուն, իսկ այս երկու երկիրներու առեւտուրը մտեր էր ծովային ճամբան. անտեսուած էր ցամաքայինը: Պաղեստինը իր միջանկեալ դիրքին հետեւանքով կորսնցուցեր էր իր կարելորութիւնը: Այս պատճառով հրեաներու առեւտուրը Պաղեստինի մէջ չափազանց պակսեր էր: Հետեւաբար երբ առեւտրական գծէն հեռու կը մնային անոնք ստիպուած էին իրենց առուտուրը յառաջ տանիլ այն ազգերուն մէջ որոնց վաճառական դասակարգը դեռ չէր զարգացեր եւ որոնք կը սպասէին որ դրսէն վաճառականներ գային իրենց մօտ: Եւ այդպիսի ցեղեր շատ կային: Այդ ցեղերը կ'ապրէին այն տեղերը ուր ժողովուրդի մեծամասնութիւնը երկրագործութեամբ կը զբաղէր, ուր արիստոկ-



րասին դո՞չ էր իր խոշոր հոգատիրութեամբ եւ մղած պատերազմներով եւ ուր առհասարակ անոնք կը նախընտրէին որ առեւտրականները դային իրենց երկիրը, փոխանակ իրենք երթալու դուրս իրենց պէտք եղած ապրանքները ապահովելու համար:

Այդպէս էին եզրագացիք, նոյն գրութեան մէջ էին նաեւ հռովմէացիները:

Այդ երկու ժողովուրդներուն համար ալ առեւտրականները օտարականներ էին, մասնաւորապէս յոյներ եւ հրեաներ:

Հրեաներու ցրուածութիւնը, ուրեմն, կը սկսի բարելոնական աքսորէն, ուրիշ խօսքով այն ատեն երբ անոնք ազատութիւն ստացան վերադառնալ իրենց հայրենիքը: Այս ցրուածութիւնը բռնութեան հետեւանք չէր, ինչպէս Երուսաղէմի կործանումը, այլ աննշմարելի փոխակերպման շրջանառութիւն մը որ երեւան եկաւ վաճառականութեան ճամբաներու փոփոխութեամբ: Եւ քանի որ աշխարհի առեւտուրի ճամբաները այլեւս նպաստաւոր չէին Պաղեստինի հրեաներուն աքսորէն վերջ, այդ երկիրը հրեաներու մեծամասնութեան համար իր նախատիրական հանդամանքը կորսնցուցեր էր եւ հրեաները եթէ պատեհութիւն ունենային ալ մասսայական ներդապի կողմնակից չէին: Սիոնականութիւնը չէր կըրնար փոխել այս կացութիւնը. տարբեր հարց էր եթէ նա կրնար Պաղեստինը աշխարհի առեւտուրի կեդրոնը դարձնել:

Հրեաներու ամենամեծ հաւաքը տեղի ունեցաւ այն քաղաքներուն մէջ ուր վաճառականական հսկայ դործառնութիւն եւ հարջատութեան կուտակում կար, ինչպէս Աղեքսանդրիայի, ապա Հռովմի մէջ: Հրեաները այդ տեղերը հաւաքուեցան մեծ թիւով եւ տիրացան հսկայական հարստութեան եւ իշխանութեան: Իրենց ազգային ուժեղ զղացումը զիրենք միաձուլեց եւ վերածեց որպէս սիմենտուած ազգութեան, մինչ Քրիստոսէ դարեր առաջ ընկերային կապերը սկսած էին կազմալուծուիլ ամէն տեղ: Հրեաները թէ՛ յունական եւ թէ՛ հռովմէական քաղաքակիրթ կեդրոններու մէջ թէ՛ եւ ցրուած էին, բայց անոնք զօրաւոր կապով մը միացած էին եւ կազմեր էին տեսակ մը միջազգայնական կազմակերպութիւն որու անդամները հող չէ թէ ուր եւ որ երկրին մէջ դառուէին, կ'օգնէին իրարու: Եթէ մենք նկատի ունենանք նաեւ վաճառականական դժի վրայ իրենց ունեցած ճարպիկութիւնը որ դարերով զարգացեր էր մասնաւորապէս աքսորանքէն յետոյ, այն ատեն կը հասկնանք թէ արուած պայմաններու ներքեւ հրեաները որքան բազմապատկեր էին իրենց ուժն ու հարստութիւնը:

Մոմսին, խօսելով Աղեքսանդրիայի վրայ, կ'ըսէ. «Քաղա-

քը լեցուած էր հրեաներով եւ յոյներով: Աղեքսանդրիոյ հրեաները թիւով այնքան շատ էին որքան էին առեւտր Երուսաղէմի մէջ. անոնք հարուստ էին, խելացի եւ լաւ կազմակերպուած: Եզրագացի առաջին կայսրութեան շրջանին 8 միլիոն եզրագացիներու դիմաց կային մէկ միլիոն հրեաներ եւ իրենց ազդեցութիւնը աւելի մեծ էր քան եզրագացիներունը: Անոնց թոյլատրուած էր կազմել իրենց ուրոյն հասարակուրդը: Մինչդեռ ուրիշ ոչ-քաղաքացիները կը կառավարուէին քաղաքացիական իշխանութեանց կողմէ, հրեաներուն արուած էր որոշ չափով ինքնավարութեան իրաւունք»:

«Հրեաները», կ'ըսէ Սարապոն, Աղեքսանդրիոյ մէջ իրենց ազգային պետը ունէին որ որպէս անկախ հասարակուրդի՝ իր ժողովուրդի պայմանադրութեանց ու կարգադրութեանց կը հսկէր: Հրեաները այնպէս յայտարարած էին որ իրենց ազգութեան եւ կըրօնի պահանջն էր այդ: Հրեաներու առանձնաշնորհալ դիրքը ապահովուած էր այն բանով որ անոնք սերտօրէն կապուած էին իրարու հետ. բազկացուցիչ տարբերու միջեւ գրեթէ մեծամասնութիւն կը կազմէին:

Աղեքսանդրիոյ հրեաներէն ոմանք ոչ միայն հարստացան մեծ չափերով, այլեւ իշխող թագաւորներու վրայ մեծ ազդեցութիւն ձեռք բերին:

Օրինակի համար մաքսային բարձրագոյն պաշտօնատան մէջ Ալապարք Աղեքսանդր մեծ հեղինակութիւն ունէր: Ակրիպաս որ Յուդայի երկրին թագաւորը եղաւ Թիպերիոսի թագաւորութեան օրով, 200 արախմա փոխ առաւ իրմէ: Աղեքսանդր անոր տըլաւ հինգ տաղանդ կանխիկ եւ մնացածը ի հրաման տոմսակ մը վճարելի ի Տիքարդիա: Ասիկա ցոյց կուտայ թէ հրեաները իրենց վաճառականական յարաբերութիւնները արդէն հաստատեր էին Աղեքսանդրիոյ եւ Իտալիոյ միջեւ: Տիքարդիայի մէջ որ նարոյլի մօտ է, կար կարեւոր հրեայ հասարակուրդ մը: Ճոզէֆուս կը յիշէ նոյն հրեային անունը. «Կլոտիոս կայսրը Ալապարք Աղեքսանդրին ազատագրեց որովհետեւ նա իր հին բարեկամն էր եւ իր մօր՝ Անտոնիայի ինամակալը. անիկա բանտարկուած էր Կայիոսի հրամանով: Աղեքսանդրի որդին Մարկիւս յետոյ ամուսնացաւ Բերինիսի, Ալրիպաս թագաւորի ազնկան հետ»:

Ինչ որ իրականութիւն է Աղեքսանդրիա քաղաքին համար, իրականութիւն է նաեւ Անտիոքի համար: «Անտիոքի մէջ եւս հրեաները կազմեր էին անկախ հասարակուրդ մը եւ ունէին առանձնաշնորհալ դիրք եւ կարելի է ըսել թէ այս երկու քաղաքները, Աղեքսանդրիա եւ Անտիոք որպէս հրէական համասփիւռի կեդրո-



նական քաղաքներ հրեաներու վաճառականական զարգացման նըպաստող գլխաւոր կեդրոնները եղած են :

Հրեաներուն հետքերուն հետեւելով մենք զանոնք կը գտնենք Հռովմի մէջ երկրորդ դարուն (Ն. Ք.) : 139) (Ն. Ք. Հռովմէացի ատենակալը իբրև օտարականներ աքսորեց հրեաները, որովհետեւ անոնք իտալական նորահաւատներ էին դարձեր եւ կը սօնէին իրենց շարաթը : Անոնք թերեւս այն հրեաներն էին որոնք Սիմոն Մակարայեցիի դեսպանութեան անդամներն էին, որոնք զրկուած էին շնորհ ստանալու՝ որպէսզի օգտագործէին իրենց կրօնըը, պրօպահանտան առաջ տանելու համար : Անկէ անմիջապէս վերջ մենք կը տեսնենք որ հրեաները արդէն իրենց բնակութիւնը հաստատեր են Հռովմի մէջ եւ հրէական ժողովուրդը հոն բաւական զօրացած էր երբ Պոմպէոս գրաւեց Երուսաղէմը 63 Ն. Ք. : Ան շատ հրեաներ որպէս պատերազմական զերի բերաւ Հռովմ, ուր անոնք բնակեցան որպէս զերիներ կամ ազատ մարդիկ : Այս հասարակուրդը դարձաւ շատ ազդեցիկ : Սիւրբոյի տարին (60 Ն. Ք.) ան շատ կը դանդաւտէր հրեաներու ձեռք բերած ազդեցութենէն : Այդ ազդեցութիւնը ուժեղացաւ Կեսարի իշխանութեան օրով : Այդ պարագան Մոմսինը հետեւեալ բառերով կը նկարագրէ .

«Թէ որքան բազմաթիւ էին հրեաները Հռովմի մէջ Կեսարի ժամանակէն առաջ եւ թէ որքան սերտ կապերով անոնք կապուած էին իրարու հետ, այդ կը տեսնենք նոյն շրջանի մէկ հեղինակի տուած տեղեկութենէն, որու համաձայն կառավարիչ մը կը վախնար իր գաւառի հրեաները նախատել, որովհետեւ բնակչութեան ծաղր ու ծանակին առարկայ կը դառնար : Նոյնիսկ այդ շրջանին հրեաներուն համար գլխաւոր եւ միակ զբաղումը տեսուորն էր . հրեայ առեւտրականը ամէն տեղ կ'երթար Հռովմէացի առեւտրականին հետ ճիշդ այնպէս ինչպէս յետոյ կ'ընկերանար ձենովացի եւ վենետիկցի վաճառականներուն եւ ամէն կողմէ զբամազլուխը կը հոսէր հրեաներու ձեռքը Հռովմէացի վաճառականներու կողքին : Այս շրջանին ալ մենք հաշուի առնելու ենք արեւմուտքի մասնայատուկ հակակրօնները հանդէպ արեւելեան ցեղին եւ անոնց օտար սովորութեան ու կարծիքներուն : Յուդայի կրօնը թէեւ ոչ մէկ խառն ազդի մէջ հաճելի երեւոյթ էր պարզեր, բայց պատմական ատաղձ էր որ կը զարգանար իրերու բնական ընթացքով զոր պատական մարդիկ չէին կրնար անտեսել, ոչ ալ անոր գէմ կուսիլ : Ատոր համար Կեսար իր նախորդներուն պէս հանգամանքներու ճշգրիտ գնահատումով զայն կարելի եղածին չափով զօրացուց : Մինչ Ալեքսանդր մեծն ազեքսանդրիական յուդայականութիւնը հիմ-

նեց, Կեսար ալ հրեաներու շահերուն օժանդակեց թէ Ալեքսանդրիոյ եւ թէ Հռովմի մէջ եւ պաշտպանեց անոնց իւրաքանչիւ պաշտամունքը հանդէպ տեղացի Հռովմէական եւ յունական կրօնաւորներուն : Այս երկու մեծ մարդիկը անշուշտ հրեայ ազդութիւնը հեղինական եւ իտալա-հեղինական ազդերու հետ նոյն աստիճանին վրայ չդրին, բայց հրեան որ արեւմտեանը չէր սիրեր, քաղաքական կազմակերպութեան Պանդորայի նուէրը ստացաւ եւ իրապէս կեցաւ անտարբեր դիրքի մէջ հանդէպ պետութեան եւ չուզեց թողուլ իր ազգային ինքնօրէնութիւնը, նոյն ատեն պատրաստ մնալով անոր հազցնել ըստ քմաց որեւէ ազդութեան հանդերձանք, որպէսզի յարմարուէր որոշ չափով օտար սովորոյթներուն : Այդ հըրեան հենց ատոր համար կ'ուզէր պետութիւն մը որ հիմնուէր ապրող բազմաթիւ քաղաքական սկզբունքներու աւերակին վրայ, օժտուէր տեսակ մը վերացականութեամբ եւ սկիզբի քայլին ցոյց չտար իր ազգայնութիւնը : Նոյնիսկ հին աշխարհի մէջ Յուդայի կրօնը համաշխարհաքաղաքացիութեան եւ ազգային տարբալուծման ազդու խմոր մըն էր եւ այդ հանգամանքով ալ մասնաւորապէս առանձնաշնորհեալ անդամը կը մնար կեսարեան պետութեան որուն քաղաքական սկզբունքը ուրիշ բան չէր բայց եթէ աշխարհի քաղաքացիութիւնը : Իսկ այն ինչ որ որպէս ազդութիւն կ'ըմբռնուէր, ուրիշ բան չէր եթէ ոչ մարդկութիւնը :

Մոմսին հակիրճ մի քանի տողերով փրօֆէսորական պատմական իմաստութեան երեք անջատ տեսակէտներու պաշտպանութիւնը կ'ընէ : Առաջին. իր զբաղ տողերէն կը հետեւցնենք այն դադափարը որ միապետները շինած են պատմութիւնը, որ Մեծն Ալեքսանդրի հրովարտակներով հրեաներ փոխազդուեցան Ալեքսանդրիայի մէջ ոչ թէ վաճառականական ճամբաներու փոփոխութեամբ որ արդէն հրեաները բերած էր Եգիպտոս ուր անոնք զարգացուցին եւ ուժեղացուցին իրենց առեւտրական ընդունակութիւնը : Սխալ է հաւատալ որ Եգիպտոսի աշխարհային առեւտուրը որ զարեր տեւեց, մակեդոնացի յաղթականին կողմէ ստեղծուեցաւ որպէս արդիւնք անոր այդ երկիրն մէջ ժամանակաւորապէս մնալուն կապուած քմահաճոյքին : Երկրորդ. թագաւորական հրովարտակներու մասին ունեցած նախապաշարումին կը հետեւի ցեղի նախապաշարումը : Մոմսին կ'ընդունի որ արեւմուտքի ցեղերը բընութենէն օժտուած են եղեր քաղաքական կազմակերպութեան «Պանդորայի շնորհքով», մինչ հրեաներուն մէջ այդ բանը իրենց ծնունդէն միշտ պակսեր է : Ասով կը հասկնանք որ բնութիւնն է որ կը ստեղծէ քաղաքական հակումները իր ուրոյն ազդիւրներով,



նախ քան որևէ քաղաքական շէնք դոյութիւն ունենալը, եւ յետոյ այդ քաղաքական հակումները ըստ քմաց կը ցրուէ գանադան ցեղերու միջեւ ինչ ձեւի ալ որ ըլլայ: Բնութեան այս միասնական քմահաճոյքը ինքնին ծիծաղելի կը դառնայ երբ վերջիշէնք այն իրականութիւնը որ հրեաները մինչեւ իրենց աքսորանքը, ունեցեր են քաղաքական կաղմակերպութեան «Պանդորայի շնորհք», ինչպէս բոլոր ցեղերը իրենց դարգացման որոշ աստիճանին: Միայն արտաքին սրայմաններու ճնշումն էր որ զրկեց հրեաները պետութիւն մը պահելու կարելիութենէն եւ այսպիսով դանոնք հեռացուց քաղաքական կաղմակերպութեան ձգտող նիւթական անհրաժեշտութենէն:

Պատմութեան այս միայետական եւ մարդարանական սխալ ըմբռնումներուն վրայ Մոմսին կ'աւելցնէ ուրիշ սխալ ըմբռնում մը երբ կ'ուզէ փաստել որ պետութեան դորաւարներն ու կազմակերպիչները մտային զրգիշ ուժերու ազդեցութեան տակ են շարժեր: Արկածախնդիր եւ անուղղայ դրամաշուրթ մը, սրպիսին է Յուլիոս Կեսար, յանկարծ կը փափաքի ստեղծել մարդկութեան եւ աշխարհի քաղաքացիութեան նուիրուած վերացական ազդութիւն մը, եւ ճանչնալով հրեաները անոնց շնորհած է այդ նպատակին հասնող ամէնէն օգտակար միջոցները:

Նոյնիսկ եթէ պահ մը բնդունինք որ Կեսար փորձեր է այդ ուղիով գործել, չենք կրնար բնդունիլ որ անոր ներքին խորհուրդները համաձայն եղած են իր սգիին, ինչպէս որ մենք չենք կրնար լրջօրէն դնահատել Նարոյէոն Գ.ի փայլուն փրագները: Կեսար բառ մը իսկ արտասանած չէ այդ ուղղութեամբ: Կեսար եթէ համակրեցաւ հրեաներուն ու պաշտպանեց զանոնք, պարզապէս իր յաւիտենական պարտքերուն եւ դրամի անյազ տենչանքին համար էր: Դրամը այն առնները պետութեան վճարողիչ մեծազոյն ուժն էր. եւ հրեաները առհասարակ ըլլալով դրամատէր կրնային օգնել իրեն, ինչպէս որ օգնեցին եւ ատոր համար նա անոնց շնորհեց իր պաշտպանութիւնն ու առանձնաշնորհումները:

Եւ հրեաները դնահատեցին իր շնորհք եւ յետոյ ողբացին իր մահը յաջորդական գիշերները անոնք այցելեցին անոր գերեզմանատան սենեակը:

Օգոստոս նոյնպէս գնահատեց հրեաներու կարեւորութիւնը: Փոքր Ասիոյ ժողովուրդները Օգոստոս կայսեր օրով փորձեցին հրեաներուն վրայ ծանր հարկել զնեւ եւ չթոյլատրել որ անոնք շարաթը որպէս սուրբ օր նկատեն. բայց Ազրիպաս դէմ գնաց անոնց ու պահեց զոյսովիճակը եւ նոյնիսկ օրինականապէս հրեանե-

րը ազատ հռչակեց զինուորական ծառայութենէ: Օգոստոս կայսրն ալ իր կողմէ հրահանգեց Ասիայի կառավարիչներուն կայսերական օրէնքով արդիւնել հրեաներու դէմ սարքուած միութիւններն ու հաւաքովիները:

Այդ ժամանակները հրեաները Հռովմի մէջ թիւով ութը հազարէն աւելի էին երբ պատգամաւորներով ներկայացան Օգոստոս կայսեր:

Այստեղ պէտք է ըսել որ բոլոր հրեաները առեւտրականներ չէին: Ամէն ուր որ անոնք բազմութեամբ իրարու մօտ կ'ապրէին կը գործածէին հրեայ արհեստաւորներ: Անոնք ունէին նաեւ հրեայ բժիշկներ եւ դերասաններ որոնցմէ նշանաւորը, Ալիսիւրոս, Ներոնի ամենասիրելին էր:

Գ) ՀՐԷԱԿԱՆ ՊՐՈՊԱԿԱՆՏԱ

Իսրայէլի ժողովուրդը մինչեւ աքսորանք անտօր չափերով չէր բազմացեր, ոչ աւելի քան միւս ցեղերը: Բայց աքսորէն ու անկէ յետոյ թուական աճումը զգալի դարձաւ: Եհովայի խոստումը որ Աբրահամի տրուած էր կատարուեցաւ. «Որովհետեւ այս բանը ըրիր, ու ինձի համար քու մէկ հատիկ որդիդ շինայցիդ, քեզ օրհնելով պիտի օրհնեմ ու քու սերունդդ երկինքի աստղերուն ու ծովեզերքը եղող աւազին պէս խիստ պիտի շատցնեմ, եւ քու սերունդդ իր թշնամիներուն քաղաքները պիտի ժառանգէ ու երկրի բոլոր ազգերը քու սերունդովդ պիտի օրհնուին»: (Մենդոց, ԻԲ. 17-18):

Այս խոստումը, ինչպէս Ս. Գրոց բոլոր միւս խոստումները կատարուելէն վերջ էր որ յերկրուեցան եւ մարդարէններուն յանձնուեցան որոնք մարդարէացան աստուածային շնորհով օժտուած հերոսներու մասին, երբ անոնք մտան իրենց պատմական դերին մէջ:

Եհովայի խոստումը Աբրահամին գրուած է աքսորանքէն վերջ եւ ոչ թէ անկէ առաջ: Հրեաները աճեցան երբ հաստատուեցան Միջերկրականի կարեւոր քաղաքներուն մէջ եւ «տիրացան իրենց թշնամիներու դռներուն» եւ ամէն տեղ զարգացնելով իրենց առեւտուրը անով «օրհնեցին աշխարհի ազգերը»:

Իտրաքօ որ Քրիստոսի ծննդեան ժամանակի դէպքերու մասին կը գրէ, հրեաներու շուրջ կ'արտայայտուի հետեւեալ կերպով. «Այս ցեղը արդէն մտած էր ամէն մի քաղաք եւ շատ դժուար էր գտնել երկրի բնակչութեան մէջ մէկ հատիկ տեղ ուր հրեաները



մասձ չըլլային եւ անոր Փինանսական իշխանութիւնը իրենց ձեռքը առաձ չըլլային» :

Հրեայ ժողովուրդի այս արագ աճումը մասամբ կարելի է վերագրել իրենց ուժեղ արդասաւորութեան : Բայց այս արդասաւորութիւնը որպէս մասնաւոր ցեղային յատկանիշ վեր չենք կըրնար առնել, որովհետեւ այդ պարագային նկատի պիտի ունենանք կանխազոյն ժամանակներն ալ երբ հրեաները այնքան արագ չէին աճեր : Ուրեմն պայմաններու փոփոխութեամբ մեղի կը ներկայանայ ուրիշ մասնաւոր արդակ մը որ նպաստեց հրեաներու աճումին : Այդ արդակը եղած է առեւտրական դասակարգը :

Ոչ միայն ամէն մէկ հասարակութեան ձեւ բնակչութեան աճման իր մասնաւոր օրէնքը ունի, այլեւ արուած հասարակութեան մէջ ամէն դասակարգ ունի իր աճման յատուկ օրէնքը : Այժմու վարձու պրոլետարիատը, օրինակ, շատ արագ կ'աճի : Ինչո՞ւ. որովհետեւ բանուորները շատ կանուխն անտեսապէս անկախ կը դառնան եւ իրենց երխասարգ տարիքին պատահութիւն կ'ունենան իրենց երխասարգ զաւակներուն գործ ապահովել. յետոյ բանուորները խոշոր կալուած կամ դրամագլուխ չունին որ բաժնեն իրենց զաւակներուն եւ ատով սահմանափակեն անոնց թիւը : Իսկ կապիտալիստը չի սիրեր շատ զաւակներ ունենալ որովհետեւ իր կուտակած հարստութիւնը բաժնելով փճացնելու վախով կը մտահոգուի :

Կայուն բնակչութիւն հաստատած Ֆարմերներու բնակչութեան աճման օրէնքը տարբեր է : Ուր որ անոնք գտնեն ազատ հող, ինչպէս միշտ կը պատահի երբ անոնք արշաւեն որսորդներու եւ հովիւներու կողմէ գրաւուած նոր երկիր մը, անոնց թիւը անսովոր կերպով կ'աճի, որովհետեւ իրենց սպրուստի պայմանները կը դիւրանան եւ իրենց զաւակները մեծցնելու գործը զրկանք եւ զբժարութիւն չի պահանջեր : Մինչդեռ երբ նկատի առնենք վրանաբնակ որսորդ ցեղերը, կը տեսնենք որ անոնց սպրուստի պայմանները անատույզ են. նորածին երեխան պէտք ունի իր մօր կաթին ու մայրերը տարիներով իրենց զաւակները սնուցանելու են իրենց կաթով : Թափառուն կացութիւնը մէկ կողմէ, սնունդի սակաւութիւնը միւս կողմէ չեն նպաստեր անոնց սերունդի աճման : Այսպէս են նաեւ արջաուարուծութեամբ զրազող վաշկատուն ցեղերը որոնք նոյնպէս թափառական կեանք ունին. թէ իրենց եւ թէ իրենց արջաուներու կեանքը կախուած է բնութեան քմահաճոյքէն. եւ յետոյ անոնք ստիպուած են իրենց ամբողջ կարողը տրամադրել նոր ու պատուական արօտատեղիներ փնտնելու գործին : Մինչդեռ հաստատուած Ֆարմերին վիճակը տարբեր է. անոր կողերը զուրսը չեն

մնար եւ կողերու կաթը բաւական է սնուցանելու իր զաւակները, իր տնտեսութիւնը աւելի ապահով է եւ ուտելիքը՝ առատ :

Բայց այստեղ նկատի ունենալու ենք ուրիշ կէտ մը : Երկրագործութեան համար տրամադրուած հողամասը սահման մը ունի եւ այդ սահմանը դնողն է անհատական սեփականատիրութիւնը աւելի մեծ չափով քան բնութիւնը : Ասկէ զատ երկրագործութեան տեխնիկական զարգացումը շատ զանդաղ տեղի կ'ունենայ : Ատոր համար երկրագործ ժողովուրդ մը ուշ կամ կանուխ կը հասնի տեղ մը ուր այլեւս չի կրնար գտնել նոր հող մը հոն իր նոր առններն ու ընտանիքները հաստատելու համար : Այս պարագան վիւզացին կը հարկադրէ որ ան իր զաւակներու թիւին սահման մը դնէ. տարբեր խնդիր է թէ՛ վիճակորական ծառայութիւնը կամ քաղաքային ճարտարաբուստը ուրիշ ձեւով օգնեն իր սերնդագործութեան աճումին :

Սոսկ հողային անհատական սեփականատիրութիւնը, սակայն, կրնայ նոյն արդիւնքը ունենալ երբ բոլոր արօտատեղիները մշակելի արտերու չեն վերածուած : Հողատիրութիւնը ճիշդ է որ իշխանութեան աղբիւր է. մէկը որքան շատ հող ունենայ, այնքան ազդեցիկ գիրքի կը տիրանայ հասարակութեան մէջ : Հողատէրերը կ'ուզեն աւելցնել իրենց հողային կալուածները եւ երբ երկրի տարածութիւնը արդէն որոշ սահմանի մը մէջ առնուած է, ուրեմն անոնք պիտի աշխատին իրենց հողերը ընդարձակել սահմանակից հողերը մաս առ մաս գրաւելով : Այդ գրաւումը տեղի կ'ունենայ այն ատեն երբ հողատիրոջ դրացին այս կամ այն պատճառով պարտքի տակ կ'իյնայ եւ այդ պարտքը վճարելու անկարող կը լինի :

Ժառանգականութեան օրէնքները կրնան նպաստել կամ դանդաղեցնել իրերու ընթացքը. անոնք կրնան նպաստել ամուսնութեամբ եթէ ամուսնացող զոյգերը հողային ժառանգութիւն ունին. ատով անոնց հողերը միանալով կ'ընդարձակուին, իսկ ընդհակառակը՝ անոնք, այդ օրէնքները կրնան զանդաղեցնել իրերու ընթացքը երբ հողաչերտ մը պիտի բաժնուի ժառանգորդներու միջեւ : Ատոր համար խնդիրը կը հասնի կէտի մը ուր մեծ հողատէրը կամ վիւզացի հողատէրը կամ պիտի պակսեցնէ իր զաւակներուն թիւը որպէսզի իր կալուածը իր ընդարձակ շրջանակով պահէ, եւ կամ իր զաւակները ժառանգութենէ զրկէ եւ պահէ միայն անոնցմէ մէկը : Ուրեմն, այն տեղը ուր տեղական օրէնքը ժառանգազրկումը կ'արգիլէ, մեծ հողատէրերը պիտի պակսեցնեն իրենց զաւակներուն թիւը : Այս էր պատճառը որ հոսովմէական կայսրութեան բնակչութիւնը պակսեցաւ, որովհետեւ ան հիմնուած էր երկրագործութեան, ուրիշ խօսքով խոշոր հողատիրութեան վրայ :



Այս երեւոյթին սուր հակադրութիւնը կը ներկայացնէր հրեաներու սերնդագործութեան աճումը: Հրեաները զազարած էին իրենց երկրազործական զբաղումէն: Անոնք մեծ մասով եղեր էին առեւտրական եւ զբամասէր: Գրամական կապիտալը հողի չի նըմանիր, անոր աճման սահման չկայ: Առեւտրականներու առուտուրը երբ կը ծաղկի, անոնց սերնդագործութիւնն ալ կ'աճի: Եւ կը տեսնենք որ աքսորի շրջանէն մինչեւ կայսերական շրջանի միջեւ եղած դարերուն է որ առեւտուրը ծաղկիլ սկսաւ: Հողագործական մարդին վրայ գործող մշակներու, գերիներու, վարձուորներու եւ գիւղացիներու շահագործումը աւելցաւ երբ շահագործման դաշտը սկսաւ ընդարձակուիլ: Ասոր հետ հանքերու շահագործումն ալ ծաղկեցաւ, մինչեւ որ գերիներու թիւը պակսեցաւ: Գերիներու թիւը պակսեցաւ, որովհետեւ յաղթական պատերազմները վերջ գրտան, այլեւս կողոպտելիք երկիր չէր մնացեր: Գերիներու նուազումով հողագործութիւնն ալ սկսաւ կաղալ, նոյնպէս եւ հանքագործութիւնը, անոնց հետ մէկտեղ երկրի բնակչութիւնն ալ նուազեցաւ: Երկար ժամանակ առաւ, սակայն, մինչեւ որ իրերու այս կործանարար ընթացքի արդիւնքը զգալի դարձաւ. այսինքն այն որ հարստութիւնը կուտակուեցաւ մի քանիներու ձեռքին մէջ, ուռճացաւ անոնց պերճասիրութիւնը եւ ժողովուրդը ամբողջապէս աղքատացաւ: Այն ատեն առուտուրը ղլխաւորապէս պերճանքի առարկաներու հետ էր եւ փոխազրական միջոցները դեռ զարգացած չէին: Մեծաքանակ ածան առաքումներ տակաւին նոր սկսուած էին: Եզրպատտի հետ ցորենի առուտուրը որոշ կարեւորութիւն մը ունէր, բայց ամէնէն շատ պերճանքի առարկաներն էին հարուստներու փնտռածները:

Այժմու առուտուրը նկատի կ'առնէ արտադրութեան հետ ժողովուրդի սպառողական կարողութիւնը, բայց հին ատեն նկատի կ'առնուէր միայն փոքրաթիւ շահագործողներու յոխորտանքն ու շուայլութիւնը: Ներկայիս առուտուրը կախուած է ժողովուրդի սպառողական ուժէն, իսկ հին ատեն անիկա կախուած էր շահագործման ուժգնութեանն ու մսխումէն: Այս վերջնոյն համար նըպաստաւոր պայմաններ ստեղծուեցան պարսկական կայսրութեանն հիմնումով եւ վերջացան առաջին կեսարներու տիրապետութեան յաջորդումով:

Մինչ վաճառականական ճամբաներու փոփոխութեամբ Պաղեստինը տազնապի մատնուեցաւ, բայց ատով առուտուրը աւելի զարգացաւ ընդհանրապէս Եփրատէն ու Նեղոսէն դէպի Դանուբ եւ Հսեմոս եւ Հնդկաստանէն դէպի Բրիտանիա:

Այն ազգերը որոնց տնտեսութիւնը հիմնուած է երկրազործութեան վրայ, անոնց բնակչութիւնը կրնայ նուազիլ, բայց վաճառական ազգ մը կը ծաղկի եւ պէտք չըզար իր բնական աճումը սահմանափակիլ եւ արտաքին ճնշումն ալ այդ չի կրնար ընել:

Այժմ մենք որքան գերզնահատենք հրեայ ժողովուրդի բնական աճումը, ստիպուած ենք փնտռել այդ աճման ազդակը որ յուգայական պրոպականդն է: Հրեաները այս պծով առաջին տեղը կը գրաւեն:

Ազգ մը որ կ'աճի կրօնական պրոպականտի միջոցով այնքան արտակարգ երեւոյթ մը կը ներկայացնէ ինչպէս են հրեաները որոնք նոյն ատեն արտակարգ երեւոյթ մը կը պարզեն նաեւ իրենց պատմական գրութեամբ:

Ինչպէս ուրիշ ազգեր, իսրայէլացիներն ալ սկիզբէն իրարու կապուած էին արեան կապերով: Իրենց թագաւորներու օրով պետական եւ դաւառական երկրային կազմակերպութեան տեղը անցաւ ցեղային սահմանադրութիւնը: Արեան ու ցեղային կապը իր ազդեցութիւնը կորսնցուց երբ հրեաները աքսորուեցան: Երբ աքսորէն վերադարձան այդ կապը չափով մը նորոգուեցաւ: Հրեայ ազգին աւելի մեծ ու մշտապէս աճող մասը հրէական ազգային պետութեան սահմանէն դուրս, հետու կ'ապրէր ոչ թէ ժամանակաւորապէս ինչպէս միւս ազգերու վաճառականները, այլ մշտապէս: Այս պարագան պատճառ եղաւ որ անոնք կորսնցնեն իրենց ազգայնութեան յաւելեալ կապը, հասարակաց լեզուն: Հետոն ապրող հրեաները օտար լեզու խօսելու էին. եւ եթէ մի քանի սերունդներ անցնէին, անոնց յաջորդները բոլորովին պիտի մոռնային իրենց մայրենի լեզուն եւ պիտի խօսէին իրենց բնակած երկրի լեզուն: Ասոր համար յունարէնը դարձաւ ժողովրդական լեզու: Արդէն Ք. դարուն Ն. Ք. հրեաներու սուրբ գրուածքները թարգմանուեցան յունարէնի երկու պատճառներով: ա) Աղեքսանդրիոյ հրեաներէն քիչերը կը հասկնային եբրայերէն լեզուն. բ) Անոնք ատով նպատակ ունէին պրոպականդ մղել յոյներու մէջ: Յունարէնը հրեայ նոր դրականութեան լեզուն դարձաւ. նոյնիսկ Իտալիոյ մէջի հրեաները ընդօրինակեցին ու որդեգրեցին յունարէնը: Հռովմի մէջ հրեայ հասարակութեան յատկացուած գերեզմանատան մի քանի տապանաքարերու արձանադրութիւնները մեծ մասով յունարէն են, ոմանք լատիներէն, բայց ոչ մէկը եբրայերէն: Պաղեստինի հրեաները նոյնիսկ չէին կրցած պահել եբրայերէն լեզուն. որդեգրած էին զիրենք շրջապատող բնակչութեան լեզուն, արամերէնը:

Հռովմի ձեռքով Երուսաղէմի կործանումէն մի քանի դար



առաջ երբայեքէնը արդէն ապրող լեզու մը չէր. ազգի անդամներուն հաղորդակցութեան որպէս միջոց ծառայելէ դադարած էր. եղեր էր միայն հին սուրբ գրուածքները պահող լեզու մը, իսկ այդ գրուածքները հազարաւոր տարիներ առաջուան ինքնատուութիւնը պահած չէին վերջերք, մաս մը կտորներ իրարու մօտ բերուած էին եւ անոնց վրայ աւելցած էին նոր յօրինուածքներ:

Իրենց կրօնն ալ, որ որպէս թէ Իսրայէլի նախնական հաւատքի վկայութիւնն էր, բայց իրատէս աքսորի շրջանին եւ անկէ վերջ նոր տարբերով կառուցուած էր, դարձաւ իրենց վաճառականական աշխուժութեան հետ հրեաները իրարու միացնող ամէնէն զօրաւոր կապը. միակ գիծը որ զանոնք կը զատորոչէ միւս ազգերէն:

Բայց այս կրօնի Աստուածը այլեւս նախահայրերու աստուածներէն մէկը չէր: Նա հիմա աշխարհի միակ Աստուածն էր, բոլոր մարդոց Աստուածը, որու պատուիրանները կը պատկանէին ամէն մարդու անխտիր: Հրեաները միւս ազգերէն կը տարբերէին միայն այն բանով որ իրենք ճանչցեր էին այդ Աստուածը, մինչ ուրիշներ իրենց կուրուքեամբ հեռացեր էին անկէ: Այս Աստուծոյ ճանաչումը այժմ հրէականութեան նշանակն էր. ով որ կը ճանչնար այդ Աստուածը ու կը հետեւէր անոր պատուիրաններուն, նա անոր ընտրեալն էր, հրեայ մըն էր: Միաստուածութիւնը, ուրեմն, ստեղծեց արամարանական գիծը՝ ընդարձակելու հրէական կրօնի սահմանները այդ զաղափարի պրոպականտով: Այս գիծը չէր կրնար օգտագործուիլ եթէ անոր շրջակայանս հրեաներու կողմէ տարածողական եւ ընդարձակման ձգտումը: Անոնք թիւով քիչ էին եւ ատով իրենց վրայ հրաւիրած էին ամենախոր նուաստացումը, եւ սակայն անոնք չէին փճացեր: Անոնք վերապրած էին դէշ փորձանքներէ եւ նորէն գտած էին իրենց հաստատուն կռուանը եւ սկսեր էին տիրանալ իշխանութեան եւ հարստութեան ամէնէն բազմազան միջավայրերու մէջ: Այս հանդամանքը անոնց ներշնչեց հպարտ վստահութիւնը որ իրենք իսկապէս ընտրեալ ժողովուրդ են, որ կոչուած են իշխել միւս ազգերուն: Բայց որքան մեծ էր իրենց հաւատքը իրենց Աստուծոյն եւ անոր դրկել խոստացած մեխային վրայ, բայց եւ այնպէս անոնք զիտէին որ իրենք այնչոյս էին քանի որ թուական տեսակէտով չնչին փոքրամասնութիւն մը կը կազմէին միլիոնաւոր կապալաններու մէջ, որոնց թուական եւ ուժի վերազանցութիւնը այնքան ուժգին կը շեշտուէր որքան կ'ընդարձակուէին իրենց վաճառականական յարաբերութիւնները օտար երկիրներու մէջ: Որքան զօրացաւ իրենց բարձրացման եւ ուժեղաց-

ման ցանկութիւնը, նոյնքան խոհեմութեամբ անոնք լծուեցան օտար ազգերէն իրենց կրօնին յարողներ ճարելու եւ անոնցմով իրենց ազգին թիւը բազմապատկելու գործին: Ատոր համար Երուսաղէմի կործանման նախորդող դարերուն հրեաներուն մէջ զարգացաւ ընդարձակման ամէնէն ուժեղ ձգտումը, բազմացումի ձգտումը:

Երբ խնդիրը վերաբերէր հրէական պետութեան սահմաններու մէջ բնակողներուն, հրեաներու բազմացման ամէնէն պարզ ճամբան էր բռնի դաւանափոխութիւնը: Անսովոր բան մը չէր յաղթել ժողովուրդի մը եւ հրեաները ուր որ մտան բռնի ուժով փորձեցին պարտադրել իրենց կրօնը պարտեալներուն: Այս տեղի ունեցաւ Մակաբայեցիներու եւ անոնց յաջորդներու դարաշրջանին, երկարելով դրեթէ 165-63 Ն. Ք. երբ սուրբական կայսրութեան անկումով հրեաները իրենց տեղ մը ապահովուցուցին եւ իրենց երկիրը ընդարձակեցին: Գալիլիա որ նախապէս հրէական երկրամաս չէր, այս շրջանին անցաւ հրեաներուն: Յորդանանու արեւելեան ցամաքամասը նոյնպէս ենթարկուեցաւ հրեաներու իշխանութեան եւ նոյնիսկ Եաֆաթի ծովազերքը ունեցան որպէս իրենց ոտից կայանը: Յաղթանակի այսպիսի քաղաքականութիւն մը անսովոր չէր. բայց անսովոր էր կրօնի միջոցով հրեայ ազգը բազմացնելու քաղաքականութիւնը: Պարտուած երկիրներու բնակիչները պէտք է ընդունէին հրեաներու Աստուածը որպէս իրենցը, որը կը պաշտուէր Երուսաղէմի տաճարին մէջ, անոնք պէտք էր ուխտի գային Երուսաղէմ եւ հոն պաշտէին զայն, տաճարին տուրք տալու էին, իսկ միւս ազգերէն զանազանուելու համար թրիատուելու էին. պէտք էր յատկապէս յարգէին հրէական ծիսական օրէնքները:

Այսպիսի մի նախընթաց բնաւ տեսնուած չէր հին աշխարհի մէջ, ուր առհասարակ յաղթողները պարտեալ երկրի ժողովուրդներուն լիւրի կրօնական ազատութիւն կուտային. միայն անոնցմէ կը պահանջէին տուրք, հարստութիւն եւ արիւն:

Հրէական բազմացման այս ձեւը կարելի էր միայն որոշ ատենի մը համար, այսինքն այն ատեն երբ սուրբացիները զեռ տկար էին եւ հռովմէացիք այնքան մօտ չէին տակաւին, հրեաներու զինուորական յառաջդիմութեան սպառնալու համար: Նոյնիսկ երբ Պոմպէոս տակաւին Երուսաղէմը չէր զբաւած (63 Ն. Ք.) հրեաներու յառաջխաղացքը Պաղեստինի մէջ արդէն կանգ առեր էր: Բռնի ուժով եւ կրօնական միջոցներով հրեաներու թուական աճումը կանգ առեր էր հռովմէացիներու գերազանց ուժովը:

Անկէ յետոյ հրեաները իրենց հաւատաւորներու թիւը աւելցրնելու համար իրենց ամբողջ էներժիւն տուին խաղաղ պրոպական-



տայի գործին: Ասիկա նոյնպէս այդ օրերուն բացառիկ երեւոյթ մըն էր: Քրիստոնէութենէն շատ առաջ հրեաները իրենց կրօնին նորահաւատներ գտնելու աշխատանքը առաջ տարին արտակարգ եռանդով եւ որոշ չափով յաջողեցան ալ: Բնական էր որ յետոյ քրիստոնէակաները հրեաներէն ընդօրինակէին նորահաւատներ ճարելու ձևը եւ արդէն այդպէս ալ ըրին երբ սանձեցին հրեաներու եռանդը եւ իրենք սկսան զարգացնել անոնց մեթոտները իրենց կրօնը տարածելու համար:

Տեսէք թէ Մատթէոս աւետարանիչը ինչ բառեր գրած է Յիսուսի բերանը. «Վայ ձեզի կեղծաւոր զպիւրներ ու փաբրիսեցիներ որ ծով ու ցամաք կը պատիք մէկը նորահաւատ ընելու, ու երբ ըլլայ զանիկա ձեզմէ երկու անդամ աւելի գեհնի որդի կ'ընէք»: (Մատթ. ԻԳ. 15):

Այս բառերով քրիստոնէակաները կ'արտայայտէին իրենց մերցման եռանդը որ ուղղուած էր հրեաներուն դէմ:

Նիւթական շահագրգռութիւնը ինքնին խոշոր դեր կատարած է կոապաշտ մարդիկը հրէական կրօնին յարեցնելու ճամբուն մէջ: Անդամ ըլլալ այնքան շատ ճիւղաւորուած եւ հարուստ կադմակերպութեան մը, ասիկա նուազ հրապուրիչ բան մը չէր շատրուն համար: Հոգ չէր թէ հրեայ մը որ տեղէն կուգար, կրօնի հաւատաւորները ամէն տեսակ օգնութիւն եւ քաջարեանք կ'ընծայէին անոր:

Ուրիշ ազգակներ եւ նպաստեցին հրեաներու պրօպագանտին եւ նպաստաւոր պայմաններ ստեղծեցին բարոյագիտական միաստուածութեան աննդամման համար: Բայց փիլիսոփաներու միաստուածութիւնը հակադիր եզրի վրայ էր աւանդական կրօնին, կամ աննուազն անոր դուրսի շրջանակին: Այս միաստուածութիւնը մտածողութեան անկախութիւն կ'ուղէր: Բայց նոյն ընկերային զարգացումը որ նպաստեց միաստուածութեան գաղափարին, առաջնորդեց նաեւ պետութեան եւ հասարակութեան քայքայման, անհատի կղզիացման, հաստատուն եւ մնայուն հեղինակութեան մը կարիքի բարձրացման. իսկ կեանքի նպաստակին ճամբուն մէջ ան առաջնորդեց ոչ թէ դէպի փիլիսոփայութիւն որ անհատը անկախ կը դարձնէ, այլ կրօնին որ անհատը վեր կ'առնէ որպէս ամբողջացած եւ հաստատուած մի արտադրութիւն, դերմարդկային հեղինակութեան մը:

Հին քաղաքակրթութեան պատկանող միայն երկու ազգեր, պարսիկներն ու հրեաները, չնորհիւ իրենց իւրաքանչեւ պայմաններուն, յարեցան միաստուածութեան ոչ թէ որպէս փիլիսոփա-

յութիւն, այլ որպէս կրօն: Երկուքին կրօններն ալ նշանակալից յառաջդիմութիւն ունեցան հելլենական աշխարհի ազդերուն, ապա հռոմէական կայսրութեան մէջ: Բայց, որովհետեւ հրեաները քաղաքական անկախութիւն չունէին, ամենամեծ եռանդով առաջ տարին նորահաւատներ բազմացնելու գործը եւ Աղեքսանդրիայի մէջ անոնք մօտէն ծանօթացան յունական փիլիսոփայութեան:

Այսպէսով հրեաները քայքայուող հին աշխարհի մարդոց մտքերուն կրցան մարտելի սնունդ տալ, մարդիկ որոնք կը կասկածէին իրենց աւանդական աստուածներու վրայ եւ բաւական ուժ չունէին ստեղծելու կեանքի տեսութիւն մը առանց Աստուծոյ կամ միակ աստուածով մը. եւ հրեաները ըրին աւելին: Անոնք նախնական-հնաւանդ բարոյական միակ ուժի իրենց հաւատքին միացուցին նաեւ հաւատքը փրկիչի մը գալստեան որուն կը սպասէր ամբողջ աշխարհը:

Հռոմէական կայսրութեան մէջ ուր շատ մը կրօններ կային, հրէական կրօնն էր այն միակ կրօնը որ կրնար լաւազոյն կերպով արտայայտել այդ գարաշրջանի մտածողութիւնն ու կարիքները: Ատոր համար նա գերազանց զիրք ունէր ոչ թէ կոապաշտներու փիլիսոփայութենէն, այլ անոնց կրօններէն: Եւ զարմանալի չէր որ հրեաները հպարտ էին անոնցմով եւ իրենց հետեւորդ նորահաւատներն ալ նոյն գծով կ'աճէին, կը շատնային: «Բոլոր մարդիկ», կ'ըսէ աղեքսանդրիացի հրեայ փիլոսոփ, «ընկճուած են հրէական կրօնէն եւ անկէ առած են առաքինութեան խրատները. բարբարոսները, յոյները, ցամաքի եւ կղզիներու բնակիչները, արեւելքի եւ արեւմուտքի ազգերը, եւրոպացիները, ասիացիները, աշխարհի բոլոր ցեղերը»: Նա կը սպասէր որ Յուդայի կրօնը ամբողջ աշխարհի կրօնը դառնար. եւ այս Քրիստոսի ժամանակ էր:

Մենք արդէն նշեցինք թէ 139 Ն. Ք. թուականին եւ կամ անկէ քիչ առաջ հրեաները Հռոմէէն քուլտեցան որովհետեւ անոնք լծուած էին նորահաւատներ բազմացնելու աշխատանքին Իտալիոյ մէջ: Տեղեկագրուած է Անտիոքէն որ այդ քաղաքին մէջ հրէական ուխտի հաւաքոյթներուն մասնակցողները մեծամասնութեամբ նորահաւատ հրեաներ էին եւ ոչ թէ ծնունդով հրեաներ: Հանդամանքները նոյնը ըլլալու էին գրեթէ ամէն տեղ: Ասով կը պարզուի անհեթեթութիւնը այն փորձին որ հրեաներու յատկանշական դիժը կը բացատրէ անոնց ցեղային հիմունքով:

Նոյնիսկ թագաւորները ընդունեցին հրէական կրօնը: Իզադէս, Ասորեստանի մէկ գաւառին թագաւորը իր մօր Հելէնայի հետ ընդունեց հրէական կրօնը որովհետեւ իր պալատի երեք կիները



նորահաւատներ էին: Ան նոյնիսկ թլփատուեցաւ չնայած որ իր հրեայ ուսուցիչը զգուշացուց զինք այդ քայլը առնել: Թագաւորին եղբայրն ալ դարձաւ հրեայ: Այդ տեղի ունեցաւ Թիպերիոսի եւ Կլոսիոսի ժամանակ: Հրեայ գեղեցկուհիները ուրիշ շատ մը թագաւորներ ալ բերին հրեայ կրօնի զիրկը: Թագաւոր Ազիլը, Իմեսայի թագաւորը, հրեայ կրօնը ընդունեց Ազրիպաս Բ.ի քրոջ Դրուսելայի հետ ամուսնանալու համար: Ներոնի կինը, Փաթէի Սարինա եռանդուն հրեայ կին մըն էր:

Դամասկոսի բնակիչները մտադրած էին ջարդել հրեաները որոնք ծրարներ էին ապստամբիլ. անոնք կը վախնային իրենց կիներէն որոնք հրեայ էին: Ասոր համար իրենց ծրարները անոնցմէ զազանի պահեցին մինչեւ որ մէկ օրուան մէջ 10.000 հրեաներ կոտորեցին. այսպէս կ'ըսէ ձոզէֆուս պատմագիրը:

Նորահաւատները ընդունելու ձեւերը կը տարբերէին: Ամէնէն եռանդոտ նորահաւատները բոլոր ձեւերն ալ սիրով կ'ընդունէին: Նորահաւատ դառնալու համար երեք բան կը պահանջուէր. թլփատում, մկրտութիւն եւ զոհարեցութիւն: Կիները առաջինէն ազատ էին:

Բայց բոլոր նորահաւատները առանց բացառութեան կարելի չէր հնազանդեցնել հրէական օրէնքներուն: Մենք տեսանք որ մոսիսիականութիւնը շատ հակադրութիւններ ունէր: Մէկ կողմէ բարձրօրէն զարգացած միջազգային միաստուածութիւնը, միւս կողմէ ծայրայեղօրէն նեղմիտ ցեղային միաստուածութիւնը, այսպէսով զուտ բարոյագիտական սկզբունքները միախառնուած էին աւանդական սովորութեանց հետեւող երկչոտ վարուեցողութեան հետ: Եթէ առաջինները հրապուրիչ էին իրենց արդիական հանդամանքով, վերջինները մանողական էին մասնաւորապէս յոյներուն ու հռոմէացիներուն համար, քանի որ անոնք մի տեսակ արգելք էին հրեայ հասարակուրդի անդամներուն հետ ընտանեկան կապեր հաստատելու տեսակէտէն: Օրինակի համար ուտելիքի օրէնքները, թլփատութիւնը եւ շարաթ օրերու ծոմապահութիւնը: Այս վերջինը մանաւանդ իր ծայրայեղ խստութեամբ յաճախ ծիծաղելի կը դառնար:

Հին հրեաները շարաթ իրիկունը նոյնիսկ կերակուր չէին պատրաստեր: Նախորդ օրը պատրաստուած կերակուրը կողովի մը մէջ կը դնէին եւ դայն յարգով կը ծածկէին տաք պահելու համար: Ծարաթապահութիւնը երբեմն այնքան ծայրայեղութեան կ'երթար որ վասնզի պահուն բարեպաշտ հրեայ ուսմիկները ոչ ինքզինքնին կը պաշտպանէին, ոչ ալ փախուստի կը դիմէին, այլ

ոչխարի պէս կը կոտորուէին, որովհետեւ կը վախնային թէ շարաթ օրը երբ ինքզինքնին պաշտպանէին կամ փախչէին, Աստուծոյ պատուէրը ստբի տակ առած կ'ըլլային եւ ատով Եհովայի անէծքին ու դատապարտութեանը կ'ենթարկուէին:

Բայց այս խստապահանջ օրէնքները բոլոր հրեաներուն հաճելի չէին: Ծատեր հրեայ միաբանութեան իրենց անդամակցութիւնը կը պահէին, կը հաւատային Աստուծոյ, կը կատարէին ծէսերը, կը հաւատային նաեւ մեսիայի դայտեան, բայց չէին հետեւիր հրեական կանոններուն: Հաւանական է որ ասոնք եղան կարեւոր տարբերք քրիստոնէական միաբանութեան, երբ այս վերջինը սկսաւ գործել եւ ճիւղեր հաստատել Երուսաղէմէն զուրս գտնուող երկիրներու մէջ:

Հրէական կրօնի պրոպագանտան բոլոր դասակարգերու վերայ նոյն ազդեցութիւնը չէր ընէր: Ծատեր չէին ընդուներ անոր դաւանանքները, մասնաւորապէս մեծ հոգատէրերը որոնք իրենց գիրքին յատուկ նեղմտութեամբ հակառակ էին վաճառականներու անհանդարտութեան եւ անոնց միջազգային բնոյթ կրող կրօնին: Դեռ աւելին կար: Վաճառականը իր շահուն մէկ մասը կ'ապահովէր ի վնաս հոգատիրոջ, որովհետեւ ան կը փորձէր անկէ դնել անոր ապրանքները աժան, իսկ իր ծախու ապրանքները քել կ'ուզէր սուղ գինով: Ասկէ գտա, հոգատէրը երբեմն կը հարկադրուէր դիմելու փոխառութեան: Այդ պարագային ալ վաճառականը որ վախառու կապիտալի ալ տէր էր, ուզած ձեւով կը շահագործէր հոգատէրը:

Ճարտարարուեստի գործաւորները, նոյնպէս, որոնք արտահանման առուտուրին համար կը գործէին, հակառակ էին վաճառականին, որովհետեւ զոհացուցիչ վարձատրութիւն չէին ստանար:

Հրեայ վաճառականներու ստեղծած ատելութիւնը պէտք է ըսել որ չէր սահմանափակուէր սոսկ այն նկատումին համար որ անոնք կառչած էին իրենց այլամերժ կրօնին ու ազգայնութեան. այդ ատելութիւնը ուղղուած էր համայն հրեաներուն դէմ: Ոչ հրեայ բնակչութեան համար տարբերութիւն չէր ընէր թէ գիմացիներ վաճառականն էր թէ շահագործուող, ընչպսոլով հրեայ մը: Հրեաները Պաղեստինէն զուրս ամէն տեղ կը զանազանուէին ոչ այնքան իրենց լեզուով որքան իրենց աւանդական սովորութիւններով, խորապէս ամրացած ազգային-կրօնական կապով: Մինչ այս աչքառու մասնախաղութիւնները ամբոխին ծաղրանքը կը հրաւիրէին հրեաներուն վրայ, նոյն առեւն կը հրաւիրէին նաեւ անոր թշնամութիւնը անոնց դէմ, որովհետեւ հրեաները կը նկատուէին



որպէս շահագործող դասակարգ : Անոնք հարուստ էին եւ հետզհետէ աւելի կը հարստանային, մինչդեռ ոչ-հրեայ բնակչութիւնը կ'ազգաստանար ու կը մխրձուէր թշուառութեան մէջ :

Տակիտոս պատմագիրը հետեւեալ կերպով կ'արտայայտուի մովսիսականութեան շուրջ : «Մովսիսական կրօնի սովորութիւններու ձեւերը հակառակ էին բոլոր միւս մասկանացուներուն : Անոնց համար ինչ որ պիղծ կը նկատուէր, մեզի համար նուիրական էր, իսկ ամէն ինչ որ թոյլատրելի անոնց միջեւ, մեզի համար զղուելի էր : Օրինակի համար, խոզի միսէն խորչանքը, ծամապահութիւնը եւ շաքաթ օրը սուրբ օր նկատելը :

Անոնք կը պաշտպանեն իրենց կրօնական սովորութիւնները, չնայած թէ ինչ արժատէ ծագում առած են . բաւական է որ անոնք աւանդական են : Իրենց անդամութեան հետեւանքով թոյլ տուած են որ վանողական ու դատապարտելի սովորոյթները առաջնորդող ուժ դառնան : Այն ամենազէչ անձերը որոնք իրենց հայրերու կրօնին անհաւատարիմ եղան, անոնց թոյլատրեցին վերադառնալ իրենց ծոցը, պայմանաւ որ անոնք իրենց մեղքերը քաւելու համար առատաձեռն կերպով նուէրներ տան արդային հիմնադրամին : Ասանկով կուտակուեցաւ հրեաներու արդային հարստութիւնը : Ասոր հետ մէկտեղ պէտք է ընդունել որ անոնց մէջ կայ օրինակելի համեստութիւն եւ նախանձախնդիր դիտարտութիւն, որ միացած է ատելալառ թշնամական զգացումին հետ հանդէպ օտարներուն : Անոնք կզգիպցած ու մեկուսացած են օտարներէն իրենց ուտելիքներով . չեն ուզեր կենակցել ուրիշ հաւատքի հետեւող կանանց հետ, բայց իրենք իրենց մէջ անթոյլատրելի բան չունին : Անոնք թրփատութիւնը ընդունէր են ուրիշներէն զատուելու համար : Իսկ անոնք որ թրփատութիւնը ընդունեցին, հրաժարեցան իրենց հայրենիքէն, չյարգեցին իրենց ծնողքը, արհամարհեցին իրենց պաշտած աստուածները, լքեցին իրենց գաւակներն ու եղբայրները եւ շարունակ փորձեցին աւելցնել իրենց թիւը : Մէկու մը սերունդը անհետացնելը հրեաները սձիբ կը նկատեն : Անոնք որ պատերազմի մէջ կը սպաննուին կամ իրենց կրօնքին համար կը մեռնին, անմահներու կարգը կ'անցնին : Ասկէ զարգացաւ անոնց սերնդազորութիւնը եւ խորացաւ արհամարհանքը հանդէպ մահուան» :

Տակիտոս անկէ յետոյ քննարկի կ'ենթարկէ հրեաներու անտեղիտալի մերժումը ամէն տեսակի պատկերներու պաշտամունքի ու կ'աւելցնէ . «Հրեաներու թափժու սովորոյթները եղած են անիմաստ ու զազրելի» :

Այսպէս, ուրեմն, որքան որ անեցաւ ընկերային ընդհանուր

թշուառութիւնը, նոյն չափով մեծցաւ թշնամութիւնը հրեաներուն դէմ :

Կանուխէն, հասարակութեան եւ պետութեան անկումին հետեւանք ժողովրդական դժգոհութեան արտայայտութիւնը շատ պարզ էր, եւ հերոսական ժեստ չունէր : Դիւրին բան չէր յարձակիլ արիստոկրատներու, խոշոր հողատէրերու, վաշխատուներու եւ թագաւորներու վրայ : Բայց անոնց մէջ հրեաները թէեւ առանձնաշնորհեալ մարդիկ էին, սակայն պետական ուժ չունէին եւ անպաշտպան էին : Ասոր համար դժգոհները պատրաստուեցան յարձակիլ հրեաներուն վրայ :

Կայսերական շրջանի սկզբին, երբ դիւլպցիութեան թշուառութիւնը ծայր աստիճանի հասեր էր եւ քաղաքներու մէջ ամփոփուած էին յուսահատ թշուառները որոնք կողոպուտի յարմար պատահութեան կը սպասէին, սկսաւ հրէական ջարդն ու հալածանքը :

Մոմսին կը նկարագրէ այն ջարդերէն մին որ տեղի ունեցած է Կայիոս Կարակալայի օրով 37-41 թուին, այսինքն այն ատեն երբ Քրիստոս արդէն խաչուած էր :

«Հերովդէս Ա. ի թոռը որ Հերովդէս Ալրիպաս կը կոչուէր, Հռովմի մէջ բնակող անարժէք իշխանագուններէն մէկն էր, բայց որովհետեւ նոր կայսեր շնորհն էր ընդունել, անկէ նուէր ստացաւ հրէական թափուր մէկ իշխանապետութիւնը թագաւորական հրովաբաւով : Հերովդէս Ալրիպաս 38 Յ. Ք. իր ճամբորդութեան պահուն Ալեքսանդրիա հասաւ, ուր եկեր էր իր պարտքերը զոցելու համար հրեայ զբամատէրերէն դրամ փոխ առնելու նպատակով : Երբ ան երեւցաւ հրապարակի վրայ իր թագաւորական շքեղ հագուստներով, մեծ քաղաքի բնակիչները խանդավառուեցան : Անոնք արդէն լարուած էին հրեաներուն դէմ : Հերովդէս օգտագործեց պատահութիւնը եւ զրդուց ամբոխը որ սկսաւ հրեաները հալածել : Այն հրեաները որոնք ցրուած կ'ապրէին, բոլորն ալ կողոպտուեցան . հրեայ նաւերը թալանուեցան . բայց զուտ հրեայ բնակչութեան կեղրոնատեղին կողոպուտէն ազատ մնաց : Հրեայ հալածիչներու առաջնորդները անկէ յետոյ յարձակեցան սինակոկներու վրայ եւ զանոնք օծեցին որպէս կայսեր նոր տաճարները : Ամէն ոք, ինչպէս եւ հրեաները զիտէին որ Կարակալա կայսրը յայտարարած էր որ ինք աստուած էր եւ կ'ուզէր որ իր պատկերը զրուէր տաճարներուն մէջ եւ պաշտուէր : Այլիլիոս Փլաքիւս քաղաքի կառավարիչը որ լաւ վարչագէտ մէկն էր թիպերիոսի օրով, վախնալով որ ինք ալ կը դատապարտուէր, միացաւ հրէական հալածանքին : Անիկա հրաման հանեց որ սինակոկներու մէջ զրուի



որպէս շահագործող դասակարգ: Անոնք հարուստ էին եւ հետզհետէ աւելի կը հարստանային, մինչդեռ ոչ-հրեայ բնակչութիւնը կ'ազգատանար ու կը մխրձուէր թշուառութեան մէջ:

Տակիտոս պատմադիրը հետեւեալ կերպով կ'արտայայտուի մովսիսականութեան շուրջ: «Մովսիսական կրօնի սովորութիւններու ձեւերը հակառակ էին բոլոր միւս մահկանացուներուն: Անոնց համար ինչ որ պիղծ կը նկատուէր, մեզի համար նուիրական էր, իսկ ամէն ինչ որ թոյլատրելի անոնց միջեւ, մեզի համար զրուելի էր: Օրինակի համար, խոզի միսէն խորչանքը, ծոմապահութիւնը եւ շաքաթ օրը սուրբ օր նկատելը:

Անոնք կը պաշտպանէն իրենց կրօնական սովորութիւնները, չնայած թէ ինչ արմատէ ծագում առած են. բաւական է որ անոնք աւանդական են: Իրենց անդամութեան հետեւանքով թոյլ տուած են որ վանդական ու դատապարտելի սովորութիւնները առաջնորդող ուժ դառնան: Այն ամենազէջ անձերը որոնք իրենց հայրերու կրօնին անհաւատարիմ եղան, անոնց թոյլատրեցին վերադառնալ իրենց ծոցը, պայմանաւ որ անոնք իրենց մեղքերը քաւելու համար առատաձեռն կերպով նուէրներ տան ազգային հիմնադրամին: Ասանկով կուտակուեցաւ հրեաներու ազգային հարստութիւնը: Ասոր հետ մէկտեղ պէտք է ընդունիլ որ անոնց մէջ կայ օրինակելի համեստութիւն եւ նախանձախնդիր դիտարտութիւն, որ միացած է ատելալառ թշնամական զրացումին հետ հանդէպ օտարներուն: Անոնք կղզիացած ու մեկուսացած են օտարներէն իրենց ուտելիքներով. չեն ուզեր կենակցիլ ուրիշ հաւատքի հետեւող կանանց հետ, բայց իրենք իրենց մէջ անթոյլատրելի բան չունին: Անոնք թրփատութիւնը ընդունէր են ուրիշներէն գատուելու համար: Իսկ անոնք որ թրփատութիւնը ընդունեցին, հրաժարեցան իրենց հայրենիքէն, շյարդեցին իրենց ծնողքը, արհամարհեցին իրենց պաշտած աստուածները, լքեցին իրենց գաւակներն ու եզրայրները եւ շարունակ փորձեցին աւելցնել իրենց թիւը: Մէկու մը սերունդը անհետացնելը հրեաները ոճիբ կը նկատեն: Անոնք որ պատերազմի մէջ կը սպաննուին կամ իրենց կրօնքին համար կը մեռնին, ամամահներու կարգը կ'անցնին: Ասկէ զարգացաւ անոնց սերնդազորութիւնը եւ խորացաւ արհամարհանքը հանդէպ մահուան»:

Տակիտոս անկէ յետոյ քննարկի կ'ենթարկէ հրեաներու անտեղիտալի մերժումը ամէն տեսակի պատկերներու պաշտամունքի ու կ'աւելցնէ. «Հրեաներու թափժու սովորոյթները եղած են անմաստ ու զազրելի»:

Այսպէս, ուրեմն, որքան որ աճեցաւ ընկերային ընդհանուր

թշուառութիւնը, նոյն չափով մեծցաւ թշնամութիւնը հրեաներուն դէմ:

Կանուխէն, հասարակութեան եւ պետութեան անկումին հետեւանք ժողովրդական ղեգոհութեան արտայայտութիւնը շատ պարզ էր, եւ հերոսական ժեստ չունէր: Դիւրին բան չէր յարձակիլ արիստոկրատներու, խոշոր հողատէրերու, վաշխառուներու եւ թագաւորներու վրայ: Բայց ասոնց մէջ հրեաները թէեւ առանձնաշնորհեալ մարդիկ էին, սակայն պետական ուժ չունէին եւ անպաշտպան էին: Ասոր համար ղեգոհները պատարաստուեցան յարձակիլ հրեաներուն վրայ:

Կայսերական շրջանի սկզբին, երբ գիւղացիութեան թշուառութիւնը ծայր աստիճանի հասեր էր եւ քաղաքներու մէջ ամփոփուած էին յուսահատ թշուառները որոնք կողոպուտի յարմար պատահութեան կը սպասէին, սկսաւ հրէական ջարդն ու հալածանքը:

Մոմսին կը նկարագրէ այն ջարդերէն մին որ տեղի ունեցած է Կայիոս Կարակալայի օրով 37-41 թուին, այսինքն այն ատեն երբ Քրիստոս արգէն խաչուած էր:

«Հերովդէս Ա. ի թոռը որ Հերովդէս Ալրիպաս կը կոչուէր, Հոովմի մէջ բնակող անարժէք իշխանագուններէն մէկն էր, բայց որովհետեւ նոր կայսեր շնորհն էր բնդունել, անկէ նուէր ստացաւ հրէական թափուր մէկ իշխանագետութիւնը թագաւորական հրովարտակով: Հերովդէս Ալրիպաս 38 Յ. Ք. իր ճամբորդութեան պահուն Ալեքսանդրիա հասաւ, ուր եկեր էր իր պարտքերը զոցելու համար հրեայ դրամատէրերէն դրամ փոխ առնելու նպատակով: Երբ ան երեւցաւ հրապարակի վրայ իր թագաւորական շքեղ հագուստներով, մեծ քաղաքի բնակիչները խանդալատուեցան: Անոնք արգէն լարուած էին հրեաներուն դէմ: Հերովդէս օգտագործեց պատահութիւնը եւ զրոգեց ամբոխը որ սկսաւ հրեաները հալածել: Այն հրեաները որոնք ցրուած կ'ապրէին, բոլորն ալ կողոպտուեցան. հրեայ նաւերը թալանուեցան. բայց զուտ հրեայ բնակչութեան կեդրոնատեղին կողոպուտէն ազատ մնաց: Հրեայ հալածիչներու առաջնորդները անկէ յետոյ յարձակեցան սինակոկներու վրայ եւ զանոնք օձեցին որպէս կայսեր նոր տաճարները: Ամէն ոք, ինչպէս եւ հրեաները գիտէին որ Կարակալա կայսրը յայտարարած էր որ ինք աստուած էր եւ կ'ուզէր որ իր պատկերը դրուէր տաճարներուն մէջ եւ պաշտուէր: Ալիլիոս Ֆլաքիւս քաղաքի կառավարիչը որ լաւ վարչապէս մէկն էր թիպերիոսի օրով, վախնալով որ ինք ալ կը դատապարտուէր, միացաւ հրէական հալածանքին: Անիկա հրաման հանց որ սինակոկներու մէջ գրուի



կայսեր պատկերը եւ ընդդիմացողը պատժուի: Անիկա հրամայեց նոյնպէս որ շարաթապահութիւնը ջնջուի: Հրեաներու տուները աւերակ դարձան, մարդիկ մնացին փողոցները: Հրեայ հասարակութեան գերագոյն խորհուրդը որ նոյն հասարակութիւնը ղեկավարող մարմինն էր, երեսուներեւթը հողինոց յանձնարուածով մը ներկայացան կառավարիչին խնդրելով որ վերջ դրուի հրեայ հալածանքին: Անոնց խնդրանքը ոչ միայն անլսելի մնաց, այլեւ անոնք ենթարկուեցան ստոկայի դանակոծումի: Չորս հարիւր տուններ աւերակ դարձան. առեւտուրն ու երթևեկութիւնը դադրեցաւ. գործարանները դոյուեցան: Բացի կայսրէն, ոչ ոք կրնար օգնել հրեաներուն: Կայսեր ներկայացան երկու պատուիրակութիւններ, որոնց մէկուն ղլխաւորողն էր յայտնի հրեասէր Ֆիլոն, միւսը՝ հակահրեայ Էփիան, ստախոս, աղէտ, անամօթ եւ սակայն ճարտասան մէկը: Կայսրը ծաղրանքով վերաբերուեցաւ պատգամաւորութեան հետ եւ ցաւ յայտնեց որ իր աստուածութիւնը լաւապէս գեռ բժրոնուած չէր: Անկէ յետոյ սինակոկները Կարակալայի տաճարներուն փոխակերպուեցան»:

Հռովմի մէջ զինուորական ուժը մեծ էր եւ կայսրերը շատ հակառակ էին ժողովրդական շարժման. բայց որովհետեւ կայսերական իշխանութիւնը հաստատուն էր եւ կեսարները այլեւս հըրեաներուն կարիք չունէին, սկսան ճնշել զանոնք: Որովհետեւ բոլոր կեսարները անվստահութիւն ունէին բոլոր կաղմակերպութեանց, նոյնիսկ անվստահութիւն հանդէպ, հրեաներու կրօնական միջադատին կաղմակերպութիւնը իրենց հաճելի չէր:

Հրեաներու հալածանքը արդէն սկսած էր Թիպերիոսի օրով: Յովսէփոս կը նկարագրէ այդ հալածանքին պատճառը: «Հռովմի մէջ անաստուած հրեայ մը կար որ իր հայրենիքին դէմ դաւաճանելուն համար փախեր էր: Այս մարդը ինքզինք յայտարարէր էր որպէս մովսիսական օրէնքի ուսուցիչ: Իրեն հետ ունենալով երեք դաճակիցներ, ան հետապնդեց արիստոկրատ կին մը, Յըլլիան որ ընդունած էր հրէական հաւատքը: Այս տիկինը որպէս աշակերտ ինքզինք արամազրեց ինքնընտիր ուսուցչին եւ Երուսաղէմի տաճարին համար նուիրեց ոսկի եւ ծիրանանշար: Մարդիկը տիկինէն այդ ընծան առին եւ իրենց համար գործածեցին: Սետուրնիոս, Յըլլիայի ամուսինը այս բանը իմացուց իր բարեկամին, Թիպերիոս կայսեր, որ անմիջապէս հրամայեց բոլոր հրեաները Հռովմէն վրտարել: Չորս հազար հրեաներ զինուորական ծառայութեան կանչուեցան եւ զրկուեցան Սարտինիա կղզին»:

Այս պատմութիւնը կ'ապացուցէ երկու բան: Առաջին, որ

Հռովմի բարձր դասու տիկիները հրէական կրօնի հակելու գծին վրայ եղած են: Երկրորդ, որ հրէից հանդէպ ատելութիւնը արդէն ընդհանրացած է եղեր, որովհետեւ Թիպերիոս կայսրը կրնար միայն յանցաւորը պատժել, փոխանակ ամբողջ հրեաները Հռովմէն դուրս հանելու: Կայիոս Կարակալան, նոյնպէս, ինչպէս տեսանք, հակառակ էր հրեաներուն: Կլոտիոսի օրով (41-54) հրեաները նորէն քշուեցան Հռովմէն, որովհետեւ Քրիստոս անունով հրեայ մը խռովութեան մը առաջնորդն էր եղեր: Անիկա ծնունդով հրեայ չէր, այլ հրէութիւնը ընդունող յոյն մը: Այս ալ կ'ապացուցէ հրեաներուն հանդէպ ուռճացած ատելութիւնը, ինչպէս հրէական պրոպագանտայի ուժեղութիւնը:

Ա) ԵՐՈՒՍԱԿԵՄԸ

Յայտնի է որ տիրող դասակարգերու դիրքը հանդէպ հրեաներուն, ինչպէս նաեւ ժողովուրդին դիրքը պարտադրած են որ հրեաները կարօտով նաչին դէպի Երուսաղէմ եւ անոր շրջափայ երկրամասին, որովհետեւ ան եղած է երկրադունդի այն անկիւնը ուր անոնք գտնէ չափով մը տէր եղած են իրենց տուներուն, ուր ամբողջ բնակչութիւնը բաղկացեր է հրեաներէ. անկիւն մը ուրկէ պիտի ծագում անէր հրեաներու մեծ կայսրութիւնը եւ ուր երազւած մեխան պիտի հաստատէր հրէական կրօնի տիրապետութիւնը: Ու այդ՝ հակառակ անոր որ իրենց հայրենիքին մէջ միշտ իրենց դէմ ցցուեր էր իրենց գոյութիւնը ապահովող բաւարար միջոցներու անկարելիութիւնը:

Երուսաղէմ մնաց կեղբոն, մնաց մովսիսական կրօնի մայրաքաղաքը որ մեծցաւ կրօնի աճման հետ: Ան դարձեալ եղաւ հարուստ քաղաք մը 200.000 բնակչութեամբ, բայց իր մեծութիւնն ու հարստութիւնը հիմնուած չէին Պաղեստինի ժողովուրդին ռազմունակութեանը կամ առեւտուրին վրայ ինչպէս որ էր Դաւիթի եւ Սողոմոնի օրով, այլ միայն Եհովայի տաճարին վրայ: Ամէն մէկ հրեայ, հող չէր թէ ուր կ'ապրէր, տարեկան տուրք մը վճարելու էր Երուսաղէմի տաճարին: Որպէս յաւելում, սրբատեղին կ'ընդունէր նաեւ ուրիշ արտասովոր նուէրներ: Ասկէ զատ ամէն մէկ ջերմեռանդ հրեայ ասնուազն տարին մէկ անգամ ուխտի գալու էր Տոն ուր իր Ասուածը կը բնակէր եւ Աստուածը կ'ընդունէր իր նուէրները: Երուսաղէմէն դուրս գանազան քաղաքներու մէջ հրեաներու սինակոկները հաւաքոյթի եւ աղօթքի տեղեր էին, աւելի շուտ՝ դպրոցներ, բայց ոչ այն տաճարները ուր Եհովայի ընծայ արուելու էր:

Տաճարի տուրքերն ու ուխտաւորները անհաշիւ դրամ կը



բերէին Երուսաղէմի, որմէ կ'օգտուէին բազմաթիւ անձեր: Այս օգտուողները ոչ միայն քահանաներն էին ու զպիւրները որոնք Ե-  
 Տօվայի պաշտամունքի գծովը կ'ապրէին, այլեւ խանութարանները,  
 դրամափոխները, արհեստաւորները, Փարմըրները, զիւլացիները,  
 արջաուարոյձները, Յուդայի եւ Գալիլիայի ձկնորսները: Աւետա-  
 րանիչներու պատմածին համաձայն՝ Յիսուս տաճարին մէջ  
 տեսաւ գնողներ ու վաճառողներ, գրամափոխներ եւ աղանձի ծա-  
 խողներ: Այս կ'ապացուցանէ որ Երուսաղէմի տաճարը երբեմն շու-  
 կայի կը վերածուէր:

Հրէական գրականութիւնը ճշգրիտ պատկերը կը ներկա-  
 յացնէ հնագոյն նախահայրերու ապրած կեանքի պայմաններուն:  
 Պաղեստինի ամբողջ բնակչութիւնը այն ատենները կ'ապրէր ԵՏօ-  
 վայի պաշտամունքով: Եթէ այդ պաշտամունքը փոխուէր կամ  
 տարբեր ձեւ առնէր, այդ բանը կը սպառնար ամբողջ բնակչու-  
 թեան կեանքին: Ատոր համար բնաւ փորձ չեղաւ ԵՏօվայի պաշտա-  
 մունքը Երուսաղէմէն դուրս ուրիշ տեղ մը փոխադրել:

Օնիաս, հրեայ քահանայապետի մը որդին, ԵՏօվայի տա-  
 ճարը հիմնեց Եգիպտոսի մէջ Փիլոմէտոս թագաւորին օգնութեամբ  
 (173-146 Ն. Ք.): Այս թագաւորը կը յուսար որ Եգիպտոսի հրեա-  
 ները աւելի հաւատարիմ հրատակներ պիտի դառնային եթէ իրենց  
 սեպհական տաճարը ունենային իր երկրին մէջ: Բայց նոր տաճարը  
 որեւէ առանձին նշանկութիւն չունեցաւ, որովհետեւ անոր նպա-  
 տակն էր Եգիպտոսի հրեաներուն հաւատարմութիւնը ապահո-  
 վել: Եգիպտոսի մէջ հրեաները օտարական կը նկատուէին եւ  
 փոքրամասնութիւն կը կաղմէին: Մեսիան ի՞նչպէս պիտի դար Ե-  
 գիպտոսէն ու իրենց բերէր անկախութիւն եւ մեծութիւն: Իսկ Մե-  
 սիայի հաւատքը ԵՏօվայի պաշտամունքին ամէնէն զօրաւոր ազ-  
 դակն էր:

Երուսաղէմէն ոչ այնքան հեռու, Սուքէմի մօտ Գարիզիմ լե-  
 բան վրայ Մեծն Աղեքսանդրէն զար մը առաջ հրեաներու Սամարա-  
 տան աղանդի հետեւողները տաճար մը հիմնեցին ԵՏօվայի պաշ-  
 տամունքին նուիրուած: Թշնամական ուժեղ մրցակցութիւն մը  
 սկսաւ այս երկու տաճարներուն միջեւ: Հակառակ սամարաւանցի-  
 ներու պրոպականտին, Երուսաղէմի տաճարը հնուց ի վեր հաս-  
 տատուած առեւտրական կեդրոն մը ըլլալով անոնք չկրցին յաջո-  
 գիլ իրենց մրցումին մէջ: Հրեաներու մեծամասնութեան համար  
 Երուսաղէմն էր Աստուծոյ բնակատեղին:

Երուսաղէմի մենատիրութիւնը որքան որ սպառնալիքի տակ  
 կ'իյնար, նոյնքան կ'աճէր հրեաներու կրօնական մոլեռանդութիւ-

նը, այնքան կը բիւրեղանար Երուսաղէմի բնակիչներուն հաւատ-  
 քը, այնպէս որ անոնք հակառակ էին որեւէ փոփոխութեան, պատ-  
 րաստ դիմադրելու նոյնիսկ բռնի ուժի: Հրեաներու կրօնական այս  
 մոլեռանդութիւնն ու անհանդուրժելի կեցուածքը հակադրութիւն  
 մը կը ներկայացնեն այդ ժամանակի բոլոր միւս ազգերու կրօնա-  
 կան ազատամտութեան դիմաց: Միւս ազգերը իրենց աստուածնե-  
 րը կ'ընդունէին որպէս անհասկնալի երեւոյթներու բացատրական  
 միջոցներ, ինչպէս նաեւ միտիթարութեան եւ մարդկային ուժերու  
 անբաւարար նկատուած ատենուան համար օգնական ուժեր,  
 բայց Պաղեստինի հրեաները իրենց Աստուածը կը նկատէին իրենց  
 ապրուստը ապահովող հայր մը: Անոնք Աստուծոյ հանդէպ ունէին  
 այն դիրքը ինչ որ ունէին քահանաները: Պաղեստինի քահանայա-  
 կան կրօնամտութիւնը ամբողջ բնակչութիւնը վարակեց նոյն մո-  
 լեռանդութեամբ:

Բայց Պաղեստինի բնակչութիւնը որ մէկ մարդու պէս ԵՏօ-  
 վայի պաշտամունքի պաշտպանութեան գծին վրայ կեցեր էր եւ  
 որեւէ մարդ չէր համարձակեր ստնձգութիւն փորձել հոն, այսու-  
 հանդերձ դասակարգային շերտաւորումներէն ազատ չմնաց: Նոյն-  
 իսկ Երուսաղէմի մէջ դասակարգային խրամատներ սկսեցին բաց-  
 լիլ: Ամէն դասակարգ իր դասակարգային շահու աղնոցով կը մօ-  
 տենար ԵՏօվայի եւ կը պաշտպանէր իր տաճարը, եւ ամէն դասա-  
 կարգ իր ձեւի երեւակայութեամբ կը սպասէր մեսիայի գալուտեան:

Բ) ՍԱԿՈՒԿԵՑԻՆԵՐԸ

Ճողջֆուս պատմագիրը մեզի կ'ըսէ որ հրեաները երեք ճիւ-  
 դի բաժնուած մտաւորական դասակարգեր ունէին. փարիսեցիները,  
 սադուկեցիները, էսսէնեանները: Առաջին երկուքին մասին ան մե-  
 զի կուտայ հետեւեալ տեղեկութիւնները.

«Քաղղատմամբ միւս երկու աղանդներուն, փարիսեցիները  
 օրէնքը աւելի դաժան եղանակով կը թարգմանէին: Անոնք կը հա-  
 ւատային որ ամէն ինչ կ'որոշուի ճակատագրով եւ Աստուծամով:  
 Անոնց կարծիքով մարդէն կախում ունէր իր լաւ կամ վատ դոր-  
 ծերուն կատարումը, բայց ճակատագիրը իր որոշ ազդեցութիւնը  
 ունէր անոնց վրայ: Անոնք կը հաւատային նաեւ որ մարդու հոգին  
 անմահ է. բարի մարդոց հոգիները նոր մարմիններու մէջ պիտի  
 մտնեն, իսկ չարերուն հոգիները յախտենական տանջանքի պիտի  
 դատապարտուին:

«Միւս աղանդը սադուկեցիները կը ներկայացնէին: Անոնք  
 կը մերժէին ընդունիլ ճակատագրի ազդեցութիւնը եւ կը յայտա-



բարէին թէ անհատի մը զործերուն համար բարի ըլլան անոնք թէ վատ, չէ կարելի դանոնք վերադրել Աստուծոյ. մարդը ինք է պատասխանատուն, նա իր աղատ կամքովն է որ զէջ զործ մը կը կատարէ կամ բարութեան ճամբայէն կ'երթայ: Անոնք չէին ընդունիր նաև որ հոգիները անմահ են, որ մահէն վերջ վարձատրութիւն կամ պատիժ կայ:

«Փարիսեցիները ողորմասէր էին եւ կ'աշխատէին եղբայրաբար ապրիլ ժողովրդական զանգուածներուն հետ: Սաղուկեցիները, սահայն, անպւթ էին նոյնիսկ իրարու հանդէպ եւ դաժան իրենց հայրենակիցներուն, ինչպէս եւ օտարականներու հանդէպ»:

Այս աղանդները կը ներկայացնէին որոշ կրօնական տեսակէտներ: Յովսէփոս հրեայ մտաւորականներու այս երեք բաժանումները թէեւ կրօնական աղանդի հանդամանքով կը ներկայացնէ, բայց անոնք հիմնուած են դասակարգային նկատումներու վրայ, այնպէս որ սխալած չենք ըլլար երբ մենք զանոնք վեր առնենք ոչ թէ որպէս սոսկ կրօնական աղանդներ, այլ իրապէս որպէս կուսակցութիւններ, որովհետեւ անոնք իրարու դէմ երկրի քաղաքական եւ ընկերային կեանքը զեկաւարելու պայքար մղած են շարունակ, եւ արդէն հրեաներու կրօնքը միաձուլուած եղեր է քաղաքական բժրանումին հետ:

Սաղուկեցիները քահանայապետական ազնուականութեան ներկայացուցիչներն էին եւ ստանձներ էին հրէական պետութեան հսկողութիւնը նախ պարսկական տիրապետութեան, յետոյ Մեծն Աղեքսանդրի յաջորդներուն ժամանակները: Քահանայութիւնը տաճարի տիրապետութեան բացարձակ տէրն էր: Տաճարի հսկողութեամբ ան կ'իշխէր երուսաղէմի եւ ամբողջ Յուդայի ցեղերուն: Քահանաները կը ստանային տաճարին եկամտուրքերը որոնք աննշան չէին: Մինչեւ հրէական աքսորը, քահանայութեան ստացած գումարները չափաւոր էին եւ անկանոն, բայց յետոյ չափազանց աւելցան: Ամէն մէկ հրեայ, հարուստ թէ աղքատ, ամէն տարի անպայմանօրէն պիտի վճարէր երկու տրախմա տուրք, ամերիկեան դրամով 40 սենթ: Ասկէ զոտ հաշուի առնելու է նուէրները: Միթրիակիոս անդամ մը դրաւեց 800 տաղանդ (տաղանդը կ'արժէ 1.100 տոլար) Քոս կղզիին վրայ: Այս դրամը զրկուելու էր տաճարին: Ֆլեկրոս որ Փոքր Ասիայի կառավարիչն էր, այդ դաւառներէն հրեաներու հաւաքած ոսկիները դրաւեց, որոնք զրկուելու էին տաճարին. այդ ոսկիները կը կռէին հարիւր փաունտ:

Ասոնց վրայ պէտք է աւելցնել նաև զոհարարութիւնները: Սկիզբէն մատուցուած զոհերը կը ծառայէին քահանաներու խնձոյ-

քին որուն կը մասնակցէին նաև զոհ մատուցանողներն ալ: Աքսորէն վերջ անոնց բաժինը կարուեցաւ եւ մնաց միայն քահանաներուն: Չոհը կը մատուցուէր Աստուծոյ անունով, բայց ան կ'երթար քահանային: Այդ ալ տեսակ մը տուրք էր որ օրէ օր կ'աւելնար: Ոչ միայն մատուցումները կ'ըլլային կենդանիներով եւ ուտելիքներով, այլև երկրագործական արտադրութիւններով, որպէս տասանորդ տուրք: Մաքուր կենդանիներէն կով, ոչխար, այծ, առաջին ծնունդը կ'երթար Աստուծոյ տունը: Անմաքուր կենդանիներէն ձիերը, էջերը, ուղտերը, ասոնց առաջին ծնունդներու համար դրամ տրուելու էր, 5 սիկղ:

Այսպէս, մենք զազափար մը կը կաղմենք թէ հրեայ քահանայութիւնը ինչեր կը ստանար ժողովուրդէն եւ այդ բաները կ'աւելնային յետոյ: Օրինակ, առաջ մէկ երրորդ սիկղ որոշուած էր որպէս տուրքի համեմատական բաժին, վերջէն եղաւ կէս սիկղ: Նէեմիայի Ժ. գլխուն մէջ կը կարգանք հետեւեալը (32-39).

«Ու մեզի կանոն դրինք որ մեր Աստուծոյն ծառայութեան համար ամէն տարի մէկ սիկղին երրորդ մասը տանք առաջաւորութեան հացին համար, մշտնջենական հացի ընծային համար, մըշտընջենական ողջակէզին համար, շաբաթներուն համար, ամսագլուխներուն համար, տօներու համար, տուրք բաներու համար, ու Իսրայէլի քաւութիւն ըլլալու մեղքի պարսպներու համար ու մեր Աստուծոյն տանը ամէն զործերուն համար (եւ փայտի ընծային համար, քահանաներուն, զեւտացիներուն ու ժողովուրդին վիճակ ձգեցինք որ զանիկա մեր Աստուծոյն սեղանին վրայ վառելու համար, տարուէ տարի որոշուած ատենները ըստ ազգատոհմից մեր Աստուծոյն տունը բերինք ինչպէս օրէնքին մէջ զրուած է) ու մեր երկիրին առաջին պտուղները եւ ամէն ծառին առաջին պտուղները տարուէ տարի Տիրոջը տունը տանինք, ու մեր որդիներուն ու մեր անասուններուն առջինեկները, ինչպէս օրէնքին մէջ զրուած է. ու մեր արջատներուն ու ոչխարներուն առջինեկները մեր Աստուծոյն տունը տանինք, մեր Աստուծոյն տանը մէջ պաշտօն կատարող քահանաներուն. ու մեր խմորներուն երախայրիքը, եւ մեր ընծաները, այսինքն ամէն ծառի պտուղը, զինի եւ իւղ տանինք քահանաներուն եւ մեր Աստուծոյն տանը սենեակները, ու մեր երկրին տասանորդը զեւտացիներուն տանք, ու զեւտացիները մեր բոլոր երկրագործութեան քաղաքներուն մէջ տասանորդները առնեն: Ու Ահարոնի որդին, քահանան, զեւտացուց տասանորդին մէջ զեւտացուց մասնակից ըլլայ, ու զեւտացիք տասանորդին տասանորդը մեր Աստուծոյն տունը, զանձատանը սենեակները տանին. վասնզի



Իսրայէլի որդիները ու Ղեւիի որդիները ցորենին, գինիին եւ իւղին ընծան այն սենեակները պիտի տանին, ուր սրբարանին անօթները ու պաշտօն կատարող քահանաները եւ դռնապանները ու երգեցողները կը կենան, ու մեր Աստուծոյն զբանը վրայով անհուգ պիտի չըլլանք»:

Յայտնի է որ տաճար քառասուն տոկոսական եկեղեցիի շէնք մը չէր: Ան ունէր շտեմարաններ ուր կը պահուէին բնութեան արտադրութիւնները, ինչպէս նաեւ ոսկի եւ արծաթ: Կարելի է այնպէս ենթադրել որ այդ տաճարը բերդի նման անառիկ էր եւ լաւ պաշտպանուած: Կոապաշտական տաճարներու նման Երուսաղէմի տաճարն ալ նկատուած էր տեղ մը ուր կը պահուէին զբամները եւ արժէքատու իրերը եւ շատ խիստ պահպանութեան տակ էին: Կոապաշտական մեհակներուն նման Երուսաղէմի տաճարն ալ դարձեր էր մասնաւոր անձանց դանձերու ապահով պահարանը: Բայց ՆՏՈՎԱՆ, որպէս պանքայի տնօրէն, հաւանական է որ վարձք կ'առնէր անոնց դանձերու պահպանութեան փոխարէն:

Ինչեւիցէ, ստոյգ է որ Երուսաղէմի քահանայութեան հարստութիւնը անհամեմատ արագութեամբ կ'աճէր, կը մեծնար:

Մարկիւս Կրէստոս, Կեսարի ընկերակից դաւադիրը որ ձեռնարկեց իր աւարտու արշաւանքին փարտիաններու դէմ, մտաւ Երուսաղէմ եւ կողոպտեց տաճարի դանձերը, մինչ Պոմպէոս անոնց բնաւ չէր դպչեր: Ան առաւ 2000 տաղանդ, ինչպէս նաեւ 8000 տաղանդ արժող ձոյլ ոսկի, նոյնպէս 800 փաււնտ ծանրութեամբ ձոյլ մը ոսկի: Ասոնք բոլորը կ'արժէին 12 միլիոն սոլար: Տաճարը կողոպտուեցաւ իր զիզած հարստութենէն, բայց նորէն սկսաւ լեցուիլ ոսկիով:

Քահանաներու անդամակցութիւնը սահմանուած էր որոշ ընտանիքներու միջեւ: Անոնք արխատոկրատական ծագում ունենալու էին եւ անոնց պաշտօնը ժառանգական էր: Ճոզէֆուս պատմադրին պատմածին համաձայն 1500 հրեայ քահանաներ կային որոնք տասանորդ կը ստանային եւ հասարակութիւնը կը կառավարէին:

Այս քահանայութեան մէջ աստիճանաբար բաժանում մը յառաջացաւ ի հետեւանք բարձրագոյն եւ ցած արխատոկրատի ճիւղաւորմին: Որոշ արխատոկրատ ընտանիքներ տեւականօրէն զբաւեցին ամբողջ կառավարութեան հեղինակութիւնը եւ ատով կըրկնապատկեցին իրենց հարստութիւնը: Անոնք կազմեցին հաստատուն քիւրք մը որ իր մէջէն կ'ընտրէր բարձր քահանաները, որոնց իշխանութիւնը ամբացնելու համար հանդէպ միւս քահանաներու զանոնք

իրենց թելին տակ առին որպէս վարձկաններ: Ասոնք եղան երկրորդական աստիճանի քահանաներ: Ճոզէֆուս պատմադիրը այս ասթիւ հետեւեալ ղեպքը կը նկարագրէ. «Ազրիպաս թաղաւորը քահանայակետութեան աստիճանը տուաւ Փարիի որդւոյն Իսթայէլին: Բայց բարձր քահանաները կուիւր բռնուեցան միւս քահանաներուն եւ Երուսաղէմի ծերակուտականներուն հետ: Անոնց իւրաքանչիւրը ըլլալով առաջնորդ մը, չըջացատուած էր խոզվարար եւ օրինագանց մարդոցմով: Անոնք նախ նախատական բառեր փոխանակեցին, ապա սկսան իրարու քարեր նետել: Ոչ ոք կրնար հանդարտեցնել զանոնք եւ խոփութիւնը այն աստիճան սաստկացաւ որ այնպէս կը թուէր թէ քաղաքին մէջ իշխանութիւն չկար այլևս: Բարձր քահանայակետութիւնը, անճրկամ, ստիպուած եղաւ զինուորներու օգնութեան դիմել, որոնք եկան, կարգ ու կանոն պահպանեցին եւ քահանաներու պատկանած տասանորդները առին. քահանաներէն սմանք պաշտօնէ զրկուելով անօթի մեռան»:

Անշուշտ պայմանները ասոր նման շփոթարացան մինչև որ հրեայ հասարակութիւնը հասաւ իր վերջին սանդղատմատին:

Բայց սկիզբէն իսկ քահանայական արխատոկրատին ժողովրդական զանդուածներէն բարձր կեցած էր եւ իր տեսակէտներն ու հակումները հակառակ էին ժողովուրդին, մասնաւորապէս Պաղեստինի հրեայ հասարակութեան: Եւ այդ հակառակութիւնը յատկապէս ցցուն կ'երեւէր իրենց արտաքին քաղաքականութեան մէջ:

Մենք տեսնք թէ Պաղեստինը իր աշխարհադրական դիրքին բերմամբ միշտ ենթակայ եղած է արտաքին վտանդի եւ օտար իշխանութեան հպատակութեան: Երկու կերպ կար որով կարելի էր այս պայմաններուն դիմադրել կամ անոնց ազդեցութիւնը նուազեցնել. մին դիւանադիտութիւնն էր, միւսը՝ ապստամբութիւնը:

Պարսկական կայսրութեան օրով այս երկու մեթոտները յաջողութիւն չէին խոստանար, բայց կայսրութիւնը փոխուեցաւ երբ Մեծն Ալեքսանդր կործանեց այդ կայսրութիւնը: Պետական այն նոր ձևը զոր ան պատուաստեց, քայքայուեցաւ անոր մահէն յետոյ եւ Իսրայէլը նորէն զարձաւ կռուաինձոր սուրիական-բարելական կայսրութեան ղէմ Իսրայէլի տիրապետութեան ի խնդիր: Բայց այժմ անոնք երկուքն ալ կը կառավարուէին յոյն արքայական ցեղերով, մին Ալեկեկեաններով, միւսը՝ Պաղոմեաններով, երկուքն ալ օժտուած յուսական ուղիով: Ետտ դժուար էր այս երկուքէն որեւէ մէկը ընկճել զինուորական ուժով: Գործը կը մնար զիւանադիտութեան, այն էր միանալ զօրաւորին եւ անկէ ապահովել առանձնաշնորհեալ զիրք մը: Բայց իրենք, հրեաները քանի որ կ'առէին օ-



տարականները եւ չէին ուզեր բնդունիլ իրենցինէն աւելի գերիվեր յունական քաղաքակրթութիւնը, այդ միջոցն ալ չէր օգներ իրենց, մինչդեռ իրենց համար անհրաժեշտ էր որ իւրացնէին յունական քաղաքակրթութիւնը:

Երուսաղէմի արխտոկրասին մզուած էր յունական մշակոյթը ընդունելու ուղղութեան, որովհետեւ թէ իրենց ընկերային դիրքը եւ թէ հարստութիւնը դիրենք կը մղէին այդ ճամբուն: Պաղեստինի մէջ վերարտադրողական արուեստները, ինչպէս եւ հաճոյքի արտօտները չէին զարգացեր, մինչդեռ յոյները զանոնք զարգացուցեր եւ տարածեր էին ամէն կողմ, նոյնիսկ Հռովմի մէջ, ուր նրբութեան եւ հաճոյքի բոլոր ձեւերը ընդօրինակուած էին Յունաստանէն: Յունական ձեւերը որդեգրուած էին հին աշխարհի բոլոր շահագործող դասակարգերուն կողմէ:

Հրեայ արխտոկրասին որքան յառաջ տարաւ իր շահագործումը եւ որքան հարստացաւ, այնքան հակեցաւ դէպի յունական մշակոյթը:

Այսպէս մակարայեցւոց ստաջին գիրքը կ'ոգրայ Անտիոկոս Կալիփանէսի շրջանը (175-164 Ն. Ք.):

«Այս օրերս շատ անարժան մարդիկ երեւան եկած են Իսրայէլի մէջ: Անոնք կ'ըսեն. Ինչու չենք եղբայրանար մեզ շրջապատող ազգերու հետ, երբ գիտենք որ անոնց հետ մեր կապերը կըտրելով թշուառացանք: Այս խօսքերը հաճելի երեւցան շատերուն եւ ժողովուրդէն ոմանք դիմեցին թագաւորին որ իրենց արտօնեց որդեգրել կապալաներու սովորութիւնները: Ասոր համար անոնք շինեցին ճիւղաճիւղում մը Երուսաղէմի մէջ, ուր մերկ գօտեմարտութիւններ տեղի կ'ունենային: Համաձայն կոապալաներու սովորութեան, անոնք չուզեցին այլեւս թլիփատուիլ եւ ասանկով դաւաճանեցին իրենց սուրբ ուխտին, միացան կոապալաներուն եւ ծախուեցան շարին»:

Այս մեղաւոր մարդիկը որոնք թլիփատուած էին արդէն, արուեստական մաշկերով իրենց թլիփատութիւնը ծածկեցին եւ նոյնիսկ փոխեցին իրենց հրէական անունները եւ առին յունական անուններ: Քահանայապետ մը որուն անունը Յիսուս էր, եղաւ Եսաւըն, ուրիշ մը որ էլիոպիմ կը կոչուէր եղաւ Ալքիմոս, ուրիշ մը որ կը կոչուէր Մենասա եղաւ Մինելատոս:

Բայց հրեայ ժողովրդական գանդուածները ինքզինքնին անարգուած կը զգային այս յունական օտար ձեւերու գտած քաջալերանքէն: Մենք արդէն նշած ենք քանիցս որ Յուդայի երկրին մէջ ճարտարարուեստի եւ արուեստի զարգացումը շատ դանդաղ էր ու

աննշան: Հելլէնական ազդեցութեան յառաջխաղացքը կը նշանակէր օտար արտադրութեանց ներմուծումը. ուրեմն, օտար ապրանքները տեղական արտադրութեանց տեղը պիտի դրուէին: Բայց յոյները կուգային որպէս հարստահարողներ եւ շահագործողներ, Յուդայի երկիրը որ աղքատացեր էր իր բնիկ արխտոկրասիին կողմէ, բնականօրէն այս անգամ աւելի շատ տուրք պիտի վճարէր օտար ինքնակալներուն եւ անոնց պաշտօնեաներուն: Իսկ արխտոկրասները ճարպիկօրէն կըցին պաշտպանել ինքզինքնին: Անոնք եղան օտար տէրերու ներկայացուցիչները եւ ստանձնեցին անոնց հարկերը հաւաքելու գործը: Դեռ աւելին: Անոնք կըցին նաեւ հարստանալ վաշխառուի գործով. իրենց որսերն էին տուրքերէն ճնշուածները: Ժողովուրդը այսպէսով միայն օտարի լուծի ծանրութիւնը կը զգար:

Այս դրութիւնը տիրապետող դարձաւ պարսկական իշխանութեան ստեղծ, ինչպէս շատ լաւ կը նկարագրէ հրեայ Նէեմեան որ Յուդայի կառավարիչ նշանակուած էր (445 Ն. Ք.) Արտաշէս թագաւորին կողմէ: Ան իր գործերուն շուրջ հետեւեալ տեղեկութիւնները կուտայ (Նէեմեայ, Ե. 1-19): «Եւ ժողովուրդը ու անոնց կիները իրենց եղբայրներուն, հրեաներուն դէմ մեծ գանդատ ըրին: Եւ ոմանք կ'ըսէին. Մենք մեր տղաքներով եւ աղջիկներով շատուր ենք, ուտելիք ծախու առնենք, որպէսզի ուտենք ու աղբինք: Ռմանք ալ կ'ըսէին. Մենք մեր արտերը, այգիներն ու տուները դրաւի կը դնենք որպէսզի սովի համար ուտելիք ծախու առնենք: Եւ ոմանք կ'ըսէին. Թագաւորին հարկ տալու համար մեր արտերուն ու այգիներուն վրայ ստակ փոխ առինք. ու հիմա մեր մարմինը մեր եղբայրներուն մարմինին պէս է ու մեր որդիները անոնց որդիներուն պէս, եւ ահա մենք մեր տղաքներն ու աղջիկները ծառայութեան համար կը ծախենք. եւ արդէն մեր աղջիկներէն ազախին ըլլալու համար ծախուածներ կան. ու մեր ձեռքը կարողութիւն չկայ, որովհետեւ մեր արտերն ու այգիները ուրիշներու ձեռքն են:

«Ու երբ ես անոնց ազազակը եւ այս խօսքերը լսեցի, շատ բարկացայ: Եւ մտքիս մէջ խորհելէ ետեւ ազնուականներն ու ստիկանները յանդիմանեցի ու անոնց ըսի. Դուք ամէնքդ ալ ձեր եղբայրներէն վաշխ կ'առնէք, ու անոնց դէմ մեծ ժողով ըրի: Այն ստեղծ անոնց ըսի. Մենք հեթանոսներու ծախուած մեր հրեայ եղբայրները մեր կարողութեանը չափ ծախու առինք. ու հիմա դուք ձեր եղբայրները կը ծախէք. կամ անոնք մեզի ծախուէն. եւ անոնք լռեցին ու չկրցին պատասխան տալ: Ու ըսի. Այդ ձեր ըրածը ազէկ բան չէ. պէտք է՞ որ մեր Աստուծոյն վախովը քալենք, որ-



պէսպի մեղի թշնամի ազդերուն նախատինք չըլլանք: Ես ալ ու իմ եղբայրներս ու ծառաներս ալ ստակ ու ցորեն փոխ տուած ենք անոնց, բայց հիմա այդ պարտքը անոնց չնորհենք: Եւ ձեզի կ'աղաչեմ, որ այսօր անոնց ետ դարձնէք անոնց արտերը, այգիները, ձիթենիները ու տուները. նաեւ ստակին, ցորենին, գինիին ու իւրիւն հարիւրին մէկը զոր անոնցմէ կը պահանջէք: Եւ անոնք ըսին, Ետ պիտի դարձնենք եւ անոնցմէ բան մը պիտի չպահանջենք, ինչպէս որ ըսիր, այնպէս պիտի ընենք: Այն ատեն քահանաները կանչեցի եւ անոնց երզում ընել տուի որ այսպէս ընեն: Նաեւ հանդերձս թօթիկցի եւ ըսի. Ով որ այս բանը չընէ իր տունէն ու վաստակէն Աստուած պիտի պիտի թօթիկ ու այսպէս թօթուած ու դատարկ ըլլայ: Եւ բոլոր ժողովքը Ամէն ըսին ու Տէրը օրհնեցին ու ժողովուրդը այս բանը կատարեց: Եւ Յուդայի երկրին մէջ անոնց իշխանը եղած օրէս, Արտաշէս թագաւորին 20-րդ տարիէն մինչեւ 32-րդ տարին, 12 տարի, թէ ես եւ թէ եղբայրներս իշխանութեան սոճիկը չառինք: Բայց ինձմէ առաջ եղող ժողովուրդի իշխանները ժողովուրդին բնո կ'ըլլային ու անոնցմէ հաց ու գինի կ'առնէին 40 սեկղ արծաթէն դատ. անոնց ծառաներն ալ ժողովուրդին բռնութիւն կ'ընէին, բայց ես Աստուծմէ վախնալով այնպէս չըրի: Ու նաեւ այս պարիսպին գործին մէջ աշխատեցայ ու մենք արտ ծախու չառինք եւ իմ բոլոր ծառաներս հոն ժողովուած էին այն գործին համար: Ու հրեաներէն ու ոստիկաններէն 150 մարդ ու չըջուկայ ազգերէն մեզի եկողները իմ սեղանէս կ'ուտէին: Եւ ամէն օրուան ծախսս այս էր. արջառ մը եւ 6 ընտիր ոչխար, եւ ինծի համար թռչուններ ալ կը պատրաստուէին, ու 100 անգամ մը առատութեամբ ամէն տեսակ գինիէն կ'ելէր. այսու ամենայնիւ իշխանութեան սոճիկը չպահանջեցի, վասնզի այս ժողովուրդին վրայ եղած ծառայութիւնը ծանր էր: Ով Աստուած իմ, այս ժողովուրդին բոլոր ըրածներուս համեմատ գիս ի բարին յիշէ»:

Այսպիսի ինքնազոյութիւն անսովոր բան մը չէր հին վկայաթուղթերու մէջ, մասնաւորապէս արեւելքի մէջ: Բայց շատ հեռու կ'երթանք երբ ենթացողները որ ինդոսյ առարկայ պաշտօնեան ինչպէս եւ ժողովուրդը արժանի են պարծանքով հիւսուած այդ պատմուածքին. բայց մէկ բան ստոյգ է որ թէ կատարիչները եւ թէ աղնուականները որպէս ընդհանուր կանոն կը շահագործէին եւ կը ճնշէին ժողովուրդը, ինչպէս ցոյց կուտայ Նէեմիայի պատմութիւնը: Բայց պարծանքով հիւսուած այս պատմուածքը մեզի շատ բան կը պարզէ: Նախ այն որ շահատակութիւնը այդ չըջանին հասած է եղեր իր ծայրայեղութեան: Եւ ինք Նէեմիան եթէ այդ

շահատակութեան վարպետներէն չէր եղած, ո՞ր տեղէն կրնար ճարել օրական մէկ արջառ եւ վեց ընտիր ոչխարներ ուրիշները կերակրելու համար. եւ այդ ոչ թէ մէկ օր, այլ տասներկու տարի: Եւ յետոյ, Նէեմիան ինք պիտի պարծենա՞ր եթէ իր գործը բացառիկ հանդամանք չունենար: Ոչ ոք պիտի սիրէ պարծենալ թէ ինք որպէս կատարիչ գոզութիւն չընէր եթէ իր տեղին մէջ գոզութիւնը ընդհանրացած չէ:

Սուրբացի եւ եգիպտացի թագաւորները Պաղեստինի հարկահաւաքի գործը վարձու տուած էին: Եւ հարկահաւաքի գործը վարձողը քահանայապետն էր, իսկ այս վերջինը իր դասակարգէն մրցակիցներ կ'ուսենար, այնպէս որ մէկը կ'ուզէր միւսին տեղը անցնիլ: Ասոր համար Յուդայի ժողովուրդն էր ամէնէն աւելի օտար իշխանութեան հակառակողը քան թէ արխատկրատիան որ յայտնապէս կ'օգտուէր այդ իշխանութիւնէն: Հրեաներու կատաղութիւնը օտարականներու դէմ աւելի կ'ուժեղանար իրենց տգիտութեամբ, որովհետեւ անոնք չէին տեսներ ուժերու ճշգրիտ դասաւորումը: Պաղեստինի հրեայ ժողովուրդը չէր գիտեր թէ որքան գերազանց էր իր հակառակորդին ուժը: Այս պատճառով անոնք կ'արհամարհէին դիւանագիտութիւնը եւ կը պահանջէին որ բռնի ուժով վերցուէր օտար լուծը: Բայց անոնք սակէ անդին չէին անցնէր. անոնք իրենց արխատկրասի լուծին մասին չէին խօսեր, մինչդեռ վերջինը նոյնպէս ծանր լուծ մըն էր ժողովուրդին վրին, բայց ինչ արած որ թէ երուսաղէմի եւ թէ չըջականերու մէջ ժողովուրդը իր ապրուստը կը ճարէր տաճարին կապուած ճամբանրով, անոր պաշտամունքով եւ քահանաներու ընձեռած միջոցներով: Ասոր համար անոնց ամբողջ կատաղութիւնը ուղղուած էր օտարներու դէմ միայն: Դեմոկրատիան, կերպարանափոխուած, եղեր էր չովինիզմ:

Ենթահիւ իրերու նպաստաւոր շրջադարձին պարագայ մը եկաւ որ այս փոքրիկ ժողովուրդը ապստամբեցաւ իր յաղթական տէրերուն դէմ եւ յաջողեցաւ: Եւ այդ եղաւ այն ատեն երբ սելուկեաններն ու պողոմեանները իրարու կայրութիւնը քայքայեցին կատաղօրէն իրարու դէմ կուռելով եւ ճամբայ բացին արեւմուտքի եւ արեւելքի նոր իշխաններուն, հռովմէացիներուն:

Ինչպէս ամէն քայքայուող դրութիւն, այս դրութիւնն ալ սաստկացնելով իր ճնշումը, բնականօրէն արտագրեց դիմադրութիւնը: Հրէական հայրենասիրութիւնը աւելի եւ աւելի ապստամբական դարձաւ եւ կազմակերպուեցաւ Ասիական կուսակցութիւնը: Դանիէլի գիրքը հաւանական է որ այդ կազմակերպութեան



գործունէութեանց պատուին է (167-164 Ն. Ք.) որ կը մարդարէանայ թէ Իսրայէլ շուտով ոտքի պիտի ելլէ ու ազատուի: Իսրայէլը ինքն իր ազատարարը, մեհիան պիտի ըլլայ եւ պիտի իշխէ աշխարհի ազգերուն:

«Եւ թագաւորութիւնն ու իշխանութիւնը ու բոլոր երկինքին տակ եզոզ թագաւորութիւններուն մեծութիւնը բարձրեալին սուրբերուն ժողովուրդին պիտի տրուի, անոր թագաւորութիւնը յաւիտենական թագաւորութիւն է ու բոլոր իշխանները անոր պիտի ծառայեն ու պիտի հնազանդին»: (Մարգ. Դանիէլի. է. 27):

Այս տողերով կը տեսնենք թէ Դանիէլ մարդարէն իրական ժողովրդագետական կառավարութիւն մը կ'երազէ:

Այն մեհիական մարդարէութիւնը շուտով կատարուեցաւ: Հարստահարիչներու դէմ պարտիրանական կռիւնները հետզհետէ մեծ համեմատութիւններ առին, մինչեւ որ Հասմոնեան տան պետերը միանալով Յուդա Մակաբայեցիին սուրիական զօրքերուն յաղթեցին եւ զբաւեցին Երուսաղէմը: Յուդայի երկիրը եղաւ ազատ եւ նոյնիսկ իր սահմաններն ալ ընդարձակեց: Անկէ յետոյ Յուդա Մակաբայեցիին ինկաւ (160 Ն. Ք.), իր եղբայրը Սիմոն շարունակեց պատերազմը եւ յետոյ ժողովուրդին յաղթութիւնը ապահովեց, բռնաբարեց ժողովուրդին ազատութիւնը, եղաւ բարձրագոյն քահանայապետ, գերագոյն պատերազմական հրամանատար, ժողովուրդի իշխան: Ասով ան հիմքը դրաւ Հասմոնեան ինքնակալութեան: Սիմոն հաւանարար դուշակելով որ նոր շահուած անկախութիւնը անսպասով էր, փնտոեց օտար նեցուկ մը: 139 թուին պատգամաւորութիւն մը զրկեց Հոսիմ, խնդրելով որ հռովմէացիները ապահովութեան տակ առնեն հրէական երկիրը: Այդ պատգամաւորութեան մի քանի անդամները Հոսիմէն քշուեցան իրենց նորահաւատներ բազմացնելու աշխատանքին համար, բայց պատգամաւորութիւնը իր նպատակին հասաւ:

Սիմոն չէր երեւակայեր որ իր իշխանութիւնը կարճ պիտի տևէր մինչեւ որ Յուդայի նոր բարեկամները անոր վտանգաւոր թշնամիները դարձան, եւ վերջապէս կործանեցին հրէական պետութիւնը: Որքան ատեն որ Հոսիմի մեծերը իրարու հետ կը կրուէին Յուդայի երկիրը դեռ վերուվայրի մէջ էր: Պոմպէոս զբաւեց Երուսաղէմը 63 Ն. Ք., տարաւ բազմաթիւ պատերազմական զերիներ զորս զրկեց Հոսիմ եւ սուրբ դրաւ հրեաներուն վրայ: Կրեսոս կողոպտեց տաճարը 54ին (Ն. Ք.): Անոր պարտութենէն յետոյ հըրեաները նորէն ապստամբեցան Գալիլիոյ մէջ, բայց պարտուեցան: Կեսար իր կարգին հրեաները իրեն բարեկամ դարձուց: Կե-

սարի մահէն վերջ քաղաքացիական կռիւները ամայացուցին Յուդայի երկիրը, ծանր հարկեր դրին ժողովուրդին վրայ: Օղոստոսի յաղթութենէն յետոյ այս վերջինը Կեսարի նման հրեաներուն շնորհ ըրաւ, բայց Յուդայի երկիրը հռովմէացիներէն կախուած մնաց, հռովմէացի զինուորները նորէն զբաւեցին երկիրը եւ վերջապէս երկիրը մնաց հռովմայեցի պաշտօնատարներու վարչութեան ներքեւ, որոնք իրենց չորրորդամ երկիրն մէջ տեղաւորուեցան եւ սկսան զուարճանալ: Հրեաներու առելութիւնը հռովմէացիներու հանդէպ բաժնուեցաւ, մասնաւորապէս ժողովուրդին մէջ: Անուանական թագաւորներն ու քահանայապետական արիստոկրատները որոնք մակաբայեան ապստամբութենէն առաջ կը սողային յոյն տէրերու առջեւ, սկսան շնորհ հայցել հռովմէացի նոր տէրերէն, ժողովուրդին վրայ իրենց իշխանութիւնը յաւերժացնելու համար, թէեւ անոնցմէ ոմանք սրտանց կ'ատէին օտարականները: Բայց իրենց կուտակեցութիւնը, սաղուկեցիմները հետզհետէ կը տկարանային եւ նուազ դիմադրութիւն ցոյց կուտային հայրենասիրական դեմոկրատիկ միւս կուտակեցութեան, փարիսեցիներու: Ժողէֆուս 100 (Ն. Ք.) թուին ընդհանուր կացութեան շուրջ հետեւեալը կը գրէ. «Հարուստները սաղուկեցիներու կողմն էին, իսկ ժողովուրդը յարած էր փարիսեցիներուն»: Իսկ Հերովդէսի շրջանին, այսինքն Քրիստոսի ատենուան համար նա կ'ըսէ. «Սաղուկեցիները շատ քիչ համակիրներ ունէին, բայց անոնք նշանաւոր մարդիկ էին, եւ սակայն պետական գործերը իրենց տեսակէտով չէին կրնար վարել, այլ հետեւելու էին փարիսեցիներուն, այլապէս ժողովուրդը չէր հանդուրժեր իրենց իշխանութեան: Փարիսեցիները կամաց կամաց հրեայ ժողովրդի մաքին կառավարիչները դարձան եւ քահանայապետական արիստոկրատիայի գիրքը զբաւեցին»:

Գ) ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐԸ

Մենք արդէն ծանօթացանք մակաբայեան կռիւներու մէջ այն բարեպաշտներուն որոնք կը կոչուէին ասիդայս: Մի քանի տասնեակ տարի յետոյ այս վարդապետութեան հետեւորդները Յովհաննէս Հիրքանոսի ներքեւ (135-104 Ն. Ք.) փարիսեցիները անուր առին. հսկառակ վարդապետութեան հետեւորդները սաղուկեցի անունը առին:

Սաղուկեցի անուան ծագումը որոշ չէ. գուցէ ան անուամ է Զատուր անուն քահանայապետէ մը որմէ յետոյ այդ ցեղը կոչուեցաւ զատուկեցիներ: Փարիսեցիները իրապէս անոնք են որոնք



անջատուած են սագուկեցիներէն. անոնք ինքզինքնին կ'անուանէին ընկերներ կամ զաշնակիցներ: Ճողջֆուս առիթով մը մեզի կ'ըսէ որ անոնք թիւով 6000 հոգի էին. ասիկա փոքր երկրի մը համար բաւական մեծ կազմակերպութիւն մըն է: Նա տեղեկութիւն կուտայ Հերովդէսի ժամանակէն (37 Ն. Ք.): «Հրեաներուն մէջ մարդիկ կային որոնք իրենց հայրերու օրէնքին հաւատարիմ հետեւորդ ըլլալուն հպարտ էին եւ կը հաւատային որ Աստուած իրենց հանդէպ մասնաւոր սէր ունէր: Ասոնք փարիսեցիներ կը կոչուէին: Անոնք մեծ ուժ ունէին եւ կրնային հակառակիլ թագաւորին, բայց խելացի էին. անոնք պատեհութեան մը կը սպասէին որ պայթեցնէին ապստամբութիւնը: Երբ ամբողջ հրեայ ժողովուրդը հաւատարմութեան երդում պիտի ընէր Օգոստոս կայսեր եւ հնազանդութեան ուխտ Հերովդէս թագաւորին, այս մարդիկը մերժեցին երդնուլ եւ անոնք աւելի քան 6000 հոգի էին»:

Հերովդէս որ անպիտան էր եւ պատրաստ պատժելու անհաւատարիմներն ու անհնազանդները, չհամարձակեցաւ զպչիլ անոնցմէ մէկուն. դա կը նշանակէ թէ ան ատրպուած էր յարգել փարիսեցիներու ազդեցութիւնը ժողովրդական դանդաղումներուն վրայ:

Փարիսեցիները ժողովուրդին հոգեւորական տէրերը դարձան. անոնց մէջ էին զպիւրները, զբողոքները որոնք կը յիշուին Նոր կտակարանին մէջ սարբի անունով. ասոնք արեւմտեան խումբ մը կը ներկայացնէին:

Մտաւորական դասակարգը նախապէս հրեաներու մէջ արեւելիքի, ինչպէս նաեւ ամենուրեք կղերական դասակարգն էր: Բայց այս դասակարգը արիստոկրատ դասակարգի բախոր ունեցաւ: Որքան հարստացաւ, նոյնքան անհոգ դարձաւ իր առանձնաշնորհեալ զիրքին մէջ: Դժուար է ըսել թէ անոնք ձեւական պաշտամունքի գործէն զատ ուրիշ բան մը կ'ընէին: Անոնք հետզհետէ լքեցին իրենց գիտական, գրական, օրէնսգրական եւ դատական գործունէութիւնները, այնպէս որ այս վերջինները անցան ժողովուրդի ծոցէն ելլող կրթուած սարբերուն ձեռքը:

Դատական եւ օրէնսգրական գործառնութիւնները մասնաւոր կարեւորութիւն ստացան: Օրէնսգրական հաւաքութիւնները հին արեւելիքի ազդերուն անձանթ էին: Անոնց բոլոր օրէնքները ձեւուած էին հին օրէնքներու վրայ: Անտարակոյս ընկերային զարգացման հետ կը յառաջանան նոր պայմաններ, նոր ինքիւրներ, նոր օրինական կազմեր, բայց երբ ժողովուրդի մտքին մէջ կար այն համոզումը որ օրէնքը նոյնը մնայու է, որ այդ օրէնքը Աստուծմէ

արուած է, ուրեմն նոր օրէնքները կ'ընդունուէին այն ատեն երբ անոնք սովորական, աւանդական օրէնքներու ձեւը ունէին եւ նորերը կուզային անոր համար որ հիները սխալ թարգմանուած ու սխալ գործածուած էին:

Տիրող դասակարգերու ձեռքէն օրէնսգրութեան իրաւունքը խլելու զիւրին կերպը այն էր որ եղած օրէնքները նկատուէին որպէս խարդախուած փաստեր: Մենք արդէն տեսնեք որ Յուդայի քահանայութիւնը այդպիսի տարածուն գործունէութիւն ունեցաւ: Ասիկա դժուար չէր երկրի մը համար ուր մասսաները կը մտածէին թէ որոշ տիրող դասակարգի մը վերապահուած էր կրօնական անպիտանութիւնները պահպանելու փորձառական գործը: Բայց այն երկրին մէջ ուր գրական դաստիարակութեան տէր մարդիկ երեւան կուզան հին կրօնաւորութեան կողքին, այլեւ դժուար է այս երկու դասակարգերէն մէկուն կամ միւսին համար փորձել ներկայացնել որեւէ ներմուծում մը հին ժամանակներու հեղինակաւոր մարդոցմէն կամ Մովսէսէն փոխանցուած գործերուն մէջ: Որովհետեւ այժմ մրցող դասակարգը սուր աչքով կը դիտէր այդօրինակ խարդախութեանց փորձարկութիւնները:

Երուսաղէմի կործանման նախորդող շրջանին, գրեթէ 200 տարի, սարբիները աշխատեցան խրամատ մը բանալ քահանայութեան զրած սուրբ կանոնադրքին մէջ եւ աշխատեցան աւելցնել գրական նոր արտագրութիւններ որպէս հինը ներկայացնող սուրբ գրութիւններ, արժանի նոյն յարգանքին ինչ որ էին հին գրուածքները, բայց անոնց ջանքերը յաջողութիւն չունեցաւ:

Արիւնի զէմ իր հակաձառութեան մէջ ճողջֆուս հրէական գրութեանց առաձգականութիւնը կը քննէ. «Ամէն մարդ իրաւունք չունէր իր ուզածը գրելու. որովհետեւ այդ իրաւունքը արուած էր միմիայն մարդարէններուն, որոնք Աստուծոյ ներշնչումով կ'արձանագրէին անցեալի իրերը, ինչպէս նաեւ իրենց ժամանակի իրողութիւնները: Ասոր համար մենք չունինք հազարաւոր գրուածքներ մէկգլմէկ ժխտող կամ հակասող, այլ ունինք 22 դիրք ուր արձանագրուած են այն զէպքերը ինչ որ տեղի ունեցեր են աշխարհի սկիզբէն ի վեր, եւ հէնց ասոր համար ան կը նկատուի աստուածային ծագումով գիրք մը: Մովսէսի 5 գրքերը, մարգարէներու 13 գրքերը, ներառեալ Մովսէսի շրջանէն մինչեւ Արտաշէսի շրջանը եւ 4 գրքերը, Սաղմոսաց եւ Առակաց գրքերը: «Արտաշէսի ժամանակէն մինչեւ հիմա վստահօրէն կրնանք ըսել թէ ամէն ինչ արձանագրուած է, բայց ոչ մէկը վաւերական չի համարուիր: Սուրբ



զրոց վրայ ոչ ոք կրցած է բան մը աւելցնել, բան մը պակսեցնել եւ կամ բան մը փոխել»:

Տարակոյս չկայ որ դրութիւնը այսպէս էր ճողէֆուսի օրով: Քանի որ դժուար էր գոյութիւն ունեցող օրէնքը փոխել, նորամուտները ստիպուած էին օրէնքը թարգմանել զանոնք յարմարցնելով նոր պայմաններուն: Հրեաները սուրբ գրուածքները կը յարմարցնէին այդպիսի փորձառութեանց, որովհետեւ անոնք միաձեւ չէին, այլ կը ներկայացնէին ընկերային պայմաններու եւ զանազան շրջաններու գրական խառնափնթորութիւններ: Անոնք ունէին մէկ կողմէ նահապետական պետիկ շրջանի ականափէպերը, միւս կողմէ բարձրօրէն զարգացած համաշխարհաքաղաքային իմաստութիւնը, եւ ասոնք բոլորը խմբադրուած էին յետ-բարեկալիան շրջանի քահանաներու կողմէ. խմբագիրներ որոնք այնքան կոշտ էին եւ անհեռատես որ կը թողէին որ հակասութիւններ սրւղբրդին առանց վերլուծումի եւ հարցումի: Այսպիսի օրէնքի մը էութիւնը կ'ուզէր ապացուցում մը, միայն թէ ձեռնարկողը ունենալու էր անհրաժեշտ փաստեր եւ զօրաւոր յիշողութիւն մը որով բերանացի կարենար ըսել բոլոր օրէնքի նախադասութիւնները. ահա այսպիսի իմաստութեամբ օժտուած էին ուարժները: Անոնք կեանքը չէին ուսումնասիրեր, միայն գիտնական դարձեր էին սուրբ գրոց ծանօթութեամբ եւ իրենց կարողութիւնը զարգացուցեր էին գրուածքները թարգմանելով սրամտութեամբ եւ ճկունութեամբ: Անշուշտ անոնք անդիտակցարար ազդեցութեան տակն էին այն կեանքին որ կ'եռեւեփէր, կը գալարուէր իրենց բոլորտիքը, բայց որքան կը զարգանար իրենց ուարժական իմաստակութիւնը, այնքան ան կը հեռանար կեանքի հասկացողութենէն եւ կեանքի զաղանիքի տիրապետութենէն եւ ատոր համար ան մէկ կողմէ եղաւ բոլոր եկողները սրամտութեամբ գերազանցող արուեստ, նոյնիսկ Աստուածը գերազանցող արուեստ մը, որուն գործն էր դատական ճկուն եւ իմաստակ փաստաբանութիւն մը եւ մակերեսային ճարտարամտութիւն մը, միւս կողմէ ինքզինք մխիթարող եւ զարգացնող արուեստ մը որ կրնար հայթայթել ջերմեռանդ մէջբերումներ կեանքի որեւէ մէկ կացութիւնը վերլուծելու համար: Ան աշխարհի մեր ծանօթութիւնները չէր հարստացներ, որովհետեւ աշխարհի մասին իր տղիտութիւնը կը պահէր միշտ: Այս բանը յայտնի եղաւ այն պայքարումներու ընթացքին որոնք կործանեցին Երուսաղէմը:

Խելացի եւ սոփեստ սագուկեցիները լաւ ծանօթ էին իրենց օրերու իշխանութեան զասաւորումին: Անոնք գիտէին որ անկարելի էր հռովմէացիներուն ցոյց տալ լուրջ դիմադրութիւն: Բայց փա-

րիսեցիները կը ջանային ցնցել հռովմէական լուծը, հոգ չէր թէ ան հետզհետէ կը ծանրանար եւ Յուդայի ժողովուրդը կը տանէր յուսահատութեան: Մակարայեան ապստամբութիւնը լաւ օրինակ մըն էր ցոյց տալու թէ ինչպէս ժողովուրդ մը կրնար պաշտպանել իր ազատութիւնը բռնակալի մը դէմ: Մեսիայի գալստեան յոյսը որ ապստամբութեան ուժ տուած էր եւ որ աւելի ծաղկեցաւ աղքատամբութեան յաջողութեամբ, աւելի զօրացաւ հռովմէական լուծը թօթափելու ցանկութեան հետ: Վստահօրէն կրնանք ըսել թէ մակարայեցիներու օրերէն սկսած հին աշխարհի ազգերը իրենց ազատութեան համար գործելու կարողութեան վստահութիւնը կը կորսնցնէին հեռզհետէ, որովհետեւ հռովմէացիները աւելի թոյլատու հակառակորդներ էին անոնց համար քան սուրիական քայքայուող կայսրութիւնը: Ինչ որ քաղաքացիական պատերազմ կը կոչուէր, աշխարհի իշխանութեան ձգտող յաջողակ զօրավարներու միջեւ տեղի ունեցող կռիւններն էին: Այսպէս, մեսիայի գաղափարը իր ազատութեան ձգտող հրեայ ժողովուրդին զաղափարը չէր այլեւ. այդ գաղափարը փոխակերպուած էր ամենատեղեկ հերոսի մը որ հրաշագործ կարողութիւն ունէր, որ Աստուծոմէ զրկուած ըլլալու էր իր բնորոշ ազգին օգնելու եւ զայն ազատելու շարժարանքներէն ու փորձանքներէն:

Նոյնիսկ ամէնէն եռանդոտ փարիսեցիները չէին կարծեր թէ հնարաւոր է ընկճել իրենց թշնամիները առանց այդպիսի հրաշագործ զօրավարի մը: Բայց անոնք իրենց բոլոր յոյսերը միմիայն անոր վրայ չէին կեդրոնացներ: Անոնք հաւանաբար կը նկատէին որ կայսրութեան, մասնաւորապէս զրացի ժողովուրդներու մէջ կ'աճի իրենց կողմնակիցներուն թիւը, մասնաւորապէս Աղեքսանդրիոյ, Բարեւոնի, Դամասկոսի եւ Անտիօքի մէջ: Անոնք իրենց օգնութեան պիտի գայի՞ն երբ իրենք ապստամբէին: Ու եթէ Հռովմ ըլլալով միակ քաղաք մը որ յաջողած էր աշխարհի յաղթել, ինչո՞ւ մեծ եւ հպարտ Երուսաղէմը պիտի չկրնար նոյնը ընել:

Յովհաննու Յայնութիւնը հրէական պրոպականտի փաստաթուղթն է որ հետեւած է Դանիէլի զրբին: Ան հաւանաբար զբրւած է այն ատեն երբ Վեսպասիան, ապա Տիտոս պաշարած էին Երուսաղէմը: Յայնութիւնը կը դուշակէ մեռածարտ մը Հռովմի եւ Երուսաղէմի միջեւ: Վա՛յ քեզ Հռովմ — «կինը որ նստած է եօթը լեռներու վրայ». «Բարեւոնը (Հռովմը ըսել կ'ուզէ) մեծը, աշխարհի պղծութեանց եւ պոսնիկներու մայրը, որուն հետ երկրի թագաւորները պոսնիկացան եւ աշխարհի վաճառականները հարստացան անոր զանձերովը. (զլ. Ժէ.-ԺԸ.): Այս քաղաքը պիտի



կործանի եւ անոր վճիռը պիտի արձակուի. «եւ աշխարհի վաճառականները պիտի լան ու ողբան, որովհետեւ ոչ ոք իրենցմէ ապրանք պիտի չզնէ. անոր տեղը պիտի անցնի Երուսաղէմ սուրբ քաղաքը եւ ազատուած ազգերը պիտի քայլին լոյսի մէջ եւ աշխարհի թագաւորները իրենց փառքն ու պատիւը պիտի բերեն հոն (ՂԼ. ԺԱ. 24): Իրողութիւն է որ պարզամիտ անձերու մտքին մէջ որոնք Հոսովմի ուժը չէին ճանչնար, Երուսաղէմը կար ու կը մնար որպէս վտանգաւոր մրցակիցը Թիպերի աշխարհի տիրուհիին:

Յովսէփոսը կը անդեկազրէ որ քահանաները անգամ մը գառակի խնճոյքի առեն Երուսաղէմի այցելուները համբաժնէ են: Քահանաները համբեր են 256·500 գառակի գառնուկներ: Ամէն մէկ սեղանի բոլորտիքը հաւաքուած են ոչ նուազ քան 10 անձեր, որոնց արուած է միայն մէկ գառնուկ: Բայց մաս մը սեղաններու շուրջ մէկ գառնուկի բոլորտիքը հաւաքուած են քսան անձեր: Եթէ մենք իւրաքանչիւր գառնուկի հետ միայն 10 հողի հաշուենք, այն առեն կ'ունենանք 2 միլիոն 700·000 անձինք: Ալ չհաշուենք այն անմաքուր ու անհաւատ մարդիկը որոնք Երուսաղէմի մէջ կը բնակէին բայց անոնց թոյլ տրուած էր մասնակցիլ գառնուկայ խնճոյքին:

Յովսէփոսը թէեւ իրական հաշիւ մը կը ներկայացնէ, բայց իր տուած տեղեկութիւնը անհաւատարի է, նոյնիակ եթէ մենք արբուած թիւին մէջ վեր առնենք Երուսաղէմի շրջանի գառնուկային բնակչութիւնը, որ պէտք չունէր ոչ ուտելիքի, ոչ ալ պատուարանի: Հարցը այժմ այն է թէ այդքան ուտելիք ի՞նչպէս կարելի եղած է ճարել այդ հսկայ բազմութեան համար: Այդ առնները միայն հետուններէն կարելի էր ուտելիքներ բերել, ան ալ նաւերով: Բայց խոշոր քաղաքները այդ ժամանակներուն կը գտնուէին նաւարկելի գետերուն եզրերը եւ կամ ծովեզրերը եւ անոնք կապուած էին Երուսաղէմի հետ ջուրով, որովհետեւ թէ ծովը եւ թէ Յորդանան գետը որ նաւարկելի էր, հետու էին Երուսաղէմէն: Ատկէ զատ այդքան բազմութեան համար ջուր հոյսթայթիլը նոյնպէս հաւանական չի թուիր, որովհետեւ քաղաքը մասամբ կախուած էր անձրեւի ջուրէն, զոր բնակիչները կը պահէին կուժերու, կարաններու եւ ջրամբարներու մէջ:

Անկարելի է հաւատալ նաեւ Յովսէփոսի ուրիշ մէկ պատմութեան, որ իբր թէ մէկ միլիոն 100·000 հրեաներ ջարդուած են Երուսաղէմի մէջ: Տակիտոս, ընդհակառակը, աւելի փոքր թիւ մը կը ներկայացնէ, որ է 600·000 իբր թէ Երուսաղէմը 600·000 բնակչութիւն ունի եզրը: Այսպէս թէ այնպէս, պարզ կ'երեւնայ որ

հրեայ ժողովուրդի երեւակայութիւնը քաղաքի բնակչութեան թիւը կրկնապատկեր է:

Բայց Երուսաղէմը որքան ալ որ զօրաւոր ու մեծ եղած ըլլար չէր կրնար յաղթական դուրս գալ, առանց դուրսի օդնութեան, իսկ հրեայ բնակչութիւնը Պաղեստինէն դուրս քաղաքային բնակչութիւն էր եւ ամէն մէկ խոշոր քաղաքի մէջ փոքրամասնութիւն կը կազմէր: Այդ եւ յաջորդ շրջաններուն միայն դիւղացիութիւնն էր որ երկար ժամանակով կրնար զինուորական ծառայութեան տուել: Խոշոր քաղաքներու բնակչութիւնը բաղկացած էր առեւտրականներէ, ճարտարարուեստի գործաւորներէ, լուսալէն պրոլետարներէ, եւ ասոնք չէին կրնար ճակատիլ մարդուած զինուորներուն դէմ: Տարակոյս չկայ որ Երուսաղէմի վերջին ապստամբութեան առեն Պաղեստինէն դուրս գտնուող հրեաներուն մէջ ալ խոսովութիւններ տեղի ունեցեր էին, որով անոնք Երուսաղէմի օդնութեան չէին կրնար հասնիլ: Մեծադոյն գործը, ուրեմն, կը մնար երազուած մետախիւն. եթէ մետախիւն հրաշքներ չգործէր, հրեական ապստամբութիւններէն յոյս չկար. այսպէս էր շատերուն հաւատքը:

Յուդայի երկրի ապստամբական դրութիւնը որքան կը խորանար, նոյնքան կը ծագէր մետախիւն յոյսը փարիսեցիներու շրջանակին մէջ: Բայց սաղուկեցիները սկեսպտիկ էին այդ յոյսի մասին, նոյնպէս սկեսպտիկ էին յարութեան վարդապետութեան մասին, որ կապուած էր մետախիւն գալտտեան յոյսին հետ:

Ինչպէս իւրայէլացիներու բոլոր զիցարանութիւնը, նոյնպէս եւ մարդուն յետ մահու մասին անոնց ունեցած գաղափարները չէին տարբերեր մշակութային նոյն աստիճանին վրայ գտնուող ուրիշ ազգերու գաղափարներէն: Երբ կենդանի մարդ մը իր երազին մէջ կը տեսնէր իր մեռած ազգականը, այդ բանը ենթադրելի կուտար թէ մեռնողը կը շարունակէր ապրիլ անձնական կեանք մը. բայց անոր այդ կեանքը աննիւթական էր, ստուերային: Հաւանական է որ երբ մեռնողը կը թաղէին գետինն տակ մութ տեղ մը, մարդիկ բնականօրէն կ'ենթադրէին որ անիկա այդ ընդյատակեայ մթութեան մէջ կը պահէր ստուերային իր գոյութիւնը: Կեանքի հասկնալի սէրն ու հաճոյքները մարդոց թոյլ չէին տար երեւակայել որ երբ մարդը կը մեռնէր այդ սէրն ու ուրախութիւնները կըրնային իրենց գոյութիւնը շարունակել. մեռնող մարդը կը գտնար առանց սիրոյ, առանց հաճոյքի եւ ուրախութեան տխուր ստուեր մը միայն:

Հին իւրայէլացիներու այս տեսութիւնները յար եւ նման են հին յոյներու ունեցած տեսութեանց: Հոմերոս երբ Աքիլլէսի ստուեր



ըր կ'ողբայ, այդ ցոյց կուտայ որ Հոմերոսի ժամանակներն ալ յոյները կ'ընդունէին թէ ապրող դործաւոր մը աւելի լաւ էր քան մեռած իշխանը:

Մեռնողը, ուրեմն, չէր կրնար վարձատրութիւն ակնկալել, հոգ չէ թէ ան անաստուած ըլլար կամ բարեպաշտ. խաւար աշխարհին մէջ բոլորն ալ նոյն ճակատագիրը ունէին: Հաճոյքն ու ուրախութիւնը միայն ապրող կեանքին մէջ էր:

Նոյնիմաստ յայտարարութիւններ կը գտնենք ժողովածուներու մէջ. «Քանզի բոլոր կենդանիներուն ընկերացած մարդէն յոյս կայ, վասնզի մեռած շունը մեռած առիւծէն աղէկ է: Որովհետեւ կենդանիները գիտեն թէ պիտի մեռնին, բայց մեռելները բան մը չեն գիտեր. ու ալ վարձք մը չեն սուներ. վասնզի անոնց յիշատակը մոռցուեցաւ: Թէ անոնց սէրը, թէ անոնց ստեղծութիւնը, թէ նախնիք արդէն կորսուեցաւ, ու անոնք արեւուն տակ եղող բաներուն մէջ ալ յախտեան բաժին մը չունին: Գնա հացդ ուրախութեամբ կեր ու գինիդ ուրախութեամբ խմէ. վասնզի Աստուած քու դործերուդ համեմատ: Հանդերձներդ ամէն ատեն ճերմակ ըլլան ու գլխուդ վրայէն իւրը պահաս չըլլայ: Քու սիրած կնոջդ հետ կեանք վայելէ, քու սնանութեան կեանքիդ բոլոր օրերուդ մէջ, զոր Աստուած քեզի տուաւ արեւուն տակ քու ունայնութեանդ բոլոր օրերուն մէջ, վասնզի այս կեանքին մէջ քու բաժինդ անիկա է արեւուն տակ քաշած աշխատանքէդ: Չեւթդ ինչ որ գտնէ ընելու, ամբողջ ուժովդ ըրէ. քանզի քու այն երթալիք գերեզմանիդ մէջ դործ, խորհուրդ, գիտութիւն ու իմաստութիւն չկայ»: (Գիրք Ժողովողի, Թ. 4-10):

Այստեղ մենք տակաւին ունինք դուռ կեանքի ուրախութեան յունական դադափարը, ինչպէս նաեւ մահուան հեթանոսական-կրօնապաշտական տեսութիւնը: Այսպէս էին հրէական հին ըմբռնումները զորս պահպանեցին սողակեցիները: Ասոր հակառակ ըմբռնումները երևան եկան Գիրք Ժողովողի խմբագիրներուն օրով:

Կեանքի ուրախութեան դադափարը համաձայն էր այն շրջանին, երբ դիւղաղիութիւնը բարգաւաճ ու ծաղկման շրջանը կ'ապրէր: Գիւղացիութիւնը երբ ինկաւ, արիստոկրատ դասակարգը տակաւին պատահութիւն ունեցաւ կեանքի հաճոյքները վայելելու եւ բարձրացնելու իրենց հեշտասիրութեան յատուկ վայելքները, բայց ցածադոյն դասակարգերը ինկան թշուառութեան մէջ: Ինչևէիցէ անոնք չինկան այնքան ցած որ կորսնցնէին իրենց վիճակը բարեխաւար յոյսը: Անոնք որքան թշուառացան, այնքան ծաղկեցաւ անոնց յեղափոխութեան յոյսը, որ կը խոստանար իրենց լա-

ւագոյն կեանք մը ուրախութեամբ լեցուն: Մեխիան անոնց համար կը նշանակէր յեղափոխութիւն որ անշուշտ գալու էր գերմարդկային ուժով, հրաշքներով, որովհետեւ իրերու դասաւորումը աստիճանաբար կուզար աննպաստ ըլլալ շահագործուող եւ տանջուող ժողովրդական զանգուածներուն: Որքան որ կը մեծնար հրաշքներու եւ մեխիայի հրաշագործութեան հաւատքը, նոյնքան կը մեծնար մասսաներու տառապանքը եւ ճնշման դէմ մղուած պայքարի պահանջած զոհողութիւնները. ասոր իբր հետեւանք բազմացաւ թիւը այն մարտիրոսներուն որոնք ինկան այդ պայքարի ճակատին վրայ: Անոնք չէին հաւատար թէ իրենց ամբողջ յոյսը պարտաւ էր եւ իրենց մեխիայի յաղթանակը իրենց երազները պիտի չիրականացնէր: Անոնք չէին հաւատար նաեւ որ այն սուրբերն ու հերոսները որոնք ճնշուածներու սիրոյն հրաժարեք էին կեանքի հաճոյքներէն եւ նուիրուած էին իրենց գաղափարին, պիտի չվարձատրուէին իրենց զոհողութեանց համար: Կարելի՞ էր հաւատալ որ այդ հերոսները իրենց մեռնելէն յետոյ դժոխք երթալին եւ իրենց ստուերային գոյութիւնը քաշքէին, մինչ իրենց եղբայրները, երուսաղէմի մէջ յաղթական, աշխարհին իշխէին ու կեանքի հաճոյքները վայելէին: Եթէ մեխիան այնքան ուժեղ էր որ յաղթէր Հոովմի, ան անշուշտ կրնար յաղթել եւ մահուան, կրնար անոնց յարութիւն առնել տալ եւ ապրիլ իրեններուն հետ:

Այսպիսով Մովսէսի վարդապետութեան ախոյաններուն մօտ աճեցաւ այն հաւատքը որ ժողովուրդին համար պատերազմի մէջ ինկող հերոսները իրենց գերեզմաններէն դուրս պիտի գան նոր ուժով ու եռանդով եւ նոր կեանք մը պիտի սկսին հաճոյքով ու երջանկութեամբ: Ասիկա հոգիի անմահութեան հաւատք մը չէր սոսկ, այլ մարմնի վերակենդանացման հաւատքը, որով կը հրճուէր յաղթական երուսաղէմը: Այս յոյսին կ'ընկերանար գինիի սուտա գործածութիւնը: Ասոր հետ մէկտեղ մոռցուած չէր նաեւ սիրոյ հաճոյքը: Յովսէփոս մեզի կը պատմէ որ Հերովդէսի մէկ ներքինին որ հետեւած էր փարիսեցիներու ազանդին, համոզուած էր որ մեխիան երբ գար իրեն առնական ուժ պիտի տար ու ինք կարող պիտի ըլլար սերնդագործել եւ զաւակներ ունենալ:

Տրամաբանական էր, ուրեմն, որ մեխիան երբ այնքան ուժեղ էր որ կրնար վարձատրել իր հաւատաւորները, նա կարող էր նաեւ իր թշնամիները պատթել: Երբ հերոսները կը վարձատրուէին յարութեամբ եւ նոր կեանքի վայելքով, անոնց դահլճներն ալ պէտք էր յարութիւն առնէին որպէսզի կեանքի շարժարանքին ենթարկուէին, ու այդ բնօրը մեխիան ըլլալու էր:



Մեռածներու յարութեան գաղափարը չէր վերաբերեր բոլոր մեռածներուն, այլ միայն անոնց որ կուտեր ու մեռեր էին Երուսաղէմի անկախութեան համար կամ այդ անկախութեան դէմ: Այսպէս, մենք Դանիէլի դրքին մէջ կը կարգանք մովսիսական յազթանակի օրուան մասին. «Ու երկրի հողին մէջ քնացողներուն շատերը պիտի արթնան, ոմանք յաւիտենական կեանքի համար, ոմանք ալ նախատինքի ու յաւիտենական անարգանքի համար»: (Դանիէլի, ԺԲ. 2):

Այսպէս կոչուած Յովհաննու Յայնութիւնը դոր մենք նշեցինք, նոյն դասուն պատկանող գործ մըն է: Ս. Գրոց թարգմանութեան մէջ որ մեզի աւանդուած է, Յայնութիւնը երկու տեսակի յարութիւն կը գատորոշէ: Առաջինը չի վերաբերի ամէն մարդու, բայց միայն մարտիրոսներուն, մեզ արուած աւանդական Ս. Գրոց թարգմանութեամբ քրիստոնեայ մարտիրոսներուն որոնք երկու հազար տարիներու ընթացքին մեռած են եւ յարութիւն պիտի առնեն: «Եւ ամբողջներ տեսայ ու նստան անոնց վրայ. եւ անոնց դատաւարութիւն տրուեցաւ, նաեւ Յիսուսի վկայութեանը համար ու Աստուծոյ խօսքին համար զլիստուածներուն հողիները տեսայ, եւ զանոնք որ երկրպագութիւն չըրին գաղանին, ոչ ալ անոր պատկերին, ու անոր գրոշմը իրենց ճակատներուն վրայ ու իրենց ձեռքերուն վրայ չընդունեցին եւ ապրեցան եւ Քրիստոսի հետ հազար տարի թագաւորեցին: Եւ ուրիշ մեռելները չապրեցան մինչեւ հազար տարին կատարուեցաւ, ասիկա է առաջին յարութիւնը»: (Յայտ. Յովհ. Ի. 4-6):

Յարութեան հաւատքը ճակատամարտի վարդապետութիւն էր: Գերազանցապէս զօրաւոր թշնամիի մը հետ երկար ու վայրի կռիւի մը մոլեռանդութենէն ծնած, անհասկնալի վարդապետութիւն մը որուն հիմքը միայն հասկնալի է. այդ հաւատքն էր որ կ'ուժեղացնէր կռիւի եռանդը: Բայց ոչ-հրեայ աշխարհին մէջ յարութեան հաւատքը որ կապուած էր մարդուն անմահութեան փափաքին հետ, բոլորովին անկախ էր ճակատամարտի պահանջումներէն. ան կ'ընանք ըսել թէ արդիւնքն էր յողմածութեան ու կեանքէն հրաժարման ցանկութեան: Պատանական եւ պիւթագորեան վարդապետութիւնները կը խօսին հողոյ անմահութեան մասին. անոնց փիլիսոփայական գաղափարները հողի անմահութեան մասին անբաժուեցան հենց ժողովրդական ինքնամին հաւատքի ազդակներու միջոցով, կեանքէն հրաժարման եւ կեանքի պայքարէն յոյճածութեան միջոցով: Բայց փարիսեցիներու քարոզած յարութեան յոյսը անմիջական եւ ցնցող ազդեցութիւն ունէր այդ օրե-

րուն մասսաներու վրայ, որոնք հրաշքներու կը հաւատային եւ սահայն վերացական մտածողութեան հետամուտ չէին: Անոնք ուրախութեամբ ընդունեցին այս յոյսը որ թարգմանեցին հրէական միջավայրէն իրենց սեփական տարրեր լեզուով:

Մովսէսի վարդապետութիւնը իր պրոպականտի յաջողութիւնը կը պարտի մեծ մասով յարութեան հաւատքին մինչեւ Երուսաղէմի կործանումը. բայց քաղաքի կործանումէն յետոյ այդ հաւատքն ալ ոչնչացաւ: Մեսիայի գալուտեան սպասումը այլեւս դադրեցաւ զրդիչ ուժ մը ըլլալէ մովսիսական գործնական քաղաքականութեան համար. այդ հաւատքը եղաւ ջերմեռանդ փափաք մը եւ մեկաջնազձուտ երազ մը. մեսիան գալու էր, բայց չեկաւ: Նոյն ատեն փարիսեցիական յարութեան հաւատքը հրէական մտածողութեան մէջ կորսնցուց իր գետինը: Այս հաւատքը մեսիայի հաւատքին հետ որդեգրուեցաւ քրիստոնեաներէն, որոնք իրենց ուխտի ժողովներուն մէջ սկսան իրենց լուսագոյն պրոպականտան մղել անոնցմով, որովհետեւ իրենց մեսիան, Քրիստոսը եկած էր արդէն եւ ծանուցեր էր որ հողիները անմահ են, բարիները կ'երթան արքայութիւն, չարերը՝ դժոխք: Բայց քրիստոնեայ համայնքները իրենց սնունդն ու ուժը ստացան Մովսէսի վարդապետութեան հետեւող պրոլետարական տարրերէն քան թէ բուրժուայ դեմոկրատիէն, եթէ կարելի է այս որակումները գործածել:

ՅԱՆՎՈՒԳՆԵՐԸ ԿԱՄ ՋԵՐՄԵՆՈՒՆԴՆԵՐԸ

Փարիսեցիները ժողովրդական մասսաներու ներկայացուցիչներն էին, որոնք հակառակ էին կրօնական արիստոկրատիին: Բայց այս մասսաները կը նմանէին 1789-ի Ֆրանսական յեղափոխութեան նախաշրջանի տարրերուն, որովհետեւ ասոնք ալ կազմուած էին տարրեր գասակարգիւ, իրարմէ տարրեր չահերով, կռուելու տարրեր ողիով եւ բռնորովին տարրեր պատրաստակամութեամբ: Ասիկա ճշմարիտ է նոյնիսկ Պաղեստինէն դուրս գտնուող հրեաներուն համար, այն հրեաներուն որոնց ապրուստը կախուած էր առուտուրէ, դրամական գործառնութենէ, հարկահաւաքէ եւ նման գործերէ, բայց սխալ պիտի ըլլայ ենթադրել որ բոլորն ալ վաճառական կամ դրամատէր էին: Մենք նշեցինք արդէն որ առուտուրը աւելի անապահով էր քան զիւզացու կամ արհեստաւորի զբաղումը: Եւ ասիկա աւելի հիմնական իրողութիւն էր մասնաւորապէս այդ դարաշրջանին, որովհետեւ նաւարկութիւնը կատարելագործուած չէր եւ շատերը կը անանկանային ծովահաններու յարձակումներէն եւ քաղաքացիական պատերազմներէն: Շատ մը հրեաներ այժմ ազ-



քատացեր էին, կորսնցուցեր էին իրենց ամբողջ հարստութիւնը, իսկ մնացածներուն համար ալ հարստանալու յոյս չկար: Ճիշդ է որ առուտուրը փայլուն հեռանկարներ ունէր նպաստաւոր պայմաններու տակ, բայց պայմանները աննպաստ էին եւ յետոյ ամէն ոք պէտք եղած զբաժանուիլը չունէր խոշոր ձեռնարկութեան համար: Հրեաներու մեծամասնութիւնը մնաց որպէս չարքի կամ խանութպան: Ասոր վրայ ոմանք փորձեցին նուիրուիլ ձեռագործական աշխատանքի, որուն համար բացառիկ խելք չէր պահանջուէր, ոչ ալ արտասովոր ճաշակ: Ուր որ հրեաները մեծ թիւով իրարու մօտ կը բնակէին, իրենց մասնաշառուկ կերպերով ու սովորութիւններով կը ստեղծէին իրենց հաւատքին հետեւող բազմաթիւ արհեստաւորներու պահանջը:

Երբ մենք, համաձայն պատմութեան, բնորոշինք որ մէկ միլիոն հրեաներ կ'ապրին եղեր եզրագծով մէջ, անկարելի է որ ենթադրենք թէ բոլոր հրեաները կ'ապրէին առուտուրով: Ազգաբանագրիւմ մէջ հրեաները տիրացեր էին ճարտարարուեստի մաս մը ճիւղերուն, ուրիշ քաղաքներու մէջ կային հրեայ արհեստաւորներ: Հռովմի մէջ շատ մը հրեաներ անցեր էին գերիներու շարքին, ոմանք ալ՝ ազատագրուածներու կարգին: Անոնց անյաջող պայքարումներն ու ապստամբութիւնները աւելի ստուարացուցին պատերազմական գերիներու շարքերը:

Բոլոր այդ դասակարգերէն որոնցմէ ոմանք աւելի մօտ էին պրոլետարիատին, մասնաւորապէս անոնց մրուրը կազմող տարրերը, աւելի խոացուցին լուսավէն պրոլետարիատի բանակը: Այսպէս, հրեայ մուրացիկները Հռովմի պրոլետարիատին մէջ մասնաւոր ուշադրութեան առարկայ էին դարձեր:

Լուսավէն պրոլետարիատը անշուշտ անկայուն տարր էր:

Հրեայ մուրացիկներու տարեկան տօնակատարութիւնը ուխտագնացութիւնն էր, ուխտագնացութիւն ղէպի Երուսաղէմ, որովհետեւ դա իրենց հայրենիքն էր, ուր իրենք չէին նախատուեր, չէին շարժարուեր անհամակիր բնակիչներու կողմէ: Երուսաղէմ ուխտի կ'երթային նաև հարուստները, որոնց առատաձեռնութենէն կ'օգտուէին մուրացիկները:

Այդ շրջանին չկար քաղաք մը ուր լուսավէն պրոլետարներ<sup>(\*)</sup> չգտնուէին: Հռովմէն յետոյ Երուսաղէմն էր որ մեծ թիւով

(\*) Լուսավէն պրոլետար կը կոչուին այն դատարկապարտ ընչազարկները որոնք կ'ապրին մուրացիկներու քաղաք, պատեհութիւն ներկայացած ատեն գողութեամբ կամ յափշտակութեամբ:

այդ պրոլետարներէն կը պահէր իր ծոցին մէջ: Արհեստաւորները, ինչպէս եւ անական գործաւորները պրոլետարիատի հետ կապուած էին եւ անտօլոր չէր որ ասոնք բոլորը ընկերանային մուրացիկներուն եւ բեռնակիրներուն: Իսկ այս ընչազուրկ դասակարգերը ուր որ հաւաքուէին կը դառնային սպառնական: Անոնք կորսնցնելիք բան չունէին, ատոր համար յանդուգն էին, մանաւանդ երբ կը տեսնէին որ բազմաթիւ էին: Ասոնք գինուորական մարզանք չունէին, բայց փողոցային անկանոն կոխներու մէջ ճարպիկ էին: Աղեքսանդրիոյ եւ Երուսաղէմի ղէպերը այս ապացոյցները տուած են քանիցս:

Երուսաղէմի մէջ պրոլետարները բոլորովին տարբեր կուռոյ ոգիով ներշնչուած էին բազմաամբռ ունեւոր եւ մտաւորական դասակարգերուն որոնք կհանքի հարկադրանքին տակ միացեր էին փարիսեցիներուն: Ի հարկէ, բնականօրէն պրոլետարներն ալ կը հետեւէին փարիսեցիներուն: Բայց երբ Երուսաղէմի եւ Հռովմի միջև թշնամութիւնը խորացաւ եւ վճռական կոխի վայրկեանը մօտեցաւ, փարիսեցիները, աւելի վախկոտ, զուշաւոր դիրք բռնեցին, որով կուռոյ ճակատը մնացին յանդուգն պրոլետարները: Փարիսեցիները նահանջեցին յեղափոխական ճամբուն վրայ: Փարիսեցի անունը ատոր համար հոմանիշ եղաւ կեղծաւորութեան ու երկերեսանիութեան:

Պրոլետարները ուժեղ օժանդակութիւն ստացան Գալիլիոյ գիւղացիական բնակիչներէն: Անոնք մանր գիւղացիներն ու հովիւներն էին որոնք ամէնէն շատ կը շահագործուէին ենթարկուելով հարկային եւ վաշխառուական ճնշման եւ նետուած էին սարկային ծառայութեան գիրկը: Անոնցմէ ոմանք Երուսաղէմ գալով ստուարացուցին պրոլետարներու շարքերը: Իսկ կայսրութեան միւս մասերու ընչազուրկ եւ յուսահատ տարրերը զիմեցին ապստամբութեան եւ աւազակութեան: Պաղեստինի մէջ անապատի մօտիկութիւնը անոնց պայքարը կը զիւրացնէր, անոնց կուտար թագաւորներ որոնց ծանօթ էր գիւղացիութիւնը: Եւ Գալիլիան իր անկոխ վայրերով ու նկուղներով կը նպաստէր աւազակային ձեռնարկութեանց: Այն զրօշակը որուն տակ այս աւազակները կը կուռէին մեսիայի յոյսն էր: Աւազակային խմբապետները ինքիւնքնին կը յայտարարէին որպէս մեսիա:

Գալիլիոյ աւազակներն ու Երուսաղէմի պրոլետարները կը գործակցէին իրարու հետ, կ'օգնէին իրարու, այսպէսով ի վերջոյ կազմեցին ընդհանուր կուսակցութիւն մը որ անջատուեցաւ փարիսեցիներու կուսակցութենէն եւ առաւ Զերմեռանդներու կուսակց-



ցութիւն անունը: Այս կուսակցութեան անհամբեր ու յանդուզն գործունէութիւնը երեւան եկաւ այն ատեն երբ Քրիստոս մը արդէն մարմնաւորուած էր:

Հերովդէսի վերջին հիւանդութեան ատեն (Ա Ն. Ք.) երուսաղէմի ժողովուրդը ապստամբեցաւ, որովհետեւ Հերովդէս ոսկեայ արծիւ մը դրած էր Սողոմոնի տաճարին տանիքին վրայ: Խոտովութիւնը իսկոյն զսպուեցաւ զէնքի ուժով: Հերովդէսի մահէն յետոյ ժողովուրդը զատկի տօնին դարձեալ ոտքի ելաւ, այս անգամ աւելի սպառնական ցնցումով, այնպէս որ Հերովդէսի որդին Արքելոս զինուորական ուժով զսպեց ապստամբութիւնը, սպաննելով երեք հազար հրեաներ: Բայց Երուսաղէմի բմբոստ մասսաները չյուսահատեցան: Երբ Արքելոս Հոովմ դնաց թաղաւոր հռչակուելու նորէն պայթեցաւ ապստամբութիւնը: Այս անգամ հոովմէացիները Երուսաղէմի վրայ զրկեցին Վարուսը որ Սուրիոյ կառավարիչ էր: Այդ մարդը շուտով զսպեց ապստամբութիւնը եւ գաւառապետ Սաբինոսը Երուսաղէմի վերհսկիչ նշանակելով անցաւ Անտիոք: Սաբինոս, վստահելով իր զինուորական ուժին, անխնայօրէն ճրգմեց հրեաները եւ կրցածին չափ կողոպտեց զանոնք:

Պենտեկոստէի օրը բազմաթիւ հրեաներ հաւաքուած էին Երուսաղէմի մէջ, նոյնպէս եւ գալիլիացիներ: Հրեաները, տեսնելով որ իրենք արդէն թուական գերազանցութեամբ զօրաւոր էին եւ կրնային ապստամբութիւնը յաջողութեամբ պսակել, շրջապատեցին հոովմէական լեզէոնը եւ Հերովդէսի վարձած զինուորները: Ակաւ կռիւր: Շատ մը հրեաներ սպաննուեցան, բայց կոռուղները պաշարումը սասակացուցին, մանաւանդ երբ վարձկան զինուորներն ալ միացան իրենց: Գալիլիոյ աւազակախումբերը իրենց հետեւորդներով կանոնաւոր բանակ մը կազմեցին: Անոնց պետն էր Յուզան, անուանի յեղափոխական մը որուն հայրը, էզէկիոսը մահուան գատապարտուած էր 47 թուին (Ն. Ք.):

Հերովդէսի նախկին մէկ զերին, Սիմոն որ իր կազմած աւազակախումբով միացաւ ուրիշ խումբի մը որուն գեկավարն էր հովիւ մը, Ատրոնիկէսը, օգնութեան հասաւ Երուսաղէմի կոռուղներուն: Հոովմէացիք, չորս կողմէն պաշարուած, յուսահատ դրութեան մատնուած էին: Ահա այդ ճգնաժամային ատենն էր որ Վարուս երկու լեզէոններով եւ օգնական ուժերով վրայ հասաւ, Երուսաղէմի պաշարուածները ազատեց եւ սկսաւ կոտորածը: Սպաննուածներէն զատ երկու հազար հրեաներ խաչուեցան եւ շատեր որպէս գերի ծախուեցան:

Այս զէպքը տեղի ունեցաւ հասարակօրէն ընդունուած Քրիստոսի ենթադրական ծննդեան ժամանակ:

Անկէ յետոյ քանի մը տարի խաղաղութիւն եղաւ. միայն քանի մը տարի: Յուդայի երկիրը Ն թուին (Յ. Ք.) ուղղակի Հոովմի իշխանութեան տակ անցաւ: Հոովմէացիները մարդահամարի ձեռնարկեցին մարդոց տուրքերը նշանակելու համար:

Գալիլիացի Յուզան որ տասը տարի առաջ ապստամբութեան պետն էր եւ հրաշքով կրցեց էր ազատուիլ, նորէն պարզեց ապստամբութեան դրօշակը, միանալով փարիսեցի Սաղուքի հետ, որուն հրահանգուած էր Երուսաղէմի ժողովուրդը ոտքի հանել: Այս փորձը կարեւոր արդիւնք մը չտուաւ, միայն թէ ժողովուրդի խոնարհ գասակարգերը եւ ապստամբ գալիլիացիները մէկ կողմ, իսկ փարիսեցիները հակառակ կողմ երկուքի բաժնեց եւ անոնց միջեւ ստեղծեց իրամատ մը: Փարիսեցիները վերջնականապէս չէզոքացան եւ չուղեցին օդնէլ ապստամբական ծրագիր մշակողներուն: Ասոր համար ջերմեռանդները կազմեցին իրենց առանձին կուսակցութիւնը: Այդ ատենէն սկսեալ ապստամբութեան կայծը չմարեցաւ թէ Յուդայի երկրին եւ թէ Գալիլիոյ մէջ, մինչեւ Երուսաղէմի կործանումը: Յովսէփոս այդ ատենուան դրութիւնը կը ներկայացնէ իր փարիսեցիական տեսակէտով. «Յուդա, գալիլիացի մը Գամալա քաղաքէն որ փարիսեցի մըն էր, Սաղուքի օգնութեամբ ոտքի հանեց ժողովուրդը, զանոնք համոզելով որ մարդահամարի ենթարկուելով հրեաները պիտի կորսնցնէին ամէն բան, պիտի զրկուէին իրենց ազատութենէն եւ Աստուած պիտի չօղնէր իրենց եթէ կռիւի միջոցին չդիմէին: Ժողովուրդը յափշտակութեամբ կը լսէր այս քաջայերական խօսքերը եւ մարդիկ դարձան յանդուզն: Անկարելի է նկարագրել այս մարդոց շարիքները ինչ որ բերին ժողովուրդի գլխուն: Անոնք երկիրը մատնեցին պատերազմի ու աւերածութեան: Անոնք շարունակ բռնի ուժի կը դիմէին. ով որ կ'ընդդիմանար գլուխը վրայ կուտար: Աւազակները աւերակ դարձուցին հողերը: Անոնք սպաննեցին աչքաուու մարդիկը եւ անոնց ունեցածները կողոպտեցին: Ասոնց կազմած խումբերը աւազակային խումբեր էին որոնք յաճախ իրարու հետ կը կուռէին: Անոնց գործերուն արդիւնքը եղաւ սովը եւ սրով աւերումը: Կործանումը թշուառութեան հետ ընդհանուր երեւոյթ ստացաւ, մինչեւ որ Երուսաղէմի տաճարը թշնամիներու կողմէ մոխիրի վերածուեցաւ: Բայց այդ ապստամբները իրենք իսկ կործանեցան երբ հին սովորութիւնները փոխել եւ նորերը ներմուծել ուղեցին: Այսպէս, Յուզան ու Սաղուքը որոնք չորրորդ վարդապետութիւն մը մէջտեղ բերին ու շատ



հետևորդներ ունեցան, ստեղծեցին անդամանելի աւերածութիւն մը»:

Նոյն գլխուն մէջ Յովսէփոս այս անգամ պահ մը յարգանքով կը խօսի ջերմեռանդներու կուսակցութեան մասին, մտնալով իր դատապարտութեան փորձը: «Այս չորրորդ վարդապետութիւնը (միւս երեքն էին փարիսեցիները, սաղուկեցիները եւ էսսենեանները) մէջտեղ հանողը եղաւ զալիլիացի Յուզան. ջերմեռանդները համաձայն էին փարիսեցիներուն, միայն թէ ասոնք յամաւ եւ խոր սէր մը կը տածէին ազատութեան համար եւ կը յայտարարէին թէ Աստուծմէ զատ ուրիշ տէր կամ իշխան չանշնալու չէ եւ մարդ էակը գերութեան լուծին տակ մնալու չէ: Անոնք կը նախընտրէին ենթարկուիլ ամենասոսկալի չարչարանքներու քան թէ ուրանալ իրենց դաւանանքը: Հերոսական այն ոգին որ անոնք ունէին եւ այն տոկունութիւնն ու կամքը զոր անոնք ցոյց կուտային տանջանքներու պահուն, դժուար է նկարագրել: Անոնց եռանդն ու կատաղութիւնը փոխանցիկ ախտի նման վարակեր էր ամբողջ ժողովուրդը, այնպէս որ կառավարիչ Գեսսիուս Ֆլորբոս (64-66 Յ. Ք.) իր իշխանութիւնը չարաչար գործածելով գերազանցեց հռովմէացիները եւ զանոնք մղեց յուսահատ դիմադրութեան»:

Հռովմէական լուծը որքան ճնշիչ դարձաւ, նոյնքան մեծցաւ ժողովուրդին յուսահատութիւնը եւ մասսաները նոյնքան խոր զգուանքով հեռացան փարիսեցիներէն ու հետեւեցան ջերմեռանդներուն, որոնք բացարձակապէս յայտնի չերտաւորում մը ցոյց տուին իրենց գործերով: Այդ գործերէն մէկն էր մտային յափշտակութիւնը որ ճեղքուածք մը կը բանար հին մտայնութեան մէջ: Իրերու խոր ծանօթութիւնը արհամարհուած բան մըն էր, նոյնիսկ սոսկական փափաք մըն ալ չէր մարդոց մօտ: Հրեայ ժողովուրդը որ կախուած էր ընկերային ուժերէն, այդ ուժերու բնոյթը չէր հասկնար, անոնք իրեն կը թուէին կախարդական, այդպիսով քուլելով դէպի յուսահատութիւն՝ սեւէ դասակարգէ աւելի, նա կ'ուզէր բռնել յարզի շիւղը նոյնիսկ իր ազատութեան հասնելու համար. ասով նա հաւատաւորը դարձաւ հրաչքներու, կապուեցաւ մեսիայի մարգարէութեան եւ բոլորովին սպէս մնաց գործնական պայմաններուն, որոնցմէ հեռանալով կը փնտռէր անբնականը:

Ամէն մէկ կատգամ մարդ որ քանի մը հետևորդներ կրնար հաւաքել իր շուրջ, ինքզինք կը յայտարարէր մեսիա եւ կը փորձէր մի ինչ որ հրաչք: Ասոնցմէ մէկն էր մարգարէ Թիւդաս: Ասոր օրով Երուսաղէմի կառավարիչն էր Փազուս (44 Յ. Ք.): Թիւդաս իր գորախումբով եկաւ Յորդանան ուր ճակատելով Փազուսի հեծե-

լագորքին չարաչար պարտուեցաւ եւ դերի բռնուելով գլխատուեցաւ:

Գաւառապետ Ֆելիքսի ատեն (52-60 Յ. Ք.) այս մտային յափշտակութեամբ տարուողներու գործունէութիւնը աւելի ու աւելի ընդհանրական երեւոյթ ստացաւ:

Այժմ տեսնենք թէ Յովսէփոս ինչ կ'ըսէ այդ մասին:

«Չարագործներու խումբ մը կար. ասոնք մարդասպաններ չէին, բայց անաստուած մտածումներ ունէին եւ Երուսաղէմը դարձուցեր էին անհանգիստ ու անապահով տեղ մը: Անոնք այնքան զբաւիչ խաբերաններ էին որ աստուածային յայտնութեան դիմակով ամէն տեսակ կախարդական բաներ կը քարոզէին եւ ժողովուրդը կը զրգոնէին ապստամբելու: Անոնք ժողովուրդը կը տանէին անապատը հաւաստելով որ Աստուած պիտի առաջնորդէր զիրենք դէպի ազատութիւն: Ֆելիքս գուշակելով որ դա ապստամբութեան նախապատրաստութիւն մըն է, իր հեծելագորքը զրկեց անոնց ետեւ եւ զանոնք ջարդել տուաւ:

«Տակաւին ուրիշ աւելի մեծ դժբախտութիւն մը բերաւ հրեաներու գլխին Եգիպտոսէն եկող կեղծ մարգարէ մը (եգիպտացի հրեայ մը) որ յաջողեցաւ իր կախարդական ձեւերով ժողովուրդին ուշադրութիւնը գրաւել եւ ինքզինք յայտարարել որպէս մեսիա: Այս մարդը 30.000 հետևորդներ ունեցաւ եւ զանոնք տարաւ անապատը, այսպէս կոչուած Ձիթենեաց լեռը, ուրիշ պիտի յարձակէր Երուսաղէմի վրայ եւ յաղթէր հռովմէացիներուն հաստատելով իր իշխանութիւնը: Ֆելիքս այս լուրը առածին պէս հռովմէացի զինուորներով ինկաւ անոր ետեւ: Ժողովուրդը չկրցաւ կռուիլ: Կեղծ մարգարէն պարտուեցաւ ու փախաւ, մնացեալները ծածկուեցան ու պահուեցան գիւղական շրջաններու մէջ: «Հազիւ թէ այս ապստամբութիւնը զսպուեցաւ, վարակուած մարմնէ մը կարծես նոր նեխածութիւն մը ծաղկեցաւ: Մի քանի կախարդներ եւ ոճրագործները երեւան եկան նոր համակիրներով եւ կոչ ըրին որ ամէն ոք իր ազատութեան համար պէտք է կռուի: Անոնք մահուան սպանալիքով զիմեցին անոնց որոնք կը տատամէին, կը վարանէին եւ կ'ուզէին հպատակիլ հռովմէական իշխանութեան: Ստրկանալու մէջ կամքի ազատութիւն չի յարգուիր, կ'ըսէին անոնք. հռովմէական լուծը պէտք է փշրել. ով մեզի հետ չէ, պէտք է մեռնի: «Անոնք անցան հրէական հողերը, կողոպտեցին հարուստներու տուները, մորթեցին բնակիչները, կրակի տուին գիւղերը, աւերեցին հողերը եւ տարածեցին թշուառութիւն եւ աւերածութիւն»:

Երուսաղէմի մէջ հռովմէական զինուորական ուժին դէմ ա-



պըստամբութիւնը զիւրին բան չէր: Այն ատենները պայթուցիկ նիւթեր չկային, տեղորոշման գէնքն էր կոր դաշոյն մը զոր կը պահէին իրենց վերարկուին տակ: Այս դաշոյնը (սիկա) իրենց տուաւ սիկարեհաններ անունը: Այս կատարած մարդիկը որոնք ժողովուրդին անունով կը գործէին, իրենց ճնշողներու դէմ խտացած կատարութիւնն էր զոր կ'արտայայտէին: Յովսէփոս որպէս ակա- նատես կը պատմէր բաներ մը որոնք կապուած են Յուդայի երկրի երկու կառավարիչներու գործերուն շուրջ Երուսաղէմի կործանու- մէն առաջ: «Յեսողուս կառավարիչ եղաւ (60-62 Յ. Ք.): Ան շատ լուրջ փորձեր քրաւ կուտելու աւազակներուն դէմ որ աւերած էին երկիրը ու կը սպաննէին հրեաները: Իր յաջորդը, Ալքինոսս (62-64) անոր օրինակին չհետեւեցաւ. ինք դարձաւ աւազակներու հրամա- նատարը եւ սկսաւ սեփականազրկել հարուստները եւ ծանր սուրբեր դրաւ անոնց վրայ: Ան բանտէն հանեց այն աւազակները որոնք իրեն գրամ կուտային: Հարուստները իրենց վախէն անհամար ընծաներ կուտային Ալքինոսի անկէ պաշտպանուելու համար, բայց հակա- ոսակ ատոր ամէն աւազակապետ խումբի մը գլուխը անցած կը շա- րունակէր իր շահատակութիւնները, անանկ որ հարուստները ստիպուած էին փորձել թէ աւազակները սիրաշահիլ եւ թէ կառա- վարիչը: Ոչ ոք կրնար գանդատիլ, որովհետեւ ապականութիւնը ընդհանրացած էր:

«Ալքինոսի յաջորդը Յլորուս (64-66) դերազանցեց իր նա- խորդները: Ալքինոս վարագոյրի ետեւ կը կատարէր իր շարա- գործութիւնները, իսկ Ֆլորուս հրապարակաւ առաջ կը տանէր իր աւազակութիւնը: Ան կառավարիչ քլլալէ աւելի եղաւ զահիւ մը: Ուր որ պէտք էր մի քիչ զթութիւն վարուեցաւ գաղանային ան- գթութեամբ. մէկը չկար որ դերազանցէր զինքը սուտով ու խաբե- րայութեամբ: Ան ոչ միայն անհատներու արիւնը քամեց, այլեւ քաղաքները կողոպտեց ու աւերեց: Ան միայն մոռցաւ յայտարարել որ որեւէ մէկը կրնար գողնալ, կողոպտել, միայն թէ իրեն բաժին մը տալու էր: Այսպէսով զրեթէ ամբողջ երկիրը ամալացաւ, ո- րովհետեւ շատեր ձգեցին ու անցան օտար երկիրներ»:

Վերջապէս Յլորուսի օրով պայթեցաւ մեծ ապստամբու- թիւնը. ամբողջ ժողովուրդը ոտքի ելաւ իր շարագործներուն դէմ: Երուսաղէմ ապստամբեցաւ երբ Յլորուս փորձեց տաճարը կողոպ- տել Մայիսին (66 Յ. Ք.): Պէտք է ըսել թէ ապստամբները ընակ- չութեան ստորին խաւերը կը ներկայացնէին: Հարուստներու մեծ մասը, փարիսեցիներն ու սադուկեցիները, ապստամբութենէն կը վախնային եւ կ'ուզէին խաղաղութիւն: Այսպէսով սկսաւ քաղա-

քացիական պատերազմը: Պատերազմական կուսակցութիւնը յաղ- թական էր. խաղաղասէրները պարտուեցան փողոցի կռիւներուն մէջ: Հռովմէական պահակազորքը ստիպուեցաւ քաղաքը թողուլ եւ հեռանալ: Ապստամբներու կռիւի ետանդը այնքան մեծ էր որ նոյն- իսկ սուրիացի պատուիրակ Կեսաոս Գալուսի 30.000-նոց բանակը փախուստի մասնեցին: Թէ՛ Պաղեստինի եւ թէ՛ անոր սահմաններէն դուրս հրեաները ապստամբեցան: Ազեքսանդրիոյ մէջ, օրինակ, հրեաները երբ ապստամբեցան Եզիպտոսի ամբողջ Հռովմէական զինուորական ուժը հազիւ կը բաւէր այդ ապստամբութիւնը զսպե- լու համար: Տարակոյս չկար որ հրեաները Հռովմի չէին կրնար յաղթել, անոնք շատ աղար էին: Բայց առան մը որոշ յաջողութիւն- ներ ձեռք բերին, որոնք սակայն երկար կեանք չունեցան: Այդ յա- ջողութեանց նպաստեցին պայմաններն ալ, որովհետեւ հրէական պատերազմի երկրորդ տարին կայսրութեան արեւմտեան բաժնի զինուորները ապստամբեցան Ներոնի դէմ. լեզէոններու միջեւ կը- ունէրը շարունակուեցան մինչեւ Ներոնի մահը (Յունիս 9, 68 Յ. Ք.): Վեսպասիանոս որ ընդհանուր հրամանատարն էր, հրեա- ները կ'ուզէր խաղաղեցնել. ան աւելի ուշադրութիւն դարձուց ա- րեւմուտքին ուր էր կայսրութեան ծանրութեան կեղբոնը, քան թէ հրէական խռովութեանց: Բայց ապստամբները չկրցին օղտագոր- ծել իրենց ներկայացած պատահութիւնը: Հարուստ եւ կըթուած դասակարգը որ պատերազմական զեկը կրնար իր ձեռքը առնել, կը մտածէր հաշտութեան զետիւն մը գտնել թշնամիին հետ, մինչ ժո- ղովուրդի խոնարհ դասակարգը անհաշտ էր եւ կ'ուզէր կռիւը շա- րունակել մինչեւ վերջնական յաղթանակ: Ապստամբները խեղճն նկատեցին որ վերին դասակարգը դառն քաղաքականութեան կը հե- տեւէր. ատոր համար ջերմեռանդները զինուորական ուժը իրենց ձեռքը առին: Ժողովրդական մարդիկը զրութեան աչքը դառնալու համար ամէն միջոց գործածեցին եւ ուղեցին դուրս քշել նախկին առաջնորդները որոնք յամառօրէն չէին ուղեր զիջիլ իրենց դիրքը: Ատիկ սկսաւ արիւնալի քաղաքացիական պատերազմը Երուսաղէմի մէջ (67-68 Յ. Ք.), պատերազմ մը որու ընթացքին կատարուած խժժութիւնները մեղի կը յիշեցնեն Փրանսական յեղափոխութեան առան կատարուածները: Միայն տարբերութիւնը այն է որ Յրան- սայի մէջ տեղորոշ սկսաւ յեղափոխութիւնը ազատելու համար, իսկ Երուսաղէմի քաղաքացիական կռիւներուն մէջ յեղափոխութիւնը ազատելու միտք չկար. կատարուածը յեղափոխութիւն չէր, այլ ապստամբութեան պատրաստութիւն մը Հռովմի դէմ: Հրեաներէն մաս մը ապստամբութեան կողմն էր, միւս մասը՝ անոր հակառակ:



Այդ պայմաններուն տակ տեւորը կոչուած էր աւելի երկարել եղբայրական կռիւը, աւելի խորացնել ներքին տանջանքները եւ վերջին յաղթողին տալ աւելի խժովութիւններ զործելու իրաւունքը: Բայց բոլոր այդ տխուր իրողութեանց մէջ մէկ նշանակելի բան մնաց. հրեաները կանդնեցուցին արձան մը, նուիրումի, հերոսութեան եւ տոկունութեան արձան մը, որուն նմանը հին դարերուն տեսնուած չէր բնաւ:

Երուսաղէմի հրեայ բնակչութիւնը հակառակ քաղաքացիական պատերազմին զիւցազնական կռիւ մղեց ամբողջ երեք տարի, մինչեւ Սեպտեմբեր ամիսը (70 թուականին Յ. Ք.): Այո, անհասարկ կռիւ մը զերազանց թիւով թշնամիին դէմ, ուր հրեաները ցոյց տուին անպատմելի քաջութիւն, անդերազանցելի յամառութիւն եւ ուղղական անընկճելի ոգի փայլուն ձիրքերով: Ամէն մի մատնաչափ հողի վրայ զիտիներ զիզուեցան. Երուսաղէմի փողոցները ներկուեցան արիւնով եւ հերոս ժողովուրդ մը անհետացաւ աւերակներու մէջ:

Քահանաները, զպիւրները, վաճառականները մեծ մասով իրենց օձիքը ազատեցին պաշարման ընթացքին: Հերոսներն էին որ մնացին ու կռուելով մեռան, իրենց ետեւ թողնելով յաւէտ յիշատակուելու արժան յուշարձան մը:

Այսպէս էր այդ ատենուան հին աշխարհի մթնոլորտը, որուն մէջ ծագում առին քրիստոնէական միաբանութիւնները:

Ռոման եթէ պատմութիւնը իր հարտգատ բնականութեամբ ներկայացնել ուզէր իր Յիսուսի կեանքը զբքին մէջ, նա Պաղեստինը պիտի շպառակեացնէր որպէս առատութեան, ուրախութեան ու հանգստի մի երկիր:

Բայց զարմանալի ոչինչ կայ. երբ Յիսուս մը իրական ու պատմական անձնաւորութիւն կ'ըլլայ, բնական է որ Պաղեստինն ալ երջանկութեան երկիր կը դառնայ:

ԵՍՍԵՆԷՍԵԱՆՆԵՐԸ

Մենք ընդունելու ենք որ քրիստոնէական կրօնի արշալուսային շրջանին, երբ Յուդայի երկիրը մատնուած էր արեան ու աւերումի, անդին տակաւին մարդիկ կային որոնք նուիրուած էին սիրոյ եւ խաղաղութեան իտէալին: Այս մարդիկը եսսեներ աղանդին հետևորդներն էին:

Եսսենէսեան աղանդը որ համաձայն Յովսէփոսի երեւան եկած է 150 թուականին (Ն. Ք.) շարունակեց իր գոյութիւնը մին-

չեւ Երուսաղէմի կործանումը, որմէ յետոյ լուծուեցաւ եւ անյայտացաւ:

Ջերմեանդներուն նման եսսենէսները պրոլետարական ծագում ունին, բայց անոնցմէ կը տարբերին նկարագրով: Ջերմեանդները ընկերային տեսութիւն մը չզարգացուցին, կը հաւատային ապստամբութեան: Անգամ մը որ զէնքի ուժով հասնէին իրենց նպատակին ու Երուսաղէմը անցնէր Հռովմի տեղը, այն ատեն հրեաները տիրապետող կը դառնային եւ կ'ազատուէին իրենց յուսահատ կացութենէն, եւ այդ պիտի ըլլար մեսիայի մը զալուատովը: Անոնց մօտ իրենց ազանդին պրոլետարական բնոյթը հայրենասիրական մոլեռանդութեան ու զործունէութեան մէջ էր: Բայց բոլոր հրեայ պրոլետարները յօժար չէին սպասելու մեսիայի մը գալլատեան որպէսզի աշխարհին տիրական նոր Երուսաղէմ մը երեւան դար: Շատեր կ'ուզէին իրենց գրութիւնը բարուքել մէկ անգամէն եւ երբ քաղաքական դէպքերը անմիջական դարման մը չէին հասցներ, անոնք հարցը կեղբոնացուցին անտեսական կազմակերպութեան մը շուրջ: Հաւանական է որ եսսենէսերու ծնունդը կապուած է այս գիրքին հետ: Բայց անոնց կազմակերպութեան բնոյթը շատ պարզ էր: Ան մակարանեալ կոմունիզմի մէկ ձեւն էր: Յովսէփոսի օրով 4 հազար եսսեններ կային որոնք կը բնակէին զանազան զիւղերու եւ Յուդայի երկրի քաղաքներու իրենց եղբայրական միաբանութեան տուներուն մէջ: «Անոնք միասին կը բնակէին, կ'ըսէ Ֆիլօ, կազմակերպուած ընկերութիւններով, ազատ միութիւններով, ուտելիքի ակումբներով եւ կը զբաղուէին հասարակուրդի համար զանազան գործերով: Ասոնցմէ ոչ մէկը կը փափաքէր սեփականատէր ըլլալ, ըլլար տուն, գերի, հող, արջառ կամ որեւէ բան որ հարստութիւն կը շինէր: Անոնք իրարու մօտ կուգային, միասին կը գործէին, բոլորն ալ հասարակաց օգտին համար: Իրենց աշխատանքի փոխարէն ստացած զրամներ կը յանձնէին ընտրուած խնամակալի մը որ կը գնէր ինչ որ պէտք էր սպրեկու համար»:

Մենք կրնանք ենթադրել որ ամէն ոք կ'արտագրէր ինքնիրեն կամ կը գործէր օրավարձով: Յովսէփոս հետեւեալ ձեւով կը նկարագրէ անոնց կեանքը: «Առտուայ աղօթքէն յետոյ անոնք ազատ կ'ըլլան իրենց վերատեսուչներէն եւ իւրաքանչիւրը կ'երթայ իր սիրած ու սորված գործին մինչեւ ժամը 11-ը կէսօրէն առաջ: Կէսօրին անոնք կը հաւաքուին որոշ տեղ մը ուր կը հապուին քթանէ հապուստներ. հոն իրենց մարմինը կը լուան պաղ ջուրով: Մաքրուելէն վերջ կը մտնեն ճաշարահար ուր լացի իրենց ազանդէն ոչ ոք կրնար մտնել: Հոն կը մտնեն այնքան մաքուր եւ սրբակեաց,



իրբ թէ տաճարը ըլլար ան: Բոլորն ալ լուռ կը նստին. հացադործը կուզայ նախ եւ ամէնուն առջեւ հաց կը դնէ. խոհարարը կուզայ յետոյ եւ ամէնուն առջեւ գոգամանով կերակուր կը դնէ. յետոյ քահանան կուզայ եւ կ'օրհնէ սեղանը: Որեւէ մարդ չի կրնար դաշիւ կերակուրին մինչեւ որ աղօթքը վերջանայ: Կերակուրէն յետոյ անոնք շնորհակալութիւն կը յայտնեն եւ կը գոգեն զԱստուած որ թէ կերակուրէն առաջ եւ թէ վերջ իրենց գոյութիւնը պահեր է: Անկէ յետոյ անոնք իրենց վերաբերմանը մէկ կողմ կը դնեն որպէս նուիրականութիւն եւ կ'երթան իրենց դործին մինչեւ իրիկուն: Անոնք իրենց ընթրիքը կ'ընեն այնպէս ինչպէս ճաշը, եւ եթէ հիւրեր ունենան (եւ հիւրերը իրենց միաբանութեան անդամները պիտի ըլլան, ոչ թէ դրոսեցիները) այդ հիւրերը իրենց սեղանակից կ'ըլլան առանց վճարումի: Աղաղակ կամ խոտովութիւն երբեք չի պատահիր անոնց հաւաքոյթներուն մէջ. որեւէ բան որ անհաճոյ է մէկուն, սրբապղծութիւն կը համարուի բոլորին համար: Անոնք իրարու հետ կը խօսին հանդարտօրէն. մէկը երբ խօսքը չէ լրացուցեր, միւսը չի խօսիր. բոլորը մէկ անդամէն խօսել, զիրար ընդմիջել երբեք չի պատահիր: Ամբողջ շէնքը առեղծուածային խաղաղութեան ու հանդարտութեան մէջ կը պահուի: Անոնց լռակեաց կեանքի նպատակն է իրենց մշտական շարժումներէն պահպանման ծրարադիրը. անոնք այնքան կ'ուտեն, այնքան կը խմեն որքան որ կը պահանջէ իրենց գոյութեան պահպանումը: «Որպէս օրէնք անոնք իրենց վերատեսուչներու հրահանգներէն դատ ուրիշ աշխատանք չեն կատարեր. միայն իրարու իրենց զգացումները կ'արտայայտեն համակրութեամբ կամ գթասրտութեամբ երբ կը տեսնեն որ յուսահատ մէկը իրենց օգնութիւնը կ'ուզէ, այն ատեն անոր կ'օգնեն, նոյնպէս աղքատներուն ուտելիք կուտան: Բայց իրենց բարեկամներուն կամ ազգականներուն որեւէ բան չեն տար առանց իրենց վերատեսուչներուն թոյլտուութեան»:

Կոմունիզմը անոնց մէջ ծայրագոյն աստիճանին հասած է նոյնիսկ հանդերձանիներուն մէջ: Ֆիլօ կը տեղեկացնէ մեզի հետեւեալը. «Ոչ միայն անոնց ուտեստեղէնը, այլեւ հագուստեղէնը հասարակաց սեփականութիւն են: Թանձր վերաբերումներ կան ձրմբան համար, թեթեւ վերաբերումներ՝ ամբան համար. ամէն ոք թոյլատրուած է գործածել մէկն ու միւսը իր ընտրութեան համաձայն, որովհետեւ ինչ որ կը պատկանի մէկուն, կը պատկանի բոլորին, մինչ բոլորին սեփականութիւնը կը պատկանի ամէն մէկուն»:

Անոնք հակառակ էին գերեզմանութեան: Երկրագործութիւնը իրենց գլխաւոր զբաղումն էր, բայց անոնք կը գործէին նաեւ

որպէս արհեստաւոր: Անոնց արգիլուած էր պերճասիրական առարկաներ արտադրելը, ինչպէս նաեւ պատերազմի գործիքները եւ վաճառականութեան նպաստող ապրանքներ որոնք շահագործման կը ծառայեն:

Անոնց կոմունիստական դրութիւնը սպառման սկզբունքին վրայ հաստատուած էր եւ ոչ թէ ընկերային արտադրողականութեան: Այս վերջնոյն մասին ճիշդ է որ մտածուած էր, բայց կարելի եղած չէր ընկերային արտադրութեան դիժը ընդհանրացնել: Անհատ մը կը գործէր աշխատավարձով կամ որպէս արհեստաւոր բան մը կը շինէր ու կը ծախէր, ու այդ գործերը տեղի կ'ունենային ընկերային կազմակերպութեան շրջանակէն դուրս: Միւս կողմէ այդ միաբանութեան բոլոր անդամները միասին կը բնակէին, միասին կը ճաշէին ու ասով էր որ անոնք միացած կը մնային իրարու: Ասիկա հասարակաց տնայարութեան կոմունիզմն էր որ կը պահանջէր առանձնացած տնայարութեանէն հրաժարում, հրաժարում նաեւ առանձնացած ընտանիքէ, հետեւաբար եւ անհատական ամուսնութենէ:

Իրողութիւն է որ սպառումի կոմունիզմի վրայ հաստատուած կազմակերպութեան մը մէջ ուր տիրոջն է հասարակական տնայարութիւնը, գժուար է միակնութեան հետեւիլ եւ ասոր համար մարդիկ կ'ուզեն ջնջել զայն: Այդ միակնութիւնը ջնջելու համար երկու միջոց կայ, մին միւսին գլխովին հակառակ: Մին ծայրայեղ ժողովարարութիւնը, միւսը ծայրայեղ ցոփութիւնը: Եւ զեռ այս երկու միջոցներն ալ հաւանական կը թուին որ կողք կողքի կենան կոմունիստական կազմակերպութեան մէջ: Եստէններու ժամանակէն ինչպէս քրիստոնէական կոմունիստական աղանդաւորներու մէջ, մենք կը գտնենք որ ամուսնութենէ հրաժարուելու ձգտում մը կայ եւ այդ ձգտումը եղած է ի նպաստ կամ խստապահանջ ամուսնութեան եւ կամ կիներու հասարակացման: Այս բանը աննշմարելի պիտի ըլլար եթէ այս կոմունիզմը եւ իր մտային վերնաշէնքը կառուցուած ըլլային սոսկ զազափարակսն տեսակէտներու վրայ, բայց շատ դիւրին է բացատրել երբ մենք նկատի առնենք անոր տնտեսական պայմանները: Եստէններու մեծամասնութիւնը բնաւ չէր հաւաներ զպղիւ կնոջ մը:

Այս առթիւ Յովսէփոս կը գրէ. «Անոնք կ'արհամարհեն ամուսնութիւնը բայց կ'որդեգրեն օտար տղաք, պայմանաւ որ անոնք ըլլալու են շատ փոքր որպէսզի սորվին իրենց օրէնքներն ու կերպերը: Միեւնոյն ատեն չեն ուզեր բոլորովին ջնջել կամ արգիլել ամուսնութիւնը եւ սերնդագործութիւնը, բայց կ'ըսեն թէ մարդ



մը պէտք է ինքն իր կամքին վրայ իշխէ, ժուժկալ ըլլայ կիներէն, որովհետեւ կին մը մէկ մարդով չի գոհանար: Անոնք կին չեն առներ, գերի ալ չեն պահեր. անոնք կը խորհին թէ գերի պահելը արդար բան մը չէր, իսկ կին պահելն ալ կռիւի ու անհամաձայնութեան զուռ կը բանայ»:

Երկու պարագային ալ Յովսէփոս նկատի կ'առնէ զործնական նկատումներ ամուսնութեան հակառակութեան որպէս պատճառ քան թէ խստակեցութեան զրգումը, եւ ինք հասարակաց զիծ մը շիներ է թէ սաղուկեցիներուն, թէ եստէններու եւ թէ փարիսեցիներուն համար: Յովսէփոս այս ձեւով կարող եղած է մեղի իմացնել եստէններու կանանց հանդէպ ունեցած հակառակութեան պատճառը, զոր մենք վերջնական ու միակ պատճառը չենք կրնար նկատել: Մարդոց զործերը կապուած չեն պարզ եւ երեւութական պատճառներու հետ: Անոնց ետեւն են հոգեբանական զրգապատճառները, եւ այդ հոգեբանական զրգապատճառները կապուած են տրնտեսական պայմաններու հետ: Եստ քիչեր այս կէտը նկատի կ'առնեն: Մեր պատմաբանները պատմական զէտքերու եւ հանդամանքներու պատճառները կը սիրեն փնտռել սոսկական երեւոյթներու մէջ: Անոնք կը դատապարտեն իրական զրգապատճառները փնտռելու փորձը որպէս քմահաճ «մտակառուցում»:

Ով որ կոմունիզմի մասին մի քիչ ծանօթութիւն ունի, կըրնայ հասկնալ թէ ոչ թէ կանացի բնութիւնը եղած է որ եստէնները հեռացուցեր է ամուսնութեան զազափարէն, այլ տնայարական կոմունիզմի բնոյթը: Ուր որ այրեր ու կիներ միասին կ'ապրին տրնայարական հասարակութեան մէջ, հոն բնական կը դառնայ խառն կենակցութիւնը եւ սեռային յարաբերութեան հետեւանք նախանձն ու անհամաձայնութիւնը: Այդ պարագային կամ այն է որ մարդիկ չուզեն պահել տնայարական հասարակութիւնը զրութիւնը եւ կամ չընդունին միակնութիւնը: Մէկ խօսքով, կամ միասին ապրիլ խառն կենակցութեամբ, կամ առանձին ապրիլ միակնութեամբ: Եստէնները այսպիսի զրութիւն մը հաստատել էին որ ոչ մէկ անհաճոյ զէպը կը յառաջանար իրենց կազմած հասարակութիւն մէջ: Նախանձ, անհամաձայնութիւն, սեռային սանձարձակութիւն անծանօթ էին եստէններուն համար, ինչպէս որ այդպիսի մի գոյալիճակ անհաւասար է կապիտալիստական ամենազարգացած երկիրներու մէջ ապրողներուն համար:

Յովսէփոս այս մասին մեղի կը տեղեկացնէ հետեւեալը. «Ուրիչ դանազանութիւն մը եւս կայ որ եստէնները կը բաժնէ փարիսեներէն, այդ ալ ամուսնութեան զազափարն է: Անոնք որ սեռային

յարաբերութենէն կը խորշին, կը զրկուին կեանքի կարեւոր զործոն գերէն, սերնդազործութիւնը կը պակսի, եւ եթէ ամէն մարդ նոյնը մտածէ, մարդկութիւնը կը ջնջուի աշխարհէն: Եստէնները, ուրեմըն, չեն առաջնորդուիր սեռային անսանձ սուփանքի զրգումով, այլ պարզ սերնդազործութեան զազափարով: Եստէնեան ազանդին հետեւող անդամը կ'ամուսնանայ, բայց անոր ամուսնութիւնը փարիսեցիի մը կամ սաղուկեցիի մը ամուսնութեան չի նմանիր: Եթէ իր կինը մէկ, երկու, կամ երեք տարիէն յղի չմնայ, նա կրնայ ուրիշ կին մը գտնել իր միաբանութեան մէջէն: Երբ կինը յղի մընայ, զա կը նշանակէ թէ իր գերը վերջացեր է. նա իր յղի կնոջ չի մօտենար: Ուեւէ եստէն իր ազանդին հետեւող ընկերոջ մը կինը իր հարազատ քոյրը կը նկատէ եւ անոր սուփանքի զրգումով չի նայիր»:

Յովսէփոսի այս նկարագրութիւնը այնքան յստակ չէ: Յամենայն զէպս, մենք անով այն զազափարը կ'ունենանք որ եստէններու ամուսնութիւնը հասարակօրէն ըմբռնուած ամուսնութենէն կը տարբերէր: Կանանց վրայ կատարուած սերնդազործական փորձարկութիւնը մեղի ենթադրել կուտայ որ կիները մի տեսակ հասարակաց սեփականութիւն եղեր էին. բայց երբ նկատի ունենանք որ այր մարդիկն ալ իրենք զիրենք սերնդազործութեան մեքենային մէկ մասը կը նկատէին, ուրեմն նժարը իր հաւասարակչութիւնը կը պահէր եստէններու ձեռքով: Այստեղ կը վերնայ գերիշխանութեան ու ստորազատութեան հարցը:

Սոյն ընկերային հիմքերու վրայ բարձրացող զազափարական վերնաշէնը մասնաւոր յիշատակութեան արժանի է այն բանին համար որ կամքի ազատութիւնը աննկատ կ'առնուի. մի բան որուն մէջ կը յայտնաբերուի եստէններու զազափարական տարբերութիւնը: Անոնք հակառակ էին սաղուկեցիներուն որոնք կը հաւատային կամքի ազատութեան, մինչ փարիսեցիները միջանկեալ զիրք մը բռնել էին:

Յովսէփոս կ'ըսէ. «Մինչ փարիսեցիները կ'ընդունին թէ ամէն ինչ կը յառաջանար բախտէն, նոյն ատեն անոնք չեն մերժեր ընդունիլ մարդու ազատ կամքը եւ կը յայտարարեն որ Աստուծոյ հաճութեամբ է որ բախտի վճիռը կը խառնուի մարդուն ազատ կամքին հետ եւ ատով մարդը կը կատարէ իր բարի կամ չար զործը: Եստէնները, միւս կողմէ, ամէն ինչ բախտին կը վերադրեն: Անոնք կը հաւատան թէ մարդուն ոչինչ կը վիճակուի եթէ բախտը չհրամայէ: Բայց սաղուկեցիները բախտը նկատի չեն առնիր: Անոնք կ'ըսեն թէ ատանկ բան գոյութիւն չունի. բախտը չէ որ կը



կառավարէ մարդուն ճակատագիրը: Անոնք սովէն ինչ կը վերադրեն մարդուս ազատ կամքին. երբ մէկու մը լուս բան մը կը հանդիպի, դա իր ազատ կամքով գործադրած վարժունքին արդիւնքն է, իսկ հակառակը՝ իր յիմարութեան արդիւնքը:

Ընթերցողը նկատի առնելու է որ այս տարրեր տեսութիւնները կը ներկայացնեն տարրեր դասակարգեր: Եւ թէ մենք պատմութիւնը ուսումնասիրենք մատերիալիստական դժով, պիտի տեսնենք որ ազատ կամքի դադափարը իշխող դասակարգի սեփականութիւնն է, մինչդեռ ճնշուած դասակարգերը կառչած են անազատ կամքի դադափարին:

Ազատ կամքի դադափարը զիւրութիւն կուտայ իշխող դասակարգին ստանձնել դատաւորի եւ պահապանի պաշտօն ճնշուող դասակարգերու վրայ, այն համոզումով որ իրենք բարոյական գերազանցութիւն ունին եւ նոյն ատեն իրաւունք իրենց դէմ դրուի բարձրացնողներուն զայրանալու եւ դանոնք պատժելու իրենց ազատ կամքի թելադրանքի միջոցներով: Բայց աղքատ ու ճնշուած մասսաները պէտք է զիտանան որ իրենք ճակատագրի ու պայմաններու գերի են եւ անոնց որոշումները իրենց համար անքննելի են: Ասոր համար գարմանալի չէ որ իշխողները յորիներ են իրեն առածը. «Ամէն մարդ իր բախտին ցարտարապետն է»:

Եստէնները իշխող դասակարգին հակառակ ըլլալով չէին ընդուներ ազատ կամքի դադափարը, բայց, ինչպէս ըսինք, կը հաւատային բախտին: Ասով ըսել չենք ուզեր թէ իրենք ձեռնածալ նստելու էին ու սպասելու էին որ բախտը անձանօթ անկիւնէ մը յանկարծ երեւան դար եւ օգնէր իրենց: Ոչ, երբեք: Անոնք կ'ըսէին թէ մարդիկ պէտք է գործեն ընկերաբար եւ պէտք է գործեն միշտ ձգտելով դէպի լաւը, դէպի լաւագոյնը, բայց նոյն ատեն պէտք է զիտանան ներկայացած պատեհութիւնը օգտագործելու ժամկէտը եւ օգտագործելու եղանակը: Ուրեմն, դա կը նշանակէ որ անոնք բախտը կ'ըմբռնէին պատեհութեան իմաստով:

Մենք պէտք չունինք աւելի մանրամասնելու եստէններու ընկերային սահմանադրութեան իտէալիստական վերնաշէնքի բոլոր մասերը, թէեւ պատմաբանները այդ կէտին շատ կարեւորութիւն կուտան, որովհետեւ անոնք կը փորձեն իրենց խորհրդածութիւններով եստէնի դժգոմար վերադրելու փարիսեցիութեան, բուրգայականութեան եւ կամ պիւթագորեան վարդապետութեան:

Եստէնի դժգոմար արմատները գտնելու հարցը առանկով չի լուծուիր: Այդի մը ընկերային հաստատութիւնները կը ծրնին նոյն ազգին իրական կարիքներէն, ոչ թէ արտաքին նորաձե-

ուութիւնները ընդօրինակելու փորձերէն. այդ փորձերը արդիւնք են, ոչ թէ պատճառ: Տարակոյս չկայ որ մենք շատ բաներ կը սորվինք օտար երկիրներու ժողովուրդներէն կամ հին դարերէն, բայց մենք կ'ընդունինք միայն այնպիսիները զորս կրնանք գործածել համաձայն մեր կարիքներուն: Գերմանիան, օրինակ, հռովմէական օրէնքները որդեգրեց վերածնունդէն յետոյ, որովհետեւ անոնք հրաշալի կերպով կը գոհացնէին իշխող դասակարգի պահանջները: Երբ գործիք մը պատրաստ է, պէտք չկայ ժամանակ եւ ուժ վատնել ստեղծելու նոր մը, քանի որ այդ գործիքը ժողովուրդի մը գործնական կարիքներուն կը յարմարի:

Գեռ աւելին կայ. այն բոլոր ազդեցութիւնները որոնք որպէս թէ իրենց կնիքը դրոշմած են եստէնի դժի վրայ ըլլայ փարիսեցիութենէն, բուրգայականութենէն կամ պիւթագորեան վարդապետութենէն, խիստ կասկածելի բնոյթ ունին, ուսէ փաստ չկայ հաստատելու անոնցմէ մէկուն ազդեցութիւնը: Ընդհ է որ անոնց միջեւ նմանութիւններ կան, բայց այդ նմանութիւնները պիտի վերադրել այն բանին որ անոնք գրեթէ նոյն պայմաններէն ծագում առած են եւ նոյն փորձարկութեանց դիմած են զիրենք զիմաւորող հարցերը լուծելու համար:

Ամէնէն շատ ըմբռնելի կապակցութիւն մը կայ եստէններու եւ պիւթագորեաններու միջեւ: Յովսէփոս կը նշէ որ եստէններու կեանքը կը նմանի Պիւթագորասի կեանքին եւ այնքան առաջ կ'երթայ որ կ'ըսէ թէ Պիւթագորաս հրէական դադափարները ընդունելու հրապարակել է: Ասիկա խորհրդագրութիւն մըն է ներմուծուած Յովսէփոսի գրած պատմութեան մէջ հրեաները փառաբանելու համար:

Իրողութիւն է որ մենք Պիւթագորասի կեանքին շուրջ (582-500 Ն. Ք.) որոշ տեղեկութիւն չունինք, բայց հաւանական կը նրկատուի որ պիւթագորեանի դժգոմար առած է Աղեքսանդրիոյ մէջ եւ հանդիպել է մովսիսականութեան: Եւ հաւանական է որ երկուքն ալ, պիւթագորեանի դժն ու մովսիսականութիւնը, ծագում առած են նոյն աղբիւրէն՝ Եգիպտոսէն, որովհետեւ Եգիպտոսի մէջ շատ կանուխէն ընկերային էվոլուցիան բարձր աստիճանի հասած էր վաճառական հաստատութիւններ հիմնելու գծով:

Եթէ Եգիպտոսի հին մշակոյթը եւ անոր վատասերման երկարածիք ընթացառումը Հռովմի կայսրութեան միւս մասերէն աւելի կանուխ յառաջացուցեր է խորշանք հանդէպ կեանքին ու անհաստական սեփականատիրութեան եւ ցանկութիւն հրատարիլ աշխարհէն, այդ ցանկութիւնը ուրիշ ոչ մի տեղ այնքան նպաստաւոր



հող չէր կրնար գտնել որքան Եգիպտոսի մէջ, ուր անապատը շատ մօտիկ էր քաղաքակրթական կեդրոններուն: Կայսրութեան ուրիշ որեւէ մասին մէջ եթէ մէկը խոշոր քաղաքներէն հեռանար, պիտի երթար գիւղական շրջանը ուր տիրոջն էր հողատիրութիւնը: Այնտեղ եւս իր դէմ պիտի գտնէր անհատական սեփականատիրութեան ամէն տեսակի ճնշող ձեւերը. իսկ եթէ գիւղական շրջանէն ալ հեռանար, պիտի երթար ամառի տեղ մը քաղաքակրթութենէն մղոններով հեռու, եւ հոն իրեն համար ստեղծէր աշխատանքի ձեւ մը որուն նմանը մեծ քաղաքները չունէին: Եգիպտական անապատին, ինչպէս բոլոր միւս անապատներուն մէջ հողի անհատական սեփականութիւն չկար, եւ նոյն տեսն դժուար ալ չէր ապրել. կլիման չէնքի, հազուապէս, վառելիքի եւ պաշտպանութեան կարիքը չէր շեշտեր. յետոյ անապատը այնքան մօտ էր քաղաքին որ ճգնաւորը իր կեանքի կարիքները կրնար հայթայթել քաղաքի իր բարեկամներէն, հակառակ պարագային մէկ ժամ կրնար քալել եւ իրեն պէտք եղածները ունենալ մուրալով: Եգիպտոսը ատոր համար շատ կանուխէն սկսած է զարգացնել վանականի ձեւ մի տեսակ ճգնաւորական դրութիւն: Անկէ յետոյ Աղեքսանդրիոյ մէջ երեւան եկաւ նոր պիւթագորեանիզմը եւ վերջապէս Դ. դարուն (Յ. Ք.) նոյն քաղաքին մէջ քրիստոնեայ վանականութիւնը: Բայց Աղեքսանդրիոյ հրեաները իրենց յատուկ վանականներու միաբանութիւն մը դարգացուցին որ է աստուածիմաստութեան միաբանութիւնը: Փիլոսոփ տուած տեղեկութեանց նայելով անոնք կը հրաժարէին բոլոր ստացուածքներէ, ինչպէս կ'ընէր գիտունը. զանոնք կը բաժնէին իրենց ազգականներուն ու բարեկամներուն, կը լքէին իրենց եղբայրները, զաւակները, կիները, ծնողները, իրենց ծննդավայրը եւ կ'ապրէին իրենց զաղափարակիցներուն հետ: Այս ընկերակցութիւնները գտնուած են Եգիպտոսի շատ մը մասերուն, մասնաւորապէս Աղեքսանդրիոյ մօտերը: Ամէն ոք ինքնիրեն կ'ապրէր պարզ որջի մը մէջ, մօտիկ ուրիշներու. բայց իր ժամանակը կը յատկացնէր մաքուր խոկումներու: Անոնց կերակուրը, սնունդը շատ պարզ էր, հաց, աղ եւ ջուրը: Ծարաթ օրը բոլորը կը հաւաքուէին, մարդիկ եւ կանայք, ճաշարահի մը մէջ, սեռերը առանձին, եւ հոն կ'երգէին եւ յետոյ կը լսէին բարեպաշտական ուղերձներ: Անոնք կը դատապարտէին միւս ուսուցիչ, գինի խմել եւ գերի ունենալ. բայց զործի ալ չէին հաւատար եւ կ'ապրէին մուրալով իրենց բարեկամներէն: Հաւանական է որ Աղեքսանդրիոյ հրեաները աստուածիմաստութեան զաղափարները բերին Պաղեստին եւ որոշ ազդեցութիւն ունեցան եսսէներու վրայ, թէեւ այս երկուքը իրարմէ

շատ կը տարբերէին, որովհետեւ աստուածիմաստեանները ծոյլ էին եւ ուրիշներու աշխատանքով կ'ապրէին, թէեւ իրենցմէ աւելցածը կուտային կարօտեալներուն: Երկուքն ալ կը դատապարտէին մասնաւոր սեփականատիրութիւնը, բայց աստուածիմաստեանները զաղափար իսկ չունէին թէ այս աշխարհի իրեղէնները ինչ պիտի ընեն: Անոնք կ'ապրէին աշխատանքը ինչպէս եւ հաճոյքը. անոնք կ'ապրէին առանց արտադրութեան եւ սպառման առարկաներու, բայց ինչ որ կ'անցնէր ձեռքերնին (զործիք, եւայլն) կուտային իրենց բարեկամներուն եւ ազգականներուն: Բայց եսսէները կը զործէին, զործելու համար պէտք ունէին զործիքներու, իրենց ունեցածները ուրիշներու չէին տար, բայց ինչ որ կը հաւաքէին հասարակաց զործածութեան կը ծառայեցնէին: Գործելու համար անոնք ուժ ունենալու էին, պէտք ունէին բաւարար սնունդի. խստապահանջ զրկանքի կեանքը անյարմար էր անոնց համար:

Տարբերութիւնը աստուածիմաստեաններու, մասնաւորապէս նոր-պիւթագորեաններու միջեւ մէկ կողմէն (որոնք կը քրթմնչէին սեփականատիրութենէ եւ աշխարհային բաներէ հրաժարուածին համար) եւ եսսէներու միջեւ միւս կողմէ, կը պարզէր այն հակասութիւնը որ գոյութիւն ունէր Պաղեստինի հրեաներուն եւ քրիստոնէութեան երեւան գալու ժամանակ՝ հին Հռովմի քաղաքակրթութեալ շրջաններուն մէջ ապրող հրեաներուն միջեւ: Եսսէներու եւ ջերմեանդներու մէջ մենք կը տեսնենք նոյն եռանդը, նոյն ուժը որով հրեաները այդ շրջանին բարձրացան միւս քաղաքակրթ ազգերէն, որոնք իրենց վախէն ետ կեցան պայքարումներէն:

Ինչ որ օգնեց եսսէնիզմի ծագման՝ հրեայ ազգի կենսունակութիւնն էր մէկ կողմէն, միւս կողմէն Քրիստոսէ առաջ վերջին դարուն տարածուած թշուառութիւնը որ պրոլետարներուն մէջ արթնցուց շարիքին զարման մը գտնելու բուն փափաքը որ ի յայտ եկաւ մի տեսակ կազմակերպութեամբ: Հասարակաց ճաշի դրութիւնը, նախնական կոմունիզմի վերջին մնացորդը, նոյնպէս ծառայած է վերջնութեւ կոմունիզմի գոյատուրութեան: Բայց հրեաներուն մէջ միութեան եւ փոխազարձ օգնութեան պէտքը մասնաւորապէս շատ մեծ էր: Գաղթական հայրենակիցները իրարու աւելի կը մօտիկնային քան թէ իրենց հայրենիքին մէջ եւ չկար մէկը աւելի անտուն եւ աւելի թափառական օտար երկիրներու մէջ քան Յուդայի երկրէն դուրս գտնուող հրեան: Ատոր համար հրեաներու դիմաբարութիւնը իրարու հանդէպ այնքան յատկանշականօրէն ցցուն եղած է որքան հակակրթութիւնը ոչ-հրեաներու հանդէպ: Տակիտոս այս կէտին շուրջ կը շեշտէ արդէն, երբ կը յիշէ թէ հրեաները միւս



ազգերուն հանդէպ ատելութիւն ունէին միշտ, իսկ իրարու հանդէպ՝ սէր ու դժասրտութիւն:

Հրեաները իրենց կազմակերպութեանց յամառօրէն յարած էին որովհետեւ անոնք հասարակաց ճաշ ունէին: Կեսար բոլոր կազմակերպութեանց գոյութիւնը արգելած էր, բայց ոչ հրեաներու այս կազմակերպութիւնները: Ճիշդ է որ ուրիշ կազմակերպութիւններ կային որոնց համար թիւ մը որոշուած էր ու անկէ աւելի անդամներ չէին կրնար ունենալ, ան ալ պետութեան հսկողութեան տակ, բայց հրեաներու այդ կրօնական կազմակերպութիւնները որոնք հասարակաց ճաշով եւ սեփականութեամբ կազմուած էին, պետութիւնը անոնցմէ կասկած ու վախ չունէր եւ թոյլատրած էր անոնց ազատութիւնը: Ասոր համար բազմաթիւ հեթանոսներ ստիպուած էին զիմել հրէական հասարակուրդին անդամակցելու որը կ'ընդունուէր առանց դժուարութեան:

Բնական էր այսպիսի ընկերութեան մը համար եթէ պրոլետարական էր, ունենալ զուտ կոմունիստական բնոյթ: Բայց զբժուար էր նոյն կազմակերպութեան համար խոշոր քաղաքի մը մէջ հասարակաց ճաշ հայթայթելէ աւելի բան մը ընել հասարակաց մթերքներէն: Եւ արդէն աւելի բան մը ընելու կարիք ալ չկար. հագուստեղէնը այնքան անհրաժեշտ բան մը չէր Հարաւ. Եւրոպայի պրոլետարներուն համար, աւելի դարձ էր ան քան կլիմայէն պաշտպանուելու միջոց մը: Քաղաքի պրոլետարները միշտ տեղ մը կը դռնէին քնանալու: Դեռ աւելին: Անոնց զբաղումը զանոնք կը տանէր քաղաքին ամէն կողմերը ուր անոնք կամ կը մուրային, կամ կը գողնային, կամ մանրավաճառութիւն կ'ընէին եւ կամ բեռնակրութիւն: Կազմակերպութեան հասարակաց ճաշը որուն ամէն մի անդամ իր բաժինը կուտար եւ որուն կը մասնակցէր (երբեմն իր բաժինը տալու անկարողութեամբ իսկ) ամէնէն կարեւոր կապն էր որ կը միացնէր անդամները իրարու հետ, ամէնէն կարեւոր միջոցը՝ անդամները պաշտպանելու կեանքի անհաստատութեանց ու դժուարին պայմաններու դէմ: Բայց այստեղ նկատի առնելու է որ քաղաքի ու գիւղական շրջանի պայմանները նոյնը չեն: Քաղաքին մէջ անավարութիւնն ու զբաղումը սերտօրէն միացած են իրարու հետ: Հասարակաց ճաշերու համար պէտք է հասարակաց բնակարան եւ հասարակաց վարչութիւն: Այդ ատենները խոշոր երկրագործական հաստատութիւնները անսովոր բաներ չէին, անոնք կը վարուէին կամ գերիներու ձեռքով եւ կամ խոշոր կոմունիստական ընտանիքներով, անավարչական եղբայրութիւններով, որոնք մասնաշատուկ երեւոյթները կը ներկայացնէին այս շրջանի հասարա-

կութեան մէջ: Պաղեստինը, սակայն, միակ երկիրն էր ուր հրեաները տակաւին ունէին գիւղացիութիւն մը որ մօտ էր ու մշտական շփման մէջ էր Երուսաղէմի եւ անոր պրոլետարներուն հետ: Ասոր համար դժուար չէր որ հրեայ պրոլետարիստին համար բնական դարձած կոմունիստական ձգտումները անցնէին գիւղական շրջանները եւ հոն հասնէին եսէններու յատկանշական դարգացման:

Եսէնեան կազմակերպութեան անտեսական հիմքը գիւղական անտեսութիւնն էր: Անոնք բոլորն ալ լծուած էին երկրագործական աշխատանքի, կ'ըսէ Յովսէփոս, չափազանցելով իրողութիւնը: Բայց այսպիսի կազմակերպութիւն մը կրնար ապրիլ այն դաւառներուն մէջ ուր որ պետութիւնը կը թոյլատրէր: Արտադրող գործակցական կազմակերպութիւն մը որպէս դադանի ընկերութիւն չի կրնար գոյութիւն ունենալ, մասնաւորապէս գիւղական շրջանի մը մէջ: Եսէնիզմը, ուրեմն, կրնար ապրիլ հրէական ազատութեան հովանիին տակ: Կործանելով վերջինը, կը կործանուէր առաջինը: Եւ ան չէր կրնար ապրիլ խոշոր քաղաքի մը մէջ որպէս դադանի ընկերութիւն, ազատ Պաղեստինէն դուրս: Երուսաղէմը իր կազմով ճակատադրուած էր զարգացնելու նոր կազմակերպական ձեւ մը որ պիտի նպաստէր ամբողջ կայսրութեան քաղաքային պրոլետարիատի կարիքներուն քան ուրիշ ոեւէ մէկ քաղաք. եւ վերջապէս անով դարձեալ Երուսաղէմն էր որ ոեւէ ուրիշ քաղաքէ աւելի պիտի կրնար նպաստել նոյնիսկ կայսրութեան կարիքներուն:

Բայց ի՞նչ էր այս նոր կազմակերպութիւնը որ թէ քաղաքային պրոլետարիատին պիտի նպաստէր եւ թէ կայսրութեան. կազմակերպութիւն մը որ Երուսաղէմի մէջ պիտի ուժեղանար եւ անկէ յետոյ իր թիւերը պիտի տարածէր աշխարհի ամէն կողմերը:

Այդ կազմակերպութիւնն էր Բրիստոնիայ միաբանութիւնը որուն պիտի անդրադառնանք առանձին մասնաբաժինով իր կարեւորութեան համար, որովհետեւ այդ կազմակերպութիւնն էր որ մովսիսականութենէն ծնաւ, աւելի ճիշդ է ըսել եսէնիզմէն ծնաւ եւ տարածուեցաւ ամբողջ կայսրութեան երկիրներուն մէջ, ներգրակելով բոլոր այն տարրերը որոնք կը նայէին այն նոր կեանքին որ յոտաջացեր էր ընկերային ուժերու փոխակերպումէն եւ այդ շրջանի դրութեան ընդհանուր նեխածութենէն:

Քրիստոնէական միաբանութիւն:

Այժմ ծանօթանանք անոր:



### ՆԱԽՆԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

#### Ա) ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԲՆՈՅԹԸ

Մենք տեսանք որ դեմոկրատիկ ջերմեռանդներու կուսակցութեան (զիլօղիղմի) զուտ ազգայնական բնոյթը չէր համապատասխաներ Երուսաղէմի մի շարք պրոլետարական տարրերու ձգտումներուն: Բայց փոխուստը մեծ քաղաքէն դէպի դիւղական բաց շրջանները որը եստէններու փորձն էր, այդ ալ չէր յարմարեր ամէն մարդու ճաշակին: Այն ատեն, ինչպէս այժմ, դիւրին էր փախչիլ քաղաքէն: Քաղաքի կեանքին վարժուած պրոլետարը դիւղին մէջ հանդիստ չէր զգար: Հարուստները, իրենց դիւղական շքեղ սպարանքին մէջ քաղաքի ժխորէն հեռու, թերեւս հաճելի փոփոխութիւն մը գտնէին, բայց դիւղ իջնող պրոլետարը պէտք է լրծէր դաշտային աշխատանքի զոր սորված չէր:

Պրոլետարական մասսաները թէ Երուսաղէմի եւ թէ ուրիշ մեծ քաղաքներու մէջ աւելի կը նախընտրէին մնալ քաղաքի մէջ: Եստէնները անոնց պահանջներուն դոհացում չէին տար, ինչպէս նաեւ լուսնային պրոլետարներուն, որոնք սորված էին ապրել որպէս ընկերային մակարոյժներ:

Ջերմեռանդներու եւ եստէններու կողքին իրերու ընթացքին յառաջացուցած անհրաժեշտութեան կարգով, այս անգամ երեւան եկաւ երրորդ տեսակի պրոլետարական ձգտում մը, որ կը միացնէր զիլօղիղմի եւ եստէնիղմի ձգտումները մէկ շարժման մէջ: Այս ձրջուման արտայայտութիւնը մարմնաւորուեցաւ մեխայի գալտեան շուրջ կազմուած միաբանութեամբ: Եւ այդ միաբանութիւնը քրիստոնեայ միաբանութիւնն էր որ սկզբնապէս առհասարակ ճանչցուած է որպէս պրոլետարական կազմակերպութիւն մը, որովհետեւ անիկա իր մէջ առած էր բացառապէս պրոլետարական տարրերը: Եւ դա ճշմարիտ էր ոչ միայն սկզբնական շրջանին համար, այլեւ անկէ յետոյ դեռ եւս երկար ժամանակի մը համար:

Պողոս Առաքեալ Կորնթացւոց զրամ առաջին նամակով կը շեշտէ որ ոչ իմաստութիւնը, ոչ ալ սեփականատիրութիւնը կրցաւ պայման նկատուիլ քրիստոնէական միաբանութեան մէջ. ասոր համար նա կ'ըսէ. «Արդարեւ դուք ձեր կոչումը կը տեսնէք, եղբայրներ, որ ոչ թէ մարմնի կողմանէ շատ իմաստուններ, եւ ոչ թէ շատ զօրաւորներ, եւ ոչ թէ շատ ազնուականներ կանչուեցան, բայց Աստուած աշխարհիս յիմարները ընտրեց, որպէսզի ամօթով ընէ իմաստունները, ու աշխարհիս տկարները ընտրեց Աստուած որպէսզի ամօթով ընէ զօրաւորները, եւ աշխարհիս ցածազգիները ու

անարդները ընտրեց Աստուած, եւ ոչինչները, որպէսզի բան մը եղողները խափանէ, որպէսզի մարմին մը չպարծի Աստուծոյ առջեւ»: (Թուղթ առ Կորնթ. Ա. 25-30):

Նախնական քրիստոնէական միաբանութեան պրոլետարական բնութագիրը տուողը եղած է Ֆրայտլէնտըր իր Կանխագոյն Կայսրութեան Օրով Հռովմէական Կեանքն ու վարուեցողութիւնները անուն գրքին մէջ: «Ինչ ալ որ ըլլան Աւետարանի տարածման նպաստող պատճառները, ստոյգ է որ Բ. դարու կիսուն կամ վերջամասին միայն մի քանի առանձնացած անհատներ վերին դասակարգերէն հետեւած են քրիստոնէութեան: Անոնց փիլիսոփայական տեսակէտները եւ ընդհանուր դաստիարակութիւնը միացած բազմաստուածութեան հետ զօրաւոր դիմադրութեան դրզիչ ուժեր էին քրիստոնէութեան դէմ. ասոր վրայ աւելցնելու է նաեւ այն որ քրիստոնէական հաւատքը վտանգաւոր հակամարտութեանց դուռ կը բանար տիրող կարգերուն դէմ. եւ վերջապէս աշխարհային շահերէն հրաժարումը բնականաբար դժուար էր անոնց համար որ հարուստութեան ու գիրքի տիրացի էին: Աղքատ եւ ցած դասակարգը, կ'ըսէ Լաքտանտիոս, աւելի պատրաստ էր հաւատարու քան հարուստները որոնց թշնամութիւնը անտարակոյս կը մեծնար քրիստոնէութեան սոցիալիստական ձգտումներուն դէմ: Միւս կողմէ, քրիստոնէութեան տարածումը հասարակութեան ցած խաւերուն մէջ աւելի խթանուեցաւ հրեաներու ցրումով եւ անով աւելի արագացաւ մասնաւորապէս Հռովմի մէջ, ուր ՅԱ թուին Յ. Ք. քրիստոնեաներու թիւը աւելի մեծցեր էր: Բայց այս տարածումը երկար ատեն սահմանափակուած մնաց որոշ շրջաններու մէջ:

Ֆրայտլէնտըր կը շարունակէ. «Հռովմէական կայսրութեան մէջ քրիստոնեաները ոչ միայն ոչինչ փոքրամասնութիւն մը կը կազմէին մինչեւ Գ. դարու վերջերը, այլեւ այդ փոքրամասնութիւնը առնուազն նոյն դարու սկիզբին բացառապէս իր անդամները հաւաքեր էր հասարակութեան ամենացած դասակարգերէն: Հեթանոսներու մէջ կատակախտոն առածի կարգ անցած էր այն խօսքը թէ միայն յիմարները, գերիները, անուս, կոչա եւ անտաշ մարդիկը, ծերերն ու տկարները կ'երթնան քրիստոնէութեան դիրկը: Եւ քրիստոնեաները իրենք չեն ուրանար այդ: Հերոնիմոս կ'ըսէ. Քրիստոնեաները իրենց անդամները կ'արձանագրեն ոչ թէ բարձր դպրոցներէն, զիտական կաճառներէն, այլ ժողովուրդի տականքներէն: Նոյնիսկ քրիստոնեայ գրողներ վկայած են որ մինչեւ Գ. դարու կիսուն միայն մէկ քանի հաւատաւորներ եղած են բարձրագոյն դասէն: Եւսերիոս կ'ըսէ որ Կոմոտոսի օրով (180-192 Յ.



Ք.) եկեղեցին վայելեց խաղաղութիւն մը որ մեծապէս նպաստեց իր անդամներու բողոքացումին, այնպէս որ Հոովմի մէջ մի քանի ականաւոր մարդիկ իրենց ընտանիքով եւ տնեցիներով քրիստոնեայ դարձան: Օրիճէն կ'ըսէ. Աղեքսանդր Սիվերուսի թագաւորութեան ատեն (222-235 Յ. Ք.) հարուստները եւ շարք մը պաշտօնեաներ եւ փափկասուն ու ազնուական կիներ ընդունեցին աշխարհի քրիստոնէական պատգամաբերները. այդ կը նշանակէ թէ քրիստոնէութիւնը այդ ատենները յաջողութիւն դտաւ ինչ որ գտած չէր ասկէ առաջ: Հետեւաբար Կոմոտոսի ժամանակէն ի վեր քրիստոնէութեան տարածումը վերին դասակարգերու մէջ նշանակելի յառաջխաղացք ունեցեր է, մինչ նախորդող շրջանին ատոր հակառակը պիտի հասկընալ: Կոմոտոսէն առաջ միայն բարձր դասու մարդը որ քրիստոնեայ եղած է, ան ալ Ֆլավիոս Կլեմանս կոնսիլիւն էր որ մահուան դատապարտուեցաւ 95 թուին (Յ. Ք.), իսկ իր կիներ, Ֆլեվիա Տոմիդեյլա փախաւ Փոնտիա»:

Կանխագոյն քրիստոնէութեան պրոլետարական բնոյթը չէր պատճառը որ մենք քիչ ծանօթութիւն ունինք անոր սկզբնական շրջանի իրադարձութեանց մասին: Քրիստոնեայ քարոզիչները գուցէ կարող հոռոտներ եղած են, բայց անոնք հմուտ չեն եղած գրելու կամ կարգալու մէջ: Գրել կարգալու արուեստը շատ օտարադի էր այն ժամանակուայ ժողովրդական մասսաներու ստիբոթիքներուն: Քրիստոնէութեան ու անոր պատմութեան ուսուցումը քրիստոնեայ միաբանութեան մէջ սերունդներով առաջ տարուած է բերանացի հաղորդումներով. արտակարգ կերպով յուզուած, անհաւատալիօրէն ջերմեռանդ ու վերացեալ, յափշտակեալ մարդիկ ժողովուրդին տուած են քրիստոնէական պատմութիւններ որոնց իրականութեանը ոչ ոք հանդիսատես եղած է, եթէ իրականութեան հիմք մը ունեցած են անոնք, պատմութիւններ որոնք չէին կրնար հետախուզութեան առարկայ դառնալ ժողովրդական զանգուածներու կողմէ, ոչ ալ քննադատող եւ աննախապաշար տարբերու կողմէ: Վերջերք երբ կրթուած եւ բարձր դասու մարդիկ քրիստոնէութեան մէջ մտան, այն ատեն սկսան բերանացի աւանդութեանց դրաւոր ձեւերով ամփոփումը: Բայց նոյնիսկ այդ պարագային ալ գրաւոր ամփոփումներու նպասակը չէ եղած զանոնք պատմական վաւերացման դժի վրայ պահել այնքան որքան հակաճառութեան, պաշտպանելով միայն որոշ տեսակէտներ ու պահանջներ: Քրիստոնէական աւանդութիւնները գրի առնողները թէեւ կատարեալ տղէտ եղած են իրենց ներկայացուցած պայմաններու պատմական արժանահաւատութեան առնչութեամբ, բայց արտակարգ քաջութեամբ եւ նա-

խապաշարումով լեցուած եղեր են կեղծելու որ իրենք կարողացեր են որոշ անձնաւորութեանց քարոզներն ու գործերը արձանագրել բացարձակ ստուգութեամբ, հոգ չէ թէ անոնք իրենց մէջ պահած էին շատ մը անբնականութիւններ, անկարելիութիւններ եւ ցցուն հակասութիւններ: Մենք արդէն նախապէս ըսած ենք որ անկարելի է որոշակի բան մը ըսել Քրիստոսի անձնաւորութեան շուրջ որպէս հիմնարկիչը քրիստոնէական միաբանութեան եւ իրապէս անհրաժեշտ ալ չէ գիտնալ որեւէ բան անոր մասին: Քրիստոնէութեան վարդապետութիւնը յատկանշող տեսութիւնները, ըլլան անոնք գովելի կամ դատապարտելի, փաստուած են որ արտադրութիւններն են մասամբ հոովմէա-յունական, մասամբ ալ հրէական աւանդութեանց: Չկայ մէկ հատ քրիստոնէական մտածում կամ տեսութիւն ուր որպէս վերագոյն մարգարէութիւն կամ որպէս վերամարդկային մտքի ծնունդ համարուի, որուն նմանը չկարողանանք գտնել Քրիստոսէ առաջ «հեթանոս» աշխարհին կամ հրեայ դրականութեան մէջ: Յիսուսի եւ իր աշակերտներու անձնաւորութեանց մասին մեր պատմական հասկացողութիւնը որքան որ նուազ կարելու է, սակայն խիստ անհրաժեշտ է ունենալ որոշ ծանօթութիւն նախնական քրիստոնէական միաբանութեան բնոյթին շուրջ: Բարեբախտաբար այս անկարելի չէ: Քրիստոնեաները երբ իրենց ուսուցիչներուն եւ առաջնորդներուն վերադրած են երեւակայութեամբ եւ յափշտակութեամբ անդերազանցելի քարոզներ ու գործեր, տարակոյս չկայ որ քրիստոնեայ գրողներն ալ տարուած են ու գրած նոյն ոգիով ու շունչով քրիստոնէական միաբանութեան, որուն մէջ եւ որուն համար իրենք գործեր են: Անոնք պարզապէս կանխագոյն շրջանի աւանդութեանց դրաւոր փոխանցումն են կատարեր, մի քիչ փոխելով մանրամասնութիւնները, բայց ոչ՝ անոնց հիմնական բնոյթը. որովհետեւ անոր այդ հիմնական բնոյթը այնքան որոշ եղած է որ եթէ մարդիկ աչքառու եղանակով այդ աւանդութիւնները փոխէին, գործնական ընդդիմութեան մը առջեւ պիտի դրտնուէին: Անոնք ատանկով պիտի փորձէին տկարացնել կամ վերաթարգմանել այն ոգին որ իշխած է քրիստոնէական միաբանութեան սկիզբի օրերուն, բայց նոյն ատեն անոնք չէին կրնար ամբողջապէս ճշմարտութեան մասին երդնուլ: Այսուհանդերձ, պէտք է ըսել թէ այդպիսի ջրախառնութեան փորձեր եղած են որոնք հետզհետէ աւելի յանդուզն դարձեր են երբ քրիստոնէական միաբանութիւնը կորսընցուցեր է իր նախնական պրոլետարական բնոյթը եւ իր մէջ ընդուներ է կրթուած, հարուստ եւ պատուաւոր մարդիկ: Բայց նոյնիսկ այդ յայտնի փորձերն ալ մեզի կ'օգնեն ճանչնալու որոշակի



քրիստոնէական միաբանութեան պրոքետարական նկարագիրը:

Մեր ստացած ծանօթութիւնը իր սնունդը կ'առնէ վերջի քրիստոնէական ազանդներու էվոլիւցիային մէջ, որոնք ծանօթ են իրենց սկզբնաութեանէն եւ որոնք յստակօրէն լոյս կը սփռեն Բ. դարէն յետոյ քրիստոնէական միաբանութեան էվոլիւցիայի պատմութեան վրայ: Մենք ասոր համար կրնանք ենթադրել որ իրերու այս հետեւութիւնը կը հիմնէ բնական օրէնք մը. այնպէս որ վերջին ազանդներու սկզբնաութիւնը վերլուծելով կրնանք քրիստոնէութեան սկզբնաութեան անծանօթ մասին վրայ, որոչ հասկացողութիւն ունենալ զայն բազմապէս վերլուծման հետ: Անշուշտ վերլուծողական այսպիսի փաստացում մը ինքնին իրողութիւն մը չի ներկայացնէր, բայց կ'օգնէ ենթադրելու որ ան կրնայ ուրիշ կերպով ալ կազմուած ըլլալ: Ինչ ալ որ ըլլայ սակայն, վերջին ազանդներու վերլուծումը ինչպէս նաեւ նախնական քրիստոնէական կեանքի մասին աւանդութեանց մնացորդները, հաւասարապէս իրողութիւններ են որ կը փաստեն քրիստոնէական միաբանութեան պրոքետարական նկարագիրը:

Բ) ԳԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՏԵԼՈՒԹԻՒՆ

Նախ եւ առաջ դասակարգային սուր ատելութիւն մը կայ հարուստներու դէմ:

Դասակարգային ատելութիւնը յայտնապէս կ'երեւի Ղուկաս աւետարանիչի աւետարանին մէջ որ հաւանականօրէն գրուած է երկրորդ դարու սկիզբին: Հոն կը տեսնենք գրուած Ղազարոսի պատմութիւնը (Աւետարան ըստ Ղուկասու, ԺԶ. 19-26) որու յիշատակութիւնը միւս աւետարանիչներու գրածներուն մէջ չենք տեսներ: Համաձայն Ղուկաս աւետարանիչին հարուստը կ'երթայ զժոխք, իսկ աղքատը Աքրահամու գիրկը ոչ անոր համար որ առաջինը մեղաւոր է, երկրորդը՝ արգար: Այդ մասին ակնարկութիւն չկայ: Հարուստը կը դատապարտուի անոր համար որ հարուստ է: Աքրահամ կ'ըսէ. «Միտքդ բեր որ զուն կեանքիդ ատենը քու բարիքները առիր, նոյնպէս Ղազարոս՝ շարիքները. հիմա անիկա հոս կը մխիթարուի ու զուն կը ամենաբախտը. եւ այս ամէն բաներէն զատ մեր ու ձեր մէջ մեծ անդունդ մը կայ հաստատուած, ուրկէ ոչ զուք մեզի կրնաք դալ, ոչ ալ մենք ձեզի»: Ճնշուած դասակարգի վրէժխնդրական փափաքն է աս ու կ'ուրախանայ ապագայ պետութեան այս ձեւի նկարագրութեամբ: Նոյն աւետարանին մէջ Յիսուս կ'ըսէ. «Որչափ զժուար է անոնց որ հարստութիւն ունին Աստուծոյ թաղաւորութիւնը մտնել, որովհետեւ աւելի դիւրին է ուղար ասե-

ղին ծակէն անցնի քան թէ հարուստը Աստուծոյ թաղաւորութիւնը մտնէ»: (Ղուկաս, ԺԸ. 24-25): Այստեղ նոյնպէս հարուստը կը դատապարտուի իր հարստութեան համար, ոչ թէ իր մեղքերուն համար:

Նոյնը կը կարդանք լերան քարոյին մէջ (Ղուկաս, Զ. 20): «Երանի ձեզի աղքատներուդ (աղքատը մուրացկանն է) որովհետեւ ձերն է Աստուծոյ թաղաւորութիւնը, երանի ձեզի որ անօթի էք հիմա, որովհետեւ զուք պիտի կշտանաք. երանի ձեզի որ կուլաք հիմա, որովհետեւ պիտի խնդաք... Բայց վայ ձեզի որ հարուստ էք, որովհետեւ զուք ձեր մխիթարութիւնը ստացել էք, վայ ձեզի որ կուշտ էք, որովհետեւ պիտի անօթենաք. վայ ձեզի որ կը խնդաք, որովհետեւ պիտի արտասուէք»:

Ընթերցողը կը նկատէ որ հարուստ ըլլալն ու հարստութեամբ կեանքը վայելելը ոճիր նկատուած է եւ արժանի՝ անգուժ պատիժի:

Նոյն ոգին կը տեսնենք Յակորոս առաքեալի մօտ (Թուղթ Յակորոս, Ե. 1-7). «Այլ հիմա, հարուստներ, լացէք ու ողբացէք այն թշուառութիւններուն համար որոնք ձեր վրայ պիտի գան: Ձեր հարստութիւնը ապահանած է եւ ձեր հանդերձները ցիցի կերակուր եղած. ձեր ոսկին ու արծաթը ժանդոտած են եւ անոնց ժանդը ձեզի դէմ վկայ պիտի ըլլայ ու ձեր մարմինը պիտի ուտէ կրակի պէս: Վերջին օրերուն համար գանձ դիպեցէք: Լսեցէք ձեր արեւը հնձող բանուորներուն վարձը զոր ետ պահեցիք կ'ազազակէ եւ հնձողներուն բողբոջը զօրութեանց Տէրոջը ակնջններուն հասաւ: Երկրի վրայ փափկութեամբ եւ հեշտութեամբ ապրեցաք, սրտերնիդ սնուցիք որպէս թէ մորթուելու օրուան համար: Դատապարտեցիք ու սպաննեցիք արգարը որ ձեզի հակառակ չի կենար: Ուստի համբերող եղէք, եղբայրներ, մինչեւ Տէրոջը գալուստը»:

Յակորոս առաքեալ նոյնիսկ քրիստոնէական միաբանութեան մէջ մտնող հարուստներուն սուր ակնարկութիւններ կ'ընէ, որովհետեւ անոնք թէեւ հաւատաւոր եղած են բայց սարբեր են իրենց դործերով: «Ո՞նորհ եղբայրը իր բարձրութեան վրայ թող պարծենայ. բայց ան որ հարուստ է՝ իր խոնարհութեանը վրայ, վասնզի անիկա խտտի ծաղիկին պէս պիտի անցնի: Քանզի արեւը սաստիկ տաքութիւնով մը կը ծագի ու կը ցամքեցնէ խոտը եւ անոր ծաղիկը կը թափի ու անոր երեւոյթին զեղեցիկութիւնն ալ կը կորսուի, նոյնպէս ալ հարուստը իր ճամբաներուն մէջ պիտի թառամի»: (Յակորոս, Ա. 9-11) Գլուխ Բ.ին մէջ կ'ըսէ. «Եթէ ձեր ժողովքին մէջ մարդ մը մտնելու ըլլայ որ ունենայ ոսկի մատանի



և փառաւոր հանդերձներ, հոն աղքատ մըն ալ մտնելու ըլլայ ազատա հագուստներով, և նայիք անոր վրայ որ փառաւոր հանդերձներ ունի ու ըսէք թէ դուն հոս նստէ պատուով, և այն աղքատին ըսէք թէ դուն հոգ ուրի վրայ կայնէ, կամ թէ եկուր նստէ պատանդանիս քով, ձեր մէջ խորութիւն ընող ու չար խորհուրդներու դատաւոր չէ՞ք ըլլար: Մտիկ ըրէք, սիրելի եղբայրներս, չէ՞ որ Աստուած աշխարհի աղքատները ընտրեց որոնք հաւատքով հարուստ են, ու ժառանգաւոր արքայութեանը զոր զինքը սիրողներուն խոստացաւ: Բայց դուք աղքատները անարդեցիք. հարուստները չն՞ոս որ ձեզ կը հարստահարեն ու ձեզ դատարանները կը քաշեն: ... Ինչ օգուտ է, եղբայրներս, եթէ մէկը ըսէ թէ հաւատք ունի ու գործ չունենայ. միթէ հաւատքը կրնա՞յ փրկել զանիկա: ... Դեւերն ալ կը հաւատան ու կը սարսափին: Բայց կ'ուզե՞ս զիտնալ դուն, ով անտի մարդ, որ հաւատքը առանց գործի մեռած է»:

Շատ քիչ անգամ մենք կը տեսնենք այժմեան պրոլետարիատի մօտ այն դասակարգային ատելութիւնը ինչ որ կը տեսնենք ֆանատիկ ձեւով այդ ատենի քրիստոնեայ պրոլետարիատին մօտ: Մեր դարաշրջանի պրոլետարիատը կարճ ատենի մը համար եթէ իշխանութեան գլուխը անցնի, ան այնքան վրէժիմներ չըլլար հարուստներու հանդէպ որովհետեւ ան ինքզինք աւելի զօրեղ կը զգայ քան նորածին քրիստոնէութեան ժամանակի պրոլետարիատը: Ան որ ինքզինքը աւելի զօրաւոր կը զգայ աւելի վեհօղի է քան այն որ տկար է: Մեր օրերու բուրժուազիան վստահութիւն չունի իր սովին վրայ, ատոր համար բանուորական ցոյցերուն ցոյց կուտայ սոսկալի վրիժառութիւն:

Մատթէոսի աւետարանը մի քանի տասնեակ տարիներ վերջ գրուած է քան Ղուկասի աւետարանը: Ատոր պատճառը այն է որ հարուստ և կրթուած անձեր երբ մտնել ուզեր են քրիստոնէական միաբանութեան մէջ, քրիստոնեայ պրոպականտիստները քրիստոնէական վարդապետութիւնը աւելի հրապուրիչ դարձնել ուզեր են, այդ մարդիկը իրենց կապելու համար: «Կրակ ու բոց» նախնական քրիստոնէական ձեւն ու վարմունքը այլևս թոյլատրելի չէր: Բայց հին գիրքաւորումը այնքան խոր արմատ ձգած էր որ զայն չէր կարելի մէկ կողմ նետել, ատոր համար պարզապէս պատեհապաշտական իմաստով վերատեսութեան քայլ մըն էր առնուածը: Ահա սոյն վերատեսութեան օգին է որ Մատթէոսի աւետարանը «հակասութեանց աւետարան»ի վերածեր է և նոյն ատեն զայն շիներ է «եկեղեցիի ամէնէն սիրուն աւետարանը»: Այդ աւետարանին մէջ

եկեղեցին նախնական քրիստոնէական յանդուզն և յեղափոխական եռանդն ու սոցիալիզմը փոխեց եկեղեցական ոսկեզօր պատեհապաշտութեան համաձայն և անոր այնպիսի ձեւի յարմարեցում մը տուաւ որ այլևս չէր սպասուար դոյութեանը այն կազմակերպուած եկեղեցիին որ հաշտուած էր դասակարգերու բաժնուած մարդկային հասարակութեան հետ:

Բնականաբար զանազան գրողներ որոնք մասնակցեր են Մարկոսի աւետարանը պատրաստելու մէջ ջնջեր են բոլոր անշնորհ մասերը ինչ որ կըրցած են ջնջել, ինչպէս Ղազարոսի պատմութիւնը, ժառանգութեան վէճի դատապարտութիւնը որ նոյնպէս ուղղուած է հարուստներուն դէմ: «Վարդապետ, զրուցէ եզրօրս որ մեզի ինկած ժառանգութիւնը ինձի հետ բաժնէ: Ան ալ ըսաւ անոր. Մարդ, ո՞վ զիս ձեր վրայ դատաւոր կամ բաժին ընող զբաւ: Եւ ըսաւ անոնց. Նայեցէք և զղուշացէք ազահութենէ, վասնզի մարդուս ստացուածքներուն աւելնալէն կախուած չէ կեանքը»: Եւ հարուստի մը առակը պատմելէն վերջ ըսաւ. «Հոգ մի ընէք ձեր կեանքին համար թէ ի՞նչ պիտի ուտէք, ոչ ալ մարմնին համար թէ ի՞նչ պիտի հագնիք, վասնզի կեանքը կերակուրէն աւելի լաւ է ու մարմինը՝ հազուադէպ: Մտնեցէք ձեր ստացուածքը և ողորմութիւն տուէք, ու ձեզի չհիմնալու քսակներ պատրաստեցէք, երկինքը չպակսելու զանձ մը, ուր ոչ զողը կը մօտենայ, ոչ ալ ցեցը կ'պականէ: Քանզի ձեր զանձը ուր որ է, սրտերնիդ ալ հոն պիտի ըլլայ»: (Ղուկասու, ԺԲ. 13-35): Բայց լերան քարոզը հաւանական է որ շատ ժողովրդական եղած է և բոլորին շատ ծանօթ, այնպէս որ Մատթէոսի աւետարանը գրողները այդ յարակէզը նոյն ձեւով փոխեր են և զբաւ են զայն գործնականացման ճամբուն վրայ: Այդ քարոզին մէջէն անհաճոյ մասերը փոխուած են: Մատթէոս աւետարանիչը Յիսուսի բերնով կ'ըսէ. «Երանի հողիով աղքատներուն, վասնզի երկինքի թագաւորութիւնը անոնցն է: Երանի սղաւորներուն, վասնզի անոնք պիտի մխիթարուին: Երանի հեղերուն, վասնզի անոնք պիտի ժառանգեն երկիրը: Երանի անոնց որ անօթի ու ծարաւ են արդարութեան, վասնզի անոնք պիտի կշտանան»: (Մատթ. Ե. 3-7):

Անտարակոյս այս սրամիտ վերաքննութիւնը դասակարգային ատելութեան ամէն հետք ջնջեր է: Այժմ երանի կը արուի հոգիով աղքատներուն: Հոգիով աղքատ ըսելով ի՞նչ հասկնալու է յիմարնե՞րը թէ այն մուրացիկները որոնք երեւակայութեամբ մուրացիկ են, այսինքն հարուստ են իրապէս, բայց իրենց սիրտը կապուած չէ իրենց ունեցածին: Հաւանական է «հողիով աղքատ» ըսե-



լով վերջինը պիտի հասկնանք: Բայց յամենայն դէպս հարուստնե-  
րու դատապարտութիւնը եւ իրական աղքատ-մուրացիկներու օրհ-  
նութիւնը Մատթէոսի լեռան քարոզին մէջ չերեւիր: Տարօրինակ է  
նոյնպէս որ անօրիի դերն ալ փոխուած է. ստամոքսով անօրիին ե-  
ղած է արդարութեան անօրի: Ի՞նչ կը նշանակէ արդարութեան ա-  
նօթի բլլալ: Արդարութեան անօթի բլլալ կը նշանակէ անիրաւուած  
վիճակի մէջ արդարութիւն փնտռել: Հարուստը ինքը բլլալով ա-  
նարդարութեան հեղինակ, ի՞նչպէս անօթի կ'ըլլայ արդարութեան  
համար:

Եւ յետոյ, յունարէն-այն բառը որ կըտանալու իմաստով  
գործածուած է, Մատթէոս աւետարանիչը բնագիր բառը գործա-  
ծած է (χορηγιστος) որ կը նշանակէ ստամոքսը լեցնել, բառ մը որ  
կենդանիներու համար կը գործածուի յունարէնի մէջ: Մեր աւե-  
տարանիչը երբ այդ բառը գործածեք է, ատիկա թէ անարգական  
է եւ թէ հակասական: Մարդ մը արդարութեամբ իր փոքր չի կըր-  
նար լեցնել: Բայց մենք եթէ այս կէտն ալ նկատի չառնենք, աւե-  
տարանիչը որ արդարութեան անօթիները վեր կ'առնէ եւ ստամոք-  
սով անօթիները կ'անտեսէ, ատով կը սրբէ հարուստներուն երե-  
սին նետուած անէծքը: Ամէնէն հանճարեղ խեղաթիւրումը նոյնիսկ  
չէր կրնար հնարել աւելի լաւ ձեւ մը որ քաջալերէր հարուստ դա-  
սակարգը դէպի քրիստոնէական նորահաստութիւն:

Բայց քրիստոնէական միաբանութեան ազդեցիկ շրջանակնե-  
րը որքան որ պատեհապաշտական դարձան, չկրցին միաբանութեան  
ունեցած պրոլետարական դասակարգային ատելութիւնը ջնջել եւ  
փոխել անոր բնօրէն. զանազան մտածողներ երբեմն յայտնաբերե-  
ցին այդ խոր ատելութիւնը: Շատ մը էջեր կան գրուած մի շարք  
գրողներու գործերուն մէջ, երբ քրիստոնէութիւնը արդէն դարձեր  
էր պետական կրօնք. օրինակ Ս. Կղեմէս, Ս. Օգոստինոս, Ատե-  
րիոս, Լակտանտիոս, Յովհանն Ոսկեբերան, Ս. Ամպրոզ եւ ուրիշ-  
ներ: Ասոնք բոլորը սուր դատապարտութիւններ ուղղած են հա-  
րուստներուն, զանոնք կոչելով գողեր ու աւազակներ:

Գ) ԿՈՄՈՒՆԻՉՄ

Քրիստոնէական միաբանութեան գերաճառուած պրոլետա-  
րական նկարագիրը նկատի առնելով, բնական է հետեւեցնել որ ա-  
նոր նպատակն է եղած կոմունիստական կազմակերպութիւն մը հիմ-  
նել: Եւ այս նպատակը յայտարարուած է յաճախակի: Գործք Ա-  
ռաքելոցի մէջ կը կարգանք. «Եւ բոլոր հաւատացեալները մէկտեղ  
էին եւ ամէն բաներնին հասարակաց էր: Ու ամէն ստացուածք կը

ծախէին եւ անոնց զինք կը բաժնէին ամէնուն»: (Գործք, Բ. 44-  
45) «Եւ հաւատացեալներու բազմութիւնները մէկ սիրտ ու մէկ հոգի  
ունէին, եւ անոնցմէ մէկը չէր բեր իր ստացուածքներէն մէկուն  
համար թէ իրենն է, հապա իրենց ամէն բաները հասարակաց կը  
սեպէին. եւ անոնց մէջ կարօտութիւն ունեցող չկար, վասնզի ա-  
նոնք որ ազարակներու եւ տուներու տէր էին, կը ծախէին ու ծախ-  
ւածներուն զինքը կը բերէին ու առաքեալներուն ստքը կը դնէին,  
եւ ամէն մէկը իր կարօտութեանը նայելով կը բաժնուէր»: (Գործք,  
Գ. 32-36):

«Բայց մարդ մը Անանիա անունով իր կնոջ Սափիրայի հետ  
մէկտեղ ստացուածք մը ծախեց. եւ անոր զինէն խորեց, մինչ կրնն  
ալ զիտէր, ու միայն մէկ բաժինը բերաւ առաքեալներուն ստքը  
դրաւ. եւ Պետրոս զիտցաւ անոնց խարդախութիւնը Հոգւոյն Սըր-  
բոյ գորութեամբ»: (Գործք, Ե. 1-4):

Այստեղ պէտք չէ մտնալ որ Անանիա եւ Սափիրա որոնք  
փորձեցին պահել իրենց զբաժները միաբանութենէն, իրենց այդ  
ոճիրին համար աստուածային միջնորդութեամբ մահուան դատա-  
պարտուեցան: Յովնան Ոսկեբերանը (347-407 Յ. Ք.) որ իր ժա-  
մանակի անպախ քննադատն էր, քրիստոնէական կոմունիզմի առա-  
ւելութեանց կ'անդրադառնայ իրապաշտ անտեսագէտի նման, ա-  
ռանց մօտենալու հոգեգմայլ խտտակեցութեան ուղիին: Հետեւ-  
եալը իր քարոզներէն մէկ մասը կը ներկայացնէ իր իսկ բառերով  
հիւսուած. «Շնորհն էր իշխողը անոնց մէջ, որովհետեւ ոչ ոք կա-  
րէքով կը տառապէր, պարզ անոր համար որ առատաձեռնութեամբ  
կուտային անէն ինչ որ ունէին եւ ոչ ոք չքաւոր կը մնար: Որով-  
հետեւ անոնք իրենց ունեցածին մէկ մասը չէր որ կուտային եւ  
միւսը կը պահէին իրենց համար, ոչ ալ ամէն ինչը կուտային իր  
իրենց սեփականութիւնը: Անոնք ջնջեցին անհասարկութիւնը եւ  
բոլորն ալ ապրեցան առատութեամբ մէջ եւ անոնք այդ բոլորն զովելի  
եղանակով: Անոնք չէին համարձակեր ողորմութիւն մը դնել կա-  
րօտեալի ձեռքին մէջ, ոչ ալ պարգեւներ կուտային ամբարտաւան  
բարեհաճութեամբ, այլ անոնք իրենց տուածները կը դնէին առաք-  
եալներու ոտքերուն տակ, որովհետեւ անոնք էին տէրերն ու նուէր-  
ները բաշխողները: Ամէն մարդ իր կարիքներուն համաձայն իր բա-  
ժինը կ'առնէր հասարակուրդի մթերքէն, ոչ թէ անհատներու մաս-  
նաւոր սեփականութենէն:

«Եթէ մենք այսօր նոյնը ընենք աւելի երջանիկ պիտի ապ-  
րինք. հարուստ եւ աղքատ հաւատարապէս. եւ աղքատը այդ ձեւով  
աւելի երջանիկ պիտի չըլլայ քան հարուստը, որովհետեւ տուող-



ները իրենք ազգատ պիտի չըլլան, այլ ազգատը նոյնպէս պիտի հարստացնեն եւ իրենք անոնց հետ ու անոնց պէս պիտի ըլլան երջանիկ :

«Այժմ իրերը պատկերացնենք այսպէս : Ամէն մարդ ենթադրենք տուաւ իր ունեցածը հասարակաց հիմնադրամին. ոչ ոք թող տակն ու վրայ ըլլայ այդ հիմնադրանքն, ըլլայ հարուստ, ըլլայ աղքատ : Գիտէ՞ք որքան դրամ պիտի հաւաքուէր այդ ձեւով : Կարծեմ մէկ միլիոն փառնա, գուցէ երկու կամ 3 միլիոն փառնա ոսկի : Անշուշտ ճշգրիտ կէտքը չէ կարելի որոշել, բայց երբ ամէն մարդ իր տունը, իր արտը, իր ամբողջ ունեցածը տայ հասարակաց Փոնտին, իմ ենթադրած գումարը մեծ չէ : Այժմ տեսնենք թէ մեր քաղաքը, Պոլիս որքան բնակիչ ունի : Քանի՞ քրիստոնեայ կայ. 100.000 չկա՞յ. քանի՞ հեթանոս եւ հրեայ կայ : Քանի՞ աղքատ ունինք : Չեմ կարծեր թէ 50.000էն աւելի են : Եթէ անոնք հասարակաց սեղանէն ճաշէն, մեծ ծախս մը չի պահանջեր ամէն օրուան համար : Մեր ունեցած գանձը ի՞նչ պիտի ընենք : Դուք կը խորհի՞ք թէ այդ գանձը կը դատարկուի : Չէ՞ք խորհիք թէ Աստուծոյ շնորհը պիտի կրկնապատկէ այդ գանձը : Ասով մեր երկիրը կրկնային դրախտի չի՞ փոխուիք : Եթէ այս փորձարկութիւնը յաջողութեամբ պսակուեցաւ 3500 մարդու համար (առաջին քրիստոնեաներուն մասին է խօսքը) եւ ոչ ոք կարօտութեան տառապանքը ապրեցաւ, հապա ուրեմն որքան հրաշալի արդիւնք պիտի տայ ան այսօր երբ մեր անդամները կրկնապատկուած են : Եւ նոր եկողները բան մը պիտի չաւելցնեն եղածներուն վրայ :

«Հողերու բաժանումը խոշոր ծախսի դուռ կը բանայ եւ թշուառութեան ծնունդ կուտայ : Վեր առէք ընտանիք մը ուր այր եւ կին 10 զաւակներ ունին : Կինը կը հիւսէ, մարդը կը գործէ իր ապրուստին համար. արդեօք աւելի աժան պիտի չըլլա՞ր միասին ապրիլ քան առանձին : Եթէ տասը որդիները բաժնուած ապրին, պէտք ունին 10 տուներու, 10 սեղաններու, 10 ծառաներու եւ ամէն ինչ տասը անգամ աւելի : Հապա՞ եթէ նկատի ունենանք զերկները : Եթէ ասոնք բոլորը մէկ սեղանէն ճաշեն ծախսերին չի՞ն խնայեր : Բաժանումը միշտ բաղձաժախտութեան դուռ կը բանայ, միասնութիւնը աղբիւրներու մատակարարումը կը կրճատէ : Վանքերու մէջ ապրողները այժմ այս ձեւով կ'ապրին ու անոնք հաւատարիմ են իրարու : Ո՞վ է որ անօթութենէ կը մեռնի այսպիսի պայմաններու տակ : Ո՞վ է որ որպէս հարուստ գոհ չըլլար այդ ձեւէն : Բայց զարմանալի է որ ժողովուրդը կը վախնայ այդ հանդամանքէն աւելի շատ քան երբ նետուելու է խոր ծովուն մէջ : Ինչու մենք

ջանք պիտի չընենք այդպիսի պայմաններ ստեղծելու մէջ երբ զիտենք թէ որքան երանելի դրութիւն պիտի ստեղծուի մեզի համար : Հին ասեանները երբ քրիստոնեաներու թիւը 3-էն 5000-ի կը հասնէր եւ երբ մարդիկը զեռ թշնամի էին անոնց եւ ոչ մի տեղ անոնք մը խիթարութիւն չէին գտներ եւ սակայն անոնք վճռականօրէն շարունակեցին իրենց ճամբան, որքան աւելի խոշոր վստահութիւն պիտի ունենանք մենք ներկայիս երբ Աստուծոյ շնորհիւ ամէն տեղ հաւատարիմ հաւատաւորներ ունինք : Ո՞վ է որ պիտի սիրէ հեթանոս մտաւ. կարծեմ ոչ ոք : Մենք բոլորը մեզի պիտի քաշենք եւ բոլորը պիտի դան մեզի» :

Առաջին քրիստոնեաները կարող չէին այսպիսի յստակ եւ պարզ յայտարարութիւն ընել : Բայց անոնց կարծ զիտողութիւնները, աղաղակները, պահանջները, անէծքները պարզօրէն կը յայտնեն ամէն պարագայի տակ քրիստոնէական միաբանութեան առաջին շրջանի միաձեւ կոմունիստական բնոյթը :

Ղուկասի աւետարանին մէջ որ զբուսած է Բ. դարուն կիսուն, յայտնապէս նշուած է Քրիստոսի եւ իր առաքեալներու կոմունիստական հետեւողականութիւնը : Անոնք բոլորը միայն մէկ քսակ ունէին եւ այդ քսակը կրողն էր Յուդա Իսկարիոթացի : Յովհաննէս աւետարանիչը որ այս խնդրին մէջ իր նախորդները զերազանցել փորձեր է, կը մեծցնէ դարձանքը Յուդայի հանդէպ զայն ներկայացնելով որպէս հասարակաց Փոնտը իր շահուն գործածող, որպէս զեղծարար : Յովհաննէս աւետարանիչ կը նկարագրէ Յիսուսի ոտքերը անուշահոտ իւղով օծելու զէպքը հետեւեալ կերպով :

«Այն ատեն առաքեալներէն մին, Յուդա Իսկարիոթացին, Սիմոնի որդին որ զինքը պիտի մատնէր, բաւ. Ինչու՞ համար այդ իւղը չձախուեցաւ 300 զահեկանի որ աղքատներուն տրուէր : Չայս բաւ ոչ թէ աղքատներուն համար, հապա որ դող էր ու գանձանակը ինք կը պահէր եւ ինչ որ ձգուէր ինք կը կրէր» : (Յովհ. ԺԲ. 4-7) :

Վերջին ընթրիքի ատեն Յիսուս բաւ Յուդային. «Ինչ որ պիտի ընես, շուտով ըրէ : Բայց այս բանը սեղանը նստողներէն մէկը չհասկցաւ թէ ինչու համար բաւ անոր : Վասնզի ոմանք կը խորհէին թէ որովհետեւ գանձանակը Յուդա կը պահէր, Յիսուս անոր կ'ըսէր. Ծախու առ ինչ որ մեզի այս տօնին պէտք է, կամ որպէսզի աղքատներուն բան մը տայ» : (Յովհ. ԺԳ. 27-29) :

Յիսուս աւետարանիչներու բերնով շարունակ պահանջներ է իր աշակերտներէն որպէսզի ամէն ոք տայ իր ունեցածը : «Ահա այսպէս ալ ձեր մէջէն ամէն մէկը եթէ իր բոլոր ստացուածքէն ետ



չկենայ, չկրնար իմ աշակերտս ըլլալ»։ (Ղուկաս, ԺԴ. 33)։ «Ծախեցէք ձեր ստացուածքը եւ ողորմութիւն տուէք»։ (Ղուկաս, ԺԲ. 33)։

«Եւ իշխան մը հարցուց անոր եւ ըսաւ. Բարի վարդապետ, ի՞նչ գործ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ։ Եւ Յիսուս ըսաւ անոր. Ինչո՞ւ զիս բարի կ'անուանես, մէկէն զատ բարի չկայ որ է Աստուած։ Պատուիրանքները զիտես. շնութիւն մի ընե՛ր, ըսպանութիւն մի ընե՛ր, գողութիւն մի ընե՛ր, սուտ վկայութիւն մի ընե՛ր, հայրդ ու մայրդ պատուէ։ Ան ալ ըսաւ. Աստուծոյ ամբողջը մանկութենէս ի վեր պահե՛ր եմ։ Չայս լսելով Յիսուս ըսաւ անոր. Քեզի բան մը պակաս է. քու բոլոր ունեցածդ ծախէ եւ աղքատներուն բաշխէ ու երկինքը դանձ պիտի ունենաս եւ եկուր իմ ետեւէս։ Անիկա երբ այս բանը լսեց արտմեցաւ, վասնզի շատ հարուստ էր»։ (Ղուկաս, ԺԸ. 18-23)։

Այս դէպքին է որ Յիսուս ուղտի առակը կը յիշեցնէ թէ աւելի դիւրին է ուղտը ասեղի ծակէն անցնի քան հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը մտնէ։ Աստուծոյ թագաւորութիւնը անոնցն է միայն որոնք իրենց ունեցածը չքաւորներուն կուտան։

Մարկոս աւետարանիչը նոյն ձեւով կ'արտայայտուի։

Բայց վերաքննիչ եւ վերասրբազրոյ Մատթէոս աւետարանիչը այս նախատիպ պահանջը կը փոխէ վարկածական ձեւի. «Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, գնա ու ծախէ ունեցածդ եւ աղքատներուն տուր»։ (Մատթ. ԺԹ. 21)։

Ինչ որ Յիսուս սկիզբէն կը պահանջէր իր հետեւորդներէն եւ իր միաբանութեան բոլոր անդամներէն, Մատթէոս աւետարանիչը Յիսուսի պահանջը կատարելութեան ցանկացող մարդոց միայն վերադրած է։ Իսկ ուրիշ տեղ մը երբ կ'ըսէ թէ միայն Աստուած կատարեալ է, դա կը նշանակէ թէ անպայմանական պահանջ մը չէ ունեցածը աղքատներուն տալը։ Իրերու այս հետեւութիւնը բնական էր կազմակերպութեան մը մէջ որ նախապէս զուտ պրոլետարական էր եւ սակայն, յետոյ՝ ներս առնելով հարուստ տարրերը փոխեց իր բնոյթը։ Բայց եւ այնպէս, մի շարք աստուածաբաններ կան որոնք կը ժխտեն նախնական քրիստոնէութեան կոմունիստական բնութագիրը։ Ասոնք կը ջանան փաստել որ առաքեալներու տեղեկատուութիւնները վերջէն յարմարցուած են ուրիշի մը կողմէ անոր երազանքին համաձայն։ Բայց այս աստուածաբանները կը մոռնան թէ նախնական քրիստոնէութեան կոմունիստական նկարագիրը վերջին դարերուն հարստացած պաշտօնական եկեղեցւոյ դիրքին չէր համապատասխաներ, երբ ան քշուած էր դէպի հարուստի շահերը պաշտպանելու դժին։ Եթէ նախնական քրիստոնէութեան

այս պատկերը վերջերս հիւսուած ըլլար, պատեհապաշտութեան ախոյանները պիտի բողբէին անոր դէմ եւ պիտի աշխատէին աննրպասա նախադասութիւնները ջնջել եկեղեցւոյ կողմէ ճանչցուած սուրբ զբէն։ Եկեղեցին երբեք չէր կրնար հանգուրժել կեղծ ներմուծումներուն երբ անոնք իր քաղաքականութեան համաձայն չէին. իսկ երբ կոմունիզմն էր այդ կեղծ ներմուծումը, եկեղեցին ատոր բնաւ չէր կրնար թոյլատրել։ Եթէ կոմունիզմը պաշտօնապէս ընդունուած է որպէս նախնական միաբանութեան հիմնական պահանջը, եկեղեցին վերջերս չէ կրցած դայն ճանչնալ եւ ստիպուած է ընդունիլ, պարզ անոր համար որ անկարելի եղած է ուրիշ կերպ վարուիլ, քանի որ աւանդութիւնը շատ խոր արմատ ձգած էր եւ ծաւալ դրած ամէն տեղ։

Բայց ի՞նչ էր եկեղեցւոյ ճանչցած կոմունիզմը որ դարերով պահուեցաւ եւ տիրող դասակարգը դայն չփոխեց։

Կոմունիզմը որուն յարած էր նախնական քրիստոնէութիւնը իր ժամանակի պայմաններուն համաձայն, սպառման առարկաներու կոմունիզմն էր, սպառումի եւ բաշխումի կոմունիզմը։ Այդ շրջանին, արտադրութեան պայմաններու բերումով խոշոր քաղաքի մէջ ապրուստ ճարելու միջոցը, ըլլայ աշխատանք կամ մուրացկանութիւն, ցիրուցան կ'ընէր պրոլետարները։ Սոչոր քաղաքի մէջ կոմունիզմը ուրիշ բան չէր նշանակեր եթէ ոչ աղքատներու ձեռքով հարուստներու արիւնաբամութիւնը, մանաւանդ հոն ուր պրոլետարիատը հասեր էր քաղաքական իշխանութեան, ինչպէս կանխադոյն դարերուն Աթէնքի ու Հռոմի մէջ։ Թէ ուտելիքներու եւ թէ ուրիշ բաներու միացեալ սպառման դժով տարուած հարուստներու եւ աղքատներու համակցած գործունէութիւնը կը տանէր կոմունիզմի մը որ էր հասարակաց սնավարութիւն։ Յովհան Ոսկերեան ասա այդ տեսակէտն էր որ կը պաշտպանէր։ Հարստութիւն արտադրողը երբ հասարակութիւնն էր, նոյն հասարակութիւնը պիտի ըլլար այդ հարստութիւնը սպառողը հաւասար բաշխումով։ Երկրագործութեան մարդին վրայ եւս այս ձեւի կոմունիզմը կրնար տանիլ միացեալ կազմակերպուած աշխատանքով արտադրողական կոմունիզմի։ Հարուստները այդ բանը չէին սիրեր, անոնք երբեմն ողորմութեամբ զժով իրենց ունեցածներէն կը բաժնէին աղքատներուն, բայց անոնց հետ միասին արտադրողական աշխատանքի չէին հանգուրժեք լծուիլ։ Նախնական քրիստոնէութիւնը այս կէտը նկատի առնելով արդէն իսկ գոյութիւն ունեցող կոմունիստական տարրերէն կազմեց իր միաբանութիւնները։



Ե) ԱՆԱՐԳԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Աւետարանիչները Յիսուսի բերնով կը խօսին ամէն նիւթերու մասին, բայց ոչ աշխատանքի մասին: «Աւնեցածնիդ ծախեցէք», կամ «ունեցածնիդ ազգասներուն տուէք», բայց ի՞նչ է այդ ունեցած բանը, ո՞վ տուած է ան. ո՞վ արտադրած է, այդ մասին խօսք չկայ: Առնենք, օրինակ, Ղուկասի աւետարանը (գլուխ ԺԲ. 22-25) «Հոգ մի բնէք ձեր կեանքին համար թէ ի՞նչ պիտի ուտէք, ոչ ալ ձեր մարմնին համար թէ ի՞նչ պիտի հագնէք, վասնզի կեանքը կերակուրէն աւելի լաւ է ու մարմինը հաղուտէն: Նայեցէք երկինքի թռչուններուն որոնք ոչ կը սերմանեն, ոչ ալ կը հնձեն, որոնք ոչ շտեմարաններ ունին, ոչ ալ ամբարներ ու Աստուած զանոնք կը կերակրէ. դուք որչափ աւելի լաւ էք քան թռչունները: Եւ ձեզմէ ո՞վ կրնայ իր հասակին վրայ կանգուն մը աւելցնել: Հասկա եթէ ամենափոքր բանին կարող չէք, ուրիշ բաներու համար ինչո՞ւ հոգ կ'ընէք: Նայեցէք դաշտի շուշաններուն... Սողոմոն ալ իր բոլոր փառաւորութեանը մէջ անոնցմէ մէկուն նման ցհագուեցաւ... Գուք Աստուծոյ թաղաւորութիւնը խնդրեցէք եւ այդ բոլոր բաները ձեզի պիտի արժեին»: Պրոլետարները թէ խոշոր քաղաքներու մէջ եւ թէ դիւղական շրջանները՝ հաւաքուեցան նոր կրօնին, քրիստոնէութեան շուրջ, որովհետեւ տրուած հաւատարկութիւնները կը համապատասխանէին իրենց կոմունիստական հակումներուն:

Հակառակ այս բացայայտ իրողութեան, սակայն, կոմունիստական գաղափարի թշնամի աստուածարանները այս օրերուն հրապարակ իջած են եւ կը քննադատեն զիս որ իմ Սոցիալիզմի Յառաջապահները յօդուածիս մէջ վեր առած ու զայն պատկերացուցած եմ որպէս նախնական քրիստոնէական կոմունիզմ:

Այս պարոնները այնքան առաջ կ'երթան որ չեն քաջուրի յայտարարել թէ աւետարաններու եւ Գործք Առաքելոցի մէջ կոմունիստական գոյն ունեցող էջերը մի շարք ուսեալ մարդոց ձեռքով կատարուած խարդախ ներմուծումներ են: Անոնք չեն անդրադառնար այն իրողութեան որ մենք պիտի տարուինք մտածելու թէ եթէ մի քանի էջերը խարդախուած ներմուծումներ են, ուրեմն ամբողջ նոր Կոսկարան ըստածը ինքնին բաղկացած է խարդախուած, յերիւրածոյ գրութիւններէ:

Այսպէս տրամաբանօր կ'ընչո՞վ է յանցաւոր...:

Զ) ԸՆՏԱՆԻՔԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Երբ կոմունիզմը հիմնուած է ոչ թէ արտադրութեան հասարականացման այլ սպառման հասարականացման վրայ եւ կը հե-

տապնդէ ամբողջ հասարակօրդը մի նոր ընտանիքի վերածելու նըպատակը, այդ պարագային հասկնալի է որ աւանդական ընտանեկան կապերը կը սկսին խառնուիլ ու քակուիլ: Մենք այդ տեսանք եսէններու կազմակերպութեան մէջ. նոյնին կրկնութիւնը կը տեսնենք քրիստոնէութեան մէջ, որ յաճախ շեշտուած կերպով թշնամական արտայայտութիւններ կ'ընէ ընտանիքի հանդէպ: Մարկոսի աւետարանը տեսնենք թէ ի՞նչ կ'ըսէ այդ մասին (Մարկոս, Գ. 31-35) «Ետքը Յիսուսի մայրն ու եղբայրները եկան ու դուրսը կայնելով մարդ զրկեցին ու կը կանչէին զանիկա: Եւ ժողովուրդը անոր բոլորաբար նստեր էր ու իրեն ըսին թէ ահա քու մայրդ ու եղբայրներդ դուրսը կայներ են ու քեզ կ'ուզեն: Եւ անիկա պատասխան տուաւ անոնց եւ ըսաւ. Ո՞վ է իմ մայրս կամ եղբայրներս: Ու իր բոլորաբար նստողներուն նայելով ըսաւ. Ահա իմ մայրս ու եղբայրներս. վասնզի ով որ Աստուծոյ կամքը կը կատարէ անիկա է իմ եղբայրս եւ քոյրս ու մայրս»:

Ղուկաս աւետարանիչը աւելի կը շեշտէ այս կէտը (Ղուկաս, Թ. 59-62) «Եւ Յիսուս ուրիշի մըն ալ ըսաւ. Եկ՛ւր իմ ետեւէս. ան ալ ըսաւ. Տէր, ինձի հրաման տուր որ առաջ երթամ իմ հայրս թագեմ: Յիսուս ըսաւ անոր. Թող տուր մեռելներուն որ թաղեն իրենց մեռելները. բայց դուն գնա Աստուծոյ թաղաւորութիւնը քարոզէ: Ուրիշ մըն ալ ըսաւ. Տէր, ես քու ետեւէդ պիտի դամ, բայց ինձի հրաման տուր որ առաջ իմ տանը մէջ եղողներուն հրաժարական ողջոյն տամ: Յիսուս ըսաւ անոր. Մէկը որ ձեռքը մաճին վրայ կը դնէ ու ետեւը կը նայի, Աստուծոյ թաղաւորութեան յարմար չէ»:

Ղուկաս աւետարանիչը ուրիշ տեղ մը աւելի շեշտուած ատելութիւն կը սերմանէ ընտանիքի դէմ երբ կ'ըսէ. «Եթէ մէկը ինձի կուզայ եւ չատեր իր հայրը եւ մայրը, ու կիներ, ու զաւակները, ու եղբայրները եւ քոյրերը, նաեւ իր կեանքն ալ, չի կրնար իմ աշակերտս ըլլալ: (Ղուկաս, ԺԴ. 26-27): Սոյն անհրաժեշտ մատթէոս աւետարանիչը դարձեալ երեւան կուզայ որպէս պատեհասպաշտ վերաքննիչ երբ Քրիստոսի խօսքերը կը փոխէ հետեւեալ ձեւին. «Ան որ իր հայրն ու մայրը կը սիրէ ինձմէ աւելի, ինձի արժանի չէ. եւ ան որ իր որդին եւ դուստրը կը սիրէ ինձմէ աւելի, ինձի արժանի չէ»: (Մատթէոս, Ժ. 37): Այս տողերով ան ցոյց կուտայ նշանակելի անգայտացում ընտանիքի ատելութեան: Ընտանիքի այս ատելութեան սերտօրէն միացած է ամուսնութենէ հրաժարումը, որ ինչպէս եսէնները նոյնպէս եւ քրիստոնէաները անողքաբար կը պահանջէին: Բայց այս երկու գրութիւնները դարձեալ կը նոյնանան այն իրողութեամբ որ երկուքն ալ կը դար-



զացնեն երկու ձևի ամուրիական գոյավիճակ. ամուրիութիւն կամ լծակցական կեանքէ հրաժարում, եւ անկանոն սեռային յարաբերութիւններ որոնք հասկնայի զարձեր էին «կիներու հասարականացման» անունին տակ: Կամպանելայի Արեու Քաղաքը գրքին մէջ հետաքրքրական տողեր կան ուր քննադատ մը կը հաւատատէ. «Ար. Կղէմէս հոովմէացին կ'ըսէ որ առաքեալներու կարգազրուեթեանց համաձայն նախնական քրիստոնեաներու կիները հասարակաց ըլլալու էին եւ կը զովէ Պղատոնն ու Սոկրատը որ նոյն գիծը պաշտպաներ են: Բայց Գլոսէսը այդ բանը կը թարգմանէ ոչ թէ անկողնի հասարականացում, այլ որպէս հասարակաց հնազանդութիւն բոլորին: Եւ Տերրուդիանոս Գլոսէսի ըսածը կը հաստատէ ըսելով որ առաջին քրիստոնեաները ամէն ինչ որ ունէին հասարակաց սեփականութիւն էր բացի իրենց կիները, որոնք պարտաւոր էին ամբողջ հասարակութեան հնազանդիլ: Այս «հասարակաց հնազանդութիւնը» հետաքրքրական զուգահեռ մըն է երջանկութեան հետ ա՛նոնց որոնք «հոգիով աղքատ» են:

Մասնայատուկ սեռային յարաբերութեանց գոյավիճակ մը թելադրուած է Տասներկու Առաքեալներու վարդապետութեանց մէջ, քրիստոնէական ամէնէն հին գրականութեան արտադրութիւններէն մին որ մեղի գաղափար մը կուտայ Բ. դարու հաստատութեանց մասին: «Բայց ամէն մարդարէ, փորձուած եւ ճշմարիտ որ կը գործէ համաձայն եկեղեցւոյ երկրային խորհրդաւորութեան, բայց ուրիշներուն չի սորվեցներ այն ինչ որ ինք կ'ընէ, դուք դայն մի գատէք, որովհետեւ անոր դատաւորը Ատուած է: Այսպէս էր հին քրիստոնեայ մարդարէներու վարմունքը»: (ԺԱ. 11):

Հարնաք կ'ըսէ որ «եկեղեցւոյ «երկրային խորհրդաւորութիւնը» մթին բառերը կը նշանակեն ամուսնական գոյավիճակ, եւ անոնց նպատակն է վերցնել միաբանութեան կողմէ յարուցուած այն կասկածը զոր մարդիկ ունէին մարդարէներու սեռային յարաբերութեանց շուրջ: Հարնաք կ'ենթադրէ որ այդ նկատողութիւնը այն անձերու մասին է, որոնք ապրած են ամուսնական կեանքի մէջ իրրեւ ներքինիներ, կամ իրենց կիները նկատեր են իրրեւ իրենց քոյրերը: Կարելի՞ է միթէ որ այս ժուժկալութիւնը որպէս մեղանշում նկատուի: Դժուար է այդպէս ենթադրել: Հետաքրքրական է սորվիլ որ այս մարդարէները որոնք արտասովոր ամուսնական սեռային յարաբերութեանց մասին չեն զարողեր, բայց նոյն ատեն նոյն դժին վրայ կանգնած են հին մարդարէներուն հետ. ուրիշ խօսքով քրիստոնէութեան առաջին ուսուցիչներուն հետ որոնք իրապէս նոյն ձևի յարաբերութիւններ ունեցած են արդէն: Հարնաք հե-

տեւեալ պարբերութիւնները մէջտեղ կը բերէ որպէս պատեր կեղեցւոյ երկրային խորհրդաւորութեան ընթացքի վերաբերմամբ: «Շատ մը անամօթ մարդիկ կ'ապրէին կոյսերու հետ ողջախոհութեան դիմակով եւ ինքզինքնին կ'ենթարկէին վտանգի, կամ կը թափառէին հոս հոն այդ կոյսերու հետ ճամբաներուն վրայ, ամալութեանց մէջ, տեղեր ուր լեցուն էին վտանգները, նեղութիւնը, ձորերու մէջ, խրամներու մէջ... Ուրիշներ կ'ուսէին ու կը խմէին անոնց հետ, սեղաններու վրայ կը պառկէին հետերնին. կը մնային կոյսերուն եւ օժեալ կիներուն հետ, անբեւախայի շուայտութեամբ եւ անամօթութեամբ. սասնկ բաներ եթէ թոյլատրելի չէին, չէին կրնար անցնիլ հաւատարիմներու առջևէն որոնք կուսութեան պաշտօնատուներ կը զեկաւարէին»:

Պօղոս առաքեալ, առաջինը առաքեալներէն որոնք կապուած ըլլալու էին ամուրիութեան, իր Կորնթացւոց ուղղուած թուղթին մէջ կը պնդէ որ ինք իրաւունք ունի կին ընկերուհիներու հետ թափառիլ: Տեսէք թէ ի՞նչ կ'ըսէ ան (Կորնթ. Թ. 1-13) «Չէ՞ որ ես առաքեալ եմ. չէ՞ որ ես աղատ եմ. չէ՞ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը աչքովս տեսայ. չէ՞ որ դուք էք իմ գործս Տէրոջմով: Թէպէտ ուրիշներուն առաքեալ չըլլամ ալ, բայց անաւարկոյս ձեզի եմ, վտանգի իմ առաքելութեանս կնիքը դուք էք Տէրոջմով: Իմ պատասխանս անոնց որ զիս կը քննեն այս է. Միթէ մենք իշխանութիւն չունինք ուսելու եւ խմելու: Միթէ մենք իշխանութիւն չունինք Քրիստոսով քոյր եղող կին մը մեղի հետ պատեցնելու, ինչպէս ուրիշ առաքեալներ ու Տէրոջը եղբայրները ու Կեփաս (Պետրոս առաքեալ) կ'ընեն: Ո՞վ է որ այդի կը մշակէ եւ իր պտուղէն չուտեր, կամ ո՞վ է որ ոչխարներ կ'արածէ եւ ոչխարներու կաթէն չուտեր: Չէ՞ որ օրէնքն ալ նոյնը կը զրուցէ: Քանզի Մովսէսի օրէնքին մէջ ալ գրուած է. կալին մէջ աշխատող եզին դունչը չկապես... Եթէ մենք ձեզի հոգեւոր բաներ սերմանեցինք, մեծ բա՞ն մըն է եթէ ձեզմէ մարմնաւոր բաներ հնձենք»:

Բայց վայրկեան մը առաջ Պօղոս առաքեալ կ'արտայայտուի ամուսնութեան դէմ շարք մը հակասութիւններով: (Տես Թուղթ առ Կորնթացիս, է.) «Արդ այն բաներուն համար որ դուք ինծի գրեցիք, աղէկ է մարդուս որ կնոջ չմօտենայ: Բայց պոռնկութիւնը արգիլելու համար ամէն մարդ թող իր կինը ունենայ ու ամէն կին թող իր այրը ունենայ: ... Բայց շամուսնացածներուն ու որբեւայրիներուն կ'ըսեմ աղէկ է անոնց եթէ ինծի պէս ըլլան. հապա եթէ ժուժկալութիւն չունին, թող ամուսնանան, վտանգի աղէկ է ամուսնանալ քան թէ բոբրոքիլ: Ես կ'ուզեմ որ դուք անհոգ ըլլաք, վա-



սընդի շամուսնացած մարդը Տէրոջը բաները կը հոգայ թէ ինչպէս Տէրոջը հաճելի ըլլայ: Իսկ ամուսնացածը աշխարհիս բաները կը հոգայ թէ ինչպէս իր կնոջը հաճելի ըլլայ»:

Պօղոս առաքելալի Գործերուն մէջ երիտասարդ կնոջ մը հետ առաքելալի թափառումը կարելոր մաս կը կազմէ, սիրահարութիւն մը որ Տերաուղիանոս ըսած է եւ գրուած է Մերձաւոր Արեւելքի մէջ ապրող երիցականի մը կողմէ Բ. դարուն: Եւ այս Գործքերը երկար տանն շատ սիրուն բարեկրթական գիրք մը նկատուած է ջերմեռանդ քրիստոնեաներու կողմէ: Այս գրքին նշանակելի մասը գեղեցկուհի Թեքտայի ականդավէպն է որ սքանչելի նկարագրականն է Բ. դարու քրիստոնէական մթնոլորտին:

Թեքտան նշանածն էր արիստոկրատ երիտասարդի մը. այս ազջիկը կը հմայուի Պօղոսէն որ կարճահասակ, ճաղատ, խեղանդամ մարդ մըն էր, որ մերթ կը նմանէր հրեշտակի: Անոր հմայիչ քարոզները կը յափշտակեն Թեքտան որ կը թողու իր նշանածը, որը կը դատապարտէ Պօղոսը կառավարիչին առջեւ որպէս մէկը որ ամուսնական կապերը կը քակէ: Պօղոս կը բանտարկուի բայց Թեքտան կը դռնէ դայն բանտի խուցին մէջ: Անոր վրայ կառավարիչը կը դատապարտէ Պօղոսը քաղաքէն հեռանալու իսկ Թեքտան՝ խարոյկի: Բայց Թեքտան կ'աղատուի հրաշքով, սարսափելի անձրեւը կը մարէ խարոյկը. հանդիսատեսները կը դարմանան: Թեքտան կը հետեւի Պօղոսին. միասին կ'երթան Անտիօք ուր իշխանագուն մը կը սիրահարի Թեքտային եւ Պօղոսին հարստութիւն կը խոստանայ եթէ փոխէ անոր միտքը: Պօղոս կ'ըսէ որ նա իրեն չպատկանիր եւ ինք դայն չի գիտեր. տկար պատասխան մը հպարտ առաքելալին համար: Բայց Թեքտան արիաբար ինքզինք կը պաշտպանէ եւ անձնատուր չըլլար: Անոր վրայ նա կը նետուի դազաններու առջեւ եւ սակայն չի վնասուիր. ասով նորից կ'աղատուի: Յետոյ կը կտրէ իր մազերը եւ մարդու հագուստով կը հետեւի Պօղոսին, որ անոր կը սորվեցնէ Աստուծոյ խօսքը քարոզել եւ իրաւունք կուտայ մկրտելու:

Այս պատմութեան բնատիպ ձեւը յայտնի է որ ի վերջոյ եկեղեցւոյ աչքին դատապարտելի էր, բայց Գործք Առաքելոցը առանց հրաշքներու կը կորսնցնէր իր բարեկրթիչ ու զուարճացնող բնոյթը. ասոր համար կղերական խմբադիրները ամէնէն առարկելի տարրերը վերցուցին առանց դաշնելու գործին բնատիպ նկարագրի հետքերուն: Թէեւ շատ մը գրուածքներ կորսուած են, բայց բաւական փաստեր կան ցոյց տուող մասնաւոր սեռային յարաբերութեանց գոյութիւնը որոնք անջատուած ականդական ձեւերէն աւելի

շատ անարգական են եւ ստոր համար տաքեաներէն շատ ուժղին պաշտպանութիւն կը պահանջեն, իսկ եկեղեցին իր կողմէ պատասխանատուութենէ պատելու համար անոնց արձանագրութիւնը ջնջեր է:

Գծուար չէ ըսել որ ամուրիութեան վիճակը կ'առաջնորդէ աւելի շատ սեռային յարաբերութեանց մշակման. բացառութիւն է մուսուլման խոսակեացութիւնը:

Քրիստոնեաները կը հաւատան ապագայ կեանքին որ կը սկսի յարութեամբ, ուր այլեւս ամուսնութեան կեանքը կը դադրի: Այս հաւատքին հետեւողութեամբ նշանակելի է Քրիստոսի տուած պատասխանը իրեն եղած հետեւեալ հարցումին: Եթէ կին մը յաջորդաբար եօթը ամուսիններ ունեցեր է, յարութենէն վերջ որո՞ւն պիտի պատկանի ան: Եւ Յիսուս անոնց պատասխան տուաւ ըսելով. «Այս աշխարհին որդիները կին կ'անունն ու էրկան կը արուին: Բայց անոնք որ արժանի պիտի ըլլան այն աշխարհին հասնելու ու մեռնելէն յարութիւն տեսնելու, ոչ կին կ'անունն եւ ոչ էրկան կը արուին, որովհետեւ ալ շին կրնար մեռնիլ, քանզի հրեշտակներուն հաւասար են ու Աստուծոյ որդիներ են, վասնզի յարութեան որդիներ են»: (Ղուկաս, Ի. 34-37):

Այս չի նշանակել թէ մորդիկ ապագային նախնական քրիստոնէութեան շրջանի դուռ ուղիները պիտի ըլլան առանց մարմնական պէտքերու: Անոնց Ֆիդիքական բնոյթը եւ նիւթական ուրախութիւնը արդէն շեշտուած է: Յիսուս իր պատասխանով պարզապէս ըսել ուղեր է ապագային ամուսնութիւնները պիտի լուծուին այնպէս որ եօթը ամուսիններէն մէկուն ընտրութեան հարց չմնար:

Բայց մենք նկատի առնելու չենք հոյսմէացի եպիսկոպոս Կալիստոսի (217-222) յայտարարութիւնը որով կ'արտօնէր ծերակուտականներու ազատիներն ու այրիները սեռային յարաբերութիւն ունենալ նոյնիսկ գերիներուն հետ, իբր փաստ ամուսնութեան դէմ թշնամանքի: Այդպիսի յայտարարութիւն մը կ'ոմսնիղմի պատուը չէ. այն կ'ոմսնիղմին որուն թշնամանքը բնատիպի հանդէպ չափադանցեալ կէտի մը տարուած է, այլ արտայայտութիւնը պատեհապաշտական վերասրբադրութեան որ ուրախութեամբ բացառիկ զիջումներ ընել ուղեր է հարուստներու եւ իշխանաւորներու կողմնակցութիւնը շահելու համար: Բայց այս վերաքննութիւնը կրկնապէս ընդլիմութեան բացիած է քրիստոնէական եկեղեցւոյ մէջ կ'ոմսնիստական ձգտումներու վերապրումով, ձգտումներ որոնք յաճախ միացած են ամուսնութենէ հրաժարումով, ամուրիութեան վերահաստատումով կամ կ'ինքնու հասարականաց-



մամբ, մի բան որ տեսնուած է մանիքէկաններու (լոյսը բարեաց ազբիւր, խաւարը՝ չարեաց) եւ ճանաչականներու մէջ, (նոստիկ) :

Սոյն ձգտումներու ամէնէն ուժեղ արտայայտիչները եղած են կարպորակրատեանները (Կարպոկրատի հետեւողներ, Քրիստոսի Բ. դարուն որ Քրիստոսի աստուածութեան չէին հաւատար) : «Էպիպանէս (Կարպոկրատի որդին) կը սորվեցնէր թէ աստուածային արդարութիւնը ամէն մարդու անխտիր պարդեւած է հաւասար սեփականութեան եւ հաճոյքի իրաւունք : Իմի եւ քուի գաղափարները աշխարհ եկան երբ օրէնքներ գտնուեցան. օրէնքներուն հետ երեւան եկան գողութիւնը, շուքիւնը եւ ուրիշ մեղքեր : Որովհետեւ առաքեալը ինքը կ'ըսէ. «Մեղքը ճանչցնել տուողը օրէնքն է» (Հրոսովմ. Գ. 20) եւ «Քաւ լիցի, ես մեղքս չէի ճանչնար, եթէ ոչ օրէնքով» : (Հոսովմ. Է. 7) : Քանի որ Աստուած մարդուն մէջ զբաժ է սեռային ուժեղ զրգիւ մը մարդկային սեռը պահելու համար, սեռային խտրակը արգիլելը անհեթեթ բան է. անհեթեթ բան է նաեւ դրացիի կնոջ ցանկալը արգիլելը, որովհետեւ ինչ որ հասարակաց սեփականութիւն է անհատական սեփականութիւն չի կրնար ըլլալ : Ճանաչականները ատոր համար միակնութիւնը մեղանշում կը նկատեն կիներու հասարակայնացման սկզբունքին դէմ, որ աստուածային արդարութեան պահանջն է, ինչպէս մասնաւոր սեփականատիրութիւնը որ եղծանումն է մարդկային պիտոյքի իրերու հասարականացման սկզբունքին : Սր. Կղէմէս նոստիքներու այս յայտարարութիւններէն կը հետեւցնէ որ բոլոր այս հերետիկոսութիւնները կրնանք բաժնել երկու ձգտումներու. կամ բարոյական անտարբերութիւն եւ կամ նուիրագործեալ ժուժկալութիւն» :

Արդարեւ այս երկու երկրնարանքներն են որ կը կազմեն տընազարական կոմունիզմի հետեւելիք ճամբաները : Մենք դիտել տուինք արդէն որ այս երկու ծայրայեղութիւնները կրնան իրարու հանդիպել, որ անոնք իրենց ծագումը առած են նոյն տնտեսական արժատէն, թէեւ անոնք անհաշտելի են փիլիսոփայութեան մէջ :

Լուծուելով կամ աննուազն թուրանալով աւանդական ընտանեկան կապերը, կը փոխուի կնոջ դերքը : Երբ կիներ կապուած չէ ընտանեկան նեղ շրջանակի, իր միտքը կը կապուի ուրիշ բաներու : Համաձայն իր բնաւորութեան, իր կազմախօսութեան եւ ընկերային դիրքին, նա ոչ միայն ազատ կը զգայ ընտանեկան կապերէն, այլեւ բարոյական նկատումներէն, ընկերային պայմանադրութեանց յարգանքէն, առաքինութեանէն ու պարկեշտութենէն : Կայսերական շրջանին Հոսովմի արիստոկրատ կիները առհասարակ այս-

պէս եղան, որոնք չնորհիւ իրենց հարստութեան եւ արհեստական անդաւակութեան, չէին ուզեր որեւէ ընտանեկան գործ ընել :

Միւս կողմէ անալարի կոմունիզմի միջոցով ընտանիքի լուծումով պրոլետար կիներու մէջ բարոյագիտական զգացումներու ուժեղացում յառաջացաւ, զգացումներ որոնք կիները ընտանեկան նեղ շրջանէն տարին քրիստոնէական միաբանութեան աւելի լայն շրջանակին մէջ, իրենց անհատական առանձնութիւնը ամուսնի եւ գաւակներու պիտոյքներու օրական զոհացմանը նուիրուած, եղաւ առանձնութիւն մը նուիրուած մարդկային սեռի մեղանշումներէն ազատագրման նպատակին : Ատոր համար մենք կանխագոյն քրիստոնէական միաբանութեան մէջ կը գտնենք մարդարէներու կողքին մարդարէնէներ : Օրինակ, Գործք Առաքելոցի մէջ կը տեսնենք աւետարանիչ Փիլիպպոսը որ չորս աղջիկներ ունէր, կոյսեր, որոնք կը մարդարէնային : (Գործք Առաքելոց, ԻԱ. 9) : Թեքոսայի պատմութիւնը կը հաստատէ այս բանը : Ա. Թուղթ առ Կորնթացիսի մէջ (զլուխ ԺԱ.) Պօղոս կը ճանչնայ կիներու իրաւունքը որպէս մարդարէ : Միայն կ'ըսէ որ անոնք ծածկելու են իրենց երեսը որպէսզի հրեշտակները չզրգուին : Իսկ զլուխ ԺԴ. Ի մէջ կ'ըսէ. «Ձեր կիները լուռ մնալու են եկեղեցիներուն մէջ, որովհետեւ անոնց թոյլ տրուած չէ խօսիլ. հասարականացման ըլլալու ինչպէս օրէնքն ալ կ'ըսէ : Բայց եթէ բան սորվիլ ուզեն, տունը իրենց ախրերուն թող հարցնեն, քանզի կիներուն անալարի է եկեղեցիին մէջ խօսիլ» : (զլուխ ԺԴ. 34-36) :

Աւետարանի արդի քննադատները այս նախագաղտութիւնը կը նկատեն վերջէն մէջբերում մը : Նոյնպէս Պօղոսի նամակը Տիմոթէոսի (նոյնպէս եւ երկրորդը որ ուղղուած է Տիտոսի) խարդախ ներմուծում մըն է որ եղած է Բ. դարուն : Այս գրուածքները արդէն կը փորձեն կիներ տանիլ ետ ու բանտարկել ընտանիքի նեղ պատերուն մէջ : Նրա մասին կը կարդանք. «Սակայն նա պիտի փրկուի որդեծննդեամբ» :

Ասիկա կանխագոյն քրիստոնէական միաբանութեան տեսակէտը չէ սակայն. փաստերը կը հաստատեն որ նախնական քրիստոնէութեան փիլիսոփայութիւնը կոմունիստական սկզբունքներով շրջանակուած է եղեր եւ նախնական քրիստոնեանները առաջնորդուեր են անոնցմով որպէս գործնական կեանքի արտայայտութիւն :



### ՄԵՍԻԱՅԻ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

#### Ա) ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳԱՂՈՒՍՏԸ

Պատմական քրիստոնեությունը իր մէջ չառնէր միայն անոնք որ մեախայի կը հաւատան. ան կ'առնէ միայն մեախայի հաւատաւորներէն որոշ դասակարգ մը, որու մեախական գծով եղած ակնկալութիւնները մի քիչ կը տարբերին հրեայ ժողովուրդի մնացած մասին մեախայի ուղղուած ակնկալութիւններէն:

Առաջին կարգին երուսաղէմի քրիստոնեայ միաբանութիւնը ինչպէս միւս մնացած հրեաները կը սպասէին որ մեախան պիտի դարչուտով բայց ոչ նախապէս որոշուած ժամանակին: Մինչդեռ աւետարանները զրուած են այնպիսի ատեն մը երբ քրիստոնեաներու մեծ մասը այն վառ յոյսերը չունէր (աւետարանները մեզի ցոյց կուտան յատկորէն որ Քրիստոսի ժամանակակիցներու սպասումները յուսախարութեան մատնուած են) բայց նոյն ատեն անոնք կը պահէին այդպիսի յոյսի մը մնացորդները. մնացորդներ զորոնք անոնք ստացան բերանացի եւ գրաւոր աղբիւրներէ, եւ որոնց ուղղութեամբ աւետարանիչները գործեցին վերջերս:

Մարկոսի համաձայն (դուխ Ա. 14-15) Յովհաննէս երբ բանաբարկուեցաւ, Յիսուս եկաւ Գալիլիա քարոզելով Աստուծոյ թագաւորութիւնը ըսելով. «Ժամանակը եկած է եւ Աստուծոյ թագաւորութիւնը մօտ է»:

Աշակերտները կը հարցնեն Յիսուսի թէ մեախայի գալստեան նշանները ինչպէս գիտնալու է, եւ նա ըսաւ անոնց՝ այդ նշանները՝ երկրաշարժ, համաճարակ, պատերազմի աւերներ, արեւու խաւարում, եւայլն, եւ աւելցուցեր է. «Որդին մարդոյ պիտի դայ մեծ զօրութեամբ ու փառքով ագատելու իր հաւատարիմ հետեւորդները», եւ ըսեր է. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, այս սերունդը պիտի չանցնի մինչեւ բոլոր ասոնք կատարուին» (Ղուկաս, ԻԱ. 32) Մարկոս նոյնը կ'ըսէ զրեթէ (դուխ ԺԳ. 30): Ուրիշ տեղ մը Յիսուս կ'ըսէ. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, անոնցմէ ոմանք պիտի մնան հոս եւ պիտի չճաշակեն մահը մինչեւ որ տեսնեն Աստուծոյ թագաւորութեան գալը մեծ զօրութեամբ»: Վերջապէս Մատթէոսը եւ Յիսուսը կը խօսեցնէր, (Մատթէոս, Ժ. 22-24) «Բայց ով որ մինչեւ վերջը համբերէ, անիկա պիտի ապրի: Ու երբ այս քաղաքին մէջ ձեզ հալածեն ուրիշ քաղաք փախէք, քանզի ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Իսրայէլի քաղաքները պիտի չհատցնէք, մինչեւ որդին մարդոյ դայ»: Պօղոս Թուղթ առ Թեսաղոնիկեցիսին մէջ նոյնը կ'ըսէ (դուխ

Գ. 13-20). «Ձեռք ուղեր, եղբայրներ, որ սոքէտ ըլլաք ննջեցեալներուն վրայով, որպէսզի չտրամէք ինչպէս ուրիշները որոնք յոյս չունին: Քանզի եթէ հաւատաք թէ Յիսուս մեռաւ ու յարութիւն առաւ, նոյնպէս ալ Աստուած ննջեցեալները Յիսուսով պիտի բերէ անոր հետ: Վասնզի զայս կը զրուցենք ձեզ Տէրօջը խօսքովը, թէ մենք որ մինչեւ Տէրօջը գալուտաւ ողջ մնանք, բնաւ ննջեցեալներէն առաջ պիտի չանցնինք: Վասնզի Տէրը ինք ազգարարութեան հրամանով, հրեշտակապետին ձայնովը ու Աստուծոյ փողովը երկինքէն պիտի իջնէ եւ Քրիստոսով մեռածները առաջ յարութիւն պիտի առնեն: Եւ ինչ որ ողջ մնացած ենք անոնցմով մէկտեղ պիտի յախճատուինք ամպերով Տէրօջը առջեւ ելլելու օդին մէջ եւ այնպէս յախտեսն Տէրօջը հետ պիտի ըլլանք: Ուստի մէկզմէկ մխլթարեցէք այս խօսքերով»:

Հասկնալի է, ուրեմն, որ մէկը անսպասձառ մեռնելու չէ որ Աստուծոյ թագաւորութիւնը մտնէ: Ողջ մնացողը կրնայ սպասել Աստուծոյ թագաւորութեան ու երբ մեռնինք յարութիւն առնեն ինքն ալ անոնց հետ կը վայելէ կեանքը իր լիութեամբ: Մենք աւետարաններու մէջ սակաւին կը դռնենք այս հաւատքի հետքերը, թէ եւ եկեղեցւոյ վերջին ըմբռնումը երկրային կեանքի գաղափարը փոխած է ապագայի երկնային գոյալիճակին, անգրաշխարհի կեանքի գաղափարին:

Հիմա լսենք Մատթէոսը (դուխ ԺԹ. 28-32). «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, դուք որ կը հետեւիք ինձի սերունդէ սերունդ, երբ որդին մարդոյ պիտի նստի իր փառաց գահին վրայ, դուք ալ պիտի նստիք 12 գահերու վրայ եւ պիտի դատէք Իսրայէլի 12 ցեղերը: Եւ ով որ կը թողու իր տունը, իր եղբայրները կամ քոյրերը, կամ հայրը, կամ մայրը, կամ կինը, կամ զուակները, կամ հողերը իմ սիրոյս ու անուան համար, ան հարիւրապատիկը պիտի ընդունի եւ պիտի ժառանգէ յախտնական կեանքը»: Ուրիշ խօսքով երբ մարդ կը հրաժարի ամէն բանէ եւ կը լուծէ իր ընտանիքը իրապէս երկրային հաճոյքները պիտի վայելէ ապագային, մասնաւորապէս գահի եւ սեղանի հաճոյքները: Յիսուս միւս կողմէ, կը սպառնայ անոնց որոնք իրեն չեն հետեւիր. անոնք հասարակութենէն պիտի վտարուին մեծ ազէտէն յետոյ: «Հոն պիտի ըլլայ լալ ու սկուաները կըրճըտնել, երբ տեսնէք Աքրահամը ու Իսահակը եւ Յակոբը ու բոլոր մարդարէները Աստուծոյ թագաւորութեանը մէջ ու ձեզ դուքս հանած: Եւ պիտի դան արեւելքէն ու արեւմուտքէն, հիւսիսէն ու հարաւէն ու պիտի բազմին Աստուծոյ թագաւորութեան մէջ» (Ղուկ. ԺԳ. 28-29): Բայց հոս ան առաքեալներուն կը խոստանայ.



«Ես ձեզի թագաւորութիւն մը ուխտ կ'ընեմ, ինչպէս իմ հայրս ինձի թագաւորութիւն մը ուխտ ըրաւ, որպէսզի զուք իմ սեղանէս ուտէք ու խմէք իմ թագաւորութեանս մէջ եւ աթոռներու վրայ նստիք Իսրայէլի 12 ցեղերը դատելու»: (Ղուկաս, ԻԲ. 29-30): Այս խօսքերուն վրայ ստաբեալներու մէջ նոյնիսկ վէճ կը ծագի թէ Յիսուսի աջ ու ձախ կողմերը ովքեր պիտի նստին (Մատթ. Ժ. 35-40):

Յիսուս փարիսեցիի մը տունը ճաշած ատեն անոր կը թելադարէ չհրաւիրել իր բարեկամներն ու ազգականները, այլ միայն աղքատները, կաղերն ու կոյրերը: «Դուն օրհնէք պիտի ընդունիս ատոր համար, որովհետեւ անոնք քեզի չեն կրնար փոխարինել, բայց դուն քու վարձատրութիւնը պիտի ստանաս երբ արգարները յարութիւն առնեն»: Ասով կը հասկնանք օրհնութեան իմաստը: «Եւ սեղանի բոլորտիքը նստողներէն մին երբ լսեց այս խօսքերը Յիսուսի ըսաւ. Երանելի է ան որ Աստուծոյ թագաւորութեան մէջ հաց պիտի ուտէ»: (Ղուկաս, ԺԴ. 15): Բայց ուտելիքի հետ խմիչք ալ պիտի ըլլայ. վերջին ընթրիքին Յիսուս կը յայտարարէ. «Բայց կ'ըսեմ ձեզի, ասկէ ետեւ խաղողի հիւթը բնաւ պիտի չխմեմ մինչեւ այն օրը երբ ձեզի հետ զանիկա նոր խմեմ իմ հօրս թագաւորութեանը մէջ»: (Մատթ. ԺԶ. 29):

Յիսուսի յարութիւնը որպէս աւետարներ նկատուած է ստաբեալներու յարութեան, բայց աւետարանները բացայայտօրէն կը շեշտեն Յիսուսի յարութենէն յետոյ անոր մարմնական ներկայութիւնը:

Յիսուս իր յարութենէն յետոյ կը հանդիպի իր երկու աշակերտներուն Իմմատու գիւղին մէջ, անոնց հետ կ'ընթրէ եւ յետոյ կ'աներեւութանայ: «Եւ անոնք երան ու նոյն ժամուն Երուսաղէմ զարձան ու մէկտեղ ժողովուած դասն ստանեւմէկը եւ անոնց հետ եղողները, որոնք կ'ըսէին թէ իրաւցնէ Տէրը յարութիւն առաւ ու Սիմոնի երեւցաւ: Եւ իրենք պատմեցին ինչ որ ճամբուն վրայ եղաւ եւ թէ ինչպէս ինքզինք իրենց ճանչցուց հացը կտրած ատենը: Եւ քանի որ այս բաները կը խօսէին կայնեցաւ անոնց մէջտեղը եւ ըսաւ անոնց. Խաղաղութիւն ձեզի: Բայց անոնք զարհուրելով կը վախնային ու կը կարծէին թէ ոչի մը կը տեսնէին: Եւ ըսաւ անոնց. Ինչո՞ւ խոսոված էք եւ ինչո՞ւ սրտերնուզ մէջ խորհուրդներ կ'եղլեն: Տեսէք ձեռքերս ու ոտքերս որ ես ինքս եմ, չօշափեցէք զիս ու տեսէք, վասնզի ոզին մարմին եւ ոսկոր չունենար, ինչպէս զիս կը տեսնէք որ ունիմ: Եւ զայս ըսելով ձեռքերն ու ոտքերը ցուցուց անոնց: Ու երբ տակաւին իրենց ուրախութենէն չէին հաւատար եւ զարմանքի մէջ էին ըսաւ անոնց. Ուտելիք մը ունի՞ք հոս: Անոնք

ալ կտոր մը ձուկ ու մեղրախորիսխ տուին անոր: Եւ կերաւ անոնց առջեւ եւ ըսաւ անոնց», եւ այլն: (Ղուկաս, ԻԴ. 33-44): Ասկէ զատ Յովհաննէս աւետարանիչը մեղի կը փաստէ որ Յիսուս իր յարութենէն յետոյ լաւ ախորժակ ունեցեր է (տես Յովհաննէս աւետարանը գլուխ Ի. 19-26): «Եւ նոյն օրը, Մէկշաբթի իրեկունը աշակերտներուն ժողովուած տեղին դռները դոց ըլլալով հրեաներէն վախնալու համար Յիսուս եկաւ եւ անոնց մէջտեղը կայնեցաւ ու ըսաւ անոնց. Խաղաղութիւն ձեզի: Եւ զայս ըսելով իր ձեռքերը եւ կողը ցուցուց անոնց. աշակերտներն ալ ուրախացան երբ Տէրը տեսան: Թովմաս առաքեալը չհաւատաց մինչեւ որ մատը բեւեռներուն տեղը չխոթեց ու ձեռքը անոր կողը չխոթեց»: (Յովհ. Ի. 19-26): «Անկէ յետոյ Յիսուս նորէն իր աշակերտներուն յայտնեց ինքզինքը Տիրերիայի ծովուն եզերքը եւ այսպէս յայտնեց: Մէկ տեղ էին Սիմոն Պետրոս եւ Թովմաս, Երկուրեակ ըսուածը եւ Նաթանայէլ որ Գալիլիայի Կանա քաղաքն էր. եւ Ջերզէոսի որդիները եւ ուրիշ երկու աշակերտներ: Սիմոն Պետրոս ըսաւ. Ես ձուկ որսալու կ'երթամ. ըսին անոր մենք ալ կուզանք. երան եւ շուտ մը նաւը մը տան ու այն գիշերը բան մը չբռնեցին: Ու երբ ալ առաւ եղաւ Յիսուս ծովուն եզերքը կայներ էր, բայց աշակերտները չճանչցան թէ Յիսուս է: Իսկ Յիսուս ըսաւ անոնց. Տղաք, ուտելու բան մը ունի՞ք: Պատասխան տուին իրեն, ոչ: Եւ ըսաւ անոնց. Ուտկանը նաւուն աջ կողմը ձգեցէք ու պիտի գտնէք. ու ձգեցին ու ձուկերու շատութենէն չկրցին զանիկա քաշել: Այն ատեն այն աշակերտը զոր Յիսուս կը սիրէր, ըսաւ Պետրոսի. Անիկա Տէրն է. իսկ Սիմոն Պետրոս երբ լսեց թէ Տէրն է, վերաբիւն վրան առան, վասնզի մերկ էր ու ծովը նետուեցաւ: Եւ միւս աշակերտները նաւակով եկան (վասնզի ցամաքէն հեռու չէին) եւ ուտկանը ձուկերով կը քաշէին: Ու երբ ցամաք երան, հոն վառած կրակ տեսան եւ վրան ձուկ դրուած եւ հաց: Յիսուս ըսաւ անոնց. Բերէք այդ ձուկերէն զորս դուք հիմա բռնեցիք: Եւ Յիսուս ըսաւ անոնց. Եկէք եւ ճաշ ըրէք: Ասիկա Երրորդ անգամն էր որ Յիսուս կը յայտնուէր իր աշակերտներուն մեռելներէն յարութիւն առնելէն վերջ»: (Յովհ. ԻԱ. 1-14): Այս երրորդ անգամը կարելի է ըսել վերջինը եղած է: Չուզով նախաճաշ ընելէն վերջ Յիսուս աւելի կազդուրուած համբարձաւ երկիւնք աւետարանիչներու երեւակայութեամբ, ուրկէ նորէն դալու է որպէս մեկսի:

Քրիստոնեաները հաստատապէս կը պնդեն որ յարութենէն վերջ մարմին ըսուածը տարբեր է յաւիտենական կեանքի համար: Նախնական քրիստոնէութեան շրջանին երբ մարդիկ այնքան տղէտ



էին եւ երբուն մաքի տէր, չափազանցութիւն է ծաղկեալ դադար-  
 փարներ վերադարձ այլ նախնական քրիստոնեաներուն եւ հրեանե-  
 րուն: Կորնթացւոց ուղղած առաջին թուղթին մէջ Պողոս իր ընկեր-  
 աներուն ապագայ կեանքի մասին նոր տեսութիւն մը կը պարզէ,  
 ինչպէս նաեւ յարութիւն առնողներու մարմնի մասին. երկուքն ալ,  
 թէ ողջ մնացողները եւ թէ յարութիւն առնող մեռելները, նոր տե-  
 սակի մարմին մը պիտի ունենան: (Կորնթ. Ա. Թուղթ, ԺԵ. 49-  
 51-52): Պողոս կ'ըսէ. «Ինչպէս հողեղէնին կերպարանքը հագեր ենք,  
 երկնաւորին կերպարանքն ալ պիտի հագնինք... Ամէնս պիտի  
 շննջենք, բայց ամէնս ալ պիտի փոխուինք, յանկարծակի աչք գո-  
 ցել բանալու մէջ, վերջին փողին հնչելու ատենը, որովհետեւ փողը  
 պիտի հնչուի եւ մեռելները յարութիւն պիտի առնեն առանց ապա-  
 կանութեան, եւ մենք ալ պիտի փոխուինք: Վասնզի պէտք է որ այս  
 ապականացու մարմինը անտպականութիւն հագնի, ու այս մահ-  
 կանացուն անմահութիւն հագնի: Բայց երբ այս ապականացու մար-  
 մինը անապականութիւն հագնի եւ այս մահկանացուն անմահու-  
 թիւն հագնի, այն ատեն պիտի կատարուի այն խօսքը որ գրուեցաւ  
 թէ մահը յաղթութեան մէջ ընկղմեցաւ: Ո՞ւր է, ով մահ, քու խաչ-  
 թոցը, ո՞ւր է, ո՞վ գերեզման, քու յաղթութիւնդ: Մահուան խաչ-  
 թոցը մեղքն է ու մեղքին ուժը՝ օրէնքը»: Ինչպէս կը տեսնենք Պո-  
 ղոս ապագայ կեանքը կը պատկերացնէ մի տեսակ անիշխանութիւն,  
 ուր օրէնք ըստածը չկայ, փոխակերպուած հողեւոր մարմիններով  
 մարդոց համար:

Յովհաննու Յայտնութիւնը նոյնիսկ երկու յարութեանց մա-  
 սին կը խօսի. առաջինը տեղի ունենալու է Հռովմի կործանումէն  
 յետոյ: «Եւ աթոռներ տեսայ ու նստան անոնց վրայ եւ անոնց դա-  
 տաւորութիւն արուեցաւ, նաեւ Յիսուսի վկայութեան համար ու  
 Աստուծոյ խօսքին համար զլիսատուածներուն հոգիները տեսայ, եւ  
 զանոնք որ երկրպագութիւն չըրին զազանին, ոչ ալ անոր պատ-  
 կերին... եւ սպրեցան ու Քրիստոսի հետ հազար տարի թաղաւո-  
 րեցին: Եւ ուրիշ մեռելները չապրեցան մինչեւ հազար տարին կա-  
 տարուեցաւ. ասիկա է առաջին յարութիւնը: Երանելի եւ սուրբ է  
 ան որ առաջին յարութեան մէջ բաժին ունի, ասոնց վրայ երկրորդ  
 մահը իշխանութիւն չունի, բայց անոնք Աստուծոյ եւ Քրիստոսի  
 քահանաները պիտի ըլլան եւ անոր հետ հազար տարի պիտի թա-  
 դաւորեն» (Յովհ. Յայտ. գլուխ Ի. 4-6): Անկէ յետոյ սպասամբ  
 ազգեր պիտի ելլեն այս սուրբ մարդոց դէմ: Ապտամբները պիտի  
 նետուին կրակի եւ ծծումբի լճին մէջ եւ մեռելները, բոլորը յարու-  
 թիւն պիտի առնեն եւ պիտի դատուին. արդարները մահ պիտի

չճանչան իսկ մեղաւորները պիտի նետուին կրակէ լճին մէջ: Ար-  
 դարները պիտի վայելեն կեանքը նոր Երուսաղէմի մէջ, ուր երկրի  
 ազգերը պիտի բերեն իրենց թանկագին իրերն ու դանձերը:

Յովհաննու Յայտնութեան ԻԱ. գլուխը կարգացողը պիտի  
 տեսնէ որ հրէական ազգայնականութիւնն է որ կը խօսի միամիտ  
 եղանակով: Իրողութիւն է որ Յովհաննու Յայտնութիւնը եւս հրէա-  
 կան ծագում ունի որ կազմուած է Երուսաղէմի պաշարման շրջանին:

Նոյնիսկ Երուսաղէմի անկումէն վերջ տակաւին կային հրէա-  
 կան յայտնութիւններ որոնք կը պարզեն մետախան յոյսեր: Ասոնց  
 տեսակները կը տեսնենք Պարուզի եւ Եղրասի Դ. գրքին մէջ: Պա-  
 րուզ կը յայտարարէ որ «մեխիան պիտի հաւաքէ ժողովուրդները եւ  
 անոնց պիտի շնորհէ կեանք ինչպէս շնորհուած է Յակոբի սերունդ-  
 ներուն եւ պիտի ոչնչացնէ բոլոր միւսները որոնք ճնշեցին Իսրա-  
 յէլը: Յետոյ մեխիան պիտի նստի աթոռին վրայ եւ անվերջ ուրա-  
 խութիւն մը պիտի տիրէ աշխարհին, բնութիւնը ամէն ինչ պիտի  
 տայ առատօրէն, մասնաւորապէս զինի: Մեռելները յարութիւն  
 պիտի առնեն եւ մարդիկ պիտի կազմակերպուին տարբեր ձեւով:  
 Արդարները պիտի չյոյնին աշխատանքէն. անոնց մարմինը պիտի  
 փայլէ հրաշալի կերպով, բայց անարդարները աւելի տղեկ պիտի  
 ըլլան եւ պիտի չարչարուին»:

Եղրասի Դ. գրքի հեղինակը նմանօրինակ մտածումներ ունի:  
 «Մեխիան պիտի գայ, պիտի ապրի չորս հարիւր տարի, յետոյ պի-  
 տի մեռնի մարդկութեան մնացած մասին հետ: Ասոր պիտի հետե-  
 լի ընդհանուր յարութիւնը եւ դատաստանը. արդարները պիտի վա-  
 յելեն խաղաղութիւն եւ աննկարագրելի ուրախութիւն, իսկ անար-  
 դարները՝ տառապանք ու ամաչանք»:

Մենք կը տեսնենք թէ ինչքան թեթեւ է տարբերութիւնը  
 նախնական քրիստոնեաներու մեխիական յոյսերուն եւ հրեայ բնակ-  
 չութեան մեխիայի կապուած յոյսերուն միջեւ: Եղրասի Դ. գրքը  
 զանազան զարգերով քրիստոնէական կեղեցւոյ ուշադրութիւնը  
 զրուած է եւ կարգ մը բաներ ընդունուած են աւետարանի բողո-  
 քական թարգմանութեանց մէջ:

Բ) ՅԻՍՈՒՍԻ ՆԱԽԱՀԱՅՐԵՐԸ

Մեխիայի կանխագոյն քրիստոնէական ըմբռնումին շատ սեր-  
 տօրէն կ'ընկերանայ այդ ժամանակուայ հրէական ըմբռնումը զոր  
 աւետարանները որոշ փորձով կ'ուզեն սպացուցել որ Յիսուս Դա-  
 լիթի սերունդէն է: Որովհետեւ մեխիան, համաձայն հրէական հա-  
 ւատքին թագաւորական ցեղէն ըլլալու է: Ան կրկին ու կրկին կոչ-



լամ է «Դաւիթի տղան» կամ «Աստուծոյ տղան» որ երբայերէն նոյնը կը նշանակէ: Այսպէս Բ. Թագաւորացի մէջ Աստուած կ'ըսէ Դաւիթին. «Եթէ քու օրերդ լեցուին ու դուն հայրերուդ հետ քնանաս, քեզմէ հաքը քու երանքդ կ'ըլլոյ զաւակդ պիտի բարձրացնեմ ու անոր Թագաւորութիւնը պիտի հաստատեմ: Անիկա իմ անուանս տուն պիտի չինէ ու անոր Թագաւորութեան աթոռը յաւիտեան պիտի կանգնեմ, ես անոր հայր պիտի ըլլամ ու անիկա ինձի որդի պիտի ըլլայ»: (Բ. Թագաւորաց 12-14): Եւ Թագաւորը կ'ըսէ Սաղմոսաց Բ. դիւսուն մէջ, 7): «Դուն իմ որդիս ես, ես այսօր քեզ ծնայ»:

Ասոր համար անհրաժեշտ է ապացուցել ազդահամարի ծառի ճիւղերը ներկայացնելով, որ Յովսէփը, Յիսուսի հայրը, Դաւիթի սերունդէն է եւ Նազարէթիցի Յիսուսը ծնելու է Բեթլեհէմի մէջ Դաւիթի քաղաքը: Այս բանը մտայարմար ընելու համար ամէնէն նըշանակելի հաւատարմութիւնները օգնութեան կանչելու էր: Այս առթիւ Ղուկասի աւետարանին մէջ (դլ. Բ. 1-10) կը կարդանք. «Ու եղաւ որ այն օրերը Օղոստոս կայսրէն հրաման ելաւ որ բոլոր աշխարհ զրուի (այս առաջին աշխարհապիտը եղաւ Կլեբէնոսի Սուրիայի վրայ կուսակալութիւն ըրած ատենը): Եւ ամէնքը կ'երթային աշխարհապիտը մտնելու ամէն մէկը իր քաղաքին մէջ: Յովսէփ ալ Դաւիթիայէ, Նազարէթ քաղաքէն, ելաւ դէպի Հրէաստան Դաւիթի քաղաքը որ Բեթլեհէմ կ'ըսուի (իբեն Դաւիթի տունէն ու ազգատոհմէն ըլլալուն համար) աշխարհապիտը մտնելու Մարիամի հետ մէկտեղ որ իր նշանածն էր եւ յղի էր: Եւ եղաւ որ երբ ասոնք հոն էին անոր ծնանելու օրերը լեցուեցան: Եւ իր անդրանիկ որդին ծընաւ ու խանձարուրով փաթթեց եւ դանիկա մտուրին մէջ պատկեցուց, վասնզի իջեւանին մէջ տեղ չկար»:

Ղուկասի աւետարանին հեղինակը կամ հեղինակները տգէտ եղած են եւ չեն դիտցեր որ Օղոստոս կայսրը երբեք աշխարհապիտ ընելու հրաման չէ տուած, այդ բանը ընողը եղած է Փուլիքնուս (7 Յ. Ք.) որ Հրէաստանի կառավարիչ էր Հռոմի կողմէ նշանակուած. ան է եղած առաջին աշխարհապիտը ընել տուողը: Բայց այս սխալը այնքան մեծ չէ որքան այն որ կայսերական աշխարհապիտի կամ գաւառական աշխարհապիտի համար մարդիկ ընտանիքով ճամբորդելու են քաղաքէ քաղաք: Հռոմէական մարդահամարի համար բնաւ այդպիսի օրէնք մը չէ անցած, միայն մարդն էր որ իր ծնած տեղին մէջ, իր բնակած տեղին մէջ արձանագրուելու էր: Բայց այս պատմութեան բարեպաշտական նպատակն է ցոյց տալ որ Յովսէփ աստուածային ողիով լեցուն իր նշանածը առեր է, հետը քաղաքէ քաղաք ճամբորդեր է երբ նա արդէն յղի էր: Այստեղ կայ ուրիշ

հակասութիւն մը: Հեթանոսները յատուկ հետաքրքրութիւն չունէին Դաւիթի համար, եւ չէին մտածեր թէ մէկը մեծ կը հաշուէր եթէ Դաւիթի սերունդէն ըլլար: Յունական եւ Հռոմէական մտածողութիւնը հակած էր Աստուծոյ հայրութեան կողմը, մինչ հրեաներուն համար մեծութեան սեմալը Թագաւորական սերունդն էր: Յոյներուն եւ Հռոմէացիներուն համար անսովոր բան մը չէր մեծ մարդ մը ներկայացնել՝ որպէս Ապոլոնի կամ ուրիշ Աստուծոյ մը որդին: Բայց քրիստոնէական մտածողութիւնը մեսիայի վարկը հեթանոսներու աչքին բարձրացնելու ջանքերուն մէջ մի քիչ դժուարութեան կը հանդիպէր, որովհետեւ միաստուածութիւնը փոխանուած էր հրեաներէն: Աստուծոյ զաւակ ունենալը բազմաստուածութեան ճամբէն դուրս բան մը չէ. երբ դուն կ'ունենաս աստուած մը աւելի որու հետ դործ ունենալու ես: Բայց ունենալ աստուած մը որ կը ծնի ուրիշ աստուած մը եւ սակայն աստուածը նորէն մէկ կը մնայ, այդ դժուար է բացատրել: Եւ հարցը այնքան չի պարզուիր երբ Աստուծոյ դիւսն ստեղծագործական կարողութիւնը կ'անջատես եւ կուտաս Հոգին Սրբոյ եւ կը ներկայացնես Հայր Աստուած, Որդին Աստուած եւ Հոգին Սուրբ Աստուած, երեք անձեր մէկ ըմբռնումով: Ասիկա ամէնէն ուժեղ երեւակայութեան տէր հանձարեղ մարդուն իսկ դիւսու ցաւ կուտայ: Ասոր համար երրորդութիւնը եղաւ այնպիսի միջին դադանիք մը որուն պէտք է հաւատալ առանց հասկնալու, զադանիք մը որուն հաւատալու է պարզ անոր համար որ անհեթեթութիւն է:

Չկայ կրօն մը առանց հակասութեանց: Երբեք կրօն մը չէ եղած առանձին գանկի մը ծնունդը, ամէն կրօն արտադրութիւնն է ընկերային գանազան ազդեցութեանց որոնք տեւեր են զարեքով եւ կը ցոլացնեն գանազան պատմական դրութիւններ: Բայց շատ դժուար է գանկ որեւէ ուրիշ կրօն որ ունենայ այնքան շատ հակասութիւններ եւ անբնական ենթադրութիւններ որքան քրիստոնէութիւնը, որովհետեւ ուրիշ ոչ մէկ կրօն ծագում առած է այնքան աշքառու տարբերութիւն ունեցող տարբերէ որքան քրիստոնէութիւնը: Քրիստոնէութեան մէջ կան հրէականութիւն, Հռոմէական նկարագիր, պրոլետարներ, իշխողներ, կոմունիստական կազմակերպութիւն եւ կազմակերպութիւն մը որ կոչուած է բոլոր դասակարգերու շահագործումը յառաջ տանիլ: Եւ նոյն ատեն Հօր եւ Որդւոյ միացումը նոյն անձին մէջ միայն դժուարին կէտը չէ եղած մեսիայի պատկերի նկարագրութեան մէջ, երբ նկատի առնենք որ քրիստոնէական մտածողութիւնը շուտով ինկած է ոչ-հրէական միջավայրի ազդեցութեան տակ:



Ինչ ընելու է Յովսէփի հայրականութեան հետ: Մարիամը իր ամուսինէն չէ որ յղի մնացեր է Յիսուսով: Եւ երբ Աստուած անոր մտեր է ոչ թէ որպէս մարդկային էակ, այլ որպէս ոգի, ուրեմն նա կոյս մնացեր է: Այդ կը նշանակէ որ Յիսուս Դաւիթի սերունդէն չէ: Բայց նոյն ատեն աւանդութեան կապը պահպանուած է ազգադրական ծառի ճիւղերուն հետ, եւ Յիսուս նկատուած է որպէս Դաւիթի սերունդի շառաւիղը: Բայց խեղճ Յովսէփը լծուած է աղերաստ գործի մը երբ ապրած է կոյսի մը հետ եւ չէ կրցեր մօտենալ անոր կուսութեան, ոչ ալ թոյլ կրցած է առ ինքզինքին անպատուրուած զգալու անոր յղութեան խնդրով:

Գ) ՅԻՍՈՒՍ ԻՐՐԵՒ ԱՊՍՏԱՄԲ

Վերջին օրերու քրիստոնեաները թէեւ չեն կրցած ամբողջապէս աննկատ թողուլ թաղաւորական արդատահմը իրենց մեխային հակառակ անոր աստուածային ծագումին, բայց անոնք մեծ նեղութիւն յանձն առած են ջնջել Յիսուսի հրէական ծնունդի ուրիշ մէկ յատկանշական դիժը, այն է անոր ապստամբական ոգին:

Քրիստոնէութիւնը Բ. դարուն աւելի եւ աւելի բացասական հնազանդութեան ոգիով խմբուած էր որը բաւական տարբեր էր նախորդող դարու հրէական ոգիէն: Մենք արդէն սորվեցանք թէ հրեայ ժողովուրդը որ ապստամբական նկարագիր ունէր եւ մեսիային կը սպասէր, մասնաւորապէս Երուսաղէմի պրօլետարները որոնք Գալիլիայի խումբերուն հետ կը թափառէին հոս հոն, ասոնք սուին այն ատղձները որոնցմէ քրիստոնէութիւնը առաւ իր ծրնունդը: Ատոր համար մենք կրնանք ենթադրել որ քրիստոնէութիւնը սկիզբէն իսկ ապստամբութեան բնոյթով սկսած է: Այս ենթադրութիւնը ստոյգ կը լինի երբ մենք որոնենք հետքերը աւետարաններուն մէջ, ուր խմբադրոյնները որոչ ջանք թափեր են ջնջելու իշխանութեան դուրս եղողներուն սպառնալիքը: Յիսուս հոգ չէ թէ որպէս իրական անձնաւորութիւն կամ երեւակայածին մէկը, որպէս կանոն կամ որպէս իրբեւ ազնիւ եւ հնազանդող մէկը, բայց երբեմն նա այնպիսի յայտարարութիւններ կ'ընէ որ ցոյց կուտայ որ ինք ապստամբ մի առաջնորդ է որ խաչուեցաւ իր անյաջող ապրատամբական փորձին համար: Նոյնիսկ նշանակելի է իր խօսքերը օրինաւոր արդարներու մասին: «Ես արդարները կանչելու չեկայ, հապա մեղաւորները»: Մարկոս, Բ. 17): Լուսեր ասիկա կը թարգմանէ. «Ես չեկայ կանչելու արդարները, այլ մեղաւորները՝ ապաշխարել տալու համար»: Գուցէ այս փոփոխականն է որ գործածուած է բնագրին մէջ: Ստուգել քրիստոնեաները պէտք է սորվէին կա-

նուխէն թէ որքան վտանգաւոր էր ընդունիլ որ Յիսուս իրեն կանչեր է մասնաւորապէս դանոնք որոնք օրէնքի դէմ գործեր են. ահա թէ ինչու անոնք նախադատութեան վրայ աւելցուցեր են «ապաշխարել» եւ «զղջալ» բառերը: Բայց այդ բառերով նախադատութեան իմաստը կը ջնջեն: Ենթադրենք թէ Յիսուս ըսէր. «Ես չեկայ կանչելու արդարները, այլ մեղաւորները որ տաշխարեն»: Յիսուս ինչո՞ւ արդարները պիտի յիշէր երբ անոնք ապաշխարելու կամ զղջալու պէտք չունին: Ան կրնար ըսել. «Ես եկայ որ մեղաւորներուն ապաշխարել տամ»: Թողունք որ եղած փոփոխութիւնը բնագրին կը հակասէ. Յիսուս այդ խօսքը ըսած է այն ատեն երբ ինք նստեր կը ճաշէր մաքաւորներուն ու մեղաւորներուն հետ եւ զինք կ'ամբաստանէին իր այդ ընթացքին համար. բայց Յիսուս ոչ մէկ խօսք ըսաւ, ոչ մէկ փորձ ըրաւ այդ ճաշի ժամին իր հետ ճաշող մաքաւորներուն ու մեղաւորներուն կեանքի ընթացքը փոխել տալու համար: Եթէ ըսէր, ի հարկէ հասկնալի էր որ ինք զանոնք կ'առաջնորդէր զղջումի:

Յիսուս յայտարարեց. «Ես եկած եմ կրակ ձգելու երկրի վրայ, եւ ի՞նչ պիտի ուզեմ երբ ան արդէն բորբոքած է: Բայց ես մկրտութիւն մը ունիմ մկրտուելու եւ ինչպէս կը տաղնապիմ, մինչեւ կատարուի: Կը կարծէք թէ ես երկրի վրայ խաղաղութիւն տալու եկայ: Ո՛չ, հապա բաժանմունք. վասնզի ասկէ վերջ մէկ տան մէջ հինգը իրարմէ բաժնուած պիտի ըլլան. երեքը երկուքէն ու երկուքը երեքէն. հայրը պիտի բաժնուի որդիէն եւ որդին հորմէն, մայրը իր ազջիկէն ու ազջիկը մօրմէն, կեսուրը իր հարսէն ու հարսը կեսուրէն»: (Ղուկաս, ԺԲ. 49-54): Իսկ Մատթէոսի մէջ կը կարդանք աւելի պարզ. «Մի կարծէք թէ ես եկայ աշխարհի վրայ խաղաղութիւն ձգելու. ես չեկայ խաղաղութիւն ձգելու, այլ սուր» (Մատթ. Ժ. 34): Չատկի տօնին Յիսուս երբ Երուսաղէմ հասաւ տաճարէն դուրս քշեց վաճառականներն ու սեղանաւորները, միթէ կարելի՞ է հաւատալ որ Յիսուս ինք առանձին այդ կրնար ընել առանց իր հետ ունենալու ըմբոստացած ժողովուրդի ուժը:

Ասկէ վերջ վերջին ընթրիքին Յիսուս կ'ըսէ իր աշակերտներուն. «Հիմա ով որ քսակ մը ունի թող առնէ եւ ով որ չունի, թող իր վերարկուն ծախէ եւ սուր մը առնէ: Վասնզի կ'ըսեմ ձեզի, ինչ որ զրուած է պէտք է կատարուի. եւ ան պիտի դատուի անօրէններուն հետ: Եւ անոնք ըսին. Տէր, երկու սուր ունինք. եւ ան ըսաւ. Բաւական է»: Յետոյ Ձիթենեաց լերան վրայ կոխը կը սկսի պետութեան զինուորներուն հետ: Յիսուս ձեռքազաւառու վրայ է. եւ ահա Յիսուսի հետ կողոնկէն մին իր սուրը քաշեց եւ քահանա-



յայտններէն մէկուն ծառային ականջը կտրեց նետեց: Բայց այս աւետարանին մէջ Յիսուս որ կը ներկայանայ որպէս արիւնահեղութեան հակառակ, անձնատուր կ'ըլլայ եւ կը դատապարտուի, մինչ իր ընկերները բոլորովին ազատ կը մնան: Այս պատմութիւնը տարօրինակ է եւ լեցուն հակասութիւններով. Յիսուս մէկ կողմէ պատրաստութիւն կը հրամայէ կռուելու, բայց յանկարծ կը յայտարարէ որ ինք արիւնահեղութիւն չուզեր. «Սուրդ տեղը դիր», կ'ըսէ. «Սուր անոսղը սրով պիտի երթայ. եթէ ես իմ հօրս ազօթեմ 12 լեզէն հրեշտակներ կրնայ զրկել. բայց ասով սուրբ զրոյց զըրւածները չեն կատարուիր»: Բայց Յիսուս եթէ հակառակ էր կռուի, ինչո՞ւ սուրի խօսք ըրաւ. ինչո՞ւ ան ուզեց որ իր բարեկամները զինուին: Ասկէ կրնանք հետեւցնել որ ճշմարտութիւն մը կայ քրիստոնէական սկզբնական աւանդութեան մէջ որ պետական հարուած մը պատրաստուած էր ու ժամանակը հասունցած էր անոր համար երբ Յիսուս իր մարդոց հետ տաճարէն վռնտեց վաճառականներն ու զրամափոխները: Աւետարանը խմբագրողները չեն համարձակիր այս բանը դուրս նետել քանի որ արմատացեր է աւանդութեան մէջ, միայն թէ կտրեր հաներ են ուժի գործածութեան հարցը զայն նկատելով Յիսուսի կամքին հակառակ: Յովսէփոս կը պատմէ անյաջող ապստամբութեան դէպք մը որ տեղի ունեցեր է զաւառապետ Ֆելիքսի օրով (52-60 Յ. Ք.) եգիպտացի հրեայի մը առաջնորդութեամբ: Այս մարդը անապատէն եկած է Ձիթենեաց լեռը 30.000 մարդոց հետ, նպատակ ունենալով յարձակիլ Երուսաղէմի վրայ, քչել հռովմէական զորքերը եւ անցնիլ իշխանութեան գլուխ: Ֆելեքս կը յաղթէ եւ կը ցրուէ եգիպտացի հրեային մարդիկը, իսկ ինք եգիպտացին կը փախչի: Յովսէփոսի պատմութիւնը լեցուն է նման իրողութիւններով: Ասոնք ցոյց կուտան որ հրեայ բնակչութիւնը Քրիստոսի ասան ապստամբական արամադրութիւն ունեցեր է եւ զալիլիացի Յիսուսը այդ արամադրութեանց արտայայտիչն է եղեր: Վեր առնենք Յուդայի մատնութեան խնդիրը: Յուդան, համաձայն աւետարանի դրածին, մատներ է Յիսուսը համբոյրով մը: Տարօրինակ բան է այդ: Յիսուս անձանթ մէկը չէր Երուսաղէմի մէջ. հրապարակաւ կը քարոզէր, հրաչքներ կը գործէր, ծանօթ էր բոլորին. այլեւ Յուդայի մը համբոյրը չէր որ Յիսուսը պիտի ներկայացնէր զինք ձերբակալել ուղղներուն: Հարցը ուրեմն զարձեալ կուզայ իննամբով պատրաստուած պետական հարուածի մը շուրջ: Դաւադրութիւն մը պատրաստուած է պետութեան շուրջ ու պատրաստողը եղած է Յիսուս: Բայց մեր աւետարանիչները Յիսուսի աստուածութիւնն ու խաղաղասիրութիւնը ժխտելու վախէն պետա-

կան հարուածի մասին չեն ծանրացեր, փոխեր են բերնէ բերան իրենց հասած պատմուածքը եւ պահեր են միայն Յուդայի համբոյրը որպէս մատնութեան նշան: Եւ ուրիշ մէկ տարօրինակ բանը այն է որ միայն Յիսուսը կը ձերբակալուի, իսկ իրեն հետ զինուած մարդիկը՝ ոչ: Պետրոս, օրինակ, որ Մարկոսի ականջը կտրեր է, ստիկաններուն կ'ընկերանայ, անոնց հետ կը խօսի, կը խնդայ եւ մէկը զայն չի ձերբակալեր: Անկարելի է աւելի յիմար մի պատմութիւն հիւսել քան այս: Յիսուսի հետեւորդները, ոմանք զինուած, կը շրջապատեն զինք. տեղի կ'ունենայ կռիւ. Յուդան կը մօտենայ եւ կը համբուրէ Յիսուսը. մարդիկը զայն կը ձերբակալեն ու կը տանին խաղաղութեամբ. ինչո՞ւ, որպէսզի «սուրբ գրոց գրուածքները իրականանան»: Հռովմէական կառավարիչը նոյնիսկ կ'ուզէ արձակել Յիսուսը բայց չի յաջողիր, որովհետեւ աւետարանիչները կ'ուզեն որ սուրբ գրոց գրուածքը կատարուի: Այն ենթադրութիւնը որ Յիսուս իրապէս ապստամբ մը եղած է կը փաստուի ոչ միայն աւետարանի միջնադ ցուցմունքներով հակառակ իրողութիւնը խնդարելու փորձարկութեանց, այլեւ այդ շրջանի տեւական խոսվութիւններով: Յիսուսի ենթադրական մահուանէն մինչեւ Երուսաղէմի կործանումը այդ քաղաքը անվերջ խոսվութեանց մէջ էր: Հասարակ երեւոյթներ էին փողոցի կռիւները, անհատ ապստամբներու խաչելութիւնը: Կարգ մը պրոլետարներ այդ կռիւները առաջ կը տանէին ամէն օր, անոնց մէկ առաջնորդը կը խաչուէր, միւսը կ'անցնէր անոր տեղը: Եւ այդ առաջնորդները զալիլիացի բնիկներ էին: Իսկ պատմութիւնը չէ կրցած արձանագրել ամէն օրուայ այս կռիւներն ու զոհերն եւ անոնց առաջնորդներու մանրամասն կենսադրականները:

Ապստամբական գործունէութեան մէջ որուն լծուած էր հրեայ ցեղը այդ շրջանին, շատ բնական էր որ փորձուած ապստամբութեանց մէջ առանձին հերոս մը վերցնէին պրոպականդայի համար եւ անոր վերապրէին չափազանցեալ հերոսութիւններ, որոնք աւանդութեանց մէջ առանձնայատուկ տեղ զբաւեւուէին էին ապագային: Բայց մեր աւետարանիչները Յիսուսի հրաչքներ են վերադրեր, ոչ թէ հերոսութիւններ, միայն տուեր են անոր քաջութիւն ու պաշարիւնութիւն մահուան ճակատելու պահուն, ան ալ Աստուծոյ շքանորհքով: Եւ այդ քմահաճ ձեւով եղած չէ: Երուսաղէմի կործանումէն յետոյ կայութիւնը փոխուեցաւ: Հրէական հասարակուրդը երբ կործանուեցաւ, հռովմէական կայսրութեան մէջ զեմոկրատիկ ընդդիմադիրներու մնացորդներն ալ չքացան եւ քաղաքացիական պատերազմները հռովմէական կայսրութեան մէջ զարկեցան: Մա-



կարախյեցիներու եւ Տխասի ձեռքով երուսազէմի կործանման միջեւ եղած երկու դարու ընթացքին Միջերկրականի արեւելեան զօտին շարունակ խռովութեան մէջ էր. մէկ կառավարութեան կը յաջորդէր միւսը, մէկ ազգը կը կորսնցնէր իր անկախութիւնը, միւսը կ'անցնէր տիրող դիրքի: Բայց այն ուժը որ կեցեր էր այս խռովութեանց ետեւ, հռովմէական պետութիւնը, նոյն շրջանին հսկայ աներածութեանց մասնուած էր Գրաշիէն մինչեւ Վեսպասիանոս. աներածութիւններ որոնք ծագեցան Հռովմի բանակներէն եւ անոնց առաջնորդներէն: Այդ շրջանին երբ մեսիայի գալուստի սպասումը զարգացեր ու մարմնացեր էր, քաղաքական կազմակերպութիւն մը ժամանակաւոր էր, քաղաքական յեղափոխութիւն մը կ'ակնկալուէր որպէս անխուսափելիութիւն: Այդ շրջանը վերջացաւ Վեսպասիանոսի իշխանութեան օրով, որը արդիւնց զինուորական սպրտամբութիւնները զանոնք խեղդելով իրենց սաղմին մէջ: Անկէ սկսաւ կայսրութեան ոսկեդարը, խաղաղութիւն մը որ անկեց ակելի քան մէկ դար Վեսպասիանոսէն (69 Յ.Ք.) մինչեւ Կոմոտոս (180 Յ.Ք.): Քաղաքական յեղափոխութիւնը որ բնական կը թուէր եղաւ անբնական: Ենթարկուել կայսերական իշխանութեան, համբերութեամբ հնազանդիլ այժմ դարձան ոչ միայն իմաստութեան պատուիրաններ այլ խորապէս արժատ ձգած բարոյական պարտաւորութիւններ: Այս դրութիւնը բնականօրէն սղոցեց քրիստոնէական միաբանութեան վրայ. նա այլեւս պէտք չունէր ապստամբ մեսիայի մը որ ընդունելի էր հրէական մտածողութեան համար: Նոյնիսկ միաբանութեան բարոյական զգացումը կ'ընդլիզէր ապստամբ մեսիայի դէմ: Բայց միաբանութիւնը երբ սորվեցաւ Յիսուսը նկատել որպէս իր Աստուածը, որպէս միացումը բոլոր առաքինութեանց, փոխակերպութիւնը իր մէջ չէր առնէր ապստամբ Յիսուսի անհետացումը եւ նոր անձնաւորութեան մը փոխանցումը որ յարմարէր նոր պայմաններու, բայց պարզապէս կը նշանակէր աստիճանական ջնջումը Յիսուս Աստուծմէն ապստամբական ատաղձները. այնպէս որ ապրտամբ ու յարձակողական Յիսուսը դառնալու էր կրաւորական էակ մը որ խաչուեցաւ ոչ թէ անոր համար որ ապստամբ էր, այլ անոր համար որ բարի էր, սուրբ էր եւ իր նախանձորդները վատ էին, չար էին ու զաւաղիւր էին:

Բարեբախտաբար անձաշակ կերպով եղած սրբազրուութիւնները չեն կրցած ջնջել բնատուր փաստերու հետքերը զորոնք կարելի է վեր հանել ուշադիր վերլուծումով, երբ ուղենք ամբողջ պատկերը աչքի առաջ ունենալ, որովհետեւ այս մնացորդները ներդաշնակութիւն մը չեն կազմեր սրբազրուութեանց հետ, նախա-

տիւղ տեղեկութիւնները ակելի հաւատի կ'երեւին քան սրբազրութիւնները: «Յիսուս Նազովրեցի քաղաւոր հրէից» . այս սրբազրուարդէն կը հաստատէ մեր բաժը:

Այս տեսակէտով, ինչպէս ուրիշ կէտերու մէջ զորոնք մենք քննեցինք. մեսիայի սրտկերը առաջին քրիստոնէական միաբանութեան մէջ ամբողջապէս կը համապատասխանէ հրէական սկզբնական պատկերին: Միայն վերջէն քրիստոնեայ միաբանութիւնը եկած է նոր փոփոխութիւններ մտցնել: Բայց երկու կէտեր կան ուր քրիստոնէական մեսիան կը տարբերի սկիզբէն իսկ հրէական մեսիայէն:

Գ) ԽԱՉԵՑԵԱԼԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Յիսուսի ենթադրական ժամանակը մեսիայի կարիք չկոր, մասնաւորապէս Գալիլոյ մէջ ուր ամէն օր նոր առաջնորդ մը, նոր մարդարէ մը երեւան կուգար որպէս սղոտարար եւ որպէս Տէրոջմէն օծեալ: Բայց երբ այդ սղոտարարը հռովմէական ուժին առջեւ կը պարտուէր, անձնատուր կ'ըլլար, կը սպաննուէր, կը խաչուէր, իր մեծիական դերը կը վերջանար եւ ան կը նկատուէր որպէս սուտ մարդարէ եւ սուտ մեսիա: Ճշմարիտ մեսիան, ճշմարիտ մարդարէն, ուրեմն, վերջէն դալու էր... Բայց քրիստոնեայ միաբանութիւնը իր երազած մեսիայի կողքին կեցաւ: Որովհետեւ այդ գալիք մեսիան ուրիշ մէկը չէր եթէ ոչ այն որ արդէն եկած էր եւ խաչուած էր եւ երրորդ օրը յարութիւն առած էր, երեւցած էր իր հետեւորդներուն իջնելով երկինքէն: Այս բմբոնումը մասնաշատուկ էր քրիստոնէական միաբանութեան: Ի՞նչ էր անոր ծնունդը:

Նախնական քրիստոնէաներուն դազափարով Քրիստոսի յարութիւնը հրաչք մըն էր որ տեղի ունեցաւ իր խաչելութենէն երրորդ օրը. մի բան որ կ'ապացուցանէ անոր աստուածային բնոյթը եւ կատարումը այն սպասումին որ ան երկինքէն իջնելու էր: Ներկայ աստուածաբանները այս կէտէն անդին չեն անցնիր: Անշուշտ անոնց մէջ «ազատական ուղին» յարութիւնը աստացիօրէն վեր չառններ: Անոնք կ'ըսեն որ Յիսուս իրապէս մեռելներէն յարութիւն չառաւ, այլ իր աշակերտները հաւատացին զայն տեսնել իրենց մտային յափշտակութեան մէջ որը աստուածային թելադրանք մը ըլլալու է: «Քրիստոս երեւցեր է Պետրոսի նոյն ձեռով ինչ ձեռով որ երեւցեր է Պողոսին. երկուքն ալ պէտք է վերապրել մտային դերազրրուեալ յափշտակութեան. անիկա երեւցեր է նաեւ շատ մը հաւատացեալներու, բայց չէ՞ մի որ բոլորն ալ իրենց միտքը կեղորոնացուցեր են այն հաւատքով որ Քրիստոս նորէն պիտի աշխարհ



զայ եւ որովհետեւ իրենց առաջնորդը իրական մետիան էր, ուրեմն նա անպարտելի եւ յաղթական նորէն պիտի դար աշխարհ, եւ իր ձեռքը պիտի առնէր աշխարհի մետիական թագաւորութիւնը»:

Այս ձեւի նկարագրութիւնով է որ մենք կ'ընդունինք Մետիայի հաւատքով քրիստոնէական միաբանութեան ծաւալումը եւ անոր հետ քրիստոնէութեան պատմական երեւոյթին ամբողջ այլանդակութիւնը, որպէս հետեւանք անհատ մահկանացուի մը զիպուածական մէկ բանդագուշակութեան:

Անկարելի բան մը չէ որ առաքեալներէն մին խաչեցեալի մտապատկերը տեսնէ որպէս իրական, ոչ ալ անկարելի է որ շատ մը անձեր հաւատան այդ տեսիլքին, որովհետեւ այդ զարաշրջանը հաւատքի շրջան էր եւ հրեայ ժողովուրդը խորապէս տարուած էր յարութեան հաւատքով: Մեռելներէն յարութիւն առնելու գաղափարը արդէն գոյութիւն ունէր, տարածուած էր հրեաներուն մէջ: Մատթէոսի մէջ Յիսուս իր աշակերտներուն կը հրահանդէ. «Բժըշկեցէք հիւանդները, մաքրեցէք բորոտները, արթնցուցէք մեռելները եւ հանեցէք դեւերը» (զուլա Ժ. 8): Այս կը նշանակէ որ աշակերտներուն առօրեայ գործերէն մէկն ալ մեռելները արթնցնելն է եղեր: Միայն թէ անոնց պատուիրած է վարձք չստանալ: Յատկանշական է Յիսուսի յարութեան պատմութիւնը: Չինուորները պահակ կեցած են գերեզմանին վրայ, որպէսզի աշակերտները մարմինը չզուցանեն եւ չբռնեն թէ յարութիւն առած է. բայց քարը դուրս առած է, գերեզմանը բացուած է, կայծակի եւ երկրաշարժի հետ Յիսուս գերեզմանէն ելած է: «Պահակներէն մին եղածը կը պատմէ քահանայապետին: Մերերը կը հաւաքուին, խորհուրդ կ'ընեն, յետոյ զինուորներուն շատ դրամ կուտան որ ըսեն թէ մենք քնացեր էինք աշակերտները եկան Յիսուսի մարմինը գողցան: Եթէ լուրը կառավարիչին հասնի, մենք զինք կը համոզենք եւ դուք կ'արդարանաք: Ուստի անոնք դրամը առին ու այնպէս ալ ըրին» (Մատթ. ԻԸ. 11-18): Ուրեմն քրիստոնեաները կ'երեւակայէին թէ մեռնող մէկը երեք օր վերջ կրնար յարութիւն առնել եւ այդ յարութիւնը այնքան խոր ազդեցութիւն չէր ըներ ականատեսներուն վրայ. ատոր համար որպէս թէ զինուորները կաշառուած են որ լուրս յարութեան պահանջ եւ հակառակ տեղեկութիւն տան որ մեռելը գողցուած է գերեզմանէն: Յայտնի է աւետարանիչները կամ աւետարանի հեղինակները առանց կասկածի իրենք ալ ընդունէր են յարութեան առասպելը որպէս իրականութիւն: Իրողութիւն է որ յարութեան գաղափարը ուրեմն միայն քրիստոնեաներու յատուկ չէ եղեր, այլեւ ամբողջ հրեայ բնակչութեան որ կը սպասէր մետիայի գալստեան:

Ինչո՞ւ միայն քրիստոնեայ միաբանութիւնը իր մետիայի յարութեան մտապատկերը ունէր. ինչո՞ւ նոյն մտապատկերը չուներային նաեւ միւս մետիաներու հետեւորդները, այն մետիաները որոնք մարտիրոսացան այդ շրջանին:

Մեր աստուածաբանները պիտի պատասխանեն որ Յիսուս միւս մետիաներէն կը տարբերէր անով որ նա աւելի խոր ազդեցութիւն ձգեր էր ժողովուրդին վրայ, ինչ որ չէին կրցեր ընել միւսները: Բայց Յիսուսի գործունէութիւնը եղած է շատ կարճ համաձայն աւետարանիչներուն, եւ յետոյ հետք թողուցած չէ իր ժամանակակիցներուն վրայ. իսկ միւսները իրապէս հերոսաբար կուտեր են հոովմէացիներու դէմ, երկար ատեն գործեր են, պատմութեան մէջ արձանագրութիւն են թողուցեր. կարելի է ընդունիլ որ անոնք նուազ ազդեցութիւն թողեր են քան Յիսուս: Յիսուսի ազդեցութիւնը, համաձայն աւետարանիչներուն, եղած է միայն իր սակաւթիւ հետեւորդներուն վրայ, բայց ոչ ընդհանուր ժողովուրդին վրայ: Տարբեր հարց է թէ այդ հետեւորդները յետոյ, զարեր յետոյ բազմացուցեր են հաւատաւորներու թիւը Յիսուսի վերադրելով բազմաթիւ հրաշքներ, քարոզութիւններ եւ ի վերջոյ յարութիւն: Բայց այդ չի նշանակեր թէ բոլոր անոնք եղած են Յիսուսի բարձր անհատականութեան շնորհիւ: Համաձայն աւետարանիչներուն Յիսուս իր ողջութեան ատեն բնաւ արտասովոր ժողովրդակառնութիւն չէ ունեցեր. ունեցեր է միայն 12 աշակերտ որոնցմէ մին եղած է մատնիչ: Եթէ Յիսուս զինքը սիրող ու պաշտող հոմ ժողովուրդը ունենար իր քայլերուն հետեւող, զինքը բռնող ոստիկաններն ու զինուորները կտոր-կտոր կ'ըլլային, մինչդեռ կը տեսնենք որ կառավարիչը Յիսուսը արձակել կ'ուզէ. բայց ժողովուրդը կը կոչէ. «Պահ հանէ զզա»: Յիսուս այն ատեն ըսաւ բազմութեանը, իբր թէ աւազակի՞ վրայ ելաք սուրերով ու բիրերով զիս բռնելու, ամէն օր տաճարին մէջ ձեզի հետ կը նստէի ու կը սորվեցնէի եւ զիս չբռնեցիք... Այն ատեն աշակերտները թողուցին ու փախան» (Մատթ. ԻԶ. 55-56):

Ապագայ սերունդը պոսակ չի դներ ողբերգութեան մը գերակատարներուն վրայ. այս կէտին մէջ ծաղրածուն եւ կղերականը նոյն դժին վրայ կեցեր են: Ինչ որ ճիշդ է գերասանի մը համար, նոյնը ճիշդ է քարոզիչի մը համար, եթէ նա միայն քարոզիչ է եւ իրեն հետեւ գրուած քներ չի թողուր որ իր անձնական կեանքը վերադրեցնեն: Իր քարոզները կրնան ազդեցիկ ըլլալ եւ սքանչելի, բայց անոնք նոյն տղաւորութիւնը չեն թողուր անոնց վրայ որոնք այդ քարոզներուն տեղեակ կ'ըլլան ուրիշներու բերնով: Քարոզիչին ան-



հաստականութիւնը որեւէ խոր ազդեցութիւն չի կրնար թողուլ զինքը չտեսնող ու չճանչցող մարդոց վրայ: Անոնց երեւակայութիւնը ստակ անունով չէ կարելի գրգռել: Ոչ ոք կրնայ յիշատակ մը թողուլ իր ետեւ իր յանձնական շրջանակէն դուրս (եւ այդ յիշատակը ժամանակաւոր կը լինի) եթէ ստեղծագործութիւն մը չէ ըրած որ իր անձէն դուրս յուշարձան մը կազմէ իրեն համար, ինչպէս գեղարուեստական գործ մը, գրական գործ մը, գիտական հնարք մը, քաղաքական կամ ընկերային կազմակերպութիւն մը. բան մը որ մնայուն արժէք ունենայ հասարակութեան համար: Որչափ ատեն որ անհատի մը ստեղծագործութիւնը հասարակական օգտակարութեան դժով իր ազդեցութիւնը կը պահէ, նոյնքան տեւական կ'ըլլայ այդ անհատին շուրջ յարուցուած հետաքրքրութիւնը: Երբեմն անհատի մը ստեղծագործութիւնը իր ողջութեան շրջանին աննշմար կ'անցնի, բայց անոր մեռնելէն վերջ յանկարծ կը սկսի մեծ նշանակութիւն ստանալ: Գալով Յիսուսի, մենք ոչ թէ անոր անհատականութիւնը, այլ ստեղծագործութիւնն է որ նկատի պիտի ունենանք կապուած իր անունին հետ: Արդ մենք պէտք է փնտռենք պատճառը թէ ինչո՞ւ ուրիշ մեծիաներու գործունէութիւնները նոյն ճակատագիրը չունեցան, ինչ որ ունեցաւ Յիսուսին: Ինչ որ Յիսուսի վերագրուած է, նոյնը վերագրուած է իրենց ատենին միւս մեծիաներուն եւ անոնց հետեւորդներուն: Ուրեմն, երբ ամէն ինչ հասարակաց գետին մը ունի բոլորին համար, մենք տարբերութիւն մը փնտռելու չենք անոնց միջեւ: Բայց աստուածները այս խնդրին մէջ կը պնդեն որ տարբերութիւնը Յիսուսի անձնականութիւնն է, ինքնին հրաշք մը, գերմարդ մը որուն նմանը աշխարհ չէր տեսեր, նոյնիսկ եթէ մենք ժըխտենք իր հրաշքները: Միակ տարբերութիւնը Յիսուսի եւ միւս մեծիաներուն միջեւ այն է որ վերջինները իրենց ետեւ բան մը թողած չեն որ իրենց անհաստականութիւնը սպրեցնէ, մինչդեռ Յիսուս կը տակեր է կազմակերպութիւն մը աշխարհի տարբերով որոնք սքանչելի կերպով հաշուի առնուած եւ փակած են իրարու, կազմակերպութիւն մը որ իր հետեւորդները ձուլած է մէկ կազապարի մէջ եւ ասով բազմացուցեր է հետեւորդներու թիւը: Միւս մեծիաները խումբեր են կազմեր ապստամբութեան համար, խումբերը ցրուած են, ապստամբութիւնը ձախողած է եւ իրենք անհետացեր են: Եթէ Յիսուս նոյնը ընէր, իր ճակատագիրը նոյնը պիտի ըլլար եւ իր անունն ալ պիտի չյիշուէր իր խաչելութենէն վերջ: Բայց Յիսուս սուկական ապստամբ մը չէր, անիկա մարմնաւորուած ներկայացուցիչն էր ժողովրդական մասսաներու հասունցած ու կեղբոնացած ձգտումներուն եւ ասով հիմնարկողը եղաւ այն կազմակերպութեան

որ յուերժացուց զինք ու իր անունը եւ շարունակեց բազմացնել իր հաւատաւորները թէ թիւով եւ թէ ուժով:

Աւանդական ենթագրութիւն է որ քրիստոնէական միաբանութիւնը կազմուեցաւ Յիսուսի մահէն վերջ առաքեալներու ձեռքով: Անհիմն ենթագրութիւն է աս, որովհետեւ եթէ այդպէս ենթադրենք պիտի ընդունինք որ առաքեալները նոր ուղեգիծ մտացունքին Քրիստոսի վարդապետութեան մէջ որուն Քրիստոս հակառակ էր եւ ասով անկազմակերպ տարրերը առին նոր կազմակերպութեան մէջ, ան ալ աշխարհի ատեն մը երբ անոնք ընկճուեցան այն պայմաններէն որոնք կրնային այդ ինքնահիւս կազմակերպութիւնը կործանել: Մեղի ծանօթ կազմակերպութեանց սկզբնառումին վերլուծողական դատումով մենք կրնանք ենթադրել որ կոմունիստական օգտապաշտ կազմակերպութիւններ Երուսաղէմի պրոլետարներու կողմէ արդէն գոյութիւն ունէին Յիսուսի ժամանակէն շատ առաջ եւ Յիսուս Գալիլիայէն եկաւ որպէս անոնց յանդուգն գործիչը եւ դարձաւ անոնց ախոյեանը եւ մարտիրոսը:

Յովհաննէս աւետարանիչը արդէն կ'ըսէ որ 12 առաքեալները հասարակաց զանձարան մը ունէին երբ Յիսուս դեռ ողջ էր: Բայց Յիսուս պահանջեց նաեւ որ իր միւս բոլոր աշակերտները իրենց ունեցածը յանձնեն: Գործք Առաքելոցի մէջ մենք ոչ մի տեղ չենք հանդիպիր որ առաքեալները իրենք կազմակերպած են միաբանութիւնը Յիսուսի մեռնելէն յետոյ: Ընդհակառակը, մենք կը տեսնենք որ այդ ատեն արդէն կազմակերպութիւնը գոյութիւն ունէր եւ իր անդամները կ'ունենային նոյն ձեւի ժողովներ եւ նոյն տեսակի գործեր ինչպէս յիշուած է Գործք Առաքելոց Բ. գլխուն մէջ. «Եւ անոնք որ սրտանց ընդունեցին անոր (Պետրոսի) խօսքերը մկրտուեցան. ու այն օրը երեք հազար հոգիի չափ աւելցան: Եւ միշտ առաքեալներու վարդապետութեան ետեւէ էին ու միաբանութեանը եւ հաց կտրելուն ու աղօթքներուն... Ու բոլոր հաւատացեալները մէկտեղ էին եւ ամէն բաներնին հասարակաց էր: Ու ստացուածքնին եւ ունեցած բաներնին կը ծախէին ու անոնց զինք կը բաժնէին ամէնուն որու որ բան մը պէտք ըլլար» (Գործք Առաք. Բ. 41-45): Ուրիշ խօսքով, անոնք կը շարունակէին նոյն կոմունիստական ձեւը ինչ որ ունէին մինչեւ Յիսուսի մահը: Այլապէս այս յայտարարութիւնը չէր ըլլար:

Միաբանութեան այս կազմակերպութիւնն էր որ կապ ծառայեց Յիսուսի հետեւորդները իր մահէն վերջ իրարու կապելու եւ ողջ պահելու յիշատակը խաչեալ ախոյեանին որ համաձայն անհղութեան ինքզինք յայտարարած էր իրր մետիւ: Կազմակերպու-



թիւնը որքան մեծցաւ եւ ուժեղացաւ, անոր անդամներու երեւա-  
կայութեան մէջ իր մարտիրոսը մեծ տեղ բռնեց, այնպէս որ ա-  
նոնք կը խորշէին զայն նկատելէ սուտ մետիւ, այլ ճանչցան զայն  
իրը ճշմարիտ մետիւ հակառակ իր մահուան, հաւատարմով որ ան  
նորէն պիտի դար աւելի փառքով. սաոր համար բնական էր հա-  
ւատալ յարութեան եւ ահա խաչեցեալի մետիական բնոյթին ու յա-  
րութեան հաւատքը դարձաւ կազմակերպութեան յատկանշական  
ցուցանակը որ կը գատէր զինք մետիայի միւս հաւատաւորներէն:  
Եթէ մետիայի յարութեան հաւատքը անձնական տպաւորութիւններէ  
յառաջանար, ան ժամանակի ընթացքին պիտի գոչնատուէր եւ ու-  
րիշ տպաւորութեանց ազդեցութեան տակ պիտի անհետանար: Բայց  
խաչեցեալի յարութեան հաւատքը արդիւնք էր այդ կազմակերպու-  
թեան ազդեցութեանը: Ուրեմն այս հաւատքը աւելի հաստատուն եւ  
բուռն պիտի ըլլար կազմակերպութեան մեծնալովը. որքան քիչ ըլ-  
լար Յիսուսի անձին շուրջ դրական ծանօթութիւնը այնքան կարճ  
կ'ըլլար զայն պաշտօններու երեւակայութեան շղթան, ուրիշ որոշ  
մանրամասնութիւններ որպէս ճշմարտութիւն ընդունելու համար:

Պաշեցեալի յարութեան հաւատքը չէր որ ստեղծեց քրիստո-  
նէական միաբանութիւնը եւ անոր ուժ տուաւ, այլ ընդհակառակը,  
միաբանութեան ուժն ու եռանդն էր որ ստեղծեց մետիայի շարու-  
նակական կեանքի հաւատքը:

Պաշեցեալի յարութեան հաւատքը չէր հակասեր կեանքի  
մասին հրէական փիլիսոփայութեան, որը արդէն թոյլատրած էր  
յարութեան հաւատքը. միայն պէտք է նշել որ հրեայ գրականու-  
թիւնը մետիայի նուիրուած կը պարզէ այն իրողութիւնը որ ապա-  
ղայ փառքը կարելի է ստանալ միայն տառապանքի ու արգարի  
մահուան դնով. Վասնորոշութիւն մը որ բնական հետեւանքն էր  
հրեաներու ենթարկուած հարածանքին ու չարչարանքներուն:

Քրիստոնեաներու խաչեցեալ մետիայի հաւատքը, ուրեմն,  
ցոյց կուտայ որ ան պարզապէս մէկն էր այն բազմաթիւ տարբե-  
րակներէն որոնք կ'երեւէին այդ ատենի հրեաներու մետիական մար-  
դարէութիւններէն, ասկէ աւելին ալ չէր կրնար ըլլալ: Եւ եթէ ան  
չմոռցուեցաւ այլ ընդհակառակը աւելի զօրացաւ, պատճառը այն  
էր որ անոր հիմքը այնպիսի հիմք մըն էր որ հրեաներու տեսակէտ-  
ներէն հակառակ գծով զարգանալու էր անհրաժեշտաբար: Այդ  
հիմքը որ պրոլետարիատի կոմունիստական կազմակերպութեան  
կեանքն ու ուժն էր, սերտօրէն կապուած էր Երուսաղէմի կոմու-  
նիստական պրոլետարներու մետիական սպասումներու մասնայա-  
տուկ գծին հետ:

Ե) ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱՐԱՐԸ

Հրեաներու մնացեալ մասի մետիական սպասումները բնու-  
թագրով զուտ ազգային էին ներառեալ զիրօղները: Այդ մետիական  
ակնկալութեանց մէջն էր հրէական համաշխարհային տիրապետու-  
թիւնը որուն ենթարկուելու էին միւս ազգերը եւ յետոյ վրիժառու-  
թիւնը այն ազգերէն որ ճնշեցին ու չարչարեցին հրեաները: Բայց  
քրիստոնեայ միաբանութեան մետիական ակնկալութիւնները տար-  
բեր էին: Այս միաբանութիւնն ալ ունէր հրէական հայրենասիրու-  
թիւն եւ ասեղութիւն գէպի հոովմէացիները. ան ալ կ'ուզէր թօթա-  
փել օտար լուծը որպէս ազատութեան նախապայման. բայց ան ա-  
սով չէր բաւականանար. ան ծրագրած էր օտար լուծին հետ թօ-  
թափել նաեւ հայրենի երկրի վրայի լուծը, ան կանչեց միայն յող-  
նածներն ու բռնաւորուածները, իսկ դատաստանի օրը այն օրն էր  
երբ վրէժ պիտի լուծուէր հարուստներէն եւ իշխողներէն: Անոնց  
կիրքը որ ուժեղ էր, ցեղային չէր, այլ դասակարգային. այս յատ-  
կանչականութիւնն էր որ կը բաժնէր զիրենք միւս հրեաներէն որոնք  
միացեր էին ազգային ոգիով: Բայց այս կէտը որ զիրենք կը բաժ-  
նէր ազգայնական հրեաներէն, զանոնք կը մօտեցնէր աշխարհի միւս  
մասի ժողովուրդներուն, ոչ-հրեայ աշխարհին: Մետիայի ազգային  
տեսութիւնը հրեայ աշխարհով սահմանափակուած էր որ կը մեր-  
ժէր մնացեալ աշխարհը որուն հպատակութիւնը այդ տեսութեան  
մասը կը կազմէր: Հարուստներու դէմ դասակարգային ատելու-  
թիւնը, ինչպէս եւ պրոլետարական միանախնայութիւնը զազա-  
փարներ էին որոնք միայն հրեայ պրոլետարները պիտի չընդունէին.  
անոնց հետ էին նաեւ բոլոր ազգերու չքաւորները: Ընկերային մե-  
տիան էր միայն, ոչ թէ ազգային մետիան, որ Հրէաստանէն պիտի  
իջնէր: Միայն այդ մետիան էր որ Երուսաղէմի կործանումէն ու  
սարսափելի աղէտներէն վերջ յաղթականօրէն պիտի վերապրէր ու  
իր շունչը պիտի տարածէր ամէն կողմ:

Միւս կողմէ, կոմունիստական կազմակերպութիւն մը չէր  
կրնար ապրիլ հոովմէական կայսրութեան մէջ բացի այն չըջանէն,  
այն երկրամասէն ուր այդ կազմակերպութիւնը կրնար ուժեղանալ  
զայտեան հաւատքովը այն մետիային որ պիտի ազատէր ճնշուած-  
ներն ու չարչարուածները: Գործնականօրէն կոմունիստական այս  
կազմակերպութիւնները հիմնուած էին որպէս փոխադարձ օգնու-  
թեան ընկերակցութիւններ: Այսպիսի կազմակերպութիւններ ընդ-  
հանուր երեւոյթ ստացան հոովմ. կայսրութեան մէջ մեր թուազ-  
րութեան Ա. դարուն եւ աշխուժացան անոնք երբ ընդհանուր թըշ-



ւառութիւնը կ'աճէր եւ աւանդական նախնական կոմունիզմի մնացորդները կը լուծուէին: Բայց կասկածոտ բռնապետութիւնը բոլոր տեսակի կազմակերպութիւնները կը ջնջէր: Տրայանոս կայսրը նոյնիսկ չըշխներու կամաւոր կազմակերպութիւնէն կը վախճար. կեսար պահ մը ինայեց չրեայ կազմակերպութեանց, քայց ի վերջոյ անոնց առանձնաշնորհեալ դիրքն ալ կորսուեցաւ:

Ուրեմն փոխադարձ օգնութեան կազմակերպութիւնները չէին կրնար աղբիլ եթէ գազանի մարմիններ չըլլային: Մ'վ իր կեանքը պիտի վտանգէր ուրիշի հիւանդութեան օգնելու եւ կամ իր ընկերներու հետ միասնականութեան զրացումը վառ պահելու համար, ան ալ անանկ ատեն մը երբ հասարակական զրացումն ու ոգին գրեթէ չքացեր էին: Ինչ որ մնացեր էր հասարակաց զրացումէն ու ոգիէն այն գազափարն էր որ մետիւ մը պիտի գար ու աշխարհը նոր ձեւով պիտի կազմէր, նոր հասարակութիւն մը: Եւ ամէնէն ետպաշտ պրոլետարները որոնք իրենց անձնական նկատումներով միացեր էին փոխադարձ օգնութեան կազմակերպութեանց, վստահեցուցուած էին որ իրենց կեանքը վտանգելով ապագային յարութիւն պիտի առնէին եւ լիով պիտի վարձատրուէին, եւ պէտք է ըսել այդ շրջանին նոյն այդ վստահեցման գազափարն ալ այնքան անհրաժեշտ չէր, քանի որ տիրող պայմանները մեծ չափով կը խթանէին ընկերային բնազդներն ու զրացումները, այնպէս որ անհատը անողիմազբելի կերպով կ'ենթարկուէր անոնց, նոյնիսկ իր կեանքը վտանգելով: Միւս կողմէ անձնական յարութեան գազափարը անհրաժեշտ էր անել ուժերու դէմ վտանգաւոր պայքարի մէջ, այնպիսի ատեն մը երբ ընկերային բնազդներն ու զրացումները չափազանց ճնշուած էին յառաջացող ընկերային կապերու լուծումով ոչ միայն տիրող գասակարգերու մէջ, այլեւ ճնշուածներու եւ տիրւողներուն մէջ: Ուրեմն միմիայն խաչեցեալ մետիայով կազմուած կոմունիստական ձեւի քրիստոնէական միաբանութիւնն էր որ այդպիսի մետիայի մը գազափարը Հրէաստանէն դուրս կրնար հանել ու տարածել: Միայն մետիայի եւ յարութեան հաւատքով էր որ կոմունիստ-կազմակերպութիւնները կրնային տարածուիլ հոյովէական կայսրութեան մէջ որպէս գազանի մարմիններ: Այսպէս երբ այս երկու ազգակները կոմունիզմ եւ մետիայի հաւատք միացան, այդ ուժը եղաւ անողիմազբելի: Ինչ որ հրեաները զուր տեղը կը յուսային թաղաւորական ցեղէ մը գալիք մետիայէն, կատարուեցաւ խաչեցեալ մետիայէն որ երեւան եկաւ պրոլետարներէն. ան յաղթեց Հոռոմի, կեսարները ծունկի բերաւ եւ յաղթեց աշխարհին: Բայց ան աշխարհը չյաղքեց Պրոլետարական, կոմուն-

իստական կազմակերպութիւնը վերածուեցաւ աշխարհի մէջ իշխանութեան եւ շահագործումի գործիքի մը: Եւ այդ տիպի կրօնի ընթացքը նոր չէր: Սաչեցեալ մետիան վերջինը չէր յաղթողներէն որուն բանակները զարձան սարկացնող ուժեր հէնց իրենց սիրած ժողովուրդին համար: Կեսարն ու Նափոլէոնն ալ դեմոկրատական յաղթութիւններով բարձրացան քայց յետոյ ճգմեցին ժողովուրդները:

### ՀՐԵԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ ԵՒ ՀԵԹԱՆՈՍ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ

Ա) ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ՀԵԹԱՆՈՍՆԵՐՈՒ ՄԷՁ

Առաջին կոմունիստական միաբանութիւնը կազմուած է Երուսաղէմի մէջ. այդ մասին տարակոյս չունինք երբ նկատի կ'առնենք Գործք Առաքելոցը: Բայց նոյն այդ միաբանութիւնը ուրիշ քաղաքներու մէջ ալ երեւան եկաւ, ուր որ հրէական պրոլետարիատ կար: Երուսաղէմի եւ Հոռոմէական կայսրութեան ուրիշ արեւելեան մասերուն մէջ արտակարգ երթեւեկութիւն մը եղեր է Երուսաղէմի ուխտազնացութեան առիթով: Հազարներ, գուցէ միլիոնաւոր ուխտաւորներ են դիմեր այդ քաղաքին: Եւ բազմաթիւ ընչազուրկ մուրացիկներ առանց տան եւ ընտանիքի ճամբորդեր են մէկ տեղէն միւսը, կեցեր են տեղ մը մինչեւ որ անոր ուղորձածութեան աղբիւրները սպառած են: Այս առիթի նշանակելի են Յիսուսի հրահանգները իր աշակերտներուն (տես Ղուկաս, Ժ. 1-13). «Այս բաներէն յետոյ Տէրը ուրիշ եօթնասուուն ալ որոշեց եւ զանոնք իր առջեւէն երկուերկու դրկեց բոլոր քաղաքները եւ տեղերը ուր ինք պիտի երթար. եւ կ'ըսէր անոնց. Հունձքը առատ է ու մշակները քիչ, ուստի հունձքին Տէրըջը ազատեցէք որ մշակներ հանէ իր հունձքին: Գացէք, ահա ես ձեզ կը դրկեմ որպէս գառներ գայլերու մէջ: Ձեզի հետ քսակ մի առնէք, ոչ ալ պարկ, եւ ոչ կօշիկներ ու ճամբան մարդու բարեւ մի տաք: Եւ որ սունը որ մտնէք, առաջ ըսէք. Բարեւ այս տանը: Ու եթէ հոն բարեւի արժանաւոր մարդ կայ, ձեր բարեւը պիտի հանդիս անոր վրայ, ապա թէ ոչ ձեզի պիտի դառնայ: Եւ այն տանը մէջ մնացէք ու անոնցմէ կերէք ու խմեցէք, վասնզի մշակը իր վարձքին արժանի է. տունէ տուն մի փոխուիք: Եւ որ քաղաքը որ մտնէք ու ձեզ ընդունին, ինչ որ ձեր առջեւ դուրս կերէք. ու բժշկեցէք անոր մէջի հիւանդները. եւ ըսէք անոնց որ Աստուծոյ թաղաւորութիւնը մօտեցեր է: Բայց որ քաղաքը որ մտնէք ու ձեզ չըն-



դունին, անոր հրապարակները ելլելով ըսէք. Այն փոշին որ ձեր քաղաքէն մեր ոտքերուն փակած է ձեզի կը թոթովենք. միայն թէ զայս գիտնաք որ Աստուծոյ թաղաւորութիւնը ձեզի մօտեցեր է: Ձեզի կ'ըսեմ որ Սոզոմի դատաստանը աւելի զիւրին պիտի ըլլայ՝ քան այն քաղաքինը»: Այս վերջին սպառնալիքը զոր աւետարանիչը գրած է Յիսուսի բերանը ցոյց կուտայ ինքնատիպ շարակամութիւնը մուրացիկին որ իր ողորմութիւն ստանալու յոյսերուն մէջ խարուած է. ասոր համար ան կ'երազէ ամբողջ քաղաքը կրակի մէջ տեսնել: Այս խնդրին մէջ Յիսուս կը ներկայանայ որպէս հրձիգ այդ մուրացիկին համար:

Նոր կազմակերպութեան բոլոր անդամները որոնք հոս ու հոն կը թափառէին, նկատուած են առաքեալներ, եւ անոնք ասաներիւ հատ շեն եղած, այլ շատեր. տասներկուք յիշուած են առանձնապէս Բ. դարուն որպէս առաքեալներ, որոնք միաբանութեան մէջ գործօն եղած են:

Այս ճամբորդոյ «մուրացիկներն ու դաւադիրները» որ լեցուած են եղեր Սուրբ Հոգիով, հրապարակեցին նոր պրոլետարական կազմակերպութեան սկզբունքները Երուսաղէմէն սկսած դրացի հրէական հասարակութեան մինչեւ Հոռոմի սահմաններէն ներս: Բայց անմիջապէս երբ աւետարանը Պաղեստինի հողը թողուց եւ մտաւ բոլորովին օտար միջավայրի մէջ, ստացաւ տարբեր բնոյթ:

Հրեայ հասարակութեան անդամներուն հետ առաքեալները ուրիշ խումբ մըն ալ դասն. «աստուածավախ հեթանոսներու» խումբը: Ասոնք հրեայ սինակոնները կը մանէին, սակայն չէին ընդուներ հրէական սովորութիւնները: Անոնք կը մկրտուէին, բայց չէին թլփատուեր, չէին հետեւեր ուտելիքի կանոններուն, չէին պահեր շարաթը եւ չէին կատարեր այն ծէսերը որ զիրենք կը բաժնէին «հեթանոս» միջավայրէն: Եւ այդ աւետարանը պրոլետարական խաւերուն մէջ դասու իր համակիրները, որոնք նպաստաւոր հող կը հայթայթէին խաչեցեալ մեսիայի վարդապետութեան համար, որովհետեւ ան կը խոստանար հիմնովին բարեկարգեալ ընկերային կերպարանափոխութիւն մը:

Որչափ որ նոր ուսուցմունքը տարածուեցաւ Պաղեստինէն դուրս հրեայ հասարակութեան մէջ, նոյնքան յայտնի եղաւ այն իրողութիւնը որ այդ վարդապետութեան պրոպագանտան աւելի մեծ թափով պիտի ուժեղանար, եթէ անկէ անջատուէին հրէական առանձնայատկութիւնները, զարգէր նա ազգային ըլլալէ եւ ըլլար բացառապէս ընկերային:

Այն մարդը որ առաջին անգամ ճանչցած է այս կարեւոր կէտը եւ եռանդալին քարոզեր է, եղած է Սաւուլը: Աւանդութիւնը կ'ըսէ որ նա Պաղեստինէն չէր, այլ յոյն քաղաքի մը հրեայ միաբանութեան մէկ անդամը, Տարսոնէն՝ Կիլիկիայէն: Կատաղի ախոյեան մը փարիսեցիութեան, որ համաձայն աւանդութեան տեսիլքի մը մէջ Հոգին Սրբոյ միջնորդութեամբ եղաւ քրիստոնեայ առաքեալ: Այս մարդը միաբանութեան անգամ ըլլալէ անմիջապէս վերջ ուղեց հին տեսակէտները փոխել եւ պահանջեց որ քրիստոնէական պրոպագանտան յստաջ տարուի ոչ-հրեաներուն մէջ: Իր տեսակէտով մէկը որ քրիստոնեայ ըլլալ կ'ուզէր անհրաժեշտ չէր որ հրէութիւնը ընդունէր: Իր անունը Սաւուլ էր երբայերէն, փոխեց Պօղոսի որ լատիներէն անուն էր:

Այս Պօղոս կոչուածին կեանքին ու գործունէութեան շուրջ հիւսուած պատմուածքները իրականութեան հիմք չունին, բայց եթէ որպէս իրողութիւն վերցնենք իսկ կը տեսնենք որ առաքեալներու միջեւ վէճի ու կռիւի նիւթ եղած է քրիստոնէական միաբանութեան նախին տեսակէտներուն դէմ Պօղոսի հակառակութիւնը: Գործք Առաքելոցի մէջ վարդապոյն ձեւով պատկերացուած է ընդդիմադիր եւ պահպանողական տարբերութեամբ, բայց յայտնի կ'երեւի որ սուր կռիւ եղած է անոնց միջեւ: Այսպէս, օրինակի համար, կարդանք Գործք Առաքելոցի ԺԵ. գլուխը, համար 1, 5. «Եւ որոշ մարդիկ Հրէաստանէն իջած եղբայրներուն կը սորվեցնէին որ եթէ Մովսէսի աւանդած սովորութեանը համաձայն չթլփատուիք, չէք կրնար փրկուիլ: Պօղոս եւ Բառնարաս անոնց դէմ շատ մը հակառակութիւն ու վէճ ընելէ ետք վճռեցին որ Պօղոս եւ Բառնարաս եւ մէկ քանիներն ալ անոնցմէ Երուսաղէմ ելլեն առաքեալներուն ու երէցներուն այս խնդրին համար: Անոնք ալ եկեղեցիէն ճամբայ դրուած՝ Փիւնիկէն ու Սամարիայէ անցնելով հեթանոսներուն դարձի գալը կը պատմէին ու մեծ ուրախութիւն կուտային բոլոր եղբայրներուն: Ու երբ Երուսաղէմ հասան, եկեղեցիէն ու առաքեալներէն եւ երէցներէն ընդունուեցան եւ պատմեցին ինչ որ Աստուած ըրեր էր իրենց հետ: Փարիսեցւոց ազանդէն հաւատացեալներէն ոմանք երան ու կ'ըսէին թէ պէտք է թլփատուի զանոնք եւ պատուիրել որ Մովսէսի օրէնքը պահեն: Շատ վիճարանութիւն եղաւ այս բանին շուրջ: Պետրոս օտքի ելաւ եւ ըսաւ անոնց. Եղբայրներ դուք պիտէք որ առաջին օրերէն Աստուած զիս ընարեց մեր մէջէն որպէսզի իմ բերնովս հեթանոսները աւետարանին խօսքը լսեն եւ հաւատան: Եւ սրտազէտն Աստուած վկայեց անոնց Սուրբ Հոգին տալով անոնց, ինչպէս մեզի ալ: Եւ խորութիւն մը չզրաւ մեր ու անոնց մէջտեղ,



հաւատքով անոնց սրտերը մաքրելով: Ուստի ինչո՞ւ զԱստուած կը փորձէք»: Ինչպէս կ'երեւի Հին առաքեալները միաբանութեան գործադիր մարմինը կը ներկայացնեն եղեր: Այսպէս Պետրոսն ու Յակոբոսը հաշտագրական քարոզներ տալէն յետոյ որոշուեցաւ իրենցմէ մարդիկ ընտրել եւ զրկել Անտիոք Պողոսի եւ Բառնաբասի հետ եւ ընտրուեցան Յուզա եւ Շիլգա: Գործադիր մարմինը մերժեց պարտադրել թլիփատութիւնը հեթանոս նորահաւատներուն, բայց հաստատեց որ պիղծ միս չուտուի, կամ արիւնով անմաքուր կենդանիի միս չուտուի եւ չքաջալերել պոռնիկութիւնը: Նոյնպէս որոշուեցաւ որ ոչորմածութեան գործը խորականութեան պէտք չընթանայ: «Անոնք կը կամենային որ աղքատները յիշենք. ես ալ ուղեցի նոյն բանը», կ'ըսէ Պողոս զաղատացուց ուղղած իր թուղթին մէջ: Օգնութեան գործը թէ հրեայ քրիստոնեաներուն եւ թէ հեթանոս քրիստոնեաներուն սիրելի էր եւ ատոր շուրջ վէճ չունէին այնքան յաճախակի եւ եղածն ալ ներքին անհամաձայնութեան պատճառ չէր ըլլար, այլ սոսկ բանավէճի գոյն կ'առնէր: Օրինակ, ոչորմութիւն միայն քրիստոնեայ եղբայրներուն տալու էր թէ ոչ-քրիստոնեաներուն ալ: Յամենայն դէպս, զյիսուսը վէճը թլիփատութեան մասին էր միշտ: Պողոս այդ մասին շեշտակի կ'ըսէ թուղթ առ Գաղատացիսի մէջ (զլուիս 2. 12-14): «Որոնք որ կ'ուզեն մարմնի կողմանէ բարի երեւնալ, անոնք ձեզ կը ստիպեն որ թլիփատուիք, միայն որ Քրիստոսի խաչին համար չի հալածուին: Քանզի անոնք որ թլիփատուած են իրենց օրէնքը չեն պահեր, հապա կ'ուզեն որ դուք թլիփատուիք որպէսզի իրենք ձեր մարմնով պարծենան»:

Երուսաղէմի խորհրդաժողովէն յետոյ Գործք Առաքելոցը կը նկարագրէ որ Պողոս որպէս գործիչ գնաց Յունաստան, հեթանոսներուն քարոզելու համար: Վերադարձին անդեկութիւն տուաւ իր գործի յաջողութեան մասին: «Եւ երբ անոնք կը լսէին փառք կուտային Տէրոջը եւ ըսին իրեն. Կը տեսնե՞ս, եղբայր, քանի հազար հրեաներ կան որոնք օրէնքին նախանձախնդիր են: Բայց քու վրայով իմացան թէ դուն բոլոր հեթանոսներուն մէջ եղած հրեաներուն Մովսէսէ ապստամբիլ կը սորվեցնես, ըսելով որ տղաքնին չթլիփատեն եւ սովորութիւններուն համեմատ չվարուին» (Գործք, ԻԱ. 20-22): Պողոսէն կը պահանջեն որ ինքզինք մաքրէ եւ ցոյց տայ որ ինք ջերմեռանդ հրեայ է: Պողոս կը յօժարի ընել այդ, բայց ժամանակ չունենար, վրան կը յարձակին որ զինք սպաննեն որպէս ազգին դաւաճան: Հռովմէական իշխանութիւնները կը պաշտպանեն զայն եւ ի վերջոյ կը զրկեն Հռովմ, ուր նա կը սորվեցնէ ապատօրէն Աստուծոյ թաղաւարութիւնը:

Բ) ՀԱԿԱՌԱԿՈՒԹԻՒՆ ՀՐԵԱՆԵՐՈՒ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Բնական էր որ հեթանոս քրիստոնեաները իրենց տեսակէտները աւելի եռանդով պիտի արշապանէին, երբ իրենց թիւը կը բազմանար: Հակառակութիւնը ուրեմն, երթալով աւելի պիտի սրուէր: Այս հակառակութիւնը որքան երկար տևեց, նոյնքան շատցան բախումները եւ երկու ձգտումներու թշնամութիւնը իրարու դէմ աւելի խորացաւ: Այս դրութիւնը աւելի սրուեցաւ երբ Երուսաղէմի կործանումէն մի քանի տասնեակ տարիներու նախօրեակին ծանրացաւ հակադրութիւնը հրեաներու եւ այն ազգերու միջեւ ուր անոնք կ'ապրէին: Հրէականութեան պրոլետարական տարրը յատկապէս, ի մասնաւորի Երուսաղէմի մէջ որ կը մօտենային ոչ-հրեայ ազգերուն, մասնաւորապէս Հռովմէացիներուն, աւելի եւ աւելի ատելութեամբ լեցուեցաւ: Հռովմէացին ամենավատ ճշոզն ու հարստահարողն է եւ յոյն անոր զաշնակիցը: Ամէն մի կէտ որ հրեաները կը զանազանէր անոնցմէ, աւելի շեշտուեցաւ քան առաջ: Բոլոր անոնք որ մեծ ջանք կը թափէին հրեաներու մէջ պրոպականտ ընելու, իրենց գործունէութեան յաջողութեան սիրոյն ստիպուած էին նկատի առնել հրէական տեսակետները, կառչիլ հրէական օրէնքներուն սրոնց յարած էին իրենց միջավայրի ազդեցութեան բերումով: Բայց այն չափով որ հրեաներու խոր ատելութիւնը շատցեր էր զիրենք ճշոզ ազգերու դէմ, նոյն չափով աւելցաւ մասսաներու մէջ ատելութիւնը եւ խորշանքը հրեաներուն դէմ: Ասոր հետեւանքով շատ մը հեթանոս քրիստոնեաներ եւ գործիչներ ոչ միայն նկատի չէին ունենար հրէական օրէնքները այլ եւ անարդանքով կը խօսէին անոնց մասին: Հրեայ քրիստոնեաներու եւ հեթանոս քրիստոնեաներու հակասութիւնը այնքան շատցաւ որ վերջինները ուղղակի թշնամացան հրէականութեան դէմ: Սակայն մեսիայի հաւատքը, ներառեալ խաչեցեալ մեսիայի հաւատքը այնքան շարկապուած էր հրէականութեան հետ որ հեթանոս քրիստոնեաները չէին կրնար հրէականութիւնը վերցնել ամբողջապէս: Անոնք հրէականութենէն ստին մեսիական մարդաբնութիւնները եւ մեսիայի հաւատքի օժանդակ տարրերը եւ նոյն ստեն թշնամացան հրէականութեան դէմ: Ասիկա նոր հակառակութիւն մը աւելցուց արդէն իսկ եղածներուն վրայ: Մենք տեսանք արդէն թէ որքան մեծ շեշտ դրած են աւետարանները փաստելով որ Յիսուս սերած է Գաւիթէն եւ աշխատեր են Գալիլիոյ մէջ ճնող Յիսուսը կապել Երուսաղէմի հետ: Կրկին եւ կրկին անոնք հրեաներու սուրբ զրքէն ապացոյցներ բերած են փաստելու Յիսուսի մեսիական կոչումը: Անոնք նոյնիսկ



Յիսուսը ներկայացուցեր են այն ձևով որ նա բողոքեր է իրեն ուղղուած ամբաստանութեան դէմ որ իրր թէ ինք կ'ուզէ եղեր ջնջել հրէական օրէնքը (տես Մատթէոս, Ե. 17, ինչպէս նաև Ղուկաս, ԺԶ. 16): «Մի կարծէք թէ ես եկած եմ կործանել օրէնքը կամ մարդարէները. ես չեմ եկած կործանելու, այլ լրացնելու: Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, երկինք ու երկիր պիտի անցնին բայց մէկ նշանախնայ պիտի չկորսուի օրէնքէն մինչև ամէն ինչ կատարուի»: Եւ յետոյ Յիսուս կը պատուիրէ իր աշակերտներուն. «Հեթանոսներուն ճամբան մի երթաք ու սամարացիներու քաղաքը մի մտնէք, հապա աւելի Իսրայէլի տանը կորսուած ոչխարներուն դացէք» (Մատթէոս, Ժ. 6): Ասով Յիսուս յայտնի արդելք մը կը դնէ հրէական շրջանակէն դուրս պրոպականատ ընելու: Յիսուս նոյնպէս կ'արտայայտուի փիւնիկեցի կնոջ մը (տես, Մատթէոս ԺԵ. 21-28): «Եւ Յիսուս անկէ ելլելով Տիւրոսի եւ Սիդոնի կողմերը գնաց. եւ ահա քանանացի կին մը այն սահմաններէն եկած կ'աղաղակէր անոր ու կ'ըսէր. «Ողորմէ ինձի, Տէր, որզի Դաւիթի, աղջիկս դեւէն սատարիկ կը շարչարուի: Եւ ինք պատասխան չտուաւ անոր. ու իր աշակերտները մօտենալով կ'աղաչէին իրեն եւ կ'ըսէին. Արձակէ ատիկա, վասնզի մեր ետեւէն կ'աղաղակէ: Եւ ինք պատասխան տուաւ ու ըսաւ. Ես ուրիշէ մը չըրկուեցայ, բայց միայն Իսրայէլի տանը կորսուած ոչխարներուն: Եւ անիկա եկաւ երկրպագութիւն կ'ընէր անոր ու կ'ըսէր. Տէր, օգնէ ինձի: Ան ալ պատասխան տուաւ ու ըսաւ. Ազէկ չէ տղոց հացը առնել եւ շուններուն ձգել: Անիկա ալ ըսաւ. Այո, Տէր, բայց շուներն ալ տէրոջ սեղանէն ինկած փշրանքներովը կը կերարկուին: Այն ատեն Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ. Ով կին, քու հաւատքդ մեծ է. քու ուղածիդ պէս ըլլայ քեզի. եւ նոյն ժամէն անոր աղջիկը բժշկուեցաւ»:

Յիսուսի խոստումը որ իր առաքելներուն տուաւ թէ անոնք ապագային տասներկու աթոռներու վրայ պիտի նստին եւ Իսրայէլի տասներկու ցեղերը պիտի դատեն, նոյնպէս հրէական մտածողութիւն է: Այս խոստումը հրապուրիչ է միայն մէկ հրեայի, ան ալ Հրէաստան բնակող հրեայի մը: Բայց ան իր հիմքը կորսնցուցեր է հեթանոսներու պրոպականտին մէջ:

Մինչ աւետարանները այսպիսի ազդու հետքեր վեր կը հանեն հրէական հաւատալիքներէն մեսիայի վերաբերմամբ, անոնք յաճախ դանձր կը դնեն այնպիսի անմիջական յարադրութեամբ որ ցոյց կուտայ հեղինակներուն կամ աւետարանը խմբագրողներուն ունեցած ատելութիւնը հրեաներու դէմ: Յիսուս կրկին եւ կրկին իր քարոզներուն մէջ հակառակը կը շեշտէ այն ինչ որ սիրելի է

ջերմեռանդ հրեայի մը համար, ծոմապահութիւն, ուտելիքի օրէնքները եւ շարքի օրը սուրբ պահելը: Անիկա նոյնիսկ հեթանոսները աւելի կը բարձրացնէ քան հրեաները: «Կ'ըսեմ ձեզի որ Աստուծոյ թագաւորութիւնը ձեզմէ պիտի առնուի ու այնպիսի ազդի մը պիտի տրուի որ անոր պատուներ բերէ» (Մատթ. ԻԱ. 43): Յիսուս նոյնիսկ այնքան առաջ կ'երթայ որ յայտնապէս կ'անիծէ հրեաները. «Այն ատեն սկսաւ նախատել այն քաղաքները որոնց մէջ զործուեր էին իր հրաշքներէն շատերը քանզի չապաշխարեցին. վայ քեզ Քորազին, վայ քեզ Բեթսայիդա. վասնզի եթէ Տիւրոսի եւ Սիդոնի մէջ եղած ըլլային այն հրաշքները որոնք ձեր մէջ եղան, շատոնցմէ քուրճով ու մոխիրով ապաշխարած պիտի ըլլային: Բայց ձեզի կ'ըսեմ. Տիւրոսի եւ Սիդոնի աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը քան թէ ձեզի: Եւ դուն Կափառնայում որ մինչև երկինք բարձրացած ես. մինչև դժոխք պիտի իջնու, վասնզի եթէ Սոզոմի մէջ եղած ըլլային այն հրաշքները որոնք քու մէջը եղան, իրաւ որ մինչև աշոբ դեռ պիտի մնար: Բայց ձեզի կ'ըսեմ որ սողոմացոց երկրին աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը քան թէ ձեզի» (Մատթ. ԺԱ. 20-24): Մենք այլևս չենք լսեր որ հրէական ազանդ մը այս բառերով կ'անարդէ նոյն ազդին պատկանող ուրիշ ազանդ մը: Յիսուս հրեայ ազգը կը ներկայացնէ որպէս բարոյապէս ինկած, անսովոր կերպով ապականուած, յամառ, անմեղարարկ եւ ցած հակումներով աւելի վատ քան սողոմացիները: Մենք այս ձև արտայայտութիւններ կը տեսնենք նաև Յիսուսի բերանը զրուած մարգարէութիւններու մէջ, որոնք անուշտ յերկրուած են Երուսաղէմի կործանումէն յետոյ, մինչ Յիսուս որպէս թէ նախապէս ըրած է այդ մարգարէութիւնը թէ Երուսաղէմ պիտի կործանի (Երուսաղէմի կործանումը Տիտոսի ձեռքով 70 Յ. Ք.): Հրէական պատերազմը որ սքանչելի կերպով վեր կը հանէ հրեաներու ուժը եւ այն վտանգը որուն ենթարկեցին իրենց թշնամիները, կրկնապատկեցին ատելութիւնը հրեաներու եւ հեթանոսներու միջև. նոյն ազդեցութիւնն ու արդիւնքը ունեցաւ ինչ որ ունեցաւ Յունիսի ճակատամարտը եւ Փարիզի կոմունը ԺԹ. դարուն երբ ուճացեր էր դասակարգային ատելութիւնը Փարիզի պրոլետարիատին ու պուրժուազիային միջև: Ասիկա նոյնպէս խորացուց անդունդը հրեայ քրիստոնէութեան եւ հեթանոս քրիստոնէութեան միջև: Երուսաղէմի կործանումը չբացուց այն գետինը որուն վրայ կեցեր էր հրէական պրոլետարիատի դասակարգային շարժումը որ պէտք էր զրուէր ազգային անկախութեան հիման վրայ: Երուսաղէմի կործանումէն վերջ հրեաները իրենց գոյութիւնը պահեցին օտար եր-



կիրներու մէջ, թշնամիներու մէջ, մինչ իրենք բոլորն ալ աղքատ թէ հարուստ կ'ատուէին եւ կը հալածուէին, իսկ անոնց զէմ իրենց միակ յոյսը կը մնար միասնականութիւնը: Հարուստներու ողորմածութիւնը զէպի իրենց հրեայ հայրենակիցները հրեայ սկզբունքը դարձաւ եւ կարգ մը պարագաներու մէջ ազգային միասնականութեան զգացումը, դասակարգային թշնամութեանց յաղթեց: Քրիստոնէութեան հրէական դիմագիծը ատոր համար իր ուժգնութիւնը կորսնցուց: Այդ ատենէն քրիստոնէութիւնը բացառապէս հեթանոսներու քրիստոնէութիւնը եղաւ, այլևս ան հրէական հողին վերայ քաղաքական կուսակցութիւն մը չէր, այլ հրէականութենէն հեռու քաղաքական կուսակցութիւն մը որ թշնամի էր հրէականութեան: Քրիստոնէական դիրքաւորումը եւ հակասեմական դիրքաւորումը սատիճանաբար միացան եւ դարձան հոմանիշ դադափարներ:

Բայց հրէական հասարակութեան անկումով հրէական մեծիայի մը ազգային յոյսը կորսնցուց իր հողը ուրիշ անձեր էր: Կարելի էր որ այդ յոյսը մի քանի տասնեակ տարիներ եւս ազդէր, որպէսզի կարենար անոր մահէն առաջ մի քանի սոնդակական-լորձնական բանաձեւեր պատրաստել, բայց ան հրէական մայրաքաղաքի կործանումով ազդու մահու հարուած մը ստացաւ, որով իր քաղաքական եւ ընկերային զարգացման շարժումը սկսաւ կազալ:

Բայց նոյնը չպատահեցաւ հեթանոս քրիստոնեաներու մեծիայի կապած յոյսերուն, որոնք ամբողջապէս անջատուեցան հրեայ ազգէն ու ազատ մնացին շարժարանքներէն ու հալածանքներէն: Մեծիայի զաղափարը այժմ դարձաւ ապրող ուժ խաչեցեալ մեսիայի պատկերով, ուրիշ խօսքով ոչ-հրեայ մեսիան այն մեսիան եղաւ որ յունարէն փարզմանութեամբ կ'անուանուի Քրիստոս:

Իրապէս քրիստոնեաները այնքան առաջ դացին որ այդ հանածոյ իրողութիւնը փոխեցին եւ անոր հրէական յոյսի սնանկութեան նշանակութիւնը ատին, որովհետեւ իրենց մեսիան այլևս յաղթեր էր: Երուսաղէմը այժմ կը թուէր որպէս Քրիստոսի թշնամի, իսկ Երուսաղէմի կործանումը հրեաներէն վրիժառութիւն մը Քրիստոսի կողմէ, որուն ահաբեի յաղթական ուժը այդ իրողութեամբ կ'ապացուցուէր: Ղուկաս Յիսուսի Երուսաղէմ մտնելը կը պատմէ մեղի (Ղուկաս, ԺԹ. 41-44). «Ու երբ մօտեցաւ, քաղաքը տեսնելով լացաւ անոր վրայ եւ ըսաւ. Գոնէ այս քու օրումդ մէջ զիտնայի խաղաղութիւնդ, բայց հիմա ծածկուեցաւ քու աչքերէդ: Վասնզի օրեր պիտի գան քու վրազ որ թշնամիները քու բոլորաբոլոր պատնէջ պիտի շինեն ու քեզ պիտի պաշարեն եւ ամէն կողմէ քեզ նեղը պիտի ձգեն եւ հիմնախտակ պիտի ընեն քեզ եւ քու մէջդ ե-

ղած զաւակներդ եւ քար մը քարի վրայ պիտի չթողուն ամենեւին քու մէջդ, անոր համար որ չճանչնար քու այցելութեանդ ժամանակը»: Եւ անմիջապէս յետոյ Յիսուս նորէն կ'ըսէ որ «Երուսաղէմի կործանման օրերը բերելու են բնաջնջում նոյնիսկ յղի կիներուն ու ծիծ տուող մայրերուն եւ ասոնք վրէժխնդրութեան օրեր պիտի ըլլան» (Ղուկաս, ԻԱ. 22): Եւ ասոնք ըսողը Յիսուս կոչուած բարի հովիւն է որ իբր թէ իր անձը դրած էր ի սպաս իր ոչխարներուն:

Բայց Երուսաղէմի կործանումը ուրիշ արդիւնքներ ալ տրւաւ քրիստոնէական մտածողութեան համար: Մենք արդէն նշեցինք որ քրիստոնէութիւնը որ մինչեւ այն ատեն բնութեան եւ ուժի կը հաւատար, այժմ ստացեր էր խաղաղէր բնոյթ: Միայն հրեաներուն մէջ էր որ տակաւին կը գտնուէին ուժեղ դեմոկրատիկ տարրեր կայսերական շրջանի օրերուն: Կայսրութեան միւս ազգերը դարձան վախկոտ, անյարմար կոխի, նոյնիսկ պրոչկտարները: Երուսաղէմի կործանումով կայսրութեան ժողովրդական էմբրժիի վերջին պահեստն ալ չքացաւ: Ամէն տեսակի ապստամբութիւն անյուսալի դարձաւ: Քրիստոնէութիւնը այժմ եղաւ հեթանոսական քրիստոնէութիւն, ենթարկուող եւ ստրկական: Բայց կայսրութեան իշխողները հոռոմէացիներ էին: Անհրաժեշտ էր ուրեմն որ կայսրութեան միւս տարրերը ինքզինքնին սիրցնէին հոռոմէացիներուն: Մինչ առաջին քրիստոնեաները հրեայ հայրենասէրներ էին եւ թըշնամի օտար իշխանութեան ու շահագործումի հեթանոս քրիստոնեաները հրեաներու զէմ իրենց ատելութեան վրայ աւելցուցին պաշտամունք հոռոմէացիներու եւ կայսերական իշխանութեան: Այս բանը կը տեսնենք նոյնիսկ աւետարաններուն մէջ. զրդուիները, զըպիւրներն ու փարիսեցիները զրկեր են Յիսուսի մօտ որպէսզի զայն զրդուեն եւ զաւարդութեան խնդրով ձերբակալել տան (տես Ղուկաս, Ի. 20-25). «Եւ ետքը յարմար տեսին սպասելով զրկեցին քանի մը խարերայ մարդիկ որոնք կեղծաւորութեամբ ինքզինքնին արդար կը ձեւացնէին, որպէսզի զանիկա խօսքով բռնեն տէրութեան եւ կուսակալին իշխանութեանը զանիկա մատնելու: Ու անոր հարցուցին ըսելով. Վարդապետ, զիտնք որ շխտակ կը խօսիս ու կը սորվեցնես եւ աշտութիւն չես ըներ, մեզի արժա՞ն է կայսրին տուրք տալ թէ ոչ: Եւ անոնց խորամանկութիւնը հասկնալով ըսաւ անոնց. Ինչո՞ւ զիս կը փորձէք: Յուցուցէք ինձի զահեկան մը: Որո՞ւն պատկերը ու զիբը ունի վրան: Պատասխան տուին ու ըսին. Կայսրին: Եւ ինք ըսաւ անոնց. Ուրեմն զայն որ կայսրին է կայսրին տուէք եւ զայն որ Աստուծոյն է Աստուծոյն տուէք»:

Նոյն ոգին կը տեսնենք հեթանոս քրիստոնեաներու դիվաւոր



պրօպակհանտիստներուն մէջ. օրինակ Հոովմէացւոց թուղթին մէջ Պօղոս կ'ըսէ հետեւեալը (ԺԳ. 1-7). «Ամէն մարդ իր վրայ եղած իշխանութիւններուն թող հնազանդի, վասնզի չկայ իշխանութիւն մը որ Աստուծոյ չըլլայ եւ անոնք որ կան Աստուծոյ կարգուած են: Ուրեմն ով որ իշխանութեան դէմ կը կենայ, Աստուծոյ դէմ կը կենայ եւ անոնք որ դէմ կը կենան անձերնուն դատապարտութիւն կ'ընդունին: Վասնզի իշխանները բարի գործերու վախ տուող չեն, հապա չարերու. կ'ուզե՞ս չվախնալ իշխանութենէն, բարի գործէ ու անկէ գովութիւն պիտի ընդունիս. վասնզի անկիա Աստուծոյ սպասաւորն է բարիի համար, բայց եթէ չար կը գործես վախցիր, վասնզի դատարի տեղը մէջքը թուր չէ կապեր, քանզի Աստուծոյ սպասաւորն է եւ վրէժխնդիր բարկութիւն հասցնելու անոր վրայ որ չար կը գործէ: Ասոր համար պէտք է հնազանդ ըլլալ ոչ թէ բարկութեան համար, հապա խղճմտանքի համար ալ: Այս պատճառով է որ տուրք ալ կուտաք, վասնզի Աստուծոյ սպասաւորներն են այդ նոյն բանին հող տանելու: Ուստի հատուցէք պէտք եղածը ամէնուն. որու որ տուրք տալու է տուէք տուրքը, որու որ մաքս՝ մաքսը, որու որ վախ՝ վախնալը, որու որ պատիւ՝ պատիւը»:

Այս խօսքերով որքան կը հեռանանք այն Յիսուսէն որ իր աշակերտներուն կը քարոզէր սուր զնել եւ ատել հարուստներն ու իշխանաւորները. մինչ անդին Յովհաննու Յայտնութեան մէջ կը տեսնենք որ ան կ'անիծէ Հոովմն ու անոր դաշնակից թաղաւորները: «Բարելոն (Հոովմ բնի կ'ուրէ) ինկաւ, ինկաւ մեծ Բարելոնը եւ դեւերու բնակարան եղաւ եւ բոլոր պիղծ ոգիներու արգելանոց ու բոլոր պիղծ ու ատելի թռչուններու վանդակ, վասնզի անոր կատաղի պոռնկութեան զինիէն խմեցին բոլոր ազգերը ու երկրի թագաւորները անոր հետ պոռնկացան եւ երկրի վաճառականները անոր չափազանց զեղխութենէն հարստացան... Ու երկրի թագաւորները որ անոր հետ պոռնկացան ու հեշտացան, պիտի լան ու կոծին ատոր վրայ եւ անոր հրկիզութեանը ծուխը տեսնեն» (Յովհ. Յայտ. ԺԶ. 2-9):

Գործք Առաքելոցի մէջ հիմնական նշումը այն է որ հրեաները խաչեցեալ մեսիայի ուսուցմունքը կ'ատէին եւ նաեւ այն որ Հոովմէացիները որոշ չափով կ'ընդունէին: Երուսաղէմի կործանումէն վերջ ինչ որ քրիստոնեաները կ'երազէին կամ կ'երեւակայէին որ ըլլար Երուսաղէմի բռնած զիրքին համաձայն ներկայացուած է այդ Գործք Առաքելոցին մէջ: Քրիստոնէական պրօպակհանտան Երուսաղէմի մէջ համաձայն Գործք Առաքելոցին հալածուած է, մինչդեռ Հոովմի իշխանութիւնները պաշտպաներ են քրիստոնեաները:

Ազատութիւն Հոովմի մէջ, հալածանք Երուսաղէմի մէջ: Բայց ամէնէն յատկանշական իրողութիւնը որ կը պարզէ ատելութիւն հրեաներուն դէմ եւ գովասանք Հոովմէացիներուն, Քրիստոսի չարչարանքի եւ խաչելութեան պատմութիւնն է որ վերջէն նոր ազդեցութեան շունչով գրուած է, մասնաւորապէս հրեաներուն դէմ ատելութիւնը վառ պահելու համար:

Այժմ կ'արժէ որ առանձնապէս անդրադառնանք այդ հիւսուած պատմութեան որ մեղի պատմական իրողութիւն մը կը պարզէ իրարու հակառակ ուժերու դիրքաւորումը նկատի առնելով:

**ՔՐԻՍՏՈՍԻ ԶԱՐԶԱՐԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ**

Արդարեւ աւետարաններու մէջ մի քանի բաներ կան որ կը պարզեն թէ Քրիստոսի կեանքին շուրջ պատմուած իրողութիւնները անհաւատալի են. օրինակ անոր ծնունդն ու մահը: Աւետարանները այս երկու իրողութիւնները եթէ կարողանային ապացուցանել, այն ասան յայտնի կ'ըլլար որ իրապէս Յիսուս անունով մէկը որպէս պատմական անհատականութիւն ծնած ու սպրած է, գործեր ու քարոզեր է մինչեւ իր մահուան ժամկէտը: Մէկու մը բարոյական սկզբունքներ վերադրել եւ չարք մը հրաշքներ կապել անոր անձին փաստուած իրողութիւններ չեն նկատուիր: Քրիստոսի ծննդեան ու մահուան շուրջ եղած վկայութիւնները տարակոյտ չկայ որ շինծու յերկրանքներ են: Այդ պատմուած իրողութիւնները եթէ մենք վեր առնենք ու քննենք, պիտի տեսնենք որ քրիստոնեայ աստուածաբանը պիտի շուարի անոնց ստուգութիւնը փաստելու, թէեւ որոշ է որ քրիստոնէութիւնը ինք զանոնք չէ հնարեր, այլ երազանքի մը մարմնացում Քրիստոսի հետեւորդներն են որ յօրինել են այդ պատմութիւնները եւ աւետարաններու հեղինակները չեն կրցած փոխել զանոնք իրենց քմահաճոյքով, թէեւ մէկ քանի բաներ փոխած են, խորհելով որ ատով աւանդական պատմուածքներուն չեն հակասեր:

Հակասական իրողութիւններէն մին Յիսուսի Գալիլիական ծնունդն է, որ չի համապատասխաներ մեսիայի Դաւիթի սերունդէն ըլլալու հաւաստիացումին, որովհետեւ մեսիան Դաւիթի քաղաքէն, Երուսաղէմէն գալու էր: Այստեղ պարզ կ'երեւի որ մասնաւոր փախուստի ճամբաներ պէտք էին որ Գալիլիան կապէին Երուսաղէմի: Եթէ Յիսուս միաբանութեան մը երեւակայութեան արդիւնքն էր մեսիական տեսլապատկերով, այդ միաբանութիւնը զայն դալիլիացի չինելու չէր: Ուրեմն, մենք եթէ ընդունինք որ Յիսուս



զալիլիացի էր, դա կը նշանակէ թէ Յիսուսը նոյն Յիսուսը չէ որ զալու էր Երուսաղէմէն եւ Դաւիթի սերունդէն:

Մենք տեսանք թէ աւետարանները կտորներ ունին որոնք մեզի ենթադրել կուտան թէ Յիսուս սպաստմբութիւն մը ծրարներ էր եւ այդ փորձին հետեւանքով խաչուեցաւ: Աս ալ չփոթեցուցիչ բան մըն է, որ սուր հակասութիւն մը կը յայտնաբերէ այդ ատենան ջրիստոնէութեան ոգւոյն դիմաց. որովհետեւ շատ տարօրինակ է ընդունիլ որ ջրիստոնէութեան տիրապետող ուղին իր նպատակը ընտրած ըլլար ջրիստոնէութեան անցեալի մասին անդրադառնալ եւ իր ծագումի պատմութիւնը արձանագրել: Ոչ երբեք: Ուրեմն եղածը ոչ թէ պատմական նպատակի համար էր, այլ հակաճատութեան եւ պրոպականտայի նպատակի համար: Մեսիայի խաչելութեամբ մահը օտար զաղափար մըն էր հրեայ մտածողութեան համար, հրեաները իրենց մեսիան կ'երազէին յաղթական հերոս մը որ եթէ կը մարտիրոսանար նուիրական դատի մը արտոյան ըլլալուն հետեւանքով էր եւ այն ատենն էր որ սննջնելի դրոշմ մը կը թողուր իր հետեւորդներուն վրայ եւ ատով կը ստեղծէր խաչեցեալ մեսիայի զաղափարի յատուկ գետինը:

Երբ հեթանոս ջրիստոնեաները ընդունեցին խաչելութեան այս աւանդութիւնը, շուտով հասկցան թէ խորթ բան մը կար անոր մէջ. աւանդութիւնը կ'ըսէ որ հոովմէացիք խաչեցին Յիսուսը որպէս հրէական մեսիա, հրեաներու թագաւոր, մէկ խօսքով հրէական անկախութեան արտոյան, դաւադիր մը հոովմէական իշխանութեան: Երուսաղէմի կործանումէն վերջ այս աւանդութիւնը չփոթեցուցիչ դարձաւ: Քրիստոնէութիւնը հակառակ էր հրեաներուն եւ կ'ուզէր բարեկամանալ հոովմէացիներուն: Ատոր համար անհրաժեշտ էր որ աւանդութիւնը փոխուէր այնպիսի ձևով որ Յիսուսի խաչելութեան յանցանքը հրեաներուն վրին կապուէր, եւ այնպէս ալ ըրին: Բայց աւետարանիչները այնքան տղէտ էին ինչպէս տղէտ են մեր օրերու ժողովրդական մասսաները: Անոնք ջրիստոնէութեան բնատիպ պատկերը սրբազրած եւ գեղեցկացուցած ատեն խառնակ գոյներ ու անարուեստ եւ կոշտ վրձին գործածեցին:

Հաւանական է որ աւետարաններու մէջ ոչ մէկ տեղ մենք չենք գտներ այնքան անճոռնի հակասութիւններ ու անհեթեթութիւններ որքան այն մասին մէջ որ երկու հազար տարի միլիոնաւոր մարդոց մտքին ու երեւակայութեան վրայ խոր ազդեցութիւն թողեր է: Այն է Քրիստոսի մահուան ու չարչարանքի նկարագրութիւնը: Եւ այս հեքիաթը որ լուրջ խորհրդածութիւն չի վերցնէր, անարուեստ ու կոշտ չափազանցութեանց հիւսուածք մըն է ինքնին:

Կոյր նմանողութեան եւ սովորութեան ուժովն էր որ ջրիստոնէութեան ամէնէն գեղեցիկ ուղին մնաց խուլ աւետարաններու հեղինակներուն գործած խարդախ ներմուծումներուն առջեւ, այնպէս որ Յիսուսի խաչելութեան շուրջ ստեղծուած տարրական յուզումները ինչպէս եւ մեծ դատի մը համար անոր մարտիրոսացումը իր ազդեցութիւնը պահեց ժողովուրդներու վրայ հակառակ արուած պատմութեան այլանդակ հակասութեանց եւ ատով շնորհեց պայծառ փառապսակ մը ծիծաղելի եւ ապսխրտ տարրերով հիւսուած՝ այդ պատմութեան, ըսենք այդ հեքիաթի զլխին:

Յիսուսի չարչարանքները կը սկսին անոր Երուսաղէմ մտնելու պատմութիւնով: (Մատթէոսի պատմածը տարբեր է Մարկոսէն: Մատթէոս Յիսուսը կը նստեցնէ իշուն եւ աւանակին վրայ, երկուքին վրայ. կարելի՞ է. Մարկոս կը նստեցնէ միայն իշուն վրայ): Երուսաղէմի մուտքը թագաւորի մը յաղթական հանդիսութիւնն է: Ամբողջ ժողովուրդը կը զիմաւորէ դինք, ոմանք հագուստներ կը փռեն, ոմանք ծառի ճիւղեր անոր ճամբուն վրայ եւ կ'աղաղակեն. Ուսաննա (կը նշանակէ օգնէ մեզի), օրհնեալ ըլլայ ան որ կուզայ Տէրոջը անունովը. օրհնեալ ըլլայ մեր հայր Դաւիթի թագաւորութիւնը որ եկաւ Տէրոջը անունով» (Մարկոս, ԺԱ. 9):

Թագաւորները հրեաներու մէջ այսպէս կ'ընդունուէին. (տես Դ. Գիրք Թագաւորաց, Թ. 13). «Տէրը այսպէս կ'ըսէ. Քեզ Իսրայէլի վրայ թագաւոր օձեցի: Այն ատեն շուտով ամէն մարդ իր հանդերձը առաւ ու սանդուխին զլխուն վրայ անոր ոտքին տակ դրին ու փող հնչեցնելով ըսին Յէու թագաւոր եղաւ»:

Հասարակ ժողովուրդը կը յարի Յիսուսի. միայն արիստոկրատ եւ բուրժուայ զասակարգը, քահանայապետներն ու դպիրները թշնամի են իրեն: Յիսուս գիկատասոր կ'ըլլայ. տաճարէն կը վռնտէ վաճառողներն ու դրամափոխները եւ սեւէ զիմազրութեան չի հանդիպիր. այդ կը նշանակէ թէ ան բացարձակ տէրն ու տիրականն էր Երուսաղէմին:

Անշուշտ աւետարանիչներու կողմէն մի քիչ չափազանցութիւն է այս: Եթէ Յիսուս այդքան հեղինակութիւն ունէր, անտարակոյս շատերու ուշադրութիւնը պիտի գրաւէր: Յովսէփոսի նման պատմագիր մը որ շատ մանրամասնութեանց մէջ կը մտնէ, Յիսուսի մասին որեւէ բան չըսեր: Ասկէ զատ զիւրդները որ բաւական զօրաւոր էին դարձեալ չէին կրնար քաղաքը կառավարել, եթէ փորձէին ալ՝ իրենց դէմ կը դանէին ուժգին ընդդիմութիւն: Եթէ Յիսուս փորձեր է Երուսաղէմ մտնել, տաճարէն դուրս քշել փարիսեցիներն ու սաղուկեցիները, նախ փողոցային կռիւներու մէջ յաղ-



Թական դուրս գալու էր: Փողոցային կոիւնները հրէական հատուածներու միջեւ երուսաղէմի մէջ անպակաս էին այդ ասեմները: Դեռ ակելին: Բագմութիւնը Յիսուսը կ'ողջունէ որպէս դրօշակակիրը «մեր հօր Դաւիթի թագաւորութեան», ուրիշ խօսքով որպէս վերահաստատիչը հրէական թագաւորութեան: Այս ցոյց կուտայ որ Յիսուս հռովմէական իշխող դասակարգերուն հակառակ եղած է: Այս թշնամութիւնը քրիստոնէական երեւակայութեան պտուղը չէ, այլ հրէական:

Ասոր կը յաջորդէ ակետարաններու տեղեկատուութիւնը այն դէպքերուն որոնց անդրադարձանք, այսինքն՝ հրամայել որ աշակերտները զինուին, Յուդայի մասնութիւնը, Զիթենեաց լերան զինեալ կուր: Մենք տեսնք որ ասոնք չին աւանդութեան մնացորդներն են որոնք քրիստոնէաներու վերջին տրամադրութեանց համաձայն չեն եւ ասոր համար սրբազրուած են ու անոնց տրուած է խաղաղասիրական եւ հպատակութեան դոյն: Յիսուս կը բանտարկուի, քահանայապետի պալատը կը տարուի եւ հոն կը դատուի:

«Եւ տարին Յիսուսը քահանայապետին ու անոր քով ժողովեցան բոլոր քահանայապետներն ու ծերերն ու դպիրները. իսկ քահանայապետները ու բոլոր ժողովուրդը Յիսուսի դէմ վկայութիւն կը փնտռէին եւ չէին գտներ, վասնզի սուտ կը վկայէին անոր դէմ ու վկայութիւնները իրարու համաձայն չէին: Եւ քահանայապետը մէջտեղը ոտքի ելլելով հարցուց Յիսուսի եւ ըսաւ. Պատասխան մը չե՞ս տար. ի՞նչ կը վկայեն ասոնք քեզի դէմ: Բայց անիկա լուռ էր ու պատասխան չէր տար: Քահանայապետը նորէն կը հարցնէր անոր ու կ'ըսէր. Դո՞ւն ես Քրիստոսը, օրհնեալ Աստուծոյ որդին: Եւ Յիսուս ըսաւ. Ես եմ ու պիտի տեսնէք որդին մարդոյ զօրութեան աջ կողմը նստած ու երկինքի ամպերով եկած: Եւ քահանայապետը իր հանդերձները պատռեց ու ըսաւ. Այ ի՞նչ պէտք են մեզի վկաներ. ասոր հայհոյութիւնը լսեցիք. ձեզի ի՞նչպէս կ'երեւնայ. եւ ամէնը դատաւարտեցին զանիկա թէ մահապարտ է» (Մարկոս, ԺԴ. 53-64):

Իրապէս դատական գործառնութեան սքանչելի պատկեր է դժուածը: Դատարան մը կը կազմուի անմիջապէս բանտարկեալի ձերբակալութենէն յետոյ, նոյն զիշերը, ան ալ ոչ թէ դատարանին մէջ որ տաճարի լերան վրայ էր, այլ քահանայապետի պալատին մէջ: Սուտ վկաններ կ'երեւին, բայց ոչ ոք անոնց հարցում կը հարցընէ եւ Յիսուս անոնց զբարտուութեանց չի պատասխաներ. անոնք չեն կրնար որեւէ փաստով զինքը դատաւարտել: Յիսուս առաջինը կ'ըլլայ որ ինքզինք կ'ամբաստանէ ըսելով որ ինք մեսիան

է: Ուրեմն ինչո՞ւ այս սուտ վկաները՝ եթէ Յիսուսի յայտարարութիւնը բաւական էր զինք դատաւարտելու համար: Այս դէպքին պատմիչներուն նպատակն է ցոյց տալ հրեաներու վատութիւնը: Անմիջապէս մահապատիժի վճիռ կը տրուի: Այլանդակութիւն մըն ալ այս է, որովհետեւ դա օրինական ձեւակերպութեանց ոտնակոխումն է, որմէ հրեաները շատ կը զուշանային: Դատարանը միայն ազատ արձակման վճիռ կրնար տալ առանց յապաղման, իսկ պատիժի դատաւարտութեան վճիռը կ'արձակուէր դատաւարութեան յաջորդ օրը: Երուսաղէմի դատարանը մահուան վճիռ արձակելու իրաւունք ունէ՞ր արդեօք: Երբայական Սինոտը որոշակի կ'ըսէ. «Իսրայէլի տաճարի կործանումէն քառասուն տարի առաջ (ըսել է 36 թուականին) իսրայէլացիք զրկուած էին մահուան վճիռ արձակելու իրաւունքէն»: Այս իրողութիւնը կը հաստատուի անով որ դատարանը Յիսուսի պատիժը չի գործադրեր, այլ զայն կը յանձնէ Պիղատոսին զոյն ամբաստանելով հռովմէացիներու դէմ դաւադրելու յանցանքով, դատաւարտութիւն մը այն բանին որ Յիսուս նպատակ ունեցեր է հրեաներու թագաւոր ըլլալ եւ Հրէաստանը ազատել հռովմէական լուծէն: Հրեայ հայրենասէրներու դատարանի կողմէ սքանչելի ցուցանիշ մը չէ՞ սա:

Հաւանական է որ դատարանը սուտ ըլլայ մահապատիժի վճիռ, բայց անոր գործադրութեան վաւերացումը հռովմէական պրօֆուտորէն կախուած է: Այժմ տեսնենք թէ այդ հռովմէացի իշխանը ի՞նչ դիրք բռնեց է (տես Մարկոս, ԺԵ. 2-15). «Յիսուսը կապեցին ու տարին մատնեցին Պիղատոսի: Եւ Պիղատոս հարցուց անոր. Դո՞ւն ես հրէից թագաւորը. անիկա ալ պատասխան տալով ըսաւ. Դուն կ'ըսես: Եւ քահանայապետները շատ ամբաստանութիւն կ'ընէին անոր վրայով: Եւ Պիղատոս նորէն հարցուց անոր ըսելով. Պատասխան մը չե՞ս տար, նայէ որչափ քեզի դէմ կը վկայեն: Եւ Յիսուս տակաւին պատասխան մը չտուաւ, մինչեւ որ Պիղատոս զարմացաւ: Սովորութիւն էր որ ասոնին ասոնը կապուած մը կ'արձակէր անոնց, որը որ իրենք ուզէին, եւ մէկը կար Բարբարա անունով, իր ընկեր խոսվարարներու հետ կապուած որոնք խռովարարութեան ատեն մարդասպանութիւն բրեր էին: Եւ ժողովուրդը աղաղակելով սկսաւ խնդրել որ ընէ ինչպէս միշտ կ'ընէր իրենց: Ու Պիղատոս անոնց պատասխան տուաւ ու ըսաւ. Կ'ուզէ՞ք որ հրէից թագաւորը արձակեմ ձեզի: Քանզի զիտէր որ քահանայապետները նախանձի համար մատներ էին զանիկա: Բայց քահանայապետները ժողովուրդը զբոսեցին որ խնդրեն յաւէտ Բարբարան իրենց արձակել: Նորէն Պիղատոս պատասխան տուաւ ու ըսաւ անոնց. Հա-



պա հրէից թաղաւոր ըսածնիդ ի՞նչ կ'ուզէք որ ընեմ: Եւ անոնք նորէն կ'աղաղակէին. Խաչը հանէ առիկա: Պիղատոս ըսաւ անոնց. Բայց ի՞նչ չար գործ ըրած է առիկա. եւ անոնք ալ աւելի կ'աղաղակէին եւ կ'ըսէին. Խաչը հանէ առիկա: Եւ Պիղատոս ժողովուրդը զոհ ընել ուզելով Բարաբրան արձակեց անոնց ու Յիսուսը ծեծելով ձեռք տուաւ որ խաչուի»: Մատթէոս աւետարանիչը աւելի առաջ կ'երթայ պատմելով որ Պիղատոսը բազմութեան ներկայութեան իր ձեռքերը լուաց եւ յայտարարեց. «Ես անմեղ եմ այս արդար մարդուն արինէն. զուք մտածեցէք: Եւ յետոյ բոլոր ժողովուրդը ըսին. Անոր արինը մեր վրայ ու մեր զաւակներուն վրայ թող ըլլայ» ( Մատթէոս, ԻԷ. 24-25): Ղուկաս մեղի չըսեք թէ ժողովքը Յիսուսը մահուան դատապարտեց, այլ կ'ըսէ որ սարգապէս զայն Պիղատոսին յանձնեց: «Եւ ամբողջ բազմութիւնը հաւաքուեցաւ անոր բոլորաբեր եւ զայն տարին Պիղատոսին եւ սկսան ամբաստանել ըսելով. Այս մարդը սպականութիւն կը յարուցանէ մեր ազգին մէջ, կ'արդիւի որ մենք կայսրին տուրք տանք. կ'ըսէ որ ինքը Քրիստոս թագաւոր մըն է: Եւ Պիղատոս ըսաւ անոր. Դուն հրէից թագաւորն ես: Եւ Յիսուս պատասխան տուաւ եւ ըսաւ. Դուն ըսիր: Յետոյ Պիղատոս քահանայապետին եւ ժողովուրդին ըսաւ. Ես յանցանք մը չեմ գտներ այս մարդուն վրայ: Եւ անոնք աւելի կատեցան ըսելով. Անիկա ժողովուրդը կը զրզռէ, ամբողջ հրեաներուն կը սորվեցնէ Գալիլիայէն սկսած մինչեւ այստեղ» ( Ղուկաս, ԻԳ. 1-5):

Ղուկաս կարելի է ըսել ճշմարտութեան քիչ մը մօտեցեր է: Յիսուս դատապարտուած է դաւադրութեան յանցանքով Պիղատոսի առջև եւ քաջարար ան իր յանցանքը չէ ուրացեր: Երբ Պիղատոս հարցուցեր է թէ զուն հրէից թագաւորն ես, ուրիշ խօսքով անոնց անկախութեան առաջնորդն ես, Յիսուս պատասխաներ է «Դուն ըսիր»: Յովհաննէս աւետարանիչը, գիտնալով որ պատմուածքի այդ ձեւը պահելով հրէական հայրենասիրութեան մնացորդներուն որոշ արժէք պիտի տայ, փոխեր է Յիսուսի պատասխանը. «Իմ թագաւորութիւնը այս աշխարհէն չէ», ըսեր է, «այլ երկինքի մէջն է, եթէ այս աշխարհինը ըլլար, իմ հպատակները ատոր համար պիտի կռուէին»: Յովհաննէս աւետարանիչը վերջին աւետարանիչն է, ամէնէն կրտսերը: Ատոր համար իր նախորդներուն ներկայացուցած իրողութիւնները իր ժամանակի պահանջին համաձայն փոխեր է:

Պիղատոսի խնդիրը պարզ է. ան որպէս հռոմէական իշխանութեան ներկայացուցիչը իր սարտականութիւնն է կատարեր ա-

պըստամբ Յիսուսը խաչելով. ատոր ըսելիք չկայ: Բայց սարորինակը այն է որ հրեայ մասսաները ամենաթեթեւ պատճառ մը իսկ չունէին կատարելու մարդու մը հանդէպ որ հռոմէացիներու իշխանութեան դէմ էր եւ զիրենք յորդորեր էր տուրք չտալ կայսեր: Եթէ Յիսուս իրապէս այդ ըրած է, ան զիւղիգմի սկզբունքներուն համաձայն շարժեր է եւ զիւղները Երուսաղէմի մէջ ուժեղ կուսակցութիւն էին կազմեր:

Եթէ մենք իրողութեան բուն բնոյթին հետեւինք ուշադիր վերլուծումով եւ ենթադրենք թէ աւետարաններու մէջ Յիսուսի դէմ ուղղուած ամբաստանութիւնները ճշմարիտ են, ասկէ կրնանք հետեւցնել որ հրեաները Յիսուսի համակիր եղեր են, մինչ Պիղատոս զայն մահուան դատապարտեր է: Բայց ի՞նչ կ'ըսեն աւետարաններու արձանագրութիւնները: Պիղատոս բնաւ յանցանք մը չի գտներ Յիսուսի վրայ, թէեւ Յիսուս այդ յանցանքը իր վրայ կ'առնէ: Կառավարիչը կրկին եւ կրկին կը յայտարարէ ամբաստանեալին անմեղութիւնը եւ կ'ուզէ գիտնալ թէ այդ մարդը ի՞նչ չարիք գործեր է: Այս բանը ինքնին բացառիկ երեւոյթ մըն է: Աւելի բացառիկ երեւոյթ մըն է նաեւ այն իրողութիւնը որ Պիղատոս թէեւ Յիսուսի յանցապարտութիւնը չի ճանչնար. բայց նոյն ատեն զայն ազատ ալ չարձակեր:

Երբեմն կը պատահի որ պրոկուրատը մէկու մը վրայ քաղաքական յանցագործութիւն մը կը գտնէ չափազանց բարդ որը ինք չի կրնար դատել: Բայց բնաւ լսուած չէ եւ հաւատալի չէ որ կայսեր պաշտօնեան այդ կնճառ դատին լուծումը յանձնէ ժողովրդական մասսաներուն: Եթէ այդ ընէ, զա կը նշանակէ որ ժողովուրդը աւելի բարձր ու հեղինակաւոր է քան կայսրը: Եթէ ան կը տատամսի դաւադրութեան մը դատապարտութիւնը յայտարարել, ուրեմն ամբաստանեալը զրկելու է Հռոմի կայսեր: Պրոկուրատ Անտոնիոս Ֆելիքս (52-60 Յ. Ք.) այդպէս ըրաւ. Երուսաղէմի զիւղներու պեա Եղիազարը որ ամբողջ 20 տարի երկիրը նեղեր էր, ան զայն բանտարկեց, զրկեց Հռոմ, ուր խաչեցին զինք իրեն հետևորդներուն հետ: Պիղատոս նոյնը կրնար ընել Յիսուսի: Բայց Մատթէոս Պիղատոսի ծիծաղելի դեր մը կուտայ. Տիրերիոս կայսեր ներկայացուցիչը որ մահու եւ կենաց վճիռ տալու իրաւունք ունի, հրեայ ժողովուրդէն կը խնդրէ որ Յիսուսը ազատ ձգէ ու երբ կը մերժուի, կ'ըսէ. «Ես անմեղ եմ այս մարդուն արինէն»: Բայց այս պատմական անճշգրտութիւն է Պիղատոսի նման կառավարիչի մը համար որու մասին Ագրիպաս Ա. Ֆիլիբի զրած մէկ նամակին մէջ Պիղատոսը կը ներկայացնէ որպէս անողք, անզուժ,



դաժան նկարագրի տէր մէկը որ անմրցելի եղած է զեղծումի, կաշատակերութեան, բռնութեան, զոգութեան, անարդարութեան, կեղծիքի, առանց դատի դատապարտութեան եւ անհանդուրժելի անդթութեանց մէջ: Այս մարդուն դաժանութիւնն ու անդթութիւնը այնպիսի գրութիւն մը ստեղծեցին որ Հոովմի կեդրոնական կառավարութիւնը, զոլուած իրմէ, զայն ետ կանչեց ՅՅ թուականին: Եւ մեզ կ'ուզեն հաւատացնել որ այսպիսի մէկը բացառիկ կերպով արդար եւ բարի եղած է դաւադիր Յիսուսի դէմ եւ ատկէ զատ նրկատի առած է ժողովուրդին փափաքը որուն հետեւանքը եղած է Յիսուսի ճակատադրական դատապարտութիւնը:

Մեր աւետարանիչները շատ տղէտ եղած են այս դժուարութիւնները նկատի առնելու մէջ, բայց նկատի ունեցել են որ մասնաւոր դէր մը տալու են հոովմէական կառավարիչին: Ասոր համար անոնք փնտտել են պատճառ մը որ կառավարիչին դերը հաճելի, մտայարմար դարձնէր: Ասոր համար անոնք տեղեկագրեր են որ Պիղատոսը սովորութիւն ունի եղեր զատկի տօնին առթիւ բանտարկեալ մը ազատ արձակել եւ երբ ան Յիսուսի առաջարկը քրած է, ժողովուրդը նախընտրած է որ Բարարբան ազատ արձակուի, ոչ թէ Յիսուսը:

Նախ պէտք է զիտանք որ բացի աւետարաններէն որեւէ տեղ յիշուած չէ ասանկ սովորութիւն մը, որ հակառակ էր արդէն հոովմէական օրէնքին. կառավարիչ մը երբեք ներելու իրաւունք չէ ունեցեր: Հակառակ բան է որեւէ օրինական գործողութեան ատեն ներողութեան իրաւունքը սալ պատահական ամբօխի մը քան թէ պատասխանատու մարմնի մը: Միայն աստուածաբանները կրնան այսպիսի օրինական պայմաններ հնարել ձեւական արժէքով: Բայց նոյնիսկ եթէ աննկատ թողունք այդ պարագան եւ ընդունինք թէ հրեայ ամբօխին այդպիսի մի իրաւունք տրուած է որ արտայայտուի պրոկուրարի տան առջեւ, մենք պէտք է հարցնենք թէ ի՞նչ կապ կայ հրեայ ամբօխի այդ դերին եւ Յիսուսի պատկանող այս դատին միջեւ: Յիսուս օրինական կերպով դատապարտուած չէ: Պիղատոս դէմ յանդիման կը դնուի հարցման մը: Յիսուս դաւադրութեան յանցանք գործե՞ր է թէ ոչ. ես զայն պիտի դատապարտեմ՞ թէ ոչ: Եւ անիկա այս հարցումին կը պատասխանէ. «Նուք ձեր ներելու իրաւունքը ի նպաստ անոր պիտի գործադրե՞ք թէ ոչ»: Պիղատոս փոխանակ յայտարարելու իր դատումը, ներողութեան կոչ կ'ընէ: Եթէ ան Յիսուսը արդար ու անմեղ կը նկատէ, իրաւունք չունի՞ր զայն ազատ թողելու: Այժմ ասոր կը հետեւի ուրիշ արտառողցութիւն մը: Հրեաները ներելու իրաւունք ունին եղեր, անոնք

ի՞նչպէս կը գործադրեն այդ իրաւունքը: Միթէ անոնք կը դոհանա՞ն պահանջելով որ Բարարբան ազատ արձակուի: Ոչ, անոնք կը պահանջեն նաեւ որ Յիսուսը խաչուի: Աւետարանիչները յայտնապէս կը հետեւցնեն թէ մէկու մը ներելու իրաւունքը կապուած է ուրիշ մը դատապարտելու իրաւունքին հետ: Այս դատական խելառ գործը զուգընթաց է ոչ նուազ խենթ ու խելառ քաղաքական գործառնութեան մը հետ: Աւետարանիչները հրեայ ամբօխը մեղի կը ներկայացնեն այնպէս որ ան կ'ատէ Յիսուսը եւ կը նախընտրէ ներել սճրագործի մը քան թէ Յիսուսի մը, եւ այդ ամբօխը չի դոհանար մինչեւ որ Յիսուսը խաչուի: Եւ յիշեցէք որ աս նոյն ամբօխն է որ երէկ ՈՎՍԱՆՆԱՅՈՎ կը զիմաւորէր իր թագաւորը, հանգեքձները կը փոէր անոր ստաբրուն տակ: Եւ արխատկրատները որոնք Յիսուսի կեանքին կը դաւազէին, վախնալով Յիսուսի անձնուէր այդ ամբօխէն զայն չեն ուզեր ցերեկ ատեն ձերբազրելու եւ կ'ընտրեն զիշխուան մուծը...: Եւ հիմա այդ նոյն ամբօխը, յանկարծ դատանացած, ատելութեամբ կը լեցուի Յիսուսի դէմ, մինչդեռ հրէական հայրենասիրութեան աչքին նա արժանի էր ամէն յարգանքի, քանի որ նա կը փորձէր հրեայ ժողովուրդը ազատել օտար իշխանութեան անտանելի լուծէն:

Ի՞նչպէս կարելի է արդարացնել այս տարօրինակ մտային կերպարանափոխութիւնը: Ծատ զօրաւոր զրգապատճառ մը ըլլալու է բացատրելու այսպիսի մի փոփոխութիւն: Աւետարանիչները միմիայն անկապ ու ծիծաղելի բաներ կ'ըսեն: Ղուկաս եւ Յովհաննէս զրգապատճառի մասին չեն խօսիր: Մարկոս կ'ըսէ. «Քահանայապետները զրգուցին բազմութիւնը Յիսուսին դէմ»: Մատթէոս կ'ըսէ. «Բազմութիւնը զրգուած էր, քահանայապետներն ու զպիւրները հետեւեցան անոնց»: Ասոնք ցոյց կուտան որ քրիստոնէայ գրողները իրենց քաղաքական իմացողութեան եւ ծանօթութեան վերջին մնացորդներն իսկ կորսնցուցել են: Նոյնիսկ ամէնէն անմիտ մասսան չենք կրնար ներկայացնել ատելութեամբ լեցուած մէկու մը դէմ առանց պատճառի: Այդ պատճառը կրնայ յիմարական ըլլալ կամ ցած, բայց վերջապէս պատճառ մը ըլլալու է: Աւետարաններու մէջ ներկայացուած հրեայ մասսան կը գերազանցէ ամէնէն տիրահոգակ եւ յիմարական ստտիճանը, որուն նմանը չէ կարելի երեւակայել. որովհետեւ առանց ամենաթեթեւ պատճառի ան կը պահանջէ արիւնք այն մարդուն զոր կը պաշտէր երէկ: Այս խնդրը աւելի արտառողց կ'երեւի երբ մենք նկատի առնենք այդ ատենի քաղաքական պայմանները: Հոովմէական կայսրութեան միւս մասերէն զանազանուելով հրեայ հասարակութիւնը քաղաքական



գործօն կեանք մը ունէր որ կը ներկայացնէր քաղաքական եւ ընկերային հակոստնէութեանց բարձրագոյն ծայրայեղութիւնները: Քաղաքական կուսակցութիւնները լաւ կազմակերպուած էին, անկոնտրոլ ամբոյս չէր մնացեր դուրսը: Երուսաղէմի վարին զասակարգերը ամբողջապէս զբաւուած էին զիլոզիզմով եւ շարունակ կռիւի մէջ էին փարիսեցիներուն եւ սադուկեցիներուն հետ եւ բաւորն ալ լեցուած էին խոր ատելութեամբ հռովմէացիներուն դէմ: Անոնց լաւագոյն դաշնակիցներն էին սպաստմբ գալիլէացիները: Եթէ փարիսեցիներն ու սադուկեցիները յաջողէին իսկ ժողովուրդը զբզակել Յիսուսի դէմ, անոնք ժողովրդական ցուցարարութիւն չէին կրնար կազմակերպել առանց արիւնալի կռիւներու: Նոյնպէս ոչինչ աւելի ծիծաղելի է քան այն գաղափարը որ զիլոզները վարի սադուկեցիներ պիտի արձակէին ոչ այնքան հռովմէացիներուն ու արիստոկրատներուն դէմ որքան Յիսուսի դէմ եւ բոնի ուժով պահանջէին անոր խաչելութիւնը հակառակ կառավարիչի ներողամիտ վերաբերմունքին: Ասկէ աւելի բարձրագոյ մանկական պատմութիւն մէկը չի կրնար հնարել բացի աւետարանիչներէն, որոնք արիւնաբու Պիղատոս մը գտնուել չիներ են, հրեաները ներկայացուցեր են ազականուած ազդ մը որպէս անմասն ու խաղաղասէր մեծիան խաչը հանելու գործին միակ պատասխանատուն: Բայց իրենց յերիւրած պատմութեան մէջ դարձեալ հակասութիւններ երեւան կուգան: Յիսուս պատասխարտուելէ վերջ կը նախատուի, կ'աջտակուի ոչ թէ հրեաներէն, այլ Պիղատոսի զինուորներէն, այն Պիղատոսին որ քիչ առաջ զայն անմեղ յայտարարած էր: Պիղատոս այժմ կը թողու որ իր զինուորները ոչ միայն խաչեն Յիսուսը, այլեւ ծեծեն, նախատեն զայն: Եւ անոնք որպէս հրէից թագաւորը թագ կը դնեն անոր զուխը, ծիրանի կը հապցնեն, կը ծնրադրեն անոր առջեւ, յետոյ նորէն կը ծեծեն, կ'ապտակեն ու կը թքեն երեսին. եւ խաչելէն յետոյ անոր խաչին վրայ կը գրեն «Յիսուս, հրէից թագաւորը»: Այս իրողութիւնը նորէն կը լուծէ սկզբնական պատմութեան բնոյթը, այն է հռովմէացիները զայն կը նկատեն իրենց թշնամին որ կ'ուզէ հռովմէական լուծը թօթափել եւ հրէից թագաւոր ըլլալ: Բայց զժբախտարար պարզ ճշմարտութեան օգտիները չեն շարունակուիր: Յիսուս կը մեռնի, այժմ պէտք է զանազան թատերական սպացոյցներ որ Աստուած մը մեռած էր. «Եւ Յիսուս դարձեալ մեծ ձայնով ազազակեց եւ հողին աւանդեց: Եւ ահա տաճարին վարագոյրը վերէն վար երկուքի ձեղքուեցաւ ու երկիրը շարժեցաւ ու քարերը պատեցան: Ու գերեզմանները բացուեցան եւ շատ սուրբ ննջեցեալներու մարմինները յարութիւն առին, մասն սուրբ քա-

ղաքը եւ շատերուն երեւցան» (Մատթ. Իէ. 50-54): Աւետարանիչները չեն ըսեր թէ յարութիւն առնող սուրբերը յետոյ ի՞նչ եղան, նորէն գերեզմա՞ն մասն թէ շարունակեցին ապրիլ, միայն յայտնի է որ արտակարգ դէպքը որ բոլորին ուշադրութիւնը գրաւելու էր, հրեաներու կողմէ աննկատ կ'անցնէ, անոնք դարձեալ չեն ընդունիր որ Յիսուս Աստուած էր, միայն հռովմէացիներն են որ կ'ընդունին անոր աստուածութիւնը: «Բայց հարիւրապետը եւ անոր հետ Յիսուսը պահողները երբ տեսան երկրաշարժը ու եղած քաները շատ վախցան ու ըսին. Արդարեւ ասիկա Աստուծոյ որդին էր» (Մատթ. Իէ. 54): Եւ յետոյ ալ Յիսուսի յարութեան վերջ հրեաները կը կաշառեն զինուորները որ անոնք ըսեն թէ Յիսուսի աշակերտները զողջան անոր մարմինը, անոր յարութիւնը վատաբար ծածկելու համար:

Այս հեքիաթին ամբողջ ձգտումն է ստրկութիւն ցոյց տալ հռովմէացիներուն եւ ատելութիւն սերմանել հրեաներուն դէմ այնպիսի հրէշային եղանակով որ միայն խելացի մարդիկ չեն ազդուիր անկէ: Այդ պատմութիւնը հրատուները նպատակ ունեցեր են մէկ կողմէ Յիսուսի աստուածութիւնը պսակաւորել, անոր բարձր մեսսիայով մարտիրոսութիւնը ազնուացնել, միւս կողմէ հրեաները ներկայացնել մարդկութեան կողմէ յաւէտ դատապարտուած ամենամարդ ժողովուրդ մը որ մարդկային ընկերութեանէն հետո պահելու է երկաթեայ ձեռքերով: Բայց այդպիսի զիրքաւորում մը ապահովցնել անկարելի էր առանց ընդհանրական ատելութիւն եւ հալածանքի հոսանք յառաջացնելու հրեաներու դէմ. իսկ այդ կարելի եղաւ քրիստոնէութեան միջոցով:

Անդամ մը որ հրեաները օրէնքէ դուրս քշուեցան, այդ կացութիւնը չափազանցութեան գնաց, երկար շարունակուեցաւ եւ իր ազդեցութեան շրջանակը աւելի լայնցաւ:

Ինչ որ Յիսուսի շարժարանքի մասին զիտենք, իրապէս ան Հրեայ ժողովուրդի շարժարանքի պատմութիւնն է:

**ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԷՎՈԼՒԻՑԻԱՆ**

**Ա) ՊՐՕԼԵՏԱՐՆԵՐԻՆ ՈՒ ՍՏՐՈՒԿՆԵՐԸ**

Մենք տեսանք թէ քրիստոնէութեան բազիլացուցիչ մի քանի մասերը, միաստուածութիւն, մեսիականութիւն, յարութեան հաւատք, եսսէնեան կոմունիզմ, ասոնք հրեաներէն ծագում առեր են եւ ժողովուրդի խոնարհ դասակարգերէն մաս մը իրենց փափաք-



ներուն ու երազանքներուն դահացումը կը կարծէին զանեւ այս տար-  
 րերուն միաձուլման մէջ: Մենք տեսանք նոյնպէս որ հոռոմէական  
 կայսրութեան ամբողջ ընկերային կազմը, մասնաւորապէս պրոլե-  
 տարական մասերը, պարարտ հող կը ներկայացնէին այդ ձգտում-  
 ներուն որոնք հրէական ծագում ունէին: Բայց այդ ձգտումները  
 երբ ենթարկուեցան ոչ-հրեայ միջավայրին, անոնք ոչ միայն հե-  
 աացան հրէականութենէ, այլեւ թշնամական դիրք բռնեցին հրեայ  
 ազգին դէմ: Անոնք այժմ միաձուլուեցան յունա-հռոմէական մի-  
 ջավայրին հետ. եւ մասնաւորապէս Երուսաղէմի կործանումէն յե-  
 տոյ հրեաներու ազգայնական զգացումը երբ լուծուեցաւ անյոյս  
 հրաժարման շարժումի մը մէջ եւ դարձաւ ստրկացման անարդ ու-  
 ղեղիժ մը, քրիստոնեաներու սկզբնական ձգտումներն ալ կերպա-  
 րանափոխուեցան նոյն չափով:

Քրիստոնէական միաբանութիւնը սկզբնական շրջանին ու-  
 ժեղ բայց միզապատ կոմունիզմով հրապարակ իջաւ, երբ կը դա-  
 տապարտէր մասնաւոր սեփականատիրութիւնը եւ կ'ուզէր հիմնել  
 ընկերային կարգուսարք մը ուր դասակարգային տարբերութիւն-  
 ները պիտի ջնջուէին: Հաւանական էր որ այդ միաբանութիւնը  
 նոյնպէս սկիզբէն մարտական կազմակերպութիւն էր: Աւետարան-  
 ներուն մէջ արդէն կը տեսնենք սկզբնական այդ աւանդութեան հետ-  
 քերը. ինչպէս ըսինք Յիսուսի այն հրահանգը թէ «հանդերձնիդ ծա-  
 խեցէք սուր առէք» եւ այլն... , այդ զիժը նոյնպէս համաձայն էր  
 հրեայ ազգի նոյն ատենուան պատմական դիրքաւորումին: Այսու-  
 հանդերձ անբժրանելի պիտի ըլլայ ենթադրել որ պրոլետարական  
 գոյնով այդ շարժումը ապագայ յեղաշրջումներու ընթացքին բո-  
 լորովին անազարտ պիտի մնար: Երուսաղէմի կործանումէն վերջ  
 մեսիական միաբանութիւնը իր ապստամբական բնոյթը կորսնցուց  
 եւ միաբանութիւնը հակա-հրէական միաբանութեան փոխուեցաւ,  
 երբ ոչ-հրեայ պրոլետարները միաբանութեան ուղն ու ծուծը կազ-  
 մեցին. պրոլետարներ որոնք ոչ կարողութիւն, ոչ ալ փափաք ու-  
 նէին կուրելու: Միաբանութիւնը, որքան որ մեծցաւ եւ տարիներ  
 անցան, նոյնքան աւետարաններու մարգարէութիւնները այլեւս  
 հաշուի չառնուեցան, մարդիկ ալլեւս չէին մտածեր թէ Յիսուսի  
 ժամանակակիցները պիտի ապրէին մեծ փոփոխութիւններ տեսնելու  
 համար. երկինքի թագաւորութեան գալստեան հաւատքը հեռո՛հեռո՛  
 մարեցաւ: Երկինքի թագաւորութիւնը որ երկինքէն իջնելու էր,  
 երկինքի մէջ մնաց, յարութեան գաղափարը վերածուեցաւ հողոյ  
 անմահութեան գաղափարին. հողիներն էին որ պիտի երթային  
 երկինք կամ դժոխք: Երբ ազգայն մեսիայի յոյսը հեռո՛հեռո՛ աչ-

խարհային ձեւէն հեռացաւ, աշխարհային գործնական շահագրգը-  
 ութիւնը աւելի եւ աւելի տիրական դարձաւ, եւ ասով յեղափո-  
 խութեան համակրանքի նուազումով գործնական կոմունիզմն ալ  
 որոշ փոփոխութեան ենթարկուեցաւ: Սկզբնապէս քրիստոնեայ միա-  
 բանութիւնը տարուած էր մասնաւոր սեփականութիւնը ջնջելու ա-  
 նորոշ բայց եռանդազին փափաքով, որ կ'ուզէր դարձանել ընկեր-  
 ներու թշուառութիւնը ինչքերու հաւաքումով եւ բաժանումով:  
 Բայց մենք արդէն տեսնք որ ի հակադրութիւն եսսէններու, քրիս-  
 տոնեայ միաբանութիւնները կազմուած էին քաղաքացիներէ, մեծ  
 մասով ոստանական միաբանութիւններ էին, որոնք բնականո-  
 րէն իրենց կոմունիզմը զարգացնելու եւ գործադրելու արգելքի առ-  
 ջեւ կը դանդաղէին: Եսսէններու, ինչպէս եւ քրիստոնեաներու մէջ  
 կոմունիզմը սկզբնապէս սպառման կոմունիզմ եղած է: Բայց սպա-  
 ռում եւ արտադրութիւն զիւղական շրջաններու մէջ տակաւին սեր-  
 տորէն կապուած էին իրարու: Արտադրութիւն կը նշանակէր մաս-  
 նակի սպառում, ոչ թէ ծախելու նպատակով արտադրութիւն. երկ-  
 րադործութիւնը, արջաւարութիւնը, տնավարութիւնը, ասոնք  
 կապուած էին իրարու: Մեծաքանակ արտադրութիւնը երկրադոր-  
 ծութեան մէջ այդ ատենները բաւական աճեր էր եւ դերադանց էր  
 փոքրաքանակ ձեւի արտադրութեանէն, որովհետեւ հոն ներմուծուած  
 էր աշխատանքի բաժանում եւ զանազան գործիքներու եւ յարմար  
 միջոցներու լիակատար օգտագործում: Անշուշտ այս կէտը աւելի  
 քան չէղքացած էր ստրկային աշխատանքի աննպաստութեամբ. ե-  
 թէ ստրկային աշխատանք չըլլար, արտադրութիւնը աւելի կ'աճէր:  
 Բայց ինչ արած որ ստրուկներու գործածութիւնը երկրադործական  
 մեծաքանակ արտադրութեան մէջ ամէնէն հասարակ եւ միակ ձեւը  
 չէր: Մենք տեսնք արդէն թէ երկրադործական մեծ հաստատու-  
 թիւններ կային որոնք կազմուած էին բազմաթիւ զիւղական ընտա-  
 նիքներէ: Եսսէնները հիմներ էին կօօպիլաւտի ընկերութիւններ  
 կէս-վանական հիմնարկներով, անապատային մասերու մէջ, որոնք  
 կը նմանէին Մեւեալ Ծովու բոլորաթիքը հաստատուած հասարա-  
 կուրդներուն, որոնք, Փլենին կ'ըսէ, կ'ապրէին իբրեւ «արձա-  
 ներու ընկերութիւն»: Բայց արտադրութեան ձեւը իր վերջին քըն-  
 նութեամբ վճռող ազգակն է ամէն մի ընկերային կառուցումքի:  
 Արտադրութեան որոշ ձեւի մը վրայ հաստատուած հասարակու-  
 թիւններն են որ ուժ կ'ունենան եւ կ'ապրին: Մինչ ընկերային եւ  
 գործակցական երկրադործութիւնը կարելի էր քրիստոնէութեան  
 ծագման շրջանին, կօօպիլաւտիվ քաղաքային ճարտարաբուեստի  
 համար անհրաժեշտ նախապայմաններ չկային այն ատենները: Քա-



դաքային ճարտարարուեստի գործաւորները կամ գերի էին եւ կամ ազատ տնային գործաւորներ: Մեծ հաստատութիւններ ազատ գործաւորներով, գիւղացիական խոշոր ընտանիքներու նմանող, դրժար էր գտնել: Գերիներ, տնային գործաւորներ, բեռնակիրներ, փողոցի վաճառողներ, փոքր խանութպաններ, լուսպէն պրոլետարներ, ասոնք էին խոնարհ դասակարգերը քաղաքային բնակչութեան, ուրկէ ծագում առին կոմունիստական ձգտումները: Բայց այս դասակարգերը չէին ներկայացնէր այն միաձոյլ տարրը որ ապրանաց հասարակաց սեփականութիւնը հիմնէին հասարակաց արտադրութեան սկզբունքի վրայ եւ ըստ այնմ շարժէին: Անոնց հիմնած կոմունիզմը հասարակաց ճաշն էր: Քրիստոնէութեան խանձարուրին մէջ հագուստի եւ բնակութեան խնդիրը, Հարաւային Կեդրոնական Իտալիոյ մէջ ալ այնքան կարեւոր տեղ գրաւած չէր: Նոյնիսկ եսակներու շրջանակին մէջ կոմունիզմի հագուստը հասարակաց չէր կրնար ըլլալ: Իսկ խոշոր քաղաքներու մէջ բնակելի տուններն ալ կոմունիստական չէին կրնար ըլլալ, որովհետեւ գործող ընկերները ցրուած էին եւ թէ տունները չափազանց սուղ էին: Փոխադրութեան դժուարութիւններն ալ միւս կողմէ քաղաքի բնակչութիւնը կը խճողէին փոքր տեղերու մէջ որոնց տէրերը բացարձակ տէրը կը դառնային բնակչներուն որոնք սարսափելի տուգանքներու կ'ենթարկուէին: Տունները յաճախ եօթը յարկանի կամ աւելի կ'ըլլային, իսկ վարձքերը՝ շատ սուղ: Անշարժ կալուածոց շահարկութիւնը ամէնէն շահաւէտ գործն էր այն ատենի դրամատէրերուն համար: Եռասպետութեան օրով Կրետոս հարստացաւ այդ ձեւով: Մեծ քաղաքներու պրոլետարները այս դաշտին վրայ չէին կրնար մրցել, չէին կրնար հասարակաց բնակարան ունենալ: Գեռ աւելին, կայսրերու կասկածանքին համար քրիստոնեայ միաբանութիւնը չէր կրնար ապրել, ասոր հետեւանքով ան դարձաւ ու եղաւ դադանի ընկերութիւն: Եթէ անոնք հասարակաց բնակութիւն ունենային շուտով կը յայտնուէր: Ասոր համար քրիստոնեայ կոմունիզմը հասարակաց ճաշով կ'արտայայտուէր: Աւետարաններն ալ որ ապագայի Աստուծոյ թագաւորութիւնը կը նկարագրեն, հասարակաց խնճոքի ձեւով կը նկարագրեն. ուրիշ ուրախութիւն չկայ: Գործնական կոմունիզմի այս ձեւը թէեւ կարեւոր էր ազատ պրոլետարներու համար, շատ բան չէր նշանակէր գերիներուն համար, որոնք իրենց տէրերու ընտանիքի մասը կը կազմէին եւ կը կերակրուէին անոնց սեղանէն խնայողաբար: Միայն մի քանի գերիներ դուրսը կ'ապրէին որոնք իրենց տէրերուն համար խանութ կը պահէին ապրանք ծախելու: Գերիներուն համար մեսիայի դալտեան

յոյսը աւելի հրապուրիչ էր քան գործնական կոմունիզմը որ իրենց շատ բան չէր կրնար տալ: Մենք չենք դիտեր թէ առաջին քրիստոնեաները ինչ գիրք ունէին գերեզմարութեան հանդէպ, բայց դիտենք որ եսակները կը դատապարտէին գերութիւնը որ կը նկատէին անաստուածութիւն, բնական օրէնքներու ռանսակիտում եւ կ'ընդունէին ամէն մարդ որպէս եղբայր: Հաւանական է որ մեսիայի կապուած Երուսաղէմի միաբանութեան պրոլետարներն ալ նոյն գազափարը ունէին: Բայց ընկերային յեղափոխութեան հեռանկարը անհետացաւ Երուսաղէմի կործանումով: Քրիստոնեայ միաբանութեան տեսարանները շատ դուշաւոր էին. անոնք տիրող պետութեանց կասկածը չարթնցնելու ասնութեամբ սկսան իրենց շարքերը եկող գերիներուն ապստամբական ոգին խաղաղեցնել փորձել: Օրինակ Պօղոս Կոզմասցոց Թուղթին մէջ կ'ըսէ. «Մտառներ, ամէն բանի մէջ հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէրերուն ոչ թէ աչքի առջեւ ծառայելով մարդահաճոններու պէս, հապա սրտի միամտութեամբ Տէրոջմէ վախնայով, (Կոզմասցոց, Գ. 22): Պետրոս առաքեալի նամակին հեղինակը աւելի սարդ կը խօսի. «Մտառները ամէն բանի մէջ հնազանդ ըլլան իրենց տէրերուն, ոչ թէ միայն բարբարներուն ու հեղերուն, հապա մանտարարներուն ալ: Քանզի այս շնորհ մըն է, եթէ մէկը առ Աստուած ունեցած իղձմտանքովը անիրաւ տեղ կրած վիշտերուն համբերող ըլլայ: Վասնզի ի՞նչ գովութիւն կ'ըլլայ ձեզի եթէ մեզք գործելով ձեծուիք ու համբերէք, ապա եթէ բարիք գործելով շարձարուիք ու համբերէք, ասիկա Աստուծոյ քով շնորհք մըն է» (Պետրոս Ա. Թուղթ, Բ. 18, 20):

Բ. դարու նորածաղ քրիստոնէական պատեհապաշտութիւնը նոյնիսկ յարմար կը դատէր որ քրիստոնեայ իշխանները ստրուկներ պահեն, որոնք միաբանութեան մէջ եկեր ու եղբայր էին եղեր: Ասիկա կ'ապացուցանէ Պօղոսի նամակը առ Տիմոթէոս, զլուս 2. 1-3. «Այն ամէնը որ ծառայութեան լուծի տակ են, իրենց տէրերը ամէն պատուոյ արժանի սեպեն, որպէսզի Աստուծոյ անունը ու վարդապետութիւնը չհայհոյուի: Եւ անոնք որ հաւատացեալ տէրեր ունին, թող շարձամարհեն եղբայրներ ըլլալնուն պատճառաւ, հապա աւելի ծառայութիւն ընեն, վասնզի անոնք հաւատացեալ են ու սիրելի որոնք բարբարութիւն ընելու մասնակից են»:

Սխալ է ենթադրել որ քրիստոնէութիւնը ստրկատիրութիւնը ջնջեց. ընդհակառակը, անոր նոր յենարան տուաւ: Հին ատեն գերին իր տեղին գամուած էր վախով. քրիստոնէութիւնը եկաւ գերիին պարտադրել կոյր հնազանդութիւն բարոյական պարտաւորութեամբ եւ ուրախ տրամադրութեամբ: Քրիստոնէութիւնը անուա-



զըն կորսնցուց իր յեղափոխական նկարագիրը եւ այլեւս ազատութեան յոյս չէր տար՝ գերիին, ոչ ալ կոմունիզմը ծառայեցնել անոր օգտին: Միայն հաւաստիացուց որ բոլոր մարդիկ Աստուծոյ առջեւ հաւասար են, միաբանութեան մէջ ուր ամէն բնկեր հաւասար իրաւունք ունի, ուր գերին իր տիրոջ հետ կրնայ նստիլ խնճոցքի սեղանին շուրջ, եթէ վերջինը միաբանութեան անդամ է: Կայիտոս որ քրիստոնեայ գերի մըն էր Հոովմի եպիսկոպոս եղաւ (217-222): Բայց այս հաւասարութիւնն իսկ շատ մեծ նշանակութիւն չունէր: Ընթերցողը կը յիշէ որ ազատ պրոլետարիատին ու գերիներուն վիճակը գրեթէ նոյնն էր. գերիներէն շատեր կը մտնէին ազատներու շարքը եւ բարձր դիրքի կը տիրանային նոյնիսկ: Եթէ քրիստոնէութիւնը հակառակ իր կոմունիզմին ու պրոլետարական զգացումին, չկրցաւ իր շարքերէն սարկութիւնը ջնջել, զա կը նշանակէ որ սարկութիւնը խոր արժաս ձգեր էր հին հեթանոսութեան մէջ, թէեւ պրոլետարական զգացումը հակառակ էր անոր: Ամբողջական սէր զրացիին, եղբայրութիւն, հաւասարութիւն Աստուծոյ առջեւ, ինչպէս կը յայտարարէր մեսիայի միաբանութիւնը եւ ասիկա այլեւս անհամաձայն չէր ստրկատիրութեան հետ քան Միայն. նահանգաց Մարդկային Իրաւանց Յայտարարութիւնը: Քրիստոնէութիւնը սկիզբէն ազատ պրոլետարիատի կրօնն էր, բայց հակառակ պրոլետարներու եւ գերիներու մերձեցման հին շրջանին մէջ, այս երկուքին զաստիարակային շահերը մնացին տարբեր դժի վրայ:

Ազատ պրոլետարները սկիզբէն մեծամասնութիւն էին քրիստոնեայ միաբանութեան մէջ եւ կ'արդիւնէին որ գերիներու շահերը իրենց յիւլի արտայայտութիւնը ունենային միաբանութեան մէջ: Ասով միաբանութիւնը գերիներուն համար այնքան հրապուրիչ չէր որքան ազատ պրոլետարներուն համար:

Տնտեսական էվոլյուցիան նոյն ուղղութեամբ էր: Երուսաղէմի անկումէն յետոյ երբ քրիստոնէութեան յեղափոխական նկարագիրը մահու հարուած ստացաւ, նոր դարաշրջան մը սկսաւ հոովմէական կայսրութեան համար, զարաշրջան մը համաշխարհային խաղաղութեան, անական խաղաղութեան համար, քանի որ հոովմէական կայսրութիւնը կորսնցուցեր էր իր բնդարձակուելու ուժը: Պատերազմը, իմպերիալիստական պատերազմը, ինչպէս քաղաքացիականը աժան գերիներ հայթայթելու միջոցներ էին: Այժմ պայմանները փոխուած էին: Գերին հազուադիւս դարձաւ եւ շատ սուղ: Գերիի գործածութիւնը շատ սուղ կը նստէր: Երկրագործութեան մէջ գերիներուն տեղ անցեր էին գաղութները, քաղաքային ճարտարութեան մէջ ազատ գործաւորները: Հետզհետէ գերիները դադ-

րեցան անհրաժեշտ բաներ արտադրողներ ըլլալէ. անոնք եղան պերճանքի առարկաներ արտադրողներ: Գերիները ատով դարձան իշխանաւորներու անձնական ծառաները: Գերիի ողին հետզհետէ դարձաւ հոմանիչ ծառայի ողիին: Սպարտակիւսի օրերը անցեր էին: Գերիներու եւ ազատ պրոլետարներու հակառակութիւնը աւելի եւ աւելի սրուեցաւ երբ գերիներու թիւը պակսեցաւ եւ ազատ պրոլետարներու թիւը աճեցաւ խոշոր քաղաքներու մէջ: Այս երկու ճրգատումները պատճառ եղան որ քրիստոնէական միաբանութեան ստրուկ տարրերը փոխադրուին աւելի յետին շարքերը: Եւ դարձանալի չէ որ քրիստոնէութիւնը վերջ ի վերջոյ այլեւս չհետաքրքրուեցաւ գերիներով:

Այս էվոլյուցիան դիւրին է հասկնալ եթէ մենք նկատի ունենանք որ քրիստոնէութիւնը եղած է որոշ գասակարգային շահերու գահափոխման ճամբայ մը, բայց անհասկնալի է եթէ մենք քրիստոնէութիւնը վեր անոնք պարզապէս որպէս գաղափարական կառուցուածք մը: Որովհետեւ քրիստոնէութեան հիմնական գաղափարներու տրամարանական զարգացումը կ'ուսանջնորդէր գերեզմանութեան ջնջումին, բայց տրամարանութիւնը աշխարհի պատմութիւնը ղեկավարող ուժը չէ, երբ գասակարգային շահերը որիչ հրովարտակ ունին պատրաստած:

Բ) ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՎԵՐՁԱԼՈՅՍԸ

Գերետիրութեան ճանաչողութիւնը, ինչպէս նաեւ սպրանաց հասարակայնացումը սահմանափակելը կապուելով հասարակաց ճաշին, միակ արդեւքները չէին քրիստոնէական միաբանութեան հաշուառումին մէջ, կոմունիստական ծրագիր մը ստաջ տանելու համար: Կոմունիստական գաղափարը կը պահանջէր որ միաբանութեան ամէն մէկ անդամ իր ունեցածը ծախէր եւ արամադրէր միաբանութեան անդամներուն: Ծատ պարզ էր որ ասոր գործադրութիւնը լայն չափով չէր կրնար իրագործուիլ, որովհետեւ հասարակութեան գոնէ կէսը այս բանին հաւատալու չէր, այլապէս ո՞վ պիտի գնէր հաւատացեալներու թողածները: Հաւատացեալները հաւատացեալներու ծախած բաները չէին կրնար գնել: Ասկէ զատ երբ հաւատացեալները պիտի չապրէին արտադրութեամբ այլ բաշխումով, ուրեմն ոչ-հաւատաւորները պէտք էր որ արտադրէին ինչ որ հաւատաւորները կ'ուղէին իրենց պէտքերուն համար: Բայց նոյնիսկ այդ պարագային ալ զրուլթիւնը կը դժուարանար, երբ հաւատացեալները իրենց ունեցածները կը ծախէին, կը բաժնէին ու կը սպա-



ուէին: Անշուշտ այդ պահուն մեախան ամպերէն պիտի իջնէր ու դարման մը տար «միտի չարիքին»: Բայց այդ փորձին ձեռնարկելու ժամանակը չէր հասեր: Միաբանութեան կարգութեան տառջին օրերուն նուազ էր թիւը այն անդամներուն որոնք որեւէ բան ունէին ծախելու կամ բաժնելու: Ուրեմն առով չէին կրնար ազդել: Անոնք մշտական եկամուտ մը կրնային ունենալ միայն այն ատեն երբ միաբանութեան ամէն մէկ անդամ սեփականաւէր ըլլար եւ աշխատանքով իր օրուան վաստակէն յատկացում ընէր միաբանութեան: Մէկը ըլլալու էր կօշկակար, միւսը դարբին, երրորդը մանող եւ հիւսող, չորրորդը կաւեղէն անօթներ շինող, եւայլն:

Տրուած պայմաններուն տակ միաբանութիւնը չէր կրնար մասնաւոր գործառնողներ հաստատել իր սեփական պէտքերը հոգալու համար, ինչպէս ըրին եսէնները: Ասոր համար կոմունիստական դադափարին հակառակ մարդիկ ընդունելու էին արտադրութեան միջոցներու եւ պահեստի ապրանքներու անհատական սեփականատիրութիւնը: Անգամ մը որ ընդունուէր անջատուած կերպով անհատական արտադրութեան ձեւը, պիտի ընդունուէր նաեւ անհատական տնտեսութիւնը, ասոր կը հետեւէր անջատ ընտանիքը, միակնութիւնը, չնայած իրենց պահել ուզած հասարակաց ճաշասեղանին որ միմիայն կոմունիզմի ձեւականութեան ապացոյցն էր, ուրիշ ոչինչ:

Պրոլետարները միացեր էին, իրենց թշուառութիւնը միացեալ ջանքերով թեթեւցնելու համար: Երբ անոնք արդէլքներ տեսան գործնական կոմունիզմը կիրառելու մէջ, ուժ տուին դժարատութեան գործին, այսինքն օգնել յուսահատ դրութեան եմթարկուող անհատին: Ուրիշ քաղաքէ մը եկող միաբանութեան մէկ անդամին գործ կը հայթայթէին, եթէ մնալ ուզէր. իսկ եթէ կ'ուզէր ճամբորդել, անոր կուտային պէտք եղած օգնութիւնը: Նոյնպէս հիւանդին կ'օգնէին, մեռնելու ատեն կը հոգային անոր թաղման ծախսերը, կը հոգասարէին անոր այրին ու զաւակները: Կ'օգնէին նաեւ բանտարկեալին: Այսպիսով միաբանութիւնը մի տեսակ ապահովադրական ընկերութիւն էր եղեր:

Այս բոլոր բաները կ'ընէին մեախայի խոստացած յաւիտենական կեանքը ժառանգելու համար: Մեախան պիտի վարձատրէր ուղորձները, իսկ անդութիւնը պիտի դատապարտէր: Առաջինները Տէրօջը սիրած ոչխարներն են, որոնց իր խօսքը ուղղելով թաղաւորը պիտի ըսէ.

«Եկէ՛ք, ով դուք իմ հօրս օրհնածները եւ ժառանգեցէք ձեզի համար պատրաստուած թաղաւորութիւնը աշխարհի սկիզբէն, վա-

սընդի անօթեցայ եւ ինծի ուտելիք տուիք, ծարաւցայ, ինծի խմուցիք, օտարական էի ու զիս ներս առիք, մերկ էի ու զիս հագուցելիք, հիւանդ էի ու ինծի տես եկաք, բանտն էի ու ինծի այցելելիք...: Եւ արգարները պիտի բռնն անոր. Տէր, մենք ե՞րբ այդ բաները ըրեր ենք քեզի համար: Եւ պատասխան տալով թաղաւորը պիտի ըսէ անոնց. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որովհետեւ այս իմ եղբայրներու ամէնէն պղտրկներէն մէկուն ըրիք, ինծի ըրիք» (Մատթ. ԻԵ. 34, 46):

Անոնց հասարակաց ճաշը եւ փոխադարձ ուղորձութիւնը քրիստոնէական միաբանութեան ամէնէն ապահով կասն էր որ մասնները իրարու մօտ կը բերէր, թէեւ այդ ուղորձութիւնը նոյն ատեն ալ բնատիպ կոմունիստական ներշնչումները կը վանէր:

Երբ իր ամբողջ փառքով մեախայի դաշտեան յոյսը այլասերուեցաւ, երբ միաբանութիւնը հեռո՛հեռո՛ համոզուեցաւ որ մէկը ունեւոր ըլլալու է օգնութեան ծրագրին համար, եւ քրիստոնէութեան պրոլետարական դասակարգային պրոպականտը ոտնակոխուեցաւ, անկէ յետոյ աշխատեցան որ ունեւոր դասը մանկ հոն:

Միաբանութիւնը որքան որ շատ դրամի պէտք ունեցաւ, այնքան համոզիչ ձեւով կ'ընէր սկսան ապացուցել որ այս աշխարհի հարստութիւններն ու զանձերը ունայն են բաղդատմամբ յաւիտենական կեանքի օրհնութեան գոր հարուստները կրնային ստանալ միայն այն ատեն երբ իրենց ունեցածէն մաս մը եկեղեցիին տային: Եւ անոնց քարոզչութիւնը ընդհանուր վճատութեան շրջանին մէջ հարուստներուն մասնաւորապէս շատ խոր ազդեց: Բաւական թիւով հարուստներ որոնք իրենց երիտասարդութիւնը շուայտութեամբ անցուցեր էին, հիատթափուած իրենց վայելքներէն, սպառած իրենց ուժը դրամով գնուած զգայական հաճոյքներէն, միայն մէկ փափաք մնացեր էր իրենց, աղքատութիւնը: Միջին Գարուն ալ մենք կը տեսնենք որ շատ մը հարուստներ հրաժարեցան իրենց ունեցածներէն եւ մուրացիկ դարձան, որովհետեւ զոտեր էին իրենց ցոփութեանց վայելքներէն: Բայց այս անձերը այնքան բազմաթիւ չէին որ միաբանութեան պահանջները զոհացնէին, մասնաւոր որ լուսպէն պրոլետարները հեռո՛հեռո՛ կը բազմանային միաբանութեան մէջ որոնք չէին կրնար կամ չէին ուզեր գործելով ապրել, այն ատեն անհրաժեշտ դարձաւ հարուստները հրապուրել մտնելու միաբանութեան մէջ, անոր ծախսերը զոցելու համար: Դիւրին էր հարուստ մը համոզել որ իր մեռնելէն վերջ իր ունեցածը թողուր եկեղեցիին, բայց դժուար էր անոր կենդանութեան ատեն ունեցածները առնել: Այդ շրջանին անգլաւակ ընտանիքներ



չատ կային, ընտանեկան կապերը թոյլ էին. աղբականներու բան մը կտակելու փափաքը շատ թեթեւ էր: Միւս կողմէ յաւիտենական կեանքի մէջ երջանիկ կեանքի մը փափաքը շատ ուժեղ էր, որուն գոհացում տալու յարմարութիւն ունէր քրիստոնէական վարդապետութիւնը: Հարուստները սկսան մտածել թէ իրենց հարստութիւնը անարժէք էր երբ մեռնէին, ատոր համար անոնք իրենց ունեցածը կտակեցին եկեղեցիին, յաւիտենական փրկութիւն գտնելու համար: Քրիստոնեայ վարդապետները, ուրեմն, բռնեցին երիտասարդ ու կրթոտ արիստոկրատները որոնք հիասթափուած էին իրենց ցոփ կեանքէն. միւս կողմէ բռնեցին նաեւ հարուստ ծերերը որոնք կը վախնային մահէն ու իրենց սպասող դժոխքի տանջանքէն: Քրիստոնեայ գործիչները ընտրեցին ժառանգութեանց թաղուն ձեռնարկութեանց մեթոտը որ շատ յաջող ու շահաւէտ մեթոտ էր հարստացնելու եկեղեցին, անոր զօրեղ ստամոքսին զրկելով համեղ պատաններ:

Բայց առաջին մի քանի դարերուն միաբանութեան կեանքը այնքան հարուստ չէր կտակներով, մանաւանդ այն տառն երբ միաբանութիւնը զեռ գաղանի էր: Անկէ վերջ էր որ ջանքեր թափուեցան անգամադրել հարուստները, հոգ չէ թէ անոնք զեռ արամադիր չէին իրենց ունեցածը թողուլ աղքատներուն, բայց վերջապէս կը հողատարէին միաբանութիւնը գանազան նուէրներով: Մենք տեսանք թէ այդ օրերուն երբ գրամաղլուխի կուտակումը արտադրութեան եղանակին կարելոր մասը չէր կաղմեր, հարուստներու առատաձեռնութիւնը նշանակելի գիծ կը ներկայացնէր: Այդ առատաձեռնութիւնը կը յորդէր ի նպաստ միաբանութեան, որու եկամբաւորին գլխաւոր ազդիրը գործաւ ան: Որչափ աւելի միաբանութիւնը զազրեցաւ կռուող կազմակերպութիւն մը ըլլալէ, այնքան ուժեղացաւ անոր սղորմածութեան բնոյթը եւ աւելի զօրացաւ համակրութիւնը հարուստներու հանդէպ, որոնք տեսնելով որ պրոլետարներու ստեղծութիւնը իրենց դէմ կը նուազէր սկսան միաբանութիւնը նկատել իրենց սեփական տունը:

Միաբանութեան տեսութիւնները, չին աստուածներու մերժումը, միաստուածութիւն, յարութեան հաւատքը, մեսիայի յոյսը, անոնք բոլորը որ կը կաղմէին քրիստոնէական վարդապետութիւնը, վերին գասակարգերու համակրութեան արժանի տեսութիւններ էին: Միւս կողմէ հարուստները ճակատելով մասսաներութեան ստիպում էին անոնց թշուառութիւնը թեթեւցնելու միջոցներ մտածել, ինչպէս ցոյց կուտան անոնց գլխաւորական հիմնարկութիւնները. որովհետեւ անոնց թշուառութիւնը կը սպաս-

նար սմբողջ հասարակութեան: Ատոր համար անոնց աչքին քրիստոնեայ կազմակերպութիւնները սիրելի էին: Վերջապէս ժողովրդականութիւն շահելու փափաքն ալ որոշ դեր ունէր քրիստոնեայ միաբանութեանց օժանդակելու ճամբուն վրայ, մանաւանդ հոն ուր այդ միաբանութիւնները ժողովուրդի մեծամասնութիւնը գրաւեր էին արդէն: Ատոր համար քրիստոնեայ միաբանութիւնը հրապուրիչ գործաւ նոյնիսկ այն հարուստ անձանց համար որոնք աշխարհի հաճոյքներէն չէին հրաժարեր, որոնք չէին յուսահատեր եւ չէին հարկադրուած մահուան կամ դժոխքի վախէն իրենց ունեցածները կտակել եկեղեցիին: Բայց որպէսզի հարուստները պատուաւոր դիրք ունենային միաբանութեան մէջ, անոր բնութագրերը հիմնականապէս փոխուելու էր, հարուստներու դէմ ստեղծութիւնը ջնջուելու էր:

Միաբանութեան մէջ պրոլետարական կռուելու ոգիները մեծ հարուած կրեցին այն ջանքերէն զորս ի գործ դրուեցաւ հարուստները հրապուրելու համար անոնց ընելով որոշ զիջումներ: Յակորոս առաքեալը այս մասին կը խօսի իր թուղթին մէջ, ան կը զոռչացնէ իր անգամները. «Եթէ ձեր ժողովին մէջ մարդ մը դայ ոսկի մատանիով եւ լաւ հազուած, եւ նոյն տառն ուրիշ խեղճ մարդ մը դայ ցնցոտիներ հազած, եւ դուք ոսկի մատանիով եւ լաւ հազուած մարդուն բէք հոս, այս լաւ տեղը նստիր եւ խեղճին բէք, ոտքի կեցիր հոգ, կամ նստիր հոս իմ աթոռիս ոտքին տակը. ձեր մէջ խռովութիւններ ընող եւ չար խորհուրդներու գատաւոր չէք ըլլար... Բայց դուք աղքատները անարկեցիք եւ գանոնք հարստահարողները յարկեցիք եւ ասով մեղք գործեցիք» (Յակորոս, Բ. 1-9): Յետոյ ան կը յարձակի անոնց վրայ որոնք քրիստոնէական վարդապետութիւնը տեսականապէս կ'ընդունին, ինչպէս հարուստները եւ գործնականօրէն բռն չեն ընէր: «Ի՞նչ օգուտ է, եղբայրներս, եթէ մէկը բէք թէ հաւատք ունի ու գործ չունենայ, միթէ հաւատքը կ'ընայ փրկել գանիկա: Եթէ եղբայր մը կամ քոյր մը մերկ ըլլան, կամ օրուան հացի կարօտ, եւ ձեզմէ մէկը անոնց բէք զացէք խաղաղութեամբ, տաքցէք ու կշտացէք եւ մարմնին պէտք եղած բաները անոնց շտաք, ի՞նչ օգուտ է: Այսպէս ալ հաւատքը, եթէ իրեն հետ գործ չունենայ մեռած է» (Յակորոս, Բ. 14-18):

Այս նկատողութեան վրայ անչուտ չփոխուեցաւ կազմակերպութեան դիրքը հարուստներու հանդէպ: Ան մնաց անփոփոխ թէ տեսական եւ թէ գործնական գետնի վրայ: Բայց այնպէս մը կարգադրուեցաւ որ ամէն ոք կամովին պարտաւոր էր տուրք մը տալ եկեղեցիին, մեծ կամ պզտիկ:



Տերաուղիանոս (150-160) որ աւելի կանուխ եկած է Յակոբոս առաքեալէն, միաբանութեան կազմակերպութիւնը կը նկարագրէ սապէս: Հասարակաց հիմնադրամ մը եթէ գոյութիւն ունի իսկ, ան կազմուած չէ որոշ տուրքերու հաւաքումով մեր աստուածաբաշտութեան որպէս պայման: Մեղմէ իւրաքանչիւրը ինչ որ կը հաճի տալ համաձայն իր կարողութեան, կուտայ կամովին: Այս դրամները ի պահ դրուած են ոչ թէ խնձոյքներ սարքելու այլ ազգասները կերակրելու, անտէր տղոց ու աղջիկներուն հոգ տանելու, ծերերը հոգատարելու, նաւարեկեալներու օգնելու, հանրերու կամ կղզիներու կամ բանտերու մէջ տառապողներու օգնելու, վերջապէս անոնք որ Աստուծոյ ճամբուն հետեւելով վտանգի մատնուած են: Մենք երբ կը զգանք թէ մէկ սիրտ եւ մէկ հոգի ենք, գժուարութիւն չունինք մեր ունեցածը հասարակաց սեփականութիւն դարձնելու. մեզ մօտ ամէն ինչ հասարակաց է բացի մեր կիներէն»: Կոմունիզմը, ուրեմն, տեսականօրէն իր գոյութիւնը կը պահէր, բայց դործնականին մէջ անոր խտտարհանջ կիրառումը մկրտուած, թեթեւցած էր: Բայց աննշմարելիօրէն միաբանութեան բնութագիրը ինչ որ սկզբնապէս որդեգրուած էր միմիայն պրոլետարական պայմաններով, փոխուած էր, որովհետեւ հարուստները որոշ չափով բարձրացր էին միաբանութեան մէջ: Անոնք որ հարուստներու անդամակցութեան փափաքեր էին, կուուելու էին միաբանութեան դասակարգային ատելութեան դէմ. նոյն ատեն փոխելու էին անոր ներքին գործունէութիւնը:

Կոմունիզմը թէեւ տկարացեր էր, բայց հասարակաց ճաշը կը մնար որպէս կապ մը որ կը միացնէր անդամները: Ողորմածութեան կարգադրութիւնները առանձնացած պարագաներուն գործադրելի էին երբ միաբանութեան անդամները ենթարկուած էին յուսահատ դրութեան: Բայց հասարակաց ճաշը ամենօրեայ կարիքներուն համար կը արուէր ամէն մի անդամի: Այդ ճաշին կը մասնակցէին միաբանութեան բոլոր անդամները, ներառեալ հարուստները: Բայց հարուստները այդ հասարակաց ճաշին կը մասնակցէին ձեւականօրէն. անոնց բժախնդիք քիմքը յարմար չէր այդ ճաշին: Անոնք միայն հաց մը կը կիսէին ու գինին կը խմէին դուտ խորհրդանշական ձեւակերպութեան համար: Երբ հարուստները աւելցան միաբանութեան մէջ, նոյնքան աւելցան հասարակաց ճաշի մասնակցողներու թիւը, անշուտ ձեւականօրէն: Ասոր համար երկրորդ դարուն ազգասներու տրուած հասարակաց ճաշը անջատուեցաւ հանդիսաւոր խորհրդանշանական հասարակաց ճաշէն, իսկ Դ. դարուն երբ եկեղեցին տիրող դարձաւ ազգասներու հասարա-

կաց ճաշը ջնջուեցաւ, եւ նոյնպէս մոռցուեցաւ հանդիսաւոր ճաշկերոյթը յաջորդող դարերուն: Գործնական կոմունիզմի յետին մնացորդները անհետացան միաբանութեան մէջէն եւ անոնց տեղ անցան ողորմութեան գիծերը, օգնութիւն աղքատին ու տկարին, որը մինչեւ այսօր ալ կը շարունակուի փոքր թէ մեծ չափով:

Միաբանութեան մէջ չմնաց բան մը որ անարգանք բերեր հարուստին: Ան բոլորովին դազրեցաւ պրոլետարական կազմակերպութիւն մը ըլլալէ: Հարուստը որ դուրս հանուած էր Աստուծոյ թաղաւորութենէն եթէ ան իր ունեցածները աղքատներուն չէր տար, այժմ այդ թաղաւորութեան մէջ առաջնորդող դեր առաւ, ինչպէս առաջին դերը առած էր դեւերու աշխարհին մէջ: Ասանկով դասակարգային նախկին հակառակութիւնները ոչ միայն վերապրեցան, այլև նոր տեսակի տիրող դասակարգ մը երեւան եկաւ, նոր արխատիրաւ դասակարգ մը՝ կղերականութիւնը:

Հռովմի կայսրերը ծունկի եկան այդօրինակ քրիստոնեայ միաբանութեան առջեւ եւ ոչ թէ անոր սկզբնական վարդապետութեան՝ կոմունիզմի առջեւ: Քրիստոնէութեան յաղթանակը պրոլետարական գիտադուրայի յաղթանակը չէր, այլ կղերական եւ աշխարհական պետերու յաղթանակը:

Կանխադոյն միաբանութեան խոյաններն ու մարտիրոսները որոնք ուրացան իրենց ունեցածները, իրենց անձը, իրենց աշխատանքն ու կեանքը ի սէր խեղճերու եւ թշուառներու ազատագրումին, միայն հիմքերը դրին յետոյ նոր տեսակի շահագործումի եւ բռնակալութեան:

Գ) ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ, ՄԱՐԳԱՐԷՆԵՐԸ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

Մկղբնական շրջանին քրիստոնեայ միաբանութիւնը պաշտօնեաներ չունէր. անդամներու մէջ զանազանութիւն չկար: Այդ կամ կին, որեւէ մէկը նայած իր կարողութեան կրնար սորվեցնել եւ գործիչ ըլլալ: Ամէն ոք կը խօսէր համարձակ նայած իր ունեցած «լոյսին» կամ նայած «Հոգին Սրբոյ» դրդումին: Անոնցմէ շատերը շարունակեցին իրենց առօրեայ գործը, բայց ոմանք ալ որ ծախսցին իրենց ինչքերը եւ ամբողջապէս նուիրուեցան միաբանութեան գործին դարձան ստաքեալներ ու մարդարէներ: Ասկէ ծնունդ առաւ որոշ դասակարգ մը: Այժմ միաբանութեան մէջ երկու դասակարգ կազմուեցաւ. սովորական պարզ անդամներ որոնց գործնական կոմունիզմն էր հասարակաց ճաշը եւ միաբանութեան ընդհա-



նուր բարեխառնութեան սասարումը, անդործներուն գործ ճարել, այրիներուն ու որբերուն ու բանտարկեալներուն օգնել, հիւանդներուն խնամք տանել, մեռնողին թաղումը կատարել եւ այլն: Բայց անոնք որ կոմունիզմը կը գործնականացնէին, կը նկատուէին «սուրբ» կամ «կատարեալ»: Ասոնք որեւէ սեփականութիւն չունէին, նոյնիսկ չէին ամուսնանար: Ասոնք իրենց անունով, զիրքով ու գործով գերազանցութեան զգացումը արմատացուցին միւս ընկերներու մօքին մէջ եւ ինքնաբերաբար դարձան դեկալարող ու իշխող զիրքի սէրեր: Այսպիսով կոմունիզմի արմատական ձեւէն երեւան եկաւ նոր արխատկրատ դասակարգ մը: Ինչպէս միւս արխատկրատիան, նոյնպէս ալ քրիստոնեայ արխատկրատին իր հաւատաւոր հասարակութեան հրամայելով չզոհացաւ, այլեւ սկսաւ փորձել այդ հասարակութիւնը շահագործել: Բայց այս «սուրբ» մարդիկը ի՞նչպէս պիտի ապրէին երբ իրենց բոլոր ունեցածը արդէն տուեր էին միաբանութեան: Անոնք կամ պիտի գործէին, կամ բեռնակրութիւն պիտի բնէին եւ կամ մուրացկանութիւն: Բայց միաբանութեան անդամները այնքան անզգայ չէին որ թոյլ տային որ իրենց հանձարեղ ու ճարտասան սուրբը անօթի մնար. թէեւ այդ սուրբը շատ խոր ծանօթութիւն չունէր, ոչ ալ գիտական հմտութիւն, միայն յափշտակեալ զիրք մը եւ սրոշ սրտմտութիւն մը: Մենք տեսնք որ Պողոս կորնթացուց զբաժնամակին մէջ կը շեշտէ որ առաքեալները պէտք է Ֆիլիքական աշխատանք չկատարեն, իսկ միաբանութիւնը պէտք է կերակրէ զանոնք: «Ես առաքեալ չեմ, ես ազառ չեմ, ես Յիսուսը՝ մեր Տէրը տեսած չեմ, ո՞ր հովիւն է որ ոչխարները կ'արածէ եւ անոնց կաթը չի խմեր: Եթէ մենք ձեզի հոգեւոր բաներ սերմանեցինք, մեծ բա՞ն մըն է եթէ ձեզմէ մասնաւոր բաներ հնձենք: Եթէ ուրիշները ձեր վրայ այս իշխանութիւնը ունին, չե՞ որ ալ աւելի մենք ալ ունինք այդ իշխանութիւնը» (Կորնթացուց Ա., Թ. 7-12): Այս վերջին պարբերութենէն կը հասկնանք առաջին քրիստոնեայ միաբանութեան կոմունիստական բնոյթը: Առաքեալներուն համար կեանքի պիտոյքներ պահանջելէ վերջ Պողոս կ'ըսէ որ ինք իրեն համար բան չուզեր, այլ ուրիշներուն համար. ինք կորնթացիներէն բան չուզեր, այլ կ'ուզէ որ ուրիշներ հոգատարեն զինք: «Ուրիշ կեղեցիներ կողորտակցի, անոնցմէ թոշակ ստնելով ձեզի ծառայելու համար: Չերքով դանուած ատենս երբ պակասութիւն մը ունեցայ, ձեզմէ մէկուն ձանձրութիւն չտուի, վասնզի իմ պակասութիւնս լեցուցին Մակեդոնիայէն եկող եղբայրները» (Բ. Կորնթացիս, ԺԱ. 8): Բայց աս չի փոխեր այն իրողութիւնը որ Պողոս մասնաւոր շեշտ կը

զնէ որ միաբանութիւնը պէտք է հողատարէ «սուրբ» որ գործելու պարտաւորութիւն չունի:

Քրիստոնէական կոմունիզմը ոչ-հաւատացեալներու մօքին վրայ սրոշ ազդեցութիւն ունեցաւ իր ատենին: Այս կը տեսնենք ոչ-քրիստոնեայ հեղինակներու գործերէն. օրինակ Լուսիանը որ մեզի հուսայ Պերեկրինոս Պրոտէսթի պատմութիւնը: Երգիծարան Լուսիանը անտարակոյս աննախապաշար դիտող մը չէ եղած (165 Յ.Ք.) բայց սրճափ որ ալ չափազանցեալ գոյներով ներկայացուցեր է իր պատմութիւնը, բայց կարեւոր տեղեկութիւններ կրնանք քաղել անկէ: Պերեկրինոս յոյն մըն էր որ Պիրէի մէջ իր հայրը կը սպաննէ ու կը փախչի Պաղեստին. հոն կը ծանօթանայ քրիստոնեաներու հետ որոնք իրեն համար պարզամիտ երեխաներ կը թուին: Ծնորհիւ իր ճարտիկութեան ու հոգեւորութեան կ'ըլլայ մարդարէ, յետոյ եկեղեցուց պետ: Մի շարք պատուիրանքներ կը դրէ քրիստոնեաներուն համար, զանոնք կը բացատրէ անոնց ու կ'ըլլայ Ատուծոյ ներկայացուցիչը: Անկէ յետոյ կը բանտարկուի. ասով անոր պատիւը աւելի կը բարձրանայ, իր համբաւը կը տարածուի ամենուրեք: Քրիստոնեաները մեծ ու սղփիկ, ծեր ու երիտասարդ, իրար կ'անցնին իրենց սուրբը բանտէն ազատելու համար: Տեսնելով որ անկարելի է, կը սկսին առատօրէն հաւաքումներ ընել անոր անուան: Բանտը կը լեցուի ուսելիքներով ու դրամով: Անիկա կը դառնայ նոր Սոկրատ մը: Ասիական քաղաքներէն միաբանութեան անդամները կուզան անոր օգնելու եւ զայն միխթարելու համար: Առաւելնէ մինչեւ իրիկուն ծեր կիներ, այրիներ ու որբեր կը շարունակեն բանտի պատերուն տակ եւ կ'աղօթեն սուրբին համար: Այդ խեղճ ողորմելիները որոնք սեփականութեան չեն հաւատար, կը հաւատան թէ իրենք անմահ պիտի ըլլան, բաւական է որ խաչեցեալին կը հաւատան եւ կը հետեւին անոր օրէնքներուն: Որեւէ ճարտիկ մէկը որ կրնայ կեղծել, շուտով կը դառնայ անոնց մարդարէն ու առաջնորդը եւ շուտով ալ կը հարստանայ: Լուսիան յետոյ կը պատմէ մեզի որ Սուրբոյ կառավարիչը Պերեկրինոսը ազատ կ'արձակէ, որով նա կը վերադառնայ իր ծննդավայրը Պիրէ ուր իր հայրենական ժառանգը պակսեր է արդէն, բայց ինք շատ դրամ ունի, մօտ 15 տողանդ. (17 հազար աղար): Ան այս դրամը կուտայ քաղաքի բնակչութեան իր հայրասպանութեան դատապարտութենէն ազատուելու համար: Ան կը խօսի Պիրէյի ժողովրդական խորհրդարանին մէջ: Երկար մաղերով ու մօրուքով մարդ մը, վերարկու մը ուսին, դաւազան մը ձեռքին, դերասանի կերպարանքով մէկը: Ան կը յայտարարէ որ իր հօրը կալուածներէն ինչ որ մնա-







ընդթիւն որը անոր մնացուածութեանը սատարելու էր: Տեղական կազմակերպութիւն մը կը կործանէր երբ դուրսէն նեցուկ չունենար: Միւս կողմէ դժուար էր պետական հեղինակութեանց տրամադրուած ազդեցութեամբ կայսրութեան բոլոր մասերուն մէջ տարածուած քրիստոնեայ միաբանութիւնները պատժելը: Ինչ ալ որ ըլլար մի քանիներ կը մնային որ պատժուածներուն օգնէին եւ անոնց մէջ պատժուելիքները պահուէին: Այդպիսի դարձերը վերապահուած էին առաքելներուն, որոնք միշտ հոս հոն կը վազէին եւ որոնց թիւը այդ ատենները օրէ օր կ'աւելնար: Տեղական դործիչները որոնք ամբողջապէս միաբանութեան դործերուն նուիրուած էին, երեւան կուզային այն ատեն երբ միաբանութիւնը զանոնք տեւականօրէն հոգատարելու չափով մեծցեր էր: Որքան մեծ ըլլային քրիստոնեայ միաբանութիւններ ունեցող քաղաքները, եւ որքան մեծ ըլլար այդ միաբանութեանց անդամութիւնը, այնքան կը շատնային մարդարէները եւ նոյնքան կը պահուէին առաքելները որոնք գործելու էին հոն ուր միաբանութիւն չկար կամ եղածը պղտրիկ բան մըն էր: Ասով առաքելներուն պատիւը պահուեցաւ: Բայց մի տեսակ հակառակութիւն ըլլալու էր առաքելներու եւ մարդարէներու միջեւ, որովհետեւ միաբանութեանց միջոցները սահմանաւոր էին: Որքան շատ բան անէին առաքելները իրենց համար, այնքան քիչ բան կը մնար մարդարէներուն: Ասոր համար մարդարէները կ'աշխատէին առաքելներու պատիւը պահուեցնել, հաւատացեալներէն նուէրներու ճամբով իրենց եկամուտները աւելցնելու համար: Այս ջանքերը յայտնի կերպով կ'երեւին 12 առաքելներու վարդապետութեան մէջ. փաստաթուղթ մը որ գրուած է 135 եւ 170 Յ.Ք. հոն կը կարդանք. «Որեւէ առաքել որ ձեզ մօտ կուզայ, զայն ընդունելու էք որպէս տէր: Բայց ան մէկ օր կամ առաւելապէս երկու օր միայն մնալու է: Եթէ 3 օր մնայ, ան կեղծ մարդարէ է: Երբ առաքելը մեկնելու ըլլայ, նա միայն ստանալու է այնքան հաց որ իրեն բաւէ մինչեւ իր յաջորդ կայանը: Եթէ ան դրամ ուզէ, կեղծ մարդարէ է: Մի փորձէք որեւէ մարդարէ որ կը խօսի եռանդոտ ոգիով. ամէն մեղք կը ներուի, բայց այդ մեղքը չի ներուիր: Բայց ամէն մարդ որ եռանդոտ ոգիով կը խօսի մարդարէ չէ, միայն ան է մարդարէ որ տիրոջ վարձունք ունի. կեղծ եւ իրական մարդարէները իրենց վարձունքէն կը զանազանուին: Որեւէ մարդարէ որ օժտուած է Աստուծոյ շնորհքով, իրեն համար ուտելիք չի հրամայիր. եթէ հրամայէ կեղծ մարդարէ է: Ամէն մարդարէ որ ճշմարտութիւնը կ'ուսուցանէ բայց քարոզածը ինք գործնականին մէջ չապրիր, կեղծ է: Ամէն մարդարէ փորձուած եւ

ճշմարիտ որ եկեղեցւոյ երկրային խորհրդաւորութեանց համաձայն կը դործէ, դուք զայն մի դատէք, որովհետեւ իր դատաստանը Աստուծոյ հետ է: Հին քրիստոնեայ մարդարէները միշտ այդպէս եղեր են»: Այս վերջին պարբերութիւնը սղատ սիրոյ կը պատկանի, որը թոյլատրելի եղեր է մարդարէներուն համար եթէ անոնք միաբանութեան մէջ նոյնը ընել չեն պահանջեր: Մենք տակաւին կը կարդանք. «Ամէն ընկեր որ կուզայ Տէրոջ անունով, ներս առէք, բայց դուք պիտի փորձէք զայն եւ զանազանէք կեղծը ճշմարիտէն, որովհետեւ դուք պէտք է հասկնաք: Եթէ նորեկը ճամբորդ է, օգնեցէք անոր, եթէ մնալ կ'ուզէ, երկու կամ երեք օրէն աւելի մնալու չէ: Եթէ ան կ'ուզէ ձեզ մօտ հաստատուիլ պէտք է դործէ եւ ուտէ, եթէ արհեստաւոր է: Բայց եթէ ան արհեստ մը չունի, տեսէք թէ ան ի՞նչ ընելու է իր ապրուստը ձարելու համար: Քրիստոնեայ մը ծոյլ ըլլալու չէ եւ ուրիշներու քրտինքով ապրելու չէ: Եթէ ան այս պայմանը չընդունիր, ըսել է Քրիստոսը կ'ուզէ շահագործել: Հետացուցէք զայն ձեր մէջէն»:

Ասիկէ կը հետեւի որ միաբանութիւնը լեցուած չէր մուրացկաններով, անուշտ խօսքը հասարակ մուրացիկներու համար է: «Բայց ամէն ճշմարիտ մարդարէ որ կ'ուզէ հաստատուիլ ձեզ մօտ, պէտք է որ ապրեցնէք զինք: Նոյնպէս ճշմարիտ ուսուցիչ մը արժանի է ձեր հոգատարութեան: Ամէնէն առաջին պատուները, ամէնէն լաւ զինին, ամէնէն լաւ կերակուրը, ձեր արջառներէն, ձեր ոչխարներէն, պէտք է տանիք ու տաք մարդարէներուն, որովհետեւ անոնք ձեր քահանայապետներն են: Բայց եթէ մարդարէ չունիք, զանոնք տուէք աղքատներուն: Բայց դրամ եւ հագուստեղէն ձեր դատումովը դործածեցէք»:

Առաքելները այս կանոններէն շատ չէին օգտուեր: Կարելի էր որ զանոնք բոլորովին ճնշէին, բայց միաբանութիւնը զանոնք երկու օրէն աւելի չէր պահեր, կը ճամբէր ուրիշ տեղ. իսկ դրամ ընաւ չէր արուեր:

Մարդարէն սակայն արժանի էր մեծարանքի. ան պէտք էր ապրէր միաբանութեան զանձէն եւ դեռ հաւատացեալները անոր տալու էին իրենց զինիէն, իւղէն, հագուստէն եւ նոյնիսկ դրամ:

Մարդարէները որ առաքելներու տեղը կ'անցնէին իրենք ալ իրենց կարգին դէմ յանդիման կը զանուէին ուրիշ նոր մրցակիցներու որոնք կը կոչուէին ուսուցիչներ: Այս երեք տարբերէն զատ կային նաեւ ուրիշներ ալ որոնց անունը կը յիշէ Պօղոս կորնթացւոց թուղթին մէջ (Ա. Թուղթ, ԺԲ. 28). «Եւ Աստուած եկեղեցիին մէջ



գրաւ մէկ քանինները, նախ առաքեալները, երկրորդ մարդարէները, երրորդ վարդապետներ, ետքը հրաշքներ, ետքը բժշկութիւններու պարզեաներ, օգնութիւններ, կառավարութիւններ, լեզուներու տեսակներ»։ Ասոնցմէ օգնութեանց պարզեաւորներն ու կառավարութիւնները բաւական կարելոր դարձան. բայց հրաշագործներն ու բժիշկները այն ատենները միաբանութեան մէջ գանազանուող դաս մը չկրցին կազմել։ Վարդապետներու երեւան գալը (ուսուցիչ) կապուած է հարուստ եւ կրթուած տարրերու մուտքին հետ։ Առաքեալներն ու մարդարէները սպէտ, անուս մարդիկ էին որոնք կը խօսէին շարունակ, առանց հասկնալու իրենց խօսածներուն իմաստը. հաւատքն էր իրենց գրամագլուխը եւ ներշնչումը (արուեստական կամ իրական) իրենց կարողութիւնը։ Կրթուած մարդիկը երբ ներս մտան իրենց քիթը խօթեցին ասոնց գործին մէջ եւ ուղեցին որ միաբանութեան կրթական մակարդակը բարձրացնեն իրենց գիտական սաշարով որ այնքան մեծ բան մը չէր այդ ատենները։ Ասոնք դարձան վարդապետներ։ Ասոնք էին որ քրիստոնէութեան մէջ ներմուծեցին Սենեկայի եւ Ֆիլոյի ոգին ուրիշ բան մը չկար նախապէս։ Բայց այս մարդիկը նախանձով ու ահաճութեամբ կը գիտուէին միաբանութեան մէջ, մասնաւորապէս առաքեալներուն եւ մարդարէներուն կողմէ։ Սակայն վարդապետները միաբանութեան մէջ հետզհետէ աւելցող հարուստ եւ կրթուած տարրերու օժանդակութեամբ մեծ զիրք գրաւեցին եւ առաքեալներն ու մարդարէները դահազուրկ ըրին։ Բայց նախ քան այդ կէտին հասնելը, այս երեք դասակարգերը (առաքեալները, մարդարէներն ու վարդապետները) շքացան այն իշխանութեան առջեւ որ սկսած էր գերազանցել բուրբ իր բոլոր կարողութեամբ. դա եպիսկոպոսութիւնն էր։

Գ) ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

Քրիստոնեայ միաբանութեանց սկզբնաւորութիւնները պրոլետարիան նորածիլ կազմակերպութեան պայմաններէն տարբեր չէին։ Անոնց հիմնարկողները, առաքեալները, միաբանութեան բոլոր գործերը իրենք ընելու էին. թէ պրոպականտայի, թէ կազմակերպութեան եւ թէ վարչութեան գործերը։ Բայց երբ միաբանութիւնը աճեցաւ, անդամները բազմացան, աշխատանքի բաժանումը անհրաժեշտ դարձաւ։ Որոշ գործեր տարբեր մարդոց բաժնուեցան։ Առաջինը, միաբանութեան եկամուտի եւ ծախսի վարչութիւնը, միաբանական առանձին պաշտօնատան մը տրուեցաւ։

Պրոպականտի գործը կրնար տանիլ որեւէ անդամ որ կը

խորհէր թէ ինք կարող էր եւ կը հետեւէր Աստուծոյ ձայնին։ Ան այնքան պատիւ կը շահէր որքան իր անձնաւորութիւնը եւ խօսելու ձեւը տպաւորիչ էր։ Անդին կար կազմակերպական կարգապահութիւնը որ ամբողջ միաբանութեան գործն էր, որքան ասան որ անոր անդամները թիւով քիչ էին եւ բոլորն ալ զիրար կը ճանչնային։ Միաբանութիւնը ինք կ'որոշէր նոր անդամներու մուտքը. իսկ մկրտութիւնը որպէս սկզբնական արարողութիւն որեւէ մէկը կրնար ընել։ Նոյնպէս միաբանութիւնը ինք կ'որոշէր անդամի մը վտարումը, խաղաղութեան պահպանումը եւ վէճերու լուծումը։ Ընկերային ատեն մը կար որուն առջեւ ընկերները կը դատուէին։ Քրիստոնեաները պետական դատարանի չէին հաւատար։ Քրիստոնեայ մը մեղք կը սեպէր պետական դատաւորի առջեւ երթալ ընկերով մը դէմ իր իրաւունքը պաշտպանելու համար։ Այսպէսով կազմուեցաւ կորիզը մասնաւոր դատական իշխանութեան մը որով ի վերջոյ եկեղեցին իշխող դարձաւ իր հաւատացեալներուն վրայ։ Անշուշտ հասկնալի է որ եկեղեցական օրէնքի նախնական բնոյթը ի վերջոյ ամբողջապէս խեղաթիւրուեցաւ, որովհետեւ քրիստոնէական միաբանութիւնը սկիզբէն իսկ կը ջատագովէր ամէն դասի արդարութեան ջնջումը եւ չէր ուզեր որ մէկը դատուէր իր լորտէն։ Կորնթացուց Ա. թուղթին մէջ Պօղոս կ'ըսէ (գլուխ Զ. 14). «Ձեզմէ մէկը եթէ բան մը ունենայ իր ընկերին հետ, կը համարձակի՞ անիրաւներուն առջեւ դատուել ու ոչ թէ սուրբերուն առջեւ։ Ձէ՞ք զիտեր որ սուրբերը պիտի դատեն աշխարհը ու եթէ աշխարհ ձեզմէ կը դատուի, ուրեմն արժանի չէ՞ք դուք ջնջին դատեր որոշելու։ Ձէ՞ք զիտեր որ մենք հրեշտակներ պիտի դատենք. ո՞ւր կը մնան հապա աշխարհային բաները։ Ուրեմն ձեր մէջ եթէ աշխարհային բաներ ունիք, եկեղեցիին անարդները ձեզի դատաւոր ըրէք»։

Սկիզբէն միաբանութեան մէջ կարգապահութեան եւ խաղաղութեան պահպանումը նուազ չափով որոշ պաշտօնատան մը գործն էր որքան պրոպականտի գործը, որովհետեւ միաբանութիւնը միմիայն պրոպականտի համար չէր, այլեւ փոխադարձ օգնութեան համար։ Համաձայն Գործք Առաքելոցի, որոշուեցաւ որ երուսաղէմի միաբանութեան մէջ որոշ ընկերներ հաւաքումներ եւ բաշխումներ ընեն, մասնաւորապէս հասարակաց սեղանին սպասարկելու։ Տիաֆանիօ կը նշանակէ սպասարկել։ Յայտնի է որ ան սարկաւազի առաջին գործն էր, երբ հասարակաց սեղանը ամենադիւսաւոր գործատնութիւնն էր քրիստոնէական կոմունիզմին։

Գործ Առաքելոցի մէջ կը կարգանք (գլուխ Զ. 1-7). «Եւ այս օրերը երբ աշակերտները շատցան հելլենացուց կողմէ տրտունջ



մ'եղաւ երբայցեաց զէմ, վասնզի անոնց որբեւայրիները ամէն օր-  
ւան ողորմութեան մատակարարուելուն մէջ անտես կ'ըլլային: Եւ  
տասններկուքը կանչեցին աշակերտներու բազմութիւնը ու ըսին.  
Մեզի չվայելեր Աստուծոյ խօսքը ձեզի ու սեղաններու ծառայու-  
թիւն ընել: Ուստի, եղբայրներ, ձեզմէ եօթը հոգի ընտրեցէք, բա-  
րբի վկայուած, Հոգևոյ Սրբոյ եւ իմաստութիւնով լեցուն, որպէսզի  
զանոնք այս գործին վրայ դնենք»:

Եւ այս թելադրանքը իրագործուեցաւ, ինչ որ գործին պա-  
հանջն էր: Առաքեալները այլեւս ճաշարանի սեղաններուն չէին  
սպասարկեր քանի որ միաբանութեան անդամները բազմացան. ա-  
նոնք նուիրուեցան իրենց պրոպականտի գործին: Սեղանին սպա-  
սարկողները (սարկաւազները) նոյնպէս գործի բաժանում ունեցան,  
սեղանին սպասարկողներ եւ ճաշարանի մաքրութեան հոգատար-  
ներ: Ասոնցմէ դուրս կար նաեւ անդամատուք հաւաքելու գործը  
եւ անդամներու վարչական գործերը, որոնք բարձր դասու վաստա-  
հութեան արժանի գործեր էին, մանաւանդ որ միաբանութեան ան-  
դամները արդէն բազմացեր էին: Այդ գործերը կը պահանջէին պար-  
կեշտութիւն, գործի հմտութիւն, բարութիւն եւ խստապահանջու-  
թիւն: Ասոր համար սարկաւազներու վրայ որոշուեցաւ վարիչ մը,  
ինչ որ անհրաժեշտ էր սեփականութիւն եւ եկամուտ ունեցող կազ-  
մակերպութեան մը համար: Արդէն Փոքր Ասիոյ մէջ այս ձեւի ըն-  
կերութիւններ կային, որոնց ֆինանսական պաշտօնեաները կը կոչ-  
ւէին եփիսիօպոստոս կամ եպիսկոպոս, որ կը նշանակէ հսկող, վե-  
րատեսուչ: Նոյն անունը կը տրուէր նաեւ քաղաքներու կառավա-  
րութեանց որոշ պաշտօնեաներուն: Հաչը իր մէկ գրքին մէջ բաւա-  
կան ծանօթութիւն կուտայ այս անուան մասին. «Եպիսկոպոսները  
անոնք էին որ կը վերահսկէին հացի եւ ուրիշ գնուելիք բաներուն  
որոնք կը ծառայէին քաղաքի բնակչութեան առօրեայ սպորուս-  
տին»: Այս անունն էր որ քրիստոնեաները տուին ժողովուրդի տան  
վարիչներուն: Սկզբնական շրջանին եպիսկոպոսներն ու անոնց օգ-  
նականները ամասկան չէին ստանար. անոնց պաշտօնը պատուի  
վարձատրութիւն էր միայն: Անոնք կը պարապէին բժշկութեամբ,  
նրբագործ արծաթագործութեամբ, հովուութեամբ, եւ կամ իրենց  
ապրանքները կը ծախէին բաց շուկայի մէջ: Միայն թէ անոնք փե-  
րեղակութիւն չէին կրնար ընել, մէկ շուկայէն միւսը անցնելով,  
նոյնպէս չէին կրնար աժան առնել եւ սուղ ծախել քան միւսները:  
Բայց միաբանութիւնը քեր մեծցաւ, այլեւս անկարելի եղաւ նոյն  
ձեւի շարունակութիւնը: Եպիսկոպոսը նշանակուեցաւ որպէս միա-  
բանութեան ծառայող որուն որոշուեցաւ ամսավճար: Ասով անոր

պաշտօնասենեակը դարձաւ մշտական: Միաբանութիւնը իրաւունք  
ունէր եպիսկոպոսը իր պաշտօնէն հեռացնելու եթէ ան իր պաշտօ-  
նին մէջ թերանար, բայց այդ պարագան մի քիչ կը դժուարացնէր  
նորի մը ընտրութիւնը, երբ հինը որոշ փորձառութիւն եւ հմտու-  
թիւն ունէր իր գործին մէջ: Ասոր համար միաբանութիւնը չափա-  
զանց կը զգուշանար եպիսկոպոսը թեթեւ պատճառով մը փոխելէն,  
այլ ընդհակառակը կ'աշխատէր անոր զբաղումը աւելի թեթեւցը-  
նել, գործը դիւրացնելու համար: Այսպէս եպիսկոպոսը որքան  
մնար իր պաշտօնին վրայ, նոյնքան կը մեծնար իր ազդեցութիւնը  
եթէ ան իր պաշտօնը կատարեր լրիւ: Ան միակը չմտաց միաբանու-  
թեան որպէս պաշտօնեան. սարկաւազներու պաշտօնատունն ալ  
տեւական էր որպէս կազմակերպութեան գործով զբաղողներու  
պաշտօնատուն: Սարկաւազները նոյնպէս վճարովի էին. անոնց կը  
վճարուէր միաբանութեան դանձարանէն: Եպիսկոպոսը որ անոնց  
հետ պիտի գործէր, զանոնք ընտրել տալու մէջ մեծ ձայն ունէր:  
Այսպէս եպիսկոպոսը միաբանութեան գործերու բաժանումին մէջ  
հետզհետէ մեծ հեղինակութիւն ստացաւ: Երբ միաբանութիւնը ա-  
ճեցաւ, անկարելի էր կարգապահութիւնը պահպանել այնքան դիւ-  
րութեամբ, երբ միաբանութեան մէջ մտան ամէն դասակարգի մար-  
դիկ, գերիներ ու գերետէրեր, հարուստներ ու աղքատներ, անկեղծ  
հաւատաւորներ կամ արկածախնդիրներ, խեղաբախտներ ու պա-  
տահապաշտներ, զոհարերողներ ու շահագործման ձգտողներ, իւ-  
րաքանչիւրը տարբեր միջավայրի ու տարբեր նկարագրի մարդիկ:  
Այս պարագան ինչպէս եւ տարբեր տեսակէտներ ունեցող մարդ-  
կանց ներկայութիւնը անհրաժեշտօրէն ծնունդ տուին ներքին վե-  
ճերու՝ որոնց ուսումնասիրութեան ու վճիռին համար առանձին  
մարմին էր հարկաւոր: Ասոր համար կազմուեցաւ յանձնախումբ  
մը ձերերէ ու քահանաներէ, որոնց գործն էր միաբանութեան կար-  
գադրութեան հսկել, վեճերը կարգադրել, վտարուելիք անդամնե-  
րու մասին ծանօթութիւն տալ միաբանութեան եւ նոր անդամնե-  
րու արարողութիւնը կատարել (մկրտութիւնը): Եպիսկոպոսը այս  
յանձնախումբին նախագահն էր: Ասանկով ան միաբանութեան թա-  
րոյսական եւ թէ դատական բաժնի գլխաւոր ղեկավարը դարձաւ:  
Միաբանութեան աճման հետ զուգընթաց երէցները նոյնպէս վճա-  
րովի գործաւորներ դարձան, ինչպէս եպիսկոպոսն ու սարկաւազ-  
ները:

Ո՞րոք քաղաքի մը մէջ, հասկնալի է, միաբանութիւնը այն-  
քան կը մեծնար որ մէկ շէնքը անդամներու հաւաքոյթին չէր բա-



ւեր: Ասոր համար քաղաքը թաղապետութեանց բաժնուեցաւ. իւրաքանչիւր թաղապետութիւն ունէր իր սարկաւազը եւ քահանան որոնք հաւաքոյթիները կը ղեկավարէին եւ կը ներկայացնէին եպիսկոպոսը: Հարցը նոյնն էր արուարձաններուն եւ դիւղերուն համար որոնք եթէ այդ մեծ քաղաքին մօտ էին, այդ քաղաքի ազդեցութիւնը կը մեծնար, ինչպէս Հոռովմը եւ Այէքքասնդըիւն: Այսպէսով աստիճանաբար կազմուեցաւ միաբանական պիւրոկրատիոն որուն պետն էր եպիսկոպոսը, որը եղաւ աւելի եւ աւելի անկախ ու հզօր: Մէկը շատ մեծ անուն եւ պատիւ ունենալու էր միաբանութեան մէջ որ ընտրուէր այդ պաշտօնին որուն ցանկացողները շատ էին: Անգամ մը որ մէկը անցնէր այդ պաշտօնին գլուխը, հոգ չէ թէ որքան քիչ զարգացած էր կամ կարող, ան կրնար իր կամքը պարտադրել իր ստորադասներուն, մանաւանդ երբ իր ձգտումները համաձայն էին միաբանութեան մեծամասնութեան ձգտումներուն: Ասոր արդիւնքը այն եղաւ որ անոր հեղինակութիւնը տարածուեցաւ ոչ միայն միաբանութեան կազմին, այլեւ անոր պրոպագանտային եւ տեսութեանց վրայ:

Մենք տեսնք արդէն թէ ինչպէս առաքեալները Բ. դարուն մէկդի քրուեցան մարգարէներու բռնած դիրքով: Բայց այս երկուքը, առաքեալներն ու մարգարէները, յաճախ բախման մէջ մտան եպիսկոպոսին հետ որ անոնց զգացուց իր Ֆինանսական եւ բարոյական իշխանութիւնը: Եպիսկոպոսը ղեկարգութիւն չէր քաշեր արդիւնելու առաքեալներուն ու մարգարէներուն եւ նոյնիսկ վարդապետներուն որ միաբանութեան հետ գործ չունենան երբ անոնք իրեն հաճելի չէին: Այս պարագան յայտնի եղաւ յաճախ, ի մասնաւորի առաքեալներուն ու մարգարէներուն համար:

Եպիսկոպոսները, ուրիշ խօսքով, երբ դանձի աէրն էին եւ ընտրուած չէին անաշխարհական հաւատաւորներէ, այլ ընտրուած էին լուրջ եւ առեւտրական ու գործնական մարդոցմէ, զիտէին իրենց գործը: Այդ մարդիկը զիտէին դրամին արժէքը եւ ատոր համար զիտէին նաեւ թէ ինչպէս կրնային սիրաշահիլ հարուստ հարողակիցները: Ուրեմն բնական է ենթադրել որ այս մարդիկն էին որ կը ներկայացնէին պատեհապաշտական վերաքննութիւնը քրիստոնէական միաբանութեան մէջ, ուր անոնք աշխատեցան չբացնել հարուստներու դէմ տածուած ատելութիւնը եւ միաբանութեան ուսուցմունքները նուազեցնել այն չափով որ հարուստները անհանդիստ չըլլային հոն:

Այդ ժամանակներու հարուստները կրթուած դասակարգը կը

ներկայացնէին: Երբ միաբանութիւնը հարուստներուն եւ կրթուածներուն շահերուն համաձայն զիծ բռնեց, առաքեալներու եւ մարգարէներու ազդեցութիւնը տկարացաւ, ինչպէս եւ ձգտումները անոնց որոնք հարստութեան դէմ կը կռուէին սոսկական կամակորութեամբ: Այս հանգամանքը խորապէս ազդեց նաեւ անոնց վրայ որոնք իրենց ամբողջ կալուածները միաբանութեան տուեր էին եւ նոյն ատեն կուրեր էին հարուստներու դէմ, մինչ իրենք տակաւին մտացեր էին հարուստ իրենց կոմունիստական դադափարականը իրականացնելու ճամբուն վրայ:

Ոստապահանջութեան եւ պատեհապաշտութեան միջեւ պայքարի ընթացքին վերջինը յաղթանակեց: Ուրիշ խօսքով, եպիսկոպոսները յաղթեցին առաքեալներուն ու մարգարէներուն որոնց ազդեցութիւնը պակեցաւ միաբանութեան մէջ: Նախապէս ամէն անգամ կրնար ժողովներու մէջ ելլել եւ խօսիլ պրոպագանտի համար. պաշտօնեաները կամաց կամաց այդ սովորութիւնը վերցուցին եւ իրենք եղան խօսողներ եւ պրոպագանտիստներ: Նոյնիսկ սարկաւազները պրոպագանտիստ դարձան երբ իրենց գործը ուրիշ ծառայողներու արուեցաւ որոնք ընդունակ չէին ճարասանութեան: Ատանկներ սկսան գործել հիւանդանոցներու մէջ, աղքատանոցներու մէջ:

Միաբանութեան աճման հետ եւ տնտեսական դարձանութեանց ծաւալման հետ անհրաժեշտ դարձաւ պաշտօնեաներ պատրաստել պատկան պաշտօնատանց համար: Գործնական չէր եւ վրտանգաւոր էր թոյլատրել որ ամէն մարդ իր ուղած ձեւի հմտութիւնն ու փորձառութիւնը ստանար ու ատով պաշտօնի կոչուէր: Եպիսկոպոսները իրենց յատուկ միաբանական տունը հաստատեցին եկեղեցական պաշտօնեաներ հասցնելու համար: Այսպէսով եպիսկոպոսը ոչ միայն տնտեսական ղեկավար դարձաւ, այլեւ միաբանութեան պրոպագանտի գործօն ուժը: Գաղափարաբանութիւնը ասանկով ծուռնկի եկաւ տնտեսական պայմաններու առջեւ:

Այն ատեն զարգացաւ պաշտօնական վարդապետութիւն մը, միաբանութեան պիւրոկրատի կողմէ ճանչցուած ու տարածուած, որ ճնշող մեթոտներ սկսաւ գործածել իրեն հաճելի շեղած վարդապետութեանց վրայ:

Այս չի նշանակեր որ պաշտօնական այս վարդապետութիւնը թշնամի էր ամէն մէկ բանական կարծիքի: Եպիսկոպոսներու հակառակութիւնը ուղղուած էր քրիստոնէութեան նախնական պրոլետարական կոմունիզմին որ թշնամի էր պետութեան ու սեփականութեան: Բնակչութեան խոնարհ դասերու տպիտութեան հետ ի-



րենց զիւրահաւանութիւնը, իրականութեան հետ իրենց յոյսերու անհամաձայնութիւնը, այս ձգտումներն էին որ ընկերացած էին հրաշքներու մասնաւոր հաւատքին եւ իրենց վերաբերեալ մտավիճակին: Այս դեանի վրայ շատ բան իրողործուեցաւ պաշտօնական եկեղեցւոյ կողմէ, հալածելով այն ազանգները որոնք առաջին մի քանի դարերուն իրենց խենթ չարագանցութեանց մէջ դերազանցեցին ամէն ինչ...:

Պաշտօնական եկեղեցւոյ դէմ ամէն հակառակութիւն, ամէն հերետիկոսութիւն չենք կրնար նկատել ճնշումներու հանդէպ համակրանքի կամ ամէն ճնշման դէմ խորշանքի կապուած բարձր մըտավիճակի մը արտայայտութիւնը:

Ուրիշ պայմաններ եւս եկան զիւրացնել պաշտօնական եկեղեցւոյ վարդապետութեան ձեւաւորումը:

Մենք շատ քիչ ծանօթութիւն ունինք քրիստոնեայ միաբանութեան սկզբնական շրջանի վարդապետութեանց մասին: Ինչ ծանօթութիւն որ ունինք վերջէն է, ան ալ ակտարաններու խողովակով: Մենք դուցէ կրնանք ընդունիլ այն հաւանականութիւնը որ Յիսուս մը ապրած է դուցէ եւ խաչուած աղստամբութեան յանցանքով. իսկ իր ուսուցմունքները, մեծ մասով բարոյական սկզբունքներ որոնք հակասական, քիչ ինքնատիպ եւ բերնէ բերան աւանդուած են, իրապէս ապացոյց մը չեն տար Յիսուսի իրական ուսուցմունքին:

Միւս կողմէ, մենք իրաւունք ունինք երեւակայելու որ քրիստոնեայ միաբանութիւնները սկիզբէն նման էին սոցիալիստ կազմակերպութեանց: Անոնց վրայ նետուած ակնարկը ցոյց չտար որ պատմական ըլլալու վիճակուած արտակարգ ուժեղ անհատականութեան մը գործն է եղեր, այլ միշտ քառասական բջիջ մը, անստորդ, բնազդական փնտտուք մը հանդատութեան եւ խմբաւորումը մի շարք պիտոյեաւորներու, որոնցմէ ոչ մէկը աչքառու կ'երեւի քան միւսը, բոլորն ալ կը քալեն նոյն ձգտումներով, թէեւ յաճախ ցոյց կուտան ակերախ անհատական զարտուղումներ: Այսպիսի պատկեր մը, օրինակ, մենք կը տեսնենք ժ.թ. դարու երեսնական, քառասնական թուականներուն երբ կազմուած էր արդարութեան լիկան, երբ տակաւին Մարքս եւ Էնգելս կոմունիստական Մանիֆեստան չէին հրատարակեր: Եւ այս լիկան Փրանսայի եւ Անգլիոյ աւելի կանխազօյն շրջանի պրոլետարիատի ձգտումներու շարունակութիւնն էր: Եթէ Մարքս եւ Էնգելս չզային, լիկան պիտի շարունակէր իր խորման շրջանը երկար ատեն: Կամ. Մանիֆեստի հեղինակներն էին որ իրենց հանձարով ու գիտական պաշարումով

կոմունիստական շարժման տիրապետող ու վճռորոշող դիրք ապահովուցին:

Մենք անկարելի է որ կարողանանք ցոյց տալ թէ զարգացած անհատ մը քրիստոնէութեան խանձարուրը պատրաստեր է: Յիսուսի մասին յայտնապէս բնուած է որ ան պրոլետար մը եղած է եւ բանով մըն ալ դերազանց չէ եղած իր ընկերներէն. նոյնիսկ կրթութենէ զուրկ: Պօղոս առաքեալ Յիսուսի մասին երբ կը խօսի, բան մը չըսեր անոր դերազանց ծանօթութեան մասին. միմիայն կը շեշտէ անոր մարտիրոսական մահը, խաչելութիւնը եւ յարութիւնը: Յիսուսի խաչելութիւնն է որ խոր ազդեցութիւն թողեր է քրիստոնեաներուն վրայ, ոչ թէ անոր գիտական միաքը, հանձարը: Առաքեալներն ու մարդարէները չեն կրկներ նոյն վարդապետութիւնները ինչ որ ստացեր են ուրիշներէն, այլ խօսեր են ինչ որ Հոգին Սուրբը թելադրեր է: Անոնք արտայայտեր են տարբեր տեսութիւններ. հին միաբանութիւնները լեցուն են անհամաձայնութեամբ եւ վէճով:

Պօղոս կորնթացւոց կը գրէր (Ա. Կորնթ. ԺԱ. 17, 20) «Բայց զայս պատուիրելով ձեզ չեմ դովեր. վասնզի ձեր ժողովուրդը ոչ թէ ազէկ, հապա գէշ արդիւնք կ'ունենայ: Քանզի նախ երբ մէկտեղ կը ժողովուրդ եկեղեցիին մէջ, կը լսեմ որ բաժանմունքներ կան ձեր մէջ եւ ըստ այնմ կը հաւատամ: Վասնզի հարկաւ ձեր մէջ հերձուածողութիւններ ալ պիտի ըլլան որպէսզի ձեր մէջ եղող ընտիրները երեւան»: Այս զանազան ձգտումները, լսել կ'ուզեմ հերձուածողութիւնները միաբանութեան մէջ, պաշտօնական եկեղեցիին վերջերը որեւէ կերպով չուզեց ճանչնալ այլեւս: Բ. դարուն այս անորոշ փնտտուքներն ու համախմբումները վերջ գտան: Միաբանութիւնը անոր ետեւ պատմութիւն մը ունի եւ այդ պատմութեան ընթացքին հաւատքի զանազան վարդապետութիւններ յաղթական դուրս եկան եւ ճանչցուեցան միաբանութեան մեծ զանդուածէն: Եետոյ զարգացած մարդիկ մտան միաբանութեան մէջ: Անոնք մի կողմից գրի առին բերնէ բերան փոխանցուած միաբանութեան պատմութիւնն ու վարդապետութիւնները, արգելելով անոնց հետագայ փոփոխութիւնը, միւս կողմէ անոնք իրենց ժամանակի գիտութեան մակարդակին վրայ գրին միաբանութեան ուսուցմունքները, պարզ որքան կարելի է, զանոնք լեցնելով իրենց փիլիսոփայութեան տեսակէտներով, այսպէսով զանոնք զարձնելով ախորժակ համ կրթուած դասուն համար եւ միեւնոյն ատեն ամբակուռ հեթանոսական քննադատութեանց առարկութիւններուն առջեւ: Ան որ քրիստոնեայ միաբանութեան մէջ վարդապետ ըլլալու էր, պէտք էր



որոշ հմտութիւն ունենար: Առաքեալներն ու մարգարէները որոնք միայն ցնդարանութիւններ կ'ընէին աշխարհի մեղքերուն եւ կը գուշակէին աշխարհի կործանումը, այլեւս այս ուսեալ մարգոց հետ չէին կրնար մրցել: Այսպէսով անխախտ առաքեալներն ու մարգարէները ամէն կողմէ ճնշման ենթարկուեցան: Անոնց փոքր զբաղումը սոնակոխուեցաւ քրիստոնեայ պիւրոկրատիայի ուժեղ մեքենային տակ: Անոնք աներեւութացան: Միւս կողմէ, վարդապետներն ալ իրենց ազատութենէն զրկուեցան ու ենթարկուեցան եպիսկոպոսին: Շուտով ոչ ոք կը համարձակէր բերան բանալ ու խօսիլ միաբանութեան ժողովներուն մէջ, առանց եպիսկոպոսին թոյլտուութեանը: Եպիսկոպոսը հասեր էր իր բացարձակ զերիշխող դիրքին: Հովիւի եւ հօտի փոխաբերութիւնը դարձաւ ժողովրդական. հօտը կը նշանակէր այն ոչխարներու հօտը որ հլու եւ հնազանդ քուէլու էր տեղէ տեղ առանց զիմազրութեան, իսկ անոր գերագոյն հովիւն էր եպիսկոպոսը:

Քրիստոնէական շարժման միջազգային բնոյթը նոյնպէս օգնեց եպիսկոպոսի իշխանութեան բարձրացման: Առաջ առաքեալներն էին որ կը պահէին զանազան միաբանութեանց միջազգային յարակցութիւնը, մշտապէս ճամբորդելով եւ այցելելով անոնց: Բայց երբ առաքեալներու դերը վերջացաւ, անհրաժեշտ դարձաւ ուրիշ միջոցներ ձարել միաբանութիւնները իրարու սիմնաւելու համար, որովհետեւ յաճախ վէճեր կը ծագէին հոս-հոն եւ պէտք էր զանոնք վերցնել ու հասարակաց կարգապահութիւն հաստատել: Այսպէսով կազմուեցան միաբանութեանց պատգամաւորներէ կազմուած խորհրդաժողովներ, գաւառական խորհրդաժողովներ եւ նոյնիսկ գերագոյն խորհրդաժողովներ. եւ սսոնք սկսան երկրորդ դարուն:

Սկիզբէն այս հաւաքոյթները կը ծառայէին միայն քննարկներու եւ փոխադարձ հասկացողութեանց: Անոնք ընդհանուրին պարտադիր որոշում չէին կրնար անցնել: Ամէն միաբանութիւն ինքզինք անկախ կը կարծէր: Կիպրիանոսեան միաբանութիւնը, օրինակ, երբորդ դարու սկիզբները ինքզինք յայտարարեց բացարձակ անկախ մի միաբանութիւն: Ասոր վրայ իբարու յաջորդող խորհրդաժողովները, նկատի առնելով որ իբարմէ անկախ միաբանութիւնները ընդհանուր, ներդաշնակ եւ միաձեւ գործունէութիւն յառաջացնելէ հետո խաչաձևումներու գուռ կը բանան, ընդունեցին մեծամասնութեան գերակայութեան սկզբունքը: Ասով մեծամասնութեան որոշումները դարձան օրէնք բոլոր ներկայացող միաբան-

ութեանց համար եւ բոլոր միաբանութիւնները որոշեցին ձուլուիլ մէկ մարմնոյ մէջ որպէս միատարր ամբողջութիւն:

Այսպէսով ծնաւ կաթոլիկ եկեղեցին(\*): Այն միաբանութիւնները որ կը մերժեն համակերպիլ խորհրդաժողովներու որոշումներուն կ'արտաքսուին կաթոլիկ եկեղեցոյ կազմակերպութենէն, ինչ որ կը նշանակէր արտաքսուիլ կեղրոնական մարմինէն:

Համաձայն այս օրէնքին, ուրեմն, անհատ մը որ իր միաբանութենէն կ'արտաքսուէր, այլեւս ուրիշ միաբանութեան մէջ չէր կրնար մտնել. ան արտաքսուած կ'ըլլար բոլոր միաբանութիւններէն. իսկ արտաքսումի կամ բանազրանքի հետեւանքը այժմ կը դառնար շատ դժան ու խիստ:

Կազմակերպութեան նպատակներուն հակառակող անդամներու արտաքսման իրաւունքը կարելի էր եկեղեցիէն խլել, քանի որ այդ եկեղեցին կազմակերպութիւն մըն էր որ իրեն միացուցեր էր պետութեան մէջ գոյութիւն ունեցող բոլոր կուսակցութիւններն ու կազմակերպութիւնները եւ անոնց հետ կը հետապնդէր որոշ նըպատակ մը որ նոյնացեր էր պետութեան հետապնդած նպատակին հետ: Ան այդ նպատակին չէր կրնար հասնիլ, եթէ իրեն հակառակող անդամները արտաքսուելու իրաւունքէն հրաժարէր:

Եկեղեցին երբ դարձաւ ամբողջ պետութիւնը իր մէջ առնող կազմակերպութիւն մը, ոչ միայն սուանձին պետութիւն էր, այլևս ամբողջ եւրոպական հասարակութիւնը անոր զանազան մասերու բաղկացուցիչ արդերով իր մէջը առնող պետութիւն էր: Եկեղեցիէն արտաքսումը, ուրեմն, կը նշանակէր արտաքսում ամբողջ մարդկային հասարակութենէն: Դա արդէն մահափճիւ էր:

Պետութեան մը մէջ որեւէ կազմակերպութիւն իրաւունք ունի իր մէջէն վտարելու այն անդամները որոնք իր սկզբունքներուն հակառակ են: Դա անհրաժեշտ է գործօն եւ արդիւնաւոր քաղաքական կեանքի զարգացման համար: Բայց երբ պետութիւնը ինքը կամ պետական բնակչութեան մեծամասնութիւնը ներկայացնող կազմակերպութիւն մը, փոխանակ պետութեան զանազան կուսակցութիւնները օգտագործելու, իր մասին տարբեր կարծիք ունեցողները կը դատապարտէ, անկարելի կը դարձնէ երկրի քաղաքական կեանքն ու

(\*) Կաթոլիկ (Catholic) բառը կազմուած է kata եւ holos բառերէն: Kata նախդիրը կը նշանակէ վերաբերող, մէջը առնող: Holos կը նշանակէ ամբողջը: Ուրեմն կաթոլիկ կը նշանակէ եկեղեցի մը որ ամբողջը իր մէջ առնող է:



զարգացումը: Բայց անիմատտ է պահանջել զանազան քաղաքական կուսակցություններէն որ կազմակերպութեան մը բոլոր անդամները կարծիքի նոյն ազատութիւնը ունենան ինչ որ դեմոկրատիկ կուսակցութիւն մը իրաւունք ունի պահանջել պետութենէն: Կուսակցութիւն մը երբ կը հանդուրժէ հակառակ կարծիքներու գոյութեան իր շարքերուն մէջ, կուսակցութիւն ըլլալէ կը դադրի: Բայց պետութիւնը երբ կը դատապարտէ որոշ տեսութիւններ ինքնին կ'ըլլայ կուսակցութիւն մը: Դեմոկրատին պէտք է պահանջէ որ ոչ թէ կուսակցութիւնները դադրին կուսակցութիւն ըլլալէ, այլ պետութիւնը դադրի կուսակցութիւն ըլլալէ:

Դեմոկրատական տեսակէտով առարկութիւն չկայ, երբ եկեղեցին իրրեւ կուսակցութիւն կը բանադրէ իր մէկ անդամը որ իր սկզբունքները կը մերժէ: Երբ պետութիւնը եկեղեցւոյ կողմը չանցնիր, կամ անոր հետ չի նոյնանար, դեմոկրատին չի կրնար պահանջել որ եկեղեցին, ինչպէս ուրիշ կուսակցութիւն, իր սկզբունքները մերժողները իր ծոցը պահէ: Իսկ եթէ պետութիւնը ինք եկեղեցին կը ներկայացնէ, այն ատեն եկեղեցական դեմոկրատի քաղաքականութիւն մը պէտք է որդեգրուի, որը ինքնին կ'իտամիջոց մըն է անհաւատներուն ներողամիտ աչքով նայելու համար:

Մինչ չէ կարելի առարկել եկեղեցւոյ բանադրանքին, նախքան անոր պետական եկեղեցի ըլլալը, շատ բան կարելի է ըսել բանադրանքի գործադրութեան մեթոտին ու իրաւունքին շուրջ: Որովհետեւ ոչ թէ մասսաներու կողմէ կը լինի այդ բանադրանքը, այլ եկեղեցական բիւրոկրատիայի կողմէ: Այս ձեւով անհատները որքան շատ կը վնասուին, նոյնքան կը բարձրանայ այդ բիւրոկրատի իշխանութիւնը, ի մասնաւորի եպիսկոպոսին իշխանութիւնը:

Այս վերջնոյն իշխանութիւնը կ'աւելնայ նաեւ այն իրողութեամբ որ նա եղած է իր միաբանութեան պատգամաւորը եկեղեցական ընդհանրական ժողովին: Իսկ եպիսկոպոսի իշխանութիւնը կը սկսի հենց եպիսկոպոսաց խորհուրդին հետ, նախ քան ընդհանրական ժողովը:

Եպիսկոպոսի վայելած պրետիմն ու հեղինակութիւնը որ կ'ապուած էր միաբանութեան հիմնադրամը գործածելուն եւ վարչական, դատական եւ պրոպագանտի ամբողջ կառավարող վարչութիւնները ընտրելուն հետ, մէկ խօսքով միաբանութեան բիւրոկրատական ապարատը ընտրելուն հետ շատ բան կը պարտէր կաթոլիկ եկեղեցւոյ ունեցած հեղինակութեան որ որպէս ամբողջութիւն վեր առած՝ ենթակայ չէր անոր մէկ մասին, մէկ անջատ միաբանութեան: Եպիսկոպոսը կը մօտենար միաբանութեան իրեն ետեւ

ունենալով եկեղեցւոյ հեղինակութիւնը: Երբ ամբողջ եկեղեցիի կազմակերպութիւնը դարձաւ աւելի եւ աւելի ամուր եւ ուժեղ, միաբանութիւնները անգոր դարձան հակառակելու եպիսկոպոսներուն, զոնէ այն պարագաներուն երբ եպիսկոպոսները կը ներկայացնէին իրենց պաշտօնակիցներու մեծամասնութեան ձգտումները: Եպիսկոպոսներու այս ընկերութիւնը ամբողջապէս ստանձնեց հասարակ հաւատացեալներու բաղմութեան իրաւունքը:

Եպիսկոպոսները սխալ չէին երբ կը հաւաստիացնէին որ իրենց հեղինակութիւնը կողար ստաքեալներէն եւ ինքզինքնին կը ներկայացնէին որպէս անոնց յաջորդները: Եպիսկոպոսները, ինչպէս իրենցմէ առաջ ստաքեալները, միջազգային գործակալներ էին, բոլոր միաբանութիւնները միացնող տարբերը. եւ այս իրողութիւնն էր որ անոնց տուած էր մեծ ազդեցութիւն եւ իշխանութիւն անջատ միաբանութեան վրայ:

Միաբանութեան նախնական դեմոկրատի վերջին մնացորդը, պէտք եղած պաշտօնեաներու ընտրութեան իրաւունքը, շուտով չքացաւ: Երբ եպիսկոպոսի անկախութիւնն ու իշխանութիւնը աւելցան իր հետեւորդներու թիւին հետ միաբանութեան մէջ, այլեւս իրեն համար զիւրին եղաւ միաբանութեան թելադրել ընտրելու իրեն ուղած անձը: Իրապէս եպիսկոպոսն էր որ կը լեցնէր պաշտօնատուները: Եպիսկոպոսի ընտրութիւնը տեղի կ'ունենար կղերականութեան կողմէ որոշուած լաւագոյն թեկնածուներու մէջէն: Կղերականները իրենք կ'ընտրէին եպիսկոպոսը. միաբանութեան անդամները կը վաւերացնէին կամ կը մերժէին: Այդ անոնց իրաւունքն էր: Բայց այդ եւս աստիճանաբար ձեւականութեան փոփոխեցաւ: Միաբանութիւնը ի վերջոյ վատասերուեցաւ եւ եղաւ սոսկ ծափողներու բաղմութիւն մը որ երբ կղերականութիւնը ընտրուած եպիսկոպոսը կը ներկայացնէր, անոնք ստիպուած էին շնորհաւորել եւ ծափահարել:

Այս կը նշանակէր միաբանութեան դեմոկրատական կազմակերպութեան վերջնական կործանումը, բացարձակ իշխանութիւնը սալով կղերականութեան, ամբողջացնելով «Աստուծոյ խոնարհ ծառաներու» կերպարանափոխութիւնը իրենց բացարձակ իշխանին:

Միաբանութեան սեփականութիւնը գործնականորէն դարձաւ եւ եղաւ վարիչներու սեփականութիւնը, անշուշտ ոչ անոնց անձնական սեփականութիւնը, այլ բիւրոկրատ մարմնի սեփականութիւնը: Այս փոխանցումին օժանդակեց պետութիւնը Գ. դարուն կրբ ան քրիստոնէութիւնը ճանաչուաւ պաշտօնապէս: Բայց միւս կողմէ կաթոլիկ եկեղեցւոյ ճանաչումը կայսրերու կողմէ հետեւանքն



էր եկեղեցական բիւրոկրատիի իշխանութեան անձան եւ եպիսկոպոսի բացարձակ իշխանութեան բարձրացման նոյն այդ բիւրոկրատիին մէջ :

Որքան ատեն որ եկեղեցին դեմոկրատիկ կազմակերպութիւն էր, բացարձակօրէն հակառակ էր հոռոմէական բացարձակապետութեան. ի վերջոյ երբ եպիսկոպոսական բիւրոկրատին եկաւ իշխել եւ շահագործել ժողովուրդը, ան դարձաւ կայսերական իշխանութեան գործիքը. եւ այդ կայսերական իշխանութիւնը ստիպուած էր նկատի առնել եկեղեցին եւ համաձայնիլ անոր հետ. այլապէս նա կը մեծնար արդէն իր դիւտուն վրայէն: Կայսերական դահլը բարձրանալ ուղղները որոնք քաղաքացիական պատերազմներու պատճառ եղան, եթէ չզաւնակցէին կղերականութեան հետ չէին յաջողեր, ինչպէս եղաւ Կոստանդին կայսրը:

Եպիսկոպոսը այժմ եղաւ տէր, կայսրութեան իշխողը կայսրերու կողքին: Կայսրերը յաճախ եպիսկոպոսներու ժողովին կը նախագահէին եւ նոյն ատեն անոնց կը տրամադրէին իրենց իշխանութիւնը, անոնց որոշումներն ու բանադրանքները գործադրելու համար: Նոյն ատեն եկեղեցին տիրացաւ օրինական հիմնարկութեան իրաւունքին պահելու եւ գործադրելու ժառանգութեան օրէնքը: Ասով անոր արտօժակը բացուեցաւ կուսակերտ անասճման հարստութիւն:

Այսպիսով երբեմնի պրոլետարական կազմակերպութիւնը, դաւադրական կոմունիզմը նկնուկ դարձաւ բացարձակապետութեան ու շահագործումի, նոր աղբիւր մը նոր տեսակի իշխանութեան ու նոր շահագործումի:

Յազթական քրիստոնէայ միաբանութիւնը ամէն կերպով հակառակ ուղի բռնեց այն միաբանութեան որ հաստատուած էր երեք դար առաջ խեղճ դալիլիսացի ձկնորսի մը կողմէ եւ երուսաղէմի պրոլետարներու եւ զիւղացիներու աջակցութեամբ: Սաչեցեալ մեսիան ամէնէն ամուր սիւնը դարձաւ վատթարացած ու արխրահոյսակ այն հասարակութեան որուն ամբողջական կործանումը մեսիական միաբանութիւնը կը սպասէր որ իրենց մեսիան պիտի իրագործէր:

ե) ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Կաթոլիկ եկեղեցին երբ պետութեան կողմէ ճանչցուեցաւ եւ նախնական մեսիական միաբանութեան ուղղութիւնը քուեցաւ հակառակ ուղղութեան, ասիկա խաղաղ միջոցներով չիրականացաւ,

առանց դիմադրութեան ու կռիւի չեղաւ: Ընկերային պայմանները որոնք նախնական քրիստոնէաներու դեմոկրատիկ կոմունիզմը երեւան բերին եւ շարունակեցին իրենց գոյութիւնը, երբ կայսրութիւնը սկսաւ լուծուիլ, անոնք աւելի չափազանցութեան դացին եւ աւելի նեղիչ դարձան: Մենք տեսանք թէ բողոքի ձայներ սկսան լսուիլ ամէն կողմէ երբ նորութիւններ ներմուծուիլ սկսան միաբանութեան մէջ: Բայց երբ նորութիւնները տիրող դարձան եւ պաշտօնական եկեղեցին այլեւս չէր հանդուրժեր միաբանութեան մէջ ուրիշ տեսութեանց, նոր դեմոկրատական եւ կոմունիստական ազանդներ կրկին եւ կրկին երեւան եկան կաթոլիկ եկեղեցւոյ կողքին: Այսպէս, օրինակ, Կոստանդին կայսրը երբ ճանչցաւ եկեղեցին, թափառականներու ազանդը տարածուեցաւ Հիւսիս. Ափրիկէի մէջ. մտային յափշտակութեամբ տարուած մուրացիկներ որ թափառաւրջիկներու պայքարը սաստկացուցին պետական եկեղեցիին դէմ, պետութեան դէմ, քարոզելով թշնամութիւն հարուստներու եւ իշխանաւորներու դէմ: Ինչպէս Քրիստոսի ատեն Գալիլիոյ մէջ նոյնպէս Հիւսիս. Ափրիկէի մէջ Գ. դարուն զիւղական բնակչութիւնը ոտքի ելաւ իր հարստահարիչներուն դէմ, կազմուեցան սպասակային խումբեր այդ անհանգստութիւնները արտայայտող, ինչպէս զիւղներն էին, կամ ինչպէս Յիսուսի առաջին հետեւորդներն էին: Սոյն թափառականները կազմեցին այդ խումբերը ճշնչուածներու ազատութեան համար: Մայրաքիղ եռանդով ու քաջութեամբ անոնք կռուեցան կայսերական զօրքերուն դէմ, որոնք կաթոլիկ կղերականութեան հետ ձեռք ձեռքի վերջ տուին ապստամբական շարժումներուն որոնք տեսցին տասնեակ տարիներ: Բայց ապստամբներու ջանքերը ձախողեցան, ինչպէս ձախողեցան եկեղեցւոյ մէջ կոմունիզմ ներմուծելու խաղաղ կամ բռնի միջոցները: Անոնք բոլորը պարտուեցան նոյն պատճառներէն, ինչ որ վիճակեցաւ նախնական կոմունիզմին որ տարուեցաւ իր հակոտնէութեան. պատճառները որոնք գոյութիւն ունէին նոյն արդիւնքը առաջացնող իրերուն հետ: Թշուառութեան բերումով երբ ապստամբական շարժում առաջացաւ նոյն ատեն աւելցան նաեւ եկեղեցւոյ եկամուտները. ասով եկեղեցին կարող եղաւ աճող պրոլետարիատը առնել իր հովանիին տակ ողորմասիրական հաստատութեանց միջոցով, եւ պրոլետարիատը կախուած մնաց կղերականութենէն որ անոր մէջի բարձր ու բոժոստ դադափարները հետզհետէ մարեցուց եւ սպականեց:

Երբ եկեղեցին պետական դարձաւ եւ եղաւ պատմութեան մէջ նմանը շոտենուած բացարձակապետութեան մը գործիքը, ա-



ւելի ուժեղ եւ ահարկու, եկաւ կոմունիստական բոլոր ձգտումները շղթայել, թէեւ անոնք պետական եկեղեցւոյ կողքին նոր ուժ ստացան:

Մինչեւ պետութեան կողմէ եկեղեցւոյ ճանաչումը, քրիստոնեայ միաբանութեան տարածումը սահմանուած էր խոշոր քաղաքներու մէջ: Գաւառներու մէջ զազանի բնկերութիւններ չէին կրնար իրենց գոյութիւնը պահել առանց բնակչութեան մեծ մասի համակրութեան, որովհետեւ մարդիկը շուտով կը ճանչցուէին, փոքրամասնութիւն կազմող կազմակերպութիւն մը շատ դժուարութեան կը հանդիպէր, ինչպէս տեսանք քրիստոնէական շարժման սկիզբին: Գաւառներու մէջ այդ դժուարութիւնները վերցուեցան երբ քրիստոնէութիւնը հասարակութեան ընդգրկմանը շարժում ըլլալէ զազրեցաւ եւ եղաւ պետական կրօնք: Ամբողջ երեք դար զբեթէ քրիստոնէութիւնը բացառապէս քաղաքային կրօնք էր: Պետական կրօնք ճանչցուելէն վերջ անիկա եղաւ նաեւ գիւղացիներու կրօնքը:

Քրիստոնէութեան հետ անոր կոմունիստական ձգտումները արշաւեցին գաւառները ուր անոնք աւելի նպաստաւոր աճման հող գտան քան քաղաքներու մէջ, ինչպէս եսսէնիզմը: Վերջինը անմիջապէս նոր կեանք ստացաւ քրիստոնէութեան շունչով, անմիջապէս երբ կոմունիստական կազմակերպութեանց ազատ դործունէութեան կարելիութիւններ չնորհուեցան: Քրիստոնէական կոմունիստական հաստատութիւնները եկեղեցւոյ պետական ճանաչումէն յետոյ, Դ. դարուն սկիզբները երեւան եկան վանական միաբանութեանց միջոցով, որոնք նախ հաստատուեցան Եզիպատսի մէջ, ապա տարածուեցան ուրիշ տեղեր:

Այս ձեւի կոմունիզմը շուտով թոյլատրուեցաւ եկեղեցակալութեան եւ ընդհանուր իշխանութեան կողմէ, ինչպէս այդ եղաւ Ամերիկայի մէջ Օվէններու եւ Ֆուրբիէրներու ձեռքով ԺԹ. դարուն, որովհետեւ ատով կոմունիստական գործակալները կ'անջատուէին ու ամայութեան մէջ իրենց մեկուսացեալ կեանքը կը շարունակէին մշակութեամբ: Ասոր համար եզիպատացի գիւղացի Անտոնին մեծ յաջողութիւն ունեցաւ Եզիպատսի մէջ վանական հաստատութիւններ հիմնելով: Բայց վանականներու կոմունիստական փորձարկութիւնները իրենց լրումին չհասան եւ երկար ալ չտեսեցին: Այդ գործին յաջողութիւնը իր սկզբնական շրջանին եւ ճախողութիւնը վերջէն զինք կրնային կապել կրօնքի հետ, այլ նիւթական հանգամանքներու հետ:

Որպէս հակադրութիւն խոշոր քաղաքներու նախնական քրիստոնէութեան կոմունիստական փորձարկութեանց, վանական հիմնարկութիւնները, ինչպէս նաեւ ամայի տեղերու մէջ կոմունիստական գաղութները այն առաւելութիւնը ունէին ինչ որ երկրագործութիւնը կը պահանջէր. Ֆարմի եւ ընտանիքի բաղադրութիւնը եւ մեծ աստիճանի երկրագործութիւնը ատով ոչ միայն կարելի դարձան, այլև հասան օրինակի դրութեան բարձր աստիճանի զարգացման, խոշոր կարուածատէրերու մօտ: Այս օրինակ դրութեան մեծ աստիճանի գործողութիւնը, սակայն, հիմնուած էր ստրկատիրութեան վրայ: Գերետիրութիւնը ինքնին արտադրողականութեան սահման մը կը դնէր, ինչպէս սահման մը կը դնէր իր գոյութեան ալ: Գերիներու հայթայթման աղբիւրը երբ ցամաքեցաւ, խոշոր հողատիրութիւնն ալ չբացաւ: Վանական հաստատութիւնները խոշոր հողատիրութեանց տեղ անցան: Անոնք գերիներուն տեղը ունեցան վանքի ազատ անդամները: Հասարակութեան ընդհանուր քայքայուածութեան հետ գույրնթաց վանական հաստատութիւնները դարձան այն միակ տեղերը ուր նեխած կայսրութեան մէջ հին տեխնիկներու մնացորդները գեռ կը պահպանուէին գաղթի փոթորկալի շրջանի ընթացքին եւ նոյնիսկ այդ մնացորդներն ալ կը կատարելագործուէին մի շարք կէտերով:

Բացի արեւելքի աղղեցութենէն, ի մասնաւորի արարներէն, վանական հաստատութիւնները այն կէտերը եղան որոնցմէ քաղաքակրթութիւնը սկսաւ դարձեալ աճիլ Եւրոպայի մէջ Միջին Դարու ընթացքին:

Վանականութեան արտադրութեան կօօպերատիւ եղանակը սքանչելիօրէն կը յարմարէր գիւղական արտադրութեան պայմաններուն հին դարու վերջին շրջանէն մինչեւ Միջին Դարու սկիզբին: Ասով կը բացատրուի անոր յաջողութիւնը: Քաղաքներու մէջ, միւս կողմէ, արտադրութեան պայմանները հակառակ էին կօօպերատիւ աշխատանքին եւ կոմունիզմը հոն կրնար գոյութիւն ունենալ միմիայն սպառման կոմունիզմի ձեւով, մինչդեռ արտադրութեան ձեւն է ոչ թէ բաշխումի կամ սպառման ձեւը որ կ'որոշէ ընկերային յարաբերութեանց վերջին վերլուծման բնութագիրը: Միայն գիւղական շրջանին վանական հաստատութեանց մէջ էր որ սպառման հասարակայնութիւնը, սկզբնապէս քրիստոնէութեան կողմէ որդեգրուած, ստացաւ մնայուն հիմք մը արտադրութեան հասարակաբնացման ճամբուն վրայ: Այս հիմքով եսսէններու եզրայրութիւնը ծաղկեցաւ մի քանի դարեր եւ ի վերջոյ կործանեցաւ հրէական հասարակութեան յանկարծակի բնաջնջումով, ոչ թէ ներքին պատ-



ճառներու բերումով: Արտադրութեան հասարակայնացման վրայ էր որ քրիստոնէական վանականութեան հսկայ կառուցուածքը երեւան եկաւ եւ իր գոյութիւնը պահեց մինչեւ մեր օրերը:

Հին առն, ինչպէս եւ Միջին Դարուն, ժողովրդական գանդուածներուն մէջ կարիքներու անհաստեանացման հետք չկար: Բոլորին կարիքները նոյնատեսակ էին. միայն հարուստներու մէջ կար կարիքներու գանդանութիւն եւ անհաստեանութիւն: Ասոր հետեւանքով վանական կոմունիզմը արդելքի չհանդիպեցաւ եւ ծաղկեցաւ քանի որ իր արտադրութեան ձեւը շնորհիւ իր ստեղծած անտեսական գերակայութեան կը գերազանցէր տիրող հասարակական հին ձեւը: Բիֆիւնոս (345-410) որ վանք մը հիմնեց Ձիթինեաց լեռան վրայ Երուսաղէմի մօտ 377 թուին կը հաւատէ թէ Եղիստոսի գիւղական շրջաններու վանքերուն մէջ շատ աւելի մարդիկ կը բնակէին քան թէ քաղաքներու մէջ: Անշուշտ անոր ներկայացուցածը երեւակայական պատկեր մըն է, բայց ինչ ալ որ ըլլայ տարակոյս չկայ որ մի շարք վանականներ եւ մայրապետներ արտաքոյ կարգի էակներ կ'երկնային:

Այսպէսով վանական դրութիւնը քրիստոնէութեան մէջ կոմունիստական եռանդոտ կեանքի նոր ճամբայ մը բացաւ, որը հերձուածողական հակառակութեան գոյն չունէր եկեղեցական բիրտկրասիի հանդէպ, այլ տեսակով մը ենթարկուեալ էր անոր:

Բայց այս ձեւ քրիստոնեայ կոմունիզմը հասարակութեան ընդհանուր ձեւը չէր կրնար առնել, այլ սահմանուած էր որոշ խաւերուն մէջ: Ատոր համար նոր կոմունիզմը անհրաժեշտաբար նորէն զնալու էր իր հակոտնեային եթէ կը հասնէր իր անտեսական գերակայութեան: Ասով երեւան եկաւ արիստոկրատին, գերիշխողը մնացեալ բնակչութեան եւ զարձաւ իշխող եւ շահագործող գասակարգ մը:

Վանական կոմունիզմը չէր կրնար հասարակութեան ընդհանրական ձեւը առնել, որովհետեւ ան իր հիմքը հաստատած էր հասարակաց անալարութեան վրայ, ուր կը մերժուէր ամուսնութիւնը, ինչպէս եստէները բրած էին, ինչպէս կրօնական կոմունիստական գաղութներն բրած էին Հիւսիս. Ամերիկայի մէջ ԺԹ. դարուն: Հասարակաց անալարութեանց ծաղկումն ու բարգաւաճումը կը պահանջէր անհաստեան ամուսնութենէ հրաժարում, մի տեսակ համայնական ամուսնութիւն: Բայց այս ձեւի սեռային յարաբերութիւնները կը հակասէին ընդհանուր ընկերային զգացումներուն նոյնիսկ Միջին Դարու վերջերը, եւ անոնք չէին ճանչցուեր որպէս բնականոն գործնականացում եւ հասարակութեան կողմէ

իրագործելի: Ընդհանուր առմամբ այս շրջանը յատկանշական է այն բանով որ տեղի ունեցաւ զգացումներու անկում որ յառաջացուց ժուժկալութիւն ամէն մի վայելքէ, որպէս միակ բնական լուծում ընկերային շարիքներու, որոնցմէ զատ ան ծաղկեպսակ մը կը շինէր անոնց համար որոնք այդպիսի ժուժկալութիւն մը կը գործադրէին: Բայց ամուրիութեան փորձարկումը վանականութեան գաղափարը փութացուց երբ ան մնաց փոքրամասնութեան սահմանին մէջ: Այս փոքրամասնութիւնը կրնար ածիլ, ինչպէս Բիֆիւնոսը կը ցուցնէ, բայց նոյնիսկ Բիֆիւնոս յայտնի չափազանցութիւն չի համարձակիր ներկայացնել վանական բնակչութիւնը որպէս մեծամասնութիւն: Եւ եղիստոսիներու վանական եռանդը Բիֆիւնոսի օրերուն չուսով նուազեցաւ:

Վանականութիւնը երբ տեսական եւ հաստատուն եղաւ, անոր հարստութիւնն ալ շատցաւ: Վանական ճարտարարուեստի արտադրոյթները թէ որակաւոր էին եւ թէ աժան: Անոնք կ'արտադրէին թէ ուտելիք եւ թէ հում նիւթ: Գործաւորները աւելի եռանդով կը գործէին վանքին համար քան գերիները հողատիրոջ համար, որովհետեւ գիւղէն թէ գործը իրենցն էր: Ասկէ զատ վանքը որակաւոր գործաւորներ ունէր աշխատանքի բաժանման դրութեամբ: Վանքը ժամանակաւոր հաստատութիւն չէր, այլ յաւիտենական: Գիտերը եւ գործի զաղտնիքները անհատի սեփականութիւնը չէին, մէկու մը մեռնելուն հետ այդ գաղտնիքը չէր կորսուեր, կը փոխանցուէր շուտով ուրիշին: Յետոյ ժառանգութեան խնդիր ալ չկար, սեփականութեան բաժանման վտանգ չկար, ժառանգորդներ չկային:

Այսպէս աճեցաւ վանքի հարստութիւնը եւ յետոյ վանական հաստատութիւնները բոլորը միացան մէկ գլուխի տակ կամ վանականներու խորհուրդին տակ: Անիջապէս երբ վանքերը հարստացան եւ ուժեղացան, նոյն իրերու ընթացքը հետեւեցաւ անոնց, ինչ որ էին կոմունիստական կազմակերպութիւնները սահմանափակ շրջանակի մը մէջ: Արտադրութեան տէրերը այլեւս չէին գործեր իրենք, այլ ուրիշներ կը գործէին իրենց համար եւ անոնք էին անկուտի վարձու բանուորներ, գերիներ եւ ճորտեր:

Վանական դրութիւնը իր սկզբնաւորութեան մէջ մինչ նոր կեանք մը շնորհեց քրիստոնէութեան կոմունիստական եռանդին, բայց վերջ ի վերջոյ եկեղեցւոյ կղերին ճամբան բռնեց. դարձաւ շահագործման եւ իշխանութեան կազմակերպութիւն: Բայց սխալ է բնէ թէ վանական կազմակերպութիւնները եկեղեցւոյ իշխաններուն, եպիսկոպոսներուն կոյր գործիքները չէին: Տնտեսապէս ա-



նոնցմէ անկախ, հարստութեամբ անոնց հաւասար, անոնց նման իրենք ալ միջազգային: Վանականները նոյնիսկ եպիսկոպոսներուն կը հակառակէին երբ ուրիշ ոչ ոք չէր համարձակեր այդ ընել: Այդպէսով անոնք քչիկ մը մեղմացուցին եպիսկոպոսներու բացարձակապետութիւնը, թէեւ աս ալ ի վերջոյ աւելի հակառակ արդիւնք տուաւ, որովհետեւ անկէ յետոյ եկաւ պապի իշխանութիւնը: Եկեղեցին երբ բաժնուեցաւ երկուքի, արեւելքի եւ արեւմուտքի, կայսրը՝ գերիշխող լորտը դարձաւ արեւելքի եպիսկոպոսներուն: Արեւմտեան եկեղեցին պետական հեղինակութիւն չունէր հակոզի դերով որ անցնէր բոլոր եկեղեցիներուն: Ատոր համար Հռովմի եպիսկոպոսը նախապատուութիւն ստացաւ արեւմտեան եկեղեցիին վրայ, որովհետեւ Հռովմը առաքելներու նախնական քաղաքն էր եւ Հռովմի թեմը ամէնէն մեծն էր ու հարուստը: Այս նախապատուութիւնը դարերու ընթացքին փոխուեցաւ իշխանութեան: Երբ բացարձակ պետութիւնը նոր դարուն դարգացաւ դասակարգային կռիւն, աւատական ազնուականութեան եւ բուրժուազիայի միջեւ, այնպէս ալ պապի բացարձակ միապետութիւնը դարգացաւ դասակարգային կռիւն, եպիսկոպոսներու արխատկրասիին եւ վանական խոշոր ճարտարարուեստներու տէրերուն, վանահայրերուն միջեւ: Պապականութեան իշխանութեան ամբողջումով եկեղեցւոյ զարգացման բարձրութեան ընթացքը իր գազաթնակէտին հասաւ: Անկէ յետոյ թէ պետութեան եւ թէ հասարակութեան շրջանառութեան ընթացքին մէկուն կամ միւսին պարտութիւնը նպաստեց եկեղեցիին. ամէն տեսակի դարգացում եկեղեցւոյ դէմ էր եւ եկեղեցին ինքը ամէն տեսակի դարգացման դէմ էր: Ասով՝ անիկա դարձաւ տարապայմանորէն յետադիմական, հակա-ընկերային հաստատութիւն: Եկեղեցին սկիզբները շատ մեծ դործեր կատարեց բայց խաշակրաց արշաւանքէն յետոյ որեւէ օգուտ չտուաւ մարդկային սեռին: Անիկա կոմունիզմէն ծնաւ բայց կոմունիզմի մեծագոյն թշնամին դարձաւ: Այժմ քննեմք թէ մեր ըմբռնած կոմունիզմն ալ օրին մէկը եկեղեցւոյ նման իշխանութեան եւ շահագործման դործիք պիտի չզառնա՞յ:

**ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ**

Մենք տեսանք որ քրիստոնէութիւնը իր յաղթանակը չկրցաւ ապահովել մինչեւ որ իր սկզբնական ուղեգծին հակառակ ընթացքի հետեւեցաւ: Որ քրիստոնէութեան յաղթանակը պրոլետարական յաղթանակ չէր, այլ կղերականութեան յաղթանակը պրոլետարիա-

տին վրայ, որ քրիստոնէութիւնը որպէս զաւաղրական կազմակերպութիւն մը չէր որ յաղթական եղաւ այլ պահպանողական ուժ մը որ յետոյ վերածուեցաւ ճնշման ու շահագործման նեցուկի մը, որ ան ոչ միայն չջնջեց կայսերական իշխանութիւնը, ստրկութիւնը, թշուառութիւնը եւ հարստութեան կուսակումը փոքրաթիւ մարդոց մօտ, այլ յաւերժացուց անոնց ուռճացման պայմանները, ասոնք իրողութիւններ են որոնք ցցուած են մեր առջեւ մինչեւ ներկայ օրերը: Քրիստոնեայ կազմակերպութիւնը (եկեղեցին) յաղթանակը շահեցաւ պարզ անոր համար որ իր սկզբնական նպատակներէն հրաժարեցաւ եւ անոնց գլխովին հակառակ ուղին պաշտպանեց:

Արդարեւ, եթէ սոցիալիզմի յաղթանակն ալ նոյն ուղիով պիտի ընթանայ ինչ ուղիով որ ընթացաւ քրիստոնէութեան յաղթանակը, այն ատեն արդարացի է մերժել ոչ թէ յեղափոխութիւնը, այլ սոցիալիզմը եւ անարխիստները իրաւունք պիտի ունենան ավելի խստորէն դատապարտել մեր կուսակցութիւնը, պրոլետարական տեսակէտով: Ստուգիւ, եթէ բուրժուազիան փորձէ եւ սոցիալիստ տարրերը համաձայնին եւ սոցիալիստական նախարարական դահլիճ մը կազմեն եւ այդ դահլիճն ալ պետական եկեղեցւոյ դէմ կռուելու չափ զօրաւոր ըլլայ, այդ պարագային կ'ուժեղանայ կէս անիշխանական, կէս սոցիալիստական սենտիկալիզմը:

Բայց բարեբախտաբար քրիստոնէութեան եւ սոցիալիզմի միջեւ գուզահեռ մը նշանակելը հիմնովին անտեղի է այս տեսութեամբ: Քրիստոնէութիւնը ճիշդ է որ իր սկզբնական շրջանին ազատներու շարժումն էր, ինչպէս սոցիալիզմը, երկուքն ալ նոյն հասարակաց գետինը, նոյն տարրերը ունին ինչպէս յաճախակի պատահութիւն ունեցանք նշելու:

Ինչպէս ալ այս ուղղութեամբ նմանութեան եզրեր դաժմ է իր նախնական Քրիստոնէութեան Պատմութիւնը յողուածին մէջ, ուր կը գրէ.

«Նախնական քրիստոնէութեան պատմութիւնը մի շարք նրմանութեան եզրեր կը ներկայացնէ արդի բանուորական շարժման հետ: Վերջնոյն նման քրիստոնէութիւնը ճնշուածներու բնատիպ շարժումն էր, առաջին անգամ ան երեւցաւ որպէս կրօնը գերիմեծութիւն, ազատներու, խեղճերու, լքուածներու եւ այն ժողովուրդներուն որոնք հպատակ էին Հռովմի, կամ կը հալածուէին անկէ: Երկուքն ալ, քրիստոնէութիւնն ու սոցիալիզմը, կը քարոզեն ազատութիւն ստրկութենէ եւ թշուառութենէ. առաջինը այդ ազատութիւնը կը կապէ անդր-շիրիմեան, երկնային կեանքին, երկրորդը՝ այս աշխարհի մարդկային հասարակութեան տնտեսական, արմա-



տական փոխակերպումին: Երկուքն ալ հայածուած են ու դատապարտուած, երկուքին ալ հետեւորդները նկատուած են որպէս օրինազանց. երկուքն ալ ենթակայ եղած են մասնաւոր օրինական հետապնդման. մէկ կէտի մէջ, որպէս թշնամի մարդկային սեռին, միւս կէտին մէջ որպէս թշնամի աղղին, կրօնքին, ընտանիքին եւ ընկերային կարգ ու սարքին: Հսկանակ, սակայն, այդ հայածանքներուն, երկուքին ալ յառաջխաղացքը եղած է անդիմազբելի: Քրիստոնէութիւնը իր ծնունդ առած օրէն երեք զար մեքջ իր յաղթանակով ճանչցուեցաւ որպէս հոռոմէական կայսրութեան պետական կրօնքը, իսկ սոցիալիզմը ժողովրդական մաստնեբուն մէջ վաթսուն տարիներու ընթացքին կատարեց այնպիսի նուաճումներ որոնք ապահովարար կ'երաշխաւորեն անոր ապագայի յաղթանակը: Մեռաւ Փարիզի կոմունան, բայց կոմունիզմի յաղթութիւնը անտարակուսելի է»:

Էնդելսի նշած նմանութիւնը ուղիղ է մի քանի վերադասումներով: Քրիստոնէութիւնը զփութարաւ կարելի է կոչել ստրուկներու կրօնքը, որովհետեւ անկա ստրուկներու համար ոչինչ բքաւ: Միւս կողմէ քրիստոնէութեան յայտարարած թշուառութենէ ազատագրուածը ներթափանի իմաստով էր, կապուած էր երկրին, երկրային կեանքին, ոչ թէ երկինքին:

Եւ Էնդելս կը շարունակէ. «Ջուզահեռք այս երկու պատմական երեւոյթներուն, քրիստոնէութեան եւ սոցիալիզմի միջեւ յայտնի կ'ըլլայ նոյնիսկ Միջին Դարուն, ճնշուած զիւզացիներու ապստամբական հուժկու շարժումներով: Ռընան իրաւամբ նկատած է իր ատենին երբ բսած է. «Եթէ դուք կ'ուզէք գազապար մը կազմել առաջին քրիստոնեայ միաբանութեան մասին, մտէք բնուորներու միջազգային ընկերակցութեան տեղական մէկ հասուածին մէջ»:

Էնդելս նախնական քրիստոնէութեան եւ միջազգայնականի բազդատութիւնը կ'ընէ մանրամասնօրէն, բայց նկատի չառնեք երկուքին ալ դարդացման ընթացքը ուրիշ կը սկսի տարբերութիւնը: Ինչպէս քրիստոնէութիւնը նոյնպէս եւ բանուորներու միջազգայնականը երբ ուժեղացաւ անհրաժեշտ եղաւ պատկանեալ պաշտօնեաներու բնորութիւնը. նախագահութիւն, քարտուղարութիւն, գանձապահութիւն, թերթի խմբագրութիւն, պրօպականդիստ, կազմակերպիչ, եւայլն, մէկ խօսքով՝ մի տեսակ բիւրոկրատի: Այժմ հարց է թէ այս բիւրոկրատին ժամանակի ընթացքին արեստեղրատ դասակարգի պիտի չփոխուի՞ որ սկսի շահագործել բանուորները եւ իշխել անոնց վրայ ինչպէս այդ եղաւ քրիստոնէութեան մէջ: Այս

հարցման պատասխանն է ոչ, որովհետեւ քրիստոնէութեան եւ բանուորներու միջազգայնականութեան միջեւ հիմնական, խոր տարբերութիւններ կան:

Մասնաւորապէս այսօրուան պրօլետարիատը բուական տարբեր է քրիստոնէական նախնական շրջանի պրօլետարիատին: Մուրացիկներէ բաղկացած ազատ պրօլետարիատի աւանդական տեսութիւնը հաւանարար չափազանցութիւն է. միմիայն դերիները չէին գործողները. այս մուրացիկներն ալ յաճախակի կ'ենթարկուէին բռնադատեալ աշխատանքի: Բայց ճշմարիտ է նոյնպէս որ ստրկական աշխատանքն ալ ազականեց ազատ գործող պրօլետարները, որոնցմէ շատերը իրենց սեփական տուներուն մէջ կ'աշխատէին: Այդ ատեն աշխատող պրօլետարին եւ մուրացիկին երազն էր ապրիլ հարուստի քսակէն, ուրիշ խօսքով իրենց պէտք եղածները ստանալ զերիներու արտադրութիւններէն:

Քրիստոնէութիւնը, առաջին երեք դարերուն, բացառապէս քաղաքացիներու շարժում էր. բայլ քաղաքի պրօլետարները այդ ատեն հասարակութեան բաղկացուցիչ տարրերուն մէջ շատ քիչ նշանակութիւն ունէին: Անոնք կը ձգտէին ապրիլ հասարակութեան հաշույն առնոց սեւէ փոխարինութեան: Իրենց ազազայ գոյալիճակի տեսութեան մէջ գործելն ու արտադրելը մաս-բաժին չունէր: Այդպէս էին թէ ծոյլերը եւ թէ գործաւորները, որոնք չէին դար թէ հասարակութիւն բսուածը կազմողները իրենք էին եւ այդ հասարակութիւնը որուն արտադրողութեան հիմքը ամբողջապէս հնութեան զծին վրայ գրուած էր, կը հանգչէր իրենց ուսերուն վրայ:

Ատոր համար բնական էր որ հարուստներու հանդէպ աւանած տակութեան հակառակ, այդ մարդիկը կը մասծէին այդ հարուստներու շնորհը ստանալ եւ երբ եկեղեցական բիւրոկրատին քրիստոնեայ միաբանութեան վրայ հարուստ անգամներ ուղեց աւելցնել, միաբանութեան ստրկամիտ անդամները դիմադրութիւնը ցոյց չառնին:

Հոռոմէական կայսրութեան մէջ պրօլետարիատի անտեսական եւ բարոյական ներածութիւնը աւելի աճեցաւ հասարակութեան ընդհանուր ներածութեան հետեւանքով: Այդ հասարակութիւնը դարձաւ աւելի եւ աւելի թշուառ եւ աւելի յուսահատ, որովհետեւ արտադրողական ուժերը հեռոհեռէ կը նուազէին: Այդ անյուսութիւնը գրաւեց բոլոր դասակարգերը, անդամայուծեց անոնց նախաձեռնութեան ողին, այնպէս որ բոլորն ալ սկսան փրկութիւն մը սպասել զերբնական ուժերէն եւ կամ արտաստվոր հրաշագործ



այն մարդոցմէն որոնք գերրնական այդ ուժերու ներկայացուցիչները կը յայտարարէին իրենք զիրենք: Այսպէսով այդ ազէտ ու խաւարամիտ, յուսահատ մասսաները անօգնական զոհերը դարձան խարզախ, կախարդ ու արկածախնդիր մարդոց:

Որքան տարբեր է այժմու պրոլետարիատը. ան աշխատանքի պրոլետարիատն է որ զիսէ թէ ամբողջ հասարակութիւնը իր ստեղծագործող ուղեղին եւ իր հրաշագործ բազուկներուն վրայ հաստատուած է, անիկա դասակարգային խոր զիտակցութեան հասած յեղափոխական խմորով պրոլետարիատն է:

Կապիտալիստական արտադրողականութեան եղանակը արտադրութեան ծանրութեան կեդրոնը հետզհետէ պաւտոններէն կը փոխադրէ արդիւնաբերական կեդրոնները ուր ամէնէն աւելի գործուն է մտաւորական եւ քաղաքական կեանքը: Այս կեդրոններու բանուորները ամէնէն աշխոյժ եւ խմայական կարողութեամբ օժտուած, այժմ դարձեր են հասարակութեան ճակատադիրը անօրինող տարրերը:

Միեւնոյն ատեն, արտադրութեան տիրական ձեւը անհամեմատ չափերով կ'աւելցնէր արտադրողական ուժերը եւ այսպիսով կ'աւելցնէ հասարակութեան վրայ ունեցած բանուորներու պահանջները: Ասոր հետ մէկտեղ կ'աւելցնէ նաեւ անոնց ուժը այդ արդարացի պահանջները հետապնդելու մէջ: Այստեղ երազային զիծը կը վերնայ եւ կը սկսի գործնականութեան ուղին: Կեդրոնացեալ յոյսը, վստահութիւնը, դասակարգային ինքնազիտակցութիւնը յաղթութեան ներշնչումը կուտան բանուորներուն ինչպէս նոյն ներշնչումը տուին Միջին Դարու վերջերը նորածին բուրժուազիային, Ֆէոդալական-եկեղեցական տիրապետութեան ու շահագործումի շրջանները փշրելու եւ առաջ քաշելու իրենց ուժը գերաճող կապիտալին:

Քրիստոնէութեան ծագումը համընթաց եղաւ գեմոկրատի կործանումին: Իր վարդապետն էր ք դարերու ընթացքին, նախ քան իր ինքնութեան ընդհանրական ճանաչումը, նշանակալից են հետեւեալ իրողութիւնները. ամէն տեսակի ինքնազիտութեան մնացորդները յարատեւ քայքայման ճամբան բռնած էին եւ նոյնպէս արտադրողական ուժերը արագօրէն սկսեր էին վատասելի:

Այժմու բանուորական շարժումը, սակայն, ծնած է գեմոկրատի հուժկու յաղթանակի շրջանին, ըսենք Քրիստոնէական մեծ յեղափոխութեան վաղորդայինն: Այն մէկ դարը որ անոր յաջորդեց, կը տեսնենք որ կը ներկայացնէ գեմոկրատի յարատեւ յառաջադաջը արտադրողական ուժերու անհաւաստի աճումին հետ. եւ

ինչ ըսել որ ասոր կ'ընկերանայ պրոլետարիատի ուժին ու ազդեցութեան սահմաններու ընդարձակումն ու անոր դրութեան տէրը դառնալու բնական ձգտումը:

Եթէ ուշագրութեան ասնենք այս ակնբախ իրողութիւնը, այն ատեն այլեւս վախ չենք ունենար թէ նոր իշխողներ երեւան պիտի գան, որոնք իրենց իշխանութիւնը յաւերժացնելու համար հաշտուին հիներուն հետ եւ սկսին շահագործել բանուորները:

Հստակական կայսրութեան օրով մինչ պրոլետարիատի կրոււելու ուղին ու կարողութիւնը կը պակսէր, ներկայ հասարակութեան մէջ ընդհակառակը ան կ'աճի, դասակարգային ներհակութիւնը աւելի կ'ուժեղացնէ բանուորներու դասակարգային զիտակցութիւնը, այնպէս որ պրոլետարիատը սեւէ գնով չի զիջիր իր դատը, եթէ նոյնիսկ իր առաջնորդները կապիտալիստներէն մեծ շնորհներ ստանան եւ զինքը շուարումի մատնեն: Ատանկները որպէս դաւաճան կը վտարուին բանուորական շարժումէն:

Ասկէ զատ, ոչ միայն պրոլետարիատը եւ քաղաքական ու ընկերային պայմանները տարբեր են նախնական քրիստոնէական շրջանի պրոլետարիատէն ու այն ատենուան պայմաններէն, այլեւ կոմունիզմի իրականացման պայմաններն ալ տարբեր են հին, անգոյն կոմունիզմի իրականացման պայմաններէն:

Կոմունիզմի համար այս օրերու մղուած պայքարը զգացումներու կայուն չէ, այլ ընկերային հասունցած ուժերու պահանջին:

Հարստութեան կուտակումը փոքրաթիւ մարդկանց ձեռքին մէջ որ հոսումէական կայսրութեան շրջանին կը յառաջանար արտադրողական ուժերու նուազումին զուգընթաց, հարստութեան նոյն ձեւի կեդրոնացումը այսօր տեղի կ'ունենայ արտադրողական ուժերու հսկայական աստիճանի աճման հետ:

Բայց այժմու կոմունիզմը եթէ նոր մարդուն արտադրողական արդիական մեթոտներէն յառաջացած կարիքները պիտի գոհացնէ, անիկա պէտք է պահէ նաեւ սպառման անհատական ձեւը: Սպառման անհատական ձեւ ըսելով պէտք է հասկնալ անհատներու մէկըմէկէ անջատում ու կղզիացում, այլ հաճոյքներու այս կամ այն տեսակը ընտրելու ազատութիւն. սպառման ընդհանուր եղանակը կը մնայ ընկերային, որպէս ընկերային գործունէութեան համազումար:

Քրիստոնէութեան նախնական շրջանին քաղաքային բնակչութեան մեծ մասը ընկերային արտադրութեան ձեւերուն ծանօթ չէր. աղատ գործաւորներով խոշոր ձեռնարկութիւններ կարելի չէ ըսել թէ գոյութիւն ունէին քաղաքային արդիւնաբերութեան մէջ,



բայց անոնք ծանօթ էին սպառման ընկերային ձևերուն, մասնաւորապէս հասարակաց ճաշերուն, որոնք յաճախակի կը տրուէին միաբանութեան կամ պետութեան կողմէ:

Այսպէս, ուրեմն, կը տեսնենք թէ նախնական քրիստոնէական կոմունիզմը հարստութեան բաշխման կոմունիզմ էր, սպառման չափարկութեան կոմունիզմը, իսկ այժմու մեր հասկցած կոմունիզմը արտադրող աշխատաւորներու ձեռքին մէջ կեդրոնացնելն է արտադրութեան միջոցները եւ արտադրուած հարստութիւնը:

Նախնական քրիստոնէական կոմունիզմը պէտք չունեցաւ իր շրջանակը լայնցնել եւ անոր մէջ առնել սոմբողջ հասարակութիւնը, որպէսզի գայն իր լրութեան տանէր: Անոր գործունէութիւնը մնաց սահմանափակ շրջանակի մը մէջ. ատոր համար ան իր մշտական ձեւը չկրցաւ պահել, դասակարգերը չկրցաւ փոխել, եւ ընդհակառակը, նոր արխատկրատ դասակարգի մը ծնունդ տուաւ:

Բայց այժմու կոմունիզմը, նկատի առնելով արտադրութեան միջոցներու անսահման ընդարձակումը, արտադրութեան եղանակի ընկերային բնոյթը, ամէնէն կարելոյ հարստութեան առարկաներու արագ կեդրոնացումը, ամենաթեթեւ պատահութիւնն իսկ չունի փոքրիկ շրջանակով իրականութիւն դառնալու, երբ անդին կեցած է սոմբողջ հասարակութիւն մը, անընտել եւ հակասակ կոմունիզմին: Այդպիսի հասարակութեան մէջ սոցիալիստական գաղութներ կամ արտադրողական հօսպիտալներ հաստատելու փորձերը դատապարտուած են ձախողանքի: Գործաւորները միայն մէկ միջոցով կրնան կոմունիստական հասարակարգ հաստատել եւ փոխել հասարակութեան ընկերային կեանքը, երբ ունենան բաւական իշխանութիւն տրուած հասարակութիւնը խիստ հսկողութեան տակ առնելու: Այդ իշխանութիւնը պետական իշխանութիւնն է: Այժմու կոմունիզմը իրականացնելու համար, պրոլետարիատը երկրին քաղաքական մեքենան պիտի գրաւէ, այդ ալ բաւական չէ, ան այդ մեքենան պիտի փշրէ եւ պիտի շինէ իր սեփական պետական մեխանիզմը: Այդ մեխանիզմը կը կոչուի պրոլետարական դիկտատուրա: Այս է միակ պայմանը այժմեան կոմունիզմը հաստատելու համար:

Մինչեւ այն ատեն, երբ յեղափոխական պրոլետարիատը չէ հասեր այդ դիրքին, սոցիալիստական արտադրութեան մասին մտածել կարելի չէ: Նոյնիսկ եթէ պրոլետարիատը իշխանութեան գլուխը անցնի, զարձեւալ ընկերային արտադրութիւնը ծրագրուած ձեւով մէկ անգամէն երեւան չի դար, միայն տնտեսական զարգացումն է որ նոր փուլի մէջ կը մտնէ:

Որքան որ մենք կրնանք այժմու սոցիալիստական շարժման հետքերը որոնել, անկարելի է որ գտնենք երեւոյթ մը որ նմանութեան նոյն եզրը ունենայ քրիստոնէութեան հետքերուն հետ, երբ ան դարձաւ պետական կրօնք: Բայց ճշմարիտ է որ ներկայ պրոլետարական շարժումը դէպի իր յաղթանակը նոյն փուլերէն պիտի չանցնի ինչ փուլերէ որ անցաւ քրիստոնէութիւնը: Քրիստոնէութիւնը անձնատուութեամբ, պարտութեամբ յաղթանակեց, սոցիալիզմը ընկերային յեղափոխութեամբ պիտի յաղթանակէ. եւ դա պատմութեան վճիռն է:

Պրոլետարիատի յաղթական առաջնորդները, սակայն, այնքան բախտաւոր պիտի չըլլան, ինչպէս եղան Գ. դարու եպիսկոպոսները: Անոնց ճամբուն վրայ դիւրութիւններու կողքին կան հսկայ դժուարութիւններ:

Նախնական քրիստոնէական շրջանին դասակարգերը իրարմէ բաժնուած էին անանցանելի խրամատներով: Դրութիւնը նոյնը չէ այսօր: Կապիտալիզմը ինքն իր ձեռքով ստեղծած է այնպիսի պայմաններ, որոնց շնորհիւ դասակարգային խրամատները կամրջուած են: Կապիտալիստը արտադրութեան միջոցներու զարգացման եւ արտադրոյթներու սպառման հրամայականին հետ զուգընթաց հարկադրուած է զարգացնել հասարակութեան իրեն պիտանի շերտերը, որովհետեւ իրեն պէտք են իր բազմաճիւղ պետութեան համար պաշտօնական, արդիւնաբերութեան զանազան մարզերուն եւ վաճառականութեան համար գիւտարարներ, ինժինեքներ, մասնագէտներ, գրագիրներ, հաշուազէտներ, իր գաղափարախօսութիւնը ընդհանրացնելու եւ արժատացնելու համար՝ խմբագիրներ, դրագէտներ, վիզյասաններ, արուեստագէտներ, իր ժողովրդատիրութիւնը փաստելու համար բժիշկներ, հիւանդապահներ, զեղագործներ եւ իր հայրենիքը ներքին ու արտաքին թշնամիներէն պաշտպանելու համար՝ մարզուած զինուորներ ու զինուորական մասնագէտներ: Այստեղ դասակարգային անանցանելի խրամատները մեքենականորէն կը կամրջուին: Զուր տեղը չէ որ բուսած է թէ բուրժուական հանրապետութեան մէջ դասակարգեր չկան:

Այսպէս, ուրեմն, երբ պրոլետարիատը իշխանութեան գլուխ կ'անցնի, այլեւս գործ չունի հասարակութեան մը հետ որ տպէս է, որ ճերմակը սեւէն չի կրնար զանազանել, այլ հասարակութեան մը հետ որ գերազանցապէս զարգացած է, ունի ինքնաշարժ մեքենականութիւն, գործարաններ, հիմնարկութիւններ, հիւանդանոցներ, դպրոցներ, շահագործման գրուած հանքեր, վերջապէս ամէն ինչ որ քաղաքակրթութիւնը կը պահանջէ. իրեն կը մնայ դրու-



թիւնը փոխել, այսինքն արտագրութեան միջոցներու եւ անոնց արդիւնքին անհատական սեփականատիրութիւնը վերածել համայնականի, զասակարգերը վերցնել եւ հաստատել անդասակարգ հասարակուրդ: Բռնի ուժով դրութիւնը փոխելը գոնաւ չէ, ամէնէն գոնաւ մարդոց մտածողութիւնը, խորհելակերպը փոխելըն է, բան մը որ բռնութեան դործը չէ: Տիրող պրոլետարիատը ուրեմն պիտի մշակէ ու զարգացնէ պրոլետարական գրականութիւն, պրոլետարական արուեստ. որովհետեւ մէկ անգամէն կարելի չէ փոխել դարերու ժառանգ թողած անհատական սեփականատիրութեան մարդկային ես-ին հետ նոյնացած դրաւիչ համոզումը:

Ասիկէ կը սկսի գոնաւորութիւնը:

Բայց զեռ կան ուրիշ գոնաւորութիւններ:

Սոցիալիստ առաջնորդներու առջեւ ցցուած գոնաւորութիւնները երկու մասի կը բաժնուին. մին ներքին, միւսը արտաքին, երկուքն ալ զասակարգային ներհակութեան ծնունդ:

Իշխող զասակարգը, երբ իր գլխին հարուած ստանալով թաւալազուր ինկած է իր աթոռէն, չի կրնար նոյնանալ երկկուան գերի նկատած բանուորին հետ. նա պիտի աշխատի ներքին հակա-յեղափոխութիւն յառաջացնել: Պրոլետարական գիկտատուրան երբ ուժեղ է ու աննորոգ, նա չի կրնար յաջողութեան յոյս ունեւալ. ասոր համար պիտի զիմէ դուրսի օգնութեան: Եւ զբացի երկիրները քանի որ կապիտալիստական հիմնարկութեանց կառչած են, բնականաբար հաշտ աչքով չեն նայիր իրենց քթին սակ կերպարանափոխուած սոցիալիստական երկրին. անոնք ամէն կերպով պիտի աշխատին տապալել բանուորական կառավարութիւնը, պարզապէս արգիլելու համար իրենց երկրին մէջ պատրաստի վառելանիւթերու յեղափոխական բռնկումը: Եւ ահա յեղափոխութեան ներքին թշնամին կը դաշնակցի արտաքին թշնամին հետ:

Այստեղ ուրիշ վտանգ մըն ալ կը խմորուի, վտանգ մը սոցիալիստ կուսակցութեան մէջ: Այդ վտանգը բիւրոկրատական ապարատի կազմութիւնն է: Այդ վտանգը հեռացնելու համար սոցիալիստ կուսակցութիւնը պետական կուսակցութիւն պիտի չդառնայ. կուսակցութիւնը պետութիւն չէ եւ պետութիւնը կուսակցութիւն չէ: Կուսակցութիւնը պիտի մնայ իր առաջնորդողի դերին մէջ. նա յառաջադէմ բանուորները պիտի զնէ կառավարութեան գլուխը. օրէնսդիր եւ զործադիր մարմինները պիտի բաղկանան բանուորներէ եւ զիւղական աշխատաւորներէ:

Բայց ասիկա զեռ եւս կոմունիզմ չէ. դա կոմունիզմի առաջին սանդխամասն է, որովհետեւ երկրին մէջ տակաւին կան դա-

սակարգային անհաշտելի միտումներ. տակաւին կայ պետականութիւն, կայ զինուորականութիւն, եւ ասոնք զասակարգային դունաւորուած հաստատութիւններ են որոնց պէտքը կը շեշտէ կեանքը, այսինքն հակա-յեղափոխութեան վտանգը, որուն ներկայացուցիչն է դուրսի թշնամին, կապիտալիզմը:

Այս թշնամին ուսումնասիրած է հասարակութեան բոլոր խաւերու հոգեբանութիւնը եւ կը շարժի ըստ այնմ: Տնտեսական պոչքոթը մէկ կողմէ, ամբոխավարութիւնը միւս կողմէ անոր զէնքերն են: Պոչքոթով նա կ'աշխատի տնտեսական տաղնապ յառաջացնել, իսկ ամբոխավարութեամբ կը ձգտի ազէտ ու նախապաշարեալ կարծուած մասսաներու տրամադրութիւնը զրգռել: Ամբոխավարական զէնքերէն ամէնէն ուժեղը կրօնքն է: Հոս է որ քրիստոնէութիւնը օգնութեան կը հասնի հակա-յեղափոխութեան:

Սոցիալիզմի թշնամին բոլոր միջոցառումները երբ ձախողին, այս անգամ նա կը զիմէ խորամանկութեան՝ բերզը ներսէն զբաւելու նենգամտութեան, բարեկամութեան...:

Բուրժուազիան այս գեանին վրայ փոքր զիջումներ ցոյց կուտայ, խոշոր նուաճումներ ապահովելու համար: Եւ ահա սոցիալիստական մաքուր միջոցառումն մէջ աննկատելի կերպով կը մտնեն բուրժուական տարափոխիկ ախտերու մանրէները:

Սոցիալիստ կուսակցութիւնը այստեղ է որ խիստ աշաւուրջ պիտի լինի: Ոչ մէկ զիջում, ոչ մէկ պայմանադրականութիւն, մինչեւ որ կապիտալիզմը սպառէ իր ուժերը եւ ընդունի իր պարտութիւնը:

Այսպէս, ուրեմն, կը տեսնենք թէ սոցիալիզմը ոչ միայն իշխանութեան պիտի տիրանայ բոլորովին տարբեր միջոցներով քան ինչ որ ըրաւ քրիստոնէութիւնը, այլեւ ան պիտի յառաջացնէ հիմնականօրէն տարբեր արդիւնք, զասակարգերու վերացումով ջնջում զասակարգային տիրապետութեան:



ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ԳՈՐԾԱԻՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆՑ

ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Ե Ի

ԱՅԴ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ



ՈՒՐԻՇ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ





## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ



Օսպորն վարտի հեղինակութիւնը, **Ancient Lowly**, երկու ստուար հատորներով, սփանչելի եւ իր տեսակին մէջ իրապէս եզակի մի ուսումնասիրութիւն է որ մեզի կուտայ վաւերական տեղեկութիւններ գերետիրական շրջանի գործաւորական կազմակերպութեանց, գործաւորական շարժումներու եւ այդ շարժումներու հերոս առաջնորդներու գործունէութեանց շուրջ: Մեր գրքին այս երրորդ մասը ամփոփումն է վարտի հեղինակած այդ գործին:

Հեղինակի արտայայտած մտքերէն միայն մէկ կէտին համաձայն չենք, որ նա չընդունիր նախնական, շատ հին *հաճապետական կոմունիզմի* իրականութիւնը, այլ գաճազան հեղինակներու վկայութեանց մէջբերումով կը ջանայ փաստել որ դասակարգ եւ դասակարգային կռիւ գոյութիւն ունեցեր է հենց որ մարդկութիւնը երեւան եկեր է այս երկրագնդի վրայ, երբ կազմուած է *ընտանիքը*. բայց յարգելի հեղինակը կը մոռնայ որ *ընտանիքի* կազմութենէն տասնեակ դարեր առաջ մարդիկ եւ ցեղեր ապրեր են արդէն եւ ընտանիքի գաղափարը չեն ունեցեր: Մորկանի *Հին Հասարակութիւնը* եւ Էնգելսի *Ընտանիքի, Մասնաւոր Սեփականութեան եւ Պետութեան Մագումը*, այդ երկու անհնադատելի ուսումնասիրութիւնները պատմական իրողութեանց փաստարկումով կ'ապացուցանեն որ նահապետական կոմունիզմը եղած է ամէնէն հին հասարակական կազմակերպութիւնը, որու քայքայումէն յետոյ կազմուած է ընտանիքը, ապա եկած է անհատական սեփականութեան դրութիւնը եւ ի վերջոյ ի հանդէս եկած է պետութիւնը:

Յամենայն դէպս, վարտի յայտնաբերած այդ վիճելի կարծիքը իր հեղինակած երկասիրութեան արժէքը չի պակսեցներ: Մեզի համար կարեւոր եղածը անոր տուած ծանօթութիւններն են որոնք բաւական լոյս կը սփռեն արդի ընկերաբանութեան մութ մընացած անկիւններուն վրայ:



## ԳԵՐԵՏԻՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Պատմութիւնը ուսումնասիրողները երեք դասի կը բաժնուին: Առաջին. անոնք որ պատմութիւնը կը քննեն եւ կ'ուրախանան, նըկարագրելով պատերազմները, զինուորական հանճարները, ինչ որ մարդկային երեւակայութիւնը կը բոցավառէ: Երկրորդ. անոնք որ զէպքերը կը քննեն ու կը ներկայացնեն հոգեբանական, քաղաքական եւ կրօնական այլ տեսակէտներով: Եւ վերջապէս երրորդ. անոնք որ կատարուած զէպքերու խորը կ'ուսումնասիրեն եւ վեր կը հանեն մարդկային հասարակութեան ընկերային շարժումներու խթանիչ ուժը, տնտեսական գործող ուժը: Այս վերջին գծով հետաքրքրուող պատմաբաններու թիւը սկսած է աճիլ թթ. դարէն սկսեալ:

Պատմական բեկորներ կան մթին ու անհասկնալի թէեւ, բայց բրոնզի, քարի եւ կաւեղէն ամաններու վրայի նկարներն ու արձանագրութիւնները ցոյց կուտան որ աշխատող ու արտադրող հասարակութիւններ ապրած են չին քաղաքակրթութեան շրջանին:

Իրողութիւնները կը փաստեն որ նախապատմական շրջանին մարդիկ չեն ունեցեր այժմու մեր հասկցած ձեւի կառավարութիւն, դեմոկրատական օրէնքներ, զինուորութիւն, ոստիկանութիւն, դատարան եւ այլ հիմնարկութիւններ: Յեղապետը եղած է առաջնորդող եւ ղեկաւար եւ տնտեսութիւնը յառաջ տարուած է մրցակցական ուղղութեամբ, յետոյ եղած է համագործակցական: Մրցակցականէն համագործակցականը փոխանցման շրջանին տեղի ունեցած է յեղափոխութեան նմանող մի երեւոյթ ուր երեւան եկած են միջին դասակարգեր:

Մարդիկ սկիզբէն իսկ բաժնուած եղեր են դասակարգերու, երբ նստակեաց կեանք սկսած են ապրիլ եւ կազմած են հասարակուրդ: Եղած են աշխատողներ զորոնք գերի կրնանք անուանել եւ հսկողներ զորոնք տէր կրնանք կոչել:

Մովսէսի օրէնքները մասամբ ջնջեցին գերետիրութիւնը երբայցիներուն մէջ 1400 թուականին (ն. Ք.) երբ Եղիպտոսէն ազատուելով դուրս եկան: Երբայցիները կրնանք ըսել թէ առաջին գաղափարախօսները եղած են սոցիալիզմին եւ այդ պատճառով ալ անոնք չեն հաշտուած իրենց հանդիպած օտար ցեղերուն եւ ազդերուն հետ: Երբայցիները միշտ յարած են իրենց միաբանութեան եւ իրենց հաւաքատեղին կոչուած է Տապանակ Ուխտի: Հին ազ-



զերը զրեթէ բոլորն ալ կռուող եղած են, որովհետեւ անոնց բարոյազրտական հասկացողութիւնը եղած է մրցակցական, ոչ թէ համազործակցական: Մինչդեռ երբայեցիները եղած են համազործակցական բարոյազրտութեան հետեւող. անոնց միաստուածեան կրօնքը հետեւանք է իրենց տնտեսութեան միաձեւութեան: Անոնք եթէ կռուեր են, կռուեր են իրենց ազատութիւնն ու անկախութիւնը պահելու համար:

Սեմական ցեղը եղած է համազործակցական եւ խաղաղասէր. արիական ցեղերը եղած են մրցակցական եւ կռուասէր: Եւ այս երկու ցեղերը հաղարարութեամբ տարիներով ապրած են իրարու մօտ, կռուած են իրարու հետ, բայց երբեք չեն միացած, չեն հաշտուած իրարու հետ մինչեւ Քրիստոսի 300 թուականը: Անոնց կռիւը զեռ կը շարունակուի եւ պիտի շարունակուի, մինչեւ որ մրցակցական զիժը վերնայ բոլորովին եւ անոր յաջորդէ համազործակցականը, երբ աշխատարար մասսաները կը ստանան իրենց աղաա ու երջանիկ ապրելու իրաւունքը:

Արիական ընտանիքի օրրանը, ուրկէ ծնած են Հնդկերոպական ազգերը, եղած է Կեղրոնական Ասիան: Յոյներն ու հռոմէացիները արիական եւրոպացիներ են: Աբարները կամ իսրայէլացիք, հրեաները կամ եբրայեցիք, նոյնպէս եւ փիւնիկեցիք, կը պատկանին սեմական ցեղին: Սեմական ընտանիքը, մասնաւորապէս հրեաները, կը դործազրէին ստորին աստիճանի եւ անկատար ձեւի համազործակցական օրէնքներ կռուալաւ ազգերու միջեւ, երբ այս վերջինները կը հետեւէին մրցակցական օրէնքին: Մինչ առաջինները ընկերական էին եւ ոչ աւերող, վերջինները կատաղի էին, ուղիւսէր, ետապալտ եւ կործանարար: Բայց երկուքն ալ խելացի, կարող եւ բարձր քաղաքակրթութեան հասնելու ընդունակ էին:

Այն ատեն երբ օրէնքով կառավարուող հասարակութիւն կազմուեցաւ, այդ հասարակութեան մէջ զատորոշուեցան երկու դասակարգեր, տէրեր եւ զերիներ: Այդ հին շրջանին աշխատարար մարդու ցած, արգահաստի դրութիւնը զիւրաւ կարելի է երեւակայել, երբ մենք նկատի առնենք արիստոկրատիկ տուն մը: Արիստոկրատիկ ընտանիքի բոլոր զաւակները, բացի երիցադոյն որդիէն որ ծնունդն է իրական եւ օրինական մօրմէն, միւսները կը համարուէին զերի: Գերեալութիւնը ծնաւ այդ շրջանի դրութեան: Մարդկային իրաւական առաջին օրէնքը, նախ քան կանոնաւոր օրինազրքի կազմութիւնը, անդրանկութեան իրաւունքի օրէնքը եղած է: Այդ ժամանակները, հողերու սեփականատէր նահապետը երբ կը մեռնէր, իր ունեցածները զաւակներուն միջեւ չէր բաժնուեր, այլ

կ'անցնէր, անդրանիկ որդւոյն: Այդ ընտանիքէն ոչ ոք ժառանգական իրաւունք ունէր բացի անդրանիկ որդիէն: Մեռնող նահապետը բաղմաթիւ զաւակներ կրնար ունենալ. ան կրնար ունենալ նաեւ շատ մը կիներ, պահելով թագուհին առանձնաշնորհալ բարձր զիրքի վրայ. այդ թագուհին անդրանիկ արու զաւակն էր որ կ'ըլլար անոր օրինական ժառանգորդը: Այդ ատենուան սովորութեան համաձայն զահաժառանգ զաւակը պարտաւոր էր թողել իր հայրը տանը մէջ կամ տանը յարակից պարտէզին մէջ եւ զայն պաշտել տալ որպէս աստուած: Այս սովորութիւնը օրէնքի փոխուեցաւ եւ եղաւ կրօնք, որուն վրայ հաստատուեցաւ այդ ատենուան հասարակութիւնը:

Նախապատմական դարերուն, այս ժառանգորդին ետեւ կեցող ուժ մը չկար. նա մեքենական կերպով կը դառնար տէր ու միապետ: Վերջներք օրինակ մը: Հարուստ Փարմըր մը որ իր կալուածները ժառանգեր է իր հօրմէն, կը մեռնի, թողնելով շատ մը տղաք եւ աղջիկներ: Կրնայ ըլլալ որ աղջիկներէն մին թագուհին առաջին ծնունդը եղած ըլլայ, այն ատեն վերջէն ծնած արու մանչերէն առաջինը կ'ըլլայ անոր միակ ժառանգորդը: Աղջիկները իրաւունք չունին դանդատելու, իսկ տղաքը, թէեւ կը դանդատին, երբմն ալ կը կռուին խօսքով կամ զէնքով, բայց վերջի վերջոյ ստիպուած են համակերպել: Ամբարտաւան ժառանգորդը իր նպատակին կը հասնի սրբազան դարձած կրօնական արարողութեանց միջոցով, որոնք իր մեռնող հայրը կ'աստուածացնեն: Այսպէսով անդրանկութեան օրէնքը կրօնական ներշնչումով կը մնայ անբռնարարելի: Միապետը իր քոյրերուն ու եղբայրներուն պիտիձէ դրամ մը իսկ չի տար եւ կը դառնայ իր ժառանգած կալուածներուն բացարձակ տէրն ու տիրականը: Այդ կալուածներուն մէջ կը մտնեն ոչ միայն հողերը, ինչքերն ու անասունները, ոչ միայն զերիները, այլեւ իր քոյրերն ու եղբայրները: Ան բացարձակ միահեծան միապետ մըն է որ կրնայ զանոնք ծախել, պատժել եւ նոյնիսկ սպաննել. զանոնք պաշտպանող օրէնք մը չկայ: Իր կրօնքը այնքան արիստոկրատական է որքան կոշտ ու աշխատեթ: Չկայ հասարակաց տեղ մը ուր մարդիկ հաւաքուին եւ իր հօր պաշտամունք մատուցանեն, անոնք միայն հաւատալու են որ իր հայրը աստուած էր եւ զաւակը՝ աստուածորդի, բայց անոնց արդիւրուած է նոյն տեղը իրեն հետ կանգնիլ ու պաշտամունք մատուցանել, որովհետեւ այդ պարագային կը վերնայ տիրոջ եւ զերիի տարբերութիւնը: Իր հօր նուիրական տաճարն է անոր զերեզմանը, որուն վրայ կրակ մը կը պլլալայ եւ այդ կրակը պէտք է անմար մնայ միշտ: Իր հայրը աստուած է եւ պա-



Հապանի աչքով կը հսկէ ամէնուն վրայ: Այդ աստուածը, սակայն, մարդու նման կ'անօթենայ ու կը ծարաւնայ. ուստի անոր մատուցանելու է ընտիր ուտելիք եւ խմելիք: Եւ այդ պարտքը կատարելու են իր քոյրերն ու եղբայրները: Փոքրիկ գանցաուձիւն մը եւ ասա կուզայ խստագոյն պատիժը, որ մահն է:

Ընտանիքի բոլոր անդամները, ի բաց առեալ ազնուական մայրը եւ առաջին արու մանչը, գերիներ են: Անոնց ուտելիքը նոյնիսկ երկրորդ կարգի ուտելիք է: Անոնք իրենց տիրոջ հետ սեզանի շուրջ չեն կրնար նստիլ: Իսկ հասարակ գործաւորներն ու անոնց զաւակները արհամարհուած արարածներ են. անոնք վճարովի բանաւորներ չեն, կ'ապրին ընտանի անասուններու պէս. պիտի գործեն, պիտի արտադրեն, որպէսզի ապրին:

Աստուած դարձած մեռնող տիրոջ շուրջ ստեղծուած խոր նախապաշարուած կրօնական ներշնչումով աւելի կ'ուժեղանայ, երբ իրերու բնական բերումով երեւան կուզայ կզերական դասակարգը, որ մեծ շահ ունի տիրոջ կարգերէն: Կրօնաւորներն են որ կը ճաշակեն աստուծոյ տաճարին մէջ հաւաքուած ընտիր ուտելիքներն ու խմելիքները:

Կրօնաւորը հոգիներու թարգմանն է, անոնց ներկայացուցիչը անոնց միջնորդը: Ով որ այդպէս չի հաւատար, զաւազիր է եւ անոր պատիժն է մահը:

Կալուածներու եւ գերիներու տէրը, աստուածորդին, ընկերային կամ կրօնական խառնուրդ չի ճանչնար ուրիշ ժողովուրդներու հետ: Տէր եւ գերի. ասոնց միջեւ միջին դասակարգ չկայ:

Այդ միջին դասակարգը վերջէն երեւան եկաւ: Այդ դասակարգը վեց հազար տարիներու ընթացքին իր թուական անուամով հետզհետէ կրցաւ հասնիլ այն աստիճանին որ կրցաւ խոշոր խրամատը կամրջել եւ նոյն ատեն ամէն ուղղութեամբ ձգտիլ աննշմարելի դարձնելու համար սկզբնապէս յառաջացած ճեղքուածներու տարբերութիւնը:

ԱՇԽԱՏԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ԲԵՐՆՈՎ

Հին հասարակութեան խոնարհ դասակարգերու պատմութիւնը կը սկսի ազատագրական շարժումներու հետ, թէեւ կրնանք ըսել թէ ստրկային աշխատանքի դրութիւնը աւելի հին եղած է: Մինչեւ այդ ազատագրական շարժումներու արշալոյսը, հնութեան խաւարին մէջ զժուար է գտնել գերիներու ընկերային վիճակը մեզի

ծանօթացնող հետքեր: Բացի մի քանի նշխարներէ որոնք գտնուած են քարանձաւներու մէջ եւ մի քանի սրբազնագրութիւններէ որոնք քանդակուած են գերետէրերու կողմէ պատկերելով անոնց ստորնացած պայմանները, մենք լուսատու ջահ մը չունինք անցեալի մթութիւնը փարատելու համար, մինչեւ որ հասնինք ազատագրական պայքարումներու շրջանին: Միակ բանը որ պարզ է մեզի համար այն է որ հին աշխարհի գերիները այժմու տիրիկեան գերիներուն հետ չէ կարելի նոյնացնել: Ասիական գերիները թէեւ իրենց տէրերու սեփականութիւնն են, բայց ցեղով տարբեր են իրենց տէրերէն: Հին դարու գերիները սակայն, նոյն ցեղին կը պատկանէին, արեւնակից էին իրենց տիրոջ հետ. տարակոյս չկայ, ուրեմն, որ անոնց ազատագրական շարժումներու զրգապատճառը գերետիրութեան դիմադրելու ոգին էր: Նոյն պծին վրայ է այսօր բանուոր դասակարգի պայքարումը կապիտալիստ դասակարգի շահագործման դէմ. որովհետեւ ըստ էութեան այժմու բանուորները, սեմական ցեղէն ըլլան անոնք թէ արիական, գերի են բառին ստուգաբանական իմաստով:

Այստեղ ստիպուած ենք մի շեղում ընել, որովհետեւ գուցէ ընթերցողը զայրանայ երբ մենք այս օրերու ազատ բանուորը կը գնենք նոյն աստիճանին, նոյն դիրքին վրայ, ինչ որ էր հին դարու գերին:

Ո՞վ էր հին դարու գերին: Հին դարու գերին այն մարդկային էակն էր որ իր ամբողջ կեանքը յատկացուցեր էր իր տիրոջ. իր ընտանիքը, իր զաւակները կը պատկանէին իր տիրոջ. իր աշխատութիւնը, իր ժամանակը տրամադրելու էր իր տիրոջ: Իր տէրը իրաւունք ունէր դինք պատժելու, նոյնիսկ սպաննելու, եթէ ինք գէմ երթար անոր կամքին: Ի՞նչ է այս օրերու բանուորը: Ճիշդ է որ նա մասնաւոր տիրոջ մը կապուած չէ, ազատ մարդ է ան. բայց ապրելու կարիք ունի, պիտի ապրի. ի՞նչ ըսել, սակայն, որ նա զրկուած է ապրուստի միջոցներէն, իր ապրուստի միակ միջոցը իր բազուկի եւ մտքի ուժը վաճառելն է, իսկ հրապարակի վրայ իր բազուկի եւ մտքի ուժը գնողը կապիտալիստ Սմիտն է կամ ձանսընը, մէկը քիչ կը վճարէ իրեն, միւրը՝ անտեսական մրցման հետեւանքով մի քիչ աւելի. եւ բանուորը անձնատուր կ'ըլլայ աւելի վճարողին: Ուրեմն բանուորին ունեցած ազատութիւնը, ինչ որ հին դարու գերին չունէր, իր տէրը ընտրելու ազատութիւնն է:

Գերետիրական շրջանին գերին ոչինչ ունէր որպէս նուիրական ու անձեռնմխելի սեփականութիւն: Այժմ տեսնենք թէ բանուորը ունի՞ մի այդպիսի սեփականութիւն: Այս հարցման պատասխանը



բացասական է: Ոչ, բանուորը ոչ մի բան ունի որպէս անհատական սեփականութիւն որ նուիրական նկատուի ու մնայ անձեռնմխելի, բացարձակապէս անձեռնմխելի:

Գուցէ մեղի բենն. բանուորը օրական ութը կամ տասը ժամ աշխատելէ յետոյ օրուան մնացած ժամերուն ազատ է. նա այդ ժամերը ազատ է գործածելու իրեն ցանկութեան համաձայն. ազատ է հանգստանալու, ազատ է հաճոյանալու:

Այս տրամաբանութեան մէջ դարձեալ սխալ հասկացողութիւն կայ: Գործարանատէրը, խորագէտ մարդ, շատ լաւ գիտէ որ բանուոր մը երբ իր աշխատանքի ժամերուն իր ուժերը կը սպառէ, այդ ուժերը վերանորոգելու համար պէտք ունի հանդիստի. այդ հանդիստի ժամերը յատկացուելու են հաճոյքի եւ քնանալու համար: Բանուորը իրաւունք չունի իր հանդիստի ժամերը նուիրելու ուրիշ գործի, որովհետեւ յաջորդ օրը բոլորովին սպառուած ուժով եւ յոգնած նա չի կրնար մտքի լարուած կեդրոնացումով բարդ մեքենականութեամբ սարքաւորուած գործարանին մէջ իր գործը պահանջուած ուշադրութեամբ ու հոգածութեամբ գլուխ հանել. փոքրիկ անուշադրութիւն մը պատճառ կը դառնայ մեքենայի խանդարման եւ գործի փճացման: Այսու կը տեսնենք թէ բանուորին տրուած հանգիստի ժամերն ալ կը պատկանին գործարանատիրոջ:

Բանուորը ընտանիք ունի՞: Այս հարցումին պատասխանն է այո եւ ոչ: Բանուորը ընտանիք ունի տեսականօրէն, բայց իրաւական տեսակէտով բանուորի ընտանիքը իրեն չի պատկանիր, կը պատկանի պետութեան, ուրիշ խօսքով տիրող դասակարգին: Բանուորը մահկանացու է. նա պիտի գործէ, պիտի ծերանայ ու պիտի մեռնի. ուրեմն, նա սերնդագործելու է, դաւակներ հասցնելու է, որքան շատ այնքան լաւ: Այդ դաւակները ըլլալու են առողջ, որպէսզի տոկուն ըլլան. անոնք ըլլալու են կրթուած որպէսզի ճանչնան ու կատարեն իրենց պարտականութիւնները հանդէպ պետութեան երբ իրենց պէտք ունենայ, հանգէպ երկրի անտեսական զարգացման որուն հիմքն է անհատական սեփականատիրութիւնը եւ վարձու աշխատանքը:

Բանուորը տուն ունի՞: Այս հարցման պատասխանն ալ նոյնն է. այո եւ ոչ: Բանուորը տուն ունի տեսականօրէն, բայց իրաւական լայն բովանդակով անապուրկ է: Եթէ բանուորը անհաւատարիմ գանուի հանդէպ պետութեան կամ հասարակական հաստատուած դրութեան, անոր տունը մոխիր կը դառնայ:

Եթէ բանուորը պահէ իր ստրուկի հաւատարմութիւնը, անոր տունն ու ընտանիքը դարձեալ կախեալ դրութեան մէջ կը մը-

նան: Անիկա պետութեան տարեկան հարկ վճարելու է: Նոյնպէս իր տունը ձմեռ առնն տաք պահելու եւ ամէն օրուայ կերակուր պատրաստելու համար բնական կազմի ընկերութեան վճարում ընելու է ամէն սմիս կանոնաւոր կերպով: Վճարում ընելու է նաեւ լոյսի ու ջուրի համար: Եթէ անկարող ըլլայ իր վճարումները ընել, կը մնայ առանց ուտելիքի, կը մնայ մութին մէջ, կը մնայ ծաւալ: Ազատ բանուորի մասին ոչ ոք կը մտածէ. նա ազատ կը մնայ մահացման ճամբուն վրայ:

Եթէ մեր ձեռքին բռնենք նժար մը եւ բանուորի սրարտակալութեանց թափին մէջ շարենք պետութեան ու երկրի անտեսութեան համար անոր կատարած բոլոր աշխատանքներն ու գոհողութիւնները, ի՞նչ կը մնայ որպէս իրաւունքի բաժին միւս թափին համար. կը մնայ միայն մէկ բան, ապրելու իրաւունք մը, ան ալ պայմանադրութեան տակ, անստուգութեան դամոկլեան սուրին տակ:

Գերետիրական հին շրջանին եւ կապիտալիստական շրջանի գերիներուն միջեւ եղած տարբերութիւնը երկու շրջանի գերետէրերու վարձուքի տարբերութիւնն է: Հին դարու գերետէրը իր գերիին կը նայէր որպէս ամէնէն անտրդ, ամէնէն արհամարհելի մի արարածի եւ անոր հետ կը վարուէր անգթօրէն. ներկայ դարու կապիտալիստը ասպետականօրէն իր բանուորը նոյնիսկ դերի չանտաներ: Գեմալիստական սկզբունքով բանուորը կապիտալիստին պէս հաւասար իրաւունքով քաղաքացի է: Բայց այս թմբկահարուած ղեմովրասին երբեք չի փոխեր գերետիրութեան հիմնական բնոյթը: Հին դարերուն գերին իր տէրը չէր կրնար փոխել. մեր նոր դարուն գերին իր տէրը փոխելու ազատութիւնը ունի. եւ այդ ազատութիւնը վիճելի չէ: Իսկ եթէ մենք նկատի առնենք որ այդ ազատութիւնը ինչ գնով ձեռք բերուած է, քանի հազար արիւնահեղ կրիւներ մըղւած են եւ քանի միլիոն բանուորներ զոհուած են, այն ատեն այդ ազատութիւնը կը դառնայ ծիծաղելի:

Գաղանօրէն կազմակերպուած գերիներու ազատագրական պայքարումներուն համար չորս հազար տարի առաւ, մինչեւ որ քրիստոնէութիւնը եկաւ հաւասարութեան խաբեկատիր սկզբունքով գերետիրութիւնը վարազուրել եւ դայն փոխարինել ճորտատիրութիւնով: Հազար երեք հարիւր տարի առաւ մինչեւ որ Ֆրանսական յեղափոխութիւնը եկաւ ճորտերը «ազատագրել» եւ «ազատ» բանուորներ հրապարակ հանել. իսկ երկու հարիւր տարի անցնելէն վերջ, այսօր, բանուորներու ճնշող մեծամասնութիւնը տակաւին չի գիտեր թէ բանուորը գերի է եւ անոր կատարեալ ազատագրումը տեղի



պիտի ունենայ միմիայն սոցիալիզմի յաղթանակով: Ու կոխը կը շարունակուի:

Այժմ անդրադառնանք Հին դարերու գերեօրութեան:

Չնայած բազմաձևուտ հնագէտ Լալէլիլի որ կը փաստէ թէ մարդկութեան նախնադոյն դրութիւնը նահապետական կոմունիզմը նշած է, մենք կը տեսնենք որ գերեօրական սխտէմը ամէն ատեն տիրապետող եղեր է արիական ցեղերուն մէջ: Եւ արդէն ինք Լալէլիլի իր ուսումնասիրութեան մէջ տեղ մը կը խոստովանի թէ յոյներն ու հռոմէացիները ունէ կոմունիստական հիմնարկութիւն կամ նահապետական բնոյթով կազմակերպութիւն բնաւ չեն ունեցեր: Փրոֆէսոր Դենիս Փուլցէլ բնաւ չի տատամսիր փաստելու որ արիական կրօնքը, ինչպէս ըսինք, նուիրազորներ էր անդրանկութեան օրէնքը, որով կալուածատիրոջ միւս զաւակները կը դառնային իրաւագուրկ ու գերի: Այս հին սովորութեան մասին ուրիշ հեղինակներ նոյն հաւաստիացումը ըրած են:

Լուկուրկոսի օրէնքներով սպարապիք (825-371 Ն. Ք.) փորձեցին հիմնել կոմունային սեփականատիրութիւն, բայց ձախողեցան. նախ անոր համար որ այդ օրէնսդիրին երազածը զինուորական կոմունիզմ էր, երկրորդ որ կրօնքը, կոապաշտական կրօնքը որ կը պաշտպանէր անհատական սեփականութիւնը, հակառակ էր Լուկուրկոսի ծրագրին:

Լուկուրկոսի, ինչպէս նաեւ ուրիշ շատ մը բարենորոգչականներու փորձերը որոնք որպէս հրաբխային ժայթքումներ ցնցեցին Յունաստանն ու Հռոմը, այդ օրերուն գոյութիւն ունեցող արհեստակցական գաղտնի միութեանց եւ ընկերային կազմակերպութեանց հետեւանք էին:

Պատմաբաններ շատ քիչ անգամ կ'անդրադառնան այս իրողութեանց: Ասոր պատճառը շատ պարզ է: Սոյն խոսվարար տարրերը հասարակութենէն փտարուած տարրերն էին: Այժմ հարց է թէ անոնք ինչո՞ւ եւ ի՞նչպէս հասարակութենէն արտաքսուած էին: Այս հարցման պատասխանը կը գտնենք իրերու տարօրինակ այլ սակայն բնական շրջադարձին մէջ: Առնենք, օրինակի համար, ընտանիք մը որ ունի երեսուն անձեր (կան ընտանիքներ ուր խնդրած են երեսունէ աւելի անձեր որոնք սերած են նոյն նահապետէն կամ ախրոջմէն). ասոնց մէջ միայն մէկը սեփականատէր կամ վերահսկող է, անդրանիկ որդին: Միւս զաւակները, գնուած կամ այլ կերպով ձեռք անցած ծառաները, բոլորն ալ գերիներ են: Անոնցմէ ունէ մէկուն համար ոճիր կը համարուի թողուլ հօրենական տունը: Դժգոհութիւն, անհնազանդութիւն կամ փախուստի փորձ կը

պատժուի մահուամբ: Բայց արտասովոր պարագաներու ներքեւ մարդիկ կը փախչին եւ փախչողները միասին դալով կը կազմեն ազատ մարդոց ընկերութիւնը: Ահա այսպէսով երեւան եկաւ երկրորդ տեսակի հասարակուրդ մը: Բայց այդ հասարակուրդին մէջջէն դարձեալ մէկը ելած է խելացի, ռազմադէտ կամ ուժեղ որ իրեն ննջարկէր է իր նմանները: Իսկ այս մարդիկը, որոնց նրեւակայութեան մէջ քարացած էին իրենց Հին տիրոջ անդթութիւնները, երբ կը բազդատէին իրենց Հին վիճակը նորին հետ, համակերպած են նորին. թէեւ նորն ալ երբ շարունակած է, փոխակերպուած է Հինին, որովհետեւ առաջնորդը դառնալով իշխան հետեւած է նոյն ընչաքաղցութեան, նոյն էկոխառական թելադրանքներուն: Յամենայնդէպս, անոնք անջատուած ու ազատ մի հասարակուրդ կազմած՝ ապրած են ատեն մը:

Անրական ցեղերուն մէջ, սակայն, ինչպէս Լը Պլէյ կը նշէ, մարդիկ երբեք չեն հրաժարած իրենց նահապետին կամ իշխանին պարտական եղած հնազանդութենէն ու հաւատարմութենէն: Նեցուկ մը գտնելու եւ անոր ապաւինելու մարդկային բնազդը Հին դարերէն սկսեալ շարունակուած եւ հասեր է մեզի: Կրօնական հաւատքը կառչած է այդ բնազդին. նոյնիսկ ամէնէն զարգացած ազգերու մէջ կրօնական ծէսերը որոնք հնութեան թողած ժառանգութիւններն են, թէեւ նոյն զգացումները չեն արթնցներ, բայց մենք նոր գաղափարներով կամ նոր նկատումներով կը սիրենք զանոնք ու կը հետեւինք անոնց:

Այժմ դարձեալ անդրադառնանք ապստամբներու բացած ճամբուն:

Գերութեան լուծը փախուստով թօթափելու փորձը գերագոյն յանդգնութիւն պէտք է հաշուել, որովհետեւ փախչողը ոչ միայն իրեն վիճակուած մահապատիժը ի մտի ունէր, այլև ասուածներու օրհնութենէն զրկուելու վախը: Գերիները, ինչպէս նաեւ ազատները շատ տարօրինակ գաղափար ունէին մահուան մասին: Կրօնքը Հին դարերու գործաւորներու կեանքին մէկ մասը կը կողմէր: Առանց գերեզմանի մեռնելու վախը աւելի սարսափելի կը թուէր քան մահը:

Գերիի վիճակը որքան որ զէշ էր, բայց ան ունէր գերեզման մը ունենալու իրաւունքը. գերեզմանը իր հողիի պալատն էր, անոր տաճարը. ինչ որ ան իրական կեանքին մէջ չէր ունեցեր, մեռնելէն յետոյ պիտի ունենար: Գերիներուն սորվեցուցեր էին թէ ամէնէն մեծ սրբաւայլը այն տեղն է ուր թաղուած են իրենց տէրը եւ իրենք, գերիները, երբ կը թաղուէին անոր կալուածներու հողին մէջ, իրենց



հողիները կը միանային իրենց ախրոջ հողիին: Իսկ այն գերին որ կ'ըմբոստանար, իր պարտքը չէր կատարեր, փախչիլ կը փորձէր ու կը բռնուէր, ան կը դատապարտուէր մահուան եւ որ աւելի սոսկալի էր, անոր մայրինը կ'աչրուէր եւ կամ կը նետուէր անտառին մէջ վայրի անասուններուն կեր ըլլալու: Գերին, ուրեմն, ամէն կերպով համակերպելու էր իր բաժին ինկամ վիճակին: Իսկ եթէ նա հակառակ այդ սարսափելի հեռանկարին փախուսալի ճամբան կը բռնէր, զա կը նշանակէ թէ գերեախրութեան դէմ այնքան ուռճացած էր իր ատելութիւնը որ կրօնական հաւատքը տեղի տուած էր իրաւունքի զիտակցութեան թելադրանքին:

Որքան երկար տեսած է իրերու այս գրութիւնը, գրաւոր պատմութիւն մը չկայ այդ մասին, միայն կարելի է ենթադրել տասնեակ հազարաւոր տարիներու շրջան մը ուր գերեախրը մնաց իշխող իր ընչաքաղցութեամբ, զիւրազրգոութեամբ եւ վաւաչատութեամբ: Անկէ յետոյ է որ յառաջացան ըմբոստութեան շարժումները: Երբ գերիները բազմացան եւ գերեախրը ուրիշ գերեախրերու հետ կոխի բռնուեցաւ, պէտք զգաց իր գերիները զինել եւ տանիլ կոխի ճակատը: Այս յաճախակի պատերազմներու ընթացքին գերիները վարժուեցան կռուիլ եւ զէնք զործածել: Գիտակցութիւնը սակաւ առ սակաւ լուսաւորեց անոնց միտքը, որով անոնք համոզուեցան թէ իրենք կրնան միացեալ ուժով կռուիլ իրենց տիրերուն դէմ, բարեխաւելու իրենց գրութիւնը: Ասկէ ծնունդ առին ազատամբութիւններն ու արիւնահեղ ընդհարումները. ասոնցմէ կազմուեցաւ պետութիւնը իր պետական հիմնարկութիւններով ու օրէնքներով:

Կռուներու եւ ընկերային բարդ յարաբերութեանց ընթացքին մարդոց լեզուն ալ զարգացաւ. անոնք կրցին զիրար հասկնալ եւ կազմակերպուիլ:

Այստեղ պէտք է նշել ուրիշ յատկանշական պարագայ մը, որ գերեախրերուն հակադրեց ունենալ մինչեւ այդ ատեն անձանօթ մնացած այն զգացումը որ կը կոչուի համակրութիւն: Համաճարակը որ կը սկսէր կեանքեր հնձել, գերեախրը գերիներու հակադրական կորուստէն կը տեսնէր որ ոչ միայն կը պակսէին իր եկամտաւոր ազդիւրները, այլեւ ինք կը մնար անօգնական թէ իր թշնամիներուն եւ թէ բնութեան ուժերուն առջեւ: Հեղեղները, երկրաշարժը, փոթորիկը կը քանդէին իր պալատը, իր ուրիշ շէնքերը եւ զանոնք վերաշինող չէր մնար. ասկէ զատ դրացի գերեախրեր կրնային յարձակիլ իր վրայ եւ ինք մարդ չէր ունենար զինք պաշտպանող: Գոյութեան կոխի այս բարդ պայմաններուն տակ գերիներ-

բու մէջէն դուրս եկան արտակարգ հանճարի տէր մարդիկ ու կանայք որոնք տիրող դատակարգի կողմէ արժանացան դիրքի ու մեծարանքի: Հոմերոսի Ելիականին մէջ ոչ մէկ յիշատակութիւն կայ գերիներու ազատագրման մասին, բայց Ողիականի մէջ կը հանդիպինք նման յիշատակութեանց: Այդ կը նշանակէ թէ Ելիականը աւելի հին շրջանի գրութիւնը կը ներկայացնէ, իսկ Ողիականը կուգայ անկէ յետոյ, յաջորդող շրջանին: Ինչ ալ որ ըլլայ, մենք սխալած չենք ըլլար ենթադրելով որ գերիներու հանդէպ ցոյց տրուած համակրութիւնը, կամ լաւ վարուեցողութիւնը զիպուածի ծնունդ չէ, այլ երկար դարերու պայքարումներու եւ փորձառութեան արդիւնք:

Մեր նկարագրած բոլոր այս իրադարձութեանց հետ պատմական փաստերը ցոյց կուտան թէ հնդեւրոպական ցեղերու մէջ կոմունիստական կամ հովուական հասարակուրդ կազմուած չէ (\*), միայն գոյութիւն ունեցեր է արիստոկրատիկ դաշնակցային խորհուրդ մը որուն զործն էր պաշտպանել գերեախրերու սեփականութիւնը եւ աստուածներու պաշտամունքը: Ասով կը հասկնանք թէ մեծ եղած է կրօնքի գերը: Գերիները իրենց ստորնացած դիրքին մէջ պահելու համար անհրաժեշտ էր արմատացած պահել կրօնական նախապաշարումը:

Գերեախրերու դաշնակցութիւնը գոյութիւն ունէր Քրիստոսէ երկու հազար տարի առաջ. զա ապացոյց է գերիներու ազդուամբական շարժումներուն: Բայց քրիստոնէական թուականէն եօթը հարիւր տարի առաջ դաշնակցային խորհուրդը աւելի ուժեղացաւ. անոր խորհրդարաններն էին Ապոլոնի եւ Դիմիտրի տաճարները, ուր կը հաւաքուէին պատգամաւորները զորնան եւ աշնան: Քրիստոսէ վեց հարիւր տարի առաջ, դաշնակցային խորհուրդը կը բաղկանար տասներկու ցեղերու ներկայացուցիչներէ, որոնք իրարու կապուած էին փոխադարձ պաշտպանութեան դաշինքով: Եթէ դաշնակցից մը յարձակում կրէր, բոլորը միասին կը դիմէին անոր պաշտպանութեան: Անոնց համաձայնութեան գլխաւոր խորհիւրը հետեւեալ կէտերուն շուրջ կը դառնար. 1) Չփճացնել կամ թոյլ չտալ որ փճացուին դաշնակցային եղբայրութեան սեւէ քաղաքի ջուրի ազդիւրները: 2) Խաղաղութեան կամ պատերազմի ատեն

(\*) Հեղինակը յայտնի է որ անտեսած է այն իրողութիւնը որ իր նկարագրած գրութեանն առանձնակ դարեր առաջ գոյութիւն ունեցեր է նահապետական կոմունիզմը ուր չկար անհատական սեփականութիւն:



աստուածներու պատկանող արժէքաւոր սեփականութեանց չզրպիւ սրբարաններու արժէքաւոր առարկաներ չվերցնել:

Մի շարք պատմաբաններ կը հաւատարկացնեն թէ՛ դաշնակցային եղբայրութիւնը կրօնական գաղափարէն զատ ուրիշ նկատում չունէր, բայց իրողութիւն է որ այդ կազմակերպութիւնը հնդեւրոպական ազգերու մէջ իր առաջին նպատակը ընտրած էր տիրող դասու սեփականատիրութեան իրաւունքի պաշտպանութիւնը: Ասկէ յառաջացաւ կանխադոյն կառավարութեան ձեւը: Եւ այդ կառավարութիւնը եղաւ արիստոկրատական կառավարութիւն, որ աշխատանքի օրէնքներ գծեց, սեփականատիրութիւնը նուիրականացուց կրօնական հանդերձանքով: Եւ ահա կազմուեցան քաղաքներ որոնք կառավարուեցան այդ օրէնքներով, օրէնքներ որոնք ձեւափոխուեցան յետոյ անտեսական եւ ընկերային զարգացողական պայմաններու հետեւանքով:

ԵԼՆԻՍԻՆԵԱՆ ԽՈՐՀՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հնդեւրոպական ցեղը, ուրիշ մենք սերած ենք, պատմութեան մէջ մի քանի հազար տարիներու միջոց մը զբաւեւով, վերջ ի վերջոյ տարբերականութիւն մը յառաջացուց ի նպաստ գերիններուն: Կրանիէ այս ընկերային նիւթի վերլուծման խիստ զնահատելի իր ուսումնասիրութեան մէջ յայտարարած է որ գերետիրութիւնը բնական հետեւանքն էր կոապաշտութեան կամ ընտանեկան կրօնքին: Ուրիշ հեղինակ մը, Ֆուլքը, իր արտակարգօրէն փայլուն աշխատասիրութեամբ կը փաստէ Կրանիէի մէջն մէկ բառը:

Մեր դարու փիլիսոփաները ուրիշ բան չեն կրցած ընել, բայց միայն իրարու կապել հին դարերու կտոր-բրդուճ նշխարները եւ անոնցմէ հանել արամարանական եզրակացութիւններ:

Հասարակութիւնը կազմողը եղած է ամբարտաւան ուժեղը: Ան սկիզբէն ցոյց տուած է անսանձ դիւրագրգռութիւն, վաւաշտութիւն եւ ետապաշտութիւն: Այս մարդ կոչուած արարածը իրեն դիմադրողները սպաննեց, իսկ միւսները լախտի հարուածներով կապեց ստրկութեան սիւնին: Էզերու մէջէն ամէնէն վեղեցիկը ընտրեց իրեն ընկեր, լաւագոյն քարանձաւը կամ խշտեակը բրաւ իր բնակարանը եւ կազմեց իր ընտանիքը:

Արիական ցեղի մարդը վաշկատու չէ եղած: Ան ուզած է ունենալ տուն մը, մշտնջենական բնակարան մը: Ան դիմած է աւազակային ձեռնարկութեանց, բայց ամէն անգամ վերադարձեր է իր տունը որ իրեն համար բերդ մըն էր: Տանը բոլորտիքի հողը իրեն կը պատկանէր: Երբ գուակներ ունեցաւ, անոնք ալ իրեն կը

պատկանէին: Երբ անոնք մեծցան եւ ուժեղացան, դանոնք զործի լծեց. անոնք պիտի գործէին իրեն համար: Իր վաւաշտութեան միացաւ ընչաքաղցութիւնը: Որքան շատ ունեցաւ, ուղեց ունենալ աւելի եւ աւելի: Ան իր գաւակները մասնակից չըրաւ իր ունեցածներուն, այլ դանոնք զրկեց ամէն բանէ: Անոնք միմիայն ստրկական աշխատանք կատարելու էին: Առանկով ան դարձաւ մի տեսակ բրոնակալ, տէր ու տիրական ամէնքին: Համակրութիւնը օտարոտի զղացում էր իրեն համար, համակրութեան նման մի զղացում երբեմն միայն կ'ունենար իր նախասիրած մէկ էակին հանգէպ, ան ալ պայմանական եւ ժամանակաւոր, չըսելու համար ձեւակաւ:

Մեր գերետէրը կ'ապրէր զարմանահարշ աշխարհի մը մէջ: Ան չէր կրնար հասկնալ բնութեան երեւոյթներու զաղտնիքը: Որոտումն ու կայծակը անոր համար ձեւակերպեցին աստուած մը: Երբ բնութեան այդ աստուածը իր երեւակայութեան մէջ մարդու ձեւ առաւ, հսկայ եւ ուժեղ մարդու մը ձեւը, իր ամբարտաւան ինքնասիրութիւնը ուշադրութիւն դարձուց իր փառաւոր դիրքին, իշխողի, հրամայողի դիրքին: Եւ ահա մեր գերետէրը համոզուեցաւ որ ինք ալ աստուած մըն էր որ ունէր ամէն իշխանութիւն հետզհետէ բազմացող իր ստրուկներուն վրայ, եւ ունէր նաեւ աստուածացումի բոլոր ստորոգելիքները: Եւ նոր աստուածը օրէնք դրաւ որ իր անդրանիկ որդին լինի իր հարստութեան եւ իշխանութեան ժառանգորդը եւ զինք պաշտէ որպէս աստուած, որովհետեւ ան ալ իր կարգին աստուած մը պիտի ըլլար: Հապա միւս գերինը: Անոնց թոյլ չէր տրուած մօտենալ իրեն թէկուզ պաշտամունքի պարտքով. անոնք իրենց վարպետ արհեստաւորի ձեռքով կը շինէին փայտէ կամ քարէ արձան մը որ քչիկ մը կը նմանէր գերետէր աստուծոյն եւ զայն կը պաշտէին որպէս կուռք: Այսպէսով սկսաւ հայրական աստուածներու շարքը: Ուրեմն սխալ չըլլար երբ ըսենք թէ ինքնապաշտութիւնը (էկոտիզմը) ծնունդ տուաւ կոապաշտական կրօնին, սրբութեան ու անմահութեան զաղափարին: Եւ այս աղանդը իր էութեամբ արիստոկրատական էր եւ բացարձակապէս այլամերժ: Ան իր մտադրոշմը թողուց, աստուածային իրաւանց մտադրոշմը, բոլոր տէրերուն, աղնուականներուն եւ թագաւորներուն վրայ: Միւս կողմէ, անիկա նուիրականացուց գերիներու զոյութեան պահպանումի օրէնքը: Գերիները դարձան հասարակութեան արհամարհուած, ստորին խաւերը, մարդկային հասարակութեան արտաքուստները, մարդիկ որոնք զրկուած էին յաւիտենական կեանքի շնորհէն, արիստոկրատական ձեւի թաղման իրաւունքէն եւ դատապարտուած մշտնջենական սեփականազրկման եւ թշուառութեան: Բայց այդ բազմաթիւ գերի-



ները որոնցմէ առնուած էր ինչ որ տեսանելի էր, մարդ էին վերջապէս. եւ անոնք բան մը ունէին դոր կարելի չէր անոնցմէ բռնի առնել, բան մը որ անտեսանելի էր ու անբռնարարելի. դա մարդկային իմացականութիւնն էր, միտքը: Եւ ահա երեւան եկաւ հանճարեղ մարդը, ապստամբ մարդը, հանճարեղ կինը, ապստամբ կինը: Եւ դերիները իրենց այդ մաքով անդրադարձան իրենց թշուառ դրութեան եւ սկսան մտածել իրենց վզին ծանրացած լուծը թօթափելու մասին: Անոնցմէ ոմանք յաջողեցան եւ դարձան ազատագրուած մարդեր եւ կազմեցին փոխադարձ պաշտպանութեան ընկերութիւններ, արհեստակցական միութիւններ: Այսպէսով կազմուեցան երկու խմբաւորումներ:

Նոյն ատեն լորտերու կամ կալուածատէրերու իշխանութիւնը մեծ չափով աճեցաւ, բայց ոչ թուական ուժով այնքան արագ որքան վտարուածներու ուժը: Եւ այդ իշխանաւորները տեսնելով որ չղթալիները, փախչողները եւ ձերբազատուածները կոմունաներ կը կազմէին, ոմանք արհեստակցական միութիւններ, ուրիշներ աւազակախումբեր, բոլորն ալ դժգոհ ու վտանգաւոր տարրեր, անոնք ալ իրենց կարգին սկսան կազմակերպուիլ: Ասանկով երեւան եկան երկու անջատ դասակարգեր: Բայց այս երկու դասակարգերէն ո՞րն էր որ առաջին անգամ կազմակերպուեցաւ ինքնապաշտպանութեան համար. դժուար է ապացուցանել. միայն կարելի է տրամաբանականօրէն ենթադրել որ հասարակութենէն վտարուածները եղած են որ շահագործման ու տանջանքի տնտանիքի պայմաններու ճնշման հետեանքով ատկուած եղեր են կազմակերպուիլ. անոնք նախ կրօնական շարժումով կարմեր են հոս հոն փոխադարձ օգնութեան ընկերութիւններ կամ արհեստակցական միութիւններ. ապա, երբ տիրող դասակարգի արիւնտա թաթը դարձեալ ծանրացեր է իրենց ուսին, անոնք, զիմած են ապստամբութեան, կեանքի ու մահուան կռիւին: Ասով պէտք չէ հետեւեցնել թէ այդ ատենները գործաւորները դասակարգային դիտակցութեան հետեւանքով կազմակերպուած են եղեր: Ոչ երբեք: Անոնք անարգ ստրկութեան չկարենալ զիմանալու մղիչ հարկադրանքէն էր որ զիմած են ապստամբութեան. մի տեսակ բնական տարերային զարմանալի շարժում որ կանխապատրաստուած ծրագիր մը չէ ունեցեր. մահ կամ ազատութիւն: Ազատութիւն՝ այո, բայց ի՞նչպիսի ազատութիւն. ի՞նչպիսի հասարակարգ հիմնելու էին. այս մասին անոնք չէին մտածեր: Գերիները գանազան երկիրներու մէջ զրատ դասակարգ կը ներկայացնէին, այսպէս կոչուած «ազատ» գործաւորներու դասակարգը որ պարագաներու բերմամբ մէկը միւսին

թշնամի էր: Եւ տիրող դասակարգը հնարաւոր միջոցներով անոնց թշնամութիւնը վառ կը պահէր իր զիրքը ամբացնելու համար:

Պուտարքոս կը յիշէ զէպքեր ուր ապստամբ գործաւորները կը հրապուրէին գերիները, միացեալ ուժով իրենց կռիւը շարունակելու համար, եւ երբ իրենց կռիւը կը վերջանար յաջողութեամբ, հարիւրաւոր գերիները կը սպաննէին որպէս վտանգաւոր տարրեր: Նոյնը բրած են իշխող լորտերը: Անոնք ալ վտանգի ատեն կը դիմէին գերիներու օժանդակութեան ու երբ յաղթանակը կը տանէին ապստամբներուն վրայ, իրենց համար կռուող գերիները կը սպաննէին անխնայ:

Կալուածատէր լորտերը ելեւսինեան հանդիսութեանց թոյլ չէին տար որ մասնակցին գերիները, ձերբազատուածները եւ վերջին դարուն՝ քրիստոնեաները: Անոնք բոլորը հասարակութենէն վտարուած մարդիկ էին, եւ չկար դատարան մը ուր անոնք իրաւունք ունենային զիմել գանդատելու համար:

Բոլոր պատմաբանները որ կը խօսին ելեւսինեան հռչակաւոր եւ խորհրդաւոր կազմակերպութեան մասին, համաձայն են այն կէտին շուրջ որ ելեւսինեան կազմակերպութիւնը եղած է շատ հին կազմակերպութիւն մը որ դոյուլթիւն ունէր Քրիստոսէ 1500 տարի առաջ: Կիկերոն, իր ատենին, հիացած է այս կազմակերպութեան կուսակալական ծէսերուն վրայ, ծէսեր որոնք արխատկրատական ատաղձներով կազմուած ըլլալով հանդերձ դարերով շարունակուած են եւ տակաւին կը շարունակուին փոխուած անուններով, որովհետեւ աստուածները դասակարգային յարաբերութենէն ծագում առած են: Երբ տիրող դասակարգը կը փոխուի, աստուածներն ալ կը փոխուին, կը փոխուին նաեւ ծէսերը, բայց անոնց խորհրդաւոր հանգամանքը անփոփոխ կը մնայ: Խորհրդաւորութիւնը տպաւորութեան հողէն կ'առնէ իր անունը:

Ելեւսինեան խաչակրութիւնը որ բացառապէս արխատկրատական-կրօնական մի խրախճանք էր Գիմիտր աստուածուհոյն նըւիրուած, աթենացիներուն մեծագոյն հանդիսաւոր տօնն էր որ տեղի կ'ունենար հինգ տարին անգամ մը, Սեպտեմբեր 15-ին, Աթէնքէն տասը մղոն հեռու Ելեւսիս քաղաքին մէջ: Ելեւսիս կը նշանակէր ժամադրաւայր: Տօնի օրը հոն հաւաքուողները յաւիտենական կեանքի օրհնութիւնը ընդունելու արժանի կ'ըլլային: Գործաւորները, գերիները որպէս հետաքրքիր հանդիսատես այդ օրհնութիւնը չէին կրնար ընդունիլ, որովհետեւ անոնք հողի չունէին: Կրօնքը եղած էր զուտ արխատկրատական:

Գերիներուն նոյնիսկ թոյլ չէր արուել մտնել սրբազան տա-



ճարէն ներս: Անոնց միայն մէկ բան սորվեցուցեր էին որ աստուած-  
ները գերետէրերուն պահպանութեան կը հսկէին, որովհետեւ ա-  
նոնց հողիները կապուած էին աստուածներուն: Եւ գերիները, քա-  
նի որ հողի չունէին, ուրեմն ոչ մէկ հաղորդակցութեան իրաւունք  
կրնային ունենալ սրբարաններուն հետ:

Այսպէս, կը տեսնենք թէ գերետիրական աշխարհը, ինչպէս  
բռնեք, բաժնուած էր երկու դասակարգերու. հողի ունեցող ազ-  
նուականները որոնք իրենց մեռնելէն յետոյ կ'երթային միանալ ի-  
րենց աստուածներուն, եւ հողի չունեցող գերիները որոնց կեանքի  
բաժինն էր աշխատիլ, արտադրել, զրկուիլ ու ենթարկուիլ անաս-  
նելի շարշարանքներու:

Բայց անբնական էր որ գերիները անտրտունջ անասուննե-  
րու պէս մնային նոյն դրութեան մէջ, երբ անոնք ունէին խորհելու  
եւ դատելու կարող միտք մը: Եւ ահա երեւան եկան արհեստակցա-  
կան միութիւններ, համադորձակցական ընկերութիւններ, թաղման  
ընկերութիւններ, ընկերութիւններ որոնք ընկերային գրասանք կու-  
տային խոնարհ դասակարգերուն. նոյնպէս գիւղացիական միու-  
թիւններ, նոյնիսկ որոշ չափանիչով սփեւտական եւ պիւթակոր-  
եան սոցիալիզմ, բարեպաշտ եսսէնիզմ եւ վերջ ի վերջոյ, ի լրումն  
ամենայնի, եկաւ քրիստոնէական կրօնքը որ յայտարարեց թէ բոլոր  
մարդիկ հաւասար են Աստուծոյ առջեւ:

Հակիրճ կերպով նկարագրուած այս երեւոյթները կը պատ-  
կանին հին դարերու զրկուած դասակարգի ընկերային պատմու-  
թեան, որովհետեւ այդ բոլորին մէջ ղլխաւոր դերակատարը եղած  
է ձերբագրատման ձգտող գերի դասակարգը:

Բայց հարց է թէ այդ տանջուած դասակարգը երբեւեցէ  
կրցած է իր պայքարումները յաջողութեամբ պսակել եւ գոնէ չա-  
փով մը թեթեւցնել իր ողբալի վիճակը:

Սոյն հարցման պատասխանելու համար անհրաժեշտ է թը-  
ուցիկ ակնարկ մը նետել յունական թերակղզիին վրայ ապրող  
ժողովուրդի ընկերային պատմութեան շուրջ: 1055 թուականին  
(Ն. Ք.) Սպարտայի մէջ տեղի ունեցաւ գերիներու սարսափելի  
ջարդը: Առասպելական դարաշրջանն էր այդ: Պատմաբաններ  
խեղճ ու տղէտ հասարակութեան մէջ տեղի ունեցող այդ-  
օրինակ խոշոր զէպերուն չեն անգրադառնար. անոնց պատ-  
մութիւնը մեզի հասած է աւանդութեան միջոցով, բանաստեղծա-  
կան կտորներու եւ երգերու միջոցով: Ատոր համար մենք գիտենք  
թէ անպաշտպան ժողովուրդը միշտ ենթակայ եղած է պարբերական  
կտորածներու: Բայց մենք գիտենք նաեւ որ այդ ատենուան քա-

ղաքական մարմինի միան ու ոսկորը կազմող ժողովուրդը կը վայե-  
լէր կազմակերպուելու իրաւունքը: Հաստատուած է, նոյնպէս, որ  
գերիներն ալ ունեցեր են պաշտպանողական ընկերութիւններ, ո-  
րոնցմէ դուրս եկած են շատ մը ազատ ու մտացի մարդիկ: Մանա-  
ւորապէս այն երեւոյթը կը տեսնենք սպարտական գերիներուն մէջ:  
Սպարտա, մեսենեան մեծ պատերազմէն յետոյ երբ յաղթական դուրս  
եկաւ, պատերազմական աւարին հետ ներս առաւ շատ գերիներ ո-  
րոնցմէ շատերը աղետականի սերունդէն էին: Սպարտացիք այդ  
կէտը նկատի չունեցան, պատերազմական գերիներուն հետ վերա-  
բերուեցան այնպէս ինչպէս կը վերաբերուէին ընդի տեղացի կամ  
ծախու առնուած գերիներուն հետ: Այն գերիները երբ խառնուեցան  
Սպարտայի գերիներուն, ենթարկուեցան նոյն նուաստացումին.  
մարմնով ընկճուած, բայց հողիով հպարտ ու աննկուն, անոնք յա-  
ռաջ տարին, ապստամբական դժով կազմակերպչական աշխա-  
տանք, որու յաջողութեան համար հարկ եղած տարրերը արդէն  
պատրաստ էին, ոմանք ալ վաղուց կազմակերպուած:

Եւ ահա ապստամբութիւնը: Ապստամբները պարտուեցան.  
չատեր սպաննուեցան, ոմանք փախան, թաղնուեցան ամբոցներու  
մէջ եւ դարձան վտանգաւոր աւտղակներ, կազմակերպուած վրի-  
ժառու աւազակներ: Այն ատեն հարուստ ընտանիքներն ալ կազմա-  
կերպուեցան զիրար պաշտպանելու համար եւ ուժեղացուցին պե-  
տութիւնը որպէս բոլորին պաշտպան կեդրոնական ուժ: Ասով գե-  
րիները որոնք նախապէս աղետական ընտանիքի սեփականութիւնն  
էին, այս անգամ եղան պետութեան սեփականութիւնը: Սոյն դրու-  
թեան տակ գերիներու միճակը տւելի վտայարացաւ, անկարագ-  
րելի բլլալու աստիճան: Գերին կը ճանչցուէր իր հալուստէն, եթէ  
հաղուստը կրնանք կօչել ցնցոտիներ որոնք հազիւ թէ կը ծածկէին  
մարմինն մերկութիւնը: Տօնական օրերուն գերիները հաճոյքի հա-  
մար կ'ենթարկուէին խարազանումի, հոգ չէր թէ անոնք ռեւէ յան-  
ցանք չէին դորձեր: Աղետականներուն մեծազոյն հաճոյքն էր տես-  
նել գերիներու խոշտանդումը: Գերին պարտաւոր էր գաւազանի կամ  
խարազանի հարուածներուն տակ դլուխ խոնարհեցնել եւ սողալ:  
Վայ այն գերիին որ իր գլուխը կը բարձրացնէր եւ դայրոյթի նախ-  
ւածք մը կը նետէր ինդացող հանդիսատեսներուն վրայ: Այդպէս էր  
Սպարտայի գերիներուն միճակը: Եւ ամէնէն ամօթալի իրողու-  
թիւնը այն էր որ այդ ձեւի անդուծ վերաբերմունքը կապուած էր  
լուկուրիոսի օրէնքներուն:

Լուկուրիոս բարձր աղետական սերունդէ էր. ծնունդով ա-  
րխասոկրատ, նա բնաւ չմտածեց որ իր հաստատած սոցիալիստա-



կան սխտէմէն մաղաչափ չեն օղաուլիք բնակչութեան մեծամասնութիւնը կազմող դործաւոր գերիները, որոնք առհասարակ կ'աշխատէին գիւղական շրջաններու մէջ տանջալի վիճակով:

Լուկուրկոսի օրէնքով ամէն տարի հինգ գործակալներ կ'ընտրուէին որոնք կը կոչուէին Էփորի. ասոնց գործն էր անաշխատ ժողովուրդին (սպարտացի քաղաքացիներուն) ապահովել հաւասար երջանկութիւն: Սպարտացին պէտք էր ըլլար քաջաոտջ, ուժեղ, Սպարտայի համար մեռնելու պատրաստ ռազմիկ, սպորուստի մը տահոգութեանն ազատ, բայց նոյն ատեն չարքաշ ու երջանիկ. ասիկա Լուկուրկոսի կոմունիզմն էր: Ժողովուրդ բանլով կը հասկըցուէր հաւաքականութիւնը այն մարդոց որոնք չէին աշխատիր եւ կը պարապէին զինուորական մարզանքով:

Բնակչութեան մեծամասնութիւնը, դործաւոր, գերի դասակարգը, ամբողջապէս աննկատ առնուած էր: Գերի դործաւորներէն ոմանք, աւելի խելացի, աւելի հանճարեղ քան իրենց աշերբը, գործ չունէին «ժողովրդական» կառավարութեան մէջ. անոնք նոյն սարսափելի տանջանքներուն ենթարկուած էին, ինչպէս միւս եղիւի արարածները: Հաստատուած կոմունան արխատոկրատական կոմունա էր, զինուորական կոմունա:

Էփորիները արխատոկրատ բնաանիքներու ուժեղ երխտասարդներէն մասնաւոր խումբեր կը կազմակերպէին որոնք զինուած դաշտններով եւ մախազներով ճամբաները եղերող մացառներու մէջ զարանակալ կը սպասէին եւ տրուած հրամանին յանկարծակի կը յարձակէին բոլորովին անպաշտպան եւ անզէն գիւղական աշխատաւորներուն վրայ եւ կը սկսէին աջ ու ձախ կոտորել անխնայ: Ասիկա սպորտական խաղ մըն էր, մի տեսակ մարմնամարզանք որուն նպատակն էր արմատացնել անգթութիւնը եւ քաջութիւնը: Եւ ի՞նչ քաջութիւն...:

Պղուտարքոս, արգարացիօրէն սրամտած այդ բարբարոս գեմոկրատիզմի օրինականացուցած սովորութենէն, կը գրէ. «Երխտասարդներու կառավարիչները երբեմն կը հաւաքէին ամէնէն դաժան հոգեբանութիւն ունեցողները եւ զանոնք զինելով դաշտններով ու տասարներով կը ցրուէին գիւղական շրջանները: Տորեկ ատեն անոնք զարանակալ կը սպասէին տեղ մը եւ գիշերը կը յարձակէին իրենց դործէն վերադարձող գիւղական աշխատաւոր գերիներուն վրայ եւ կը սկսէր սպանդը: Նոյնիսկ ցորեկ ատեն ալ անոնք սպաննելու վարժութեան համար զաշտերուն վրայ աշխատող գիւղացիները կը կոտորէին եւ դաշտերը կը ներկէին արիւնով»:

Ամէնէն հրէշային դործը զոր պատմագիրը արձանագրած է

պեղոպոնէսեան պատերազմի դէպքն է: Պեղոպոնէսեան պատերազմի ատեն որ եօթը տարի տեւեց, զինուորներու թուական նուազումի հետեւանքով երբ սպարտացիները հարկ եղած զինուորները չէին կրնար ճարել, զինուորական մարմինները ստիպուեցան գերի դործաւորները կոչել զէնքի տակ, որովհետեւ անոնք չորս անգամ աւելի թիւ կը ներկայացնէին քան թէ Սպարտայի անաշխատ քաղաքացիները: Ասիկա բոլորովին անպատելի եւ նոյն ատեն անհանդուրժելի մի ստորնացում էր: Պատերազմը ազնուականներու գործն էր. գերի դործաւորները անոր մէջ գեր ունենալու չէին: Ազնուական մը կը նախընարէր մեռնել քան թէ ստրուկ աշխատաւորի պաշտպանութեան սպառնիլ: Յաճախ այնպէս կը պատահէր որ գերին իր քաջութեամբ կ'ազատէր իր տիրոջ կեանքը: Գերետէրը այդ անսրատուներ արարքի մտրը սրբելու համար գերին ազատ կ'արձակէր, զայն կը դարձնէր ազատ քաղաքացի, բայց ատով դարձեալ ինքզինք նուաստացած զգալու ամօթը իրմէ չէր կրնար հեռացնել, միակ միջոցը կը մնար սպաննել գերին: Եւ գերին կը սպաննէր...:

Պեղոպոնէսեան պատերազմին, սակայն, գրութիւնը վատթարացեր էր. բազմաթիւ քաղաքացի զինուորներ ինկած էին պատերազմի դաշտին վրայ. ամբողջ ազգը կործանման եզրին էր հասեր. անխուսափելի էր սպարտութիւնն ու անոր հետեւող բնաջնջումը. ահա թէ ինչու գերի աշխատաւորներէն ընտրեցին հազարաւոր երխտասարդներ եւ զանոնք առին զինուորական շարքերուն մէջ, անոնց խոստանալով լիառատ վարձատրութիւն եւ ազատութիւն:

Ազատութիւն. ասկէ աւելի խրախուսիչ բան կա՞ր խելո՞ւ գերիներուն համար: Եւ այդ գերիները, ազատութեան երազով ոգևորուած, գերմարդկային քաջութեամբ կուռեցան եւ յաղթանակի դափնին տուին Սպարտայի:

Ի՞նչ եղաւ անոնց վարձատրութիւնը:

Երկու հազար գերիներ որոնք իրենց անձնուիրութեամբ եւ քաջութեամբ շահած էին յաղթութիւնը ազատութիւն ստանալու երազով, առաջնորդուեցան տաճարը ուր ընդունելու էին ազատ մարդու մկրտութիւնը: Մինչ անոնց կրնէրն ու զուակները անձնութեամբ կը սպասէին վարձատրուած պակով անոնց վերադարձին, ահա մասսայական ոճիր մը, որ պատմութեան ամէնէն սեւ էջը կը կազմէ: Այդ քաջարի գերիները բոլորն ալ մորթուեցան եւ անոնց գերեզմանը նոյնիսկ անյայտ մնաց:

Ուրիշ սեւէ ազգի պատմութեան մէջ այսպիսի անմարդկա-



յին դազանութիւն արձանագրուած չէ, ինչ որ արձանագրուած է Սպարտայի պատմութեան մէջ:

Աթէնք աւելի զուսպ քաղաքականութեան հետեւեցաւ հանդէպ գերի աշխատաւորներուն: Սպարտա ուժ տուաւ պատերազմական ոգիին եւ ռազմիկներ արտադրեց. Աթէնք ուժ տուաւ մտքին եւ արտադրեց փիլիսոփաներ:

Աւանդութիւնը կ'ըսէ որ Պոսիտոն եւ Աթենաս, փափաքելով իրենց անունով կոչել Յունաստանը նոր շինուած ատեն, Ապոլոնի նուէր մը տարին որպէսպիսի սն իր հաւնած նուէրին համաձայն Յունաստանը անմահացնէ նուիրատուի անունով: Պոսիտոն ձի մը հանեց գետնէն որ պատերազմի խորհրդանշան է, իսկ Աթենաս ձիթեմի ճիւղ մը տարաւ որ խաղաղութեան խորհրդանշան է: Ապոլոն մերժեց ընդունիլ ձին եւ առաւ ձիթեմի ճիւղը, եւ ատոր համար քաղաքը Աթէնք կոչուեցաւ գիցուհիին անունով:

Իրողութիւն է, սակայն, որ աթենացիներն ալ բաժնուած էին դասակարգերու: Ազնուականները որոնք աստուածներէն ծագում առած էին, եւ երկրածինները, պարզ խօսքով գերիները որոնք ճակատագրուած էին գործել ազնուականներուն եւ զանոնք պաշտպանող քաղաքացիներուն համար: Ազնուական կիները երբեմն կը գրադէին մանկելով եւ հիւսելով, բայց դա պարտադիր աշխատանք չէր, ալ մի տեսակ հաճելի ժամանց:

Ինչպէս Պղատոն կը յայտնէ, Աթէնքի եւ շրջակայքի գերիները ոչ միայն Ֆիդիքական աշխատանք կը տանէին, ոչ միայն հրաշայլ տաճարներ եւ ժողովրդական գրօսարաններ կը շինէին, ալլեւ ձեռնածոներու եւ գերասաններու ընկերութիւններ կազմեր էին որոնց գործն էր ժողովուրդը զուարճացնել կատակերգութիւններով եւ զանազան խաղերով: Աթէնքի մէջ ուրիշ դասու մարդիկ ալ կային, որոնք կը կոչուէին ժողովուրդի ծառաներ: Ասոնք իրապէս գերիներ չէին, թէեւ ժողովուրդի սեփականութիւնը կը նկատուէին: Ասոնք կառավարութեան գործերուն խառնուելու իրաւունք չունէին, միայն կառավարական ընթացիկ գործերը կը կատարէին եւ կ'ընդունէին փոքրիկ թոշակ մը իրենց ապրուստին համար: Կրօնականները ասոնց մարդկային հոգի չէին տար, քանի որ ասոնց երակներուն մէջ ազնուականի արիւն չկար:

Կրօնականները այդ ատենուան վարչադէտներն էին:

Այս դրութիւնը, ի հարկէ, իր ճնշիչ մեթոտներով կը շղթայէր մարդոց բազուկներն ու միաքը, բայց չէր կրնար բոլորովին մեղցնել ասոնց մտածելու եւ դատելու կարողութիւնը: Եւ կաղմուեցան դազանի ընկերութիւններ, ընկերային յեղափոխութեան

առաջին, նախնական բջիջները, որոնք յետոյ զտրգացան եւ պարզեցին այն ճշմարտութիւնը որ պատմութեան շարժիչ ուժը կաղմոզները աշխատաւոր զանգուածներն են, ոչ թէ ազնուականները, ոչ թէ կրօնականները, ոչ ալ անաշխատ քաղաքացիները, որոնք հասարակութեան պարտդիտ դասակարգը կը ներկայացնէին:

Հին տառնուան հասարակութեան գերիացած բանուորական զանգուածները կը տատայէին թէ կրօնական եւ թէ ընկերային, անտեսական բռնակալութեան ճիրաններուն մէջ: Ասկէ սկսաւ բանուորական կազմակերպութեանց խմորումը եւ յետագայի զարգացումը: Խմորման այդ շրջանէն մինչեւ սփեւտներու դարաշրջանը, ոչ ոք գիտէ թէ քանի դարեր անցեր են: Մոփեստներն ու փիլիսոփաները իրենց գործը սկսան Յունաստանի մէջ Ե. դարուն (Ն. Ք.): Մենք զանոնք կրնանք կոչել իրենց դարաշրջանի յեղափոխականները: Պղատոնի եւ Արիստոտէլի ստեղծած ընդհանուր շարժումը, թէեւ ըստ երեւոյթի իրարու հակընդէմ, բայց ստուգիլ զայն կրնանք նկատել աշխարհի ամէնէն յատկանշական դադափարական շարժումը որ մարդկութիւնը պատրաստեց յեղափոխութեան համար, այսինքն գործաւոր զանգուածներու տուած ներշնչումով, անոնց առջեւ տեսանելի մի արահետ բացաւ, ուրկէ անոնք սկսան քալել ու ստրկական դրութենէն բարձրանալ դիմելով ընկերային, քաղաքական եւ հողիներու հաւասարութեան ճանաչման ուղին: Հաւասարութեան զաղափարի սաղմնաւորման ոսկեդարն էր այդ: Ասով ըսել չենք ուզեր թէ այդ հաւասարութիւնը կ'ըմբռնուէր Ֆիդիքական եւ մտաւորական հաւասարութեան իմաստով, ինչ որ ապսխար էր, ասով միայն ըսել կ'ուզենք թէ այդ հաւասարութեան սաղմնաւորուած զաղափարով արիստոկրատական դիժերը, ամբարտաւանութիւնը, էկզիզմը եւ ընչաքաղցութիւնը որոնք երկար ատեն իրենց յենարանը բեր էին կրօնքն ու պետութիւնը, սկսան զուճատիլ գերիացած գործաւոր դասակարգի իրաւանց ճանաչման ստիպողականութեամբ: Իսկ այդ իրաւունքի ճանաչման ստիպողականութիւնը յառաջացաւ ստրուկ գործաւորներու կազմակերպած միութիւններով, գործադուլներով, ապստամբութիւններով ու յեղափոխական գունաւորուած շարժումներով:

ԳՈՐԾԱԳՈՒԼՆԵՐ ԵՒ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆՆԵՐ

Հին Յունաստանի, Սիկիլիոյ եւ Հուլի մէջ մեծ եւ աղիտայի գործադուլներ տեղի ունեցան, որոնց բնոյթը բոլորովին տարբեր էր այժմու մեր տեսած գործադուլներէն: Իսկ այդ տար-



բերութիւնը կը կայանայ գործադուլաւորներու բազկացուցիչ տար-  
 րերուն մէջ, անոնց նպատակին ու գործելու եղանակին մէջ: Այժմ-  
 մու գործաւորները (վեր անենք Մ. Նահանգներու մէկ քաղաքին  
 որոշ գործարանի մը բանուորները), բազկացած են դանազան ազ-  
 գութեանց պատկանող անհատներէ: Անոնց մէջ կան իտալացիներ,  
 գերմանացիներ, մեքսիկոցիներ, սեւամորթներ, հնդկներ, եւայլն:  
 Անոնց գործադուլի նպատակն է պահեսցնել աշխատատեղերը եւ  
 կամ աւելցնել աշխատավարձերը: Անոնք իրենց պահանջը կը ներ-  
 կայացնեն գործարանատիրոջ եւ կամ նոյն գործարանը վարող ըն-  
 կերութեան: Այստեղ, ուրեմն, իրազրութիւնը կը պարզուի սահ-  
 մանափակ շրջանակի մը մէջ, ուր կոխ տեղի կ'ունենայ միայն  
 այն ատեն երբ գործարանի վարչութիւնը անդործներու պահեստի  
 բանակէն բանուորներ կը հրաւիրէ ներս իր գործը շարունակել տա-  
 լու համար: Սոյն կոխին մէջ առհասարակ գործադուլաւորները  
 յազմական դուրս կուգան, երբ կառավարութիւնը յայտնապէս  
 թշնամական դիրք չի բռնէր անոնց հանդէպ: Այժմ, մօտենալով հին  
 ատենուան գործադուլաւորներուն, կը տեսնենք թէ անոնք նոյն  
 ցեղէն են, նոյն լեզուն կը խօսին, ոմանք գերի են, ոմանք ազատ  
 մարդիկ. անոնք աշխատատեղի կը ճատում կամ օրավարձի յաւե-  
 լում չեն պահանջեր, պարզապէս ցցուած են իրենց վրայ կատարուած  
 անմարդկային անդթութեանց դէմ: Ընտանի անասուններէն աւա-  
 նակը, եղը, ձին, կովը այնքան խարազանի հարուածներ չեն ըն-  
 դունիր, որքան իրենք. այս, իրենք որ մարդ են իրենց տիրոջ նը-  
 ման: Եւ ահա գործաւորները կը պարզեն սպասամբութեան դրօ-  
 շակը: Բայց իրենց դէմ կեցողը անհաս գերետէրը չէ, այլ կառա-  
 վարութիւնը, ամբողջ պետութիւնը, որովհետեւ իրենք պետու-  
 թեան, այսինքն տիրող հասարակութեան սեփականութիւնն են:  
 Այսպէս, երբ մէկ կողմը կեցած են անպէն գործադուլաւորները,  
 միւս կողմէ զինուած ուժեր, ուրեմն գործաւորներուն համար  
 կեանքի ու մահուան կոխն է որ պիտի մղեն: Իրենց ունեցած միակ  
 առաւելութիւնը թուական գերակշռութիւնն է: Եւ այդ գերակշռու-  
 թիւնը շատ քիչ անգամ կը նպաստէր գործաւորներուն, ան ալ ժա-  
 մանակաւորապէս:

Պեղոպոնէսեան պատերազմի ատեն մեծ գործադուլ մը տե-  
 դի ունեցաւ Լորիոմի արծաթի հանքերու բանուորներուն մէջ 413  
 թուականին (Ն. Ք.): Գործադուլին կը մասնակցէին բոլոր գերիւնե-  
 րը եւ գործաւորները, ամէնքն ալ բանիմաց մարդիկ: Ոմանք ծնուն-  
 դով գերի էին. ուրիշներ՝ պատերազմական գերիներ էին, ոմանք  
 վաճառականական կարուաններէն հաւաքուած եւ բռնօրէն գերիա-

ցած մարդիկ էին, իսկ ոմանք ալ դատապարտեալ յանցադործներ:  
 Այդ գործաւորներուն համար հանգստի օր չկար. ամբողջ տարին,  
 365 օր, անոնք աշխատելու էին դաւազանի հարուածներուն տակ,  
 իրենց սաքերը շղթաներու մէջ:

Լորիոմի արծաթի հանքերը կը դանուէին Աթէնքէն 30 մղոն  
 հեռու: Անոնք աթենացիներու հարստութեան ազբիւրներու մէկ  
 մասը կը կազմէին եւ կը պատկանէին կառավարութեան: Այդ թան-  
 կաղին մետաղը հանքերէն դուրս կը բերուէր մարդկային աշխա-  
 տանքով երբ արդիական մեքենականութիւն գոյութիւն չունէր:  
 Դէտտորոս երբ կը նկարագրէ եղիպտոսի հանքերուն մէջ աշխատող  
 գործաւորներու դրութիւնը, Բուխեր կ'ըսէ որ զրութիւնը նոյնն  
 էր Լորիոմի հանքագործներուն մօտ: Բազմաթիւ մարդիկ ու կա-  
 նայք, գրեթէ մերկ եւ շղթաներ իրենց ոտքերուն, կ'աշխատէին  
 այդ հանքերուն մէջ. սրածայր երկաթներով կը փորէին ժայռերը,  
 մուրճերով կը կտորտէին փրցուած խոշոր կտորները եւ տողակ-  
 ներով կը տանէին դուրս, ուր ուրիշ բանուորներ անոնց մէջի ար-  
 ծաթը կը հանէին հալեցնելու համար: Ոչ մէկ գործաւորի թոյլ  
 տրուած էր հանգստի համար շունչ ստնել. թեթեւ տնտեսացում մը  
 եւ ահա դաւազանի հարուածը կ'ըջնէր անոր մերկ մարմնին վրայ:  
 Մեռնողը միայն կ'ազատուէր այդ տանջանքէն, իսկ անոր դիակը  
 կը նետէին պատրաստի խարոյկին վրայ ու կ'այրէին:

Պեղոպոնէսեան պատերազմը որ սկսաւ 432 թուին (Ն. Ք.),  
 սպարտացիներու եւ աթենացիներու միջեւ մղուած պատերազմ էր  
 որ տեւեց 27 տարի: Հանքագործները սկիզբէն պատերազմի մասին  
 լուր չունէին. վերջէն երբ իմացան, իրենց ամբողջ հոգիովը կը  
 փափաքէին որ աթենացիները պարտուին: Անոնք կ'ատէին ամէն  
 ինչ. անոնց համար հայրենատիրութիւնը օտարտի զղացում էր,  
 քանի որ այդ հայրենիքը իրենցը չէր: Թէեւ աթենացիները աւելի  
 քաղաքակրթուած էին, թէեւ անոնք լսեր էին որ երկու հազար ըս-  
 պարտացի քաջարի գերիներ անդթօրէն խողխողուած էին, բան մը  
 որ սպացոյց էր անոնց սէրերուն ապերախտութեան, բայց աթե-  
 նացիներու պարտութեամբ իրենց ազատութիւնը գտնելու երազով  
 քան հազար գործաւորներ մէկ անգամէն գործադուլ յայտարարե-  
 ցին եւ սկսան քարերով կռուիլ աթենացիներուն դէմ այն ատեն երբ  
 սպարտացիները մօտեցեր էին Աթէնքի: Անոնք սպաննեցին վերա-  
 կացուններն ու պահապան զինուորները եւ փշրելով իրենց ոտքերու  
 շղթաները սկսան քալել Աթէնքի վրայ: Բայց աթենացիները թէեւ  
 նահանջի ճամբան բռնած էին, սակայն տակաւին պարտուած չէին:  
 Անոնց զինուորները վայրենաբար վերաբերուեցան գործադուլաւոր-



ներուն հետ, անխնայ կոտորեցին իրենց ուղեղը կորսնցուցած անգէն գործաւորները, սրունցմէ շատերը փախան եւ անցան սպարապետներու կողմը եւ օգնեցին անոնց յաղթութեան: Յաւալի էր, սակայն, որ այդ աթենացիները Սպարտայի հողին վրայ իրենց երազած ազատութիւնը չգտան: Հոն էր նոյն բռնութիւնը, նոյն գերատիրութիւնը, նոյն նախանձոտ ու ետպաշտ կոտորածութիւնը, մահացու թշնամին ազատութեան, աստուածատուրք իրաւատիրութիւնը փոքրամասնութեան հանդէպ ստրկացած ու թշուառ մեծամասնութեան:

Սրնիան ուրիշ քաղաք մըն էր աթենացիներու ծովեղբերքին մօտ. ան նոյնպէս հարուստ էր արծաթի հանքերով: Բայց այդ քաղաքէն երկու մղոն հեռու դղեակ մը կար, որուն աստուածը կը սիրէր գործաւորը եւ կը պաշտպանէր դայն, եթէ ան ապաստանէր իր պարխպներուն մօտ:

Սրնիանի հաղար հանքագործները, երբ լեցուած էր իրենց համբերութեան բաժակը, մէկ օրուան մէջ գործադուլ յայտարարեցին եւ չկրնալով կուրել պահակներուն դէմ, փախչելով ապաստանեցան գործաւորներու պաշտպան աստուծոյն դղեակը, որ շրջապատուած էր պարխպներով: Չինուորները պաշարեցին դղեակը, բայց չկրցին ներս մտնել. անոնք այդ աստուծոյն պարխպներուն մէջ, անոր աչքերուն տոջեւ մարդ չէին կրնար սպաննել. դա աստուածութեան դէմ գործուած սճիր էր. ապաստանները դուրս պիտի հանէին ու ապա սկսէին կոտորածը: Պաշարուածները դուրս չէին կրնար ելլել, պաշարողները ներս չէին կրնար մտնել: Այսպէս անցան օրեր, շարաթիւեր ու ամիսներ: Վերջապէս հասաւ վճռական ժամը: Պաշարուող գործաւորները իրենց շինած գէնքերով զինուած եւ իրենց աստուծոյն ապաւինած, նետուեցան դուրս ու հերոսական գրոհումով խուճապի մատնեցին զինուորները, ապա գրաւեցին քաղաքը, գրաւեցին զինարաններու գէնքերը եւ տէրը դարձան երկրին: Բայց գործաւորներու այս յաջողութիւնը կարճատեւ եղաւ: Քաղաքապետ Հերակլիտոս հռովմէացի զօրքերը օգնութեան կանչեց եւ սկսաւ մասսայական խաչելութիւնը: Այդ հաղար ապաստանները, առանց անոնցմէ մէկուն խնայելու, բոլորն ալ մէկ առ մէկ խաչը հանել տուաւ: Այս գէպքը պատահեցաւ այն ատեն երբ հռովմէացիները 133 թուականին (Ն. Ք.) արդէն Յունաստանի տէր դարձեր էին:

Գսենոֆոն կը հաւատարացնէ թէ հանքագործներուն կը արբւէր իւրաքանչիւրին օրական մէկ օրելի որ կ'արժէ երեք ու կէս սենթ, իսկ վերակացուն կը ստանար հինգ օրելի, 17 ու կէս սենթ:

Որ աթենացի գերին ինչ աստիճանի արհամարհուած մի արարած էր, Կիպոլըն կը պատմէ գէպք մը որ ինքնին անհաւատալի կը թուի: Անգամ մը, սիրակիւսացի գերի մը երբ իր տիրոջ ընկերացած էր որսի ատեն եւ ազատեր էր անոր կեանքը սպաննելով խիստ վտանգաւոր վարազ մը, անոր այդ քաջագործութեան լուրը կը հասնի Դոմիտիոսի, մեծ իշխանին ականջին: Իշխանը կը հրամայէ որ իրեն բերեն այդ քաջ գերին: Սեղծուկ գերին ներկայանալով իշխանին կը սպասէ անկէ ասանալ եթէ ոչ վարձատրութիւն մը, այլ զոնէ գովեստի խօսք մը: Իշխանին առաջին հարցումը կ'ըլլայ. «Ի՞նչ տեսակ գէնք գործածեցիր այդ վայրի դազանը սպաննած ատենդ»: Գերին հարցումի սուր շեշտէն սարսափած կը պատասխանէ. «Տէրս ինձի տուած էր զեղարդ մը, այդ զեղարդով սպաննեցի գազանը»: Իշխանը, խոժոռած, դարձեալ կը հարցնէ. «Դուն չե՞ս գիտեր որ զեղարդը ազնուականի գէնք է եւ քեզի նման անարդ արարած մը երբ ձեռքը կտունէ այդ գէնքը, անոր պատիժն է մահը»:

Եւ իշխանը, առանց թողելու որ ինքնարդարացումի բառ մը արտասանէ գերին, կը հրամայէ որ անմիջապէս դայն տանին ու խաչին վրայ դամեն: Եւ այդ գերին խաչը կը հանուի իր տիրոջ կեանքը ազատելուն համար, անոր տուած զեղարդը գործածելուն համար:

ԽՈՒՎՈՒԹԻՒՆՆԵՐ ՀՈՒՎՄԷԱՅԻՆՆԵՐՈՒ ՄԵՁ

Գործադուլներ եւ գործաւորական խռովութիւններ պատահեցան նաեւ Հռովմի մէջ: Յուսահատական բնոյթով մեծ խռովութիւն մը տեղի ունեցաւ 417 թուականին (Ն. Ք.), երբ Լանատոս, Լուկրետիոս, Սպիւրիոս Բուալիոս ատենակալներ էին Վերուլանոսի եւ Գապիտոլինոսի հիւպատոսներու շրջանին: Այդ խռովութիւնը պայթեցաւ սեղապոնէսեան պատերազմի ատեն երբ Լորիանի արծաթի հանքերու 20.000 բանուորները գործադուլ յայտարարած էին:

Այդ ատենները հեռագիր կամ հեռախօս չկար. լուրերը մէկ երկրէն միւսը կը ճամբորդէին փերեղակներու, փախտականներու կամ վաճառականական գործակալներու միջոցով: Եւ որովհետեւ ամէն տեղ ստրկացած գործաւորներու վիճակը նոյնն էր, գործաւորական խռովութիւնները համաճարակի նման կը տարածուէին մէկ տեղէն միւսը: Լորիանի գործադուլէն յետոյ խռովութիւններ սկսան Սրնիանի մէջ, Քուամայի մէջ, Ի վերջոյ Սիլարքիւղի մէջ, եւ ի վերջոյ համաճարակը տարածուեցաւ Հռովմի մէջ: Հռովմի գերիներու ատելութիւնը ուռճացեր էր արխատողրամներու դէմ, որովհետեւ անոնք գործաւոր դասակարգի սիրելի թագաւոր Սելլիոս



Տուլիոսի մահէն յետոյ (578-534 Ն. Ք.) իրենց ճնշելի մեթոտները աւելի սաստկացուցեր էին մղուած իրենց վախէն կամ վրիժառու- թենէն:

Տուլիոս հռովմէացի վեցերորդ թագաւորն էր որ բարեկամ էր աղքատներուն, անարդուածներուն ու գերիներուն: Իր համակ- րութիւնը կապուած էր այն գիտակցութեան հետ որ ինքը եւս ատե- նօք գերի եղած էր: Իր մայրը գերի մըն էր, իսկ հայրը մեծ աղ- նուական մը որ աստուած բլլալու իրաւունք ունէր, որովհետեւ համաձայն կուսպաշտական օրէնքին, ազնուական տոհմի զլխաւո- րը աստուածն էր եւ կրնար գերիներէն կին առնել ու անկէ զա- ւակներ ունենալ: Տուլիոս իր թագաւորութեան ատեն բարեխաւաց գերիներու դրութիւնը, թոյլ տուաւ որ անոնք կազմակերպուին ար- հեստակցական միութեանց մէջ: Նախ քան իր մահը, հաստատեց սահմանադրութիւն մը որ նպաստաւոր էր թէ գերիներուն եւ թէ ազատ արձակուած գերիներուն: Բայց այս մարդուն մեռնելէն յե- տոյ երբ անոր յաջորդեց թագաւոր Տարզուին, Տուլիոսի կառուցած շէնքը փլատակ եղաւ. մէկ կողմ նետուեցաւ անոր սահմանադրու- թիւնը: Նախանձատ ու վրէժխնդիր ազնուականը իր զսպուած կա- տաղութիւնը մէկ անդամէն պայթեցուց գերիներուն զլխին: Մի քանի տեղեր գերիները դիմադրութիւն փորձեցին, բայց հարիւ- բաւոր զոհեր տալէ յետոյ յուսահատ համակերպեցան իրենց ճա- կատագրին:

Հռովմի գերիները 417 թուականին (Ն. Ք.) իրենց խիստ գաղտնի կազմակերպութեամբ սարքեր էին դաւադրական մի սոս- կալի ծրագիր որ էր զիշեր ատեն հրդեհել ամբողջ քաղաքը: Համա- ձայն այդ ծրագրին անոնք մէկ անգամէն հրդեհելու էին քաղաքին զանազան մասերու տուները, որոնք մեծ մասով փայտաշէն էին: Անգամ մը որ հրդեհը սկսէր ամէն կողմէ, բնակչութիւնը սարսա- փահար պիտի մտանուէր խուճապի, իսկ դաւադիրները, պատե- հութենէն օգտուելով, պիտի յարձակէին զինարաններուն վրայ, պիտի գրաւէին զէնքերը, զանոնք պիտի ցրուէին գերիներուն եւ անոնցմով բանակ մը կազմած պիտի գրաւէին կառավարական շէն- քերը, պիտի կողոպտէին բոլոր հարուստներու ինչքերը, զանոնք պիտի կոտորէին անխնայ եւ պիտի հաստատէին գերիներու կառա- վարութիւնը: Բայց այս դաւադրութիւնը շուտով երեւան եկաւ երկու մասնիչներու միջոցով: Մասնիչները մեծ պատուով վար- ձատրուեցան, իսկ դաւադիրներու առաջնորդները խաչ հանուե- ցան: Լիլի իր պատմութեան մէջ չի յիշեր թէ որո՞նք էին խաչ-

ւորները. միայն կ'ըսէ որ ամբողջ երկու ամիս ամբողջ Հռովմի գե- րիները անասելի սարսափի մասնուած էին:

Պուխէր կ'ըսէ որ 194 թուին (Ն. Ք.) ուրիշ վտանգաւոր գոր- ծադուլ մը տեղի ունեցաւ Իտալիոյ Լաթիումի շրջանին մէջ ուր կար լեռնային քաղաք մը, Սետիան: Հոն ապաստանած էին փախչող գերիները որոնք իրենց համար հաստատեր էին գերիներու կոմու- նա մը եւ կը զբաղէին աւազակութեամբ. ինչ աւար որ ձեռք կը ձգէին, իրենց մէջ հաւասարապէս կը բաժնէին: Լաթիումի շրջա- կայ փոքր քաղաքներու եւ գիւղերու բնակիչները շնորհիւ Տուլիո- սի օրէնքներուն, համեմատաբար խաղաղ ու բարեկեցիկ կեանք մը կ'ապրէին: Այդ թագաւորի մահէն յետոյ ազնուականները վերա- հաստատեցին հին ձեւի բնակաւայրութիւնը, զբաւեցին զիւղացիներ- րու հողերը եւ սկսան անլուր անդթութեամբ վերարբուել անոնց հետ որպէս գերիներու: Եւ ահա պայթեցաւ ապստամբութիւն մը րնդհանուր գործադուլով:

Հռովմի ծերակոյտը Կորնելիոս Լենուլուսը զրկեց ապրա- տամբներուն դէմ, որոնք Սետիայի աւազակներու առաջնորդու- թեամբ կատաղի դիմադրութիւն ցոյց տուին. բայց մատնութիւնն ու դասալքութիւնը այստեղ եւս մեծ աւեր գործեցին: Ապստամբ- ները պարտուեցան. Սետիա քաղաքը վերածուեցաւ մոխրի. ա- պրստամբները իրենց առաջնորդներուն հետ, երկու հազար հողի անխնայ կոտորուեցան:

Բայց մասսայական այս ջարդարարութիւնը չկրցաւ խեղ- զել գերիներու ազատատենչ ոգին, նոր ապստամբութիւն մը պայ- թեցաւ Պրանեստի մէջ, ուր գերիները յուսահատական փորձ մը Ը- րին փշրելու իրենց ստրկութեան շղթաները: Հռովմ այս անգամ այդ շրջանը զրկեց Կորնելիոս Մերուլան որպէս հանձարեղ ոսգմա- զէտ: Ապստամբները, թէեւ երկու անգամ աւելի բազմաթիւ էին քան հռովմէացի զինուորները, սակայն կը ներկայացնէին մի ան- կազմակերպ խուժան, շունենալով հարկ եղած զէնքերը եւ պահան- ջուած զինուորական վարժութիւնը, խուճապի մատնուեցան սա- կաւաթիւ կանոնաւոր զօրքերու յարձակման առջեւ. եւ գէշը այն էր որ փախչիլ փորձողներէն ոչ ոք կրցաւ ազատուիլ: Բռնուած գերիները, երկու հազար հողի խաչուեցան, իսկ անոնց կոխին մասնակցող քաղաքացիները, հինգ հարիւր հողի կախաղան բարձ- րացան:

Լիլի մեղ կը հաւաստիացնէ որ հռովմէական օրէնքով խա- չելութիւնը որպէս ամէնէն անարգ պատիժ սահմանուած էր գերի-



ներուն, իսկ քաղաքացիներուն պատիժը պատուարեր պատիժ էր, կախաղան կամ գլխատում:

Հռովմի ազնուականութիւնը այս ապստամբութիւններէն կատարած ծերակոյտի միջոցով օրէնք անցնել տուաւ որ խիստ հըսկողութեան ենթարկուին գերիները եւ բոլոր կասկածելիները բռնուելով բանտարկուին:

Ի՞նչպէս էր հռովմէական բանտը:

Իտալացի հնարան եւ օրէնսդէպ Բոմբարտինի հռովմէական բանտը կը նկարագրէ հետեւեալ բառերով.

«Հին հռովմէական բանտը գետնափոր նկուղ մըն էր, խոստաւոր նկուղ մը, որ ունէր տասներկու օտք երկար սանդուխ մը: Գերի բանտարկեալները հոն կ'ապրէին գիշեր ու ցերեկ: Մի քանի ծակեր բացուած էին հոս-հոն, որոնցմէ լոյս եւ օդ կ'աննէին բանտարկեալները: Գուցէ ընթերցողը մտածէ թէ ատիկա մեծ շէնորհ մըն էր, զոր կ'ընէին կառավարական պաշտօնեաները որպէս-գի բանտարկեալները չզրկուին բնութեան ձրիօրէն պարզեւած լոյսէն ու օդէն, բայց տարբեր էր անոնց դերը: Բանտապահը երբեմն այդ ծակերէն կը նայէր թէ ինչ կ'անցնի կը դառնայ վարը, տանջարանին մէջ, որովհետեւ ան չէր համարձակեր հոն մտնել խեղ-զուելու վախէն: Մարտափելի էր այդ նկուղին մէջ ախրոյ դարձահանութիւնը: Բացուած ծակերը ուրիշ բանի ալ կը ծառայէին օրական երկու անգամ այդ ծակերէն վար կը կախէին բանտարկեալներուն համար ուտելիք եւ ջուր:

Բանտարկեալ գերիներու զործն էր փորել, անընդհատ փորել նկուղը ու քարեր դուրս հանել ազնուականներու պալատներ կառուցանելու համար: Այդ բանտը, ուրեմն, քարահանք էր, որ ազօտ կերպով լուսաւորուած էր լապտերներով: Ով որ հոն կը մտնէր, այլեւ երկինքի ու արեւու երեսը չէր կրնար տեսնել. անոնք կը դառնային երազ: Մեծնոյ գերիներու գիակները պարաններով կը քաշուէին դուրս ու կ'այրուէին. անոնց համար գերեզման չկար ու չէր կրնար ըլլալ: Երկիրը, հողը աստուածներուն կը պատկանէին, գերիի մը գարշելի մարմինը երբ հողին մէջ կը թաղուէր, այդ հողը կը պղծուէր: Այդպիսի բանտեր երեք հատ կային Հռովմի մէջ, որոնց մէջ կ'աշխատէին երեք հազարէ աւելի դասապարտեալ գերիներ բոլորովին զրկուած մարդկային տարրական իրաւունքներէն: Ինչպէս կ'ապրէին անոնք այդ գերեզմաններուն մէջ եւ ինչպէս կ'աշխատէին ոչ ոք գիտէ, եւ ոչ ոք կըրցած է պատկերացնել անոնց դժոխային կացութիւնը. միայն մէկ բան յայտնի է որ այդ խեղճուկ արարածներու խորունկ փոսերէն հանած քա-

րերէն կը շինուէին ազնուականներու զգեսկները, անոնց պաշտած աստուածներու տաճարները եւ կրկէսներու կամարներն ու նստարանները»:

Մենք դարձեալ երախտապարտ ենք կարլ Պուխերի որ մեզի կուտայ ուրիշ ապստամբութեան մը պատմութիւնը: Այդ ապստամբութիւնը անգլի ունեցաւ 196 թուականին (ն. Գ.), էտրուրիայի երկրագործական բանուորներուն կողմէ: Այս երկրամասի բնակչութիւնը Իտալիոյ սմէնէն քաղաքակրթուած ու բարեկեցիկ կեանք ապրող բնակչութիւնն էր: Հռովմէացիք երբ տիրեցին այդ երկրամասին, մարդիկը դարձան անարգ ստրուկներ: Տիրերիսո կրակիոս երբ Սպանիա կ'երթար, անցնելով էտրուրիայէն սարսափով տեսաւ որ երբեմնի հարուստ ու երջանիկ երկիրը, ուր մարդիկը կ'ապրէին խաղաղութեան եւ առատութեան մէջ, դարձեր էր թշուառներու երկիր մը: Եւ այս ազնուասիրտ հռովմէացիին իր կեանքի օրերը յատկացուց այդ թշուառ ժողովուրդի ազատութեան դատին, մի ասպետական նպատակ որուն զոհը դարձաւ ինք. հռովմէացիք կըտրեցին անոր գլուխը:

Իրողութիւն է որ գերեախրական սխտէժը իր սարսափելի ճնշումներով ոչ միայն դուրս քշեր էր երբեմնի ազատ ու երջանիկ էտրուրիացիները իրենց բնաշխարհի հիմնարկներէն, այլեւ նոյն սխտէժը հաստատած էր Իտալիոյ հարաւային մասերուն մէջ, Սիլիլիոյ մէջ, Փոքր Ասիոյ մէջ, Յունաստանի գրեթէ բոլոր մասերուն մէջ, Սպանիոյ եւ ուրիշ փոքր կղզիներու մէջ:

Թէեւ խեղճ գերիները հազարներով կը մեռնէին գաւազանի հարուածներուն տակ, քարահանք բանտերու մէջ, խաչերուն վրայ, բայց անոնք կատարած կը մնային իրենց ազատութեան երազին եւ չէին հրաժարեր այն լմբոստութեան փորձերէն, որոնցմով պիտի փշրէին ստրկութեան անտանելի լուծը:

էտրուրիայի գերի աշխատաւորները ահա այդ փորձերէն մէկուն գիմեցին իրենց յուսահատական վայրկեանին եւ ապստամբեցան հռովմէական բռնակալութեան դէմ: Բայց անոնք ալ ենթարկուեցան նոյն ճակատագրին. պարտուեցան ու կոտորուեցան հազարներով:

Ուրիշ ապստամբութիւններ պայթեցան Ապուլիայի եւ Պրեթիումի մէջ: Հովիւներ, երկրագործներ, գերիներ զինուեցան բահով, բրիչով եւ գաւազանով. սպաննեցին իրենց վերակացուները, դրակեցին զինարաններու դէմքերը, քաշուեցան լեռները ու սկսան յարձակողականի: Մանրամասնութիւնը կը պակսի անոնց հերոսական ընդհարումներուն, բայց ախրոյ դասակարգի քաջագործու-



թեանց ներբողականը ընելու վարժուած պատմադիրները մեզի կը հաւաստիացնեն թէ այդ կռիւներուն ընթացքին 1500 հոգի խաչուեցան եւ 7000 մարդիկ քուէցան հանքերու մէջ դատարարուելով տաժանակիր աշխատանքի :

Յունա-հռովմէական հին շրջանի պատմաբաններէն ոմանք, սակայն, աւելի բարեխիղճ եղած են որ մեզի տուած են ոչ միայն գերիներու ապստամբական շարժումներու մասին տեղեկութիւններ, այլև կենսագրական գիծերը անոնց հերոս առաջնորդներուն :

Մենք կը յիշատակենք միայն անոնց գլխաւորները, որոնք հետեւեալներն են. Դրիմաքոս, Վերիատոս, Եռնուս, Արիստոնիկոս, Աթենիան եւ Սպարտակոս :

ԴՐԻՄԱՔՈՍ

Պատմարան Նիմֆոտորոս Սիզուլուսի կը պարտինք այն յոյժ կարեւոր ծանօթութիւնները, զորս ան տուած է Քիոս կղզիի սարուկներու յեղափոխութեան մասին: Այս պատմաբանը ապրած է քրիստոնէական թուականէն հարիւր տարի առաջ եւ իր պատմութեան դէպքը տեղի ունեցած է իր ապրած ժամանակաշրջանին :

Քիոս յունական արշիպելագոսի մէջ կղզի մըն է, ուր կ'ապրէին պիղասկան թափառաշրջիկ ցեղեր: Երբ Սպարտա եւ Աթէնք իրենց սեփական գերիներուն վրայ կ'աւելցնէին պատերազմական գերիներ, Քիոսը եղած էր մի տեսակ գերեզմանոանոց, անշնորհք տեղ մը ուր փրկելիկներն ալ կանխագոյն շրջանին գրադած էին գերեզմանութեամբ :

Կղզիի բնակիչները, քաջարի եւ աշխատունակ մարդիկ, չէին կրցած իրենց համար ապահովել ազատ ու խաղաղ կեանք մը, անոնք ալ դարձեր էին գերիներ, ենթարկուելով նոյն ճակատագրին, ինչ որ էին ուրիշ տեղերու գերիները: Նիմֆոտորոս, կղզեբնակներու կենցաղն ու սովորութիւնները նկարագրելէ վերջ մեզի կուտայ Դրիմաքոս անունով գերիի մը պատմութիւնը :

Դրիմաքոս երիտասարդ մըն էր, ի բնէ ուշիմ բայց դաժանաբարոյ. տարօրինակ կերպով վճռակամ ու անվհեր երիտասարդ մը. ջղային էր, նաեւ շափազանց զգայուն: Անիկա խորին ցաւով ու ցասումով կը տեսնէր թէ ինչպէս հաղարաւոր գերիներ իրենց բնակարաններէն քուէած, կը բերուէին ու կը ծախուէին որպէս անասուններ եւ կ'ենթարկուէին իրենց տէրերու խարազանի հարւածներուն: Նոյն վիճակին ենթարկուած էին իր ցեղի անդամները, կիներ ու տղամարդիկ անխաիր: Երիտասարդ Դրիմաքոս որուն

սիրտը կ'այրէր ի տես այդ անմարդկային արարքներուն, վճռեց վերջ տալ տիրող դրութեան եւ կամ մեռնիլ կռիւի մէջ: Բայց ան շատ վստահ էր թէ պիտի յաղթէր. որովհետեւ կը տեսնէր որ գերիները թիւով հազար անդամ աւելի էին քան թէ անոնց տէրերը: Ո՞ւր է ասոր զազանիքը: Այդ տէրերը արտասովոր Ֆիլիքական կազմուածք չունէին, ի՞նչպէս կ'ըլլար որ կրկու գերետէրեր հազարաւոր գերիներ ոչխարի պէս կը քչէին հոս ու հոն. ուրեմն, պարզ էր որ գերետէրերու ամենակարողութիւնը գերիներու անտըրտունջ համակերպութեան մէջ էր: Երիտասարդ Դրիմաքոս այսպէս տրամաբանելով հասաւ այն եզրակացութեան, որ եթէ մէկը այդ գերիներուն մօտենար եւ անոնց բսբ թէ իրենք ալ մարդ են ինչպէս իրենց տէրերը եւ իրաւունք ունին իրրեւ մարդ ազատ ապրելու, առանց զրկանքով ուրիշները ապրեցնելու, այլևս ոչ գերետէր կ'ըլլար, ոչ ալ գերի, մարդիկ կրնան ապրիլ եղբայրաբար, կրնան աշխատիլ եղբայրաբար եւ կեանքը վայելել եղբայրներու պէս, առանց մէկն ու միւսը զրկելու: Դրիմաքոս գիտնական մը չէր, համալսարան չէր աւարտեր, բնութեան զաւակն էր ան եւ գիտէր պարզ բայց ուղիղ մտածելու եղանակը:

Հանճարները որքան ճիշդ եւ արագ կը մտածեն, նոյնքան ճիշդ ատենին եւ արագ կը գործեն: Եւ Դրիմաքոս իր ժամանակի մեծազոյն հանճարն էր, առապող գերիներու երազի մարմնացումը:

Եւ այս երիտասարդը, ապստամբական տրամադրութիւն ունեցողներէն խումբ մը կազմած, քաչուեցաւ լեռները, ուր կ'ապրէին որսորդներ ու ազատ լեռնականներ: Ասոնք իրեն զաշնակիցներ դարձան: Ան իր մարդոց հետ շինեց հիւղակներ: Ատեն մը որսորդութեամբ պարապեցան, բայց որսի կենդանիներն ալ տակաւ սկսան նուազիլ. պահանջը շատ էր, մատուցումը քիչ: Ապստամբները հողով ու քարերով չէին կրնար սնանիլ եւ լեռնային շրջանը հողագործութեան յարմար չէր: Անոնց ուտելիք պէտք էր եւ ուտեստեղէնները ամբարուտած էին քաղաքներու ամբարանոցներուն ու տուններուն մէջ: Ի՞նչ կրնային ընել անոնք, երբ զինուած մարդիկ գերետէրերու հրահանգով կը հալածէին զիրենք: Մի օր ալ լուր հասաւ որ այդ վրէժխնդիր տէրերը վճռած էին զիրենք բռնել մեռած կամ ողջ: Սկիզբի օրերը հակառակ ընթացք էին բռներ իրերը ապստամբներուն դէմ, որոնք ամէն բանէ զրկուած, յուսահատ եւ անօթի, խոտով ու արմատներով կը սնանէին: Բայց պարազաները փոխուեցան: Քաղաքէն ու գիւղերէն փախստական նոր գերիներ հասան, իրենց հետ բերելով կացիներ, սղոցներ, դանակներ եւ



որ ամէնէն կարեւորն էր՝ սրտապնդիչ տեղեկութիւններ, այսինքն այն որ ամէն տեղ զաղտնի ընկերութիւններ կազմուած էին, որոնք համակիր էին ապստամբ գերիներուն եւ պատրաստ էին օգնելու իրենց :

Դրիմաքոս ապստամբ գերիներու առաջնորդը զարձաւ : Ան իր եղբայրական վերաբերմունքով, խրախուսիչ խօսքերով, իր կըշնադատ դիրքով ու ռազմադէտի յատուկ հանճարով կըցաւ մի այնպիսի կարգապահութիւն հաստատել իր խումբի անդամներուն մէջ, որ անոնք անօթի վիճակով սկսան զինքը պաշտել որպէս մետիա, որպէս երկինքէն զրկուած մի ազատարար : Անոր խօսքը աստուածային խօսք էր . հրամանը՝ աստուածային հրաման : Ապստամբներու նեղ զրութիւնը դանոնք փոխանակ յուսալքման առաջնորդելու, իրենց կորովի առաջնորդին անկրկնելի ինքնավստահութեան շունչով անոնց ներշնչած էր յանդգնութիւն, քաջութիւն եւ յաղթութեան անընկճելի հաւատքը : Մարդ էակը երբ իր կատաղութենէն մահը կ'արհամարհէ, գիւցազն կը դառնայ :

Դրիմաքոս ուսումնասիրած էր իր խումբի անդամներու հոգերանութիւնը եւ մտածեց որ հաւած էր զրոհ տալու ժամկէտը : Եւ ան իր խումբով դարանակալ սպասումէ յետոյ յանկարծ յարձակեցաւ գերետէրերու ուղարկած զինուորական ջոկատին վրայ, որ մօտեցեր էր առիւծներու բերդին : Զինուորները յանկարծակիի եկած մտանուցան խուճապի . փախչող փախչողի : Շատեր սպանուեցան : Ապստամբները զրաւեցին անոնց զէնքերը եւ սկսան հալածել փախտական զինուորները՝ բռնուած զինուորները սպաննելու վրէժինդրութեամբ : Լերան ժայռերը ներկուեցան արիւնով : Սոյն տեսարանին ի տես Դրիմաքոսի զգայուն սիրտը, լեցուած մի ինչ որ անբացատրելի համակրութեամբ, հրաման բրաւ դաղբեցնել կոտորածը : Յաղթական ըլլալ բայց ոչ անգուք . այդ էր իր դաւանած սկզբունքը :

Այդ եւ ասոր յաջորդող ուրիշ յաղթանակներ ապստամբ գերիներուն ապահովեցին կատարեալ անկախութիւն իրենց զբաւած զէրքերուն մէջ : Ապստամբ գերիները, զինուած իրենց տէրերու զրկած զինուորներուն զէնքերով եւ իրենց շարքերը ստուարացուցած նորեկ գերիներով սկսան մտածել զինուորական խտակեցութիւնը եւ կարգապահութիւնը խորացնելու եւ յաւերժացնելու մասին : Դրիմաքոս եղաւ թագաւոր, ընդհանուր հրամանատար եւ բացարձակապետ . ան հաստատեց անխախտելի կանոններ իր հպատակներուն համար . կանոններ խիստ ու դաժան, բայց արդար : Մի քա-

նի ճակատամարտներու մէջ կրկին եւ կրկին յաղթելով գերետէրերու զրկած բանակներուն (մեր պատմարանը այդ կրիւներու տեսլութիւնն ու թուականը չի նշեր) ապստամբ եւ յաղթական գերիները շարունակեցին իրենց կենսամթերքները ստանալ ամբարանոցներէն, ախոռներէն, ֆարմերէն եւ խանութներէն հետեւեալ տարապայման միջոցով : Քոնֆէրանս մը դումարուեցաւ ուր ներկայացան գերետէրերը Դրիմաքոսի հետ հաշտութեան գետին մը կազմելու համար : Երբ զօրավարներն ու քաղաքի ատենակալները հաւաքուեցան հոն, յաղթական Դրիմաքոս հետեւեալ խօսքերը ուղղեց անոնց, խօսքեր որոնց նմանը մինչեւ այդ օրը լսուած չէր գերիի մը բերնէն ու չլսուեցաւ անկէ յետոյ . «Նս ձեզի կը հաղորդեմ աստուածներու պատգամը, որուն վրայ օկաւ մեր յեղափոխութիւնը եւ նոյն պատգամին հետեւողութեամբ մենք զազար կուտանք մեր յեղափոխութեան : Մենք մեր զէնքերը ձեզի պիտի չյանձնենք եւ ոչ մէկ պարագայի տակ մեր վիղբ պիտի չյօժարինք զնել սորկութեան լուծին տակ : Մենք վճռած ենք մեր ազատութիւնը պահպանել ամենակալի խորհրդով : Ուրեմն, եթէ դուք հետեւիք իմ թելադրանքին եւ անկեղծօրէն ու անկասկածելի ուղղամտութեամբ ու հաւատքով ստորադրէք իմ առաջարկած դաշնագրութիւնը, պատերազմը կը վերջանայ, կը զաղբի արիւնահեղութիւնը եւ մենք փոխադարձաբար կ'ապրինք խաղաղութեամբ եւ այն պետութիւնը, որուն մենք ալ անդամ ենք, կը բարգաւաճի : Մեր ուղածը մեր ապրուոտի պայմաններու ապահովութիւնն է . ոչ աւելի, ոչ պակաս : Մենք պիտի ապրինք մեր աշխատանքով եթէ այդ աշխատանքը զոհացնէ մեր պէտքերը : Իսկ եթէ ապագային երբ անօթութիւնը եւ կարիքը ստիպեն, մենք պիտի դանք ձեր ամբարանոցները, ձեր նախիրը եւ խանութները եւ պիտի առնենք ինչ որ մեզի անհրաժեշտ է . եւ պիտի առնենք կշիռքով ու չափով . այդ կշիռքն ու չափը պիտի պարզենք ձեր աչքերուն առջեւ : Մենք պատրաստած ենք մեր կնիքը, անով պիտի կնքենք մեր ստացածներու փոխարէն տրուած ընկալագրերը . ասով կը հաստատուի որ մեր գործը աւազակի գործ չէ : Եթէ կ'ուզէք որ մեր յարաբերութիւնը խաղաղութեամբ շարունակուի, ձեր գերիներուն հետ պիտի վարուիք մարդավայել կերպով : Եթէ ձեր գերիները փախչին ու մեր մօտ դան, դա ապացոյց է որ դուք կը շարունակէք ձեր անգութ վերաբերմունքը : Այն ատեն նորէն կը սկսի մեր պատերազմը . որովհետեւ մենք բազմացող գերիները հոգատարելու միջոցներ չունինք : Ի հարկէ, իմ խօսքը գերիներու մասնաշաղկան փախուտի մասին է . դալով մէկ կամ երկու փախչող գերիներուն, որոնք կ'ապաստանին մեր բանակատեղին,



ևս խիստ քննութեանէ պիտի անցնեմ դոնոնք եւ պիտի ստուգեմ անոնց փախուստի պատճառները, եթէ տեսնեմ որ անոնք իրապէս իրենց տիրոջ անգութ վերաբերմունքին հետեւանքով փախեր են, անոնց տիրոջմէն հատուցում պիտի պահանջեմ. իսկ ընդհակառակը, երբ ստուգեմ որ փախչողը բանաւոր պատճառ մը չունի, զայն պիտի վերադարձնեմ իր տիրոջ: Իմ կոչումն է միմիայն յուսահատ արդարը պաշտպանել»:

Պարտուած գերետէրերու ընկճուած ներկայացուցիչները ուրիշ երկրնարանք չունէին. անոնք ատարագրեցին ներկայացուած պայմանադրութիւնը եւ անկէ յետոյ տարիներով զերիներու թագաւորը պէտք եղած ատեն՝ մարդիկ կը դրկէր քաղաք ու ամբարանոցներէն կը ստանար ինչ որ պէտք էր իր հպատակներուն համար:

Այստեղ պէտք է ըսել որ հռովմէական կայսրութեան թաթը այնքան երկար եւ ուժեղ չէր որ մինչեւ Քրիստ կղզին հասնէր. որովհետեւ իր հիւժարտը արդէն վարակեր էր ամբողջ մարմինը:

Այսու կը տեսնենք թէ Դրիմաքոս գերետիրական սխտէմը չէր վերցնէր. ան կ'ընդունէր գերետիրութիւնը որպէս ընկերային, կրօնական արդար մի հմնարկութիւն, միայն հակառակ էր կատարուած անարդարութեան եւ տէրերու անգութ վերաբերմունքին:

Վերեւ նկարագրուած դաշնագրութեան արդիւնքը այն եղաւ որ ամբողջ Քրիստ կղզին, ուր կը վիտային աւազակները, ինկաւ Դրիմաքոսի ոստիկանական իշխանութեան տակ:

Նախապէս աւազակ մը երբ գերետէր ազնուականի մը տունը կողոպտել կ'ուզէր, ատաջին անգամ կը սպաննէր անոր տունը պահպանող զերիները: Դրիմաքոս գիտէր այդ, ատոր համար թըշնամի էր աւազակներուն եւ անոնց ոչ միայն պաշտպանութիւն չէր տար, այլեւ իր ձեռքը անցած աւազակը առանց այլեւայլի կը սպաննէր: Անոր այդ խստութեան հետեւանքով կղզին մաքրուեցաւ աւազակներէն:

Այսպէսով գերի թագաւորը ոչ միայն բացարձակ իշխողը դարձաւ Քրիստ կղզիին, այլեւ դատաւորը ամբողջ բնակչութեան:

Տարիներ անցան եւ Դրիմաքոս մօտեցաւ ծերութեան սահմանին. ան մնաց իր գահին վրայ, որպէս կայսր, որ իշխանութիւն ունէր եւ պատժելու, եւ վարձատրելու: Բայց այդ թագաւորը զեղիտութեան ու վայելքներու մէջ չմխրճուեցաւ. մնաց համեստ եւ հաւատար իր հպատակներուն. ատոր համար բացի զուսպ վրէժ-խընդրութեամբ լեցուած գերետէրերէն ոչ ոք կ'ատէր զինք:

Դրիմաքոս իր հպատակներուն մէջ երիտասարդ մը ունէր,

զոր շատ կը սիրէր. հետու երկրէ մը բերուած ու ծախուած գերի մըն էր ան, որ փախչելով ապաստաներ էր իր մօտ եւ յետոյ դարձեր էր իր թիկնապահը:

Նոյն ատեն, Քրիստի գերետէրերը ճնշուած Դրիմաքոսի իշխանութեան տակ, պատահութեան մը կը սպասէին ազատուելու իրենց յոյժ ատելի մէկ գերիի կամայականութենէն: Հռովմէն յոյս չկար. ձախողած էին իրենց բոլոր փորձերը. ժողովուրդի համակրութիւնը իրենց թշնամույն կողմն էր. ուրեմն, միակ մէկ միջոց կը մնար, դաւադրութիւնը. ծերացած առիւծը միայն դաւադրութեամբ կարելի էր թակարդել: Եւ անոնք հրովարտակ մը հանեցին, որ Դրիմաքոսի գլուխը բերողին պիտի տրուէր մեծ քանակութեամբ ոսկի որպէս վարձատրութիւն:

Դրիմաքոս, ծերացած եւ հողեպէս ընկճուած, գիտէր թէ մօտ էր իր մահը, գիտէր նաեւ որ իր հասաատած սխտէմը կապուած էր իր անհատականութեան հետ, իր մեռնելէն յետոյ հին սխտէմը նորէն պիտի հաստատուէր: Ուրեմն, մէկը պէտք էր որ բախտաւորուէր իր մահովը. եւ որոշեց իր գլուխը տալ եւ անով վարձատրել իր սիրած թիկնապահը, իրեն միշտ հաւատարիմ, երիտասարդ թիկնապահը: Մի օր իր մօտ կանչեց զայն եւ անոր ըսաւ. «Ձաւակ, ես չամուսնացայ, դաւիկի սէր չճանչցայ, բայց քեզ սիրեցի որպէս իմ հարազատ դաւակը: Ես կեանքը ապրեցայ իմ սկզբունքով. այսօր գիտեմ թէ իմ կեանքը մօտեցեր է իր վերջակէտին. գիտեմ նաեւ որ երբ ես մեռնիմ դուն գերետէրերուն վրէժխնդրութենէն պիտի չկրնաս ազատուիլ. պիտի ենթարկուիս սոսկալի չարչարանքներու: Ես չեմ ուզեր որ դուն իմ պատճառով տանջուիս. ընդհակառակը, կ'ուզեմ որ դուն քանի որ երիտասարդ ես, իմ շընորհիւ հարուստ եւ ազատ մարդ դառնաս: Այժմ, Քրիստի գերետէրերը իմ գլուխը իրենց տանողին խոստացեր են մեծ դամարով ոսկի եւ ազատութիւն: Հիմա դուն կը կտրես իմ գլուխը, կը ստանաս քու վարձատրութիւնը, կ'երթաս քու հայրենիքը եւ հոն կ'ապրիս երջանիկ. միայն միշտ յիշելու ես որ դուն ատենօք գերի եղեր ես ու որպէս գերի բերուեր ես Քրիստ կղզին, հետեւաբար քու ամբողջ կեանքիդ մէջ ուր որ գերի մը կը տեսնես, ազնուօրէն պիտի վերաբերուիս անոր հետ, եթէ անկարող ես զայն գերութեանէ ազատել»:

Երիտասարդ թիկնապահը, որուն անունը մեր պատմարանը չէ յիշած, այդ անսպասելի եւ արտառոց առաջարկին վրայ կը շուարի. ապա կը նայի իր թագաւորի աչքերուն. արդեօք իր բարեբարը հաւատարմութիւնը կը փորձէր թէ կատակ է ըրածը: «Կը տեսնեմ որ զարմացար», կ'ըսէ Դրիմաքոս, «զարմանալու ո-



չինչ կայ. առիկա իմ կամքն է եւ պիտի կատարուի»: Երիտասարդը կը մերժէ կատարել այդ սոսկալի գործը. արտասուալի աչքերով կը թախանձէ, կը պաղատի որ ինք այդ բանը չի կրնար ընել. «Տէր իմ, լաւ է որ դիս սպաննես», կ'ըսէ, «քան թէ հարկադրես որ այդ սարսափելի սճիրը գործեմ: Ես զիտեմ, դուն աակաւին պիտի ապրես, իսկ մեռնելէդ վերջ, եթէ իմ կեանքը չկրնամ ազատել, հոգ չեմ ընէր թէ ինձի ի՞նչ կ'ընեն»:

Անօգուտ. Դրիմաքոս անդրդուելի կը մնայ. եւ կը շարունակէ իր պնդումը. «Ես քու թագաւորն եմ», կ'ըսէ անոր, «ես քու իշխանը եւ հրամանատարն եմ. դուն սկիզբի օրը, երբ ինձի զիմեցիր, երզում ըրիր որ պիտի կատարես իմ ամէն մէկ հրամանը, եւ ութը տարիներու ընթացքին դուն հաւատարմօրէն կատարեցիր իմ բոլոր հրամանները: Այժմ, կը հրամայեմ քեզի որ կտրես իմ գլուխը եւ ստանաս քու վարձատրութիւնը, առիկա իմ վերջին հրամանն է»:

Եւ երիտասարդ թիկնապահը, տեսնելով որ բացարձակապէս անհնարին էր մերժել իր տիրոջ հրամանը, համակերպեցաւ:

Գերի թագաւորը կը դնէ իր վիզը խոշոր կոճղի մը վրայ եւ երիտասարդը սուբ կացինի հարուածով կը գլխատէ զայն:

Թագելով իր սիրելի թագաւորին անկուխ մարմինը, անոր զլուխը կը տանի Քիոսի գերետէրերուն, կը ստանայ ոսկիները եւ իր ազատութիւնը ու կը մեկնի իր հայրենիքը:

Բայց անհետատես գերետէրերը շուտով տեսան իրենց մեծ սխալը: Դրիմաքոսի խումբի անդամները կարգապահութեան ու արդարութեան վարժուած նոյն մարդիկը չմնացին. անոնք իրենց վախէն քաղաք չմտան, գերի չդարձան, այլ եզան աւազակ. անոնց միացան ուրիշ փախչող գերիներ, քանի որ գերետէրերը ինքզինքնին ազատ զգացին վերակրկնելու իրենց անդթութիւնները: Ասանկով կզզին նորէն լեցուեցաւ աւազակներով, որոնք սկսան կողոպտել, սպաննել եւ սպաստանիլ անմատչելի լեռները: Քիոսի գերետէրերը յիշեցին Դրիմաքոսի պատգամը, որ աստուածները բարկացած իրենց դէմ զրկեր էին վրիժառու սգի մը որ ինքն էր, Դրիմաքոսը:

Եւ մարդիկը, ի յարգանս գերիներու այդ մեծաւորին, անոր գերեզմանին վրայ բլուրի նման հողաթուղձ մը շինեցին, զոր յոյները կոչեցին Էրրում: Եւ առիկա եղաւ հերոսի պաշտամունքի վայր մը: Անկէ յետոյ նոյն տեղւոյն վրայ կառուցուեցաւ սրահար

մը, Դրիմաքոսի տաճարը, որուն աւերակը այսօր կը վկայէ այդպիսի հերոսի մը պատմական զոյութեան իրականութիւնը:

ՎԻՐԻԱՏՈՍ

Երբորդ փիւնիկեան պատերազմին որ առաջինին ու երկրորդին նման յաջող ելք ունեցաւ Հոովմի համար, Կարկեղոնը, «ասարկու Աննիրաղի երկիրը» անցաւ հոովմէացիներու ձեռքը: Հոովմ այդ երկիրը մասերու բաժնեց եւ բնակիչները կոտորեց եւ կամ որպէս գերի ծախեց, առանց խտիր դնելու մանուկներու եւ ծերերու, մանկամարդ ազջիկներու եւ կամ յղի մայրերու միջեւ:

Հոովմէական աշխարհակալութեան քայլերուն առջեւ Կարկեղոնը մեծագոյն արդելիչ ժայռն էր, փշրուեցաւ այդ ժայռը, Հոովմը սկսաւ հանդիստ շունչ առնել, բայց այդ շունչը դո՛ւնաւ կութեան շունչ չէր, որովհետեւ տակաւին կը շնչէր այն սարսակութեան շունչ չէր, որովհետեւ անունն էր Աննիրաղ: Հոովմ իր տիրափելի ուրուականը, որուն անունն էր Աննիրաղ: Աննիրաղ պետութեան սահմաններուն մէջ ամէն տեղ փնտոեց զայն: Աննիրաղ արաստուած էր զայն զրկել Հոովմ: Աննիրաղ իր մատանիին մէջ պահած թոյնը խմեց ու մեռաւ 183 թուին (Ն.Ք.): Հոովմ երբ լսեց Աննիրաղի մահը, այն ատենն էր որ դո՛ւնաւ կութեան շունչ առաւ. ալ վախ շունէր այս աշխարհի վրայ:

Եւ Հոովմ շարունակեց անսանձ իր ասպատակութիւնները. եւ Կարկեղոնէն վերջ գրաւեց ամբողջ Սպանիան:

Հոովմէացի հողատէր շահապէսները ոչ միայն իրենց գերետիրական դաժան օրէնքները անխզուութեամբ կը գործադրէին Փոքր Սսիոյ, Իտալիոյ եւ Սիկիլիայի մէջ, այլ նոյն օրէնքները գործադրութեան գրին նաեւ արեւոտ Սպանիոյ մէջ:

Քաղաքներ եւ գիւղեր ամէն կողմ, ինչպէս նաեւ ցրուած ազարակներ ու փոքրիկ արդիւնաբերութիւններ իրենց զործաւորական միութիւններով ու կոմունաներով փճացան ու վերջացան, իսկ ժողովուրդը մաս մը գերի տարուեցաւ օտար աշխարհներ. եւ մընացեալները զժողովին բանակալութեան ներքեւ խանձած ատելութեամբ ու վրէժխնդրութեամբ մխրճուեցան անտելի թշուառութեան ու վատասերման մէջ:

Այսպէս էր գրութիւնը Սպանիոյ մէջ 149 թուականին (Ն.Ք.), երբ կը սկսի Վերիտաոսի մեր պատմութիւնը: Նախ քան հընդամէական յաղթանակները, հին Լուսիտանիան բարբաւաճող բընակչութեամբ ծաղկեալ մի երկիր էր: Հոն կային ընկերակցու-



թիւններ, լուսիտանիացի աշխատաւորական միութիւններ, որոնք նպաստաւոր պայմաններու շնորհիւ իրենց գոյութիւնը կը պահէին եւ հարստացեր էին ալ: Անոնց գովելի ձեռնարկութեանց հետքերը մինչեւ այսօր տակաւին կը մնան, որպէս պատմական յիշատակաբաններ. անոնք են զեղեցիկ զղեակները, տաճարները, կամուրջները եւ պողոտաները: Անոնց այդ բարձրագոյն փառքի օրերուն, Հոռովմը ստուերի մէջ կը մնար. բայց Հոռովմը, մարդկային ստրկութեան անէճճի այդ սեւ ներկայացուցիչը, այս զեղեցիկ երկիրը իր երջանիկ եւ ծաղիկաւ բնակչութեամբ աւերակ դարձուց եւ վերածեց դժոխքի:

Մեր պատմութիւնը կը սկսի Սերվիոս Կալբայի դաւաճանութեամբ: Այս մարդը այն գորավարն էր որ կը զեկաւարէր Մպանիա արշաւող բռնակը: Ինչպէս Վերրէսը Սիկիլիոյ մէջ, Կալբայն ալ յայտնի էր որ մարդկութեան հանդէպ յարգանքի օճէ զգացում չունէր: Անիկա Սպանիա մտած պահուն նախ ուղեց ժողովուրդին վտասնութիւնը դրաւել. նախ յայտարարեց որ ինք օճէ մէկուն ինչքին, պատիւին դպչելու միտք չունի, այլ եկած է ժողովուրդին մէջի դժգոհները հանդարտեցնելու: Սպանիոյ ժողովուրդը հաւատաց անոր խօսքերուն: Այս դաւաճանը, սակայն, անմիջապէս երբ գրաւեց ժողովուրդին վտասնութիւնը, հրամայեց իր զինուորներուն անխնայ ջարդել ու թալանել: Ամէնէն շատ ոսկի հաւաքողը ինք եղաւ, եւ այդ ոսկիներով կաշառեց Հոռովմի ծերակոյտը ուր իր մէկ օտոխը, Կատոն, պահանջ կը դնէր որ նա պատժուէր որպէս աւազակ եւ ջարդարար:

Կալբայ երբ ետ կանչուեցաւ, անոր տեղ անցաւ Լուկուլլոս, որ կոչուած էր լրացնել Կալբայի պակաս թողածը: Ան շարունակեց նոյն ձեւի դաւաճանութիւնը, նախ խարելով հանդարտեցուց վրէժխնդրութեամբ գրգռուած ժողովուրդը, ապա սկսաւ ջարդարարութեան ու կողոպուտի:

Այս վերջին մասնայական ջարդարարութեանց ընթացքին փախուստով իրենց կեանքը ազատող բախտաւորներուն մէջ երիտասարդ մարդ մը կար որուն անունն էր Վիրրիատոս: Դէտտորոս այս մարդը կը նկարագրէ որպէս արտասովոր մի հսկայ, որ կարծես ծնած էր առաջնորդելու եւ հրամայելու համար: Ան բնութենէն օժտուած էր պատուոյ նախանձախնդրութեամբ եւ ճշմարտասիրութեամբ: Նախապէս եղած էր որսորդ, յետոյ հովիւ, իսկ ամէնէն վերջը, երբ հոռովմէական արշաւանքը սկսաւ, զինուոր եղաւ ինքզինքն ու իր նմանները պաշտպանելու համար: Արշաւող բռնակը հուժկու էր ու անպարտելի. դիմագրողները պարտուեցան ու նա-

հանջեցին. ապա կրցողը փախուստի դիմեց: Վիրրիատոս ինք ալ փախաւ, բայց թոյլ չտուաւ որ իր հողուն մէջ արմատացած յանուն ազատութեան կոուելու ոգին մազաշափ նահանջի դիմէ: Նա կեցաւ կռիւի ճակատին վրայ մինչեւ իր մահը:

Մաս մը պատմաբաններ Վիրրիատոսը կը ներկայացնեն որպէս օրէնքները արհամարհող աւազակ, որպէս ոճրագործ, մինչդեռ այդ ատենուան բոլոր հանգամանքները նկատի առնելով պիտի տեսնենք թէ ոչ մէկ հայրենասէր ուրիշ բան չէր կրնար ընել ինչ որ բրաւ Վիրրիատոս ի պաշտպանութիւն իր հայրենիքին, իր ընտանիքին, իր բարեկամներուն եւ իր հայրենակիցներուն: Պարզ իրողութիւն է որ հին դարու հեղինակները նախապաշարուած են անոր հանդէպ: Պատճառը. պատճառը հասկնալի է. պատճառը այն է որ Վիրրիատոս եղած է աղքատ ինչպէս Աթենիանը եւ Սպարտակուսը: Ան կը պատկանէր ոչ թէ ազնուական դասակարգին, այլ խոնարհ դասակարգին, գործաւոր դասակարգին: Եթէ շատեր Վիրրիատոսը մեզի կը ներկայացնեն որպէս աւազակ, բայց հեղինակներ կան որոնք անոր մասին կը խօսին որպէս մի մեծ առաջնորդի, որ հին դարու պատմութեան մէջ արժանի է յիշատակութեան:

Այժմ ըսենք թէ ինչ դործեր բրաւ այս մեծ առաջնորդը:

Առաջին անգամ Վիրրիատոս, իր շուրջը հաւաքելով յուսահատ ու թշուառ փախստականները, անոնց խօսեցաւ հետեւեալը. «Հոռովմէացիք զուրկ են մարդկային ազնիւ զգացումներէն, անոնց նայելու է որպէս անողոք թշնամիներու, որոնք չեն ճանչնար ոչ պատիւ, ոչ դուժ, ոչ իրաւունք: Անոնք կ'ուզեն ամայացնել մեր զեղեցիկ ու արդաւանդ երկիրը իր հարուստ հանքերով, իր ցորենի արտերով ու այգիներով: Անոնք կ'ուզեն ձեզ լծել ստրկական աշխատանքի եւ ձեր աշխատանքի պտուղներով լեցնել Հոռովմի արխատակրտներու ամբարանոցները, որպէսզի անոր լորտերը կեանքը ապրին զեղիտութեամբ ու վայելքով: Մենք պիտի գրկուինք, որպէսզի անոնք յղիսնան. մենք աղքատ պիտի մնանք, որպէսզի անոնք հարստանան. մենք պիտի լանք, որպէսզի անոնք խնդան մեր վրայ: Տուէք ինձի ձեր ուժը, այդ ուժին հետ ձեր վտասնութիւնն ու հաւատքը, ու ես մեր հայրերու երկիրը կ'ազատեմ այս արխտարբու աւազակներէն: Երբեք մի երկմտիք, երբեք մի յուսահատիք: Մեր կողմն է արդարութեան սատուածը: Միայն մէկ բան ի մտի ունեցէք, լաւ է ազատութեան համար կոուել ու կռիւի ճակատին վրայ պատուով մեռնիլ, քան ստրուկի կեանքը ապրելը»:

Վիրրիատոսի այս խօսքերը ոչ միայն օգեւորեցին զինքը լսող



ներկաները, այլև անոնք իրենց արձագանգը տուին ամէն տեղ եւ սպասակար սպանացիք հաւաքուեցան անոր շուրջը:

Կազմուած էր ապստամբներու բանակը:

Հոովմէացի կառավարիչը, Կայրոս Վիրիլիոս, որ սրատես աչքերով կը հետեւէր ստեղծուած ապստամբական շարժումին, իր բանակով սկսաւ հետախուզել Վիրիատոսը, որ վարպետ նահանջով մը թշնամին առաջնորդեց ժայռուտ եւ դժուարանցոտներէ վայրերու մէջ: Այդ գիշերը ան իր զինուորական գործողութիւնը զազրեցուց. կրօնական ներշնչումով համակեց իր զինուորները, ապա զանոնք երեք մասի բաժնեց եւ իւրաքանչիւրը յանձնեց վստահելի առաջնորդներու: Յետոյ անոնց տուաւ կշտագատուած հրահանգներ: Իր ամբողջ ուժը թշնամիին պիտի շճակատէր, միայն մէկ թեւը պիտի զբաղեցնէր թշնամին, միւս թեւը պիտի անցնէր թշնամիին աջ կողմը, իսկ ինք իր հազար հեծելազորքով պիտի անցնէր ու յանկարծակի բերէր հոովմէական բանակը անոր թիկունքային կողմէն:

Վիրիլիոս վստահ էր որ իր գէժ կեցած ապստամբներու փոքր բանակը պիտի կրնար շուտով ջախջախել առանց մեծ կորուստի, որով ապստամբութիւնը ինզղամ կ'ըլլար:

Բայց կառավարիչ-գորավարը կը սխալէր: Վիրիատոս որ աստեղծ սրտով էր եղեր, հովիւ էր եղեր, ծանօթ էր երկրի ամէն մէկ ժայռին, ամէն մէկ ծառին: Թշնամին երկու օր զանազան էնտրիկներով զբաղեցնելէ վերջ, զայն առաջնորդեց Վենուսի բլուրին ստորոտը, ուր դարանակալ յարձակումով կիսովին բնաջնջեց հոովմէական բանակը: Հոովմէացիները հինգ հազար զինուորներ կորսնցուցին այդ կռիւն մէջ: Նոյն կռիւն մէջ սպաննուած էր նաեւ կառավարիչը, որ ապստամբները ճգմելով մեծ վարձատրութիւն կ'ակնկալէր Հոովմէն:

Աոյն յաղթանակէն յետոյ բաղմաթիւ գերիներ եւ ազատ քաղաքացիներ որոնց զբուծելու աւելի վատթարացիք էր, երկրի գանազան կողմերէն հաւաքուեցան Վիրիատոսի շուրջ եւ արամադրեցին անոր իրենց զինուորական ծառայութիւնը:

Այսպէսով մեծցաւ ապստամբներու բանակը:

Բայց Հոովմի իշխանները խորապէս մտրդել էին. անոնք գիտէին թէ երկիր մը զբաւելլէ վերջ ինչպէս հպատակութեան մէջ պահելու էին այդ երկրի ժողովուրդը: Անոնք կը հետեւէին քաժնէ որ տիրեսի քաղաքականութեան: Ահա թէ ինչու հոովմէացիները երբ Սպանիա մտան եւ առաջին անգամ սարսափ տարածեցին կողոպուտով եւ սպաննութեամբ, յետոյ մեղմացուցին յառաջ տարուած աւերածութիւնը եւ սկսան ճնշումը ստանիլ դասակարգային գծի վը-

րայ եւ հարուստները անջատեցին խոնարհ դասակարգէն: Հոովմի ծերակոյտը, թէեւ կաշառուած, անտեսեր էր Սիրիլիոս Կալբայի խժովութիւնները. բայց Վիրիլիոսի անսանձ գործունէութեան հետեւանքով երբ ական թէ ապստամբական արամադրութիւնները կը ծաւալէին Սպանիոյ մէջ, սկսան սիրաշահիլ տեղացի հարուստ, կալուածատէր դասակարգը, որ արդէն հաշտ աչքով չէր նայեր Վիրիատոսի քայերուն: Հոովմի ծերակոյտի այս քաղաքականութեան արդիւնքը այն եղաւ որ հարուստները մեծ մասով յարեցան հոովմէական իշխանութեան կողմը: Ո՞վ էր Վիրիատոսը. հասարակ հովիւ մը որ կը ձգտէր թագաւոր ըլլալ: Դա անբնական մի բան էր, մանաւանդ որ նա ժողովուրդի ստորին խաւերու շահերը կը պաշտպանէր բացէն ի բաց: Ճիշդ էր որ նա յաղթեր էր հոովմէացիներուն, բայց այդ յաղթութիւնը ո՞րքան տեսականութիւն կը խոստանար: Վերջին յաղթութիւնը անտարակոյս աշխարհակալ Հոովմի պիտի վիճակուէր: Եւ մարդիկը որոշեցին ամէն կերպով օժանդակել Հոովմի տիրակալութեան, քանի որ իրենց մնայուն շահը այդպէս կը պահանջէր:

Սպանիոյ մէջ կար ուրիշ բանակ մը ենթակայ Հոովմի, որ կը քաղկանար սպանական միլիցիայէ. հարուստները այդ բանակին արամադրեցին բաղմաթիւ կամաւորներ, որոնք կաշառքով կամ նախապաշարով նախընտրած էին սպրիլ Հոովմէական տիրապետութեան տակ: Այդ բանակը, ահա, որ վեց հազար մարզուած զինուորներէ կը բաղկանար, էրբօ դեռն անցնելով փորձեց միանալ հոովմէացիներու վերակազմած բանակին, որուն թիւը կը հասնէր 16.000-ի: Վիրիատոս որ արծիւի սրատեսութեամբ կը հետեւէր երկրի անցուղարձերուն, ճախողութեան մատնեց այդ փորձը. Գաղէսի մօտ կտրեց անոնց ճամբան: Զինուորները անկարող կուտելու դիմեցին խուճապահար փախուտի:

Վիրիատոս զինուորական հանճար էր. իր բանակը վերածեր էր մեքենայի մը որ կրնար որոշեալ ժամկէտին այնքան արագ դորձել, որքան իր միաբը: Անոր անունը առասպելական էակի մը հրօշակն ստացեր էր ու տարածուեր էր ամէն կողմ:

Հոովմ երբ իմացաւ թէ իր վերակազմուած բանակը վտանգի տակ էր, Կայրոս Պլուտիոսը 10.000 հետեւակ եւ 3000 ձիաւոր զօրքերով անիջապէս հասցուց Սպանիա. որով հոովմէական բանակի զինուորներու թիւը կը հասկէր 29.000-ի:

Վիրիատոսի առաջին մեծ յաղթութիւնը ընկերային ու քաղաքական տեսակէտէն շատ խոր ազդեցութիւն գործած էր երկրի



ժողովուրդին վրայ, որովհետեւ գրաւուած էր Քարպիտանիա գաւառը եւ ժողովուրդը ազատուած էր գերութենէ: Այդ պահուն ժողովուրդը ուզեց զինքը հռչակել թագաւոր, իրեն տալով բացարձակ ժխապետի իշխանութիւնը: Բայց Վերիաւոտո մերժեց. ինք որսորդ էր, հովիւ էր, գործաւոր էր եւ կ'ուզէր մնալ որպէս այդպիսին, սոսկ զինուորական գործողութեանց առաջնորդի պաշտօնով: «Դուք թագաւորի պէտք չունիք», ըսաւ ան, «գերագոյն թագաւորը ձեր հաւաքական կամքն է. ժողովուրդը պիտի ըլլայ մեր երկրի թագաւորը»:

Ստիպուածով զինք ամուսնացուցին կալուածատէր, հարուստ տիկնոջ մը հետ: Քեղի յաջորդող արժանաւոր առաջնորդ մը կ'ուզէր, ըսին իրեն: Բայց Վերիաւոտո ազնիւ նկարագիրը բնաւ չենթարկուեցաւ հարստութեան ու պերճանքի արտավարակ հրապոյրներուն. նա հասարակ զինուոր էր ու զինուոր մնաց. նոյնիսկ իր ընկերներէն չբանազանուելու համար չփոխեց իր հագուստը: Իր տիկնոջ հետ չէր ճաշեր. կը ճաշէր իր զինուորներուն հետ: Կոխի ընթացքին ինքն էր որ կը խոյանար վտանգաւոր ճակատին վրայ եւ կը մնար յողթական ու անխոցելի: Նա բնաւ չէր զինովնար իր տարած յողթութեամբ, այլ ընդհակառակը կը դառնար աւելի լուրջ եւ մտախոհ, որովհետեւ իր միակ երազն էր Սպանիան ազատել եւ մտախոհ, որովհետեւ իր միակ երազն էր Սպանիան ազատել եւ մտախոհ, որովհետեւ իր միակ երազն էր Սպանիան ազատել հռովմէական բռնակալութենէն. քանի զեռ այդ ազատութիւնը ապահովուած չէր, նա իրեն իրաւունք չէր տար հրճուելու:

Այսպիսի մի եղակի կերպար էր Վերիաւոտո:

Պլտախոս որպէս կառավարիչ եւ հրամանատար անցնելով Սպանիա, վստահ էր որ իր 29.000 զինուորներով առանց դժուարութեան պիտի կրնար ոչնչացնել ասպատակներու բանակը: Բայց առաջին ճակատամարտին կորսնցուց հինգ հազար մարդ, եւ հազիւ թէ կրցաւ իր բանակը փրկել ընդհանուր կոտորածէն. իր սարսափած զինուորներով նահանջեց եւ ասպասանեցաւ ասպահով տեղ մը եւ այլեւս սիրտ չըրաւ ճակատիլ թշնամիին: Դա արդէն ամօթալի պարտութիւն էր, որուն վրայ ետ կանչուեցաւ Հոովմ եւ դատապարտուեցաւ աքտորի: Հոովմէացիք անոր տեղը զրկեցին ուրիշ զորավար մը, Գուինտոս Փարիոս Մաքսիմոսը: Այս մարդը 15.000 հետեւակ եւ 2000 ձիաւոր զորքերով մտաւ Սպանիա, ուր հռովմէական բանակի զինուորներու թիւը տեղացիներէ հաւաքուած օժանդակ ուժերու հետ կրցաւ հասցնել 50.000-ի:

Վիթիալի մի բանակ. այժմ Վերիաւոտոսի շորձը այդ բանակին հետ էր:

Բայց Գուինտոս, այս նոր կառավարիչը, ուզեց աւելի հեռաւոր միջոցներու գիծել. ան բանակին զլուխը չանցաւ, այլ որպէս կառավարիչ սկսաւ երկրին յետադիմական, պահպանողական տարրերը սիրաշահիլ եւ բանակը յանձնեց իրմէ նուազ կարող մարդու մը հրամանատարութեանը, որը չարաչար պարտուեցաւ: Վերիաւոտոսի ռազմավարութեան առջեւ թուական գերակշռութիւնը առաւելութիւն մը չէր ներկայացներ:

Գուինտոս ետ կանչուեցաւ Հոովմ ու դատապարտուեցաւ մահուան. անոր տեղ զրկուեցաւ Գուինտոս Սերվիլիանոս:

Այս զորավարը իր հետ բերաւ երկու ամբողջ լեզէոններ եւ կարկեղոնէն դէպի հիւսիս, Ափրիկէի մէկ քաղաքէն, Իւտիկայէն տասը փրկեր: Այս մարդը առանց մեծ դժուարութեան Վերիաւոտոսի նախապէս գրաւած շրջանները գրաւեց. զիմադրող ասպտամբները, հինգ հարիւր հոգի, անխնայ սպաննեց եւ շատերը դերի բռնեց: Փերիները զլիստել տուաւ եւ իր անդթութեամբ սարսափ տարածեց ամէն կողմ: Անոր ռազմավարական մեթոտն էր սարսափի մատնել Սպանիան եւ ծուռկի բերել ասպտամբները:

Սերվիլիանոս իր նուաճումները յաջողութեամբ յառաջ տանելէ յետոյ, այժմ կը փնտռէր Հոովմի հռչակաւոր թշնամիին, Վերիաւոտոսը:

Բայց Վերիաւոտոս հրապարակէն քաշուած չէր. ան իրադարձութիւնները կը դիտէր հեռուէն եւ պատեհութեան կը սպասէր յարձակելու հռովմէացիներուն վրայ, եւ պատեհութիւնը չուշացաւ: Այն պահուն երբ հռովմէացի զորավարը կը շարունակէր իր յառաջխաղացքը եւ կը ժօռենար էրիսէնի քաղաքին, Վերիաւոտոս իր բանակը ինչպէս միշտ այս անգամ ալ երեք թեւերու բաժնած յարձակեցաւ հռովմէացիներու հսկայ բանակին վրայ, աջէն ձախէն ու թիկունքէն: Թշնամի բանակը իյնալով լեռներով շրջապատուած եռանկիւն ձորի մը մէջ, ոչ փախչելու միջոց ունէր, ոչ ալ նահանջելու: Վերիաւոտոս մարդկային սեռին հանդէպ խորրդած համակրութենէն տարուած, բաւականացաւ յաղթողի փառքով եւ թոյլ շտուաւ անխնայ ջարդարարութիւն: Նա կրնար ամբողջապէս ոչնչացնել հռովմէական բանակը, բայց ուզեց խնայել զինուորներու կեանքը, միայն Սերվիլիանոսի երդմամբ ընդունել տուաւ իր հաշտութեան պայմանները եւ զայն որպէս պատգամատար զրկեց Հոովմ:

Այստեղ արդէն Վերիաւոտոս հասեր էր իր փառքի գէնիթին: Ամբողջ ութը տարի ան կեցաւ իր յողթական գիրքին վրայ. Հոովմ անդադար շարունակեց իր ասպատակութեան փորձերը, բայց ամէն անգամ իր բանակները պարտուեցան, նահանջեցին:



Աշխարհակալ Հոռվմբ, իր վերաւորուած արժանագատու-  
թեան մէջ կատարած, չկրնալով ծունկի բերել Վերիատոսը, դիմեց  
խորամանկ դիւանադիւանութեան. ընդունեց Վերիատոսի հաշտու-  
թեան պայմանը. այն էր Հոռվմբ Սպանիոյ մէջ կառավարել մը պիտի  
պահէր, բայց այդ կառավարելը Վերիատոսի կամ անոր յաջորդին  
հրահանգներուն համաձայն պիտի շարժէր, իսկ Սպանիան տարե-  
կան փոքրիկ տուրք մը պիտի ստար Հոռվմբի:

Վերիատոս անմրցելի քաջ զօրավար մը եւ հանճարեղ ուղ-  
մաղէա էր, բայց չունէր քաղաքական մտքի այն հասունութիւնը  
որ իրեն թելադրէր թէ ութը տարի անհաշիւ կորուսաներով իր դէմ  
կուտող թշնամի Հոռվմբ Սպանիոյ բարեկամ չէր կրնար ըլլալ. ա-  
նիկա ամբողջապէս իր ձեռքերը քաշելու էր Սպանիայէն:

Հոռվմբ Սերվիլիանոսի տեղ Սպանիոյ կառավարել զրկեց  
խորաղէա Կեփէան: Այս մարդը կաշառեց Վերիատոսի վստահելի  
բարեկամները, որոնք սպաննեցին այդ մեծ հերոսը իր քնացած պա-  
հուն, գործելով անորակելի դաւաճանութիւն մը:

Այնուհետեւ Սպանիա դարձաւ հոռվմբիական շահատակու-  
թեանց ու նոր տեսակի անդթութեանց թատերավայր:

**ԵՌԻՆՈՒՍ**

Քրիստոնէական թուականէն առաջ գերեւորութեան արտա-  
կարգ ածուածը պատճառ եղաւ մի քանի հսկայական եւ արիւնասէն  
սպասամբութեանց, որոնց նմանը աշխարհ չէր տեսած: Այդ ապրու-  
տամբութիւնները արդիւնք էին տիրող դատակարգի կողմէ գործա-  
ւարներու եւ կիներու վրայ գործադրուած անմարդկային, անզուժ  
արարքներուն: Տր. Պուիէր որ մեծ հեղինակութիւն մըն է հնա-  
գարեան գերեւորական շրջանի դէպքերու պատմական ուսումնասի-  
րութեան մարդին մէջ, կը փաստէ որ հոռվմբացի կալուածատէր  
լորտերը Հոռվմբի գրաւած երկիրներու Ֆարմըրներու հողերը կը  
գրաւէին եւ դիւղացիները կը գործածէին որպէս անարգ գերիներ,  
իսկ իրենց պէտք չունեցածները կը ծախէին նոպասատակներէն աւե-  
լի աժան գնով: Գերիի մը գինն էր ամերիկեան գրամի արժէքով  
միայն 25 սենթ:

Հոռվմբի մէջ 103 թուականին (Ն.Ք.) միայն 2000 կալուա-  
ծատէրեր կային, որոնք կառավարութեան հարկ կը վճարէին: Ա-  
նոնք հարուստ էին եւ տէր գարձեր էին բանակին ու օրէնսդիր  
մարմինն եւ ասոնք երկուքն ալ պաշտօն ունէին ճղմելու հասարա-  
կութենէն վտարուածներու եւ գերիներու ապստամբութիւնները նե-

րելի ու աններկի միջոցներով: Այն աղատ մարդիկը, որոնք դարե-  
բով իրենց պաշտպանութեան համար ունեցեր էին իրենց կազմա-  
կերպութիւնները երբ գերիները սակաւ էին, կորսնցուցին իրենց  
միութիւնները, իրենց սեփական գործը, իրենց տունն ու աղատու-  
թիւնը, երբ անհամար գերիներ կրեւան եկան եւ գերեւորաւորու-  
թիւնը սկսաւ Հոռվմբի եւ կամ օտար շուկաներու մէջ: Երբ Թարեն-  
տէմը գրաւուեցաւ 209 թուականին (Ն.Ք.) հոն 30.000 պատերազ-  
մական գերիներ ծախուեցան: Խեաուրոսի ճակատամարտէն յետոյ  
207 թուականին (Ն.Ք.), 5.400 գերիներ բռնուեցան ու ծախուե-  
ցան: Հոռվմբի մէջ 200 թուականին (Ն. Ք.) 15.000 գերիներ բեր-  
ուեցան ու ծախուեցան: Տրեբրիոս Գրակոս, 137 թուին (Ն.Ք.) երբ  
Սարաինիայէն վերադարձաւ հրապարակեց իրողութիւն մը որ սար-  
սափ կ'աղղէր խղճահար մարդոց. 80.000 մարդիկ, կանայք եւ երե-  
խաներ հոն սպաննուած կամ ծախուած են եղեր ստրկութեան շրջ-  
թաներու մէջ: Պեկոս Գրակոս թէեւ զինուորական հրամանատար  
բայց խղճմտանքի տէր մարդ, երբ բողոքեց կատարուած բարբարո-  
սութեանց դէմ, կատարած օրէնսդիրներն ու հարուստները ամբոխի  
ձեռքով զայն սպաննեցին Հոռվմբի փողոցներուն մէջ: Սարաինիացի  
գերիներուն գինը այնքան ցած իջաւ որ առուտորի առեն առածի  
կարգ անցած էր հետեւեալ սասցուածքը. «Աժան, սարսինիացի գե-  
րիի մը գինը»: Պերսէոսի պաշարումէն յետոյ 76 քաղաքներ կործա-  
նեցան եւ 170.000 հողի ծախուեցան զանազան գերեւորաւոր շուկա-  
ներու մէջ:

Գերեւորական զրութեան այս սոսկալի վիճակը Յունաս-  
տանի մէջ սկսած է շատ կանուխէն: Հողերու եւ ուրիշ կալուածնե-  
րու մենատիրութիւնը օրէնք անցած էր Աթէնքի մէջ, որու բնակ-  
չութիւնը 300 թուականին (Ն.Ք.) հաշուարուած է 515.000: Այդ բը-  
նակչութեան միայն մէկ մասը, ինը հազարը, քաղաքական իրաւանց  
տէր էին եւ կրնային ունենալ կալուած եւ աղնուական բնտանիքի  
ստանձնաշնորհում. 81.000-ը ուսմիկ էին, կամ այսպէս կոչուած  
ազատ մարդիկ, իսկ բնակչութեան մնացեալ մասը, չորս հարիւր  
քան երկու հազարը, գերի էին:

Կորնթոս մեծ քաղաքը 300 թուականին (Ն.Ք.) 40.000 «հո-  
ղի» ունէր, իսկ 640.000 մարդկային էակներ, որոնք հողի չունե-  
ցող արարածներ կը նկատուին, պարզ անունով՝ գերիներ էին:

Չնայած այդպիսի տիրող դատակարգի բազմիշխանութեան  
ստեղծած պայմաններուն, Հարաւային Իտալիոյ մէջ լոկրիանացի-  
ները գերիներ չունէին, կ'աղղէին նահապետական կոմունայի կեան-



քով: Բայց երբ հռովմէացիք մտան հոն, սկսաւ անդուժ գերետի-  
րութիւնը: Հին կարգերը մէկ անգամէն խորտակուեցան եւ հաս-  
տատուեցաւ գրութիւն մը որուն ներքեւ անթնական էր որ ազա-  
տասէր ժողովուրդը համակերպէր: Բայց ապրտամբական փորձե-  
րը ճգմուեցան աննկարագրելի կատաղութեամբ. անոր յաջորդեց  
ընդհանուր յուսահատութիւն ու հոգեկան թմրածութիւն:

Սիկիլիոյ մէջ գործերու վիճակը նոյնպէս սղբալի էր: Այդ  
արդաւանդ կղզին որ 210 թուականին (Ն.Ք.) հռովմէական կալ-  
ւած դարձաւ, կղզեբնակիչները մտան ստրկութեան լուծին տակ:  
Հռովմէացիք գրաւեցին անոնց հողերը, բնակիչներէն շատերը  
գրկեցին օտար երկիրներ ու որպէս գերի ծախեցին, իսկ օտար եր-  
կիրներէ գերիներ բերին ու խտանեցին մնացող գերիներուն հետ:  
Հռովմի տիրող դասակարգը այդ տեղափոխութիւնը կ'ընէր իր դա-  
սակարգային շահու ապահովութեան համար: Օտարական գերի-  
ները սիկիլիացիներուն հետ այնքան դիւրին չէին կրնար եղբայրա-  
նալ. անոնց աստուածները թոյլ չէին տար այդ եղբայրութիւնը:  
Գերիներ բերուած էին Սուրիայէն, Յունաստանէն՝ որ այդ առեւ  
արդէն ինկեր էր հռովմէական իշխանութեան տակ: Հազարաւոր  
գերիներ բերուած էին նոյնպէս Ափրիկէէն, գերիներ որոնք փիւ-  
նիկեան պատերազմի կնիքը կը կրէին:

Սիկիլիա կղզին շատ մը արդաւանդ ու դեղեցիկ հովիտներ ու  
դաշտապետներ ունէր, բոլորն ալ հարստութեան եկամուտի աղ-  
բիւրներ Հռովմի հաճոյամոլ տէրերուն համար:

Սիկիլիոյ ամէնէն հրաշալի եւ դրախտանման վայրերուն մէջ  
կը փայլէր Էննան, քաղաք մը որ ստրկացած աշխատաւորներու ա-  
պրտամբութեան կեդրոնը դարձաւ եւ աշխարհի ստրուկներու ա-  
զատագրական պատմութեան մէջ նշանակելի տեղ գրաւեց:

Էննայի գործադուր կամ գերիներու ապստամբութիւնը տե-  
ղի ունեցաւ 143 թուականին (Ն.Ք.) եւ տեւեց տասը տարի:

Որպէսզի բնիկացիները լրիւ ըմբռնէ այդ գործադուրային  
պատերազմի էութիւնը, անհրաժեշտ է ծանօթացնել այդ պատերազ-  
մը յառաջացնող բնիկային պայմանները եւ անոր ղեկավար մար-  
դոց կերպարը, անոնց նկարագրերը:

Այն երեք առաջնորդները որոնք կազմակերպեցին եւ ղեկա-  
վարեցին ստրուկներու պատերազմը, երեք հսկաներ էին, անձնու-  
րաց երեք քաջարի առաջնորդներ. Եունուս, Աբէոս եւ Քլէան: Ա-  
նոնց երեք բանակները, թիւով 200·000 զինուորներէ բաղկացած,  
իրարու միացան 140 թուականին (Ն.Ք.) եւ Եունուս յայտարար-  
եցաւ ամբողջ Սիկիլիոյ թագաւորը:

Մեր բնիկացիներուն այս ձեռով ուղեցինք ծանօթացնել  
այս երեք առաջնորդները, որոնք խարանուած գերիներ էին: Երբ  
խարանուած ըսինք պէտք չէ հասկնալ հասարակութեան մէջ ան-  
պատիւ հռչակուելու իմաստով: Գերիին ճակատը կը խարանէին  
չիկացած երկաթով, իսկ դաշտի աշխատաւորներուն ոչ միայն ճա-  
կատը, այլև մարմինը կը խարանէին, այնպէս որ գերին այլև  
փախչելու եւ իր ինքնութիւնը ծածկելու միջոց չունէր. գերութեան  
կնիքը կը մտար անջնջելի:

Այս ծանօթագրութենէն յետոյ այժմ անցնինք մեր պատ-  
մութեան:

Էննայի սարահարթին վրայ կ'ապրէր հարուստ մարդ մը  
Դամոֆիլոս անունով, որ գերիներու լեզնոններ ունէր եւ զանոնք  
ամառ թէ ձմեռ մերկ վիճակով լծած էր ստրկական աշխատանքի:  
Ընդարձակ ազարակներ ունէր ան. անվերջանալի գործ: Իր հաս-  
ցուցած արջառները, ոչխարները ու արմտիքը իր հսկայ եկամուտի  
աղբիւրներն էին: Օր մը, մի քանի գերիներ, ձմբան եղանակին,  
չկրնալով դիմանալ խստաբեր ցուրտին, կը դիմեն իրենց տիրոջ եւ  
պաղատելով կը խնդրեն որ զոնէ ցնցոտիներ կամ անպէտք քուրջի  
կտորներ տայ ցուրտէն պաշտպանուելու համար: Դամոֆիլոս,  
զայրացած իր գերիներու յանդուգն դիմումին վրայ, «Տաքնա՞լ  
կ'ուզէք», կը հարցնէ, «այժմ ձեզ լաւ կը տաքցնեմ» կ'ըսէ եւ կը  
հրամայէ որ այդ գերիները կապեն ծառերուն ու ենթարկեն խարա-  
զանի հարուածներու: Եւ գերիները կը մեռնին այդ հարուածնե-  
րուն տակ: Ապա խարոյկին վրայ կ'այրէ անոնց մարմինները եւ  
կանչելով ցուրտէն դողացող գերիները. «Մի քիչ տաքցուցէք ձեր  
մարմինը», կ'ըսէ անոնց, «եւ պահեցէք այդ տաքութիւնը մինչեւ  
գարուն դայ»:

Իր կինը, Միկալիս, աւելի կատաղի էր, աւելի անդուժ քան  
ինք: Նա սովորութիւն ունէր շաքաթը անգամ մը ցնծալի մի հան-  
դիսութիւն սարքել: Եւ ի՞նչ էր այդ հանդիսութիւնը: Ամէն անգամ  
երկու գերի կիներ կը կանչէր եւ զանոնք մերկացնելով խարազանի  
հարուածներով կը սպաննէր: Այդ հրէշուհին ղեքազոյն հրճուանք  
կը զգար լսելով խեղճուկ զոհերու աղիտոցում ձայներն ու մահուան  
հոնդիւնները: Իր դուստրը, Նինա, բացառիկ էակ մը, դեղեցիկ ու  
բարի, կը մեղքանար այդ անմեղ զոհերուն վրայ եւ արասուալի  
աչքերով, աղաչանքով ու պաղատանքով շատ անգամ կ'ուղէր խը-  
նայել ու ազատել զանոնք, բայց անօգուտ: Անդգամ Միկալիս զայն  
կը բանտարկէր իր սենեակին մէջ իր դիւային հաճոյքը լիութեամբ  
ըմբռնելու համար:



Երբ գերեռեցրեք այդպէս կը վերաբերուէին իրենց գերինն-  
րուն հետ, որոնք անարգ կը նկատուէին քան կենդանիները, շատ  
բնական էր որ անոնք որպէս մարդ ատելութեան եւ վրէժի զգացու-  
մով լեցուէին իրենց տէրերուն հանդէպ եւ պատահութիւն մը փըն-  
արուէին սպասամբելու: Բոլոր գերիներու հոգիին մէջ արժատա-  
ցած այդ զգացումն ու խորհուրդը որպէս հասարակական կապ  
բնականօրէն զանոնք պիտի բերէին զազանապէս կազմակերպուե-  
լու հրամայականին առջեւ: Եւ պէտք է ըսել թէ այդ գերիններէն  
չատերը երկիր մը արդարութեամբ կառավարելու չափ հանձարեղ  
ու խելացի մարդիկ էին, բայց ինչ արած որ բուն ուժին առջեւ խո-  
նարհեցուցեր էին իրենց պաշարաւոր զլուխը:

Այսպէս, ուրեմն, կը տեսնենք թէ գերիներու մէջ խմացական  
կարողութեամբ ծառայած մարդիկ, որոնք կրնային առաջնորդ ըլ-  
լալ, պակաս չէին. ասիկա կարելոր կէտ մըն էր գազանի կազմա-  
կերպութեան համար. կարելոր եւ նպաստաւոր կէտ մը:

Այս շրջանին, ինչպէս նշած ենք, Յունաստանի, Սուրիոյ,  
Պագեստինի եւ Արշիպեղաքոսի մէջ արդէն զոյուլթիւն ունէին ա-  
զատ մարդերէ եւ գերիներէ կազմուած արհեստակցական միու-  
թիւններ եւ ընկերային կազմակերպութիւններ, որոնք եղբայրական  
կապով կապուած էին իրարու: Իսկ հոսիմէացիները երբ նոր եր-  
կիրներ գրաւեցին ու այդ երկիրներու ժողովուրդները կապեցին  
ստրկութեան սիւնին, անոնց մէջ ալ նոյն կազմակերպութիւնները  
եթէ զոյուլթիւն չունէին, իրերու բնական կարգով սկսան կազմուել  
ու աւարածուիլ հաճկուած արժատներով:

Ասիկա երկրորդ կարելոր եւ նպաստաւոր կէտ մըն էր գերի-  
ներու ազատագրական պայքարին համար:

Կար նաեւ ուրիշ աւելի կարելոր ու նպաստաւոր հանգամանք  
մը. ասիկա լեզուի նոյնութիւնն էր: Ամբողջ Սիկիլիան զբաւոյր  
յունարէն լեզուն էր: Յունարէնն էր նաեւ Սուրիոյ, Փիւնիկիէի, Պա-  
գեստինի եւ շատ մը կղզիներու տիրող լեզուն: Նոյնիսկ Իտալիոյ  
հարաւային մասի քաղաքներուն մէջ յունարէն լեզուն տիրապետող  
լեզու էր:

Հոսիմէացիք երբ Սիկիլիան զբաւեցին եւ իրենց հաստատած  
զաժան գերեռութիւնը արժատացնելու համար կղզիի բնակիչնե-  
րը օտար երկիրներ զրկեցին եւ օտար երկիրներէն գերիներ ներս  
բերին, այս աւելափոխութիւնը իրենց քաղաքականութեան այնքան  
նպաստաւոր չեղաւ, որովհետեւ նոյն դժոխային կացութիւնը, նոյն  
վրէժխնդիր զրացումը եւ նոյն լեզուն ունենալով, գերիները անոնց-  
մով մեքենականօրէն արդէն կ'եղբայրանային իրարու հետ:

Այդպէս էր ընդհանուր գրութիւնը Սիկիլիոյ մէջ, իսկ մաս-  
նաւորապէս Էննոյի շրջականերու գերիներու եւ ճնշուած ազատ  
մարդոց մէջ ատելութեամբ ուսնացած զայրոյթը պատրաստեր էր  
ունխուսափելի ազատամբութեան մը դետինը:

Էննան Սիկիլիոյ մէջ հովուական քաղաք մըն էր որ նշանա-  
տէր էր Կերէսի(\*) տաճարով: Հովիւները, մշակները, զործաւոր-  
ները բոլորն ալ այդ ժամանակներու ընթացիկ կրօնական հաւատ-  
քով տարուած՝ կապուած էին իրենց պաշտած աստուածուհիին:  
Վերջերք, սակայն, անոնց հաւատքը մասամբ խախտած էր, որով-  
հետեւ հոսիմէական լուծին ասիկ ենթարկուելով ահաւոր զրկանք-  
ներու եւ շարժարանքներու, կը տեսնէին որ իրենց պաշտած աստ-  
ածուհին այլեւս զիրենք չէր պաշտպաներ:

Բայց ամենուրեք գերիներու մէջէն հրապարակ իջաւ մէկը,  
որ այդ աստուածուհին դարձեալ բազմեցուց պաշտամունքի գահուն  
վրայ: Այդ մարդը Եունուան էր:

Էննա քաղաքը իշխան մը ունէր, Էնդիփենէսը, որուն զործն  
էր գերեզմանութիւն: Ան իր պաշտօնին մէջ ունէր բնորոտի գերի-  
ներ, որոնց մէջ էր Եունուանը, Սուրիոյ մէկ քաղաքէն բերուած դե-  
րի մը, որ տեսնօք իր հայրենիքին մէջ քիստոս կոչուած արհես-  
տակցական միութեան մը առաջնորդն էր: Այս մարդը, զարգացած  
մարդ, տիրացի էր կախարդական մի շարք ձեւակերպութիւննե-  
րու. իր բերնէն բոց կ'արձակէր, գաւաթով լեցուած ջուրը փրփուր-  
ներու կը փոխէր եւ ինքզինք կ'անուանէր՝ մարդարէ, մի տեսակ  
մեսիս, որ Կերէս աստուածուհիէն պատգամ էր ստացեր մարդու-  
թիւնը առաջնորդելու: Էնդիփենէս յաճախ Եունուանը կը կանչէր իր  
մօտ ու անոր անպարարութիւններով կը զուարճանար ու բարձ-  
րաձայն կը խնդար, լսելով անոր մարդարէութիւնները:

Բայց Եունուան ոչ խենթ էր, ոչ ալ կախարդ. ան իր խճորով  
յեղափոխական էր. ան կը տեսնէր թէ ինչպէս իր նմանները չղթա-  
յակիր կը ծախուէին ու կը զրկուէին անձանօթ երկիրներ, իսկ մը-  
նացեալ գերիները ինչպիսի ամենաքեզներու ենթարկուելով կը զոր-  
ծէին մերկ ու կիսաքաղց: Այն ինչ որ իր կաշիին վրայ կրած էր ա-  
տենօք եւ այն ինչ որ կը տեսնէր ամէն օր իր աչքերուն առջեւ, ա-  
ւելի վատ էին քան բարբարոսութիւնը:

Եւ Եունուան վճռեց վերջ ալ տիրող գրութեան:  
Բայց թէ ի՞նչպէս. ահա կ'ընտոս հարցը:

(\*) Կերէս, զուտար Սաղուստի եւ Կիրեղէի. աստուածու-  
հի արմտիկներու, պտղատու ծառերու, հունձի ու ծաղիկներու:  
Անիկա կը համապատասխանէ յունական Գիմիտրէին:



Եւ Եունուս օրերով երկար մտածելէ յետոյ վերջապէս զտաւ այդ կնճոռտ հարցին պատասխանը. գերիները կազմակերպել եւ ՄԱՀ ԿԱՄ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ նշանաբանով պայթեցնել ապստամբութիւն:

Եունուս ոչ միայն կազմակերպելու արտակարգ կարողութեամբ օժտուած մարդ էր, այլեւ զիմացինը գերելու անդիմադրելի մի ուժ ունէր: Ծնորհիւ իր բնատուր ձիրքերուն, վստահելի գերիներու հետ անիկա դադունի ընկերութիւն մը կազմեց եւ 400 զինուած զերիներով քաղաքէն դուրս, ձորի մը մէջ դումարեց հանդիսաւոր նիստ մը: Ինք որպէս կերէս առոււածուհիին ընտրած ազատարարն ու մեսիան բոլորին երզում ընել տուաւ որ ամէն մէկ գերի ստանց նահանջելու իր արեան գնով պիտի սրաշտպանէ գերիներու ազատագրութեան դատը:

Լեցուած անպատմելի առելութեամբ ու վրէժխնդրութեամբ ապստամբները առտուն կանուխ, առանց ընդդիմադրութեան հանդիպելու մտան քաղաքը: Անպատելիօրէն յանկարծակի պայթող փոթորիկ մըն էր եղածը: Ապստամբները մէկ անդամէն տէրը դարձան քաղաքի փողոցներուն. զրաւեցին զէնքերու պահեստանոցները, գեանափոր բանաբէն դուրս հանեցին բոլոր բանտարկեալները եւ զինեցին զանոնք: «Կոտորեցէ՛ք հարուստ գերետէրերը, մի խնայէ՛ք ոչ ոքի»: այս էր արձակուած հրամանը: Պարզուեցաւ ահաւոր տեսարան մը: Աղտուական կիները իրենց երեխաներուն հետ խողխողւեցան սուրի հարուածներուն տակ. նոյն բախտին արժանացան գերետէրերը մեծ հրճուանք պատճառելով կատղած ամբոխին: Եունուս հրաման ըրաւ որ Էնդիփենէսը չսպաննեն, այլ բերեն իր առջեւ: Եւ ահա գերիներու մեծ խշխանը զլիտիօր իր նախկին գերիին զէմ:

— Երեք օր առաջ երբ կը զուարճանայիր ինձմով, ըսաւ անոր, ես քեզի ըսի որ իրենց զլուխը բարձր բռնողներու զլխին մօտ առենէն կը պայթի փոթորիկ մը ու դուն խնդացիր. ես այժմ կ'ուզեմ եւ կը հրամայեմ որ հիմա ալ խնդաս:

Էնդիփենէս, զեղնած ու զողահար, բառ չզտաւ խօսելու:

— Դուրս տարէ՛ք այս մարդը ու անոր հետ վարուեցէ՛ք ձեր ուղածին պէս, հրամայեց Եունուս:

Աւելորդ է ըսել թէ գերիները փողոցին մէջ չարչարելով սպաննեցին զայն. սպաննեցին ոչ թէ սուրով, այլ բիրի հարուածներով:

Բայց ամէնէն գերետէր ոճրագործը Դամոֆիլոսին էր, որ իր կնոջ հետ սարսափ էր քարացուցեր գերիներու հոգիին մէջ:

Եունուս հրաման ըրեր էր որ անոնց դստեր չմտակն. նրա գիտարութիւնն ու բարութիւնը ծանօթ էր շատերուն:

Այժմ, այդ երկուքը, հրէշն ու հրէշուհին, կեցած էին հրապարակին վրայ, Եունուսի առջեւ, շրջապատող գերիներու բազմութեան մէջ: Եունուս հրաման արձակած էր որ զանոնք չսպաննեն, այլ բերեն իրեն. ինք հրապարակային դատարան պիտի ընէր, որպէս արձակէր անոնց մահապատիւ:

Եունուս իր սուր նայուածքը ուղղելով Դամոֆիլոսին, ստանալիքս դատախազի պէս թուեց անոր գործած գազանութիւնները եւ ամէնէն վերջ հարցուց. «Այժմ կրնա՞ս արդարացնել ինքզինքը»: Դամոֆիլոս ամբողջ մարմնովը կը զողար. անոր միայն մէկ յոյս կար, զիմեւ յաղթողի վահաններէն: Կերկերուն ձայնով ըսաւ որ ինք կը զղջար իր ըրածներուն վրայ, որ ինք յանցաւոր էր եւ հիմա կ'երզնուր որ պիտի ծառայէր իրեն որպէս գերի եւ պիտի քուէր իր ոճիրները, միայն թէ խնայուէր իր կեանքը:

Քու կեանքը խնայե՞լ, կրկնեց Եունուս, հապա դուն ինչո՞ւ չխնայեցիր կեանքը այն բազմաթիւ աշխատաւոր գերիներուն, որոնց արիւնը ծծելով ապրեցար:

Ան հաղիւ թէ արտասանած էր վերջին բառերը, երբ Քոխքէս եւ Հերմիաս, երկու հուճկու գերիներ որոնք Դամոֆիլոսի ձեռքով ճաշակեր էին ստրկութեան մրուրը, անզուսպ կատաղութեամբ խոյացան անոր վրայ եւ սարսափահար տիկնոջ աչքերուն առջեւ կըտրեցին անոր զլուխը:

Այժմ կարգը եկած էր անոր կնոջ, Մեկայիսին: Հերմիաս, յարձակելով անոր վրայ, մերկացուց եւ զայն յանձնեց գերի կիներուն, որոնք շատ անգամ ականատես եղած եւ ենթարկուած էին անոր հաճոյք պատճառող գազանութիւններուն:

Եւ վրէժխնդիր կիները տուին անոր արժանի պատիժը. չարչարանքով մահացում, զայն զլորելով անդեպիտոր ձորին մէջ:

Այդ զահիճ ընտանիքէն ողջ մնաց միայն անոնց դուստրը, այն բարեսիրտ աղջիկը որ միշտ զթացեր էր գերիներուն եւ փորձեր էր խնայել անոնց կեանքը: Ի՞նչ ըրաւ գազանացած ամբոխը, մոռցած անոր սիրոյ ու զթութեան փորձերը: Քարացե՞ր էր յաղթական գերիներու սիրտը: Այդպիսի սիրուն ու համակրելի էակ մը յանցաւոր էր իր ծնողաց ոճիրներուն համար:

Այստեղ պէտք է ըսել որ այդ ապստամբ գերիները, որոնք զրութեան տէր զարձեր էին, գազաններ չէին. մարդ էին, իրաւունքի եւ արդարութեան իմաստը հասկցող մարդիկ որոնք գիտէին թէ որո՞ւն պէտք էր զթալ եւ որո՞ւն հանդէպ պէտք էր ան-



խիղճ ըլլալ: Անոնք իրենց համբերութիւնը սպառած՝ ապաստաններ էին անարդարութեան դէմ, գերետէրերու հասաւտած բռնակալութեան դէմ եւ կուսակցի հասաւտակ արդար, աշխատանքի սկզբունքի վրայ հիմնուած հասարակարգ մը:

Եունուսի հրամանով Դամոֆիլոսի դուստրը թիկնապահ զինուորներով զրկուեցաւ Կատանա քաղաքը եւ հոն յանձնուեցաւ հողատար ձեռքերու: Թէ ի՞նչ եղաւ անոր վերջաւորութիւնը, Ծլորտոս պատմադիրը կ'ըսէ որ տասնամեայ ահաւոր պատերազմներէն վերջ յաղթող հռոմէացիները գերիներու հետ դայն տարին Հռոմ:

Այժմ հետեւինք Եունուսի գործերու պատմութեան:

Եունուսի ձեռք բերած յաջողութիւնները մեծ ոգեւորում թիւն յառաջացուցին ոչ միայն բազմահազար գերիներու մէջ, այլեւ ազատներու եւ արհեստաւորներու մէջ, որ հաւասարադէս կը տարառայէին գերետէրերու անանձ կամայականութեան ներքեւ: Ետեւտով բազմաթիւ կամաւորներ միացան ապաստաններու բռնակիւն որուն թիւը Դէստորոսի հաւաստիացումին համաձայն կը հասնէր 60.000-ի: Հռոմէացիք Միկիլիոյ մէջ մնալուն բանակ շունչէին. եղածը ժողովրդական միլիցիա էր, որ չէր կրնար ճակատիլ Եունուսի զինուորական ուժին:

Եունուս հռչակուեցաւ թաղաւոր, կին գերի մը անոր հայրենիքէն եղաւ թագուհի: Եւ թագաւորը պատերազմական խորհուրդ դումարեց ու որոշում անցուց որ նկուղներու մէջ պահուած հին գերիները ազատուին եւ անոնց տեղ անցնին պատերազմի մէջ բրտնուած նոր գերիները: Հաստատեց մնալուն կտաւաբուծութիւն մը: Ընդհանուր հրամանատար նշանակեց սուրիացի մը, Աքէոսը, որ օժտուած էր բազմական հմտութեամբ, անընկճելի կամքով: Այս մարդը որ շատ անգամ կուտամ էր հռոմէացիներուն դէմ եւ ապա գերի իյնալով զրկուած էր Միկիլիոյ, անխառն ու յանդուգն օգոստիկ էր, հետանաւ ու կշտագատ. թրծուած էր պատերազմական գործողութեանց մէջ: Յաճախ ճակատաբաց կ'ընդդիմանար Եունուսի եւ կը մատնանչէր անոր սխալները, եւ Եունուս առանց դժկամակութեան կը համակերպէր:

Միկիլիոյ արեւելեան կողմի հողամասը որ հարաւայտ էր մը շահուած արտերով, հարուստ էր ցորենի, արմախիքի եւ ձիաբանութեան արտադրութեամբ, հարուստ էր արջառններով ու ոչխարներով, ազատամբ գերիներու առջեւ ասպատակութեան դաշտի վերածուեցաւ առան մը: Գերիներու հորդաները սպաննեցին իրենց հանդիպող մարդիկը եւ սկսան քանդել, աւերել ու կողոպտել: Աքէոս խիստ հրաման արձակեց զաղբեցնել այդ բարբարոսական աւերածու-

թեան ու անգթութեան փորձերը եւ մահապատիժի օրէնք դրաւ անտաստողներուն: Իրենց պէտք էր ժողովուրդի համակրութիւնը, իրենց պէտք էր սլաշար. քանդելով ու աւերելով ամէն ինչ իրենք պիտի չկրնային ճակատիլ հռոմէական յարձակումին որ մօտալուս էր: Գերիները շուտով համոզուեցան Աքէոսի խօսքերուն եւ անմիջապէս զաղբեցուցին իրենց ապերտասն ու քանդիչ զործուծութիւնը: Անկէ յետոյ շտեմուեցաւ սեւէ անախորժութիւն:

Այդ տակները շատ մը ազատորդիներ կային որոնք չհանդուրժելով հռոմէական բռնակալութեան ճնշումին, կազմակերպած էին աւազակային խումբեր, անոնց զործն էր սպաննել, կողոպտել, աւերել: Այդ աւազակային խումբերը տարածուած էին ամէն տեղ եւ իրենց ասպատակութիւններով աւելի կը վնասէին ազատամբ գերիներու եւ հայրենիքի ազատագրութեան գաւառին: Աքէոս հրաման քրաւ ոչնչացնել դասնք: «Մեր յեղափոխութիւնը աւազակներու հետ կապ չունի», ըսաւ ան իր զինուորներուն:

Աքէոս զիտէր որ կը մօտենար ճգնաժամային վայրկեանը. հռոմէացիները այնպէս լուս հանդիսականի պէս պիտի չմնային. ստոր համար ան թոյլ չտուաւ որ զինուորները հանդուրժ վարժուելով մեղկամային: Ծայրայեղ խտտակեցութիւն եւ անդադրում զինուորական վարժութիւն՝ գիշեր թէ ցերեկ: Ան ոչ միայն իր զինուորները վարժեցուց պատերազմի արուեստին, այլեւ կը պատրաստէր անոնց միտքը արդար դրութիւն մը հաստատելու համար: «Ձի բաւեր միայն յաղթող ըլլալ», կ'ըսէր ան, «ամէնէն կարելորը յաղթութիւնը պահելն է, իսկ յաղթութիւնը պահելու համար պէտք է ժողովուրդի ազատութիւնն ու բարեկեցութիւնը ապահովել»:

Աքէոսի խօսքերը փիլիսոփայական, տեսարանական հարցեր չէին շօշափեր. բոլորին հասկնալի, սրբալ խօսքեր էին անոնք եւ գերիները իրենց փորձառութեամբ կը հասկնային անոնց իմաստը:

Նոյն տակն հրապարակ իջած էր ուրիշ ապաստամբ մը, Քլէանը. ծնունդով սիկիլիացի մէկը որ գերի տարուած էր Փոքր Ասիա, ուրկէ փախած ու վերադարձեր էր Միկիլիոյ: Գերութեան անջնջելի կնիքը ճակատին վրայ, անմար վրէժխնդրութեան, ողին սրտին մէջ, անիկա մէկ տարուան ընթացքին կրցեր էր կազմել հուժկու բանակ մը եւ սարսափ տարածեր էր գերետէրերուն մէջ իր զարմանալի օրէն յաջող կռիւններով: Միկիլիոյ հարաւային մասերուն մէջ անիկա դրուած էր մի քանի քաղաքներ: Իր բանակի զինուորներու թիւը կը հասնէր 70.000-ի:

Քլէան լսելով Եունուսի հաստատած իշխանութեան լուրը,



յանուն ամբողջ Սիկիլիոյ ապստամբեան անոր առաջադիւց իր հաւատարմական զինակցութիւնը որ սիրով ընդունուեցաւ:

Գերեաւէրերու միակ յոյսը կապուած էր ոչ այնքան հոսովմէացիներուն, որքան այն երազին որ այս երկու սոսկատեսիլ ապրտամբ առաջնորդները, Եունուսն ու Քլէանը անհատական նախանձի ու զերակայութեան ճամբուն վրայ մրցման հետեւանքով ուչ կամ կանուխ անխուսափելիօրէն պիտի թշնամանային իրարքէհետ եւ զիրար պիտի բնաջնջէին, զիւրացնելով հոսովմէացիներու վերջնական յաղթութիւնը: Բայց անոնց այդ երազը ցնդեցաւ յօդս: Քլէան իր 70.000 զինուորներով յօժարեցաւ ենթարկուիլ Եունուսի զերիշխանութեան, որովհետեւ ինք կը հաւատար թէ Եունուսը կերէս աստուածունհին մեսիան էր, միջնորդը ազատարար զիցունհին եւ ազատասէր սիկիլիացիներու միջեւ: Ատոր համար ան ընդունեց Աքէսի հրամանատարութեան ներքեւ օգնական զօրավարի պատունը: Այսպէսով երկու ապստամբներու ուժերը միացան եւ կազմեցին 130.000-նոց հսկայ բանակ մը:

Հազիւ թէ հակիրճօրէն նկարագրուած այդ կարգադրութիւնները վերջացեր էին, Հոսովմ որպէս լիազօր ատենակալ Սիկիլիա զրկեց Պոտտիոս Հայպեսոսը: Հոսովմի ծերակոյտը թէեւ ապստամբներու զինուորական քանակական ուժի մասին որոշ տեղեկութիւն ունէր, բայց չէր կարծեր թէ անվարժ զերիներով կազմուած բանակ մը պիտի կրնար երկար ատեն զիմանալ իր մարզուած լեզէոններուն: Ատիկ զատ, ծերակոյտը յատկապէս թելադրած էր որ Հայպեսոս ամէն միջոց գործածէ սիրաշահեւելու Քլէանը անոր խոստանալով մեծ վարձատրութիւն ու պաշտօն: Հոսովմի «բաժնէ որ տիրես»ի քաղաքականութիւնը երբ յաջողեր էր ամէն տեղ եւ ամէն ստեն, տարակոյս չկար որ պիտի յաջողէր նաեւ Սիկիլիոյ մէջ: Բայց Հոսովմ կը սխալէր: Սիկիլիոյ ամէն կողմը զերիներու թշնամական արամադրութիւնները լարուած էին Հոսովմի շնորհն ու պաշտպանութիւնը վայելող զերեաւէրերուն դէմ:

Եունուս, իմանալով որ հոսովմէացիները արդէն մտեր են Սիկիլիա, չուզեց որ ամբողջ ուժովը ճակատի Հայպեսոսի դէմ. մէկ մասը իր բանակին բաւական էր ջախջախելու հոսովմէական լեզէոնները: Եւ իբրաւ ալ Աքէսս եւ Քլէան փառասուր յաղթութիւն մը տարին հոսովմէացիներուն վրայ իրենց 40.000 զինուորներով, որով Եունուս բացարձակ աէրը վարձաւ գրութեան:

Այս մեծ յաղթանակի լուրը տարածուեցաւ կղզիին չորս կողմը: Կամաւորներ գունդադունդ հաւաքուեցան ու միացան ապրտամբներուն բանակին, որու զինուորներու թիւը հասաւ 200.000-ի:

Յաջորդող եօթը տարիներու ընթացքին, Հոսովմ, որուն ներքին նեխածութիւնը սկսեր էր արդէն, յաջորդաբար իր զօրավարները մէկզմէկու ետեւէն զրկեց Սիկիլիա բազմաթիւ զօրքերով, բայց անոնցմէ ոչ մէկը կրցաւ յաղթել ապստամբներուն, որոնք ոչ միայն հիմներ էին իրենց զինագործարանները, այլեւ մեծապէս կ'օգտուէին հոսովմէացիներէն զբաւած զէնքերէն:

Սիկիլիոյ քաղաքները մէկը միւսին ետեւ կ'իյնային ապրտամբներուն ձեռքը, ստանց լուրջ ընդդիմութեան: Կղզիին արեւելեան եզերքի քաղաքներէն Տարոմանիոն եւ Կատանա (այս վերջիչը այն քաղաքն էր ուր Գամոֆիլոսի դուստրը զրկուած էր հոգատարուելու համար) նոյնպէս անձնատուր եղան ապստամբներուն: Միայն Սիրաքուզը, Սիկիլիոյ մայրաքաղաքը, յուսահատ զիմադրութիւն ցոյց տուաւ, բայց վերջ ի վերջոյ անձնատուր եղաւ:

Կղզիին հիւսիսային կողմը, Մեսինա քաղաքը որ նեղուցով մը բաժնուած էր Իտալիայէն, ուժեղ եւ յամառ զիմադրութեամբ ճակատեցաւ ապստամբներուն: Պաշարումն ու կռիւը տեւեցին երկու շաբաթ: Վերջնապէս այդ քաղաքն ալ ինկաւ ապստամբներու ձեռքը: Այդ կարեւոր նաւահանգիստի գրաւումով իտալական կողմի զերիներն ու գործաւորները քաջաբերուած յայտարարեցին գործադուլ եւ պարզեցին ապստամբութեան գրօշակը:

Հոսովմ ինկած էր հակադիր ուժերու յորձանքին մէջ: Տիրերիոս Գրաքոսի սպաննութեամբ որ տեղի ունեցաւ 133 թուականին (Ն.Ք.) ընդհանուր աշխատաւոր զերիներու ապստամբութիւնը որ անդամալոյժ ընելու կը սպաննար հոսովմէական կայսրութիւնը, լուելեայն կը յայտարարէր թէ պայմանները հասունանալու մօտեցեր էին, որպէսզի վճռուէր այն հարցը թէ բարբարոս զերեաիրութիւնը պիտի ըլլար տիրող թէ յեղափոխութիւնը: Բայց պէտք է ըսել որ Տիրերիոսի, զրկուածներու այս մեծ պաշտպանին սպաննութիւնը խոշոր հարուած տուաւ ստեղծուած ընկերային շարժումին, յառաջացնելով յուսալքում:

Այն ստեն երբ Տիրերիոս տակաւին ողջ էր եւ ուժղին թափով յառաջ կը վարէր հակա-զերեաիրական արշաւը, Հոսովմ Սիկիլիա զրկեց Կալպրնիոս Փիլոսն 100.000 զօրքերով: Անոր առաջին գործը եղաւ պաշարել Մեսինան որ երկար չկրցաւ զիմանալ ու անձնատուր եղաւ: Հոսովմէացիները 8.000 զերիներ սպաննեցին եւ պատերազմական զերիները խաչեցին անդուլթ խոշտանդումներով:

Փիլոս խրոխտ, ինքնահաւան ու յանդուզն զօրավար էր. ան փստահ էր որ շուտով պիտի կրնար բնաջնջել զերիներու խաժամուժ բանակները: Այս մարդը իր առաջին յաղթանակէն զինուլցած, փո-



խանակ քայլ առ քայլ յառաջանալու, ուղեց ուղղակի յարձակիլ Եռնուսի սրտին, Էննայի վրայ, յուսալով որ գրաւելով Կերէս աստուածուհին տաճարը, բարոյական յուսալքում կը յառաջացնէք սպասամբ զերիններու մէջ եւ կ'ապահովէք վերջնական յաղթանակը:

Հոսովձեպիս լեզէոնները վերջապէս հասան Էննայի պարիսպներուն առջեւ, երբ Եռնուսի բանակը զանազան թեւերու բանակով հարձակուեալ զրաւուած շրջանները ապահովութեան տակ առնելու գործով էր զբաղած, կատարեալ կարգապահութեամբ:

Քաղաքին հիւսիսային կողմը շրջապատուած էր լեռներով, որոնք կը հսկէին անդունդի մը: Այդ անդունդին մէջ նկատուած էր շատ մը գերի կիներ. նոյն անդունդը զլորուեցաւ նաեւ Եռնուսի առաջին յաղթութեանէն վերջ Գամֆիլիոսի կիներ, հրէշուհի Մեկալիոնը:

Հոսովձեպիսները քաղաքը պաշարելով սկսան բարաններ արձակել քաղաքի պարիսպները խորտակելու համար. բայց անուշաքաղաքը մնաց անառիկ: Նոյն տանն պատահեցաւ անսպասելի մի բան: Քլէան իր բանակով հասաւ եւ յարձակեցաւ հոսովձեպիս բանակի թիկունքին վրայ: Հոսովձեպիս լեզէոնները յանկարծակիի եկած զիմեցին նահանջի: Եռնուսի զորախորհրդուն ռազմական որխալը այն էր որ անոնք միայն քաղաքը պաշարումէն ազատելով դոհացան եւ Փիլոյի բանակը մինչեւ ծովեզերքը հալածելով եւ վերադարձան, մինչդեռ անոնք կրնային հոսովձեպիս լեզէոնները բոլորովին բնաջնջել:

132 Թուականին (ն.թ.) Պ. Ռուպիլիոս Հոսովի հիւպատոս ընտրուեցաւ: Այս մարդը որ տարիներով նախապէս պաշտօնավարած էր Միկիլիոս մէջ եւ ծանօթ էր բոլոր ճամբաներուն, անառիկ վայրերուն ու ռազմադիտական կարեւոր կէտերուն, անձամբ ստանձնեց արշաւանքի ղեկավարութիւնը լեցուած անդուստ կատարութեամբ:

Մտնելով Միկիլիոս, Ռուպիլիոս առաջին անգամ ուղեց գրաւել Տորոմանիոն քաղաքը որ կատանայի հետ անդեր էր Եռնուսի ձեռքը: Ռուպիլիոս որոշած էր ամէն գնով գրաւել այդ քաղաքը, որուն պաշարանութիւնը յանձնուած էր Քլէանի եղբոր Կոմանտին:

Քաղաքին պաշարումը որքան տեւեց, պատմարանները չեն յիշատակեր. միայն գրած են որ «պաշարուածները կարուած արտաքին աշխարհէն, մասնուած էին սարսափելի կացութեան եւ անզիմադրելի անօթութեան ընդմեջով ամէնէն վերջը զիմեցին մարդակերութեան. մարթեցին կիները, երեխաները եւ կտուելու ան-

կարող ձերերը, սնանեցան անոնց մսով եւ չուկեցին պարտուիլ ու անձնատուր ըլլալ հոսովձեպիսներուն»:

Քաղաքի հրամանատարը, Կոմանոս, ուժասպառ բայց ոչ ընկճուած, գերազոյն փորձ մը կ'ընէ. զիշեր ատեն պարիսպէն պարանով վար կ'իջնէ եւ փախչիլ կ'ուզէ, որպէսզի հասնի իր եղբոր անոր իմացնելու քաղաքի պաշարուածներու գրութիւնը: Բայց, հոսովձեպիք կը բռնեն դայն:

Ռուպիլիոս կ'ուզէ իմանալ պաշարուածներուն վիճակը թէ ո՞րքան ատեն կրնան դիմանալ եւ ի՞նչ բանի կապած են իրենց յոյսը: Կոմանոս մէկ բառ իսկ չարտասաներ. համբի պէս կը մնայ կանգնած: Երբ հոսովձեպի զորավարը կը հրամայէ իրեն որ խօսի Կոմանոս, զիմանալով որ ինչ սոսկալի մահ կը սպաննայ իրեն, յանկարծ իր վերաբիւրով կը ծածկէ գլուխը եւ գերմարդկային ճիւղով կը խեղդէ ինքզինք ու ի մեծ դարձացումն Ռուպիլիոսի անշունչ կը փռուի անոր ոտքերուն առջեւ:

Ահա այդպէս վերջացաւ պաշարուածները ազատել ուղղ հերոսի կեանքը, իսկ Ռուպիլիոս իր կատաղութիւնը յազեցնելու համար այրել տուաւ անոր մարմինը:

Հոսովձեպիս զորավար անկէ յետոյ հրամայեց ծակել պարիսպը եւ մուտքը լայնցնելով խուժել ներս: Պաշարուածները կորսրնցնելով իրենց հրամանատարը, կորսնցուցեր էին իրենց բարոյական ուժը եւ դասալիքի մը յուսահատեցուցիչ յորդորին հետեւելով նախընտրեցին անպատիւ մահը ու թոյլ տուին որ հոսովձեպիք մտնեն ներս:

Առով ազատուեցա՞ն մահուանէ. ոչ երբեք:

Ռուպիլիոս բազմաթիւ կախարաններ պատրաստել տուաւ եւ պարտուած զերիները կախարան բարձրացուց, ապա անոնց զիակները մէկ առ մէկ նետել տուաւ ծովը:

Ռուպիլիոս, մասամբ յազեցնելով իր վրէժխնդրութիւնը, այս անգամ քաղեց ուղղակի Էննայի վրայ, որ բնական, անառիկ ամբողջ էր: Ան միայն պաշարումով ու բնակչութիւնը սովամահութեան մատնելով կրնար քաղաքը գրաւել: Եւ արդէն իր ռազմավարութիւնն ալ այդ դժով սոյնը էր յառաջ տանել, մանաւանդ որ պայմաններն ալ նպաստաւոր էին իրեն համար: Աքէոս կորուած էր. կռիւներու ընթացքին մեռա՞ծ էր թէ զերի ինկած՝ ոչ ոք զիտէր. Կոմանոսը, ինչպէս տեսանք, ինքնապաշտ կաւ. Տորոմանիոն քաղաքի պաշարման ատեն: Եռնուսի մօտ մնացեր էր միայն Քլէանը որպէս փորձագէտ եւ ընդհանուր հրամանատար:



Քաղաքին պաշարումը տեւեց չինդ շարաթ :

Քլէան, այն խիզախ ու քաջ մարդը, պաշարման շղթան փըշ-  
րելու համար յանդգնորէն իր մարդոց հետ նետուեցաւ դուրս եւ  
խոյացաւ դէպի Ռուպիլիոսի վրանը, զայն սպաննելու հաստատ մը-  
տադրութեամբ: Իր ճամբուն վրայ դիւցարդնաբար կոուելով աջ ու  
ձախ զետին փոեց իրեն դիմադրողները, բայց աւազ, իր թշնամիին  
չկրցաւ մօտենալ. իր ստացած ծանր վէրքերէն ուժասպառ ինկաւ  
հերոսի մահով:

Անոր մահուն լուրը երբ հասաւ Եւնուտի, երբեմնի այդ  
պողպատէ մարդը որ յուսահատիլ չէր զիտեր, երեխայի նման ան-  
ճարտի դարձաւ: Իր հաւատքը, իր կամքը հեռացեր էին իրմէ: Եւ  
ահա դաւաճան մը երեւան ևկաւ որ թշնամիին յանձնեց քաղաքին  
բանալիները:

Էննան ինկաւ հոսումէպիներու ձեռքը:

Եւ սկսաւ նմանը շտենուած մասոյախկան կոտորած մը քա-  
ղաքին մէջ: Ծեր մարդիկ, կանայք, երեխաներ, կոուող զերի զին-  
ւորներուն հետ մատնուեցան սուրի, խկ խաչելութիւնները շարու-  
նակուեցան օրերով: Տր. Պուխէր իր պատմութեան մէջ կը հաւատ-  
ախոյնէ թէ քաղաքի գրաման առաջին օրը 20.000 մարդկային էակ-  
ներ խոզխոզուեցան եւ քաղաքին փողոցները ներկուեցան արիւնով:

Այսպէս վերջացաւ Եւնուտի չիմնած զերիներու թաղաւոր-  
ութիւնը, իսկ ինքն ալ նետուեցաւ նկուղի մը մէջ ուր մեռաւ ան-  
փառունակ մահով:

Այստեղ պէտք է նշել որ Եւնուտի այս խայտառակ պար-  
տութիւնը պէտք չէ վերագրել հոսումէական լեզէոններու ուժին կամ  
Ռուպիլիոսի հանճարեղ ռազմավարութեան: Եւնուտս իր փառքի  
զապաթնակէտը հասնելէ վերջ սկսեր էր գեղխ կեանք մը ապրիլ. ա-  
սով թուրացեր էր իր խստակեաց զինուորի կամքը եւ այլասերուեր  
էր իր նկարագիրը: Նոյնպէս փոխուեր ու այլասերուեր էին զինքը  
չըջապատող մարդիկը, այնպէս որ ան այլեւս չէր անսար Աքէոսի  
հրահանգներուն: Իր ունեցած երկու հարիւր հազարնոց բանակը ե-  
թէ մշտապէս մարդէր եւ ամէն անակնկալի առջեւ կազմ ու պրտ-  
րաստ պահէր եւ նոյն ատեն ամբացնէր կղզիի ռազմադիտական կէ-  
տերը, հոսումէական լեզէոնները չէին կրնար ցամաք ելլել եւ կամ  
եթէ ցամաք ելլէին ալ չէին կրնար իրենց ուղած տեղին վրայ ուժ  
կեդրանացնել ու յարձակիլ: Եւնուտս շարունակ պաշտպանողական  
ճակատի վրայ մնաց: Ան չէր զիտեր որ պատերազմի մէջ Բիշդ ա-  
տեմիս յարձակողն է որ կը յաղթէ: Եւնուտս ուրիշ կարեւոր կէտ  
մը կար զոր աննկատ թողուցեր էր. ինք գործ ունէր զեռեւս հօրը,

աշխարհակալ կայսրութեան մը հետ, որուն դաշնակիցներն էին Սի-  
կիլիայի գերեւտէրերը: Անիկա նախ պէտք էր այդ ներքին թշնամի-  
ները անխնայ մաքրէր. ասով կ'ուժեղացնէր իր թիկունքային ուժը.  
միակողմ եւ միազոյն ժողովուրդ մը անպարտելի կը մնար:

Պէտք չէ մոռնալ նաեւ ուրիշ աննպաստ պարագայ մը, որ  
հոգեբանական հիմք ունի: Գերիները, ասօր ասրի յաղթութեան  
ու առատութեան մէջ ապրելով, կորսնցուցեր էին իրենց ասելու-  
թեամբ վառ եռանդը եւ աննահանջ ոգւով կոուելու կամքը: Հոգե-  
բանական այդ դրութիւնն էր որ ծնունդ տուաւ դաւաճանութեանց:

Ռուպիլիոս, էննան դրաւելէն վերջ իր զօրքերով հետապնե-  
ղեց հոս ու հոն ցրուած փախտական ազատամբները, որոնք առանց  
առաջնորդի միացեալ ճակատ չկրցին կազմել եւ փճացան:

Այսպէսով վերջացաւ Սիկիլիոյ գերիներու ապստամբութիւ-  
նը, որուն նմանը սեւէ երկրի պատմութեան մէջ չէ արձանագրուած:

Այդ ապստամբութեան հետ վերջացաւ նաեւ գերիներու ժա-  
մանակաւոր թաղաւորութիւնը:

ԱՐԻՍՏՈՆԻԿՈՍ

Պերկամասի եւ շըջականերու մի մաս գերիներու, մի մաս  
ազատ մարդոց, արհեստաւորներու եւ Փարմըրներու մեծ ապստամ-  
բութիւնը կամ զործադուլը որոշ քափով արդիւնքն էր Սիկիլիոյ  
մէջ ճախողած յեղափոխութեան որու մասին խօսեցանք արդէն:

Մինչեւ հիմա մեր ծանօթացած յեղափոխական կամ ապրս-  
տամբական առաջնորդները անսանք թէ ելած էին ժողովրդական  
խոնարհ խաւերէն, գերիներու մէջէն: Ընկերաբանութիւն ուսանող  
հետաքրքիր ընթերցողը այժմ պիտի տեսնէ ուրիշ կերպար մը,  
մարդ մը որ տիրող դասակարգէն եկաւ եւ եղաւ ապստամբութեան  
մը զեկավարողը. այդ մարդն էր Արիստոնիկոս:

Պերկամոս, Կիլոս գետին վրայ չին, զեղեցիկ քաղաք մըն  
էր Փոքր Ասիոյ մէջ, ուր կը թաղաւորէր Առախլաս Գ. Իւմենէսի  
որդին 138-էն 133 թուականին (Ն.Ք.): Կամչոտ, անպուժ ու նա-  
խանճոտ միապետ մըն էր, որ իր մահուն ատեն առանց հոսով-  
մէացիներու կողմէ սեւէ սպանալիքի ենթարկուելու, երկիրը կը-  
տակեց իր ժողովուրդի թշնամի Հոսովի: Հոսով ուրախ էր որ ա-  
ռանց կուրի, առանց դժուարութեան տէր կը դառնար հարուստ  
երկրամասի մը: Բայց այդ ատենները Հոսովի մէջ մի տեսակ խառ-  
նակութիւն կար, որովհետեւ Տիտոս Կրաքոս կը փորձէր վերահաս-  
տատել լիսինեան օրէնքը որ կ'արգիլէր սեւէ մէկուն 500 արտապա-



րէն աւելի հոգ ունենալ: Ամբողջ արխտոկրասին, երկրին ամէնէն ապականուած եւ արկածախնդիր տարրերուն հետ միացած, բուն ընդդիմադրութիւն ցոյց տուին անոր ծրարի դործագրութեան փորձերուն դէմ, քանի որ ատանկով կ'արգիլուէր հողերու բնագրաման իրենց ազատութիւնը: Խեղճ ժողովուրդը, ազատ մարդիկն ու գերիները չափազանց շահագրգռուած էին այդ խռովութիւններով եւ մինչ կը սպասէին որ Կրաքոսը յաղթական դուրս գար այդ պայքարէն, ազնուականները նոյն տարին զայն սպաննեցին. ասով տիրեց ընդհանուր յուսալքում:

Սիկիլիոյ մէջ Եունուսի յեղափոխական բանակի ամբողջական պարտութիւնը, ան ալ ճիշդ այդ յուշումնալից շրջանին աւելի յուսահատական գրութեան տարաւ համայն ուսմիկ դասակարգը: Այժմ, այդ դժբախտութիւնն ալ բաւական չէր լեցնել դառնութեան բաժակը, ահա Փոքր Ասիայէն լուր հասաւ որ այն երկիրը, ուր արհեստակցական եւ աշխատաւորական այլ միութիւններ ուրիշ սեւէ տեղէ աւելի հիանալի կերպով կազմակերպուած բարեկեցիկ, զօհունակ կեանք մը կ'ապրէին, այսինքն Պերկամոսը եւ Իւմենէսի հարուստ նահանգը իր Կիդոսի արգաւանդ եւ զեղեցիկ հովիտներով անցեր էր ընչաքաղց ու սղահ հոովմէացիներու ձեռքը եւ կը ներկայացնէր ստրկութեան եւ ծայրայեղ սարսափներու մի համայնապատկեր: Հոովմէացիներու գերեւտիրական հիմնարկութիւնը այդ տեղերը հաստատուելով արդէն սկսեց էր մրցել ազատ աշխատաւորութեան հետ: Բայց այդ ազատ աշխատաւորութիւնը այնքան լուկազմակերպուած էր որ ինչպիսի կառավարութիւն ալ որ ըլլար հոն հաստատուող կառավարութիւնը, անոնք իրենց դոյութիւնը կրնային պահել եւ այնպէս ալ պահած էին. տարբեր էր, սակայն, հարցը հոովմէական տիրապետութեան սակ: Հոովմէացիք կը խորասակէին, կը քանդէին այն ամէնը ինչ որ հակառակ էր տիրող ազնուական դասակարգի շահերուն ու կամայականութեանը: Ահա թէ ինչու երբ լուր տարածուեցաւ թէ Պերկամոսը ատանց ժողովուրդի հաւանութեան կտակուած է հոովմէացիներուն, դորձաւորական միութիւնները համոզուեցան թէ հոովմէական տիրապետութեան ներքեւ իրենք պիտի կորսնցնէին իրենց ազատութիւնն ու երջանկութիւնը եւ պիտի ենթարկուէին ստրկական անտանելի դրութեան, որուն սոսկառեսիլ պատկերը իրենց ներկայացուցիչ էին արդէն Սիկիլիայէն վախտատական թշուառ գերիները:

Պուտարքոս կ'ըսէ որ այդպիսի տաղնապալից շրջանի մը երբ Կրաքոս հողային բարեկարգումի ծրարի կը հետապնդէր, ա-

տով արդէն իր մահուան գատախնդրուէր էր, զոր կը ստորագրէր իր ձեռքով, որովհետեւ կողոպուտի ու շահագործումի վարժուած հագասէրներն ու ազնուականները երբեք չէին հանդուրժեր հպատակիլ օրէնքի մը որ կուզար սահման մը դնել իրենց կալուածին:

Դրութիւնը, ուրեմն, իր ընդհանուր շրջանակով շատ վատ էր, եւ զուր տեղը չէր ժողովուրդի սարսափը: Եւ իրապէս ժողովուրդը սխալած չէր իր երեւակայութեան մէջ, որովհետեւ հոովմէացիները երկրէն ներս մտածնուն պէս անմիջապէս գրաւեցին ազատ գիւղացիներու հողերը եւ դանոնք դարձուցին գերի: Անկէ յետոյ ճղմեցին արհեստակցական եւ դորձաւորական միութիւնները, ամէնքն ալ լծեցին ստրկական աշխատանքի: Ատանկով սկսաւ բնապետական նոր դրութիւն մը, որուն նմանը երբեք տեսած չէր այդ երկրի ժողովուրդը:

Ատտալիս խորթ եղբայր մը ունէր, որուն անունն էր Արխտոնիկոս: Ասիկա գաւաին էր Իւմենէսի այն կնոջ որ նուազածուի մը զուսարն էր եւ կը ծառայէր թագաւորական ընտանիքին մօտ: Համաձայն ընդունուած օրէնքին, Արխտոնիկոս գահաժառանգ մըն էր եւ յաջորդելու էր եղբոր, հոգ չէր թէ ինք կէս ազնուական էր, կէս ոսմիկ: Ատտալիս շուղելով որ ոսմիկ կնոջմէ մը ծնած իր եղբայրը իրեն յաջորդէ, իր ամբողջ երկիրը տուած էր հոովմէացիներուն: Արխտոնիկոս ատանց բարեկամի չէր. շատ մը քաղաքներ իրենց բնակիչներով որոշած էին զինք ճանչնալ որպէս իրենց օրինաւոր թագաւորը. որովհետեւ պէտք է ըսել թէ ինք բոլորին սիրելի ժողովրդական մարդ էր եւ բնաւ չէր նմաներ իր եղբոր որ գազանի բնաւորութիւն ունէր: Արխտոնիկոս Հոովմէն պահանջեց որ ճանչցուի իր վեհապետական իրաւունքը: Հոովմի ծերակոյտը մերժեց եւ նկատի չառաւ անոր պահանջին օրինականութիւնը: Ռոմիկ կնոջմէն ծնած մէկը որ հասարակութենէն արտաքուստներու դասուն կը պատկանէր, չէր կրնար բազմիլ թագաւորական գահին վրայ: Արխտոնիկոս վճռեց զէնքի ուժով տիրանալ գահին: Իրեն գինակիցներ չէին պակսեր. կարգ մը քաղաքներ, ինչպէս Գոլոֆոն, Մինտում եւ խիտ բնակչօք Սամոս, կ'ուղէին օդնել իրեն, բայց կը վախնային հոովմէացիներէն: Անոնց գինակցութիւնը ապահովելու համար անհրաժեշտ էր նախ մի քանի գինուորական յաջողութիւններ ձեռք բերել: Արխտոնիկոս շուտով նկատելի ուժով բանակի մը զլուխը անցած կրցեր էր նաեւ մի քանի նաւերով փոքրիկ նաւատորմի մը կազմել: Պալատէն ձեռք բերած դրամով ան կրցաւ նոյնպէս թրակիրացի ազատ արձակուած գերիներ վարձել որպէս շահա-



դէս զինուորներ: Իր բանակին մէջ էին նաեւ իր եղբոր զինուորներէն շատերը:

Յաւալի էր որ եփեսացիները, որոնք հաշտ աչքով չէին հետեւեր դահաղուրի թագաժառանգի ստեղծած շարժումին, իրենց նաւերով ամբողջապէս փճացուցին անոր փոքրիկ նաւատորմիդը: Արխատոնիկոս անկէ յետոյ որոշեց իր բախտը փորձել ցամաքի վրայ, ցամաքային ճակատամարտով:

Բազմաթիւ գերիներ որոնք լսեց էին Եռնուսի յաղթանակներէն յետոյ անոր պարտութիւնը, կը վախնային թէ հռովմէացիները Պերկամոս մտնելէ վերջ իրենց դրութիւնը աւելի պիտի վատթարանար, պատրաստ էին ողջունել այս նոր արկածախնդիր մարդը: Կազմակերպուած ազատ արձակուած գերիները նոյնպէս վախի մէջ էին: Այս այն շրջանն էր երբ հռովմէացիները որոշած էին արժատախիլ ընել արհեստակցական միութիւնները մահապատիժներով, որոնք վերջ գտան 58 թուականին դրուած օրէնքով: Հին դարու գործաւորները իրենց վախին հետ իրենց բանակաժողովան ուժով տիրացեր էին այն միջոցներուն որոնցմով կրնային ցրուած ուժերը ի մի հաւաքել եւ յուսահատական կռիւ մղել հասարակաց թշնամիին դէմ:

Արխատոնիկոս տեսաւ որ հռովմէացիներու գործադրած բռնութեանց հետեւանքով գերիները արդէն յեղափոխուած էին: Անոնք յարուցեր էին մեծ ապստամբութիւն մը, սպաննած էին իրենց տէրերը, զրաւած էին անոնց կալուածները եւ կազմեր էին բանակ մը երբ Արխատոնիկոս կեցաւ անոնց առջեւ որպէս առաջնորդ, խոստանալով հիմնել պետութիւն մը ազատութեան ու հաւասարութեան սկզբունքներու վրայ: «Ես գերի մօր մը դաւակն եմ», ըսաւ անոնց, «ես ալ ձեզ նման գերի մըն եմ եւ դիտեմ թէ ինչ է գերութիւնը: Ես իմ հօրս դահին տիրանալու համար ջնմ կուտիր, այլ կը կուտիմ հօրս իշխանութիւնը հասարակ, իրաւազրկուած ժողովուրդի շահերուն ծառայեցնելու համար: Ես կ'երգնում որ իմ այս խոստումս պիտի պահեմ, իսկ եթէ ապագային տեսնէք որ կը դրժեմ իմ խոստումը, ձեզի իրաւունք կուտամ որ սպաննէք զիս որպէս դաւաճան»:

Ըրաֆոնի եւ քէստոնի գործաւորական կազմակերպութիւններ գոյութիւն ունէին արդէն Փոքր Ասիոյ ծովեզերեայ քաղաքներուն մէջ, մասնաւորապէս Պերկամոսի եւ Սամոսի մէջ: Անոնք հասարակ դարձած էին Յունաստանի, Սուրիոյ եւ կղզիներուն մէջ, եւ հաստատեցին զարգացած ղեմակրատական մշակոյթ: Արխատոնիկոսի խոստումը, ուրեմն, այս բոլորին համար հաճելի էր. իրենք

որպէս լիուլի իրաւատէր քաղաքացիներ պիտի ապրէին, միայն թէ հասարակաց թշնամին, Հռովմը պարտուելու էր:

Սուրիացիներու ամենահին կրօնքը արեւապաշտութիւնն էր. անոնց արեւ աստուածը իր զօրութեամբ համազօր էր յայնչերու Արամազդին:

Երբ Սիկիլիոյ Եռնուսը Կերէս աստուածուհին պատգամախօսը եղաւ իր սկզբնական յաջողութեանց ընթացքին, Արխատոնիկոս ալ արեւ աստուածոյն ներկայացուցչը եղաւ եւ յայտարարեց որ իր թագաւորութեան բոլոր մարդիկը արեւ աստուածոյն քաղաքացիները պիտի ըլլան հաւասար իրաւունքներով:

Գերիներէ եւ ազատ արձակուած գերիներէ կազմուած իր հուժու բանակին առջեւ քաղաքները իրարու ետեւ ինկան գահաժառանգ թագաւորին ձեռքը: Արխատոնիկոս գարձաւ գրութեան տէրը:

Հռովմի մէջ 133-132 թուականին (Ն.Ք) ոչ մէկ ջանք եղած էր հանդարտեցնելու Փոքր Ասիոյ խռովութիւնները: Այդ մեծ քաղաքը զեռես կ'եռեւեփէր Տիտոս Կրաքոսի յարուցած հողային բարեկարգութեան օրէնքին հետեւող յեղափոխութեամբ: Այս մարդուն սպաննութեամբ յեղափոխութիւնը ճզմուած էր, բայց միւս կողմէ Ռուպիլոս երբ իր բանակով Սիկիլիոյ մէջ զբաղած էր, Հռովմ հարկ եղած ուժը չունէր իր նոր ստացած երկրամասին, Պերկամոսի խռովութիւնները հանդարտեցնելու համար: Բայց երբ լուր հասաւ թէ Պերկամոս արդէն ձեռքէ ելած էր, բացառիկ եւ ընդհանուր զօրահաւաքի ձեռնարկեց եւ 131 թուականին (Ն.Ք.) բանակն ու նաւատորմիդը զբաւ նորընտիր երկու հիւպատոսներէն Կրատոսի հրամանատարութեան տակ:

Կրատոս թէեւ հողային բարեկարգութեան կողմնակից ու վրտանդաւոր մարդ էր, բայց ամէնէն յարմար մարդն էր, որովհետեւ ոչ միայն յունարէն լեզուին տիրացեր էր, այլեւ ծանօթ էր ասիական զանազան լեզուներուն:

Այս մարդը իրեն յանձնուած բանակով ու հսկայ նաւարաժիտով տարուան սկիզբը հաճելի նաւարկումով Պերկամոսի նաւահանգիստը հասնելուն միայն մէկ երազ ունէր, այն էր բացարձակ տէրը դառնալ այդ գաւառին, հռովմէական ուժով անկախութիւն հռչակել հռովմէական իշխանութեան առջեւ եւ իրագործել Տիտոս Կրաքոսի հողային բարեկարգութեան ծրագիրը: Անիկա վստահութիւն չունէր Արխատոնիկոսի վրայ. ան իր թագաւորութիւնը կ'ուզէր հաստատել. ինք հանրապետական էր, ժողովրդական կառավարութեան կողմնակից էր: Բայց ամէն պարագայի տակ իրողու-



Թիւն էր որ այս մարդը տարուած էր աւելի շատ անձնական փոստ- սիրութեամբ: Կրասոս, իմանալով որ Արիստոնիկոս ոչ միայն հըս- կայ բանակ մը ունէր, այլև թիկունքային ուժն ալ զօրաւոր էր, քանի որ առհասարակ ժողովրդական համակրութիւն ալ կը վայելէր, բանակցեցաւ Բիթանիայի, Պոնտոսի, Կապադովիայի թագաւորներուն հետ, որոնք սարսափի մատնուած էին գերիներու յեղա- փոխութենէն եւ կը աւանդէին որ իրենց կաշին եւս վտանգի տակ էր, ու այդպէսով ապահովեց անոնց օժանդակութիւնը: Կրասոս ածա- պարանքի մէջ էր. իր հիւպատոսական ժամանակաշրջանը (մէկ տարին), երբ վերջանար, վերադառնալու էր Հոսիմ. եւ ահա իր ծրարիրը ջուրը կ'իջնար. առանց յաղթութեան ոչինչ կրնար բնել: Առաջին անգամ իր բանակով եւ օդնական ուժերով յարձակեցաւ Լուկէ քաղաքին վրայ, որ անտրիկ ամբուլթիւն մըն էր: Պաշարումը երկար տեւեց. ձմեռը անցնելուն պէս իր պաշտօնավարութեան ժա- մանակը կը վերջանար: Այն պահուն երբ յաղթութիւն մը վաստակ- լու համար պաշարումը աւելի սաստկացուց, Արիստոնիկոս իր ու- ժեղ բանակով հասաւ քաղաքի օդնութեան: Սկսաւ ահեղ ճակա- տամարտը: Կրասոս բռնուեցաւ դինք խեղդող օդակին մէջ. ուղեց նահանջել, բայց նահանջելու ալ միջոց չունէր. շարաշար պար- տուեցաւ եւ ինք ալ գերի ինկաւ: Գերի մնալ ու ապրի՞լ. Կրասոս կը նախընտրէր մեռնիլ քան թէ շնորհագուրդ գերի մնալ: Իր կատա- րութենէն փոխանակ համակերպող գերիի մը գիրքը բռնելու, հրա- մանատարի պէս սկսաւ վերաբերուիլ իր վրայ հսկող գինուորներուն հետ. նոյնիսկ մի օր յանդգնեցաւ ապտակել դանոնք: Թրակիացի գինուորները տեղն ու տեղը սպաննեցին դինք եւ կարեցին անոր գը- լուխը, մարմինն ալ զրկեցին Չմիւռնիա եւ հոն թաղուեցաւ:

Այս խաչատառի պարտութեան վրայ Հոսիմ կատարութեան նոպայէն բռնուած յաջորդ տարին, այսինքն 130 թուականին (Ն. Ք.) վիթխարի բանակով նորքնախր հիւպատոսներէն մին, Պապեր- նան զրկեց իր գէմ ծառայող թշնամիին գէմ:

Երբեմնի ամբողջ աշխարհը սարսափի մատնող Հոսիմը այժմ շուարած էր իր ընկիւթին մէջ. բայց կործանման ժամը գեռ հասած չէր. ինքզինք պաշտպանելու համար տակաւին բաւական ուժ ու- նէր. միայն փառքի օրերը վերջիչելուն համար էր որ կատգեր էր:

Պապերնա իր հուժկու բանակով հասաւ այն տեղը ուր Կր- րասոս պարտուած էր: Արիստոնիկոս ճիշդ այդ տուն իր ձմեռնային պաշտօնատեղին քաշուած էր: Մինչ թշնամին լրտեսական ցանցերով երկիրը շրջապատած, ամէն ինչ հաշուի էր առեր, ինք Կրասոսի վը- րայ տարած յաղթութիւնը վերջնական յաղթութիւն համարելով

մնացեր էր անհող ու անպարտատ: Պապերնա, առանց թողելու որ իր թշնամին ղեմադրութեան պատրաստուի, յանկարծակիի բե- րաւ զայն. մէկ անգամէն յարձակեցաւ անոր վրայ: Ահաւոր էր մղուած ճակատամարտը: Արիստոնիկոսի գինուորները ղիւցաղնա- բար կռուեցան, բայց անօգուտ, յարձակող թշնամին անհամեմատ ուժեղ էր: Արիստոնիկոսի սխալը հոն էր որ իր ամբողջ ուժը այդ տան կեղրոնացած չէր պահած ու մասերու բաժնած ցրուած էր երեք կարեւոր ղիրքերու վրայ: Ահա թէ ինչու նա վերջնականապէս պարտուեցաւ, իր քայքայուած բանակին մնացորդներով ուղեց փախչիլ, բայց բռնուեցաւ, չղթաներու տակ զրկուեցաւ Հոսիմ, ուր բանտին մէջ դինք խեղդամահ ըրին: Այս դէպքին թուականն էր 129 (Ն. Ք.):

Հին դարերէն մինչեւ մեր օրերը անհատի պաշտամունքը մասսաներու հոգեբանութեան մէջ մեծ դեր է ունեցեր եւ ունի: Առաջնորդը կամ հրամանատարը մեռա՞ւ. մասսան կը յուսահատի, անուժ կը դառնայ:

Նոյն այդ երեւոյթը պարզուեցաւ Արիստոնիկոսի պարտու- թենէն ու մահէն յետոյ. իր բանակի թեւերը չկրցան համախմբուիլ չկրցան կռուիլ: Նոյնիսկ իր ամէնէն հաւատարիմ ու եռանդուն բա- րեկամը, Բլոսիոս, որ զարգացած մարդ ալ էր, թոյն խմեց ու անձ- նասպան եղաւ:

Ի՞նչ եղան ազատաւէր բանուորներն ու գերիները: Պատմա- բանները լուրթեամբ կ'անցնին այս հարցին վրայէն. միայն կ'ըսեն թէ Պապերնա հարիւրաւոր ապտամբներ խաչել տուաւ եւ երբ հա- զարաւոր գերիներ Հոսիմ տանելու կը պատրաստուէր, քանի որ իր պաշտօնավարութեան մէկ տարուայ ժամանակը լրացած էր, հի- ւանդացաւ ու մեռաւ Պերկամոսի մէջ:

Բայց այն անհամար զոհերը որ ինկան, անոնք հող պատրաս- տեցին այն յեղափոխութեան որ պիտի զար քանդել կուսպաշտական ստրկատիրութեան շէնքը եւ անոր վրայ հիմնելու նոր շէնք մը, ուր թագաւորելու էր բարեարտութիւնը, համբերատարութիւնը եւ մարդկային սեռի եղբայրութեան եւ հաւասարութեան ճանաչո- ղութիւնը:

ԱԹԵՆԻԱՆ

Եունուսի մղած պատերազմները երբ վերջացան (133 Ն. Ք.) ամբողջ 29 տարի Սիկիլիոյ մէջ տեղի ունեցան մի շարք գործադու- ներ եւ ապստամբութիւններ մինչեւ 104 թուականը (Ն. Ք.):

Մենք արդէն ըսինք թէ հին դարերուն պատահական ապա-



տարաններ կային ուր կը զիմէին գերիներն ու աղատագրուած գերիները որոնք անգուժ գերեատէրերու բռնութիւնէն փախչելով պաշտպանութիւն կը գտնէին այդ ապաստանարաններուն մէջ բնակող աստուածութեանց մօտ: Այդպիսի ապաստանարան մը կար Սիկիլիոյ մէջ, Սիրաքիւզէն արեւմուտք երկու լիճերուն մէջտեղ: Այս ապաստանարանը հիմնուած էր Արամազդի եւ յաւերժահարս Դաւիթի երկուորեակ զաւակներուն ի պատիւ եւ կը կոչուէր պալիֆոյի:

Գերեատէրերու շարչարանքներէն փախչող գործաւորները իրենց կրօնական հաւատքէն զրդուած ապահովութեան համար պալիֆոյի մէջ հաւաքուած կը սպասէին հրաշագործ ազատութեան: Ասկէ կը սկսի տարօրինակ պատմութիւնը այն յուսահատ ազրատամբեան, որուն նմանը արձանագրուած չէ ուրիշ ազգերու պատմութեան մէջ:

Այս ապաստանարանը յետագային վերածուեցաւ ապաստարան պարտուած ուժերու կեդրոնատեղիի մը, ուր անոնք կը ցին վերակազմել իրենց կուռող շարքերը ու դարձեալ սկսիլ յարձակողականի: Սիկիլիոյ գերեատէրերը, ինչպէս նաեւ հռովմէացի զօրավարները, հաւասարապէս նախապաշարեալ կրօնական հաւատալիքով, փորձ չէին ընէր յարձակիլ այդ սրբատեղիին վրայ ու քանզի աստուծոյ մը սաճարը: Այս հանգամանքը կը նպաստէր ապաստաններուն:

Այժմ ներկայացնենք այդ նորածագ ապաստամբեան պատմութիւնը, ապաստամբութիւն մը որ տեղի ունեցաւ 104 թուին:

Մարիուս 104 թուականին (Ն.Ք.) Հռովմի երկու ընտրուած հիւպատոսներէն մին էր: Եւ որովհետեւ հռովմէական տիրապետութեան տակ գտնուող երկիրներուն մէջ տեղ տեղ ապաստամբութիւններ կը պայթէին, Հռովմի ծերակոյտը լիազօրութիւն տուաւ Մարիուսի որ պարտուած երկիրներէն նոր ուժեր զինուորագրէր իր քայքայուած լեզէոնները զօրեղացնելու համար: Սիկիլիա կղզին փիւնիկեան պատերազմէն ի վեր հռովմէական զաւառ եղեր էր: Հարկատու երկիրներու բնակիչներէն ամէն մէկ մարդ որ ազնուականի արիւն չունէր, դարձեր էր գերի: Իսկ այդ գերետիրութեան անասնելի պայմանները յոռաշացուցեր էին պարբերական ապաստամբութիւններ, որոնք աւելի ծանրացուցեր էին գերիներու դրութիւնը:

Նիկամիդէս, Բիւթանիոյ թագաւորը, Փոքր Ասիոյ մէջ փառեց պատերազմի խուրձերը:

Բիւթանիա, որպէս բացառիկ վարչաձեւ ունեցող մի երկիր, Հռովմի սատրապութեան տակ, համաձայն Մարիուսի օրէնքին պէտք

էր հռովմէական բանակին զօրք սար, բայց հարկահաւաքները դրբեթէ ամէն մարդ գերի էին դարձուցեր: Ասով դրուած օրէնքը վերածուեր էր մեռեալ սաստի: Նիկոմիդէս այս զիբար հակասող ուժերուն մէջ չէր զիտեր ինչ ընել:

Միւս կողմը Սիկիլիան էր ուր կառավարիչ նշանակուած էր Ներվա: Այս մարդը հռովմէական բանակին համար զինուորական պահանջուած տեղաբաժինը լրացնելու միջոց չունէր, քանի որ կըզգի թուր բնակիչները գերեատէրերու ձեռքերուն տակ գերի էին եւ գերին զինուոր չէր կրնար ըլլալ: Ի՞նչ ընելու էր, երբ գէնք կրելու կարող մարդիկ գերի էին եւ գերեատէրերը չէին ուզեր զանոնք ազատ հռչակել, որովհետեւ դա կը նշանակէր կալուածային եկամուտի կորուստ եւ գերետիրական իշխանութեան նուազում: Միւս կողմէ, Մարիուս կ'ուզէր իր ծրագիրը քալեցնել, ստոր համար խոշոր կաշառքի խոստումով զիմեց Ներվայի: Այս մարդը չէր ուզեր գերեատէրերը զրգուել իր զէմ, նոյն ատեն չէր ալ ուզեր առաջարկուած կաշառքը չընդունիլ: Ուրեմն, մէկ միջոց կը մնար, զաւաճանութիւնը: Ան յայտարարեց որ իրենց ազատութիւնը ստանալ ուզող գերիները կրնային դալ իր մօտ եւ ինք անոնց կուտար աղատագիր: Այս յայտարարութեան վրայ 800 գերիներ զանազան տեղերէ փախան իրենց տէրերէն եւ ապաստանեցան կառավարիչին մօտ: Կառավարիչը, սակայն, կաշառքը ընդունելէն յետոյ յայտարարեց որ գերիները վերադառնալու են իրենց տէրերուն: Այդ խեղճուկ էակները դիտէին թէ ինչ սարսափելի պատիժ վերապահուած էր իրենց համար, եթէ վերադառնային իրենց նախկին տէրերուն: Ատիկա ուրիշ բան չէր, եթէ ոչ ստոյգ մահապատիժ: Գերիները զիմեցին փախուստի եւ ապաստանեցան պալիֆոյի տաճարը, ազատութեան յոյսի վերջին կայարանը:

Նոյն օրերուն կղզիին մէջ պայթեցաւ մտահոգիչ մի ազրատամբութիւն, որ ուղղուած էր կաշառակեր ու զաւաճան կառավարիչին դէմ:

Սիկիլիոյ մէջ քաղաք մը կար որ կը կոչուէր Սիլասո: Երեսուն գերիներ, Օտրիոս անունով իրենց առաջնորդին հետեւելով, գիշեր մը կը յարձակին իրենց տէրերուն վրայ եւ զանոնք կը սպաննեն անոնց քնացած ատեն: Նոյն գիշերը ուրիշ երկու հարիւր գերիներ կը փչրեն իրենց շղթաները եւ նոյն կատաղութեամբ կը սպաննեն իրենց տէրերը: Այսպէսով քաղաքը անցաւ գերիներու ձեռքը: շրջականերէն տանջուող գերիները սկսան լեցուիլ քաղաքը, որ գերիներու ապաստանարանը դարձաւ ինչպէս որ էր պալիֆոյի տաճարը: Գերիները չուտով նոր դաշնակիցներ ապահովեցին եւ



պատրաստուեցան ճակատիլ կառավարիչի բանակին: Կառավարիչ Ներվա խոշոր վտանգի մը առջև էր: Դաւաճան մը միշտ վախկոտ ու կասկածոտ կ'ըլլայ:

Կառավարիչը իր բանակով քաղեց ապստամբ քաղաքին վրայ:

Բայց ինչ ըսել որ դերիններու այդ կողմակերպուած ապրատամբութիւնը ստոր մատնութեան մը հետեւանքով ձախողութեան մատնուեցաւ իր սկզբնական շրջանին իսկ: Տիտոնիոս Գատիոս, հըռովմէացի մը որ մահուան դատապարտուած փախստական մըն էր Սիկիլիոյ մէջ եւ աւաղակային խումբ մը կողմակերպեր էր Սիլիա-տոյի շրջակաները, յաջողեցաւ Օարիոսի վտահութիւնը շահիլ եւ դաշնակիցի դիմակով միանալ ապստամբներուն: Բայց կոխի տաք միջոցին դաւաճան Գատիոս իր մարդոց հետ յարձակեցաւ ապրատամբներուն վրայ եւ ապստամբներու բանակը խանդաշտութեան մատնելով բացաւ քաղաքին դռները, որով կառավարիչ Ներվա տարաւ յաղթանակը: Ապստամբներու առաջնորդները խաչերուն վրայ դամել տուաւ, շատերը սպաննեց եւ ընդհանուր սարսափի շղթայով խեղդեց ապստամբութիւնը:

Ներվա, խորհելով թէ վտանգը հեռացած էր, իր ծախսերը պակսեցնելու կանխահոգութեամբ ցրուեց իր զօրքերը:

Բայց դերիններու վրիժառութեան ու ազատասիրութեան ոգին մեռած չէր. անոնք պատեհութեան կը սպասէին:

Հռովմէացի զբամասէր, խարդախ ու դաւադիր կառավարիչը հազիւ թէ ցրուած էր իր զօրքերը, երբ ապստամբական պատերազմի ամպերը այս անգամ հաւաքուեցան կղզիին միւս մասին վըրայ: Հռովմէացի հարուստ եւ մեծ կալուածատէր ազնուական մը, Գլոնիոս, որ Սիկիլիոյ հարաւարեւելիան ծովկերքին մօտ ընդարձակ երկրամասի մը իշխանն էր, գիշեր մը յանկարծ սպաննուեցաւ: Այդ սպաննութիւնը ծրագրուած էր իր յուսահատ, տանջուող դերիններուն կողմէ, որոնք պատրաստեր էին ապստամբութիւն մը յանուն իրենց ազատութեան: Շարժումը իսկոյն տարածուեցաւ մօտակայ քաղաքներուն մէջ: Գերինները ամէն կողմերէ հաւաքուեցան դէպի Հերակլի: Կառավարիչ Ներվա պատրաստի բանակ չուէր. իր նեղ կացութեան մէջ զիմեց Տիտինիոսին, հռովմէացի հրամանատարին որ իր բանակով փութաց հասնիլ ապստամբութեան վայրը: Երկու թշնամի բանակները ճակատեցան իրարու: Ապրատամբները զինուած էին դանակներով, մանգաղներով, կայիներով ու բիբերով, եւ անոնք այդ զէնքերով պիտի կռուէին կանոնաւոր մարդուած զինուորներու դէմ: Գերինները զինուորական մարդանք, զէնք ու զրահ չունէին, բայց ունէին մինչեւ մահ կատարու-

թեամբ կռուելու անընկճելի ոգին: Անոնք մէկ մարդու պէս մէկ բան կը մտածէին, մահ կամ ազատութիւն: Ատոր համար ապստամբները պաշտպանողական դիրքի վրայ չմնացին, անցան յարձակողականի: Մեռնողներու դիակներու վրայէն կրկնեցին իրենց յարձակողական գրոհումները, այնպէս որ հռովմէացիները մատնուեցան խուճապի: Զինուորները թողուցին իրենց զէնքերը եւ դիմեցին փախուստի: Ապստամբները գրաւեցին անոնց զէնքերը եւ հալածեցին զանոնք մինչեւ որ ցերեցան եղան ու անյայտացան:

Այս յաղթանակին յաջորդեց շարքը այն գործադուլներուն որոնք պատերազմական դոյն առին: Կղզիին զանազան մասերուն մէջ գերինները թողուցին իրենց տէրերը եւ միացան ապստամբներու բանակին, որուն ընդհանուր հրամանատարն էր իր Ֆիդիքական արտասովոր ուժով, ուղղական ընդունակութեամբ եւ քաջութեամբ բոլորին հիացումը գրաւող հսկայ մը, ինքն ալ ատենօք գերի մը, Սալվիոսը:

Այս մարդը Գլոնիոսի տեղորի կազմակերպիչն էր, որ իր գերի ընկերներով յառաջացուց մեծ ապստամբութիւն մը, որուն միացան նախ երկու հարիւր հոգի, ապա անոնց թիւը բարձրացաւ երկու հազարի: Եւ այդ երկու հազարնոց բանակն էր որ յաղթեց հռովմէացիներուն:

Ետևուսի նման որ Էննայի թագաւորը եղաւ եւ տասը տարի թագաւորեց, Սալվիոսն ալ յաղթական դերիններուն համար եղաւ մարդարէ մը, ազատարար մը եւ դերինները անոր քաջազործութեանց առ ի վարձատրութիւն զայն հռչակեցին թագաւոր:

Սալվիոս թագաւորական իշխանութիւնը ստանձնածին պէս անտիջապէս սկսաւ կարգ ու կանոն հաստատել իր զբաւած քաղաքներուն, մասնաւորապէս իր զօրքերուն մէջ: Վայրի բնաղղներով տարուած իր մարդոց ան սորվեցուց որ քանդումներով ու կողոպուտով երկիրը կ'ամայանար, որ պէտք է պահպանել երկրի արդիւնարեւական աղբիւրները, պէտք է խնայել կառուցուած շէնքերը, այլապէս պատրաստի պաշարի սպառումով կը յառաջանայ սով, իսկ անօթի զինուորներով կարելի չէ բանակը պահել կազմ ու պատրաստ, յաղթական դիրքի վրայ:

Սալվիոս իր բանակը բաժնեց երեք թեւերու, զանոնք յանձնեց երեք հաւատարիմ հրամանատարներու եւ հրամայեց որ անոնք արդէն իսկ զբաւուած վայրերէն հաւաքեն ու իրեն բերեն բանակին համար անհրաժեշտ պարէնը եւ յետոյ վերամիանան իր որոշած տեղը: Մրադիրը կէտ առ կէտ յաջողութեամբ իրականացաւ: Որոշեալ ատենին եւ որոշեալ տեղին բանակի երեք բաժանմունքները զին-



ւորական կարգապահութեամբ իրենց յանձնարարութիւնները կատարեցին առանց բռնի սյոժ գործածելու եւ իրենց հետ բերին բազմաթիւ արջառ, ոչխար, ձի, ցորեն եւ այլ պաշար քանակականօրէն աճող բանակին համար: Ասանկով շատ մը ձիեր անցան Սալլիոսի ձեռքը, որով ան կրցաւ կազմակերպել երկու հազարնոց ջոկատ մը հեծելազօրքերէ բաղկացած. իսկ հետեւակ զինուորներու թիւը արդէն հասեր էր 22.000-ի:

Սալլիոս գիտէր թէ թշնամին չէր քնացեր. ատոր համար ան գիշերը ցերեկին խառնած մարդեց իր զինուորները զիմաւորելու համար հռովմէական բանակը:

Թաղաւոր Սալլիոս իր պատրաստութիւնները տեսնելէ վերջ ուղղուեցաւ դէպի Մորկընդին, Սիկիլիոյ ծովեզերքը դանուող այն պարսպապատ բերդաքաղաքը որ շատ մը սոսկալի կռիւներու կեդրոն եղած էր Եունուսի օրերէն սկսած:

Հռովմէացի հրամանատարը որ ներլայի հրահանգներուն ենթարկուած էր, իր տասնեւհինգ հազարնոց բանակը կազմեր էր Իտալիայէն, Սիկիլիայէն եւ մեծ մասով ազատութեան խոստումներով հրապուրուող գերիներէն, ուղեց յանկարծակիի բերել Սալլիոսը: Այս վերջինը, Սալլիոս, որ պատրաստուած էր վճռական ճակատամարտի մը, յայտարարեց որ հռովմէական բանակի այն գերի զինուորները որոնք ազատագրուիլ կ'ուզեն. պէտք է ամէն միջոց գործածեն եւ անցնին սպասամբ ազատականներու կողմը:

Գերիներուն ծանօթ էր ներլայի խոստմնադրուած ու դաւաճան նկարագիրը. ատոր համար անոնք դասալիք եղան ու փախան: Սալլիոս երբ ուժեղ յարձակման գիմեց, հռովմէական բանակը արդէն կազմալուծուած էր: Սալլիոս չորս հազար իտալացիներ եւ սիկիլիացի յոյներ գերի բռնեց եւ զիմադրողներէն վեց հարիւր հոգի սպաննեց ու տիրացաւ պատերազմի աւարին, ուտելիք, զէնք, ձիեր եւայլն: Այդ ատեն իր բանակի զինուորներուն թիւը հասեր էր երեսուցու հազարի: Մորկընդինը այդ ուժին առջեւ չէր կրնար գիմանալ եւ բացաւ իր դռները:

Այժմ անցնինք կղզիին մէկ ուրիշ կողմը, ուր կը խմորուէր գերիներու ուրիշ ապստամբութիւն մը: Լիլիբայում եւ Սիկիլոտա երկու քաղաքներ էին, որոնք կը նայէին Միջերկրական Օոփուն, մէկը արեւմուտքէն, միւսը հիւսիսէն: Ասոնք Մորկընդինէն 150 մղոն հեռու էին, բայց Սալլիոսի յաղթութեան արձագանգը շուտով հասած էր այդ երկու քաղաքներու գերիներուն:

Չարմանալին այն է որ այդ հին դարերուն, ինչպէս ըսած ենք, չկար հեռագիր, չկար շոգեկառք, չկար լրագիր, չկար կանա-

նաւոր թղթատարական հաղորդակցութիւն, բայց լուրերը ի՞նչպէս կայծակի արագութեամբ կը ճամբորդէին մէկ տեղէն միւսը: Պատմարանները այս խորհրդաւոր կէտը մինչեւ այսօր պարզաբանած չեն:

Մենք ալ լուսութեամբ անցնինք այս կէտի վրայէն:

Վերեւ նշուած երկու քաղաքներու գերիները ընդհանրացած օրէնքով անասնելի պայմաններու տակ կ'աշխատէին աղնուականներու ազարակներուն մէջ, որոնցմէ մէկուն մէջ Աթենիան անունով մարդ մը կար որուն յանձնուած էր 200 գերիներու վերահսկողութիւնը: Այս մարդը սիկիլիացի կրթուած գերի մըն էր. ան թէեւ գերիներու վերակացու էր եւ պաշտօն ունէր իր ձեռքին տակ դործող շղթայակիր գերիները շարշարելու եւ նոյնիսկ սպաննելու, բայց ըլլալով յեղափոխական նկարագրով խղճամիտ մէկը, շարունակ կը մտածէր անոնց ազատութեան մասին: Եւ վերջապէս օր մը որոշեց վճռական միջոցի գիմել իր ծրագիրը իրագործելու համար: Իր դիտաւորութիւնը յայտնեց մի քանի վստահելի գերիներու, որոնց ընկերակցութեամբ գիշեր մը 200 գերիները յարձակեցան իրենց տէրերուն վրայ, (երկու կալուածատէր եղբայրներ), սպաննեցին զանոնք, նկուղներէն ազատ արձակեցին գերի բանտարկեալները եւ փողերով հուշակեցին ապստամբութիւն, իրենց դրօշին տակ համախմբելով շրջակայքի տանջուող գերիները: Մէկ շարթուայ ընթացքին աւելի քան հազար գերիներ, բոլորն ալ զինուած, հաւաքուեցան այս յանդուգն մարդուն շուրջ որ կրցաւ շուտով մարդել զանոնք վճռական ճակատամարտի համար:

Աթենիան զարմանալի մարդ մըն էր. յաղթանդամ հսկայ մը, որ իր մէջ միացուցեր էր փիղի սյոժ, առիւծի քաջասրտութիւն, ազգական հանճար եւ արծիւի սրատեսութիւն: Ան եղաւ առաջնորդ ապստամբներու բանակին, եւ որպէսզի իր հետեւորդները անքակտելի հաւատքով կապուին իրեն, ինքզինք հուշակեց որպէս մեսիա, որպէս մարդօրէք, որպէս աստուածներու պատգամախօս, որ աշխարհ եկեր էր գերետիրութիւնը արմատախիլ ընելու համար: Իր շուրջ հաւաքուողները իսկոյն զինք ընտրեցին ապստամբներու թաղաւոր: Այսպէսով Սիկիլիան ունեցաւ երկու ապստամբ թաղաւորներ:

Տեղեակ ըլլալով Եունուսի եւ Սալլիոսի մեթոտներուն, Աթենիան հհետեւեցաւ անոնց: Ինք զձեց գործունէութեան ուրիշ մեթոտ: Ան չուզեց անմիջապէս զինուոր ընդունիլ իրեն գիմող բոլոր գերիները: Անձամբ մէկ առ մէկ ստուգում կատարեց եւ ընտրեց միայն ուժեղները, անոնք որ կոյր հնազանդութեան երգում կ'ընէին իրեն, կարգապահ էին ու մահը արհամարհելու չափ անվե-



հեր: Մնացեալները գործի դրաւ թիկունքային աշխատանքներու մէջ եւ անոնց այսպէս խօսեցաւ. «Դուք այժմ աստուածներու պատէրով պիտի գործէք թէ՛ ձեզի համար եւ թէ՛ զերիներու ազատարար բանակին համար: Դուք ալ զինուոր էք, դուք կը կազմէք մեր բանակի թիկունքային ուժը: Դուք պիտի շինէք զէնքեր, դուք պիտի հայթայթէք ձեր բանակի պարէնը: Ձեզմով է որ կ'ապահովուի մեր յաղթութիւնը: Դուք պիտի գործէք ձեր պարտականութեան զիտակցութեամբ»:

Ընթերցողը թող չկարծէ թէ այս նորընտիր թագաւորը կը կրէր թագաւորական թագ եւ շքանշաններով վերարկու. անիկա հրաշէկ երկաթով խարանուած զերի մըն էր եւ հպարտ էր իր գերիի անջնջելի կնիքով ու պարզ զինուորի հագուստով:

Մէկ ամիսէն Աթենիանի բանակը ունեցաւ 10.000 ընտրեալ քաջամարտիկ զինուորներ, որոնցմով սկսաւ իր արշաւանքը: Առաջին անգամ ան ուղեց Լիլիթայոմ քաղաքը պաշարել ու զրաւել, բայց շուտով համոզուեցաւ որ անարդիւնք էին իր ջանքերը: Լիլիթայոմը բերդաքաղաք էր, զրէթէ անտոիկ մի ամրոց: Նման քաղաքներ շատ կային Սիկիլիոյ մէջ: Ինք զուր տեղը պիտի վստանէր իր ժամանակն ու ուժը, մանաւանդ որ ինք եթէ քաղաքը զրաւէր իսկ, ատով ամէն ինչ չէր վերջանար. ի վերջոյ հռովմէական բանակը հասնելուն պէս իր բանակով պիտի ենթարկուէր պաշարման: Լաւագոյն մեթոտն էր ուրեմն նախ ճակատիլ հռովմէական զօրքերուն, յարձակողականով ջախջախել դանոնք եւ այդ յաղթանակով օտքի կանդնեցնել բոլոր զերիներն ու ճնշուածները, որոնք ազդանշանի մը կը սպասէին ապստամբելու համար: Եւ Աթենիանի հեռատես ռազմավարութիւնը ճիշդ էր: Իրաւ ալ, ապստամբներու բանակին լուրը տարածուելուն պէս բերդաքաղաքներու մէջ սկսաւ ապստամբութիւն եւ անոնք առանց լուրջ զխմարութեան մէկզմէկու նետել ինկան ապստամբ բանակին ձեռքը: Աթենիան, Թրիոկալայի ճակատամարտէն յետոյ երբ պարտութեան մասնեց հռովմէացի հրամանատար Լուկուլլոսը, այլեւս ճամբան բաց գտաւ երթալ միանալու Սարլիոսի: Բայց այս հերոսը բնաւ չէր գուշակեր թէ ինչ բախտ վիճակուած էր իրեն: Երբ որպէս բարեկամ ու զինակից ներկայացաւ Սարլիոսի, այս վերջինը առանց այլեւայլի շղթայի զարկաւ եւ հրամայեց որ բանաարկին գալն: Ինք, Սիկիլիոյ թագաւորը, ուրիշ թագաւորի մը ներկայութիւնը անհանդուրժելի կը զբաւնէր. փառասիրութիւնը, նախանձը զինք կոյր էին դարձուցեր: Այսպէսով Աթենիան, երկու գերի թագաւորներու ամէնէն քաջը եւ

ամէնէն խմաստունը, շղթաներու տակ, բանտին մէջ կը սպասէր իր ազատութեան կամ մահուան վճիռին:

Հռովմ 103 թուականին (Ն.Ք.) Լուկուլլոսը լիազօր ընդհանուր հրամանատար կարգեց ու այս անգամ 25.000 մարդուած զինուորներով դարձեալ զրկեց Սիկիլիա, որպէսզի անխնայ ջարդ ու փշուր ընէ բոլոր ապստամբները: Լուկուլլոս, լեցուած վրէժխընդրութեամբ, իր բանակին հետ բերած էր կախազան պատրաստողներ ու խաչափայտեր, որպէսզի բռնուած ապստամբները կախէր կամ զամէր խաչերուն վրայ:

Սարլիոս իր լրտեսական խումբերուն միջոցով երբ իմացաւ հռովմէական հսկայ բանակին ժամանումը, մոտցաւ իր նախանձը, մոտցաւ իր անմարդկային վերաբերմունքը եւ զխմեց բանաարկեալ Աթենիանի խորհուրդին: Ազատ արձակեց գալն եւ անոր տուաւ թագաւորի խորհրդականի պաշտօն: Սարլիոս ամբացած էր Թրիոկալայի բերդաքաղաքը եւ չէր զիտեր ինչ ընել: Աթենիան խորհուրդ տուաւ անոր որ վստանաւոր էր պաշարման ենթարկուելը. պէտք է բաց դաշտին մէջ ճակատիլ թշնամիին եւ յարձակիլ:

Աթենիան 10.000 զինուոր ունէր, Սարլիոս՝ 30.000. ասոնց երկուքին միացեալ բանակը 40.000 զինուորով ճակատելու էր հռովմէական ընդէններուն: Թշնամի բանակները իրարու ճակատեցան Սիկիլիա կոչուած տեղը: Մէկ կողմը կեցեր էր յուսահատ զերիներու բանակը երկու թագաւորներով, միւս կողմը կեցեր էր հռովմէական բանակը Լուկուլլոսի հրամանատարութեան տակ. այսինքն այն մարդուն որ զիտէր թէ վստանաւոր էր իրեն համար Հռովմ վերադառնալ զերիներէն պարտուած վիճակով:

Սկսաւ ասեղ ճակատամարտը: Աթենիան իր 200 ընտրեալ հեծելազօրքերով յանդուլն յարձակում գործեց ուղղակի թշնամիին բանակի կեղրոնը, սպաննելով իր ճամբուն վրայ հանդիպող զինուորները: Իր նպատակն էր հասնիլ Լուկուլլոսի մօտ ու գալն սպաննելով խուճապի մասնել թշնամի բանակը: Յանդընութիւն մըն էր այդ զոր սեւէ մէկը պիտի չսիրէր փորձել: Ինք աստուածներու ընտրեալն էր, բայց մարդ էր վերջապէս եւ անխոցելի չէր: Աթենիան վիրաւորուեցաւ, իր ծրարիլը չկրցաւ իրագործել, իր զինուորները հազիւ կրցին զինք ազատել:

Այդ ճակատամարտին մէջ զերիներու բանակէն քսան հազար կուռղներ սպաննուեցան կամ գերի ինկան. մնացեալները նահանջելով մտան Թրիոկալա բերդաքաղաքը:

Պէտք է ըսել, սակայն, որ հռովմէացիք աւելի ծանր կորուստ ունեցան, այնպէս որ Լուկուլլոս չհամարձակեցաւ թշնամին հալա-



ծել ու պաշարել անոնց ապաստանած քաղաքը, այլ ուղեց վերա-  
կազմել իր բանակը: Եթէ Աթենիան իր անխոհեմ յարձակումը չզոր-  
ծէր ու չվիրաւորուէր, տարակոյս չկար որ հռովմէական բանակի  
այդ քայքայուած վիճակէն օգտուելով վերջնական յաղթանակը  
կրնար սպահանջել: Նոյն սխալը գործեց ինք, Լուկուլլոսը. գերի-  
ներուն բանակը առանց Աթենիանի չէր կրնար երկար դիմադրու-  
թիւն ցոյց ապա հռովմէացիներուն: Յամենայն զէպս, հռովմէացի  
գորավարը իր բանակը վերակազմելու նպատակով երբ դադրեցուց  
կռիւր, ատով ժամանակ տուաւ որ Աթենիան բուժուի: Եւ այնպէս  
ալ եղաւ: Երեք շաբաթ յետոյ երբ Լուկուլլոս իր բանակը վերա-  
կազմելով փութաց պաշարել Թրիոկալա բերդաքաղաքը, իրեն զէմ  
կանգնած էր դարձեալ Աթենիան, բոլորովին կազդուրուած եւ ատե-  
լութեամբ աւելի ուժեղացած...:

Աթենիան իր անհանդարտ խոռոնուածքին դրդումով պաշտ-  
պանողական կռիւի չէր հաւատար. միշտ յարձակիլ ու թշնամին  
սարսափեցնել. այդ էր իր ուղղամտութիւնը. ան պաշարման մէջ  
չէր ուղեր մնալ. կամ պէտք էր բնաջնջուիլ կամ յաղթել թշնամիին  
ու աղաւել Սիկիլիան հռովմի բռնակալութենէն: Ասոր համար ան  
իր գորքերով բացաւ քաղաքին դռները եւ ամէն կողմէ յարձակեցաւ  
թշնամիին վրայ: Հռովմէացիք ուժեղ դիմադրութիւն ցոյց տուին,  
ապա պաշտպանողական դիրքէն անցան յարձակողականի: Բայց  
գերիներու բանակը նահանջի չզիմեց, ընդհակառակը աւելի ուժեղ  
յարձակողականներու անցաւ: Երկու կողմերը ծանր կորուստներ  
ունեցան. վերջ ի վերջոյ հռովմէական բանակը սկսաւ քայքայուիլ:  
Յաղթանակը մնաց գերիներուն: Լուկուլլոս հաղիւ կրցաւ իր կեան-  
քը սպառել, թշնամիին թողլով անթիւ աւար, զէնք, պարէն, ամէն  
ինչ:

Աթենիան այժմ դրութեան տէրն էր. ինքն էր որ վարեր էր  
պատերազմը. ինքն էր որ տարեր էր յաղթութիւնը: Պատմարանները  
որոշապէս չեն ըսեր թէ Թրիոկալայի յաղթանակէն յետոյ երկու  
թաղաւորները ինչպէս վերաբերուեցան իրարու հետ. միայն այն  
կասկածը կը յայտնեն թէ Աթենիան դաւաճանութեամբ սպաննեց  
Սալլիստը եւ բացարձակ տէրը դարձաւ Սիկիլիոյ:

Յաջորդ տարին, այսինքն 102 (Ն.Ք) հռովմէական ուրիշ  
բանակ մը բնաջնջուեցաւ եւ յաղթական Աթենիան հռչակուեցաւ  
անպարտելի: Հռովմէացիք նոյն տարին հինգ անգամ թարմ ուժե-  
րով յարձակում գործեցին սպասամբները ամէն զնով բնաջնջելու  
համար, բայց ձախողեցան:

Այդ ատենները Մարիուս եւ Ազուլիոս հիւպատոս ընտրուած

էին հռովմի մէջ եւ ծերակոյտը որոշած էր վիթխորի բանակ մը  
զրկել Սիկիլիա միանգամ ընդ միշտ սպասամբութիւնը արժատա-  
խիլ ընելու լծաով: Ազուլիոս, Աթենիանի նման յաղթանդամ հսկայ  
մը եւ փորձառու ռազմավար մը, իր բանակով մտաւ Սիկիլիա: Հոն  
իրեն միացան Լուկուլլոսի եւ Սերվիլիոսի բանակին ցրուած մնա-  
ցորդները, որոնք պատահութեան կը սպասէին վրէժ տունլու հա-  
մար: Ահա այդ բանակին էր որ ճակատելու էր Աթենիան 101 թուին  
(Ն.Ք.):

Աթենիան, համաձայն իր խառնուածքին եւ իր որդեգրած  
անչեղ ռազմավարական մեթոտին, չուղեց պաշարուած մտալ պա-  
րըսպապատ քաղաքին մէջ, այլ բաց դաշտին վրայ դիմաւորեց թըշ-  
նամին: Սկսաւ սոսկալի ճակատամարտը: Երկու հրամանատարները  
անձկանօք դիրար կը փնտռէին եւ տաք կռիւի ընթացքին վերջապէս  
ճակատեցան իրարու: Եւ ահա վիպական մենամարտը: Աթենիան,  
թէեւ հսկայ մըն էր ուժեղ ու քաջատիրտ, բայց իր հակառակորդ  
Ազուլիոսը նոյնպէս հսկայ մըն էր, վազրի նման կատաղի, արագա-  
շարժ ու մարդուած սուսերամարտիկ մը: Զինուորները պահ մը  
դադրեցան կռուել. այդ երկու հրամանատարներն էին որ պիտի  
վճռէին պատերազմի բախտը: Եւ մենամարտը շարունակուեցաւ  
երկար: Ազուլիոս ծանր հարուածներ կրեց իր դիւսուն ու կրճքին  
վրայ. դիմացաւ, շինկաւ, բայց բախտը գերիներու թաղաւորէն  
հեռացած էր: Աթենիան ծանրապէս վիրաւորուած, արիւնաթա-  
թախ, փոռեցաւ հռովմէական գորավարի ոտքերուն առջև:

Աթենիանի գորքերը իրենց քաջարի ստաջնորդին մահուն  
վրայ կորսնցուցին իրենց բարոյական կորովը եւ 20.000 գերիներ-  
բէն շատերը սպաննուեցան, ոմանք գերի բռնուեցան ու հազիւ մի  
քանի հարիւր հոգի կրցին փախչիլ ու սպաստանիլ լեռները:

Բայց փախուստով ապաստուողներուն մէջ կար յամառ եւ ու-  
ժեղ կռուող մը, Սատիրոսը, որ Աթենիանի զնդապետներէն մէկն  
էր: Այս մարդը շուտով կազմեց 500 հոգիէ բաղկացած քաջարի  
կռուողներու խումբ մը եւ շարունակեց պարտիզանական կռիւները  
հռովմէացիներու դէմ: Ազուլիոս ամբողջ երկու տարի աշխատեցաւ  
այդ յամառ կռուողները ծուլակը ձգել, բայց չյաջողեցաւ, դիմեց  
խորամանկութեան: Իր պաշտօնավարութեան ժամանակը վաղուց  
վերջացեր էր, վերադառնալու էր Հռովմ: Վերադառնա՞լ, այո,  
բայց իր զործը կիսատ էր տակաւին. ան ուղեց փառքով մտնել Հը-  
ռովմ: Ան սպասամբներուն խոստացաւ որ եթէ անձնատուր ըլլան,  
պատուով պիտի վերաբերուէր իրենց հետ եւ իրենց պիտի տար պատ-  
ուաւոր քաղաքացիական ազատութիւն, իսկ Սատիրոսը պիտի կարգէր



Սիկիլիոյ կառավարիչի օգնական: Բայց մարդիկը անձնատուր ըլլալնուն պէս անիկա 490 հոգի խաչը հանել տուաւ եւ Սատիրոսի հետ զանոնք շղթայի տակ առած գերի տարաւ Հռովմ. բանտարկեց, ապա ազնուական կիներուն ու ժողովուրդին համար պատրաստեց հաճելի ներկայացում մը: Այդ գերիներուն պիտի տրուէր սուր կամ դաշոյն եւ անոնք պիտի կուռէին անօթի պահուած առիւծներուն ու վագրերուն դէմ:

Ինչ զուարճալի ներկայացում, արդարեւ:

Զնտաններէն գերիները բերուեցան կրկէսը իրենց շղթաներով, ապա քակեցին անոնց շղթաները, անոնց տուին դանակներ, որոնցմով անոնք պիտի կուռէին առիւծներուն ու վագրերուն դէմ:

Պահ մը տրեց խոր լուսթիւն: Ամփիթատրոնի հազարաւոր նատարանները զրաւող բազմութիւնը լարուած հետաքրքրութեամբ մէկ մարդու պէս կը շնչէր, բայց ոչ ոք զիտէր թէ այդ հանդիսականներու սիրտը ցնծութեան զգացումով կը բաբախէր թէ հասկընայի համակրութեամբ: Միայն Ալուլիոսն էր որ գերագոյն հըրճուանքով ու հպարտութեամբ կը դիտէր իր սարքած ներկայացումը: Հռովմէացիներու մէջ սարածուած էր այն լուրը որ այդ գատապարտեալները հերոսներ էին, կուռեր էին հերոսի պէս, եւ այժմ անոնք պիտի կուռէին վայրի գազաններու դէմ, գիտնալով որ այլեւս իրենց համար ազատութեան յոյս չկար:

Դատապարտեալները պահ մը սպասեցին, նայեցան իրարու, նայեցան այն երկաթեայ վանդակներուն որոնցմէ դուրս պիտի խոյնային գազանները: Նոյն առեն լսելի եղաւ Ալուլիոսի ձայնը որ կը գոչէր. «Մենք չենք ուզեր վերաւորուած տեսնել մեր առիւծներն ու վագրերը. այժմ դուք իրարու հետ պիտի մենամարտէք, վերջին մարդը որ յաղթական մնայ ան է որ պիտի վարձատրուի»:

Դիւային էր տրուած վճիռը:

Այն հերոսները որոնք ամբողջ հինգ տարի կողք կողքի կըուռեր էին, այժմ հարկադրուած էին ոխերիմ թշնամիներու պէս զիրար սպաննել: Թևրեւս իրենց ուղածն ալ այդ էր, որովհետեւ աւելի լաւ էր ընկերոջ ձեռքով մեռնիլ քան թէ գազաններու ճիրաններուն տակ բղբաուիլ ու անշնչանալ:

Եւ այդ հերոսները սկսան խոզխոզել զիրար: Անոնցմէ ոչ մէկը ազատութեան երազով չէր կուռեր, այլ մեռնիլ կ'ուզէր իր ընկերոջ դաշոյնով: Եւ անոնք ինկան մէկըմէկու ետեւէ, ինկան արեւան ճաղաղիքներու մէջ: Ամէնէն վերջը մնաց Սատիրոսը, այն հերոսը որ տակաւին դաշոյնը ձեռքին տաքի վրայ էր եւ խոժոռ աչքերով կը նայէր իր ընկերներուն դիակներուն:

Լուռ էր բազմութիւնը. ոչ մէկ ծափահարութիւն, ոչ մէկ ցնծալի բացազանչութիւն: Ինք իր ազատութիւնը պիտի գտնէր, պիտի վարձատրուէր: Ոչ, Սատիրոս այդ անպատիւ կեանքը կ'արհամարհէ, իրեն համար նախընտրելի էր ազնիւ մահը: Եւ ահա, ինկող հերոսներու վերջին ընկերը, ի մեծ զարմացումն զիտող հանդիսատէսներուն, յանկարծ ձեռքի դաշոյնը խրեց իր կրծքին եւ որպէս հաւատարիմ ուխտաւոր տնայալեցաւ արեան լճին մէջ:

Հռովմի ժողովուրդը նման երեւոյթի մը հանդիսատես եղած չէր. Հռովմ գարձաւ զգացումներու ալեկոծեալ մի ծով: Ժողովուրդի համակրութիւնը այդպիսի դաւաճանութեան զոհ գացող գերիներու կողմն էր:

Մերակուսական Լ. Ֆիւֆիոս դատ բացաւ Ալուլիոսի դէմ եւ զայն ամբաստանեց հետեւեալ յանցանքներուն համար: Առաջին՝ որ Ալուլիոս Սիկիլիոյ մէջ կաշառակերութեամբ զբաղած էր: Երկրորդ՝ որ անիկա իր պաշտօնավարութեան ժամանակը լրանալուն Հռովմ չէր վերադարձեր:

Երրորդ՝ որ ան Սատիրոսի մարդոց Հռովմի ծերակոյտի անունով պատուոյ խօսք տուած էր անձնատուր ըլլալու պարագային անոնց հետ վարուիլ մարդկայնօրէն, մինչդեռ զբժելով իր խոստումը, զանոնք ենթարկեր էր ժողովուրդին զայրոյթ պատճառող աննախընթաց ցոյցի մը:

Հռետոր Անտոնիոս դատապարտեալին պաշտպան փաստաբանը զարձաւ. դատավարութեան ընթացքին փաստաբանը տուեալներով սարդեց անոր քաջագործութիւնները եւ Սիկիլիոյ ապստամբները մաքրագործելու մեծագործութիւնը, բայց երբ տեսաւ որ իր հռետորական ճառը ոչ մէկ նպաստաւոր ներգործութիւն կ'ընէր ատենակալներուն վրայ, այն առեն խոյսցաւ Ալուլիոսի մօտ, պատուեց անոր հազուապէս եւ զայն մերկացնելով ցոյց տուաւ անոր այն սպիները զորս ան ստացեր էր Աթենիանի հետ մենամարտած առեն: Բայց հռետոր փաստաբանի ի գործ դրած բոլոր ջանքերը անօգուտ եղան, ան չկրցաւ ազատել դատապարտեալին կեանքը: Հռովմի հասարակութիւնը թշնամացեր էր անոր: Ալուլիոս յանձնուեցաւ Միթրիսատէսի որ զայն տարաւ Պերկամոս. հոն զինքը կապեց ժայռի մը եւ անոր այնքան սիրած ոսկին հալեցնելով լեցուց անոր կոկորդնի վար:

Լուկուլլոս եւ Սերվիլիոս, երկու զօրավարները որոնք պարտուած էին Աթենիանէն եւ քուած էին Սիկիլիայէն, նոյնպէս դատի ու դատաստանի ենթարկուեցան կաշառակերութեան եւ պետա-



կան անհավատարմութեան իրենց յանցանքներուն համար, եւ դասապարտուեցան տեւական արքորի:

ՍՊԱՐՏԱԿՈՒՍ

Հին դարերուն, հասարակութեան խոնարհ դասակարգին վրայ կատարուած անդթութեանց շարքին, սուսերամարտութիւնը կը գերազանցէր բոլոր միւս տեսակի անմարդկային արարքները: Այս բանը նկարագրել կ'ուզենք անցողակի կերպով, որպէսզի ընթերցողը լրիւ բմբունէ հին ժամանակներու տիրող դասակարգի անորակելի հոգեբանութիւնը, որ կապուած էր հաճոյալի ժամանց ունենալու նպատակին: Նիկոլոս Դամոսկինոս միակ պատմաբանն է որ հանգամանօրէն կը նկարագրէ այդ դարաշրջանի սարսափելի սովորութիւնը, որ ընդհանրացած էր ամենուրեք: Ան կ'ըսէ որ հարուստ մարդոց համար հասարակ բան էր հիւրեր հրաւիրել, խընձոյք սարքել եւ գինովնալէ վերջ հաճոյանալ իրենց գերիները սուսերամարտի բռնադատելով: Այդ խեղճ արարածները երբ կը սկսէին կռուիլ, իրարու կուրծք պատուել, թափուած արեան ի տես գիտող հարուստները կը ծափահարէին, կը հրճուէին մոլեգին: Երբեմն գեղեցիկ գերի կանայք, բոլորովին մերկ հարկազրարար սուբով կը կռուէին իրարու հետ, մինչեւ որ անոնցմէ մին արեան ճապաղիքներու մէջ փռուէր գետին: Յաճախ մանուկներուն ալ կը բռնադատէին նոյնը ընել. այդ անմեղ կակները սուբով կը սպաննէին զիրար, մինչ անոնց մայրերը (գերիներ բոլորն ալ) արցունքոտ աչքերով կը դիտէին իրենց սիրասուն զաւակներուն արիւնալի կռիւն ու անոնց մահը, մինչ անզին հարուստ ազնուականներն ու անոնց տիկիները կը խնդային ու կը ծափահարէին եռանդազին, առանց փոքր ինչ կարեկցութեան:

Սուսերամարտի այդ խաղերը Ֆէթիշական ծագում ունին. անոնք կապուած էին կրօնական հաւատքի հետ: Երկու կզբայրներ, Մարկոս եւ Բրուտոս 264 թուականին (Ն.Ք.) իրենց հարուստ հօր մահուան պահուն սուսերամարտի հրաւիրեցին իրենց գերիները եւ անոնց արիւնով փառաւորեցին մեռնող ազնուական իրենց հօր յուղարկաւորութիւնը:

Այդ շրջանին, կրօնաւորներն էին սուսերամարտի կազմակերպիչ — արարողապետները, որոնք այդ ձեւով աստուածներուն զոհ կը մատուցանէին. եւ գերիները ըլլալու էին այդ զոհերը:

Երբ Վալերիոս Լալիոսս մեռաւ 200 թուին (Ն.Ք.) իր որդիները բռնադատեցին որ 50 գերիներ սուսերամարտով զիրար

սպաննեն եւ իրենց արիւնով շահին իրենց հօր գերեզմանին հողը: Յիւստինոս իր հօր մահուանէն 25 տարի վերջ 74 սուսերամարտիկներ վարձեց, որպէսզի անոնց արիւնովը թարմանայ իր հօր յիշատակը: Տրալանոս կայսրը մի անդամ հրաման ըրաւ որ 123 օրեր անընդհատ սուսերամարտի բազոսատօներ շարունակուին ժողովուրդը հաճոյացնելու համար եւ այդ օրերուն 10.000 գերի սուսերամարտիկներ բռնութեան տակ զիրար խողխողեցին ու մեռան, այդ ատենուան վատասերած հասարակութեան հաճոյքին համար: Ո՞վ կրնար բողոքել, ո՞վ կրնար գթասրտութեան անունով խօսիլ. . . :

Սուսերամարտի խաղերը ընդհանրացած էին ոչ միայն իտալական բոլոր մեծ քաղաքներուն մէջ, այլեւ Աղեքսանդրիոյ մէջ, նոյնիսկ Կոլի եւ Գերմանիոյ մէջ: Բայց պէտք է մտնալ որ Հռոմը ամէնէն հռչակաւորն էր այդ բոլոր քաղաքներու շարքին, որովհետեւ Հռոմը, տէրն ու տիրականը այդ ատենուան ծանօթ աշխարհին, ժողովուրդը կ'ապրեցնէր պատերազմով, կողոպուտով եւ հասարակութիւնը կը զուարճացնէր զանազան խաղերով, ի մասնաւորի սուսերամարտի խաղով: Կալիուլա կայսրը ամփիթատրոններու համար պահուած վայրի դազաններ կը կերակրէր մարդկային միտով եւ կը խնայէր կովերը, եղներն ու ոչխարները:

Պատմական արձանագրութիւն կազմուիլ սկսած թուականէն աւազակութիւնը, յելուզակութիւնը շատ մը երկիրներու մէջ դարձեր էին հասարակական երեւոյթ, ծնած մրցակցական դրութեանէն: Յունաստան սկսաւ յելուզակութիւնը: Հռոմ կատարելագործեց եւ ընդհանրացուց: Յելուզակային արշաւանքներու ընթացքին գերիներն էին որ ամէնէն աւելի կ'ենթարկուէին բազմատեսակ շարժարանքի: Անոնք ոչ ընկերային, ոչ ալ քաղաքական ապահովութիւն ունէին, բայց ունէին իրենց տէրերէն աւելի մտածող սուբ միտք, Ֆիզիքական ուժ եւ աշխուժութիւն, որոնց համար տէրերը զանոնք կը գործածէին իրենց հաշտոյն: Այդ իսկ պատճառով բնաւ զարմանալի է որ անոնք պատահութիւն գտածնուն պէս կը փախչէին լեռները ու ասպատակային խումբեր կազմած կը կռուէին հասարակաց թշնամիին դէմ: Ասոնց գործերուն պատմութիւնը պատմադիրները պատճառական վերլուծութեամբ չեն արձանագրած, այլ հարեւանցի կերպով գերիները ներկայացուցեր են որպէս աւազակներ, որոնց գործն էր փճացնել երկրի անտեսութիւնը եւ կործանել անփականութեան նուիրականացած օրէնքները: Եւ այդ շատ հասկնալի է: Պատմաբանները առհասարակ դուրս եկած են ազնուական կամ կրօնական դասակարգի ծոցէն եւ անոնք հերոսները վեր են առեր մի միայն այդ դասակարգի տներէն. աշխատաւոր, գերի դասակարգը հերոս



չէր կրնար արտագրել. անոնցմէ մին հերոս ներկայացնելը անոր-  
 դանք էր ազնուական դասակարգին համար: Այդ շրջանին, զինուոր-  
 ներն ալ կը պատկանէին ազնուական դասակարգին ճիշդ նոյն մաս-  
 նութեամբ. զերին զինուոր չէր կրնար ըլլալ: Այսպէս, ուրեմն,  
 մենք կը տեսնենք թէ պատմարանները ազնուական արիւնէ սերած  
 էին, մինչ ճարտարագետները, բանաստեղծներն ու ուսուցիչները  
 սերած էին զերիններէ:

Հին ժամանակներու աշխատաւոր դասակարգին ամէնէն նշա-  
 նակելի մարդը որ ապաստամբեցաւ ստրկատիրութեան դէմ, մարդ մը  
 որ Աննիբալի նման սարսափի մատնեց հռոմէացիները, մարդ մը  
 որ պատմութեան մէջ որպէս յուշարձան մնաց մինչեւ վերջ, ահա  
 այդ մարդն է որ պիտի ներկայացնենք այժմ, Սպարտակուսը:

Պատմարանները անոր անունը նախատինքով յիշատակած են  
 որպէս աւագակ, բայց չեն ուզած արձանագրել անոր հերոսական  
 յաղթութիւններն ու աննկարագրելի մեծազորութիւնները: Անոնց  
 այդ գիտումնաւոր անտեսումը, սակայն, մութին մէջ չէ կրցնի պա-  
 հել այդ աննման հերոսին գործերը, որոնց ցան ու յրիւ յիշատակու-  
 թիւնը բերնէ բերան անցած է յաջորդող սերունդներուն եւ զերա-  
 գոյն հիացումով լեցուցեր է արդարութեան եւ ազատութեան սիրա-  
 հարներու սիրտը:

Սպարտակուս պարզ գործաւոր զերի մըն էր: Հարուստ, ա-  
 ոսնձանշնորհեալ զերդաստանէ մը ժառանգած ուրիշ պատուանուն  
 մը չունէր, պարզապէս Սպարտակուս կը կոչուէր եւ Սպարտակուս  
 անունով ալ հերոսաբար մեռաւ իր հոգիովը ատած թշնամիին ձեռ-  
 քով:

Ուրիշ նշանաւոր մարդոց պէս, ատանց շքանշանի, ատանց  
 բարձր պաշտօնի, Սպարտակուս իր հանձարի ուժով անմահացուց  
 իր անունը: Ան հրապարակ իջաւ իր ընկեր զերիններու ծոցէն 74  
 թուին (Ն.Ք.): Եւ այդ այն ատենն էր, երբ Հռոմի ծերակոյտը ա-  
 պօրէն հռչակեր էր բանուորական կազմակերպութիւնները: Հռոմի  
 ազնուականութիւնը տեսեր էր բանուորական կազմակերպութեանց  
 կողմէ ստեղծուած վտանգը, զոր կանխելու համար միակ միջոցն  
 էր անոնց փճացումը: Տասներկու տարիներու օրէնքները մե-  
 ռած տատեր մնացեր էին: Լիւիներն օրէնքը անտեսուած էր բոլո-  
 րովին, ազնուականները զբաւած էին զիւղացիներու հոգերը եւ գա-  
 նոնք զարձուցեր էին զերիններ. ոչ մէկ շնորհ պահուած էր անոնց:

Ռոմիկներուն եւ գործաւոր դասակարգին ամէնէն սխերիմ  
 թշնամին Կիկերոնն էր: Իշխող դասակարգին մէջ թէեւ բարեսիրտ  
 ու լաւ մտածող մարդիկ կային, որոնք կը տեսնէին թէ երկիրը կ'եր-

թար զէպի կործանման անդունդը, բայց անոնք ալ կամ տեսորի  
 կ'ենթարկուէին, կամ արքայի(\*): Պարզ էր, ուրեմն, որ քաջարի  
 առաջնորդ մը երբ պարզէր յեղափոխութեան դրօշակը, երկրի դժ-  
 դոհ տարրերը պիտի բոլորուէին անոր շուրջ: Եւ Սպարտակուս այդ  
 ժամանակի լաւագոյն յեղափոխական առաջնորդը դարձաւ:

Շատ քիչ բան զիտենք Սպարտակուսի ծննդավայրի մէջ ան-  
 ցուցած մանկական շրջանի կեանքի մասին: Միայն աւանդութիւնը  
 կ'ըսէ որ Սպարտակուս իր 15 տարեկան հասակին ողբալի վիճակով  
 կորսնցուցած է իր հայրը որ զերի մըն էր: Անոր տէրը զայն կապած  
 է ծառի մը բունին եւ խորագանի հարուածներով ձգեր է մա-  
 համերձ զբութեան մէջ: Երբ մօտեցեր է ինք իր հօրը, հայրը ըսած  
 է իրեն. «Չաւակս, երբ դուն շորս տարու էիր, մայրդ ալ գանակո-  
 ծումով մեռցուցին: Այժմ կը տեսնես զիս: Ես կը մեռնիմ, բայց  
 դուն պիտի յիշես մեզ նման զերիններու տանջալի կեանքը»: Սպար-  
 տակուս կը զրկէ իր հօրը զլուխը այն ատեն երբ նա կ'աւանդէր իր  
 վերջին շունչը եւ հոն երգում կ'ընէ ըլլալ վրէժխնդրի Աննիբալի  
 նման: Եւ Սպարտակուս մինչեւ իր եղերական մահը պահեց իր եր-  
 դումը:

Սպարտակուս 74 թուականին (Ն.Ք.) արդէն հսկայ մը եղած  
 էր. զեղեցկադէմ, ճերմակ մորթով, սեւ ու դանդուր մազերով, հը-

(\*) Ինչքան տարօրինակ նմանութիւն կայ, արդարեւ, այս-  
 օրուան ամերիկեան իմպերիալիզմին եւ հին դարու հռոմէական  
 կայսրութեան միջեւ: Հռոմէական կայսրութիւնը անհաշտ ատե-  
 լութեամբ լեցուած էր բանուորական կազմակերպութեանց դէմ.  
 ամերիկեան իմպերիալիզմը իր աշխարհաբանող գէնէրով նոյն ան-  
 հաշտ ատելութեամբ լեցուած է կոմունիստներուն դէմ: Մէկ կողմէ  
 ան և՛ Միութեան հետ յանուն խաղաղութեան շրթունքային բարեկա-  
 մութիւն կ'ուզէ պահել զայն ժող. Չինաստանէն բաժնելու համար,  
 միւս կողմէ իր ուրբաձիգ օդանաւերն ու գրամամ գորգերը կը տրա-  
 մադրէ Հարաւ. Վիետնամին, Հիւսիսային Վիետնամի կոմունիս-  
 տական կառավարութիւնը տապալելու համար: Հարիւրներ, հա-  
 գարներ կը կոտորուին, բայց որո՞ւ հոգ: Ամերիկեան իմպերիալիզ-  
 մը իր ներաններուն մէջ առնել կ'ուզէ ամբողջ աշխարհը: Այդ իմ-  
 պերիալիզմի ներկայացուցիչն է ամերիկեան զինուորական խոր-  
 հուրը: Ճան Քեմետի, Մ. Նախանգաց տարաբախտ նախագահը, երբ  
 փորձեց մի քիչ սանձել այդ զինուորականութեան գերիշխող կա-  
 մայականութիւնը, ենքարկուեցաւ տեսորի: Նոյն նակատագիրը  
 վիճակուած է ամէն անոնց որոնք կը հետեւին Քեմետի:



բարաբարից բայց հրամայող կերպարանքով հսկայ մը: Հովիւ էր ան նախապէս իր հայրենի երկրի, Թրակիոյ դաշտապետիններուն վըրայ: Հռովմէացւոց արշաւանքի ատեն դերի կը բռնուի ու կը բերուի Կապուա, Նարոլիէն քսան մղոն հիւսիս, Իտալիոյ մեծ քաղաքներէն մին: Նոր տէրը որ նախկին տիրոջ նման անդուծ չէր, այլ ազնուասիրտ մէկը որուն անունն էր Լենտիլոս Պատիաստոս, զինք կը դնէ սուսերամարտիկներու զպրոցը, ուր երիտասարդ Սպարտակուս իր ուժով ու արագաշարժութեամբ հիացում կը պատճառէ բոլորին: Տեղի կ'ունենան հանդիսաւոր փորձեր եւ Սպարտակուս ամէն մէկ փորձի մէջ յաղթական դուրս կուգայ: Նոյնիսկ պարտութեան կը մատնէ ամէնէն փորձադէտ սուսերամարտիկները: Իբ տէրը, չափազանց համակրելով անոր զայն կը դնէ զինուորական զպրոց, ուր Սպարտակուս զինուորական մասնազիւսութեան կը միացնէ իր քնածին հանձարը: Այդ բոլոր շնորհները, իրեն ընծայուած այդ բոլոր պատեհութիւնները, սակայն, չկրցան մեռցնել անոր վրէժխնդրութեան ուղին: Ինք կը յիշէր իր հայրն ու մայրը, գիտէր թէ ինչպիսի շարշարանքով մեռած էին անոնք, ուստի կը մտածէր թէ իր ամբողջ ուժը, ամբողջ հմտութիւնն ու փորձառութիւնը ի սպաս դնելու էր իր պատկանած դասակարգի թշնամիները փճացնելու համար:

Այդ ատենները Կապուայի մէջ կազմակերպութիւն մը կար, որ կը գրադէր բարձրորակ անուշահոտ իւղերու առևտուրով: Այդ կազմակերպութեան անդամները կաղմեր էին արհեստակցական միութիւն եւ անոնցմէ իւրաքանչիւրը իրեն համար ապահոված էր բարեկեցիկ կեանք մը: Այդ կազմակերպութեան առևտրական դործառնութիւնը բացառապէս կապուած ըլլալով հարուստ, ազնուական դասակարգի հետ, Իտալիոյ մէջ այնքան ընդարձակուած էր որ կազմակերպութիւնը ստիպուած էր բազմաթիւ անդամներ լծել գործի: Կազմակերպութեան անդամներուն թիւը հասեր էր երկու հազարի:

Հռովմի ծերակոյտը, որ բանուորական, արհեստակցական միութիւնները բնաջնջելու ծրագիր ունէր, ուշադրութիւն դարձուց անուշահոտ իւղերու առևտուր ընող այս կազմակերպութեան, որու ոչնչացումով երկու հազար հողի գրկուեցան իրենց ապրուստի միջոցներէն, եւ անոնք կեանքի հարկադրանքին տակ դիմեցին ապրտամբուութեան: Կառավարութիւնը երբ ապստամբութիւնը խեղդելու ձեռնարկեց, Սպարտակուս մտածեց որ պատեհութիւնը ներկայացեր էր նետուիլ հրապարակ:

Կապուայի մէջ թրակիացի, կոլցի եւ հռովմէացի 200 սու-

սերամարտիկներ կային: Սպարտակուս անոնց հետ ծրագրեց խոհանոցի դանակներով զինուիլ ու գրաւել քաղաքը: Մասնիչ մը դաւադրութիւնը երեսան հանեց եւ մինչ զինուորները ձերբակալութեանց սկսան, Սպարտակուս իրեն հաւատարիմ 78 ընկերներով յարձակեցաւ զինուորներուն վրայ, սպաննեց անոնցմէ մի քանին ու բանալով քաղաքին դռները, հեռացան քաղաքէն: Չինուորները միացեալ ուժերով սկսան հալածել զանոնք: Ապստամբներու ծրագիրն էր քաջի պէս կռուիլ, ոչ թէ նապաստակի պէս փախչիլ ու պահուրախիլ: Տեղի ունեցաւ առաջին ճակատամարտը Կապուայէն երկու մղոն հեռու: Եօթանասունեւութը սուսերամարտիկներ ճակատեր էին 250 զինուորներու: Ասոնց հրամանատարը, սակայն, արհամարհելով փախստական ապստամբներու փոքրաթիւ խումբը, անխոհեմ փորձ մը ըրաւ խոյանալով ուղղակի Սպարտակուսի վըրայ: Սպարտակուսի ուզածն ալ այդ էր: Կատաղի ու արագաշարժ վազրի նման նետուեցաւ իր հակառակորդին վրայ եւ առանց թողելու որ ան իր սուրը շարժէր, իրեց իր ձեռքի զանակը անոր կրծքին քին եւ զայն փռեց դեպին: Չինուորները փորձեցին կռուիլ, բայց ստակուծը պաշարած էր զիրենք, անոնք նեղը մնացած զիմեցին փախուստի, իրենց ետև թողնելով քսան դիակներ: Սպարտակուս իր մարդոց հետ բռնեց Ապիոսեան խճուղին, որ Պրինտիզին կը կապէր Հռովմի հետ: Փախստականները ճամբան հանդիպեցան զինուորներով պաշտպանուած կառաշարքի մը: Կռուքերուն բեռցուած էին մեծ քանակութեամբ զէնքեր, զաշոյններ, սուրեր, նիզակներ եւ ուտելիք: Չինուորները կառապաններուն հետ միասին անյաջող կռիւէ մը վերջ թողուցին ամէն ինչ ապստամբներուն ու փախան: Սպարտակուս իր մարդիկը ստից գլուխ զինելով հասաւ Վեսուվի հիւսիս-արեւելեան ստորտը եւ բարձրանալով սարի մը ծայրը իր մարդոց հետ ապաստանեցաւ պառեխներու մէջ, որոնք շրջապատուած էին վայրի որթատունկերով: Ինք գիտէր որ կը հալածուէր եւ մէկ օրէն միւսը պաշարման շլթայի մը մէջ պիտի բռնուէր. գիտէր նաեւ որ առանց սանջուող ժողովուրդի օժանդակութեան, առանց դաշնակիցի, յաղթանակի ու յաջողութեան յոյս չկար: Ուրեմն, ի՞նչ էր իր ծրագիրը: Սպարտակուս գերի եղած էր, ուսումնասիրած էր ժողովուրդի ստորին խաւերու հոգեբանութիւնը, անոնց ուռճացած առելութիւնն ու անհամբերութիւնը: Եթէ ինք կարողանար պարտիզանական կռիւներով մի քանի յաղթանակներ ապահովել, ապստամբութեան արամադիր տարրերը որոնք առաջնորդի մը կը սպասէին, պիտի հաւաքուէին իր շուրջը եւ ինք մասսաներու ուժով պիտի կրնար տանիլ վերջնական յաղթութիւնը: Եւ Սպարտա-



կուս այդ ինքնալստահութիւնը ունէր որ ինք փնտռուած առաջնորդն էր:

Այժմ անդրադառնանք Սպարտակուսի եւ իր մարդոց ապաստարանին, անոնց դրութեան եւ ապա յաջորդող իրադարձութեանց:

Իր ապաստանած վայրը մէկ կողմէն ադահով էր, միւս կողմէ՝ վտանդաւոր: Ապահով էր, որովհետեւ անոր երեք կողմերը անառիկ պարսպանման ժայռերով շրջապատուած էին եւ միայն մէկ կաճան կար վեր ելլելու. թշնամին խմբային յարձակում չէր կրնար դորձել, եւ ասիկա բացարձակապէս անկարելի էր. վտանդաւոր էր որովհետեւ եթէ թշնամին զերենք պաշարէր, իրենք երկար ատեն պաշարման չէին կրնար դիմանալ: Փախստականները պատերազմական խորհուրդ դումարեցին եւ Սպարտակուսը ընտրեցին որպէս հրամանատար, իսկ Կրիքոսն ու Էնոմոսը, որպէս անոր տեղակալները: Սպարտակուս այնուհետեւ պատրաստեց իր ծրագիրը, որուն առաջին քայլի գործադրութիւնը հին ու նոր պատերազմական զէպքերու պատմութեան մէջ ամէնէն փայլուն ու հրաքանչ մէկ էջը կը գրուէ:

Կապուայի ժողովուրդը սարսափի մատնուած էր, երբ լուր տարածուեցաւ որ սուսերամարտիկները զինուորներուն յաղթեր ու ազատուեր էին: Միւս կողմէ հռովմէացիները նուսաստացած կը զգային ինքզինքնին, որովհետեւ իրենց դէմ կեցողները ազնուական դասուն չէին պատկաներ, զերիներ էին եւ այդ զերիները Հռովմի պատիւը ռոնակոխելով հեռացեր էին քաղաքէն ու ապաստաններ էին բոլորին ծանօթ անաստէլի վայրը: Այդ ցնցող լուրը Հռովմ հասնելուն պէս ծերակոյտը Կլոտիոս Բլեպէրը զրկեց ապստամբները տեղն ու տեղը չբացնելու համար: Հռովմէացի հրամանատարը երեք հազար զինուորներով շուտով հասաւ եւ պաշարեց Սպարտակուսի ապաստանարանը եւ փակեց այն միակ անցքը ուրկէ միայն կրնար ան փախչիլ:

Սպարտակուս նեղ կացութեան մէջ էր. ի՞նչ ընելու էր: Այստեղ իրեն օգնութեան հասաւ իր հանճարեղ հնարադիտութիւնը: Որթատունկի ճիւղերով հիւսուած երկու հատ երկար սանդուխ պատրաստել տուաւ ու գիշեր ատեն անշուղի ու աննկատելի կերպով փախստականները իրենց զէնքերով անցքի ետեւի կողմէն ժայռէն վար իջան: Հռովմէացի զինուորները, անտեղեակ այդ իրադարձութենէն հանգիստ կը քնանային պահակներու հսկողութեան տակ: Սպարտակուս բանակի կռնակէն յարձակման հրաման տուաւ: Սուսերամարտիկները անհաւատալի արագութեամբ եւ շուարեցնող գոռում-գոչումով յարձակում գործեցին: Հռովմէացի զինուորները

յանկարծակիի եկած ժամանակ չունեցան դիմելու իրենց զէնքերուն. խառնաշփոթութեան յաջորդեց խուճապային փախուստը: Այդ կռիւին մէջ հռովմէացիները 85 հողի կորսնցուցին: Սպարտակուս զրաւեց փախչող զինուորներու զէնքերն ու պարէնը: Անոր այս երկրորդ յաղթանակէն Հռովմ կատղեցաւ. դա ի՞նչ կը նշանակէր. խումբ մը զերիներ երեք հազարնոց հռովմէական բանակը փախուստի էին մասներ: Հռովմ ալբալիսի մի անարզանք չէր կրնար մարսել: Եւ ահա անմիջապէս որոշուեցաւ վիթխարի մի ուժ զրկել ապրստամբներուն դէմ անոնց բոյները փոշխացնելու հրամանով:

Այս անգամ հռովմէական բանակը յանձնուեցաւ Վարինիոսի, իսկ անոր տեղակալներ նշանակուեցան մին Փարիոս, միւսը՝ Կոսինիոս: Վարինիոս մեծ հաւատք ունէր այս վերջոյն վրայ:

Սպարտակուս, որուն համբաւը արդէն տարածուած էր ամէն կողմ, յայտարարեց որ ինք որոշեր էր ասպայել Հռովմի բռնանակալութիւնը եւ վստահ էր թէ պիտի կրնար եթէ բոլոր ճնշուածները հաւաքուին իր դրօշակին տակ: Եւ Սպարտակուսի կոչը արձագանգեց ամենուրեք: Զանազան տեղերէ իր շուրջը հաւաքուեցան հովիւներ, ընչազուրկ զիւլացիներ, զերիներ եւ ազատազրուած զերիներ, բոլորն ալ ճնշուած ու դժգոհ տարբեր:

Սուսերամարտիկներու այդ 78 հողինոց խումբը շուտով եղաւ սասը հազար կռուողներու մի բանակ. եւ այդ բնաւ զարմանալի չէր, որովհետեւ հռովմէական բռնակալութեան ներքեւ ստոսպող յուսահատ մարդիկ, երբ ոեւէ անկիւնէ ազատութեան ազօտ նշոյլ մը տեսնէին, կը վազէին հոն:

Սպարտակուսի համար միակ դժուարութիւնը հաւաքուած կռուողները զինելն ու զանոնք մարդելն էր: Իր զրաւած զէնքերը ցրուեց ուժակարող մարդոց: Շատեր իրենց հետ բերած էին դանակներ ու զերանդիներ: Արհամարհելի զէնքեր չէին անոնք. բաւական էր որ վրէժխնդիր կռուողներ էին անոնց աէրերը: Երկու շաբաթ անընդհատ Սպարտակուս զինուորական մարզանք տուաւ անոնց օւ վերջապէս համոզուեցաւ որ իր բանակը յաղթանակի ուղիով կրնար ճակատիլ հռովմէացիներուն:

Հռովմէական զորքերու հրամանատարը, Վարինիոս նոյն տարին, այսինքն 74 թուին (ն.Ք.) իր հսկայ բանակով երբ ապրստամբները բնաջնջելու ելած էր, հետեւեցաւ սխալ ուղիով արութեան: Ան փոխանակ իր ամբողջ ուժով հալածելու ապստամբները, միայն երկու հազար հողինոց մի ջոկատ զրկեց Փարիոսի հետ «հասարակ աւազակ»ին դէմ, իսկ ինք, վստահ ու անհող, սպասողական գիրք բռնեց:



Սպարտակոս իմանալով որ հռովմէական բանակը բաժնուած էր մի քանի թեւերու, որոշեց նախ յարձակիլ տկար կողմին վրայ չթողելով որ անոնք ամէն կողմէ պաշարեն զինք: Իր ծրագիրը յաջողեցաւ, Ֆարիտոսի բանակը ամբողջապէս բնաջինջ եղաւ: Անդին կը մնար ուրիշ մեծ ուժ մը Կոսինիտոսի հրամանատարութեան տակ: Սպարտակոս հռովմէական զէնքերով զինեց իր բանակին այն մասը որ զինուած էր հասարակ դանակներով ու գերանդիններով եւ կայծակի արագութեամբ յարձակեցաւ Կոսինիտոսի վրայ, որուն բանակը կատարուած կատաղի յարձակման չկրցաւ զիմանալ: Կոսինիտոս ուղեց փախչիլ, բայց բռնուելով իսկոյն սպաննուեցաւ:

Այս մեծ յաղթութեան լուրը շուտով տարածուեցաւ իտալական քաղաքներուն մէջ: Գերիները ամէն կողմերէ կը փութային հաւաքուիլ այդ անձնան ազատարարին շուրջ, անոր տրամադրելով իրենց անձնուէր ծառայութիւնը: Սպարտակոս նոր գրաւած զէնքերը բաժնեց անոնց եւ եռանդազին լծուեցաւ զինուորական մարզանքի աշխատանքին: Զարմանալին այն էր որ այդ գերիները երբեք դժուարութիւն ցոյց չէին տար մարզանքի տանն. այնպէս կը թուէր թէ անոնք որոշ չափով վարժ էին արդէն, այնքան շուտով կը կրկնէին հրամայուած շարժումները պահելով անթերի կարգապահութիւնը:

Սպարտակոս այնուհետեւ յարձակեցաւ ուղղակի Վարինիոսի վրայ, որուն երկու թեւերը, Ֆարիտոսն ու Կոսինիտոսը ջախջախուած էին արդէն: Հռովմէական հրամանատարը իր բանակի պահեստի ուժերով զիմազրութեան փորձ մը ըրաւ, բայց կորսնցուց ամէն բան ու ինքն ալ անյայտացաւ:

Պղուտարքոս կ'ըսէ որ այդ տանն Սպարտակոսի բանակի զինուորներուն թիւը հասեր էր մինչեւ եօթանասուն հազարի:

Սպարտակոս իր այդ հսկայ բանակով արշաւեց Քամպանիոյ երկրամասը, զբաւեց Նոլա, Նիկերիա եւ Կորա քաղաքները, յետոյ անցաւ Սամիան սահմանէն ներս, գրաւեց Հիրպլինիոսի գաւառը: Կտրելով Ապիտան խճուղին, իր բանակով ուղղուեցաւ դէպի հարաւ, Լուկանիայի թերակղզիի հարուստ գաւառավայրը: Այնտեղ ուղեց անցնել ձմեռը 74-73 թուականին (Ն.Ք.): Այնքան արշաւանքներէ վերջ հարկաւոր էր մի քիչ շունչ առնել, հանգստանալ:

Բայց Սպարտակոս գիտէր որ սխալ պիտի ըլլար հետեւիլ Աննիբալի օրինակին: Աննիբալ հարիւր քառասուն տարի առաջ իր կարկեղոնացի քաջերով ձմեռը անցուցեր էր հոն եւ թոյլ տուեր էր որ զուարճութեան ու հանդիստի մէջ մեղիանար անոնց բարոյական կորովը: Ոչ, ինք այդ ընելու չէր: Սպարտակոս ամբողջ ձմեռը

թոյլ չտուաւ որ իր զինուորները զուարճանան. անոնց անդադար զինուորական մարզանք ընել տուաւ: Անոնց արդիւլած էր ողելից ըմպելի գործածել եւ շատ ուտելով յղիանալ, արդիւլած էր սեւէ տեսակի կողոպուտ, արդիւլած էր զպչիլ սոկիի կամ արծաթի, Զինուորը զինուոր մնալու էր, եմագանդ, կարգապահ, չարժաշ եւ միշտ պատրաստ կռուելու եւ զոհուելու:

Տակիտոս կը պատմէ որ Սպարտակոս ամուսնացած էր եւ իր կինը անբաժան էր իրմէ: Վարինիա (այս է կնոջ անունը) համաձայն Տակիտոսի, հաւատարմութեան, քաջութեան եւ հերոսութեան մարմնացումն էր, Սպարտակոսի հողին, որուն նմանը պատմութիւնը մինչեւ այդ թուականը չէր արձանագրած:

Սպարտակոս իր զինուորներուն մէջ ունէր շատ մը վարպետ արհեստաւորներ, որոնք պատկանած էին արհեստակցական միութեանց: Անոնց մէջ կային զինագործներ, մետաղագործներ, կոշկակարներ, հացագործներ: Այդ վարպետներուն իւրաքանչիւրին համար համապատասխան գործ ստեղծեց: Անոնք զինուորական մարզանքէն յետոյ պարապելու էին իրենց գործով: Ասոնց հետ կային նաեւ հարկահաւաքներ, որոնք իրենց գործը կորսնցուցած դարձեր էին գերի, ապա ապստամբ: Սպարտակոս այդ հարկահաւաքները վճարովի գործի դրաւ. անոնք իր գրաւած քաղաքներու հարուստներէն կը հաւաքէին տուրք եւ պարէն բանակին համար:

Սպարտակոս, իտալիոյ մեծ մասին տիրացած, հաստատուր էր իր ուղած արդարասէր կառավարութիւնը: Մասնաւոր հրովարտակով յայտարարեց որ իր տիրապետութեան սահմաններու մէջ ազնուականները վճարովի գործաւորներ կրնան ունենալ, բայց անոնք որպէս գերի պիտի չնկատուին: Այն գործաւորական ու արհեստակցական միութիւնները որոնք բռնութեան տակ գաղանի կազմակերպութեան փոխուած կամ չքացեր էին, այժմ ազատ են: Եթէ մենք ուրիշ աղբիւրներ չունենայինք այս իրողութիւնը հաստատող, Կիկերոնի նման գործաւորութեան մէկ թշնամիին վկայութիւնը կը բաւէ: Կիկերոն կ'ըսէ. «Ոչ միայն այս հին աշխատաւորական միութիւնները շնորհիւ ապստամբ սուսերամարտի մը լիովին վերստացան իրենց կազմակերպչական իրաւունքները, այլեւ գերիներու անգամակցութեամբ բազմացան նորերը»:

Բարձրագոյն իտէալի մը նուիրուած մէկը որ ուրացեր է իր ետը, որ պատրաստ է զոհուիլ այդ իտէալին համար, արկածախնդիր ու յանդուգն հերոս մը ինք, նետուած անհաւասար ու ահեղ կռիւի մէջ, երբ դիտէ թէ դժութեան ու սիրոյ զղացումներէն զուրկ իր թշնամին ոչ մէկ միջոցի ստջեւ կանգ կ'առնէ զինք պարտելու եւ իտ-



չելու համար, այլևս ինք ալ վերաբերուելու է նոյն ձեւով իր թշնամիին եւ անոր զինակիցներուն հանդէպ: Սպարաակուս, սակայն, այդպիսի մէկը չէր. ան խստիւ պատուիրած էր իր բոլոր զինուորներուն մարդկայնօրէն վարուիլ պատերազմական գերիի մը հետ: Թշնամի բանակի զինուոր մը երբ անձնատուր կ'ըլլայ, անոր անձը այլևս անձեռնմխելի է, որքան ատեն որ ան կը մնայ համակերպողի զիրքին մէջ: Այդ էր անոր հրամանը, որ կապուած էր իր ասպետական մարդու սկզբունքին հետ:

Սոյն հակիրճ նկարագրականէն յետոյ անցնինք մեր պատմութեան:

Փառաւոր յաղթանակներէն վերջ Սպարաակուսի բանակը այժմ ունէր 120-000 կռուողներ, որոնք զինուած էին հռովմէական դէնքերով եւ պատրաստ էին ճակատիլ Հռովմի լեզններուն: Այդ հակայ բանակով Սպարաակուս սկսաւ որոճալ յանդուլն ծրարելը մը, յարձակիլ Հռովմի վրայ:

Բայց մեծ դժբախտութեան մը նախանշանները սկսան ծայր տալ, երբ Կրիքոս, Սպարաակուսի մէկ տեղակալը որ Կոլի բաժանմունքի հրամանատարն էր, սկսաւ ցոյց տալ նախանձի նշաններ: Այս, նախանձը, ամէնէն վտանգաւոր ու թունաւոր իժը որ կը սողոսի մարդու սրտէն ներս եւ սիրոյ զեփիւտը կը փոխէ աւերիչ փոթորիկի: Ան այդ իժն էր որ մտեր էր Կրիքոսի սրտին մէջ:

Գէշը այն էր որ Սպարաակուս, այս անձնուէր հերոսը, ժամանակ չունէր կարգալու իր զինակիցներու հողին:

Եթէ այդ իժը չըլլար, գուցէ Հռովմի պատմութիւնը տարբեր իրազարձութեանց նկարագրութիւններով պիտի պատկերացուէր:

Եկաւ դարունը: Սպարաակուս թէեւ իր դէմ ցցուն հակառակութիւն մը տեսած չէր իր զինակիցներուն կողմէ, բայց ցուրտ նախզպացում մը կ'ըսէր իրեն որ մօտալուտ էր իր յաջողութեանց վերջակէտը: Զմեռ ատեն իր երկու տեղակալներուն, Կրիքոսի եւ Էմմանոսի միջեւ պայթող կռիւր որուն զրդիչը նախանձն էր, սպազայի գործունէութեան ճամբուն վրայ յաջողութիւն չէր խոտանար:

Սպարաակուս իմացած էր որ հռովմէական երեք բանակներ ճամբայ ելած էին եւ անոնց նպատակն էր ամէն գնով բնաջնջել իր ուժերը: Ասոր վրայ ան փոխեց իր ծրագիրն ու ճամբան. ու փոխանակ պատրաստուելու ճակատելու թշնամիին, Ադրիականի ծովեզերքը քերեց եւ ուղղուեցաւ դէպի հիւսիս, ուղեւով անցնել Ալպեանները եւ հոն ցրուել բանակը. այն ատեն կոլցիները պիտի եր-

թային իրենց տուները եւ թրակիացիները պիտի ուղղուէին դէպի աջ ու երթային թրակիա: Կրիքոս Սպարաակուսի ծրագրին հակառակ էր. հակառակ էր նաեւ Էմմանոսի հետ միասնական ճակատով կռուելու հրամայական պահանջին: Ան կ'ուզէր Սպարաակուսի տեղը անցնել եւ իր բացարձակ հրամանատարութեան տակ առնել ամբողջ բանակը: Սպարաակուս կռահէր էր որ գործին վերջաբութիւնը խիստ աղիտարեք պիտի ըլլար, ատոր համար մասսայական բնաջնջումը խնայած ըլլալու համար մտածեք էր խոհեմութեամբ ցրուել բանակը:

Կրիքոս որ իր նախանձի ժանիքը քանիցս ցոյց տուած էր արդէն, իր զորասիրնով բաժնուեցաւ գլխաւոր բանակէն եւ իր 35-000 զօրքերով ճակատեցաւ հռովմէական երրորդ բանակին. որուն հրամանատարն էր Արիոս: «Պէտք չէ նահանջենք», բաւ ան իր զինուորներուն, «մենք ուխտած ենք կռուիլ մինչեւ մահ եւ պիտի կռուինք»: Բայց այս եսպաշտ զօրավարը զո՛հ գնաց իր անխոհեմ յանդգնութեան. ինք կռիւին մէջ սպաննուեցաւ, իսկ իր զօրքերը մեծ մասով կոտորուեցան եւ ողջ մնացողները փախչելով ապաստանեցան Սպարաակուսի մօտ: Միւս կողմէ, Էմմանոս, Սպարաակուսի երկրորդ տեղակալը, որ նոյնպէս անկարգապահութեան նշաններ ցոյց տուած էր, իր զօրասիրնով կոզոպուսի արշաւանք մը սկսաւ դէպի արեւմուտք եւ ճակատեցաւ Քելիոսի, Հռովմի հիւպատոսական երկրորդ բանակի հրամանատարին: Ան արհամարհեց Սպարաակուսի խորհուրդը որ իրեն կը թելադրէր չլքել գլխաւոր բանակը եւ առանց ռազմական կշռադատումի անցաւ յարձակման: Ասոր ճակատագիրը եղաւ նոյնը. ինք սպաննուեցաւ ու իր զօրքերը ծանր կորուստ տուին եւ փախչողները ապաստանեցան Սպարաակուսի մօտ: Սպարաակուս իր երկու տեղակալներու սպաննութեան ու պարտութեան վրայ չափազանց տխրած մօտեցաւ յուսահատութեան, որովհետեւ կը տեսնէր թէ մինչ իր զօրքերու բարոյական կորովը կը տկարանար, հռովմէացի զինուորներու բարոյական կորովը աննկարագրելիօրէն կը բարձրանար: Ան ուղեց փախչիլ Իտալիայէն եւ ինայիլ իր զօրքերուն կեանքը: Բայց թշնամին կողմնակի յարձակումներով կը նեղէր զինք: Սպարաակուս ճարահատ վճռեց ճակատիլ թշնամիին եւ միանդամընդմիշտ վերջ տալ անորոչ զրութեան: Իր բանակի զինուորներուն թիւը այդ ատեն 70-000 էր: Իր յատուկ ռազմավարութեամբ յաջողեցաւ կեղծ նահանջով մը Քելիոսը առաջնորդել յարմար տեղ մը, ուր յանկարծակի յարձակումով սկսաւ սոսկալի ճակատամարտ մը: Ամբողջ օրը շողողացող



սուրբը մարդկային կեանքեր կը հնձէին: Հոսովմէական վաշտերը բազմաթիւ դիակներ իրենց ետեւ թողելով փախուստի դիմեցին: Գիշերը վրայ հասաւ եւ դադրեցաւ կոտորածը: Ապստամբները պատերազմական աւարին հետ ունեցան շատ թիւով գերիներ որոնց մէջ էին հոսովմէացի ասպետներ: Սպարտակուս, Կրիքոստի եւ Էոմանոսի յիշատակին սուսերամարտի խաղեր կազմակերպեց եւ հոսովմէացի ասպետներուն բռնադատեց որ սպաննեն դէրար: Ասիկա Սպարտակուսի առաջին անգութ վերաբերմունքն էր զոր կը ցուցնէր իր ձեռքը ինկած գերիներուն հանդէպ: Եւ զրա պատճառը հասկընալի է. իր մէջ ուսմացած ատելութիւնն ու վրէժխնդրութիւնը:

Սպարտակուս, որ հինգերորդ ճակատամարտը շահեւ էր եւ ատով վերահաստատեր էր իր զօրքերու բարոյական կորովը, այս անգամ դէմ առ դէմ եկաւ հոսովմէական մեծագոյն բանակին, առաջին բանակին որ կը գտնուէր Լէստուլոսի հրամանատարութեան տակ:

Այստեղ պէտք է բնել որ այդ բոլոր ճգնաժամային ու ճակատագրական կռիւներուն մէջ Սպարտակուսի կինը, այդ անդուզական հերոսուհին, սուրը ձեռքին միշտ կ'ընկերանար իրեն:

Հոսովմէական երկու պարտեալ բանակներու զինուորները փախչելով միացեր էին Լէստուլոսի բանակին. բայց անոնք թէեւ աւելցուցեր էին անոր ուժը, սակայն, միւս կողմէ իրենց սարսափազդու պատմութիւններով տարածեր էին բանակին մէջ մի տեսակ բարոյալքում: Լէստուլոս, անկարող գիմանալու ապստամբներու ուժեղ յարձակման, փախուստի դիմեց: Անկէ յետոյ կանչուեցաւ Հոսովմ եւ դատի ենթարկուելով շնորհադուրի վիճակով դատապարտուեցաւ աքսորի:

Հոսովմի ծերակոյտը կատարէր էր. ատոր համար ուղեց ամէնէն կարող հիւպատոսները բնարել որոնք կրնային բարձր պահել Հոսովմի պատիւը: Բայց Սպարտակուսի տարածած սարսափը այնքան խոր էր որ բոլոր թեկնածուները մերժեցին ընդունիլ իրենց առաջարկուած պաշտօնը: Վերջապէս գտնուեցաւ յանդուզն մէկը, Մարկոս Լիսինատոս Կրասոս որ ընդունեց այդ վտանգաւոր պաշտօնը ի մեծ գոհունակութիւն հոսովմէացիներուն:

Հոսովմէական քայքայուած բանակներու զինուորները, որոնք վերադարձեր էին մայրաքաղաք, բարոյալքուած բայց վրէժառու, միացան Կրասոսի բանակին, որուն թիւը հասաւ 140.000-ի:

Դառնալով Սպարտակուսի, որու ժողովրդականութիւնը տանջուող մասսաներու մէջ իր զէնթիւն հասեր էր արգէն, երկրորդ անգամ ըլլալով յայտարարեց որ բոլոր անոնք որոնք կը շար-

շարուն հոսովմէական բռնակալութեան լուծին տակ, պիտի գտնեն իրենց լիակատար ազատութիւնն ու ապահովութիւնը, եթէ միանան իրեն: Ասով գարձեալ Սպարտակուսի բանակը սկսաւ ստուարանալ բազմաթիւ կամաւորներով: Այս անգամ իր բանակի զօրքերուն թիւը հասաւ 250.000-ի:

Կրասոս հասնելով Մուսինա քաղաքին մօտ ուր բանակ դրած էր Սպարտակուս, խոհեմութիւն համարեց չափազանց զգոյշ շարժիլ եւ խուսափիլ վճռական ճակատամարտէն. ան իր մէկ տեղակալը, Կասիոսը իր վաշտերով զրկեց քաղաքին միւս կողմը, մի քիչ հեռու, խիստ հրահանգ տալով անոր որ ճակատամարտի չբռնուի, այլ ուսումնասիրէ թշնամիին տկար անկիւնները եւ աշխատելով բաժնել անոր թիկունքային ուժերը զայն տկարացնէ մասնակի ընդհարումներով: Սպարտակուս իսկոյն հասկցաւ Կրասոսի ռազմավարութեան նպատակը եւ սուսնց յապաղման յարձակեցաւ Կասիոսի վրայ, բնաջինջ ըրաւ անոր վաշտերը եւ քալեց դէպի հարաւ: Հոն հանդիպեցաւ ուրիշ զօրավարի մը, կառավարիչ Մանիլոսի, որ նոյնպէս սուսնց լուրջ գիմադրութեան իր զօրքերով մատնուեցաւ փախուստի: Կրասոս այս անգամ թշնամիին դէմ զըրկեց իր ամէնէն վստահելի ու փորձապէտ տեղակալը, Միմինուսը 22.000 զօրքերով որպէսզի աշխատի թշնամիին ռազմավարական մեթոտներով շուարեցնել սուսնց ճակատամարտի: Սպարտակուս մաքուրաբար չէր ճանջար. ան գիմեց ուղղակի յարձակման: Միմինուսի բանակը սարսափի մատնուած բռնեց խուճապային փախուստի ճամբան: Կրասոս կատարած էր: Ան հրամայեց որ փախչող եւ իրեն մօտ եկող 600 զինուորները որպէս գտնալիք հրապարակաւ սպաննուին: Ասով ան կը հասկցնէր իր զինուորներուն որ կռիւի ատեն փախուստը կեանքի ապահովութիւն չէր. ասք, այլ կը բերէր մահապատիժ:

Բայց Սպարտակուսի յաղթութիւնները հասած էին այն կէտին ուրիշ պիտի սկսէր իր ձախողանքը եւ այդ անձման հերոսը պիտի տանէր իր եղերական վախճանին: Եւ այդ՝ երկու պատճառով: Մին այն էր որ Սպարտակուսի զօրքերը սկսած էին անհամբերութեան ու անհնազանդութեան նշաններ ցոյց տալ: Անոնք, ըլլալով քաջ այլ սակայն տղէտ ու անակրունք մարդիկ, գիտուցած իրենց յաղթանակներէն, սկսեր էին դրադիլ կողոպուտով ու խրախճանքով: Միւս պատճառը այն էր որ Կրասոս լրտեսներու միջոցով հասկցեր էր Սպարտակուսի բանակին ներքին անհանգստութիւնները եւ պատեհ տուիթիւն կը սպասէր անոր տալու ջախջախիչ հարուածը: Եւ այդ պատեհութիւնը չուշացաւ, երբ ինք Հոսովմէն շուտափոյթ



օգնութեան նոր ուժեր պահանջեց ու հասան այդ ուժերը Պոմպէոսի եւ Լուկուլլոսի հրամանատարութեան տակ :

Այս մարդը որ միշտ կը խուսափէր ուղղակի ճակատել Սպարտակուսի, այս անգամ սկսաւ յարձակողականի : Սպարտակուս տեսնելով թշնամիին գերակշիռ ուժը, յուսահատական կատաղի հակադարձակողականով մը կասեցուց թշնամիին յառաջխաղացքը եւ իր բանակը ուղղեց դէպի հարաւ, Ադրիական Մովու երկայնքին եւ Մետինայի նեղուցէն ուղեց անցնել Սիկիլիա, ուր կը յուսար իր բանակը ուժեղացնել այդ կղզիի դժգոհ տարրերով : Քրասն եւ եօթը տարի առաջ յեղափոխական փոթորիկներ ծագեր էին հոն եւ թէեւ հռոմէացիները ապստամբական բոլոր փորձերը ճշգմեր էին, բայց ապստամբները չէին անհետացեր : Իր ծրագիրն էր ապստամբ տարրերը միացնել իրեն հաւատարիմ մնացող զինուորներուն հետ, ապահովել կղզիին անկախութիւնը, ապա մտածել յարձակելու Հռոմի վրայ : Սպարտակուս ձախողեցաւ իր ծրագրին մէջ, որովհետեւ ծովահանները արդելք եղան իրեն : Այդ ձախողանքին յաջորդեց ապստամբութիւն մը իր բանակին մէջ : 50.000 զինուորներ բաժնուեցան իր բանակէն : Անոնք կը քննադատէին Սպարտակուսը որ վախկոտութեան հետեւանքով չէր ուզեր ճակատիլ հռոմէացիներուն : Ատոր համար երկու պարձենկոտ զօրավարներու առաջնորդութեամբ անոնք անհաստատ ուժեղով սկսան ճակատամարտը : Եղածը կատարեալ անխոհեմութիւն էր : Կրասոս ջախջախիչ հարուած տուաւ ապստամբներու բաժնուած բանակին : Այդ կռիւն մէջ 15.000 զինուորներ սպաննուեցան զուր տեղը եւ հաւանական էր որ բոլորն ալ կոտորուէին, եթէ Սպարտակուս իր բանակով օգնութեան չհասնէր ու վերջ չդնէր սկսուած նախճիրին :

Այս կռիւններուն ընթացքին՝ Պոմպէոսի եւ Լուկուլլոսի ռազմական գործողութեանց շուրջ այնքան տեղեկութիւններ չեն տար պատմագիրները . միայն ստուելապէս կը ծանրանան Կրասոսի վրայ :

Կրասոսի, Պոմպէոսի եւ Լուկուլլոսի միացեալ բանակները ունէին 400.000 զինուոր, բոլորն ալ փորձառու վեթերաններ : Հռոմի գրեթէ իր ամբողջ ուժն էր որ կեդրոնացուցեր էր Սպարտակուսի դէմ : Այս վերջնայն բանակի զինուորներու թիւն էր 235.000 : Անոնց մէջ էին Սիկիլիայէն հասնող կամաւորական զուեղերը :

Երկու կողմի վիթխարի բանակները իրարու ճակատեցան Պրուտնեղիումի նաւահանգստին մօտ, ուրկէ մինչեւ Հռոմի հարիւր մղոն ճամբայ կար կարելու : Սպարտակուս, ձախողած Սիկիլիա անցնելու փորձին մէջ, հետեւեցաւ իր զօրքերու ընդհանուր արա-

մադրութեան, այսինքն քարել Հռոմի վրայ, եթէ յաղթական դուրս գար այդ պատերազմէն :

Ան շատ լաւ գիտէր որ հռոմէական զերագանց ուժերով կազմուած բանակներուն դժուար էր յաղթել ու երբէ կարողանար յաղթել իսկ, բազմաթիւ զինուորներ պիտի կորսնցնէր եւ մնացեալ զօրքերով հարիւր մղոն ճամբայ ունէր կտրելու Հռոմի հասնելու համար : Եւ Հռոմի բոլորովին անպաշտպան չէր : Եթէ իր զինուորներու ապստամբական փորձը չըլլար, Սպարտակուս զուցէ այնքան յոռետեսութեամբ պիտի չնայէր ապագային : Իր երկու քաջարի եւ փորձառու զօրավարները, Գանիկոս եւ Կասսոս զոհ գացեր էին այդ ապստամբական ջլատիչ փորձի պահուն եւ իրեն կը թուէր թէ իր զօրքերուն մէջ ալ թուլացեր էր նախկին անձնուիրութեան պատրաստակամութիւնն ու յաղթանակի անշեղ հաւատքը : Իրողութիւնն էր այդ թէ երեւակայական անհիմն կասկած, դժուար էր որեւէ, միայն կը զգար թէ նոյնիսկ իր մէջ անյողոտող կամքը սկսեր էր սկաբանալ : Յամենայնդէպս, ուրիշ երկընտրանք չկար . այդ ժամուն զեռ եւս անպարտելի հրամանատարը ամօթ կը համարէր նահանջիլը, պէտք էր կուէր մինչեւ վերջին շունչը : Իր կիներ ըսեր էր իրեն . «Զօրավար, մի ընկրկիր, փառքով մեռիր . եթէ ամէնքը հեռանան քեզմէ, ես քեզի հետ եմ» :

Երկու թշնամի բանակները, դէմ առ դէմ կանգնած, լծուած էին տենդագին պատրաստութեանց : Երկու կողմերն ալ զբաղած էին ամբողջութիւններ կառուցելու գործով . մասնաւորապէս հռոմէացիներու կողմը աշխոյժ աշխատանք կը տարուէր ռազմական դիրքեր հաստատելու եւ ամրացնելու համար : Այժմ երկու թշնամիներ ճակատ առ ճակատ կեցած կը սպասէին որ միւսը տար կռիւի ազդանշանը : Համաձայն Տր. Շամպայի վկայութեան (որը կըրնանք ըսել թէ ամէնէն արժանահաւատ վկայութիւնն է) այդ կռիւը տեղի ունցեր է 70 թուականին (Ն.Ք.) Փետրուարի վերջերը : Ապրստամբական պատերազմներ սեւած էին ամբողջ չորս տարի : Թէեւ տակաւին ձմեռ էր, բայց մեր դատումով չենք կրնար ըսել թէ եղանակը սաստիկ ցուրտ էր : Հաւանաբար ոչ, որովհետեւ Իտալիոյ հարաւային մասերուն մէջ ձմեռները ընդհանրապէս թեթեւ կ'անցնին :

Օր մը Կրասոս հրաման ըրած էր իր զինուորներուն իրամներ փորել եւ երբ անոնք զբաղած էին այդ գործով, սուսերամարտիկները խոյացան անոնց վրայ : Դա նշան էր որ ահեղ ճակատամարտը սկսեր էր : Պարզ ընդհարումէ մը ետք երկու բանակները քայլ առ քայլ կը մօտենային իրարու, տարուած հետզհետէ կրկնապատ-



կուղ կատաղութեամբ: Երկու կողմի զինուորներն ալ կը կռուէին կատաղութեամբ: Երկու կողմի զինուորներն ալ կը կռուէին յախուռն յուսահատութեամբ, որովհետեւ գիտէին թէ հասած էր վերջին ժամը, երբ պիտի որոշուէր մէկ կամ միւս կողմին վճռական ու բախտորոշ յաղթութիւնը:

Հերոսութիւնը, կռուելու սէրը, քաջութիւնը, մահը արհամարհելու անողուստ ու կոյր եռանդը լեցուցած էին կռուողներու սիրտը: Բայց կռիւի սկզբնական շրջանին Սպարտակուսի բանակատեղիին մէջ անխոհեմութիւնը տակաւին անձանօթ էր. անոր զինուորները կը կռուէին կատարեալ կարգապահութեամբ, կշռելով ամէն մի շարժում, չտփելով ամէն մի քայլ. իսկ երբ անխոհեմութիւնը վրայ հասաւ կռիւի ամէնատաք ընթացքին, այն ատեն քաջերը համոզուեցան թէ զինովցնող վերջին բաժակն էր որ խմած էին պողպատեայ սուրբբու կատաղի կռիւին մէջ եւ այլեւս չէին մտածեր յաղթանակի մասին: Եւ ցաւալին այն էր որ Սպարտակուս ինք եւս յանձնուած էր այդ անխոհեմութեան:

Սպարտակուս հրաման ըրած էր ընդհանուր յարձակման: Երկու հսկայ բանակները բորբոքած ատելութեամբ սկսան զարնուիլ իրարու: Սպարտակուս իր արծիւի սրտեաւ աչքերը ուղղած էր իր հակառակորդին, Կրասոսի: Զինուորները ատան որ իրենց հրամանատարը յողնած եւ մի քիչ ալ վիրաւորուած էր: Իրեն բերին իր ձին: Բայց քաջ սուսերամարտիկը սուրի մէկ հարուածով սպաննեց նժոյգը ու սուրբ բարձրացուցած նետուեցաւ յառաջ: «Շարունակեցէք կռիւը», ըսաւ ան իր զինուորներուն. «Եթէ յաղթեմ, շատ ձեր կը գտնեմ թշնամիին բանակին մէջ, իսկ երբ պարտուիմ, ձիու պէտք չունիմ»: Այս խօսքերը ըսելով Սպարտակուս խոյացաւ դէպի Կրասոս. իր նպատակն էր անձամբ սպաննել իր թշնամին եւ շահիլ յաղթանակը ու խնայել մտրդկային կեանքերը: Իր խոյանքի ճամբուն վրայ տանեակներով գիտկներ փռեց գետին, սակայն մինչեւ իր թշնամիին քով չկրցաւ հասնիլ. աջէն ու ձախէն սուրբբու հարուածներու տակ անշունչ այդ մեծ հերոսը փռուեցաւ գետին:

Փլորուս պատմաբանը նոյնիսկ որ անլուր նախատինքով կը յիշէ իր պատմութեան մէջ գերիներու հրամանատարին անունը, այս ատիւ կը գրէ. «Սպարտակուս մեռաւ հռոմէական կայսեր նման»:

Սպարտակուսի մահէն վերջ անոր զինուորները քանի դեռ չէին գիտեր իրենց հրամանատարին եղբրական մահը, շարունակեցին կռիւը, բայց երբ այլեւս չլսեցին անոր դռուացող ու ողբերիչ ձայնը, դադարեցան կռուելէ ու մասնուեցան խուճարահար փախուստի:

Այդ ճակատամարտին մէջ 35.000 գերիներ սպանուեցան. վեց հազար գերիներ խաչուեցան Ապիոսի խճուղիի երկայնքին Կապուայէն մինչեւ Հռոմ եւ անոնց մարմինները մնացին խաչերուն վրայ, օրերով:

Հռոմի ազնուականութիւնը իր վրէժի ծարաւը յաղեցուցեր էր:

Սպարտակուսի հռչակը որպէս գերիներու ազատարարի տարածուած էր հռոմէական կայսրութեան բոլոր կողմերը: Անոր եղբրական մահուան լուրը յուսահատութեան մասնեց գերիներու աշխարհը որ 35 տարուան մէջ մէկ միլիոն գոհ տուած էր ազատութեան աստուծոյն: Ողջ մնացող գերիները, մեծամասնութիւնը այդ ատենուայ մարդկութեան, բաժնեցին իրենց յոյսերը տեսանելի աշխարհէն եւ սկսան մտածել թէ իրենց ազատարարը երկրային ծնունդ պիտի չըլլար, այլ երկնային: Անոնց այդ կեղբոնացեալ երեւակայութիւնն ու հաւատքը մարմին տուաւ Բեթլէհէմի մասերին մէջ ծնող այն մանուկին որ կոչուեցաւ Քրիստոս Յիսուս:

Հարիւր տարի վերջ սկսաւ նոր դարաշրջանի մը արշալոյսը, քրիստոնէական դարաշրջանի արշալոյսը:

### ՀԻՆ ԴԱՐԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(ՅԱԻՆԵԼԵԱԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ)

Մենք ըսինք որ գործաւոր ժողովուրդներու մէջ որոշ կադմակերպութիւններ գոյութիւն ունէին նախապատմական շրջանին: Հռոմի մէջ անոնք ազատ արձակուած գերիներն էին: Բայց թէ ինչո՞ւ այդ կադմակերպութիւնները քշուեր էին գաղտնի նկուղներու մէջ, այս բանը չատիրուն գեո եւս պարզուած չէ: Հին դարերուն գործաւորները այնքան արհամարհուած էին որ ոչ ոք անոնց մասին պատմական յիշատակութիւն չէ արձանագրած: Եւ ատիկա բնաւ զարմանալի չէ: 1870-1886 թուականներուն մենք շատ քիչ ճանօթութիւն ունէինք բանուորական հսկայ կազմակերպութեանց մասին. գործադուլային շարժումներն էին որ երբ հրաբխային պուֆկումներով երեցան, մարդիկ մտածեցին որ բանուորութիւն մը կայ որ իր բնաբարուած իրաւունքներուն համար կռիւի ելած է, ուրեմն այդ բանուորութիւնն ալ ունեցած ըլլալու է իր պատմութիւնը. եւ ահա այդ մասին սկսան լուրջ ուսումնասիրութիւններ:

Հնադարեան շրջանին, երբ ճշմարտութիւններ ընդհանրացնելու միջոցներ գոյութիւն չունէին, պատմաբաններն ու բանաս-



տեղծները, գրեթէ բոլորն ալ տիրող դասակարգի խնկարկուններ, եթէ ուղէին ալ չէին կրնար տեղեկութիւն ստանալ գործաւորներու կեցութեան շուրջ, քանի որ ամէն ինչ բնական հանդարտութեամբ կ'ընթանար: Ասոր պայտօցը այն է որ հռովմէացիները գործաւորներէն վտանդ չէին տեսներ եւ դաւադրութեան դէմ առկաին օրէնքներ գրած չէին: Այդ օրէնքները հրատարակուեցան կայսերական շրջանին: Շատ հին ժամանակներէն սկսած Եւրոպայի մէջ սովորութիւն դարձած էին կազմակերպուելու իրաւունքները: Նուժա Պոմպոնիոսի ատեն, Քրիստոսէ 700 ասորի առաջ, արհեստակցական միութիւնները ծաղկեցան եւ ընդհանրացան շնորհիւ այդ խելացի թագաւորին դրած օրէնքներուն: Իրեն մասնազէտ գործաւորներ պէտք էին զէնքեր ու զրահներ շինելու համար: Անիկա երկրի բնակչութիւնը տասնամէկ դասերու բաժնեց եւ իւրաքանչիւրին տուաւ երկրի անտեսութիւնը դարդացնելու գործ: Նոյնիսկ Եանուսի տաճարը փակեց ցոյց տալու համար որ երկրի անտեսութիւնը դարդացնելը աւելի անհրաժեշտ է քան թէ կրօնքը: Ան բացեր էր գործաւորներու սակեղարը: Ասով ըսել չենք ուղեր թէ Նուման սոցիալիստ էր եւ իր օրով դատակարգերը անհետացան: Ոչ երբեք. դասակարգերը մնացին եւ վերին դասակարգերը միշտ արհամարհանքով կը նայէին ստորին դասակարգերուն վրայ, որոնք գործաւորներէ կը բաղկանային ընդհանուր կերպով: Քրիստոսնէական դարաշրջանին էր որ յայտարարուեցաւ մարդոց միջեւ կատարեալ հաւասարութեան սկզբունքը: Նուման գործաւորներու ազատօրէն կազմակերպուելու թոյլտուութեան դադարտը առած էր Եգիպտոսէն եւ Փոքր Ասիայէն, ուր անյիշատակ ժամանակներէ ի վեր գոյութիւն ունեցեր էին արհեստակցական միութեանց շրջանակներով կազմակերպութիւններ: Այդ ատենները հասարակութենէն վտարուածներն ու հռովմի արհեստաւորները, որոնք կազմակերպուած էին, սկսեր էին իրենց քաղաքական որոշ ազդեցութիւնը բանեցնել պետական գործերու վրայ: Բայց Նումայի մահէն յետոյ ազնուականները նորէն սկսան իրենց հին ձեւի բռնութիւնը եւ արհամարհոտ վերաբերմունքը գործաւորներու հանդէպ:

Սողոն 580 թուականին (Ն.Ք.) օրէնքներ դրած էր թոյլատրելով աշխատաւորներու կազմակերպութիւնը եւ նոյնիսկ պարտագիր օրէնք հռչակել էր որպէսզի երեխաները արհեստ մը սորվին: Եթէ ընտանիքի մը հայրը անտեսէր այդ օրէնքը եւ չհարկադրէր որ իր զաւակը արհեստի մը տիրանար, ան իր ծերութեան օրերուն իրաւունք չէր ունենար պահանջելու որ իր որդին հոգատարէր զինք: Լուկուրիոս, ընդհակառակը, չէր ուզեր գերիներու ազա-

տադրութիւնը. ան միայն Սպարտայի քաղաքացիները չարքաշութեան կը վարժեցնէր զինուորական կոմունիզմի համար: Նուման իր օրով որոշ քայլեր առաւ բարձր եւ ստորին դասակարգերու միջեւ բացուած խրամատը կամրջելու զիտումով: Սատուրնոսի խնձոյքներուն ատեն որոնք տեղի կ'ունենային Դեկտեմբերին, դասակարգային տարբերութիւնները կ'անհետանային. գերին, ազատն ու ազնուականը կը նոյնանային իրարու հետ: Բայց իրողութիւն է որ Նումայի օրէնքները ի զօրու մնացին միայն իր կենդանութեան ատեն, անկէ յետոյ կամաց կամաց անտեսուեցան եւ տասններկու տալիստակներու վրայ փորագրուած օրէնքները իրենց տառական իմաստովը մնացին:

Այստեղ պէտք է նշել թէ թագաւոր Նումա ինք հիմք չդրաւ արհեստակցական միութեանց կազմակերպման. ան միայն գոյութիւն ունեցածը դարդացուց. այդ էր իր պատմական գործը: Հըռովմի արեւելեան եւ հարաւային կողմի քաղաքներուն մէջ հին ժամանակներէն արդէն գոյութիւն ունէին արհեստակցական միութիւններ, որոնց մասին քարէ տախտակներու վրայ փորագրուած արձանագրութիւններ գտնուած են ուսումնասիրողներու կողմէ: Կալլիկիոսը փոխակերպուած անունն է այն արհեստակցական միութեան, որ կազմակերպուած էր փոխադարձ օգնութեան եւ պաշտպանութեան համար: Նումայի իշխանութեան ատեն այս անուան փոփոխութեանը կամ խեղաթիւրումին չենք հանդիպիր, բայց անոր մահէն յետոյ երբ Ենոսի մեհեանը վերաբացուեցաւ եւ պատերազմները սկսան իրենց վայրագութիւններով, արհեստակցական միութիւնները փոխեցին իրենց զիմազիծը, սակայն, ներքնապէս պահեցին իրենց բնոյթը: Այդ փոփոխութիւնը կրօնական գոյնով երևցաւ: Նոյն շրջանին, կոապաշտական կրօնքը ժողովրդականացած էր: Ժողովրդական կամ այլ արիստոկրատիկ ընտանիքներ իւրաքանչիւրը իր խնամակալ սուրբը կամ պաշտամունքի աստուածը ունէր, կուռքի կերպարով աստուածը: Արհեստակցական միութիւններն ալ բնականօրէն հետեւելու էին անոնց, ոչ թէ անոր համար որ անոնք կ'ուզէին հաճելի ըլլալ արիստոկրատներուն, այլ անոր համար որ իրենք ալ կրօնական հակումներ ունէին արդէն: Այս կէտը շատ մը պատմաբաններու ուշադրութենէն վրիպած է:

Հին կալլիկեանները կամ գործաւորական եղբայրակցութիւնները Իտալիոյ մէջ միայն արական սեռին կապուած չէին: Արձանագրութիւնները այժմ ցոյց կուտան որ ոմանք մասամբ եւ ուրիշներ ամբողջապէս կիներէ բաղկացած էին: Յովհան Կասպար Օրէլի հմուտ հնագէտը մանրամասնօրէն արձանագրած է իր ձեռք



անցուցած քարերու վրայի փորագրութիւնները, որոնք ցոյց կուտան թէ արական ու իգական սեռերը միասնաբար տարած են միութեանկան գործերն ու արարողութիւնները տեղական ընդունուած սովորութեանց համաձայն: Քրուտըր, ուրիշ հնադէտ մը, աւելի համբերատար եւ ուսումնասէր, բաղմամբիւ փաստեր հաւաքեր է հին արձանագրութիւններէն, որոնք լոյս կը սփռեն ընկերաբանութեան մութ մնացած անկիւններուն վրայ:

Կոլլեկիում ֆիւնէրիքիյումը, օրինակի համար, թաղման գործերով դրազող ընկերութիւն մըն էր, յար եւ նման Մեծն Բրիտանիոյ մէջ ներկայիս գոյութիւն ունեցող ընկերութեանց: Այդօրինակ ընկերութիւններ թիւով շատ էին Հռովմի մէջ:

Փրոֆ. Տուստէլ կ'ըսէ որ այդ ընկերութիւնները ազնուական դասէն վտարուած անձերէ կազմուած էին եւ կը ներկայացնէին բնակչութեան մեծամասնութիւնը, մարդիկ որոնք տուն չունէին, իրենց յատուկ կրօնք մը չունէին, չունէին նաեւ ամուսնական արարողութիւն: Ասոնց զաւակները ապօրինի ծնունդ, ընկեցիկ կը նկատուէին: Ասոնք իրենք իրենցմով ձեւակերպեր էին մի տեսակ կրօնք, հիմներ էին զաղտնի կազմակերպութիւններ եւ թաղման գործով դրազող ընկերութիւններ որոնք կրօնական դիմակ առած էին օրէնքի խտութիւններէն պաշտպանուելու համար: Կիկերոն այս մարդիկը կը նկատէ որպէս վայրի անասուններ: Սպարտակուսի մահէն յետոյ երբ Հռովմի ծերակոյտը կ'ուզէր օրէնք անցնել բանուորական կազմակերպութիւնները արմատախիլ ընելու համար, Կլոտիոս հրապարակ իջաւ եւ յանդգնօրէն պաշտպանեց բանուորական միութիւնները: Կիկերոն որ արիստոկրատներու խընկարկուն էր, ամէն կերպով կ'աշխատէր ուժեղացնել հալածանքը բանուորական տարբերուն դէմ, որոնք կը քշուէին փողոցները եւ յաճախ կը դիմէին դէնքի: Այս իրողութիւնները ցոյց կուտան որ Հռովմ, Քրիստոսէ հարիւր տարի առաջ խիստ բազմամարդ քաղաք մըն էր եւ անոր բնակչութեան մեծ մասը պրոլետարներ էին, ստրուկներ կամ ազատագրուած գերիներ, որոնք կազմակերպուած էին զանազան անուններով եւ նոյն ատեն քաղաքական նպատակ ալ կը հետապնդէին իրենց ազատութեան համար:

Օրէլիի եւ Քրուկէրի ուսումնասիրութիւններուն հետաքրքրական կէտը այն է որ թաղման գործով պարապող ընկերութիւնները ամէնէն ազբառ դասակարգի պատկանողները եղած են, որոնք զրկուած ըլլալով ամէն տեսակ իրաւունքէ, նոյնիսկ մեռնողին պարզ հողակոյտ մը ապահովելու իրաւունքէն, ստիպուած էին իրենց մեռելները այրել եւ անոնց մոխիրը պահել կաւէ ամաններու

մէջ: Այս եղկելի արարածները, որոնց աշխատանքին արդիւնքով կ'ապրէին ազնուականները, երբ կը փորձէին դիմել ազնուականներու կուռքերուն անոնց մէկ շտրհին արժանանալու երկիւղածութեամբ, կը պատժուէին խստիւ: Ահա թէ ինչու երբ քրիստոնէութիւնը եկաւ որպէս ժողովրդական կրօնք մարդոց բացարձակ հաւատարութեան քարոզչութեամբ, բոլոր հարստահարուածներն ու հալածեալները խուռներամ հաւաքուեցան անոր շուրջ:

Մոմսին կ'ըսէ որ այդ ժամանակները որովհետեւ անձնասպանութիւնը յուսահատ մարդոց վերջին ապաւէնն էր եւ ընդհանրացած, թաղման ընկերութիւնները յատուկ կանոններով արգիլած էին անձնասպանութիւնը: Ով որ անձնասպան կ'ըլլար, ընկերութիւնը անոր թաղման ծախսերը հողալու պարտաւոր չէր: Պարզ էր որ այս կանոնը թելադրուած էր գործաւորական միութիւններու կողմէ. անոնք կը դատապարտէին անձնասպանութիւնը: Մարդիկ, թէեւ ճնշուած, բայց պէտք է ապրին, պէտք է կազմակերպուին, պէտք է կուռին. այդ էր անոնց սկզբունքը: Ասկէ կը հետեւցնենք թէ թաղման գործով պարապող ընկերութիւններն ալ կապուած էին զաղտնի կազմակերպութեանց ներքին խողովակով, եւ հալածանքէ ազատուելու համար սուած էին կրօնական դիմակ: Բայց այդ ալ չէր օգներ իրենց, որովհետեւ ոստիկանութիւնը միշտ զաղտնի կազմակերպութիւնները հետապնդելու հոռի էր:

Հակառակ, սակայն, տիրող դասակարգի գործադրած անդադրում հալածանքին ու ճնշող օրէնքներուն, գործաւորական կազմակերպութիւնները, ըլլան կրօնական վարագոյրի ետեւ կամ արհեստակցական միութեան անունին տակ, մէկ կամ միւս ձեւով պահեցին իրենց գոյութիւնը զաղտնի բլիթներու շրջանակով: Եւ դա շատ բնական էր: Որովհետեւ, նախ որ հարուստներէն ոմանք որոնք վտարուած էին ազնուական դասակարգէն, մտած էին այդ կազմակերպութեանց մէջ եւ լեցուած էին վրէժխնդրութեամբ, եւ յետոյ կազմակերպութիւնները սաստիկ հալածանքի տակ հարկադրուած էին աւելի եռանդով փարիլ իրենց ուխտին, քանի որ ուրիշ փրկութեան միջոց չկար իրենց համար:

Բայց այստեղ տեղին է որ նշենք երեւոյթ մը որ ի վերջոյ քաղաքներու աշխատաւորները կապեց հողի աշխատաւորներուն հետ:

Հին ատենները, ազնուականներու հողամասերէն զատ, կային նաեւ նոր նուաճուած երկիրներու հողամասեր, որոնք կը պատկանէին պետութեան: Ժողովուրդը, ներառեալ ստրուկները, կ'ապրէին այդ հողերու արտադրոյթներով: Թագաւոր նուաճ ընդունելով տուեալ իրականութիւնը, բաւական խելացի էր որ ստեղծեց



կամ աւելի ճիշդ է ըսել ճանչցաւ արդէն իսկ դոյութիւն ունեցող արհեստակցական միութեանց սիստէմը, որուն մասնաւոր դործառնութիւնն էր հողերու վրայ աշխատիլ ու արտադրութիւնները բաժնել աշխատաւորներու միջեւ: Ատիկ աւելի իմաստուն եւ գործնական բանն էր կրնար ըլլալ, երբ երկրագործական աշխատաւորները իրենց կազմակերպութիւններով կ'անցնէին պետական պաշտպանութեան տակ: Բայց պէտք չէ մոռնալ որ հին կրօնքի մէկ օրէնքին համաձայն երկու անջատ դասակարգեր կը ճանչցուէին. գործողներ եւ չգործողներ, կամ առանձնաշնորհալ եւ ոչ առանձնաշնորհալ դասակարգեր: Այս դասակարգերը այնքան դատարարուած էին որ Դիոնեսիոս յարարարած էր թէ այդ վերջինները, այսինքն ոչ-առանձնաշնորհալ արարածները մարդկային էակ փեն նկատուեր, հետեւաբար մարդահամարի ատեն զանոնք հաշուի մէջ չէին առներ: Իրողութիւն մըն էր այս, որ մեծ շիսթութիւն պատճառած է այն զրոյններուն որոնք այդ ատենուան երկրի բնակչութեան որոշ թիւը ներկայացնել ուզեր են:

Այսպէս, Նումա Պոմպիլիոսի ծրագրով դարերու ընթացքին հին հռովմէացիներու հողերը մի տեսակ հասարակաց սեփականութիւն կը նկատուէին, որոնց վրայ կ'աշխատէին պրոլետարները իրենց օրինական միութիւններով: Այս դրութեան ներքեւ պետութեան կամ հողատէրերու ուսէն կը վերնար մշակութեան հոգատարութիւնն ու պատասխանատուութիւնը եւ կը բարձրանար հողի աշխատաւորներու արժանապատուութիւնն ու զիրքը: Ասով պէտք չէ հասկնալ որ մանր հողատիրութիւնն էր տիրողը, այլ մի տեսակ կողլեկտիվ սիստէմ որ կը ներկայացնէր իրարու միացած կոմունաներ:

Կարելի չէ ըսել թէ այս իրապէս մեծ, իմաստալի դրութիւնը իր էութեամբ ծաւալուն հանդամանք առած էր եւ կը գործադրուէր իր բուն նպատակով: Գործողներու մտքին մէջ այդ պարագայը պարզ էր եւ յստակ եւ անոնք զայն գործնականացման ճամբուն մէջ պահել կ'օրէնէին իր առաջադրուած ձեւով, բայց միշտ կը հանդիպէին ուժգին հակառակութեան: Պետութիւնը իր բաժինը կը ստանար հարկահաւաքներու միջոցով: Այդ հարկահաւաքները ունէին իրենց միութիւնը: Հարկահաւաքները դրամի փոխարէն կը հաւաքէին Փարմային արտադրութիւններ, ինչպէս ցորեն, գարի, բուրդ, պտուղներ, սիսեռ, ոլոսն, եւայլն: Հաւաքուած ցորենը ալիւրի պիտի վերածուէր, ուրեմն դիմելու էին ջաղացպաններու միութեան: Ալիւրով հաց պիտի պատրաստուէր, դիմելու էին հացագործներու միութեան: Այդպէս էր ամէն ինչ: Ասով իրարմէ բաժ-

նուած էին այդ երկու դասակարգերը, գործողներ եւ չգործողներ:

Արնուականները երբ տեսան թէ հողի աշխատաւորները բարեկեցիկ վիճակ ստացեր էին եւ միւս կողմէ իրենք ալ ամբողջապէս կախուած մնացեր էին գործաւորական միութիւններէն, Նումայի մահէն յետոյ դրութիւնը կամաց կամաց փոխեցին ու ամէնէն վերջ անցան բռնութեան, դրաւեցին զիւզացիներու հողերը ու ապօրինի հաշակեցին գործաւորական միութիւնները: Ասոր հետեւանքով ծայր տուին գործաւորական խռովութիւններ ու ապստամբութիւններ: Եւ Սպարտակուս եղաւ այդ ապստամբական շրջանի ամէնէն կարկառուն հերոսը:

Շահագործող, տիրող դասակարգի զիրքը ուժեղացնելու համար անոր օգնութեան հասաւ կրօնքը: Խեղճ ժողովուրդին համար երկինքը եղաւ յոյսի ու միսթարութեան հայրենիք: Կրօնականները եկան սորվեցնել ժողովուրդին որ այս նիւթական աշխարհը անտի էր, միւս աշխարհն էր իրականը, ուր ամէն ինչ պայծառ էր ու կրջանկալէտ անոնց համար որոնք զիտէին համբերութեամբ տանիլ այս աշխարհի մէջ իրենց բաժին ինկած սառապանքը:

Այժմ մենք մի քիչ աւելի հանդամանօրէն պատկերացնելու ենք հին դարու խոնարհ դասակարգի կեանքը այնպէս ինչպէս որ էր իր երեւակայութեամբ, իր երազանքով եւ իր իրական յոյսերով:

### ԿԱՏԵԿՈՐԻՆԵՐԸ

#### ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նումա Պոմպիլիոս, Ռոմուլոսէն յետոյ առաջին թագաւորն էր որ պաշտօնապէս ճանչցաւ արհեստակցական միութիւնները, նոյնիսկ աթենացի Սոկրոնէն առաջ, մինչ այս վերջինը աւելի հետեւեցաւ քան թէ առաջնորդը հանդիսացաւ քաղաքական տնտեսագիտութեան ասպարէզին մէջ առնուած ոյդ նշանակալից քայլին: Պէտք է ըսել թէ արհեստակցական միութիւնները հազարաւոր տարիներ առաջ նախքան իրենց պաշտօնական ճանաչումը արդէն գոյութիւն ունէին: Անոնցմէ մին որ իր կարեւորութեան համար առաջին անգամ օրէնսդիրները պատուոյ տիտղոս տուին եւ օրինականացուցին, որմնադիրներու արհեստակցական միութիւնն էր, որ յետոյ առաւ մէյսըն անունը:

Գարեբ առաջ, նախապատմական շրջանին, Հռոմը չըջապատող լեռները ծածկուած էին խիտ անտառներով: Ժողովուրդը պարբերական ցեղային պատերազմներու բերումով, բժշկական զիտութեան պակասի հետեւանքով, կանոնաւոր ամուսնութեան բա-



ցակայութեան պատճառով, հարստութեանց շուտափոյթ փճացման բերումով եւ չքաւոր դասակարգերու ենթարկուած ծանրածանր աշխատանքներու պատճառով սերնդագործութեան մէջ աճման արագ նշան ցոյց չէր տար: Անասունները շատ աւելի ծառեր կը հասցնէին, քան ինչ որ մարդիկ կրնային կամ պէտք ունէին գանոնք գործածելու: Հռովմի տունները մեծ մասով փայտաչէն էին, ստոր համար տարակոյս չկար որ հիւաներու համար միշտ առատ դործ կար: Հասարակաց շէնքերու կառուցման գործը վարողն էր պետութիւնը, որուն համար շինարարական ճիւղին կապուած արհեստակցական միութիւնները կը ծառայէին պետութեան: Անդին կային նոյն ճիւղին պատկանող անջատ արհեստակցական միութիւններ, որոնք կը ծառայէին ազնուականութեան, որոնք կը շինէին ազնուականներու համար պալատներ եւ անոնց ծառայողներուն համար տնակներ: Այդ ծառայողները սկզբնական շրջանին ազնուական ընտանիքի մը պարզ անդամները կը նկատուէին, ապա պատերազմներու հետեւանքով դարձան գերիներ:

Ասով ըսել չենք ուզեր թէ պետութեան եւ ազնուականութեան ծառայող շինարարական միութիւնները իրարմէ բաժնուած իրարու թշնամի էին: Ոչ, անոնք փոխն ի փոխ իրարու պակասը կը լրացնէին, երբ հարկը պահանջէր: Պարբերական կռիւներու եւ հալածանքներու ընթացքին, արհեստակցական այս միութիւնները պահ մը չքացած երեւոյթ մը կը պարզէին, բայց անմիջապէս երբ խաղաղութիւնը կը հաստատուէր եւ կամ երբ կառավարութեան գլուխը կ'անցնէր բարեմիտ մէկը, անոնք դարձեալ հրապարակ կուգային իրենց նախկին կազմով ու գործունէութեամբ:

Օրէլլի որ շատ խոր ուսումնասիրած է Միւրատորիի գործերը, կ'ըսէ որ արհեստակցական միութիւններ ոչ միայն գոյութիւն ունէին Հռովմի մէջ, այլեւ Իտալիոյ գանազան քաղաքներուն մէջ, նոյնպէս եւ Յունաստանի մէջ: Յունաստան որ գերեւտիքութեան դասական երկիրը եղած է, Օրէլլիի կարծիքով եղած է նաեւ արհեստակցական միութեանց ծննդավայրը: Եւ արդէն Կրուտըր մեզ կը հաւաստիացնէ թէ Տոլէնտինի կատարինա տաճարը կառուցանողները եղած են որմնադիրներու միութեան միացեալ ճիւղերը: Նարոլիի գաւառի մօտ Ռալեյիի մէջ գտնուած քարէտախտակներու վրայի արձանագրութիւնները կը փաստեն այս մասին հնագէտներու տուած վկայութիւնները:

Արհեստակցական միութիւնները, այսպէս, մերթ հալածուած ու զաղտնի, մերթ ազատ ու օրինական, իրենց գոյութիւնը շարունակելու են տասնեակ դարերով, եւ նոյնիսկ Կոստանդին կայսեր օ-

րով 337 թուին (Յ.Ք.) օրէնքով վաւերացուած 35 միութիւններ կային, որոնց համար կրնանք ըսել թէ ժառանգորդները եղած են հին միութեանց:

Այստեղ յիշենք Կոստանդինի օրով ապրող արհեստակցական միութիւններէն մի քանիներու անունները, որոնց յիշատակութիւնը կը գտնենք հին քարէտախտակներու վրայ գրուած արձանագրութեանց մէջ: 1. Ալպարի. գաճազործներու միութիւնը, 2. Արֆիտեկտի. ճարտարապետներու միութիւնը, 3. Օրիֆիոններ. սակերիչներու միութիւնը, 4. Պլատիարի. մագալիկ շինողներու միութիւնը, 5. Քարիֆնուարի. կառք շինողներու միութիւնը, 6. Տայատրիտարի. մարգարիտ եւ ցանցահիւս շինողներու միութիւնը, 7. Օրատարէս. սակի զտողներու միութիւնը, 8. Էպուրարի. փղոսկրի գործաւորներու միութիւնը, 9. Ֆիկուլի. կաւագործներու միութիւնը, 10. Ֆրարի. երկաթագործներու միութիւնը, 11. Ֆուգուրէս. ձուլիչներու միութիւնը, 12. Իմետսիմարի. ասաղձագործներու միութիւնը, 13. Լապիտարի. ակնագործներու միութիւնը, 14. Լոգուէարի. շաղախագործներու միութիւնը, 15. Մետիսի. բժիշկներու միութիւնը, 16. Միւլո-մետիսի. անասնաբոյժներու միութիւնը, 17. Միւսիվարի. զարդանկարիչներու միութիւնը, 18. Մարմըրարի. մարմարագործներու միութիւնը, 19. Փիլիոնէս. մուշտակագործներու միութիւնը, 20. Փիկտորէս, նկարիչներու միութիւնը, 21. Փլըմպարի. փակնադործներու միութիւնը, 22. Գուատրատարի. քարհասներու միութիւնը, 23. Սպեկուարի. հայելի շինողներու միութիւնը, 24. Ստատուարի. արձանագործներու միութիւնը, 25. Փավիմանտարի. սալարկուներու միութիւնը, 26. Սքըլիտորէս. քանդակագործներու միութիւնը, 27. Ստրիկտորէս. որմնադիրներու միութիւնը, 28. Թիկմարի. հիւաներու միութիւնը: Կրուտըր ուրիշ շատ մը միութեանց անունները թուելէ վերջ կ'ըսէ որ Դեմոքրոֆոսի գոլէճը կար Հռովմի մէջ, արհեստակցական միութեանց բազմաճիւղ ընկերութիւն մը, որուն գործն էր շինել բեռնատար կամ մարդատար նաւեր ու նաւակներ: Հռովմի պատերազմական նաւեր պատրաստողն ալ այս ընկերութիւնն էր:

Կոստանդին կայսրը համեմատաբար աւելի մարդկային, նըպաստաւոր օրէնքներ գրաւ յետ-քրիստոնէական շրջանի կազմակերպութեանց համար: Այստեղ պէտք է ըսել թէ Կոստանդին քրիստոնեայ դարձաւ որովհետեւ իր բանակի զինուորները մեծ մասով քրիստոնէական ուխտի գաղտնի անդամներ էին եւ անոնց շնորհիւ 324 թուին տարաւ իր մեծ յաղթանակը: Անկէ վերջ անիկա փչրեց կոստանդինութեան լուծը: Ան սրտանց քրիստոնեայ չէր եւ ոչինչ կը



հասկնար քրիստոնէական վարդապետութենէն. ան միայն հեռատես քաղաքագէտ մըն էր որ կ'ուզէր սիրաշահիլ ժողովուրդը, բայց նոյն ատեն կը հեռուէր այն տրամաբանութեան որ կռապաշտական հաւատքի զծով կ'ընդունէր թէ արիստոկրատ ընտանիքի գոյութիւնը աստուածային մէկ կարգադրութեան արդիւնքն էր, իսկ Քրիստոսի քարոզած մարդոց հաւասարութեան սկզբունքը կը պատկանէր հոգիներուն. իրական կեանքին մէջ աղնուականը ազնուական մնալու էր, բանուորը՝ բանուոր, միայն թէ բանուորը որպէս մարդկային էակ կամայականօրէն ենթարկուելու չէր բռնութեան ու շարչարանքի: Այսպէսով կռապաշտական կրօնի ստրկատիրական օրինազիրքը ամբողջապէս մէկ կողմ նետուեցաւ եւ հաստատուեցաւ Յիսուսի վարդապետութիւնը, այն Յիսուսին որ գերետիրութեան դէմ երբեք պատերազմ չյայտարարեց, այլ միայն հաւասարութեան նոր դազափարով մը վարսզուրեց ամէն ինչ. ծրարէր մը որ կոստանդինի ժամանակ արդէն երեք հարիւր տարեկան եղած էր:

Պատմական իրողութիւն է որ քրիստոնէութիւնը չէր որ կռիւ մղեց գերետիրութեան դէմ: Քրիստոնէական կրօնի երեւան դալէն դարեր առաջ արհեստակցական միութիւններն էին որ կռիւ մղեցին այդ սխտէմին դէմ, որովհետեւ գերետիրութեան սկզբունքը հիմնովին հակառակ էր արհեստակցական միութեանց սկզբունքին: Առաջինը կը պարտադրէր անտրտունջ համակերպութիւն, երկրորդը կը ձգտէր աշխատանքի իրաւունքը ապահովելու ազատութեան: Մէկը կ'ուզէր կրօնա-ընկերային մի տնտեսութիւն հաստատել աշխարհի մէջ աստուածային անփոփոխ հրամայականով, միւսը կ'ուզէր արդար մի հասարակարգ իրաւական հիմունքներով:

Արհեստակցական միութիւնը մահացու թշնամին էր գերետիրութեան հին դարերու ընթացքին հնդեւրոպական ցեղերուն մէջ, իսկ երբ կռապաշտական կրօնը եկաւ գերետիրութեան պատուաստել աստուածային կամքը, ահա երեւան եկաւ նախածնող օրէնքին ընկերակը հրովարտակներու պտուղներովը սնանած, որ մըտաւ ընկերային, քաղաքական եւ տնտեսական զարգացման ճամբան այն կէս բարբարոս ընտանիքներուն, տահմերուն եւ ցեղերուն մէջ, որոնք յետոյ ըլլալու էին ազգեր ու կայսրութիւններ: Չարմանալի չէր, ուրեմն, որ այդ նորափետուր թռչնիկը դեւի փոխակերպուէր եւ ստակալի պայքար մղէր վերստանալու այն ինչ որ կորսնցուցեր էր իր մեծ մրցակիցին, արհեստակցական միութեան հետ ունեցած կռիւին մէջ:

Ահա այս է որ կը կազմէ դարերու ընթացքին յեղափոխութեան պայքարի հիմնական խարխալը ընկերային տնտեսութեան

մէջ, ինչպէս անցեալին, նոյնպէս եւ ներկայիս, թէեւ գերետիրութիւնը (փառք քաղաքակրթութեան) ձեւակաւորէն հեռացեր է մարդկութեան ուսերէն եւ թողած է միայն կմախք մը, անհատական ազատ մրցակցութիւնը, որ կախուած է խաղաղութեան ու պատերազմի մէջանը, նոր ու ահաւոր զէնքերով, գիտական նոր նուաճումներով բայց նոյն քրիստոնէական ժանդոս ու թունաւոր վարդապետութեամբ:

Հին ԴԱՐԵՐՈՒ ԶԻՆԱԳՈՐԾՆԵՐԸ ԵՒ ԱՅՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նումայի օրինական հռչակած ինը արհեստակցական միութեանց մէջ կար մէկ հաս, որուն շատ կարեւորութիւն տրուած էր. դա մետաղագործներու միութիւնն էր: Անոնք կազմակերպեր էին իրենց յատուկ համընկերակցական հասարակուրդը, երբ տակաւին երկաթի գործածութիւնը չէր սկսած: Պատմագիրները կը հաւատան թէ երկաթի գործածութիւնը սկսաւ Հռոմի հիմնարկութենէն վերջ, այսինքն 758 թուականին (Ն.Ք.): Կանխադոյն շրջանին, մետաղագործները պղինձը կը հալեցնէին զինպի հանածոներուն հետ եւ զիտէին այն մեթոտը որով ամուխի փոշիներու խառնուրդով թթվուտի ծուխերուն մէջ զինզը չէր անհետանար: Ինչ եւ իցէ, անպապղինձ արտադրելու համար, սակայն, անոնք շատ քիչ յառաջդիմութիւն ցոյց տուած էին: Զինպով նուրբ ստարկաներ շինելու արուեստը սկսաւ շատ ուշ, 1781 թուականին (Յ.Ք.): Զարմանալի չէ երբ ըսնք թէ արհեստակցական միութիւնները եղած են որ այս կամ այն նոր զիւտերը երեւան բերած են, որովհետեւ զուտ գերետիրական դրութեան տակ ոչ արուեստը, ո'չ ալ զիտութիւնը կրնային զարգանալ: ՃողՖուս Թլելուս իր հրեաներու պատմութեան մէջ կը նշէ որ Սոզոմոնի տաճարը շինողները եղած են արհեստակցական միութիւնները Հիրամ անունով արտաստվոր մաքի տէր վարպետի մը առաջնորդութեամբ:

Նումայի օրով երկաթի գործածութիւնը սկսեր էր, թէեւ ապացոյց չկայ որ երկաթի գործաւորները կազմակերպուած էին, անոնց մասին Օրէլլին է որ յիշատակութիւն կ'ընէ: Այսուհանդերձ Համբրոսէն Արունդիլեան թերթաբարբու արձանագրութիւններէն եւ Հին Կտակարանէն յիշատակութիւններ կան որոնք կը ցուցնեն թէ մարդիկ երկաթը կը գործածէին սուրեր, նետեր ու գեղարդիներ շինելու համար:

Նումայի մահէն յետոյ Հռոմ նուիրուեցաւ պատերազմի: Մետաղի գործաւորները սկսան շինել սուրեր, նիզակներ, վահան-



ներ, սաղաւարտներ եւ այլ զէնքեր, ինչ որ պատերազմը կը պահանջէր:

Աշխատաւորները պատերազմի հետեւանքով չէին տառապեր: Հոռով յաղթական էր միշտ եւ մետաղազործները որոնք կառավարութեան համար կը գործէին, լաւ վարձատրութիւն կը ստանային:

Ինչպէս հողը կը պատկանէր պետութեան, նոյնպէս եւ հանքերը, գործաւորները զօրակոչի չէին ենթարկուեր. անոնք զինուոր չէին կրնար ըլլալ. զինուոր ըլլալը մեծ պատիւ էր հոռովէացի քաղաքացիին համար: Բայց արհեստակցական միութեան անդամները թէեւ անպատիւ չիրքի վրայ՝ սակայն երջանիկ էին որ պատերազմի դաշտէն հեռու կը մնային եւ իրենց շինած զէնքերով իրենց ատած մարդիկը կը սպաննուէին: Գայլերը կը կռուէին իրարու հետ, իրենց ինչ հոգն էր, երբ իրենք, գործաւորները կ'ապրէին անվտանգ. բայց նոյն ատեն անոնք կ'աշխատէին զարգացնել իրենց շինած զէնքերը խնայելու իրենց աշխատանքը եւ ստանալու աւելի վարձատրութիւն: Եւ պէտք է ըսել թէ Հոռով իր յաղթութեանց արդիւնք տարներէն որոշ բաժին կը հանէր պետութեան համար գործող զինագործներուն, որոնց մէջ հեազհետէ կ'ուժեղանար հոռովէացիութիւնը: Հոռով յաղթանակներէն կ'օգտուէին իրենք. ուրեմն, Հոռով միշտ յաղթական մնալու էր: Այն ինչ որ հայրենասիրութիւն կը կոչենք, անոր հիմքը ներթափան նկատումն է: Նոյնը չէ՞ այսօր կապիտալիստական երկիրներու մէջ:

Գործաւորական միութիւնները այդ ատենները ուրիշ զէնք մըն ալ հնարեցին, որ սկիզբէն պարզ բան մըն էր, յետոյ զարգացուցին: Հարիւր յիսուն ոտք երկարութեամբ հաստ թակ մը պրոնզէ գլուխով, մարդիկ իրենց ուսերուն վրայ առած ետեւ ու առաջ շարժելով անդադար կը զարնէին թշնամի քաղաքի պարիսպին, որ այդ հուժկու զարկերուն տակ տեղի կուտար. պարիսպը կը փլչէր ու զինուորները կը խուժէին քաղաքէն ներս: Այդ գործիքը յետոյ մեքենայացուցին: Երեսուց թակը շղթաներով կը կախէին հաստաւած ձողերու վրայ եւ մարդկային կամ ջորիներու ուժով ետեւ ու առաջ շարժելով աւելի ուժգին կը խփէին յամառօրէն դիմազորող պարիսպին, որ իսկոյն կը խորտակուէր առանց երկար ժամանակ տանելու:

Ձինագործներու կարգին էին նաեւ պարսատիկ շինողները: Մասնաւոր արհեստակցական միութիւն մըն էր նոյնպէս կոչակարներու միութիւնը որ միայն բանակի զինուորներուն կոչիկներ ու մոյկեր կը պատրաստէր: Միւս կողմէ, ազատ արձակուած գերի-

ներն ալ կազմակերպուելով երեւան բերին իրենց կոչակարներու միութիւնը, որ Հոռովի քաղաքացիներուն կոչիկներ կը հայթայթէր: Այս միութիւնը ի վերջոյ միացաւ զինուորական կոչակարներու միութեան հետ:

Ասոնցմէ զատ կային նաեւ ուրիշ միութիւններ, որոնք բանակին կը հայթայթէին ուսելիք, հագուստ, տաղաւարներ եւ այլ պիտոյքներ:

Պետական պաշտօնէութեան եւ ազնուական դասակարգին համար գոյութիւն ունէր գինեգործներու միութիւնը, որ ընտիր գինի կը պատրաստէր եւ աւելցածը ծախու կը հանէր եւ այդպիսով կը գոհացնէր միութեան անդամները:

Առանձին արհեստակցական միութիւն կազմեր էին նոյնպէս մտազործները, հացագործները եւ ձիթախ պատրաստողները: Գերիները մէկ բանով առանձնաշնորհում կը վայելէին. խողի միսը հին կրօնի պատուիրանի համաձայն խորշիկ էր. խողի միսը բաժին ինկած էր գերիներուն: Յաղթական պատերազմներու հետեւանքով երբ գերիները կը բազմանային, բարի խողերը կը գոհուէին անոնց համար: «Բարի խողեր» ըսինք եւ դա ճիշդ է, որովհետեւ խողերը աւելի բարեսիրտ էին քան ազնուականները:

Ձկնորսներու միութիւնը (պիսկատարէս) գոյութիւն ունէր Հոռովի, Օջիանի, Փիզայի եւ ուրիշ ծովեզերեայ տեղերը: Որովհետեւ ձուկը հարուստ դասակարգին համար յարգի էր, ձկնորսներու գործն ալ շահուէա գործ էր, եւ իրենք ալ համեմատաբար աւելի փնտռուած մարդիկ էին դարձեր:

Օրէլի շահեկան տեղեկութիւններ կուտայ ձկնորսներու միութեան շուրջ, երբ կ'ըսէ որ անոնք թեկնածուներ կը նշանակէին քաղաքապետական ընտրութեանց ատեն, իսկ ամէնէն հետաքրքրական կէտը այն է որ այդ ընտրութեանց կը մասնակցէին նաեւ կիներն ալ: Վետուլի ծածկած լալաներուն տակէն հանուած թերթաքարերու վրայի արձանագրութիւնները, որոնք այսօր թարգմանուած են, ապացոյց են քանուհիից դար առաջ գոյութիւն ունեցող գեմեղրատական կարգերուն:

Տանք մի քանի օրինակ այդ արձանագրութիւններէն:

1. Ֆեօպուս իր յաճախորդներուն հետ կը փափաքի որ ժողովուրդը քուէարկէ Հոլքուի համար, որ նախապէս Բ. Գ. Բուֆուս միութեան նախապահն էր:
2. Լիսիմիուս Բուման կոչ կ'ընէ որ ժողովուրդը քուէարկէ Յուլիոս Պոլիպիոսի, որպէս հասարակական գործերու ընդհանուր տեսուչ:



3. Ձկնորսներու միութեան անդամները ընտրած են Փոպիտիոս Բուֆուսը որպէս հասարակաց գործերու մարմնոյ անդամ եւ կոչ կ'ընեն որ ժողովուրդը իր քուէն տայ անոր:

4. Ոսկերիչներու միջազգային ընկերակցութիւնը կը պահանջէ որ Պոմպէ քաղաքին հասարակական գործերու մարմնոյ անդամ ըլլայ Գուսպիս Փանդան:

5. Սիմա իր որդիներուն հետ կը խնդրէ որ դուք աշխատիք յաջողցնել ընտրութիւնը Յուլիոս Սիմպլի, հասարակական գործերու մարմնոյ անդամութեան համար. անիկա ամէնէն հաւատարիմ մարդն է որ կրնայ ժողովուրդին օգտակար ծառայութիւն տալ:

6. Վերնա պարկեշտ ուսուցչուհին իր աշակերտներուն հետ իրաւացիօրէն եւ լեցուն հաւատքով դատաւորի համար թեկնածու գրած է Տիկին Կապելլան:

7. Արժանի է որ դուք գործէք Պ. Պոպիտի համար, որպէսզի անիկա անդամ ըլլայ հասարակական գործեր վարող մըմնոյն:

8. Տիկին Ֆորտուս կը փափաքի Մարսելուի ընտրութեան:

Այս արձանագրութիւնները ցոյց կուտան որ ոչ միայն արհեստակցական միութիւնները եղբայրական կապով միացեր էին իրարու հետ, այլևս կիներն ալ այր մարդոց պէս գործունեայ էին այդ միութեանց մէջ:

Ասով ըսել չենք ուղեր թէ միութիւնները բնակչութեան մեծամասնութիւնը կը ներկայացնէին: Ոչ երբեք. որովհետեւ գերիները աւելի բազմաթիւ էին, նոյնպէս ազատագրուած գերիները, որոնք թուլամորթ ու երկշտ ըլլալով, կը գործէին գերետէրերուն համար:

Ձկնորսներէն գատ կային նաեւ մարդիկ որոնք ձուկերը աղով կը պատրաստէին եւ կը պահէին տակառներու կամ տուփերու մէջ: Ասոնք ալ իրենց առանձին միութիւնը ունէին:

Ուրիշ միութիւն մը՝ պահածոներու ընկերութիւնն էր, որ պտուղները շաքարով կը պատրաստէր ձմեռնային եղանակին համար:

Ուրիշ միութիւն մըն էր որսորդներու միութիւնը: Որսորդները գերութենէ փախած մարդիկ էին, որոնք հեռանալով քաղաքներէն, ապաստաներ էին լեռներն ու անտառները: Ասոնք երկու կարգի կը բաժնուէին. մէկ մասը այն գերիներն էին որ իրենց աէրերուն անդուծ վերաբերմունքին չկրնալով հանդուրժել անոնց զէնքերը գողնալով փախեր էին քաղաքներէն, իսկ միւս մասին պատկանողները գերի սուտերամարտիկներն էին: Հռովմէական կրկէսներուն

մէջ գերիները կը հանուէին վայրի զազաններուն առջեւ. անոնց կը տրուէր զէնք ինքզինքնին պաշտպանելու համար: Գերին, կեանքի ու մահուան կռիւին մէջ երբ կը բղբաւէր վայրի զազանին ճիրաններուն մէջ, Հռովմի քաղաքացի հանդիսատեսները խելայելօրէն կը ծափահարէին: Ուրիշ տեսարան մըն էր գերիներու սուտերամարտութիւնը: Երկու գերիներ իրենց արուած սուրերով կը մենամարտէին իրարու հետ: Սոսկատեսիլ կռիւ մը, ուր այդ գերիները կատաղօրէն կը փորձէին մէկզմէկ սպաննել մեծագոյն հրճուանք պատճառելով վայրի բնազդներով տոգորուած հանդիսականներուն: Յաղթական գերին, որ մարդ էր վերջապէս, կը խղճահարուէր որ ինք իր անդուծ տիրոջ եւ անոր նմաններուն հաճոյքին համար սպաննած էր իր ընկեր գերին եւ մի ուրիշ օր դարձեալ պիտի կատարէր նոյն ախուր դերը: Անոր միակ ազատութիւնը փախուստի ճամբան էր: Ահա այս փախտական գերիներն էին որ մաս մը աւազակութեամբ կը զբաղէին, եւ մեծ մասով որսորդութեամբ: Վերջինները կազմեր էին մի տեսակ կոմունաներ. անոնք խմբովին կ'ապրէին եւ իրենց ապրուստը կը հայթայթէին այդ գծով: Որսացուած կենդանիներու միւր իրենց սնունդին ծառայեցնելէ յետոյ յաւելեալ բաժինը կը ծախէին զազանի գործակալներու, որոնք կապուած էին այդ գործով զբաղող վաճառականներու հետ: Մտեղէնի հետ քաղաք կը բերուէին նաեւ մորթեր, որոնք կը տրուէին մուշտակագործներուն: Ատեն մը տպնուականներն ալ կը զբաղէին որսորդութեամբ, սոսկ հաճոյքի համար, բայց երբ գերի որսորդները բազմացան, ազնուականները այլեւս լեռներէն ու անտառներէն հեռացան:

Այստեղ յիշելու է նաեւ ամփիթատրոնները մաքրողներու միութիւնը, որու անդամները ազատագրուած գերիներ էին: Անոնց գործն էր կրկէսներու վրայ թափուած արիւնը մաքրել, մարդկային մարմնոյ բղբաւած մասերը հաւաքել ու այրել: Իսկ ամէնէն վտանգաւոր գործն էր վայրի զազաններու հոգատարութիւնը: Առիւծը կամ կամ վազը երբ իր որսը կը փախտէր ու վայրի տեսարանը կը վերջանար, պէտք էր զայն առաջնորդել իր գառագեղը: Այդ գործին համար որոշ մարդիկ ճարպիկ ըլլալու էին եւ վարժ:

Արհեստակցական այս միութիւններու միջեւ երբեմն երեւան կուզար պայքար մը, որմէ կ'օգտուէր տիրող դատակարգը: Յաւալի իրողութիւնը, սակայն, այն էր որ անոնք հնարաւորութիւն չունէին միասնական ճակատ կազմելու, բացի այն պարագայէն երբ Սպարտակուսի նման հերոս մը հրապարակ կ'ելլէր ու կը պարզէր յանուն ընդհանուր ազատութեան ապստամբութեան գրոշակը: Ասով ըսել չենք ուղեր թէ այդ միութիւնները մշտապէս կը մնային



ոչխարի համակերպութեան մէջ. անոնք երբեմն կը ցցուէին տիրող դասակարգին դէմ, հոգ չէր թէ իրենց կուրը կը վերջանար ողբալի անյաջողութեամբ: Այդ յամառ պայքարումներով անոնք ոչ միայն վերահաստատեցին իրենց կողմակերպութիւնը պահելու իրաւունքը, այլև հասան քաղաքական որոշ հեղինակութեան մը, մինչև որ կայսերական շրջանին բոլորովին ճնշուեցան: Բայց կայսերական այդ շրջանէն յետոյ անոնք դարձեալ ծաղկեցան:

Հոովմ հարստացաւ պատերազմներով եւ պատերազմներու աւարներով կը կերակրէր ժողովուրդը. իր դիզած հարստութիւնը յառաջացուց ապականութիւն եւ յետոյ պատճառ եղաւ իր անկումին: Իրողութիւն է որ նա ամէն ատեն պէտք ունեցաւ դորձաւորական միութեանց օժանդակութիւններուն: Պատմաբանները որոշ բան մը չեն բսեր թէ Հոովմի բանակներուն պարէն հայթայթողները որոնք էին: Բայց թերթաքարերու արձանագրութիւնները ցոյց կուտան որ մասնաւոր նպարարկու ընկերութիւններ կային, որոնք բանակին կը հայթայթէին պէտք եղած պիտոյքները, ան ալ ոչ այնքան պատերազմի ատեն, որովհետեւ դիմաւորները պարտեալ երկիրներու կողմուտովը կը պարագէին առհասարակ, այլ առաւելապէս խաղաղութեան ատեն, երբ Հոովմ յաղթական էր. Իսկ երբ սկսաւ նահանջել, անոնք ենթարկուեցան ծանր հարկատուութեան ու ճնշումի: Կառավարութիւնը անոնցմէ կը պահանջէր պէտք եղածները առանց փոխարինութեան: Ասով այդ ընկերութիւնները մեքենարար լուծուեցաւ եւ պետութիւնը սկսաւ կողմադէմ ունեւորներն ու չունեւորները հաւասարապէս:

Մեր յիշած արհեստակցական միութիւններէն զատ պէտք է յիշել նաեւ խոհարարներու եւ սպասարկուներու միութիւնները: Ասոնք մէկ ընտանիք կը կազմէին, թէեւ տեղ տեղ առանձին շրջանակներով:

Մոմսին իր ձեռք բերած թերթաքարերու արձանագրութիւններէն մեզի կը տեղեկացնէ որ պալատի սպասարկուներէն կային մասնաւորներ, որոնք կայսերական ընտանիքի կերակուրները նախապէս կը փորձէին, թունաւորման կասկածը փարատելու համար: Նոյնը կ'ընէին Հոովմի ազնուականները. անոնք եւս կը վախճային թունաւորումէն, ասոր համար իրենց ներկայութեանը սպասարկուներ, նախ պիտի համտեսէին մատուցուած կերակուրները: Եթէ բան մը պատահէր, թէ խոհարարը եւ թէ սպասարկուները պատասխանատու կը բռնուէին ու կը պատժուէին մահուամբ:

Այստեղ պէտք է ըսել թէ խոհարարներու եւ սպասարկուներու միութեանց անդամները իրենց գործին բերումով ամէնէն լաւ հազնող եւ ամէնէն լաւ սնանող մարդիկն էին Հոովմի մէջ:

ՀԻՆ ԴԱՐՈՒ ԶԲՕՍԱՆՔՆԵՐԸ

ԵՒ

ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յոյներն ու Հոովմէացիները սկիզբէն ի վեր մեծ ուշադրութիւն տուած են զուարճութեանց. անոնք միշտ սիրած են զուարճանալ. եւ ինչ ըսել որ, ինչպէս գիրենք ասրեցնողները եղած են ժողովուրդի ստորին դասակարգերը, այնպէս ալ այդ առանձնաշնորհեալ մարդոց (սակաւաթիւ բայց իշխող մարդոց) զուարճութեանց ազբիւրնները եղած են ժողովուրդի նոյն ստորին դասակարգերը, գերիներն ու գերութենէ ազատագրուած մարդիկը: Պարագլխները աշխատաւորներու քրտինքի պտուղներով իրենց ստամոքսը լեցնելէ վերջ պէտք ունէին զուարճանալու, որպէսզի առանց դժուարութեան մարսէին իրենց կերածները:

Թատրոնը յոյներու մօտ բաւականին զեմոկրատական գոյն ունէր. սամիկներուն հետ գերիներն ալ յաճախ ներկայ կ'ըլլային ներկայացումներուն:

Աւելի հնագոյն թատրոնները կոշտ էին, բայց հերոսական շրջանին, հսկայական թատրոններ կառուցուեցան: Արքատիայի մէջ Մեկատուլիսի թատրոնը վիթխարի շէնք մըն էր, ուր քարէ նստարաններու վրայ ժողովուրդը ամբողջ ութը ժամ անձրեւին կամ արեւուն տակ կը նստէր ու կը հաճոյանար ի տես կատարուած դերերուն:

Եփեսոսի թատրոնը 660 ոտք արամագիծ ունէր, ուր կը հաւաքուէին 60.000 հանդիսականներ: Հոովմի մէջ փայտաշէն թատրոնը, զոր հիմնած էր Սքորոս 55 թուականին (Ն.Ք.) երբ Հոովմէական պետութիւնը սկսեր էր քայքայուիլ, 80.000 մարդիկ կ'ամփոփէր իր մէջ:

Դերասանները որոնք իրենց ուրոյն միութիւնը ունէին եւ տանջանքի ու մահուան վտանգէն աւելի ապահով էին քան սուսերամարտիկները, պրոլետարներ էին, իրապէս ընչազուրկներ:

Թատրոններու մէջ կատարուած դերերը առհասարակ կատակերգութիւններ էին, մեծ մասով միմոսութիւններ: Ազնուական դասակարգը խնդալ կը սիրէր, ոչ թէ խոկալ: Իսկ թատերադերները



իրական կեանքէն կ'առնէին իրենց նիւթերը եւ իրական կեանքը ներկայացնողները գերիններն էին. իրենց խղճալի գրութիւնն էր որ գաւեշտի պատկերներու նիւթ կը գտնար: Աջնուական մը որ հագար գերիններ ունէր, զանոնք օրերով անօթի ու ծարաւ պահելէ վերջ անոնց կը նետէր ընկոյզներ, չոր թուզ եւ կը դիտէր թէ ինչպէս անոնք իրարու վրայ կը յարձակէին իրարու ձեռքէն յափշտակելու համար նետուած ընկոյզներն ու չոր թուզերը: Ահա ծիծաղելի տեսարան մը թատերագրին համար:

Այստեղ պէտք է յիշատակել այն պատմական շրջադարձը, որ տեղի ունեցաւ Միկիլիոյ մէջ 143-134 թուականին (Ն.Ք.) երբ Եւանուս, գերի սուսերամարտիկը, թագաւոր դարձաւ: Այն ատեն գերերը փոխուեցան: Թատերագրիները այս անգամ ազնուականներու կեանքն ու դործերը գաւեշտախաղերու վերածեցին ու դերասանները անոնցմով զուարճացուցին ազատագրուած գերիններն ու ազատ քաղաքացիները: Բայց, աւա՛ղ, այդ շրջանը հազիւ տասը տարի տևեց. Հռոմ իր առիւծի թափով դարձեալ կարողացաւ խեղդել հռչակուած ազատութիւնը: Ապրտտիուս իր յաղթանակներու ընթացքին իր գերի բռնած հռոմէացի սպայտները բռնութեամբ սուսերամարտի մղելով զուարճացուց իր ղինուորներն ու ժողովուրդը, բայց անոր ալ յաջողութեան շրջանը շատ կարճատև եղաւ Իտալիոյ մէջ:

Հռոմէացիները միայն հասարակ զուարճալի թատերախաղերով չէին գոհանար: Կրկնութենէ խուսափելու համար ալ չյիշենք գերիններու սուսերամարտութիւնները, կրկէսներու մէջ գազաններու հետ անոնց արիւնալի մարտնչումները: Հռոմ ունէր բացառապէս վիթխարի կրկէս մը, Մաքսիմուս կրկէսը որ շինուած էր ամփիթատրոնի ձեւով: Այդ կրկէսը ունէր 21.000 ոտք երկարութիւն եւ 400 ոտք լայնութիւն եւ կը պարունակէր 480.000 նստարան: Հոն տեղի կ'ունենային ձիարշաւ, կառարշաւ, արագալուզութիւն, աղեղնաձգութիւն, սուսերամարտութիւն եւ այլանդակ ծաղրածութիւններ: Հեռաւոր նստարանները գրաւողները կը տեսնէին ամէն ինչ:

Հռոմ ունէր նաեւ պարասրահներ: Ընթերցողը թող շտարբի մտածելու թէ ազնուականներն ու անոնց կիները հասարակութեան ներկայութեան կը պարէին այդ պարասրահներուն մէջ: Ոչ երբեք: Այդ տեղերը պարողներն էին բարեձեւ գերի երխտասարգներ, գեղանի կիներ եւ փոքրիկ աղջիկներ, բոլորն ալ գերիններ: Երիտասարդ պարողը կը կոչուէր սալտատոր, կին պարողը՝ սալտատրիքս, իսկ փոքրիկ աղջիկը կը կոչուէր սալտատրիկուլա: Ազնուա-

կաններն ու ազատ քաղաքացիները կը զուարճանային անոնց պարով: Կրկերոնի, Սուիտոնիոսի եւ Ֆլորուսի նման մարդիկ, սակայն, անարպանքով կը յիշատակեն զանոնք, մինչ ազնուականներու ձիերը, շուները, կատուները եւ նոյնիսկ կովերը կ'արժանանան աննկարագրելի դովասանքի:

Չարմանալի թող չթուի երբ ըսենք թէ այս պարողներն ալ ունէին իրենց արհեստակցական միութիւնը: Անոնք կ'աշխատէին զարգացնել իրենց պարի ձեւերը ազնուականները անլի եւ անլի հաճոյացնելու համար: Ասոնց միակ բախտաւորութիւնը այն էր որ անոնք գերիններու յատուկ շարչարանքներուն չէին ենթարկուեր: Եւ այդ ոչ թէ անոր համար որ ազնուականները սիրոյ եւ կամ գթութեան զգացում ունեցեր էին պարողներուն հանդէպ, այլ անոր համար որ անոնք դիտէին թէ շարչարանքի տակ մարդ էակը չէր կրնար պարել եւ իրենք կը զրկուէին իրենց հաճոյքէն:

Երբ պարերու մասին խօսեցանք, այստեղ արդէն երեւան կուզայ նուազածուներու ճիւղը. առանց նուազողներու պարել չէր ըլլար: Այո, Հռոմ ունէր նաեւ նուազածուներու խումբեր, որոնք բոլորն ալ կազմակերպուած միութիւններ կը ներկայացնէին: Հին ատենները զլխաւոր նուազներն էին տաւիղը, սրինգը, թմբուկը, սրափողը, աափը եւ սկճորը: Պէտք է ըսել թէ նուազածուները նոյնպէս բախտաւոր էին որ չէին ենթարկուեր շարչարանքի:

Բախտագուշակները ուրիշ տեսակի միութիւն մը կազմեր էին: Բախտագուշակութիւնը ընդհանրացած է հին դարերուն, որովհետեւ ազնուականները, ռամիկներու նման տղէտ ու նախապաշարեալ մարդիկ, շատ կը հաճոյանային անոնցմով: Անոնք խորհրդաւոր արարողութիւններ կը կատարէին եւ կը պաշտէին բախտի աստուածուհին, որ կը կոչուէր Նեմեսիս: Դա յոյներու վրէժխնդրութեան դիցուհին էր: Ժողովուրդին մէջ տարածուած նախապաշարումը անոնց տուած էր պատկառազու մի դիրք, որովհետեւ աղքատ թէ հարուստ բոլոր մարդիկ կը կարծէին թէ անոնք աստուածներու պատգամախօսներն են:

Ասոնց հետեւեցան կախարդները: Բախտագուշակներն ու կախարդները, իրարու դաշնակից կրօնական հաւատալիքներու կռթնած, ոչ միայն ազատ միացին հալածանքէ, այլևս պետական պաշտօնատանց մէջ հաստատուն դիրք ապահովեցին եւ սկսան էնդրիկներ սարքել եւ նոյնիսկ նշանակելի դեր խաղալ պատերազմներու ատեն:



ԳՐՕՇԱԿՆԵՐ

Հնադարեան շրջանին, ինչպէս ըսինք, արհեստակցական միութիւնները բազմաթիւ էին եւ քով քովի: Գրեթէ ամէն մի աշխատանքի ճիւղ իրեն յատուկ կազմակերպութիւնն ունէր: Այդպէս էր գրութիւնը մասնաւորապէս Հարաւային Իտալիոյ մէջ, ուր Պըզատոն գտաւ կոմունիստական սիսակմ մը, մեծ մասով հաստատուած Պիւթագորասի ձեռքով: Պղատոն քանիցս այցելել է Իտալիա իր երազած իտալական պետութեան նիւթեր ձեռք բերելու համար: Ինք արդէն արխտոկրատ էր եւ կապուած էր իր շրջապատի մաս-ծողութեան, ատոր համար ան ջատագով մը եղաւ գերետիրութեան եւ աշխարհին չկրցաւ տալ զուտ կոմունիստական գաղափարախօսութիւն: Արխտոտէլ աւելի լաւն բրաւ թէեւ, բայց ինքն ալ արխտոկրատ էր եւ ձերբարատուած չէր արխտոկրատական գաղափարներէն. այդ իսկ պատճառով ինք անբնական կը գտնէր գերիներու ազատագրութիւնը:

Ֆիպպի մեվալիուս, նաեւ ու նաւակներ շինողներու միութիւնը ամէնէն յարգամեծար միութիւնն էր որ իր ճիւղերը տարածեր էր նաւարկելի գետերուն ու ծովի եզերքներուն վրայ: Հոովմի ճնշող օրէնքները ասոնց չէին հասներ եւ անոնք համեմատաբար աւելի ազատ էին ու կը կառավարուէին ժողովրդական օրէնքներով:

Բայց ամէնէն նշանակելի հանդամանքը այն էր որ թէ հին Յունաստանի եւ թէ կայսերական Հոովմի տիրապետութեան սահմաններուն մէջ արհեստակցական այս միութիւնները գասակարգային գիտակցութեան շղթայով միասնական ճակատ կազմած չէին եւ տիրող գասակարգը ատոր համար շատ գիւրաւ կրնար ճզմել զանոնք երբ անոնցմէ մէկը կամ միւսը բմրոստութեան նշան ցոյց տար: Այսու հանդերձ պէտք է ըսել թէ ապստամբական շարժումները ժամանակ առ ժամանակ անդակաս էին, ինչպէս կրկնեցինք քանիցս: Մէկ բան, սակայն, պարզ է. այդ ալ այն էր որ գասակարգերը իրարմէ բաժնուած էին ոչ միայն տիրողի եւ տիրուողի, շահագործողի եւ շահագործուողի հանդամանքով, այլեւ տեսանելի գոյներու նախասիրութեամբ: Անոնք որ աշխատանքի կապուած չէին, անոնց նախասիրած գոյնը ճերմակ էր եւ կամ կապոյտ, իսկ աշխատաւորներու նախասիրած գոյնը կարմիր էր: Ուրեմն բոլոր աշխատաւորները եթէ պաշարի ճակատին վրայ միասնական շրջ-թայով կապուած չէին, բոլորն ալ կեցած էին կարմիր գոյնով գըծին վրայ:

Ճերմակը երկնային գիցարանութեան մէջ նկատուած էր

խորհրդանշան ազգակցութեան: Ազնուական բնասնիքներն ու կրօնաւորները կը զործածէին ճերմակ գոյնը: Յաճախ երկնակապոյտը կ'ընկերանար զուտ ճերմակին: Ազնուականներու եւ կրօնապետներու որդեկրած այս սոյնութեան հետեւողութեամբ կրնանք ըսել թէ անոնք կ'ընդունէին որ հրեշտակներու վերարկուները ճերմակ ըլլալու էին. ատոր համար ճերմակ գոյնը սուրբ գոյն էր: Ամէն ժողովուրդ, հին ըլլայ թէ նոր, ունենալով սրտմութիւն մը եւ հողեւորականութիւն մը, զուգակից համարուեստներու հետ ճերմակ գոյնը համարած է որպէս սուերապրութիւն սրբութեան, մաքրութեան եւ ազնուականութեան: Ճերմակը գոյն մըն էր որ կը յարմարէր աւելորդապաշտութեան եւ սեփականատիրութեան խորհուրդին. ատոր համար ազնուականները որոնք չէին գործեր ու կ'ապրէին աշխատաւորներու քրտինքով, կը հագնէին ճերմակ եւ կը բազմէին ճերմակ գահի վրայ: Յետերու մէջ, ծուխի ու կեղտի մէջ կորսուած ու սեցած աշխատաւորները ճերմակ հագուստ չէին կրնար հագնել. դա անվայել էր: Ասկէ յառաջացաւ խոր արհամարհանքը հանդէպ աշխատաւորութեան:

Պղատոն իր գաղափարները բնօրինակեց կոսպաշտական կրօնէն եւ դժբախտաբար քրիստոնէութիւնն ալ հետեւեցաւ անոր նոր-պղատոնական գծով. ըսել կ'ուզենք թէ շարունակուեցաւ այն սնտիրապաշտական հաւատքը որ կ'ընդունէր թէ հրեշտակները ճերմակ կը հագնին, անոնց թեւերը ճերմակ են. ճերմակ են նաեւ անոնց դրօշակները: Հստակ գերիները, սեւ աշխատաւորները: Անոնց բազմութիւնը ճերմակին չէր կրնար կապուել, կ'երթար կարմիրին, որովհետեւ անոնք կ'աշխատէին առանց հողի, առանց ազատութեան ու պատիւի, առանց տիրողի ու վարձատրութեան: Անանց պարտականութիւնն էր գիտնալ որ ճերմակը հրեշտակներուն տրուած էր եւ իրենք հրեշտակներ չէին, իրենց պարտքն էր ճերմակը պահել մաքուր եւ անարատ, այսինքն իշխողը պահել իրենց դըլխուն վերեւ յարգամեծար եւ անմատչելի:

Երբ ազնուականներու նախասիրած գոյնը ճերմակն էր, շատ բնական էր որ անոնց պետութեան դրօշակին գոյնն ալ պիտի ըլլար ճերմակ: Ճերմակ էր հին արխտոկրատիայի ու վինուրականութեան դրօշակին գոյնը թէ յոյներու եւ թէ հոովմէացիներու մօտ: Այս մասին կը վկայէ Փոլիպիոս, երբ կը խօսի գերիներու ապստամբութեանց շուրջ: Ան կ'ըսէ թէ գերիները ապստամբութեան առեւն կը պարզէին կարմիր դրօշակ:

Որքան առեւն որ վինուրական շրջանակները կը մնային անջատուած ու բարձր ստորին գասակարգէն, անոնց դրօշակը ճերմ-



մակ էր կամ երկնագոյն, բայց երբ գործաւորները զինուորական ու քաղաքական դիրքի հասան, անոնք ալ իրենց դրօշակին տուին կարմիր գոյն: Գործաւոր դասակարգը կարմիր գոյնը կը նկատէր սրպէս նուիրական գոյն, որ քաջութիւն կը ներշնչէր կռուողներուն: Կոմունաներու դրօշակը կարմիր էր եւ ան այնքան նուիրական էր անոնց համար, որ ապստամբութեան տուն երբ անոնք զայն կը տեսնէին թշնամի բանակին մէջ, անդերազանցելի յանդուութեամբ մահը արհամարհելով յառաջ կը նետուէին այդ դրօշակը թշնամիին ձեռքէն ազատելու համար: Հաստատուած է որ շատ մը պարագաներու տակ հռովմէացի գորավարները երբ կը տեսնէին թէ պաշարւած ապստամբները դուրս չեն դար եւ անձնատուր չեն ըլլար, կարմիր դրօշակ մը ցոյց կուտային անոնց, որմէ յետոյ անոնք յուսահատ կատաղութեամբ դուրս կը նետուէին բարբարոսներու ձեռքէն իրենց նուիրական դրօշակը խլելու համար, հոգ չէր թէ իրենք դուր տեղը կը զոհուէին եւ թշնամին կը տանէր յազթանակը:

Ընթերցողը պուցէ հետաքրքրուի գիտնալու թէ ի՞նչ էր այս նուիրման հիմնական պատճառը. ի՞նչ կար ծածկուած կարմիր դրօշակին նուիրուած այդ հրամայական թելադրանքին տակ: Մենք այժմ պիտի աշխատինք լուսարանել այս կէտը որ բացառապէս պըրուտարական խարխիս ունի, որովհետեւ մինչեւ այսօր ալ բանուորական յեղափոխութեան գրօշակը կարմիր գրօշակն է:

Յունական երկնային զիցարանութեան մէջ երկու մեծ աստուածներ կը նախագահէին աշխատաւորութեան գլխին. Միներվա եւ Կերէս: Առաջինը որ կը պահպանէր ձեռական աշխատաւորները, ըլլան անոնք այդ թէ կին, երկրորդը՝ որ աստուածուհին էր երկրագործութեան եւ պաղատութեան, կը պաշտօնանէր հողի աշխատաւորները: Այս երկու աստուածութեանց նկարները կարմիր էին:

Հռովմէացիներու Բագոսն ու Դիոնեսիոսը նոյն փոխուած աստուածութիւններն էին, միայն այդ մարդու կերպարանքով, եւ անոնք անցեր էին Կերէսի եւ Աթենասի տեղը: Ապոլոնն ալ որ արեւը ներկայացնող աստուածն էր, գործի մէջ դաշնակից էր այդ աստուածութեանց: Ասկէ ծնած է արեւու պաշտամունքը: Արեւն էր որ բոյսերը կ'աճեցնէր, երկրին տաքութիւն կուտար, պտուղները կը հասունցնէր: Արեւուն շնորհիւ էր որ մարդիկ կեանքը կը վաշելէին եւ իրենց երակներուն մէջ կը հոսէր կարմիր արիւնը: Դիոնեսիոսը յունարէն խօսող աշխարհին աստուածը եղաւ, իսկ Բագոսը լատիներէն խօսող աշխարհին աստուածը եղաւ: Բայց աղնուականներն ու կրօնաւորները տարրեր կը տրամաբանէին. ա-

նոնք կը մտածէին թէ արեւն էր որ կը հասցնէր բամպակը որ ճերմակ է, շուշանը որ ճերմակ ու սիրուն ծաղիկ էր, ուրեմն իրենց սիրած գոյնը, ճերմակը, բացառիկ գոյն էր որ արեւը տուած էր ընտրանիներուն: Հետեւաբար անոնք ընտրեցին ճերմակ գոյնը որպէս սրբութեան ու անարատութեան խորհրդանշան, մինչ աշխատաւորները ընտրեցին կարմիր գոյնը որպէս կեանքի հորհրդանշան: Կերէս աստուածուհին հողածութեամբ էր որ կ'արտադրուէր ցորենը որ կը ճանչցուէր որպէս ուժի ազդիւր, որովհետեւ անով էր որ կարմիր արիւնը կը պատրաստուէր: Քրիստոնեաներու «Խաչք մեր»ը հային նուիրուած աղօթքն է: Ասկէ զիւրին է հետեւցնել թէ ինչու գործաւորական հին կազմակերպութիւնները կարմիրը ընտրած էին իրենց նուիրական գոյնը եւ խաղաղ ու օրինական շքերթներու տուն կը պարզէին կարմիր գրօշակ, Յունաստանի, Պաղեստինի, Փոքր Ասիոյ եւ զանազան կղզիներու մէջ եւ Իտալիոյ բոլոր մեծ ու փոքր քաղաքներուն մէջ: Կարկեզոնի եւ Աթրիկէի հիւսիսային կողմի երկիրներուն մէջ, ուր որ գործաւորական կազմակերպութիւններ գոյութիւն ունէին, բոլորն ալ նոյն ձևով, նոյն հատաքի ըմբռնումով կապուած էին կարմիր գոյնին:

Միւս զօրաւոր ու բնական պատճառը որուն համար աշխատաւորները հաւանաբար նախընտրած էին կարմիրը, անոր գեղեցկութիւնն էր: Կարմիր գոյնը ամէնէն աւելի մարդու տեսողութիւնը հրապուրող գոյներու շարքին առաջին գոյնն է: Անկէ յետոյ կուգան նարնջագոյնը, դեղինը, կապոյտը եւ մանիչակագոյնը: ձերմակը գոյն չէ: Ասոնց բոլորին մէջ կարմիրն է որ աջքի կը զարնէ իր գեղեցկութեամբ եւ հրապոյրով:

Շատեր իրաւամբ կը կարծեն որ Կերէսը Միացեալ Նահանգաց պաշտպան եւ խնամակալ աստուածուհին նկատուած է սկիզբէն ի վեր: Ամերիկեան գրօշակը գիտականօրէն վերլուծելով կը տեսնենք թէ կարմիր երիզները հին դարերուն աշխատաւորութեան կողմէ կարմիր գոյնին տրուած նախապատուութեան պատմական իմաստի շարունակութիւնը կը ներկայացնեն: Հոգ չէ թէ Ամերիկայի ներկայ կառավարութիւնը իաշակիրութիւն մը սկսած է կարմիրներու գէմ, դա հինաւուրց հաւատքի այլատեսութեան է որ յառաջացած է կապիտալիստական սիսակէմի ծնած նկատութիւններէն: Եթէ ամերիկեան հանրապետութիւնը՝ ունէ աստուածութիւն մը ունի, անիկա Կերէսն է, ֆարմըրներու խնամակալուհին, եւ Միներվան՝ մեքենայէտներու եւ զիւտարարներու պահապանը: Ամերիկեան գրօշակին վրայի կարմիր երիզները կը ներկայացնեն այն հարուածները զորս աշխատաւորութիւնը անգլիական տիրապետու-



թեան ճնշումէն ազատելու համար մղած սրայքարումներու ընթացքին ստացեր է իր քամակին վրայ ազնուական դասակարգին ձեռքով: Յեղափոխութեան թափած արեան խորհրդանիշն են այդ կարմիր երիզները. տարբեր բան է թէ այժմու Ամերիկայի տիրող դասակարգը հակայեղափոխութեան ճամբան է բռնե՞ր:

Այժմ անցնինք հակիրճ պատմութիւնը ընել կարմիր նշանակին, զոր հարուստն ու ուժեղը որպէս կռիւի գրամագլուխ գործածեր են հնուց ի վեր աշխատաւոր զանգուածներու դէմ, որոնք նախապատմական դարերէն սկսեալ այդ գոյնը ընտրած են հետեւելով իրենց պաշտած աստուածութիւններուն, Կերէսին, Միներվային, Սատուրնոսին եւ դուցէ Ապոլոնին:

Նախ եւ առջ անհրաժեշտ է վերլուծել ֆլէկ բառը: Ֆլէկ-ի հայերէնը գրօշակ է, բայց ֆլէկ-ը անգլերէն բառ չէ, անգլերէն անուն չէ. լատին բառարանը մեզի կը պարզէ որ ֆլէկի արմատը ֆլեմմա բառն է: Հնագէտ Անդրէաս, օրինակի համար, ֆլեմմա անունը կը սահմանէ հետեւեալ կերպով. «Լուկրիատոս ֆլեմմա անունը գործածեր է արական — Էդակիի իմաստով. ան եղած է ֆլէկմա իզականի իմաստով: Ասոր յունարէնը՝ ֆլիեկո, որ կը նշանակէ այրող կրակ, փայլող բոց:

Ասիկա հին բառ մըն է որ իրական ծագումը առած է արեւուն կարմիր ճառագայթներէն, այն արեւուն զոր մարդիկ նախնական դարերուն իրենց պաշտամունքի առարկան էին գարձուցեր: Տարակոյս չկայ որ ամենահին, կանխագոյն շրջանին երբ մարդիկ գրօշակ մը գործածեր են, այդ սկզբնական բնատիպ ֆլէկը (գրօշակը) եղած է կարմիր: Վերջէն է որ երբ պատերազմներ եկան գերետիրութեան սխալմը հաստատել, իշխող դասակարգը գերիններէն անջատուելու համար հրեշտակներու թեւերուն գոյնը, ճերմակը ընտրեց եւ կարմիրը թողուց գերիններուն: Իսկ գերինները զաղտնի միութիւններ կազմեցին եւ պայքարումներու ընթացքին գործածեցին իրենց պաշտած աստուածները խորհրդանշող կարմիր գրօշակը: Ասով կարմիր գրօշակ գործածող կազմակերպութիւնները ոճրածին ու դաւադրական կազմակերպութիւններ նկատուեցան: Տիրող ազնուականութիւնը իր թշնամի դասակարգի կարմիր ֆլէկին հակադրեց տանջանքի ու մահապատիժի գործիք խարազանը, խարազանումը (ֆլէկիտիում կամ ֆլէկրում): Եւ այդ խարազանը կարմիր արիւն կը հոսեցնէր մերկացած գերիններու կոճակէն:

Այժմ նորէն անդրադառնանք գործող մարդոց եւ անոնց դրօշակին: Առաջին անգամ նկատի առնելու ենք որ նախնական մարդուն միտքը ամէնէն աւելի սիրահար եղած է բոցալաւ գոյներու

եւ կարմիր գոյնը եղած է գոյներուն մէջ ամէնէն զրաւիշն ու զեղեցիկը: Մէկը կրնայ դուցէ իր երեւակայութեան թռիչք տալ եւ այս իրողութիւնը կապել պաշտպան աստուածութեանց սրղեղբումին, որովհետեւ ան շատ բնականօրէն պիտի տարուի մտածելու թէ նախնական մարդը իր նախասիրած գոյնով պիտի հագուեցնէր իր սիրած աստուածը, ներդաշնակութիւն պահպանելու համար: Եւ զա՞ ճիշդ է, այս, նախնական մարդը կ'երեւակայէր թէ իր պաշտած աստուածը հագած է կարմիր եւ իր փառքին մէջ ստեղծեր է արեւը, որուն լոյսն ու տաքութիւնը կեանք պարգեւած են երկրի շնչաւորներուն հետ նաեւ մարդոց:

Հուշակաւոր կարմիր պատմութեանն ու կարմիր շապիկը երկար ատեն հանդիսութեանց ատեն կը գործածուէին որպէս պաշտօնական հագուստ: Պարող աղջիկներն ու սրնդահարները Աթէնքի ինճոյքներուն մէջ կ'երեւնային կարմիր հագած: Գիտնական խրեճոյքներուն գործաւորական միութեանց (Թէաաոյի) կոմունիստներն ալ նոյնպէս կարմիր կը հագնէին: Այս իրողութեան մասին կը վկայեն թերթաքարերու վրայի արձանագրութիւնները:

Հոովմի մէջ կարմիր գրօշակի նուիրուած սէրը որ տարածւած էր օսմիկներու միջեւ, յաճախ ծառայած է հարուստներու շահուն: Հոովմէական թագաւորներու տապալումէն յետոյ (510 Ն.Ք.) երկու պաշտօնականներ, թագաւորներէն ոչ այնքան նուազ իշխանութեամբ, անցան պետութեան զլուխը: Ասոնք էին հիւպատոսները: Գործաւոր տարբերը իրենց արհեստակցական միութիւններով երբ ուժեղացան, անոնք սկսան ասպատակութիւն փորձել հիւպատոսներու հեղինակութեան վրայ: Այս կռիւին մէջ մտած էր կարմիր գրօշակը: Գահագուրի թագաւորները անցան միութեանց կողմը, մինչ հիւպատոսները տեսնելով յառաջացող վտանգը ամէն կերպով աշխատեցան ճզմել գործաւորական միութիւնները: Ասով կերպով աշխատեցան ճզմել գործաւորական միութիւնները: Ասով ստակութեան հասաւ 375-370 տարիներուն (Ն.Ք.): Ամբողջ հինգ տարի պետութեան սանձը ոչ ազնուականներու ձեռքն էր, ոչ ալ ժողովուրդին: Հիւպատոսները կարմիր գրօշակը որդեկրելով ժողովուրդը խարեցին ու ասով յաղթանակը տարին: Բայց այդ գրօշակը երկար կեանք չունեցաւ. արիստոկրատները մահացու թշնամի էին գործաւորներուն ու ստրուկներուն:

Հիւպատոսներէն յետոյ կուգային զինուորական դասուն մէջ աստեղակալներն ու թիկնապահները, որոնք կապոյտ կամ երկնա-կապոյտ վերարկու կը հագնէին որ խորհրդանշան էր մահուան ու զիշերին: Իրենց կրած այդ վերարկուին տակ անոնք կը մարմնաց-



նէին կատարի եւ անդուժ զինուորականութեան բնութագրերը: Ձին-  
 ւորական մարզանքի տակն անոնք մէկ ձեռքով կը բռնէին խարա-  
 զանը, միւսով՝ տապարը, երկուքն ալ կարմիր ներկուած: Ասով  
 անոնք կը ցուցնէին որ պետութեան զէմ գործողը պիտի պատժուէր  
 խարազանով եւ անոր գլուխը պիտի կտրուէր տապարով: Բայց երբ  
 խաղաղութիւն կը տիրէր եւ զինուորական մեծերը Հոռով մէջ կը  
 մնային, անոնք եւ իրենց թիկնապահները կը կրէին բողոն որ ծի-  
 րանադոյն եղերքով պատմուծան էր (թիկնապահները հասարակ  
 զինուորներ չէին. անոնք ալ բարձր դասուն կը պատկանէին):

Այսպէս, ուրեմն, ընկերարանօրէն խօսելով, զոյնը կը բաժ-  
 նէր ազնուականները ռամիկներէն, ինչպէս նաեւ պատերազմը խա-  
 ղազուիներէն: Պատերազմի տակն զրօշակը ճերմակ եւ կապոյտ երեզ-  
 ներով էր, մինչ խաղաղութեան շրջանին կ'ըլլար կարմիր: Պատե-  
 րազմը ազնուական դասակարգին կը պատկանէր, խաղաղութիւնը՝  
 աշխատաւորութեան:

Թէ ինչո՞ւ խաղաղութեան տակն զրօշակը կարմիրի կը փոխ-  
 ւէր. ասոր գլխաւոր պատճառը Պոմոնա աստուածուհիին նուիրուած  
 պաշտամունքն էր: Նա պտղատու ծառերու եւ պարտէզներու աստ-  
 ւածուհին էր, որու խորհրդանիշը բոցալատ կարմիրն էր: Խոր ան-  
 տառներուն մէջ նա կը պաշտուէր պարիկներէն:

Փաստուած է որ Պոմոնա աստուածուհին ամենահին ժա-  
 մանակներէ ի վեր ներկայացուած է բոցալատ կարմիր գոյնով,  
 գործաւորները անոր զրօշակը բրած էին կարմիր, իսկ Պոմոնայի  
 քուրմը կամ քրմուհին պէտք է կրէին կարմիր պատմուծան, կար-  
 միրը դզակ եւ պէտք չէր կապ ունենային պատերազմի հետ: Անոնք  
 խաղաղութեան ներկայացուցիչներն էին եւ նոյնիսկ անոնց արդիւ-  
 ւած էր իրենց գլուխը վերցնել եւ նայել պատերազմի դաջող զին-  
 ւորներուն. դա աստուածուհիին զէմ գործուած ամէնէն սարսա-  
 փելի մեղանշումն էր:

Այն կրօնաւորը որ այս աստուածութեան կը ծառայէր, կը  
 կոչուէր ֆլէյմէն պոմոնալիս: Անոր թոյլատրուած էր կրն մը ու-  
 նենալ, բայց անիկա անոր սպահարդան չէր կրնար տալ, որովհե-  
 տեւ այդ բանը կոխիլ, հակառակութեան դուռ կը բանար: Անոր  
 կրնն ալ իր ամուսնոյն պէս կը կրէր կարմիր հիմատիոն:

Այստեղ պէտք է յիշատակել նոյնպէս եղիպտացիներու նուի-  
 րական բոցահաւի պաշտամունքը: Եգիպտացիները կը պաշտէին  
 բոցահաւը որ կարմիր թեւեր ունէր: Հին դարու ժողովուրդներու  
 երեւակայութիւնը կարմիր գոյնին մէջ կեդրոնացուցեր էր սէր, ե-  
 ոանդ, տաքութիւն եւ կեանք, բոլորը փոխ առնուած արեւու ճա-

ռազայթներէն: Եւ որովհետեւ աշխատաւորներն էին որ իրարու  
 հետ սիրով կապուած եռանդով կը գործէին, գործելու պահուն կը  
 տաքնային, կը քրտնէին եւ կ'արտազրէին այն բոլոր բաները ինչ  
 որ պէտք էր մարդուս կեանքին համար իրենց պաշտած աստուա-  
 ծուհիին հողածութեամբ, ուրեմն իրենց զրօշակն ալ ըլլալու էր  
 կարմիր:

Մարդիկ կան, սակայն, որ կը տարակուսին մեր պարզած  
 այս ճամբարութեան եւ մէջ կը բերեն այն փաստը թէ հին տակն  
 ազնուականներու համար հասարակ բան էր կայսերական ծիրանին  
 գործածելը եւ անոնք նոյնիսկ օրէնքով արդիււած էին որ ռամիկ-  
 ները այդ գոյնը գործածէին ուէէ տոբիթով:

Շատ զիրիւն է հերքել այս փաստարկութիւնը: Կանխադոյն  
 դարերուն, ժողովրդականացած կոմունական պաշտամունքի հետե-  
 ւանքով տուրեան կարմիրն ու ծիրանին մանիֆակտուրայի եւ առու-  
 տուրի գլխաւոր նիւթն էր որ յառաջ կը տարուէր: Անոնց արտադ-  
 րութեան եւ առուտուրին լծուած էին բազմաթիւ մարդիկ, բայց  
 երբ պրոլետարները կռուաւոր դիրքի տիրացան եւ Հոռով սկսաւ իր  
 յաղթական արշաւանքները, ջարդարարութեամբ, աւարտութեամբ  
 ու զերեվարութեամբ այդ ներկերու արտադրութեամբ ու առու-  
 տուրով զբաղող միլիոնաւոր մարդիկ ճզմեց ու գերի վարձուց, տեռ-  
 նելով որ իր քթին տակ «լստանդաւոր դասակարգը» հետզհետէ կը  
 զօրանայ, օրէնք անցուց որ ազնուականներէն բացի ուրիշ ոչ ոք  
 կարմիր չի կրնար գործածել: Բայց ինչ ըսել որ Փիւնիկէի գոր-  
 ծաւորները, որոնք կարմիր ներկ կ'արտազրէին ու այդ առուտու-  
 րով կը զբաղէին, բոնութեան ու ճնշման տակ կորսնցուցին իրենց  
 պիզնէսը, որով հետզհետէ կորսուեցաւ նաեւ այդ զբաւիչ գոյնին  
 դազանիքը: Ազնուականները, որոնք ամբարտաւան դարձեր էին ի-  
 րենց պետութեան յաղթանակներէն, իրենց համար նոր աստուած-  
 ներ բնարեցին եւ անոնց հետեւողութեամբ բնարեցին նոր գոյներ,  
 ճերմակը, կապոյտը եւ երկնագոյնը: Բայց հրապարակուած օրէն-  
 քը մնաց ի գորու. կարմիրը արդիււած էր ռամիկներու համար:  
 Ահա թէ ինչու գործաւորները հաւատարիմ մնացին իրենց հին ուխ-  
 տին, հին աստուածութեանց եւ ապստամբութեան պահուն գործա-  
 ծել սկսան կարմիր զրօշակը:

Այս երեւոյթը մենք կը տեսնենք նաեւ քրիստոնեաներուն  
 մէջ. առաջին անգամ երբ անոնք հաստատուեցան կոմունաներու  
 մէջ, որդեգրեցին կարմիրը, բայց անմիջապէս երբ բարձր դասու-  
 կրօնաւորներ երեւան եկան, ազնուականներու ճերմակը դարձաւ  
 փայլեցաւ: Այսու մենք կը գտնենք ճերմակ ստուգատիպը Հոռովի



մէջ, մինչ կարմիր դրօշակը մնաց Ավերնի, Փարիզի և Լոնտոնի մէջ:

Երեւոյթը ամէն տեղ նոյնն է. հին դարերուն որդեգրուած կարմիր դոյնը սամիկ դասակարգերուն խորհրդանիշը եղած է և այդ շարունակուած է յաջորդող դարերուն, ամէն տեղ: Արդիւնաբերութեան աստուածութիւնները փոխուած են, զանազան անուններ առած են, բայց կարմիրի խորհրդապաշտութիւնը մնացեր է նոյնը: Մեր հետադասութիւնները շարունակելով կը տեսնենք նոյն իրականութիւնը անգլիացիներու մօտ, ինչպէս նաև Փրանսացիներու մօտ, որոնք սերած են հին կոլցիներէն: Ասոր պատճառը այն է որ արհեստակցական միութեանց սիստէմը ինչ որ էր հոսովմէացիներու մէջ, տարածուեցաւ Անգլիոյ մէջ և այդ այն առիտ երբ ան արդէն ժողովրդականացած էր Կոլի մէջ, և երբ բանուորական միութիւնները կարմիր դրօշակ կը գործածէին Հոսովմի մէջ, նոյն սովորութիւնը անմիջապէս մուտք գտաւ Բրիտանիոյ և Կոլի մէջ:

Սուստոնի կօշիկարներու միութիւնը առաջինը եղած է որ հաստատուած է Ֆրանսայի հիւսիսային մասին մէջ: Դիտկեալաբանութեան կայսեր օրով (245-313) բազմաթիւ քրիստոնեաներու հետ այս միութիւնն ալ որ վեր բռնած էր կարմիր դրօշակը, աուաւ շատ մը գոհեր: Ինչպէս Բուլիէ մեզի կը հաւատէ, այդ շրջանին, Օվերնի և այլ դաւառներու մէջ շատ մը արհեստակցական կազմակերպութիւններ կը գործածէին կարմիր դրօշակներ և այդ սովորութիւնը շարունակուեցաւ միջին դարերուն մինչև որ անոնք վերջնականապէս ճզմուեցան 1789 թուականին:

Կօշիկարներու այս միութիւնը որ շարունակուեցաւ մինչև ԺԸ դարը, մշտապէս պահեց իր կազմութեան թուականի (280 Յ.Ք.) նկարագիրն ու ձևը: Անիկա հիմնուեցաւ Սենթ Քրիստօլին երկու եղբայրներու ջանքերով: Կը պատմուի թէ այս երկու քրիստոնեայ կրօնականները կաշի և հում նիւթեր կը գողնային աղքատներուն կօշիկները շինելու համար: Այդ միութիւնը անոնց անունով կոչուեցաւ քրիստիաններու միութիւն: Հսկածները 25-ի օրը անոնց տօնական խնամքի տօնն էր, երբ հանդիսութեան համար շքերթներ կը կազմէին կարմիր դրօշակներով: Բուլիէ կ'ըսէ որ այս միութեան հետ կապուած էին ձեռնոց շինողները, խաղախորդները, մուշտակագործները և հնակարկառները և ան կը նկարագրէ անոնց դրօշակը: «Այդ դրօշակը», կ'ըսէ ան, «կարմիր է, ճիշդ արևան գոյնը, եզրերը սոկեգոյն, իսկ ճիշդ մէջտեղը կախուած է աղւէսի մօրթի կտոր մը, զեղեցիկ ծոպերով»:

Ուրիշ հին քաղաք մը, Նեմեսում, որ կանխապէս քրիստոնեաներու կեդրոնատեղին եղած է, այս քաղաքին կօշիկարներու

միութեան դրօշակը մի քիչ տարբեր էր: Ասոնց դրօշակն ալ բոցավառ կարմիր էր, բացի այն որ կեդրոնը դրուած էր կոյս Մարիամի պատկերը. նա հազած էր արծաթագոյն զգեստ և իր բազուկներով զրկած էր մերկ մանուկը: Այդ դրօշակը կը ներկայացնէր խաղաղասէր կօշիկարները, զգիշները, հիւսուցիչներն և ուրիշ միութիւնները:

Որ կարմիր դրօշակը համաշխարհային հանդամանքով խորհրդանշանը եղած է խաղաղասէր աշխատաւորութեան, որ հարկազրիչ պայմաններու տակ կոտուած է իր իրաւունքներուն համար, այս իրողութիւնը կը փաստուի երբ մանրամասնօրէն ուսումնասիրենք հին և ներկայիս գոյութիւն ունեցող աղքերու տեսակական կեանքի պատմութիւնը: Բայց այս բանը բլլալով մի առանձին ուսումնասիրութեան նիւթ, ընթերցողին կը յանձնարարենք մեր երկասիրութիւնը, Հին Արիեստակցական Միութեանց Պատմութիւնը:

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Մենք շատ սեղմ շրջանակի մէջ պատկերացուցինք նախաքրիստոնէական շրջանի գործաւորական միութիւններու և անոնց գլխաւոր առաջնորդներու կեցութիւնն ու գործունէութիւնը 58 թուականին (Ն.Ք.). անոնք հոսովմէական կայսրութեան ճիրաններուն մէջ չբացան: Չբացան. երեւութապէս այդ, իրապէս՝ ոչ: Անկէ յետոյ եկաւ նոր կրօնքը, քրիստոնէութիւնը: Եւ ահա սկսաւ նոր դարաշրջան մը, նոր տեսակի պայքարումներու դարաշրջանը, որ անհամար գոհեր տալէ վերջ, ապահովեց յաղթանակ մը որ տեսական եղաւ: Այժմ մենք մի քիչ պիտի ծանրանանք այդ դարաշրջանին կատարուած զէպքերուն շուրջ: Ասոր համար այստեղ կը յատկացնենք մի առանձին բաժին՝ առաքելական շրջան խորագրով. անկէ յետոյ կը բանանք մեր ուսումնասիրութեան չորրորդ մասը, միջին դարու դասակարգային կռիւներու պատմութիւնը:

Մարդ էակը այս երկրագունդի վրայ գուցէ քսան միլիոն դարերէ ի վեր է որ գոյութիւն առած ու սպրած է, անցած է տասնեակ հազարաւոր դարաշրջաններէ և այդ դարաշրջաններուն ան ուրիշ բան բրած չէ այլ միայն մղած է գոյութեան կռիւը. գոյութեան կռիւ նախ վայրի կենդանիներուն դէմ, առով զարգացնելով ինքնապաշտպանութեան զէնքերը, ապա բնութեան դէմ, առով զարգացնելով իր բնակարանը և անունդի միջոցառումները, և ամէնէնէն վերջ մարդը կռիւ մղած է իր նմանի դէմ, և ստով յառաջա-



ցեր են դասակարգային կռիւները որոնցմով կազմուած է մարդկային պատմութիւնը :

Մեզի ծանօթ դարաշրջաններուն, գործարկումը բնութեան այն օրէնքին որուն թարգմանը եղաւ Տարվին, յարմարագոյնին վերապրումի օրէնքն է : Ուժեղը եղաւ յարմարագոյնը եւ ուժեղը ապրեցաւ : Տարվինի օրէնքին այս ձեւի թարգմանութիւն տուողները չեն անդրադառնար այն իրողութեան որ իրենք կ'իյնան հակասութեան մէջ : Գերետիրական դարաշրջանին զերին էր ամէնէն տրկարը, ամէնէն անդօրը, բայց զերիները փոխանակ ամբողջապէս անհետանալու, ընդհակառակը աւելի բազմացան եւ անոնց սերունդը միլիոններով տակաւին կ'ապրի : Եթէ Տարվինի տեսութիւնը կը թարգմանուի ուժեղներու վերապրումի հանգամանքով, այդտեղ կը շեշտուի հակասութիւն մը . իսկ երբ ան կը թարգմանուի միջավայրի տիրող պայմաններու համակերպողներու վերապրումի հասկացողութեամբ, այն ատեն հակասութիւնը ինքնին կը վերնայ : Եւ մենք կը կարծենք թէ վերջին տեսակի թարգմանութիւնը ճիշդ է : Ամէն մի դարաշրջան, թէեւ ըստ երեւոյթի ուժեղ անհատներու վերապրումի միջոցով յաջորդած է նախորդող հնացած դարաշրջանին, բայց ի մասի ունենալու է որ իրապէս նոր դարաշրջանը այդ տկար ու անդօր կարծուած մասաներու ուժով է որ յառաջացեր է : Յեղափոխական կոչեցէք այդ փոխանցման շրջանները կամ մի ուրիշ անուն տուէք եթէ կ'ուզէք, իրողութիւնը կը մնայ նոյնը, այսինքն այն որ իրարու յաջորդող այդ դարաշրջանները պահած են նոյն մրցակցական սխառմի նախատիպ տարրերը փոխակերպուած ձեւերով : Այսօր նոյն տարրերն են որ իրենց դոյութիւնը պահած են քաղաքական ու ընկերային հիմնարկութեանց մէջ :

Ժողովրդական այն դանդուածները որոնք տարուած են միմիայն ստամոքսի մտահոգութեամբ եւ նկատուած են արհամարհելի արարածներ, անոնք են եղած որ կերտած են մարդկային հասարակութեան պատմութիւնը իրենց արինալի մարանչումներով :

Յեղափոխութեանց ու անոնց յաջորդող շրջաններուն, միշտ մարդիկ երեւան եկած են որոնք օրէնքներ դրած են հասարակութիւնը կառավարելու համար, համեմատաբար նախորդող շրջանի անգութ ու կոշտ մրցակցական ձեւերը թեթեցնող օրէնքներ : Այսպէս, ուրեմն, կրնանք ըսել թէ յիշատակութեանց շրջանին դոյութիւն ունեցեր են երեք անջատ ընկերային օրէնսդրութիւններ, մըրցակցական, մովսիսական եւ սոցոնական :

Սոցոն գործաւորներուն սուաւ մի տեսակ առանձնաշնորհում, զոր երբեք չէին ունեցեր : Անոնք, արդէն նախապէս կազմա-

կերպուած, բացին դարաշրջան մը որ կը շարունակուի մինչեւ մեր օրերը : Այսօրուայ բանուորական միութիւնները շարունակութիւններն են հին դարերու գործաւորական միութեանց : Հետախուզուած արձանագրութիւնները այս առթիւ բաւական տեղեկութիւն կուտան մեզի, որոնց շնորհիւ մենք կարող եղած ենք դիտնալ որ Փոքր Ասիոյ հրեաները մովսիսական օրէնքներէն հեռացեր, նուիրուեր էին Սոցոնի օրէնքներուն : Ասիկա ուշադրաւ կէտ մըն է :

Հրեաներուն մէջ երկու դասակարգեր կային, կարելի է ըսել երկու ցեղեր, որոնց մասին պատմութիւնը շատ քիչ գրադած է . մէկ ցեղը որ հետեւած է մովսիսականութեան, միւսը որ հետեւած է Սոցոնի օրէնքներուն : Վերջինը եղած է գործաւոր դասակարգը : Անոնք հաստատուած են Փոքր Ասիոյ մէջ, հիմնած են արհեստակցական միութիւններ . գործունեայ եւ ճարտարագէտ մարդիկ, որոնք սորված են յունարէն եւ ասորերէն լեզուները եւ բարեկամացեր են հելլենական յոյներուն : Անոնք հեռու կեցեր են կռիւներէ եւ խաղաղութեան շրջանին շատ դիւրութեամբ ընդօրինակեր են միհրական այն ձեւերն ու խորհրդաւորութիւնները որոնցմով տարուած բազմաստուածեան կրօնի զանազան ճիւղերը յետագայ դարերուն քրիստոնէութեան աստղծները կազմեցին : Հալածանքներու հետեւանքով անոնք չէքացան, ընդհակառակը աւելի խոր արմատ կապեցին :

Քրիստոսի ժամանակ երկրի վրայ գոյութիւն ունէին այս միութիւնները . քրիստոնէական կրօնի երեւումով երբ հալածանքները աւելի սաստկացան, անոնք ընդհատակեայ կազմակերպութիւններ դարձան . միայն թաղման գործով պարապող միութիւնը մնաց ազատ ու օրինական :

Տի Րոզի որ իր ամբողջ կեանքը նուիրած է Հոովմի գաղտնի կազմակերպութեանց գործունէութիւնը ուսումնասիրելու գործին, կ'ըսէ որ կանխագոյն քրիստոնէաները մեծ մասով զերիներ կամ ազատագրուած զերիներ էին եւ անոնք բազմաթիւ էին Հոովմի մէջ Տիբերիոսի օրով, իսկ յետոյ նորէն բազմացան կալիկուլայի, Կլոտիոսի եւ Ներոնի դահակալութեանց ատենները : Տրայանոս կայսեր օրով, 99 թուականին (Յ.Ք.), հրատարակուեցաւ արգելիչ օրէնք մը որով քրիստոնէաները ճանչցուեցան որպէս մասակար, ատելի տարրեր իրենց կազմակերպութիւններով, որովհետեւ անոնք կուպարտ տաճարները չէին այցելել, անոնց զոհ չէին մատուցաներ, եւ ասով հոովմէական պետական դանձարանն էր որ կը տուժէր :

Այդ օրերուն Յովհաննէս Մկրտիչը որ Յիսուսի գալուստը



կ'աւետէր, անգամ էր սողունական կազմակերպութեան մը, որ հընուց դոյութիւն ունէր եւ կը կոչուէր եփիոնական միութիւն: Այս կազմակերպութիւնը բացառապէս կազմուած էր աղքատներէ, հացի համար գործող, ամենօրեայ ու սոցալարող շարքաչ գործաւորներէ: Ասոնց եղբայրական միութեան նպատակն էր փոխադարձ սէր, փոխադարձ օգնութիւն եւ հոգատարութիւն: Անոնք կ'ըսէին. «Ճարտարագէտին գործ կուտանք, անկարողին՝ խնամք, օտարականին՝ հիւրընկալութիւն, անօթիին՝ կերակուր, ծարաւին՝ խմելիք, մերկին՝ հագուստ, հիւանդին՝ այցելութիւն, բանտարկեալին՝ օգնութիւն: Բայց մեր միութեան անդամները երբ հիւանդ ու անկարող չեն գործելու են: Գործելը ամէնուն հրամայական պարտաւորութիւնն է: Մեր կազմակերպութեան անշեղ նշանաբանն է. ով որ կ'աշխատի, միայն նա իրաւունք ունի ուտելու»:

Այս կազմակերպութեան եւ միւս արհեստակցական միութեանց (ըրանսներու, քէստներու, կոլլեկիաներու), ինչպէս նաեւ հասէներու եւ նազարէներու նպատակները դրեթէ նոյնն էին: Այս բանը կը փաստեն Ֆելայի հետ նաեւ մինչեւ հիմա գրտնուած բոլոր արձանագրութիւնները Փոքր Ասիոյ, Պաղեստինի եւ Եգիպտոսի մէջ. եւ ահա այդ միութիւնները եղած են որ քրիստոնէական կրօնի հիմքերը դրին եւ յետոյ շարունակեցին իրենց ազդեցութիւնը այդ կրօնին վրայ: Քրիստոնէական կրօնի բնոյթը վերջերը փոխուեցաւ, երբ մէջտեղ եկան չորս աւետարանները որպէս վաւերական աւետարաններ. բայց մենք երբ նկատի առնենք անվաւեր աւետարանները, կը տեսնենք տարբերութիւնը նախնական քրիստոնէութեան եւ եփեսոսի ժողովին յաջորդող պաշտօնական քրիստոնէութեան միջեւ (\*):

Ստեփանոսի դրուագը նշանակելի գէպք մըն է քրիստոնէական կրօնի պատմութեան մէջ: Ստեփանոս մարտիրոսացաւ, ասոր համար նա կը կոչուի նախաձիւղ. մարտիրոսութիւն մը որ տեղի ունեցաւ Տիրերիոս կայսեր գահակալութեան փակման շրջանին, որմէ յետոյ հրապարակ իջաւ տարօրինակ կերպար մը որ քրիստոնէական կրօնի տեսարանը եղաւ: Այս մարդը Փոքր Ասիոյ մէկ քաղաքէն, Տարսոնէն էր, նախապէս կատարել հակառակորդ մը, թըշնամի նոր կրօնքին. ան էր որ որպէս դատապարտող ներկայ էր Ստեփանոսի նահատակման: Այս մարդն էր որ մէկ ծայրայեղութե-

(\*) Այս մասին որպէս լրացուցիչ տեղեկութիւն տես իմ «Համաշխարհային կրօնփոփոխութիւն Մատերիալիստական Հիմքերը», Ա. հատոր:

նէն անցաւ միւսին. քրիստոնէական Սաւուրը յանկարծ կ'ըլլայ քրիստոնէական կրօնի լաւագոյն վարդապետը, Պօղոս առաքեալը:

Սոյն պարմանալի կերպարանափոխութեան հրաշովէպը դըրուած է Գործք Առաքելոցի Թ. գլխուն մէջ հետեւեալ կերպով.

«Սօղոս սակաւին Տէրոջը աշակերաններուն գէժ սպանալիք ու մահ փշելով քահանայապետին քով գնաց, եւ անկէ թուղթեր ուղեց Դամասկոսի ժողովարանները տանելու, որպէսզի այն ճամբուն հետեւողները եթէ գանձու ըլլայ, այրեր կամ կիներ, կապած երուսաղէմ բերէ: Ու երբ կ'երթար ու Դամասկոսի մօտեցաւ, յանկարծ իր բոլորաբեր երկինքէն լոյս մը փայլատակեց. եւ ինք գետին իջնալով ձայն մը բռեց որ կ'ըսէր իրեն. Սաւուր, Սաւուր, ինչո՞ւ գիտ կը հալածես: Եւ անիկա ըսաւ. Ո՞վ ես գուն, Տէր. եւ Տէրը ըսաւ. Ես եմ Յիսուսը որ գուն կը հալածես, դժուար բան է քեզի խթանի գէժ կից դարնել: Ան ալ զոգով ու ապշութեամբ ըսաւ. Տէր, ի՞նչ կ'ուզես որ ընեմ: Եւ Տէրը ըսաւ անոր. Ելիք ու քաղաք մտիք, եւ քեզի պիտի գրուցուի ինչ որ պարտիս ընել. իսկ այն մարդիկը որոնք իրեն հետ կ'երթային, ապշած կեցեր էին, ձայնը միայն կը լսէին բայց մէկը չէին տեսներ: Եւ Սօղոս գետնէն ելաւ ու բաց աչքերով մէկը չէր տեսներ. ուստի անոր ձեռքէն բռնեցին ու Դամասկոս մտցուցին: Եւ երեք օր կեցաւ առանց տեսնելու, եւ ոչ կերաւ, ոչ ալ խմեց:

«Ու Անանիա անունով աշակերտ մը կար Դամասկոսի մէջ, եւ Տէրը անսիրի մէջ անոր ըսաւ. Անանիա, ան ալ ըսաւ. Տէր, ահա հոս եմ: Եւ Տէրը ըսաւ անոր. Ելիք ու գնա այն փողոցը որ Ուղի կ'ըսուի, եւ հոն Յուդայի տանը մէջ փնտռէ Սօղոս անունով տարտնացի մը, վասնզի ահա անիկա աղօթք կ'ընէ: Անանիա ալ պատասխան տուաւ. Տէր, շատերէ լսեցի այն մարդուն համար թէ որչափ շարիքներ ըրաւ քու սուրբերուդ Երուսաղէմի մէջ. եւ հոս ալ քահանայապետներէն իշխանութիւն ունի կապելու այն ամէնը, որոնք քու անունը կը կանչեն: Եւ Տէրը ըսաւ անոր. Գնա գուն, վասնզի անիկա ընտիր աման մըն է, իմ անունս կրելու հեթանոսներուն ու թագաւորներուն եւ Իսրայէլի որդիներուն առջեւ. քանզի ես անոր պիտի ցուցնեմ թէ որչափ պէտք է իրեն իմ անունս համար նեղութիւն կրել»:

Համաձայն սոյն հրաշովէպին Անանիա աշակերտը կ'երթայ կը գանէ Սօղոսը, Տէրոջը հրամանով կը բանայ անոր աչքերը եւ Սօղոսը կ'ըլլայ Պօղոս, կը լեցուի Հոգին Սրբոյ զօրութեամբ ու կը սկսի իր առաքելական պաշտօնը:

Անշուշտ անպատշաճ է մեզի համար հարցնել թէ նոր կրօն-







ներուն միջև կոխը շարունակուեցաւ մինչև որ վերջնոյն միջնա-  
բերդը, Երուսաղէմ կործանեցաւ :

Սոյն գէշքերուն ընթացքին յիշատակուած է Արգար թագա-  
ւորի անունը : Պատմութեան վիպական մէկ բաժինն ալ այս է : Ար-  
գար թագաւորը կ'ըսուի թէ որոշ դեր խաղցած է, երբ թշնամական  
զիւրք բռնած է մովսիսական հրեաներու հանդէպ, որովհետեւ ա-  
նոնք էին որ խաչեցին Յիսուսը, որ սոգանական օրէնքին հետեւող  
հրեաներուն կողմն էր : Այս պատմութիւնը հետեւեալն է : Արգար  
թագաւորը որ Տիրերիտուր օրով հռովմէացուց հպատակ էր, նամակ  
դրած է Յիսուսի եւ զայն հրաւիրած է Եղեսիա որպէսզի զինք բորո-  
տութենէ բժշկէ : Յիսուս հոն չէ կրցած երթալ եւ զրկած է իր եր-  
կու առաքեալները, Թադէոս եւ Բարթոլոմէոս առաքեալները, ո-  
րոնք Եղեսիա երթալով կը բժշկեն Արգարը եւ ասով քրիստոնէու-  
թիւնը տարածուած է Հայաստանի մէջ : Երբ ասիկա վաւերական  
պատմութիւն է, ուրեմն կրնանք ըսել թէ առաջին քրիստոնէայ քա-  
րոզիչները եղած են գործաւորական միութեանց ներկայացուցիչ-  
ները, որոնք աշխատեցին ոչ թէ հոգիներու փրկութեան համար,  
այլ անտեսական ազատութեան համար, եւ այդ իսկ պատճառով ալ  
անոնք հալածուած են տիրող ու շահադործող դատակարգին կող-  
մէ : Այդ հալածանքը վերջացնելու համար էր որ ի վերջոյ քրիս-  
տոնէայ առաջնորդները վեր առին միմիայն հոգիներու փրկութիւ-  
նը եւ անտես ըրին իրական ու դժուարին հարցը, դասակարգերու  
վերացման հարցը :

Ուշի ուշով երբ հետեւինք Գործք Առաքելոցի եւ անոր հե-  
տեւող առաքելական թուղթերուն, պիտի տեսնենք որ սոցիալիս-  
տական դադափարարանութեան աղօտ զիծ մը կայ անոնց մէջ, հոգ  
չէ թէ եկեղեցւոյ հայրերը փորձեր են եղծանել այդ զիծը : Բայց  
փաստը կայ ու կը մնայ, այսինքն այն որ նախաքրիստոնէական  
չրջանին, ինչպէս որ գործաւորական միութիւնները կը հալածուէին  
փոքր դադարումներով, նոյն ձեւի հալածանքը շարունակուեցաւ  
քրիստոնէական կրօնի տարածման սկզբնական շրջանին, ի մասնա-  
ւորի առաքելական շրջանին, եւ այդ՝ ճիշդ անտեսական զրգապատ-  
ճառով, դասակարգային բնոյթով :

Առաքելական շրջանին քրիստոնէայ հասարակուրդները որ-  
պէս ընդ յատակեայ կազմակերպութիւններ կ'ապրէին այնպէս ինչ-  
պէս էին նախկին գործաւորական միութիւնները : Այս բանին կը  
վկայէ Գործք Առաքելոցի զլուխ Ե . ի առաջին հատուածը . «Անա-  
նիա անունով մարդ մը իր կնոջ Սափիրայի հետ մէկտեղ ստաց-  
ւածք մը ծախեց . եւ անոր գինէն խորեց . մինչ կ'ինն ալ զխաչը, ու

մէկ բաժինը բերաւ առաքեալներուն ոտքը դրաւ : Եւ Պետրոս ըսաւ .  
Անանիա, ինչո՞ւ Սատանան քու սիրտդ լեցուց որ դուն Հոգւոյն  
Սրբոյ սուտ խօսիս ու աղարակին գինէն խորես : . . . Եւ Անանիա  
այս խօսքերը լսելով ինկաւ ու հոգի տուաւ : Երեք ժամու չափ վրան  
անցաւ, անոր կ'ինը չզիտնալով ինչ որ եղեր էր, ներս մտաւ . եւ  
Պետրոս ըսաւ անոր . Այդ ի՞նչ է, ինչո՞ւ դուք միարանեցաք Տէրո-  
ջը Հոգին փորձելու, ահա քու այրդ թաղողներուն օտքերը դրանը  
քովն են, քեզ ալ դուքս պիտի հանեն : Եւ իսկոյն անոր ոտքերուն  
քով ինկաւ ու հոգի տուաւ, եւ երիտասարդները ներս մանելով  
զանիկա մեռած դտան ու հանեցին ու էրկանը քով թաղեցին» :

Այս հատուածը կարգաւորով երկու բան կրնանք ենթադրել :  
Առաջին, որ առաքելական շրջանին քրիստոնէական միութեանց մէջ  
մտնողները, բոլորն ալ պրոլետարներ, ընչազուրկներ չեն եղած,  
ինչպէս որ էին գործաւորական միութեանց անդամները . անոնց-  
մէ ոմանք եղած են ունեւորներ, ինչպէս Անանիան եւ Սափիրան,  
եւ այդ ունեւորները ընչաքաղցութենէ տարուած փորձեր են խար-  
զախել, խաբել իրենց ընկերները : Անոնք պարտաւոր էին իրենց  
ունեցածը ծախել եւ զնել առաքեալներու ոտքին, մինչդեռ այդպէս  
չեն ըրած . ծախուած աղարակին գինին մէկ մասը յանձնեցին, պա-  
հեր են միւսը :

Երկրորդ ենթադրութիւնը պատճական մասն է : Գժուար է  
հաւատալ թէ Անանիա եւ Սափիրա մէկկովէկու ետեւ Պետրոս առաք-  
եալի յանդիմանական խօսքերուն վրայ կաթուածահար եղան ու  
զեախին ինկան . սարդ է որ անոնք, այր ու կին, միութեան որո-  
շումով մահուան դատապարտուած են : Երկուքն ալ մեռցուցեր ու  
զազանապէս տարեր թաղեր են իրենց յատուկ զերեզմանոցին մէջ :

Որ առաքեալները որքան անհաշտ եղեր են հարուստներուն  
դէմ, այդ բանին կը տեղեկանանք երբ կը կարգանք Յակոբոս ա-  
ռաքելոյն Ընդհանրական Թուղթի զլուխ Ե . ք :

«Աղէ հիմա, հարուստներ, լացէք ու սղրացէք այն թշուա-  
նութիւններուն համար որոնք ձեր վրայ պիտի դան : Ձեր հարստու-  
թիւնը ապականած է, ու ձեր հանդերձները ցեցի կ'երակուր եղած :  
Ձեր ոսկին ու արծաթը ժանդոտած են, եւ անոնց ժանդը ձեզի դէմ  
վկայ պիտի ըլլայ, ու ձեր մարմինը պիտի ուտէ կրակի պէս . վեր-  
ջին օրուան համար գանձ զիլեցէք : Ահա ձեր արտերը հնձող բան-  
ւորներուն վարձքը զոր ետ պահեցիք կ'աղաղակէ, ու հնձողներուն  
բողոքը զօրութեանց Տէրոջը ականջներուն հասաւ : Երկրի վրայ  
փափկութեամբ ու հեշտութեամբ ապրեցաք, սրտերնիդ անուցիք որ-



պէս թէ մտքթառուելու օրուն համար: Դասապարտեցիք ու սպաննեցիք արդարը, որ ձեզի հակառակ չի կենար»:

Յակորոս առաքեալը կը զգուշանայ յեզրփոխական քարոզչութենէ եւ կը յորդորէ համբերող ըլլալ եւ աղօթող, բայց հասկընալի է որ համբերողներն ու աղօթողները անբնական է որ մշտապէս մնան համակերպութեան մէջ, երբ անոնք գիտեն թէ Տէրօջը ականջներուն հասնող բողոքը մի օր պիտի արձագանգէ ճնշուածներու եւ տառապողներու հոգիներուն մէջ եւ զանոնք պիտի տանի ապստամբութեան:

Պօղոս առաքեալ թուղթ առ փիլիպպեցիս բաժնի Դ. զլխուն մէջ յիշատակութիւնը կ'ընէ իր մէկ գործակցին, որուն անունն է Կղեմէս, սուրբ Կղեմէս: Ինչո՞ւ սոսկական յիշատակութիւն մը միայն այն պատմական անհատականութեան, մեծութիւն մը ինքնին որ ոչ միայն քրիստոնէական կրօնի պատմութեան մէջ, այլ աշխատաւոր դասակարգի անցեալի պատմութեան մէջ եղակի տեղ մը կը զբաւէ, երբ նկատի առնենք այդ հին դարու մտայնութիւնն ու տիրող պայմանները:

Կղեմէս որ Պետրոսի յաջորդող երրորդ եպիսկոպոսը եղած է Հռովմի մէջ (92-101) ազնիւ հռովմէացի մըն էր. անիկա ուսումնասիրած էր յոյն փիլիսոփաներու դործերը. իրական սոցիալիստ մը, հին դարերու շէմքին կանգնած հսկայ մը, որուն գրածները մերժուած են եկեղեցական մեծաւորներու կողմէ: Միայն ԺԼ. եւ ԺԹ. դարերուն է որ կարող ու աննախապաշար ուսումնականներ վերատեսութեան ենթարկելով անոր դործերը համարձակեցան յայտարարել սքանչելի:

Կ'ըսուի թէ Կղեմէս լսելով Յիսուսի քարոզած սկզբունքներու մասին եւ ապա անոր խաչելութիւնը, կը ծախէ իր ունեցածները ու կ'երթայ Կեսարիա, ուր հաւաքուած էին քրիստոնեայ առաքեալները: Ան կ'ուզէ տեսնել անոնց մեծաւորը, Պետրոս առաքեալը: Նախ կը հանդիպի գժուարութեան. անձանթ մը Պետրոս առաքեալը չէր կրնար տեսնել անմիջապէս: Կը կատարուի հարկ եղած խիստ քննութիւնը: Առաքեալները վստահ ըլլալով որ ան լրտես մը չէ, այլ նորահաւատ թեկնածու մը, զայն կը տանին Պետրոսի մօտ: Կղեմէս իր երեսակալութեան մէջ ունէր պատկառելի մարդ մը թաղաւորական թաղը գլխին, ոսկի դաւադանը ձեռքին եւ բազմած գահի մը վրայ, բայց կը տեսնէ որ Պետրոս հասարակ մարդ մըն է, կը զարմանայ: Անոր առաջին տեսակցութեան արդիւնքը այն կ'ըլլայ որ Կղեմէս ուխտեալ քրիստոնեայ կը մկրտուի ու այնուհետեւ եռանդալին կը նուիրուի իր ուխտին, համաձայն իր սկզբունքներուն:

Կղեմէս պարկեշտ, կարող, յարատեւող ու անկաշտ մարդ էր. գաղափարապաշտ մարդ մը որուն նմանը գժուար էր զանել: Ան շատ խոր ուսումնասիրեր էր Մոկրատի կեանքը, ուսումնասիրեր էր նաեւ Պղատոնի դործերը: Ամէնէն աւելի իր ուշադրութիւնը զբաւողն էր Պղատոնի Հանրապետութիւնը: Պղատոն պետութիւն մը երազեր էր, որուն գլուխը զանուղները ըլլալու էին փիլիսոփաները: Կղեմէս այդ տեսութեան հակառակ էր. հակառակ էր կառավարական ունէ սիստէմին: Կառավարող եւ կառավարուող, հրամայող եւ համակերպող. Կղեմէսի մտածողութիւնը այս անհաշտ եղբերը չէր կրնար հաշտեցնել: Ան կ'ընդունէր թէ մարդկային բոլոր պիտոյքները հայթայթողները աշխատաւորներն են: Բնակարան մը անհատի մը ձեռագործը չէ ու չի կրնար ըլլալ, մարդուս ուտելիքները անհատի մը աշխատանքի արտադրութիւններ չեն ու չեն կրնար ըլլալ. մարդուն հարուստը նոյնպէս անհատի մը ձեռագործը չէ ու չի կրնար ըլլալ. անոնք բոլորը ընկերային աշխատանքի արդիւնքներ են, մարդը ինք ծնած օրէն ընկերային աշխատանքի պտուղն է: Ուրեմն, աշխատաւորներուն վրայ ունէ իշխանութիւն պիտի չըլլայ. աշխատաւորները իրենք իրենցմով պիտի կազմեն կոմունիստական հասարակուրդ մը, ուր անհատը անբաժան մասը կը նկատուի հասարակութեան: Անհատին բնական կարիքը հասարակութեան բնական կարիքն է. անհատը հասարակուրդին համար, հասարակուրդը անհատին համար: Այստեղ կը վերջանայ դերակալութեան ու ստորադասութեան հարցը: Ամուսնութեան հարցին մէջ Կղեմէս համամիտ չէր Պօղոս առաքեալին: Այս վերջինը ամուրիութեան ջատագով էր, իսկ ինք կ'ընդունէր թէ ընտանիքը, որպէս հասարակութեան բաղկացուցիչ միաւորը, պէտք է պահպանել իր սրբութեանը մէջ: Կնոջ արժանապատուութիւնը այնքան բարձր է, որքան այր մարդունը: Կինը այր մարդուն սեռային կրքին յաղուրդ տուող էակ պէտք չէ դաւանել:

Գալով կրօնական հաւատքին, Կղեմէս հաւատքը օրինական պարտադրութեան չէր կապեր. հաւատքը անհատական է եւ հասարակութեան չի պատկանիր. որովհետեւ հաւատքը կեանքի պահանջներուն հետ կապ չունի, ինչպէս որ Աստուած մարդոց դործերուն հետ կապ չունի: Մարդոց մտածողութիւնը երբ անմեկնելի խորհրդաւորութիւններով կը շղթայուի, մարդիկ կը շուարին. այդ շուարումէն կը ծնի չարիքը: Եւ պէտք է ըսել թէ անմեկն տեսակի խորհրդաւորութիւններ շահագործման ձգտող որոշ դասակարգի մարդոց հնարքներն են: Տեսանելի աշխարհի կեանքը անմեկնելի



խորհրդաւորութիւն չունի. ամէն ինչ պարզ է եւ բնական: Աւրեմն մարդիկ կապուելու են իրական կեանքին:

Կղեմէսի զոգարարութիւնը իր էութեամբ սոցիալիստական է եւ հետեւողական դիմ մը կը պահէ գործաւորական միութեանց ընդհանուր ուղեղծին, բայց ան երբեք չանդրադառնար այն հարցին թէ իր երազած հասարակուրդը ի՞նչպէս կարելի էր իրականացնել: Ի հարկէ, մենք այս կէտին մէջ զայն չենք կրնար քննադատել, որովհետեւ այդ դարաշրջանի պայմանները ընկերային յեղափոխութեան համար հող չէին պատրաստած տակաւին:

Կղեմէսի հռչակաւոր մէկ գործն է Քերուկիմա Պետրու Ս. Պետրոսի կորուսած աւետարանը, որու մասին կը խօսի աղեքանազբիացի Կղեմէսը, նոր-պղատանականութեան վարդապետը, Օրիճէնի ուսուցիչը որ ապրած է 150-213 թուականին:

Այսքան Կղեմէսի մասին:

Այժմ անցնինք շարունակելու մեր պատմութեան թելը:

Մենք ըսինք արդէն որ համայն սոցիոնական օրէնքներուն որոնց մասին խօսեցանք, նախաքրիստոնէական շրջանի գրեթէ բոլոր արհեստակցական միութիւնները թոյլատու պայմաններու տակ ունէին իրենց սաճարը, անոր բոլորաբար գերեզմանաց մը, նոյնպէս ունէին ժողովատեղիները, գուարձատեղիները եւ ասոնք ամէնքը հասարակաց սեփականութիւն էին: Քրիստոնէութիւնը երբ սաղմնաւորուեցաւ, այդ հին սաճարները փոխուեցան եկեղեցիներու: Բայց չուսով վերսկսաւ հայրածանքը:

Տիրերիոսի, Վեսպասիանոսի եւ Տրատի գահակալութենէն վաթսուն տարիներուն յաջորդող ժամանակաշրջանին, երբ ծագեալ քրիստոնէութիւնը գեանին խորը քշուեցաւ, միայն թաղման գործով պարզող միութիւնն էր որ հրատարակի վրայ մնացեր էր Հռովմի մէջ: Եւ այս միութիւնն էր որ շինած է մայր եկեղեցի մը Ապիոսեան խճուղիին վրայ Հռովմէն 18 մղոն հեռու: Աւրիշ եկեղեցի մը Պամպէյի մէջ, որ նախուսած էր Իսիսի անուան, վերածուեցաւ քրիստոնէական եկեղեցոյ: Հռովմի Ս. Պետրոս եկեղեցին նախապէս եղած էր Միներվայի տաճարը, տաճարը այն աստուածոհին որ կ'օրհնէր ու կը պահպանէր երկրագործները: Փարիզի Նոթր Ծամ եկեղեցին որսորդներու, ձկնորսներու, նաւաւարներու միութեան տաճարը եղած է, որ վերանորոգուած ու զարդարուած է երրորդ դարէն սկսեալ: Այս իրողութիւնը ստուգուեցաւ 1711 թուականին: Այսու կը տեսնենք թէ քրիստոնէութիւնը երբ եկաւ թշուառութիւնն ու ստրկութիւնը վերցնելու նպատակով, ի հարկէ առաջին անգամ պիտի օգտագործէր ոչ միայն գործաւորական միու-

թեանց ուժերը, այլեւ անոնց աստուածներու տաճարները, որոնք առանձնաշնորհեալ կրօնաւորներ չունէին որ հակառակ բլլային նոր կրօնքին: Քրիստոնէական կրօնին թշնամի էին ազնուականներու տաճարներու կրօնաւորները, որոնք, ինչպէս ըսինք, պետական պաշտօնեաներ էին:

Փարիզի նաւաւարներու միութիւնը լատիներէն արձանագրութիւն մը թողած է Նոթր Ծամի մէկ անկիւնը, հետեւեալ բառերով. «Փարիզի նաւաւարներու միութիւնը ժողովուրդին կողմէ հաստատուած սոյն յուշարձան տաճարը կը նուիրէ օգոստափառ Տիրերիոս կայսեր, որ մեծ ու լուազայն կայսր մը եղած է Արամագրի հովանաւորութեան ներքեւ»:

Այժմ մենք հաւանք հինաւուրց խոնարհ գտնակարգի պատմութեան այն շրջանին, երբ սկսաւ սարսափելի, ընդհանուր մի կատորած. աստիկա Դիոկղետիանոս կայսեր գահակալութեան շրջանին է (245-313 Յ.Ք.):

Այս եղբրական շրջանի տխուր գերակատարը եղած է մարդ մը, Հայերոկլէս անուն գաւաճան մը, որ մտեր էր գործաւորական միութեան մէջ, զրաւած էր այդ միութեան վստահութիւնը եւ մի օր ալ իրագործեց իր դաւադրական ծրագիրը հաւատարիմ մնալով ազնուական դասուն: Այս մարդուն մասին կը խօսինք յետոյ:

Դիոկղետիանոս, խոստմնալից զինուորական մը հռովմէական բանակին մէջ, երբ իր գաշոյնի ուժով կայսերական գահուն վրայ բարձրացաւ, գիտէր թէ ինք հռովմէական կայսրութեան նրման հսկայ կայսրութիւն մը չէր կրնար կառավարել. ասոր համար իրեն գործակից ընտրեց երեք կայսեր, Մաքսիմիոս, Կոստանդինոս եւ Կալերիոս: Դիոկղետիանոս իր ընտրած երեք կայսրերուն վրայ կըցաւ իր գերեզխտողի գիրքը պահել, բայց իր անհեռատես քաղաքականութեան հետեւանքով ի վերջոյ ենթարկուեցաւ անոնց:

Կալերիոս որ Մակեդոնիան ընդունել էր որպէս իրեն բաժինը, զինուորական ձախորդութենէ մը վերջ երբ Պարսկաստանի մէջ յաղթանակ տարաւ ու քաղց ֆլուրիկիայի վրայ, հոն տեսաւ բաղմաթիւ քրիստոնէաներ: Ինք բլլալով մոլեռանդ կռապաշտ եւ անգութ մէկը, կատաղութեան նոպայէն բոնուեցաւ երբ իմացաւ որ այդ քրիստոնէաները գործաւորական միութեանց միջոցով նոր քաղաքակրթութիւն մը հիմներ էին, որը հակառակ էր իր գաւանանքին: Իր յաղթանակէն վերադարձին, Դիոկղետիանոսի վրայ ուժեղ սպառնալիքներ քանցուց զայն քրիստոնէաներու դէմ պրզուելու գաւանք բնաջինջ ընելու գիտաւորութեամբ:

Դիոկղետիանոս, բարեկամ մը քրիստոնէաներուն, մերժեց



գործադրել անոր ծրագիրը, բայց Մաքսիմիոս եւ Կոստանդինոս պալատականներուն հետ բոլորն ալ համաձայն էին Կալերիոսի. ասոնք արդէն դադանի լիկա մը կազմեր էին ամէն զնով իրենց ծրագիրը գործադրելու համար:

Այդ լիկային մէջ մտաւ վերեւ յիշուած անձը, Հայերոկլէսը որ ի վարձատրութիւն իր վատ ծառայութեան Բիւթանիայի կառավարիչ դարձաւ: Այս մարդը ճարպիկ զիմափոխութեամբ մտած էր Նիկոմիդիայի քրիստոնէացած մեքենադէտներու միութեան մէջ, ուր խիստ քննութեան անցնելէ վերջ երգժամբ հաստատելով իր հաւատարմութիւնը, կրցած էր սրպէս եռանդուն ու գործող անդամ շահիլ բոլորին վստահութիւնը: Ան մէկ կողմէ միութեան համար կը գործէր, միւս կողմէ գաղանի տեղեկութիւններ կուտար լիկային. եւ ինչ բան որ իր տուած տեղեկութիւնները ստալոզ տեղեկութիւններ էին: Անիկա այնպէս կը պատկերացնէր թէ գործաւորական միութիւնները արդէն պատրաստեր էին սարսափելի, ընդհանուր ապստամբութիւն մը որ մօտ ատենէն պայթելու էր:

Կալերիոս անհամբեր կը սպասէր որ անմիջապէս սկսէր ջարդարութիւնը: Նոյն տրամադրութիւնը ունէին լիկայի անդամները, միայն Դիոկղետիանոսն էր որ չէր ուզեր այդպիսի անմարդկային արարքի մը հրամանը տալ: Ատեն մը տատանեցաւ, ապա զգալով որ դաւազրութիւն մը կը պատրաստուէր իր անձին դէմ, ենթարկուեցաւ Կալերիոսի եւ բրաւ աւելի քան ինչ որ պիտի ընէին Կալիկուլա մը, Կլոտիոս մը կամ Ներոն մը:

Կալերիոսի ծրագիրը այն էր որ այն շրջաններուն մէջ, ուր բնակչութիւնը կազմակերպուած էր, ամբողջապէս բնաջնջուէր էր կայսերական բանակի ուժով: Բանակային ուժ գործածել խաղաղ ու աշխատաւոր ժողովուրդ մը բնաջնջելու համար. դա սոսկալի բան էր, որուն նմանը պատմութիւնը տակաւին չէր արձանագրած:

Սոյն մտտայական ոճիրին մանրամասն նկարագրութիւնը պատմական արխիւներու մէջ չկան. այդ առթիւ գրուածները ամբողջն ալ անհետացուած են, յանձնուած են կրակին, միայն Լեկտանտիոսի եւ մի քանի տարի վերջ Եւսեպիոսի տուած հատուկոր տեղեկութիւններն են որ մեզի հասեր են:

Տր. Ռամսի որ երկար տարիներով ծառայած է հնագիտութեան, հետեւեալ տղերքով ամփոփած է իր քաղած տեղեկութիւնները. «Որպէս օրինակ ինչ որ տեղի ունեցած էր Փիւրիիկայի մէջ, Եւսեպիոս կը յիշէ իր ճանչցած քրիստոնէայ քաղաքը (այստեղ ան կը խօսի Եւմիիիայի մասին) որ ամբողջապէս մոխիր դարձաւ իր

բնակչութեամբ. նոյնիսկ կիներ ու երեխաներ այրուեցան եւ մէկ շնչաւոր խիկ չապատուեցաւ»:

Այժմ ընթերցողը թող երեւակայէ որ կազմակերպուած գործաւորութեան դէմ սկսուած հալածանքն ու կոտորածը միայն Փոքր Ասիոյ մէկ-երկու տեղերու մէջ սահմանափակուած չէին, այլ ընդհանրացած էր ամէն տեղ: Սպանիա, Իտալիա, Հիւսիս. Աիբիկէ, Մակեդոնիա, Կոլ եւ նոյնիսկ Հոողոսի կղզիները ու Բրիտանիա ազատ շմոցին կոտորածներէն:

Սուսլիւ բախտաւոր ենք որ Լեկտանտիոսի եւ Եւսեպիոսի նման երկու արժանահաւատ հեղինակաւոր պատմադէտներ եղած են, որոնք մեզի տուած են մաս մը տեղեկութիւններ կատարուած անցքերու շուրջ, մասնաւորապէս Լեկտանտիոսը որ նոյն ժամանակներու ականատես վկան եղած է:

Տեղի ունեցող ջարդարութեանց կազմակերպութեամբ պէտք չէ մոռնալ յիշատակելու կօշկակարներու քրիստոնէական միութեան պատահած աղէտը Սուասոնի մէջ, Փրանսա: Ասոնց յանցանքը այն էր որ անոնք պաշտպաներ էին քրիստոնէաները: Իրողութիւնը սակայն այն էր որ ամբոխային տրամադրութիւնը զրգոելու համար շարժումին տրուած էր կրօնական զոյն, մինչ անոր հիմքը տնտեսական էր:

Սուասոնի եւ շրջականերու կոտորածը տեղի ունեցած է այն ատեն երբ Հայերոկլէսը իր Լուկոս-Ֆիլարետիար նոր դրած էր, կամ այն ատեն երբ տակաւին Բիւթանիայի կառավարիչ նոր էր նշանակուած: Անոր այդ գործը շրջաբերութեան հանուած էր գործաւորութեան թշնամիները զրգոելու այն քրիստոնէաներուն դէմ որոնք պաշտպանութիւն ցոյց տուած էին միութեան անդամներուն:

Քրիստոնի եւ իր եղբոր Քրիստիանոսի պատմութիւնը զբըւած է շատ մը զիրքերու, ինչպէս նաեւ համայնադիտարաններու մէջ: Ասոնց կազմած միութիւնը հակառակ ի գործ գրուած հալածանքին ու կոտորածին, տասը դար շարունակուեցաւ եւ ի վերջոյ միացաւ Ֆրէր Կարտաքիէ անունը կրող միութեան, մինչեւ 1789-ի Փրանսական յեղափոխութիւնը, որմէ յետոյ ճնշման ենթարկուեցաւ ու չբացաւ: Այս առթիւ մենք շատ բան պարտական ենք Լի Բլանտին, որ կարենոր տեղեկութիւններ կուտայ քրիստոնիներու միութեան շուրջ եւ կ'ըսէ որ Սուասոնի եկեղեցին հիմնուած է ասոնց անունով. եւ որ աւելի նշանակելի է, այն է որ անոնք զոհերու աճիւնները մասնաւոր ընդունարաններու մէջ դնելով թաղած են եւ կաղած են սրպէս մասսայական զոհերու մի դամբարան, իր տեսակին մէջ եզակի կոչուելու արժանի մի յուշարձան:



Պատմական բոլոր վկայութիւնները ցոյց կուտան որ քրիստոնէական կրօնին յարած էին մարդիկ ու կանայք, որոնք հասարակութեան շրջանակէն արտաքուստ էին եւ անոնք սոհասարակ դործաւորական միութեանց անդամներն էին: Վերին դասակարգերը, ներառեալ պնտականութիւնը, կը տեսնէին որ քրիստոնէութիւնը իր մէջ տանելով դործաւորական միութիւնները ու կամ կանուխ պիտի ապաստարի պետութեան դէմ: Տիրող դասակարգը միշտ եւ ամէն տեղ աւելի խոր դասակարգային դիտակցութիւն ունեցեր է քան թէ ախրուող դասակարգը: Եւ ահա կայերիս հնչեցուց այդ ահազանդը եւ Դիոնիզեոսիանոս կայսրը սուսա կոտորածի հրամանը:

Առաջին անգամ Նիկիոմիդիայի մէջ սկսաւ կոտորածը 203 թուականին Փետրուար ամսու 22-ին: Այդ օրը, հոսովէական Դըրացնատոնքի ինճոյքի օրն էր: Նոյն օրը սկսաւ նաեւ միւս վայրերու կոտորածը: Կիւպրոն կը կարծէ թէ կալերիոսի մայրը, մոլեանդ կոսպաշա կին մը, ինքն էր որ որոշեց կոտորածը սկսել այդ նոյն օրը ի պատիւ Տերմինոս աստուծոյն, որուն տօնի օրն էր Փետրուար 22-ը: Այդ օրը Նումայի եւ Սողոմի օրէնքներու հետեւողութեամբ սպառութիւն հռչակուեցաւ, նոյն օրը սպառութիւնը պէտք է մեռնէր:

Փետրուար 22-ի օրը, աստուծոն կանուխ, կատղած բանակը իր հրամանատարներով քաղեց Նիկիոմիդիայի եկեղեցիին վրայ: Զինուորները քանդեցին անոր դռները եւ ներսը սպաննելու մարդ չգտնելով քրիստոնէաներու աւետարանն ու շարականները հաւաքեցին ու այրեցին, ապա այդ հաստատուն եկեղեցին վերածեցին աւերակի:

Կոտորածի հրովարտակը ելած էր անուանապէս քրիստոնէաներուն դէմ, բայց անոր բուն նպատակն էր բնաջնջել դործաւորական միութիւնները, որովհետեւ անոնք էին քրիստոնէութիւնը հաստատ հիմքերու վրայ կառուցողները:

Տր. Ռամզի իր դրքին մէջ կը շարունակէ. «Լեկտանտիոս կը նշէ որ Նիկիոմիդիայի կոտորածը յառաջ տանողն էր քաղաքի կառավարիչը, բայց պէտք է դիտնալ որ ոչ մէկ կառավարիչ կրնար այդպիսի դործի մը սկսիլ առանց կեդրոնական կառավարութեան հրամանին, ասոր համար կոտորածը որուն կրօնական դոյն արուած էր, բնդհանուր էր, ոչ թէ մասնակի: Այժմ հարց է թէ երբեք քրիստոնէաները չկրցա՞ն սպառուիլ, այդ աղէտէն վերջ քրիստոնէաները ի՞նչպէս բազմացան, ո՞ւր են անոնց արձանագրութիւնները: Ո՞ւր մնացին Հողոսի բազմաթիւ միութիւնները: Հազար միւս միութիւնները. ե՞րբ եւ ի՞նչպէս փճացան անոնք: Այս ու ասոնց նման շատ մը հարցումներ կան որ անպատասխան կը մնան»:

Զազարուար դամբարաններու արձանագրութիւններ կան որ մեղի ծանօթութիւններ կուտան սողոնական միութեանց մասին, բայց Դիոնիզեոսիանոսի ժամանակուայ դէպքերու մասին ղեռ ոչ մի փորագրուած արձանագրութիւն կայ: Տր. Ռամզի ասոր պատճառը կը նկատէ այն որ աղէտի այդ շրջանէն քսան տարի յետոյ երբ քրիստոնէաները նորէն կենդանացան ու կեցան իրենց սաքերուն վրայ, կալիսկոպոս կոչուածները այնքան աղէտ էին որ նոյնիսկ իրենց անունը չէին կրնար գրել: Աղէտին յաջորդեց սպիտութիւնը, մոլեանդութիւնը, ասոր հետ միասին բազմացան մուրացկանները, ընդհանրացաւ եւ խորացաւ թշուառութիւնը: Այս վատտերումը որուն անձանօթ էր դործաւորութիւնը, ճահիճ մը եղաւ ուր միւրճուեցան մաքուր վարք ու բարբով ապրող դործաւորները: Իրերօղնութեան տեղը անցաւ խարերայութիւնն ու կեղծիքը. հասարակաց բարօրութեան նկատառումին յաջորդեց այլամերժ ետպաշտութիւնը: Աշխատանցներու տեղը կառուցուեցան յիմարանոցներ, անկեղծոցներ: Արժանապատուութիւնը կորսնցուց իր նըշանակութիւնը: Ստամբոս մը կը տացնելու համար մարդիկ ու կանայք միջոցներու մէջ խորականութիւն չէին գնէր: Տիրող դասակարգը հասեր էր իր փռքի դադարեցնակէտին:

Գումարուեցաւ Նիկիոյ եկեղեցական ժողովը (327) ուր ներկայ էր Կոստանդին կայսրը: Ո՞վ էր այս մարդը: Քրիստոնէա՞յ էր: Ոչ: Ան քրիստոնէաներու ուժովը բարձրացաւ, բայց իր կըրունկներուն տակ սուսա մարդկային բոլոր աղնիւ ղզացումները, մարդասիրութիւնը, անտեսական ղեմսկրասին եւ ազատասիրութիւնը: Անիկա Նիկիոյ ժողովին ներկայ եղաւ, որպէսզի չըլլայ թէ եկեղեցական հայրերը քրիստոնէութիւնը դարձեալ կոսպեն աշխարհային կեանքի պահանջներուն: Ապականութիւնը սկսեր էր, զայն պէտք էր յաւերժացնել. այդ կը պահանջէր կայսրութեան շահը:

Բայց Կոստանդին կը սխալէր. առանց իր ներկայութեան ալ Նիկիոյ ժողովը պատմութեան անիւր գէպի ետ, գէպի նախկին կոմունիստական ձեւի հասարակութիւններուն չէր կրնար ասնիլ: Նոր տեսակի ստրկատիրութեան դարաշրջանի արշալուսային շողերը սկսած էին նշմարուիլ ախրող խաւարին մէջէն:

Պատմութեան համար կը պատրաստուէր միջնադարեան ճորտատիրութեան դարաշրջանը:





ԶՈՐՐՈՐԴ ՄԱՍ

ՄԻՋԻՆ ԴԱՐ





## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

---

Մեր ուսումնասիրութեան այս մասը կը պարունակէ բու-  
ցիկ տեսութիւններ Միջին Դարու պատմութեան շուրջ, որ կը սկսի  
Դ. դարէն եւ կը շարունակուի մինչեւ ժ.Ջ. դարը: Կործանուող հին  
աշխարհին յաջորդած է նոր աշխարհ մը, նոր հասարակարգ մը  
տնտեսական նոր յարաբերութիւններու օղակաւորումներով, որոնք  
իրենց կարգին ծնունդ տուած են նոր տեսակի մտածողութեանց:  
Հերետիկոսական ընկերային շարժումը, անդրանիկ գաւակը այդ  
նոր աշխարհին որ սկսաւ ժ.Ա. դարէն եւ հետզհետէ գրաւեց եկե-  
ղեցոյ եւ պետութեան ուշադրութիւնը, կարեւոր տեղ մը կը բռնէ  
Միջին Դարու պատմութեան մէջ: Մենք հարեւանցի կերպով պիտի  
անդրադառնանք ա՛նոր, ինչպէս նաեւ գիւղացիական ըմբոստու-  
թեանց եւ քաղաքներու մէջ մղուած դասակարգային կռիւներուն:

Միջին Դարու պատմութիւնը կը փակուի փրանսական յեղա-  
փոխութեան պայքումը պատրաստող ընկերային ուժերու խմորման  
շրջանառութեամբ, որու մասին պիտի խօսինք մեր ուսումնասիրու-  
թեան երրորդ հատորի առաջին մասին մէջ, առանձին բաժանմուն-  
քով:



## ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ

Քրիստոնէութիւնը Միջին Դարուն մեծ դեր կատարած է եւրոպական նորակազմ պետութեանց տնտեսական ու քաղաքական հիմնարկութեանց մէջ եւ այդ դերը կատարած է տիրող դասակարգի շահերուն յարմարեցման դժով:

Այժմ, նախ քան Միջին Դարու իրադարձութեանց նկարագրութեան անցնիլը, անհրաժեշտ է ընթերցողին յիշողութիւնը թարմացնելու համար թռուցիկ վերատեսութիւն մը ընել նախորդող իրողութեանց շուրջ, որոնց օղակները մեր պատմութեան շղթային մասը կը կազմեն:

Գերետիրական շրջանին հեթանոսական աշխարհը իր բազմաթիւ աստուածներով դարձեր էր յարատեւ կռիւներու, ասպտամբութեանց ու պատերազմներու թատերարեմ: Տիրող ու շահագործող դասակարգերը ունէին իրենց ուրոյն աստուածները. գերիներն ալ ունէին իրենց աստուածները: Քրիստոնէութիւնը եկաւ այդ աստուածները մեռցնել եւ հրապարակ հանց միակ աստուած մը, որու տաճարներուն մէջ իրարու միացան թէ՛ իշխողները եւ թէ՛ հրպատակները, թէ՛ աէրերը եւ թէ՛ ծառաները: Քրիստոնէութիւնը ասանկով յառաջացուց միացեալ աշխարհի մը հիմնաւորման կարելիութիւնը:

Երբ քրիստոնեայ կրօնի մասին կը խօսինք, չենք կրնար անտեսել հրեաները, որովհետեւ այդ կրօնի հիմնադիրը Դաւիթի ցեղէն էր:

Մենք արդէն խօսեցանք հրեաներու շուրջ եւ ըսինք թէ ինչպէս աստիճանաբար յառաջացաւ միաստուածեան գաղափարը, գաղափարը այն աստուծոյն որ աւետեաց երկիրը խոստացեր էր իր ընտրած Իսրայէլի ժողովուրդին: Հրեաներու այս գաղափարը իր մէջ կը պարունակէր թէ՛ աստուածարանական բնոյթ եւ թէ՛ ցեղային հայրենասիրութիւն: Հրեաները կ'երազէին փրկիչ մը, մեսիա մը որ պիտի գար ազատել մարդկութիւնը Դաւիթի ու Սողոմոնի փառաւոր յաղթութեամբ եւ ամբողջ աշխարհը պիտի դնէր հրեայ ազգի գերիշխանութեան տակ: Տիրերիտս կայսեր օրով եկաւ այդ փրկիչը, հրեաները նախ խանգալառուեցան, բայց շուտով հիասթափուեցան, երբ տեսան որ անոր թագաւորութիւնը երկինքի մէջ էր, կապ չունէր երկրի հետ: Ահա թէ ինչո՞ւ հրեաներու շահագործող, տիրող դասակարգը միացաւ քրիստոնեաները հալածող պետութեան:

Մենք ըսինք արդէն թէ քրիստոնեաները կը հալածուէին ու-



բով՛հետեւ անոնք զործաւորական միութեանց անդամ էին: Գիտկղե-  
տիանոս կայսեր օրով 303 թուականին տեղի ունեցաւ ընդհանուր  
մասսայական ջարդարարութիւն, քանդուեցան բոլոր եկեղեցիները  
եւ անխնայ կոտորուեցան քրիստոնեաները:

Բայց քրիստոնէութիւնը, որ ստանջուածներու կրօնքն էր  
զարձեր եւ խոր արմատներ էր արձակեր ամէն տեղ, պատմական  
մեծ դեր ունէր կատարելիք: Ան մէկ կողմէ պիտի մաշեցնէր զերե-  
տիրական սխալմի սիւները եւ միւս կողմէ պիտի նպաստէր որ  
բացուէին նոր զարաշրջանի մը, աւատապետական զարաշրջանի  
դռները:

Եւ ահա պատմութեան թատերաբեմին վրայ եկաւ Մեծն Կոս-  
տանդինը, որու օրով քրիստոնեաներու հալածանքը դադրեցաւ:  
Այս կայսրը խորհեցաւ որ եթէ քրիստոնէութիւնը կործանարար  
ուժ մըն էր Հռովմի համար, ան կրնար կազմակերպիչ եւ միացնող  
ուժ դառնալ իր սեփական կայսրութեան համար: Քրիստոսի շուն-  
չը հսկառակ տիրող վարդապետական անհամաձայնութեանց, տա-  
րածուած էր նաեւ բարբարոս ցեղերու մէջ. ան որոշ նուաճումներ  
բրած էր նոյնպէս Պարսկաստանի եւ Փոքր Ասիոյ մէջ: Կոստանդին  
կայսրը համոզուեցաւ որ ինք անով կրնար իր փասձ կայսրութիւնը  
վերջնական կործանումէ փրկել իր կայսրութեան հպատակ երկիր-  
ներու ժողովուրդները կրօնական կապերով իրարու միացնելով: Մաք-  
սենատիոսի դէմ մղած պատերազմին երբ քրիստոնեայ զինուորներու  
օգնութեամբ յաղթանակ տարաւ Մելիթիան կամուրջին վրայ 312  
թուականին, քրիստոնէութիւնը հռչակեց պետական կրօնք եւ ինք  
եղաւ բացարձակ միապետ քրիստոնեայ աշխարհին:

Մեծն Կոստանդինի անձնական կեանքին շուրջ շատ քիչ տե-  
ղեկութիւններ կան: Չոսիմուս կ'ըսէ թէ Կոստանդին անհարազատ  
ծնունդ էր. իր հայրը եղած է նշանաւոր դորափար մը, իսկ մայրը  
հելլէն պանդոկիապոսուհիի մը դուստրը Սերպիոյ Նիս քաղաքին  
մէջ: Ան եղած է անգրագէտ մէկը որ իր բնածին հանճարին եւ նը-  
պաստաւոր պայմաններու օգնութեամբ բարձրացաւ կայսերական  
աստիճանին: Ան մահուան զատապարտեց իր անդրանիկ գաւակը,  
Գրիսոպոս, անոր խորթ մօր Ծոցայի զրդումով: Յետոյ իմանալով  
իր սրղւոյն անվերջութիւնը, այս անդամ իր կ'ինը սպաննեց եռացած  
ջուրի մէջ: Կոստանդին անկէ վերջ իր զործած մեղքերուն քառու-  
թեան համար կը զիմէ իր բարեկամ Սոպատիր հեթանոս քահանա-  
յին, որպէսզի աստուածներէն ներում ստանայ իր ոճիրներուն հա-  
մար: Սոպատիր կը մեթէ ըսելով որ աստուածները այդ կարգի ո-  
ճիրներու չեն ներեր: Այն ատեն Կոստանդին կը զիմէ քրիստոնեայ

եպիսկոպոսներուն, որոնք իրեն խորհուրդ կուտան նախ ապաշխար-  
հել, ապա մկրտուիլ քանի միայն այդպէսով կարելի էր իր բոլոր  
մեղքերը քաւել ու արժանանալ ներման: Այս պայմաններուն տակ  
կայսրը քրիստոնէութեան կը յարի, բայց միւս կողմէ ինք ալ իր  
պայմանը կ'առաջարկէ: Եւ ի՞նչ էր այդ պայմանը: Ան կը պահան-  
ջէ որ մկրտութեան արարողութիւնը մինչեւ իր կեանքի վերջին օր-  
ւան յետաձգուի, որպէսզի մինչեւ հոգեվարքի օրը իր զործելիք  
մեղքերէն եւս մաքրուի մկրտութեամբ: Եպիսկոպոսները կ'ընդու-  
նին պայմանը եւ տարինք վերջ մահուան անկողնոյն մէջ Կոստան-  
դին կայսրը կը մկրտուի եւ կ'ըլլայ խաչի դրոշմով կատարեալ քր-  
իստոնեայ:

Այս դէպքը որքան զաւելչտական, նոյնքան յատկանշական է.  
ստով կը հասկնանք թէ այդ ատենուան քրիստոնեայ եպիսկոպոս-  
ները կը հաւատային որ մկրտութեամբ հոգին իր բնական մաքրու-  
թիւնը կը վերստանայ եւ կ'արժանանայ յաւիտենական փրկութեան:

Մեծն Կոստանդին, որու անունով կառուցուեցաւ Վոսիօրի  
վրայ շինուած Պոլիսը, կը կոչուի նաեւ սուրբ Կոստանդին, որով-  
հետեւ ան սակի պահուն վրայ բազմած ներկայ եղած է 325 թու-  
ականին Նիկիոյ մէջ դումարուած եկեղեցական համագումարին:

Այս կայսրը ուրիշ նշանակելի զործ մըն ալ կատարեց: Գիւ-  
ղացիները եւ մանր հողատէրերը իր դրած օրէնքով որպէս զերի-  
ներ գամուած մնալու էին իրենց հողին ու զործին, անոնց արգել-  
ւած էր տեղափոխութիւնը: Անիկա այդ բրաւ, որովհետեւ սարուկ-  
ներ չէր կրնար ունենալ: Ասով հիմը դրուեցաւ ճորտատիրութեան:  
Ասով կրնանք ըսել թէ Կոստանդինի դերը շատ մեծ եղած է երկու  
մարդերու մէջ. մին քրիստոնէական կրօնի պետականացումը, միւ-  
սը ճորտատիրական դրութեան նախնական ձեւի հիմնաւորումը:

Կ'արժէ որ մի քիչ աւելի հանդամանօրէն անդրադառնանք  
առաջինին արտադրելով մի քանի էջեր Ֆերասեանի Քրիստոգիտու-  
թեան եւ Հեթանոս Կրօններու Բաղդատականը գրքէն:

«Չորրորդ դարուն, երբ քրիստոնէութիւնը պետական պաշա-  
տանութեան արժանացաւ եւ Կոստանդին կայսրը եկեղեցւոյ առաջ-  
նորդութիւնը ստանձնեց, քրիստոնէական կրօնը անիջապէս փոխեց  
իր բնոյթը: Համագումարներու մասնակցող եկեղեցականները կայ-  
սերական հրամանով հրաւիրուեցան: Համագումարը բացողը, ժո-  
ղովին նախագահողն ու ընթացք տուողը կայսրը եղաւ, ստով եկե-  
ղեցին պետականացաւ, եկեղեցական ժողովներէն բխած որոշում-  
ներն ու յայտարարութիւնները պետական օրէնքի կարգը անցան եւ  
ժողովուրդին պարտադրուեցաւ զանոնք ընդունիլ: Իսկ անոնք որ



տարակարծիք էին, հերձուածող հռչակուեցան ու ենթարկուեցան հալածանքի ու պատիժի:

Այստեղ պէտք է ըսել թէ քրիստոնէական կրօնի սկզբնական շրջանին իսկ սկսան զանազան աղանդներ. եւ դա առանց պատճառի չէր: Նախ որ քրիստոնէութեան քարոզած սկզբունքները նոր չէին. երկրորդ, ոչ ոք Քրիստոսը չէր տեսեր, նոյնիսկ անոր առաքեալ անուանուած ժարդիկը վիսպական կերպարներ էին շատերուն համար. երրորդ, սրբհետեւ Քրիստոսի վերադրուած զէպեքերը ո՛չ պատմութեան կը համապատասխանէին, ո՛չ ալ հասարակ ձեւի տրամաբանութեան:

Քրիստոնէական կրօնի հաստատման մէջ երեք գլխաւոր հոսանքներ մեծ գեր խաղացած են, որոնք են հրեայ քրիստոնեաներ, գնոստիկ քրիստոնեաներ եւ ասիրիկեան քրիստոնեաներ:

Հռովմէական կայսրութեան մէջ առաջին քրիստոնեայ քարոզիչները հրեաներ էին. անոնք մովսիսական օրէնքին համաձայն թրփատութիւնը անհրաժեշտ կը նկատէին: Քրիստոնեայ եկեղեցին սինակոկի ձեւով կը կառուցանէին, ծէս ու արարողութիւն շատ պարզ էին, դաւանանքը միայն Յիսուս Քրիստոսի հաւատարն էր, իսկ մկրտութիւնը հաւատացեալներու շարքին միանալու նշանն էր: Տիտանկղայր Յակոբոս եկեղեցւոյ գլուխն էր: Հրեաները Յիսուսը որպէս հրեայ ազգին խոտացեալ փրկիչ մեսիան կարծելով քրիստոնէութեան հետեւեցան, բայց տեսնելով որ ան աշխարհիկ իշխանութիւն չունէր, սկսան հիասթափուիլ: Երուսաղէմի կործանումը, քրիստոնէութեան մէջ երրորդութեան հարցի ծագումը եւ Մեծն Կոստանդինի իշխանութիւնը հրէից քրիստոնէութեան վերջ տուին:

Գնոստիկ քրիստոնեաները մինչեւ հինգերորդ դարը հրապարակի վրայ էին: Անոնք իրենց վարդապետութիւնը մոպականութենէն Ձրադաշտ, իրենց փիլիսոփայութիւնը քաղղէպցիներէն, սարախններէն եւ իրենց իմաստութիւնը Եգիպտոսէն ու Հնդկաստանէն հաւաքած էին: Անոնք չէին հաւատար թէ Քրիստոս իրական մարմին մը առած եւ շարչարուած էր: Անոնք կ'ընդունէին թէ փրկիչը ինքնազոյ եւ յաւիտենական մաքէ բխած իմացութիւն մըն էր, թէ Քրիստոսն էր այդ իմացութիւնը եւ ոչ թէ մարդ Յիսուսը, եւ թէ Քրիստոս անդրայ ուրուսական մըն էր, մտապահեր մը:

Գնոստիկները զգայական հաճոյքի հակառակ էին: Անոնք բուն կերպով կը դատապարտէին հրեայ նահապետներու բաղձակնութիւնը, Գաւթի կնասիրութիւնը, Սողոմոնի կանանոցը, Քանանու երկրին նուաճումը եւ անմեղ ժողովուրդին բնաջնջումը: Ա-

նոնք մարդկային յաւակնութիւնն ու արդարութիւնը իրարու հետ չէին կրնար հաշտեցնել: Հին Կառկարանի մարդասպանութիւններն ու մասսայական սժիրները կարգալով Պաղեստինի հրեաները բարբարոս կ'անուանէին: Անոնք կ'ըսէին թէ արիւնոտ զոհաբերութիւն մատուցանող, վայրապար արարողութիւններ կատարող, աշխարհիկ ու մարմնական վարձատրութիւն ու պատիժ խոստացող կրօնք մը անկարելի է որ առաքինութիւն ներշնչէ եւ կամ կիրքի ու ժղնութիւնը զսպէ: Անոնք աշխարհի ստեղծագործութեան մովսիսական պատմուածքը, վեց օր զործելէ վերջ Աստուծոյ հանդրատանալը, Ադամ-Եւայի պատմութիւնը, այս բոլորը անսուրբ հեղնանք կը նկատէին: Անոնք կիրքի ու սխալներու ենթակայ, նախանձոտ ու ետապաշա Իսրայէլի Աստուծոյ մէջ տիեզերքի ամենակալ եւ իմաստուն հօր մը զիմազիծք չէին կրնար տեսնել:

Գնոստիկները քաղաքավար, ազնիւ, ուսեալ եւ հարուստ քրիստոնեաներ կը ճանչցուէին եւ հրեաներու հետ կապ չունէին: Անոնց հիմնադիրները եկած էին Սուրիայէն եւ Եգիպտոսէն: Անոնք նիւթին յաւիտենականութեան, այսինքն անջնջելիութեան, կրկնաւաստուածութեան, այսինքն բարի եւ չար եւ անտեսանելի աշխարհին խորհրդաւոր նուիրապետութեան կը հաւատային: Անոնք իրենց մէջ շատ մը ուրիշ ազանդներու բաժնուած էին եւ ունէին իրենց ուրոյն աւետարանները:

Եգիպտացի մեծ եկեղեցական նախահայրեր, Կղեմէս եւ Ռորոլինոս, 180-250 թուականներուն երբ քրիստոնէութեան Սուրբ Գրոց քննական մեկնութիւնը եւ աստուածաբանութիւնը կերտեցին, գնոստիկներու վարդապետութիւններէն օգտուեցան: Պօղոս Առաքեալ անոնց դէմ կը պայքարէր. կողոսացոց ուղղած նամակին մէջ նա գրած է. «Ձգուչացէք, չըլլայ որ մէկը ձեզ կողպալէ փիլիսոփայութիւնով ու փուճ խարէութիւնով, որ մարդոց անմեղութեան պէս է ու աշխարհի սկզբունքներուն պէս եւ ոչ թէ Քրիստոսի վարդապետութեան պէս» (Կող. Բ. 8):

Ասիրիկեան եւ կամ պաղեստինեան քրիստոնէութիւնը ծագում առաւ Աղեքսանդրիոյ մէջ: Երրորդութեան մասին վտանգաւոր վէճերը հոս գլուխ բարձրացուցին: Երրորդութեան դադափարը առաջին անգամ հրապարակ դրած է Թէոփիլոս, Անտիօքի եպիսկոպոսը: Աղեքսանդրիոյ պղատնական քրիստոնեաները գնոստիկներու վարդապետութիւնը բարեփոխեցին, եւ արեւը եւ իր ճառագայթները օրինակ առած երրորդութեան դադափարը քարոզեցին: Արեւը իրը հայր եւ ճառագայթները իրր անոր մէկ անբաժան մասը, որ արեւին հետ գոյակից, բայց արեւին ստորադաս: Յուստին



Մարտիրը, որ պղատոնական փիլիսոփայութեան հետեւող էր, կ'ըսէր թէ աստուածային ճառագայթը որ անգամ մը Քրիստոսի անցած է, երբեք անկէ ետ անուած չէ: Երբեք իր ակէն բաժնուած չէ. ճրագէ մը երբ ուրիշ ճրագ մը կը վառուի առաջին ճրագին լոյսը երբեք չի խաթարուիր: Այսպէս ալ հօր աստուածութիւնը փոխանցուած է իր որդւոյն: Ասոր այս գաղափարը ժողովրդակա- նացաւ եւ ի վերջոյ Նիկիոյ ժողովին կողմէ ընդունուեցաւ. ԱՍՏ-ԻԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ, ԼՈՅՍ Ի ԼՈՒՍՈՅ: Հրէական եւ զնոստիկ քրիս- տոնեաները հետզհետէ տկարացան եւ հինգերորդ դարուն խալատ անհետացան ու հրապարակը թողուցին ամբրիկեան կամ պղատոնա- կան քրիստոնեայ փիլիսոփաներուն:

Ուրիշ քրիստոնեայ աղանդ մըն էր Դոկետոս կոչուած ա- դանդը: Ասոնք կը հաւատային թէ Յիսուս ուրուական մը, յափըշ- տակութիւն մըն էր, թէ Յիսուս իրական մարմին չէր առած, թէ անարդանք է ընդունիլ որ Յիսուս հօր եւ մօրմէ յղացուած է: Ա- նոնք թէ Հին Կտակարանը եւ թէ չորս աւետարանները կը նկատէին որպէս հիւսուած առասպելներու հաւաքածոյ: Անոնք ուսեալ քը- րիստոնեաներ էին, որոնք յետոյ լուծուեցան մարկիսնականներու ու մանիքէականներու մէջ: Ասոնց աւետարանն ու գրութիւնները ե- կեղեցական նախահայրերը ամբողջապէս ոչնչացուցեր են:

Ուրիշ կարեւոր քրիստոնեայ աղանդ մըն էր մանիքէականը: Ասոր հիմնադիրն էր ՄԱՆԻ, Բարելոն ծնած պարսիկ մը, որու մա- սին ընդարձակ տեղեկութիւն տուած է եկեղեցական պատմագիր Սոկրատէս: Մանիի քրիստոնէութիւնը բուդդայական, գրադաշտա- կան եւ քրիստոնէական վարդապետութիւններու խառնուրդ էր:

Մանիքէական կրօնքը շատ պարզ էր, ոչ գոհարերութիւն, ոչ պատկերի պաշտամունք: Օրը չորս անգամ արեւին ու լուսնին կ'ա- ղօթէին, ոչ թէ իբր պաշտում, այլ իբր լոյս ցոլացողներու յար- վանք: Հռովմի կայսրերը 377 թուականէն սկսեալ անոնց դէմ ար- գելիշ օրէնքներ հաստատեցին: Հռովմի արեւելեան կայսր Յուս- տինոս զանոնք զրեթէ բնաջնջեց: Սակայն անոնք դարձեալ Փոքր Ասիոյ մէջ տարածուեցան: Եօթներորդ դարէն մինչեւ տասնընկ- բորդ դարը անոնք Հայաստանի մէջ պաւլիկեաններու հետ էին: Բիւզանդիոյ կայսր Ալեքսիս Կոմնինոսը այս խաղաղ ու պարկեշտ ժողովուրդը սրով ու հուրով հարածեց: Տասնընկերորդ դարուն անոնք Փրանսա անցան եւ հոն կաթարի կոչուած զօրաւոր հասուած մը հաստատեցին, որը հաւատաքնութեան անխնայ հարուածնե- րուն տակ ոչնչացաւ:

Ուրիշ քրիստոնեայ աղանդ մըն էր մոնտանեանը: Ասոնց քը-

րիստոնէութիւնը Բարելոնի, պարսից եւ հրէից կրօնքներու խառ- նուրդն էր: Անոնք զնոստիկներու շատ մօտ էին, ունէին սուրբ գիրքերու հաւաքածոյ մը որ զինդա կը կոչուէր: Յովհաննէս Մը- կրրաթիշը իրենց մարդարէն էր, ատոր համար կը կոչուէին սարխան մկրտչակառններ: Ասոնք իրենց տաճարները միշտ հոսուս ջուրերու քով կը շինէին եւ այդ ջուրերը Յորդանան կ'անուանէին. անոնց մէջ կը մկրտէին իրենց հաւատացեալները:

Այս աղանդին հիմնադիր Մոնտանոս կ'ըսէր թէ ճշմարիտ կրօնքը մոլոխական գրութեան տակ իր մանկութեան մէջ էր, ա- լետարանական գրութեան տակ անցաւ իր պատանեկութեան, իսկ Մուրր Հոդիի գրութեան տակ հասաւ իր կատարելութեան: Հազար տարի վերջ պապական Եւրոպան այս վարդապետութիւնը ընդու- նեց: Եկեղեցական նախահայրերէն Տերտուլիանոս (ծնած 160 թուին բայց ոչ սք զիտէ թէ երբ եւ ինչպէս մեռած է) այս աղան- դին կը պատկանէր: Այս աղանդը լատին եկեղեցւոյ պետականու- թեան դէմ պայքարեցաւ եւ ատոր համար ալ ջախջախուեցաւ միւս աղանդներուն պէս:

Պոնտոսցի Մարկիոն (ծնած 100 թուին) ուրիշ քրիստոնեայ աղանդաւոր մըն էր, որ ունէր իր հետեւորդներն ու եկեղեցիները Իտալիոյ, Եգիպտոսի, Արարիոյ եւ Սուրիայի մէջ: Ասոնք չէին ըն- դուներ թէ Յիսուս երբեք ծնած էր, այլ կը հաւատային թէ Աստու- ծոյ Որդին Արտաքին երեւոյթով մարդու մարմին առած, մարդու երեւոյթով ներկայացեր էր: Մարկիոն չէր ընդուներ թէ քրիստո- նէութիւնը Յուդայի կրօնքի շարունակութիւնն է: Նա կ'ուրանար թէ Յովհաննէս Մկրտիչ Յիսուսը մկրտած էր: Առաքեալները կրօ- նափոխներ ու պատմութիւնը խարդախողներ կ'անուանէր: Առաք- եալներու նամակները բոլորն ալ խարդախուած կը նկատէր: Ասոր յարուցած քրիստոնէական վէճերը շարունակուեցան մինչև Եօթնե- րորդ դարը. անկէ յետոյ մարկիոնականները հետզհետէ չբացան:

Բացի վերը յիշուած աղանդաւորներէն քրիստոնէական սկզբը- նական շրջանին կային նաեւ ուրիշ աղանդաւորներ, որոնք Քրիս- տոսի իռչելութեան չէին հաւատար: Անոնք կ'ըսէին թէ Սիմոն Կիւ- բեւայցի անունով մարդ մը խաչուել է եւ ոչ թէ Յիսուս: Այս քրիս- տոնեաները, որոնք Քրիստոսի մարդեղութիւնը կ'ուրանային, չէին ընդուներ թէ Յիսուս Քրիստոս անունով անձ մը երբեք զոյութիւն ունեցած է. Յիսուս Քրիստոս անունը տուած էին որպէս վերացա- կան գաղափար մը, զիմանութիւն մը, տրամախոհութեան սկզբ- բունքի մարմնացումը: Եւ ասոնք էին առաջին լուսագոյն ու բանա-



վարական քրիստոնեաները, որոնք կը հետևէին զործաւորական միութեանց սկզբունքներուն:

Ուրիշ ազանդաւորներ էին վալենտինականները, մարկոսեանները, կերինթեանները, բարդիսայեանները, որիդենիստները, հայրսկիտները:

Ազանդներու այս բազմազանութիւնը, որ կրօնական հաւատքը անհատի մը ազատ մտածողութեան կապելու բնոյթն ունէր, աւերող դասակարգին համար շահագործման հող չէր պատրաստէր: Եւ ահա երեւան եկաւ Մեծն Կոստանդինը, որ քրիստոնէութիւնը պետական կրօնքի վերածեց, ասով հրապարակ իջաւ կեդրոնական ոյժ մը, որուն առջեւ չքանալու էր անհատական ազատ մտածողութիւնը:

Պետականացած եկեղեցւոյ առաջին ժողովը Նիկիոյ մէջ գումարուեցաւ 325 թուականին, նպատակ ունենալով ազեքսանդրիացի Արիոս երէցին (256-336) եւ Աղեքսանդրիոյ եպիսկոպոս Աղեքսանդրին միջեւ ծագած կրօնական - ԱՐԻՈՍԵԱՆ ՀԵՐԵՏԻԿՈՍՈՒԹԻՒՆ - վէճը հարթել: Արիոս կ'ըսէր թէ եթէ հայրը ծնաւ որդին, ուրեմն որդին նախապէս զոյւթիւն չունէր, վերջէն էր որ սկիզբ առաւ. հետեւաբար որդին արարած մըն էր, իսկ հայրը՝ արարիչ: Ուստի արարած Քրիստոսը մարդ արարածէն սարբեր էակ մը չէր:

Կոստանդին հրաման հանեց որ եպիսկոպոսները եւ անոնց հետ կապ ունեցողները ժողովուրդին ձեռքը, էջերը եւ ջորիները դրակելով անոնց վրայ նստած շուտով դէպի Նիկիա ճամբայ ելլեն: Հաւաքուեցան 318 եպիսկոպոսներ, իսկ միւս ներկաներու թիւը կը հասնէր երկու հազարի: Ասոնց բոլորին ծախքերը կայսերական գանձէն կը հոգացուէին:

Ժողովին մէջ երեք գլխաւոր հատուածներ կային. ուղղափառ, արիոսեան եւ պահպանողական: Այս վերջինը միջին հասկացողութեան կողմնակից էր: Կայրը կը նախազահէր ժողովին: Նախապատրաստութիւններէ վերջ ժողովը Արիոսի հարցը ձեռք առաւ: Այն պահուն երբ Արիոս իր տեսակէտները պարզելու համար խօսք առաւ, Սբ. Նիկողոս անուն եպիսկոպոս մը յարձակեցաւ անոր վերայ եւ գայն ապստակեց: Արիոսի հետեւորդները փոքրաթիւ էին, որոնք իրենց վախէն սմբեցան: Ժողովականները Արիոսն ու ուրիշ երկու եպիսկոպոսներ ժողովէն արտաքսեցին որպէս հերետիկոսներ: Ժողովը այնուհետեւ զձեց Հաւատոյ Հանդանակը (Հաւատաւժի մի Աստուած): Բոլոր եպիսկոպոսները ստորագրեցին այդ հանդանակը, ոմանք՝ իրենց վախէն:

Արիոս իր տեսակէտները բովանդակող զիրք մը դրած էր, Թաղիա տիտղոսով: Ժողովականները որոշեցին այդ զիրքը այրել,

իսկ կայրը մասնաւոր հրովարտակով յայտարարեց. «Եթէ Արիոսի ունէ գրութիւնը ձեռք անցնի, պէտք է դայն կրակին յանձնէք: Եթէ գտնուի մէկը որ Արիոսի գրութիւնը պահած է, այդպիսին մահուան պիտի դատապարտուի: Թող Աստուած պահպանէ ձեզ:»

Հազիւ թէ արիոսեան հերետիկոսութիւնը ճնշուած էր, ահա հրապարակ եկաւ ուրիշ հերետիկոս մը, Նեստորը, Մարաշ ծնած Անտիոքցի վանական մը, խստակրօնութեան եւ պերճախօսութեան մէջ հուշակ հանած մարդ մը: Թէոդոսիոս կայսրը գայն Պոլիս պատրիարքութեան հրաւիրեց (428-31): Կայսեր ներկայութեան առջին քարոզին մէջ Նեստոր հետեւեալը ըսաւ. «Տուր ինձ, ո՞վ կայր, հերետիկոսներէ մաքրուած երկիրը, եւ ես ի փոխարէն քեզի պիտի տամ երկինց թագաւորութիւնը: Ինձ հետ հերետիկոսները բնաջինջ ըրէ, եւ ես քեզ հետ պարսիկները բնաջինջ ընեմ»: Նեստոր Պոլսոյ մէջ արիոսականներու դադանի ժողովատեղի մը երեւան հանեց. անոնք մահը նախընտրեցին քան իրենց կրօնական դադափարէն հրաժարիլը եւ Նեստոր ժողովատեղին կրակի տուաւ: Զատիկը հրէից հետ աօնող քրիստոնեաները եկեղեցւոյ եւ պետութեան դէմ զործող յանցաւոր յայտարարեց եւ գանոնք ջարդեց: Հերետիկոսութեան յանցանքի համար պատիժի քսան երեք ատիճաններ հաստատեց: Քիչ վերջ, սակայն, եպիսկոպոսները դաւադրեցին իրեն դէմ եւ հալածող Նեստորը դարձաւ հալածեալ Նեստոր:

Նեստոր Քրիստոսի վերադրուած երկու բնութիւնները, այսինքն վարդապետ Քրիստոսի մարդկային բնութիւնը տէր Յիսուսի աստուածային բնութենէն կը բաժնէր: Ան օրհնեալ կայսր իբր Քրիստոսի մայրը կը յարգէր, բայց իբրեւ Աստուծոյ մայրը չէր ճանչնար: Պոլսոյ եպիսկոպոսները սկսան ստորերկրեայ գործունէութիւն Նեստորի դէմ: Անոնք Աղեքսանդրիոյ եպիսկոպոս Կիրեղը եւ ուրիշ ազդեցիկ եպիսկոպոսները իրենց կողմը շահեցան եւ յաջողեցան 431 թուականին Եփեսոսի առաջին ժողովը դումարել: Նեստոր Եփեսոսի ժողովին գնաց ոչ թէ որպէս ամբաստանեալ, այլ որպէս դատաւոր: Նա իր հետ տարաւ զերկներու զինուած խումբ մը, ի պահանջել հարկին յարձակողականի անցնելու համար: Մակայն Նեստորին հակառակորդ Կիրեղը աւելի զօրաւոր գէնքերով եւ աւելի մեծ բազմութեամբ եկաւ ժողովի: Այն նաւատորմին որ Կիրեղը Աղեքսանդրիայէն կը բերէր, հետեւեցաւ ծովային զինուորներու, զերկներու եւ մոլեռանդներու հսկայ թափօր մը ԱՍՏՈՒՍԾԱՄԱՅՐ նշանատառ դրօշակներով: Կիրեղ պահանջեց ժողովը բանալ իսկայն. Նեստոր հակառակեցաւ. ուղեց ժողովին բացումը հինգ օր յետաձգել, որովհետեւ իր արեւելքցի կողմնակիցները, Անտիօքի



Յովհաննէսը դեռ չէին հասած: Մակայն Կիւրեղ յաջողեցաւ ժողովին ընթացք տալ. 68 եպիսկոպոսներ եւ 22 մեթոքապոլիտներ աշխատեցան Նեստորը պաշտպանել, բայց բոլորն ալ ժողովէն արտաքսուեցան: Կայսեր փոխարէն ներկայ էր քաղաքական պաշտօնեայ մը, որ յանուն կայսեր՝ պահանջեց ժողովը չորս օր յետաձգել: Կիւրեղի խումբը զայն եւս անարգեց եւ սուրբերու ժողովէն դուրս վճռեց: Կիւրեղի կողմնակից եպիսկոպոսները, որոնք ժողովին տիրացած էին, Նիկիոյ հանդանակը վաւերացուցին, Նեստորը դատապարտեցին եւ աստուածամօր եկեղեցւոյ մէջ մեծ շուքով իրենց յաղթանակը տօնեցին: Հինգերորդ օրը Նեստորի բարեկամ 50 եպիսկոպոսները եկան. անոնք ալ ժողով կազմելով Կիւրեղը դատապարտեցին որպէս հրէշ որ եկեղեցին կը քանդէր:

Կիւրեղականները Աստուածամօր եկեղեցւոյ դուռը նեստորականներու առջև դոցեցին: Կառավարութեան զինուորները եկան եւ յարձակեցան եկեղեցիին վրայ: Կիւրեղականները զիմաղրեցին եւ զինուորներուն ձիերը սպաննեցին, շատ մը զինուորներ վիրաւորուեցան: Զինուորները ետ քաշուեցան: Եղածը արիւնալի կռիւ էր: Եփեսոսի Աստուածամայր եկեղեցին մարդկային արիւնով ներկուեցաւ: Եփեսոսի քաղաքապետը Նեստորը պաշտպանեց եւ ուղեց Կիւրեղը ձերբակալել, բայց Կիւրեղ յաջողեցաւ զինք պաշարող շղթայէն դուրս գալ եւ Աղեքսանդրիոյ իր բերդը վերադառնալ: Կիւրեղ հանդիստ չնստաւ, Պոլսոյ իր արքանակներով կրցաւ պաշտական կիները, ներքինները կաշառել, կայսեր տկարամիտ որդին Արքատիւսը իր կողմը շահեցաւ եւ վերջապէս կայսերական հրամանով Նեստորը աքսորի դատապարտուեցաւ:

Եփեսոսի առաջին ժողովէն աւելի խայտառակ ու ամօթալի էր 449-ին դարձեալ Եփոսոս գումարուած երկրորդ ժողովը, որ ծանօթ է ԱԻԱՁԱԿՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ անունով: Երեսուցէմի եպիսկոպոս Ֆլավիանոսն, որ Եւսեբիոսէն նամակ մը բերած էր, թոյլ չարուեցաւ որ այդ նամակը կարգացուի, որովհետեւ ամէնք զիտէին թէ Եւսեբիոսը Քրիստոսը կ'ընդունէր երկու կերպարով, մարդ եւ աստուած: Ժողովականները միաձայն աղաղակեցին. «Եւսեբիոս Քրիստոսը երկու կտոր բրած է. ուրեմն ինքն ալ երկու կտոր պէտք է ըլլայ. եւ քանի որ ինք ներկայ չէ, իր ներկայացուցիչը պէտք է ներկու կտոր ըլլայ»: Ասոր վրայ նախ ժողովին նախագահը, ապա կատարած վանականները կը յարձակին Ֆլավիանոսի վրայ «ՄՊԱՆՆԵՅԷՔ, ՄՊԱՆՆԵՅԷՔ» պոռալով: Եւ ինչո՞ եպիսկոպոսը տեղն ու տեղը կը մեղցնեն բռնեցքով ու աքցիններով:

451 Թուականին Նիկիոյ մէջ ուրիշ ժողով մը գումարուեցաւ,

այնքան ազմկալի մի ժողով որ ժողովը Նիկիոյէն Քաղկեդոն փոխադրեցին, որպէսզի կայսեր մօտ ըլլայ եւ զօրքերը կարենան խառնակութիւնը զսպել: Ժողովը սկսաւ ազմուկով: Երբ մեկնիչ եւ պատմարան Թէոդորէա եպիսկոպոսը ներկայացաւ, պայթեցաւ փոթորիկը: Թէոդորէա թշնամի եպիսկոպոսները «բող կորսուի Նեստորի ուսուցիչը» պոռացին: Իսկ անոր բարեկամները միեւնոյն ձեւով կ'աղաղակէին. «Թող կորսուի մանիքէեանները, բող կորսուի Ֆլավիանոսի սպաննիչները, բող կորսուի մարգասպան Գիոսկորուսը (Գիոսկորուսը Եփեսոսի առաջին ժողովի նախագահն էր): Խառնակութիւնն ու իրարանցումը այն աստիճանին կը հասնին որ զինուորները ներս խուժելով հազիւ կարող կ'ըլլան խաղաղութիւն հաստատել:

Չորրորդ գարուն մէջ քառասուն եւ հինգ եկեղեցական ժողովներ գումարուեցան, որոնց տասնեւերեքը Արիոսի զէմ, տասնեւհինգը ի նպաստ Արիոսի եւ տասնեւօթը կէս արիոսեան էին: Եկեղեցական պատմարան Մոչէյմ եկեղեցական այդ ժողովներու մասին խօսելով կը գրէ. «Չորրորդ գարուն մէջ երկու հրէշային եւ աղիտարեք սխալներ գործուեցան: 1. Ասելն ու խարելը առաքինութիւն էին, երբ այդ միջոցներով կարելի էր եկեղեցւոյ շահը ապահովել: 2. Կրօնական հաւատալիքներու մէջ սխալողը երբ իր գաղափարին կառչած կը մնար, քաղաքական յանցագործ կը համարուէր եւ մարմնային շարժարանքով կը պատժուէր»:

Այստեղ կը վերջանայ Ֆերասէանի գիրքէն արտագրած բաժինը: Մենք այդ ըրինք, պարզապէս փաստելու համար որ քրիստոնեայ եպիսկոպոսները եւ քրիստոնեայ զիտնականները աստուածարանական հարցերով դրազած են աւելի քան թէ երկրային, դասակարգային խնդիրներով: Բայց պատմական իրողութիւն է որ առաջին դարու քրիստոնեաները, որոնք գործաւորական միութիւններէն կազմակերպուած էին, զորք ունէին դրակամ-գործնական կեանքի հետ. ասոր համար անոնց աւետարանները հռչակուեցան անվաւեր: Այդ աւետարաններուն մէջ մենք կը գտնենք յեղափոխական բնութագիր: Օրինակի համար, աւետարան ենկրապիտաներու մէջ կը կարգանք հետեւեալ տղերքը. «Հողին միայն հաւատարմով չի մեծնար, այլ գիտութեամբ: Տղէտ հաւատացեալը հասարակութեան համար աւելի վստահաւոր է, քան թէ գիտուն անհաւատը:

Գուն կրնաս հրճուիլ միայն այն ատեն երբ կը սիրես քու գործի ընկերը որպէս քու եղբայրդ եւ անոր կ'օգնես երբ ան վրտանդի մէջ է:

Արդարութիւնը ճանչցողը պիտի գիտնայ արդարութեան



Այստեղ կը տեսնենք թէ գերիները համարեա թէ բեռ եղած էին կալուածատէրերուն: Այսու հանդերձ խոշոր կալուածատիրութիւնը որ տիրական էր Իսալիտայ մէջ, նահանջի չէր մասնուեր, որովհետեւ անտեսական այդ խառնաշփոթութեանց մէջ մանր ֆարմըրներն ու ստաիկաններն էին որ աւելի կը վնասուէին հանրապետութեան վերջալոյսի շրջանին:

Պատերազմը Հոսովմի ամենամեծ «արդիւնաբերական ճարտարաբանութեան» էր: Որքան ատեն որ հարուստ երկիրները, որոնք գերիներու աշխատանքով հարստութիւն էին կուտակեր, բացեր էին իրենց դռները Հոսովմէական լէզէոններուն առջեւ, պատերազմական բարձրորակ ճարտարաբանութեամբ աննկարագրելիօրէն շահարկեր էր: Գրաւուած հսկայական դանձերը, առաջին անգամ Իսալիտայ մէջ, յետոյ բերուած Հոսովմի Գաղիկեդոնէն, Յունաստանէն, Պոնտոսէն, Եգիպտոսէն, Սիկիլիայէն, Սպանիայէն եւ նոյնիսկ Կոլէն, բոլորովին զուտ դանձեր չէին, անոնց բնակեցումը էին հազարաւոր կրթուած, խելացի ու քաղաքակիրթ գերիներ: Հարստութեան այս երկու ակերբ ցամաքեցան երբ Հոսովմի յաղթանակները վերջ գտան: Ճակատային բարբարոսներէն կամ կէս բարբարոսներէն կարելի չէր դրամ ձեռք բերել. միւս կողմէ զրաւուելիք երկիր ալ չէր մնացեր, ոչ ալ նոր գերիներ բերելու միջոց կար, թողունք որ բերուած չին գերիները պահելն ալ մեծ ծախս կը պահանջէր: Բայց զարձեալ Հընոսովմ իսկապէս շուկայ մըն էր, որուն մէկ վախճան էր մնացեր: Քանի որ դուրսէն, ըլլալ ծովային, ըլլալ ցամաքային ճամբով ներածուած պերճանքի առարկաներու փոխանակութեան համար հարկ եղած արտադրութիւնը կը պակսէր, սրարտեալ եւ կողոպտուած երկիրներու սակիի ու արծաթի վնասները պիտի փակուէին կանխիկ վճարումով, իսկ այդ զործառնութիւնը ընդունին էին վաճառականները: Հոսովմէական կայսրութիւնը, ուրեմն, այդ պայմաններու ներքեւ միայն ելքի մէկ ճամբայ ունէր. այն էր ծանր տուրքերու ենթարկել հպատակ երկիրները: Բայց այս միջոցն ալ զրութիւնը չէր բարելաւեր, քանի որ պետութիւնը իր պիւտճէի հաւասարակշռութիւնը կապած էր կողոպուտի ու բռնութեան հետ, փոխանակ կապելու արտադրութեան զարգացման միջոցներուն հետ:

Կայսրերու եւ մասնաւոր անհատներու վիթխարի բողոքածախսութիւնն ու շոտյութիւնը, ինչպէս հոսովմէացի պատմաբանները կը նկարագրեն, ստեղծեր էին մշատեւ զրամական սաղմուտ մը նոյն ինքն Հոսովմի մէջ: Հոսովմի ազատ պրոլետարները, որոնք չէին արտադրեր այլ իրենց քուէներու սիրոյն համար առանց գործելու կը սպառէին ժողովրդական սմբարանոցները, կը սաստկաց-

նէին զոյութիւն ունեցող զօնարութիւնը: Թէեւ տուրքեր կը հաւաքուէին ամենամեծ աշխուժութեամբ, բայց զարձեալ անկարելի էր որ Հոսովմ իր վճարումները ընէր կանխիկով: Հոսովմ կողոպտեր էր իր հարստակեցուցած երկիրները. այժմ կարգը եկեր էր որ այդ երկիրները կամաց կամաց կողոպտէին Հոսովմը: Անշահարկեր ծախսարարութիւնը հսկայ կրկէսներու, տաճարներու, ջրմուղներու, բաղնիքներու՝ զրութիւնը աւելի կը վտաթարացնէր: Բայց այս կայսրութիւնը մասնաւորապէս արուած էր Իսալիտայ եւ արեւմուտքի կայսրութեան: Արեւելքը նուազ կը ստուապէր Ֆինանսական նեղութեամբ, որովհետեւ Հոսովմի հետ կանխիկի դժով յառաջ տարած վաճառականութիւնը որոշ չափով կը թեթեւցնէր իր ուսին ծանրացած բնոր: Այսպիսով կը տեսնենք թէ Հոսովմ զանդաւորէն անտեսական քայքայումով կը զիւթէր իր անկումին. իսկ գերետիրութիւնը, որ ատեն մը իր բարձրացումին նպաստեց, այժմ եկած էր արագացնել իր վայրէջքը: Գերին հողագործութեան, ինչպէս նաեւ մանուֆակտուրայի մէջ կենդանացած զործիք մըն էր, որ դասապարտուած էր կատարել զուտ մէքենական աշխատանք: Մահացումը գերիներու մէջ շատ ճնշող էր. գերիներու սերնդագործութիւնը աննշան էր, իսկ մահացումը անհամեմատ աւելի բարձր: Ասկէ դատ հաշուի պիտի առնել նաեւ գերիներու փախուստը: Մեռնող կամ փախչող գերիներու տեղը բռնող չկար. ասով պարզ էր որ քանի արտադրողական աշխատանքի մեծ մասը գերիներուն տրուած էր, ուրեմն անոնց թուական նուազումը արդէն իսկ անբաւարար երկրի արտադրողականութիւնը կ'առաջնորդէր գէշն յոռեգոյնին:

Կային սղոտ գիւղացիներ որոնք կրնային զարգացնել իրենց մշակութիւնը, բայց անոնք ալ կը վախճային ընդարձակել իրենց խնայողութիւնները լաւագոյն զործիքներով, որովհետեւ մեծ հողատէրերը ամէն միջոցները ունէին զիրենք սեփականադրելու: Ասկէ դատ երբ գերետիրութիւնը հետզհետէ կը քայքայուէր, հողագործութեան յառաջգիւթութիւնը կ'անգամալուծուէր գերիներու կողմէ եղած կողոպուտներով, որովհետեւ գերետէրերը չկարենալով իրենց գերիները պահել, կը քաջալերէին որ անոնք մանկին ազատ գիւղացիներու հողերէն ներս եւ գրադէին աւարտութեամբ:

Երեւոյթը նոյնն էր զրաւուած երկրամասերուն մէջ, ուր այնուականները իրենց զրաւուած հողերու մշակութիւնը յանձնել էին գերիներուն: Իսկ այդ գերիները անբնական էր որ սրտանց աշխատէին իրենց տէրերը աւելի եւ աւելի հարստացնելու համար:

Երբեք սխալած չենք ըլլար երբ բռնեք թէ յաղթական հոսովմէացիները պարտուեցան պարտեալ թշնամիներու արուեստներէն,



անոնց մշակոյթէն, անոնց ստեղծած պերճանքէն ու ասպականութիւններէն: Արեւմուտքը զէնքով ընկճեց արեւելքը, բայց արեւելքը ընկճեց արեւմուտքը իր խելքով ու ցոփութեամբ: Նոյնը պատահեցաւ գերիններուն: Անոնց հանդէպ ցոյց տրուած անդթութիւնը մարդկութիւնը տարաւ ցած մակարդակի վրայ: Հողագործութեան մէջ գերիններու աշխատանքը դանդաղեցուց երկրագործութեան մեքենական յառաջգիժութիւնը միւս կողմէ անոնց մոլութիւնները, քննաքի ձեւերն ու դաւաճանութիւնները որոշ ազդեցութիւն գործեցին իրենց աէրերու բարոյականին վրայ: Լքեսուելու մշտական վախը իրենց աէրերու բարոյականին վրայ: Լքեսուելու մշտական վախը անհետացուց ընտանիքի առանձնութեան ընկալեալ հանգամանքը: Գերեաթիութիւնը, սւրեմն, իր գլխաւոր գերով իր մէջ ունէր իր քայքայումը փութացնող տարրերը, ըլլան անոնք անտեսական, բնկերային եւ բարոյագիտական: Ի հարկէ անտեսականը պիտի նըկատենք ամէնէն գլխաւոր տարրը:

Մեր այս բոլոր նկարագրութիւններէն պարզ կ'երեւայ որ հռովմէական տիրապետութեան շրջանին չկար ոչ մի տեսակ կապիտալի կուտակում որ գործածուելու էր շահու նպատակով, արտադրութեան ընթացք տալու համար:

Հռովմէական կայսրութեան տարիներուն կապիտալը տարրեր էր մեր այս օրերու բմբուսած կապիտալէն: Ան գլխաւորապէս կապուած էր վաճառականութեան հետ, որուն գործն էր ուրիշներու արտադրածներէն շահոյթ ապահովել: Որպէս կապիտալ արտադրութեան ընթացառումին հետ կապ չունէր: Իսկ արտադրութեան ընթացառումը ինքնին անկատար էր, դանդաղ ու աններգաշնակ: Եւ այդ վիճակին մէջ մնաց դարերով: Արտադրութիւնը տակաւին կը մնար մասնաւորապէս ուղղակի գործածութեան համար. քաղաքի ու գիւղի ազատ արտադրողները տակաւին կը մնային իրենց գործիքներու տէրը եւ աէրը իրենց արտադրոյթներուն: Գերինները անհատական սեփականութիւն էին, անոնց արտադրածները անհատական սեփականութիւն էին, հողը եւ գործիքները գերեռէրերու սեփականութիւնն էին: Բայց այսպիսի կապիտալ մը գործածողը բնաւ նպատակ չունէր արտադրութեանց փոխանակութեամբ իր արտադրողութիւնը աւելի զարգացնելու եւ շահոյթը կրկնապատկելու: Գերեռէրը իր գերիններն ու հում նիւթերը սուկիով չէր վներ շահու համար: Ան գանոնք մեքենաներու վրայ չէր գործածեր, ոչ ալ անոնց արտադրոյթները նպատակ ունէր ծախել աւելի սուկի ձեռք բերելու համար: Խնդրոյն մէջ այդպիսի նկատաւում չկար բնաւ:

Երեւոյթը նոյնն էր հանքային արդիւնաբերութեան մէջ, որ կը գործածուէին գերիններու հետ աշխատավարձքով ազատ մարդիկ: Բայց նոյնիսկ այդ պարագային ալ, երբ սուկի, արծաթ, պղինձ կամ երկաթ դուրս կը հանէին երկրի խորքէն, այդ մետաղները չէին կատարեր այն գործը, ինչ որ այսօր կը կատարեն կապիտալիստական անտեսութեան մէջ: Կապիտալը, որպէս անտեսական եւ բնկերային ուժ որ արտադրելու էր ստարկաներ փոխանակութեան համար, այո, միմիայն փոխանակութեան համար, որ գործածուելու էր ազատ աշխատաւորներ որոնք բացի աշխատավարձ ուրիշ ընտրութիւն չունէին, այդպիսի սարքաւորուած արդիւնաբերութիւն գոյութիւն չունէր հին ատենները: Այդ ձեւը իր էութեամբ արդիական է եւ ան չէր կրնար յայտնագործուիլ ներկայ ձեւով, երբ բնկերային եւ անտեսական պայմանները անոր գործունէութեան համար պատմականօրէն հող չէին պատրաստած:

Ասոր համար ներկայի կապիտալը իր գիտական ու անտեսական կողմերով երբ բազդատենք հին շրջանի կապիտալին հետ նոյնիսկ հաշուի առնելով հետզհետէ զարգացող վարկային ու սեղանաւորութեան գիծը, կը տեսնենք հսկայ տարբերութիւն մը: Եղածին պէս, երբ գերեաթիութեան վայրէջքը սկսաւ եւ արեւմտեան կայսրութեան կուրծքէն դրամական հարստութիւնը քաշուեցաւ, խոշոր կալուածատէրերը պէտք եղած դրամազուլիւր չունէին բացառապէս իրենց պէտք եղած արտադրոյթները գնելու, ինչ որ նախապէս սովոր էին հայթայթել առանց դժուարութեան: Սկզբնական շրջանին ազնուականները իրենց պէտք եղածէն աւելին կ'ունենային եւ աւելցուքը կուտային ժողովուրդին. ժողովուրդը այժմ այդ աւելցուքէն ալ զրկուած էր:

Երբ գերեաթիութիւնը որպէս հասարակ աշխատանքի ու արտադրութեան սղբիւրը հետզհետէ դադրեցաւ տիրական ըլլալէ եւ նոյն ատեն դրամական անտեսութիւնը սուկի ու արծաթի պաշտպանէն ենթարկուեցաւ սեղմումի, այն ատեն սկսաւ ընտանեկան արտադրողականութեան հին մեթոտը: Ազատ մշակողները կ'աղբէին պարզապէս իրենց ընտանեկան գործով, հարստութիւն չէին կրնար ամբարել եւ եթէ մի քիչ կարող ըլլային խնայել ալ, չէին կարող սպասել քաղաքի արհեստաւորներու արտադրած ստարկաները: Վարձագնով աշխատող գիւղացիներու մասին չենք խօսիր, որովհետեւ անոնք հողատիրոջ հաշուին կ'աշխատէին միմիայն շարքաշ կեանք մը քաշքշելու գնով: Ամէնէն շատ տառապողները ազատ մշակողներն էին, որոնք կը տատապէին ծանր հարկերէն եւ պետական գանձարանի ճնշումէն: Պետութիւնը կը պահանջէր որ անոնց



աշխատանքները պոզուսաներն ու հասարակաց շինությունները կանոնաւոր վիճակի մէջ պահելու համար աշխատանքի որոշ օրեր յատկացնէին պետութեան համար: Անդին, զինուորական նպատակով կառուցուած ճամբաներու քայքայումը ուրիշ տեսակի գծուարութիւն մըն էր որ կը ծառայէր ազատ մշակողներու արտադրութիւնն ու փոխադրութեան առջև: Այս վերջին գծուարութիւնը այնքան լուրջ էր որ երեսուն միոն կեդրոնէն հետո զանազան երկրագործական արտադրութիւնները կեդրոնաւորելու հասցնելու եւ ամբարելու համար շուկայի գնին կրկին ծախս պէտք էր ընել:

Քաղաքները զիւղական շրջանները կը կառավարէին քաղաքական ուժով, բայց ոչ տնտեսական ուժով: Վաճառականութիւնը, կայսերական Հոռովք վեր առած, զբաղած էր կայսերութեամբ, ազնուականներու եւ զինուորական պետերու պերճանքի առարկաներ մատակարարել, իսկ երբ սակիներու եւ արծաթի սպառումով այդ ազդեցիկները սկսան ցամքիլ, Հոռովքի տիրող դատակարար մասնունցաւ նեղ դրութեան: Հոռովքական տիրապետութեան ամբողջ շրջանին, Հոռովքի հարստութիւնը կը ստացուէր ուրիշներէն եւ այդ հարստութիւնը կը գործածուէր ոչ թէ արտադրութեան զարգացման, այլ մի միայն սպառումի համար:

Այժմ նորէն անդրադառնանք զիւղական շրջանին:

Փոքր մշակողը կամ գողթարնակը արամադրութեան տակ մէկ կամ երկու գերի հաղիւ ունէր ամէն ատենուան համար: Ստրկական աշխատանքը երբ արեւմուտքի եւ արեւելքի մէջ հետըհետէ կը զարգէր տիրական ըլլալէ, ասիկա ուրիշ գծուարութիւն մըն էր մանր մշակողին համար: Հոյր ամբողջ ընկերային կառուցուածքին հիմքը կը կազմէր: Անկէ կը ստացուէին կեանքի անհրաժեշտ պիտոյքները: Քաղաքները կը պահանջէին իրենց պէտք եղածները ստանալ եւ զանոնք աւելցնել, իսկ պակասը լրացնելու մասին բնաւ չէին մտածեր:

Գերետիրութեան քայքայումը անխուսափելի էր, իսկ այդ անխուսափելիութիւնը կապուած էր յաղթանակներու շրջանի շրջափառումով եւ յաղթանակները իրենք իրենց ստեղծեցին այդ շրջան երբ հոռովքական կայսրութիւնը այլեւս իր տիրապետութեան սահմանները չէր կրնար ընդարձակել. անոր համար նոր արշաւանքի հորիզոն չէր մնացեր: Անոր հետեւանքով զարգեցաւ գերիներու եւ ներածուած գանձերու կուտակումը: Երբ գերիներու շուկան դատարկուեցաւ, ստրկական աշխատանք պահանջող մարդերուն վրայ գերիներու պահանջը կրկնապատկուեցաւ: Այլեւս հարաւոր գերիներ կարելի էր ներս բերել. Գիւտի շուկային մէջ

այլեւս մարդուած եւ կրթուած մարդիկ ու կիներ չէին ծախուեր ածան գնով: Նախապէս անոնց զինք այնքան ցած էր որ հարիւրաւոր գերիներ երբ ճանձերու պէս կը մեռնէին եւ կամ գողի նման կը փախչէին, երբեք մտահոգութիւն չէին պատճառուեր գերետիրոջ: Անհաշիւ ածան գերիներ կային, որոնք կրնային լեցնել կարսուածներուն տեղը: Բայց այժմ, երբ գերիները պակսեցան, անոնց կուտուարը դարձանելը լուրջ հարցի փոխուեցաւ: Ծահարեր բան մը չէր այլեւս գերիները արհամարհելը, անոնց հետ պէշ վերաբերուելը, կամ զանոնք գործի ծանրութեան ներքեւ մեռցնելը: Սակաւ էր գրամը, սակաւ եւ սուղ էին գերիները:

Ինչպէս գերիներ ճարելը գծուար էր, նոյնպէս գծուար ու ծախսարար էր զանոնք պահելը: Արտադրութեան նուազեցման հետեւանքով ցորենին եւ ուրիշ կենսական առարկաներու գինները չափազանց կը բարձրանային: Գիտկղատանոս կայսեր գնորոշման հոշակաւոր հրովարտակը, որ արձանագրուած է քարերու վրայ, սպացոյց է որ կայսրութեան տնտեսութիւնը վտանգաւոր ճգնաժամի ճամբու մէջ մտեր էր: Բայց Գիտկղատանոսի գրած օրէնքը ժամանակի մը համար գիններու բարձրացումը զանդազեցուց, սակայն դրութիւնը բնականոն դարձնելէ հետո մնաց:

Քաղաքներու մէջի գերիները, որոնք իրենց հոգատարութեան ու սպրուտտի ծախսերը չէին կրնար փակել իրենց աշխատանքի արտադրութիւնով, շատ աւելի սուղի կը նստէին իրենց տէրերուն վրայ քան կանխադրուած շրջանին: Գերետէրը եթէ ուզէր իր գերիները ծախել, գծուար էր գնորդ ճարելը, որովհետեւ գրամներն ալ հրապարակէն չքացեր էին. ասկէ զատ գնորդ մը պիտի մտածէր գերիներու աշխատանքը շահագործելու մասին: Կենսամթերքները սակաւ եւ սուղ էին, ինչպէս պիտի պահէր գերիները եւ ինչպէս անոնցմէ շահոյթ կրնար ապահովել: Ասկէ սկսաւ գերիները ազատարելու ընդհանուր ձգտումը: Գերետէր մը երբ կ'ազատագրէր իր գերիները ինք ալ կ'ազատուէր զանոնք պահելու պատասխանատուութենէն եւ անոնց համար պահանջուած անհրաժեշտ ծախսերէն: Ան կը տեսնէր որ ազատ վարձու աշխատանքները աւելի լաւ կը գործէին եւ անոնց ծախսը աւելի պակաս էր քան մշտապէս պահուած բազմաթիւ գերիներու գործը, գերիներ որոնք յաճախ ցոյց կուտային իրենց վրէժխնդրութիւնը, գառնալով սիտակալ, վնասարար եւ վտանգաւոր մարդիկ:

Գրութիւն մը երբ մտած է իր քայքայման ճամբան, իր ծոցէն ծնող հակասութիւնները զիրար կը խաչաձեւեն եւ կը շինեն սարդի ստաւին մը ուր ինկող ճանձը որքան փորձէ ազատուիլ,



այնքան արագ կը փախկան զինք կաշկանդող թերեւո՛ւն մէջ: Այդպէս էր Հոովմի տնտեսական, բնկերային գրութիւնը, որ չէր կըրնար բարւոքուիլ մաս մը դերիներու ազատագրութեամբ: Այդ գերինները ազատուելով ստրկական լուծէն, յանկարծ պայցին որ իրենց վիզը անցած էր կեանքի կարիքներու լուծին տակ: Անոնք պիտի ապրէին եւ ապրելու համար պէտք էր որ գործէին: Ասով սկսաւ սուր մրցում մը ազատ աշխատաւորութեան եւ ստրկական աշխատաւորութեան միջեւ: Միւս կողմէ առանձնաշնորհեալ սրբոյնտարները, որոնք որպէս հոովմէական քաղաքացիներ, կ'արհամարհէին աշխատանքը, երբ աւարներով լեցուած ամբարանոցները դատարկուեցան, հարկադրուած էին գործելու ապրելու համար: Այսպիսով գերեախրութիւնը ազատ աշխատաւորութեան հետ պայքարումներու ընթացքին իր վերի վայրումներով, ըլլայ քաղաքներու թէ կրկական շրջաններու մէջ, ըլլայ անական ծառայութեան թէ արհեստական գործառնութեանց մէջ կամաց կամաց դարձաւ նուազ օդասկար:

Բայց որ այս իրադարձութեանց ընթացքին միտի լաւ կողմը այն էր որ տակաւին պահուած դերիններու վիճակը համեմատաբար բարւոքուեցաւ: Անոնց հետ մարդիկ կը վերաբերուէին մարդկայնորէն: Անոնց ի նպաստ օրէնքներ անցան: Անոնք սկսան յարգուիլ ոչ միայն իրենց կենդանութեան տակ, այլեւ մեռնելէն վերջ: Նախապէս գերիններուն արտօնուած չէր գերեզման ունենալ, այժմ անոնք քաղաքացիներու նման գերեզմանոց ունէին եւ անոնց գերեզմանները կը նկատուէին որպէս սրբատեղիներ: Այսուհանդերձ տիրող դատակարգը կեանքը վայելելու իր հին ուղեգծէն չհեռացաւ: Սակաւաթիւ մարդոց շարունակական փախկանութիւնը, անոնց պերճաւորութեան ծայրայեղութիւնը, անոնց մսխումը, անոնց ցուցամոլութիւնն ու բազմաճախ խնճոյքները փութացուցին այն տնտեսական անկումը որ իր կարգին ընդհանրացուց թշուառութիւնը եւ նաեւ ուժեղացուց այն պատճառները որոնք հակառակ էին գերեախրութեան:

Այսպիսով, կը տեսնենք թէ նոյնիսկ տեղի կանուխէն, երբորդ ու չորորդ դարերուն գերեախրութիւնը աստիճանաբար եւ իրապէս հոովմէական կայրութեան մէջ տնտեսական տիրապետող ուժ մը ըլլալէ սկսած էր դադրիլ: Պատմութեան մէջ շատ հազուադէպ է տեսնել որ տիրող փոքրաթիւ դասակարգը որոշակի հասկընայ թէ իր քայքայումի շրջանը անխուտափելի է: Նոյնպէս հազուադէպ է տեսնել որ շահագործուող ու ստուպող մեծամասնութիւնը հասկնայ իր ստորադասութեան իրական պատճառները եւ

տեսնէ այն մակարդակը ուր ինք հասեր է ոչ-գիտակցական բայց ստույգ տնտեսական զարգացման հետեւանքով: Այդպէս էին գերինները եւ նոյնն էր գերեախրութիւնը: Գերինները յաճախ ապստամբեցան եւ քաջարար կուուեցան փշրելու տնտեսական անհանդուրժելի շղթաները եւ վերցնելու բնկերային ու անհաստակուն բանութիւնը: Բայց նոյնիսկ երբ անոնք ժամանակաւորապէս յաջողեցան, չկրցին ճամբայ մը դանել փախչելու գիրենք տանջող եւ խոյխոյղ գրութեանէն, միայն որպէս վրէժ իրենց աչքերը գրին նոյն վիճակին մէջ: Անոնց ապստամբական փորձերը տեւական յաջողութիւն չունեցան, որովհետեւ ժամանակը հասունցած չէր իրական ազատութիւն ձեռք բերելու համար: Անոնք հերոսաբար զոհուեցան, բազմաթիւ մարտիրոսներ տուին, գիւցազնաբար կուուեցան գերազանց ուժերու դէմ, բայց չէին գիտեր թէ սուր էր իրենց հանգրուանը, ուր այլեւս դասակարգերը պիտի դադրէին գոյութիւն ունենալ: Այդ գիտակցութեան հասնելու համար տնտեսական պայմանները դարերու շրջանառութեան մէջէն անցնելու էին, որպէսզի մարդիկ որոշ ծրագիր մշակէին ու գործէին համաձայն այդ ծրագրին:

Անտարակոյս մենք այդ ապստամբական շարժումները չենք դատապարտիր. անոնք իրենց արգարացուցիչ հիմքով անխուտափելի էին, եւ պէտք է ըսել անուրանալի է անոնց կատարած պատմական դերը: Անոնք որոշ չափով խախտեցին գերեախրութեան հիմքերը եւ ճամբայ բացին ճորտատիրութեան, եւ այդ տնտեսական պայմաններու աստիճանական զարգացման ուղիով:

Հոովմէական գերեախրութեան քայքայման ու անկման պատճառները կարելի է ամփոփել հետեւեալ կէտերուն մէջ.

- 1) Հանրապետութեան վերջին տարիներուն եւ կայսերական կանխադոյն շրջանի յաջող պատերազմներէն յետոյ գերեախրական շուկան լեցուեցաւ ֆաղափալիրքուած գերիններով եւ դադրեցաւ գերիններու մեծաքանակ մատակարարումը:
- 2) Բարձր որակաւոր գերիններու զինը բարձրացաւ որպէս հետեւանք անոնց սակաւութեան:
- 3) Հոովմ երբ աւերեց ու կողոպտեց հին տնտեսան գերիացած երկիրները, գուրսէն այլեւս առատ գանձ չէր լեցուեր Հոովմի գանձարանը. սասնկով զժուարացաւ գերիններու եւ ուրիշ պերճանքի ստարկաներու կանխիկ վճարման գործը:
- 4) Կենսամթերքներու զիններու բարձրացումով գերիններ պահելը հետզհետէ խոշոր ծախսերու ենթարկեց գերեախրը:
- 5) Տնտեսական պատճառներ հարկադրեցին որ մարդիկ մը տաճեն գերիններու վիճակի բարւոքման եւ անոնց ազատագրութեան մասին:



6) Բազմացան ազատ աշխատուարները եւ անոնք տնտեսական մարզին վրայ աւելի արդիւնաբեր դարձան որպէս (ա) հողի մշակողներ եւ (բ) որպէս քաղաքներու մէջ արհեստաւորներ:

7) Թանկարժէք մետաղներու սահաւութիւնը կամաց կամաց քայքայեց դրամական տնտեսութիւնը:

8) Յաղթական վերադարձ մը սկսաւ դէպի բնական եւ բնասնեկան տնտեսութիւնը, երբ հողի վրայ հաստատուեցան ազատ Փարմըրներն ու ազատ դպրութիւնները. այս վերջինները եղան ճորտերու նախակարապետները: Այս Փարմըրները իրենց արտադրողական գործերուն մէջ ազատ էին, որքան առեն որ իրենց պարտքի բաժինը կը վճարէին սեփականատիրոջ եւ իրենց ծառայութիւնը պետութեան:

Գերետիրական սխալմի սկարացումով ու քայքայումով կայսրութեան ամբողջ տնտեսական սարքաւորումները ենթարկուած էին դանդաղ բայց յարատեւ փոփոխութեան պրոցէսին: Մէկ կողմէ դրամի սահաւութիւնը բարձրացուց դրամատիրոջ իշխանութիւնը, եւ առիկա շեշտուեցաւ մասնատրտուէս հողային յարաբերութիւններու մէջ, երբ աւելցուց կալուածամուրհակներու ճնշող ծանրութիւնը եւ պարտատէրը դրաւ պարտապահանջի շնորհակալութեան տակ, մինչ հողին գինը արդէն կը նուազէր: Միւս կողմէ, դրամի սահաւութիւնը պատճառ եղաւ որ մանր մշակութեան ձեւը վերագոնայ եւ ընդհանրանայ եւ արտադրողները կատարեն բոլոր սեւակի վճարման պաշտօնը: Յորեն արտադրողը երբ դրամ չունէր ցորենով կը վճարէր իր տուրքը, հողատիրոջ իր պարտքը: Բամպակ արտադրողը բամպակով կը վճարէր իր տուրքը եւ հողատիրոջ իր պարտքը: Հողատէրերն ալ իրենց կարգին նոյն ձեւով կը վճարէին իրենց պարտքը կառավարութեան: Նոյն ձեւով կը վճարուէին ամսաթոշակները: Դրամական վճարում հաղուազեց էր: Եւ երբ իրերը այս բնթացքով կը շարունակուէին, կազմակերպութիւնը կ'երթար դէպի աղականութիւն եւ ճամբաները մշտապէս կ'ըլլային աւելի գէշ: Հստակ ծաղկեալ հանրապետութիւնը եւ կանխագոյն կայսրութիւնը կ'իյնային քայքայման վիճակի մէջ: Արեւմուտքի այս դրութենէն կ'օգտուէր արեւելքը, ուր կոստանդին փոխադրեց կայսրութեան մայրաքաղաքը: Բայց ստով չենք կրնար բռնի թէ գերետիրութիւնը մեռած էր հոն. ոչ. արեւելեան կայսրութեան մէջ դիզուած հարստութիւն կար տակաւին, բայց կործանուելու մօտեցող հին հասարակարգի կողքին նոր կազմակերպութիւն մը կ'աճէր, երբ բարբարոսներու արշաւանքները նոր տարրեր բերեց էին թատերարեմին վրայ, որոնք գերետիրութեան անկումը աւելի կա-

սեցուցին քան թէ արազացուցին: Սակայն այդ կասեցումը ժամանակաւոր էր: Բարբարոսները տնտեսական եւ ընկերային ուժերու նոր խմորում մը յառաջացուցին, որուն հետեւեցաւ միջին դարու ֆէոտալիզմը: Գերետիրութեան յաջորդեց ճորտատիրութիւնը:

Այստեղ պէտք է նշել մի բան որ կարեւոր է: Շատեր կը փորձեն հաւաստիացնել որ քրիստոնէական կրօնքը եղաւ այն գըլխաւոր եւ միակ աղղակը որ գերեզմանեց գերետիրութիւնը: Այս հաւաստիացումը ինքնին անհիմն է եւ անհեթեթ սխալ մը: Ճիշդ է որ քրիստոնէութիւնը իր սկզբնական շրջանին հակառակ էր գերետիրութեան: Անոր սկզբունքները նոյնն էին ինչ որ էին գործաւորական միութեանց սկզբունքները, բայց երբ այդ կրօնը պետական կրօնք դարձաւ, ազատութիւնը հեռացուց այս աշխարհէն եւ կասեց երկնային երազանքին: Թէեւ քրիստոնեայ պրոպագանդիստները իրենց հաւաստեցեալները բնորոշին գերիներէն, բայց փաստ մը չկայ ապացուցանող որ առաքեալները անհաշտ կուի յայտարարած ըլլան գերետիրութեան դէմ: Ընդհակառակը, անոնք ուղղակի միշտ հրահանգած են գերիներուն հնազանդ ըլլալ իրենց տիրոջ: Անոնք ոչ միայն այդ հրահանգը տուած են գերիներուն, այլ քրիստոնեաները իրենք եղած են գերետէրեր, եւ երբեք չեն յօժարած որ եկեղեցին դանոնք ազատագրէ: Վերջերք, հռչակաւոր Թովմաս Ագոսինաս որ Սուրբ Թովմաս կը կոչուի, կ'ընդունէր Արիստակի տեսակէտը թէ գերետիրութիւնը անփոխարինելի անհրաժեշտութիւն մըն է հասարակութեան բնականին կեցութեան համար: Վերջի դարերու քրիստոնեայ հիմնարկութիւնները որպէս եկեղեցւոյ սեփականատէր ու բացարձակ զեկալարներ շատ գանդաղօրէն թոյլատրեցին գերիներու ազատութիւնը եւ ան ալ միայն այն առեն երբ համոզուեցան թէ անոնց ազատագրումը տնտեսական տեսակետով աւելի շահաբեր էր իրենց հողային կալուածներու մշակութեան համար: Թողունք հին դարերու փաստերը. նոյնիսկ ԺԹ. դարուն Հիւսիս. Ամերիկայի հանրապետութեան մէջ քրիստոնեայ եկեղեցիները գեո եւս կը պաշտպանէին սեւամորթներու ստրկական սխալմը:

Հին դարերուն, ուրեմն, գերետիրութիւնը քայքայուեցաւ տնտեսական պատճառներով, որոնց մասին խօսեցանք: Ներկայիս հոն ուր գերետիրութիւնը տակաւին գոյութիւն ունի, դա կը նշանակէ թէ տնտեսական պայմանները չեն հասունցած զայն քայքայելու համար:



ՈՍԿԻՆ ԵՒ ԻՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Փոխանակութիւնը, զբամբ, վաշխառութիւնը եւ վաճառական դատակարգի աճումը մեծ դեր կատարեցին, երբ մէկ կողմէ քայքայեցին տոճմային հին հասարակութիւնը իր նահապետական կոմունիզմով եւ ընդհանրական ազատութեամբ, իսկ միւս կողմէ հաստատեցին անհատական սեփականատիրութեան սկզբունքով քաղաքական հիմնարկութիւններ. անհատական սեփականատիրութիւն ոչ միայն անձնական ինչքերու, այլ հողային բաժանումներու, որոնք նախապէս կը պատկանէին տոճերու եւ կը մշակուէին անոնց ընկերական-հաւաքական աշխատանքով (\*): Փոխանակութեան ծագումը ցեղերու եւ անոնց տոճերու միջեւ ուրիշ ցեղերու եւ տոճերու հետ ամէն տեղ գրեթէ նոյն ձեւով եղած է: Մէկ ցեղը իր սպարած երկրի բնական պայմաններու բերումով կ'արտադրէր աւելի շատ արջառներ քան ինչ որ պէտք ունէր: Ուրիշ ցեղ մը կ'արտադրէր աւելի շատ զարդի առարկաներ (հող չէր թէ որքան կոշտ էին անոնք) քան ինչ որ կրնար գործածել: Եւ այսպէս այս ցեղերու միջեւ տեղի կ'ունենար արտադրոյթներու առեւտրական փոխանակութիւն: Մենք ապրանք բառը չենք գործածեր հոս, որովհետեւ այդ շրջանին մարդիկ ընկերաբար կ'արտադրէին իրենց պէտքերուն համար, ոչ թէ շահու եւ առուտուրի համար: Այդ փոխանակութիւնը կը կատարուէր ընտրուած կամ ժառանգական գլխաւոր գործակալներու միջոցով: Ասիկա այն շրջանն էր երբ զբամբ տակաւին արտադրոյթներու բոլորին արժէքները որոշելու միջնորդի գերով հրապարակ ելած չէր, թէեւ ձիւլիւս Արդս իր իրերու Ծագումը զրքին մէջ մեկ կը հաւաստիացնէ թէ զբամբի ծագումը սկսած է շատ կանուխէն, վաշխեան շրջանէն: Ոմանք փայլուն խեցիները գործածած են որպէս զբամ, ոմանք մարմարեայ օղակներ, ոմանք թանկագին քարեր, սպիտակ ու փայլուն փետուրներ: Պորնէօ կղզիի սրտորդները որպէս զբամ կը գործածէին մարդկային դանկեր: Արեւելեան Ափրիկէի վաստողայի ցեղը նիզակը կը գործածէր որպէս զբամ: Այս ձեւի զբամական գործածութիւնը կը պատկանի հնագոյն շրջանին, երբ մարդիկ տակաւին կապուած չէին հաստատուն բնակութեան սխտէմին, այսինքն երկրագործական արտադրութեան ձեւին: Արտադրոյթներու փոխանակութեան

(\*) Որպէս հետաքրքրական օրինակ մենք պիտի յատկացնենք առանձին գլուխ մը Փերուի որ հռովմէական տիրապետութեան սահմանէն եւ մեզի ծանօթ հին աշխարհէն հազարաւոր մղոններով հեռու կը մնար:

այս եղանակը ատեն մը ընդհանրացած էր ամէն տեղ, եւ նոյնիսկ անիկա շարունակուեցաւ մինչեւ մեր օրերը ձերմակ մարդոց եւ վաշխեի ու բարբարոս ցեղերու միջեւ: Այս նախնական ձեւի առուտուրին մէջ հին ստեղծները շատ քիչ տեղ կը բռնէին սրտեստան ու խարդախութիւնը եւ խարեբայութիւնը որոնք ներկայիս քաղաքապետներու առուտուրի հիմքը կը կազմեն: Բայց արտադրոյթներու առեւտրական փոխանակութեան այս ձեւի շարունակութիւնը զիւրութեան հրամայականով չուտով ծնունդ առաւ փոխանակութեան միջնորդի մը պահանջին: Մեր կոմունական նախահայրերը երբ տեսան թէ իրենց անտեսութեան յառաջացման հետեւանքով զժուարութիւններ կան, նախքան անհատական սեփականատիրութեան հաստատումը, զբամանալի հնարադիտութեամբ գլխաւոր իրենց գործառնութիւնները զիւրացնելու միջոցը, այսինքն փոխանակութեան միջնորդը: Երբ տակաւին գերետիրութիւնը չէր որդեկրուած (որովհետեւ ցեղերու միջեւ տակաւին պատերազմներ չէին սկսած), փոխանակութեան այդ միջնորդները եղան գործածութեան համար ընդհանրապէս օգտակար եւ զարգարանքի համար ընդհանուրի կողմէ ցանկալի առարկաներ, զորոնք կարելի էր ձեռքի վրայ առնել եւ փոխանցել, ինչպէս խեփորներ, կիստակորներ, ուլունքներ, մանեակներ, փայլուն պղնձէ կտորներ, մորթիք, թէյի պարկեր, շորքուած ձուկեր եւ նման բաներ: Այս առարկաներու սովորական գործածութիւնը առուտուրի փոխանակութեան ատեն հասարակօրէն տարածուած էր ամէն երկրի մէջ. եւ այս օրերս ալ նոյնիսկ մենք կը տեսնենք նոյն ձեւը մաս մը յետամնաց երկրներու մէջ, միայն սա տարբերութեամբ որ քաղաքակրթուած ձերմակ մարդիկ խարդախութեամբ ու կողոպուտով կը զբաղին, փայլուն եւ հրապուրիչ սպորանքներ կը փոխանակեն թանկագին քարերու, ոսկիներու, փղոսկրներու եւ արժէքաւոր մորթիքու հետ:

Խնդրոյն ամէնէն յատկանշական կէտն այն է որ այս առարկաներու առեւտրական փոխանակութեամբ անհատները չէին կըրնար հարստութիւն ամբարել, չէին կրնար արժէքներու կուտակումով անտեսական եւ ընկերային տիրապետող դիրք մը ապահովել իրենց պատկանած հասարակուրդի միւս անդամներուն վրայ: Փոխանակութեան միջնորդը կը գործածուէր մի միայն որպէս փոխանակութեան միջնորդ: Ամբարում շահագործումի համար անձանօթ էր հին ստեղծման մարդերուն:

Բայց զրութիւնը մշտապէս նոյն գծով չէր կրնար շարունակուիլ: Արջառներու բազմացումով նոր արօտատեղիներու պէտքը չեւտուեցաւ: Մէկ կողմէ հողը պարարտանիւթի պակասով կը ձե-











գործէ, պէտք է ուսէ սպրեւու համար, պէտք է հաղուի, պէտք է բնակարան մը ունենայ. իսկ այդ բոլորի նիւթերն ու կենսամթերքները (արմտիք, պտուղ, միս, ինչպէս նաեւ բուրդ, կաշի, բամպակ, փայտ, եւայլն) կ'արտադրուին հողէն: Ուրեմն, հին ատեն ալ մարդիկ արջաուարուծութեամբ զբաղէին թէ արմտիքի մշակութեամբ, ըլլան անոնք մեծ հողատէրեր որոնք գերիներ կը գործածէին, կամ մանր հողատէրեր որոնք հողը կը մշակէին իրենց ընտանիքին համար, մէկ խօսքով հողատէրերն ու հողի մշակները պետութեան ամէնէն կարեւոր տարրերն էին:

Բայց հողի եւ հողային մշակութեան միջոցներու անհատական սեփականատիրութիւնը որ հին սոհամային սեփականատիրութեան քայքայումին յաջորդեց, այժմ ենթարկուեցաւ դրամի գերահոյ սղղեցութեան, այն դրամին որ բնաւ չէր արտադրեր, բայց կը սպառնար փճացնել շատ բան: Անոր ապահանոյ եւ քայքայող ուժը կը գործածուէր ոչ թէ սոսկ որպէս փոխանակութեան միջնորդի որ կը հաւատարակչուէր շուկայի վրայի պատրաստ կամ բացակայ արժէքները, այլեւ ամէն տեսակի հարստութեան համագոր որպէս համաշխարհային ուժ կրնար գնել շուկայ հանուելիք կանանց եւ մարդոց ամէն կարգի առարկաներ, վարէն վեր, համաձայն տըրւած շրջանի հաշուառման: Երբ հարուստը կը փափաքի ունենալ պերճանքի առարկաներ, կամ կ'ուզէ քաղաքական իշխանութեան հասնիլ եւ կամ գոհացնել իր գործակալները, երբ գերազոյն հսկողութեան պաշտօնի ցանկացող յաջողակ թեկնածու մը կ'ուզէ վարձարել զինուորներն ու փակել յաղթանակի ծախքերը, ասոնց երկուքին համար ալ դրամը անհրաժեշտ է: Միւս կողմէ, անդին, խեղճուկ մարդ մը երբ պետական տուրք վճարելու հարկադրանքին տակ է, կամ սերմացու պիտի գնէ գալիք տարուան համար, կամ իր մեռած կալին կամ եղան տեղ ուրիշ մը պիտի գնէ, կամ եկամտաներէ զրկուած քաղաքացի մը սեւէ տեսակի օդնութիւն կ'ուզէ, այն ատեն ասոնց դրամ, այս, միայն դրամ է հարկաւոր: Այսպէս, կը տեսնենք որ այն որ դրամ ունի, զա մի իրակամ հարստութիւն է, որով նա կ'իշխէ բոլոր միւս հարստութեանց երեւութեան պատահական ձեւերուն վրայ: Այս դրամը անպատճառ ոսկի ըլլալու չէ, երբ դրամական ձեւը ընդհանուր սեփականատիրութեան վերհսկողի գերն ստանձնեք է: Արժաթը կամ սղղինձը նոյն գործը կը տեսնեն հարստութեան կուտակման եւ հնչուն դրամական տիրապետութեան սկզբնական շրջանին, մանաւանդ ազգատ հասարակութեան մը մէջ, որովհետեւ այս մետադները գործածութեան համար կը բաւեն քաղաքի կամ նահանգի շրջակայքի գործառնու-

թեանց համար, երբ անոնք արդէն ստած են դրամական ձեւ: Բայց ոսկին համաշխարհային է, ասոր համար ոսկին եւ արժաթը միասին, վերածուելով դրամի, եկան իշխելու հին աշխարհին:

Հնութեան շրջանին, հարստութեան կուտակման երկու մեծ սղղիւրներ կային, բացի խելագար գերեվարութիւնը, պատերազմական յաղթութիւնը եւ ծովահնութիւնը: Անոնցմէ մին էր վաճառականութիւնը, միւսը՝ վաշխառութիւնը: Քաղաքակրթութիւնը ստեղծեց դասակարգ մը որ արտադրութեան մէջ մաս, բաժին չունէր. անոր գործն էր միմիայն փոխանակութիւնը: Այս դասակարգը կազմողներն էին վաճառականները: Նախկին դասակարգը անկատար կամ կատարեալ, բացառապէս նուիրուած էին արտադրողական գործի: Ասոնք բաժնուած էին երկու մասի. մէկ մասը որ կը գործէր, միւս մասը (փոքրամասնութիւնը) որ գործողները կը զեկաւարէր: Բայց այս նոր դասակարգը, վաճառական դասակարգը որ առաջին անգամ հրապարակ իջաւ, ստանձնեց ընդհանուր արտադրութեան զեկաւարութիւնը եւ թէ արտադրողները եւ թէ անոնց զեկաւար-հսկողները աստու իր թեւարկութեան տակ, ասոնց արտադրութեան մէջ սեւէ գործնական մասնակցութիւն ունենալու: Այս դասակարգը եղաւ անփոխարինելի կաւստ մը երկու անջատ արտադրողներուն համար եւ երկու կողմէն ալ զանձուձներ լքաւ այն արգարացուցիչ պատրուակով որ ինք զանոնք կ'ազատէր իրենց արտադրոյթները փոխանակելու գժուարին նկույթնէն եւ անոնց ազրանաց սորոսման համար շուկաներ կ'ընդարձակէր: Այս կերպով վաճառական դասակարգը զարձաւ ամէնէն օգտակար դասակարգը:

Սոյն էվոլիւցիայի ընթացքին, երբ ընկերային ուժը կը կուտակուէր մանաւոր անհատներու ձեռքին մէջ, անդին կամաց կամաց զահագուրկ կ'ըլլային նախկին գերեւորները: Ասով հեռոցհեռէ կը քայքայուէր հին ձեւի գերեւորութիւնը եւ կը սկսէր նոր ձեւի գերեւորութեան շրջանը: Բայց վաճառականութեան հետ ուրիշ ճիւղ մըն ալ զարգացաւ, որուն գերը նոյնպէս նշանակալից է հին սիստէմը քայքայելու մարդին մէջ: Այդ ճիւղն էր վաշխառութիւնը:

ՎԱՇԽԱՌՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Վաճառականական դրամի գործածութենէն եւ առեւտրական շրջանակի ընդարձակման նպատակով ոսկիի ամբարումէն յտաջացաւ դրամի փոխատուութիւնը, վաշխառութիւնը: Վաշխառութիւնը հին դարաշրջանին, ինչպէս նաեւ միջին դարուն երկրորդ մեծ սղղակն էր հարստութեան կուտակման: Եւ այս դրամատէր զա-



սակարգը իր երկու հասուածներով (վաճառականներ եւ վաշխա-  
ուուններ) որոնք յաճախ կը միանային, այնքան հսկայ ազդեցութիւն  
կրցան ձեռք բերել որ իրենց յաճախորդներուն ու պարտաւորաննե-  
րուն համար ամենախիստ օրէնքներ անցնել տուին, օրէնքներ ո-  
րոնց նմանք օրինադրբերու մէջ երբեք զբուած չէր: Ասով աւելի  
սաստկացան դատակարգային կռիւներն ու անտեսական հակամար-  
տութիւնները, որոնք մարդկային հասարակութեան ու քաղաքա-  
կըրթութեան պատմութիւնը կազմած են: Ոչ մէկ ազդ կրցաւ խու-  
սափել այդ ներքին սպառնալուծենէն որուն մէջ թաղուեցաւ հին  
տոհմային դրութիւնը գերետիրութեան, մասնաւոր սեփականատի-  
րութեան, փոխանակութեան եւ վաշխառութեան ձեռքով:

Տնտեսական եւ բնկերային անդադրում կռիւ կար անհա-  
տական սեփականատիրութեան երկու ձեւերուն միջեւ. հողի անհա-  
տական սեփականատիրութիւնը մէկ կողմ, ոսկիի անհատական սե-  
փականատիրութիւնը միւս կողմ. այս վերջինը դրամական փոխա-  
տուութեամբ իրեն կ'ենթարկէր հողատէրերը:

Աթենացի գելոպցիներու հողերը ատեն մը ձողապատուած  
էին այնպիսի սիւներով որոնք ցոյց կուտային թէ այդ հողերը կալ-  
ւածամուրհակներով գրաւի տակ են եւ դրամ փոխ տուողները իրենց  
ձեռքը դրած են անոնց վրայ ու պատրաստ են զանոնք գրաւելու եթէ  
պարտապանները թերանան իրենց վճարման պարտականութեան  
մէջ: Ամբողջ Աթէնքը, այդ փոքրիկ բայց կարեւոր պետութիւնը  
իր շրջակայքով, իր գարգացման եւ աճման սկզբնական շրջանին  
վաշխառուներու կողմէ գրաւի տակ առնուած էր: Պարտապաննե-  
րը, հող չէ թէ ինչ պարտպաներու տակ եւ ինչ ձեւով ինկած էին  
պարտքի լուծին տակ, իրենց պարտքը իր ամենաբարձր սովորով  
պարտաւոր էին վճարել. թերացման պարտպային պարտատիրոջ  
պահանջին վրայ անոնք կ'ենթարկուէին բանտարկութեան կամ ու-  
րիշ աւելի խիստ պատժական մեթոտներու: Պարտապան մը հակա-  
ռակ տրուած պատիժներուն երբ վերջնականապէս անկարող ըլլար  
վճարելու իր պարտքը, վաշխառուն, նայած իր պահանջած գու-  
մարին, իրաւունք ունէր դայն իր բնաանիքին հետ ծախել որպէս  
գերի: Ասիկէ սկսան անտեսական եւ բնկերային կռիւներ, որոնց մէջ  
վաշխառուները երկար ատեն յաղթական մնացին, բայց ի վերջոյ  
պայթող յեղափոխութիւնները հարկադրեցին որ պետութիւնը կոր-  
ծանումէ փրկելու համար պարտատէրերու իրաւունքները ենթար-  
կուին սեղմումի:

Աթէնքի մէջ երեք սերունդներու շրջանին երկու յեղափո-  
խութիւններ տեղի ունեցան. մին բնկերային, միւսը քաղաքական:

Առաջին յեղափոխութեամբ պարտատէրերու իշխանութիւնը պար-  
զապէս ջնջուեցաւ եւ կառավարութիւնը պարտապանները ազատ  
հռչակեց իրենց պարտաւորութիւններէն: Երկրորդ յեղափոխու-  
թեամբ հաստատուեցաւ նոր քաղաքական սահմանադրութիւնը, հիմք  
ունենալով հողային սեփականատիրութիւնը, որուն հետ կը պահ-  
պանուէին նաեւ հին տոհմային ձեւի յարաբերութիւնները: Ասով  
պետութիւնը եղաւ դեմոկրատական: Բայց այդ դեմոկրատին գերիշ-  
խող քաղաքացիներու դասակարգի դեմոկրատին էր, գերիները ա-  
նոր մէջ բաժին չունէին: Ինչ որ պատահեցաւ Աթէնքի մէջ նոյնը  
տեղի ունեցաւ միւս յոյն նահանգներու մէջ: Պարտապանները, սա-  
կայն, թէեւ ժամանակաւորապէս ազատուեցան իրենց վրին վրայ  
ծանրացող պարտքերու լուծէն եւ ազատ մարդիկ դարձան ի վնաս  
դրամատէրերուն, բայց վաշխառութիւնը շուտով վերստանձնեց իր  
իշխանութիւնը: Դա պարզ էր որ ոեւէ տեսակի օրէնադրութիւն դայն  
չէր կրնար սանձել:

Աթէնքը ինչպէս որ խորհողութեան, արուեստի եւ բնգհա-  
նուր կուլտուրայի մարդերուն մէջ կարեւոր դիրք մը գրաւած էր,  
նոյնպէս կարեւոր դիրքի հասաւ վաճառականութեան եւ վաշխա-  
ռութեան մէջ: Անդին Կորնթոսը, որ թէ արտադրողական եւ թէ ա-  
ռեւտուրի կեդրոն էր, փարթամութեան եւ նրբացած ցոփութեան  
այնպիսի տիրական աստիճանի մը բարձրացաւ որ այն ատենուան  
քաղաքակիրթ աշխարհին մէջ գրաւեց այն դիրքը ինչ դիրք որ ու-  
նի այսօր Փարիզը: Անոնք որ հարստացեր էին գերետիրութեամբ,  
ծովահնութեամբ եւ կամ վաճառականութեամբ, գունդադունդ  
լիցուեցան կազմակերպուած հաճոյքի այս մեծ ու գեղեցիկ քաղա-  
քին մէջ եւ սկսան մտխել իրենց շահածները հաճոյքի բազմածախս  
ձեւերով եւ անբարոյական եղանակներով: Հարստութեան ստացման  
բոլոր ճիւղերուն վրայ, հող չէ թէ որքան անմարդկային կամ ան-  
զութ էին անոնք, պէտք է ըսել որ յոյները անցեալի տէրերն էին.  
Իսկ հոռովմէացիները որոնք իրենց գրականութիւնը, գիտութիւնն  
ու մշակոյթը յոյներուն կը պարտէին, անոնցմէ սորվեցան հարբա-  
տութիւն զիղել պարտուած երկիրներէն, առանց ենթարկուելու  
ոեւէ տեսակ կորուստի:

Տիրոս եւ փիւնիկեան քաղաքներու գաղութները որոնց հա-  
րստութիւնը գրեթէ ամբողջապէս կապուած էր վաճառականու-  
թեան հետ, Տիրոսի նման աւելի կամ նուազ կարեւորութիւն ու-  
նեցող առեւտուրի կեդրոններ էին, բացառելով Կարկեղոսը: Այս ա-  
ռեւտրական կեդրոնները իրենց հարստութիւնը կը կուտակէին ա-  
մէն դասակարգի պատկանող օտար արտադրողներու մշտական շա-



հազործումով: Վաճառականները, ըլլալով գերազանցապէս զարգացած հասարակութեան մը անդամները, փոխանակութեան պարագային իրենց ազգա յաճախորդներուն ազիտութիւնը կ'օգտագործէին եւ անոնց արտադրութիւնը արժէքը ստոր գնահատելով կը խաբէին զանոնք: Կ'ըսուի թէ ատեն մը Տիրոս այնքան առատ ոսկի ունէր որ արծաթը աներեւակայելիօրէն առատ էր: Փիւնիկեցի նաւաստիները առեւտրական փոխանակութեան գծով այնքան արծաթ կը ստանային որ արծաթով կը բեռնաւորէին իրենց նաւերը: Եւ այդ արծաթը կը ստանային Սպանիոյ բնիկներէն:

Այս նոյն շրջանէն էր որ կարապիւնացիները անկէ յետոյ իրենց արծաթի աղբիւրներն ապահովեցին: Ըսուած է որ 50.000 գերիներ կը գործէին մի շտաբ արծաթի հանքերուն մէջ: Կրնայ ըլլալ որ այս թիւը չարիազանցութիւն նկատուի, բայց սառչ է որ շատ մեծ քանակութեամբ արծաթ կը ստացուէր Սպանիայէն, մասնաւորապէս այն հանքերէն որոնք կը պատկանէին Բարկա առձմին որուն պեան էր Աննիրոզ: Անաւարակոյս այս հարստութեան շնորհիւ էր որ նա ամբողջ տասնօթը տարի կրցաւ իր արշաւը պահել եւ սարսափեցնել Հռոմը: Կարկեղոնը իր ոսկին կը ներածէր արեւմտեան Աֆրիկէէն, ուր ծովեզերքի վրայի բնիկ ցեղերը ոսկերէր գետերու աւազներէն ոսկի կը ստանային եւ զայն կը փոխանակէին փիւնիկեցի առեւտրականներու բերած առարկաներուն հետ: Այս առուստըրը նախնական ձեւի սակարկութեամբ կը կատարուէր, ինչ որ սովորութիւն զարձեւ էր այն ատենուայ քաղաքակիրթ աշխարհին համար: Այսպիսով ոսկին ու արծաթը Միջերկրականի առեւտրական քաղաքներուն տուին տնտեսական անդերազանցելի ազդեցութիւն:

Վաճառականութիւնը իր ընդհանուր եղանակով թէեւ արտադրողները շահադործելու թագուն ձեւ մը ունէր, բայց զարձեւալ հարստութեան տիրանալու պատուաբեր միջոց մը կը նկատուէր. վաշխառութիւնը, սակայն, զրամ փոխ առլ աւելի զրամ ստանալու համար, արեւմուտքի գերետիրական հասարակութեանց մէջ միշտ վատ անուն ունէր: Արիստոտէլ որ գերետիրական հիմնարկութեան ջերմ ջատագով էր, վաշխառութեան մասին լաւ բառ չէր գործածեր: Իրապէս սովորով զրամ փոխ առլու ամէն տեսակի գործառնութիւն խարանուած էր վաշխառութիւն անունով: Ասոր համար վաշխառութիւնը անխճեալ բան մըն էր:

Բայց ի՞նչպէս եղաւ որ զրամական փոխատուութիւնը, ըսենք վաշխառութիւնը, որ ատենօք այնքան կը դատապարտուէր

հեթանոս փիլիսոփաներէն եւ յետոյ եկեղեցւոյ հայրերէն, այսօր ան կը նկատուի ամենապատուաւոր պիզնէսը: Ներկայիս, օրինակ, Միացեալ Նահանգաց մէջ պանքաներու աէրերը վաշխառական գործով պարապելով հանդերձ եղեր են վերհսկող օրէնադիրներ եւ քաղաքական ու տնտեսական մարդերու բացարձակ հրամանատարներ, որոնց կը սպասարկէ Նախագահը իր զահլիճով, Մերակոյտն ու Ներկայացուցչական Տունը իրենց այսպէս կոչուած ժողովրդական ներկայացուցիչներով...: Հապա քրիստոնեայ եկեղեցիներու պեանը... Ասոնք ալ եւ չեն մնար, անոնք ալ պանքաներու աէրերու կեանքին ու յաջողութեան համար կ'աղօթէին զիչեր ու ցերեկ: Իսկ եթէ բողոքականք հին զարու վաշխառունները մեր այս օրերու վաշխառուններուն հետ, պիտի տեսնենք որ առաջինները աւելի պարկէշա եղեր են, որովհետեւ իրենց սեփական գրամը սովորով փոխ կուտային եւ ստանկով շահ մը կ'ապահովէին, բայց մեր դարու վաշխառունները ուրիշներու գրամով յառաջ կը տանին իրենց շահաւէշ գործը. Մարկոսէն գրամ կ'տանեն երեք սովորով, Թորոսին գրամ փոխ կուտան եօթը սովորով: Իսկ երբ նկատի առնենք անոնց ուրիշ աւելի հսկայ գործառնութիւնները, այն ատեն կը տեսնենք թէ անոնց ապահոված շահաբաժինը միլիոններ կ'ապահովէ: Արդ, եթէ նորէն հարցնենք թէ ինչո՞ւ նոր զարու վաշխառութիւնը ամենապատուաւոր պիզնէս մը կը համարուի, այս հարցման պատասխանը ոչ թէ զարերու յառաջիմութեան հետեւանքով յառաջացած մասնազուլութեան եւ կարծիքներու արդիականացման մէջ է, այլ արտադրութեան ձեւերու փոփոխութեան մէջ, ուրիշ խօսքով տնտեսական, ընկերային յարաբերութեանց փոխակերպումին մէջ: Բաւական է այստեղ ըսել որ սովորով զրամական փոխատուութիւնը շատ մը պարագաներու տակ զրամ փոխ ստնողին պատեհութիւն կուտայ իրեն համար շահու աղբիւրներ ապահովելու գործին: Մարդ մը երբ զրամատունէն սովորով փոխատուութիւն կ'ընէ, փոխ առած զրամը չի մսխեր, այլ զայն կը զնէ իր շահաբեր նկատած պիզնէսին մէջ, որով այդ զրամին սովորով վճարելէն վերջ իրեն խոշոր շահ մը կ'ապահովէ եւ ստով կարող կը լինի իր պարագը ամբողջապէս վճարել եւ դառնալ անկախ մի գործատէր: Ահա թէ ինչու ամերիկացի բուրժուայ տնտեսադէաները զուր տեղը չէ որ կը յայտարարեն թէ իրենց զեմոկրատական եւ հարուստ երկրին մէջ զատակարար չկան, քանի որ մարդիկ ազատ են եւ կրնան կամուրջներ շինել եւ շահագործուողի գերէն անցնել շահագործողի գերին: Բայց խորտակուող կամուրջներու մասին խօսող չկայ. խօսող չկայ նաեւ բազմամիլիոն պարտապաններու մասին, որոնք ան-



տարակոյս պիտի մատնուէին թշուառութեան ու խիստ պատիժներու, եթէ պազ պատերազմը երկրի անտեսութեան երակներուն մէջ արեան շրջանառութիւնը կանոնաւորող ուժ մը չի ներարկեր:

Բայց թողունք այս ձեւի խորհրդածութիւնը եւ անցնինք:

Ընդհանուր կերպով դրամափոխատուներու եւ վաշխառուներու գործողութիւնները Յունաստանի, Տիրոսի եւ Կարկեղոնի մէջ համեմատաբար աննշան էին, երբ զանոնք բազդատենք հռոմէական կայսրութեան մէջ կատարուած դրամական գործառնութեանց հետ: Հին Հռոմի եւ կայսերական Հռոմի միջեւ հակապատկեր մը կը պարզուի մեր առջեւ, երբ մենք նկատի ունենանք որ առաջին տոհմային յարաբերութիւնները երբ խորտակուեցան եւ հաստատուեցաւ արիստոկրատական հանրապետութիւն անհատական սեփականատիրութեան եւ պատերազմական յողթանակներու վրայ, նոր Հռոմը, կայսերական Հռոմը այլեւս նախկին Հռոմին չէր նմաներ, հրապարակ ելած էին նոր կերպարներ, նոր գերերով, կային ազատ Փարմըրներ, ազատ քաղաքացիներէ կազմուած լէգէոններ, որոնք եռանդով կը կռուէին հաւատարմով որ պատերազմը իրենց հոգմար էր: Յետոյ, մղուած յաղթական պատերազմներու ընթացքին կատարուած աւարտութիւնը, գերիներու բազմացումը եւ առեւտուրի եւ վաշխառութեան համար աւելի լայն առարկէզներու բացումը կերպարանափոխեր էին Հռոմը եւ հակապատկերը շիներ էին զարմանալի: Քաղաքական իշխանութեան համար այն պայքարը որ կը մղուէր տոհմերու արիստոկրատիին եւ ուսմիկներուն միջեւ, որոնք հրապուրուած կամ դրսէն բերուած էին Հռոմ, սրտածառ եղաւ որ վերջինները, ուսմիկները, հետզհետէ ազատուին իրենց յաղթութիւնը: Առաջին կարտապիտեան պատերազմէն մինչեւ Աննիբաղի արշաւանքը Իտալիոյ վրայ Հռոմի մէջ զարգացաւ բոլորովին այլ անսակի ստուտուր մը եւ վաճառականութեան ճիւղ մը:

Կարկետոնի դրամական հարստութիւնը կը բազկանար գէլլիստորաբար արծաթէ, որ յետոյ ճամբայ բացաւ ոսկիին, 12-էն 1-ի յարաբերութեամբ: Սիկիլիոն Ափրիկեցիին իր յաղթանակներէն վերջ Կարկեղոնէն բերաւ 120.000 փառնաւ ծանրութեամբ արծաթ: Այդ քանակութեամբ արծաթը վերեւ նշուած համեմատութեամբ կ'արժէր 625.000 լիրա ստերլին, որ այդ օրերուն համար հսկայական դումար մըն էր: Ի յաւելումն, Կարկետոն ամէն տարի 20.000 տաղանդ արծաթ վճարելու էր յիսուն տարի յաջորդաբար: Նոյն ատեն Հռոմ տիրացաւ կարտապիտեցիներէն կախեալ երկրամասերուն: Այդ ընդարձակ հոգսմասերու տիրացումները, եթէ նկատի չառնենք արդէն իսկ տիրապետութեան տակ առնուած ամբողջ Իտալիան,

Հռոմի մէջ ծագեցուցին վաճառականութեան ոգին եւ անոր առջեւ բացին յառաջընթացի միջոցները: Այն ատեն հռոմէացիները, ոչ միայն ուսմիկները, այլեւ ազնուականները վաճառականական յարաբերութիւններ սկսան Սիկիլիոյ, Սարդենիայի եւ Սպանիոյ հետ եւ այսպիսով ծնունդ առաւ աշխարհամասը արիւնարութիւն մը, զինուորական նուաճումներու ընկերակցութեամբ:

Ուստի Հռոմը, Միջերկրականի աւազանի տիրապետութեան համար մղուած պայքարին մէջ երբ նուաճեց Կարկետոնը, ինքն ալ իր կարգին բանուեցաւ կարտապիտեցիներու վաճառականական մեթոտներու ցանցին մէջ, որուն վրայ աւելցաւ վաշխառութիւնը իր անմրցելի ծայրայեղութեամբ: Ազնուականներու եւ ուսմիկներու միջեւ մղուած բոլոր կռիւները, առաջնորդներու վրայ կատարուած վխական ոճիրները, Հռոմի փողոցներուն եւ դաւառներուն մէջ տեղի ունեցած կոտորածները, Սիղզայի մասսայական կոտորածները, Մարիուսի ժողովրդական վրէժիկները, ասոնք երբ բազդատենք դրամական իշխանութեան կործանարար ազդեցութեան հետ, կը զանկնք աննշան: Բազմաթիւ գերիներու վաճառումն ու անոնց հանդէպ անդթութիւնը, հարուստ քաղաքացիներու տուներու եւ սաճարներու զանձերու կողպուտը շատ աննշան բաներ էին բազդատմամբ վաշխառուներու գործերուն: Պատերազմի հետեւանքով բացուած վէրքերը շուտով կը գոցուէին, բայց վաշխառուները դիւային կերպարներ էին, սրոնց բացած վէրքերը ընդհանրական հանդամանք ունէին. անոնք փոխանակ կազդուրուելու կը բազմանային ու կը խորանային:

Այս նոր վաճառականական ձեւի առաջին սրտուղները եղան ատոնին անիշխանութիւնը եւ Իտալիոյ ու դաւառներու մէջ ընդհանուր պատերազմը: Ամէն տեղ մանր մշակողները անհետացան. անոնց հոգիքը անցան մեծ կայուածատէրերու ձեռքը եւ վաշխառութիւնը տարածուեցաւ համաճարակի պէս: Յաղթական Մարիուսի առաջնորդութեամբ ժողովրդական աննախընթաց զարթումը չկըրցաւ արգիլել կամ շահարկեր ճամբու մէջ դնել այս նոր ձեւի անտեսութեան ազդեցութիւնը: Ջանքեր եղան որ ժողովուրդը հրապուրէր պարտեալ երկիրներու հոգերով, բայց այդ ջանքերը ճարտուեցան, որովհետեւ մարդոց մէջ պակաս էր հոգադործութեան փորձառութիւնը:

Այս կէտին մէջ Հռոմ կը տարբերէր Միջերկրականի աւազանի միւս մեծ քաղաքներէն՝ Կարկետոնէն, Աղեքսանդրիայէն, Կորընթոսէն, Անախոքէն, Մարսէյէն, նոյնիսկ Աթէնքէն, որոնք թէեւ վաճառականութեամբ կը հարստանային, բայց նոյն ատեն իրենց



սեփական արտադրութիւնքով կը հաւասարակշռէին կատարուած նե-  
րածումները: Այդպէս չէր, սակայն, Հոովմը: Իրեն հետ եղած ա-  
ռուտուրը մէկ ուղղութեան վրայ էր: Այս կեղեքիչ քաղաքը մէկ  
կողմէ կը կողոպտէր, միւս կողմէ կը կողոպտուէր: Ասոր համար  
դրամական կապիտալը որ կը գործածուէր հոովմէական վաճառա-  
կանութեան մէջ ամբողջապէս ոչ-արտադրողական էր: Հոովմի  
ունեցածը միմիայն վաճառականական եւ վաշխառուական կապի-  
տալ էր թանկագին մետաղներու բազադրութեամբ: Վաճառականա-  
կան կապիտալն ալ, որ կը գործածուէր ատուտուրի կապակցու-  
թեամբ կեղրոնի շրջագծին վրայ կատարած գործառնութեանց ըն-  
թացքին, սեւէ հնարաւորութիւն չունէր աւելցնելու կեղրոնի հա-  
րատութիւնը: Եկամտային աղբիւրները պետութեան համար մնա-  
ցեր էին կողոպտան ու հարկահանութիւնը, իսկ դրամատէրերուն  
համար՝ վաշխառութիւնը: Ի՞նչ կ'ընէին դրամ փոխ առնողները.  
անոնք կը գնէին պերճանքի տաարկաններ, իսկ քաղաքական պաշ-  
քարի ատեն կը գնէին քուէներ: Պետութիւնը երբեմն ինքն ալ կ'իշ-  
նար փոխառուի դերին մէջ իր լէզնները պահելու համար: Այս-  
պիսով կը տեսնենք թէ ստացուած հարստութիւնը աւելցնելու միակ  
միջոցը մնացեր էր վաշխառութիւնը:

Հոովմ ասանկով գարձաւ վաշխառուններու վաշխառուն: Մե-  
ծաքանակ փոխառուններէն զատ արհեստաւորներն ու մանր մշակող-  
ները եւս ստիպուած էին յաճախ փոխառութեան դիմել, չնայած որ  
անոնք գերիններու հետ կեցած էին հաւասար մտկարգակի վրայ:  
Վաշխառունները անոնց չէին զլանար փոխառութիւնը, որովհե-  
տեւ գրեթէ թէ երբ անոնք անկարող ըլլային վճարել խոչոր տո-  
կոսով իրենց պարտքը, կը դառնային գերի: Եւ պէտք է ըսել գե-  
րիններու գիրը այդ ատենները սակաւութեան հետեւանքով բարձ-  
րացեր էր: Դրամը, ուրեմն, բացարձակ պիտանի բան մըն էր թէ  
հարուստին եւ թէ աղքատին համար: Հարուստին համար, որովհե-  
տեւ ան կ'ուզէր զոհացնել իր պերճասիրական ցանկութիւններն ու  
քաղաքական նպատակները. աղքատին համար, որովհետեւ ան կ'ու-  
զէր լեցնել չնախատեսուած դժբախտութեան մը բացը: Այլ չիղչենք  
պետութիւնը, որ նոյնպէս միշտ դրամի պէտք ունէր եւ իր հաւա-  
քած հարկերը բուարար չէին բոլոր ծախսերը զոցելու: Այսպէս, ա-  
նիծեալ վաշխառուն, ատելի թէեւ, բայց տէրը գարձեր էր ամբողջ  
Հոովմի: Հոովմ անդամ մը որ ինկաւ դրամի լուծին տակ, այլեւս  
իրեն համար անկարելի էր ինքզինք աղատել: Անոր աղատութեան  
միայն մէկ միջոց կար, պատերազմը, բայց հարուստ եւ քաղաքա-  
կըրթուած երկիրներ այլեւս չէին մնացեր կողոպտելու համար:

Ներքին կեանքի անտեսութեան մէջ մեծ մասով զիւղական բնու-  
չութիւնն էր որ արտադրողութեան ուժ կուտար գերիններու եւ ա-  
զատ մարդոց աշխատանքով: Եւ արդէն Հոովմի կենդանութեան  
չունչը պահողը բնական արտադրութիւնն էր, ստանց որուն Հոով-  
մի կործանումը բարբարոսաց արշաւանքէն աւելի կանուխ կը սկսէր:  
Երկրի անտեսական կեանքի ծանրութեան կեղրոնը զիւղացիական  
չրջաններու մէջ էր, բայց քաղաքային շահն էր տիրապետողը: Իսկ  
այդ քաղաքային շահու զեկաւարը վաշխառութիւնն էր:

Հոովմէական վաշխառութեան հակիրճ քննութեամբ կը տես-  
նենք որ դրամի իշխանութիւնը տիրական գարձած էր համայն կայս-  
րութեան մէջ, ուր մարդիկ ստիպուած էին այս կամ այն պարս-  
պայի տակ դիմել փոխառութեան: Եւ պէտք է ըսել թէ կայսերական  
գերակայութեան քայքայումով ու անկումով դրամի այդ իշխանու-  
թիւնը իր դիրքը պահեց նոյնիսկ բարբարոսներու արշաւանքի շրջ-  
անին եւ նոյնը չարունակուեցաւ միջին դարուն: Իսկ մեր օրերուն  
դրամի իշխանութիւնը արդէն հասած է իր անդերադանցելի աստի-  
ճանին: Ասոր համար սխալած չենք ըլլար երբ ըսենք թէ գերետի-  
րութիւնը իր հանդերձները փոխած է, բայց ոչ իր էութիւնը: Գե-  
րետիրութիւնը կար, կը մնայ եւ տակաւին պիտի մնայ, մինչեւ որ  
սոցիալիզմը գայ ու վերցնէ դասակարգերը: Այո՛, միայն այդ ա-  
տենն է որ կը վերնայ դրամի գերիշխանութիւնը:

**Փ Ե Ր Ո Ւ**  
(ՅԵՏԱԿԱՐԶ ՆՇՈՒՄՆԵՐ)

Հարուստին Ամերիկայի հանրապետութիւններէն մին է այժ-  
մեան Փերու անունով ճանչցուած երկիրը, որ սնի 482,133 քառ-  
քիլոմետր տարածութիւն, մոտաւորապէս ութը միլիոն բնակչու-  
թեամբ. իր մայրաքաղաքն է Լիմա: Այս երկիրը կը գտնուի Սա-  
ղաղականի եզերքը. անոր հիւսիսային կողմն են էգուատորը եւ Բո-  
լոմպիան, արեւելեան կողմը՝ Բրազիլը, հարաւային կողմը՝ Բո-  
լիվիան եւ երկար երկիւ նման մինչեւ Հորն Գլուխը երկարող Չիլին:

Նոր երկիր մը չէ Փերուն. Չինաստանի նման հին երկիր մըն  
է, որ ունեցեր է իր հնամանգ քաղաքակրթութիւնը:

Հոովմէական մեծագոր կայսրութեան թաթը իր ատենին մին-  
չեւ Փերու չկրցաւ հասնիլ, որովհետեւ ան հազարաւոր մզաններով  
հետու, կտրուած էր մեզի ծանօթ հին աշխարհէն:

Հոջակաւոր երկրաբաններու հաւաստիացումին համաձայն



մեր երկիր մոլորակին ցամաքամասը միլիոնաւոր տարիներ առաջ միազանդուած մի տարածութիւն եղեր է, բայց յետոյ երկրաբանական հսկայ ու խոր շարժումներու հետեւանքով տեղի ունեցած են ցամաքի բաժանումներ, յոտաջ եկած են հազարաւոր կղզիներ, արեւմտեան կիսագունդը բաժնուած է արեւելեան կիսագունդէն մեղի տալով Բեհրինիայի նեղուցը: Ասկէ հաւանական նկատուած է որ մարդը, կենդանական շղթայի զարգացած վերջին օղակը, որոշ կեղրոնէ մը ծագում առած է եւ երկրաբանական փոփոխութեանց հետ կատարած է իր տեղաշարժը, ցրուած է աշխարհի զանազան կողմերը եւ ունեցեր է ընկերային զարգացման նոյն շրջանաւորութիւնը: Այդ ընկերային զարգացումը Լուիզ Մորզան մեղի պատկերացուցած է իր Հին Հասարակութիւնը անունով անմահ ու անդուգական ուսումնասիրութեան մէջ:

Յր. Էնգելս իր «Ընտանիքի, Մասնաւոր Սեփականատիրութեան եւ Պետութեան Մագումը» գրքին մէջ քննադատական տեսութեամբ անդրադառնալով Մորզանի ուսումնասիրութեան կ'ընդունի անոր հիմնական տեսութեանց ճշգրտութիւնը:

Ստորեւ կուտանք այդ հետաքրքրական տեսութեանց կամաքը, ի մտի ունենալով անոր հիմքը կազմող մատերիալիստական այն տեսակէտը որու համաձայն մարդը եղած է այն ուղեղային զարգացման ընդունակ կենդանին որ սկիզբէն իսկ ձգտած է գոյութեան պահպանման համար իր հսկողութեան ենթարկել կենսամթերքներու արտադրութիւնը: Եւ մենք շարունակական այդ ձրդատումին արդիւնքը կը նկատենք այն ինչ որ կը կոչենք մարդկային յոտաջդիմութիւն: Իսկ այդ յոտաջդիմութիւնը մեղի կը ներկայանայ երեք գլխաւոր զարաշրջաններով.

- ա) Վայրենութիւն.
- բ) Բարբարոսութիւն.
- գ) Քաղաքակրթութիւն:

Որպէս նախապատմական զարաշրջաններ մենք պիտի տանենք առաջին երկուքը, վայրենութիւնն ու բարբարոսութիւնը:

Մորզանի հետ Էնգելսը նոյնպէս, անոնցմէ իւրաքանչիւրը կը բաժնէ երեք մասերու, աւելի ցած, միջին եւ բարձր աստիճանի զարաշրջաններու:

1) ՎԱՅՐԵՆՈՒԹԻՒՆԸ

ա) Վայրենութեան տեսլի ցած աստիճանը մարդկային սեռի մանկութիւնն է: Մարդը կ'ապրի արեւադարձային անասուներու մէջ, վայրի անասուններէն պաշտպանուելու համար՝ ծառերու վը-

բայ: Կը անանի պտուղներով, ընկոյզներով ու արմատներով: Այս շրջանին կը զարգանայ մարդուն յօդական խօսեցածեւը:

բ) Միջին աստիճան. մարդը կը սկսի ուտելիքի համար դործածել ձուկ, խեչափառ եւ ուրիշ ջրային կենդանիներ: Ան արդէն կը դործածէ կրակը. առանց անոր ձուկ չէր կրնար ուտել: Մնունդէ այս տեսակով մարդիկ անկախ կը դառնան կլիմայական ու տեղական պայմաններէն, կը հետեւին զետեքուն ու ծովեզերքներուն եւ կը ցրուին հոս ու հոն: Անոնք ունին կայծքարէ գործիքներ: Ասիկա կը կոչուի քարէ դար:

գ) Վերին աստիճանի վայրենութիւն. մարդիկ գտած են աղեղն ու նետը. ասով անոնք տիրացեր են անունդի ուրիշ ճիւղի մը, որսորդութեան: Անոնք շինած են նաեւ սրածայր քարէ կացիններ, որոնցմով կը շինեն նաւակներ եւ բնակելի հիւղակներ: Կ'ապրին խումբերով, ընկերային եղանակով. անոնց անձանօթ է իմ-ի եւ քու-ի գաղափարը: Պետ մը կը ճանչնան եւ կը հետեւին անոր:

2) ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԻՒՆ

ա) Ստորին աստիճանի բարբարոսութիւն. կը սկսի կուեղէն մամաներու գործածութեամբ: Նախապէս կաւով ծեփուած փայտեայ անօթներ կը գործածէին կրակի վրայ կերակուր պատրաստելու համար. երբ մարդիկ տեսան թէ կաւը կրակի ազդեցութեամբ կը կարծրանար, սկսան կաւեղէն անօթներ շինել:

բ) Միջին աստիճանի բարբարոսութիւն. կը սկսի կենդանիներու բնասանցումով եւ արմտիքներու մշակումով: Կ'ընդհանրանայ ոտոցումով մշակութիւնը, կը բազմանան ուտելիքի տեսակները, կը շինուին քարաչէն տուներ:

գ) Վերին աստիճանի բարբարոսութիւն. կը սկսի երկաթի գործածութիւնը: Մշակութեան համար կը շինուին արօրներ եւ այլ գործիքներ, կուրի ու պաշտպանութեան համար սուրեր ու նիզակներ եւ քաղաքակրթութեան զուտը կը բացուի զիրի գործածութեամբ:

Բայց պէտք է ըսել թէ վերեւ նշուած վայրենութեան ու բարբարոսութեան աստիճաններու յաջորդականութիւնը նոյն ժամանակի տեսողութեամբ կատարուած չեն. վայրենի ցեղեր կան որոնք տասնեակ դարերէ ի վեր մինչեւ այսօր իրենց գոյութիւնը կը պահեն եւ չեն մօտեցեր քաղաքակրթութեան սահմանին:

Միակ յատկանշական իրողութիւնը զոր կ'ուզենք շեշտել այն է որ հորիզոնական զծով ընթացող այդ բոլոր իրադարձութեանց ընթացքին խոշոր տարբերութիւն մը յոտաջացաւ արեւելեան



և արեւմտեան կիսագունդերու միջև: Արեւելեան կիսագունդին մէջ բարբարոսական շրջանին զարգացաւ կենդանիներու բնական-ցումը եւ արտադրողականութիւնը: Արեւմտեան կիսագունդին, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաներու բնիկները մեծ մասով անտեսական յարաբերութիւններու միաձեւութեամբ մտացին բարբարոսական երկրորդ կամ երրորդ աստիճանին վրայ, մինչեւ եւրոպացիներու արշաւանքը: Արեւելեան կիսագունդին մէջ զբուեցաւ մարդկային քաղաքակրթութեան օրրանը. այդ քաղաքակրթութիւնը հոն ծնունդ առաւ, հոն մեծցաւ ու զարգացաւ եւ կերտեց այլապան ու զարմանահարզ դէմքերու եւ դէպքերու պատմութիւն մը, որու նմանը չունեցաւ արեւմտեան կիսագունդը: Երկու Ամերիկաները միասին վեր առած չունեցան Աթէնք մը կամ Հոսով մը, որովհետեւ ոչ միայն անհունապէս տարբեր էին անոնց կլիմայական եւ աշխարհագրական փոխադրող պայմանները, այլեւ հիմնապէս տարբեր էին ցեղային, տնտեսական ու բնկերային ուժերու փոխ-բարբերութիւնները: Բայց երկու Ամերիկաներուն վերապահուած էր ապագային եւրոպական երկտասարդ կապիտալիզմին սպասարկելու դերը:

Վայրենի ցեղերը կը խողխողէին եւ կ'ուռէին աւելի բարձր էվոլյուցիայի աստիճանին հասած բարբարոսները եւ իրենք ալ իրենց կարգին զոհ կը դառնային յետոյ լաւապէս կազմակերպուած յաղթական կոմունաներուն: Բայց պէտք է ըսել որ թէ մարդակեր ցեղերը եւ թէ կազմակերպուած կոմունաները բոլորն ալ կոմունական հասարակուրդներ կազմած էին, իւրաքանչիւրը իր զբաւած երկրամասին մէջ: Մարդակեր ցեղերը մարդակերութիւնը իրենց սովորական սնունդի աղբիւրը չէին համարեր. անոնք թշնամին գերի չէին բռներ. գերեվարութիւնը անձնութ էր անոնց. անոնք կը հաւատային թէ երբ թշնամին սպաննէին ու թաղէին, անոր ուղին վրիժառութեան թեւադրանքով օր մը իրենց վրայ պիտի յարձակէր, ատոր համար զայն կ'ուռէին որպէսզի անոր ուղին այլեւս վրտանող չսպաննար իրենց: Նախնական այդ հասարակուրդները, ուրեմն, ըլլան անոնք մարդակեր կամ աստուածակեղրոն պետի մը զեկավարութեան տակ աւելի բարեկիրթ ցեղեր, բոլորն ալ կոմունական շրջանի մէջ էին: Անոնք դասակարգեր չունէին, անհաստական սեփականատիրութիւն չէին ճանչնար: Թշնամի ցեղէ մը խլուած աւարները իրենց միջև կը բաժնէին հաւասարապէս: Այսպէս, հսկայ չէրքերը, որպէս խօսուն յիշատակարաններ, որոնք ցրուած են Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաներուն մէջ, կը ցուցնեն թէ այդ զանազան երկրամասերուն բնակիչները հասեր էին

մեծաքարային դարաշրջանին, ինչպէս նոյն նշխարները մենք կը գտնենք աշխարհի այլ մասերուն մէջ: Եւ ասոնք կը փաստեն որ մարդկութեան տարբեր ճիւղերը, ամէն տեղ, զիսակցարար կամ անդիտակցարար, անցեր են էվոլյուցիայի միեւնոյն ճամբէն: Շատ սխալ կը լինի երբ մենք այդ յիշատակարանները հաշուենք որպէս սոսկ բնականօրէն պատահական երեւոյթներ:

Ինչ ալ որ ըլլայ Տիասուանոկոյի բնդարձակ աւերակներու պատմութիւնը, Ինքա ցեղի վարչութեան ներքեւ Փերուի բնակիչները մեզի կուտան ամենամեծ եւ ամենակատարեալ կոմունիստական կարգ ու սարքի օրինակը: Մեքսիկոն ալ երկիր մըն էր եւ աւելի մեծ երկիր մը, ուր կ'ապրէր նշանակելի տղ մը. բայց հոն կատարի ազդէքները կոմունական ձեւով ապրելով հանդերձ իրենց մարդակերութեամբ եւ սոսկալի բազոստածներով սարսափ տարածեր էին զբացի ցեղերուն վրայ: Ասիէ դատ, անոնք չունէին կազմակերպուած աշխատանքի այն ձեւը ինչ որ փերուլիացիները ունէին: Ատոր համար Փերուն, որպէս աստուածակեղրոն կամ պետական կոմունիզմի օրինակ, սոցիալիստական տեսակէտով արժանի է ուսումնասիրութեան: Այս գծով մենք շատ բան պարտական ենք կարսեւրասո դա Վեկայի, Ինքա ցեղին պատկանող այն ուսումնականին որ արեւոյ Փրեսքոթի ձեռագիրները հաւաքելով տարած է Մատրիա, եւ հոն անոնցմով կազմած է արժէքաւոր հատոր մը որ վերջերս թարգմանուած է անգլերէնի: Մինչեւ այդ ատեն Փերուի հիմնարկութիւններու մասին հետաքրքրուող մարդոց ծանօթութիւնները քաղուած էին աւանդութիւններէ եւ յիշատակարաններէ: Կարսեւրասոյի հաւաքածուն հանդամանօրէն աւելի լայն ծանօթութիւններ կուտայ մեզի, որոնց ամփոփումը կը ներկայացնենք ստորեւ:

Ինքաները Փերուի մէջ վարեր են շատ մեղմ եւ օգտաշատ սեփմ մը, կոմունիստական ձեւով սեփմ մը, որ տեսած է մօտաւորապէս հինգ հարիւր տարի, մինչեւ սպանական կործանարար արշաւանքը: Ընկերային այդ հարստութեան (տիւնէքի) հիմնադիրը եղած է Մանդո Գապակ, որ ժողովուրդին սորվեցուցեր է արհեստներ, արուեստներ, հոգադրութիւն եւ ներդաշնակ ու խաղաղ կեանքի բոլոր գործնական միջոցները: Մանդո Գապակ գուցէ ժողովրդանուէր անձնատիրութիւն մը եղած է, բայց սերունդներ զայն նկատեր են որպէս երկնածին բարերար, որպէս արեւ աստուծոյ զաւակը, որ եկած է իր սիրած ժողովուրդը երջանիկ ու բարեկեցիկ կեանքի մը առաջնորդել, հիմնելով ինքաներու պետութիւնը:

Փերուն ոչ թաղաւոր ունէր, ոչ ալ նախազահ, ոչ օրէնսդիր, ոչ ալ զործադիր մարմին: Երկրի գերագոյն հեղինակութիւնը ներ-



կայացնողն էր ցեղապետը, որու պաշտօնը ժառանգական էր: Անիկա կը ներկայացնէր սովորութիւն դարձած անգիր օրէնքները, որոնք գրուած էին միայն մէկ անշեղ սկզբունքի վրայ. միմիայն աշխատողը իրաւունք ունի ապրելու: Բացառութիւն կը կարգէին երեխաները, հիւանդները եւ ծերերը:

Յեղապետը ոչ միայն անգիր օրէնքներու ներկայացուցիչն էր, այլեւ ներկայացուցիչը արեւ աստուծոյ որդւոյն, Մարգօ Գապակի:

Մարդկային հոգեբանութեան մէջ սկիզբէն ի վեր գերագոյն էակի մը կամ գերագոյն ուժի մը դադափարը ապրած է, եւ ան, այդ գերագոյն էակը, այդ գերագոյն ուժը մարմնացուցեր է կուսքի մը կամ անհատի մը մէջ եւ ողևորուած ու առաջնորդուած է անով: Եւ մենք այս հոգեբանական իրողութիւնը կը տեսնենք նոյնիսկ ներկայիս ամենազարգացած ժողովուրդներու մօտ: Երբ անհատ մը իր աշխիճ հասարակական գործին համար կը փառարանուի, ժողովուրդը անանց անդրադառնալու անոր գործին գրգիռ սուղ ընկերային եւ անասական ազդակներուն, դայն կ'աստուածացնէ. ասանկով այդ անհատը հաւատարմով որ ինք իրապէս գերակայ էակ մըն է, այն որ առաջնորդ ըլլալու էր կոչուած, կը դառնայ բռնապետ: Բոլոր բռնապետները ժողովուրդին ուսերուն վրայ կոխկուտելով բարձրացեր են: Բայց առաջնորդներ եղեր են (եւ անոնք Լենինի նման պատմական, բացառիկ ու պատկառելի դէմքեր են) որոնք նոյնացեր են իրենց սերած ժողովուրդին հետ եւ վարէն նայած են վեր, ոչ թէ վերէն վար, եւ աշխատեր են կատարեալ անձնուրացութեամբ որպէսզի ոչ թէ իրենք՝ այլ ժողովուրդը, ուժի եւ ստեղծագործութեան այդ գերագոյն ազգիւրը աստուածանայ: Տարակոյս չկայ որ ինքաներու առաջնորդ Մանգօ Գապակ որու վրայական կեանքին շուրջ մանրամասն, ստոյգ տեղեկութիւններ չկան, այսօրինակ բացառիկ առաջնորդներէն մին եղած է, որ հիմնած է փերուսիացիներու դարմանալի պատմութիւնը:

Այժմ շարունակենք ինքաներու պետութեան նկարագրութիւնը:

Փերուի մէջ գոյութիւն չունէր սեւէ տեսակի անհատական սեփականատիրութիւն: Ժողովուրդը չէր գիտեր նոյնիսկ թէ ինչ էր գերետիրութիւնը, կամ ինչ էր թշուառութիւնը: Յեղապետէն սկսեալ մինչեւ հասարակ աշխատաւորը, բոլորն ալ կեցած էին նոյն համեստ եւ բարեկեցիկ մակարդակի վրայ, ազատ ամէն տեսակի մտահոգութիւնէ: Գողութիւն, խարդախութիւն, սճիբ անձանօթ էին փերուի բնակիչներուն: Անոնք դատարան չունէին. չունէին

նաեւ ոստիկանութիւն եւ զինուորականութիւն: Մարդիկ ինչպէս բնական պահանջով պէտք ունին ուտելու ապրելու համար, նոյնպէս ալ Փերուի բնակիչները գիտէին թէ պէտք է աշխատին իրենց եւ իրենց հասարակութեան կեանքը պահպանելու համար: Այս իրողութիւնը ստուգեր է Գիլգա տի Լէօն, որ Փերուի հիմնարկութեանց շուրջ ամէնէն հեղինակաւոր եւ ամէնէն արժանահաւատ սպանացի ուսումնասէր զբողէտը եղած է: Ան երկրի մէկ ծայրէն միւսը հաղարաւոր մղոններով ճամբորդեր է, քննած է արտադրութեան եւ ուտեսեղէնի բաշխման դանազան ձեւերը, բնակիչներու պարտաւորութիւններն ու վարչական մեթոտները եւ տեսած է որ անոնց բոլորին մէջ պահուած է հին դարերու աւանդական գիծը, զոր բողոքատելով Կարսիլասոյի հաւաքածուի տեղեկութեանց հետ գտած է անոյիճելի: Ենթադրելով, սակայն, որ Կարսիլասոյի գիրքը մի քիչ չափազանցեալ գունաւորումներ ունի, Գիլգա տի Լէօն մեղի կուտայ հետեւեալ անհերքելի վկայութիւնները: «Սպանական տիրապետութիւնը թէեւ անտեսական եւ վարչական կարգ մը փոփոխութիւններ ներմուծած է Փերուի մէջ, բայց չէ կրցած հնութեան աւանդական գիծերը անհետացնել: Ասոր ապացոյցը այն է որ 1821-24-ի անկախութեան յաղթական յեղափոխութիւնը հնութեան շունչով կրցաւ ժողովուրդը ազատել բռնակալութեան լուծէն: Երկրի գանազան կողմերը կատարած իմ երկարատեւ քննութեան եւ ուսումնասիրութեան ընթացքին ես տեսայ հին դարերու կենցաղի վերապրումը միախառնուած արդիական ձեւերուն հետ, տեղ տեղ նոյնիսկ բոլորովին նախատիպ:

1) Փերուի բոլոր բնակիչները, մարդիկ եւ կանայք, երկտասարդ թէ ծեր, որոշ աստիճանի տակ, բոլորն ալ կոչուած են ծառայել գանազան արդիւնարեութեանց մէջ եւ ընդհանուր հասարակական գործերու վրայ:

2) Անոնց արտադրութիւնը, ըլլայ հողագործական թէ մանուֆակտուրային, բաժնուած էր երեք մասերու. մէկը Ինքայի պետին եւ անոր մերձաւորներուն, մէկը արեւ աստուծոյ տաճարներուն եւ կրօնաւորներուն, միւսը՝ արտադրող աշխատաւորներուն: Բայց ինքաներուն եւ տաճարներուն բաժինը մեծ մասով կ'ամբարուէր սակաւութեան շրջանին գործածուելու համար: Ոչ ոք իրաւունք ունէր ըստ բնաց գանսք իւրացնելու:

3) Մաս մը տեղեր գրամին ինչ ըլլալը նոյնիսկ չեն գիտեր. մարդիկ իրենց ընկերային արտադրութիւնները կը փոխանակէն շրջակայ հողիկ ցեղերու արտադրոյթներուն հետ, ցեղեր որոնք սակաւին կառչած են իրենց նախնական ձեւերուն:



4) Միակնութեան սկզբունքին վրայ հիմնուած բնատնիքը իր պարզութեամբ կատարեալ սրբութիւն մըն է Փերուի բնակիչներուն համար: Անոնք չեն ճանչնար քաղաքակիրթ աշխարհի արտա-վարակ մարտիբիւնները:

Այսքան Գիլգամի Լէօնի գրքէն որ հրատարակուած է 1831 թուին: Այժմ նոթագրենք կարսիլասոյի կազմած հաւաքածուէն կա-րեւոր նկատուած վկայութիւնները:

Այսպէս, ուրեմն, մեր աչքին առջեւ ունինք հասարակութիւն մը որ աշխատանքով ու հողերու պարարտացումով հասած է այն-պիսի կարողականութեան մը աստիճանին, ուր իր անդամները ոչ միայն տէր են իրենց արտադրած կենսամթերքներուն եւ իրենց անհրաժեշտ պէտքերը գոհացնող աղբիւրներուն, այլեւ ի պահանջել հարկին ամէնէն եռանգուն կուտոյներն են իրենց ազատութեան համար: Անոնք պահեստի բանակ չունին, բայց մարդիկ մարդուած են. պատերազմի եւ ռազմական փողը հնչածին պէս, մէկ օրուան մէջ զինարաններու գէնքերը կը ցրուին ու կը կազմուին կարգապահ զինուորական ջոկատները:

Չարմանալի էր սոսոման սիստէմը, չնայած որ այդ մարդի-կը իրենց տրամադրութեան տակ չեն ունեցած բնական դժուարու-թիւնները յազմահարող ջրարաշխատան մեքենական միջոցները: Հողամասեր իրարու ետեւ կ'ոռոգուէին այնպիսի եղանակով որ արդի ժողովուրդները հազիւ թէ պիտի փորձէին իրենց արհեստա-կան միջոցները գործածել նման բերքատուութեան համար: Փերու-վիացիներու փորձադիտութեան եւ յաջողութեան իրողութիւնը մինչեւ այսօր կայ ու կը մնայ որպէս զարմանահարչ իրականու-թիւն: Զանազան աղբիւրներով հողը պարարտացնելու զուտ գի-տական սիստէմը նոյնպէս ապշեցուցիչ է: Ինչպէս երկրադորձական մասնագիտութեան հասած ըլլալու էին մարդիկը, որ իրենց ող-բալի, խեղճուկ նաւակներով Քինչա կղզիներէն թուշաղբ կը բերէին եւ անով կը պարարտացնէին իրենց մշակելի հողերը:

Երբ մենք նկատի առնենք մարդոց նախնական գործիքները, զանազան վայրերու տարբեր տեսակի հողերը եւ կլիմայի փոփո-խութիւնը, այն ատեն կը տեսնենք թէ փերուվիացիներու մշակու-թեան մեթոտները իրապէս կատարելութեան մօտեցած ըլլալու էին որ անոնք հազարաւոր մղան երկրորդութիւն ունեցող երկիր մը հաս-ցընէին իրենց համար բաւարար արդիւնաբերութեան:

Փերուի մէջ արջառարուծութիւնը ծաղկած չէր, որովհետեւ մարդիկ չունէին բնատնի կենդանիներու մեղի ծանօթ սեռերը, չկա-լին կովեր, եղներ ու ոչխարներ. որպէս բնատնի կենդանի՝ այժ-

ուղտը կար. անոր վայրենի տեսակները չորս տարին մէկ անգամ կ'որսացուէին. անոնք որսացման կանոնը որպէս օրէնք բնդուած էին եւ ըստ այնմ կը գործադրէին, պարզ անոր համար որ մարդի-կը չէին ուզեր այդ ցեղը փճացնել: Այժուպի բուրդը արտակարգ խնայողութեամբ կը գործածէին հաշուաւեղէնի համար: Այդ գծով զարգացուցեր էին մանելու եւ հիւսելու արհեստը:

Ինչպէս հիւսելու, նոյնպէս եւ ուրիշ մարդերու մէջ փերու-վիացիները ցոյց կուտային զեղարուեստական մշակոյթի այն բար-ձրը աստիճանը որուն նմանը կարելի չէր գտնել անհաստական սե-փականատիրութեան սկզբունքի վրայ հաստատուած սեւէ քաղա-քակիրթ երկրի մէջ: Քաղաքներու շէնքերը զրեթէ բոլորն ալ միա-տեսակ, հիմնալի կառուցուածքով եւ ոսկիներով զարդարուած էին: Փերուն հարուստ ոսկիի հանքեր ունէր եւ անոնք ոսկին գրամի չէին վերածեր, կը գործածէին զարդարանքի համար: Քաղաքի մը մէջ զեղեցիկ շէնքի մը քով խցճալի տնակ մը չէր տեսնուեր, որովհե-տեւ փերուվիացիները զրկող եւ զրկուող դասակարգ չունէին: Աւե-լի հրաշալի եւ զեղակերտ էին արեւ աստուծոյ տաճարները. անոնց մէջ կուտակուած էին ոսկի զարդեր եւ անօթներ:

Գիւղացիներու բնակարանները զեղարուեստական գծով չէին մրցեր քաղաքի շէնքերուն հետ, բայց անոնք ալ կառուցուած էին ամէն յարմարութիւններով. ազահով, ձեւաւոր եւ հանդստաւէտ, այնպէս որ գիւղացիները երբ քաղաք կուգային, երբեք չէին նա-խանձեր քաղաքացիներուն:

Քաղաքներու պատկառելի շէնքերու աւերակները այսօր իսկ դիտողներուն հիացում կ'ազդեն: Մարդ կը զարմանայ եւ ինքնիրեն հարց կուտայ թէ զերետիրութեան անձանօթ երկրի մը բնակիչները ո՞ր տեղէն բերած ու կառուցած են այդ բարձրաբերձ շէնքերը, ան ալ յզկուած խոշոր քարերով. ի՞նչպէս այդ հսկայ ժայռերը ձեւա-ւորեր են, ի՞նչպէս բարձրացուցեր են եւ միացուցեր իրարու պղնձէ գօտիներով: Միացում, ան ալ այնպիսի ձեւով որ ամենասուր դա-նակի ծայրն անգամ չի կրնար մաղաչափ մտնել միացուած քարե-րու մէջտեղը, միաբանուած շէնքեր, որոնք զարկերով կը զիմադ-րեն ժամանակի պատահարներու յարձակումներուն, մնալով հպարտ ու անընկճելի:

Գիլգո տի Լէօն իր նկարագրութեան բնթացքին մէջ քերութեան կ'ընէ կարսիլասոյի հաւաքածուէն, երբ հիացմամբ կը խօսի աւե-րակ շէնքերու մասին: «Այդ հսկայ շէնքերու աւերակները տեսնո-ղը», կը գրէ ան, «կը կարծէ թէ ասանակ հազարաւոր դերիներ զլիշեր-ցեղեկ աշխատեր են խարազանի հարուածներու տակ: Իսկ



թէ այդ ծանր ու խոշոր քարերը ինչպէս բերուած են հեռուոր լեռներէն, երբ մարդիկ կտոք չեն ունեցած, սայլ չեն ունեցած, դարզէն դարմանքէ դարմանք կը ասնի հետաքրքիր հետախուզողը»:

Սոյն սողերէն վերջ հեղինակը հեռեւեալ պարբերութեանց մէջ կ'ամփոփէ կարսիլասոյի հաւաքածուէն ըրած քաղուածները: «Փերուի մէջ, ըլլայ ճարտարագետութեան կամ արդիւնաբերութեան (ինտուստրի), ըլլայ երկրագործութեան կամ հասարակական շինարարութեանց վրայ աշխատողները հարկադրանքի կամ հրամանի տակ աշխատողներ չեն: Գործը անոնց համար կեանքի ու գոյութեան պայման է: Մարդիկ երբ կ'ապրին եւ կ'ուզեն որ ապրին, գիտեն թէ պէտք է գործեն եւ պէտք է գործեն ընկերովի: Անոնք իրենց գուարճութիւնը եւ խողը գործի մէջ կը փնտեն: Հասակաւորներու համար չկան գուարճատեղիներ, չկան խողարաններ: Զուարճութիւնն ու խողը մանկական շրջանին յատուկ են եւ այդ մարդիկ ու կանայք իրենց երկխոյակիան շրջանը անցուցեր են. այժմ անոնք մտած են ուրիշ շրջան մը, նոր շրջան մը, աշխատանքով հաճոյանալու շրջանը: Ահա թէ ինչու անոնք ուրախութեամբ, խնդալով ու երգելով կը գործեն ամէն ատեն, ամէն տեղ: Ոչ ոք ուշադրութիւն կը դարձնէ թէ լաւ ու գէշ, գժուար ու գիւրին գործեր կան. պէտք է վարակուածութեամբ գէշէն խուսափիլ գիւրինով պարագլու համար: Ոչ ոք չի գանգատիր իր գործէն, քանի որ ինք սիրով ու յոժարակամութեամբ ստանձնած է դայն: Եւ արդէն պէտք է ըսել որ գործերու բաժանում ընողներ չկան, ոչ ալ գործելու ատեն իրավայող հակողներ: Մարդիկ իրենք կ'ընտրեն իրենց գործը ու գործի ընկերները, եւ կարելի է ըսել որ աւելի շատ մը ցում կայ գէշ կամ գժուարին գործերու ընտրութեան ատեն եւ գէշ կամ գժուար գործերու յանձնառու եղողները հասարակուրդի ամէնէն հպարտ աշխատաւորներն են, որոնք իրենց գործը աւարտելէն յետոյ երգելով ու պարելով կը վերադառնան իրենց ընտանիքին մօտ: Ամէն տեսակի գործ, որուն յանձնառու եղած են հարկ եղած որոշ թիւով գործաւորներ, իրենց աշխատանքի տեսողութեան որոշեալ ժամեր չունին, բայց ունին իրենց վերհակիչը որ ամէն շաբաթ կը փոխուի ընտրովի: Վերհակիչը հրամայող եւ անգործ մէկը չէ, ան ալ աշխատաւոր մըն է եւ կ'աշխատի իր ընկերներուն հետ, միայն թէ իր պաշտօնն է որուէլ գործի շափը. այսինչ գործը պէտք է այսինչ շափով աւարտել: Զօրօմոյ գործը աւարտածին պէս, վերհակիչը սուլիչով կը յայտարարէ դադար եւ աշխատաւորները ազատ են մեկնելու: Ընտրուած վերհակիչին պաշտօնն է նոյնպէս արտադրութիւններու բաշխման ատեն ընկերները առաջնորդել պատկանեալ

պահեստանոցները, ուրտեղ անոնք կը ստանան իրենց բաժինը ըստ կարեաց:

Փերուի քաղաքներէն ուրէ մէկուն փողոցներուն մէջ երբեք կարելի չէ տեսնել դատարկացորտ մէկը, որ անգործ կը թափափի: Ծուլութիւնը անտրակելի անպատուութիւն է որ ոճիր կը համարուի: Ուրեմն, զուր տեղը չէ որ սովորութիւն դարձած օրէնքով ծոյլը մահուան կը դատապարտուէր:

Ոսկիի եւ պղինձի հանքագործութիւնը յառաջ կը տարուի հըրաշալիօրէն կազմակերպուած մեթոտներով: Հանքագործները աշխատանքի որոշ ժամ չունին. միայն հաշուի առնուած է անոնց կեանքի սպահովութիւնը: Ամէն մի աշխատաւորի կեանք աւելի կ'արժէ քան թէ ոսկիի հանքի ամբողջ արտադրոյթը:

Պղինձի արժէքը նոյնն է, ինչ որ է ոսկիի արժէքը, որովհետեւ երկուքն ալ գործածութեան համար են, ոչ թէ փոխանակութեան համար: Վաճառականութիւնը չէ հասած այն աստիճանին որ թանկագին մետաղները շուկային վրայ տիրապետող դառնան: Սակայն եւ այնպէս այդ մետաղները որոշ չափով յարգի են, որովհետեւ մարդիկ զանոնք կը գործածեն ճարտարարուեստի ու զարդարանքի համար»:

Սոյն մէջբերումը ընելէ վերջ հեղինակը իր կողմէ կ'աւելցնէ. «Հիւսիսային Ամերիկայի եւ Եւրոպայի զարգացած երկիրները, ուր ճարտարագետներու ձեռքով հսկայ շէնքեր են կառուցուեր, ուր մարդիկ անհաշիւ փորձարկութիւններով սէր դարձած են նիւթական հարստութեան, անոնք ստանկով ստեղծեր են երկու հակընդդէմ ծայրայեղութիւններ, մէկ կողմէ՝ կուսակուած հարստութիւն, միւս կողմը՝ խորացուած թշուառութիւն: ԺՅ. դարու քաղաքակրթութիւնը երբ տակաւին չէ կրցած լուծել ընկերային այդ ծանրակշիւ հարցը, փերուլիացիները դարեր առաջ կրցեր էին լուծել դայն իրենց կոմունիստական կարգուսարքով»:

Բայց դժբախտաբար Փերուի մէջ հաստատուած կոմունիստական հասարակարգը հինգ դարէն աւելի չտեսց. նոր դէպքեր եկան ու նոր գոյովիճակ յառաջացաւ. լաւէն գէպի գէշը, գէշէն՝ վատթարագոյնը: Վայրենութեան վերին աստիճանին հասնող շըրջակայքի ցեղեր սկսեր էին աւրշտիումներ կատարել Փերուի սահմաններէն ներս: Փերուլիացիները, ի հարկէ, չընկճուեցան անոնց պարբերական յարձակման փորձերէն. սակայն ատիկա պատճառ եղաւ որ անոնք կազմակերպուած բանակ մը պահեն եւ տեսական սպահովութեան համար անցնին յարձակողականի: Այսպիսով ծընունդ առաւ զինուորական դատակարգը, որ արտադրող չէր, այլ



մտխոյ: Մարդիկ որոնք պիտի աշխատէին ու արտադրէին, ուրիշներ որոնք կուռի պատրաստութեամբ պիտի սպասէին եւ սպասէին: Փերովիացիները նախապէս միայն ներքին քաղաքականութեամբ տարուած էին, այժմ անոնք սկսան դրադիլ ներքին քաղաքականութեան գործը սպասնափող արտաքին քաղաքականութեամբ: Այսպէս, յառաջ տանելով իրենց յարձակումները, իրենց ենթարկեցին շրջապատող ցեղերը: Բայց փերովիացիները դերետիրութեան ինչ ըլլալը չէին գիտեր. միայն մէկ բան գիտէին, այն էր իրենց սխտէմը պատուաստել պարտուած ցեղերուն: Գծուար աշխատանք չէր այդ, իրենց սխտէմը արդար սխտէմ էր եւ այդ ցեղերը արդէն որոշ չափով կոմունական ձեւով կ'ապրէին. բնութիւն գործածելու հարկ չկար. միակ մեծագոյն գծուարութիւնը զանոնք նոյն տրնտեսական իւրով շագախէն էր: Բայց այդ ցեղերը անտեսութեան ու արդարութեան գաղափարները միացուցեր էին ազատութեան գաղափարին հետ: Անոնց համար ազատութիւնը ամէն ինչ էր: Անոնք ունէին իրենց ուրոյն սոյփորութիւնները, իրենց ուրոյն հաւատալիքներն ու ծէսերը. անոնք ունէին իրենց ցեղապետը, որ իրենց աստուածն էր. այժմ անոնք ամէն ինչ պիտի մոռնային ու ենթարկուէին փերովիացիներուն. այդ բանը հանդուրժելի չէր: Փերովիացիները ամէն աշխատանք թափեցին այդ ցեղերը սիրաշահելով համակերպարական գաշնակցութիւն մը կարճելու համար: Եւ պէտք է ըսել բաւական յաջողած էին, երբ անակնկալ արշաւանք մը ամէն բան տակնուվրայ բրաւ: 1530-ին սպանացի արկածախնդիր նաւապետ մը, Պիզարո, Փանամայէն նաւարկելով կեցաւ Փերուի ծովեզերքը եւ իր նաւակներով 186 մարդոց հետ ելաւ ցամաքը:

Փերովիացիները առաջին անգամ էր որ կը հանդիպէին եւրոպացիներու: Անոնց հսկայ առաջասանաւը, անոնց նաւակները, անոնց հազուադէպ ու գլխարկը, անոնց մէջքին կապուած փայլուն սուրերը աներեւակայելի նորութիւններ էին իրենց համար: Նախ ուրախութեամբ դիմաւորեցին եկուորները զանոնք նկատելով որպէս հիւրեր, բայց շուտով տեսան որ այդ հիւրերը աւազակներ էին, որոնք խելագարուած ամենուրեք փայլող առատ սակիներէն, սկսան կողոպտան ու սպաննութիւնը: Փերովիացիները իսկոյն զիմեցին իրենց բանակին: Սպանացիք մի քանի զոհեր տալով հազիւ կրցան իրենց օձիքը ազատել, անոնք լեցուեցան իրենց նաւակներուն մէջ եւ հեռացան: Յաջորդ երկու տարիներուն սպանացիք կրկնեցին իրենց աւերիչ արշաւանքները եւ վերջապէս 1533 թուին յաջողեցան Փերուի ազատ ու երջանիկ ժողովուրդը ստնել ամենազաթան սարկութեան լուծին տակ: Մասնայական կոտորածն ու աւերածութիւնը

չափ ու սահման չունէին: Կոստաշտ հռովմէացիները եթէ ըլլային արշաւադները, գուցէ պիտի չսիրէին ընել այն ինչ որ քրիստոնեայ սպանացիները բրին: Արուեցան քաղաքները, կործանուեցան հրաշալի շէնքերը, իսկ ուրախ բրտով աշխատող մարդիկ բոլորովին մերկ, խարազանի հարուածներու ստակ արին, արքունք թափող գերիներ դարձան: Փերովիացիներու հիմնած քաղաքակրթական այն շէնքը, որու նմանը նոյնիսկ այսօր ամենաքարգացած կապիտալիստական երկիր մը չի կրնար կառուցել, խորասուզուեցաւ ու թաղուեցաւ մոխիրներու մէջ: Մանգօ Գապակի երկրէն հեռացաւ ազատութիւնը, հոն այլեւ չէին լսուեր բարի ու երջանիկ ժողովուրդի մը ուրախութեան ու երջի ձայները: Բայց Փերուն միջին դարուն պատմութեան մէջ բացաւ էջ մը, որ որպէս առաջնորդող ջահ պիտի փայլի յաւէտ գէպի կոմունիստական կարգերը գիժոց ցաւատանջ մարդկութեան համար:

Հռովմ իմպերիալիզմի ուղեգիծը պատրաստեց. Փերու իր կարգին կոմունիզմի անխորտակելի անկիւնաքարը դրաւ: Առաջինը ինկաւ եւ անոր ժառանգորդին ճակատագիրն ալ նոյնն է. անկում: Բայց Փերուի հաստատած անկիւնաքարը կը մնայ, ապագայ սերունդները անոր վրայ պիտի հաստատեն կոմունիզմի յաղթական ու յուերժական շէնքը:

ՔԱՌՍԸ

Մենք, նախ քան Փերուի մասին խօսելը, երկու զլուխ յատկացուցինք զրամի աճող իշխանութեան եւ Հռովմը թողուցինք զրամական վեհապետութեան հրամանատարութեան ներքեւ: Ատիկա արդէն քառասական շրջանն է: Այժմ պիտի անդրադառնանք այդ քառսին՝ հակիրճ պատկերացումով:

Երբ սկսաւ անրնոյմիջական շարքը բարբարոսներու յաջող արշաւանքներուն, որոնք սարածուեցան հիւսիսէն մինչեւ Սեւ Մով, հռովմէական կայսրութիւնը կորսցուց իր պետականութեան ստորոգելիքները եւ եղաւ ամենամեղաւթ տեսակի հարկահաւաքումի մի բացայայտ գործակալութիւն: Հռովմի կայսրերը անուանական վեհապետներ էին դարձեր: Այստեղեան բոլոր ճիւղերը խորտակուած էին: Իսկ լատիներէն լեզուն իր ազճատուած երանգներով եղեր էր այդ ընդարձակ երկրի տիրող լեզուն: Հոյի մշակները բնկըմած էին անասելի կողոպուտներէ յառաջացած թշուառութեան մէջ, կողոպուտներ որոնց չէին կրնար դիմադրել կողոպտուողները իրենց պատահական յաջող ապստամբութիւններով. իսկ անոնց ջանքերը կարոտութեան մակարդակէն մի քիչ բարձրանալու՝ դա-



ստարաբուսած էին ձախողանքի: Պետական ու կառավարական պաշտօնականները, անտեսելով իրենց պաշտօնի պարտաւորութիւնները, հարկահաւաքի զիմակին տակ բացարձակապէս աւազակութեամբ կը դրաղէին: Նոյն ատեն, ճամբաները, ըլլան անոնք տեղական թէ հեռուները ուղղուած, ամբողջապէս քայքայուած էին: Փոխադրութեան եւ ճամբորդութեան դժուարութիւնները, բացի ծովայինէն, անասելի վատթար չափերու հասեր էին, ա՛լ նկատի չունենանք վառանդներն ու ծախքերը: Հոսովի «խաղասէր» վեհապետը, ստեղծելով, ներդաշնակութիւն ու պարկեշտութիւն կրօնէք պահպանել օրէնքի սահմաններուն մէջ: Տարակոյս չկար որ այդ բոլոր էրազարձութեանց շրջանին, ազրիւրներ կային արտադրութիւնը կանոնաւորելու միջոցով հարստութիւն ստեղծելու, բայց այդ ազրիւրները կաշառակերութեան ու տիրող սպակամութեան հետեւանքով ցամքեր էին: Աւերման միջնադարներուն բարբարոսները այնքան մեծ հարուած չէին տար երկրին, որքան կառավարութեան մէջ արմատացած նեխածութիւնը:

Պատմութիւնը ցոյց կուտայ թէ Ատլանտեանէն Պաղարական երկրադարձական երկիրներ եթէ աւերիչ յարձակումներու ենթարկուած են, անոնք կրցած են անմիջապէս իրենց վէրքերը բուժել, երբ հաստատուած է բնականոն, խաղաղ կեանքը: Այդպէս չեղաւ, սակայն, հոսովէական կայսրութեան երկիրներուն մէջ: Բարբարոսները եկան թէ որպէս յաղթողներ եւ թէ որպէս գաղութարարներ. անոնք եկան եւ իրենց դրաւած տեղերուն մէջ մնացին ու հաստատուեցան, ոչ թէ փոթորիկի նման աւերեցին ու հեռացան: Կարգ մը պարագաներու տակ անոնց նոյնիսկ փառաշուք ընդունելութիւն ալ տրուեցաւ Քրիստոսի խաչով, քանի որ անոնք «եկած էիք այլքելու իրենց պաշտածը եւ պաշտելու իրենց այրածը»: Կոթացիք, վրեժիկոթները, օսարոկոթները եւ դերման ցեղերը, որոնք արշաւելով որոշ տեղեր գրաւեցին ու հաստատուեցան անոնց մէջ, նախ քան հոսովէական կայսրութեան ամբողջական փլուզումը, անոնք գրեթէ երեք դար շարունակ կուուեցան արեւելքէն ներխուժող հորդաններուն դէմ: Հին հոսովէական պետութեան ընդարձակածաւալ երկրէն հազիւ թէ որոշ մաս մը ազատ մնացեր էր արշաւող բարբարոսներու յարձակումներէն: Եւ պէտք է ըսել թէ հոսովէական բանակներու զիպուածական յաջողութիւնը այս կամ այն ռազմաճակատին վրայ կապուած էր բարբարոս ցեղապետներու տրուած կաշառքներուն: Իսկ այդ կաշառքները ոսկիներ ու թանկագին քարեր էին, որոնց ազրիւրները հետզհետէ կը ցամքէին: Հոսովէական կայսրութիւնը, որ իրեն վերապահած էր աշխարհածաւալ իշխա-

նութիւն մը եւ կը ներկայանար որպէս պաշտպանն ու կաղմակերպողը իր սահմաններուն մէջ ապրող բազմազգի ժողովուրդներուն, կործանուած էր իր ծոցէն ծնող հակասութիւններու ուժով: Բարբարոսները այժմ եկեր ու լսելեայն կը յայտարարէին որ Հոսով իր զինուորական ու անտեսական գործօններով այլեւս չէր կրնար արդիւլել նոր հասարակարդի մը յայտնարեումը:

Յարաբերական խաղաղութեան կարճատեւ շրջանները սրոնց հետեւեցան նոր յարձակումներ ոչ միայն ընդհանուր շիտթութիւնը աւելի խորացուցին, այլեւ կեղեքիչներու միջեւ քաղաքացիական պատերազմներ յառաջացնելով ընկերային ու անտեսական անկարգութիւնները աւելի եւ աւելի ընդհանրացուցին: Բարբարոս թէտորիկը, օրինակի համար, որ իր անունը ստորագրել էր չէր դիտեր, ուղեց առատութեան մի նոր շրջան ստեղծել եւ սորվեցնել խտաւցիներուն որ ազէտ կոթացի մը իր արիական հաստքով կրնար աւելի ազդեցութիւն ունենալ իրերու դարգացման վրայ, քան թէ սմէնէն ուսեալ ու քաղաքակիրթ հոսովէացի կառավարիչը: Բայց ան կը սխալէր: Իրերու ընթացքը կարելի չէր ենթարկել անհատի մը կամքին: Նոյն ձախող փորձը բրաւ նաեւ կաստանդնուպոլսոյ կայսրը: Արեւմուտքի մէջ եւ այլուր, ընկերային ու անտեսական քոսոսը շարունակուեցաւ առաջուայ նման: Երկրադարձական առողջ սիստէմի մը վրայ հիմնուած քաղաքականութիւն մը կրնար դասել կամ ետ կեցնել երկար ատեն տիրակալութեան սանդուխէն վեր բարձրացող վաճառականական եւ գրամական ուժի քանդող բնոյթը: Բայց վերի խաւերէն սկսեալ այդպիսի զիտակից ճնշման մը շարունակութիւնը ձախողեցաւ եւ անտեսական աստիճանական դարգացումը, դանդաղ եւ սակայն յարատեւ, կրցաւ բանալ իր դարասուղի ճամբան:

Քայքայուող հոսովէական կայսրութիւնը այսպիսով մարդկային սեռի պատմութեան մէջ ամէնէն յատկանշական փորձարկութեան թատերարեմը եղաւ: Ան իր սահմաններուն մէջ փորձեց յարմարուիլ անուս բայց սազմասէր ցեղերու քաղաքակրթութեան, որ սերունդէ սերունդ չէին կրնար հասկնալ եւ չէին կրնար դաջն որդեղրել: Անոնց թագաւորներն ու ցեղապետները խոշոր, կէս վաշկատու հասարակուրդներու հրամանատարներն էին: Այդ հասարակուրդները արեւակցական յարաբերութիւններու վրայ հաստատուած ըլլալով, անոնց հողային մշակութիւնը եւ սեփականատիրութիւնը իր էութեամբ զիւղական հասարակուրդի սահմանափակ կոմունիզմի ձևը ունէր: Անոնց ցեղերը ունէին գերիներ եւ անոնց թագաւորները կը զեկավարէին ցեղերն ու ցեղերու գաճակեցութիւնը իրենց պատերազմական արշաւանքներու ատեն, եւ կը զոր-



ծէին որպէս խաղաղութեան առաջնորդներ պնդուականներու խորհուրդի վերահսկողութեամբ: Բայց ցեղի անդամները, չնայած իրենց վրայ իշխողներու գիրքի տարբերութեան, ազատ մարդիկ էին, իսկ իրենց զինուորական կարգապահութիւնը բոլորովին տարբեր էր հոսովձէական յաջող զօրավարներու խիստ հսկողութեան տակ յառաջ տարուած կարգապահութենէն, ինչպէս որ անոնց զօրավարներու պաշտօնն ալ տարբեր էր հոսովձէացի զօրավարներու պաշտօնէն:

Յաւալի է, սակայն, լսել որ այդ ընդհանուր թահուրոհին մէջ երբ հոսովձէական պետութիւնը տակաւ կը կազմալուծուէր, զիւզական շրջաններու աշխատաւորներու եւ քաղաքի բանուորներու կացութեան մասին որոշ, մանրակրկիտ ծանօթութիւն չունինք: Գերման եւ լատին հեղինակներու տուած ծանօթութեանց միջեւ կան սուր հակասութիւններ, որովհետեւ երկու կողմն ալ տարուած են ցեղային տակութեամբ եւ կրօնական ժահրով: Մենք անկախ ու անաչառ մարդոց շէնք հանդիպիր:

Մինչեւ Ֆէոդալական սիստէմի հաստատումը, յաջորդական մի քանի դարերու ընթացքին, երբ նկատի առնենք թաւալող խոսովութիւնները, պիտի տեսնենք որ մարդկութեան ճնշուած դասակարգ մը արդէն իր դոյութիւնը կը սրահէր նոյնութեամբ, մինչ անդին մի տեսակ ջանք գործադրութեան կը գրուէր կարգ ու կանոն պահելու համար: Բայց այդ ջանքը աւելի խմբական էր քան հաւաքական, աւելի կոյր էր քան գիտակցական: Նոյնիսկ կաթոլիկ եկեղեցին, որ նիւթական ու բարոյական մեծ ազդեցութիւն ձեռք բերած էր, ինչպէս նաեւ ամենակարող քաղաքացիները, չէին կրնար մշակել ներդաշնակութեան որոշ եւ հիմնական ծրագիր մը: Բարբարոսները, սակայն, որոնք ներս խուժեցին մեծ թիւով, աւելի մատչելի գաղափարներ ունէին, աւելի գործնական միջոցառումներ քան թէ Ֆէոտալական թագաւորներն ու սարսնները, որոնք սկսեցին հաստատել բնկերային ու անտեսական հիմնարկութիւններ: Այս կապակցութեամբ դժուար է ներկայացնել Ֆէոդալական կարգադրութեանց անվերջանալի բարդութիւնները: Ասոնք մեծապէս կը տարբերէին հոսովձէական երբեմնի օրնապետած իւրաքանչիւր գաւառներու մէջ երեւան եկող բարդութիւններէն, որ քիչ մը աւելի ուղղակի ազդեր էին գերետիրականէն ճարտարականի փոխանցման շրջանի բնկերային յարաբերութեանց ձեւերուն վրայ: Այժմ գերինները, ճորտերը եւ զիւզացիները հաւասարապէս կը նկատուէին մարդկային գործիքներ, որոնց վրայ կառուցուած էր հասարակութեան անտեսական վերնաշէնքը: Արտադրութեան

գործածական ձեւերը նոյնն էին, ինչ որ էին նախորդ դարերուն: Երկրագործութեան մէջ մի քիչ յառաջիմութիւն կատարուած էր, բայց մշակութեան ընդհանուր ձեւերը գրեթէ մնացեւ էին նոյնը: Կայսերական շրջանին, քաղաքները գերիշխող զիրք ունէին զիւզական շրջաններուն վրայ, ըլլայ քաղաքական, ըլլայ անտեսական տեսակէտէն. այդ հանդամանքն ալ համարեա թէ անվտուտ մնաց: Արտադրութեան ձեւերուն մէջ յստակ բարեփոխում մը տեղի չունեցաւ որ փոխէր հասարակութեան վերնաշէնքը: Վերին եւ ստորին դասակարգերու միջեւ եղած յարաբերութիւնները նոյնպէս նշանակելի փոփոխութիւն չունեցան. ասոր համար մարդը բնութեան հրամայելու մասին չմտածեց, միայն թէ հասարակութեան մէկ ձեւը յարմարեցուցաւ մի ուրիշ ձեւի առանց փոխելու արտադրութեան չին մեթոտները, բան մը որ պիտի ցոյց տար ընկերային զարգացման նոր դարաշրջանի մը մուտքը: Բարբարոսներու արշաւանքին հետեւող այդ բարդութեանց շրջանին, անտարակոյս որ ստքի տակ կոխկառուող գաւազարգերու կողմէ տեղի ունեցած են ապստամբական շարժումներ, բայց անոնց մասին պատմական արձանագրութիւն կազմողներ չեն եղած:

Տարակոյս չկայ որ արշաւող ցեղերը, որոնք իրենց հետ բերած էին կոմունայի ձեւեր, մեծապէս ազդեցին իրերու գարգացման այն երկար շրջանին սրուն հետեւեցաւ Ֆէոտալիզմի հաստատումը: Ֆէոտալիզմի չթօքը կազմուելու առեն առաջին անգամ երեւան եկան զինուորական վարձակալութիւններ ու անձնական յարաբերութիւններ: Բայց զիւզական հասարակուրդները իրենց կոմունական կարգադրութիւններով եւ բաժնուած գաշաւերու սիստէմով տարածուած էին ամբողջ Եւրոպայի մէջ զինուորական վարձակալութեան եւ կուուող ազատ մարդոց կարգադրութեան տակ: Հոսովձէական օրէնքն ու հոսովձէական հիմնարկութիւնները մեծ ազդեցութիւն գործեցին Ֆէոտալիզմի հիմնաւորման սկզբնական ու անոր յաջորդող շրջանին: Գերետիրութիւնը իր ինն ձեւով անտեսական առաւելութիւն մը երաշխատորելու գերը չունէր այլեւս, բայց ան երկար առեն շարունակուեցաւ արտադրողական աշխատութեւրը չլիթայելու հանդամանքով: Ասով կը հասկցուի որ հոսովձէական գերետիրական հիմնարկութիւնները մէկ անգամէն շտորտակուեցան եւ գերետիրականէն ճորտատիրական շրջանի փոխանցումը յանկարծակի եղանակով չկատարուեցաւ:

Գաղութ, ազատ գաղութ եւ իրապէս ազատ հողագործներ շարունակ կոպոպուտի վախով կ'ապրէին. կողոպուտ՝ պաշտօնական եւ անպաշտօն մարդոց կողմէ, այնպէս որ նոյնիսկ հոսովձէական



կայսրութիւնը երբ ասկաւին զոյութիւն ունէր, անոնք ամբողջապէս բացարձակ աւերածութենէ ազատուելու համար ինքզինքնին կը դնէին հարուստներու պաշտպանութեան տակ: Իսկ այդ պաշտպանութեան փոխարէն մեծ հողատէրերը փոքր սեփականատէրերէն կը պահանջէին իրենց կալուածներու փոխանցումը: Ասով, ազահ հարուստները կ'ապահովէին բացարձակ իշխանութիւն մը: Այսպիսի շահատակութեանց սարսուփելի ձեւերը այնպիսի անպթութեամբ կը շարունակուէին որ ժողովուրդը բարբարոսները կ'ընդունէր որպէս ազատարարներ, որովհետեւ անոնք ծանօթ չէին հռովմէացի տիրող դասակարգի անխիղճ ձեւերուն: Հռովմէացի հողատիրոջ խոստացած պաշտպանութիւնը իրապէս դարձեր էր միջոց մը սեփականազրկելու փոքր հողատէրերը: Կոթացիք, վիսիկոթներն ու վանդալները երբ եկան ու յաղթեցին անտեսական ու ընկերային այդ տնական, ներքին բռնադատներուն, երազներու կառույց յուսահատ եւ խեղճ ժողովուրդը շուտով յուսախար եղաւ, որովհետեւ մինչ հռովմէացի մեծ հողատէրը կամաց կամաց յառաջ կը ասնէր իր կողողուտը, բարբարոսներու պէտք մէկ անդամէն սկսաւ իր աւաղակային յափշտակութիւնը առանց այլեւայլի. ան գրաւեց թէ մեծ եւ թէ փոքր հողատիրոջ կալուածները եւ ինքզինքը յայտարարեց որպէս տէրն ու տիրականը ամէն բանի: Բարբարոսներու ունեցած ինքնատիպ հասարակուրդը միանալով հռովմէական ապահանումը բարբերու տէր հասարակուրդին երեւան բերաւ մի տարօրինակ խառնուրդ, ուր արեւակցական, առհմային կապերու տեղ անցան յաղթական առաջնորդներու հաճելի եղող անհատական ինքնաթափ հաւատարմութեան կապերը եւ նիւթական շահերու նկատումները, կոմունական կարգադրութեանց յաջորդեցին աւատահողերու բաժանումները: Այս իրադարձութեանց ընթացքին Եւրոպայի մէջ այլեւս անհատական ազատութեան հող չմնաց:

Այդ խառնիճաղանճ հասարակութեան մէջ ամենացած, անազատ ճորտէն մինչեւ ամենաուժեղ եւ հարուստ մեծատունը, կամ թագաւորը մէկ օրէնք կը ճանչնային — իրաւունքը հզօրագոյնին պատկանելու օրէնքը. իսկ հզօրագոյնը որ իր արամադրութեան տակ ունէր իր հզօրութեան սատարող բոլոր ուժերը, նայեցաւ ինքզինք կատարելապէս ազատ ու ապահով չէր գտար: Իրերու այդ գրութեան ներքեւ անտեսական եւ ընկերային կարգուսարքը շատ անուժ շարժման մը նշանը հազիւ ցոյց կուտար սովորութիւն դարձած օրինազանցութեանց քառսին մէջ: Այդ էր իրականութիւնը Եւրոպայի մէկ ծայրէն միւսը: Վեցերորդ եւ հօթներորդ դարերը, որոնք համարուած են որպէս անկարգութեանց վերին աստիճանը

ներկայացնող դարեր, նուազ վատթար էին ժողովրդական զանգուածներուն համար քան թէ անոնց յաջորդող դարերը: Քաղաքակրթութիւնը, սակայն, իր նեղ իմաստով ասկաւին վերադրումի նշաններ ցոյց կուտար: Բայց երբ միջին դասակարգը եւ կղերականութիւնը՝ տարուած ընչաքաղցութեամբ սկսան իրենց ուժգին շահատակութիւնները, գրութիւնը տարբեր հանգամանք առաւ: Այս երկու դասակարգերէն կղերականութիւնը ամենամեծ յաղթանակը ապահովեց, որովհետեւ ստրուկներու եւ ճորտերու ազատութիւնը ջնստագոյնով դանձր համախմբեց ընդարձակ հողերու տէր նախնականացած վանքերու մէջ եւ դանձր լծեց ստրկային աշխատանքի: Աշխարհական ճորտերէն շատերը ազատագրուելով դարձան հոգեւորականներու գերիները, որոնց խոստացուած էր երկինքի արքայութիւնը:

Եկեղեցւոյ այդ կախարդիչ զիրքին բարձրացումով շահագործուող դասակարգի դասակարգային գիտակցութիւնը ասկաւ ստ ասկաւ սկսաւ մթալանիլ. ասոր համար այդ մի քանի դարերու պատմութեան մէջ Սպարտակուսներու շնորհ հանդիպիր:

Յառաջացեր էր քառս մը եւ այդ քառսը այնպէս կը թուէր թէ սեւական էր ու անընդմիջական:

ՖԷՈՏԱԼԻՉՄԻ ԾՆՈՒՆԻԸ

Ֆէոտակական գրութիւնը Եւրոպայի մէջ ծագում առաւ բարբարոսներու արշաւանքներէն, օրէնքի եւ կարգ ու կանոնի խորակումէն, այն աւաղակախումբերու աճումէն, որոնք կողոպուտի համար կը թափառէին հոս հոն եւ ասոնց հետեւանքով ամէն տեսակի աշխատատեղերու անապահովութենէն: Երբ մենք բարդուտենք Ֆէոտակի մի սկզբնական շրջանին տարածուած սարսուփելի տեսարանները հռովմէական կայսերական սկզբնական շրջանի տեսարաններուն հետ, պիտի տեսնենք թէ վերջինները գրեթէ աննշան կը մնան: Հռովմէական կայսրութեան քայքայման ատեն, երբ սկսեր էր սաղմնաւորուիլ Ֆէոտակի միջին, կեանքի ու սեփականութեան ապահովութիւն չկար բնաւ: Գիւղի եւ քաղաքի բնակիչները միշտ մասսայական ջարդի վտանդի մէջ էին: Բռնարարում, կողոպուտ, հրկէհում եւ ամէն տեսակի խժոժութիւն սովորական երեւոյթներ էին դարձեր: Հողի մշակները ամբողջապէս թողուած էին բարբարոսներու եւ կիսավայրենիներու շնորհին, իսկ ներսէն՝ պարագաներէն օգտուող աւագակներուն:

Մարդիկ բոլորաբանին կը նայէին սեւէ տեսակի պաշտպանութեան համար: Գիւղացին եւ իր ընտանիքը գինուորական վար-



ժուլիւն չունէին, չունէին նաեւ միջոցներ ինքզինքնին պաշտպանելու: Իսկ անոնք որ զինուորական մարզանք ու զէնք ունէին, անոնք ալ ատիպուած էին ապստամբիլ անտրիկ տեղեր: Եւ այս մարդիկը երբեմն դուրս գալով իրենց ապաստանարաններէն շատ աւելի սարսափ կը տարածէին քան թէ բարբարոսները: Բայց բոլոր այս սոսկալի իրողարձութիւնները երկար չէին կարող աւելլ, վերջապէս բարեփոխուած, բնականոն դրութիւն մը յաջորդելու էր, եւ այդ՝ ոչ թէ բռնի ուժով կամ գերակայ անհատի մը կամքով, այլ անտեսական եւ ընկերային պայմաններու օգնութեամբ հրապարակ իջնող նոր դասակարգի մը աճումով: Եւ այդ դասակարգը եղաւ բարբարոս ցեղապետներու հետ միացած ազնուականութիւնը, որ նախ ինքզինք պաշտպանելու միջոցները ապահովեց, ապա ընկերային զիրքին տիրանալով սկսաւ պայքարիլ հին ու մաշած հիմնարկութեանց դէմ եւ զանոնք մաշեցնել:

Ոմանք, անհատապաշտ դպրոցի հետեւորդներ, Ծարլըմանջի կուտան ամենազլխաւոր դերը, իրք թէ ան էր որ կրցաւ իրերը բերել բնականոն հունի մէջ եւ բանայ նոր դարաշրջան մը:

Մեծ մարդ մը կրնայ որոշ ատեն մը կասեցնել տիրող անիշխանութիւնը, բայց այդ չի նշանակեր թէ ան պիտի կրնայ պատմութեան անիւները գնել իր ուզած երկաթագծերուն վրայ: Ծարլըմանջ փորձեց հռովմէական կայսրութեան անջատ ու խռովայոյզ երկրամասերը վերամիացնել եւ հիմնել օրինական ու հաստատուն պետութիւն մը: Ան իր կենդանութեան մասամբ յաջողեցաւ իրագործել իր ծրագիրը, բայց իր ազդեցութիւնը եւ յառաջացուցած գործը երկար կեանք չունեցան եւ դրութիւնը նոյնը եղաւ ինչ որ էր առաջ: Ընկերային եւ արդիւնաբերական քառսի բոլոր տարերային զբաղումն ուժերը յանկարծ պայթեցան եւ աւելի վտանգաւոր դարձան: Թագաւորական տան անգամներու ներքին հակամարտութիւններն ու մեքենայութիւնները տարածուեցան ազնուականներու մէջ: Այն բոլոր կարողական ուժերը, որոնք ճնշման տակ միացեր էին զիմադրելու համար ծովահէններու ասպատակութեանց, միւլիմաններու եւ բարբարոս հորդաններու յարձակումներուն, մէկ անգամէն ցրուցան եղան: Նորմանացիները, արաբներն ու հոնները տակաւին կը շարունակէին իրենց աւերումները ամբողջ արեւմուտքի մէջ: Նորմանացիները Ֆրանսայի ու Գերմանիոյ մէջ ամէնէն անասնձ արշաւողներն էին: Անոնք կը հրդեհէին տուները, կը ըսպաննէին մարդիկը եւ կը կողոպտէին ամէն ինչ որ կրնային ձեռք ձգել: Անոնք Հոնոսի շրջանը գրեթէ աւերակ դարձուցին, շինսյերով մենաստանները, վանքերն ու եկեղեցիները: Կէս կողմակեր-

պուած Ֆէնտալ լորտերը ուժ չունէին զիմադրելու այդ կասաղի արշաւողներուն, որոնք հիւսիսէն անցան Սէնի հովիտը եւ կողոպտեցին Փարիզը: Այս սքանախնայիտան ծովահէնները մեծ թիւ չէին կազմեր, բայց իրենց քաջութիւնն ու յանդգնութիւնը անգերազանցելի էին:

Այս եւ ուրիշ արշաւանքներու ատեն յատկանշական կէտը այն էր որ հասարակ ժողովուրդը որ խոր աւելութեամբ լեցուած էր ներքին թշնամիներուն, մասնաւորապէս Ֆրէնքիշ ասպետներուն դէմ, միացաւ նորմանացի արշաւողներուն, որոնք իրենց զանակից ժողովուրդին հետ սկսան անլուր խռովութիւններ, մարդոց ձեռքերն ու ոտքերը կտրել. մարդիկը ողջ-ողջ խորոյններու վրայ այրել սովորական երեսօթիներ էին դարձեր: Ըորտերն ու սորուկները, շարչարուող զիւղացիներն ու իրենց համբերութիւնը սպառած արհեստաւորները իրենց ըմբռնած արդարութիւնն էր զոր կը գործադրէին իրենց տէրերուն դէմ: Գիւղացիները, մասնաւորապէս, որոնք ոչ մէկ յոյս ունէին ազատուելու իրենց թշուառութենէն, ամէն կերպով կ'օժանդակէին արշաւողներուն զբաւելու քաղաքներն ու ամբոցները: Բայց այդ ճորտերն ու զիւղացիները իրենց նախընտրած ձեւի վրիժառութեամբ իրենց վիճակը չէին բարելաւեր: Ֆրանսա արշաւող հորդանները շուտով զաղբեցուցին իրենց կողոպուտը եւ ամուսնանալով Ֆրանսացի ազնուականներու աղջիկներուն հետ դարձան տեղական շահագործողներ, ինչպէս որ էին Ֆէնտալիան լորտերը: Անոնք այդպիսով միացան ժողովուրդի նախկին թշնամիներուն եւ սկսան ճզմել հասարակ ժողովուրդը, եւ որպէսզի ամէն ինչ զիրանար, անոնք ընդունեցին քրիստոնէական կրօնքը որ սարկացման ծառայոյ յարմարագոյն գործիքն էր: Կաթոլիկ եկեղեցին որ մաս մը զիւղացիներու վիճակը բարւոքելու եւ զերիներու ազատագրութեան համար աւերես ջատագով ըլլալուն համար մեծ վարկ էր շահած, ամենամեծ կալուածատէրն էր մասնաւորապէս Ֆրանսայի մէջ: Ան մէկ կողմէ սկզբնական շրջանին պաշտպան կեցաւ ճորտերուն ու զերիներուն, բայց միւս կողմէ երբ ախրացաւ իր բարձր իշխանութեան, սկսաւ իր հողերուն կապուած խեղճուկ ճորտերը շահագործել աւելի անխղճութեամբ քան թէ աշխարհական մեծ հողատէրը: Փարիզի եպիսկոպոսը օրինակի համար, հռովմէացի միլիոնատէրէն աւելի հարուստ էր գրամով ու զերիներու թիւով: Անիկա գրաւած էր ամէնէն յուսթի եւ արդասարեք հողերը եւ ունէր երեսուն հարար ճորտեր, որոնց վիճակը աւելի վատթար էր քան ազնուականներու ծառայոյ ճորտերու վիճակը: Ֆրանսայի ժողովուրդը ութը հարիւր տարի վերջ էր որ



կրցաւ աստատմբիլ, իր վրին կրած անտանելի լուծը փշրելու վրձ-  
նականութեամբ:

Այսպէս, դէպքերը ներգաշնակութեան գծով շատ դանդա-  
ղութեամբ կը յատանային եւ թշուառ ժողովուրդին վիճակը կը  
մնար նոյնը: Անմիջապէս աւերող մէկ արշաւախումբը երբ իր գոր-  
ծը կը վերջացնէր եւ կ'ընտելանար նստակեաց կեանքի պայմաննե-  
րուն, ուրիշ արշաւախումբ մը երեւան կուգար նոյն նպատակով:  
Նախկին կողպպաողը այս անգամ ինք կ'ենթարկուէր կողպպուտի:  
Եւ հազիւ թէ սկսած էր խաղաղութեան շրջան մը, ահա սկսաւ լրա-  
շակիրներու արշաւանքը: Մահմետականները գրաւելով Երուսաղէ-  
մը դոցեր էին արեւելքի հեռ վաճառականներու բացած համբան:  
Տիրող դասակարգը, ազնուականութիւնը, այդ արշաւանքին համա-  
կիր էր, որովհետեւ վաճառականները երբ կը սուժէին, ինք ալ կը  
գրկուէր արեւելքի համեմներէն, թանկագին քարերէն եւ արժէքա-  
ւոր հիւսուածեղէններէն: Միւս կողմէ կաթալիկ եկեղեցին որ մե-  
ծագոյն աւատապետն էր Եւրոպայի մէջ, ստանձնելով լրաշակիրնե-  
րու արշաւանքի ղեկավարութիւնը, կ'ուզէր Եւրոպայի վեհապետ-  
ները միացնել իր ձեռքին բռնած սրբազան խաչին տակ եւ ամբող-  
ներու կրօնական հաւատքը խորացնելով սպահնովել իր իշխող գե-  
րեշխանութիւնը:

Առաջին խաչակրութիւնը սկսաւ 1096-ին: Սաշակիրներու  
պատերազմները միջնադարներով շարունակուեցան մինչեւ 1291,  
երբ Աբբը գրաւուեցաւ թուրքերէն: Այդ շրջանը կարելի է կոչել  
արկածախնդրութեանց եւ աւազակութեանց շրջան:

Ձինուորական մարզանք շունեցող մարդիկ խառնելուուն կը  
հաւաքուէին ու խումբերով կը մեկնէին սուրբ քաղաքը: Անոնք ոչ  
հարկ եղած պաշարը ունէին, ոչ ալ կուուելու համար պիտանի գէն-  
քեր, բայց կոյր մոլեռանդութեամբ իրենց բախտախնդիր եւ աւա-  
զակաբարոյ հրամանատարներուն հեռ կը ճամբորդէին, ուր որ  
մանէին, Քրիստոսի խաչին անունով կը կողպպուէին ու կ'անցնէին:  
Ո՞վ կրնար բնդդիմանալ Քրիստոսի սուրբ քաղաքը սպասելու արա-  
մաղիք այդ անձնուրաց խաչակիրներուն: Անոնց մէջ էին Փէոտալ  
լորտերը, իշխաններն ու սապեաները, որոնք ծանրարեւունաւ  
պարտքերով կ'երազէին մեծամեծ աւարներու տիրանալ եւ անոնց-  
մով փակել իրենց պարտքի հաշիւները...:

Չարմանալին այն էր որ արեւմուտքը թէեւ կիսով չափով  
յաջողեցաւ տիրող թշուառութենէն դուրս գալ, բայց յիմարական  
սնահաւատութենէն եւ արիւնամարտ նախապաշարումներէն երբեք  
չկրցաւ ձերբազատուիլ:

Ամէնէն շատ ճնշուած դասակարգը մէջ բնդ մէջ ապստամ-  
բական ցոյցեր կը սարքէր, բայց սոսկալի հարուածներու տակ կը  
հանգարտէր: Ասով դասակարգերու միջեւ մղուած փոխ վրիժառու-  
թիւնները երբեք չէին նպատակը ընկերային զարգացման, որովհե-  
տեւ ճնշուած դասակարգը անտեսական ու քաղաքական որոշ ծրա-  
դիր չունէր. ակն ընդ ական, ատամն բնդ ատամի քաղաքականու-  
թիւնը դասակարգային ծրագիր չէր կարելի հաշուել. ատոր համար  
հիւսիսներն ու լոյսարները իրենց անիշխանական կոխներով ո-  
չինչ կրցան ընել: Անոնք օրուան աէրը դարձան, բայց անտեսական  
ազատութեան սիսակժ մը չկրցան հաստատել:

Պատահական չէր, ուրեմն, որ Ֆէոտարիական սխտէժը հա-  
կառակ իր բարդ սարքաւորումներուն երկու անգամ աւելի երկար  
տևեց քան Հոսովի կայսերականութիւնը: Ամէն երկրի մէջ կեղ-  
բոնական կառավարութիւն մը կար, որ հակառակ էր տեղական  
ինքնօրէնութեանց եւ առանձնաշնորհալ սովորութեանց ներկայա-  
ցուցիչներուն, բայց այդ կառավարութիւնը անուանական էր, ո-  
րոշ հեղինակութիւն չունէր խոշոր հողատէր ազնուականներու վրայ,  
որոնք զարեւրով իրենց բացարձակ իշխանութիւնը պահեցին, քանի  
որ հիմնարկութիւն մը չկար որ հակամարտ ուժերը միացնէր իրա-  
րու: Թագաւորը կամ կայսրը յաճախ կ'օժանդակէին նորածին բուր-  
ժուազիային, սրպէսզի կարողանային զիմազրել ազնուականներու  
իշխանութեան: Բայց երբ անկախ կամ դաշնակից քաղաքները հա-  
րըստացան եւ կարողացան իրենց քաղաքային ազատութիւնը ձեռք  
բերել, այս անգամ թագաւորն ու ազնուականութիւնը միասնական  
ճակատ կազմեցին բուրժուաներուն դէմ: Իսկ հատարակութեան վե-  
րին խաւերը, բացի Իտալիոյ յաջողակ հանրապետութիւններէն եւ  
գերման վաճառականական քաղաքներէն, ճորտերուն եւ ստորին դա-  
սու քաղաքացիներուն կը նայէին որպէս մարդկային անասուններու:

Փոքրամասնութիւն կազմող այն լորտերը որոնք մարդկայ-  
նօրէն կը վերաբերուէին իրենց կալուածներուն կապուող մարդոց  
հետ, չէին կրնար հաւասարակշիռ ուժ պահել մեծամասնութիւն  
կազմող կարճատես այն ազնուականներուն հետ որոնք գողերէն ու  
աւազակներէն չէին զանազանուէր իրենց անասնձ գործերով: Այս  
բոլոր խառնաշփոթութեանց ընթացքին, սակայն, ամէն անգամ  
երբ ժամանակաւոր խաղաղութեան շրջան մը կը սկսէր, անմիջա-  
պէս արտադրութիւնը կ'աճէր եւ այդ խաղաղութեան հովանիին տակ  
ապրող երկրամասը կը ծաղկէր անտեսական նոր կեանքով: Իրերու  
կացութիւնը գրեթէ նոյնն էր Ֆրանսայի եւ Գերմանիոյ մեծապոյն  
մասին մէջ: Իսկ այն շրջանները, որոնք կոխներու եւ խռովութեանց



դատին դուրս կը մնային, այդ տեղերու հոգադարձ ընակչութիւնը, շնորհիւ խողազուծեան, ճօխ կեանք մը կ'ապրէր, հոգ չէ թէ հետուն զիւրացիական անջատ ազատամբութիւն մը կը պայթէր: Այդպէս էր Մանի բոլորաբեր գտնուող երկրամասը, որուն նկարագրութիւնը կ'ընէ Ֆրուագար, ան ալ ժեքքիներու մեծ ազատամբեան նախօրեակին:

Ահա այդ ժամանակաշրջանին էր որ իր գոյութիւնը զգալի դարձուց ասանէ մը ի վեր հրապարակ իջնող նոր դատակարգը, վաճառականներու դատակարգը:

Բայց այդ դատակարգը սովորական մարդոցմէ չէր բաղկանար, այլ այնպիսի մարդոցմէ որոնք կ'ընելով արող անապահով գրութիւնը, ստիպուած էին ղէնքի ուժով պահպանել իրենց ընթացիկ գործառնութիւնը: Այդ վաճառականները, որպէս փորձառու եւ վարժ գինուորներ գինուած կը ճամբորդէին կարաւաններուն հետ եւ անպատմելի քաջութեամբ կը գիժազդէին ոչ միայն իրենց ճամբուն վրայ դարձնուող սպասող աւազակներուն, այլեւ այն լորտերուն որոնց գանձը զեղխութեան ձեռքով դատարկուած ըլլալուն աւազակի նման կ'ուզէին կողոպտել վաճառականները: Չինուած վաճառականներու այս անմրցելի քաջագործութիւնները (պէտք է ըսել որ մարդ մը իր իրաւունքը, իր սեփականութիւնը պաշտպանելու ասան աւելի քաջարար կը կուտի քան թէ ուրիշի մը իրաւունքը յարձուակել ուզողը) պատճառ եղան որ լեռնային աւազակները կամաց կամաց անհետանան: Իսկ ամբողջներու մէջ ազատանաւած ազնուական աւազակները, տեսնելով որ շին կրնար գլուխ ելլել քաջարի վաճառականներուն հետ, ստիպուեցան հաշտուիլ անոնց հետ հաստատելով մաքսային գրութիւնը: Վաճառականները մաքս կը վճարէին խոշոր լորտերուն երբ կ'անցնէին անոնց սահմաններէն: Այս մաքսային գրութիւնը եւս բարեփոխուեցաւ, երբ պետական կեդրոնական իշխանութիւնը բաւականին ուժեղացաւ բուրժուազիայի օգնութեամբ եւ ստանձնեց մաքսերը հաւաքելու իրաւասութիւնը: Ասով վաճառականները տեղէ տեղ իրենց կարաւաններով անցնելու ասան ամէն մի լորտի մաքս չէին վճարեր, այլ միայն կեդրոնի կառավարութեան: Այս բարեփոխեալ գրութիւնը ոչ միայն կը նպաստէր վաճառականներուն, այլեւ ազնուականներուն ալ, որովհետեւ այս վերջինները, ըլլալով վաճառականական սպրանքներու զխաւոր սպասողները բազմապիսի մաքսերու կրճատման հետեւանքով աւելի աժան կը գնէին իրենց գնած սպրանքները:

Բայց վաճառական դատակարգը ոչ միայն օգնեց կեդրոնական կառավարութեան ուժեղացման, այլեւ օգնեց արդիւնաբերա-

կան միջոցներու զարգացման, բարձրացնելով զիրքը բուրժուազիային որուն կ'իջնար ճորտատիրական գրութիւնը քայքայելու եւ կապիտալիստական դարաշրջանի դուռը բանալու գործը, գործ մը զոր ի կատար ասեց ֆրանսական բուրժուական մեծ յեղափոխութիւնը 1793 թուականին, երբ ժԸ. դարու Ֆրանսայի լուսաւորչները իրենց մարտիոցներով ոմբակոծեր ու աւերակ էին դարձուցեր միջնագարեան սկոլաստիկ փրիւստփայութեան բերդերը եւ կաթոլիկ կղերականութեան անասիկ կարծուած աշտարակները: Այդ յեղափոխութեան նախաշրջանին զիւրացիութեան յարուցած պարբերական ազատամբութիւնները կ'իջ մնայուն ու զբական արդիւնք մը չունեցան իրենց տարերային հանգամանքով, բայց պատճառ եղան որ խոշոր հոգատէր ազնուականութիւնը յարձակողական զիրքէն անցնի պաշտպանողական ղերքի:

Այդ ազատամբութեանց շարքին կարեւորագոյնը կրնանք նրկատել մեքրիմներու ազատամբական շարժումը Փարիզի մէջ, զիւրացիութեան պատերազմը՝ Անգլիոյ մէջ եւ Բօէրն Քրէկ զիւրացիական շարժումը՝ Գերմանիոյ մէջ:

Այժմ հարեւանցիօրէն անդրադառնանք իւրաքանչիւրին:

ՓԵՔՐԻՆ ԵՒ ՎԱՐԻՁԻ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Ֆէոտալական գրութեան երկար տիրապետութեան ընթացքին Ֆրանսայի մէջ յաճախակի տեղի ունեցան ճորտերու եւ ստրուկներու կողմէ ջղաձգական ազատամբութիւններ ընդդէմ ազնուականներուն որոնց հարստահարութիւնը հասած էր ծայր աստիճանի: Բայց այդ ազատամբութիւնները, որոնք հազուադէպօրէն յաջողութեամբ կը պահուէին նոյնիսկ կարճ ժամանակի մը համար, պատմութեան մէջ որոշակի արձանագրուած չեն, այսինքն անոնց ծագման պատճառներն ու հետեւանքները ճշգրիտ կերպով պատկերացուած չեն, որովհետեւ Միջին Դարուն գիրն ու գրականութիւնը հոգեւորականներու ձեռքն էր եւ կրօնաւորները գաշակից ըլլալով ազնուականներուն՝ անոնց նման անուրիք եւ աւազակաբարոյ մարդիկ էին մեծ մասով: Իսկ երբ իսլամիստ կրօնականներ կային, անոնք ալ կամ իրենց յուսահատութենէն ու վախէն քաշուած էին աշխարհէն վանքի մը կամ ճգնաբանի մը մէջ, եւ կամ ողջ ողջ կ'այրուէին խարոյկներու վրայ: Այսուհանդերձ պատմութեան մէջ հարեւանցի կերպով յիշուած է մեքրիմ ազատամբութիւնը, զոր շինք կրնար բաղադատել հրոսովձական հանրապետութեան ասան Իտալիոյ եւ Սիկիլիայի ազրատամբութեանց: Այդ ժամանակաշրջանին, ինչպէս պատմութիւնը կը վկայէ, ընդհանուր փլուզումի լուրջ վտանգ չկար: Եթէ մենք







ահաւորութիւնը եւ հաշուի առնելով որ շատ մարդ պիտի կորսնցնէր կատարած խուժանին առջեւ, նախընտրեց խոնարհամտութեան դժով զիւանագիտական մեքենայութեան զիմել. առոր համար հրապուրիչ խոստումներով խաղաղ հաշտութեան հրաւիրեց սպարաւորներու առաջնորդ լը Գալը, որ երեխայի միտմտութեամբ ընդունեց թաղաւորին առաջարկը: Գիւղացիներու հրամանատարը երբ ներկայացաւ թաղաւորին, այս վերջինը անմիջապէս հրաման ըրաւ կորել անոր զլուխը եւ դոյն սուրի ծայրը անցնելով ցուցնել զիւղացիներուն, եւ նոյն ատեն թաղաւորական բանակին հրամայեց յարձակիլ ապստամբ խուժանին վրայ: Գիւղացիները, որոնք թաղաւորին խոստումներէն պահ մը երազներով էին տարուէր, զրկուած իրենց առաջնորդէն յանկարծակի յարձակման տակ չէին զիտեր ինչ ընել. անոնց համար մնացեր էր փախուտի ճամբան, ուր անոնք կտորուեցան անխնայ: Փախուտի ճամբաները ներկուեցան արիւնով:

Թաղաւորը, որ յաճախ կը մտածէր կեդրոնական կառավարութիւնը ուժեղացնելու համար սիրաշահիլ զիւղացիները եւ սանձել ազնուականութեան զերիշխանութիւնը, տակաւին չունէր այն քաղաքական յստակատեսութիւնը որ հասկնար թէ երկրի արտազրոգական ուժն էր այդ երկրի սիրտն ու հոգին զոր պէտք էր պահպանել եւ թէ ինք ազնուականութեան զործիք ըլլալու չէր: Բայց ժամանակը դեռ հասունցած չէր որ Ֆրանսայի թաղաւորը հետեւէր այդպիսի մի քաղաքականութեան: Նոյնիսկ Չենրի Գ. որ ամէն մէկ զիւղացի «տապկած հաւ» կը նկատէր, թէ եւ շրթունքային համակրութիւն կը տածէր իր հպատակներուն հանդէպ, զործնականին մէջ, սակայն, նոյն անդուժ վերաբերմունքը ունէր ինչ որ ունէր ազնուական դասակարգը: Ասոր համար իր համակրութիւնը բառերու սահմանին մէջ կը մնար, իսկ արշաւը՝ միշտ հակառակ իր հպատակներու բարօրութեան:

Գիւղացիներու այս մասնաւոր ապստամբութիւնը որ Ֆրանսայի պատմութեան մէկ տխուր էջը կը կազմէ ժեֆրի անունով, զրահն օժանդակ ուժերէ զրկուած ըլլալուն հետեւանքով հաղիւ թէ մէկ ամիս տեւեց: Ան աւելի երկիւղ ներշնչեց քան թէ յաջողութեան յոյս, բան մը որ պիտի շեշտէր իր կարեւորութիւնը: Բայց նոյն ատեն աւելի մեծ շարժում մը սկսաւ Փարիզի մէջ, որ որոշ շափով զաշնակից էր, կամ աւելի ճիշդ է ըսել օժանդակողն էր ժեֆրի շարժումին: Ասիկա Փարիզի քաղաքացիներու ապստամբական շարժումն էր հռչակաւոր էթիկէն Մարսէլի առաջնորդութեամբ. ըսել կ'ուզենք այն մարդուն որ այդ քաղաքի վաճառականներուն եւ ա-

ուսարականներուն վերատեսուչն էր: Եթէ այս բանակատեղւոյն օգնութիւնը չըլլար ժեֆրիի ապստամբութիւնը աւելի շուտ ճախողանքի կը մասնուէր: Մարսէլ, ապահոված ըլլալով Բորբրա լը Գոքի զաշնակցութիւնը, նպատակ ունէր Փարիզի քաղաքացիները եւ շրջակայքի քաղաքները ստբի կանգնեցնել Դոֆին կարոլոսի դէմ, որ պատերազմի պահուն Օրլէանի դուքսին հետ նապաստակի վախկոտութեամբ փախեր էր եւ Պուատիէի ճակատամարտին բնաւ մասնակցութիւն չէր ունեցեր: Ամբողջ Ֆրանսայի դրութիւնը յուսահատական էր, եւ այդ ոչ միայն անոր համար որ զինուած մարդիկ կոտորուտով ու աւաղակութեամբ կը զբաղէին, սն ալ ազնուականներու օժանդակութեամբ, այլեւ անոր համար որ Ֆրանսայի պետական գանձարանը հետզհետէ կը դատարկուէր, Ֆրանսական դրամը ենթարկուած էր արժէքազրկման: Թաղաւոր ժանը եւ ուրիշ բարձրաստիճան պաշտօնեաներ զերի էին անգլիացիներու մօտ. անոնց փրկագինը վճարուելու էր անպայման: Եւ յետոյ առեւտրական ճամբաները դարձեր էին անապահով եւ կեդրոնական կառավարութիւնը բոլորովին անզօր էր այդ խոռոչութեանց ստջեւը առնելու: Վերակազմուած ապստամբ խումբերը այրեցին ու քանդեցին այն զղեկները ուր ապստամուած էին սրիկաներն ու յեղուղակները. անոնք չվարանեցան նաեւ սպաննել իրենց անձնատուր եղող ազնուականները:

Էթիկէն Մարսէլ այդ ատեն մեծ սխալ մը գործեց, երբ պարլամէնտի մէջ թաղաւորին ներկայացուցիչը առանց դատ-դատատանի, զլխատել սուտաւ եւ անկարող ծունկի բերելու Դոֆինը, նա վարի թաղաւորին յանձնեց Փարիզի իշխանութիւնը:

Բայց պէտք է ըսել թէ Մարսէլ, հակառակ իր կարգ մը սխալներուն, ճորտերու եւ զիւղացիներու անիշխանական ճամբան չըրունց: Մարսէլ եւ Բորբրա Գոք մշակեր էին որոշ ծրագիր մը, որ այդ շրջանին համար հիմնական ու արժատական փոփոխութիւն յատաշացնելու բնոյթ ունէր: Մարսէլ կ'ուզէր թաղաւորական բացարձակապետութեան իրաւունքները սանձել եւ ճանչցնել Ֆրանսայի կոմունաներու ինքնավարութիւնը, որոնց միանալու էր Ֆլանտրի քաղաքներու զաշնակցութիւնը, իսկ առանց զլուխը ըլլալու էր Փարիզի կոմունան. թաղաւորին տրուելու էր միայն քաղաքական գերիշխանութեան իրաւունք մը: Ազնուականներու միջեւ պատերազմը արգիլուելու էր: Նահանջները պիտի հոգատարէին բանակի զինուորական ծախքերը: Ֆիլիպ լը Բէլի զիջումները հռչակուելու էին անվաւեր: Պետութեան հպատակները պէտք է ապահովուէին քմահաճ վճիռներէն: Առուտուրը ճնշումներէ եւ դաւաղբական մըր-



ցակցութենէ ազատ ըլլալու էր: Պետութեան եկամուտները հասարակաց գործառնութեանց յանձնաժողովին հսկողութեան ենթարկուելուն էին, իսկ այլ յանձնաժողովի անդամները պիտի ընտրուէին նահանգներէն եւ անոնք պատասխանատու էին ժողովուրդին: Արքայատուրքը որ դրամի անկումը կը փութացնէր, պիտի արգիւէր: Երբ պարլամէնտը տակաւին ընտրուած չէր, կառավարութիւնը կը յանձնուէր թագաւորին, որուն օգնական նշանակուելու էր Նահանգներու Աորհուրդը 34 անդամներով. այսինքն 17 անդամներ երբորդ դասակարգէն (բուժուապիւսէն), 11 անդամներ կղերականներէն եւ 6 անդամներ ազնուականներէն:

Այս ու ստոնց նման միջոցառումներ յառաջ տարուեցան միայն մէկ տարի, 1358-1359-ին: Բայց Մարսէլ բնաւ նկատի չէր առած միջակ եւ տեւարական դասակարգի ու զիւղացիութեան դրութիւնը. անոնց ներկայացուցչական իրաւունքը մերժուած էր. իսկ թուղթի վրայ դրուած որոշումներով Ֆրանսայի տնտեսական եւ ընկերային դրութիւնը յառաջդիմութեան ճամբուն մէջ չէր մտնէր: Ժողովուրդը երբ կը մնար իր մեծամասնութեամբ ճնշուողի նոյն դրութեան տակ, Մարսէլի ներմուծելու ուղած բարենորոգումները իր կազմած ճակատը չէին ուժեղացնէր. ինք չունէր թիկունքային այն ուժը որ պիտի պահպանէր իր գիրքը եւ միւս կողմէ հակառակորդ թանակը կապէր անտրտունջ, պատշաճ պարտաւորութեանց սիւնին:

Մարսէլ կուրացաւ իր ժամանակաւոր յաջողութենէն. ան չկրցաւ տեսնել իր շուրջ սարքուած դաւադրութիւնը եւ մի օր ալ սպաննուեցաւ ժան Միլարաի ձեռքով: Իր հետեւորդները նոյնպէս մէկ առ մէկ մահուան դատապարտուեցան:

Մարսէլի ստեղծած շարժումը Ֆրանսական նորածին բուժուապիւսի մանկական առաջին կանչն էր որ խեղդուեցաւ արեան մէջ: Անոր վրէժը դարեւ յետոյ լուծեց Ֆրանսական մեծ յեղափոխութիւնը:

**ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱՆԳՂԻՈՅ ՄԷՋ**

Նորմանտի Դուքս Ուիլիյմը երբ 1066 թուականին Անգլիա արշաւելով Յաղթողն Ուիլիյմը դարձաւ, ասով ոչ միայն վերջ կը դրուէր Ֆրանսայի ժառանգական իրաւունքին, այլեւ այլ պատճառ եղաւ որ Ֆրանսայի մեծ մասը մի քանի սերունդներու համար ենթարկուէր տնտեսական ճգնաժամի: Ֆրանսայիք Անգլիան իրենց մէկ գաղութը կը նկատէին, անկէ յետոյ այլ նկատումը ծաղրանքի առարկայ եղաւ: Արշաւանք արշաւանքի ետեւ, պատերազմ պատե-

րազմի ետեւ յաջորդեցին իրարու. եւ զեռ ասոնք ալ բաւական չէին, անգլիական ծովահաններու շարունակական ասպատակութիւնները քայքայեցին օտար երկիրներու վրայ Ֆրանսայի պահելու ուղած գերիշխանութեան չէնքը: Անգլիական բանակի արշաւանքները տեւական անէժք եղան վիճելի երկիրներու դժբախտ բնակիչներուն համար: Բայց անգլիական նորեւազ եւ օտարազգի միապետներու կողմէ յառաջ տարուած պատերազմներն ու արշաւանքները իրենց արդիւնքներով նուազ նշանակելի էին, քան այն անիշխանութիւնը որ հետեւեցաւ Պուատիէի ճակատամարտէն յետոյ: Նախ Գրէսիի, ապա Էկինզորի եւ յետոյ Սեւ Իշխան Էտուարաի ահազու յետադարձութիւնները, Լիմոսէի եւ այլ տեղերու ջարդարարութիւնները, ինչպէս նաեւ Հէնրի Գ.ի սոսկալի նուաճումները անդորմանելի աւերումներ պատճառեցին Ֆրանսայի: Իրերու այս երկարատեւ շրջանառութեան մէջ երկու երկիրներու համար միակ լաւ բանը որ տեղի ունեցաւ այն էր որ Ֆրանսան նոր շունչով կրցաւ վերականգնիլ, երբ ժան ա՛ւրք, հայրենասիրական ոգիով հրաշալործ այդ զիւղացի ազգիկը, կրցաւ անգլիացիները հեռացնել երկրէն:

Թէեւ Անգլիան միջոցներ կը ճարէր իր յարձակողական պատերազմները շարունակելու համար, եւ տարուէ տարի այլ անշահաբեր ձեռնարկութեանց համար դրամ կը վտանէր, մարդիկ կը դոհէր սրտնք խաղաղ շրջանին աւելի օգտակար կրնային ըլլալ անգլիացի ժողովուրդին, բայց խորթ բան մը կար զոր կարելի չէր անտեսել, եւ այլ այն էր որ Անգլիոյ տիրողները օտարներ էին, նորմանտացիներ: Իսկ այլ նորմանտացի թագաւորները պատերազմներու ատեն քանի որ պէտք ունէին դրամի եւ մարդու, շուտով ինկան կախաւածութեան մէջ, ասոր համար անոնք դատարին անգլիացի ժողովուրդը սիրաշահելու համար անոր տուին այն ազատութիւնները զորս ուրիշ կերպով դժուար էր ստանալ: Անգլիոյ թագաւորական տունը օտար էր եւ հոն կը գործածուէր օտար լեզու մը, իսկ անդին կարեւոր լորտերը հեռո՛հեռո՛ քաղաքացան իրենց քաղաքական գիրքերէն: Մոյն հանդամանքներուն տակ ժողովրդական զանդուածները սկսան գիտակցիլ իրենց ուժին եւ իրենք՝ որպէս անգլիացիներ որ ժառանգել էին իրենց անգլո-սաքսոն նախահայրէնէն կոմունական ազատասիրութիւնը եւ հայրենակցական սէրը, այլեւս տարակոյս չունէին որ իրենք ալ հպատակներ չէին, այլ ունէին տիրական հեղինակութիւն մը: Ասկէ դաս, Ֆրանսայի հետ մղուած պատերազմի դաշտին վրայ, ինչպէս նաեւ Սիւրվաիայի եւ վէլլի սահմաններուն վրայ մղուած կռիւններուն մէջ անոնք սորվէր էին ազգի, նետի եւ ուրիշ զէնքերու գործածութիւնը եւ աւատու-



կան տէրերուն ցոյց տուած էին որ իրենք աւելի հայրենասէրներ էին, եւ այս ինքնաթերթազրական խորհրդածութիւնները բոլորը միասին Անգլիոյ մէջ զարգացուցին եւ երեւան հանեցին ժողովրդական մարմին մը, որ ցամաքի թէ ծովի վրայ, ուսմադաշտին թէ խորհրդարանի սեղանին բոլորաբը հաղիւ թէ կը հանդիպէր իր հասարակարգին:

Բայց այս անկախութիւնը, ինքնապատահութիւնն ու անին ուսուցիկ եռանդը հիմնուած էին հասարակ ժողովուրդի վերին խաւերուն նիւթական բարեկարգութեան վրայ: Անոնց անտեսական եւ ընկերային դիրքն էր որ ժողովրդական զանգուածները կը կապէր իրենց իրաւանց պահանջին խաղաղութեան ատեն եւ համակրութեան՝ պատերազմի ատեն: Անոնք որոշ քաղաքական ազդեցութեան դիրքին, ինչպէս նաեւ անհատական հանդատի հասան Փրանսացիներու հետ մղուած պատերազմի բնթացքին: Հենրի Ա. ի օրերէն մինչեւ թագաւոր ձանի հրապարակած հրովարտակը որ կը հաստատէր ազատ մարդոց տրուած շնորհը, թէ ազատագրուած փոքրամասնութեան եւ թէ սարսկներու մէջ յառաջացուց խոր դժուհութիւն մը որուն պատճառը պարզ էր: Անտարակոյս ճորտերն ալ ազատագրուելու էին: Բայց ի՞նչ ընելու էին յետոյ. անոնք դարձեալ մէկը պիտի փնտռէին որ իրենց գործ տար որպէսզի ապրէին: Եւ ո՞վ պիտի բլլար այդ մէկը: Մանր հողատէ՞րը. բայց մանր հողատէրը եթէ գործաւորի պէտք ունենար ալ ատիկա ժամանակաւոր էր. ան չէր կրնար տեւականօրէն գործաւոր պահել, քանի որ ինք կարող չէր մըցիլ խոշոր հողատիրոջ հետ, որովհետեւ ան հազիւ թէ իր գոյութիւնը կրնար պահել իր տնական աշխատանքով: Այսպէս, ուրեմն, ազատագրութեան ու ընկերային զարգացման այս ձեւի ընթացաւորը շարունակուեցաւ ատեն մը, հակառակ ջրանցքէն անդին տեղի ունեցող աւերումներուն որոնք վերջ դրին Ֆրանսայի մէջ անդլիական իշխանութեան, մինչ նոյն ատեն ներքին ասուտունն ու քաղաքներու արտաքին վաճառականութիւնը սկսեւ էին արագ թափ ստանալ: Աւատահողի վրայ լորտի իրաւունքները տակաւ կը կրճատուէին եւ այն պարտաւորութիւնները զորս ճորտերը կը կատարէին աւատապետին համար, փոխուեւր էին եւ ստեղծեւր էին տարբեր յարաբերութիւններ հողատիրոջ եւ վարձու Ֆրանսիոյ միջեւ: Նոյն ատեն, ազնուականներու եւ ստպետներու բազմազան կարեքները կը հարկադրէին որ անոնք զբաղական հասուցման գծով փոխէին աշխատաւորի պահանջները:

Անկէ յետոյ եկաւ սեւ ժանտախտը:

Պարզ է որ Անգլիոյ մեծ ժանտախտը որ բազմաթիւ կեան-

քեր հնձեց, ամբողջ Միջին Դարու կարգուարքը ճշմարտամային փոխակերպութեան ենթարկելու բնոյթ ունէր: Ճորտերն ու սարսկները ոչ միայն իրենց կրած ասնջանքներէն ինքզինքնին թեթեւցած կը զրային, այլեւ բնական պահանջ մը ապստամբելու իշխանութեանց դէմ, որոնք սկսեւր էին միջոցառումներու ձեռնարկել անձնական ծառայութեան հին գրութիւնը վերահաստատելու համար: Մեծ ժանտախտը երբ հարիւր հազարաւոր մարդիկ փճացուց, ատով աւելի զօրեղացուց սոջ մնացող ազատ աշխատաւորներու դիրքը, որոնք կրնային շատ աւելի պահանջել իրենց աշխատանքին համար, քան ինչ որ սովոր էին ստանալ առաջ: Բայց կենսամթերքի պակասի հետեւանքով զներու եռուպատիկ բարձրացումը ուղիղ համեմատութիւն չէր կրնար պահել աշխատավարձի բարձրացման պահանջին հետ, որով աշխատաւորներու գրութիւնը բարւոքուելէ հետո կը մնար, մասնաւորապէս երբ աշխատավարձը կ'ըլլար զբաղական վճարումով: Եւ ահա սկսան խոտովութիւնները:

1348-ի ժանտախտին յաջորդող երեսուն տարիներու ընթացքին տիրող դասակարգերը մեծ ջանքեր թափեցին ժողովրդական վարին խաւերէն սկսող ազատագրական շարժումը կտակեցնելու եւ գրութիւնը վերագարձնելու իր հին վիճակին: Եւ արդէն կարելի չէր ընտրել աւելի վաթար մի վայրկեան յետադիմական շարժումի եւ անարգար քաղաքականութեան մը յաջողութեան համար: Նոյնպէս, ոչ մէկ ատեն զարթնող ժողովուրդի մը ապստամբութեան համար աւելի նպաստաւոր կրնային բլլալ պայմանները, որքան այդ նոյն շրջանին: Յայտնի էր որ անուամբ քայլերը ամբողջ երկիրը կ'առաջնորդէին ոչ միայն թագաւորին ու ազնուականութեան դէմ, այլեւ պարլամենտին դէմ, որովհետեւ հաստատուած էին ճնշող օրէնքներ, մասնաւորապէս գլխահարկի օրէնքը որ իր էութեամբ կը ծանրանար աղքատներու ուսերուն վրայ: Խնդ մարդը որ իր ընտանիքին ուտելիք չէր կրնար ճարել, գլխահարկ վճարելու էր թէ իրեն եւ թէ իր արու զաւակներուն համար: Ամբողջ երկիրը պատրաստուած էր ապստամբական արամադրութեամբ, որուն հետեւեցաւ պայթումը: Սիստէմաթիկ ազխտացիա, որքան որ հնարաւոր էր, այդ օրերուն արդէն տարիներով յառաջ տարուած էր տիրող դասակարգին դէմ: Հողի սեփականատիրութիւնը եւ ամէն տեսակի հարստութեան թելադրած ամբարտաւանութիւնը արմատացուցեւր էին խորշանքի զգացումներ ժողովրդական խաւերուն մէջ այն աստիճան որ հասարակ մարդոց բոլորին եռանդը կեդրոնացած էր զբաղան ու վճռական քայլ մը առնելու նպատակին շուրջ: 1381-ի ապստամբութիւնը, որ ծանօթ է զիւղացիական պատերազմ



անունով, բոլորովին տարբեր մարդոց կազմէ կը ղեկավարուէր, քան ինչ որ տեսանք Ֆրանսական ժեֆրիի ապստամբութեան ատեն: Եսա մը զիւղացիներ եւ ոստանիկներ էին որ կը կուռէին Ֆրանսական ապստամբութեան մէջ. անոնք թէեւ լաւ զինուած չէին, բայց անոնց մէջ կային լաւ զէնքեր ունեցողներ, որոնք մնացեալներուն վստահութիւն կը ներշնչէին: Այլ էր Անգլիոյ զիւղացիական պատերազմը:

Այդ պատերազմին շուրջ տրուած տեղեկութիւնները թէեւ անկատար են, բայց անոր պատմական նշանակութեան մասին զբեթէ բոլոր պատմաբանները, հոգ չէ թէ որ դպրոցի կը պատկանին, համաձայն են որ այդ պատերազմը զուտ զիւղացիական պատերազմ չէր, այլ Լոնտոնի հասարակ քաղաքացիներն ու աշխերաններն էին որ ամէնէն աւելի նեցուկ եղան եւ օժանդակեցին Քենթի ապստամբներուն Վաթ Թայլըրի զլիսաւորութեան ներքեւ:

Վաթ Թայլըր հասարակ մարդ մը չէր, այլ լաջն ժողովրդապահունութիւն, զինուորական հմտութիւն ու փորձառութիւն ունեցող հռչակաւոր անհատ մը, որ ղեկէր իր ընելիքը: Ազիտացիայի դաշտի գործը ամբողջացեր էր եւ հունձքը պատրաստ. ինք պիտի ըլլար հնձողը: Այդ ազիտացիան վարողն էր Քենթի մէկ կրօնաւորը, ձան Բոյլը, որ հակառակ իր ստացած բանադրանքին ու բանտարկութեան ամբողջ քսան տարի (1360-1380) անդուլ անդադար քարոզեր ու պատրաստեր էր ժողովուրդը: Քծնող Ֆրուադարը զայն անուաներ է «կատղած վանական»: Ահա այդ կատղած վանականին խօսքերը. «Անգլիոյ մէջ զրութիւնը երբեք չբարեխառուի, որքան ատեն որ աշխատաւորին արատաւորին աշխատաւորին ձեռքէն կը յտիչուակեն, որքան ատեն որ հասարակաց սեփականատիրութեան օրէնք չէ հաստատուած, որքան ատեն որ լորտերը աւելի բարձր ու մեծ մարդիկ կը համարուին քան թէ մենք: Ի՞նչ տրամաբանութեամբ անոնք արժանացեր են այդ առանձնաշնորհեալ զիրքին: Ինչո՞ւ անոնք մեզ կը պահեն ստրկական լուծի տակ: Եթէ մենք ծագում առած ենք նոյն հօրմէն եւ նոյն մօրմէն (Ալամէն ու Եւայէն) անոնք ի՞նչպէս կրնան ըսել կամ ի՞նչպէս կրնան ապացուցանել որ իրենք աւելի լաւ մարդիկ են քան մենք, որ մենք պիտի աշխատինք ու զրկուինք մեր աշխատանքի պտուղներէն իսկ իրենք պիտի առնեն ամէն ինչ եւ պիտի վայելեն իրենց հաճոյքին համար: Անոնք կը հագնին թաւշեայ հագուստներ, կը կրեն տաքուկ մուշտակներ, իսկ մեզի կուտան ցնցոտիներ: Գինին եւ համեմները անոնց կը պատկանին, լուադոյն հացը եւ ախորժածամ կերակուրները անոնց բաժին ինկած են, իսկ մեզի տրուած է գարիի հաց ու

ջուր: Անոնք կը բնակին փառաւոր պալատներու մէջ որոնք շինուած են աշխատաւորներու քրտինքով, իսկ մենք կը բնակինք խարխուլ տնակներու մէջ, որոնք շէն զիմանար անձրեւի ու հովի յարձակումներուն: Երբ Ալամն ու Եւան խարուեցան եւ իրենց յանցանքին համար վնասուեցան զբախտէն, այլեւս հոն չմնացին մշտական վայելքի շնորհին արժանացած զոյգեր որոնք պիտի ըլլային մեր լորտերու նախահայրերը»:

Այսպէս, ուրեմն, երբ ժողովուրդը պատրաստուած էր ապստամբութեան եւ կազմուած էր հուժկու բանակը, Վաթ Թայլըրի համար այլեւս զժուարութիւն չկար: Առանց սեւէ գիմազրութեան հանդիպելու, նա մտաւ Լոնտոն եւ տիրացաւ մայրաքաղաքին: Ոչ մէկ կողոպուտի փորձ, ոչ մէկ հրդեհում: Զոհուեցան միայն անոնք որոնք այդ կրակոտ վայրկեանին ապստամբ զիւղացիութեան եւ թագաւորին միջեւ եղած կնճռոտ հարցը խաղաղութեամբ լուծելու քաղաքականութեան հակառակ էին: Թայլըր ինք, Լոնտոնը իր բանակի իշխանութեան տակ, քաջալերուած իր յաջողութենէն չուներ հարկ եղած քաղաքական հեռատեսութիւնը եւ տակաւին յօժար էր բանակցելու թագաւորին հետ, որովհետեւ կը վախնար թէ բանակ մը առանց զինուորական կոմիտարիատի զժուար էր պահել կատարեալ կարգապահութեան մէջ: Ատոր համար փոխանակ թագաւորը իր մօտ հրաւիրելու ինք անձամբ առանց թիկնապահի ներկայացաւ Ռիչըրտ Բ. թագաւորին: Թայլըր եթէ զիտնար որ տիրող դասակարգի այդ բարձրագոյն ներկայացուցիչին կարելի չէր վրստահիլ, նա այդպիսի անխոհեմ քայլ պիտի չառնէր: Թագաւորը կեղծ ժպիտով նախ յայտնեց որ ինք ժողովուրդի ցաւերով միշտ մտահոգուած է եւ այժմ պիտի շնորհէ շատ աւելի քան ինչ որ իրմէ կը սպասուի. ապա հրամայեց որ Վաթ Թայլըրին տրուի արժանաւոր պատիւ: Եւ ի՞նչ էր այդ պատիւը. զաւաճանօրէն սրախողխողում: Վաթ Թայլըրի գիտկը նետուեցաւ փողոց: Այս անորակելի զաւաճանութեան հետեւեցաւ ապստամբներու անկողմակերպ բանակի շարժարարութիւնը: Մարդիկ, տեսնելով իրենց առաջնորդին արիւնաշաղախ ու անշնչացած մարմինը, զինաթափ եղան նոյն պահուն յարձակում գործող զինուորներուն առջեւ: Եւ սկսաւ անխնայ կոտորածը: Մարդիկ որոնք պահ մը տէքն էին Լոնտոնին, այժմ զուարակներ եղան եւ իրենց արիւնով ներկուեցան Լոնտոնի փողոցները:

Գիւղական շրջանակներուն մէջ զիւղացիները շարունակե-



ցին դիմադրութիւնը մասնակի յաջողութիւններով, բայց արդիւնքը եղաւ նոյնը: Առաջնորդները սպաննուեցան եւ զիւղացիները մաս առ մաս կոտորուեցան:

Վաթ թայլըրի անձին վրայ գործադրուած վատուի գաւաճանութիւնը պատմութեան մէկ միակը չէ. մենք արդէն տեսնք թէ Ֆրանսայի Կիլլոմ էր Պայն ալ նոյն գաւաճանութեան դոճ դնաց:

Տարօրինակ է արդարեւ տեսնել որ շարունակ ճնշուող դասակարգի ներկայացուցիչներն են որ խարուած ու գոհուած են տիրող դասակարգի խոստումներուն առջեւ: Բայց մենք չենք կրնար լիչել մէկ հաս դէպք ուր տիրող դասակարգի ներկայացուցիչները խարուած ու գոհուած ըլլան տիրուող դասակարգի ներկայացուցիչին ձեռքով: Բանուորները կամ զիւղացիները երբ ապստամբեր են, իրենց թշնամին թակարդելու համար խարկատիւր խոստումներու դիմած չեն. իսկ երբ թշնամին ձեռք անցուցեր են, անոր հետ վերաբերուած են ասպետականօրէն կամ ներսած են անոր զգճման անկեղծութեանը հաւատարմով եւ կամ եթէ մահապատիժի արժանի նկատեր են, զլիստեր կամ սպաններ են դայն: Այդպէս եղած է միշտ: Մեքենայութիւն, երկերեսանիւթիւն, խարդախութիւն, ցածուի գաւաճանութիւն տիրող դասակարգի կոռուցած շէնքին անկիւնաքարերն են: Այս օրերուն նոյն ստորնաքարչ կեղծիքի քաղաքականութեան շէն հետեւի իմպերիալիստական պետութիւնները, որոնք Միացեալ Ազգաց կազմակերպութեան անդամ ըլլալով հանդերձ մէկ կողմէ կը ներկայանան որպէս խաղաղութեան ամենաեռանդուն ջատագուցները, միւս կողմէ այդ կազմակերպութեան սկզբունքները կ'ոտնակոխեն, մահ եւ աւեր տարածելով խեղճ ու սպառասէր ժողովուրդներու մէջ: 1965-ի Յունիսին Ման Ֆրանչիսկոյի մէջ ՄԱԿ-ի ծննդեան քառամեակի հանդիսութեան առնէ աշխարհի ամենահարուստ եւ ամենաուժեղ հանրապետութեան մը նախագահը որպէս ազնիւ եւ խաղաղասէր ժողովուրդի մը ներկայացուցիչը իր դաժնապատի անպատկառ կերպարանքով չլիարանեցաւ խաղաղասիրական բռնեղով վարադուրելու Վիէթնամը սարսափելի սպանդանոցի մը վերածելու իր յաւեռ դատապարտելի քուղաքականութիւնը: Բայց ստայժմ թողունք այս խնդրին մասին խօսիլը, քանի որ մեր գործի Գ. հատորին մէջ հանդամանօրէն պիտի անդրադառնանք անոր, եւ շարունակենք մեր հսկիրճ պատմութիւնը:

Ֆրանսայի ժեքիթի ապստամբութեան հետեւանքով ինչ ճակատագիր որ սենեցան ապստամբները իրենց պարտութեամբ, նոյն ճակատագիրը ունեցան անգլիացի զիւղացիներն ու ըմբոստութեան մասնակցող հասարակ ժողովուրդի գաւակները: Անգլիացի թագա-

ւորը իր անգլութեամբ գերադանցեց Փրանսայի անուակաւներու ի գործ դրած անգլութիւնները: Բայց Անգլիոյ զիւղացիական շարժումը այնքան զիւրիւն, մէկ ամիսէն չվերջացաւ, այլ տեւեց վեց ամիս: Բիչըրա Բ. ի յաջորդող երիտասարդ թագաւորը, տեսնելով որ ճորտերու եւ զիւղացիներու պահանջները արդարացի են, հետեւելով իր խորհրդատուներու թելադրութեանց, խոհեմութիւն սեպեց հաշտուիլ իրականութեան հետ. վերջուց զլիսահարկի օրէնքը եւ ազատութիւն շնորհեց բոլոր ճնշուածներուն: Անգլիացիք այս թուականէն մինչեւ Հենրի Ը. ի գահակալութեան սկզբնական շրջանը ազատ Փարմըրներու եւ ազատ գործաւորներու հասարակութիւն մը կը ներկայացնէին, պահելով բարեկամական յարաբերութիւններ արհեստաւորներուն, քաղաքացիներուն եւ քաղաքներու ստանիկներու հետ: Այդ շրջանին անգլիացի ժողովուրդի մեծամասնութիւնը լաւ կը կերակրուէր, լաւ կը հագուէր, տուներն ալ բարեզարդուած էին թէ քաղաքներու եւ թէ զիւղական շրջաններու մէջ:

Անգլիան այսպիսով պատմութեան առաւ օրինակ մը որ կրնայ ապացուցանել թէ անտեսական դէպքերու ընթացքը եւ անգիտակից, տարերային, բնկերային յառաջդիմութիւնը կրնան ապահովել այն առատութիւնը ինչ որ կարելի չէր շահիլ բուն ուժով, զէնքով: Սակայն եւ այնպէս, ոչ մէկ երկիր նոյնպէս չէ կրցած յայանարբել այն ճշմարտութիւնը որ անտեսական փոփոխութիւնները նոյնքան կրնան հողապորճ բնակչութեան զանգուածները ճզմել հակառակ կառավարութեան ջանքերուն եւ ժողովուրդի կողմէ յարուցուած արգելքներուն: Այդպէս եղաւ Անգլիոյ մէջ երբ բուրդը ճարտարարուեստական-արդիւնաբերական կապիտալի ամենակարեւոր շահարբ հում նիւթը դարձաւ: Այն առնէ, ինչպէս եւ աւերեցին զիւղացիներու արտերը: Մշակելի արտերը վերածուեցան ոչխարներու արօտատեղիներու: Բազմացան անգործներն ու թափառաշրջիկները: Մարդիկ կը թափառէին հոս հոն եւ չէին գիտեր թէ ո՞ւր պիտի հանդէպէին: Որտա օրէնքներ հռչակուեցան գողերն ու մուրաքիկները պատժելու համար: Թէ ի՞նչ պիտի ըլլար Անգլիոյ եւ բնդհանրապէս Եւրոպայի անտեսական եւ քաղաքական դրութիւնը եթէ Գոլոմպոս Հնդկաստանի առեւտրական ճամբան փնտռելու պահուն չբանար Ամերիկայի գոները: Այս հարցման ոչ ոք կրնար պատասխանել:

Բայց մենք այստեղ վերջացնելու ենք Անգլիոյ յատկացուած այս բաժինը, երբ մեր Գ. հատորին մէջ պիտի խօսինք ժԶ., ժԷ., ժԸ. եւ յաջորդող դարերու Անգլիոյ դասակարգային կիւններու պատմութեան շուրջ:



ԳԵՐՄԱՆ ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Եւրոպայի մէջ զիւղացիական պատերազմներու վերջինը եւ ամէնէն ահաւորը սկսաւ Գերմանիոյ մէջ 1524-ի աշնան եւ բացէն ի բաց ապստամբութեան փոխուեցաւ 1525-ի գարնան: Այս լուրջ ըմբոստութեան ընդհանուր պատճառները զրեթէ նոյնն էին, ինչ որ էին ժեֆրիի ապստամբութիւնը Ֆրանսայի մէջ 1358-ին եւ անգլիական զիւղացիական յեղափոխութիւնը 1381-ին: Անոնց միջեւ եղած տարբերութիւնը նախընթաց իրադարձութեանց մէջ է: Ֆրանսայի զիւղացիները ապստամբեցան, որովհետեւ Պուատիէի ճակատամարտէն յետոյ՝ յաղթական Անգլիոյ զինուորները սկսան աւարտութեան, կողոպուտի եւ սպանութիւններու, ատկէ զատ՝ պարտութեան հետեւանքով ծանր հարկեր դրուեցան ժողովուրդի վրայ: Անգլիոյ զիւղացիները ապստամբեցան, որովհետեւ լրտեսութեամբ հարստահարութեանց վրայ աւելցաւ գլխահարկը, որ աւելի վատթարացուց զիւղացիութեան դրութիւնը: Այժմ, անդրադառնալով Գերմանիոյ, մենք հոն կը տեսնենք իրերու տարբեր դասաւորում մը: Նախ բանք որ Գերմանիան չէր նմաներ Ֆրանսայի կամ Անգլիոյ. նա չունէր Փարիզ մը կամ Լոնտոն մը, ուր կեդրոնացած պահէր երկրի տնտեսական ու քաղաքական ուժը: Երկիրը բաժնուած էր զանազան փոքր իշխանապետութեանց, որոնք ունէին իրենց յատուկ դատարաններն ու օրէնքները: Կար կայսր մը, բայց անիկա չունէր ուժերը կեդրոնացնող գերիշխանութիւնը: Ընդհանուր միատեսակութիւնը Ֆէոտալական սիստէմին մէջ էր: Բայց կարեւոր է նշել որ ոչ մէկ տեղ աւատապետ ազնուականներու շարունակական ճնշումը զիւղացիներու վրայ այնքան սուր կերպով զգալի էր որքան կեդրոնական Եւրոպայի, Գերմանիոյ մէջ: Գիւղացիներու գանդամները եւ ազատագրութեան համար յաճախակի աշնոնց պայքարումները ապացոյց էին որ Ֆէոտալիզմը հետզհետէ կը կորսնցնէր իր «լաւ կողմերը» եւ իր մերկութեամբ կը ցուցնէր անկորսնցնէր իր «լաւ կողմերը» եւ իր մերկութեամբ կը ցուցնէր անձոռնի կոպտութիւն մը, որուն ենթարկուած էր ժողովուրդը: Յանկարծակի խուզարկութիւններ, կողոպուտ, սպանութիւն եւ ազատականութիւն ամէն տեսակի. սսոնք էին աւելի բարձր դասու եւ բարձրէն մի քիչ ստորին դասու հողատէրերու գործերը որպէս առօրեայ կեանքի երեւոյթներ: Սոյն սիստէմաթիկ աւազակութեանց գէժ զիւղացիներու զիմումները կայսեր կամ դատարաններուն կը մնային սպարդիւն: Դատարաններուն մէջ տիրական ձայնը ազնուականներու տարուած էր. դատարանը դարձեր էր մի տեսակ ձեւակոմ հաստատութիւն, ուր օրէնքի փոխարէն ապօրինութիւնը՝ քմահաճոյքն էր իշխողը: Տիրող դասակարգի մարդիկը, արժանանալով թաղաւոր

րական շնորհին, ազատ էին իրենց ապօրինի ձեռնարկութեանց մէջ եւ կը մնային անպատիժ:

Սուրբ հոգատէր արխատկրատները իրենց ծովահնութեան ու աւազակութեան ճամբուն մէջ շափ ու սահման չէին ճանչնար: Հռենտի եւ ուրիշ գետերու վերեւէն ու վարէն ցամաքային առետուրի ճամբաներուն վրայ կառուցուած զգեակները աւազակներու որջերու վերածուած էին: Անոնք կը կողոպտէին ճամբորդող կաբաւանները եւ ատոր համար վաճառականները ստիպուած զինուած կը ճամբորդէին կարաւաններուն հետ: Շարունակուող այս կռիւներու ընթացքին հսկայ կորուստներու հետեւանքով ապրանք զինները բնականօրէն կը բարձրանային: Եւ որովհետեւ զնորդները առհասարակ ազնուականներն էին, հետեւաբար այդ աւազակութիւններէն կը առժէին նոյն ազնուականները: Ասկէ կարելի է ենթադրել թէ խոշոր հոգատէր արխատկրատներու հանդէպ խուլ ատելութիւն մը կար ոչ միայն զիւղացիութեան, այլեւ երկրորդ դասու ազնուականներուն մէջ. բայց այդ ազնուականներու դասակարգային շահը չէր նոյնանոր դժգոհ զիւղացիութեան ազատագրական ձգտումին հետ, որովհետեւ երբ իրենք՝ իրենցմէ մեծերէն կը ճնշուէին, իրենց ատելութիւնը կը յազեցնէին հարստահարելով իրենցմէ վարի դասակարգերը:

Մանրամասնութեանց պէտք չկայ ցուցնելու թէ ինչպէս կեդրոնական Եւրոպայի պարոնները ուրիշ երկիրներու ընկերապետականներու հետ կը մրցէին անմարդկային վարուեցողութեամբ իրենց ճորտերուն ու զիւղացիներուն հետ: Գուցէ անոնք Ֆրանսացի արխատկրատներու պատմական խոտաղոյն միջոցները չէին դորձադրեր, ինչպէս օրինակ իսեղճերուն ոտքերը կտրել, աչքերը հանել, դեռսափ աղջիկները պղծել, բայց գերման ազնուականներու անգթութիւններն ալ նուազ սարսափելի չէին. զնոսաններու մէջ բանտարկութիւն, մերկացնելով խարաղանում եւ չարչարանքով մահապատիժ:

Գալով քաղաքային բնակչութեան, անոնք եւս այնքան ազատութիւն չէին վայելեր, ենթարկուած էին ազնուականներու քմահաճոյքին: Կային արհեստակցական միութիւններ, որոնք գեմոկրատական ձեւով կը կառավարուէին, կային նաեւ անկախ ու ազատ արհեստաւորներ, որոնք հետզհետէ կորսնցուցին իրենց անկախութիւնն ու ազատութիւնը եւ վարձու գործաւորներու կարգ անցան:

Այսպիսով կը տեսնենք թէ զժողովութեան եւ զիմացութեան պատրաստուելու արամազրութեան հող կար փոքր քաղաքներու մէջ. արդէն բոլոր գերմանական քաղաքները այդ առէն իրապէս



փոքր էին զիւղերու նման: Տնտեսական եւ բնակրային հակամարտութիւնները թէեւ բացէն ի բաց դեռ չէին բաղիւր իրարու, բայց անոնք լուսթեան մէջ կը մեծնային: Տպագրութեան գիւտը (1444), գիտութիւնն ու գրականութիւնը առած էր կղերական դաստիարակի ձեռքէն եւ տուած էր ժողովուրդին. միւս կողմէ կրօնական եւ աշխարհական խնդիրներու մտտին հասարակական միջնորդութիւնները աւելի կ'ընդհանրացնէին հասարակութեան դժգոհութիւնը:

Բայց միայն ասոնք չէին որ սրատրաստեցին 1524-25-ի ապրտամբութիւնը. կային նաեւ ուրիշ սրտաճառներ: Ամբողջ Ֆէստաբական սխալմբ իր հիմքէն ցնցուած էր, որովհետեւ երեւան եկած էր նոր ձեւի արդիւնարեբութիւն. յառաջացեր էր աննշմարելի բայց յարաճուն զարգացում երկրագործութեան մէջ. սպարանբային փոխանակութեան ձեւին յաջորդեր էր դրամի ընթացիկ գործածութիւնը. առեւտուրի շրջանակը հետզհետէ ընդարձակուեր էր. նուազեր էին թանկարժէք մետաղները, եւ արտադրողութիւնն ու առուտուրը պահանջ էին ստեղծեր համաշխարհային սպառողական շուկաներու: Այսպէս, ուրեմն, կրնանք ըսել թէ 1525 թուականին Կեղրոնական Եւրոպայի մէջ այս բոլոր արդիականացումները կարեւոր դեր խաղացին ընկերային շարժումներուն մէջ: Տարակոյս չկայ որ Հանսէնեան Լիկան եւ ընդհանրապէս Գերմանիան զգացեր էին առեւտուրի արդեցութիւնը, որովհետեւ Գոլմպոս 1492-ին գտած էր Ամերիկան, 1497-ին Վասքո սը Կամա Բարիլոսոյ Գլուխի վրայով հասեր էր Հնդկաստան, իսկ անդին արեւելքի վաճառականութիւնը Միջերկրականի նաւահանդիսաներէն ուղղուած էր դէպի Ատլանտեան Ովկիանոս, եւ առեւտուրը ընդարձակեր էր իր շրջագիծը, իր մէջ առնելով Ֆլինտերսն ու Անգլիան, անոնց հետ նաեւ Ֆրանսան ու Սպանիան: Ասով ըսել չենք ուզեր թէ առուտուրի այս ընդարձակումը ուղղակի կամ անուղղակի կերպով ազդեց զիւղացիներուն, որոնք սպասամբութեան սղտայարը կը կազմէին, որովհետեւ Գերմանիան էթիէն Մարսէլ մը հրապարակ չհանեց, ոչ ալ անէր Փարիզ մը որ կողմէր քաղաքական արդեցութեան կեղրոնական ուժը: Նոյնպէս, կարելի չէ վստահօրէն պնդել թէ կերման Ֆէստաբայիցը, որպէս միազանդուած ամբողջութիւն, մօտեցեր էր իր քայքայումին, քանի որ իր մտաւորական աշխուժութիւնը կրնար մեղ աշխույժի ենթադրութեան մը առաջնորդել: Տեղի կ'ունենային փոփոխութիւններ, որոնք սպասահանօրէն կը ցնցէին ամբողջ շէնքը: Բայց անոնք ոեւէ անդէ աւելի դանդաղ կը գործէին եւ նոյնը շարունակեցին սերունդէ սերունդ: Ճարտատիրութիւնը չվերջացաւ Գերմանիոյ մէջ մինչեւ 1811 թուականը, եւ

Գերմանիան, նոյնիսկ 1920-ին երբ հանրապետութիւն եղաւ, Էւրոպայի ամէնէն Ֆէստաբական արդն էր: Գերմանացի պնդուականները, որոնք կ'ապրէին ու կը գործէին իրենց ընդարձակած աւազարեբութեանց մէջ, տակաւին կը պահէին իրենց Ֆէստաբական կեցուածքը, իրենց արամադրութեան սակ ունենալով գիտական արբիւրները: Գերմանիոյ մէջ ոչ Ֆրանսականին, ոչ ալ անգլիականին նման յեղափոխութիւն ծագում առաւ. իսկ ստոր պատճառը կարելի է որոնել տասնեակեցերորդ դարու իրադրութեանց մէջ:

Գերմանիոյ մէջ ամէնէն նշանակելի շարժումը որ անգլի ունեցաւ բողոքականութեան ստեղծած շարժումն էր, որ ուղղուած էր կաթոլիկութեան դէմ: Հոովմէական պապական գերիշխանութիւնը այդ տեսնները հասած էր ապականութեան ու ոճրածին գահակալութեան ծայրագոյն աստիճանին: Ինչպէս լրլարդիոմը եւ «փշոտ վանականներու» շարժումը Անգլիոյ մէջ, նոյնպէս բողոքականութիւնը Գերմանիոյ մէջ ժողովուրդին նոր սղի մը ներշնչեցին: Ստոյգ է որ ապիստցիայի նուիրուած գիրքերը եւ ամէնէն եռանդուն պրոպականտիստները հետեւեցան աւետարանական եւ կրօնական ուղեգծին: Նշանակալից իրողութիւնը, սակայն, այն եղաւ որ մարդիկ գերեզմանէն այն կողմի երազը փոխադրեցին գերեզմանէն այս կողմի երազին. կեանքը լաւ ապրելու երազին մէջ: Հոգեբանական այդ յեղաշրջումը անսպասելի էր, բայց ինչ ըսել որ անկիւս իրականութիւն զարձաւ:

Լուտեր, օրուան մարդը, անցած էր շարժման գլուխը. իր կողքին կեցած էր երիտասարդ բուրժուապիան, որու դասակարգային շահերը սպահովելու համար ինք մէկ կողմէ կը կոուէր Հոովմի Պապին դէմ, միւս կողմէ կը պաշտպանէր սպասամբութեան նշաններ ցոյց տուող զիւղացիութեան պահանջները: 1520-ին Լուտեր այրեց Պապին կոնդակը: Բողոքականութիւնը յաղթանակեց: Բայց ատիկա զիւղուածական բան մը չէր, ոչ ալ արդիւնքը Լուտերի հանճարեղ զիւլանաղիտութեան: Գերմանիոյ մէջ արդիւնարեբութեան դարգացումը արգելակուած էր կաթոլիկ եկեղեցւոյ օրէնքներով: Տարւոյն 150 օրերը յատկացուած էին այս կամ այն սուրբին եւ կը կոչուէին հանգստեան օրեր, սուրբ օրեր: Գերման արդիւնարեբութիւնը այս անգործութեան տանող օրէնքներուն առջեւ կը կազար: Լուտերի Հնարիմացութիւնը այն եղաւ որ ստեղծուած շարժումին կապեց ոչ միայն գերմանացի արդիւնարեբորդները, այլեւ ազատութեան ձգտող զիւղացիութիւնը:

Առաջին կարեւոր սպասամբութիւնը պայթեցաւ Սեւ Ան-



տառին մէջ 1524-ի Օգոստոսին: Գիւղացիները, ինչպէս ուրիշ տեղեր, գտած էին զինուորական փորձառութեամբ օժտուած առաջնորդներ: Պարզ էր որ ամբողջ երկիրը պատրաստ էր ապստամբութեան, որովհետեւ անհանդարտութիւնը այնքան տարածուած էր որ հոկտեմբերի վերջերը գիւղացիները կրցան ցոյց տալ իրենց սպանական ուժը, որուն առջեւ հողատէր սոցնուականները լրջօրէն հարկադրուած էին բանակցել անոնց հետ գիջումներու խոստումհանրով: Գիւղացիներու պահանջները, սեղմ ու չափաւոր, բնդհանուր կերպով ուղղուած էին անարդարութեան եւ ճնշման դէմ: Իսկ հողատէր լորտերը տոբրեսս գիջումներու խոստումներ կ'ընէին ժամանակ չահելու համար, որպէսզի իրենք կազմակերպուին եւ պատեհութիւնը ներկայացածին պէս ոտքի տակ առնեն ամէն կարգի պայմանագրութիւններն ու արուած խոստումները: Ազնուականները ոչ մէկ ատեն մազաչափ զոհողութիւն ընելու արամազիր էին ու չէին կրնար ըլլալ անոնք վստահ էին որ գիւղացիները միասնական ճակատի վրայ պիտի չմնային եւ անոնց ուժերու բաժանումը պիտի նպաստէր իրենց:

1525-ի մարտին գիւղացիները ձեւակերպեցին իրենց պահանջները տասներկու կէտերու մէջ ամփոփուած, եւ անոնք ընդունուեցան ամբողջ Գերմանիոյ մէջ: Այդ պահանջներն էին.

1. Աւետարանը քարոզուելու էր համաձայն ճշմարիտ հաւատքին:
  2. Ձեջում տասանորդի աւուրքի դրութեան:
  3. Պարտաժուրհակ պիտի չըլլայ, ոչ ալ փոխ առնուած դրամի տոկոսի պահանջ:
  4. Գիւղացիք ջուրի համար վճարում պիտի չընեն:
  5. Անասուններու փայտերը ձրի պիտի ըլլան:
  6. Գիւղացիք խաղերուն մասնակցելու են ձրի կերպով:
  7. Ոչ մէկ գիւղացի անարդ արտրած պիտի նկատուի:
  8. Ոչ մէկ ատեն ստրկական հնազանդութիւն սեւէ իշխանի:
  9. Իրաւունքի եւ արդարութեան պահանջները պիտի իրազորուին այն դատարաններուն մէջ ուր ներկայ է գիւղական խորհուրդի ներկայացուցիչը:
  10. Այն պաշտօնեան որ օրինական սահմանէն դուրս կ'ընէ եւ կը փորձէ գիւղացիներու շահերը ոտնակոխել, մենք իրաւունք պիտի ունենանք զայն պաշտօնագրիկելու եւ անոր տեղը նշանակելու արժանաւոր մէկը:
  11. Մահապատիժ պիտի չըլլայ այլեւս:
  12. Հասարակաց հողերը որոնք բռնազրուուած են լորտերու կողմէ խոզոյն վերադարձուելու են հասարակութեան:
- Սոյն պահանջներուն մէջ յեղափոխական կամ խոչալիստա-

կան ծրագիր մը չկար որ դրութիւնը հիմնապէս փոխելու բնոյթ ունենար: Հիւլէնտի, Վէյկանտի, Կայսմայրրի եւ ամէնէն վերջ Մունզերի նման մարդիկ կրօնական եւ քաղաքական գետնի վրայ աւելի արմատական ծրագիրներ մշակել էին, բայց զուտ հողային բարենորոգումներու շուրջ զարձոյ այս պահանջները դարձեալ ազնուականներու հաշուին չէին գար: Գիւղացիական բանակի բնդհանուր հրամանատարն էր ասպետ մը, Ֆլորիան Կէյլը, որ կիւթենպուրկ քաղաքին մէջ կատարեալ յաջողութեամբ իր գործերը վարէր էր եւ ստով շահեր էր բոլոր գիւղացիներուն վստահութիւնը:

Բայց պէտք է ըսել թէ ամէն տեղ ինչպէս ամբարտաւան ազնուականները, նոյնպէս եւ ապստամբ գիւղացիները, օրինապահութեան ու կարգապահութեան սահմանին մէջ չմնացին: Մաս մը ազնուականներ իրենց սորված հին ձեւով վարուեցան գիւղացիներուն հետ: Ասով գիւղացիները վայրացած անոնց զղեակները աւերակ դարձուցին եւ անոնց ընտանիքի անդամները անխնայ կոտորեցին: Գույէ կատարուածը գիւղացիները զրգուելու համար կանխաորոշուած խաղ մըն էր, որովհետեւ անօրջապէս առանց պատասխանատուները ճշդելու մասին մտածելու, ազնուականները որոնք արդէն Իտալիայէն եւ Եւրոպայէն վարձու զինուորներ բերած էին, գերման զինուորներու հետ սկսան մասսայական ջարդարարութեան: Լուտեր ինքը որ գիւղացիական շարժման ջերմ ախոյստն էր, մէկ անգամէն (կարծէք պատեհութեան կը սպասէր) դարձաւ անոր թըշնամին եւ եղաւ ջարդարարներու կատարած հրամանատարը: Բողոքական քրիստոնեաները դէպի գիւղացի եւ գործաւոր դասակարգերը իրենց ունեցած ատելութեան ու վրէժխնդրութեան մէջ դուրս եկան նոյնքան վայրագ որքան Հռովմի Պապին հետեւող կաթոլիկ քրիստոնեաները: Տասներկու հազարներով մարդիկ խոշտանուեցան, այրուեցան, սրախոզնոց եղան եւ ոմանք ողջ-ողջ թաղուեցան: Գրթութիւն, ներդրութիւն, խղճահարութիւն անխմաստ բառեր էին Քրիստոսի անունով երգուող սուրբ մարդոց համար:

Գերմանիոյ գիւղացիական ապստամբութիւնը ձախողեցաւ ոչ թէ ազնուականներու ուժի գերակայութեան հետեւանքով, այլ անոր համար որ գիւղացիներու եւ քաղաքային թշուառ արհեստաւորներու միջեւ միասնական ճակատ չէր կազմուած եւ յետոյ ապստամբներու մէջ կը պակսէր հարկ եղած կարգապահութիւնն ու գործունէութեան միաձեւութիւնը: Իսկ աւելի խոր պատճառը այն էր որ ճնշուած դասակարգերը տակաւին չէին մօտեցեր անտեսական եւ ընկերային ազատագրութեան հասնելու գիտակցութեան աստիճանին. անոնք զեռ չէին կրնար մտածել թէ առանց պետական հին



չէնքը խորատակելու եւ անոր տեղը դասակարգելու վերացման սկզբ-  
բունքի հիմքերով նոր չէնք մը կառուցելու, իրենք շարունակ կը  
մնային տիրող դասակարգի սպառնալիքին ասի:

Անշուշտ այս տողերով մենք իրաւունք չունինք քննադատե-  
լու զանոնք, որովհետեւ պայմանները տակաւին հասունցած չէին  
նման ծրագիր մը մշակելու եւ զայն իրականացնելու համար: Պատ-  
մութիւնը այդ հսկայ դործը վերադարձած էր ուսւ բանուարներուն ու  
զիւզացիներուն:

ՀԱՒԱՏԱՒՆՆՈՒԹԻՒՆ

Միջին Դարու ուրուագիծը պատկերացնել ասանց անդրա-  
դասնալու այն դժոխային հաստատութեան որ հաւատաքինութիւն  
կը կոչուի, դա կը նշանակէ պատկեր մը գծել ասանց դոյնի, որով-  
հետեւ Միջին Դարուն եկեղեցական նախապետութիւնն էր գերիշ-  
խողը: Քրիստոս իր թագաւորութիւնը երկինքի մէջ հաստատել ու-  
ղեց, բայց իր ժառանգորդները այդ թագաւորութիւնը հաստատե-  
ցին երկրի վրայ:

Եւ ինչ թագաւորութիւն...: Մի արիւնկոյակ թագաւորու-  
թիւն որ գոհեր կը փնտռէր չարչարելու համար, գոհեր կը զանէր  
խարոյկներու վրայ ողջ-ողջ այրելու համար: Եւ այդ դահճագետ-  
ները եկեղեցին իր սոմարին մէջ կը յաւերժացնէր որպէս սուրբեր:

Հաւատաքննութիւնը, որպէս միջնադարեան եկեղեցական  
հաստատութիւն, հիմնած էր այն դատարանը որուն նպատակն էր  
քրիստոնէական հաւատքը պահել մաքուր եւ անաղարտ: Այդ կրօ-  
նական գերագոյն ասեանը հիմնողն էր կրիկոսի Իններորդ Պապը  
(1227-41): Հոն դատուելու կանչուողները մահճատականները չէին,  
հրեաներն ալ չէին, այլ միւմիայն կաթոլիկները: Կաթոլիկ մը երբ  
քրիստոնէական հաւտքի ծաւալման հակառակող վարդապետու-  
թեան մը կը հետեւէր, կ'անուանուէր հերետիկոս, եւ հերետիկոսը  
հաւատաքննութեան ասեանին առջեւ պէտք էր խոստովանէր իր  
յանցանքը, յայտնէր իր զղճումը եւ ապաշխարէր, հակառակ պա-  
րագային կը նետուէր ասնջանքի զնտանը եւ կամ պատրաստուած  
խարոյկին վրայ, ողջ-ողջ այրուելու համար: Քաղաքային կամ  
պետական սեւէ օրէնք անոր օգնութեան չէր կրնար հասնիլ: Ա-  
ռաջին հերետիկոսը որ խարոյկի վրայ այրուեցաւ զնոստիկ վար-  
դապետութեան հետեւող Պրիսիլեանն էր, որ Թրեմիսի մէջ մոխ-  
րացաւ 385 թուականին: Սուրբ Օգոստինոս, Նումիաիոյ եպիսկո-  
պոսը (354-430) օրհնելով զօվեց այդ ձեւի մահապատիժը. Հոսով-  
մի Պապին կը մնար այդ սարսափելի պատիժը վերահաստատել եւ

յաւերժացնել. եւ այդ եղաւ օրէնք:

Նախաքրիստոնէական շրջանին կամ քրիստոնէութեան սկզբը-  
նական շրջանին, կային զանազան կրօններ. բայց նայն կրօ-  
նին հետեւողները իրենց կրօնապետներուն հրահանգով իրարու վը-  
րայ չէին հսկեր հաւատաքննիչի դերով: Քիչ թէ շատ ուսեալ մար-  
դիկ որոշ չափով ազատախոհ էին եւ համբերատար. անոնց այդ հո-  
գեանութիւնը կապուած էր երեք պատճառներու: Առաջին. անոնք  
համոզուած էին որ ուժը եւ բռնութիւնը անօգուտ են հողեկան  
գործերու մէջ: Երկրորդ. անոնք կը յարդէին մարդկային անհասա-  
կան մասձոցութեան ազատութիւնը: Երրորդ. անոնք կը տարա-  
կուէին թէ հնարաւոր է կրօնական հաւատալիքները գիտական  
ճշմարտութեանց վերածելը:

Եթէ մենք չափազանց գերզնահատանքի վերադրենք վերջին  
երկու պատճառները, տարակոյս չկայ որ առաջինը գոյութիւն ու-  
նէր դարերով, ինչպէս նաեւ քրիստոնէութեան ծննդեան եւ ման-  
կութեան շրջանին: Բայց հին մշակոյթի ժառանգ թողած այդ ազ-  
նուագոյն մէկ ճիւղն էր որ սկսեւ էր որդնատիլ ու քայքայուիլ:

Հոսովէական կայսրութեան վերակազմութիւնը իմացական  
գարգացման տեսակէտէն ստորագաս պետական մարդոց ձեւքով  
(Դիոկղետիանոս, Կոստանդին) որոնք հին աշխարհի փուլումէն  
յառաջացած խառնակ դրութեան ասեւ հրապարակ ելան, ազդերու  
իրերաշաջորդ զաղթականութեան հոսանքը, գերմաններու երեւու-  
մը իրենց հին, նահապետական համբերաշխութեան զգացումներով,  
եւ յետոյ՝ ամէնէն կարեւորը՝ մահճատական կրօնին սուրի ծայրով  
յառաջ տարած աշխարհակալական քաղաքականութիւնը մէկ կողմէ,  
միւս կողմէ քրիստոնէութեան հետ նորակազմ հասարակական սիս-  
տէմը պահպանելու ձգտումը վերջ գրին ամէն տեսակի ազատախո-  
հութեան: Պետութեան, եկեղեցւոյ, վանական հաստատութեանց  
եւ ուրիշ ընկերակցութեանց կողմէ ամէն մէկ անհատն կը պահան-  
ջուէր հնազանդութիւն եւ անորտունջ հպատակութիւն: Ասիկա նը-  
կատի առնուելիք կարեւոր երեւոյթ մըն է ամէն մի դարաշրջանի  
համար, երբ կը սկսի նոր հասարակութեան մը վերակազմութիւնն  
ու վերակառուցումը:

Ընկերային կազմակերպութիւն մը սրբան նահապետական  
ըլլայ, նոյնքան զօրաւոր կ'ըլլայ համբերաշխութեան կազմ անոր  
անդամներուն միջեւ: Այն տիրական զգացումը թէ բոլորը պատաս-  
խանատու են մէկու մը եւ այդ մէկը պատասխանատու է հաւաքա-  
կանութեան, պատճառ կ'ըլլայ որ կազմակերպութեան իւրաքան-  
չիւր անդամ հսկէ միւս անհատ անդամներու խորհուրդներուն եւ



արարքներուն վրայ եւ պարագան ներկայացած պահուն նոյնիսկ միջամտէ անոր գործերուն: Երբ ամէնքը մէկ մարմնոյ հաւասար անդամներ են, ամբողջ կազմակերպութեան ուրախութիւնն ու վիշտը կախում ունի այն բանէն թէ իւրաքանչիւր անդամ ինչ կ'ընէ կամ ինչ անտեսած է ընել:

Այսպիսի դրութենէն յառաջացած ազատութեան կաշկանդումը, որ համերաշխութեան հիմքը կը կաղմէ, անախորժ է ներկայ մարդոց համար:

Նախնական քրիստոնէական կազմակերպութիւնը ահա այս ձևով հիմնուած էր, ուր աշխարհական գործերը խառնուած էին հոգեկան գործերու հետ. եւ քանի որ Աստուածն էր բոլորին պաշտամունքի առարկան, ամէն ոք երջանիկ կը զգար երբ կը կատարէր իր պարտականութիւնները Աստուծոյ եւ մարդոց հանդէպ:

Պարզօրէն հասկնալի է որ այս ձևի կազմակերպութեան մէջ մարդոց իմացական զարգացումը կ'արդէլակուի, որովհետեւ անոնց մտածողութիւնը ստնուած կ'ըլլայ պարիսպի մը մէջ:

Անտարակոյս անբնական է ենթադրել սր մարդիկ, նոյնիսկ այդ դրութեան տակ պատահականօրէն գոնէ, տարբեր մտածումներ չունենան եւ գանոնք շարտադրուած, բայց նոյն կազմակերպութեան անդամները անմիջապէս թշնամական արամադրութեամբ չեն լեցուիր այդպիսի անգամի մը հանդէպ, այլ անոր հետ կը վերաբերուին եղբայրաբար ու ներողամիտ ոգիով:

Բայց նախնական քրիստոնէական այս շրջանը չուտով վերջ գտաւ, երբ քրիստոնէութիւնը պետական կրօնք դարձաւ: Քրիստոնէական կազմակերպութեան մէջ երեւան եկան դասակարգեր, վերինները եւ վարինները: Վերինները հաւատալով որ իրենք Աստուծոյ ընտրեալներն են, կրօնաւորներու ձեռքով օրէնքներ զծեցին ու հարկադրեցին որ վարինները որոնք աւելի անկեղծ հաւատաւորներ էին, անտրտունջ համակերպին այդ օրէնքներուն: Իրերու այդ դրութենէն ծնան ըմբոստներ որոնք թափու ֆրագները թութակօրէն չէին կրկներ. սսոնք կոչուեցան հերետիկոսներ: Առաջին հերետիկոսը որ խարոյկի վրայ այրուեցաւ Թրեվիսի մէջ, ինչպէս նշեցինք, 385 թուականին էր, այսինքն Կ. Պոլսոյ եկեղեցական համաժողովէն շրս աարի վերջ: Այդ ողջակիզումը ընդհանուր սարսափ տարածեց քրիստոնէայ աշխարհին մէջ: Հակառակ, սակայն, անպաշտպան կերպով յառաջ տարուած անհաստատ հալածանքներուն, պետարանի իրական ուսուցմունքը կը շարունակէր, մինչ հերետիկոսութիւնը շատ հազուադէպօրէն ցոյց կուտար իր երկչոտ դէմքը, մինչև տասնեւմէկերորդ դարը: Վանականութիւնը

իր շուրջ հաւաքած էր այն քրիստոնէաները որոնք դժգոհ էին եկեղեցիէն ու աշխարհէն եւ գանոնք առանձնացուցեր էր աշխարհիկ կեանքէն: Բայց երբ վանականութիւնը ազականուեցաւ եւ քաղաքակրթութեան կեանքը նոր աշխուժութիւն ստացաւ, հերետիկոսութիւնը մասսայական շարժման կերպարանք առաւ եւ սկսաւ սպառնալ Միջին Գարու ընկերային եւ եկեղեցական հիմնարկութեանց: Հերետիկոսներու ողջակիզումը տակաւին ընդհանրացած չէր, երբ խղճամիտ կրօնականներ սկսան արտայայտել իրենց ցասումը: 1048 թուականին Վաղօ, Լիէյի եպիսկոպոսը, հետեւեալ տղերքը դրած է իր մէկ եղբայր պաշտօնակիցին, եպիսկոպոս Քալոնսին. «Աստուծոյ հաճելի չէ բնաւ մահուամբ պատժել մեղաւորները, եթէ անպատճառ մեղաւոր պիտի կոչենք մեզի պէս շմտածողները: Բաւական են այս սարսափելի ողջակիզումները: Մեր գործը խարոյկներու վրայ մարդեր այրել չէ: Աստուած չի թողարար մեզ որ աշխարհական հուրով կամ սուրով սպաննենք մէկը զոր մեր արարիչն ու փրկիչը պիտի սիրէին որ մենք փրկէինք: Եպիսկոպոսները օծուած են ոչ թէ մահ տարածելու, այլ մահամերձը կեանքի բերելու համար»:

Բայց ո՞վ պիտի լսէր այս բարեմիտ եպիսկոպոսին բողոքը:

Եկեղեցին դարձեր է աւանդական իշխանապետութիւն, կուտակած էր անասման հարստութիւն, եւ երբ հերետիկոսները բողմացան, Հոովմի Պապը սեանելով սպառնացող վտանգը հրաման արձակեց հուրով ու սրով բնաջինջ ընել մասնաւորապէս կաթարեանները (\*):

ԺԳ. գարուն հոգեկան հաւասարեմութիւնը իր ամբողջ յայտնի ու գաղտնի բանակայիններով անցեր էր գործի:

Հերետիկոսութեան վերաբերմամբ եկեղեցոյ վարդապետութիւնը հիմնաւորողը եղաւ Թովմաս Աբուինաս (1225-1274) որ կոչուած է նաեւ սուրբ Թովմաս: Ահա թէ ինչ գրած է այս սուրբը. «Հերետիկոսութիւնը մեզը մըն է եւ հերետիկոսը ոչ միայն արժա-

(\*) Կաթարեանի կամ «մաքրեղէն» քրիստոնէայ ազանդաւորները Քրիստոսը որպէս աստուածորդի չէին դասաներ, այլ կ'ընդունէին որ ան բարեկարգիչ մըն էր որ եկեր էր տնտեսական անհաւասարաւիւնները վերցնել: Անոնք բշնամի էին պետականութեան, բշնամի էին զինուորականութեան, կը դատապարտէին հարուստները եւ հազատէր ազնուականները, ասոնց կարգին նաեւ եկեղեցական բարձր պաշտօնեաները: Անոնք կը հետեւէին հին գործաւորական միութեանց սկզբունքներուն. եղբայրաբար աշխատիլ եւ կեանքի բարիքներն ու վիշտերը հաւասարապէս բաժնել:



նի է եկեղեցւոյ նորոգքին, այլեւ արտաքուստեւու է այս աշխարհէն: Եթէ հերետիկոսը կը յամառի իր գործած մեղքին վրայ եւ չի գըջար, եկեղեցին անոր կեանքը խնայելու պարտաւորութենէն ազատ պիտի զգայ եւ զայն պիտի յանձնէ աշխարհական դատաւորին, որպէսզի ան մահապատիժով մարդկութիւնը փրկէ շարագործի մը շունչէն»:

Բայց եկեղեցին աշխարհական դատաւորին չյանձնեց հերետիկոսը դատելու գործը, այլ հաստատեց իր ուրոյն դատաստանական ստեանը, հաւատաքննութեան ատեանը:

Դատապարտեալ հերետիկոսը կը կորսնցնէր ամէն բան. գոմինիկեաններն ու պապերը անոր ունեցածը կը բաժնէին աշխարհական իշխանութեանց, որպէս փոխարինութիւն անոնց տուած պաշտպանութեան:

Հերետիկոսութեան յանցանքով դատապարտեալ մը բնաւ պատահութիւն չունէր օրինական միջոցով ինքզինք պաշտպանելու. անոր ազատութեան միակ ճամբան զղջումն էր, բայց հերետիկոսները առհասարակ իրենց զազափարին նուիրուած մարդիկ, աւելի կը նախընտրէին ամենանոսր ու մահը քան թէ նուաստացուցիչ զղջումով ազատութիւնը: Եւ այսպէս հաւատաքննութեան ատեանը հազարաւոր կեանքեր փճացուց բանտերու մէջ՝ ամենանոսրով եւ խարոյկներու վրայ՝ ողջակիզումներով: Տանջանքով մեռնող հերետիկոսներու մարմինները նոյնիակ իրենց գերեզմաններուն մէջ ապահով ու ազատ չէին. ֆանատիկ կրօնաւորները անոնց սկզբները զուրս կը հանէին ու կ'այրէին Աստուծոյ հոգը պղծութենէ անաբատ պահելու համար:

Հաւատաքննութիւն... անուր ու աննկարագրելի սղբերգութեանց օղակներու շղթայաւորումի մի շրջան որ պատմութեան մէջ կայ ու կը մնայ որպէս յուշարար քրիստոնէական կրօնի դատապարտելի աններողամտութեան:

Հաւատաքննութիւնը իր սարսափելի մեքենայով տիրող հանդիսացաւ Փրանսայի եւ Սպանիոյ մէջ, յետոյ անցաւ Պալքանները ուր տեղաւորուած էին զաղթական ազգեր, մասնաւորապէս սլաւոնները իրենց ցեղային սովորոյթներով ու օրէնքներով:

Եւ այստեղ կը սկսի հետաքրքրական ուրիշ պատմութիւն մը:

Պալքաններ արշաւող ցեղերը թէեւ զէնքով յաղթեցին տեղացի բնիկներուն, բայց պարտուելով լուծուեցան յունո-բիւզանդական քաղաքակրթութեան քուրաչին մէջ, հետեւեցան Փէոտալիզմին եւ ծնունդ տուին սուր հակամարտութիւններով դասակարգերու: Մէկ կողմը կեցած էր ճնշող ու հարստահարող հողատիրութիւնը, միւս կողմը՝ կոմունայի աւանդութիւններով սնած բայց ճնշուող ու հարստահարուող երկրագործ ժողովուրդը:

Ութներորդ դարու կիսուն պուրիաները հունգարացիներէն խլեցին բիւզանդա-գերմանական ստուաուրի զեկալարութիւնը եւ զրրուեցին յոյներու նախանձը:

Մինչ այս կերպարանափոխութիւնը իր ընթացքը կ'աննէր արազ թափով, նոյն ատեն քրիստոնէութիւնը սկսեր էր տարածուիլ երկրին մէջ. 864 թուականին Պուլիարիան ընդունեց քրիստոնէական կրօնը, ի հարկէ յունո-կաթոլիկ ձեւով: Քրիստոնէութեան հետ գնոստիկ եւ մանիքէեան զազափարները թափանցեցին Պուլիարիոյ մէջ, որոնցմով ուժեղացաւ կաթարեան շարժումը: Բարբին ու չարին միջեւ եղած պայքարը շուտով եղաւ հակամարտութեան խորհրդանշանը մէկ կողմէ Փէոտալ տէրերուն եւ հարուստ վաճառականներուն, միւս կողմէ կողոպտուած եւ շահագործուող ժողովուրդին միջեւ, ուրիշ խօսքով հասարակութեան նորելուկ դասակարգին եւ հաւատարմութեան հին կարգերուն սիրահար աշխատաւոր դասակարգին միջեւ: Իրականութիւնը որքան զածան զիմադիժ ստանար, ժողովուրդը նոյնքան եռանդով կը յարէր գնոստիկ-մանիքէեան վարդապետութեամբ դունաւորուած քրիստոնէութեան, ինչ որ բնական էր:

Տասներորդ դարու կիսուն բազմաթիւ մարդիկ հետեւեցան կրօնաւոր Բոկոմիլին (Աստուծոյ սիրելիին) որ նոյն ազանդին հիմնադիրը եղաւ: Ծարժումը տարածուեցաւ Սերպիոյ մէջ եւ ետանդոտ հետեւորդներ ունեցաւ Բոսնիայի մէջ:

Տասներորդ դարու վերջերը ուղղապաւն կրօնականները սկսան բուն կերպով զանդատիլ Բոկոմիլիէ մարդոց մասին, որ անոնք իշխանութեանց դէմ անհնազանդութիւն կը քարոզէին, կը զրպարտէին Փէոտալ լորտերը, կ'արհամարհէին պետութեան պաշտօնեաները եւ զանոնք կ'անուանէին անհաւատ եւ անասուած, ըմբոստութեան ողին կը զրրուէին գերիներուն մէջ եւ կ'արդիւնէին որ անոնք հաւատարմութեամբ ծառայեն իրենց աէրերուն:

Կաթարեաններու դէմ սկսած հալածանքը սաստիկացաւ ատանեմէկերորդ դարու վերջերը Հոսովի պապերուն, Իննոսընտ Գ.ի եւ Հոնորիոս Գ.ի հրամանով: Սկսաւ արինալի խաչակրութիւն մը Հունգարիայէն եւ շարունակուեցաւ պարբերաբար: 1234 թուականին Բոսնիան հունգարական խաչակիրներուն առջեւ հուրի եւ սուրբի երկիր մը եղաւ: Բոսնիացի հերետիկոսները զիւրազնարար պաշտպանեցին ինքզինքնին, այնպէս որ 1400 թուականին երբ յաղթեցին հունգարացիներուն, կաթարիզմը յայտարարուեցաւ Բոսնիայի պետական կրօնը: Բայց ատով թշնամութիւնները վերջ չդասն: Այս անգամ սկսաւ հունգարացիներու եւ լեհերու միացեալ խաչակ-



րութիւնը. վաթսուն հազար կատաղի կուռղներ արշաւեցին Բոսնիայի կաթարիզը ջախջախելու վճռակամութեամբ: Այս աւերիչ պատերազմները, սակայն, աւելի նպաստեցին իսլամին քան թէ քրիստոնէութեան, որովհետեւ թուրքերը 1385-էն ի վեր արդէն գրաւեր էին Սերպիան եւ կամաց կամաց Պալքանեան թերակղզին կ'իջնար իսլամական ազդեցութեան տակ: Չնայած թուրքերու այդ նուաճողական յոռաճխազացքին, խաչակիրները կը շարունակէին իրենց պատերազմը Բոսնիայի դէմ, մինչեւ որ քրիստոնէութեան անունը դարչելի դարձաւ ըստը բոսնիացիներուն համար: Այդ իսկ պատճառով թուրքերը 1465-ին երբ Բոսնիա արշաւեցին, բնակիչները ստանց զխաղրութեան անձնատուր եղան. քրիստոնեայ խաչակիրները երկրին մէջ ոչ ոյժ էին թողուցեր, ոչ ալ կուրելու սիրտ: Պաշտօնական քրիստոնէութեան հանդէպ ժողովուրդին զղուանքը այնքան ուռճացեր էր որ Բոսնիացի կաթարեանք մահամետական դարձան, որովհետեւ մարդիկը համոզուեցան թէ Մուհամէտի Ալլահը աւելի զօրաւոր էր քան Հոովմի պապերուն Աստուածը:



## Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Տ

Մենք խօսեցանք զերեւորական դարաշրջանի եւ Միջին Դարու դանազան ազդերու անտեսական, քաղաքական, ընկերային եւ կրօնական զիրքաւորումներու դանազանութեանց եւ դասակարգային կռիւներու շուրջ: Այժմ մեզի կը մնայ լուսարանել երկու կարեւոր հարցեր:

Առաջին. ի՞նչ եղած է գիտութեան նուաճումը այդ երկու դարաշրջաններուն:

Երկրորդ. ի՞նչպէս ըմբռնուած է ազատ մտածողութիւնը այդ նոյն դարաշրջաններուն:

Այս երկու հարցերը սուսնձին հատորներու նիւթ կը կազմեն, բայց մենք պիտի տանք անոնց լուսարանութեան ուրուագիծը միայն, քաղուածներ ըլլով հետեւեալ կարեւոր զիրքերէն.

- 1) Science in History, 2 vol., J. D. Bernal
- 2) History of Free Thought, J. M. Robertson
- 3) The General History of Socialism and Social Struggles, M. Beer



ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՀՆԱԴԱՐԵԱՆ ԵՒ  
ԳԵՐԵՏԻՐԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻՆ  
ԵՒ  
ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐՈՒՆ

Գիտութիւնը Պատմութեան Մէջ անունով երկու ստուար  
հասարակական հեղինակը նախ կը փորձէ գիտութիւնը լրացուցիչ բա-  
ցարոզականութեամբ սահմանաւորել, անկէ յետոյ կ'անցնի գի-  
տութեան կատարած գարգացողական շրջանառութիւնը ներկայաց-  
նել, սկսելով հնադարեան շրջանէն մինչեւ մեր օրերը:

Հեղինակին մի քանի տեսակէտներուն համաձայն չըլլալով  
հանդերձ, ես կը հիանամ իր ատարած հսկայական աշխատանքին վրայ  
մանաւանդ այն կէտին մէջ որ նա հնադարեան շրջանէն մինչեւ մեր  
օրերը ներկայացնելով գիտութեան յոռաճ գիմութիւնն ու դերը,  
մանաւորապէս կը շեշտէ բուրժուայ անտեսողէտներուն համար  
անընդունելի այն ճշմարտութիւնը որ գիտութիւնը դասակարգային  
հասարակութեան մէջ դանդաղ ու միակողմանի, իսկ սոցիալիստա-  
կան հասարակութեան մէջ, օրինակ Սորճրգային Միութեան մէջ,  
ստուամենքով և բազմակողմանի ձևով կը յոռաճ գիմէ:

Այս վերջին մասը ես պիտի ներկայացնեմ իմ ուսումնասի-  
րութեան Գ. հատորին մէջ:

Այժմ թոյլ տանք որ հեղինակը խօսի.

1. ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Գիտութիւնը հիմնարկութիւն մըն է որ ունի բազմաթիւ ճիւ-  
ղեր, որոնց իւրաքանչիւրին վրայ կ'աշխատին հարիւր հազարաւոր  
մարդիկ: Այդ հիմնարկութիւնը ունի անտեսական բնոյթ. անոր  
նպատակն է պահպանել մարդը, մարդկային հասարակութեան  
կեանքը և գոհացնել կեանքի պահանջները: Բայց ներկայիս երբ կը  
տեսնենք թէ երկու տեսակ աշխարհ կայ (կապիտալիստական աշ-  
խարհ և սոցիալիստական աշխարհ) ուրեմն գիտութեան դերն ալ  
բաժնուած է երկուքի. կապիտալիստական աշխարհին մէջ գիտու-



թիւնը իր ճիւղերով կը ծառայէ տիրող դասակարգի շահերուն, սոցիալիստական աշխարհին մէջ ան կը ծառայէ ամբողջ ժողովուրդին: Բայց այդ երկու աշխարհներուն միջեւ նոյնանման զիժ մը կայ: Գիտութիւնը թէ կապիտալիստական եւ թէ սոցիալիստական աշխարհին մէջ գաղտնի յարկարածին մը ունի, ուր աշխատողները կարուած են արտաքին աշխարհէն: Այդ յարկարածինն գործը իր կտրուած են արտաքին աշխարհէն: Այդ յարկարածինն նպատակը քաղաքական, պատերազմական է: Մէկը սր տիրող դասակարգի տշխարհակալութեան ծառայելու կոչումը ունի, միւսը սր յեղափոխութեան յաղթանակը պահպանելու նպատակին կառչած է: Այդ յարկարածինն մէջ կը պատրաստուին մահասփիւռ, աւերիչ զէնքեր: Գիտութիւնը այդ յարկարածինն պատահաններէն կը սպառնայ սոցիալիստական ու քաղաքակրթութեան: Բայց մենք զիտենք որ այդ սպառնալիքին տակ կը հիմնաւորուի ազազայ կոմունիստական աշխարհը: Դասակարգերու վերացումով գիտութիւնը կը դառնայ ամբողջ մարդկային հասարակութեան ծառայող հիմնարկութիւն մը, հիմնովին կը ջնջուի այդ գաղտնի յարկարածինը եւ շինուած զէնքերը կը դրուին հնութեան թանգարանը:

**Գիտութեան մեքսուր**

Գիտութեան հիմնարկութիւնը երբ ընկերային իրողութիւն մըն է ուր մարդիկ որոշ կանոնաւորուած յարաբերութիւն կը պահեն իրարու հետ, ունի իր մեթոտները. զիտարկելու մեթոտը, փորհարկելու մեթոտը, գոտաւորելու եւ չափելու մեթոտը: Այդ մեթոտներու գործածութիւնը, ի հարկէ, կը պահանջէ մասնաւոր կազմածք եւ մեքենականութիւն, պարզ կամ բարդ մեքենականութիւն: Այդ հիմնարկութիւնը ունի նաեւ իր օրէնքները եւ թէորթները, նոյնպէս ունի իր ուրոյն լեզուն սր կը տարբերի իր այս կամ ճիւղի լեզուէն:

**Գիտութեան տակտիկան**

Գիտութեան տակտիկան է լուծուելիք խնդիրները ընարել նայած ժամանակի պայմաններու պահանջին եւ դրանք լուծել: Բայց այժմ պարզ է որ շատ աւելի դժուար է լուծուելիք խնդիր մը գատորոշելն ու գտնելը քան թէ գայն լուծելը. մանաւանդ կապիտալիստական աշխարհին մէջ, որու ծոցէն ծնած հակասութիւնները բազմաթիւ են ու բազմազան: Հարց մը գտնելը կը պահանջէ ուժեղ երեւակայութիւն ու հեռատեսութիւն, իսկ գայն լուծելը կը պահանջէ հարձարեղ դանկ:

Այս խմատով է որ Գոտամպի, գիտութիւնը անուանած է անհրաժեշտութեան ֆակտորիւնը:

**Գիտութիւնը եւ արուեստը**

Գիտութեան միջոցով մարդու Փիլիթրական ու մտային կարողութեանց զարգացումը այլեւս դուրս մեքենական ու տարերային էվոլյուցիայի ընթացաւում մը չենք կրնար նկատել, ինչպէս սոփոքած ենք նկատել կենդանիներուն մէջ: Երբ ժամանակի պահանջումով գիտութիւնը ընկերային փոփոխութիւններ կը յառաջացնէ, անոնց հետեւանքով նոր դասակարգեր երեւան կուզան, այդ դասակարգերուն հետ ծնունդ կ'առնեն նոր դասակարգներ, նոր ձգտումներ, որոնք իրենց կարգին կը յառաջացնեն արուեստի նոր ճիւղեր:

**2. ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՍԱՀՄԱՆ ԶԱՐԳԱՑՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ**

Գիտութեան հիմնարկութիւնը եւ բնոյթը կը տարբերին ընկերային միւս հիմնարկութիւններէն, կը տարբերին այն բանով որ անոր զարգացողութեան որոշ սահման չկայ: Այն ինչ որ նորութիւն էր երէկ հնութիւն կ'ըլլայ այսօր: Բայց մեռնող հնութիւնը իր արմատը կը պահէ նորին մէջ եւ այսպէս յաջորդաբար յառաջ կ'ընթանայ այն, որ կը կոչուի գիտական յառաջդիմութիւն:

Ճշմարիտ գիտութիւնը այն է (ինչպէս Բէյքըն նշած է) երբ ան յաջողակ գործարկում ունեցեր է եւ կ'ունենայ նիւթական դրութեանց մէջ, ըլլայ ան ոչ-կենդանական ինչպէս են Փիլիթրական գիտութիւնները, ըլլայ ապրող օրգանիզմներու մէջ, ինչպէս են սաղմնարանական գիտութիւնները, կամ ըլլայ մարդկային հասարակութեան մէջ, ինչպէս են ընկերային գիտութիւնները:

**3. ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱԴՐՈՂՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑ**

Գիտութիւնը, որպէս հիմնարկութիւն, որպէս անհրաժեշտութեան մեթոտ, յարաճուն փորձառութեանց կազմակերպուած համախմբում, ուրիշ դեր մըն ալ ունեցեր է եւ ունի, անիկա թէ անցեալին եւ թէ ներկայիս ամէն ձեւի արտադրողութեան գործիք եղած է եւ է: Մարդուն նիւթական, օրգանական միջավայրին իշխելու կարողութեան պատմութիւնը ցոյց կուտայ որ յառաջդիմութիւն մը կատարուած է ամէն մէկ զարաչըջանի մէջ եւ այդ յառաջդիմութիւնը ունեցած է իր աստիճանները. իսկ իւրաքանչիւր աստիճան նշանակուած է նոր տեխնիկայի երեւումով:



Բնութեան նիւթերը կամ օրգանական էակները իրենք իրենց գործածական արժէք չունին. անոնք գործածական արժէք կ'ունենան մարդկային աշխատանքի միջոցով. եւ գիտութիւնն է որ մարդկային աշխատանքը կը կանոնաւորէ համաձայն կարգի հրամայականին:

Գիտութեան դասակարգային բնոյթը

Գիտութիւնը մարդկային քաղաքակրթութեան կանխագոյն շրջանին փոքրաթիւ գասակարգի մը սեփական գործիքը եղած է. ժողովուրդին մեծամասնութիւնը հետեւած է այդ գասակարգին եւ վայելած է գիտութեան բարիքները: Կապիտալիստական զարգացած երկրին մէջ զբուծիւնը ձեւականօրէն նոյնն է, բայց իր բնոյթով տարբեր է: Գիտութիւնը կապիտալիստ գասակարգին ծառայող հաստատութիւնն է: Դպրոցները, համալսարանները գիտական զանազան ճիւղերը կը սորվեցնեն ուսանող աշակերտներուն, բայց այդ աշակերտները կը պատրաստուին՝ իրենց մտտորաշարը անոր հետ նաեւ իրենց մտքի ստեղծագործ կարողութիւնը տիրող գասակարգի շահերուն ծառայեցնելու մեքենականութեան: Միայն սոցիալիստ երկրին մէջ է որ գիտութիւնը կամաց կամաց փոքրամասնութենէն կ'անցնի մեծամասնութեան, ապա ամբողջ համայնքին ծառայելու դերին: Այն ստեղծ է որ գիտութիւնը կը կորսնցնէ իր գասակարգային բնոյթը:

4. ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԱՂԱՓԱՐՆԵՐՈՒ ԱՂԲԻՒՐ

Գիտութեան գործնական օգտագործումը թէեւ ինքնին գիտական յառաջիմութեան ազդիւր է եւ իր վաւերականութեան ապացուցումը, բայց նոյն ստեղծ գիտութեան յառաջիմութիւնը աւելի բան մըն է, քան ինչ որ է անխնդիր շարունակական զարգացումը: Գիտութեան հաւասարապէս էական մասը տեսարանական յատակագիծն է որ կ'օղակէ գիտութեան գործնական արդիւնքները եւ անոնց կուտայ յարաճուն իմացական յարակցութիւն:

Անցեալին, եւ նոյնիսկ ներկայիս, գիտութեան պատմութիւնը գրուած է այնպէս իրր թէ ան ճշմարտութեան իտէալական տաճարի մը պատմութիւնը ըլլար պարզապէս: Այդպիսի պատմութիւն մը գրողները կ'անտեսեն ամբողջապէս գիտութեան ընկերային եւ նիւթական բաղկացուցիչ տարրերը եւ այդպիսով զայն կը վերածեն անիմաստ եւ նոյն ստեղծ սեւեռեալ ներշնչումի ազդիւրի մը:

Միւս կողմէ, հաւասարապէս յիմարական փորձ է գիտու-

թեան զաղափարական-իտէալական երեսակը ամբողջապէս անասելը, որովհետեւ թէորիան գիտութեան կարեւորագոյն մասը կը կազմէ եւ կրնանք ըսել նոյնիսկ անոր գրական մասը: Արդարեւ գիտութեան շրջանառութեան ընթացքին անոր գործի զլիստը ուղեղի՞նք էր եղած է ապացուցանել եւ յաճախակի ալ ժխտել այս կամ այն թէորիան. օրինակի համար, գիտութիւնը հերքած է ԺԹ. զարուստգիտութիւնը եւ ապացուցեր է զարվինեան էվոլուցիայի տեսութիւնը. եւ կամ ապացուցեր է ԺԷ. զարուստ մեքենագէտներու թէորիան եւ հերքեր է արիստոտէլեան բնախօսութիւնը: Բայց ասիկա չի նշանակեր թէ գիտութիւնը ինքզինք կը հակասէ. ընդհակառակը ատով գիտութիւնը իր առաքելութիւնը կը շեշտէ, որովհետեւ գիտութեան գործը այն է որ ժխտման ժխտումով կը բանայ իր յառաջիապացքի համբան:

Իտէալիզմ եւ մատերիալիզմ

Գիտութեան մարզին վրայ տեսարանական հակաճառութեան ընդհանուր երեւոյթը, սակայն, նոր չէ: Ուսումնասիրելով անոր պատմութիւնը որչափ կը պարզուի որ գիտութեան արշալոյսէն սկսեալ երբեմն աննշմարելի, երբեմն ուժգին, իրարու հակառակ երկու ձգտումներ բաղխեր են միմիանց հետ. մին ձեւական եւ իտէալիստական, միւսը գործնական եւ մատերիալիստական: Այս պայթարը մենք կը տեսնենք թէ տիրող եղած է յունական փիլիսոփայութեան մէջ, բայց պէտք է ըսել որ ան ծնունդ առած է շատ կանուխէն, այսինքն գասակարգային հասարակութիւններու կազմութեան շրջանէն, որովհետեւ երբ գասակարգեր երեւան եկած են, բնականօրէն իւրաքանչիւր գասակարգ արտայայտած է իր զաղափարախօսութիւնը:

Իտէալիստական դպրոցը կը պաշտպանէ գոյութիւն ունեցող իրերու կարգ ու սարքը, որուն ետեւ կեցեր է արիստոկրատին եւ հաստատուած կրօնքը: Անոր ամէնէն հետախուզող նահապետ արիստեանը Պլատոնն է: Իր տեսութեամբ գիտութեան նախադրեալը բացատրել է թէ իրերը ինչո՞ւ են այսպէս ինչպէս որ են եւ թէ ի՞նչպէս անկարելի է եւ նոյնիսկ ամբարշտական փորձ յուսալ որ անոնք իրենց հիմքերով փոխուելու են: Իտէալականը, բարին, ճշմարտը եւ զեղեցիկը յաւիտենական են եւ դուրս կը մնան հարցաքննութենէ. եւ քանի որ անոնք ակնյայտնի կերպով տիրական չեն մեր երկրին վրայ, մենք աշխատելու ենք փնտել եւ դանել զանոնք՝ այս աշխարհը գրախտի վերածելու համար: Այս տեսութիւնը սկիզբէն է վերստը ազդեցութիւն ունեցեր է գիտութեան վրայ, մասնաւորապէս







# ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՀԻՆ ՔԱՐԷ ԴԱՐԱՇՐՋԱՆԻՆ

## ՆԱԽԱԲԱՆ

Որպէսզի մենք կարենանք հասկնալ գիտութիւնը այնպէս ինչպէս որ է այսօր, այսինքն որպէս հիմնարկութիւն իր սեփական աւանդութեամբ եւ իր ուրոյն յատկանշական մեթոտներով, ամէնէն առաջ անհրաժեշտ է վեր հանել անոր ծագումը: Այժմ գիտութեան ծագումի հարցը մեզի կը ներկայանայ որպէս մի երկծալ առեղծուած: Նախ որ դժուար է հեռաւոր անցեալի նախապատմական մթութեան մէջէն ցանկացուած տեղեկութիւնները քաղել. երկրորդ դժուարութիւն մըն ալ կայ որ անկարելի է ժամանակագրական կարգով նշդել թէ գիտութիւնը ե՞րբ է որ առաջին անգամ նանաչելի դարձեր է իր բնոյթով ու դիրքով:

Ամէնէն տրամաբանական ձեւը այն է որ մենք մէկ կողմ ձգելու ենք կանխագոյն շրջանի ուսումնասիրութիւնը եւ առնելու ենք ընկերաբանութեան գատորոշուած շրջանները, զանց ընելով ժամանակագրական գիծը: Ուրեմն, ընթերցողին ծանօթացնելու համար գիտութեան ծագումն ու զարգացման շրջանաւորութիւնը, հակիրճ տողերով նախ սկսինք պատկերացնել *քարէ դարաշրջանը*, ապա *բրոնզէ դարաշրջանը*, յետոյ *երկաթէ դարաշրջանը*, վերջը *միջին դարու* գիտութիւնը:



# Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը Հ Ի Ն Ք Ա Ր Է Դ Ա Ր Ա Յ Ր Ջ Ա Ն Ի Ն

## 1. ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Գիտութեան կանխագոյն ծագումը գտնելու համար մենք պէտք է փնտռենք ու գտնենք այն շրջանը ուր մարդկային կուլտուրական մարդին վրայ տակաւին տեխնիկական եւ դադափարախօսական ներազդող բաժանումներ գոյութիւն չունէին, ուրիշ խօսքով մենք պահ մը վեր տանելու ենք մարդկութեան սկզբնական շրջանը: Մարդկային էակները կենդանիներէն դատարկող առաջին եւ հիմնական կէտը այն է որ մարդիկ կազմած են նիւթական կուլտուրայով շարունակուող հասարակութիւններ եւ իրենց կարողութիւնով կրցած են իրենց շրջապատը եւ մարմինը ծածկել նորութիւններով:

Այսպիսի հասարակութիւններ պէտք է ունենային լաւազոյն մեթոտներ ուսելիք ստանալու եւ բնկերովի պաշտպանուելու համար, ինչ որ կղզիացած անհատ մը պիտի չկրնար ընել: Անոնք նոյնպէս ունենալու էին իրենց ստացածը պահելու եւ գործածելու շարունակական աւանդութիւն: Արդէն իրենց կեանքի շրջանառութեան մէջ այդ կազմանման արարածները, ըսել կ'ուզենք այդ նախնական մարդիկը, իրենց կեանքի էվոլյուցիայի ընթացքին ժառանգած բլլալու էին մարմնական եւ մտային այն կարողութիւնները որոնցմով կրնային տեսնել, բռնել եւ գործածել իրենց պիտանի բաները: Ի՞ յաւելումն, անոնք ունենալու էին այն բացառիկ կարողութիւնը, սորվելու կարողութիւնը, որմէ՛ զուրկ են ամէնէն խոշոր սանաւոր կենդանիները: Չեւքի ու աչքի այն կարողութիւնը, միացած սորվելու կարողութեան հետ, մարդոց կարելի դարձուց զործիքներու գործածութիւնը, օրինակի համար, քար մը բռնել, կամ ճիւղ մը կտրել եւ անոնց՝ յատաճազրուած նպատակի մը համար յարմար ձեւ տալ. այս էր նախնական մարդուն առօրեայ զբաղումը: Բայց որքան ասան որ այդօրինակ գործեր անհատներու կը պատկանէին, հող չէր թէ՛ որքան շնորհքով օժտուած էին անոնք, անոնք տակաւին ամբողջական հասարակութիւն մը չէին ներկայացնէր, որովհետեւ ոեւէ գործիք որ արամադրուելու էր բարբին եւ յարմարուելու էր անոնց կարիքներուն, թէ՛ զայն շինելու եւ թէ՛ գործածելու համար պէտք է բլլային սորվեցնողներ եւ սորվողներ, իսկ այդ գործը արդիւնաւորելու համար գործիքը փորձառական



զծով հիմնադրուած բլլալու էր աւանդութեամբ. եւ այդ բանը կարելի էր միայն տեսականօրէն ապրող հասարակութեան մը մէջ:

Մարդկային հասարակութեան շարունակական գոյութիւնը անհրաժեշտ դարձուց երկար ժամանակի համար բացառաբար ապահովութեան տակ առնելու նորածին երեխան, որ երկար տարիներ կը պահանջէր ինքզինք պաշտպանելու կարողութեան հասնելու համար: Այս պարագան առաջնորդեց ընտանիքներու կազմաւորումին, որուն մէջ զեկաւարի դերը կ'իյնար իզական սեռին: Մեծ մայրեր, մայրեր, դուստրեր ապահովեցին մարդկային աւանդութեան անկորնչելի շղթան: Այդ եղած է հիմնական պատճառը որ նախնական հասարակութեանց գոյութիւնը կախում ունէր կիներէն: Քանի որ ազգականական կապը պահողներն էին կիները, այսինքն մայրերը, այդպիսի հասարակութիւնները կը կոչուէին մայրապետական: Այդ շրջանը կնոջական գերիշխանութեան շրջանն էր:

Մարդկութեան ներքին առաջին պայքարը սեռային պայքարը եղած է: Այր մարդը տեսնելով կնոջ գերիշխանութիւնը ուրած էր զայն խլել կնոջ ձեռքէն:

Թէ ի՞նչպէս կ'ինը գերիշխող եղած է, դրա պատճառը պիտի փնտնենք մարդոց տղխութեան մէջ, ուրկէ ծնած է երեւակայական հրաշքի գաղափարը: Մարդը երբ կը տեսնէր որ կ'ինը յղի կը մնար, գաւակ կը ծնէր, առիկա իրեն համար հրաշք մը կը թուէր, եւ ան կ'ինը կը նկատէր որպէս հրաշագործ մի էակ: Այր մարդը ուզեց որ ինք եւս հրաշագործ գտնայ. փորձեց այն բոլոր ձեւերը ինչ որ յղի կ'ին մը կ'ընէր իր ծննդաբերութեան շրջանին: Բայց անարդիւնք: Ասով ան համոզուեցաւ որ կ'ինը իրապէս հրաշագործութեան բացառիկ շնորհքով օժտուած էր: Դարեր վերջ էր որ այր մարդը համոզուեցաւ որ կ'ինը առանց իրեն յղի չէր մնար: Անկէ յետոյ էր որ բրնձիկ գարաշրջանին երբ պատերազմները սկսան յաճախակի դառնալ, այր մարդը յափշտակեց գերիշխանութեան իրաւունքը կնոջ ձեռքէն, որով մայրապետական շրջանին յաջորդեց հայրապետական շրջանը:

Այժմ այն մեթոաները որոնք մարդկային հասարակութիւններուն առին մասնաշատուկ ստաւելութիւններ, մեծ մասով կախում ունէին նիւթական գործիքներու գործածութենէն. անոնցմով էր որ մարդիկ կը բռնէին, կը հաւաքէին, կը փոխադրէին եւ ստեղծէր կը պատրաստէին. իսկ այդ գործերու շուրջ մարդոց հազար գակցութիւնն ու համադորձակցութիւնը ապահովելու համար պէտք էր ուրիշ գործիք մը, լիզում:

Լեզուն նախ հնչական էր որ կ'ընկերանար զանազան ձեւի շարժումներու. գարերու ընթացքին ան արագացաւ:

Մարդիկ գործիքներով կրցին իրենց իշխանութեան տակ առնել իրենց միջավայրը, ինչ որ ուրիշ կենդանիներ չեն կրցած ընել:

2. ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԻԻԹԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Գործիքները

Ամէն տեսակի գործիք իր ձեւով ու պատրաստութեամբ կը ծառայէ ընկերային գործածութեան հրամայականին: Նախնական մարդուն կեանքը շատ պարզ էր, առոր համար անոր գործիքներն ալ պարզ էին: Բայց նոյնիսկ եթէ ամենապարզ գործիքը վեր առնենք, օրինակ քարէ կացինը, անոր ձեւ տալու եւ զայն գործածական դարձնելու համար մասնաւոր հմտութիւն եւ ճարտարութիւն պէտք է: Եւ երբ նկատի առնենք թէ գործիքները միատեսակ մնացած չեն ու զարգացած են սերունդէ սերունդ, զա կը նշանակէ թէ նախնական մարդը որոշ չափով ծրագրելու եւ ուրաւագծելու կարողութիւն ունեցեր է: Գործիքներ հնարելու եւ զանոնք գործածելու վարժութիւնը մարդոց սորվեցուցեր է շատ մը բնական արտադրոյթներու յատկութիւնները. սասնկով հիմքը գրուած է բնագիտութեան:

Գործիքներու գործածութիւնը ոչ միայն յարմարեցուած է որսորդութեան, այլեւ միջոց մը եղած է որ անոնցմով պատրաստուին աւելի կազուղ նիւթերով գործիքներ: Նոյն առան մարդը, կամ հաւանականաբար կ'ինը, կրցեր են բաները իրարու կցել, կապել, ոլորել, հիւսել եւ այս կերպով շինել ուտելիքի կամ ջուրի անօթներ, որով կարող եղած են ձեռքով բաները տեղէ տեղ փոխադրել:

Հագուստ եւ ոտնաման

Մարդիկ գործիքներով եւ ուտելիքով պարապելով հանգերձ զարդասիրական բնագոյով իրենց մարմինը ծածկեցին նախասիրւած առարկաներով. փետուրներ, ոսկորներ, մորթեր. սասնք որպէս զարդեր էին: Անկէ յետոյ գործածեցին մուշտակաւոր մորթերը, որոնք կ'օգնէին իրենց մարմինը տաք պահելու ցուրտ զիջերներուն եւ ձմրան եղանակին: Ասանկով երեւան եկաւ հագուստը: Մարմինը պաշտպանելէ յետոյ ոտքերը պաշտպանելու կարիքը զգացուեցաւ, եւ ահա շինուեցան ոտնամաններ: Ոտքերը պաշտպանող ոտնամանները պատճառ եղան որ նախնական մարդը իր ապ-



րելու շրջանակը ընդարձակէ, թափառականի կեանքէն անցնի նըստակեաց կեանքին, իրեն համար հիւղակներ շինէ եւ սկսի մտածել հողէն արտադրոյթներ հասցնելու մասին: Ասով նախնական քայլեր առաւ ան եւ հիմքը գրաւ երկրագործութեան եւ նարտարապետութեան:

Կրակը եւ խոհարարութիւնը

Հրակը եւ մանելու արուեստը միջատներն ալ ունին. մարդը ունեցաւ աւելին, կրակը. որ որեւէ կենդանի չունի: Կրակը սկիւբ բէն մարդուն գիտարարութեան արդիւնքը չէ եղած: Հրաբխային շրջանները, բնական կազի բնկումները եւ կամ կայծակէն յառաջացած անտառային հրդեհները կրակը տուած են մարդուն: Բայց այդ կրակը շարունակ պահելը թէ զժուար էր եւ թէ վտանգաւոր: Նախնական մարդը կայծքարէ գործիքներ շինած պահուն գիպուածով գտաւ կրակը: Գործիք եւ կրակ գործածող մարդ-կենդանին այդպիսով գիտական մարդկութեան ճամբան մտաւ: Կրակի գիտով յառաջացան ուրիշ գիտեր: Մարդը շինեց կաւեղէն ամաններ որոնց մէջ կրցաւ հեղուկներ պահել եւ գիպուածով նկատեց անոնց խմորումը: Ասով հիմքը գրուեցաւ բանական ֆիւմիաքանութեան: Կրակի գործածութեամբ փոխուեցաւ մարդուն անդառութիւնը: Մարդը այլեւս բոյներով, պտուղներով եւ արմատներով չէր սընաներ, սկսաւ ուտել ձուկ եւ միս: Ուտեստեղէնի փոփոխութեամբ զարգացաւ անոր ուղեղը, բանականութիւնը: Բնութեան մէջ շատ բաներ կային պիտանի. մարդը սկսաւ հետախուզել բնութիւնը: Ան բնական զրդումով ուսումնասիրեց կենդանիներու սովորութիւնները եւ իր գործածած տունկերու յատկութիւնները: Անիկա շուտով հասկցաւ որ կենդանիներ կային զորոնք որսալը վտանգաւոր էր, իսկ կենդանիներ ալ կային որոնք վտանգներէն պահպանուելու բնազդով կը մօտենային իրեն. առաջիններուն համար ան սկսաւ կատարելագործել իր զէնքերը, իսկ վերջինները կամաց կամաց կապեց իրեն եւ բնասանեցուց: Ասով սաղմնաւորուեցան զինագործութիւնը եւ կենդանարութիւնը: Իսկ մարդը ստամոսսիբերով իր գործածած բոյներն ու տունկերը տեսաւ որ անոնք մէկէ աւելի յատկութիւններ ունին. ասով սաղմնաւորուեցաւ քուսարանութիւնը:

Նախնական արուեստը

Նախնական մարդը շարունակ չէր աշխատեր. կ'ունենար իր հանգիստի ժամերը: Ան կը տեսնէր կենդանիներու խաղերը, կը

լսէր թռչուններու երգը եւ ահա ան սկսաւ հետեւիլ անոնց. ինք ալ սկսաւ պարել, ցատկել եւ երգի նմանոյ ձայներ հանել: Յետոյ ան կաւէ անոթներու վրայ իր սիրած կամ ահազու կենդանիներու նըկարները գծեց, անարուեստ նկարներ... Ասով հիմքը գրուեցաւ նկարչութեան կամ նկարչական սիմպոլիզմին, ինչպէս նաեւ պարի ու երգի արուեստին:

Լեզու

Նախ քան այս կամ այն կարգաւորմանց կարելիութիւնը, մարդկային հասարակութիւնը իրերու հոլովոյթի հրամարականով մեքենականորէն զարգացուց իր ամէնէն կարելւոր զէնքը, լեզուն: Մի քանի անհատներու համագործակցութիւնը, մերկ ձեռքերով կամ փայտեայ լախտերով որսորդութիւնը կարելի էր միայն միաձեւութեամբ, իսկ այդ միաձեւութեան համար անհրաժեշտ էր գործածել ձեռքի որոշ շարժումներ, որոնք յետոյ բառերու ծնունդ տուին: Նախամարդիկ այդպէս կը վարուէին, նախ քան գործիքներ շինելը, երբ իրենց գործն էր սոսկ ուտելիք ձարելը:

Թէ որքան կանուխէն լեզուն երեւան եկած է, այդ բանը կը պարզուի այն աստիճանով ինչ աստիճանով որ լեզուն ազդուած է մարդկային ուղեղի կազմախօսական յորինումով: Աչքին ու ձեռքին համակարգման բազակցութիւնը որ ուղեղին կէսէն աւելին կը զբաղեցնէ, էապէս այն միակ ժառանգութիւնն է որ նախնական մարդը ստացեր է իր նախահայր կապկանման մարդէն: Բայց ականջին ու մարդու բերնի լեզուն համակարգման բազակցութիւնը միւս կողմէ թէեւ ոչ այնքան խոշոր, սակայն եւ այնպէս նոր երեւոյթ էր որ երեւան եկաւ հասարակութեան կազմութենէն յետոյ:

Մարդը ուտելիք փնտռած ատեն աչքով տեսաւ եւ գատորոշեց իրերը. կազմեց համապատասխան գաղափարներ: Առանձին չէր կրնար ապրիլ բազմազան վտանգներու առջեւ. կազմուեցաւ ընկերային շրջանակ: Ականջով լսեց իր նմաններուն ձայները, գատորոշեց ձայնական հնչիւնները, ինքն ալ հետեւեցաւ անոնց, նմանցուց եւ կրկնեց զանոնք. այդպիսով կազմուեցան անունները:

Լեզուն սկիզբէն ի վեր եղած ըլլալու է կամարական եւ պայմանագրական: Իւրաքանչիւր անջատ հասարակութեան մէջ հնչիւններու նշանակութիւնը շահած է այն ընդունելութիւնը եւ ճշգումը ինչ որ ասանդութիւնը կազմած է, նիւթական եւ ընկերային կարիքներու գործածութեան համար: Այդ պատճառով լեզուն համաշխարհային ըլլալով հանդերձ լեզուները եղած են այլազան:



Սիւմպոլիզմ

Այն առարկաներն ու գոյափոխակները որոնց հետ լեզուն գործ ունեցեր է, միշտ աւելի բարդ եղած են քան այն հնչիւնները որոնք գործածուած են զանոնք ներկայացնելու համար: Այդ պատճառով լեզուի մը բառերը անհրաժեշտորէն վերացական են, ընդհանրացած սիւմպոլիզմներ: Մարդկային հասարակութիւնները իրենց լեզուն ստեղծելու առաջին քայլին ստիպուած են ընդհանրացումներ ընել, այսինքն մէկ բառով ներկայացնել մի քանի տարբեր բաներ: Ասիկա բառական սիւմպոլիզմն է, որու գործածութեամբ ուղեղը կը սկսի խորհրդածել: Ասկէ յառաջացեր են գիտութեան թէորիաները, որոնց ընկերացեր է բնականորէն արամարանութիւնը:

Կանխագոյն բնկերային կեանքը

Լեզուն իր ամբողջ զանազանութեամբ եւ փոխելու կարողութեամբ շատ աւելի տեսական գոյացութիւն է քան տեխնիկան: Քարէ դարը անցած է անվերադարձ, բայց մեր գործածած լեզուները այսօր իրենց արժաններով նոյնն են, ինչ որ էին քարէ դարու վերջին շրջանի ցեղերու զարգացուցած լեզուն: Ատոր համար լեզուի ուսումնասիրութիւնը, որպէս անցեալի սպրոզ նշխար, կարեւոր է վերադարձ նիւթական կուլտուրաներու ուսումնասիրութեան հետ: Այս օրերու նախնական ժողովուրդները մեզի կրնան առ կանխագոյն ժամանակներու ընկերային կեանքի պատկերը:

Ընկերային խմբաւորումի անդամներու յարաբերութիւնները միմեանց հետ խորապէս ներդաշնակուած պէտք է ըլլան անհատ մարդոց աշխուժութեամբ ու զգացումներով: Ուսեստեղէն ճարել, պատրաստել, բաժնել եւ միասնարար ուտել ընկերային գործեր են: Մենք զանոնք մարդկային կը կոչենք, որովհետեւ անոնք հիմնապէս կը տարբերին կենդանիներու անպայմանական ուտելու ձեւերէն: Կենդանին կ'ուտէ երբ անօթի է եւ կերած ատեն կ'ուզէ ուրիշները անկէ հեռու պահել: Մարդը, սակայն, պայմանաւորուած է աւանդական սովորութիւններով, որոնք կարգաւորուած են ընկերային խմբաւորումի գոյութիւնը պահպանելու համար: Ուրիշ խօսքով, կրնանք ըսել թէ մարդը ամբողջապէս բնկերային սովորութիւններով ինքզինք կրթող կենդանի մըն է: Իրբեւ հակադրութիւն միւս ստնաւոր կենդանիներուն որոնց ծնողքը բնազգական կրթութիւն կուտան իրենց նորածիններուն մի քանի օր կամ մի քանի շաբաթ, ամէն մի մարդկային էակ, սակայն, որ աշխարհ կուշայ, կը զրուի մեծախնամ կրթութեան ներքեւ եւ այդ կը սկսի անոր ծնընդեան օրէն եւ կը սեւէ տարիներ: Իսկ ընկերային պայմանաւորեալ

շրջանառութիւնը եւ կամ ըսենք կրթութիւնը աւանդական եղած է եւ այդ աւանդութիւնը պահած է իր գոյութիւնը եւ փոխուած է շատ զանգաղօրէն հասարակութեան կազմութեան օրերէն մինչեւ այսօր:

Քարէ դարու նախնական մարդը սպրած է ընկերային կեանք, կոմունական կեանք: Մեր ներկայ օրերուն նոյն կոմունական կեանքը կը շարունակուի միայն փոխակերպուած ձեւով: Հին հասարակութեան մէջ արտադրութիւնը ընկերային էր, արտադրոյթներու բաժանումն ալ սովորութիւն դարձած անգիր օրէնքով ընկերային էր: Իսկ այժմու կապիտալիստական հասարակութեան մէջ արտադրութիւնը ընկերային է, բայց արտադրութեան միջոցներու սեփականատիրութիւնը եւ արտադրոյթներու բաշխումը դարձեր է դասակարգային: Այս հակասութիւնը պատճառ եղած է որ հարստութիւնը կուտակուի փոքրամասնութեան մօտ եւ զրկանքը բաժին դառնայ մեծամասնութեան: Այսու կրնանք ըսել թէ ինչպէս գիտութեան նախնական ստղծերը մենք ընդօրինակեր ենք հին հասարակութիւններէն եւ զարգացուցեր ենք զանոնք, նոյնպէս եւ կամունական հին նախտարի պրութիւնն ալ այժմեան պայմաններու թելադրութեամբ մեզի տուած է կատարելագործեալ կոմունիստական սխաւէմի մը յատակագիծը, որու իրագործման նուիրուած են այսօր այսպէս կոչուած սոցիալիստական երկիրները:

Ուտեստ-հաւաք եւ որսորդութիւն, աշխատանքի բաժանում

Նախնական մարդը առաջին անգամ սկսած է հաւաքել ինչ որ ուտելիք էր, սերմեր, ընկոյզներ, արմատներ, պտուղ, մեղր, միջատներ եւ ձեռքով քանելիք փոքր կենդանիներ: Այս օրերու վերապրող նախնական ցեղերը այդ շրջանը անցեր են, մտեր են երկրորդ շրջանը ուր ուտեստի հաւաքման վրայ աւելցուցեր են խոշոր կենդանիներու որսորդութիւնը: Ասով կարելի է ըսել թէ նախնական մարդը երբ սկսաւ խոշոր կենդանիներու որսորդութեան այն առն ու սկսաւ աշխատանքի բաժանում: Կիները եւ երեխաները կը հաւաքէին վերեւ նշուած ուտելիքները (ընկոյզ, արմատներ, եւ այլն) իսկ մարդիկ կը գրապէին վտանգաւոր որսորդութեամբ եւ երբեմն ալ ցեղային կոիւններով: Ասկէ սկսաւ այդ մարդու գերազանցութիւնը, նահապետական շրջանը:

Տոտէմիզմ եւ կախարդութիւն

Նախնական մարդը սկզբնական շրջանին հասարակ կենդանիի նման պարագիտ էակ էր, ան չէր աշխատեր, այլ ուտեստ կը



փնտռէր ու գտածովը կը սնանէր. վերջէն է որ երբ հոգապարծութեամբ պարապեցաւ, սկսաւ աշխատիլ, արտագրել եւ իր արտագրոյթներով ապրիլ: Բայց որովհետեւ անխնայական զարգացած չէր տակաւին, մարդիկ մտածեցին իրենց բնասանեցուցած կենդանին կամ տունկը բազմացնելու միջոց մը գտնել: Ասով անոնք հնարեցին կախարդութիւնը: Յեղ մը իրեն օգտակար նկատած կենդանիին կամ տունկին վրայ իր ցեղին յատուկ տոտեմական նշան մը գրուէ, հաւատարմով որ տոտեմով կը քաջալերէր անոր ծագելուն ու բազմացումը: Այսպիսի մեծ խնամքով պատրաստուած ընկերային անդիր կանոններ ազգակցութեան, ուսելիքի եւ զարգարանքի մասնակցութեան համար մեղի ենթադրել կուտան որ քարէ զարաշրջանի վերջընթեր սխառէմը բաւականին բարդ մի սխառէմ էր:

Որքան տունն որ տոտէմի (տոտեմնէի) կանոնները ճշգրիտ կերպով կը պարտադրուէին ցեղի վերարտադրողութիւնը եւ ուսեստի պաշարը ազատէր էր: Այս պարագան աւելի զօրացուց տոտէմի հաւատքը, որով որոշ մարդիկ, կենդանիներ կամ առարկաներ դարձան նուիրական: Մագնիսը, օրինակ, որ երկաթը իրեն կը քաշէր, անշուշտ ունենալու էր մասնաւոր, անմեկնելի պարտութիւն մը: Մագնիսը եղաւ նուիրական առարկայ: Ասով հիմքը դրուեցաւ մագնիսական գիտութեան: Չինացիք մագնիսին շնորհիւ հնարեցին կողմնացոյցը:

Տոտէմական սխառէմը տակաւին պոյութիւն ունի այսօր շատ մը նախնական ժողովուրդներու մէջ: Անոր նախատիպ հետքերը որոնելով մենք գտնենք կը գտնենք նոյնիսկ քաղաքակիրթ երկիրներու մէջ, մասնաւորապէս կրօնքի եւ լեզուի ամէնէն պահպանողական շրջանակներու մէջ: Արդարեւ, ինչպէս թամսըն ըսած է, մեր պարծածած ազգակցական բոլոր տէրմիւնները (հայր, մայր, եղբայր, քոյր, հօրեղբայր, եւ այլն) տոտէմական ազգակցութեան տէրմիւններ են:

Ծիսակատարութիւն եւ դիցաբանութիւն

Նախնական մարդը քարէ զարաշրջանի վերջերը հանդիսութիւններ կը սարքէր ծնունդի, անուանակոչութեան եւ թաղման տունն: Անոր ունեցած ծանօթութիւնը շատ սահմանափակ էր, ատոր համար իր սարքած հանդիսութիւնը ունէր մասնաւոր մի խորհրդաւորութիւն: Ան ատով հիւսեց իր դիցաբանութիւնը որ ներկայ գիտութեան ուսումնասիրութեան առարկայ է: Դրախտի աւանդավէպը, օրինակի համար, որ կը ներկայացնէ նախնական մարդուն որսորդութենէ երկրագործութեան անցման շրջանը, փորձ մըն է ուր-

ւազձելու սեռի, գիտութեան ու անհնազանդութեան զազախարները, ինչպէս նաեւ Աւստրոնոյ բացարձակ իշխանապետութեան եւ սկզբնական մեղքի բմբունումները:

Դիցաբանութիւնները, հոգ չէ թէ ինչ տարբեր ցեղերու կողմէ յորինուած են, յաճախ խառնուած են իրարու եւ կողմած են տեսակ մը անյարակից հաւարակաց դիցաբանութիւն, որ գտնական փոփոխութիւններով եւ տւանդութեանց խողովակով ոչ միայն կրօնական հաւատալիքներու հիմքերը կազմած է, այլեւ ատաղձը եղած է գիտական թէորիաներու:

Նախամարդուն բողած ժառանգութիւնը

Նախնական մարդուն անխնայի եւ զազախարներու թուցիկ ահնարիկը զոր մենք ըրինք, բուսական է ցոյց տալու թէ որչափ յառաջդիմեց ան քարէ դարու վերջերը երբ սկսաւ գործածել իր մարդկային բանականութիւնը նիւթական գործիքներով բնութիւնը իր հսկողութեան տակ առնելու համար, եւ թէ ինչպէս իր կազմած հասարակութիւնը աւանդական անդիր օրէնքներով կրցաւ պահել եւ նոյն տունն սազմեր պատրաստել արդի գիտութեան բոլոր ճիւղերուն համար:





# ԲՐՈՆՋԷ ԴԱՐԱԹՐՋԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

Այժմ մենք պիտի ներկայացնենք բրոնզէ դարաշրջանը, այսինքն այն ժամանակաշրջանը երբ սկսաւ կանխազօյն գետեգրեայ քաղաքակրթութիւնը, որոշ անուններով՝ Եգիպտոսի, Միջագետքի, Հնդկաստանի եւ Չինաստանի քաղաքակրթութիւնը: Ասոնց իւրաքանչիւրին առանձնապէս չենք կրնար անդրադառնալ, բան մը որ դուրս կը մնայ մեր նիւթէն:

Գրեթէ ութը հազար տարի առաջ, սննդեղէնի արտադրութեան յեղափոխութիւն մը սկսաւ որ ամբողջապէս փոխեց մարդուն նիւթական եւ ընկերային կեանքի եղանակը: Որսորդութեան այնքան զժուարին անտեսութիւնը հարկադրեց որ մարդը ուրիշ ձեւով փնտռէ իր ուտելիքը, չին կամ նոյնիսկ արհամարհուած տեսակի ուտեստեղէնը, ինչպէս բոյսերու արմատները եւ վայրի խոտերու սերմերը: Այս հետապնդումը առաջնորդեց երկրագործական տեխնիկայի ուժղին հակումին, կրակի եւ ուժի օգտագործումով: Ինչպէս ուրիշ տեղ մեծ կերպարանափոխութիւն, այս մէկին ալ անջատ եւ յանկարծակիօրէն առնուած քայլ մը չէր, այլ աստիճանական միջադուցուած գիտերու մէկ արդիւնքը որ եկաւ սերմատու խոտերու մշակումը ծառայեցնել մարդուն: Հասարակութեան այս կերպարանափոխութեամբ մարդը կենդանական աշխարհը շահագործելու դերէն անցաւ եւ ստանձնեց արտադրողական անտեսութեան դործը:

## Երկրագործութիւնը

Չենք կրնար բսել թէ երկրագործութիւնն ու կենդանիներու ընտանեցումը սկիզբէն ի վեր միշտ ընկերացած են իրարու հետ, բայց հաւանական է որ մարդիկ նախ արօտատեղիներու մշակութեամբ զբաղած են, յետոյ երկրագործութեամբ, ուրիշ խօսքով՝ կենդանիներու ընտանեցումին յաջորդել է երկրագործութիւնը, որովհետեւ առանց կենդանիներուն կեր հայթայթելու, անկարելի էր կենդանիներ պահելը: Առաջին ընտանի կենդանին եղած է շունը որ մսակեր կենդանի է: Մարդիկ որսորդութեան ստեն շան բաժինը կրնային տալ, եւ շունը եղած է որսորդին հաւատարիմ ընկերը: Ոչխարը, այծը, կովը, եղբ վերջէն ընտանեցուած են: Գալով ցորենի մշակութեան, այս գիւտն ալ եղած է զիպուածի արդիւնք: Կիները վայրի ցորենի հասկերը հաւաքած ատեն տեսան որ մաս մը

ցորենի հատիկներ բնականօրէն ցրուած են հոս հոն եւ անոնք յետոյ նկատեցին որ անոնցմէ կ'արտագրուէր բերք: Մարդիկ սակէ ցորեն ցանելու գաղափարը ունեցեր են. անոնք իրենց սննդեղէնէն յայտնի գոհողութիւն մը ըրին եւ յաջորդ եղանակին տասնապատիկ բերք ստացան: Այսպիսով ծագեցաւ երկրագործութիւնը, որուն մէջ կ'ինն էր առաջնորդող ուժը: Ասիկա մայրապետական շրջանն էր, որուն յաջորդեց նահապետականը:

Երկրագործութիւնը նոր տեսակի հասարակութիւն մը յառաջացուց որ որակական տեսակէտով տարբեր ըլլալով հանդերձ քանակական տեսակէտով ալ տարբերեցաւ, որովհետեւ բազմացաւ թիւը այն մարդոց որոնք նոյն աղբիւրներով կրնային ապրել նոյն հողին վրայ: Որսորդութիւնը իսկապէս մշտական զբաղում մըն էր, բայց երկրագործութիւնը՝ ոչ. անիկա տարուան որոշ եղանակներուն միայն մարդիկը զբաղ կը պահէր. բնակչութեան մեծամասնութիւնը աշնան վերջի ամիսներուն եւ ձմրան ապառ էր, զբաղում չունէր: Այսպիսով երկրագործութիւնը իրեն հետ բերաւ նոր գործի կարելիութիւններ եւ նոր խնդիրներ:

## Չեղագործութիւնը դաշտին ու տան մէջ

Երկրագործութիւնը ինքնին բերքահաւաքէն մինչեւ ուտելիքի պատրաստութիւնը նոր գործեր ու նոր տեխնիկ կը պահանջէ, ինչպէս հերկել, մարկեղել, ցանել, հնձել, մաքրել, ամբարել, աղալ, եփել, եւայլն: Ասոնց հետ կուգայ ուրիշ օժանդակ տեխնիկներու շարք մը, մանեկ, հիւսել, բուրդի եւ վուշի արտադրոյթները գործածելի դարձնել: Հին քարէ դարաշրջանին մարդոց արդէն ծանօթ էր հիւղակներու շինութիւնը, բայց միայն այն տեղերը ուր մտայուն բնակութիւն հաստատուած էր: Այժմ, երկրագործական հասարակութեան մէջ հիւղակները տուներու փոխուեցան եւ ընդհանրացան: Ամէն ինչ նորութեան զրոյժը կը կրէր: Իրական սեփականութեան գաղափարը արմատացաւ մարդոց մտքին մէջ. առաջին ստիժով կոմունական, յետոյ այդ կոմունական գաղափարը փոխուեցաւ անհատականի: Միասկան փոխանակութեան տեղերու մէջ սկսաւ առարկաներ փոխանակելու ձեւի առոււտուրը: Անհատներ այդ պարագային իրենց արտադրոյթներուն վրայ փոխանակութեան պահուն զատորոշուած սակարկութեան մտան, սակէ յառաջացաւ անհատական սեփականատիրութիւնը, որուն հետեւեցաւ հարստութեան անհատատիրութիւնը: Յաջորդող շրջանին երեւան եկան ընկերային դատակարգիքը:



Գործելը

Երկրագործութիւնը մարդոց մէջ ընկերային կեանքի նոր զարգացման մը ներմուծեց, գործելու զարգացումը: Որսորդութեան ատեն մարդը իր բռնած որսը իրեններուն հետ շուտով կ'ուտէր կը վերջացնէր: Բայց երկրագործութեան մէջ հանգամանքները տարբեր էին. ինամուտ եւ հաշուի առնուած աշխատանք պէտք էր: Մարդիկ ընկերաբար հողը հերկելէ եւ սերմը ցանելէ յետոյ ուրիշ գործեր պիտի ընէին եւ սպասէին մինչեւ բերքահաւաքի օրերը: Որսորդութենէ երկրագործութեան անցնելու շրջանը զիցարանութեան մէջ պատկերացուած է գրախտէն սրտաքուտելու հրաշագէտութիւնը: Մարդիկ համոզուեցան թէ քրտինք թափելով իրենց հացը ճարելու էին: Ասով հիմքը զուեցաւ ընկերաբանութեան:

Գիտութիւնը եւ նոր ձեռագործութիւնը

Երկրագործութեան մէջ նոր տեխնիկներու հետեւանքով յառաջացան մատեմատիկական եւ մեքենայիական զարգացումներ: Կողովներ հիւսելու ատեն մարդիկ գիտնալու էին թէ ինչ հաստութեամբ, ինչ երկարութեամբ եւ քանի ճիւղեր ունենալու էին ձեռքի տակ: Նոյնպէս ատեն մը շինելու ատեն անոնք նախապէս սրտաքուտելու էին ասան յատակապիծը, աղիւնները շինելու էին միաձեւ, պատերը կանգնեցնելու էին ուղիղ: Կիները հիւսելու ատեն պիտի գիտնային նախ բամբակի կամ բուրդի թելերը նոյն հաստութեամբ մանել: Մանելու գործով անոնք հնարեցին անիւր: Կաւէ ամաններու շինութեամբ մարդիկ ոչ միայն ուտելիք պատրաստեցին ու պահեցին, այլեւ գտան մետաղներ հալեցնելու եղանակը: Մարդոց ու կանանց հագուստ պէտք էր եւ հագուստները միազոյն ըլլալու չէին. գոյնի եւ զեղեցիկութեան ճաշակը բնածին է: Մարդիկ հնարեցին ներկերու տեսակները: Այս բոլոր բարդ գործերու ընթացքին աննշմարելի կերպով հիմքը կը դրուէր երկրաշափուքեան, մատեմատիկի եւ ֆիզիքաբանութեան: Պղնձի զարաշրջանին մարդը գտաւ իր հաւասարակշռութիւնը եւ որոշ չափով մօտեցաւ բնութեան հսկողութեան գերին:

Կրօնի ձեւակերպումը

Իրոնցի մարդը թէեւ հողին կապուած բաները իր հսկողութեան տակ առած էր, բայց իր գլխուն վերեւ կամար կապած երկինքին չէր կրցեր մօտենալ. իսկ այդ երկինքը շատ մեծ դեր կը խաղար իր կեանքին հետ: Երկինքի արեւն էր որ կը սաքցնէր երկիրը, կ'աճեցնէր բոյսերը, կը հասունցնէր պտուղները. յետոյ՝ երկինքէն

էր որ ամպերէն անձրեւ կը տեղար եւ կը ջրէր իր արտերը: Բայց այդ երկինքը երբեմն շատ ժլատ կը զսանար, անձրեւ չէր շնորհեր, երբեմն ալ հեղեղանման անձրեւով կը փճացնէր իր աշխատանքը: Եւ բրոնցի մարդը մտածեց սիրաշահիլ այդ երկինքը: Եւ ահա դիւթանքի արուեստը: Բայց դիւթանքով ամէն ինչ չէր վերջանար. սկսաւ ծիսակատարութիւնը եւ զոհարելութիւնը: Ասով սաղմուտուեցաւ ու յետոյ զարգացաւ կրօնքը, որուն հետ երեւան եկան կրօնական զասակարգը եւ ծիսակատարութիւնները կանոնաւորող եւ ընկերային ներդաշնակութիւնը պահպանող կառավարութիւնը:

Գիւղական կուլտուրա

Իրոնցի զարաշրջանին տնտեսական եւ կուլտուրական յառկանչական միաւորը գիւղն էր: Պէտք է գիտնանք թէ զարեւ անցած ըլլալու են որպէսզի տեխնիկական եւ տնտեսական գործողութեանց փոխ-ազդեցութիւնները ապահովեն գիւղի գործնական անկախութիւնը: Միայն մի բան պարզ է որ քաղաքակրթութեան հին օրբանները եղած են դեպքերու հովիտները. Նեղոսի հովիտը, Նիքատ-Տիգրիսի հովիտը, Ինդոսի ու Գանգէսի հովիտները, Գեղին դեպի հովիտը, եւայլն:

Քաղաքի ծագումը

Այն ինչ որ քաղաքակրթութիւն կը կոչենք, սովոր ենք նկատել իրր թէ ան ծագում առած է քաղաքէն: Բայց քաղաքը իրապէս քաղաքակրթութեան մայրը չէ եղած, այլ քաղաքակրթութեան պրտուղը: Քաղաքը գիւղէն կը տարբերի այն բանով որ անոր բնակիչներուն մեծ մասը հողին վրայ աշխատելով սննդեղէն արտադրողներ չեն, այլ սրաշտօնեաներ, արհեստաւորներ, առեւտրականներ եւ գործաւորներ: Նախ քան քաղաքի կազմաւորումը, երկրագործութեան տեխնիկան հասնելու էր այն աստիճանին որ անոր յաւելելալ արտադրոյթներով քաղաքի ոչ-արտադրող բնակչութիւնը կարող ըլլար ապրիլ: Ուրեմն կրնանք ըսել թէ գիւղը քաղաքին սննդատուն էր: Քաղաքը աւելի լաւ սրաշտպանուած էր քան գիւղը, ասոր համար աստուածները քաղաքներու մէջ բնակիւ են:

Քաղաքները երբ կազմուեցան, նոր բաժանում մը տեղի ունեցաւ, բաժանում մը քաղաքին ու գիւղին միջեւ. առաջինը հրամայողի, առաջնորդողի դերով, վերջինը հետեւողի, համակերպողի դերով: Եւ իրերու այդ դրութիւնը շարունակուեցաւ զարեւրով եւ հասաւ մինչեւ մեր օրերը:



Տան Էվոլյուցիան

Առաջին անգամ քաղաքները գիւղերէն շատ չէին տարբերիր. բազմաթիւ հիւղակներ իրարու քով, իւրաքանչիւրը ունէր բակ մը կենդանիներու համար: Յաճախակի պատահած հրդեհները պատճառ եղան որ մարդիկ այլևս ծառի ճիւղերով հիւղակներ չէինէն, այլ գործածէն աղիւս, քար: Ամէնէն առաջ աստուածներու տաճարները ապահովութեան տակ առնուեցան. գործածուեցան յղկուած քարեր: Աստուածներու շունչով հիմք դրուեցաւ բարձր տեսակի ճարտարապետութեան, արձանադործութեան, քանդակագործութեան, նկարչութեան եւ նուագածութեան: Տաճարները կը շինուէին քաղաքի կեդրոնական մասին մէջ:

Տուներու շարքին, մէջ ընդ մէջ ուղիղ եւ մերթ խաչաձևուող փողոցներ, իսկ տաճարին մօտ՝ շուկայի հրապարակը: Քաղաքի պաշտպանութեան համար շինուեցաւ պարիսպ, իսկ ներքին մասին մէջ բերդ մը, ուր կը հսկէին զինեալ մարդիկ:

Աստուածները եւ կրօնաւորները

Քաղաքը կեդրոնացաւ տաճարի մը բոլորաթիւր ուր կը բնակէր աստուած մը իրեն ծառայող կրօնաւորներով:

Աստուածներու հիմնարկութիւնը էպէս ծագում առած է քաղաքային կեանքէն: Բայց աստուածներու գաղափարը եկած է գրակէն, առհմային ուրիշներէն, որոնք անցած են օգտագործելի հարատւութեան ազդեցութիւնը մէջէն: Ասոր համար այդ աստուածը պիտի ըլլար կենդանիի մը կերպարանքով, խոյ մը, եղ մը եւ կամ երկու կենդանիներու միացած կերպար մը: Առաջին աստուածները որոնց մենք կը հանդիպինք, հինգ հազար տարի առաջուայ սուամերեան լեկենտաններու մէջ մարդու կերպարանքով էին: Անոնք կ'ունենային իրենց ժողովները, իրենց վէճերն ու կռիւները, ճիշդ ու ճիշդ գիւղական աւազանիներու նման: Ամէն քաղաքի մէջ ուշ կամ կանուխ միայն մէկ աստուած մնաց արիւսակառոյց. միւսները քննուեցան եւ կամ երկրորդական գիրքի անցան: Քաղաքը երբ մեծցաւ ու բազմամարդ դարձաւ, աստուածը բաժնուեցաւ ցեղային եւ գիւղական սոցիոլոգիանէն եւ իր Փիղիքական ինքնութեամբ ունեցաւ իր աւելը (տաճարը) եւ իր կրօնաւորներու ձեռքով սկսաւ վարել իր հողերն ու կալուածները: Սկիզբէն այս կրօնականները քաղաքը կը կառավարէին եւ ամենամեծ բաժինը կը վերցնէին իրենց աստուծոյն համար: Անոնք հին քարէ դարու բժիշկներուն ու զեղագործներուն ժառանգորդներն էին, երկրագործական հասարակութիւններու կախարդ թաղաւորները, թէև Եգիպտոսի մէջ փարա-

ւոնն էր որ կը մնար որպէս կախարդ թաղաւոր, գերագոյն իշխան եւ բարձր կրօնական: Կրօնականները այսպիսով կազմեցին վարչական դասակարգ մը. անոնք էին որ կը կարգադրէին ջուրի եւ սերմի բաժանումը, կ'որոշէին սերմանելու եւ հնձելու օրերը. նոյնպէս անոնք էին որ կ'ամբարէին ցորենը եւ կը հաւաքէին ու կը բաշխէին հօտերը իրենց արտադրոյթներով:

Տաճարի ծառայողներ եւ ձեռագործ արհեստաւորներ

Տաճարներու վերաբերեալ Փիղիքական գործերը կրօնաւորները իրենք չէին կրնար ընել, թէև խորհրդանշական ձևով պատկերապիւրներ ցոյց կուտան որ փարաւոն մը հողը կը հերկէ, կամ սամարեան թաղաւոր մը կողով կը հիւսէ: Տաճարի գործաւորներ պէտք էին, որոնք յաւելեալ արտադրոյթները պիտի հաւաքէին, ամբարէին եւ պահպանէին: Տաճարը եղաւ հիմնարկութիւն մը որ պէտք ունէր զանազան շէնքերու. ոմանք ամբարելու համար, ոմանք աշխատելու համար, ոմանք սօնախմբութեանց, ոմանք ծխակատարութեանց համար: Աստուծոյ սեղանը պէտք էր որ լաւ սարքուած ըլլար: Ի հարկէ, հասկնալի է, անկէ կ'օգտուէին պարագիտ կրօնաւորները: Այս բոլոր գործերուն համար պէտք էին զանազան գործաւորներ, որմնագիրներ, քարակոփներ, նկարիչներ, խոհարարներ, մսագործներ, հացագործներ, հիւաներ, եւայլն: Առաջին անգամ աշխատանքի բաժանումը սկսաւ այս ձևով երբ մարդիկ հողէն անջատուեցան եւ կապուեցան տաճարի գործերուն: Աստուածներու համար կը հաւաքուէին տեճնաւորներ բաները: Չեռագործ արհեստաւորները երբ աստուածներու համար կը գործէին, ամէն կերպ կ'աշխատէին զարգացնել իրենց տեխնիկան:

Այս շրջանին նոր ձեռագործ արհեստաւորներ երեւան եկան. ասոնք էին ակնագործներ եւ մետաղագործներ:

Դասակարգային բաժանումով հասարակութիւն, գերիներ եւ ֆարսեր

Մինչև հիմա շատ քիչ բան գրուեցաւ այն սկզբնական կերպարանափոխութեան պրոցէսի շուրջ որ տեղի ունեցաւ երբ գիւղական անտեսութիւնը փոխուեցաւ քաղաքային անտեսութեան: Բայց իրողութիւնը կայ ու կը մնայ այն որ քաղաքային անտեսութեան երևումով արդէն կը գունաւորուին դասակարգերը: Համուրապիի օրինազրքին մէջ, օրինակի համար (1800 Ն.Ք.) մենք կը գտնենք հատուցման պատժական հետեւեալ օրէնքները.

«Եթէ մարդ մը ուրիշ մարդու մը աչքը կուրցնէ, անոր աչքը պէտք է հանուի: Եթէ մէկը ուրիշի մը սուկորը կը փշրէ, անոր



ուսկորը պէտք է փշրուի: Եթէ մէկը կը վնասէ ազատ մարդու մը աչքին, կամ կը փշրէ ազատ մարդու մը ոսկորը, պէտք է վճարէ մէկ մասնա արծաթ: Եթէ մէկը վնասէ մէկու մը գերիին աչքին կամ փշրէ ուրիշ մը գերիին ոսկորը, պէտք է վճարէ կէս մասնա արծաթ»:

Այս օրէնքներէն կը հետեւցնենք թէ երեք աստիճաններ կային մարդոց մէջ: Մեծ մասով հին քաղաքներու մէջ կը տեսնենք քաղաքացիներ որոնք նայած իրենց հարստութեան բաժնուած էին կարգերու, ներառեալ կրօնաւորները: Կային վաճառականներ եւ ազատ ձեռագործ արհեստաւորներ, կային նաեւ անական գերիներ եւ քաղաքէն դուրս գիւղացիներ որոնք տաճարի ճորտերն էին:

Դասակարգային հասարակութեան դատորոշումը կարելի է Լեյթալբարար ըսել թէ աւելի ուշ երեւան եկաւ Յունաստանի մէջ:

Առուտուր եւ վաճառականներ

Տնտեսական անհաւասարութիւնները աւելի շեշտուեցան եւ անական դարձան առուտուրով որ երեւան եկաւ ծխակաւարութեանց փոխանակութենէն եւ ի վերջոյ եղաւ տեսակ մը անհրաժեշտութիւն: Առաջին անգամ առուտուրը կը կատարուէր իրերու փոխանակութեամբ, յետոյ որպէս արժէքի հիմնադրի հրապարակ գրուեցաւ կովը կամ եզը, ապա փոխանակութեան գիւրութեան համար գործածուեցան պատեաններ, սակի, արծաթ, եւ ամէնէն՝ վերջը՝ դրամը: Դրամի գործածութիւնը սկսաւ երկաթի դարաշրջանին երբ պետութիւնը դարձաւ տիրող հիմնարկութիւն:

Առուտուրը յառաջ տարին վաճառականները որոնք սկզբնական շրջանին թաղաւորական պաշտօնեաներ էին: Թաղաւորին տաճարը գլխաւոր ամբարանոց էր եւ պանքա որուն շուրջը կը դառնար երկրի անտեսական կեանքը: Հոն կը հաւաքուէին տուրքերը եւ անկէ կը ցրուէին ուտեստեղէնն ու հում նիւթերը: Զեռագործ արհեստաւորները տեսակ մը ճորտեր էին, կը ստանային ուտեստեղէն եւ հում նիւթեր եւ կը վերադարձնէին իրենց ձեռագործական արտադրութիւնները: Աւելի կանուխ այս արհեստաւորները անկախ էին, կազմեր էին արհեստակցական միութիւններ. իրենք կը գնէին հում նիւթերը եւ ձեռագործական արտադրութիւնները կը ծախէին իրենց հաշուին: Այս շրջանին, ընչպիսիք մարդիկ կը ծախէին իրենց աշխատութիւնը. պէտք ունեցողը կը գնէր: Անոնք որ իրենց պէտք եղածէն շատ աւելի ունէին, մեծ տոկոսով փոխ կուտային կարիքի ներքեւ ճնշուողին: Փոխ առնողը երբ իր պարտքը չէր կրնար վճարել, որպէս գերի կը ծախուէր:

Օրէնք եւ պետութիւն

Այս իրադարձութեանց ընթացքին օրէնքը հրապարակ դալու էր արգիւելու այն գործառնութիւնները որոնք պատճառ կը դառնային տաճարի կորուստին կամ արինահեղութեան:

Դրուած օրէնքները առանց ուժի չէին կրնար գործադրուիլ: Քաղաք մը ուր անհաւասարութիւններ կային, ուժի իշխանութիւն մը կը պահանջէր խաղաղութիւն պահպանելու համար: Միջադեպի քաղաքներուն մէջ, օրինակի համար, քաղաքացիներու խորհուրդը չէ՛մ յանդիման դանտելով ներքին ու արտաքին սպառնալիքի, յօժարեցաւ որ մարդ մը իշխող դառնայ որպէս տաճարի գործերու գլխաւոր վարիչ, կամ որպէս պատերազմական հրամանատար, կամ որպէս աստուծոյ ներկայացուցիչ: Եղիպտոսի մէջ աստուածային կրօնապետ-թագաւորը, փարաւոնը, պետութեան գլուխն էր: Օրէնքները կը գործադրուէին, տուրքերը կը հաւաքուէին տաճարի կրօնաւորներէ բաղկացած մարմնոյ կողմէ օստիկանական ուժով: Թագաւորին արուած էր պատժելու իրաւունքը: Անոր թիկունքային ուժն էր վերին դասակարգը որ բաղկացած էր հարուստներէ եւ կրօնաւորներէ:

3. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՏԵՆԻԿԱՆ

Մետաղներու գիւտը

Գետեղերեայ երկրագործութիւնը քաղաքներու կազմաւորման նպաստող անտեսական առաջին արդական էր: Գլխաւոր տեխնիկական յառաջգիմութիւնը որ ընկերացաւ անոր մետաղներու գործածութեան գիւտն էր, մասնաւորապէս պղինձը եւ անպի խառնուրդով բրոնզը, որուն անունով կոչուեցաւ այդ դարաշրջանը, բրոնզի դարաշրջան: Նախապէս մետաղները այնքան հազուադիւրս էին որ մարդիկ անոնց կատրները կը գործածէին որպէս զարդաստոր համար անոնց բոլոր գործիքները քարէ շինուած էին:

Մետաղագործութեան զարգացումով ոչ միայն զարգացաւ երկրագործութիւնը (որովհետեւ հերկելու համար շինուեցաւ բրոնզէ արօրը եւ մանկաղը) այլեւ հանքագործութիւնը: Բրոնզը սրովհետեւ աւելի կարծր էր քան պղինձը, ընդհանրացաւ բրոնզի գործածութիւնը: Գործիքներ, անոթներ շինուեցան բրոնզով:

Զարգացողական այս շրջանին արագօրէն զարգացան յարակից արհեստները, ինչպէս կաղապարումը, հրազօղումը, մածուցումը, կցարկումը: Ասոնց հետ զարգացաւ նաեւ հարուստ ու բարդ



զարգեղէններու շինութեան տեխնիկան. շինուեցան գեղեցիկ անօթներ, արձաններ:

Մասնազէտ արհեստաւորներու դասակարգը մը երեւան եկաւ որ անջատուեցաւ հասարակ ժողովուրդէն:

Մետաղեայ գործիքներու գործածութեամբ ուրիշ ճիւղ մըն ալ զարգացաւ, հիւսնութիւնը, որովհետեւ բրոնզով շինուեցան դանակներ, կայիներ, սղոցներ եւ գլխոցներ:

Առաջին մեքենաները, մասնաւորապէս անիւներով կառքերը եւ ջրանիւները, հնարաւոր էին միայն մետաղով:

Փոխադրութիւն

Քաղաքները երբ կազմուեցան, անհրաժեշտութիւն ստեղծուեցաւ քաղաքային բնակչութեան պէտքերը բաւարարելու գործին զարկ տալ: Քաղաքի հազարաւոր մարդոց համար ուտելիք պէտք էր եւ ուտեստեղէնը գիւղական շրջանէն կուգար: Անդին, միւս քաղաքներուն հետ իրերու փոխանակութեան (առուտուրի) խնդիր կ'որ: Երկու պարագայի տակ ալ փոխադրութեան գծուարութիւնը հարթելու պահանջը կը շեշտուէր: Այդ գծուարութիւնը հարթուեցաւ երբ մարդիկ զարգացուցին փոխադրութեան միջոցները. նաւակին յաջորդեց նաւը, բեռնակիր կենդանիին յաջորդեց կառքը: Փոխադրութեան միջոցներու զարգացումով քաղաքակրթութիւնը նոր թափ ստացաւ. զարգացաւ վաճառականութիւնը, վաճառականութեան հետ յառաջացան զաղափարներու զաղթականութիւնն ու փոխանակութիւնը:

Վաճառականութիւնը հնարեց շտիկները եւ կշիռները. բնականօրէն ասոնց հետեւելու էր հաշուելու եւ գրելու արուեստը:

Թիւեր եւ մեքենագրեր

Նախ քան չափը հիմնականացնելը կարեւոր էր իրերու թիւը նշանակելը, ըլլան անոնք արջաններ կամ արմատիքով լեցուն կողովներ: Առաջին անգամ երկար փայտի մը վրայ կտրուածքներով կը նշանակէին թիւերը: Բայց ատանկով իրերը իրարմէ չէին դանազանուեր. մարդիկ հնարեցին պատկերագիրը: Կաւէ ամանի մը վրայ կ'ը մը պատկերին քով տասը գլի կը նշանակէր տասը եզ: Պատկերագրերը անունի տեղ կը գործածուէին: Եզիպատական մեհնագրերը այդ տեղէն ծագում առին: Իրական ալբուրէնը հնարեցին փրնիկեցիք երկաթէ դարուն: Ուրեմն կրնանք բռել թէ թուարանութիւնը աւելի կանուխ ծագում առաւ քան գիրը:

Կանխագոյն գիտութեան դասակարգային բնոյթը

Այսու պարզ պէտք է ըլլայ որ գիտական յառաջդիմութիւնը կախում ունէր անոնցմէ որոնք վարչութեան ղեկավարներն էին. ուրեմն, սխալած չենք ըլլար երբ բռնեք որ թէ գիտութիւնը եւ թէ տեխնիկան զարգացնողները կրօնականներն էին, որովհետեւ անոնք էին որ ստանձներ էին արձանագրելու եւ հաշուելու գործերը: Մեհնագրերը կրօնականներու հնարած գրերն էին:

Գիտութիւնն ու ուսումը նորակազմ դասակարգային հասարակութեան մէջ կը մնային սրպէս բարձր ճիւղեր, որոնք մատչելի չէին հասարակ ժողովուրդին: Մատեմատիկը, աստղաբանութիւնը եւ ղեզազիտութիւնը սրպէս հին քաղաքակրթութեան բարձրագոյն գիտութիւններն ալնքան հմայեցին յոյները եւ յետոյ մինչեւ միջին դարու ժողովուրդները որ անոնք բարձր դասակարգի մարդոց գրադումի առարկաները զարձան: Ասոնցմէ նուազ կարեւոր գիտութիւններ էին քիմիարանութիւնը եւ սալմնարանութիւնը:

Քաղաքներու կազմութենէն յետոյ տեխնիկան բաժնուեցաւ գիտութենէն. վարպետ, հնարագէտ արհեստաւորները անջատ դասակարգ կազմեցին, բայց անոնք չկրցան ազատուիլ գիտականներու իշխանութենէն: Կրօնականները գահնկէց չեղան:

Կախարդութիւնն ու գիտութիւնը

Տեխնիկական յառաջդիմութեան հետ կախարդութիւնը աւելի կարեւորութիւն ստացաւ: Կրօնականները երբ տեսան թէ տեխնիկայի զարգացումով իրերու բնոյթը կը պարզուէր մարդոց, իրենց ղերելիսող զիրքը հաստատուն պահելու համար թափ տալին կախարդութեան: Մարդոց առողջութիւնը պահել, գործի մը յաջողութիւնը ապահովել, աղէտներու առջեւը առնել, աստուածներու բարկութիւնը մեղմացնել, այս գործերը տեխնիկայի չէին պատկաներ, այլ ոգիներու, եւ ոգիներու գիտութիւնն էր կախարդութիւնը: Կրօնաւորները իրենց ծէսերուն համար հիւսեցին խորհրդաւոր հանգերձներ եւ հնարեցին խորհրդաւոր նշաններ: Այդ խորհրդաւորութիւններն ու նշանները տարբեր ձևերով մինչեւ այս օրերը կը շարունակուին կրօնական արարողութեանց մէջ:

Առաջին ֆաղափակրթութեան յաջողութիւնն ու ձախողանքը

Վեր անելով բրոնզի դարու քաղաքակրթութիւնը սրպէս ամբողջութիւն, պէտք է բռնել թէ տեխնիկական տեսակէտէն բաւական մեծ յառաջդիմութիւնն ունեցաւ: Այս օրերուն մեր գործածած աթոռները, թիկնաթոռները, սեղանները հինգ հազար տարի առաջ



եղիպտացի հիւաններու շինածներէն չեն սարքերիր: Մենք նոյն ու-  
տելիքները կը գործածենք, մեր հազուատները նոյն նիւթերէն շին-  
ւած են, միայն ձեւով կը տարբերին. անոնց մէջ մտած է արուես-  
տի նրբութիւն: Բայց դիւաներ կան որոնց զազանիքէն մինչև ախոր  
քաղաքակիրթ մարդկութիւնը կեռ չէ քափանցեր. օրինակ՝ գմբու-  
սումը, առանց վերամբարձ մեքենաներու բուրգերու կառուցումը,  
ներկեր որոնք զարերով իրենց գոյնը պահած են եւ չեն գունատած:  
Ասոնք հին քաղաքակիրթութեան գիտական յառաջիմութիւններն  
են: Բայց այդ հին քաղաքակիրթութիւնը տեսականորէն չմտաց յա-  
ռաջիմութեան ճամբուն վրայ: Եղիպտոսի, Միջագետքի, Հնդկաս-  
տանի եւ Չինաստանի բարգաւաճ եւ քաղաքակիրթ հովիտները հա-  
զիւ մի քանի դարեր պահեցին իրենց խաղաղ շրջանի յառաջիմու-  
թիւնը, անկէ յետոյ յաջորդեցին անշարժութիւնը եւ ուժգին ցրն-  
ցումները: Ներքին խռովութիւններ, բարբարոսաց արշաւանքներ  
պատճառ եղան որ մէկ հարստութեան շրջանին յաջորդէ ուրիշ մը:  
Բարենորոգումներու փորձեր եղան, բայց անոնք չըջազարձի ան-  
կիւնաքար մը դրին ու անցան:

Պատերազմ

Քաղաքային անտեսութեան անհաւասարակչիւ հանդամանքը  
կազմակերպուած պատերազմի դուռ բացաւ: Տեղական երկրա-  
գործ բնակչութեան շահագործումը, որ խաղաղ միջոցներով յառաջ  
կը տարուէր, մէկ կողմէ կ'աւելցնէր քաղաքային բնակչութիւնը,  
միւս կողմէ քաղաքի սահմանները ընդարձակելու պահանջ կը ստեղ-  
ծէր: Իսկ այս երեւոյթը միակ քաղաքի մը երեւոյթը չէր. հաւա-  
սարապէս բոլոր քաղաքները գրեթէ նոյն անտեսական սեղմումի  
տակ հարկսուրբուած էին իրենց խաղաղ առևտրական յարաբերու-  
թիւնները մէկ կողմ թողուլ եւ առանձին եւ կամ ուրիշ քաղաքներու  
հետ դաշնակցելով աւելի հզօր կամ աւելի հարուստ քաղաքի մը  
դէմ պատերազմի ելլել:

Պատերազմը իր բուն իմաստով քաղաքակիրթութեան արդիւնք  
է: Որսորդութեամբ զբաղող ցեղերն ալ յաճախ կը կոտէին իրարու  
հետ, բայց անոնց այդ կոխը աւելի պատահական էր քան թէ կող-  
մակերպուած արշաւանք: Յեղապետները երբեմն իրենք անձամբ կը  
մենամարտէին իրարու հետ եւ մէկուն պարտութեամբ կոխը կը  
վերջանար: Բայց քաղաքներու կազմութեամբ զբուծուած փոխուե-  
ցաւ: Չինուած բանակներ կազմուեցան. այդ բանակներուն համար  
զօրանոց պէտք էր, զինուորներ պէտք էին, զինուորներուն ուտելիք  
ու հազուստ պէտք էր եւ այդ հսկայական ծախսերը հոգացողը պի-

տի ըլլար ժողովուրդը: Եւ ասա հարկային դատան սխառէմը: Վե-  
րին դասակարգերը որոնք կառավարութեան հսկողութիւնը ստանձ-  
ներ էին, անտեսական զօրաւոր պատճառներ ունէին պատերազմով  
շահագրգռուելու: Անոնց հարստութիւնը կախուած էր ուղղակի ի-  
րենց շրջապատի ժողովուրդի շահագործումէն: Բայց որովհետեւ  
շահագործման այդ դաշտը իրերու բարդ հանդամանքի բերումով  
հետզհետէ անբաւարար կը գտնար, անոնք ուղեցին պայն աւելի  
ընդարձակել զբաւելով ուրիշ քաղաքներ եւ գիւղեր: Իսկ այդ բա-  
նը հնարաւոր էր միմիայն պատերազմով:

Պատերազմը իր սարքաւորումով փոխեց կառավարութեան  
ու պետութեան բնոյթը եւ նկարագիրը: Պետութեան գլխաւոր անձը  
որ երկրագործութեան եւ հասարակական գործերու ղեկավարն էր,  
դարձաւ պատերազմական հրամանատար. կրօնապետը եղաւ միա-  
հեծան թագաւոր: Պատերազմը ուրիշ նոր արդիւնք մըն ալ յառա-  
ջացուց, իրական սեռի ճնշումը: Քաղաքակիրթութեան սկզբնական  
շրջանին կիները կարեւոր դեր ունէին մշակոյթի եւ վարչական  
գործերու մէջ: Երբ պատերազմը անհրաժեշտութիւն դարձաւ, կի-  
ներու վարչական գործառնութիւնը անցաւ մարդոց ձեռքը: Բայց  
անոնք դեռ եւս անական գերիներ չէին. այդ բանը աւելի ունեցաւ  
յետոյ երկաթի դարաշրջանին:

Պատերազմական տեխնիկա

Երբ պատերազմը բացառիկ երեւոյթ մը ըլլալէ աւելի մի  
տեսակ կանոն դարձաւ եւ քաղաքը սկսաւ բացորոշակի գանադան-  
ւիլ զիւղէն իր պաշտպանողական պարխապով ու աշատրակներով,  
տեխնիկայի ուղղութիւնն ալ հակեցաւ բանակի կարիքներու ազդե-  
ցութեան: Նոյնիսկ նորածագ զխառութիւնն ալ հետեւեցաւ այդ ու-  
ղեղծին: Հնարուեցան զինուորական մեքենաներ, օրինակի համար  
բարաններ եւ շարժուն աշատրակներ: Մարդիկ աշխատեցան զար-  
դացնել իրենց զէնքերը աւելի շատ մարդեր սպաննելու համար:  
Շինուեցան ճամբաներ, ջրանցքներ ու անտոխի բերդեր:

Առուտուրն ու կայսրութիւնը

Մասամբ պատերազմով, մասամբ առևտրական դաշնակ-  
ցութեան սխառէմով սկզբնապէս անկախ քաղաքային պետութիւն-  
ները իրարու հետ միանալով քաղաք մը ընտրեցին իրենց համար  
որպէս ուժի եւ իշխանութեան կեդրոն եւ հոն հաստատուեցաւ ախ-  
րոզ կայսրութիւն մը, ուր փոխադրուեցաւ նաեւ պաշտօնող աստ-  
ւածը եւ անոր ներկայացուցիչ թագաւորը: Այդպէս էր Մեմփիսը՝



Եղիպտոսի, Բարեւոյն՝ Միջագետքի մէջ: Ամանը, օրինակ, որ թւ-  
փէի ծխական աստուածն էր խոյի կերպարանքով, թեփէի կայսրու-  
թեան երեւումով եղաւ արեւ-աստուածը բազէի կերպարով, Աման-  
րա: Իսկ Մարտուք, Միջագետքի տեղական աստուածը, Բարեւոյնի  
զլխաւոր աստուածը եղաւ: Փոքրիկ թագաւորները երբ անհետա-  
ցան, փոքրիկ աստուածներն ալ անոնց հետ չքացան:

**Գերետիրութիւնը**

Քաղաքակրթութիւնը որքան որ կաշկանդուած էր զինուո-  
րական կարեւորութիւն ունեցող կեդրոններու մէջ, ան տակաւ կը  
տարածուէր ամէն կողմ: Քաղաքակրթութեան տարածման զուգըն-  
թաց բարբարոս ցեղերը շփման եկան կուլտուրական քաղաքներու  
հետ: Անոնք շատ բաներ ընդօրինակեցին եւ ասով փոխուեցաւ իրենց  
կենցաղը: Բայց անոնց այդ յարաբերութիւնը միշտ խաղաղութեան  
ճամբով չէր ընթանար. անոնք յաճախ արհամարհելով քաղաքակր-  
թութեան օրէնքները կը փորձէին ոտնձգութիւններ, որոնց հետե-  
ւանքով պատերազմը կ'ըլլար անխուսափելի: Բարբարոս ցեղերը  
կազմակերպուած բանակներուն չէին կրնար յաղթել: Այդ պատե-  
րազմներու ընթացքին պատերազմական գերիները բերուեցան քա-  
ղաքներու մէջ եւ ասկէ սկսաւ գերետիրութիւնը: Բայց պէտք է ը-  
սել թէ ասիական գերետիրական շրջանի սկզբնաւորութիւնն էր: Երկրի  
ամբողջ արապրոպութիւնը տակաւին յանձնուած չէր գերիներուն,  
որովհետեւ անոնք այնքան բազմաթիւ չէին եւ յետոյ փոքր հոգա-  
տիրութիւնը դեռ չէր անհետացեր: Երկաթէ դարաշրջանին էր որ  
գերետիրութիւնը ծաւալ գտաւ ու ընդհանրացաւ:

**Անկում**

Գերետիրութիւնը իր սկզբնական շրջանին մէջ իսկ քաղաքա-  
յին կեանքին վրայ գէշ հակազդեցութիւն յառաջացուց: Քաղաք մը  
երբ կախում ունէր գերիներէն, ասով կը պակսէր ինքզինք պաշա-  
պանելու կարողութիւնը: Գերիները յաճախ կը փախչէին եւ իրենց  
հետ կը տանէին պատերազմական տեխնիկային ծանօթութիւնները  
եւ միանալով թշնամիին կը փորձէին տապալել քաղաքի իշխանու-  
թիւնը: Այս պայմաններուն տակ մի քանի դարերու ընթացքին ա-  
րեւմտաքի քաղաքակրթութիւնը ինկաւ:

Այսպիսով բրոնզի դարու մարդիկը ճամբայ բացին երկաթի  
դարաշրջանի մարդոց:

# ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՐԿԱԹԷ ԴԱՐԱՇՐՋԱՆԻՆ

Երկաթի դարաշրջանը կ'ընդգրկէ մարդկային պատմութեան  
ու զիտութեան ամենակարեւոր բաժինը: Երկրորդ հազարամեակի  
կիսուն կարգ մը պատճառներ (տեխնիկական, անասական եւ քա-  
ղաքական) յառաջ բերին մի քանի գեակներէ ալ երկիրներու սահ-  
մանափակ քաղաքակրթութեան կերպարանափոխութիւնը եւ մէջտեղ  
հանեցին նոր քաղաքակրթութիւն մը որ իր մէջ առաւ Ասիոյ, Հիւ-  
սիսային Ասիոյ եւ Եւրոպայի մշակելի շրջանները: Այդ քաղա-  
քակրթութիւնը որ որ մտաւ ու զարգացաւ նուազ կարգապահական  
եւ խաղաղասիրական էր քան իր նախորդը: Երկաթի դարաշրջանը  
այնքան բազմաթիւ ու բազմապիսի յառաջգիծութիւններ ցոյց  
չտուաւ որքան բրոնզի դարաշրջանը: Բայց ան ինչ որ բրաւ աւելի  
զիւրաթեք էր եւ բանաւորական: Անոր բոլոր գործերը հիմնուած  
էին ածան եւ առատ մեծազի մը, երկաթին վրայ, ստոր համար  
անոնք ընդհանրացան աշխարհագրական տեսակէտով եւ իրենց կա-  
պեցին բոլոր գասակարգերը:

Այժմ մենք պիտի ներկայացնենք Միջերկրականի շրջանակին  
մէջ երկաթի դարը, երբ ծագեցաւ յունական եւ հռոմէական գա-  
սական (կլասիկ) քաղաքակրթութիւնը, թէ եւ Հնդկաստանն ու Չի-  
նաստանը եւս իրենց բաժինը բերին այդ քաղաքակրթութեան՝ դար-  
պացնելով մատեմատիկան, բնագիտութիւնն ու քիմիարանութիւնը,  
նոյնպէս հրապարակ հանելով նոր գիտեր, ինչպէս կողմնացոյցը,  
գառօզը եւ տարրութիւնը:

**Երկաթի դարու կուլտուրայի ծագումը**

Այն բարբարոսները որոնք հին արեւելքի բրոնզի դարաշրջա-  
նի կուլտուրայի վրայ յարձակեցան, մնայուն պետութիւններ չկր-  
ցան հիմնել իրենց սեփական հայրենիքին մէջ, երբ իրենց երկիր-  
ները ծածկուած էին անտառներով եւ չոր տափաստաններով. անոնց  
կը պակսէին հաստատուն երկրագործական միջոցները: Երկրորդ  
հազարամեակի կիսուն նպաստաւոր պայմաններ երեւան եկան չը-  
նորհիւ նիւթական եւ բնիկրային ազգակներու բազկացուցութեան:  
Այդ պայմաններէն մին այն էր որ բարբարոսական սոսճային հա-  
տարակութիւնները իրենց ներխուժումէն յետոյ կերպարանափոխ-



ւեցան քաղաքներու՝ գտաւարգային անտեսութեան ազդեցութեամբ, որուն կ'ընկերանար անհասկանալիութեան, առաջապետութեան եւ զէնքերու արտադրութեան ուժեղ շեշտաւորումը:

Երկաթի գիւտի յայտնագործումը

Երկաթը առաջին անգամ ուր եւ ինչպէս գտնուեցաւ, ասիկա դեռ զազանիք կը մնայ, բայց փաստուած է որ ԺԵ. դարուն (Ն.Ք.) կոփկասի հարաւային կողմը բնակող քաղիբիան մէկ ցեղը նշանաւոր եղած է երկաթագործութեան մէջ մինչեւ ԺԶ. դարը (Ն.Ք.):

Երկաթի ընդհանրացումը եւ անոր դիրքին գործածութիւնը վերջ դրաւ եզրպատական եւ բարեխոնական քաղաքակրթութեանց մեծ նաախրութեան: Ուրիշ երկու պարզափոխումներ արագացուցին իրերու ընթացատումը. անոնց մէկն էր ձիւորներու երեւումը, մարդիկ որոնք ընտանեցուցեր էին վայրենի ձին որ աւելի ուժեղ էր քան աւանակը: Իսկ միւսը նաւաշինութեան արագ զարգացումն էր, որուն կ'ընկերանար երկաթի գործածութեան տեխնիկան:

Երկաթի մետաղագործութիւնը

Պէտք է ըսել թէ երկաթագործութեան տեխնիկան երկար ու զժուարին փորձարկութեանց բովերէն անցնելուն համար շատ ուշ երեւան եկած է: Երկաթը հին ասեանները որպէս մետաղ լուրջ անյարմարութիւններ ունէր. մարդիկ չէին կրնար երկաթը դիրութեամբ հալեցնել եւ ձուլել, ինչպէս պղինձը եւ անպը որոնց բազալութեամբ շինեցին բրոնզը: Միայն Չինաստանն էր որ կրցած էր երկաթը ձուլել եւ պողպատ պատրաստել: Ատոր համար աւելի շատ բրոնզ շինուեցաւ ու գործածուեցաւ երկաթէ դարուն քան թէ բրոնզի դարուն: Լաւագոյն պողպատը շինողներն էին շինացիք ու հնդիկները, որոնք կ'արտածէին այլ պողպատը, անոնցմով կը պատրաստուէին գամասկեան սուրեր:

Երկաթի ներածումը դուզազիպեցաւ թափառող ժողովուրդներու շրջանին: Աւելի կամ նուազ բարբարոս ցեղեր եկան արեւելեան Եւրոպայէն կամ կասպեան շրջանէն եւ ԺԷ. դարուն տարածուեցան արեւելեան Միջերկրականի եզերքը: Նոյն շարժումները բրին հիթիթները, սիլիթացիները, պարսիկները եւ ասիական հնդիկները որոնք եկան Ասիայէն: Չիւտրներու եւ ծովի հեռ մտերմացած մարդոց արագաշարժութիւնն ու իրենց ունեցած գերազանց զէնքերու առատութիւնը կը դժուարացնէր արդէն իսկ հաստատուած բայց նոյն ստեն ներքին հակասութեանց հետեւանքով տկարացած հին

կայսրութեանց զինուորական զիմադրութիւնը: Կարելի է ըսել թէ այս վերջիններուն զինուորական ձախողանքը հին քաղաքակրթութեանն զժպոճ ժողովուրդներու բացասական զիրքաւորումին կապուած էր, ժողովուրդներ, որոնք աւելի կը համակրէին արշաւողներուն քան թէ իրենց կամապաշտ իշխաններուն: Դեռ աւելին. երկաթէ դարու այդ արշաւողները, անգամ մը որ հաստատուեցան իրենց գրաւած երկիրներուն մէջ, անմիջապէս ցոյց տուին որ իրենք կարող էին բերքաւատ երկրագործական եւ առեւարական հասարակութիւններ կազմել մինչեւ այդ ստեն ամուլ ու անպատու երկիրներու մէջ: Անոնց արշաւանքին հետեւանքը այն եղաւ որ գետեզերեայ հին քաղաքակրթութեան քաղաքական եւ անտեսական տիրապետութիւնը նուազեցաւ այն աստիճան որ նախկին քաղաքները (ինչպէս Բաբելոնը կամ Թեփէն) այլեւս մարդկային մշակոյթի կեդրոնները չէին ներկայացներ, թէեւ իրենց մշակութային, նիւթական եւ ոգեկան ասաղծները փոխանցեր էին նորեկներուն եւ նոյնիսկ անոնց մէկ մասը կրցան ստեն մը պահել ալ: Արիական հնդիկները, պարսիկները, յոյները եւ ի վերջոյ մակեդոնացիներն ու հռոմէացիները ժառանգորդները զարձան եզրպատական եւ բարեխոնական հին քաղաքակրթութեան: Չինաստանի դիրքը բացառիկ էր. ան չըջարատուած ըլլալով տափաստաններով, անապատներով եւ լեռնային շրջաններով, շատ քիչ հնարաւորութիւն կ'ընծայէր իր սահմաններէն ներս կամ դուրսը, բարբարոսական պետութիւններ հիմնելու: Այն բարբարոսները որ ներս մտան, չինական կուլտուրային մէջ լուծուեցան ու չքացան: Այսպէս, բրոնզի դարու կուլտուրան թէեւ երկաթի դարու տեխնիկայով փոխուեցաւ, բայց պահեց իր նախատիպ օրգանները:

Նաւերն ու առուտուրը

Երկաթէ դարու խոսվայոյ ժամանակներու ընթացքին ուրիշ մէկ երեւոյթ որ անհաշիւ կարեւորութիւն ունեցաւ մարդկային մըտածողութեան եւ մասնաւորապէս զիտութեան համար, ծովային ճամբաներու գործածութիւնն էր. եւ այդ անոր համար որ անոնցմով մշակոյթը աւելի արագ կը տարածուէր քան որ հին ատենները ցամաքային ճամբաներով: Աւելի կարեւորը, սակայն, այն էր որ ծովային ճամբով փոխադրութիւնը աւելի աժան էր քան ցամաքային ճամբով: Բրոնզի դարաշրջանին կրեացիները արդէն սկսեցին նաւաշինութեան: Անոնց կայսրութիւնը քայքայուեցաւ երբ փրենիկեցիները եւ յոյները Միջերկրականի եւ Սև Ծովու եզերքները հիմնեցին թանուկ նաւահանգիստներ: Ատեն մը ծովահանու-



թիւնը շահաւէտ գործառնութիւն գործաւ, բայց յետոյ ան վե-  
րածուեցաւ առեւտուրի, հետախուզութեան եւ գաղութարարութեան:

Ծովային ճամբաներու առաւելութիւնը, սակայն, ամբող-  
ջապէս չէր կրնար չքացնել ցամաքային ճամբաներու կարեւորու-  
թիւնը որոնք շինուեցան յետոյ պարսիկներու եւ հոսովմացիներու  
կողմէ: Անոնք վարչական եւ ղինուորական տեսակէտով կարեւոր  
էին քան թէ տնտեսական տեսակէտով:

Երկաթի դարու քաղաքները. քաղաքականութիւններ

Երկաթի դարու սկզբնական շրջանին շատ քիչ քաղաքներ մի  
քանի հազար բնակչութիւն ունէին, բացառելով բրոնզի դարաշը-  
ջանի այն քաղաքները որոնք մի քանի հարիւր հազար բնակչու-  
թեամբ նշանաւոր էին: Ե. դարուն երբ գերետիրութիւնը տարած-  
ւեցաւ, երեւան եկան նոր խոշոր քաղաքներ, օրինակի համար Ա-  
թէնքը որ 320.000 բնակիչ ունէր, որոնց 172.000-ը քաղաքացիներ  
էին, մնացեալները՝ գերիներ: Հոսովմի բնակչութիւնը կը հաշուէր  
մէկ միլիոն:

Երկաթի դարաշրջանի քաղաքները բրոնզի դարաշրջանին  
ստացած ժառանգներուն վրայ աւելցուցին նորութիւններ որոնց  
մէջ ամենակարեւորն է ապրանաջ արտադրողութիւնը որ էական  
մասը կազմէր տնտեսական աշխուժութեան:

Ասոյն առաւելութեանց գույրնթաց աւելցաւ պատերազմի  
վտանգը: Պատերազմները յաճախակի գործան: Ասով երկաթի դա-  
րու քաղաքներուն մէջ սկսաւ խորուիլ քաղաքականութիւնը: Քա-  
ղաքական պայքարներ յառաջացան որոնք ծնունդ տուին գանազան  
ձևի քաղաքական հիմնարկութեանց, ինչպէս քաղմիշխանութիւն,  
բոնապետութիւն եւ դեմոկրատի:

Դրամ եւ պարտք

Երկաթի դարաշրջանին երկրի մը ներքին անհանգստութիւն  
պատճառով եւ նոյն ասեւն անոր քաղաքական ազդեցութեան բն-  
դարձակման սատարով ուրիշ մեծագոյն գիւտը դրամն էր, որ է.  
դարէն սկսեալ համաշխարհային արժէքներու չափանիշը ըլլալու  
հանգամանքով բնկերային յարաբերութիւնները կապից գնելու եւ  
ծախելու գործողութեանց հա: Դրամը իր բնդհանրական եւ անա-  
նուն բնոյթով, ասանց մասնաւոր պարտաւորութիւններ հարկազ-  
րելու, երբ կուտակուեցաւ անհատի մը մօտ, անոր ապահովից իշ-  
խանութեան իրաւունք մը. ան կըլաւ իրաւասէր: Ասով ազատը  
զրկուեցաւ պաշտպանութենէ. եւ երբ ան դրամի պէտք ունեցաւ,

զիմեց հարուստին, անկէ դրամ փոխ առաւ եւ ինկաւ ծանր տակ-  
սով պարտքի տակ, իսկ երբ իր պարտքը չկրցաւ վճարել, ծախուե-  
ցաւ որպէս գերի:

Այսուհանդերձ երկաթի դարաշրջանի սկիզբին դրամի ճըն-  
շուղ իշխանութիւնը կրկնապատկուելով երեւան եկան բարեկարգու-  
թեան շարժումները եւ յեղափոխութիւններ, որոնք քաղաքի պա-  
մութեան ողնայարը կը կազմեն: Դասական դարաշրջանի վերջերը  
յունական եւ հոսովմէական կայսրութեանց օրերուն, դրամի իշխա-  
նութիւնը կը թուէր բացարձակ, բայց իր յաղթանակը իրերը առաջ-  
նորդեց տարածուն թշուառութեան ու անյուստութեան, որով ամ-  
բողջ անտեսութիւնը կործանեցաւ եւ յառաջացաւ աւելի պարզ արն-  
տեսութիւն մը, ֆէոտալական անտեսութիւնը ուր դրամը առաջին  
տուրիքով այնքան մեծ գեր չունէր:

Այրուբէն եւ գրականութիւն

Երկաթէ դարու զարգացողական կարեւորութիւնը կը շեշ-  
տուի անով որ մեհենագրերու եւ սեպաձեւ գրերու սիստէմին յա-  
ջորդեց փունիկեան այրուբէնը որ գրականութիւնը, ինչպէս եր-  
կաթը, աժան եւ գեմոկրատական դարձուց: Այրուբէնը ծագում ա-  
ռաւ ժողովուրդներու միջեւ առեւարական յարաբերութեանց ընթա-  
ցառումէն: Այս դժով զարգացաւ բանաստեղծութիւնը, պատմազ-  
րութիւնը եւ փիլիսոփայութիւնը:

Փիւնիկեցիք եւ եբրայեցիք

Երկաթի դարաշրջանի նոր պայմաններէն առաջին օգտուող-  
ները եզան սուրիական ծովեզերքի փիւնիկեցիները: Անոնք եզիպ-  
տուի եւ Ասորեստանի նման երկու մեծ իշխանական երկիրներու  
միջեւ կեդրոնական զիրք մը գրաւած ըլլալով մեծապէս կ'օգտուէին  
անոնցմէ եւ յետոյ իրենց ամէնէն պիտանի բանը որ նաւն էր, նա-  
ւաշինութեան համար ալ առատ տախտակ ձեռք կը բերէին Լիբա-  
նանէն: Ծովային փոխադրութեան միջոցով եւ իրենց հնարած այ-  
րուբէնով անոնք զարգացուցին առուտուրը եւ հաստատեցին գա-  
ղութիւններ ինչպէս կարկեղոնը: Բայց փիւնիկեցիները բարելոնական  
քաղաքաբարթութիւնը որդեգրելով նոր ու անարարտելի հաստատուն  
կայան մը չունեցան եւ նուաճուեցան հոսովմէացիներէն:

Հրեաները, սակայն, որ շատ մօտէն կապուած էին փիւնիկե-  
ցիներուն եւ բաժներ էին իրենց միջեւ եզիպտական եւ բարելոնա-  
կան կուլտուրան, մշակութային պատմութեան մէջ սարբեր դեր  
ունեցան: Անոնք եզիպտացիներու, հիթիթներու, փղշտացիներու եւ



աստիճանայիններու նման կուուսական ժողովուրդներու կեղբանք  
 գտնուելով, երբ անոնց յաջորդեցին պարսիկներն ու յոյները, իրենց  
 անկախութիւնը մնաց երեքուն ու անասոյց: Անոնց սպառնալից  
 միակ ճամբայ մը կար որ էր սպառնալի իրենց սպառնալի միասնա-  
 կանութիւնը: Այդ ճամբան Մովսէսի առաջնորդութեամբ գտնուած  
 Եհովայի ցոյց տուած ճամբան էր: Եւ Եհովան եղաւ հրեաներու  
 պաշտած աստուածը, որու ձեռքով գրուած զիրքն է նուիրական  
 մատանը, Հին կտակարանը: Հրեաներու կրօնքի սկզբունքային  
 հիմնաքարերը եղան անկախութիւն, ազատութիւն եւ զեմոկրատի:  
 Այս կէտին մէջ հրեաները հին աշխարհի մէջ բացառիկ զիրքի տի-  
 բացան եւ իրենց սուրբ զրքերով մեծ ազդեցութիւն ունեցան ազա-  
 դայ սպիտակութեան վրայ, բան մը որ անուրանալի է:

Յոյները

Երկաթի դարու ստեղծած նոր պայմանները ամէնէն  
 յաջողակ շահագործողները եղան յոյները: Հին քաղաքակրթու-  
 թեան սպառնալից անկախութեանն հետնաւորով անոնք կրցան  
 լայնօրէն օգտագործել իրենց աւանդութիւնները: Նոյն ատեն իրենց  
 կուլտուրայի կազմաւորման սկզբնական շրջանին անոնք պաշտ-  
 պանուած էին ազգաստութեամբ, ատոր համար վախ չունէին յար-  
 ձակումներէ, եւ յետոյ հին կայսրութեանց յաջորդներէն, մեախա-  
 ցիներէն ու պարսիկներէն որոնք թէեւ գինուորական ուժի տէր բայց  
 կուլտուրական գծով աւելի ցած մակարդակի վրայ էին:

Իրողութիւն է որ պատմութեան եւ գիտութեան շարունա-  
 կական թելերը առանց կտրուելու, մեղի հասած են յոյներու միջո-  
 ցով: Յոյները միակ ժողովուրդը եղած են որ եզրիպատի եւ Բարե-  
 լոնի նման հին կայսրութեանց քայքայիչ պատերազմներու հետե-  
 ւանքով անտեսած ուսմունքներու մեծագոյն մասը իւրացուցին եւ  
 այդ գրեթէ անդիտակցութեամբ: Բայց անոնք առկէ աւելին ըրին: Ա-  
 նոնք այդ ծանօթութիւնները առին եւ իրենց սեփական հետաքրքրու-  
 թեամբ եւ իմացականութեամբ անոնք փոխակերպեցին բանի մը  
 որ նոյն ատեն աւելի պարզ էր, աւելի վերացական եւ աւելի բանա-  
 ւորական: Այդ օրերէն սկսեալ յոյներու մեղի տուած ծանօթու-  
 թեանց այդ թելը որ սղղած է մեր քաղաքակրթութեան վրայ պա-  
 ճած է իր հարազատութիւնը:

Գասական կուլտուրա

Յունական ցամաքամասին մէջ Ճ. դարէն 2. դարու ժամա-  
 նակամիջոցին հիմնուած էր միաձեւ կուլտուրա մը որ գոյութիւն

ունեցող գիտական ծանօթութիւնը մարտելի ընելէ յետոյ անոր վը-  
 րայ աւելցուցեր էր իր սեփական կուլտուրան: Ասոր արդիւնքը ե-  
 դաւ դասական կուլտուրան ինչպէս ներկայիս կ'անուանենք, որ ըն-  
 դարձակուեցաւ բայց հիմնականապէս չբարեփոխուեցաւ Ազեքսան-  
 դրիոյ եւ Հոտովի ձեռքով, այլ մնաց որպէս էական անկիւնաքարը  
 մեր նոր աշխարհի կուլտուրային: Դասական այդ կուլտուրայի ա-  
 ւանդութիւնները մեծ մասով կ'ընկնին քաղաքական հիմնարկու-  
 թեանց, մասնաւորապէս զեմոկրատիի մէջ, բնագիտութեան մէջ,  
 յատկապէս մատեմատիկի եւ աստղագիտութեան մէջ:

Վերացական գիտութեան ծնունդը

Յունական մտածողութեան եւ գործի միաձեւութեան բնոյ-  
 թը կը կայանայ յոյներու կենցաղային կերպարին մէջ, մտածողու-  
 թիւն մը զոր մենք կը կոչենք գիտական եղանակի մտածողութիւն:  
 Ասով ըսել չենք ուզեր գիտութեան սոսկական ծանօթութիւնը կամ  
 անոր գործնական կիրառումը, այլ ըսել կ'ուզենք այն կարողութիւ-  
 նը որ կրցած է բաժնել իրականը եւ փոփոխելին զգայականէն, ա-  
 ւանդական յայտարարութիւններէն: Սոյն յատկանշական եղանակով  
 մենք կրնանք գանազանել երկու երեւոյթներ, մին բանաւորութիւնը,  
 միւսը՝ իրականութիւնը, այսինքն մէկը որ փաստացումի կը զիմէ  
 բան մը հաստատելու համար, միւսը որ փորձարկութեան կը զիմէ  
 բանի մը գոյութիւնը վաւերացնելու համար:

Որ յոյները այդ կրնային ընել արդէն, նոյնիսկ մասնակի-  
 րէն, առիկա շնորհն էր այն պատմական հանդամանքներուն որոնց  
 մէջ անոնց մշակոյթը ձեւաւորուեցաւ: Յոյները քաղաքակրթու-  
 թիւն չկերտեցին, ոչ ալ ժողովուրդներ, այլ գտան: Այն առաւելու-  
 թիւնները զորո շահեցան, պատճառը այն էր որ անոնց համար քա-  
 ղաքակրթութիւնը նոր եւ հրահրող բան մըն էր եւ կարելի չէր զայն  
 առնել որպէս շնորհ: Յոյներու հայրենիքի բնատիպ կուլտուրան  
 պարզ եւրոպական գիւղացու տիպարն էր: Յոյները ուր որ մտան  
 չկրցան զիմադրել այդ երկիրներու ընտիր կուլտուրաներուն եւ ա-  
 սով կորսնցուցին իրենց բնատիպ կուլտուրան: Բայց անոնք ան-  
 միջապէս չընդօրինակեցին անոնց կուլտուրաները, այլ անոնցմէ  
 ընտրեցին միայն այնպիսիները որոնք իրենց կը թուէին յարմար եւ  
 շահեկան եւ անոնք հելլենականացուցին: Անոնք այդ ըրին ամէն  
 մէկ տեխնիկայի գործածութեան մէջ: Իսկ զազախարներու մարդին  
 վրայ անոնք առին տիեզերքի գործածութեանց բացառութիւննե-  
 րէն գլխաւոր մասերը եւ մէկ կողմ նետեցին աստուածաբանութեան  
 ու նախապաշարումի բազմաթիւ եւ բարդ յայտարարութիւնները,



որոնք ընդհանրացած էին այն շրջանին երբ երկաթի դարու արշա-  
 ւը կը սկսէր: Հոմերոս, աուսլին եւ ամենամեծ յոյն բանաստեղծը,  
 ամէն ժամանակի համար վերջնականապէս գծեց եւ վաւերացուց  
 պատկերը այն աշխարհին ուր մասն ու հաստատուեցան յոյները:  
 Իլիականին եւ Ոդիսականին մէջ մենք կը գտնենք նոր համոզ հեղ-  
 լէնական ցեղերու պորոզ գիւղացիի կեանքին եւ հին ու հարուստ եւ  
 բարդ քաղաքակրթութեան միջեւ բազմաթիւ հակադրութիւններ  
 զորս անոնք գտան միայն քանդելու համար: Հոմերոսի բանաստեղ-  
 ծութիւնները կան ու կը մնան որպէս յոյներու սուրբ կտակարանը  
 ուր պատրաստուած ու գրուած են աստուածներու եւ մարդոց, խա-  
 զագութեան եւ պատերազմի արուեստներու հասարակական հաւատ-  
 քի հիմքերը:

Յունական քաղաքի տնտեսական շէնքը

Յունական կուլտուրան որ երկաթի դարաշրջանին արեւմու-  
 եան կուլտուրաներու հետ գրեթէ նոյն հորիզոնական գծին վրայ  
 էր, բայց իր կուլտուրան անտեսական հիմքով կը սարքերէր գետե-  
 զերեայ հին երկիրներու կուլտուրաներէն. անոնց կեանքի ճամբան  
 էապէս գծուար էր եւ անհիւրընկալ: Երկիրը երկրագործութեան  
 համար չոր էր. փոքր սեփականատէր գիւղացիութիւն մը կար որ  
 կը զբաղէր աշխարհագրութեամբ, ձիթագառուղի պուրակներով ու  
 ձկնորսութեամբ: Հետագայ, յոյն հնագոյն շրջանի բանաստեղծը,  
 այդ կեանքը կը նկարագրէ շատ արագակցիկ տողերով: Իր հայրը  
 որ հողաչերտ մը ունէր, կը բնակէր երկրի մը մէջ «ուր ձմեռը  
 ցուրտ էր, ամառը շատ տաք, իսկ ոչ մէկ ատեն հաճելի»: Այսու-  
 հանդերձ երկիրը թէեւ պարբերական ճգնաժամերու ատակ էր,  
 մինչեւ գերեալութեան ներմուծումը, բայց երկաթի դարու արմ-  
 տեսութիւնը բաւ բաւականին հաստատուն էր: Անոր հաւատարա-  
 կըջութիւնը կը պահպանուէր առուտուրով. բայց այդ առուտուրը  
 գլխաւորաբար տաճարներու եւ պալատներու պերճանքի առարկա-  
 ներու շուրջ էր գտնար, ինչպէս էր հին քաղաքային օրերուն,  
 յունական առուտուրը հասարակ քաղաքացիներու պիտանի սպ-  
 րանքներով կը զբաղէր:

Յունական քաղաքի ամէնէն յատկանշական կողմը այն էր  
 որ ելիպտացորենի մշակութեան հողը խիստ անբուարար ըլլալուն  
 քաղաքի գոյութիւնը կախում ունէր կաւեղէն անօթներու, ձիթախ-  
 ղի եւ արծաթի արտածումէն, որովհետեւ անով կարելի էր գնել  
 ուտեստեղէն 300-000 բնակչութիւն ունեցող Աթէնքի համար: Հին  
 յոյները կարող էին շահագործել իրենց տեղական եկամտային աղ-

րիւրները արատաւոր ժրջանութեամբ եւ պարզութեամբ եւ ա-  
 տանկով էր որ կրնային պահել իրենց քաղաքը: Այդ հանգամանքնե-  
 րուն տակ տեղի կ'ունենային անտեսական եւ քաղաքական ցնցումներ  
 ու փոփոխութիւններ, մինչ անդին աւանդութիւնը աննկատ կը թող-  
 ւէր: Չեռնարկութեան մը սկսող քաղաքացիները, թէ յանդուզն էին  
 եւ թէ կարող մտածելու թէ ինչ պէտք է ընէին եւ կ'ընէին: Անոնք  
 իրենց յաջողութեան չափանիշով նոյն ատեն կը բարձրացնէին իրենց  
 դիրքը հասարակութեան մէջ ուր ցեղական կամ պետական արդէլը  
 չկար: Պետական հիմնարկութիւններն ու աստուածները նուազ կա-  
 բեւորութիւն ունէին. ամէնէն շատ բոլորին ուշագրութիւնը կեղ-  
 րոնացած էր մարդոց վրայ:

Արուեստ եւ դիպիկտիկա

Յունական քաղաքակրթութեան յատկանշական նոր կերպա-  
 րէն էր մարդուն իրասրաշաղկան ներկայացուցչութիւնը նկարչու-  
 թեան, արձանագործութեան, դրամայի եւ գիտութեան մէջ: Յոյն  
 արուեստը ինչպէս ներկայացուած է արձաններով եւ թաղարներու  
 վրայի նկարներով (անոնցմէ շատերը փճացեր են) ցոյց կուտան որ  
 այդ արուեստը կեղրոնացած է մարդկային մերկ մարմնոյն վրայ,  
 բան մը որ մեզի սարօրինակ կը թուի: Յունական արուեստը իր  
 ներշնչումը առաւ ծիսական խաղերէն եւ մարդիկներու նուիրուած  
 պաշտամունքէն: Տարբեր էր ելիպտական արուեստը. ելիպտական  
 արձանները ուղղակի կախարդական բնոյթ ունէին. անոնք մեռած  
 մարդու ողին կը մարմնացնէին: Յոյն արձանագործը ստիկստ էր,  
 ան մարդկային մարմինը կատարեալ ներկայացնելու համար անոր  
 իտէալական կերպարանք կուտար: Յունական կուլտուրային մէջ  
 մարդիկը, արուեստագէտը եւ բժիշկը միասնաբար կը դործէին: Ի-  
 բրապազութիւնը արուեստին մէջ բանավարութեամբ կ'ընթանար:  
 Յոյն փիլիսոփայութեան պտամութիւնը յոյն գիտութեան պտամու-  
 թիւնն է, այդ երկուքը այն օրերուն իրարմէ չէին դանազանուեր:  
 Պտամութեան դէպի եղբայրակում առաջնորդող առաջ եւ ետ, դրա-  
 կան եւ ժխտական փաստարկումներու ձեւը կը կոչուէր դիպիկտի-  
 կա: Վիճելու այս կարողութիւնը պատկերը կուտայ մեզի յոյներու  
 քաղաքական կեանքին: Փոքրիկ քաղաքային պետութիւնը աւելի  
 լայն տեսասահման կուտար անհատ քաղաքացիին քան ինչ որ կրնար  
 սալ մեծ կայսրութեան մը մայրաքաղաքը: Նոյն ատեն քաղաքական  
 կեանքի հետաքրքրութիւնը որ կապուած էր առեւտրական դործե-  
 րու եւ օրինական դատերու հետ, որոնց մէջ ռեւէ մարդ փաստարան  
 կամ դատաւոր կրնար ընտրուիլ, պատճառ եղաւ որ մարդիկ դար-



դացնեն իրենց տրամաբանութիւնը եւ փաստարկելու կարողութիւնը: Բառերու իմաստին տիրապետելու այս ձգտումը զարկ տուաւ դրականութեան եւ հակասութեան: Բայց անոր բացասական կողմը այն եղաւ որ մարդոց խորհողութիւնը հեռացաւ իրերը ուսումնասիրելու եւ զանոնք հսկողութեան առկա տունելու մասնորոշութենէն:

Գիտութիւնը կը բաժնուի տեյսնիկայէն

Յունական գիտութիւնը բոլորովին տարբեր բնոյթ ունէր, երբ մենք զայն կը բաղդատենք հնագոյն քաղաքակրթութեան հետեւած գիտութեան հետ. անիկա աւելի բաճակարակից էր եւ վերացակից. ան հետեւ մնացեր էր տեխնիկական նկատումներէն: Անոր անանդական ներկայացուցչութիւնը փաստական ձեւով հիմնուած էր բնօրէնական սկզբունքներու վրայ. քան թէ վարչական կամ տեխնիկայի խնդիրներու մասնաբաժանող օրինակներու վրայ, ինչպէս կը զանենք եգիպտական կամ միջագետքեան դասադրքերու մէջ: Նոյն դժին վրայ էր մատեմատիկը, մասնաւորապէս երկրաչափութիւնը, որ յոյներու ամէնէն մեծարած դաշտն էր, ուր անոնց դործածած մակածական մեթոտներն ու ապացուցման եղանակը մենք տակաւին կը գործածենք: Այն համոզումը թէ բնութիւնը բանավարական է եւ անոր մանրամասնութիւնները կարելի է մտկայութեամբ գտարիւն տրամաբանութեամբ, պատճառ դարձած է որ յունական գիտութիւնը մարդիկը ազատէ նախապաշարումի ճիրաններէն: Ի վերջոյ, սակայն, մասնաւորապէս Արիստոտէլէն յետոյ որ հետազոտութեան ախտիան մըն էր, այդ վերացական à priori (ի յառաջագոյնէ) մօտեցումը գիտութեան փաստական աղէտը դարձաւ: Անիկա իմացական, խելացի ժողովուրդի սերունդները առաջնորդեց այն ինքնահաստատ համոզման թէ իրենք արդէն լուծեր են բոլոր խնդիրները, մինչդեռ անոնք այդ խնդիրները նոյնիսկ չէին սկսած քննութեան առնել:

Երկաթի դարաշրջանի սկիզբները, նախ քան սղեքսանդրեան շրջանը, յոյներու տեխնիկական դարգացումը թէեւ որոշ ազդեցութիւն ունեցաւ, բայց անոր մէջ հիմնական նորութիւններ չկային, ինչ որ կար ներդրուած բրոնզի դարաշրջանին: Ասկէ զատ յունական տեխնիկական յառաջգիտութիւնը նոյնիսկ Յունաստանի ուսեալ մարդոց վրայ ազդեցութիւն չկրցաւ բնել: Ասոր պատճառը այն էր որ այդ յառաջգիտութիւնը ոչ միայն արմատական նորութիւններ չունէր, այլեւ շատ աննշան պահանջ կը ստեղծէր գիտութեան օժանդակ նոր տեխնիկայի համար: Ամէնէն գլխաւոր պատճառը, սակայն, այն էր որ ձեռագործ արհեստաւորները կ'արհամարհուէին:

Ձեռագործ արհեստաւորը կը նկատուէր որպէս ստորագաս կակ մը որ բանականութիւն չունէր եւ ձեռքի շարժումով կ'սպրէր, իսկ ուղեղի մարդը, գիտունը, փիլիսոփան, կը նկատուէին բարձր, դերակայ կահներ: Ասիկա նոր գաղափար մը չէր, այլ ժառանգական սուանդն էր հին քաղաքակրթութեան, միայն թէ աւելի ուժեղացաւ մասնաւորապէս վերջնութեւր յոյն հասարակութեան մէջ, երբ ներմուծուեցաւ դերեաթիւրութիւնը: Անկէ յետոյ թէեւ ձեռագործական շատ մը աշխատանքներ կը կատարուէին ազատ մարդոց ձեռքով, բայց անոնք անարժէք էին դերիներու մրցակցութեան հետեւանքով, այնպէս որ անոնց դործն ալ անարդ ու ստրկական կը համարուէր:

Գերեաթիւրական հասարակութեան մէջ նոյն եղանակով կրնորու անտեսական եւ բնկերային դիրքն ալ վատթարացաւ: Արդէն յոյն կրնորու եւ ազջիկներու դիրքը աւելի ղէշ էր քան ինչ որ էր հին քաղաքակրթութեան շրջանին: Անոնց արդիւրուած էր քաղաքական կեանքի մէջ դործօն դեր ունենալ. միայն թէ անոնք անական գերիներ չէին նկատուեր, դաժան պատիժներու չէին ենթարկուեր:

Ճարտարապետութիւն

Յունաստանի մէջ ճարտարապետութիւնը յառաջգիտեց այնպիսի շտիպանիչով որ աներուսակայելի է — ան ձեռական աշխատանք չէր համարուեր, այլ մտքի, հանձարի դործ: Մենք ճանչցած ենք յունական ճարտարապետութեան գեղեցկութիւնը, համաշափութիւնը, համադրութիւնը եւ յետոյ պատկառելի յօրինուածքը հոտիմէական ճարտարապետութեան որ հետեւեցաւ յունականին: Այժմ ճարտարապետութիւնը անդուգական եւ տիրական արուեստ մը եղաւ որ կախում ունէր երկրաչափութենէ եւ դժազբութենէ. ասոր համար ան դժուարութիւն չունէր ազդելու յունական թաղուհի գիտութեան, մագեմադիկի վրայ:

Ճարտարապետութեան դարգացումով դարգացան այդ արուեստին նպաստող գործիքներու շինութեան տեխնիկան, ինչպէս նաեւ արձանագործութիւնը:

Այստեղ պէտք է նշել որ ճարտարապետութեան եւ անոր յարակից գիտութեան ու տեխնիկայի, ինչպէս նաեւ արձանագործութեան դարգացումը տիրող գասակարգի ցուցամուտութեան ու փաստարկութեան արդիւնքն էր:

Յունական գիտութիւնը դարգացաւ բնօրէնաւր եւ անկախ ձեւով, բայց միշտ կորուստի ենթակայ եղաւ կարծիքներու եւ վերացականութեանց առջեւ. ասոր համար երբ կեանքի իրական պայ-



մանները ճնշող դարձան, այդ գիտութիւնը ամփոփուեցաւ իր պատեանին մէջ եւ դուրս չեկաւ:

Յունական գիտութեան բովանդակութիւնն ու մեքոսը

Այսուհանդերձ այժմու գիտութիւնը շատ բան կը պարտի յունական գիտութեան, որովհետեւ ան տուած է ուրուագիծ, մեթոս եւ լեզու: Այն բոլոր ընդհանուր խնդիրները որոնցմէ ներկայ գիտութիւնը իր սնունդը առած է (երկինքներու բնոյթը, կամ մարդու մարմինը, կամ տիեզերքի գործեր), ասոնք ձեւակերպողները եղած են յոյները: Գծարտարար, սակայն, անոնք խորհեցան թէ իրենք այդ հարցերը լուծելը են վերջնականացէս իրենց ուրոյն տրամաբանութեամբ, մինչդեռ ներկայ գիտութիւնը, վերածնունդի թուականէն սողին, եկաւ ցուցնել թէ այդ լուծումներէն շատերը անիմաստ են եւ սխալ:

Յունական գիտութեան գարգացման շրջանները

Յունական գիտութեան պատմութիւնը թէեւ շարունակական ընթացառում մը կը ներկայացնէ, բայց մենք դայն կը բաժնենք չորս գլխաւոր շրջաններու, — յոնիական, աթենական, աղեքսանդրիական կամ հելլենական եւ հռոմէական: Յոնիական շրջանը կ'ընդգրկէ Զ. դարը (Ն. Ք.): Անիկա յոյն գիտութեան ծնունդն է այն երկրամասին մէջ ուր ամէնէն աւելի կը զգացուէր հին քաղաքակրթութեան ազդեցութիւնը: Անոր կ'ընկերանան Թաղէսի եւ Պիտագորասի լեկեկոտական կերպարները եւ ուրիշ բնապաշտ փիլիսոփայութիւններ, որոնք մատերիալիստական եղանակով վարկածեցին թէ աշխարհը ինչպէս շինուած է եւ ինչ ըլլալու է:

Երկրորդ շրջանը կ'ընդգրկէ 480—էն 330 (Ն. Ք.) թուականներու տարիները, այսինքն այն շրջանը որ կ'իյնայ պարսկական պատերազմներու յաջող վերջաւորութեան եւ Մեծն Աղեքսանդրի տիրապետութեան թուականներուն միջեւ: Այս ժամանակաշրջանին է որ յունական կուլտուրան իր գենիթին հասաւ Պերիկլէսի դարաշրջանի աթենական զեմոկրատիով, որ յետոյ ինքզինքը չքայուց քաղաքացիական կռիւներու եւ պատերազմներու մէջ: Այս շրջանին փիլիսոփայութեան հետաքրքրութիւնը նիւթական աշխարհի բացատրութիւններէն ուղղուեցաւ դէպի մարդկային բնութիւնը եւ անոր ընկերային պարաւտրութիւնները: Անիկա Սոկրատի, Պլատոնի եւ Արիստոտէլի շրջանն է ուր յունական իմաստասիրութիւնը իր բարձրագոյն կէտին հասաւ:

Յունական կուլտուրայի երրորդ շրջանը որ հելլենական կը

կոչուի, սկսաւ այն ատեն երբ Մեծն Աղեքսանդրի կայսրութիւնը վերջ գրաւ յունական քաղաքային պետութեանց անկախութեան եւ յունական գիտութիւնը սնդամ մը եւս յարաբերութեան մէջ գրաւարեւելքի միջեւ, մինչեւ Հողկաստանի հին կուլտուրային հետ: Աղեքսանդրիան եղաւ գիտութեան նոր հայրենիքը, ուր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով հիմնուեցաւ գիտական, գրական ընտրանի գիրքերու հարուստ թանգարանը: Ատոր արդիւնքը այն եղաւ որ մեծապէս զարգացաւ մաղեմադիկը եւ մեքենագիտութիւնը Իւլլիտի, Արքիմիտէսի եւ Հիպոպրոսի առաջնորդութեամբ: Գիտութեան պատմութիւնը, անջատուած փիլիսոփայութեան պատմութենէն, այս երրորդ շրջանին է որ կարեւորութիւն կը ստանայ որպէս միահիւսուած ամբողջութիւն:

Չորրորդ շրջանը, հռոմէականը, ինքնատուութիւն չունեցաւ. անիկա շարունակութիւնը եղաւ հելլենականին, նոյն ատեն կամուրջ մը որ կու գար միացնել դասական գիտութիւնը վերջնիւթեր գիտութեան հետ:

Յունական հեագոյն գիտութիւնը

Յոյն գիտութիւնը սովորաբար այնպէս ընդունուած է որ ծագում առած է Փոքր Ասիոյ յոնիական քաղաքներէն, ի մասնաւորի Միլիտոսէն, որ հին քաղաքակրթութեան հետ յարաբերելու տեսակէտէն ամենամօտ քաղաքն էր. նոյնպէս եւ յունական այս գաղութներէն սրունք կաղմուած էին Իտալիոյ եւ Սիկիլիոյ մէջ: Անիկա երկուցաւ Զ. դարուն (Ն. Ք.) ճիշդ այն ատեն երբ հին հոգատէր արիստոկրատին կը քայքայուէր եւ իշխանութիւնը առեւտրական դասակարգի օժանդակութեամբ կ'անցնէր տեղական մեծաւորներուն, բրոնտակներուն ձեռքը: Յոյն աշխարհը, Զ. դարուն ամէնէն աւելի ընդարձակման ձգտող աշխարհն էր: Իր վաճառականական կեդրոնն էր Եգէական ծովը, որուն եզերքը (արեւելեան եզերքը) հաստատուէր էին մեծ մասով յոնիական ցեղերը, յոյներու նախնական ցեղերը: Անոնք գաղութներ հաստատեցին Միջերկրականի եզերքը մինչեւ Սեւ ծովը: Երբ պարսկական ճնշումը դիւրնք վոնսեց իրենց հայրենիքներէն, այդ գաղութները դարձան առեւտրական եւ կուլտուրական կեդրոններ: Այդ իսկ պատճառով զարմանալի չէ երբ ըսենք թէ յոյն փիլիսոփաները բոլորն ալ Աթէնքէն դուրս եկած չեն: Թաղէսը, օրինակի համար, Միլիտոս մայր քաղաքէն էր, Հերակլիտոսը՝ Եփեսոսի մօտերէն, Իմպլիտոկլէսը՝ Սիկիլիայէն:

Այդ ատենները յունական միջավայրը աւանդութեանց ազդեցութեան սակ էր եւ մարդիկ հին հարցերուն նոր պատասխաններ



կ'ուզէին ճարել: Յոյն մտածողութեան կանխադոյն շրջանի մեծ արժանիքը այն է որ ան կ'աշխատէր պատասխանել բարդ հարցերուն պարզ եւ ճշգրիտ կերպով: Ան կը փորձէր ձեւակերպել սովորական կեանքի եւ աշխատանքի տերմիններով աշխարհի թէորեան, այսինքրն աշխարհը ինչպէ՞ս կազմուած է եւ ինչպէ՞ս կը գործէ:

Փիլիսոփաներն ու իմաստուցները

Անոնք որ վերելի հարցումները կ'ընէին եւ անոնց կը պատասխանէին վերջերը կոչուեցան փիլիսոփաներ, այսինքն իմաստութեան սիրահարներ: Անոնք ասան մըն ալ կոչուեցան սոփեստներ, ուրիշ խօսքով՝ իմաստուններ:

Մենք այժմ շատ քիչ բան գիտենք անոնց կեանքին ու հաւատալիքներուն շուրջ. միայն Պղատոնի եւ Աքրիստոտէլի գործերուն մէջ մի քանի ծանօթութիւններ կան որոնք ակնարկութիւններ կը պարունակեն սոփեստներու մասին: Բայց իրողութիւն է որ սոփեստները ծանօթ էին եւ կը յիշատակուէին միշտ եւ անոնց կեանքի լեկիցտաները ցոյց կուտան թէ որքան կարեւոր դիրք ունեցած ըլլալու էին անոնք իրենց ժամանակին: Երկաթի գարու սկզբնական փոթորիկտ շրջանին, երբ նոր քաղաքակրթութիւն մը կը բերեղանար, այս փիլիսոփաները ընկերային նոր կերպար մը կը ներկայացնէին: Այսուհանդերձ անոնք այն իմաստուններն էին որոնք արեւելքի ծանօթութիւններէն բաներ մը հաւաքեք եւ զանոնք զարգացնելով յարմարուցներ էին իրենց ժամանակի պահանջներուն: Անոնք նմանապէս մարդարէներ եւ կրօնական խորհրդաւորութեանց առաջնորդներ էին եւ երբեմն կը հիմնէին կէս-վանական հիմնարկութիւններ որոնք զպրոց ալ էին: Անոնք որ յաջողեցան, սովորաբար իրերը այնպէս սարքաւորեցին որ բունպետի մը կամ գեմոկրատ պետի մը քաղաքական եւ գիտական խորհրդատուի դիրքը ապահովեցին իրենց համար: Եւ պէտք է ըսել որ կառավարութիւնը յաճախ շատ հպարտ կը դրար երբ հոգաւոր փիլիսոփայ մը կը հովանաւորէր: Այս մարդիկը որոշ սկզբունք չունէին. զըժուար է ճշդել թէ իրենք արիստոկրատական թէ գեմոկրատական սկզբունքներու կը հակէին. միայն պարզ էր որ բոլորն ալ մէկըլմէն էին: Պրոտակորաս եւ այլ սոփեստներ Ե. դարուն իրենց սուսցմունքներուն համար վարձք կը ստանային: Պղատոն որ հարուստ էր արդէն, զանոնք կը ծաղրէր, որովհետեւ անոնք փիլիսոփայի արժանիքը կը ծախէին դրամով:

Միայն Յունաստանի մէջ չէր որ փիլիսոփաներ երեւան եկան: Երկաթի գարաշրջանի խոսվարցող ժամանակներուն աշխարհը

հի զանազան մասերուն մէջ ալ նոյն գաղափարներով, նոյն պատգամներով մարդիկ երեւան եկան: Պաղեստինի մէջ կային մարգարէներ եւ ի վերջոյ իմաստութեան գրականութեան հեղինակներ, ինչպէս Գիրք ժողովուրդի եւ Յորի դիրքերը: Հնդկաստանի մէջ երեւցաւ Բուդդան, Չինաստանի մէջ՝ Լա-Օ-Չէն եւ Կոնֆիլիոսը: Ասով կը հեռուցենք թէ մարդը մարդուն գայլ դարձեր էր եւ դիտութիւնը եկած էր օղնելու մերթ գայլ-մարդուն, մերթ ոչխար-մարդուն: Այդ իմաստունները բոլորն ալ ուղղագաւան չէին. միայն կը փորձէին հիներուն իմաստութիւնը իւրացնել. վերջէն էր որ անոնք նոր օրթոտոքութիւններ հիմնեցին եւ ատով նշանակելի դիրքի տիրացան:

Անոնք իրենց յաջողութիւնը կը պարտին այն բանին որ անտեսական փոխակերպումը եկած էր լեցնել բրոնզի գարաշրջանին եւ երկաթի գարաշրջանին միջև բացուած խրամատը: Անոնք գաղափարական վերնաշէնք մը կառուցին արտադրութեան յարաբերութիւններու նոր սխալմիջին վերել: Հասարակութեան այդ նոր սխալմիջին, նոր ուղղութեան մէջ, վաճառականներու, բնուպետներու եւ զինուորական իշխաններու ձեռքով երկաթի գարը բաժնուեցաւ բրոնզի գարաշրջանի նիւթական ձեւի արտադրողութեան եղանակէն: Փիլիսոփաները, ինչպէս ջրանցքներու, բուրգերու եւ տաճարներու ճարտարապետները, ընդհանուր անտեսութեան նիւթական վաղբին մէջ ունէ դեր չունեցան: Որպէս արդիւնք անոնց հիմնած վերնաշէնքը, ընդհանրապէս իտալիստական, բացասական էր փորձառական գիտութեան զարգացման ու յառաջդիմութեան համար:

Կանխադոյն յոնիական փիլիսոփաները ամբողջապէս չէին յարմարեր իրականութեան պատկերին: Իրենց ժամանակին, գերետիրական պետութիւնը եւ հարուստի իշխանութիւնը աւելաւին լիովին հաստատուած չէին. հետեւաբար, անոնք կը զանազանուէին արեւելքի իմաստուններէն այս բանով ու իրենք այդ ատեն մատերեւալիստ էին, բանալարական եւ անաստուած: Անոնք շատ քիչ կը հետաքրքրուէին բարոյադիտութեամբ եւ քաղաքականութեամբ: Անոնց յաջորդներն էին որ սկսան հետաքրքրուիլ այդ հարցերով, ան ալ վերացականօրէն, երբ տիրող դատակարգը սաստիացուցեր էր իր անպսիւթ շահագործման ու բանութեան մեթոտները: Եւ ահա խոսվութիւններ, սպասամբութիւններ եւ հնացած չէքի քարթայուս:

Այս առթիւ Մարքս շատ իրաւամբ ըսած է. «Յոյն փիլիսոփաները փորձեցին հասկնալ աշխարհը, բայց անոնք անտեսեցին ուրիշ կարեւոր հարց մը թէ ինչպէ՞ս պէտք էր փոխել այդ աշխարհը:



Յամենայնզէպս, իրողութիւն է որ յոյները մեծ ծառայութիւն մատուցին զխառնութեան, զբազանութեան եւ փրկութեան, բայց չկրցին հաստատել զբուրիւն մը ուր իրենց աշխատանքները կարենային յարատեւել յառաջդիմութեան ճամբուն վրայ: Գերետիրութիւնը, միացած տիրող դատակարգի յառաջացուցած հակասութեանց հետ, պատմութեան թատերարեմէն հետացուց յոյները եւ ստպարէզը սուաւ հռովմէացիներուն:

ՀՈՌՎՄ ԵՒ ԴԱՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Երկրորդ դարու կիսուն (Ն. Ք.) հելլենական կայսրութիւնը խորտակուեցաւ անիշխանութեան մէջ եւ ստպարէզ իջաւ երիտասարդ ուժ մը, Հռովմէ: Հռովմէի յաջողութիւնը միջերկրականեան տիրապետութեան առնչութեամբ անակնկալ մը չէր, ոչ ալ խորհրդաւոր բան մը: Այն քաղաքը որ Իտալիոյ աէր կը դառնար, ունէր այն բոլոր առակութիւնները, կրնար նսեմացնել յունական եւ փրենիկեան քաղաքային պետութիւնները եւ հելլենական տիրական կայսրութիւնները, որոնք բոլորն ալ դարերով անխիղճ շահագործման ներքեւ կը կը տառապէին եւ ատով տկարացեր էին թէ քաղաքականապէս եւ թէ անտեսապէս: Իտալիան, տակաւին երրորդ դարուն (Ն. Ք.) Փարմային երկիր էր, ունէր լաւ կլիմայ եւ առատ առողջ եւ ընդարձակման ձգտող առողջ բնակչութիւն: Սկզբնական շրջանին իր զանդապ աճումը Հռովմէը աւելի մօտեցուցեր էր հասարակութեան ցեղային կազմակերպութեան սխտէմին, բան մը որ ուրիշ հին քաղաքակրթութեան քաղաքները չունէին: Հռովմէական հանրապետութիւնը պատերազմներու ատեն կրնար կտրել ժողովրդական ուժին, մինչդեռ ուրիշներ այդ ողնայարը չունէին: Եարունակ զինուելով իրենցմէ աւելի զարգացած թշնամիներու տէխնիկաներով, հռովմէացիները գուցէ կը սուժէին ճակատամարտներու մէջ, բայց չէին պարտուեր. Հռովմէի ամենավրտանդաւոր մրցակիցը կարկեղոնի վաճառականական հանրապետութիւնն էր որ կրնար իրեն հաւասարիլ հարստութեամբ, բայց ոչ մարդկային ուժով:

Հռովմ ներքին կեանքին մէջ ունեցաւ նոյն դատակարգային կռիւները ինչ որ ունէին եւ անոնցմով քայքայուեցան յոյն քաղաքները. բայց ան նոյնիսկ աւելին ունեցաւ իր մերկ ձեւովը, երբ ազնուականներն ու սամիկները բռուն կերպով կը կռուէին իրարու հետ պետութեան հսկողութեան տիրանալու համար: Առաջին դարուն (Ն. Ք.) քաղաքացիական այս սուր պատերազմները վերջանալով ճամբայ բացին զինուորական զիկատարութեան եւ վերջէն սարին

կայսերականութեան: Կայսրը հարստանլով պատահութիւն սուաւ որ հարուստն ալ ազբաւր զնէ դաւաճներու աւարի մէկ շնչին մասով: Ասիկա կայսեր զործածած մէկ միջոցն էր. միւսը՝ հռովմէական քաղաքացիութեան շրջանակը ընդարձակելու քաղաքականութիւնն էր: Հռովմ առաջին նպամ քաղաքացիութիւն սուաւ իտալացիներուն, յետոյ դրսի գաւառներուն, ասով քաղաքային պետութիւնը վերածուեցաւ ցամաքային մեծ պետութեան մը ուր տիրական դարձեր էին գերետիրերը եւ հարուստ վաճառականները: Մաս առ մաս Միջերկրականի արեւելեան եւ արեւմտեան պետութիւնները ինկան հռովմէացիներու ձեռքը եւ նոյն ատեն բացուեցան Կոլի, Բրիտանիոյ, Արեւմտեան Գերմանիոյ եւ Աւստրիայի ճամբաները: Ասոր արդիւնքը այն եղաւ որ կազմուեցաւ նոր եւ մեծագոյն կայսրութիւն մը որ իր մէջ առաւ հին ծանօթ աշխարհը:

Հռովմէական կայսրութեան ընդարձակումը տարբեր գրիւնք յառաջացուց քան ինչ որ բրած էր Ալեքսանդրի արշաւանքը: Հռովմէացիները ստպարէզ իջան այն ատեն երբ յունական քաղաքակրթութիւնը հրապարակէն հեռացեր էր: Ան արդէն զիտութեան եւ արուեստի մէջ այլասերուած էր: Հռովմէացիք յոյն քաղաքակրթութեան վրայ հասան շատ ուշ. իրենց անտեսական դրութիւնը որ հաստատուած էր հարուստ ազնուականներու վրայ, այնքան ալ պէտք չունէր զիտութիւնը զարգացնելու. ասոր համար անոնք բան մը չաւելցուցին. բաւականացան իրենց գառմներով: Լաւագոյն բանը որ բրին, անոնք մաս մը զազափարներ վեր առին յունական փրկութեան: Օրինակի համար, ստոյիկեան փրկութեան իշխանութեան: Օրինակի համար, ստոյիկեան փրկութեան իշխանութիւնը, որ կ'արհամարհէր եւ մահ էր վարձատրութիւնը: Հռովմէացիները ուժ տալով պատերազմին պէտք ունէին մարդոց որ կ'արհամարհէին մահը եւ վարձատրութիւնը:

Ոմանք սովորաբար կը դատարարեն առաջին հռովմէական կայսրերը որոնք պատճառ եղան զիտութեան այլասերման: Մեր կարծիքով ատիկա սխալ է. զիտութեան այլասերման պատճառը աւելի խոր է. ան ծածկուած է դատակարգային հասարակութեան մէջ ուր իշխանութիւնը կեդրոնացեր էր մի քանի հարուստներու ձեռքը, մինչ զերիններէ բազկացած բնակչութիւնը ենթարկուած էր անաւել անզուժ շահագործման: Ժողովուրդի թշուառացումը կը նուազեցնէր սպորանայ պահանջը. անով կը վատթարանար թէ վաճառականներու եւ թէ ձեռագործական, արհեստաւորներու դրութիւնը: Այդ հանդամանքներուն ներքեւ ստեղծուած միջնորդային մէջ ալ եւս զիտութիւնը արժարժող ուժ չէր մնար: Գիտութիւնը կարող էր



զարգանալ միայն պետութեան քաջալերանքով, իսկ պետութիւնը պէտք չունէր զիտութեան. անոր պէտք եղածը պատերազմն էր, աւարտութիւնը:

Հառարակական ձեռնարկներ եւ առուտուր

Գոյութիւն ունեցող ծանօթութեան դործարկումը, սակայն, կրնար գարեքով զիտութեան պաշտը աւելի բնդարձակել: Ոչ միայն հակայական հասարակական ձեռնարկներ, ինչպէս ճամբաներ, նաւահանդիսանքներ, ջրմուղներ, բազմիքներ եւ թատրոններ պիտի շինուէին, այլեւ անկաշկանդ առուտուրը պիտի ծաղկէր կայսրութեան բոլոր տեղերը: Բայց որովհետեւ արտադրողական դաշտը գերիններուն արուած էր եւ սպասողական շուկան ալ ունեւորներու կողմէ շղթայի տակ աւնուած էր, մանուֆակտուրայի տէրերը այլեւս քաջալերութիւն չէին գտներ որպէսզի մեքենականութեան մտախն մտածէին եւ քայն ներմուծէին արտադրողութեան մէջ:

Ճարտարապետութիւն եւ երկրագործութիւն

Հոսովմէացիները ճարտարապետութեան մարզին վրայ զլեցին անցան յոյները, բայց երկրագործութեան մէջ նշանակելի յառաջգիտութիւն չունեցան:

Վարչութիւն եւ օրէնք

Ամենամեծ դրական նպաստը դոր հոսովմէացիները աուին քաղաքակրթութեան, օրէնքի զրութեան ստեղծագործութիւնն էր: Այժմ, հոսովմէական օրէնքը զիտական փորձ մըն էր ապահովելու բարւոք յարաբերութիւններ մարդոց միջեւ. ան բացայայտօրէն նրկատի կ'ստանէր պահպանելու բախտաւորներու սեփականութիւնը: Այդ օրէնքը կը պարունակէր մշակութային պատմութեան երեք գերհարկազրիչ նշխարները: Առաջին. հոն էր հին ցեղային սովորութիւնը որ մայր իշխանութեանն անցաւ նահապետական վիճակին: Ասիկա հոսովմէական հռչակաւոր բնութանիքի սիտակմն էր ուր հայրապետը բացարձակապետի իրաւունքով կ'իշխէր իր կնոջ, դուստկներուն եւ գերիններուն վրայ: Յետոյ կուգայ քաղաքի ու վաճառականի դրոշմեալ օրէնքը, որ արդիւնքն էր հանրապետութեան անտեսական եւ քաղաքական երկար պայքարներուն: Երբորդը կայսերական վարչութեան մէջ իշխանի գերադասութեան ճանաչողութիւնն էր: Հոսովմէական օրէնքը որ համաշխարհային օրէնքի հիմքը դրաւ, Ֆէստալական սիտակմի ներքեւ գործադրելի չէր, բայց ան վերադրեցաւ վերածնունդի թուականին եւ հիմնաքարը եղաւ կապիտալիզմի օրինադրքին:

Վայրէջք եւ անկում

Կայսրութեան վերջին օրերուն Հոսովմի ամբողջ անտեսութիւնը սկսաւ քայքայուիլ: Բանակը որ գերիններով եւ աւարով ուսուցած ազրիւր էր, եղաւ ծանր բեռ մը որովհետեւ զբաւուելիք երկիր չէր մնացեր այլեւս եւ կայսրը դժուարաւ կրնար ինքզինք պաշտպանել: Բարեկարգութեան փորձերը իրերը աւելի կը վաթաթարացնէին: Դասական քաղաքակրթութիւնը արդէն ներքնապէս վառաւերուած էր երբորդ գարէն սկսեալ (Ն.Ք.): Գիտութիւնը կ'ապրէր իր մահամերձ ժամերը: Ոչ ոք կը հետաքրքրուէր գիտութեամբ: Գրագրանի դարակներուն մէջ խցուած հատորները կը մոլորակէին եւ ոչ ոք կը հետաքրքրուէր անոնցմով: Աղեքսանդրիոյ մեծ գրադարանին զբքերը այրուելով բազմիքներու ջուրերը սաքցուցին:

Միստիկականութիւն եւ կազմակերպուած կրօնք

Բնական գիտութեան նահանջումով մարդկային մասնագութիւնը կանդ չատաւ, ան սրբազան պարձաւ դէպի խորհրդաւորութիւնը, դէպի կրօնքը: Միստիկիզմին ուղղուած զգայական մղումը թէեւ ամբարիշտ աշխարհէն խուսափելու փափաք մըն էր, բայց ան փիլիսոփայական խարխիւ մը ունէր ուրիշ զարգացան ստոյիկներն ու նոր պղատոնականները: Առաջին գարէն սկսեալ, փիլիսոփայական միստիկիզմը միաձուլուեցաւ փրկութեան առաջնորդող կրօնքներու հետ, որոնց մէջէն քրիստոնէութիւնը եղաւ յաղթականը: Մարդոց համար նշմարուելիք ազրիւրը մնացեր էր ներշնչուումը եւ յայտնութիւնը, քան թէ խմաստներն ու բանականութիւնը:

Այս կրօններու երեւումը ախտանիշն էր գերիններու անյուսութեան, եւ նոյնիսկ քաղաքացիներուն որոնք կը գտնուէին դրութեան մը առջեւ որ զիրենք զլորած էր անզուեղ մը ուրիշ չէին կրնար փախչիլ: Անոնք կամ այն էր որ տիրող սիտակմին դէմ յապիտիական շարժում պիտի ստեղծէին եւ կամ պիտի քաշուէին աւապատ մը դեւերու աշխարհէն ազատուելու համար: Առաջին միջոցը հնարաւոր չէր. յեղափոխութեան համար պայմանները նպաստաւոր չէին. ամէն մարդ աշխարհէն յուսահատ՝ իր հոգու փրկութեան մասին կը մտածէր. իսկ երկրորդ միջոցը որ գիւրին էր, բայց անոր հեռանկարը խաւարինն էւ ոչ-քաջալերական: Թողուլ իր սիրելիները, թողուլ ամէն բան ու քաշուիլ անապատը, յետոյ... ձգնաւորներու մասին շատ աննպաստ պատմութեանքներ կային հրապարակուած. անոնցմէ քանիսը քարկոծուելով սպանուեր էին: Ուրեմն. իրենց կը մնար անարտունջ համակերպութիւն կազմակերպուած կրօնին: Դասական աշխարհը երբ արեւ-



մուտքի մէջ կործանուած էր կամ բնասանեցուած, արեւելքի մէջ եկեղեցին արտօնած էր աշխարհական գիտութեան սահմանափակ ուսուցումը: Այս բոլոր իրադարձութեանց մէջ դասասպարտելին ըրիստոնէութիւնը չէր, այլ հարստապետական գերետիրական պետութիւնը:

Բարբարոսները

Դասական քաղաքակրթութեան կործանումը տարբեր ձեւ առաւ աւելի հին քաղաքակրթուած եւ կայսրութեան հելլենացած արեւելեան մասերուն մէջ, քան ինչ որ կրցան ընել յարաբերականօրէն նորեկ յաղթողները արեւմուտքի մէջ ուր քաղաքային կեանքը կազմուած էր օտար տարրերու ներածումով, իսկ զիւղականը՝ մեծ մասով կապաշտական էր: Արեւելքը իր մէջ կրցաւ լուծել բարբարոսները: Քաղաքային կեանքը հոն դադար չառաւ եւ շարունակուեցաւ, հակառակ իսլամ խալիֆաներու եւ բիւզանդական կայսրերու ներկայութեան: Պետական նոր շէնքը նոյնը չէր ինչպէս էր հինը, ստուաւրը, մշակոյթը եւ ուսումը պահպանուած էին եւ փայլուն կերպով վերապրող վիճակի մէջ:

Արեւմուտքի մէջ բնդհանուր անտեսական փլուզում մը կար, որմէ օգտուեցան բարբարոսները, որոնց երկրագործական տեխնիկը աւելի լաւ էր քան հռոմէացիներունը: Այն ինչ որ կորսուեցաւ Արեւմտեան Եւրոպայի մէջ բարբարոսներու արշաւանքին հետեւանքով այն մշակոյթին էր որ կախում ունէր բարձրաստիճան նիւթական կազմակերպութեան: Կամուրջները, ճամբաները, ջրմուղները, ջրարաշխական ջրանցքները բոլորն ալ քայքայուեցան եւ մեծ մասով աներեւութացան:

Այս բնդհանուր վերիվայրումները պատրաստեցին նոր տեսակի հասարակարգ մը որ յաջորդելու էր գերետիրական հասարակարգին. դա Ֆէոտալիզմն էր:

Այժմ տեսնենք թէ գիտութիւնը ինչ վիճակ ստացաւ Ֆէոտալիզմի շրջանին:

ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՖԷՈՏԱԼԻԶՄԻ ՓՈՆԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆԻՆ

Քաղաքակրթութեան զարգացումը հռոմէական կայսրութեան անկումէն յետոյ

Մեր աւանդական դատարարակութեան թելադրանքով սարձած ենք կարծել թէ հին քաղաքակրթութեան բնդհանուր փլուզումը յառաջացաւ Գ. դարէն մինչեւ Թ. դարը, անմիջապէս երբ կոր-

ծանեցաւ հռոմէական կայսրութիւնը: Իրողութիւնը, սակայն այլ է: Հին աշխարհի արուեստական կերպով վերջերը զարգացած մասերը, Իտալիան, Ֆրանսան, Բրիտանիան, Հռենոսը եւ Սպանիան, ազնուականներէ եւ դասառայեաններէ բաղկացած գերետէր դասակարգի յատուկ սիստէմ մը ունէին, որ կործանեցաւ եւ անոր տեղը անցաւ աւելի լայն հիմնաւորուած, թէեւ անյարակից նոր սիստէմ մը, Ֆէոտալական սիստէմը: Բարբարոսաց արշաւանքը այդ փոփոխութեան արդիւնքն էր, ոչ թէ անոր պատճառը:

Նոյն այդ իրադարձութեանց շրջանին հռոմէական կայսրութեան մնացեալ մասերուն վրայ Ալեքսանդրիայի, Անտիօքի եւ Կ. Պոլսոյ նման մեծ քաղաքներ վերապրեցան իրենց կարգապահ կառավարութիւններով: Հռոմէական կայսրութեան սահմաններէն դուրս, այն երկիրները որոնք Ալեքսանդրի յաղթանակներուն հետեւանքով ինկած էին հելլենական ազդեցութեան տակ, ներառեալ Պարսկաստանը, Հնդկաստանը եւ Կեդրոնական Ասիան, շարունակեցին իրենց քաղաքակրթական վերելքը առանց անտեսական սեյմումի: Սասանեան կայսրութիւնը Պարսկաստանի մէջ (226-637 Յ. Ք.), Կուլփատսի եւ Քալաբասի իշխանութիւնները Հնդկաստանի մէջ (առաջինը 320-480 Յ.Ք.) թուականին, Երկրորդը 550-750 Յ.Ք.) թուականին, նոյնպէս նուազ ծանօթ բրամիսեաններու թագաւորութիւնը Կեդր. Ասիոյ մէջ (400-600 Յ.Ք.) բոլորն ալ ծաղկման շրջան մը ապրեցան: Դեռ աւելին: Չինաստանը Վէյ հարստութեան (386-449 Յ.Ք.) եւ Թանի հարստութեան ատեն (618-906 Յ.Ք.) անտեսական եւ կուլտուրական արտակարգ զարգացման շրջան մը ապրեցաւ:

Այս պետութիւնները իրենց անտեսական եւ քաղաքական շէնքերու կառուցուածքին մէջ չէին բաժնուած բրոնզի դարաշրջանի սկզբնական քաղաքակրթութեան ձեւերէն, ինչպէս որ բաժնուած էին հելլենացած եւ հռոմէականացած երկիրները: Անոնք ենթարկուած չէին անտեսական ու քաղաքական պայքարներու այն ճշմունքներուն որոնք նոր յառաջացան գրամական անտեսութեան եւ գերետիրութեան հետեւանքով եւ ապա կործանեցին դասական քաղաքակրթութիւնը: Ուրիշ կողմերով անոնց կուլտուրաները մէկըմէկէ տարբեր էին: Պարսկաստանը, օրինակ, տակաւին հին ցեղային ազնուականութեան իշխանութեան տակ էր Զրադաշտի կրօնքով: Հնդկաստանը արդէն Զ. դարէն սկսեալ զարգացուցեր էր սերնդական (caste) սիստէմով բարդ կրօնք մը որուն չկրցաւ հազարէլ բուդդայականութիւնը, մինչ Զինաստանը լաւ կարգաւոր-



ւած Կոնֆիդիոսի հրովարտականերով ինկած էր զարգացած զիւզա-  
կան անոտականութեան իշխանութեան ներքեւ:

Այս երկիրները թէեւ իրենց ուրոյն կուլտուրան ունէին եւ  
կը հետեւէին անոր, բայց նոյն շրջանին անոնք առաջուրնէ աւելի  
մօտէն կը յարարեցին իրարու հետ առեւտրական խողովակով:  
Գալով դիտութեան, մենք քիչ բան գիտենք Հնդկաստանէն եւ Չի-  
նաստանէն դուրս զանազոյ երկիրներու մասին, բայց կրնանք լսել  
թէ այդ երկիրները արագօրէն զարգացան իսլամի կրօնքի պաշա-  
պանութեան տակ, որ աւելի մշակուած էր Պարսկաստանի եւ Կեդ-  
րոնական Ասիոյ մէջ, տեղական նպաստաւոր պայմաններու բերու-  
մով:

Հոովմէական կայսրութեան քայքայումով ու անկումով ամ-  
բողջ մարդկային պատմութեան մէջ բացուեցաւ նոր շրջան մը:  
Հոովմը հիմնած էր իր առեւտան աշխարհի ամենամեծ կայսրու-  
թիւնը: Յաջորդող պետութիւններէն ոչ մէկը կրցաւ հասնիլ անոր  
զինուորական, քաղաքական կազմակերպութեան եւ առեւտրի  
ընդարձակման աստիճանին: Բազմաաւելի կայսրութիւն մըն էր Չի-  
նաստանը, բայց Չինաստանի պետութիւնն ալ դատական կոչուելէ  
հետո կը: Երբ Հոովմի բիւրոկրատական, դերեալական անտե-  
սութիւնը քայքայուեցաւ իր ետեւը թողուց այն սերմերը որոնք  
ամէն տեղ նոր, սոցիալեզրոնացած անասական եւ քաղաքական  
սիւսէմ մը յառաջացնելու կոչուած էին:

Ֆէոտալիզմի փոխանցումը

Հակառակ անոր որ արեւելեան կայսրութեան մէջ քաղաք-  
ները շարունակեցին իրենց գոյութիւնը, նոր եղանակի անտեսու-  
թիւնը ամենուրեք էականապէս զիւզական էր, որուն միաւորն էր  
զիւզատունը կամ աւատահողը ուր կը գործէին ճարտերը որոնք  
կապուած էին հողին, իրենց աշխատանքի փոխարժէքը ստանալու  
իրաւունքով: Կալուածները կը պատկանէին հին քաղաքային բիւ-  
րոկրատի մասնաւորներուն. նոյն բանը տեղի սենեցաւ մեծ մա-  
սով արեւելեան կայսրութեան մէջ եւ բարբարոս ցեղապետներու,  
զերմաններէ կամ արաբներէ զրաւուած երկիրներու մէջ: Գիւղա-  
կան կողմի անտեսութիւնը էապէս ֆէոտալական էր թէեւ արեւել-  
քի մէջ ուր կալուածատէրերը քաղաքներու մէջ կը բնակէին, եւ թէ  
արեւմուտքի մէջ ուր հազորդակցութիւնները խեղճուկ էին եւ տէ-  
րերը կը բնակէին իրենց կալուածներուն վրայ:

Գիւղացիները, մեծ մասով, լլլան անոնք դաղթական, ճարտ  
կամ բայա, իրենց հողերուն ու գործիքներուն տէրն էին. միայն

կալուածատիրոջ վճարելու էին վարձք, տուրք կամ Ֆէոտալի ծա-  
ռայութիւն: Արեւելքի մէջ զիւզական յաւելեալ արտադրոյթները  
կը գործածուէին առեւտրի համար: Ֆէոտալիզմի կերպարանա-  
փոխութիւնը բնականաբար մէկ անգամէն տեղի չունեցաւ, ոչ ալ  
նոյն արտադրութեամբ տարբեր տեղերու մէջ. այլ մի քանի դարեր  
առաւ մինչեւ որ հասաւ իր կատարեալ հասունութեան ու լրումին:  
Բայց տարօրինակ երեւոյթը այն էր որ նոյն այդ շրջանին երբ ա-  
նոր անտեսութեան ձեւը սկսաւ տարածուիլ Եւրոպայի եւ Ասիոյ  
մէջ, փոստիտի նշանները սկսան երեւնալ հոս ու հոն:

Հաւատալիքներու դարաշրջանը

Ֆէոտալական արտադրողականութեան պայմանները դիտու-  
թեան օգտակարութեան պահանջը նուազագոյն աստիճանին տա-  
րին, մինչեւ որ միջին դարու վերջերը առեւտրն ու նաւարկու-  
թիւնը ստեղծեցին նոր կարիքներ: Իմացական ջանքերը ուղղուե-  
ցան արժատապէս նոր քաղաքակրթութեան մը պատկերի ծառայու-  
թեան. այդ ալ կազմակերպուած կրօնական հաւատալիքներու պատ-  
կերն էր:

Կազմակերպուած կրօնական հաւատալիքներու երեւումը որ-  
պէս քաղաքական եւ ընկերային տիրապետող ուժ որ յայնանգոր-  
ծուեցաւ մեր թուագրութեան կանխագոյն դարերուն, միայն քրիս-  
տոնէութեան յատուկ շէր: Անիկա համաշխարհային երեւոյթ էր,  
որովհետեւ ամէն տեղ կը տեսնենք նոյն պատկերը որ ցոյց կուտայ  
թէ ամենուրեք հասարակական կարիքներ եւ հասարակական հնա-  
րաւորութիւններ կային որպէսզի կրօնական հաւատալիքները կազ-  
մակերպուած ընկերային ուժ դառնան եւ անցնին քաղաքական զե-  
կի զլուխը: Երբորդ եւ եօթներորդ դարերուն (Յ.Ք.) մենք կը  
տեսնենք որ քրիստոնէութիւնը հասաւ իշխանութեան գերքին, ինչ-  
պէս նաեւ իսլամի կրօնը, նոյնպէս բուդդայականութիւնը Չինաս-  
տանի եւ հարաւարեւելեան Ասիոյ մէջ: Ճիշդ է որ բուդդայակա-  
նութիւնը Հնդկաստանի եւ զրազաշտականութիւնը Պարսկաստանի  
մէջ եօթ հարիւր տարի առաջ երեւան եկան, բայց այս վերջին շըր-  
ջանին էր որ անոնք հաստատուն հիմք ունեցան եւ անոնց կրօնաւոր  
դասակարգը կազմակերպուած ձեւով հրապարակ իջաւ: Նոյնը կրթ-  
նանք լսել նաեւ բրահմինականութեան մասին, որ թոյլ չտուաւ  
բուդդայական կրօնի տարածումը Հնդկաստանի մէջ եւ վերանորո-  
զեց ինքզինքը եւ օրէնքի կարգ անցուց իր սուրբ գրքերը:

Այնպէս կը թուի որ պատմութեան մէջ առաջին անգամն էր  
որ պէտքը կը շեշտուէր կրօնքները հիմնել հաւատալիքներու հաս-



առաջին օրոք մը վրայ, նոյն ատեն ապահովելով անոնց դոյու-  
թիւնը յաւերժացնելու միջոցները: Երեսան եկաւ նուիրապետական  
կրօնական դատակարգ մը որչափ ապահովագրու ծէսերով եւ  
սուրբ գրքերով: Որչէս յաւերժ եւ օժանդակ տարրեր հրապարա-  
կը դրաւեցին ինքնընտիր սուրբեր, ճգնաւորներ, խոտակեաց արե-  
զաներ, վանականներ, լամաներ, դերվիշներ, որոնց գործն էր ա-  
զօթել, քարոզել, խորել եւ ստանց գործելու ապրել: Անոնց նպա-  
տակն էր յաճախ անդիտակցարար, բայց երբեմն դիտակցարար հա-  
մարդիկը որ բնկերային կարգերը որպէս անփոփոխելի արե-  
զերք մասեր նոյնութեամբ մնալու են անփոփոխ: Աստուածներու,  
հրաշքներու եւ ապազայ կեանքի տեսլապատակերի ներմուծումով  
մարդիկ իրենց ուշադրութիւնը այս անարդար աշխարհէն հեռացու-  
ցին եւ դոյն ուղղեցին հանդերձեալ կեանքին:

Կանխագոյն քրիստոնէութիւնը

Պատահական չէր որ քրիստոնէութիւնը առաջին անգամ տա-  
րածուեցաւ հրեաներուն մէջ, որովհետեւ անոնք շրտեք թէ ամէ-  
նէն ճնշուած ժողովուրդն էին, այլ ստուգիւ ամէնէն յեղափոխական  
սպիտակ տոգորուած մարդիկն էին: Նախնական քրիստոնեայ հասա-  
րակուրդները յար եւ նման էին եսէնէներու կազմակերպութեան,  
որոնք անտեսապէս ինքնարաւ կոմունիստական հրեայ խմբաւորում-  
ներ կազմած էին եւ հակառակ էին հարոտութեան ու իշխանապե-  
տութեան: Յիւսու որ երազուած մեխան էր, իր յեղափոխական  
քարոզչութեամբ ամէնէն առաջ դրաւեց ճնշուած մասսաները:

Քրիստոնէութիւնը, սակայն, երկար չմնաց խոնարհ դասա-  
կարգերու շրջանակին մէջ. կամաց կամաց հոն մասն Պօղոս Առաք-  
եալի նման նորահաւաններ, որոնք վերջին դատաստանել եւ Աս-  
տուծոյ թաղաւորութեան գաղափարներով մարդոց միտքը կապե-  
ցին անդրջերմեան կեանքին: Քրիստոնէութիւնը որ կը հարածուէր  
իր յեղափոխական բնոյթին համար, երբ մէկ կողմ նեանց այդ բը-  
նոյթը դարձաւ պետական կրօնք:

Եկեղեցական կազմակերպութիւն

Երկրորդ դարու վերջերը երբ քրիստոնեայ եկեղեցիի ան-  
գամները բազմացան բարձրագոյն կազմակերպութեան մը պէտքը  
չեշտուեցաւ, որպէսզի պահուին անոր վարդապետութիւնները եւ  
անձնական կոխներով անհամար մասեր չքանուին անկէ: Եւ ահա  
պետութեան նման կազմակերպութիւն մը հիմնուեցաւ բարձրագոյն  
եւ ստորագոս պաշտօնեաներով: Քննիչներ (Էպիսկոպոսի) ձեռ-

նադրուեցան զլիաւոր կեղրոններու մէջ. անոնցմէ ամէնէն կարե-  
ւորներն էին Երուսաղէմի, Հռոմի, Կ. Պոլսոյ, Աղեքսանդրիայի եւ  
Անտիոքի պատրիարքները: Ի վերջոյ Հռոմի եպիսկոպոսը եղաւ  
որպէս առաջին սուրբ հայրը, Պապը, Աստուծոյ տեղապահը, զե-  
րագոյն քահանայապետը եւ երկրի ու երկինքի միջեւ շինուած կա-  
մուրջի ճարտարապետը: Երբորդ գարունը քրիստոնեայ եկեղեցին  
թէեւ բնակչութեան փոքրամասնութիւնը ներդրուած էր, բայց  
կայսրութեան մէջ ամէնէն ուժեղ եւ ազդեցիկ քաղաքական կազ-  
մակերպութիւնն էր: Չորրորդ դարուն Կոստանդին կայսրը, երբ  
տեսաւ որ իր կայսրութիւնը միայն նոր կրօնքով կարելի էր փրկել,  
քրիստոնէութիւնը հռչակեց պետական կրօնք:

Կոապաշտութեան վախճանը

Ամիջնադէս երբ եկեղեցին ուժեղացաւ, մէկ կողմէ սկսաւ  
իր հաւատաւորներու թիւը կրկնապատկել, միւս կողմէ պետութեան  
միջոցով պատժական ճամբան բռնել իրեն հակառակող տարրերը  
հրապարակէն վերցնելու համար: Ան շատ դիմադրութեան հանդի-  
պեցաւ: Կոապաշտները շուտով տեղի տուին: Դաննալով փելիսո-  
փայութեան, քրիստոնէութիւնը չէր կրնար հանդուրժել այս տե-  
սութիւններուն որոնք կը ժխտէին իր սկզբունքները: Յուստինոս  
կայսրը 529 թուականին դասական գիտութեան վերջ տուաւ երբ  
Աթէնքի բոլոր դպրոցները դոցեց եւ մաս մը փրօֆէսորներ դրկեց  
Պարսկաստան: Այսպէսով կարելի է ըսել թէ իմացական կեանքը,  
ներստեալ գիտութիւնը, քրիստոնէական տոկմաներու մէջ մասն:  
Չորրորդ դարէն մինչեւ եօթներորդ դարու մարդկային մասձողու-  
թեան պատմութիւնը, անհետացող հռոմէական կայսրութեան սահ-  
մաններուն մէջ, քրիստոնէական մասձողութեան պատմութիւնն է:  
Բայց եկեղեցւոյ ձեռք առած միջոցները չկրցան ի սպառ արգելել  
անախորժ դասանանքներու երեւումը: Ուղղադասնութեան հանդէպ  
երեսան եկան հերետիկոսներ որոնց դէմ սկսաւ կատաղի հալա-  
ծանք: Այս շրջանին գիտութեան կեղրոնը փոխադրուեցաւ Եփրա-  
տէն անդին, Հնդկաստան:

Մուսամէտ եւ իսլամի կրօնքը

Իսլամական կրօնի երեւումը զահալիժող մի երեսոյթ էր:  
Մուհամէտի մեռնելէն հինգ տարի յետոյ, 632 թուականին, անոր  
հաւատաւորներու բանակները ջարջախեցին թէ հռոմէական եւ թէ  
պարսկական ուժերը: Անկէ յետոյ ոչ մէկ պետութիւն կրնար ա-  
նոնց դիմադրել: Ութներորդ դարուն անոնք իրենց յայթութեանց



չըջանալը ընդարձակեցին կեղրոնական Ասիայէն մինչեւ Սարահիւս :  
Հոսովէական արապետութեան տակ գտնուող Ափրիկէի եւ Ասիոյ  
երկիրները, բացառելով ֆոքր Ասիոյ մի քանի կարեւոր տեղերը,  
ինչպէս նաեւ Պարսկաստանը եւ Կեղր. Ասիայէն մինչեւ Հնդկաս-  
տան, այս բոլոր երկիրները անցան արաբներու ձեռքը : Այդ ըն-  
դարձակ երկրամասին մէջ արաբական արշաւանքին հետեւանքով  
յառաջացաւ հասարակական կուրտութա, հասարակական կրօն եւ  
հասարակական գրական լեզու :

Արաբական վերածնունդը

Արաբական արշաւանքին նշանակելի արդիւնքը այն եղաւ որ  
կուրտութան եւ գիտութիւնը նոր թափ ստացան : Արաբները քաղա-  
քակրթութեան անձնաւթ չէին : Անոնք արդէն իրենց քաղաքները  
հիմներ էին եւ կարեւոր դեր ունէին հոսովէական կայսրութեան ա-  
րեւելեան առուտուրը կազմակերպելու գործին մէջ : Անոնց ղեկին  
յաղթութիւնը ցոյց տուաւ որ կրնային իւրացնել միջերկրականեան  
քաղաքակրթութիւնը անոնց զրոյսելու այդ երկիրներու քաղաքային  
բնակչութիւնը : Եւ իրապէս, այդ գծով արաբներուն գիմարու-  
թիւն ցոյց տուողները շատ սակաւ էին : Քրիստոնէութիւնը որ այժմ  
պաշտօնական կրօն էր, աւելի արդիւնք քան թէ օգնեց ասիական եւ  
ափրիկեան երկրամասերու բնակչութեանց գիմարութեանը, որոնք  
մեծ մասով հերետիկոսներու կողմը յարած ըլլալով աւելի հար-  
ձանքներէ եւ դատապարտութենէ ապահով էին իսլամ խալիֆանե-  
րու արապետութեան տակ, քան թէ ուղղադաւան քրիստոնէայ  
կայսեր իշխանութեան տակ :

Արաբները իրենց գրաւած երկիրներու եկամտային տուրքե-  
րը հաւաքելու գործը իրենց ուսուցանիներուն վերադաճելով տեղա-  
կան կամ քաղաքային անտեսութեան միջամտելու փորձ չըրին :  
Անոնք բնաւ փորձ չըրին բնարարելու մարդոց ոչ կրօնը, ոչ ալ  
լեզուն : Դամասկոսի օմայեան խալիֆայութեան ամբողջ վարչու-  
թիւնը յառաջ կը տարուէր յոյներու ձեռքով եւ յունարէն : Հետեւա-  
բար մասնաշատուկ իսլամական անտեսութեան սիտէմ չկար : Հին  
անտեսութիւնն էր որ կը շարունակուէր, միայն մէկ տարբերու-  
թեամբ որ գինուորական հրամանատարութիւնը կը պատկանէր  
գտարիւն արաբներուն : Գերետիկութիւնը չլեքջացաւ, բայց դեր-  
ներու պակասին հետեւանքով եղած գերիները առնուեցան տնական  
ծառայութեան մէջ :

Իրողութիւն է որ իսլամական կրօնի յաղթանակով առու-  
տուրը ապակեղրոնացման գծով զարգացաւ եւ անոր հետ զարգացաւ

արաղբորդական տեխնիկան : Հրապարակի վրայ իշխանական Հը-  
ոսով մը չկար որ ծծէր բոլոր երկիրներու արիւնն ու կենսունակու-  
թիւնը : Մէքքէն միշտ կրօնական կեղրոն մնաց. ան չեղաւ քաղաքա-  
կան, տնտեսական եւ կուլտուրական կեղրոն : Ի փոխարէն ոչ միայն  
հին քաղաքները, ինչպէս Աղեքսանդրիա, Անտիոք եւ Դամասկոս,  
նոր կեանք ստացան, այլեւ սմէն տեղ նոր եւ մեծ քաղաքներ երե-  
ւան եկան, ինչպէս Գահիրէ, Պաղտատ եւ Կորկորա, որոնք իրարու  
հետ միշտ առեւտրական յարաբերութեան մէջ էին եւ անոնց զա-  
նազան արտադրոյթները խարխիս ծառայեցին առեւտուրի եւ տեխ-  
նիկայի զարգացման :

Ասկէ զատ իսլամական քաղաքները կողիացած չէին արեւել-  
եան աշխարհէն, ինչպէս որ էին հոսովէական կայսրութեան տակն :  
Իսլամը ասիական եւ եւրոպական ծանօթութեան կեղրոնական վա-  
ռարանը դարձաւ : Որպէս արդիւնք կազմուեցաւ գիւտերու նոր  
շարքի մը հասարակական մէկ աւազանը, որ անձանթ ու անձուա-  
չելի էր յունական եւ հոսովէական տեխնիկային : Այդ շարքին մէջ  
էին սոլոպատի, մետաքսի, թուղթի եւ յախճատակիի տարազա-  
գործութիւնը : Եւ ասոնք հիմք ծառայեցին ապագայի յառաջըլ-  
մութեան, որով արեւմուտքը կարող եղաւ իրադործել տասնեւե-  
թերորդ եւ տասնեւութերորդ դարերու տեխնիկական եւ գիտական  
մեծ յեղափոխութիւնը :

Դասական գիտութեան վերադարձը

Իրերու շարունակութեան ընթացքին մէջ իմացական մար-  
դին վրայ նոյնպէս շատ քիչ բեկում յառաջացաւ : Իսլամի կրօնը  
խիստ աննշան խափանարար ջանք գործադրեց մարդկային մտա-  
ծողութեան վրայ քան թէ քրիստոնէութիւնը : Կուսպաշտական հա-  
ւատքը կամ փիլիսոփայութիւնը իսլամական կրօնին առջեւ վտան-  
գի մէջ չէին : Յաղթանակի խոսովայից շրջանին նոյնիսկ իսլամ ա-  
ռաջնորդները յոյներու հնաւանդ ծանօթութեանց աղբիւրները որո-  
նեցին՝ ծարաւէն պատահած մարդոց սէս եւ անոնցմէ իւրացուցին  
այն բաները ինչ որ կը թոյլատրէր իրենց Գուրանը :

Օտար աղղեցութեան միջմիտմը զուգարկուեցաւ Դամաս-  
կոսի օմայյատ հարստութեան անկումին, որուն յաջորդեց արքա-  
եաններու իշխանութիւնը որ թէեւ պարսկական չէր, բայց կախում  
ունէր բարձր մշակոյթի հասած պարսիկ մոզովուրդի հոգածութե-  
նէն : Շատ մը ուսումնականներ պարսիկ, յոյն, հրեայ, սուրիացի  
եւ ուրիշ հետաւոր երկիրներէ, հաւաքուեցան նոր մայրաքաղաքը,  
Պաղտատ : Հոն եւ Էրուզրէզապուրի մէջ էր որ սկսաւ գլխաւոր յոյն



գիտական գրքերու արարերէնի թարգմանութիւնը: Պէտք է ըսել որ անոնց գործը քաջալերողը եղաւ արար խալիֆան եւ արհուականութիւնը: Էլ-Մամուն խալիֆան իրապէս ինք հիմնեց թարգմանութեան բերօ մը, Գար-էլ-Հիքմա, ուր մեծ ուսումնականներ, ինչպէս Հիւսէյն-իպն-Իսհակ եւ Թահալա-Իպն-Պորա արարերէնի վերածեցին Արիստոտէլի եւ Պտղիմիի գործերը: Անոնք նոյնպէս թարգմանեցին պարսկական եւ հնդկական գրքերը որոնք ի վերջոյ կորսուեցան:

Իսլամական գիտութիւնը

Երբ մենք կը կարդանք իսլամական գիտական գրքերը, կը տեսնենք որ անոնց մէջ բանավարական գիծը նշանակելի տեղ բռնած է, թէեւ փիլիսոփայութեան միասնական մասին ալ բաւական կարեւորութիւն տրուած է: Անոնց այդ միասնական շփոթութիւնը փոխանցուած է միջին դարու դպրոցներուն:

Կանխագոյն շրջանի իսլամական կուլտուրայի գիտնականներու ընկերային դերքը շատ տարբեր չէր դասական շրջանի գիտնականներու դերքէն: Արբաւեան հարստութեան ստեղծ, կարծ ժամանակի ընթացքին, 754-էն 861 տարիներուն, Էլ-Մամունը, Հարուն-էլ-Ռաշիդը, Էլ-Մամուն խալիֆաներու օրերուն, գիտութիւնը անհամեմատօրէն քաջալերուեցաւ ու զարգացաւ: Այն ինչ որ յատկանշական գիծը կը կազմէ իսլամական գիտութեան, այն է որ անոր ուղի ու ծուծը աշխարհաբան-փառաստականական էր, մինչդեռ միջնադարեան քրիստոնէութեան գիտութիւնը տարածերթօրէն կղերական էր:

Գիտութեան ընկերակցութիւնը թագաւորներու, հարուստ փառաստականներու եւ արհուականներու հետ կը կազմէր իր ամփոջական զօրութեան աղբիւրը, բայց ի վերջոյ այդ հանգամանքը պատճառ եղաւ իր տկարութեան, որովհետեւ գիտութիւնը ժամանակի ընթացքին ամբողջապէս բաժնուեցաւ ժողովրդական զանգուածներէն, որոնք սկսան կասկածիլ թէ ուսեալ մարդիկ անարժէք մարդիկ են, քանի որ անոնք կոչուած են իշխողներու խորհրդատուի պաշտօնին: ասով գիտնականները կրօնական մտնեանդութեան զոհերը դարձան: Որքան պատեն որ քաղաքները եւ ստուտուրը ծաղկեալ շրջան մը կ'ապրէին, միջին դասակարգը կը հետաքրքրուէր գիտութեամբ, բայց երբ այդ գիծը խախտեցաւ, գիտնականները թափառական ուսումնականներ եղան եւ հոս ու հոն պաշտպանութիւն փնտնեցին:

Իսլամական գիտութեան բնոյթը եւ գործը

Իսլամ գիտնականները ընդունեցին եւ օրինակաւացուցին գիտութեանց դասական ձևը, բայց անոնք ստղանդը չունէին զայն զարգացնելու եւ անոր շարքը յեղափոխելուն բնոյթ: Գիտութիւնը մասմեաական կրօնի տակուն սրտակերներուն հետ հաշտեցնելու ձախտանքը կարելի է նկատել զլիսաւոր պատճառը որով իսլամը դարերով խաբխափումի մասնուեցաւ եւ կուլտուրայէս եւ մասուրայէս մնաց կայուն վիճակի մէջ:

Մատեմատիկական գիտութիւնը

Աստղագիտութիւնը իր փիլիսոփայական եւ աստղաբաշխական ներկցողութիւններով կեդրոնական հետազոտութեան առարկայ ըլլալով վերանորոգեց հետաքրքրութիւնը մատեմատիկի շուրջ, որովհետեւ աստղագիտութիւնը միայն մատեմատիկի կիրառումով կրնար զարգանալ: Այստեղ իսլամ մատեմատիկոսները բարելոնական եւ հնդկական արդեցութեան ներքեւ մեծ յառաջդիմութիւն ունեցան: Արաբները, գիտական ամէն ճիւղ, որոշ չափով զարգացուցին, բայց ոչ մէկը հանճարեղ կատարելութեան չկրցան տանիլ: Մաթեմատիկի մէջ, սակայն, արաբները զարգացուցին ճիւղ մը որ կարեւոր էր աստղագիտութեան համար. այդ էր եռանկիւնաչափութիւնը:

Աշխարհագրութիւն

Աշխարհագրութիւնը իսլամ գիտնականներու համար մնաց այն ինչ որ էր յոյներուն համար. աստղագիտութեան մէկ մասնաւոր ճիւղը, միայն թէ արաբները թէորիտիկական յառաջդիմութիւն մը ունեցան աւելցնելով նոր ծանօթութիւններ, որով անոնք հիմք դրին Ասիոյ եւ Հիւսիս-Արեւելի տրոպիկական ձեւի աշխարհագրութեան: Իսլամական աշխարհը ընդարձակ էր եւ անոր կուլտուրան սարակեղրոնացած, ասոր համար անոնք ուժ տուին աշխարհագրութեան: Ուսեալ ճանապարհորդներ, ինչպէս Էլ-Մասուտի (900-957) ճամբորդեցին Ռուսաստան, Կեդրոնական Արեւելի, յետոյ Հնդկաստան եւ Չինաստան, եւ կարեւոր գրքեր գրեցին զանազան ժողովուրդներու, կլիմայական պայմաններուն, սովորութիւններուն եւ կենցաղային խնդիրներուն շուրջ: Սալիֆայ Էլ-Մամուն 830 թուականին հրաման րբաւ որ աշխարհացոյց քարտէսներ պատրաստուին: Այդ տակն նաւարկութեան մէջ գործածուեցան աստղագիտական գործիքներ:



Խալամական բժշկութիւնը

Իսլամական բժշկութիւնը, աստղագիտութեան նման, շարունակութիւնն էր յունականին: Արարները, ծանօթանալով նոր փաստերու եւ նոր հիւանդութեանց, բժշկութեան վրայ աւելցուցին նոր տեսակի դեղեր: Բժիշկները միայն իսլամներ չէին, կային նաեւ հրեաներ, որոնք հիւանդութեանց դարմանումին հետ կ'ուսումնասիրէին անոնց պատճառները: Իրողութիւն է որ բոլոր իսլամ ուսումնականները բժիշկ էին:

Ակնաբոյժներ

Բժշկական մէկ ճիւղը որ ամէնէն աւելի զարգացաւ աչքի հիւանդութեանց ուսումնասիրութեան արդիւնքն էր: Ասոր պատճառը դուրսէն էր որ արարները իրենց անապատային եւ արեւադարձային երկիրներու մէջ ամէնէն աւելի ենթակայ էին աչքի հիւանդութեան: Աչքի վերարուժական գործողութեան համար անհրաժեշտ էր նախ այդ նուրբ օրգանին կառուցուածքը ուսումնասիրել: Եւ արար բժիշկները առաջին անգամ ըլլալով մասամբ յաջողեցան այդ ուսումնասիրութիւնը կատարել. ասով հիմքը դրուեցաւ ակնաբոյժութեան: Անոնք կրցան ակնոցներ շինել, քրններով մարդոց տեսողական կարողութեան աստիճանը:

Գիտական փիլիսոփայութեան սկզբնաւորութիւնը

Քիմիաբանութեան մէջ էր որ իսլամ բժիշկները, անուշահոտ իւղեր պատրաստողներն ու մետաղագործները ամենամեծ նըպաստը տուին գիտութեան ընդհանուր յառաջդիմութեան: Անոնց յաջողութիւնը կապուած էր այն հանդամանքին որ անոնք դասակարգային նախապաշարումներէ զերծ էին, չէին արհամարհեր ձեռագործ արհեստաւորները, ինչպէս սովոր էին ընել յոյները: Անտարակոյս արարներ չեն եղած առաջին քիմիադէաները. ոչ երբեք: Անոնք քիմիագիտական ծանօթութիւններ հաւաքեցին եզիպտական եւ բարբելոնական քաղաքակրթութիւններէն, յետոյ Հնդկաստանէն ու Չինաստանէն: Անոնց գնահատելի արժանիքը այն եղաւ որ անոնք այդ բոլոր ծանօթութիւնները համադրեցին եւ իրենց փորձակայաններուն (լաբորատորի) մէջ դանոնք գործածական արդիւնքներու վերածեցին: Այդ պատճառով անոնք իրաւունք ունեցան իրենց սալ քիմիաբանութեան հիմնադիրներն ըլլալու պատիւը:

Խալամական Գիտութեան հրիտակը

Սոյն ուրուագծով մենք նուազագոյն արդարութիւնն է որ

կ'ընենք գիտութեան արուած իսլամական նպաստին հանդէպ: Իրողութիւն է որ իսլամական գիտութիւնը յունականին շարունակութիւնն էր, բայց նոյնքան իրողութիւն է որ իսլամ ուսումնականները հասմէական կայսրութեան ձեռքով զերեզմանուած յոյն գիտութեան օգնութեան հասան, զայն զերեզմանէն դուրս հանեցին եւ անոր նոր կեանք, նոր աշխուժութիւն տուին եւ ընդարձակեցին գիտութեան տեսողութեան եւ գործունէութեան սահմանները:

Խալամական կուլտուրայի քայքայումը

Տասնեւէկերորդ դարէն յետոյ պարզ էր որ իսլամական գիտութեան լաւագոյն օրերը հեռացեր էին այլեւս: Թէեւ փայլուն գիտնականներ կային սակաւին, բայց անոնք հին, աշխոյժ շարժումը չէին ներկայացներ: Այն ազդակները որոնք քայքայեցին յունական քաղաքակրթութիւնը, յետոյ հասմէական կայսրութիւնը եւ ապա բիւզանդական իշխանութիւնը, նոյն ազդակները քայքայեցին նաեւ իսլամի քաղաքական եւ անտեսական շէնքը: Այդ ազդակները հարստութեան անհասարկութիւններն էին, այն արհամարհուած սարբերը որոնք յառաջացուցին անտեսական վրուժում: Արարները երբ դրուեցին կայսրութեան ասիական դաւառները, անոնց հարստութեան հետ ժառանգեցին նաեւ անոնց կնճոտ խնդիրները: Գիւղացիութեան եւ արհեստաւորութեան ստորակարգումը փճացուց արդիւնարբերութեան շուկան, չնայած որ Ռուսաստանի, Կեղրոնական Սաիոյ եւ Ափրիկէի գաշտերը բացուած էին վաճառականական շահագործման համար:

Բիւզանդական եւ իսլամական կայսրութիւնները երկուքն ալ անկարող էին իրենց ընդարձակածաւալ պետութեան կազմակերպութիւնը անվթար պահել: Տասնեւերրորդ դարուն անոնք սկսան ներքնապէս քայքայուիլ եւ աւելի կախուած մնալ զինուորական ուժէն քան թէ անտեսական անհրաժեշտ բարդուածումէն: Խալակիրներու ժամանակ երկուքն ալ զարգացուցին տեղական Ֆէտաալիզմը որ զինուորական տեսակէտէն ստորադաս աստիճանի վրայ էր, իսկ մշակութային տեսակէտէն արեւմուտքի հետ համեմատած գերակայ չէր: Ասկէ զատ, արեւելեան Ֆէտաալիզմը չուներ անտեսական ազդիւրներ, ոչ ալ մշակութային այն պայծառ յոյսերը, ինչ որ ունէր արեւմուտքի նոր Ֆէտաալիզմը:

Իսլամական քաղաքակրթութեան կործանումը արտապատկեր էր նոր բարբարոսներ արշաւեցին արեւելքի տախտատաններէն: Անոնք էին թուրքերը եւ մոնղոլները, որոնք տասնեւերրորդ դարուն պիտի չկրնային մտնել իսլամական երկիրները եւ անոնց մը-



չակոյթը դատապարտել ամբողջական, եթէ անոնք անտեսական ամբողջ հիմքերու վրայ հաստատուած՝ դահուանակ ժողովուրդ մը ունենային իրենց թիկունքին: Մէկ կողմէ ժողովրդական գանդուածներու գծողութիւնը, միւս կողմէ զարգացման միջոցներէն հետո մնացող արդիւնաբերութիւնը իսլամ բանակի ուժը զարձացել էին բոլորովին անարժէք: Իսլամ յառաջխաղացքին յաջորդեց յետախաղաց շարժումը:

Արարները այլևս գիտութեան ծարուսվը տարուած նոյն մարդիկը չմնացին: Արարական կայսրութեանց երբ յաջորդեցին մոնղոլական եւ թրքական պետութիւնները, յառաջացաւ մի տեսակ հաւասարակշռութիւն, ուր գիտութիւնը տասնեւմէկերորդ զարուն հասած աստիճանին վրայ մնաց ստուած վիճակով: Ասոր ցուցարկելի պատճառը այն էր որ հրապարակ իջաւ կղերական ազդեցիկ դասակարգը որ քամահրեց փիլիսոփայութիւնն ու գիտութիւնը: Արեւելքի մէջ, անմիջապէս երբ անտեսական յառաջդիմութեան նախկին զրգիւնները ձախողեցան, իմացական զարգացման զրգիւն ալ անհետացաւ:

Թուրքերը որոնք միայն սուրի ծայրով տիրապետելու մասին կը մտածէին, իսլամի կրօնը թրքացուցին եւ իրենց թագաւորը զրին Մուսամէտի ներկայացուցիչի գահուն վրայ: Ասով հարկահաւաք արարները հարկատու զարձան թուրքերուն:

Բայց պէտք է բռնել թէ իսլամի գիտութիւնը չմնաւ, ան միացաւ միջին դարու բրիտանիական գիտութեան եւ ազդեցտով հիմքը կազմեց Ֆէոտալիզմի քաղաքական եւ անտեսական նոր շէնքին:

ՄԻՋՆԵՎԱՐԵԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՏԵՆԵԻԿԱՆ

Ֆէոտալական սխտէմը

Ֆէոտալական սխտէմը որ յաջորդեց գասական ժամանակներու գերեախրական անտեսութեան, սկսաւ հինգերորդ դարէն եւրոպայի մէջ եւ իր լիակատար զարգացման հասաւ տասնեւմէկերորդ դարէն մինչեւ տասնեւտորրորդ դարը, իրեն ննցուկ ունենալով քաղաքական եւ կրօնական նախապետութիւնները իրենց համապատասխան արուեստով ու ծանօթութիւններով: Անկէ վերջ ան ճամբայ բացաւ աւելի մէկ նոր սխտէմին, կապիտալիստական սխտէմին:

Ֆէոտալական սխտէմին անտեսական հիմքը հողն էր, որ ազբիւրն էր երկրագործական արտադրութեան. անոր արտադր-

րոյթները կը սպառէին ճիշդ տեղւոյն վրայ: Այդ շրջանին, կար նաեւ ձեռագործական արդիւնաբերութիւն քաղաքներու մէջ: Ֆէոտալական սխտէմի անտեսութեան միաւորն էր գիւղը: Հոն, մաս մը մարդիկ ու կանայք, մեծ մասով իրարու արենակից, հասարակաց հողին բաժնեկից էին ու կը գործէին միասնաբար: Անոնք զգացումներով եւ նոյնիսկ նախահայրերով բաժնուած չէին հին սոսնձային խմբաւորումներու ձեւերէն: Այս գիւղացիներու վերեւ կար լորտերու, աշխարհականներու կամ կղերականներու նախապետութիւնը, լորտերուն վերեւ եպիսկոպոսներ եւ թագաւորներ, իսկ բոլորին գլխուն վերեւ կար կայսեր ու պապի գլխաւորութիւնը: Ամէն մի լորտ ունէր մէկ կամ աւելի գիւղեր, կամ դանազան գիւղերու մէջ հողարածիներ, որոնց վրայ իր ճորտերը պարտաւոր էին գործել թէ իրեն համար եւ թէ իրենց համար: Ֆէոտալական ծառայութեան այս պարտաւորութիւնը կապուած էր ուժի հետ կամ սովորութեան վերածուած ուժի հետ: Գիւղացին գերեախրական շրջանի գերիին չէր նմաներ. անիկա գերի չէր, բայց անբակտելի կապով կապուած էր իր հողին եւ անով իր լորտին: Եւսագործման այս ձեւը կը տեսնենք թէ կը դանազանուի կապիտալիստական սխտէմի վարձու աշխատանքը շահագործելու ձեւէն:

Տեսականօրէն Ֆէոտալական պարտաւորութիւնները ամբողջապէս միակողմանի չէին: Գիւղացիներու ծառայութեան փոխարէն լորտն ալ պարտաւոր էր պաշտպանել իր ճորտերը, որոնք երբեմն կենթարկուէին ուրիշ լորտերու յարձակումին, ինչ որ հասարակ երեւոյթ էր: Ազնուական լորտին ամբողջ պարտականութիւնն էր կոտիլ իրմէ բարձր լորտին համար, թէեւ երբեմն ալ կը կոտէր անոր զէմ երբ իր շահերը ազդպէս կը պահանջէին: Իր ազատ մընացած ժամերուն, իր գործն էր ուսել եւ որսալ: Հոգեւորական լորտին պարտականութիւնն ալ ազօթքով կարող կը լինէր հոգաւարել ինքզինք եւ իր եղբայր կրօնաւորը: Աւելի բարձր ազնուականութիւնը, աշխարհական կամ հոգեւորական, գրեթէ նոյն կեանքը կ'ապրէր, ուսել, խմել, հոս հոն ճամբորդել եւ հասնոյնալ: Անոնք բոլորը կը կազմէին բառին լայն տարածով պարագիտ գասակարգ մը, որ ունէր իր գործակալները որոնք գիտէին ճորտերու հաւատարիմ ծառայութեանց եւ պարտաւորութեանց հսկելու մեթոսները:

Ֆէոտալական անտեսութիւնը գերեախրականն կը տարբերէր մի քանի կողմերով: Առաջին. անիկա սկսեւ էր գործածել աւելի զարգացած գործիքներ: Երկրորդ. տեխնիկական յառաջդիմութիւնը քաղաքներէն անցաւ գիւղական շրջանները: Երրորդ. անիկա



ձեռնարկեց խոսքան վայրերու մշակութեան գործին, որով ընդարձակուեցան շահագործման գաշտերը: Չորրորդ. Ֆէոտարական սխտէժը ըլլայ տեխնիկական, ըլլայ ընկերային տեսակէտէն եկաւ լայն բանալ յառաջդիմութեան ճամբան. թէեւ այս վերջին կէտին մէջ անիկա տարերայնօրէն առաջնորդուեցաւ անտեսական ճշմարտամբ մը առանեւերրորդ դարու վերջերը, երբ Ֆէոտարիզմի հիմքերը սկսան խախտիլ:

Նոյն առեն Ֆէոտարական սխտէժին ներքեւ զարգացան ուրիշ անտեսական ձևեր, որոնք հիմնուած էին առուտուրի եւ քաղաքային ճարտարարուեստի անտեսութեան վրայ: Ասոնք տակաւ սկսան սպառնալ Ֆէոտարական անտեսութեան տեղական ինքնարու լիճակին եւ ի վերջոյ անոր փճացման:

Միջնադարեան քաղաքները

Սկսելով միջերկրականեան շրջանէն, ուր որ երկրագործական յաւելեալ արտադրոյթները մեծադոյնն էին, այն տեղերը սկսան աճիլ ու մեծնալ քաղաքները: Տասնեւմէկերորդ դարու վերջերը նոր քաղաքներ հիմնուեցան Ֆրանսայի, Անգլիոյ եւ Հոնոսի արեւելեան կողմի Գերմանիոյ մէջ: Տասնեւերկրորդ դարուն երբ այդ քաղաքները ծաղկեցան, անոնք աշխատեցան ազատագրուիլ եկեղեցւոյ սեղմումներէն եւ աւատական հիմնարկութիւններէն: Գերմանիոյ եւ Իտալիոյ մէջ, ուր կեդրոնական կառավարութիւնը տկար էր, քաղաքները զարձան անկախ պետութիւններ, իսկ Ֆրանսայի եւ Անգլիոյ մէջ անոնք մնացին ենթակայ թագաւորական իշխանութեան: Այս քաղաքները կ'ապրէին ճարտարարուեստական ապրանքներու փոխանակութեամբ. այդ ապրանքները արտադրողներն էին քաղաքի արհեստաւորները: Այդ քաղաքներու բարգաւաճումով գիտութիւնը զարգացման նոր փուլի մէջ կը մտնէր եւ նոյն առեն կը պատրաստուէր ազագայ բուրժուազիայի խանձարուրը:

Միջին դարու եկեղեցին

Ֆէոտարական սխտէժը, որ միջին դարերուն տիրապետող սխտէժը դարձաւ, իր իմացական եւ վարչական արտայայտութեանց աղբիւրը եկեղեցին ըրած էր: Եկեղեցւոյ միասնականութիւնն ու հրամանն էր որ կը հակաիշուէր ազնուականներու անիշխանական հակումները եւ բոլորը կը համախմբէր քրիստոնէութեան հեղինակութեան հասարակական խարխախին շուրջ:

Եկեղեցւոյ գերադոյն հեղինակութիւնը սկսաւ 1000 թուականին: Այդ թուականը նշանակելի պատմական թուական է: Նախ

քան 1000 թուականը, Հոովմի Պապը ամբողջ Եւրոպայի մէջ հնչեցուց մի սարսափելի ահազանգ: Քրիստոսի 1000 տարին լրացածին պէս պիտի դայ վերջին դառանաւանի օրը: Վար քարի վրայ պիտի չմնայ, մեռելները յարութիւն պիտի առնեն, Քրիստոս ամպերուն վրայ հեծած պիտի դայ յարութիւն առնող մեռելներն ու ողջ մընացող մարդիկը դատելու համար: Արդարները պիտի զրկուին արքայութիւն, իսկ մեղաւորները խուսելու պիտի երթան դժոխք, ուր անոնք յաւիտեանս յաւիտենից պիտի տանջուին կճրատացնելով իրենց սկոռները: Այդ շրջանին ժողովրդական մասսաները, խաւարամիտ եւ դիւրահաւան, ընդհանուր վերուվայրումներէն շրջած եւ յուսահատ պատրաստ էին հաւատալու Քրիստոսի փոխանորդ պապի հաւատարացումին: Եւ ահա սկսաւ յուզումնալի շրջան մը: Աղքատները կ'աղօթէին ու կ'ապաշխարէին իրենց գործած կամ չգործած մեղքերուն թողութիւն ստանալու համար, իսկ հարուստներէն միամիտներն ու երկշտները իրենց կալուածները կտակեցին եկեղեցիին, արքայութեան մէջ աթոռ մը գրաւելու երազով: Այսպիսով եկեղեցին զարձաւ ամենահարուստ կալուածատէրը:

Եկաւ 1000 թուականը: Քարերը իրենց տեղերէն չշարժեցան, մեռելները յարութիւն չառին: Նենգամիտ պապը այս անգամ յայտարարեց որ ինք Աստուծոյ դիմում ըրած էր եւ ազաւանքով ու պաղատանքով փոխել սուած էր աշխարհը վերջացնելու անոր որոշումը: Հոովմի Պապը իր առաջին քայլով եկեղեցին վերածեց ամենամեծ աւատակետութեան, երկրորդ քայլով պապը եղաւ Աստուծոյ ամենահեղինակաւոր ներկայացուցիչը:

Միջին դարու սկզբնական շրջանէն մինչեւ տասնեւերրորդ դարը պետութիւնն ու գրականութիւնը արուած էին եկեղեցւոյ կրօնաւորներուն: Ֆէոտարական վարչութիւնը նոյնպէս կղերականներու ձեռքն էր:

Եկեղեցին Ֆէոտարական սխտէժին հակառակ չէր եւ չէր կրնար ըլլալ, քանի որ ինք ալ այդ սխտէժին մասը կը կազմէր:

Միաբանութեանց երեսումը

Եկեղեցւոյ կալուածները սարածուած ըլլալով զիւզական շրջաններու մէջ, անոր անտեսութիւնն ալ ըստ էութեան զիւզական անտեսութիւն էր, որ տասնեւերկրորդ դարէն սկսեալ հակառակ էր նորակազմ քաղաքներու վաճառականներու եւ արհեստաւորներու աշխարհական հասարակութեան շահերուն: Ի հարկէ, եկեղեցին վաճառականներու հանդէպ ունեցած իր հակառակութիւնը չէր պարզեր անտեսական տեսակետով, այլ մէջտեղ կը հանէր հերետիկո-



ստիժեան գիծը: Վաճառականները կ'ընդունէին թէ մարդիկ Աստուծոյ կրնան մօտենալ առանց բնշաքաղձ կղերականներու միջնորդութեան: Ահա հերետիկոսութիւն մը զոր արմատախիլ ընելու համար պէտք էր սուր զործածել: Եւ եկեղեցին զտաւ ազդու միջոց մը. հրապարակ հանեց կրօնական միտքանութիւններ որոնցմէ մին էր փրանսիսիւքներու միտքանութիւնը, միւսը՝ դոմինիկեանը: Առաջինը պրոլետարական գիծակ ունէր, որ փորձեց քաղաքի աղքատ մարդիկը ապստամբեցնել հարուստներուն դէմ: Երկրորդը, զոմինիկեանը, յայտնապէս յետադիմական էր եւ կ'ուզէր հերետիկոսութեան յառաջխաղացքը կասեցնել: Որքան ազդու էին առոնց ձեռք ստած միջոցները բազմաամամբ իտալիկներուն եւ հաւասարմասութեան ստեանին, դժուար է որոշ բան մը ըսել, միայն տկներու իրողութիւն եղաւ որ հերետիկոսութիւնը 300 տարիներու ընթացքին չզլթայուած մնաց:

Հակառակ, սակայն, այս միտքանութեանց ջանքերուն եկեղեցին միջին դարու վերջին երկու հարիւրեակներուն սկսաւ տկարանալ թաղաւորներու գերածուց զօրութեան առջեւ. որովհետեւ թաղաւորները աւելի շահագրգռուած էին դաշնակցելով քաղաքներու հետ ընդդէմ գիւղական ազնուականութեան: Պայքը փոխադրուեցաւ Ալիքսանդրիոն 1309-ին եւ եկեղեցին բաժնուեցաւ երկու կամ երեք պայքերու միջեւ: Բայց այս պատակտումը երկար չտեւեց: Եկեղեցին որպէս կազմակերպութիւն տկարացած էր, բայց դեռ կը պահէր իր զրոյժը ընկերային մտածողութեան վրայ:

Սկստակները եւ համալսարանները

Արեւմտեան քրիստոնէութեան վերապրումը, որ սկսաւ տասներորդ դարէն, կը պահանջէր աւելի լայն ծանօթութիւններով մրտաւորական հիմք մը քան ինչ որ տուած էր հին դասական ուսմունքը: Կղերականութիւնը պարտաւոր էր մարդուիլ եւ եկեղեցւոյ պահանջներուն համաձայն մտածել եւ զրել: Աւետարանի պարբերութիւնները բերանացի կրկնելով կարելի էր հերետիկոսութեան շարժումը կասեցնել: Տասնեակրկրորդ դարուն հիմնուեցան համալսարաններ, ուր կ'ուսուցանէին եօթը ազատական արուեստներու հետ փիլիսոփայութիւն, ամէնէն կարեւորը՝ աստուածաբանութիւն: Ամէնէն հռչակաւորն էր փարիզի համալսարանը: Անկէ յետոյ հիմնուեցաւ Օքսֆորտի համալսարանը 1167-ին, Գեմպրիճի համալսարանը՝ 1209-ին, Փատուայի համալսարանը՝ 1222-ին, Նապոլիի համալսարանը՝ 1224-ին, Փրակայի համալսարանը՝ 1347-ին, Վիեննայինը՝ 1367-ին: Բայց այս համալսարանները սկստակ

փիլիսոփայութեամբ աստուածաբանութեան զէնքերը կը սրէին, նոյն սակն ուսանողներու մտածողութեան հորիզոնը կ'ընդարձակէին սերաբական եւ յունական գիտութեան սուեալներով: Միջնադարեան մտածողութեան սխալներ իր էութեամբ պահպանողական էր, եւ այնպէս ալ մնալու էր մինչեւ այսօր: Բայց այդ մտածողութիւնը չէր կրնար պարսպապատ մնալ, երբ միջնադարեան տնտեսութիւնը, Ֆլոսալիզմը, իր մէջէն սկսեց էր արագորել իր կերպարանափոխութիւնը յառաջացնող սերմերը: Աւելի մեծցած աստուորը եւ ճարտարարուեստի ու փոխադրութեան տեխնիկներու զարգացումը անհահանջօրէն կ'ուզուէին զէպի ապրանքային ու դրամական տնտեսութեան կողմը: Տնտեսական յեղափոխութեան տեխնիկական մասն էր որ վճռական դէր պիտի խաղար ստեղծելու նոր, յառաջդիմական եւ փորձառական գիտութիւն մը, փոխան միջին դարու կայուն, բանախարական գիտութեան:

Ճարտարապետութիւնը

Միջին դարուն ճարտարապետութիւնը ամենամեծ եւ ամէնէն յատկանշական արտայայտութիւնն էր միջնադարեան տեխնիկայի եւ մտածողութեան: Անիկա աւելի զուտ տեխնիկական քան թէ գիտական յառաջդիմութիւն էր:

Տեխնիկական նորութիւններ արեւելէն եւ Չինաստանէն

Միջին դարուն տեխնիկական նորութիւնները հնարաւոր պարձուցին նոր գիտերու օգտագործումը, որով Եւրոպական մեծ պետութիւնները կրցան հասկնալ եւ հսկողութեան տակ առնել աշխարհը: Գլխաւոր գիտերը, ինչպէս ժամացոյցը, կողմնացոյցը, զեկը, վառօթը, թուղթը եւ ապագրութիւնը ֆլոստրական Եւրոպայի մէջ չգարգացան. բոլորն ալ ներմուծուեցան արեւելքէն, մեծ մասով Չինաստանէն:

Այժմ հարց կը ծագի թէ ինչո՞ւ այս գիտերու հեղինակ արեւելքը, ըսենք Չինաստանը, չկրցաւ անոնցմով զարգանալ այնպէս ինչպէս Եւրոպան զարգացաւ: Այս հարցման պատասխանը հոգեբանական չէ, այլ վարչական-տնտեսական: Արեւելեան քաղաքակրթութիւնը իրաւ է թէ բարձր էր, բայց տեխնիկական մակարդակի վրայ կայուն քաղաքակրթութիւն էր: Վեր առնենք, օրինակ, Չինաստանը: Չինաստանի մէջ տիրոջն էր բիրտկրասին, որ թէև զբական մարդին վրայ կրթուած էր, բայց բնաւ չէր շահագրգռուեր զարգացնելու երկրի տեխնիկան. ան շարունակ չզլթայուած կը պահէր վաճառականները, որոնք էին միայն որ կրնային տեխնիկայի



յառաջգիծութեան զարկ սալ նոր շուկաներ բանալու համար: Այդ բանն էր որ տեղի ունեցաւ Եւրոպայի մէջ: Նոր գիւտերը յառաջացուցին տեխնիկական յեղափոխութիւն մը որ արտադրողականութեան եւ առուտուրի զարգացումով համբայ բացաւ Փէնսալիան կազմակերպութեան քայքայումին: Նաւարկութեան նպաստող երկու գիւտերը (կողմնացոյցն ու ղեկը) բացին սվիտանոսներու համբան, որով զարգացան երկրախուզութիւնը, պատերազմը եւ առուտուրը տնտեսական ու քաղաքական գերաճող եւ արագավազ արդիւնքներով: Տպագրութիւնը գիտութիւնն ու դրականութիւնը առաւ կղերականներու ձեռքէն եւ տուաւ ժողովուրդին: Իսկ ամէնէն աւելի մեծ դեր կատարեց վառօդի գիւտը, քաղաքական, տնտեսական եւ գիտական տեսանկիւններէ: Վառօդի գիւտէն վերջ շինուեցան թրնդանօթներ ու հրացաններ. փոխուեցաւ պատերազմի կերպարանքը: «Քաղաքակիրթ» մարդը երբ նախնական, կոյս երկիր մը կը դբաւէր, այլեւս կարեւորութիւն չէր տար «րնիկներու» թուական գերազանցութեան: Վառօդը նոյնիսկ քաղաքակիրթ երկիրներու իշխանութեան հաւասարակշռութիւնը փոխեց: Իսկ գիտական տեսակէտէն, ան պատճառ եղաւ որ մարդիկ զատորշեն օդի բազադրիչ տարրերը, բորոկածիւնը, ջրածիւնը եւ թթուածիւնը: Բայց վառօդը ընկերային տեսակէտէն ալ մեծ դեր ունեցաւ. անիկա ուժի յարբերութիւնը փոխեց, տկար մարդը սկսաւ այլեւս չվախնալ յաղթանդամ մարդէն ու արագաշարժ սուրի ստպետէն: Ճնշումներուն մէջէն տակաւ անհետացաւ յուսահատ հոգեբանութիւնը եւ անոր տեղը անցաւ ըմբոստութեան եւ յեղափոխութեան ոգին: Եւ նորեւտուրի բուրժուազիան պայմաններու հասունացման պահուն կրցաւ օգտագործել ճնշումներու այդ տայնաւիկ արամադրութիւնը եւ ատով բանալ նորագոյն զարաշրջանը կապիտալիստական զարաշրջանը:

ԱԶՍՏ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ  
 ՀՆԱԴԱՐԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ  
 ԵՒ ՄԻՋԻՆ ԴԱՐՈՒՆ





## Ն Ա Ռ Ա Բ Ա Ն

Երբ *ազատ մտածողութիւն* կ'ըսենք, մեր մտքին մէջ անմիջապէս կ'որոշուի հաստատուած հասարակական դրութեան մը կամ հաւատքի բացառումին ձգտող մտածումը, զոր անհատ մը բնականօրէն կ'ունենայ երբ կը տեսնէ որ այդ դրութիւնը կամ այդ հաւատքը իր ըմբռումներուն կամ իրեն օգտակար նկատած կէտերուն չի համապատասխաներ: Ուրեմն, կրնանք ըսել քէ ազատ մտածողութիւնը սկսած է *անհատէն* եւ այն օրէն երբ կազմուած է մարդկային հասարակութիւնը եւ այդ հասարակութիւնը ունեցեր է կրօնական հաւատալիքներ ու դրութեանական անգիր կամ գրաւոր օրէնքներ: Բայց ասով ըսել չենք ուզեր քէ երբ անհատ մը կը ժխտէ իր ժամանակի հասարակական հաւատքը, ատով կը ժխտէ ամէն տեսակի հաւատք. կամ երբ կը ժխտէ հաստատուած դրութիւն մը, ատով կը ժխտէ ամէն տեսակի հասարակական դրութիւն: Ոչ երբեք: Ընդհակառակը, հաւատքի մը կամ դրութեան մը բացառումը ենթադրել կուտայ որ անհատը իր մտքին մէջ ունի ուրիշ հաւատքի մը, ուրիշ դրութեան մը նախագիծը: Ազատ մտածողութիւնը ուրեմն, կրնանք ըսել քէ յառաջդիմութեան ձգտող մարդկային մտքի առաջին քայլն է: Հետեւաբար, *ազատ մտածողութիւնը* զոր մենք պիտի ներկայացնենք սեղմ տողերով, մարդկային մտածողութեան *էվոլուցիայի* պատմութիւնն է, որ անցած է տնտեսական ու ընկերային զարգացողական պայմաններու հետ կապուած խողովակներէն:

Այժմ մենք պիտի սկսինք նախնական մարդէն:

ՄԱՆՕԹ: Կը ցարխնք ըսել որ մեր նիւթական անձուկ պայմաններու հետեւանով, այս երկրորդ հատորի տպագրական ծախսը կրճատելու համար, ստիպուած ենք բաւցիկ ակնարկներով անցնիլ եւ զանց ընել բացատրողական մանրամասնութիւնները այս նիւթին շուրջ:



## ԱԶԱՏ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ ՀՆԱԴԱՐԵԱՆ ԹՐԶԱՆԻՆ

Նախնական մարդը

Նախնական մարդուն կեանքի բնականուն երևույթները նկատի առնելով կրնանք հետևեցնել թէ նոյնիսկ այդ շրջանին բացասական մտածողութեան որոշ արգելք մը գոյութիւն ունեցեր է: Վայրենին իր կեանքին մէջ սեւէ ստեն նպատակ չէ ունեցեր ամբարելու նոր ծանօթութիւններ եւ յղանալու լուազոյն օրէնքներ քան ինչ որ ունեցեր ու տեսեր է իր հայրերէն: Ընդհակառակը, նա համարուած է թէ իր հայրերը իրեն ժառանգ թողուցեր են խմատութեան կտտարելագոյնը, զոր փոխելը կը համարէր յանցանք: Ասոր համար վայրենութեան ստորին աստիճանին վրայ գտնուող ցեղին մէջ գոյութիւն ունեցեր է յամառ զիմադրութիւն մը ամէնէն ցանկալի բարեփոխութեանց հանդէպ. եւ եթէ յառաջդիմութիւն մը տեղի ունեցեր է, այդ եղած է զանդազ եւ զժուարին ճանապարհով: Դժուարաւ կարելի է հաշուի առնել տեղի ունեցող յառաջդիմութեան յարարերական արժէքները առարկայական վերլուծումով, միայն կարելի է ըսել թէ բանականութիւնն է որ փորձատական գրծով ճշդումներ ըրած է աշխարհային դործերու մէջ, բայց չէ մտեցեր կրօնական գոյն ունեցող սեւ առաջադրութեանց, ըլլան անոնք զիցարանական կամ ծիսական մասեր: Վայրենի ցեղերու մէջ, որոնք պարզունակ կեանք ապրած են, նշանակելի է ճամարտասիրութիւնը, անոնք խաբելու մասին զազափար իսկ չեն ունեցեր. բայց զարմանալի է որ անոնք միշտ ենթակայ եղած են խտրկանքի ու խարուած են դարերով: Դիցարանական պտտմուածքներ յորինողները ի՞նչպէս կրցեր են ժողովուրդը հմայել իրենց հրաշափէպերով: Այս հարցումին պատասխանը մենք կը գտնենք այդ հրաշափէպերը յորինողներու մտքի թափանցողական եւ ստեղծադրուածական կարողութեան մէջ: Անոնք զխտեն որ ժողովուրդը մարմնաւոր աչքով տեսածներէն դուրս, հոգեկան աչքերով ալ կը փնտէս ու կը տեսնէ բաներ մը որ անպատճառ գոյութիւն ունենալու էին. եւ սհտ կը ծնին զերմարդկային հերոսները, աստուածներն ու կիսաստուածները, նա յաճ տեղական պաթմաններու պահանջին:



Կրօնական բոլոր դրութիւնները, որոնք արդիւնք են մթին տարրերու անմեկնելի ազդեցութեանց յառաջացուցած վասի կամ ակնկալութեան մարդկային դիւրախար գղացումներուն, միշտ ենթարկուած են կրօնաւորներու կամ կրօնականի կերպարանք կրող ցեղապետի մը կամ միապետի մը հեղինակութեան, եւ այդ պատճառով իսկ անոնք հակառակ եղած են սկեպտիկութեան, կասկածանքին ու թերահաւատութեան: Ահա թէ ինչու դարերու ընթացքին կրօնական դիրքերու մէջ ներմուծուած խարդախութիւններն ու ստութիւնները ընդունուած են որպէս իրողութիւն եւ ճշմարտութիւն: Առաջնորդուած այս սեռակէտով, սակայն, սխալ է եզրակացնել թէ ցեղի մը կամ համայնքի մը անդամները որոնք բոլորն ալ նոյն տեսակական պայմաններու տակ ապրած են եւ հետեւած են նոյն կրօնական հաւատալիքներուն, նոյն մտածողութիւնը ունեցեր են: Մարդիկ ինչպէս Փիդիքայէս կը տարբերին իրարմէ, նոյնպէս իրարմէ կը տարբերին մտածողութեամբ, խնդիրը այն է որ մարդիկ ամէն ատեն ազատ չեն եղեր իրենց ներքին մտածումները արտայայտելու: Այսուհանդերձ, եղած են քացառիկ անհասանք որոնք պատահութիւն մը դտած՝ յանդիներ են իրենց մտածումները պարզելու. եւ ասոնք կոչուած են ազատ մտածողներ:

Էվոլյուցիայի գիծը վեր առնելով մենք սխալած չենք ըլլար երբ բննք թէ մարդոց բանավարական ձգտումը, հնադոյն շրջանին կամ վերջերքը, կրօնական ձգտումին նման փոխաձեւութեան ձգտում մը եղած է, որ ծաղկած է տարբեր ժամանակներու մէջ, տարբեր ստորձանով նայած տրուած միջավայրի շտրհատուութեան: Այժմ երբ հարցնենք թէ վայրենի ցեղերը ինչպէս կրցեր են զարգանալ, այս հարցման պատասխանը պիտի դանենք ոչ թէ անոնց կողիտցած միջավայրին մէջ, այլ ուրիշ ցեղերու հետ անոնց ունեցած յարաբերութեանց մէջ, ըլլան այդ յարաբերութիւնները կռիւներով կամ իրեր փոխանակելով:

Փրոֆէսոր Կրուպի այն կարծիքէն է որ մէկ կամ երկու խնութեան կրօնքը ստեղծեր եւ զայն պարտադրեր են հասարակութեան. որովհետեւ այդ հասարակութիւնը ի ծնէ խուլ եւ համբի նման, ինքնիրեն երբեք պիտի չմտածէր թէ զերազոյն էակ մը կայ որ ստեղծեր է այս աշխարհը եւ կ'իշխէ ամբողջ տիեզերքին: Մենք այս տեսութիւնը չենք կրնար ընդունիլ. ի ծնէ խուլ եւ համբ մէկը բնականոն օրգանիզմ ունեցող մարդ մը չէ. եւ հասարակութիւնն ալ այդպիսի ապկոբմալ մարդոցմէ չի բաղկանար: Հասարակութեան անդամները բնականոն օրգանիզմ ունեցող մարդեր են, որոնք կը լսեն, կը սորվին, կը մտածեն ու կը խօսին: Հետեւաբար

մէկը երբ կը լսէ, կը սորվի ու կը մտածէ, օր մըն ալ կարող կ'ըլլայ նոր բանի մը շուրջ մտածել եւ նոր բաներ մը խօսիլ: Փրոֆէսոր Կրուպի իր տեսութիւնները ընդլայնելով երբ կը հերքէ ազատ կամքի թէորիան, կը հերքէ նաեւ ազատ մտածողութիւնը. այս վերջինը ան կը կոչէ անարդիւնք մտաւարձանք, որ կը կատարուի կրօնքը աւելի ուժեղացնելու համար: «Կրօնքը», կ'ըսէ ան, «անհասար ուղղի տէր մարդոց հնարքը ըլլալով, այժմ եղած է խուլ եւ համբ ամբոխներու հողերանութեան մարմնացումը, որ կայ, կը մնայ եւ պիտի մնայ յաւիտեան, որքան ատեն, որ ամբոխները կ'ապրին, եւ ամբոխները չեն մեռեր»:

Մենք ազատ կամքի թէորիան կը ժխտենք, բայց կ'ընդունինք ազատ մտածողութեան առկայութիւնը. նա դոյութիւն ունեցեր է նոյնիսկ վայրենիներուն մէջ եւ դոյութիւն ունի քաղաքակիրթ արդերու մէջ, եւ ամբոխները անոր առաջնորդութեամբ փոխած են իրենց խորհողութիւնը, հող չէ թէ կրօնական ուրուականը պահպանողական դժով միշտ անարեկչական ճամբուն հետեւած է եւ անհաշտ աչքով նայած ու կը նայի ազատ մտածողութեան:

ՅԱՌԱՋԻՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԿՐՕՆՔՆԵՐՈՒ ՆԵՐՔԵՒ

Երբ կրօնքը ենթադրական քաղաքակիրթ կարմակերպութեան աստիճանին հասաւ իր կարգած լեկեմտաներով (հրաշովէպերով) կամ տոֆիւմաներով, տաճարներով ու նուիրապետութեան նախատարրերով, դրեթէ ամէն պարագայի տակ ան չլքեց տեոորի եւ պահպանողականութեան քաղաքականութիւնը, միայն թէ նկատելի է որ ան որոշ հաւասարակշռութիւն մը պահեց տարբեր հասարակուրդներու դրութեանց փոխ-ազդեցութեամբ:

Հասարակութիւններ որոնք պիտի նախատէին ու արհամարհէին մէկզմէկու աստուածները եւ պիտի ծաղրէին մէկզմէկու հաւատալիքները, յաճախ փոխած են իրենց դիրքը, երբ մէկը յաղթական եղած է, միւսը՝ պարտեալ, իսկ այդ փոփոխութիւնը եղած է ոչ թէ համակրութեան աճումով, այլ հնուց ի վեր դոյութիւն ունեցող վախի զրգումով:

Բազմաստուածեան շրջանին ոչ մէկ ազդ իրապէս չ'ը տարակուսեր ուրիշ աստուածներու դոյութեան մասին. առ առաւելն բացառութիւն կրնանք հաշուել հին, պատմական շրջանի երբայեցիները, որոնք իրենց սեփական աստուածը ստեղծեցին որ գերիվեր էր միւս աստուածներէն եւ զայն կոչեցին տէր տէրանց: Բայց ամէն հասարակութիւն որ ունէր իր սեփական աստուածը երբ կը պար-



տուէր ուրիշէ մը, կը պահէր իր աստուածը որպէս տեղական աստուած: Այդպէս ըրին հոսովէացիները, անոնք իրենց զրաւած երկիրներուն մէջ կրօնական հաւատալիքները խորտակելու եւ նորեր հաստատելու փորձ չըրին: Այսպէս, եթէ յաղթականներն ու պարտեալները իրենց դաւանանքներով կը խառնուէին իրարու, նոյնը կ'ընէին դաշնակից ցեղերը: Հնադարեան քաղաքակրթութեան ազատ մտածողութիւնը, ուրեմն, երկար ատենի համար պիտի մնար համակարգողի դերին մէջ բաղմաստուածեան ուղեգծին վրայ, մինչեւ որ միապետ մը դար եւ ինքզինքը ներկայացնէր որպէս որոշ աստուծոյ մը ներկայացուցիչը: Բաղմաստուածեան ըմբռնումը ամենաբարձր բանավարութեան դիմն էր որ կրնար նորութիւններ տալ զարգացած դասակարգին: Հնադարեան բանավարութիւնը հին քաղաքակրթութեան հետ երկրուն զոյալիճակին բաժնեկից կ'ըլլար արշաւող բարբարոսներու ձեռքին մէջ եւ կ'ենթարկուէր հալածանքի, հող չէր թէ իր դործերը զրուած էին կռուցողական արուեստներու ճամբուն վրայ: Միապետը եթէ բաղմաստուածեան համոզում ունենար իսկ անիկա դարձեալ աստուածները աստիճաններու պիտի բաժնէր եւ իր ընտրած աստուածը պիտի դնէր միւս աստուածներու զլիւին վերեւ: Ազատ մտածողութիւնը հոն այլեւս նահանջելու էր, կազարու էր նաեւ յառաջդիմութիւնը:

Հնդկաստան

Արիական ցեղերու արշաւանքէն առաջ Հնդկաստան ունէր իր բնաշխարհիկ կրօնքը որ կը կոչուէր դրավիտական կրօնք. ասիկա ծաղկեալ կրօնք էր քրիստոնէական թուականէն երեք հազար տարի առաջ: Անոր յաջորդեց բրահմինականութիւնը:

Բրահմինական կրօնքը իր էութեամբ դասակարգային էր: Կրօնականները ընդհանրացուցեր ու արմատացուցեր էին այն համոզումը թէ Բրահման, արարիչը, չորս տեսակ ժողովուրդ ստեղծեր է, որոնք կը կազմեն իրարմէ անանցանելի իրամասներով բաժնուած դասակարգեր:

Մէկը որ աւելի բարձր դասակարգի ծոցէն ծնած է, միայն անիկա իրաւունք ունի կեանքի բարեքները վայելելու:

Այս կրօնքի շունչին տակ Հնդկաստանի հասարակ ժողովուրդը չէր կրնար յառաջդիմել: Բրահմինական կրօնի յառաջացուցած նեխածութեանց ծոցէն ծնաւ ազատ մտածող մը, Բուդդան, որ եկաւ բոլոր աստուածները ուրանալ եւ հոչակեց բարոյական օրէնքներ: Բայց Բուդդայի վարդապետութիւնը հող չդրաւ Հնդկաստանի մէջ, ուր արիւրդ դասակարգը ուժեղ էր. ան զարգացաւ փունճապի մէջ ուր կ'ապրէր ազատասէր ժողովուրդ մը:

Միջագետք

Հին բաբելոնական եւ ասորեստանեան կրօնքներու բնոյթին ու զարգացման շուրջ մանրամասն ծանօթութիւններ չկան, բայց եղածներն ալ կը բաւեն ցոյց տալու որ հոն, ինչպէս ուրիշ տեղեր, բանավարական էվոլյուցիան որոշ չափով ճամբայ կարած է: Երբայցիներու միաստուածութիւնը նախ քան աքսորը ստճարի ծէսեր ընդօրինակեր էր Բաբելոնէն, բայց իրողութիւն է որ Բաբելոնը եւ Ասորեստանը իրենց կրօնական սիստէմներուն պատուատեր էին հին աքքատեան քաղաքակրթութեան շատ մը բաներ: Կային բաղմաթիւ աստուածներ, տեղական եւ օտար աստուածներ: Ասորեստանի կայսրութիւնը բոլոր աստուածները ենթարկեց իր ընտրած աստուծոյն, բայց ասորակարգուած աստուածները տապալեցին իր շէնքը: Ինկաւ Ասորեստանը, բարձրացաւ Բաբելոնը: Բաբելոնական իմպերիալիզմը նոյնպէս չէր հանդուրժեր բաղմաթիւ աստուածներու ներկայութեանը. ան իր գլխաւոր աստուածը ընտրելով հանդերձ այնքան խիստ չվերարերուեցաւ միւս աստուածներուն հետ. պահ մը ազատ թողուց բանախորութեան ճամբան: Բայց իր շահածը երկար ատեն չկրցաւ վայելել, երբ Կիւրոս քանդեց իր շէնքը:

Հին Պարսկաստանը

Մագդէական սիստէմը կամ Ահուրա Մազդայի պաշտամունքը, զոր մենք կը գտնենք Հերոդոտոսի պատմական արձանագրութեան մէջ, որպէս հակա-կռապաշտական կամ միաստուածեան հաւատք հինգերորդ դարուն (ն.թ.), առաջինն է որուն այդ հանդամանքը կրնայ տրուիլ անքննադատելի ստուգութեամբ: Ուրեմն, միաստուածեան դաւանանքի առաջին ռահվիրաները հրեաները չեն եղած, ինչպէս կը ներկայացնէ Երեմիայի դիրքը (ենթադրաբար զրուած վեցերորդ դարուն ն.թ.) որ կը յայտնէ թէ հրեաները բաղմաթիւ աստուածներու նկարները կը պաշտէին. նոյնպէս անոնք բաղմաստուածեան էին եւ կռապաշտ, ինչպէս կը նկարագրէ Եղեկիէլի դիրքը (հաւանականօրէն զրուած բաբելոնական գերութեան կամ վերջնութեւ շրջանին):

Կիւրոս այնքան մեծ եռանդով փարած չէր մագդէական հաւատքին, բայց Տարիոս մէկ սերունդ յետոյ արոյնքանը զարձաւ անոր:

Մագդէական սիստէմը, ինչպէս կը գտնենք պատմութեան մէջ, միդիացիներու կրօնքն էր. ժողովուրդ մը որ միայնաւ պարսիկներուն Կիւրոսի իշխանութեան տակ: Մոզերը միդիայի եօթը ցեղերէն մին կը կազմէին: Կիւրոս ինք կէս-պարսիկ մը, միդիացի-



ներուն հանդէպ ցեղային անխտանութիւն մը ունէր, թէեւ անոնց մոզերը ընդունելու էր որպէս ազգային քահանաներ: Տարիսը, սակայն, ինչպէս ըսինք, հողիով նուիրուեցաւ մազդէականութեան, միզիացիները սիրաշահելու համար, թէեւ իր իշխանութեան ատեն անոնք շատ նեղութիւն տուին իրեն: Իր տիրապետութեան ամենահարուստ մասը արեւելեան Իրանն էր, Ահուրա Մազդայի պաշտամունքի նախնական ծննդավայրը:

Պարսիկներու վզին պատուաստուած կրօնը պատկեր չունէր, սրովհետեւ պարսիկները պարզ երկրազորներ ըլլալով պատկերներու կարեւորութիւն չէին տար:

Իրանի ժողովուրդի սկզբնական շրջանի կրօնքը շատ պարզ էր: Անոնք կը պաշտէին արեւ աստուածը, որ խոտ կը հասցնէր իրենց ոչխարներուն եւ կը հասունցնէր իրենց հունձքը: Անձրեւ աստուածը որ կը ջրէր իրենց արտերը: Ամպ աստուածը, հով աստուածը եւ ուրիշ աստուածներ, որոնք սրեւէ կերպով կ'օգնէին իրենց:

Բայց այդ կրօնը իր պարզութեան մէջ չմնաց: Յելուզակ ցեղերու գէմ մղուած պարբերական կոխներու ընթացքին Իրանի ժողովուրդը տիրացաւ ուղիւղական արուեստին, ունեցաւ իր հերոսները: Երեւան եկան տոհմային աստուածներ:

Երբ արտաքին վտանգը հեռացաւ, երկրին մէջ սկսաւ դասակարգային շերտաւորումը: Աստուածներու բազմացումով երեւան եկան պատկերներ ու կուռքեր: Ազգասները իրենց կուռքերը կուէ կը շինէին, հարուստները՝ ոսկիէ եւ արծաթէ: Աստուածներու մէջ ալ երեւան եկան դասակարգիչը:

Կուռքերու երեւումով տաճարներ կառուցուեցան: Տաճարներու մէջ ծառայողները կազմեցին կրօնական դասակարգը:

Մազդէականութիւնը կրնանք ըսել թէ քահանաներու, այսինքն մոզերու շինած կրօնքն էր որ իր դասակարգային հանդամանքով չէր թոյլատրեր ազատ մասձողութիւնը:

Զրադաշտի երեւումով իրերու կերպարանքը չիփոխուեցաւ: Վշտասպ արքան Զրադաշտի կրօնը ընդունեց, բայց թուրանցիք հակառակեցան նոր կրօնին, որով երկու անհաշտ ցեղերու միջեւ վերսկսաւ պայքարը: Ընկերային ու քաղաքական բարդ պայմաններու ներքեւ ազատ մասձողութիւնը անհնարին էր:

Եզդիպտոս

Եզդիպտական կրօնքներու հարուստ յիշատակարանները դժուարաւ լոյս կը սփռեն կրօնական բանավարութեան զարգացման

վրայ քան ինչ որ դասնք Միջագետքի մէջ, թէեւ ապացոյցներ կան որ նման երեւոյթ մը յառաջացեր է հոն եւս: Պարզ է որ գատաստուածական ազանդներու մրցումն ու բազդատութիւնը հոս ինչպէս ուրիշ տեղեր սոսնջորդեց յարաբերական սկզբնականութեան աստիճանի մը, որ թոյլ միադաւանութեան կամ համաստուածութեան մէջ վարդապետութեան ձեւ առաւ: Տարբեր հարստութեանց փոփոխականի յաջորդականութիւնը, տարբեր աստուածներով, պատճառ եղաւ որ ինչպէս Բարելոնի մէջ, աստուածութիւնները քահանայական խմբաւորումներով մտնեն ընտանիքներու մէջ: Ան իր մէջ կ'առնէր նաեւ դազանուսոյց բացատրութիւն մը որպէս բնական շրջանառութեանց խորհրդանշան: Նոր թագաւորութեան սկզբնական շրջանին (1500 Ն.Ք.) ամբողջ քահանայութեան կողմէ հաստատուած էր որ Արեւ աստուածը իրական մէկ աստուածն էր, որ կը պաշտուէր բոլորին կողմէ: Եւ այդ աստուածը իր կարգին կ'ըմբռնուէր որպէս ոգեկան ուժի ազրիւր, մարդակերպային բնոյթով եւ Կորաւոր բարոյական հակամիտութեամբ: Այս տեսակի աստուածապետութիւններ չէին կրնար կազմուիլ անդիտակցաբար: Մարդիկ շատ լաւ գիտէին թէ իրենք խոշոր քայլ մը կ'առնէին իրենց հայրերու ճամբուն վրայ: Եզդիպտացոյց մեծեղներու գերքը այլասիրական բացայայտ օրինակ մըն է ուր կը պարզուին փիլիսոփայական եւ բարոյագիտական սկզբունքներ, որոնք ի վերջոյ երեւցան քրիստոնէական աւետարաններուն մէջ: Ատիկա ցոյց կուտայ թէ կրթուած եւ քահանայական դասակարգը նկատելիօրէն զարգացած էր: Եւ մենք գիտենք թէ այդպիսի զարգացում կրնար տեղի ունենալ խաղաղութեան եւ օրինապահութեան շրջանի մը մէջ որ տեսած ըլլալու է գարերով: Եւ այդ բոլորը տեղի ունեցեր են առանց անցեալի հաւատալիքներէն մէկ մասնիկ զոհելու: Ժողովրդական համաստուածութիւնը, բացարձակ ազիտութեան վրայ հաստատուած, անխորտակելի էր. եւ ամէնէն փիլիսոփայ քահանաները երբեք չէին երազեր գայն արժատախիլ ընել: Ոմանք կը հաւատարացնեն թէ զպիւրները իրենց նոր զաղափարները չէին ծածկեր, որպէսզի ժողովրդական զանդուածները չմնան կոշտ նախապաշարումներու մէջ: Ասոր ճիշդ հակառակն է իրողութիւնը: Հին Եզդիպտոսի մէջ կարելի չէր գտնել հասարակ մէկը որ կարգար կամ գիրք մը գնէր կարգալու համար: Ժողովուրդը բացարձակ մեծամասնութեամբ անգրագէտ էր եւ ոչ ոք կը մտածէր անոնց բան մը սորվեցնել:

Եզդիպտական քաղաքակրթութիւնը իր բոլոր աստիճաններով վերջնականորէն պայմանաւորուած էր իր նիւթական հիմքե-



բով, որոնք իրենց կարգին կ'որոշին իր քաղաքականութիւնը. հոն ուրիշ տեսակի քաղաքակրթութիւն չկար որ դայն ուրիշ տեղ առաջնորդէր: Առատ, ածան եւ կանոնաւոր ուսուցիչի մաստակարարում կար զիւրաւ շահագործուող բնակչութեան համար, որուն հաղարաւոր տարիներէ ի վեր բաժին ինկած էր աշխատանք, աղիամութիւն, քաղաքական անտրտունջ՝ հպատակութիւն եւ նախնական մտավիճակ: Այսպիսի բնակչութեան համար ընդհանուր գաղափարները ոչ լոյս կուտային, ոչ ալ հանդատութիւն: Անոնց համար պարզ մարդկային պաշտամունք մը կար գոր կը նուիրէին տեղական բնական աստուածներուն կամ թագաւորութեան նախազանցող աստուածներուն, առանց ճանչնալու անոնց ծնունդը, բնոյթը եւ էութիւնը: Հրաշքներ, ոչ թէ տեսութիւններ, կախարդանք եւ ոչ բարոյագիտութիւն. ասոնք էին անոնց հոգեկան անունը: Եւ ժողովրդական մասաներու կեանքի պայմաններն էին որ կ'որոշէին կրօնաւորին եւ թագաւորին քաղաքականութիւնը: Կրօնաւորին եկամուտը կուգար ժողովուրդէն, իսկ թագաւորին իշխանութիւնը հաստատուած էր երկուքին ուսերուն վրայ: Իրերու այս սարքաւորումին մէջ ոչ թագաւորը, ոչ կրօնաւորը, ոչ ալ ժողովուրդը ազատ մտածողութեան մասին գաղափար կրնային ունենալ: Երբայցեցիները երբ Եդիպոս բերուեցան ու Մովսէսի հետեւելով ազատ մտածողութեան յարեցան, փարաւոնը դանոնք մոնտեց Եդիպոսէն:

Փիւնիկէ

Փիւնիկեան կրօնքին մէջ մտածողութեան ներքին գործունէութեան շուրջ շատ քիչ ծանօթութիւն ունինք. հոյովմէացիք երբ դրաւեցին Կարկեղոնը, մակեդոնացիները՝ Տիւրոսն ու Սիդոնը, փիւնիկեցիներու գրական մնացորդները ամբողջապէս փճացուցին: Այսու հանդերձ անուղղակի նշանակելի տեղեկութիւններ կարելի է հազորդել մեր հետաքրքիր ընթերցողներուն:

Առաջին իսկ առիթով, գժուար է կասկածիլ թէ փիւնիկեցիները Եդիպոսի եւ Միջագետքի կանխադոյն շրջանի մտածողութեան նոյն գլխաւոր գիծերուն հետեւած են. միայն թէ յայտնի կ'երեւնայ որ անոնք իրենց պաշտամունքներուն մէջ պահած են համահաշտութեան գիծ մը եւ իրենց բարոյագիտութիւնը գարգացնելու ձգտում մը: Բնատիպ դուռ միաստուածեան տեսութիւնը այստեղ չենք գտներ, բայց կը տեսնենք որ սեւէ քաղաքի գլխաւոր աստուծոյ մը ընդհանուրի կողմէ ճանաչումը որպէս արեւ աստուած տիպոս մը եղած է, քան թէ անուն մը, եւ նոյն ատեն անոր հետ հաւատալիքներու մաս կազմած են երկրորդական աստուածութիւններ:

Փիւնիկեան աստուածներու գլխաւորը սմէն տեղ կը կոչուէր տարբեր տիպոսներով: Բաազ (ակր), Ռամ կամ Ռայմոն (բարձր), Մոդսք (թագաւոր), Էլայուն (զերագոյն), Բէլ Սամին (երկինքի տէր):

Փիւնիկեցիք. եղած են վաճառական ժողովուրդ. անոնք եղած են յանդուզն, անաչառ եւ ուղղամիտ: Անոնք ուր որ մտած են ընդօրինակեր են ինչ որ իրենց համար նկատած են լաւագոյն: Անոնց աստուածներն ալ եղած են մերթ անդութ, մերթ հաշտուողական: Բայց առհասարակ փիւնիկեան կրօնքը նկատուած է որպէս «անմաքուր եւ անդութ»: Իրողութիւնը, սակայն, այն է որ փիւնիկեցիներուն մէջ վերջապէս փոքրամասնութիւն մը կար որ իրենց քաղաքակրթութեան մշակութային եւ բնկերային ուժերու հաւասարակշռութեան պայմանները հանգամանորէն կը հասկնար:

Հին Չինաստանը

Ասիական բոլոր հին սիւսէմներէն միայն Չինաստանն է որ գործնական բանավարութեան հետքերը մեզի կը պարզէ կենսադրական ծանօթութիւններով, թէեւ նկատելի է որ այդ բանավարութիւնը չինական պահպանողականութեան դրոշմը կը կրէ որոշ չափով: Կոնֆիլիոս իրական անձնաւորութիւն է, ոչ թէ հրաշալէպի մը ծնունդը, չինական բանավարութեան ներկայացուցիչը:

Չինացիները հաղարաւոր տարիներ առաջ, ինչպէս շատ մը ուրիշ ժողովուրդներ, բնութիւնը պաշտօններ էին, մի տեսակ համաստուածութիւն: Անոնք կը հաւատային նաեւ որ ուրիշ զերագոյն իշխող մը կայ որ կը կոչուէր Շանկ Տի: Բայց Շանկ Տի ամենաբարձր աստուածը չէր. ամենաբարձր աստուածը աստուածներու աստուածն էր որ կը կոչուէր Տիէն: Տիէնը կ'ապրէր երկինքի մէջ: Ան էր որ ամպերէն վար կը թափէր անձրեւը, որուն այնքան սէտք ունէին չինացիներու բրինձի արտերը: Անոնց այս հաւատքին մէջ կը մտնէր միաստուածութեան գաղափարը:

Չինացիք կը հաւատային նոյնպէս որ մարդը երբ կը մեռնի, անոր հոյին կ'ապրի: Ասկէ արմատացաւ ու ընդհանրացաւ նախահայրերու պաշտամունքը:

Չինաստանի տարբեր շրջաններու մէջ տարբեր աստուածներ երեւան եկած են: Որովհետեւ երկիրը միաձեւ, կեդրոնական իշխանութիւն չունէր, աստուածներն ալ իրարմէ բաժնուած կը ներկայացնէին տարբեր իշխանութիւններ: Աստուածներու կեանքը պարմանաւորուած էր տեղական ժողովուրդի անտեսական պայմաններուն ու կարիքներուն հետ:



Հինգ հազար տարի առաջ Ֆլուրի թագաւորութեան ատեն դեղին կայսրը լեռներու եւ գետերու ուղիին համար հիմնեց առաջին տաճարը: Անկէ վերջ ուրիշ շատ տաճարներ հիմնուեցան Չինաստանի մէջ: Ի վերջոյ կայսրերէն մին օրէնք գրաւ որ տաճարներուն մէջ նուազածութիւն ըլլայ եւ երգեր երգուին աստուածները հաճոյացնելու համար: Անկէ յետոյ ժողովուրդը դարերով տաճարներուն մէջ պաշտեց իր աստուածները երգելով, սրինդով ու տաւիղով եւ գոհեր մատոյց բնութեան ուղիներուն:

Բայց չինացի ժողովուրդի հին, նախնական կեանքը կերպարանափոխուեալ էր, անհետացեր էին կոմունական հասարակուրդները, անոնց յաջորդեր էին դասակարգեր. փոքրամասնութիւն մը որպէս ճնշող դասակարգ, մեծամասնութիւն մը որպէս ճնշուող, շահագործուող դասակարգ:

Այդ շրջանին հրապարակ իջաւ ազատ մտածողութեան կարկառուն մէկ ներկայացուցիչը, Կոնֆիլիոս:

Կոնֆիլիոսի նպատակը չէ եղած կրօնք մը հիմնել: Իր ժամանակի ընկերային նեխածութիւնները, որոնք արդիւնք էին դասակարգային շերտաւորումներու եւ տիրող տնտեսական-քաղաքական խառնակ դրութեան, հարկադրեցին որ ինք զանոնք արմատախիլ ընելու միջոցներու մասին մտածէ:

Տիրող դասակարգը հակառակ էր Կոնֆիլիոսի վարդապետութեան, ատոր համար անոր զրքերէն ոմանց իմաստը խեղաթիւրուեցաւ եւ նոր աւելորդապաշտութեանց հող պատրաստեց: Իր առաջին զիբքը որ կը կոչուի Եի Քիմի կամ փոփոխութեանց գիրքը դարերով գործածուած է կախարչութեան եւ դուշակութեանց համար:

Կոնֆիլիոսի ժամանակակից էր ուրիշ ազատ մտածող փիլիսոփայ մը, Լա-Օ-Չէն որ հիմնեց թափաստներու կրօնական աղանդը:

Լա-Օ-Չէի վարդապետութիւնը կը տանէր երրորդութեան մը դաւանանքին: Անդիտելին ծնած է գիտելին եւ այս երկուքը միանարով ծնած են տիեզերական ուղին:

Չինաստանի տիրող դասակարգերը երբ այս երկու գիտնական-փիլիսոփաներուն տուն չտուին, հիւրընկալեցին բուզդաշակաւորութիւնը որ միտտիկական հաղուստով մտաւ Չինաստան եւ տարածուեցաւ:

**ՎԱՏԱՍԵՐՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅ ՈՒՓԵՐԸ**

Վեր անեյով բոլոր դրութեանականացած եւ հաստատուած կրօնները, կը անենք որ անոնք ժառանգական ձգտում մը ունին իմացական եւ բարոյական վատասերումի մը, որ աստիճանաբար

խորացեր է, հակառակ անոր որ անոր ընկերացած է ազատ մտածողութեան յարատեւ ուղղիչ գործունէութիւնը: Այժմ անդին է որ նշենք այդ ձգտումին երեւոյթները:

1. Վարդապետական եւ ծիսական կառուցուածքով կրօնք մը միշտ աններող ուղի ունեցեր է նոր մտածողութեան հանդէպ. ատոր հետեւանքով կրօնամուլ անհատ մը խնայական տեսակէտով հիւանդ է եւ չի կրնար մօտենալ կեանքի առեղծուածներուն: Իրողութիւն մըն է աս ամբողջ հասարակութեան մը համար որ դրուած է ահաբեկչական միաձեւութեան մը տակ: Յոյց տրուած հնազանդութիւնը անքննադատելի է ու հակախառնաճիւղական: Այսպէս, բոլոր կրօնքներու պատմութիւնը անկումներու եւ վերակազմութիւններու արձանագրութիւնն է: Ազատ մտածողութիւնը եկած է յաճախ նոր կարգեր հաստատել, բայց այդ նոր կարգերը դարձեալ բռնած են ահաբեկչութեան ուղին: Որպէսզի ուղղիչ մտածումը անհրաժեշտ խորումը յառաջանէ արմատական դժով, պէտք է փոխել իմացական աշխարհը իր բարոյական իմաստին հետ: Այսպիսի հակադրող շարժում մը յառաջացնողը անտարակոյս բացատրիկ հանճարով օժտուած անհատականութիւն մը ըլլալու է:

2. Բայց պէտք է նշել որ այդպիսի հակադրեցութեան բախտը կ'որոշուի ընկերային-տնտեսական կամ քաղաքական պայմաններէն: Երբ այդ պայմանները կը պակսին եւ մարդկային մտածողութեան զեկը զրուած է կրօնաւորներու եւ պաշտօնական դասակարգի ձեռքը, հասարակական կուլտուրան կը մնայ լճացած: Այս եղած է երեւոյթը Եգիպտոսի, Միջագետքի եւ ամէն տեղ:

3. Ընկերային նպաստաւոր պայմաններու բացակայութեան հետեւանքով կրօնքը ոչ միայն ցած աստիճանի վրայ կը պահէ ժողովուրդի խորհողութեան եւ կեանքի մակարդակը, այլեւ աւելի կը վատթարացնէ զայն հակաբանաւարական հաւատքին վրայ աւելցընելով նոր նախապաշարումներ:

4. Նոյնիսկ բարեկեցութեան տարրական պայմաններու մէջ երբ ընկերային գիտութիւնը կամ ազատ մտածողութիւնը իր առաջնորդողի դերէն հեռու կը պահուի, բազմաառիւծներէն յառաջացած քաղաքակրթութիւնը կը խթանէ կրօնական վատասերումը: Երբ ուտեստեղէնը առատ է եւ բնասանի կենդանիները բազմաթիւ են, որբեմն, աստուածներուն յաճախակի եւ շատ զոհարելութիւններ մատուցուելու են. ասով կը բարձրանայ կրօնաւորներու տիրապետութեան ուղին:

5. Երբեմն գիտական ծանօթութիւնը հանճարեղ մարդոց միջոցու կուզայ ուղղել ժողովուրդի մը կրօնական լմբանումները,



բայց ուրիշ ձևով աւելի կը զօրեղացնէ ժողովրդական նախապաշարումը: Բարեկենսացիներու աստղագիտութիւնը, օրինակի համար, մինչ մէկ կողմէ սկեպտիկութիւնը զարգացուց, միւս կողմէ կատարութեան եւ գուշակութեան դիժերը արուեստի կարգին մէջ դրաւ: Նոյն երեւոյթը կը տեսնենք շինացիներու, հնդիկներու եւ ինչու ուրանալ, նոյնիսկ այժմու քաղաքակիրթ ազգերու մէջ:

Այսպէս, ուրեմն, խնդիրը որ մէկ տեսանկիւնէ որ վեր առնենք, կը տեսնենք որ կրօնքը երբ տիրող դասակարգի ամենազլխաւոր յենարանը եղած է, ինքնին վաստակներուելով ժողովրդական դանդուածներն ալ առաջնորդած է վաստակներու եւ չէ զիջած իր սահմանափակ զիրքը հանդէպ ազատ մտածողութեան, առանց որուն յառաջդիմութիւնը անիմաստ բառ մը կը դառնայ:



F. ՄԱՍ

# ԱԶԱՏ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հին քաղաքակիրթ երկիրներու կարգին Յունաստանը կը ներկայացնէ ամենարարձր քաղաքակրթութիւնը, քաղազրութիւնը հին աշխարհի կուլտուրական ուժերուն որոնք զարգացած էին Փոքր Ասիոյ յունական զաւութներուն մէջ: Հոմերական դարաշրջանի ուրուականը, նոյնիսկ յոյն կրօնքը, ենթարկուած են արեւելքի ազդեցութեան: Յոյն փիլիսոփայութիւնն ու արուեստը նոյնպէս իրենց առաջին ներշնչումները առած են արեւելքէն: Գիտենք թէ մեր այս հաւաստիացումը անընդունելի է ոմանց համար, բայց իրողութիւնը կայ ու կը մնայ այն որ հին քաղաքակրթութեան արմատները արեւելքէն ծնունդ առած են, եւ անոնք զուտ արիական ցեղերուն յատուկ չեն եղած. սեմական ցեղերու քաղաքակրթութիւնն ալ խառնուած է անոնց հետ. իսկ յոյները, իրենց զաւութները տարածած ըլլալով կարեւոր վայրերու մէջ, շփում ունեցած են բոլոր ցեղերուն հետ եւ փոխ-ազդումներով զարգացուցեր են իրենց լեզուն, կուլտուրան եւ փիլիսոփայութիւնը:

Յոյն անուանի ուսումնականները, սակայն, տարուած ազգայնական այլամերժ նեղմտութեամբ, կը մերժեն ընդունիլ իրենց քաղաքակրթութեան արեւելքի ազդեցութեան կապակցութիւնը եւ կը ջանան փաստել թէ յոյն մտածողութիւնը եղած է «բնաշխարհիկ»: Բայց այս մարդիկը չեն անդրադառնար իրենց մեծագոյն սրխալին որ իրենց այդ տեսութիւնը հակադիտական է. եթէ յոյն մտածողութիւնը «բնաշխարհիկ» ըլլար, ան բնաւ նշանակելի յառաջդիմութիւն չէր ունենար: Մենք ապահովաբար կրնանք բռնել թէ սեւէ ժողովուրդ որ չափաւոր արագութեամբ յառաջդիմած է մտածողութեան, արուեստի ու կեանքի մէջ, իր յառաջդիմութիւնը պարտական է օտար հազորդակցութեանց հակազդեցութիւններուն: Յունական կանխադոյն Էվուիցիալի պատմութեան մէջ չկայ փաստական տուեալ մը որ մեղի պարզէ թէ Յունաստանի սահմաններուն երբեք չէ մտեցեր սեւէ օտար ընդհարում կամ ազդեցութիւն: Ընդհակառակը, պատմութիւնը ցոյց կուտայ թէ յոյները իրենք խառնուրդ մի ժողովուրդ եղած են, իսկ անոնց հետքերը որոնելով



կը զանենք թրակեացիները սրանք մուսաւները կը պաշտէին: Յունական կուլտուրայի վերջիններ գերակայութիւնը կը բացատրուի ոչ թէ ապօրինաւ «յոյն հանճարի» տեսութեամբ, այլ յաւանդէն խօսող ժողովուրդի մը իմացականութեան մասնայատուկ շրջանառութեան այն դժով, որ անցած է ուրիշ ժողովուրդներու յարատեւ տարազուգումներու մէջէն եւ արագացուցեր է իր քայլերը յոյն քաղաքային պետութեանց ստեղծած ընկերային պայմաններու օժանդակութեամբ, պայմաններ՝ որոնց ամենակարեւորներն էին անոնց աշխարհազրական բաժանումները եւ անոնց միջեւ տեղի ունեցող յաճախակի մրցումն ու փոխ-ազդեցութիւնը:

Ատֆրայա Միւլըր կը հաւաստիացնէ թէ Հոմերոս յոնիական խմորէն զմիւսնիայի էր. անոր կրօնը որ պատկերացնելու էր բաղմաձեւ յոյն դիցարանութենէն մասնաւոր ընտրութիւն մը, անհրաժեշտօրէն կը ներկայացնէ իր տեղական շեղումը: Արդ, զմիւսնիայի յոյն պաշտամունքները, ինչպէս փոքր Ասիոյ յոնիական քաղաքներու պաշտամունքները որոշ չափով պիտի ցորցնէին զիրենք շրջապատող քարիական կամ ուրիշ ստիական պաշտամունքներու ազդեցութիւնը: Մեկխոսի կանխադոյն աստիկեան յաղթականները թոյլատրեցին հոն քարիական արեւ տատուծոյ պաշտամունքը. նոյնը ըրին անոնք երբ հաստատուեցան Եփեսոսի մէջ. հոն որդեգրեցին Լիւսեան տատուծուհին (որ եղաւ Արեւմտը) եւ պահեցին քահանաներու եւ ներքիններու վարչական կազմը: Զմիւսնիան բացորոշակի կերպով խոսնուրդ հասարակութիւն մը ունէր, բայց անոր հիմնադիրներն էին Պեղոպոնէսէն եկող աքայեանները. բայց յոնիական եւ էալիկական կրօնական միջնորոտը որ սարքաւորուած էր հասարակաց միասնական գոհարերութիւններով, պիտի ներկայացնէր այդ կրօնին յառաջ տարած գիւցազներգութիւնը: Քարիական քաղաքակրթութիւնը որ տարածուած էր Եգէական ծովեզերքի մեծ մասերուն մէջ, իր մէջ սանելու Դիլոսը եւ Կիպրոսը, պէտք է ընդունինք թէ մեծ ազդեցութիւն ըրած էր յոյն յաղթականներու վրայ որոնք միայն քաղաքակիրթ առեւտրականներու ուղեգծին կը հետեւէին:

Յոյները իրենց կուլտուրական շրջանառութեան ընդհանուր կերպարով կը զանազանուէին հնդիկներէն, պարսիկներէն, եգիպտացիներէն, հրեաներէն եւ բարբոնացիներէն եւ գրեթէ հին չինացիներէն, այն բանով որ իրենց բարձրագոյն մասձողութիւնը անոններն էին ոչ թէ պաշտամունքներու նուիրուած քահանաները (կրօնաւորները) այլ անկախ աշխարհականները: Յունաստանի, ինչպէս Չինաստանի մէջ զարդացման այս գիծը հասկնալի է, երբ

նկատի առնենք այդ երկու երկիրներու քաղաքական կանխադոյն պայմանները: Չինաստանի մէջ անկախ ֆէոտալիական պետութեանց, իսկ Յունաստանի մէջ քաղաքային պետութեանց բազմաւորութիւնը, երեւոյթ մը որ ընդհանրացաւ փոքր Ասիոյ մէջ ալ վաճառականական մրցակցութեան հետեւանքով: Այսպիսի պայմաններ կ'արդիւլին կղերական դասակարգի կազմակերպութիւնն ու պետութեացումը: Ոչ Չինաստանը, ոչ ալ կոսպաշտ Յունաստանը իմպերիալիստական զծին վրայ անցած չէին, ատոր համար բանալարութիւնը բաւական զորաւոր էր արդիւլելու քահանայապետութեան իշխանապետութիւնը: Վերջերք, քրիստոնէական շրջանին, Յունաստանի մէջ կրօնաւորական սիստէմը զարգացաւ երկու պատճառներով: Առաջին, որովհետեւ յառաջացաւ ընկերային վատասերում մը որուն կ'ընկերանար քաղաքական կիանքի կատարեալ ալլափոխութիւնը: Երկրորդ, որովհետեւ նոր ձեւի պաշտամունք մը քաղաքական կազմակերպութեան հանգամանքով եւ ահաբեկչական մեթոտով եկաւ հաստատուիլ ժողովուրդի ուտերուն վրայ: Անկէ սկսաւ յետադիմութիւնը: Եւ այժմ եթէ հարցնենք թէ ո՞ւր մնացին «բնաշխարհի» յոյն հանճարները, այս հարցումին պատասխան տուող չկայ:

Մեծ յառաջիմութեան շրջանին, Յունաստանի մէջ հնարաւոր նուաճումները կատարուեցան քահանայութեան բացակայութեան հետեւանքով: Յունարէն խօսող աշխարհին մէջ ընդհանուր կերպով չկար սուսցման նուիրուած տոկմայապաշտ մարմին մը, չկար աստուածարանութեան շուրջ գրուած կրօնադիրք մը, չկար բարոյական օրէնք, ոչ չլ սեւէ տեսակի սուրբ զիրք: Տեղական պաշտամունք մը կը կատարուէր քահանաներու միջոցով եւ հնաւանդ ծիսակատարութեամբ. այդտեղ կը վերջանար քահանային դերը եւ պաշտօնը: Դիլիեան պատգամախօս քահանայութիւնը աստեւ մը քաղաքական ազդեցութեան աստիճանին հասաւ, երբ յոնիական քաղաքներու յոյն քաղաքացիները վաճառականական նուաճումներ կը հետապնդէին: Այս հանգամանքներու ներքեւ էր որ Մեկխոսի թաղէսը, ծնունդով փիւնիկեցի մը, բարբոնական նախնական դիտութեան խորիսխին վրայ հիմնեց յունարէն խօսող ցեղին աւելի բարձր տեսակի գիտութիւնն ու փիլիսոփայութիւնը:

Թաղէս

Թաղէս, Հոմերոսի նման, հետեւելով բարբոնական ըմբռնողութեան, ամէն բանի սկիզբը կը կապէ ջուրին. բայց Թաղէսի ուղեգիծը հիմնապէս տիեզերաբանական է, ոչ թէ աստուածաբանա-



կան: Իր այն յայտարարութիւնը թէ «բոլոր բաները իրենց մէջ աստուածներ ունին», կը նշանակէ թէ իրերը իրենց ուժերը ժառանգեր են տիեզերքէն, ոչ թէ անհատի մը իշխանութենէն: Աստուածարանները ասոր համար կը կարծեն թէ ան աստուածներու հաւատքը կը ժխտէ: Այսպիսի կարծիքով կարելի չէ ներկայացնել Թաղէսի սիսակմբ, միայն կարելի է ըսել որ ան հիմնուած էր համաստուածեան եւ բնագիտական հիմքերու վրայ: Թաղէս կ'ընդունէր թէ նիւթը ոչ միայն ջուրէն ծագում առած է, այլեւ լուծանելի է ջուրին մէջ. թէ բոլոր երեւոյթները կը ղեկավարուին բնական անհրաժեշտութենէ ծնած պատճառականութեան օրէնքներով եւ արեւն ու մոլորակները (հասարակօրէն նկատուած որպէս աստուածութիւններ) երկրի նման գնդաձեւ մարմիններ են: Տիեզերքի մնացեալ մասերը ան կ'ենթարկէր իր մէտէոքարանական եւ աստղագիտական մտահայեցողութիւններուն, որոնք կը պարզեն թէ անիկա ծանօթ էր քաղզէական գիտութեան, որովհետեւ ան կանուխէն կրնար գիտնալ արեւային խաւարման ժամը: Թաղէսն էր որ երկրաչափութիւնը եզրադասէն ներմուծեց Յունաստան: Անոր կը վերագրուի նաեւ քաղաքական փնտերացիա կազմելու տեսութիւնը, որուն հետեւելու էին յանրացիները պարսիկներէն ապահով ըլլալու համար: Եւ ան էր այն միակ մարդը որ բարոյական օրէնքի հիմքը կազմող ոսկեղէն կանոնը հաստատեց իր մէկ նշանաբանով. «Ծանիր գեեգ»: Ասով կը նշուէր հին մտածողութեան մէջ նոր շրջադարձ մը, որ մարդոց ուշադրութիւնը աստուած լոմաստութենէն կ'ուղղէր գէպի գիտակցութեան վերլուծումը եւ տիեզերական շրջանառութիւնը:

Այս կէտէն սկսաւ յունական բանավարութիւնը (ըացիոնալիզմը) որ շարունակուեցաւ հակառակ յետաշրջական շարժումներուն՝ մինչեւ հոսովմէական յաղթանակը:

Անախիմանդրոս, Թաղէսի աշակերտն ու ընկերը, եկաւ որոնել առաջին նախատարրը եւ դասաւ նիւթական պատճառականութեան անսահմանութիւնը, որ նիւթը սկիզբ չունի եւ անկորնչելի է, որ տիեզերքի մէջ անթիւ աշխարհներ կան, որ մարդը ջուրէն ծնունդ առած է եւ ջրային կազմ ունի: Ասոնք Անաքսիմանդրոսի տեսութիւններն են:

Անախիմանդէս, տակաւին ուրիշ մեխիտոսեան մը, որ նմանօրինակ մտահայեցողութեան հետեւեցաւ: Ասոր տեսութեամբ առաջին նախատարրը օդն էր, ուրկէ կախուած էր երկիրը: Ասիկա էր որ զարգացուց երկնային մարմիններու յաւիտենական շարժման թէորիան եւ հաստատեց որ երկիրը մոլորակային շարժման մէջ մի

օր պիտի բաղխի ուրիշ մոլորակի մը եւ պիտի կորսուի: Կայուն, մնայուն ոչինչ կայ:

Մտածողութիւնը աւելի արագ կը ճամբորդէր յանրական քաղաքներուն մէջ քան թէ Յունաստանի մէջ: 550 թուականին (Ն. Ք.) Իտալիոյ արեւմտեան ծովեզերքին վրայ հիմնուեցաւ քաղաք մը, էյիան, աննուաճ փոքայեաններու ձեռքով, որոնք պարսկական նուաճումներէն յետոյ նոր հայրենիք մը կը փնտռէին: Հոն երեւան եկաւ Քսէնոփանէս, որ նոյնպէս ազատութիւն կը փնտռէր: Այդ գծնդակ օրերուն, խօսքի եւ մտածման ազատութիւնը ձեռք ձեռքի սուած ընթանալու էին. եւ անա Քսենոփանէսի յանրական համաստուածութիւնը սկսաւ յարձակիլ մարդակերպարային կրօնին վրայ աւելի բուռն բանավարական ձեւով քան ինչ որ հրեայ մարդարէ մը կրնար յարձակիլ կոսապաշտութեան վրայ: «Ո՛վ մահկանացուներ», ան գրեց, «ենթադրենք թէ աստուածները ծնած են եւ կը կրեն մարդու հազուա եւ ունին մարդու ձայն ու մարմին: Բայց եթէ կենդանիները ձեռքեր ունենային եւ անոնցմով արուեստի դորձեր արտադրէին, անոնք իրենց աստուածները պիտի նկարէին իրենց սեփական մարմնոյ կերպարով. ձիերու աստուածը ձիու պատկերով պիտի ներկայանար. կովերուն աստուածը՝ կովի պատկերով, առիւծներու աստուածը՝ առիւծի պատկերով»: Հոմերոսի եւ Հեսիոդի նման գիցարանական երգիչներու վրայ եւս Քսենոփանէս կը յարձակի խաբել, երբ կը գրէ. «Անոնք աստուածներուն վերադրած են այս բաները, որոնցմով մարդիկ եղած են ախրահոշակ եւ դատապարտելի եւ անա այդ աստուածներուն մէջ կը տեսնենք գողեր, շնացողներ, խաբերաներ ու սճրագործներ»: Եւ երբ էլիացիք հարցուցեր են իրեն թէ իրենք այլեւս զո՞ւ մատուցանելու չե՞ն, երգելու չե՞ն մանուկ յափշտակող ծովի աստուածուհոյն համար, ան պատասխանեց է. «Մի երգէք, եթէ դուք կը խորհէք թէ նա աստուածային է. զո՞ւ մի մատուցանէք, եթէ կը խորհէք թէ նա մարդկային է»: Բայց այս հնչեց արձատարականութիւնը որ տակաւին ապաժամ չէր, էրիտաթիկ ազատ մտածողներու բնագիտութիւնն ու փիլիսոփայութիւնը նուազ նշանակելի գիրքի հասեր էին: Այն սեղը ուք տակաւ ծովը ծածկեր էր, այժմ իր ետեւ թողած էր ցեխ:

Անտարակոյս, շուտով ազատ խօսքին սահման մը դրուելու էր նոյնիսկ էյիայի մէջ, եւ էլիտաթիկ դպրոցը Քսենոփանէսէն յետոյ Պերմանիլոսի եւ Զեմոնի ձեռքերուն մէջ ուղղուեցաւ գէպի խորունկ բնագիտութեան եւ վերջը բառական տիալեկաթիկայի. եւ մարդիկ սկսան փիճել գոյին եւ անդոյին վրայ, շարժման անկարելիութեան վրայ եւ Աբելլէսի ու կրիայի հանելուկին վրայ:



Բայց ասով հանդերձ մտածողութեան էվոլյուցիան կանդ շարունակ, ան յոսաջ դնաց դանդաղ այլ սակայն նկատելի քայլերով:

Կանխագոյն շրջանի միլիտոսեաններու եւ Քսենոփանէսի հետ քաղաքացիական Պիւտագորասը այնքան բանավարական չէր որքան աստուածաբանական ազատ մտածող մը. բայց իր անունին կապուած ազատ մտածողի տիրոջսը կը պատկանէր իր հաստատուած սխալման, որ բանավարական գիծ մը ունէր երբ կ'անտեսէր զիցարանութիւնը: Որչափ որ հաւատ պիտի ընծայենք իր կենսագրական գիծերուն, կ'ըսուի թէ Պիւտագորաս սուրբացի Փերեկայտէսի աշակերտն էր. նախ քան Իտալիոյ Քրոտու քաղաքը հաստատուելը, ան ճամբորդէր է եգիպտոս եւ հոն յարաբերէր է քաղաքացի մոզերուն հետ: Իր յաջորդը, Փիլոլատոս, աստիճան եղած է որ բացէն ի բաց սորվեցուցեր է թէ երկիրը կը շարժի: Պիւտագորաս մեծ ծառայութիւն մատուցած է աստղագիտութեան, մատեմատիկայի ու գիտութեան: Դալով իր քաղաքական աշխարհահասկացքին, կ'ըսուի թէ Պիւտագորաս առաջին մարդն եղած է որ ընդունէր է իրերու հասարականացման սկզբունքը, բայց ասորքինակն այն է որ անոր հետեւորդները Քրոտոսի մէջ կազմեցին արիստոկրատական լիկա մը որ իր հակադեմոկրատական գիրքով ասելի էր ժողովրդական զանգուածներուն համար, որոնք յարձակելով անոնց ժողովատեղւոյն վրայ սպաննեցին զանոնք: Պիւտագորասի զիջումը վերջ է վերջոյ ենթարկուեցաւ զանազան վատասերուած գիմափոխութիւններու, որոնք բոլորն ալ բացասական գիրք բունեցին ազատ մտածողութեան հանդէպ:

Բայց վերջապէս քննադատական ոգին իր ճամբան Պերիկլէսի շրջանին մի քիչ կրցաւ բանալ Աթէնքի մէջ, ան ալ յոնիական քաղաքներէն, կատարուած ներածութեամբ: Ալեքսանդրոս առաջին ազատ մտածողն է որ պատմականորէն ծանօթ է օրինական կերպով որպէս դատապարտեալ իր ազատ մտածողութեան համար: Աթէնքի ազատ բնակչութիւնը ազէտ էր, ան օր մը կը ծափահարէր ազատ խօսող փիլիսոփան, միւս օրը պատրաստ էր զայն քարկոծելու:

Մինչ Աթէնք փառքի, գեղեցկութեան եւ իշխանութեան սանդուխներէն վեր կը բարձրանար, առանց ժողովրդական իմաստութեան, անդին դադուեցան քաղաք մը Արդերա, Թրակիոյ մէջ, հիմնուած յոնիացիներէն, յոնիական փիլիսոփայութեան զրգիտովը տարուած, հինգերորդ դարուն կ'արտադրէր մի քանի մեծ մտածորներ, որոնց մէջ յիշատակելի են Գեմոկլիտոս եւ Պրուտալիորաս: Ասոնք իրենց մտապաշարով փոխադրուեցան Աթէնք: Առաջինը

այն ճամբորդութիւններ կատարեց եւ հոչակ ստացաւ իր անոժանութեան թէորիայով. երկրորդը աստուածները բացասելու շուրջ իր դժբաժնով ու կարգացած ճառին համար մահուան դատապարտուեցաւ եւ փախաւ Աթէնքէն, բայց ճամբան խեղդուեցաւ: Աթէնքի մէջ փանաթիլիսոսութիւնը սկսեց էր զարգանալ, որովհետեւ տիրող արիստոկրատին կը տեսնէր որ փիլիսոփաները նիւթական-տիկերաբանական հարցերը անտեսելով ձեռք առնել սկսեց էին ընկերային հարցեր: Ահա այդ ստեղծ էր հրապարակ իջաւ ուրիշ ազատ մտածող մը, Լուկրատը, որուն հետ պէտք է յիշել նաեւ Պլատոնի եւ Արիստոտէլի անունները:

Սոկրատ հիմնական սկզբունքով եւ գործնական տեսակետով ազատախոս մարդ էր. ան չէր ընդունէր բարոյական խնդիրներու մէջ տիրող իշխանութեան հեղինակութիւնը: Տարուած հասարակական կենցաղով ու վարմունքով, անիկա իր քննադատական մտածողութիւնը այդ շրջանակէն հեռու շարբաւ: Ամբախուտ գիտութեան ընդհանրացման հարցին մէջ, որ յոյն իմացական կեանքի զլխաւոր անհրաժեշտութիւններէն մէկն էր, Սոկրատ բացարձակապէս յետադիմական էր, անիկա գիծ մը քաշած էր այն երեւոյթներուն միջեւ որոնք իրեն մտածողութեամբ գիւրահասկալի էին եւ հետադեմի (traceable) եւ անոնց միջեւ որոնք անօգուտ էին: Իր կարծիքով բնագիտութիւնը եւ աստղագիտութիւնը կը պատկանէին երեւոյթներու աստուածային դասակարգին, մարդկային հետախուզումը այդ մարդին վրայ բոլորովին յիմարական էր, անարդիւնք եւ ամբարիշտ: Ան իր բանավարութիւնը ուղղած էր վարուեցողութեան եւ աշխարհի ըրած էր կրօնական դաւանանքը:

Աթէնքի հասարակութիւնը երբ զատեց ու մահուան դատապարտեց Սոկրատը «հայհոյութեան» եւ «երիտաւարներու մտքերը ազդեցնելու» յանցանքին համար, փաստ է որ այդ ատենուան Աթէնքը կրօնական հարցերու մէջ այնքան կոյր, մոլեռանդ ու կեղծաւոր էր, որքան այս օրերու կապիտալիստական երկրի մը ամբոխը: Անտարակոյս յոյն սուսնական օրթոտոքութեան տեսակետով Սոկրատ մահապատիժի արժանի էր, բայց անոր հետ ուրիշ դարգացած աթենացիներ ալ կային, ինչպէս Երիպիտէսը որ իր թատերգութիւններով կը քննադատէր հին աստուածաբանութիւնն ու գիցարանութիւնը. այդ մարդիկը չկատապարտուեցան, դատապարտուողը եղաւ Սոկրատը: Ի՞նչ բանի վերադրելու է այս աչք ծակող աշտուութիւնը. աթենացի ամբոխի հոգեբանութեան...: Անշուշտ այդ հոգեբանութիւնը որոշ գեր ունեցաւ, բայց անոր ետեւ կեցողը եւ զայն դերապրոտութեան առաջնորդողը Աթէնքի ա-



բխտոկրատին էր, որ Սոկրատի մէջ տեսեր էր ոչ թէ հասարակ ազատ մտածող մը, այլ իրական յեղափոխական մը որ գործնականօրէն կ'ապրէր այնպէս ինչպէս էին իր քարոզած սկզբունքները:

Պղատոն, որ Սոկրատի առաջնորդով պատկանելի չէնք մը կառույց եւ անով անմահացաւ, նոյնպէս ազատ մտածող մըն էր, բայց չենթարկուեցաւ իր ուսուցչի դաժան բախտին, եւ այդ ոչ թէ անոր համար որ ինք հարուստ էր, այլ անոր համար որ ինք չքարոզեց, միայն գրեց: Սոկրատ խօսեցաւ եւ քարոզեց, գրական ժառանգ չթողուց: Աթէնքի հասարակութիւնը, անգրագէտ, տղէտ մի հասարակութիւն, տեղեակ չէր թէ Պղատոն ինչ կը գրէր, եւ այդ ստեղծները տպագրութիւն ալ չկար որ գիրք մը հագարաւոր օրինակներով տպագրուէր ու տարածուէր ժողովուրդին մէջ: Ռուս մը կը պահանջէր սակ կը մնար ու տիրող դասակարգը անկէ չէր վախնար:

Արիստոտելի համար կրնանք ըսել թէ ան ազատ մտածողութեան անուշադի ծառայութիւն մատուց, բայց դիտութեան տուած ծառայութիւնը մեծ էր: Արիստոտէլ յայտնի էր որ հուստաւոր մը չէր թէ ժողովրդական եւ թէ պղատոնական կրօնին: Վերջի պահուն ինք եւս դատապարտութեան սպառնալիքին ենթարկուեցաւ, որուն համար հեռացաւ Աթէնքէն եւ մեռաւ որպէս աքսորական:

Աթէնքի քաղաքական «ազատ» կեանքի խորասակումէն յետոյ ճիշդ է որ Յունաստան մտաւորական աշխուժութեան շրջան մը ունեցաւ, բայց ան ալ երկար չտևեց, երբ պատմութեան թատերաբեմին վրայ երևցաւ Հոսովմը:

ԱԶԱՏ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ ԼԻՆ ՀՌՈՎՄԻ ՄԵՁ

Հոսովմէացիները մտաւորական զարգացման ասպարէզը աւելի ուշ մտան եւ դանդաղօրէն յառաջացան, երբ հարաւ. Իտալիոյ յոյն գրացիներէն նախադատմական շրջանին ընդունեցին բարձր մշակոյթի սերմերը, մասնաւորապէս այբբէնդիմը. անոնք դարերով աւելի յետադիմեցին քան թէ յառաջդիմեցին, այբբենագիտութիւնը վատասերուեցաւ, որովհետեւ կուլտուրական դասակարգը գոյութիւն չունէր որ գրական աշխուժութեան թափ տար. իսկ հոգատէր արիստոկրատի միտքը հակած էր գիտութեան յարձակման կողմը, քանի որ վաճառականութեան ճամբուն մէջ Հոսովմ պահանջուած դիւրութիւնները չունէր: Հանրապետութեան կանխազոյն շրջանին թշուառութեան, միլիտարիզմի եւ արիստոկրատական մրցակցութեան նոյն յարաբերական պայմանները արգելած էին որ կրօնաւոր

դասակարգը նախնական-քաղաքացիական դերէն մի քիչ բարձրանար ու զարգանար: Եւ այս բոլոր պայմանները միասնաբար հոսովմէական պանակները պահեցին ստուերի մէջ եւ հոսովմէական դիպրանութիւնն ալ աննորմալ յետեւալ վիճակի մէջ:

Մոմսըն յունական եւ հոսովմէական կրօններու տարբերականութիւնը կը բացատրէ այդ երկու ժողովուրդներու կուլտուրաներու պատմութիւնը ընելով: Հոսովմէական կեանքը սիստէմատիկ կերպով սկզբնաւորութեան հանգամանքներու ներքեւ երկրագործական էր եւ գիտութեամբ տախան, մինչդեռ յունական կեանքը ֆոքր Ասիոյ մէջ իր քաղաքակրթութեամբ վիճակով ճարտարարուեստական էր, արտիստիկ եւ գրական: Հոմերոս եւ անոր նման երգիչներ զարգացան յունական գաղութային Փէոսալական պայմաններու տակ, մինչ հոսովմէացիները ճայնական-բերանացի արուեստները սուին իրենց կիներու եւ Լրեխաներու պահպանողական հոգատարութեան:

Երբ Հոսովմ իր յաղթանակներու ճամբուն մէջ աւելի յառաջ գնաց, այն ատեն երեւան եկաւ խոշոր արիստոկրատիկ դասակարգ մը որ կ'ապրէր քաղաքային կեանքով. այդ դասակարգը սոսկ հանձոյթի սիրոյն կը հետաքրքրուէր մտաւորական հարցերով. իսկ երբ հարաւային Իտալիոյ յունական նուաճուած քաղաքներուն հետ շարունակական յարաբերութիւն հաստատուեցաւ, իր կրթութեամբ մարդիկը նոյն ատեն գրական եւ քաղաքական իտալական ազդեցութեան ենթարկուեցան եւ պատրաստ էին իրենց անգոյն աստուածներու հաւատքը թողուլ եւ ընդունիլ յոյներու գունդեղ աստուածները: Իայց պէտք է ըսել թէ կոսովմութիւնն ալ համաձայն էր այդ որդեգրումներուն. որովհետեւ ան գիտէր թէ կրօնը անհրաժեշտ էր ժողովրդական գանդուածները հնազանդութեան մէջ պահելու համար: Ետրուրիայի մէջ ուր հին մշակոյթը արեւելեան գծերու վրայ ծաղկած էր միստիկականութեամբ եւ գուշակութեամբ, հոսովմէական կառավարութիւնը աստուածարանական մեղաշորհրտ տուած էր վերին դասակարգի բնտանիքներուն այդ մշակոյթը քաջալերելու համար եւ այդպիսով ստեղծեր էր նախապաշարումի ձուլարան մը: Նոյն ոգով անոնք որդեգրեցին յունական մի շարք պաշտամունքներ, եւ երբ 186 թուականին (Ն.Ք.) արգիլուեցան քաղաքական խորհրդաւոր տօնախմբութիւնները, ատիկա ոչ թէ կրօնական դժուրով էր, այլ պարզապէս բաղադրական նպատակով. բաղադրական ծէսերը յեղափոխական բնոյթ ունէին: Նոյնիսկ ծերակոյտի անդամներու մեծամասնութիւնը եւ պնդականները իրենց հին տնական եւ ազգային պաշտամունքները պահելով հանդերձ կը քաջալերէին օտար պաշտամունքներու ներմուծումը: Երբ արեւելեան նոր նուա-



ճուճները բազմապատկեցին օտար գերիներու եւ բնակիչներու թիւը Հոռովմի մէջ, անոնց հետ բազմացան նաեւ օտար պաշտամունքները եւ անոնց ընկերացան աղատ մտածողութեան այնպիսի ձեւեր, որոնք գոյութիւն ունէին Յունաստանի, Փոքր Ասիոյ եւ Եգիպտոսի մէջ: Ընդհանուր ընկերային ձգտումը ուղղուած ըլլալով իր վայրէջքին, այժմ միայն հարցը կը մնար թէ բանավարութիւնը ե՞րբ պիտի աճէր նախապաշարումի գրգիռով:

Յունական փիլիսոփայութեան անկման ճգնաժամային շրջանին, երկու տեսակի փիլիսոփայական ճիւղեր զարգացան Աթէնքի մէջ. մին ստոյլիկեան փիլիսոփայութիւնը, որուն հիմնադիրն էր Զենո, միւսը՝ Եպիկուրեան փիլիսոփայութիւնը, որուն հիմնադիրն էր Եպիկուրոս: Առաջինը կ'արհամարհէր հաճոյքը, ցաւը եւ մահը. երկրորդը կը հաւատարեցնէր թէ փիլիսոփայութեան նպատակն է սրտնել հաճոյքը, ոչ թէ ճշմարտութիւնը: Ստոյլիկները անասելի արհամարհանք ունէին Եպիկուրեաններու հանդէպ անոնց տկարամտութեան եւ կանայքութեան համար, իսկ Եպիկուրեանները անասելի արհամարհանք ունէին ստոյլիկեաններու հանդէպ՝ անոնց ստնգական խառութեան եւ անբնական չափազանցութեան համար: Այս երկու փիլիսոփայութիւնները, որոնք Յունաստանի անտեսական ու ընկերային անկման ծնունդն էին, Հոռովմի մէջ պարարտ հող դրտան ու զարգացան, որովհետեւ մէկը Հոռովմի համար անձնուրաց զինուորներ պատրաստելու էր, միւսը ազնուական դասակարգին համար բռնալու էր հաճոյքի դռներ: Եւ հոռովմէական բանավարութիւնը այս երկու փիլիսոփայութեանց ներշնչումովն էր որ պիտի արժատ բռնէր ու ընդհանրանար:

Որքան առեւն որ ինքնավար կտտավարութիւնը շարունակուեցաւ, բանավարութիւնը կուլտուրական դասակարգերու մէջ հասարակաց երեւոյթ մը դարձաւ: Լուկրիտիոսի մեծ պոէմը, Եպիկուրոսի վարդապետութեան իր եռանդազին ցուցարկութեամբ կը մնայ որպէս նմոյշ հոռովմէական ազատ մտածողութեան հասած անկեղծութեան ու բարձրութեան: Լուկրիտիոս իր Իրերու Բնոյթիմ Շուրջ պոէզիայով մեզի կը ներկայանայ որպէս սիտէմասիկ ազատ մտածող մի պրոպականտիստ, որ չի վարանիր ուղղակի յարձակիլ կրօնի վրայ, զայն ներկայացնելով իրբեւ թշուառականներու բռնաակալութիւնը: Անիկա Եպիկուրեան վարդապետութիւնը կը վերածէ դիտական սիտէմի մը որ կուզայ ուժեղացնել նախապաշարումներու դէմ իր փաստերը: Ան կը փաստէ որ անպոչէն գոյացութիւն գուրս չզար, ոչ ալ գոյացութիւնը կ'երթայ անդոյութեան, որ

նիւթը յաւիտենական է, որ բոլոր իրերը կը փոխուին, յառաջ կ'ընթանան առանց աստուածներու:

Բայց նորարոյս բանավարութիւնը առողջ ու երկար կեանք չունեցաւ Հոռովմի մէջ, երբ վրայ հասաւ կայսերականութիւնը: Օգոստոս կայսրը իր քաղաքականութեան մէկ մասը կազմեց վերահաստատելու հին պաշտամունքները, որոնցմէ շատերը անտեսուած էին մէկ կողմէ արիստոկրատ դասակարգէն, միւս կողմէ ժողովրդական զանգուածներէն որոնք յրապուրուած էին Եգիպտոսէն ու արեւելքէն ներմուծուած պաշտամունքներով: Կայսրը ինք արդէն նախապաշարեալ մէկն էր, եթէ ըլլար իսկ իր քաղաքականութիւնը հոռովմէական շահերու տեսակէտով ուղիղ էր: Կայսրը ամէն բանէ առաջ կ'ուզէր դրութիւնը հիմնաւորել եւ յաւերժացնել. ատոր համար անհրաժեշտ էր կրօնական վարչութիւն մը կայսերական հսկողութեան տակ, սրպէսզի ժողովուրդը պահէր անտրտունջ հնազանդութեան մէջ: Եւ ահա ան քաջալերեց ամէն տեսակի հասարակաց կրօնները, վերանորոգեց եւ վերակառուցեց ութսուն երկու տաճարներ Հոռովմի մէջ, անոնց բաշխեց մեծ նուէրներ, վերահաստատեց հին տօնախմբումներն ու ծիսակատարութիւնները, կրօնաւորներուն տուաւ իրենց հին դիրքը եւ ինքն ալ ստանձնեց քահանայապետի պաշտօնը: Այս բոլոր իրադարձութեանց ընթացքին, կայսերական աստուածացումն էր որ կը խմորէր: Կայսրը ըլլալու էր աստուածազուլիս:

Այսպիսով սարքաւորուած հասարակութեան մը մէջ ուր այլեւս անկարելի էր վերադարձ մը ինքնավար կտտավարութեան, մարդկային մտածողութիւնը դատապարտուած էր իր խեղդամահաճութեան: Հոն գործնականորէն ոչ մէկ ազատ մտածողութեան դիմ կը մնար: Հորաս որ հաւատաւոր մը չէր, բայց չէր համարձակեր կայսրը խաչը հանել: Օվիտ որ կը ծաղրէր անպարկեշտ վաճառականը որ աստուածներուն կ'աղօթէր որպէսզի ներուին իր խարդախութիւնները, բայց ներբողականներ կը նուիրէր Օյոստոս կայսեր, որովհետեւ ան սուրբ էր եւ տաճարներու վերանորոգիչը: Վերգիլիոս, սրտով համաստուածեան մը եւ բանավարութեան համակիր մը, չի համարձակիր անվարտէն արտայայտուիլ, այլ ենթադրեալ գիտական զարաշրջանէն դէպի նոր, դիւրահաւատութեան զարաշրջանի փոխանցումը կը պատկերացնէ երկու խոհուն տողերով.

«Երջանիկ է ան որ ստրված է իրերու պատճառները.

«Բախտաւոր է նաեւ ան որ մակնչցեր է գիւղաբնակ աստուածները»:



Յաջորդող սերունդի օրով Սենեկայի միաստուածական խոսքումը ժողովրդական նախապաշարումներու զիմաց, յայտնի դժանիչ մըն է որ կը ներկայացնէ այդ շրջանին յոյն ստոյիկեան փիլիսոփայութեան բարձրացումը: Այս կէտին վրայ Սենեկան կը պատկանի ազատ մտածողութեան դարաշրջանին, մինչ իր միաստուածեան նախափաստարկութեամբ կը պատկանի անոր յաջորդող դարաշրջանին, այսինքն ազատ մտածողութիւնը ժխտող դարաշրջանին:

Երբ կայսրութիւնը իր քայլերը յոռաջ նեակց ու բարձրացաւ, կամաց կամաց ազատ մտածողութեան արձագանգները մարեցան: Հռովմէական կայսրութեան բռնապետական ուժի տակ Գելլիմարիոսի եւ Սպարտակոսի նման յեղափոխականներ երեւցան, բայց Սոկրատի ու Պլատոնի նման հանճարներ չեբեւցան հռովմէական հորիզոնին վրայ:



Գ. ՄԱՍ

**ԱԶԱՏ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ  
ՄԻՋԻՆ ԴԱՐՈՒՆ  
(ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ)**

Իսլամական աշխարհը

Մուհամէտի ազատ մտածողութիւնը սկսաւ այն ատեն երբ ան ժխտեց հասարակական համաստուածութիւնը, իսկ նոյն ազատ մտածողութիւնը վերջացաւ այն ատեն երբ ընդունեց միակ ստուծոյ մը զազատիարը: Եւ որպէս փանատիկ, ան սկիզբէն մինչեւ վերջ փորձեց եւ յաջողեցաւ հաւաստիացնել որ այդ զազատիարը ինք ստացեր էր մի աեսակ ստուածային յայտնութեամբ: Անիկա կրնայ ըլլալ որ ամենազնիւ փանատիկներէն մէկն էր, բայց ոչ բանազատութեան հետեւող մը:

Ոմանք կը կարծեն թէ Մուհամէտ իր զազատիարը առաւ հրեաներէն կամ պարսիկներէն կամ քրիստոնեաներէն. ասիկա բաւականին հաւանական է: Բայց իրողութիւն է որ, ինչպէս քրիստոնէական կրօնի նախատարբերը զոյսութիւն ունէին նախ քան Քրիստոսի մը երևումը, այնպէս ալ նախ քան Մուհամէտի հրապարակ գալը, մահմետական կրօնի նախատարբերը առկայ էին արաբներուն մէջ: Իսլամները իրենք արդէն ունին աւանդութիւն մը որուն համաձայն Սէյիտ անուն մարդ մը որ մարգարէն էին տարի առաջ մեռած է, որ ոչ հրեայ եղած է, ոչ ալ քրիստոնեայ, Մուհամէտի ծնելէն առաջ քարոզեր է կուսապաշտութեան զէմ եւ ըսած է որ միայն մէկ ստուած կայ երկնից մէջ. ան ալ Աբրահամի ստուածն է: Եւ Սէյիտ այդ բանը սորված է հրեայէ մը եւ գարձեր է հանիֆ, այսինքն Աբրահամի կրօնին հաւատաւորը: Մուհամէտի ամենահին կերտագրականին մէջ Սէյիտի մէկ ուղերձը կայ, ուրիկ մաս մը վերաբրտադրուած է Գուրանի մէջ. եւ զեռ կան ապացոյցներ որոնք կը փաստեն թէ Մուհամէտն առաջ մահմետականութիւնը արդէն մասամբ ձեւաւորուած էր: Իսկ ինքը մարգարէն հանիֆ տէրմինը յաճախակի կը կրկնէ, որպէս իր վարդապետութեան խարխուր: Գերագոյն ստուծոյ մը վարդապետութիւնը ընդհանրացած էր, իսկ արաբներէն շատերը թէեւ համաստուածեան եւ



կապալառ միեւնոյն ատեն ալ կիսով չափով միաստուածեան էին. այսու կը տեսնենք թէ Մուհամէտի միազաւանութեան քարոզչութիւնը բոլորովին խորթ չէր արարներուն համար: Արարները այդ ատեն նոյն մակարդակին վրայ էին, ինչ որ էին քրիստոնէակաները, միայն մի քիչ աւելի թերահաւատ, եւ մարդարէն ահա այս խտնիճազանչ սամբոյն էր որ կ'ուզէր միազաւանութեան հաւատքին կապել: Մի քանի ցեղեր կային որոնք միապաշտ էին, ինչպէս Պաղեստինի սեմական ցեղերը, եւ նախքան Մուհամէտի ժամանակը, Շնիկ աստղը պաշտողները եռանդազին կը հետապնդէին որ Քսրի ցեղը, Մուհամէտի ցեղը, թողուր իր կուռքերը եւ պաշտէր միայն այդ աստղը: Այսպէս անոնց մասնակիորէն դարձան միաստուածութիւնը, մասնակիորէն բնականցած համիֆեան միաստուածութիւնը եւ անուանապէս միաստուածեան հրեաներուն ու քրիստոնէականներուն հետ անոնց հասարակական յարաբերութիւնները մարդարէն վարդապետութեան հող պատրաստեր էին արդէն, այնպէս որ Մուհամէտ գծուարութիւն չբաշկեց, երբ թափ առաւ իր լեզուին:

Խալիֆական կրօնին վերջնական յաղթանակը, սակայն, արդիւնք չէր Գուբանին կամ մարդարէի բարոյական կամ մազնիսական ուժին: Անոր առաջին հաւատաւորներն էին իր բարեկամներն ու ազգականները, կամ գերիները որոնց համար իր կրօնը ազատազրում կը խոստանար: Այդ էր Մուհամէտի սկզբնական յաջողութիւնը, որ դուռ անձնական էր: Անկէ վերջ ան իր յաջողութիւնը վերականգնող յծով յառաջ տարաւ:

Մէքքէի հարուստները հակառակ էին մարդարէի քարոզած նոր կրօնքին, որ հարուստ պատկարգի շահագործման աղբիւրները քանդելու բնոյթն ունէր. անոնք օրէնք անցուցին որ սեւէ մէկը որ խալիֆ կրօնը կ'ընդունէր Մէքքէն պիտի քշուի դուրս:

Մուհամէտ Մէքքէն հեռացաւ ու զնաց Թալիֆ, այդատեաններու քաղաքը, որ կ'արտադրէր խաղող, որմէ կը պատրաստուէր գինի: Որովհետեւ մարդարէի կրօնը գինեմոլութեան դէմ կը պայքարէր, քաղաքի վաճառականները գինք քարկոծելով հեռացուցին քաղաքէն: Մուհամէտ գիւրին յուսահատող մարդ չէր, նորէն վերադարձաւ Մէքքէ:

Մուհամէտ մի քանի քաղաքներու մէջ, մասնաւորապէս Եաթրիպի մէջ մեծ թուով հաւատաւորներ ներգրաւած էր, կրկնապատկուած էր իր եռանդը. այդ եռանդով ան սկսաւ իր քարոզչութիւնը Մէքքէի մէջ: Քաղաքին մեծամեծները համոզուեցան թէ Մուհամէտ, յամառ ու հեռու քարոզիչ մը որ իր հետեւորդներու շրջանակը հեռզհեռ կ'ընդարձակէր, որոշեցին զայն սպաննել:

Նոր կրօնի մարդարէն խմանալով դաւադրութիւնը քաղաքէն փախաւ ու ապաստանեցաւ Եաթրիպ, որ 270 մղոն հեռու էր Մէքքէէն: Փողովուրդը հոն գինքը բնուանց գրկաբաց եւ ուզեց որ ան քաղաքին իշխանը դառնայ: Նոյնիսկ քաղաքին անունը փոխեցին ու Եաթրիպը եղաւ Մեդինա, որ կը նշանակէ մարգարէի քաղաքը:

Մուհամէտի Մէքքէն փախուստի թուականը խալիֆական կրօնին պատմական թուականը եղաւ եւ այժմ կը յիշատակուի Հիւրա անունով, որ կը նշանակէ փախուստի գիշեր:

Մեաինայի մէջ Մուհամէտ հաւաքեց իր հետեւորդները եւ կազմակերպեց կուռքներու զօրացունդ մը. ան այլեւս քարոզիչ մը չէր, այլ իր նոր կրօնին հաւատաւորներու հրամանատարը: Անկէ վերջ ան ձեռնարկեց յանդուզն արկածախնդրութեանց. կողոպտեց կարաւանները, պարենաւորեց իր բանակը եւ քաղեց Մէքքէի վրայ: Առաջին ճակատամարտին պարտուեցաւ, սպա տասը հազար զինուած հետեւորդներով յարձակեցաւ սուրբ քաղաքին վրայ. քաղաքի բնակիչներէն ոմանք փախան, մնացեալները անձնատուր եղան: Մուհամէտ Մէքքէն իր փախուստի ատեն գինքը ազատող սիրեցեալ ուղտին, Աբ-Քալիֆի վրայ հեծած յաղթական շուքով մտաւ սուրբ քաղաքը: Ասկէ յետոյ սկսաւ խալիֆական արշաւանքը: Ինչ եռանդով որ մարդարէն Մեաինայի մէջ կազմակերպեր էր իր ուժերը, նոյն եռանդով ան սկսաւ կազմակերպել իր ուժերը Օմարի հրամանատարութեան տակ, իր կրօնը օտար երկիրներու մէջ տարածելու համար:

Ահաւասիկ Հոովմի կայսեր զրկած պատգամը.

«Ալլաի անունով, ողորմած եւ գրասիրտ.

Ես՝ Մուհամէտ, Ալլաի ծառան

Հոովմի կայսեր՝ Հերակլիտոսին.

Խաղաղութիւն անոր որ ուղիղ գամբայէն կը փախէ:

Ասկէ վերջ ես կ'ընեմ,

Ընդունեցէ՛ք խալիֆութիւնը եւ Ալլաի պիտի վարձատրէ ձեզ կրկնապատիկ:

Բայց եթէ մերժէ՛ք, ով դուք գիրքի մարդիկ. գիտցէ՛ք,

Մեմ միւսլիմաններ եմք եւ մեր կրօնքը խալիֆն է»:

Մուհամէտ անդրադէտ մարդ էր, ան չէր հաւատար գրի ուժին, կը հաւատար սուրին, բանութեան. ինք չէ եղած Գուբանը խմբադրողը, այլ իր հաւատարիմ հետեւորդը, Աբու Բեքիրը: Իր հանձարը այն բանին մէջ էր որ ան իր կրօնին տուաւ մի այնպիսի անհաշտելի դիրքաւորում, որուն շնորհիւ արարները իրենց դրամած երկիրներուն մէջ յաղթական մնացին. զէնքով յաղթեցին,



բայց տեղական կուլտուրային չփոփոխուցան, ինչպէս պատուական հիւսիսային բարբարոսները երբ յարձակեցան արեւմտեան կայսրութեան երկիրներուն վրայ եւ յաղթեցին սուրով, սակայն, պարտուեցան կուլտուրայով: Սալիֆայութիւնը ուր որ հաստատուեցաւ գինուորական ուժով, հոն հաւատքը ծառայեց ոչ միայն վարչութեան որպէս կորիզը, այլեւ այն միջոցը, որով ան անտեղիտալի կերպով կը դիմադրէր հակառակորդ հաւատքի նենգաւոր պրոպագանդին, որ կրնար ազդելն ըլլալ քաղաքական վտանգին: Արարներու Գուրանը եւ մարգարէն էին որ զիրենք բիւրեղացած ոգիով եւ անհաշտելի դիրքով պահեցին եւ թոյլ չտուին որ անոնք ընդունին իրենց գրաւած երկիրներու կրօնը: Այսպէս, ուրեմն, իսլամի հաւատքն էր որ պաշտպանեց ու պահպանեց արարներու գինուորական քաղաքականութիւնը երբ ան յաղթական դուրս եկաւ, բայց այդ հաւատքը չէր որ այդպիսի քաղաքականութիւն մը մշակեց եւ զայն հնարաւոր դարձուց, կամ անոր սուաւ յաղթութեան կարողականութիւն:

\*\*\*

Սարակինոսեան կուլտուրայի պատմութիւնը աւելի առողջ գաղափարներու եւ աւելի բարձր մտածողութեան ձգտումի պատմութիւնն է: Հիճրայի յաջորդող մէկ դարու ընթացքին, մի տեսակ բանավարական սկեպտիկութիւն յառաջացաւ միւսլիման դպրոցներուն մէջ, որպէս հետեանք քրոնիկ հերձուածներուն եւ հաւատաւորներու միջեւ տեղի ունեցած կռիւներուն: Աստուածաբանական դպրոց մը հաստատուեցաւ Բուխարայի մէջ՝ Հասան-էլ-Բասրիի ձեռքով: Անոր մէկ աշակերտը, Վասիլ-Իպն-Ասամ, կը ժխտէր Գուրանի ճակատագրի վարդապետութիւնը, որ անյարակից էր ապագայ դատաստանի հետ: Ասկէ կը սկսի իսլամի ազատ մտածողներու, միւթէվիլիներու դասակարգը: Կէս քաղաքական բնութիւնով ուրիշ ազանդներ եւս երեւան եկան մարդարէի հոգեվարքի ատեն եւ ուրիշներ անոր մահուանէն յետոյ: Մէկ կուսակցութիւնը կը կոչուէր սիւննի կամ «աւանդապաշտ», որ կառչած էր օրէնքի հին արարական գաղափարներուն, միւսը կը կոչուէր շիա որ հակաաւանդական էր: Նուաճուած պարսիկները յարեցան երկրորդին եւ ասով մահմետական կրօնը պարսկացուցին: Միւսնի կուսակցութիւնը պառակտուեցաւ երբ իրմէ հեռացան անջատողականները, որոնք կը պահանջէին որ իմամը կամ հաւատքի առաջնորդը պէտք է ընտրուի ըլլալ, մինչ շիաները կ'ընդունէին իմամը որպէս աստուածային իրաւունքի ներկայացուցիչը:

Միւթէվիլիները իրենց մէջէն հետզհետէ նոր ազանդներ դուրս

տուին. ոմանք կ'ընդունէին թէ մարգս իր գործերուն պատասխանատուն է, ուրիշներ կը պնդէին թէ մարգուս գործերը ենթարկուած են աստուածային կամեցողութեան, իսկ ոմանք այս երկուքին ալ հակառակ էին եւ Գուրանը կը թարգմանէին զուտ բառական իմաստով. մինչ զլիսուսը ուղղադաւան կազմը հետեւելով Գուրանի բնուիրին, կը խոստովանէր որ անոր մէջի հակասութիւնները իրենցմով կը ներկայացնեն անլուծելի խորհրդաւորութիւն մը զոր պէտք է յարգել:

Այստեղ պէտք է նշել որ իսլամ հերետիկոսները ենթարկուած յոյն եւ օտար ազդեցութեանց, իրենց սեփական դատումներով կը քննադատէին Գուրանը եւ օտար ասացուածքներու եւ փաստերու մէջըրբումներ չէին ըներ: Շիաները պարսկական ամենամեծ կուսակցութիւնը ըլլալով իրենց ատենին ընդունեցին պարսկական, հրէական, զնոստիկ, մանիքէական եւ ուրիշ երկուսուսուս վարդապետութիւնները, եւ ընդհանրապէս կը փորձէին Գուրանը թարգմանել այլաբանօրէն: Այլաբաններու մասնաւոր մէկ դպրոցը նոյնիսկ կը ձգտէր աստուածութեան գաղափարը բիւրեղացնել ակնոստիկ ուղղութեամբ: Բոլոր այս հերետիկոսները միւթէվիլիներու դասուն կը պատկանէին. ասոնք իրենց հերետիկոսական մտածողութիւնը կեդրոնացուցին ուղղադաւաններուն վրայ, որոնք սովորաբար կ'օգտուէին իրենց հակառակորդներու անհամաձայնութիւններէն:

Պէտք է ըսել որ միւթէվիլիները նոր ազդելներ զսան ուսումնասիրութեան համար եւ սկսան թարգմանել յոյն գիտական եւ փիլիսոփայական գործերը: Անոնք արաբական կողմի զլիսուսը գործօն ուժերն էին կուլտուրական էվոլյուցիայի մէջ, որ յառաջ կ'ընթանար արասան խալիֆաներու շրջանին (750-1258): Յոյն զբոսականութիւնը անոնց ձեռքը կը հասնէր սուրիացի քրիստոնէական միջոցով, որոնք որպէս նեստորականներ զուրս քշուած էին Եդեսիոյ իրենց գիտական դպրոցէն եւ աքսորուած էին Պարսկաստան: Բոլոր այս իրադարձութեանց արդիւնքը այն էր որ իններորդ դարուն, այսինքն Մուհամէտի քարոզչութիւնը սկսելէն երկու հարիւր ասորի վերջ, Պարսկաստանի մէջ սարակինոսները հասեր էին ոչ միայն նիւթական քաղաքակրթութեան նշանակելի բարձրութեան ոչ միայն նիւթական քաղաքակրթութեան նշանակելի բարձրութեան իրենց հարստութեամբ գերազանգելով բիւզանդականը, այլեւ կրօնքեր էին ցուցնել գիտական ծանոթութեան եւ բանավարական մտածումի նկատելիօրէն բարձր աստիճան մը, որ ենթադրաբար գաղափար կը պահուէր:

Ուղղափառ խալիֆաները երկար ատեն կը հարկադրէին որ



ծածուկ ու զաղանի մնան միւթէվիւրները, որոնք որպէս կանոն զըզ-  
 ջալու էին իրենց ոճիրներուն եւ Գուրանի օրէնքը խախտելուն հա-  
 մար հաւատքի ջերմեռանդ խոստովանութեամբ: Այսու հանգերձ  
 ազատ մտածողութիւնը իր քաղաքական բարդաւաճման շրջաններն  
 ունեցաւ: Փալիֆա էլ-Մանուր որ կատարի ուղղադաւան մըն էր  
 (754-775) եւ նոյն ատեն գիտութեան ջատագով մը, բարեկամա-  
 բար վարուեցաւ միւթէվիւրներու հետ, եւ իր օրովն էր որ առաջին  
 անգամ յոյն դասական գիրքերէն մի քանիները թարգմանուեցան:  
 Հակառակ իր ուղղադաւանութեան, անիկա քաջալերեց զիտութիւ-  
 նը. միայն թէ երբ բնաջնջեց բիւթանտիններու մէկ աղանդը (ասոնք  
 հակամիւսլիման իսմայէլացիներ էին, որոնք հողեփոխութեան կը  
 հաւատային) ան այդ ջարդարարութեան գիմեց ոչ թէ անոր համար  
 որ անոնք անհաւատ էին, այլ անոր համար որ անոնց բրածը ազրա-  
 տամբութեան փորձ մըն էր: Մասամբ քաղաքական, մասամբ ալ  
 կրօնական գեանի վրայ իր յաջորդը, Սալիֆա էլ-Մաճգի, բացէն ի  
 բաց պատերազմի ելաւ իսմայէլացիներու դէմ, որոնք Գուրանին  
 չէին հաւատար, բայց անստուած չէին. փճացնել տուաւ անոնց  
 գիրքերը եւ անինայ կոտորեց զիմադրող անհաւատները: Ասոր յա-  
 ջորդը, էլ-Հադի, աւելի առաջ գնաց եւ դատապարտեց ու սպան-  
 նեց շատ մը հերետիկոսներ, իսկ Հարուն-էլ-Քալիֆ մահապատիժ  
 յայտարարեց անոնց որոնք չէին ընդունիր թէ Գուրանը երկինքէն  
 տրուած է Ալլահի սիրեցեալ Մուհամէտին:

Հարուն էլ-Քալիֆի (հարուն կը նշանակէ ուղղադաւան, օր-  
 թոտոքս) ոճիրները դատապարտութեան ճամբուն մէջ շատ անը-  
 շան եղած են: Ան որոշ չափով քաջալերած է գիտութիւնը եւ զբաղա-  
 նութիւնը, բայց իր որդին, էմինը, տկարամիտ մէկը, եղած է  
 ջերմեռանդ կրօնամոլ եւ հերետիկոսները հալածող մը, մինչ իր  
 եղբայրը, Մամունը, թէ քաղաքական գեանի վրայ եւ թէ համարու-  
 մով, իր գիրքը ամբացուց համակրելով պարսիկ կուսակցութեան,  
 միւթէվիւրներուն: Անիկա նոյնիսկ բանտարկեց այն օրթոտոքս աստ-  
 ւածարանները, որոնք կը քարոզէին թէ Գուրանը Աստուծոյ արը-  
 ւած է մարդարէին: Բազդատամբ ուրիշներուն, ան իր բնաղաս-  
 ման դիժը շատ հեռունները շտարաւ, որովհետեւ հասարակութեան  
 առջեւ մի օր զինքը անուանեցին «անհաւատներու ամիրան» եւ Փա-  
 նատիկներէն մին նոյնիսկ ուզեց որ ան զլիստուի: Բայց Մամունը,  
 չափաւորելով իր հալածանքը օրթոտոքսներուն դէմ, շարունակեց  
 իր բանավարութեան ճամբան: Սարքեց հաւաքութիւնը, ուր հաւա-  
 տաւորներն ու ամէն գոյնի անհաւատները կը վիճարանէին ու կը  
 պարզէին իրենց տեսակէտները. միայն արդիւնց որ սեւէ մէկը

Գուրանէն մէջբերում կամ վկայութիւն չբերէ որպէս փաստ: Անդ-  
 բազանաւով իր անձնական սկզբունքին, կ'ըսուի թէ ինք Քապու-  
 չէն ստացեր էր հին պարսկերէն գիրք մը, Յախտեմակամ Բանակա-  
 նութիւնը, որ կը սորվեցնէր թէ բանականութիւնն է կրօնքի միակ  
 խարխուր եւ հոգեկան վերջալուծութիւնը չի կրնար ծառայել որպէս  
 անշարժ դեռին: Այս պատմութիւնը հետաքրքրական է, բայց ոչ  
 վաւերական: Իրողութիւնը կայ ու կը մնայ այն որ Մամունը բոլոր  
 խալիֆաներուն մէջ ամենամեծը եղած է որ արաստովոր կերպով քա-  
 ջալերած է գիտութիւնն ու մշակոյթը եւ յոյն գրականութեան  
 թարգմանութիւնն ու ուսուցմունքը. եւ զնո աւելին, հակառակ  
 աստուածարաններու սպառնալիքին, ան յանդգնութիւնը ունեցաւ  
 Դամասկոսի գոլէճին զուլիը գնել քրիստոնեայ մը, յայտարարե-  
 լով որ ինք այդ ընտրութիւնը բրած է ոչ թէ իր կրօնքին համար,  
 այլ գիտութեան համար: Նոյն ոգիով ան թոյլատրեց որ ազատօրէն  
 շրջաբերութեան հանուի հայ քրիստոնեայ Ալ-Քայնաթի ջատագո-  
 վական բանագրութիւնը, ուր իսլամն ու Գուրանը բացէն ի բաց են-  
 թարկուած էին քննադատութեան: Որպէս իշխող, նոյնպէս, Մա-  
 մունը եղած է իր տեսակին մէջ ամենալաւը, ներողամիտ, արդա-  
 բասէր եւ ազնիւ: Անոր յաջորդները, Մոսատիմ եւ Վատիք, երկու-  
 քնն ալ նոյն ուղեղին վրայ էին, վերջինը աւելի Փանատիկ իր բա-  
 նավարական տեսակէտին մէջ եւ անհաշտ էր Գուրանը երկնատուրք  
 մի բան դաւանողներուն հետ:

Ուղղադաւան յետաշրջական ուժեղ շարժում մը սկսաւ Սա-  
 լիֆա Մոսատիքիլի օրով (847-861), որը թրքական ծագում ունե-  
 ցող անարժան իշխող մըն էր: Այս մարդուն խալիֆայութեան շրջ-  
 ջանին իշխանութիւնը մօտեցեր էր քայքայման առտիճանին, մա-  
 սամբ տնտեսական սպառումին որ հետեւանք էր իր բռնապետական  
 ուժիմին, մասամբ ալ այլաճին տարբերու պատակաւիչ ձգտումնե-  
 բուն, մասամբ ալ միահեծան իշխանութեան ազականող ձեռնարկ-  
 ներուն պատճառաւ: Հակառակ, սակայն, պաշտօնական օրթոտոքու-  
 թեան վերահաստատման, գիտութիւնը եւ փիլիսոփայութիւնը ատեն  
 մը յառաջ գացին. յոյն գիրքերու թարգմանութիւնն ու ուսմունքը  
 շարունակուեցան: Տասներորդ դարուն նոյնիսկ անուռ մարդիկ սկսան  
 հետաքրքրուիլ գիտութեան հասկնալի տուեալներով: Մուհամէտի  
 միտիայի հաւատքը դարձեալ սկսաւ խախտիլ: Սորհրդապաշտ մար-  
 դիկ յայտարարեցին որ Աստուծոյ ճամբան կարելի է դանել առանց  
 Գուրանի օղնութեան: Շատեր սկսան փաստել որ կրօնքը ժողովուր-  
 դի յարաբերութիւնները կանոնաւորելու տեսակէտէն օգտակար է,  
 բայց անօգուտ է իմաստուններուն համար: Միւս կողմէ, ուղղա-



դաւանները կը դատապարտէին գիտութիւնը, որովհետեւ ան կ'առաջնորդէր անհաւատութեան. եւ անոնք մշակեցին ու զարգացուցին սխաղմատիկ աստուածաբանութիւն մը: Մինչ այդ ստան Բուխարայի համայնագէտները մաւրիտանացիներու միջոցով իրենց ծանօթութիւնները կը ձօնացնէին եւ կը վերանորոգէին արեւմուտքի մտածողութիւնը, անդին Ալ-Աղճարի կը հիմնէր քալամը կամ սկալապտիկ աստուածաբանութիւնը, որ անկէ յետոյ տիրող հանդիսացաւ մահմեդական արեւելքի մէջ, եւ փիլիսոփայ Ալ-Գազալ, իր կողմէ, հին եւ նոր փիլիսոփայական սկեպտիկութեան դաւանանքը ուղղեց ուղղադաւանութեան, օրթոտոքսութեան հաշտոյն:

Քաղաքականապէս վատասերող պետութեան մէջ, գիտութեան եւ կրօնի այս պայքարումի ընթացքին, անխուսափելի էր որ վերջինը պիտի շահէր վարչական իշխանութիւնը: Խալիֆա Մոտամիդի (892 թ.) եւ Մոտահէի (902 թ.) օրերուն, գիտութեան եւ փիլիսոփայութեան ուսմունքը ամբողջապէս արգիլուեցան, եւ անոնք գրավաճառները ծանր երդումի տակ դրին, որպէսզի բացի օրթոտոքս զիրքերէն ուրիշ ոեւէ զիրք չծախեն: Այսպիսով, գիտութիւնն ու փիլիսոփայութիւնը երբ փակուղիներու մէջ պաղտապէս վերապրեցան, երբ քաղաքական ուժը եկաւ արգիլել անոնց ծրարձակումը, ժողովրդական հաւատքը մնաց նոյն վիճակին մէջ, ինչ որ էր Հարուն-էլ-Րաշիդի օրով: Իսլամի, ինչպէս նաեւ աշխարհի բոլոր կրօնական հաւատալիքներու ներքեւ, արեւելքի եւ արեւմուտքի մէջ ժողովրդական զանգուածները մնացին սոգէտ ու թշուառ, իսկ ուսումնականներուն կը մնար յունական մտածողութեան եւ գիտութեան գանձերը պահել ու փոխանցել եւրոպայի նոր քաղաքակրթութեան: Ոմանք կը հաւատարացնեն թէ արեւմուտքի մէջ բանավարութեան նահանջը բնականօրէն արագացուց անոր ծաւալումը արեւելքի մէջ: Բայց այս եզրակացութիւնը իրականութեան չի համապատասխաներ: Պաղատաի խալիֆայութիւնը եւ քրիստոնէականացած հռովմէական կայսրութիւնը գրեթէ նոյն շրջանին անկում ունեցան նոյն քաղաքական եւ արտաքին պատճառներով. եւ թուրքերը, որ կործանեցին Պաղատաի խալիֆայութիւնը ու յառաջանալով կործանեցին քրիստոնէայ Բիւզանդիոնը, հոն այլեւս բանավարութիւնը երբեք չկրցաւ իր գլուխը պատեանէն դուրս հանել:

\*\*\*

Պաղատաի խալիֆայութեան անկման վերջնական դարաշրջանին, երբ գիտութիւնն ու մշակոյթը եւ նոյնիսկ արդիւնաբերութիւնը համեմատաբար ծաղկեցան խալիֆաներու անձնական տկարամտութեան հետեւանքով, մենք կը հանդիպինք ամէնէն անուանի

եւ ամէնէն խորթափանց խալամ պատ մտածողներու: Պաղատաի մէջ, 970-1057 թուականին, ծաղկեցաւ կոյր բանաստեղծ մը, Աբու-Ալու-էլ-Մահարի, որ յանդիսօրէն իր բանաստեղծութիւններուն մէջ ծագրեց բոլոր կրօնները, որպէս նոյնանման անհեթեթութիւններ, եւ սակայն, անտեղիկի պատճառով մը չզատապարտուեցաւ: Անպամ մը ան բտած է. «Աշխարհը երկու դասակարգի բաժնուած մարդեր ունի. բանականութեան տէր մարդիկ առանց կրօնի, եւ կրօնամոլ մարդիկ՝ առանց բանականութեան»: Յայտնի է որ այս մարդը իր արտակերպոն նկարագրին համար կրցաւ իր կաշին ազատել: Իր մենութեան մէջ պատկառելի մեծութիւն մը, որուն շունչովը ներշնչուած ըլլալուն համար անմահացաւ մեր հայ մեծանուն բանաստեղծը՝ Աւետիք Իսահակեանը: Այս կոյր բանաստեղծին ուրիշ մէկ տարօրինակ կողմը այն էր որ ան հակառակ էր սերնդագործութեան: Այդ առթիւ կը յայտարարէր որ զուակներ աշխարհ բերելը տոտապողներու թիւը աւելցնել է:

Մէկ գար յետոյ ուրիշ տեղի մը մէջ երեւան եկաւ արեւելեան ազատախոհներու ամէնէն նշանաւորը, Օմար Խայեամը: Օմար Խայեամ՝ Նեչապուր քաղաքէն էր, Խորասանի նահանգի մայրաքաղաքը որ երկար տանէ ի վեր ճանչցուած էր որպէս բանավարութեան կեդրոն: Այդ նահանգը մաս կը կազմէր Սուլթան Մահմուտի ստեղծած ասիական մեծ թագաւորութեան: Ասիկա այն Սուլթան Մահմուտն էր (998 թ.) որուն արժանիքին լուսաշող աստղը հանդիսացաւ Ֆերդոսին:

Եզդիկերտի ճակատամարտէն յետոյ (636) Պարսկաստանը անցաւ արաբական տիրապետութեան տակ: Անապատի մոլեռանդ արարները պարսկական հին գրականութիւնը ոչնչացուցին ու այրեցին: Ամբողջ 300 տարի պարսիկ լեզուն տեղի տուաւ արաբական լեզուին, մինչեւ թ. դարը, երբ արաբական տիրապետութեան շէնքը սկսաւ քայքայուիլ: Եւ ահա թ. դարէն կը սկսի պարսկական գրական եւ մտաւորական վերածնութեան դարաշրջանը, երբ Ալի-սենան, Ֆերդոսին, Օմար Խայեամը, Ալ-Գազալին եւ յետագայ պարսիկ բանաստեղծները սելճուքներու տիրապետութեան տակ պարսկական նոր ոգիով նոր գրականութիւն մը ստեղծեցին: Այդ շրջանին, ըսել կ'ուզենք թ. դարուն, պարսկական ազգային ոգին մի այնպիսի բուռն վերագործում ստացեր էր որ Ֆերդոսին կը գրէր.

Գործն այնտեղ հասաւ, որ ուղտի կաք խմող  
 Եւ օձի միս ուտող այս վայրենի արաբները  
 Վեհափառ Իրանի գահը կը պահանջեն.  
 Թ'հեմ'մ երեսիդ, երկինգ, ք'հեմ'մ երեսիդ:



Պէտք է բնի թէ սելճուքները աւելի ազատամիտ էին քան արարները. եւ Մալիք Շահի օրով էր որ աստղագէտ ու բանաստեղծ Օմար Խայեամը իր բառեակները երկնեց Խորասանի մէջ: Եւ նոյն Օմար Խայեամն էր որ Մալիք Շահի որոշումով ութը դիւանականներու հետ պատրաստեց արեւելքի համար ճիւղի թուականը, որ իր ճշդութեամբ կը մօտենայ զբիւրքեան սոմարին:

Չմէր Խայեամ ջերմեանդ հաւատաւոր մը չէ, երբ կը դրէ հետեւեալ քառուկը.

Խնդիրք ունիմ... Հոջա, Խնդրեմ որ չմերժես.

Խրատ մի տար, թող որ գնամ ես իմ համբէս.

Մեճի քայլում եճի շիտակ. բու աչքն է ծուռ տեսում.

Գնա աչքիդ մի ճար գտի՛ր. հանգիստ թող մեզ:

Այս տողերուն մէջ Օմար Խայեամ որոշակի կը պարզէ որ ինք իսլամ հոջային կոյր հետեւորդ մը չէ, ոչ ալ իսլամ կրօնին հաւատաւոր մը: Միսլամ չենք ըլլար երբ բանք թէ Օմար Խայեամ իր դարուն միակ մատերիալիստ փիլիսոփան եղած է, ան իր մօնիզմէն դուրս հանած էր առաւելի մը (երկուսպաշտութիւնը) եւ աստուածիմաստութիւնը: «Ես մէկ թիւր որպէս երկուք երբեք սխալ չեմ կարգացեր»: Այս յայտարարութիւնը իր փիլիսոփայութեան ամփոփումն է: Իրեն համար մէկը, մեկնակէտը եւ վերջակէտը նիւթն է. մասպատիկը, աստուածութիւն, գաղափար, ստոնք նիւթական գործօններու փոխանցական եւ վազանցուկ արտայայտութիւններն են: Բայց Օմար Խայեամ իր տեսութիւնը ալլարանական ձևով արտայայտած է. ան ներբողած է գիւնին, կիկը եւ երգը: Գիւնին դիտութիւնն է, կիկը՝ գեղեցկութիւնը, ճշմարտութիւնը, իսկ երգը՝ արուեստը. նիւթական աշխարհին մէջ մարդկային կեանքը անոնցմով իմաստ կը ստանայ:

Այստեղ պէտք է մտնալ նշել որ Օմար Խայեամի միջնադարը պարսկական էր քան թէ արաբական եւ պարսիկ մասճոգութիւնը դիտական մասհայեցողութեան հակումներ ունէր հնուց ի վեր եւ պարարտ հող պատրաստեր էր բանավարութեան համար: Սուֆիներու ազանդը, օրինակ, որ նախա-մահմետական միտքիակալութիւնը կը ներկայացնէր, իր մէջ կ'ստնէր անհաւանները ինչպէս նաեւ ջերմեանդ համաստուածեանները: Այս ազանդը, որ իր աստուածային սիրոյ ինքնատիպ վարդապետութեամբ կը հակադրէր միւսլիմանի խստապարզութիւնը, իր գորաւոր կռուանը ունէր Պարսկաստանի մէջ եւ սկսած էր սնունդ տալ բազմաթիւ հերետիկոսական վարդապետութիւններու: Խալիֆա Մոքաթիր պարսիկ

սուֆի մը մահուան դատապարտեց, որովհետեւ ան կը քարոզէր թէ երկնեց մէջ աստուած չկայ. ամէն մարդ աստուած է: Վերջերս սուֆիզմը կասկեր հաստատեր էր ամէն սեռի անկախ մասճոգներու հետ, ասոր համար պատճառ ունինք կասկածելու թէ բանաստեղծներէն Սադին (ժ.Գ. դարուն) եւ Հաֆիզը (ժ.Գ. դարուն), ինչպէս նաեւ ուրիշներ կեանքի սուֆիստական տեսութեանց հետեւած են եւ հետու կեցած Օմար Խայեամի տեսութիւններէն, թէեւ Օմար անինայ կը քննադատէր ու կ'արհամարհէր զանոնք, մասնաւորապէս Ալ-Գազալը որ հաւատքի սկեպտիկութեան ջերմ պաշտպան էր:

Պատմաբանները կը հաւատարացնեն թէ սուֆիները նոյնիսկ բնկերացան աստախններու (մարդասպաններու) ազանդին որուն հիմնադիրն էր Հասանը, Օմար Խայեամի դասընկերը (\*):

Սուֆիզմը որպէս փիլիսոփայական կրօնի մը ազանդը մահ-

(\*) Ասոր պատմութիւնը հետեւեալն է: Օմար Խայեամ Աբու Թահիր անուն կրթուած գիտունի մը նպատով կ'աշակերտի Խարասանի հոչակաւոր քիշիկ Մովափադի մօտ. իրեն հետ էին Արդուլ Ղաւրմը եւ Հասան-ի-Սաքրահը: Երեք ուսանողները իրենց միջեւ կ'ուխտեն որ իրենցմէ մէկը ապագային եթէ բարձր դիրքի հասնի, պիտի օգնէ իր ընկերներուն: Բախտը կը ժպտի Արդուլ Ղաւրմին, որ մի օր Արփ Արսլան Շահի մեծ վեգիբը կը դառնայ Նիզամ-Ալ-Միւլի անունով: Ասիկա յիշելով իր ուխտը իր նախկին ընկերները կը կանչէ իր մօտ եւ անոնց կ'առաջարկէ պետական բարձր պաշտօններ: Օմար Խայեամ առաջարկուած պաշտօնը չընդունիր եւ կը բաւականանայ շահի կողմէն նշանակուած մի համեստ կենսաբուշակով, որպէսզի ինք ժամանակ ունենայ նուիրուելու իր նախասիրած գիտութիւններուն: Նիզամ-Ալ-Միւլիը Հասանը կը տեղաւորէ պետական բարձր պաշտօնի մը մէջ. բայց այս ապերախտ մարդը կը սկսի դաւադրել իր բարերարին դէմ եւ ամէն միջոց կը գործադրէ որ անցնի անոր տեղը: Նիզամ-Ալ-Միւլիը մի քանի անգամ գայն զգուշացնելէ յետոյ երբ կը տեսնէ անոր յամառութիւնը, գայն պաշտօնէն կը հեռացնէ: Հասան արկածախնդիր կեանք մը վարելէ վերջ կ'ապաստանի կասպից Ծովու հարաւային ափերու լեռներուն մէջ եւ կը կազմակերպէ ահաբեկչական մարմին մը «չիբան նահապետ» անունով, որուն վրէժխնդիր դաշոյնէն բոլոր մարդիկ սկսան սարսափիլ: Կը կարծուի որ աստախն բառը (սպաննել) Հասանի այս կազմակերպութեան անունէն է անցեր եւրոպական լեզուներու մէջ, քանի որ Հասան վերջ ի վերջոյ կը սպաննէ իր բարերար Նիզամ-Ալ-Միւլիը:



մետական աշխարհի մէջ, պէտք է ըսել թէ նշանակելի դեր ունեցած է. ան նուազեցուցեր է սոցիալական շարիքը հոն՝ ուր չէ կրքած ներշնչել յառաջդիմութեան ոգին: Փիլիսոփայական մարդին վրայ, նոյնպէս. ան մտահայեցողութեան դանդաղաշարժ շարժումը յունական փիլիսոփայութիւնը վերապրեցնելով կապեց միջին դարու եւրոպական քաղաքակրթութեան ետ, ուր Հոովմի Պապը մեծ փառքով ու պատիւով հաստատեց էր իր հաւատաքննութեան ասեանը:



Այժմ, շատ քիչ բան մնաց խօսելու արարներու փիլիսոփայութեան շուրջ, նկատելով որ ան սկիզբէն մինչեւ վերջ շատ հազարէսորէն ընկերացաւ նախապաշարումի ու դոկմայապաշտութեան դէմ մղուած պայքարին: Արար փիլիսոփայութեան վերջին յայտնագործման ֆաները մաւրիտանական Սպանիոյ մէջ մնացին եւ հոն սկսան երեւնալ:

Կուլտուրական էվոլյուցիայի ընթացքը հոն լայնօրէն կը համապատասխանէր արեւելքի սարակինտեան քաղաքակրթութեան: Սպանիոյ մէջ մաւրիտանացիք յարարեցեցան հոովմէական կայսերական քաղաքականութեան հետ, եւ նոյն ասեւն ալ շփուեցան մոսիսական եւ քրիստոնէական տարրերու հետ: Այս երկու կրօններու հանդէպ իրենց ցոյց տուած հանդուրժողականութիւնը դորեղացուց իրենց դիրքը: Ինչ որ մնացեր էր յունո-հոովմէական արուեստէն ու գիտութենէն, անոնք քաջալերեցին, իսկ ինչ որ մնացեր էր երկրագործական գիտութեան համար կարտագինացիներէն, եռանդով որդեգրեցին եւ զարգացուցին: Այս բոլորի արդիւնքը այն եղաւ որ լուսամիտ խալիֆաներու օրով մաւրիտանացիներու քաղաքակրթութիւնը միջնադարեան եւրոպայի համար լոյսի, ծանօթութեան եւ նիւթական բարդաւածման կեդրոն դարձաւ: Աշխարհի գիտութիւնները ամբարուած էին անոնց դպրոցներուն մէջ. եւ հոն տասներորդ, տասնեւեակերորդ եւ տասնեակերորդ դարերուն արեւմտեան քրիստոնեայ պետութիւններէն եւ հիւսիսային եւրոպայէն խումբերով ուսանողներ կը լեցուէին: Ամբողջապէս կամ մասնակիօրէն սարակինտներու ձեռքէն էր որ այժմու աշխարհը ստացաւ աստղագիտութիւնը, մատեմատիկը, բժշկութիւնը, բուսաբանութիւնը, քիմիագիտութիւնը, օրէնսգիտութիւնը եւ փիլիսոփայութիւնը: Ասոնք եղան քաղաքակրթութիւնը վերապրեցնողները բարբարոս քրիստոնէութեան յաղթական դարաշրջանէն յետոյ:

Դ. ՄԱՍ

ԱԶԱՏ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ  
ՄԻՋԻՆ ԴԱՐՈՒՆ

(ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ)



Քրիստոնեայ աշխարհը

Երբ քրիստոնեայ աշխարհ կ'ըսենք իրարմէ բաժնուած երկու աշխարհներ պիտի հասկնանք: Մին նախնական քրիստոնեայ աշխարհը, որուն կեանքը հազիւ մի քանի դարու տեսողութիւն ունեցեր է, միւսը՝ պետականացած քրիստոնեայ աշխարհը, որ սկսած է կոստանդին կայսեր օրերէն եւ շարունակուած է միջին դարուն եւ յետոյ «բարեկարգեալ» ձեւով մինչեւ մեր օրերը: Առաջին աշխարհի քրիստոնեաները եղած են ազատ մտածողներ, որոնք պայքարած են կոստապաշտութեան դէմ եւ բաժնուած են դանազան աղանդներու եւ հրապարակ հանած են հարիւրէ աւելի աւետարաններ: Երկրորդ աշխարհի քրիստոնեաները այլեւս կոստապաշտութեան դէմ մղուելիք պայքարը նկատեցին եւ երկրորդական եւ իրենց ղէնքերը ուղղած են «հերետիկոսներու» դէմ: Այսպիսով նախկին ազատ մտածողներուն յաջորդեցին մարդկային մտածողութիւնը կապանքի տակ առնողները: Բայց հերետիկոսութիւնը արժատախիլ ընելու ձգտող շարժումը երբ լայն ծաւալ դասւ, անպակաս եղան այն անհատները որոնք հետեւելով իրենց առողջ բանականութեան արագօրէն բազմապատկուող հաւատքի խելագարներուն դէմ ցցուեցան՝ արհամարհելով իրենց սպառնացող պատիժները: Այսպէս, իտալացի վանական մը, ձովինո (Գ. դարու վերջերք) բուռն կռիւ մղեց կուսակրօնութեան եւ ձգնաւորութեան դէմ. ասոր համար պախարակուեցաւ, յետոյ եկեղեցական դատապարտութեան ենթարկուեցաւ եւ օր մըն ալ աներեւոյթացաւ եւ ոչ ոք կրցաւ զիմանալ թէ ո՞ր եւ ի՞նչպէս մեռաւ: Ասոր ժամանակակից էր արեւելեան Արիոսը, որ հակառակ էր մեռնողի մը համար աղօթասացութեան, կը քննադատէր ծոմապահութիւնը եւ Զատիկի տօնին դառնուելի մը զոհարարութիւնը: Այս մարդը նոյնպէս կը քարոզէր որ եկեղեցականներու տատիճանաւորումները պէտք է միանգամայն վերնան. հասարակ բաճանայ մը հաւասար բլլալու է եպիսկոպոսին: Ուրիշ հերետիկոս



մըն ալ այս էր, որ նոյն ճակատագիրը ունեցաւ. աներեւութացաւ առանց հետք մը թողելու: Յաջորդ դարուն, սւրբ ժր Նրապարակ իջաւ, Վիկիլանտիոսը, որ իր քննադատութիւնը տարաւ ընդհանուր խնդիրներու շուրջ. ան կը դատապարտէր ու կը ծագրէր զերեզմաններու եւ մարտիրոսներու ոսկորներու պաշտամունքը, սրբատեղիներու ուխտագնացութիւնը, կուսակրօնութիւնը, վանական կեանքը եւ հրաշափէպերը, որոնք իր կարծիքով ժողովուրդը կը պահէին անյայտ անգիտութեան մէջ: Ասոր մէկ վաղեմի բարեկամը, Ճերոմի, որ իր դարուն ամէնէն կատաղի փանատիկն էր, պատճառ եղաւ որ ինք ամբողջապէս շնորհագուրկ ըլլայ եւ միւսներուն պէս զլրորուի անյայտութեան անդունդը:

\*\*\*

Յայտնի էր որ իսլամի նոր հակա-կոսապաշտ կրօնքը անուղ-դակի կերպով ազդեր էր դինուոր-կայսր Աբու Իսաիանի վրայ, որ ութներորդ դարուն ծանօթ էր որպէս պատկերաքանդ. անիկա իր ատելութիւնը գործնական արշաւի վերածեց պատկերապաշտութեան դէմ, որը համաստուածեան շրջանէն ի վեր քրիստոնեայ աշխարհին մէջ ընդհանրացած էր: Ինք, սակայն, օրթոտօքս քրիստոնեայ էր եւ եռապաշտ, իսկ պատկերապաշտութիւնը վերցնելու իր ջանքերը աւելի մոլեռանդութեան հետեւանք էր քան թէ բանավարութեան թերադրանքի արդիւնք, թէեւ որոշ չափով ազատ մտածողութիւն մը զարգացած էր իր ստեղծած կրօնական կուսակցութեան մէջ: Պատկերապաշտութեան դէմ մղուած պայքարը մեղի ենթադրել կուտայ որ կոսապաշտութիւնը պաշտօնապէս վերահաստատուելու ճամբուն մէջ էր, բայց այդօրինակ ձգտումի մը հետքերը աննշմարելի էին: Իններորդ դարուն սարակինտեան մրցակցութիւնը բիւզանդացիները զբաժ էր մշակոյթի ու գիտութեան մասնակի վերադրումի գծին վրայ. այդ տանն համ-ուսեալ Ծոսիոս որ դժկամակութեամբ եկեղեցական պատասխանատու պաշտօն ստանձնեց, ազատ մտածողի հռչակ ստացաւ երբ եկեղեցւոյ ամբիոնէն յայտարարեց որ երկրաշարժը երկրային պատճառներու արդիւնք է, ոչ թէ աստուածային հրամանի մը: Ասկէ զատ, նոյն ժամանակուայ տիրող կայսրը, գինով Միքայէլը, որ ազատ մտածող մըն էր եւ կրցաւ կղերականութեան ծէսերը վաւերախաղի վերածել եւ օրթոտօքս ընտելութիւնը խնդացնել, կարելի չէ ըսել թէ նոյն ատեն կոստանդնուպոլսոյ մէջ կար մի այնպիսի կուլտուրա որ կրնար լրջախոհ բանավարութիւն մը զարգացնել ճակատելու յարձակման պատրաստ կղերականութեան:

\*\*\*

Միջին դարուն քրիստոնեայ հոգեւորականութիւնը ամէն երկրի մէջ նոյն աններող գիրքը ունէր քրիստոնէական կրօնի սկզբունքներուն, աւանդութեանց եւ ծէսերուն խորթ արտմագրութեամբ մտածողներուն ու վարուողներուն հանդէպ, որովհետեւ ամէն տեղ իշխող դատակարար կռթնած էր կրօնին եւ կրօնականները նոյնացած այդ դատակարարին հետ, գիտէին որ հերետիկոսները երբ ըստ երեւոյթին կը պայքարէին կրօնական աւելորդապաշտութեանց դէմ (իբենք կրօնականները թերեւս հերետիկոսներ ըլլալէ աւելի առաջ անցեր, անաստուած էին), ասանկով կը փորէին երկրի տնտեսական իշխանագիտութեան հիմքերը: Եւ այս երեւոյթը կանուխէն իր ցցուն հանգամանքովը յայտնագործուեցաւ Հայաստանի մէջ: Ատիկա պալղիկեաններու հերետիկոսութիւնն էր որ սկսաւ վեցերորդ դարու առաջին կէսէն եւ շարունակուեցաւ մինչեւ իններորդ դարու 70-ական թուականները: Այս հերետիկոսներու ստեղծած շարժումը սկզբնական շրջանին կրօնական էր, բայց եօթներորդ դարու վերջը ան դուրս եկաւ կրօնական շրջանակէն եւ տարածուեցաւ Արեւելեան Հայաստանի աշխատաւոր մասսաներուն մէջ եւ յետոյ տարածուելով հասաւ մինչեւ կովկասեան լեռնաշղթան:

Ի՞նչ կը դաւանէին պալղիկեանները. համառօտակի պարզենք անոնց կրօնական դաւանանքները.

1. Աստուած որպէս երկնային անլմբանելի էակ, ստեղծողը ամբողջ տիեզերքին, ասանձնապէս մեր աշխարհի գործերը սարքաւորելու եւ մարդոց ու ազգերու ճակատագիրը որոշելու նպատակ չունի եւ չի կրնար ունենալ: Այդպիսի մի նպատակ վերադրել Աստուծոյ անհեթեթութիւնն է:
2. Պաշտօնական եկեղեցւոյ ծիսակատարութիւնները բոլորովին աւելորդ են: Աւելորդ են անոր օրէնքներն ու կանոնները: Մարդը սեւէ կերպով կապուելու չէ երկինքի հետ, այլ տեսանելի աշխարհին հետ:
3. Հին կտակարանի սկզբունքները բոլորովին պէտք է ժըխտել, որովհետեւ անոնք չիմուած են շարութեան, անհատարութեան եւ մարդու շահագործման վրայ:
4. Քրիստոս Մարիամէն ծնած չէ, այլ երկինքէն իջած է: Անիկա չէ խաչուած, այլ եկած է, քարոզած է մարդոց մէջ ու նորէն բարձրացած է երկինք: Խաչի պաշտամունքը ինքնին կոսապաշտութիւնն է:
5. Հաղորդութիւն, մկրտութիւն, պատարագ, զոհարկերէլ,



խունկ ծխել անխմատ ձէտեր են: Անանցմով կրօնականները կը շահագործեն ժողովուրդը: Անխմատ է նաեւ սուրբերու եւ սրբապատկերներու պաշտամունքը:

6. Եկեղեցիներն ու վանքերը պէտք է վերցուին, որովհետեւ հաւատացեալ մը Աստուծոյ հետ կը կապուի ոչ թէ եկեղեցւոյ միջոցով, այլ հաւատքով: Եկեղեցիներու եւ վանքերու ինչքերն ու կալուածները պէտք է զրուել ու հաւատարապէս բաժնել համայնքի անդամներուն:

Անշուշտ պալիկեաններու կրօնական դաւանանքներուն մէջ նշմարելի է հակասութիւն մը: Երբ անոնք չեն ընդունիր թէ Աստուած աշխարհի գործերուն հետ կապ ունի, այլեւ նոյն Աստուածը Քրիստոս մը երկինքէն երկիր դրկելու չէր: Հաւանական է, որ պալիկեանները, Քրիստոսի պատկանող հատուածը իրենց դաւանանքին մէջ զբաժն են քրիստոնեայ ժողովուրդը իրենց դէմ չզրգուելու եւ ցոյց տալու համար որ իրենք եւս Քրիստոսի կը հաւատան որպէս երկնային առաքելի: Եւ արդէն իրողութիւն է որ պալիկեաններու միմիայն կրօնական դաւանանքը չէր պատճառը որ հայ հոգեւորականութիւնը բուն կերպով թշնամացաւ անոնց դէմ, որքան անոնց ընկերային, դասակարգային հիմնական դաւանանքը, եւ այդ կը տեսնենք հետեւեալ մի քանի պահանջներու նշումին մէջ, որոնք կցուած են անոնց կրօնական դաւանանքներու շարքին:

1. Եկեղեցին կրօնական դասակարգին նիւթական շահ ազատ հովոյ հաստատութիւն մըն է, ուր նոյն անտեսանելի սպրանքները կրկին ու կրկին կը մատուցուին ու կը ծախուին հաւատացեալներուն:

2. Բոլոր մարդիկ, անկախ իրենց դիրքէն ու պաշտօնէն, հաւատար են, հետեւաբար մարդիկ աշխարհի բոլոր բարիքները պէտք է իրենց միջեւ բաժնեն հաւասարապէս: Հարստութիւնը ուժ է եւ այդ ուժը պէտք է կեդրոնանայ անհատի մը քով:

3. Նիւթական անհաւասարութեան վրայ հիմնուած ընտանիքի փոխարէն, պէտք է հաստատուի ազատ սիրոյ եւ նիւթական հաւասարութեան վրայ հիմնուած ընտանիքը:

4. Հոգը մասնաւոր, անհատական սեփականութիւն ըլլալու չէ. ան պատկանելու է համայնքին. համայնքի անդամները հաւասարապէս աշխատելու եւ հաւասարապէս օգտուելու են հողին բարիքներէն:

5. Ընտանացած զիւզացիները, ստրուկները, ծառաները այդպէս մտալու չեն: Պէտք է վերջ տալ դասակարգերու գոյութեան: Կառավարութիւնը պէտք է հսկէ միմիայն կարգ ու կանոնի պահ-

պանման: Արտօնեալ, առանձնաշնորհեալ դասակարգի գոյութիւնը չարիքի սպրիւր է:

6. Կիները այդ մարդոց հետ քաղաքացիական հաւասար իրաւունք ունենալու են: Անոնք ոչ մէկ առեւ ստորագաս սեռ նկատուելու չեն, ենթարկուած այդ մարդու իշխանութեան:

Պալիկեանները եօթներորդ դարու վերջերը երբ կրօնական շրջանակէն դուրս եկան եւ որդեգրեցին վերեւ նշուած ընկերային դաւանանքները, հոգեւորականութիւնը միացած սիրող դասակարգին, սկսաւ սարսափելի հալածանքը:

Յովնան Օձնեցի Կաթողիկոսը 719 թուականին, Գուինի մէջ եկեղեցական համաժողով մը զուգարեց այդ «անհաւասաններուն», այդ «սատանայի որդիներուն» շարժումը խեղդելու համար: Բայց անգուտ...: Քրիստոնեայ կաթողիկոսը տարի մը վերջ, 720 թուին, անձամբ զնաց Գամասիոս, Օմար Բ. խալիֆայի մօտ եւ ազաւանքով, պազատանքով օչնական ուժ ստացաւ զինու զորութեամբ ոչնչացնելու պալիկեանները, որոնք հայ աշխարհիկ դասակարգերու եւ արարական միացեալ ուժերուն չկրնալով ձակատիլ մասսայական փախուստի զիմեցին, հեռացան հայրենի հողէն եւ այս անգամ իրենց պայքարը սկսաւ Արեւմտեան Հայաստանի մէջ: Բայց հոս ալ իրենց դէմ կանգնած էր բիւրանդական կայսրութիւնը:

Պալիկեանները Արեւելեան Հայաստանի մէջ իրենց կրած դառն ճախողանքէն դաս առած, այս անգամ սկսան կազմակերպուիլ եւ նոյն առեւ պրոպականտի աշխոյժ աշխատանք տանիլ եւ ներգրաւել ժողովրդական զանգուածները: Բիւզանդական կայսրութիւնը տեսաւ իր առջեւ ծառայող վտանգը: Միքայէլ Գ. կայսրը 859 թուին ռազմական արշաւանքի ձեռնարկեց, բայց ճախողեցաւ: Յաջորդ տարին 40 հազարնոց բանակով մը զարձեալ յարձակեցաւ պալիկեաններու վրայ: Պալիկեանները իրարու ետեւ շահեցան փառաւոր յաղթանակներ, որով կայսրը յուսահատ նահանջեց ու քաշուեցաւ իր պատանին մէջ: Իր յաջորդը, Բարսեղ Ա. սմբողջ տարի մը յաւելեալ ուժերով շարունակեց իր յարձակումները եւ վերջապէս կըրցաւ խորտակել պալիկեաններու զիմազրական օգին: Պալիկեանները պարտուեցան շարաշար կերպով: Կայսրուհի Թէոդորա (841-855) որ պատկերապաշտութիւնը վերահաստատեց, ուղեց սմբողջապէս բնաջնջել պալիկեանները, որոնք Հայաստանի մէջ տակաւին չունչ ու կենդանութիւն ունէին եւ զեռ կը դործէին: Կրտուի թէ կայսրուհին մօտաւորապէս հարիւր հազար մարդ կատարեց պալիկեաններէն ու անոնց համակիրներէն: Անոնք որ կըրցան ազատուիլ, ոմանք նետուեցան սարակինոսներու բազուկին-



բուն մէջ, ոմանք անցան Թրակիա, ուրիշներ՝ Բուլղարիա: Բայց  
ամէն ուր որ գացին անոնք, զիրենք հիւրընկալողներ անպակաս  
էին: Հերետիկոսութիւնը համաճարակի նման տարածուած էր ա-  
մէն կողմ: Մարդկային սպաս մտածողութիւնը կարելի չէր խեղ-  
գել սուրով՝ արեան աւազանին մէջ:

\*\*\*

Նոյն ասան արեւմուտքի մէջ, ուր ընկերային տարրերու դա-  
նադանութիւնը նոր կեանքի շնորհատու հող էր պատրաստեր, բա-  
նավարական հերետիկոսութիւնը ամբողջապէս ուժաթափ չէր ե-  
ղած: Թէեւ պատկերապաշտութիւնը վերջնականապէս յաղթանակեր  
էր հոն, ինչպէս արեւելքի մէջ, բայց բանավարութիւնը ունէր զօ-  
րաւոր ախոյեաններ, ինչպէս հռչակաւոր Գլոտիոսը, Թուրինի ե-  
պիսկոպոսը եւ իր ժամանակակից Ակոբարդը, Լիոնի եպիսկոպոսը:  
Նշանակելի պարագան այն է որ այս երկու մարդիկը ծնած էին  
Սպանիոյ մէջ եւ ենթարկուած էին կամ սարակինոսեան եւ կամ  
հրէական ազդեցութեան: Ստոր համար հակառակ էին պատկերա-  
պաշտութեան: Այս երկու կրօնականները բացառապէս բանավարա-  
կան աստուածաբաններ էին տղիտութեան ու նախապաշարումի այդ  
խաւարչտին դարուն մէջ: Գլոտիոս անվախօրէն կ'արհամարհէր  
պատկերապաշտութիւնը, սրբապաշտութիւնը եւ պատկան իրաւա-  
սութիւնները. ան այնքան յտուժ զնաց որ մի օր եպիսկոպոսներու  
ժողովը անուանեց «աւանակներու հաւաքոյթ»: Ակոբարդ, իր կար-  
գին, նոյնպէս արտակարգ յանդգնութեամբ կը ձաղկէր ժողովրդա-  
կան նախապաշարումները, պատկերապաշտութիւնը, թո՛ւ չլուծեան  
եւ շար ոգիներու իշխանութեան հաւատքը, եւ բաց էր բաց կը յայ-  
տարարէր որ հոգեւորականները բարոյական ուսուցիչներ են եւ  
Աստուծոյ կամքը շնն կրնար ներկայացնել, ոչ ալ միջնորդ ըլլալ  
Աստուծոյ ու մարդուն միջեւ:

Գուցէ ընթերցողը հարցնէ թէ ի՞նչպէս այս երկու եպիսկո-  
պոսները անպատիժ մնացեր են իրենց ատենին, երբ ուրիշներ կը  
դատապարտուէին ու կ'անհետացուէին: Այս հարցման մենք զի-  
բութեամբ կը պատասխանենք երբ նկատի առնենք նոյն շրջանի  
ընդհանուր ժողովրդական հոգեբանութիւնը, եւ ընկերային ու արեւ-  
տեսական դրութիւնը: Նոր ծաղկիլ սկսող վաճառականութիւնը  
հաշտ աչքով չէր նայիր հոգեւորականներու իշխանութեան, միւս  
կողմէ դարձեալ արուն մէջ մտած էր փիլիսոփայական վէճերու զիժը-  
անդին կար սարակինոսեան ազդեցութիւնը եւ արեւելքէն ներմուծ-  
ուած դեմոկրատական գաղափարներու տկար բայց գրաւիչ բնոյթը:

Իսկ ասոնց հետ կուգար պափղիկեաններու արուած կոտորածը, որ  
զբաւած էր ժողովրդական գանդուածներու համակրութիւնը:

\*\*\*

Մինչ հերետիկոսները այսպէս թէ այնպէս կը շարունակէին  
պահել իրենց դոյութիւնն ու քարոզչութիւնը, ահա հնչեց մի սար-  
սափեցուցիչ ահագանդ: Եկեղեցւոյ բարձրատիճան կրօնաւորները,  
որոնք ուսած էին թուապիտութիւնը եւ մասնագէտ էին դուշակու-  
թեան արուեստին մէջ (պէտք է բաւել թէ անոնք մէկ կողմէն ալ գու-  
շակները հերետիկոս կ'անուանէին) Յովհաննու Յայտնութեան բո-  
լոր պարբերութիւնները ուսումնասիրելով գտեր էին որ Քրիստոսի  
1000 թուականին աշխարհը պիտի կործանէր, մեռելները յարու-  
թիւն պիտի առնէին, Քրիստոս նորէն աշխարհ պիտի գար, տեղի  
պիտի ունենար վերջին դատաստանը եւ արգարները պիտի զրկուէին  
արքայութիւն, իսկ մեղաւորները՝ դժոխք: Եւ 1000 թուականը կը  
մօտենար... Քրիստոսեայ աշխարհը ինկաւ ահուղողի մէջ: Եկեղե-  
ցիներու գանդակները կը զօղանջէին անընդհատ գանդալ ու ախուր  
արձագանդներով: Ժողովուրդը խուռնկրամ կը լեցուէր եկեղեցի-  
ները: Գիշեր ու ցերեկ սպաշխարութիւն ու սպաշխարանք. հերե-  
տիկոսները նոյնիսկ մատնուած էին սարսափի: Այգրտները իրենց  
յոյսը կապած էին իրենց աղօթքին ու սպաշխարանքին. եւ ինչ որ  
ունէին, նոյնիսկ իրենց սմենայեան լուծան կը նուիրէին եկեղեց-  
ւոյ գանձարանին: Իսկ հարուստները (մասնաւորապէս նախապա-  
շարեալներն ու երկչոտները) իրենց ինչքերն ու կալուածները նուի-  
րեցին եկեղեցիին: Այսպիսով եկեղեցին անբաւ հարստութիւն դի-  
ղեց եւ դարձաւ Եւրոպայի մեծագոյն կալուածատէր հաստատու-  
թիւնը:

Եկաւ մեծահոգակ 1000 թուականը: Ինչ մեծ զարմանք...  
Մեծնոցները իրենց զերեզմաններէն դուրս չեկան. երկրաշարժ տե-  
ղի չունեցաւ. երկիւրց աստղերը վար պիտի թափէին, անոնք իրենց  
տեղերը զամուսած մնացին. արեւը պիտի խաւարէր, բայց չխաւա-  
րեցաւ. Քրիստոս Աստուծոյ մօտէն վար պիտի իջնէր, նա իր աթո-  
ռէն չհեռացաւ: Բայց ո՞ւր էր ստոր գաղտնիքը: Եւ ահա յսուեցաւ  
Հոովմի Պապին ճայնը: Պապը միջնորդ էր եղեր ու փոխեր էր Աս-  
տուծոյ որոշումը (այժմու քրիստոնեաները կը սնդեան որ 1000 թը-  
ւականը սխալ մեկնաբանուած է, ան պիտի ըլլայ 2000, ուրեմն 35  
տարի եւս սպասելու ենք որ տեսնենք վերջին դատաստանի օրը):  
Հանելուկը, ուրեմն, լուծուած էր: Բայց հանելուկի այդ ձևի լու-  
ծումով ամէն ինչ չէր վերջանար. հանելուկը լուծուած էր ազէտ ու



գիւրահաւան ամբոխներուն համար, ոչ թէ մտածող ու դատող «հերետիկոսներուն» համար: Եւ ասոր հետեւանքն այն եղաւ որ հերետիկոսները բազմացան. անոնց շարքերը ստուարացուցին իրենց կալուածներէն զրկուած հարուստները, որոնք մաեր էին ազգասններուն մէջ: Օրլէանի մէջ 1017 թուին, մէնիքէեան(\*) կոչուած գաղանի ընկերութիւն մը երեւան եկաւ որ բաղմաթիւ անդամներ ունէր: Սոյն ազանդը իր ծայրայեղ փոխակերպումով վերապրեցնողը եղաւ խալայի կին մը, Մօրելլի, որ իր հետեւորդներուն հետ ողջ ողջ ալլուեցաւ: Նոյն վայրենի դատապարտութեան ենթարկուեցան նաեւ կերհարտի, Քեմբրէի եպիսկոպոսի հետեւորդները, մեծ մասով աշխարհականներ, որոնք չէին ընդունել արտաքին պաշտամունքներն ու ծէսերը: Անոնք մէկ կողմ նետար էին մկրտութիւնը, հաղորդութիւնը, ապաշխարանքը, պատկերները, յուղարկաւորական հանդիսութիւնները, միւտոնը, եկեղեցւոյ զանգակները, խորանները եւ նոյնիսկ եկեղեցիները, մերժելով այդ բոլոր ծէսերը. անոնք կը պնդէին որ անհրաժեշտ չէ կրօնաւորներ պահելը. կրօնական հաւատքը անհատական է եւ անհատը ազատ պէտք է ըլլայ իր դաւանանքին մէջ: Բողոքականներէն ոչ մէկը տասնեւհինգ կամ տասնեւթեցորդ դարուն այսքան յառաջ չկրցաւ երթալ: Այս ազանդին հետեւողները, որոնք նոյնպէս մահուան դատապարտուեցան, կեցած էին Մարկիոնի(\*\*) թէզին վրայ. անոնք հակառակ էին ամուսնութեան եւ սեռային բնազդին:

\*\*\*

Հերետիկոսներու հանդէպ դործադրուած մահապատիժի վայրենի մեթոսները պատճառ եղան որ բարձր կրօնականներէն ու մանք բուն կերպով բողոքեն այդ անդթութեանց դէմ. անոնցմէ

(\*) Այս ազանդին եիմնադիրը եղած է Մենի կամ Մենիկուս, որ ծնած է 216 թուին Միջագետքի Բաորա քաղաքին մէջ: Մենիքէեան ազանդը գնոստիկեան երկուապաշտութիւնն էր որ տարածուած էր միւնչեւ Զինաստան եւ Հնդկաստան:

(\*\*) Մարկիոն ծնած էր 105 թուին, Պոնտոսի մէջ. սա առաջին մարդն էր որ եկաւ նշել քրիստոնէական կրօնի հակասութիւնը, ցոյց տալով իրարու հակառակ երկու աստուածներ, մին Հին կտակարանի Աստուածը որ կը պատուիրէր «աչքի տեղ աչք, տկայի տեղ ականջ», միւսը նոր կտակարանի Աստուածը որ Քրիստոսի բերնով կ'ըսէր. «Մէկ երեսիդ գարնողին միւսը դարձուր»: Մարկիոն քրիստոնէութիւնը կ'ուզէր բաժնել մովսիսական կրօնէն:

մէկն էր Լուդիկի Եպիսկոպոս Վազոնը, որ մինչեւ Հռովմի Պապին զիմեց իր բողոքագրով: Բայց այդ բողոքները անցան ապարդիւն: Գերմանիոյ Կոլլար քաղաքին մէջ 1052 թուականին 42 մէնիքեաններ ընտելեցան ու կախուեցան: Հակա-կղերական հերետիկոսութիւն մը խմորուած էր Իտալիոյ, Ֆրանսայի եւ Ֆլեմարսի մէջ: Կաթոլիկ կղերականութիւնը տեսաւ որ հակա-հոսանքը հետզհետէ կ'ուժեղանար ու կը տարածուէր ամէն տեղ: Եկեղեցւոյ դիրքը բարձր պահելու համար հերետիկոսներու դէմ յառաջ տարուած հալածանքը ոչ միայն անողուա էր, այլեւ աննպաստ, որովհետեւ ժողովուրդը ներքնապէս աւելի կը հետաքրքրուէր հերետիկոսներու քարոզչութեամբ եւ կը համակրէր անոնց: Կրօնականները գիտէին թէ իրենց համար աննպաստ իրադարձութեանց զբոյսպատճառը անտեսական զիծն էր: Վաճառականները հակառակ էին հողեւորականութեան, որովհետեւ եկեղեցին, որպէս խոշոր հողատիրական հաստատութիւն, զաշնակցելով հողատէր ազնուականութեան հետ, շղթայած էր վաճառականութեան խթանիչ ուժը, ճարտարարուեստը. իսկ միւս կողմէ ժողովուրդը արդէն ենթարկուած էր անասելի թշուառութեան: Ուրեմն, միջոց մը պէտք էր այդ դժուարին դրութեան մէջէն ելքի ճամբայ մը գտնելու համար: Եւ ահա այդ բարենպաստ պարագան ներկայացաւ, երբ թուրքերը 1065 թուականին զբաւեցին Երուսաղէմը: Կաթոլիկ կղերականութեան երազած պատենութիւնը ներկայացած էր ուրեմն. Քրիստոսի զերեզմանը անցեր էր անհաւատ մահաճոտականներու ձեռքը, այդ զերեզմանը պէտք էր ազատել, եւ 1096 թուականին սկսաւ խաչակրութիւնը:

Հռովմի Պապը խաչակրական շարժումով երեք նպատակ կը հետապնդէր: Ան կ'ուզէր սիրաշահիլ վաճառականները, անոնց առջեւ բանալով Հնդկաստանի հետ առեւտրական ճամբան որ թուրքերու կողմէն Երուսաղէմի զբաւեցումով փակուած էր: Երկրորդ, ան կ'ուզէր հերետիկոսութեան շարժումը խեղդել ժողովրդական բողոքաւառուած կրօնամոլութեան աւազանին մէջ, որուն կրքեր էր կապել թշուառ զանդուածներու արկածախնդրութեան ոգին: Երրորդ, կրօնամոլութեան ատաղձներով ան կ'ուզէր հաստատել պապական մնայուն գերիշխանութիւն մը, որուն ենթարկուելու էին Եւրոպայի քաղաքական իշխանութիւնները: Եւ պէտք է ըսել թէ՛ Հռովմի Պապը իր նպատակին մէջ մասամբ յաջողեցաւ: Մասամբ կ'ըսենք պարզ անոր համար որ ամբողջ Եւրոպան զբաղուած պահեց իր հրամանատարութեան տակ մինչեւ 1291 թուականը, երբ թուրքերը Ալքի զբաւեցումով վերջ դրին խաչակիրներու արշաւանքին:

Բայց պէտք է ըսել թէ խաչակրական արշաւանքը ուրիշ պա-



ուսհաս մը եղաւ պապականութեան համար: Խաչակիրները երկա-  
րատեւ իրերայաջորդ պատերազմներու շրջանին յարաբերելով օտար  
սարբերու հետ, անոնցմէ առին նոր գաղափարներ, որոնք դուռ  
բացին նոր տեսակի հերետիկոսութեանց, որոնք միանալով հնուց  
ի վեր դոյութիւն ունեցող հերետիկոսներու հետ, նոր եւ ահաւոր  
սպառնալիք մը դարձան եւ պապականութեան, եւ հողատէր ազ-  
նուականութեան դիմին: Ասոր հետեւանքով, Գրիգոր Գ. Պապի  
օրով, 1233 թուականին նախ քան խաչակրական արշաւանքը վեր-  
ջանալը, որպէս նախապատրաստական պաշտպանութեան միջնա-  
բերդ հաստատուեցաւ այն սարսափելի մահաշունչ հաստատութիւ-  
նը, որ պատմութեան մէջ ճանչցուած է հաւատաբնութեան առ-  
եան անուանով:

\*\*\*

Խաչակիրներու արշաւանքը ոչ միայն բարձրացուց եկեղեց-  
ւոյ պրէստիժն ու իշխանութիւնը, այլեւ սաստիացուց հերետիկոս-  
ներու դէմ յառաջ ատրուած անորակելի հարձակումը: Քրիստոնէոյ  
եկեղեցին տասնեւերորդ դարուն արտաքին ճակատի վրայ անհա-  
ւատ իրամեներու դէմ խաչակրական արշաւանքը դանդաղեցնելով  
կատաղի խաչակրութիւն մը սկսաւ Եւրոպայի մէջ «անհուտա»  
քրիստոնեաներու դէմ, ասով ան կ'ուղէր յաղեցնել Պաղեստինի  
ճակատին վրայ իր պարտութեան վրէժը: Հռովմի Պապը խաչա-  
կիրներուն տուած էր բացառիկ առանձնաշնորհումներ: Խաչակիր  
մը երբ մէկու մը դրամ պարտական էր, անիկա բոլորովին կ'ազա-  
ւէր իր պարտքէն: Խաչակիր մը երբ երկու ամիս ծառայած էր Պա-  
ղեստինի կռուող բանակին մէջ, ան այլեւս ոչ միայն ազատ կ'ըլ-  
լար ռեւէ օրինական դատապարտութենէ, այլեւ անոր անցեալի,  
ներկայի եւ ապագայի բոլոր մեղքերը քառուած կը նկատուէին:  
Ուրեմն, Պաղեստինէն վերադարձող խաչակիրը ներքին ճակատին  
վրայ անպատասխանատու խաչակիր մը կը դառնար թերահաւատ-  
ներուն դէմ: Ասով հասկնալի է թէ եկեղեցին ինչ զիւային միջոցներ  
ձեռք առած էր հերետիկոսները բնաջնջելու համար: Յայտնի կամ  
կասկածելի հերետիկոսի մը ճակտին վրայ դրոշմուած էր մահա-  
պատիժի վճիռը: Մահուան ուրուականը կը սաւառէր Եւրոպայի  
մէջ՝ ամենուրեք: Թուրքերը Պաղեստինի մէջ պատերազմի ճակա-  
տին վրայ այնքան թիւով քրիստոնեաներ չկոտորեցին, որքան Քրիս-  
տոսի եկեղեցին հերետիկոսութիւնը արմատախիլ ընելու համար  
կոտորեց հարիւր հազարներով մարդեր: Թուրքերը նահանգը նկատ-  
ուած էր որպէս հերետիկոսներու կեդրոնավայր: Չնայած որ կոմսը

երբեք զիմադրութիւն ցոյց չտուաւ եւ իր նահանգի բնակիչներու  
կեանքը խնայելու համար պատրաստակամութիւն յայտնեց ճանչ-  
ցուած հերետիկոսները յանձնելու հաւատաքննիչներուն, վայրենի  
խաչակիրները զիւղերը մէկըմէկու ետեւ կրակի տուին, այրեցին  
հերետիկոսներն ու անմեղները իրենց ընտանիքներով, յետոյ յար-  
ձակեցան Քարկասոն քաղաքին վրայ եւ կոտորեցին մարդերն ու կի-  
ները, երեխաներն ու ծերերը, չխնայելով ոչ ոքի: Նոյնիսկ անոնք  
որ ապաստաներ էին եկեղեցիներուն մէջ, բոլորն ալ սրէ անցուցին:  
Մի օր պապի պատուիրակ Արնոլտին հարցուցին թէ հերետիկոսները  
ի՞նչպէս զանազանելու է անկեղծ հաւատացեալներէն: Անիկա պա-  
տասխանեց. «Ապաննեցէք ամբողջը. հերետիկոսը հաւատացեալէն  
զանազանելը Աստուծոյ գործն է»: Եր. Մարիամ Մազարադիոսցի  
մեծ եկեղեցոյ մէջ 7 հազար հոգի սպաննուեցաւ: Իսկ Սիդուկս քա-  
ղաքի սպաննուածներու թիւը կը հասնէր 60 հազարի:

Այսպէս խաչակրական արշաւանքը մէկ տեղէն կ'անցնէր միւ-  
սը. հրդեհում, կողոպուտ, անհաշիւ սպաննութիւններ. ալ չլիչնեք  
խարոյկներու վրայ ողջ ողջ այրուող հերետիկոսները:

Երբ հերետիկոս կ'ըսենք, պիտի չհասկնալ տիրող կղերա-  
կան դատակարգի տեսակէտները չբաժնող ու միմիայն կրօնական  
խնդիրներու շուրջ ազատ մտածող մարդիկ, որովհետեւ միջին դա-  
րու «հերետիկոս» անուանուած մարդիկը իրապէս ընկերային ար-  
մատական հայեացքներ հետադեպ անհատներ եղած են, համարիտ  
հերոսներ, որոնք անընկճելի կամքով կախաղան կը բարձրանային,  
խարոյկներու վրայ կ'այրուէին եւ կամ զնտաններու մէջ աննկա-  
րադրելի տանջանքներով կը մեռնէին, բայց երբեք չէին ստրկանար,  
չէին դաւաճաներ իրենց սկզբունքներուն: Երբ մենք պարզեցինք  
պովիլիկեաններու դաւանանքի մի քանի կէտերը, տեսանք թէ այդ  
«հերետիկոսները» սոցիալիստական սրտ զծի վրայ կեցած էին,  
զի՞ծ մը որ մեր հիացումը կը գրաւէ, երբ նկատի տանք այդ ժա-  
մանակաշրջանի պայմաններն ու ընդհանուր նախապաշարեալ մը-  
տածողութիւնը: Եւ այդպէս էին միւս հերետիկոսները:

Սկսուած հաւատաքննութիւնը իր կատաղի ուժգնութեամբ  
տեւեց մինչեւ տասնեւվեցերորդ դարը, բայց ան չկրցաւ անդամա-  
լուծել մարդկային ազատ մտածողութիւնը, ընդհակառակը, մարդ-  
կային մտքի հորիզոնը աւելի ընդարձակուեցաւ, որովհետեւ ընկե-  
րային, անտեսական ու քաղաքական դործօն ազգակները, թէեւ այ-  
լազան եւ մերթ հակընդդէմ, մերթ զիւրար լրացնող, բայց միշտ  
զարգացողական, անբնական էր որ բոլորն ալ իրարու ետեւ դային



հաւատաքննութեան երկանաքարին աակ ու փշրուէին: Բոլոր երեւոյթները ցոյց կուտային որ քայքայուելու պրոցէսին մէջ մտած էր եկեղեցւոյ յենարանը եղող ֆէտտալական սիստէմը, որուն յաջորդելու էր մի նոր դարաշրջան, կապիտալիստական դարաշրջանը:

Վ Ե Ր Ջ  
Բ. ՀԱՏՈՐԻ

Ն Կ Ա Տ ՈՒ Ա Ծ Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր  
Բ. ՀԱՏՈՐԻՆ ՄԷՋ

Էջ	ՏՈՂ	Սեռ	ՈՒՂԻՊ
34 վարէն 15	2	շարունակել	շարունակել
59 վերէն 4	4	նպաստեցին նարտարարուեստի, զարգացման անոր բնակչութեան որ,	նպաստեցին անոր ճարտարարուեստի զարգացման եւ ընդհանրապէս նաեւ բնակչութեան՝ որ,
104 վարէն 11	11	աղջմիտ պաշտօնեայ	ողջմիտ պաշտօնեայ
145 վարէն 1	1	կրկաքն ու պողպատը	երկաթն ու պողպատը
148 վարէն 18	18	իննսուն տարի է:	իննսուն տարի էր:
204 վերէն 6	6	վարէն Իտալիոյ	հարաւէն Իտալիոյ
261 վերէն 5	5	վաշտուեր	վաշտուեր
554 վերէն 4	4	մայմինը	մարմինը



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ Բ. ՀԱՏՈՐԻՆ

Ա. ՄԱՍ.	
Եգիպտոս — Եգիպտոսի Գիրքը	19
Բարեկաստան, Ասորեստան	58
Պարսկաստան և Պարսիկները	91
Հնդկաստան	127
Յունաստան և Յոյները	200
Հռովմ և Հռովմէացիները	249
ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ.	
Հրէաստան և Հրեայ ժողովուրդը	311
ԵՐՐՐՈՐԴ ՄԱՍ.	
Բանուորական Կազմակերպութեանց Շարժումները և Այդ Շարժումներու Առաջնորդները	540
ԶՈՐՐՈՐԴ ՄԱՍ.	
Միջին Դար — Աւատապետական Դարաշրջան	684
ՅԱՒԵԼՈՒԱԾ	
Գիտութիւնը Հնադարեան և Գերետիրական Դարաշրջանին և Գիտութիւնը Միջին Դարուն	789
Ազատ Մտածողութիւնը Հնադարեան Շրջանին	854
Ազատ Մտածողութիւնը Յունաստանի Մէջ	865
Ազատ Մտածողութիւնը Միջին Դարուն	877
Ազատ Մտածողութիւնը Քրիստոնեայ Աշխարհին Մէջ	889

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ Գ. ՀԱՏՈՐԻՆ

Ա. ՄԱՍ.

Կապիտալիզմը — Ֆեոդալիզմի Պատկերը — Խոշոր Քաղաքներու Երևումը — Բուրժուազիան Հրապարակ Կ'իջնէ — Արդիւնաբերական Կապիտալի Մոտենդը — Մարքսի «Կապիտալ»ի Շուրջ Ընդհանուր Տեսութիւն — Մարքսի «Կապիտալ»ի Ամփոփումը — Թրէյտ Եւոնիքները — Կապիտալիզմի Աճումը:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ.

Եւրոպան և Ամերիկան ԺԸ. Դարուն — Նախադիտելիք՝ Յրանսական Մեծ Յեղափոխութեան Շուրջ — Յրանսական Մեծ Յեղափոխութիւնը — 1848-ի Յեղափոխական Շրջանը — 1871-ի Փարիզի Կոմունան:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ.

Բանուորական Շրջանը — Բանուորական Շարժումները Երկու Աշխարհամարտներու Միջև (1914-1939) — Համաշխարհային Սոցիալիզմը Ընդդէմ Համաշխարհային Կապիտալիզմին (1939-1955) Ամերիկայի Միացեալ Նահանգները:

ԶՈՐՐՈՐԴ ՄԱՍ.

Գիտութեան Նուաճումները ԺԸ. Դարէն Մինչև Մեր Օրերը — Ազատ Մտածողութիւնը ԺԸ. Դարէն Մինչև Մեր Օրերը:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Դասակարգային Կռիւներու Վերջը — Աշխարհ Մը՝ Առանց Պատերազմի — Պատմական Գործոն Ուժերու Տրամաբանական Անխուսափելի Հետեւանքը:



## ՀԵՂԻՆԱԿԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԵՐԿԵՐԸ

1957-էն Ի ՎԵՐ

---

- 1) Յո՞ երբ աս Ամերիկա:
- 2) Համաշխարհային Կրօնֆները — 2 հատոր:
- 3) Կեանքի Մը Ալպումը:
- 4) Գասակարգային Կռիւներու Գիծը Ազգերու Պատմութեան Մէջ. մինչեւ այսօր հրատարակուած 2 հատոր: Երրորդ հատորը՝ պատրաստ մամուլին յանձնուելու:

## ՀԵՂԻՆԱԿԻՆ ԱՆՏԻՊ ԳՈՐԾԵՐԸ

---

- 1) Համաշխարհային Գաղափարախօսութեանց Ուրուագծերը, Թաղէսէն Մարքս ու Լենին — երկու հատոր:
- 2) Քաղցրիկ Յուշեր Եւ Խայթող Փուշեր. հայրենի կեանքի պատկերներ: Մինչեւ հեղինակին Ամերիկա գաղթելը:
- 3) Բանուորի Մը Յուշատեարը: Հեղինակին Ամերիկայի մէջ ապրած կեանքը: Հասարակական յուշեր ու տեսութիւններ:
- 4) Բանախօսութիւններ ու նամակներ:
- 5) Հատընտիր Ասացուածքներ: Սոցիալիստական եւ փիլիսոփայական կարեւոր գիրքերէ փաղուած ֆներ — երկու հատոր (քարգմանութիւն):